ՍՏԵՓԱՆ ՊԱՊԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

III

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

III

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Պ 797

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Պողոսյան Ստեփան

Պ 797 Հայոց ցեղասպանության պատմություն / Ստեփան Պողոսյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2011, III հատոր: Մեծ եղեռնը Արևմտյան Հայաստանի նահանգներում.- 672 էջ:

Երրորդ հատորն ընդգրկում է 1915 թվականից հետո չարունակվող Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1400-6

© ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ.
© Պողոսյան Ս. Կ., 2011 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Վան-Վասպուրական 5

Վանի հերոսամարտը 30

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Էրզրում- Կարին 76

Երզնկա 112

Բաբերդ 126

Դերջան 132

Քղի 133

Խոտորջուր 134

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Սվազ-Սեբաստիա 142

Ամասիա 165

Մարզվան 166

Շապին Կարահիսարի աստղային ժամն ու մայրամուտը 170

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Խարբերդ- Մամուրեթ ուլ-Ազիզ 178

Խարբերդ քաղաք 184

Մալաթիա 197

Արաբկիր 199

Դերսիմ 215

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Դիարբեքիր-Տիգրանակերտ 221

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Բիթլիսի-Բաղեշի նահանգ 249

Մուշը՝ նահատակ 335

Մարտնչող Սասուն 352

ԳԼՈՒԽ ՅՈԹՆԵՐՈՐԴ

Կիլիկիա 388

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
Տրապիզոն 438

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
Մուսա լեռ 465

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
Կենտրոնական Անատոլիա 476
Յոզգաթ 496
Կաստամոնու 527

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
Արևմտյան վիլայեթներ 531

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ
Ուֆա (Ուռհա) 560

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ
Հարավային վիլայեթներ 588

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՎԱՆ – ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Վանը Արևմտյան Հայաստանի այն մեծ քաղաքներից է, եթե ոչ միակը, որտեղ առաջին աշխարհամարտի նախօրյակին հայերը ազգաբնակչության բացարձակ մեծամասնություն էին կազմում: Հենրի Մորգենթաուն գրում է, թե Վանն իր «չուրջ 30.000 բնակչութեամբ կը ներկայացնէր Թրքական կայսրութեան ժողովուրդներու ամենէն խաղաղ, երջանիկ եւ բարգաւաճ մէկ համայնքը»[1]: Նա գտնում է, որ թեև Վանում ևս կեղեքումներն ու բռնություններն անպակաս էին, բայց «իսլամ լուծը համեմատաբար աւելի թեթեւ կերպով ծանրացած է ժողովուրդին վրայ»: Նա Վանի համայնքի այդ համեմատական բարվոք վիճակի պատճառներից մեկը համարում է այն, որ վալին Թահսին փաշան էր՝ «Թիւրք պաշտօնատարներու ամենէն լուսաւորուած դեմքերէն մէկը»: Չնայած իրողությանը, որ քաղաքի «լաւագոյն մասին մէջ» բնակվում էին հայերը, իսկ Թուրքերն ու քրդերը զբաղեցնում էին «իսլամ Թաղերու տղմուտ հիւղակները», քրիստոնյա և մահմեդական համայնքների միջև «գոյութիւն ունեցող յարաբերութիւնները տանելի կերպով գոհացուցիչ եղած են բազմաթիւ տարիներու ընթացքին»[2]:

1914-ին արդեն Վանը կարծես թե լրիվ բուժվել էր ոչ վաղ անցյալի դժբախտություններից: Հաջողվել էր վիլայեթում ինչ-որ չափով վերականգնել կարգուկանոնը: Համաձայն բարենորոգումների ծրագրի՝ Վանում Թուրքական ժանդարմերիայի ղեկավար նշանակվեց ֆրանսիացի կապիտան Մարասեն, որը չատ չուտով ընդհանուր համակրանքի արժանացավ: Թվում էր, թե վատ օրերը մնացել էին անցյալում: Հայերը ձեռնամուխ եղան նաև մշակութային կյանքի զարգացմանը, կառուցեցին գրադարան, կազինո, թատրոն, ակումբ, ստեղծեցին դպրոցների ցանց, միայն Համբարձում Երամյանի վարժարանում դասավանդում էր 20 մանկավարժ, որոնց թվում կային նաև Եվրոպայում կրթություն ստացածներ: Գործում էր ֆրանսիական դպրոց աղջիկների համար: Հանրի Բարբին նույնպես նշում է, որ Թահսինը քաղաքում կարգուկանոն մտցրեց, եվրոպական սպաներ նշանակվեցին ժանդարմերիայի հրահանգիչներ, ինչը հայերին վստահություն ներշնչեց և նրանց մղեց ստեղծագործ աշխատանքի:

Վանի վիլայեթն ուներ նաև մի քանի ուրիշ առանձնահատկություններ, որոնք էին ձևավորում տեղի հայկական կազմակերպությունների աշխատանքի բովանդակությունը: Դա նախ սահմանամերձ լինելն էր, Ռուսաստանի ու Պարսկաստանի հետ կապերի հանգույցում գտնվելը:

---

[1] *Ամերիկեան դեսպան Մորգենթաուի յիշատակները եւ հայկական եղեռնի գաղտնիքները, Եր., 1990, էջ 242-243:*

[2] *Նույն տեղում:*

Չի կարելի աչքաթող անել, որ քաղաքում գործում էր Իթթիհադի ուժեղ կազմակերպություն. ազդեցիկ էին նաև քրդական աշիրեթներն ու ավազակախմբերը:

Վանի հետագա իրադարձությունների վրա վճռորոշ ազդեցություն ունեցան «պատերազմական հարկատվությունը»՝ «Թեքյալիֆի-հարպիեն», որին ժողովուրդն անվանեց «Թեքյալիֆի» ու նաև այն, որ նահանգի «դիրքը զայն անխուսափելիօրէն թատր կը դարձնէ զինուորական գործողութիւններու եւ հայ ժողովուրդին գործունէութիւնը մշտապես կասկածի նիւթ եղած է»: Վասպուրականը դեպի Փոքր Ասիա ռուսական արշավանքի ամենահարմար ուղիներից էր: Հայերի տրամադրության վրա էական ազդեցություն ունեցան «զորահավաքի գաղանային եղանակները» և հայ զինվորների հանդեպ խտրականությունները, որի ուղղակի հետևանքը դասալքությունն էր, ինչը զուգակցվում էր հայ բնակչության հանդեպ բռնությունների, սանձարձակ վերաբերմունքի, սպանությունների ու թալանի համակարգով:

Վանի վաճառականները հեռագրեցին Կ. Պոլիս, թե տեղում «20.000 ոսկիի ապրանք գրաւուած է ոչ մեկ դրամ վճարած ըլլալով հանդերձ ... սկսած են գրաւել նաև այն վաճառականներու ապրանքները, որ դեռ ճամբան կը գտնուէին, բռնի բանալ էրզրումի եւ Վանի մէջ անոնց ունեցած պահեստները եւ բռնագրաւել զանոնք»[1]:

Մի առանձնահատկություն ևս.

Վանից ու Վասպուրականից արևելք ընկած շրջանների հայաթափումը հիմնականում տեղի էր ունեցել մինչև առաջին աշխարհամարտը: Եթե 1880-ական թվականներին հայ էր Աղբակի բնակչության 50 տոկոսը, ապա 20-րդ դարասկզբին՝ միայն 25-30 տոկոսը: Հաքիարիի վիլայեթն ամբողջությամբ դարձել էր քրդաբնակ: Ընդ որում, Պարսկաստանին սահմանակից շրջանների ամբողջական հայաթափումը կատարվեց աշխարհամարտի առաջին ամիսներին: Աղբակի 10.000 հայից 8000-ը բնաջնջվեց:

Չի կարելի աչքաթող անել նաև այն, որ Օսմանյան սահմանադրությունը կայսրության այս ծայրամասում անակնկալ էր անգամ հայերի ու նրանց քաղաքական ուժերի մի մասի համար, որոնք երկար ժամանակ չկարողացան «հարմարվել» նոր պայմաններին: Դրանով է բացատրվում նաև սահմանադրության հանդեպ հակասական, ոչ քիչ դեպքերում իրարամերժ մոտեցումները. ոմանք այն մերժում էին. մյուսները՝ փառաբանում, ոմանք համարում էին ծուղակ, մյուսներն՝ ազատության արշալույս: Երկրորդներն ավելի մեծ թիվ էին կազմում, և դա բնական էր, որովհետև դարավոր անիշխանությանը և իրավազրկությանը փոխարինելու էր եկել հալածանքների դադարը, բանտերից հայ գործիչների ազատ արձակումը. նրանց հանդեպ իշխանությունների ընդգծված հարգալից վերաբերմունքը[2]:

Սահմանադրության հանդեպ ՀՀ Դաշնակցության պաշտոնական կարծիքը

---

[1] **Զավէն Արք.,** Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 54:

[2] **Արամ.** Մահուան 50-ամեակի առթիվ: Տես **Ա. Աստվածատրյանի** «Արամը», Ե., 1991, էջ 61:

Վահան Փափազյանը ներկայացնում է հետևյալ կերպ. «...Օսմանեան սահմանադրական շարժումը պէտք է նկատել իբրեւ դրական երեւոյթ եւ միւս ազատական տարրերու հետ գործակցաբար պաշտպանէր զայն: Առ այժմ խուսափիլ մասնաւորելու որեւէ քաղաքական կամ վարչական պահանջ»[1]:

Կողմնորոշումը կողմնորոշում էր. բայց իրական կյանքն իրենն էր թելադրում: Սահմանադրությունը նոր էր, բայց նրա գործադրողները սուլթանական վարչակարգից ժառանգություն մնացած հին պաշտոնյաներն էին, որոնք «դեռ մոտ անցեալում ծարաւ էին հայերի արեան» և որոնց անկեղծությանն անհնար էր վստահել: Այնուամենայնիվ, երբ երիտթուրք գործիչ Նաջին այցելեց Վան, հայ գործիչները նրան ներկայացրեցին հետևյալ պահանջ-առաջարկները՝ հրավիրել արևելյան նահանգների համագումար, ապահովել պետական մարմինների գործունեության վրա վերահսկողությանը ՀՀ Դաշնակցության մասնակցությունը, հողային հարցը կարգավորելու համար ստեղծել խառը հանձնաժողով, զինաթափել ավազակախմբերին, գյուղերում ստեղծել պահակախմբեր, խորհրդարանում հայերին հատկացնել այնքան տեղեր, որոնք համապատասխանեն Էրզրումի, Վանի և Տարոնի հայ բնակչության թվին[2]:

Այդ կողմնորոշման ամենաբնորոշ արտահայտությունն էր Արշակ Վռամյանի, Իշխանի և Արամ Մանուկյանի գործելակերպը:

Զգալով, որ երիտթուրքերի հակահայ կեցվածքի հետևանքով հայ-թուրքական հարաբերությունները գնալով սրվում են՝ նրանք փորձեցին դրա առաջն առնել: Օսմանյան խորհրդարանի անդամի հանգամանքով Վռամյանը ստորագրեց Վանի Դաշնակցության հուշագիրը հասցեագրված Թալեաթին, որում նկարագրվում էր ստեղծված կացությունը, այն բնութագրվում վտանգավոր, և միջոցներ էին առաջարկվում վիճակը շտկելու համար:

«Վերջին անգամ էր, որ հայ տարաբախտ գործիչը յուսահատ կոչ կ'ուղղէր թիւրք ջարդարար փաշային... ըմբռնել տալու համար, վերջապէս, հայ եւ թիւրք ժողովուրդներու իրական, ընդհանուր շահերը»[3]:

Կ. Պոլսում այս նամակը կնքվեց «Նոտա» սադրիչ անունով ու դեն նետվեց: Համենայն դեպս դա կյանքի կոչելու ուղղությամբ քայլ չարվեց:

Մի իրողություն ևս. Մեծ եղեռնը սկսվեց ոչ թե արևմտահայերի, այլ արևելահայերի և պարսկահայերի ջարդերով: Դա վկայություններից մեկն է, որ, ի տարբերություն Աբդուլ Համիդի, երիտթուրքերը ծրագրել էին իրականացնել ոչ միայն արևմտահայերի (թուրքահայերի), այլև արևելահայերի (ռուսահայերի ու պարսկահայերի) ոչնչացում, այսինքն՝ խոսքը ողջ հայության ամբողջական բնաջնջման մասին էր՝ անկախ հպատակությունից: 1914 թ. վերջերին յաթաղանի զոհ են դառնում Պարսկահայքի, Ատրպատականի, Բասենի, Արդվինի, Արդահանի և մի քանի ուրիշ գավառների հայերը:

Այդ իրողությունը չեն ժխտում նաև իրենք՝ թուրքերը:

1914-ի վերջին գործողության մեջ դրվեց Ուրմիայի նեստորական ասորի-

---

[1] **Փափազեան Վ.,** *Իմ յուշերը, Հ. Բ, Պէյրութ, 1952, էջ 24:*

[2] **Արամ**..., էջ 63-64:

[3] «Հայրենիք» ամսագիր, 1924 թ. հունիս:

ների բնաջնջման ծրագիրը: Խնդիր էր դրված վերացնել այն բոլոր ոչ թուրք տարրերին, որոնք անջատում էին Թուրքերին Բաքվի և Իրանական Ադրբեջանի թուրք-թաթարական բնակչությունից[1]:

Թեքին Ալփի կարծիքով՝ Իրանի բնակչության 1/3-ը թուրքական արյուն ուներ և պետք է վերադառնար իր ցեղակիցների գիրկը: Իսկ դրա համար պարտադիր պայման էր այդ տարածքներից նաև հայերի անհետացումը: Թուրքերը մեծ թվով հայերի, արաբների, անգամ պարսիկների արյուն հեղեցին հենց այդ տարածքներում: «Ես սեփական աչքերով տեսա,- գրում է ռուսական առաջին բանակի փոխհրամանատար Կ. Մատիկյանը,- հարյուրավոր ծակծկված դիակներ ընկած փոսերում, գարշահոտություն, որ վարակել էր օդը, տեսա գլուխը հատած դիակներ, քարերի վրա կացինով կտրված ձեռներ, սրունքներ, պոկված մատներ, դուրս քաշված գանգեր, դիակներ փլատակների և տասնյակ զոհվածներ ցանկապատերի տակ...

Սպանություններ կատարվել են հայկական շատ գյուղերում»[2]:

Աբաղայի յոթ գյուղերում փրկվեց բնակչության միայն 5-6 տոկոսը, ոչնչացվեց մոտ 10.000 մարդ[3]: Ջարդում էր ոչ միայն թուրքական բանակը, այլև մահմեդական ամբոխը, մասնավորապես քրդերը:

Թուրքիայի արևելյան սահմանամերձ շրջանների, ինչպես նաև ռուս-թուրքական և պարսկա-թուրքական սահմանամերձ շրջանների հայերը սկսած 1914 թ. նոյեմբերից գանգվածաբար փախչում էին Ռուսաստան՝ յաթաղանից փրկվելու համար: «Մշակը» 1915 թ. մարտի 15-ին տպագրեց հետևյալ տեղեկատվությունը. «Ուրմիայից Սալմաստ հասած լուրերով 750 հոգի հայեր ամբողջությամբ մորթոտված են, կանայք՝ առևանգված: Դիլմանում ևս նույն թվով սպանված հայեր կան, որոնց նահատակությունը սարսափելի էր: Կենդանի մարդկանց ոտքերը կտրել են սղոցով, նույն կերպ կտրել են դաստակները, մտրակով կտրատել են քթերը, այտերը, շրթունքները: Դաղել են մարմնի այն բոլոր մասերը, որոնք ավելի դյուրագրգռ են: Սարսափելի տանջանքներով սպանել են թե՛ ծերերին, թե՛ երիտասարդներին՝ առանց սեռի խտրության: Մենք տեսանք և անծայր գազանությունների հետքեր, կարմրած չամփուրները անց են կացրել կանանց և տղամարդկանց սեռական օրգանները և այդպես մեռցրել: Ակնհայտ է, որ սահմանափակում չի եղել այն գազանությունների համար, որոնք կատարվել են թուրք և քուրդ զինվորների ձեռքով»:

Հենրիխ Ֆիրբյուխերը նկարագրում է՝ Սալմաստում ջրհորներից հանեցին 850 գլխատված դիակ: «Ինչո՞ւ: Թուրքական ջոկատների գլխավոր հրամանատարը քրիստոնյայի յուրաքանչյուր գլխի համար վճարում էր որոշակի գումար: Ջրհորները լցված էին քրիստոնյաների արյունով: Միայն Գաստեվանից Սոուջբուլախ ուղարկվեցին 500 անպատվված կանայք ու աղջիկներ... Կանայք տեսնելով, թե ինչպես օրը ցերեկով ավազակները բռնաբարում էին իրենց քույրերին, հարյուրներով նետվում էին խորը գետը»[4]:

---

[1] «The Round Table» (London), June, 1917.

[2] ՀԱԱ, ֆ. 4712, ց. 2, գ. 2, թ. 1:

[3] "Русские ведомости", 14 апреля 1915 г.

[4] **Verbuücher H.,** *Was die Kaiserliche Regierung den Deutschen Untertanen Verschwiegen Hat. Armenien 1915. Hamburg, s. 68-69.*

Հովհ. Թումանյանն ու Ալ. Շիրվանզադեն 1914 թ. նոյեմբերին լինելով Արևմտյան Հայաստանում ներկայացրեցին այն սահմռկեցուցիչ իրավիճակը, որ տիրում էր հայկական շրջաններում: Շիրվանզադեն մոլլա-Սուլեյմանի մասին գրում է. «Առաջին օրը մեր կոզակները արյունաշաղախ փողոցներում ժողովեցին 17 ծերերի, 19 կանանց և 25 երեխաների դիակներ... Անարգված, հոշոտված, պղծված: Այստեղ գլուխներ, այնտեղ նրանց մարմինները... Ծերերի աչքերը դուրս բերված: Մանուկների բազուկները կտրված, երևի մայրերի փեչերից պոկելու համար»[1]:

«Տաճկահայաստանը,- գրեց Հ. Թումանյանը,- ավերակների ու դիակների աշխարհ», որտեղ Թուրքերը սոսկ չեն սպանել ու կողոպտել, այլև գազանային գվարճություններ են հնարել: «Երեխաների ճակատներին մեխ են զարկել, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաչեր են արել, մինչև կեսը դրել են պղինձն ու կեսից ներքև եփել, որ մյուս մասը կենդանի տեսնի ու զգա, չիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել, կենդանի խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ՝ ծնողներին»[2]:

Օսմանյան խորհրդարանի Վանից ընտրված թուրք պատգամավորներից մեկը հայտարարեց. «Իթթիհադը թաքուն գրգռում էր մահմեդական ժողովրդին, որ հարձակվի քրիստոնյա ժողովրդի վրա»[3]:

Չնայած թուրքական վայրագություններին, ՀՅ Դաշնակցության տեղական կոմիտեն շարունակեց գործակցել Իթթիհադի ու թուրքական իշխանությունների հետ:

Խորհրդարանական ընտրություններում Վանում Դաշնակցությունը դրեց Վ. Փափազյանի թեկնածությունը: Արամ Մանուկյանը գերադասեց կենտրոնանալ Վանում և ամբողջությամբ նվիրվել Վանի և Վասպուրականի հայության շրջանում տարվող աշխատանքներին:

Կողմնորոշված լինելով հօգուտ Իթթիհադի հետ համագործակցության, ՀՅ Դաշնակցությունը դա բացարձակացրեց մինչև այն աստիճանի, որ հաշտվեց անգամ նրա ամենամեծապետական, հայատյաց ձեռնարկումների հետ: Այդ կողմնորոշումն առանձնակի որոշակիությամբ դրսևորվեց Վանի դաշնակցականների շրջանում՝ ի հակադրություն հայդուկների, ովքեր ոչ միայն թերահավատ էին սահմանադրության հանդեպ, այլև գտնում էին, որ երիտթուրքերի քաղաքականությունը բացի աղետից, այլ բան չի տա հայ ժողովրդին: Հետագա իրադարձությունները հաստատեցին ոչ թե Դաշնակցության, այլ ֆիդայիների ճշմարիտ լինելը:

Դա առաջին անգամ ցցուն արտահայտվեց զորահավաքի գործընթացում: Իրադարձությունների ժամանակակից, Վանի ինքնապաշտպանության ղեկավար մարմնի քարտուղար Օննիկ Մխիթարյանը իր «Վանի ինքնապաշտպանությունը»[4] հուշերում, որը ստեղծվել է Արամ Մանուկյանի հանձնարարու-

---

[1] ***Շիրվանզադե Ա.***, *ԵԺ, հ. IX, էջ 174:*

[2] ***Թումանյան Հ.***, *ԵԼԺ, հ. VI, էջ 212-213:*

[3] **Ibrahim Asrafin Hatiralari.** *«Yeni Istiklal», 21-ը ապրիլի 1965 թ.:*

[4] *«Հայրենիք» ամսագիր, 1924 թ. ապրիլ:*

թյամբ և օգնությամբ, ձեռքի տակ ունենալով այդ չրջանի փաստաթղթերը, գրում է. «Տարապայման ծառայությունը՝ հասցրած մինչեւ եգիպտական հին դարերը յիշեցնող ստրկական վիճակը, չարաչուք ծեծը, անողորմ բռնությունը եւ ամենափոքր կասկածով իսկ մահուան պատժի գործադրումը հայ զինուորի հանդէպ՝ անխուսափելի եւ բնական երեւոյթ էր: Սովորական էր նաեւ ամենօրեայ ծաղրի ու հայհոյանքի առարկայ դարձնել հայ զինուորի ցեղային պատիւը, լեզուն ու կրօնական հաւատալիքները»:

Ռուսական բանակի հաղթանակները Կովկասյան ռազմաճակատում ողբերգական անդրադարձ ունեցան անպաշտպան հայ բնակչության վրա, որը ենթարկվեց կոտորածի, իսկ հայկական բնակավայրերը՝ թալանի ու ավերածությունների:

Ընդհանուր առմամբ պատերազմն ու դրան առնչված միջոցառումներն ավելի ցցուն դարձրեցին թուրքական իշխանությունների քաղաքականության հակահայ ուղղվածությունը: Բանակի կարիքները բավարարելու համար բռնագրավումներից ամենաչատ տուժեցին հայերը: «Հայերը պարտաւորուեցան լուռ ականատեսներ ըլլալ, որ թիւրք սպաները գրաւեն իրենց բոլոր արջառները, իրենց ամբողջ ցորենը, իրենց ամեն տեսակ ինչքերը»: Ընդհանուր զինակոչի թուրքական տարբերակը նույնպես հայերի մեջ կասկածներ առաջացրեց, մանավանդ, երբ լուրեր էին ստացվում հայ զինվորների վիճակի մասին ու նաև այն, թե թուրքերը ռազմաճակատում իրենց անհաջողությունների մեղքը բարդում էին հայերի վրա, որ ռուսական բանակի կազմում կռվում էին զգալի թվով հայեր: Դեռ ավելին. «Թիւրք կառավարութիւնը չափազանցրեց Վանի հայութեան «դաւաճանական» ընթացքը եւ մինչեւ իսկ զայն իբր չքմեղանք ծառայեցուց ամբողջ ցեղին հանդէպ իր վարմունքին»: Թուրքը մնում է թուրք: Տասնամյակներ չարունակ հայերին հարստահարելուց, ուծացնելուց, կրոնափոխելուց, արտամղելուց ու ջարդելուց հետո էլ հավակնում էր, որ նրանք պատերազմում թուրքական «հայրենասիրության բռնկում էին ունենալու»: Եթե որևէ հայ դասալքում կամ անցնում էր ռուսների կողմը, որակվում էր «պատերազմական ոճիր»՝ կատարված ամբողջ հայ ժողովրդի կողմից: Հասկանալի է, որ դասալքության այդ փաստերը չէին թուրքական ջարդարարության իսկական պատճառը, այլ Իթթիհադի ցեղասպան ծրագիրը, որը գործողության մեջ էր դրվել 1914-ի ամռանը: Զնայած դրան, հայերն «ինքնզսպողութեան հիանալի ընթացքով չարժեցան», քաջ գիտենալով, որ թուրքական գրգռումները խնդիր ունեին հայերին «գործողությունների մղել» և դա պատրվակ գործածել ջարդարար քաղաքականությունն առաջ տանելու համար: Հայ ղեկավարների կողմնորոշումն էր. «Եթէ նոյնիսկ անոնք մեր մէկ քանի գիւղերը կրակի տան, փոխվրէժի մի՛ դիմէք, որովհետեւ աւելի լաւ է, որ մէկ քանի գիւղեր ոչնչանան, քան ամբողջ ազգը կոտորուի»[1]:

«Վանի մէջ,- գրում է Ռուբենը,- պատերազմից առաջ եւ մանաւանդ պատերազմի ընթացքին չի եղել որեւէ լուրջ ձեռնարկ, որ Թահսին պէյը կատարածած լինի առանց Դաշնակցութեան գործօն աջակցութեան: Դաշնակցութեան

[1] **Մորգենթաու Հ.,** նշվ. աշխ., էջ 246:

ղեկավար գործիչները, առաւելապէս Արամը, տաւուլ-զուռնան ետեւը ձգած, ոգեւորում ու հրահանգում էր ժողովուրդին ճակատ մեկնելու...»[1]:

Պատերազմն սկսվելուց հետո Թահսինը հետ կանչվեց և վալի նշանակվեց Էնվերի փեսա Թահիր Ջևդեթը: Նա միաժամանակ նշանակվեց Պարսկաստանի սահմանին տեղակայված թուրքական զորքերի հրամանատար: Դա ևս հայերին զգաստացրեց: Բարձր Դուռը սովորություն ուներ ջարդերից առաջ «կադրային փոփոխություններ» կատարել, այսինքն՝ լիբերալ գործիչներին փոխարինել ջարդարար հակումներ ունեցողներով: Ջևդեթին Մորգենթաուն անվանում է «Բաչկալեյի մսագործ»:

Գերմանիայի բարեգործական միսիայի աշխատակից Սփյորիի վկայությամբ՝ Ջևդեթի գալը վատ նշան էր: Չնայած դրան՝ հայերը նրան ջերմ ընդունելություն ցույց տվեցին, ինչը նոր վալուն շատ հուզեց[2]: Բայց դա չխանգարեց, որ նա իր գործունեության հիմքում դներ հայ բնակչության տեղահանությունն ու կոտորածը:

Ո՞վ էր Ջևդեթը:

1896-1905 թթ. Վանի վալին Թահիր փաշան էր: Նա ծագումով առնաուտ (ալբանացի) էր և իր կանանցից մեկից ուներ մի որդի: Թահիր փաշան իսկական արևելյան բռնապետ էր, սակայն չար մարդ չէր: Իսկ որդին՝ Ջևդեթը, որն իր մանկությունն ու երիտասարդությունն անցկացրել էր Լոնդոնում, չարագործ բնավորության տեր պաշտոնամոլ էր: Անհավասարակշիռ անձնավորություն էր, ատում էր հայերին: Նա շատ արագ բարձրացավ պաշտոնական սանդուղքներով: Իր կարիերան սկսեց ոստիկանական ծառայությունից, ապա նշանակվեց գայմագամ:

Դավոյի դավաճանության հետևանքով 1908 թ. գարնանը խուզարկվում է Վարագա լեռան հյուսիսային լանջին գտնվող Ս. Գրիգորի վանքը: Հայտնաբերվում է մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Բացառված չէ, որ զենքը կուտակված էր նաև Իթթիհադի գիտությամբ և աջակցությամբ ու կոչված էր օգտագործելու սուլթանական վարչակարգը տապալելու համար պայքարում:

Խուզարկություններ կատարվեցին նաև Վանում և վիլայեթի շատ ուրիշ բնակավայրերում, որոնք ուղեկցվում էին վայրագություններով: Մեծ թվով հայեր բանտ նետվեցին, դաժան խոշտանգումների ենթարկվեցին: Այդ ամենում աչքի ընկավ Ջևդեթը: «Գավառային փոքրիկ պաշտոնատարը շատ լավ էր հասկացել, թե կառավարությունն ինչ վերաբերմունք ունի հայերի հանդեպ և ինչ ծրագիր է իրականացնում»:

Նրա ջանասիրությունը գնահատվեց: Ջևդեթը առաջ քաշվեց ու նշանակվեց Բաչկալեի գայմագամ: Նա «կուսակալի մը զաւակ ըլլալու իրողութեանը եւ իր ֆիզիքական առաւելութիւններուն կը պարտէր Էնվեր փաշայի քեռայրն դառնալու իր չանսը... որուն շնորհիւ էր, որ նա ունեցաւ պաշտօնի այդքան արագ բարձրացում: Ան շատ հեռու էր ներկայացնելէ խելքն ու խորագիտութիւնը...»[3]:

---

[1] **Ռուբէն,** *Հայ-Թրքական կնճիռը, Գահիրէ, 1924, էջ 89:*

[2] **Ussher C., Knapp G.** *An American phisician in Turkey. New York, 1917, p. 234.*

[3] **Թերզիպաշեան Ա.,** *Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 153:*

Թահիր փաշայից հետո Կ. Պոլիսը Վանի վալի ուղարկեց նույնպես ալբանացի Ալի փաշային, որը հայերի հանդեպ դաժան քաղաքականություն էր վարում: Հայերը հետապնդում էին նրան ենթարկելու ահաբեկչության և գործը գլուխ բերեցին Սև ծովի նավահանգիստներից մեկում: Ալին Դեր Զորի մութեսարիֆ հայերի արյունախում Զեքիի հայրն էր:

Ալիի հակահայ գործունեությանը մեծ ծառայություն մատուցեց Ջևդեթը: Օրինակ, հանրահայտ է նրա վայրագությունը Աբաղայի Խաչան գյուղում: Նա Պետրոս Փիրումյանին, որ հեղինակություն վայելող գործիչ էր, սկզբում դաժան ծեծի ենթարկեց, ապա մերկացնել տալով ժամերով վրան սառը ջուր լցրեց: Դրանից հետո գլխիվար կախել տվեց առաստաղից: Ոստիկանները նրա մարմինը չիկացրած չչերով այրեցին, վարտիքի մեջ երկու կատու գցեցին ու սկսեցին հարվածել՝ հարկադրելով հոշոտելու դժբախտի մարմինը: Մի օր անց Պետրոսը մահացավ:

Ջևդեթը դրանով չբավարարվեց: Նա խոշտանգեց Պետրոսի 13 տարեկան որդուն, նրան նալել տվեց և հարկադրեց իր առջևից քայլել ու ցույց տալ զենքերի թաքստարանը: Այստեղից «մարդ նալբանդ» մականունը, որ նա վաստակեց ոչ միայն այս, այլ նաև նմանատիպ մի քանի գործողություններ հեղինակելու համար[1]: Նրա հետ Վան գնաց 2000 զինվոր թնդանոթների հետ:

Մինչև վալի նշանակվելը Ջևդեթը բանակում էր, կռվում էր ռուսների դեմ, և որովհետև համոզված էր, որ ռուսների առաջխաղացման դեպքում հայերն անցնելու էին նրանց կողմը, ավերեց Սալմաստ, Խոսրավա, Բաշկալե բնակավայրերն ու կոտորեց դրանց հայ բնակչությանը: Վերադարձի ճանապարհին նրա հրամանով սպանեցին իրենց ուղեկցող 20 հայ զինվորներին: Ապա ջարդեց Արճեշի, Հայոց ձորի հայությանը: Հայերը Ջևդեթի հայատյաց, անհավասարակշիռ, ջարդարար բնավորության մասին գիտեին, բայց ամեն ինչ անում էին հարաբերությունները չսրելու համար: Երբ Ջևդեթը Վան գնաց վալու պաշտոնը ստանձնելու, նրան դիմավորելու համար մինչև Կուռուպաղ գյուղ գնացին հայ հասարակության մեծ թվով ներկայացուցիչներ: Անձրևոտ օր էր, գրում է Ա. Թերզիբաշյանը, բայց դա «արգելք չեղաւ, որ ճեւտէթ պէյ եւ Վռամեան աղէկ մը ժպտէին իրարու երեսին: Անչուշտ բառ մը չմնաց, որ անոնք չգործածեցին իրարու հասցէին եւ, եթէ ճեւտէթ պէյը հետը չունենար մինչեւ ակռանին զինուած չերքէզ կամաւորներու ստուար խումբ մը, մեր առաջին տպաւորութիւնը այնքան ալ գէշ չպիտի ըլլար»[2]:

Ավստրիո-Հունգարիայի ռազմական ներկայացուցիչ Պոմիանկովսկին իր հուշերում Ջևդեթին անվանում է «իսկական ճիվաղ մարդկային կերպարանքով»[3]:

Ջևդեթը համոզված էր, որ Հայկական հարցը լուծման մի եղանակ ուներ՝ բնաջնջել հայերին: «Կասկած չի կայ, թէ ան Վան եկաւ այդ նահանգին հայերը բնաջնջելու որոշ հրահանգներով...»: Համաձայն այդ հրահանգների՝ Ջևդեթը «կազմակերպեց Իթթիհատի մասնաճիւղեր, քլուպներ», անոնց համար իբր

---

[1] *"Армянский вестник", 1916 г., № 21.*

[2] **Թերզիպաշեան Ա.,** *նշվ, աշխ., էջ 148:*

[3] **Pomiankowski J.,** *Der Zusammenbruch des Osmanischen Reiches, Wien, 1928.*

անդամ ընտրելով «գարշելի, կասկածելի եւ յետադիմական ու մոլեռանդ տարրեր, ու անոնցմէ «երեւելիները» դրաւ վարչական ղեկավարութեան գլուխ, իբրեւ «սահմանադրական ղեկավարներ...»[1]:

Անդրե Մանդելչտամը նրա մասին գրում է. «Ջևդեթ բեյն անթափանցելի նկարագիր ուներ: Նա երբեմն երդվում էր, թե չի կամենում անպատվել իր հոր հիշատակը, որը դժվար ժամանակներին հաջողությամբ էր կառավարել Վանում, իսկ երբեմն էլ բղավում էր՝ եթե հայերը չհամաձայնվեն հանձնել զենքերն ու դասալիքներին, նրանց բոլորին կոտորել է տալու»[2]:

Ի դեպ, մինչև Մուշ գնալը Ջևդեթը հասցրեց ջարդել Բաղեշի հայությանը, 900 կին և երեխա խեղդել տվեց Տիգրիսում, 51.000 մարդ տարագրեց գավառից, որոնց ոչնչացնել տվեց ճանապարհին: Երբ Ադանայի վալի նշանակվեց և մեկնեց նշանակման վայրը, Ռաս ուլ Այնի մերձակայքում ոչնչացնել տվեց 70.000 բռնագաղթված հայի[3]:

Քաղաքը լցվում էր գյուղերից կանչված քուրդ հրոսակախմբերով և աշիրեթներով: Զենք ու զինամթերք էր բաժանվում քաղաքի արվարձանների թուրքերին: Վանի զանազան մասերում տեղադրվում էին թնդանոթներ: Իշխանությունները ռազմական նախապատրաստական աշխատանքներ էին ծավալում նաև քաղաքից դուրս: Մարտ ամսին սկսվեցին ամենատարբեր առիթներով ձերբակալություններ նաև քաղաքում: Ջևդեթը կատարվածի մասին հայերի հարցումներին պատասխանում էր, թե տեղյակ չէ և կձեռնարկի համապատասխան միջոցառումներ:

1914 թ. վերջերին նա հեռագրեց Թալեաթին. «Սիլմասի շրջանի բոլոր հայերը համագործակցում են ռուսների հետ: Սահմանի ամբողջ երկայնքով գործող ավազակներին ղեկավարում է հայտնի Անդրանիկը»:

Սակայն այդ ճիվաղը նաև շատ խորամանկ էր: Նա, մի կողմից, սիրաշահում էր հայերին, իսկ մյուս կողմից, օգտվելով «հայերին զորակոչելու պատրվակից, ամեն ինչ անում հասարակական կարծիքն ուղղելու հայերի դեմ՝ սադրելով «հայկական ապստամբություն»:

Գյուղերի հայ բնակչության հոսքը Վան Ջևդեթը գնահատում էր երկակի՝ գյուղաբնակները «բեռ էին» դառնում քաղաքաբնակների համար՝ նրանց սնել, օթևանել էր պետք: Նրանք միաժամանակ վտանգավոր էին կառավարության համար, որովհետև հզորացնում էին քաղաքաբնակների ռազմական ուժը: Այդ էր պատճառը, որ նա մերթ խրախուսում էր գյուղացի հայերի հոսքը քաղաք, երբեմն ինքն էր դա կազմակերպում, մերթ էլ քայլեր էր կատարում գյուղացիներին հետ ուղարկելու իրենց բնակավայրերը: Նա հայտարարեց, թե հայերը կարող են իրենք որոշել՝ բանակում ծառայե՞լ, թե՞ ոչ, և Վանում կուտակվածներին կոչ արեց վերադառնալ իրենց գյուղերն ու զբաղվել դաշտային աշխատանքներով: Այդ քայլը նպատակ ուներ հայերի ուժերը ցրել, ջլատել և նրանց կոտորել առանձին-առանձին[4]:

---

[1] **Փափազեան Վ.,** նշվ. աշխ., էջ 27-28:

[2] **Зареванд,** Турция и пантюркизм, предисловие А. Мандельштама, Париж, 1930 г.

[3] «Ժամանակ», 27 նոյեմբերի, 1918 թ.:

[4] "Кавказское слово", 29 апреля 1915 г.

Երբ ստացվեց Էնվերի հրամանը, որ բոլոր հայ զինվորները պետք է ուղարկվեն ռազմաճակատ, Ջևդեթը Վռամյանի բնակարան գնաց այդ հարցը քննարկելու: Զրույցը բարեհամբույր ընթացք ուներ, բայց Ջևդեթը հանկարծակի ընդհատում է այն և «խաթր ունեմ» ասելով շտապ մեկնում է, իսկ մի քանի օր անց, երբ մի քանի հայեր լինում են նրա մոտ, ասում է. «Այդ օրը Վռամեան էֆենտիի տունը խմածս քոնեաքին վրայ, յանկարծակի խիթեր ունեցայ... Բժիշկը ստամոքսս լուաց և անոր պարունակութիւնը քննելով՝ ինծի յայտնեց, թէ թունաւորուած էի»[1]:

Ջևդեթի մտածողության արտահայտություն էին նրա հետևյալ խոսքերը. «Խենթություն է ռազմաճակատ ուղարկել այսպիսի տրամադրություն ունեցող հայերին, ովքեր այլ բան չեն անելու, եթե ոչ իսլամ զինվորի ոգին մեռցնելը»:

Այդ օրերին Էնվերը գրեց Թալեաթին. «Ինչպե՞ս վարվել Վանա լճի շրջանի խռովարար հայերի հետ՝ արտաքսե՞լ ռուսական սահմա՞ն, թե՞ Անատոլիայի խորքերը, իսկ նրանց տարածքները բնակեցնել ուրիշ վայրերի մահմեդականներով»[2]:

Վանում Իտալիայի հյուպատոսական գործակալը 1915 թ. մայիսի 31-ին գրել է, որ Ջևդեթ բեյը Սալմաստում. Խոսրավայում և Բաշկալեյում քրիստոնյաներին կոտորելուց հետո Վանի տղամարդկանցից պահանջեց գորակոչվել բանվորական զորամասերի համար: Սակայն իրականում նրանց հավաքում էին, «որպեսզի ոչնչացնեն, ինչպես մեկ անգամ Ջևդեթ բեյն արդեն արել էր, հրամայելով դավաճանաբար գնդակահարել իր հրամանատարության տակ եղած բազմաթիվ հայ զինվորների»:

Ըստ եվրոպական թերթերի՝ Վանն աղետալի վիճակում էր: Ֆրանսիական դեսպանը Բարձր Դռանից պահանջեց Վանում զորքեր ավելացնել հայերին քրդերի հարձակումից պաշտպանելու:

Հյուպատոսությունների աշխատակիցների անվտանգությունն ապահովելու համար իշխանությունները նրանց նախապես տեղափոխեցին Միջնաբերդ: «Թան» թերթը գրեց. «Վանի խռովության պատասխանատուն միայն հայերը չեն: Կայսերական պատվիրակ Սաուդին փաշան. որ Վանում էր, մի քանի ամսից ի վեր նկատել էր վտանգը... փոխանակ դիմելու բանակին ու ոստիկանությանը, հարաբերությունների մեջ մտավ քրդերի հետ, մտածելով, որ կկարողանա ճարպկորեն նրանց միավորել և ձեռքի տակ մեծ ուժ ունենալ հայկական հեղափոխությունը ճնշելու համար: Այդ ժանտ ավարառուները դեպքից առաջ արդեն վխտում էին քաղաքի շուրջը»:

Վանում գտնվող դոմինիկյան միսիոներների ղեկավար դր Ֆրանսը ահազանգ հնչեցրեց՝ քրդերը շարժվում են Վանի վրա:

Ջևդեթը ավազակներով համալրեց ոչ միայն ոստիկանության, այլև զինվորականության շարքերը: «Գործի» վերադարձվեցին համիդիեականները:

Թուրքական բանակից դասալքությունը գանգվածային բնույթ էր կրում: Դասալքում էին նաև հայերը: Ջևդեթը սպառնաց հայերին՝ բանակ վերադարձ-

---

[1] **Թերզիպաշեան Ա.,** նշվ. աշխ., էջ 157:

[2] **Kâmuran Gürün,** *Le Dossier Arménien, Ankara, 1983, p. 242.*

նել դասալիքներին: Վանեցիները հասկացան, որ այդ արվում էր հայ երիտասարդությանը ոչնչացնելու դիտավորությամբ:

Իշխանությունները հետևողականորեն խստացնում էին վերաբերմունքը հայերի հանդեպ, հրաժարվում նախկինում տված խոստումներից: Ջևդեթի կողքին էր գնդապետ, Վանի թուրքիկ զորապահների հրամանատար Քյազրմ Էոզալփը, որ հետագայում դարձավ Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի նախագահ: Վ. Փափազյանը գրում է, որ նա «աննշմարելի կերպով բացասական մեծ դեր կը կատարէր... հայատեաց էր, դաժան...»[1]:

Այն, ինչ նախապատրաստվում էր, գրում է Արշավիր Շիրակյանը, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից. «բոլորովին տարբեր էր համիտեան շրջանի ջարդերէն, որոնք Հայկական Հարցը մարելու կամ ժողովուրդին վրայ սարսափ տարածելու բնոյթը ունէին: Այս մէկը կը ձգտէր Հայկական Հարցը միանգամ ընդմիշտ թաղելու՝ բնաջինջ ընելով ամբողջ հայութեան»:

1915 թ. հունվարին, երբ Կովկասյան ճակատում թուրքական բանակը հարձակողական գործողություններ էր ծավալել, թուրքական զորքը՝ համիդիեն ու չեթեները, կենտրոնացան Ալաշկերտի դաշտում և սկսեցին հայերին կոտորել: Այս կոտորածները տարածվելով հասան Վանի նահանգ և Ուրմիա լճի շրջանները: «Էնվերի փեսան՝ արիւնարբու ճեւտեթ եւ ազգական Խալիլը՝ թրքական բանակի գլուխն անցած ասպատակեցին Հիւսիսային Պարսկաստան եւ հայկական ու ասորական գիւղերը իրենց յարձակումներուն թիրախ հանդիսացան: Գիշատիչներէ հալածական թռչուններու նման հայերը փախուստ կու տային ամեն ուղղութեամբ՝ ապաստան գտնելու համար...»:

Այդ ընթացքում զորք է բերվում Էրզրումից, որին հանձնարարվում է կոտորել Արճեշի և Հայոց ձորի հայությանը, իսկ ինքը՝ Ջևդեթը հարձակում է պատրաստում Վանի հայկական թաղերի վրա[2]:

Վասպուրականի հայության ճակատագիրը դասավորվեց չատ դառնաղետ: Այլ կերպ լինել չէր կարող, որովհետև հակառակորդն իր ռազմական հզորությունը գործածում էր հայերին ոչնչացնելու համար: Ինչպես ամենուրեք, Վասպուրականում ևս հայերը նախաձեռնությունը թողեցին կառավարությանը, փորձեցին այլևայլ միջոցներով խույս տալ բախումներից և չնախապատրաստվեցին դրանց, մանավանդ, որ հայ գյուղացին պատերազմելու փորձ չուներ, չուներ ռազմական գործին ծանոթ, մարտեր վարելու գիտելիքներ ու հմտություններ ունեցող ղեկավարներ, նաև քաղաքական առաջնորդներ:

«Русские ведомости» թերթի մայիսի 9-ի համարում Ն. Օգանովսկին պատմում է Արճեշի ինքնապաշտպանության մասին: Նա գրում է, որ «մասնավոր սպանություններն ու թալանը սկսվեցին մարտ ամսին»: Թուրքերն առանձնակի դաժանությամբ էին գործում Արճեշի կազայում: Բանտերից ազատված հանցագործներից ձևավորեցին չեթեական ավազակախմբեր, որոնք գործում էին նաև Էրզրումում, Մուշում, Բիթլիսում, Դիարբեքիրում և Կիլիկիայի մերձակա շրջաններում: Կոտորածները գնալով ծավալվեցին և

---

[1] **Փափազեան Վ.,** նշվ. աշխ., էջ 291-292:

[2] **Շիրակեան Ա.,** Կտակն էր նահատակներուն, Պէյրութ, 1992, էջ 42:

ապրիլի սկզբներին դարձան գրեթե համընդհանուր և պարբերական:

Սուլթանի իրադեով՝ բոլոր հայ զինվորները զինաթափվեցին և ուղարկվեցին աշխատելու ճանապարհաշինությունում: Երկուշաբթի օրը, ապրիլի 6-ի կեսօրին, ժանդարմներն ու չեթեները ձերբակալեցին քաղաքի (Արճեշի) փողոցներում հանդիպած բոլոր հայերին ու տարան բանտ և զորանոցներ: Գիշերը ձերբակալեցին տղամարդկանց, որոնց փոքր խմբերով միմյանց կապեցին, քաղաքից հանեցին և հայտարարելով, թե ռուսների հանդեպ համակրանք ունենալու համար նրանք ենթակա են մահապատժի՝ սկսեցին սպանել:

Հաջորդ օրը չեթեները շարժվեցին գյուղերի վրա: Ամենուրեք արու բնակչությանը լցրեցին զորանոցները: Գիշերները 20-30 հոգանոց խմբերով դուրս էին տանում նրանց ու գնդակահարում: Նույն ժամանակ քրդերը խուժում էին հայերի տները, բռնաբարում կանանց ու աղջիկներին, երիտասարդներին իրենց հետ տանում, մնացածներին եփում էին կաթսաներում, նետում թոնիրները, ոտներին հագցնում չիկացրած պայտեր և այլն:

Քաղաքից փրկվեցին միայն մի քանի ուժեղ տղամարդիկ: Նրանք անցան Ռուսաստան ու միացան հայկական կամավորական գնդերին:

Հինգ օր անց Գևորգ 5-րդ կաթողիկոսը գրեց Սերգեյ Սազոնովին. «Վանի վիլայեթում թուրքական ժանդարմները զորահավաքի կամ հասարակական աշխատանքների պատրվակով հայ տղամարդկանց հավաքում են և հարազատ վայրերից հեռու տեղերում զանգվածաբար գնդակահարում, իսկ կանանց ու երեխաներին առևանգում են»[1]:

ՈՍՏԱՆ. - 1914 թ. նոյեմբերին Ոստանի գայմագամ Շուքրին, պատրվակ բռնելով հեռագրալարի կտրվելը, հարձակում գործեց հայկական Բելլու գյուղի վրա: Հայերը մի քանի օր համառ դիմադրություն ցույց տալուց հետո դեկտեմբերի 5-ին հարկադրված եղան հեռանալ գյուղից: Թուրքերը գյուղը կողոպտեցին ու հրդեհեցին:

ՎԱՐԱԳ. - Վարագա լեռան փեշերին Կողպանց, Դարման և Շուչանց հայկական գյուղերն էին, Վարագա վանքի համալիրը, որոնք Գալիբա և Շուչանց բարձրագագաթներով պատված էին ոչ միայն տեղի, այլև Վանի հայության համար: Ջևդեթը Վարագի դեմ տարավ 1500 զինվոր և թնդանոթներ:

Ապրիլի սկզբին Վասպուրականի կոտորածներից փրկվածների զգալի մասը 6000 մարդ, կուտակվել էր Վարագում:

Վարագը Այգեստանի համար առանձնակի նշանակություն ուներ, քանի որ քաղաքում ձախողվելու դեպքում վանեցիների փրկության միակ վայրը Շուչանցն ու Վարագն էին: Նաև վտանգ կար, որ կոտորածների միջով անցած ու Վարագա լեռներում հավաքված մարդկային զանգվածը լցվելու էր Այգեստան: Ահա թե ինչու Ռազմական մարմինը միջոցներ ձեռնարկեց Վարագի պաշտպանությունը կազմակերպելու համար: Այդ գործի ղեկավարությունը հանձնարարվեց մեծ հեղինակությունից օգտվող խառակոնիսցի Շիրինին, որը հաջողեց փախստականներին կազմակերպել, քաղաքի օգնությամբ զինել, կարգավորել մատակարարման գործը և Շուչանցն ու Վարագը պաշտպանել մինչև ապրիլի 25-ը:

---

[1] АВПР, Политархив, д. 3508, л. 16.

Ապրիլի 18-ին Թուրքերը հաջողում են գրավել Սղգագյուղն ու Շուշանցը և Վարագն առնել խաչաձև կրակի տակ: 25-ին Թուրքերը մեծաթիվ ուժերով հարձակում են գործում Շուշանցի վրա: Հայերը լուրջ դիմադրություն ցույց տալ չեն կարողանում և փախչում են լեռները: Շրջապատվում է Վարագը: Հաջողվում է բնակչությանը տեղափոխել անվտանգ վայրեր, իսկ կովողները շրջափակման օղակը ճեղքում են ու անցնում Այգեստան: Շուտով քաղաք խուժեցին նաև ծերերի, կանանց ու երեխաների շատ խմբեր: Այգեստանի ռազմական մարմինը, հայթայթիչ, նպաստաբաշխ հանձնախմբերը, քաղաքապետարանը և կանանց միությունը հարկադրված էին զբաղվելու նաև փախստականների սննդի կազմակերպման ու տեղավորման հարցերով: Իսկ Վարագում Թուրքերը թալանեցին Ս. Գրիգորի վանքն ու ապա հրդեհեցին:

ԱՐՃԱԿ. - Վասպուրականի ապրիլյան ջարդերն ու ինքնապաշտպանական կռիվները հատկապես մեծ ծավալներ ունեցան Արճակում: Հայերի ինքնապաշտպանությունը ղեկավարում էր նույն ինքը՝ Շիրին Հակոբյանը: Նոր գայմագամ նշանակված Քյամիլին էր հանձնարարված Արճակի հայության բնաջնջման գործը: Նա ապրիլի 5-ին իր մոտ հրավիրեց Շիրինին, բայց վերջինս հրաժարվեց գնալ, որովհետև գիտեր Թուրք պաշտոնատարի դավադիր նպատակի մասին: Նա շրջակա գյուղերի մարտական ուժերը կենտրոնացրեց Խառակոնիս գյուղում. դիրքավորվեց և որոշեց կռիվ տալ Թշնամու դեմ:

Ապրիլի 6-ին Քյամիլը 150 զինվորով ու թնդանոթներով սկսեց հարձակումը: Հարձակմանը միացան Խանասորցի Շարիֆը, Մակուցի Նաջիբն ու Շավրցի Արիֆն իրենց հրոսակախմբերով: Նրանց դեմ կանգնած էին 100 գյուղացիներ: Հայերը երկու օր չարունակ հետ են շպրտում Թշնամու հարձակումները, նրան պատճառում գգալի մարդկային զոհեր: Բայց ավելին անել չհաջողվեց: Ժողովրդին փրկելու համար Շիրինը Արճակա լճի հյուսիսային փեշով Արճակի Արտավեզ, Ազիզգյոզալ, Կոճ, Կյուսնեն, Խառաչիկ, Սեթերեկ, Քեուբարիկ և մի քանի ուրիշ գյուղերի հայ բնակչությանը բարձրացրեց Կըզլչա լեռան Զոմախլու գագաթը, որտեղ ապաստանեցին նաև Բերկրիի և Վերին Թիմարի գյուղացիները: Ապրիլի 9-10-ին հայերը հետ շպրտեցին Թուրքերի գրոհները, ապա գիշերն իջան Թիմարի Ավերակ գյուղը, որտեղ հավաքվեց չուրջ 2000 հոգի: Ապրիլի 11-ին Ավերակը շրջապատվեց ու գնդակոծվեց: Հատկապես կատաղի մարտեր մղվեցին գյուղի հարավային մասում՝ Դդմաքարի դիրքերում: Հայերը տվեցին 100 սպանված: Փոքր չէին նաև Թուրքերի կորուստները: Գիշերն արճակցիները թողնում են գյուղն ու շարժվում դեպի Այգեստան: Հաջորդ օրը Թուրքերը հարձակվեցին Դուրման ու Կողպանց գյուղերի վրա, որտեղ կուտակվել էիմ Լիմ, Զարանց, Սևուն, Էրմանց, Պախելիկ, Ֆուռուզ, Ոսկիրակ և մի քանի ուրիշ գյուղերի բնակիչները (հայեր և ասորիներ), թվով 3000 հոգի: Այս գյուղերում ևս ուժեղ մարտեր մղվեցին, որից հետո հայերը նույնպես շարժվեցին Վան:

ԱԼՋԱՎԱԶ. - 1915-ի փետրվարին Ամարե Զայտոյի և Հյուսեինի քրդական հրոսակախմբերը հարձակվեցին կազայի հայկական գյուղերի վրա (21 գյուղ): Ամարեն՝ հայերի սպանած Բչարա Զաթոյի որդին և Հյուսեինը՝ եղբայրը, վրեժխնդրությամբ էին լցված հայերի հանդեպ: Այդ վայրենիները անլուր

բռնություններ գործադրեցին Կոճեր, Խոռանց, Ղազել և մի քանի ուրիշ գյուղերում: Հայերը Օհան Դարբինյանի և Մկրտիչի (Մկոյի) ղեկավարությամբ դենքի դիմեցին: Հատկապես կատաղի ճակատամարտ տեղի ունեցավ Առեն գյուղում, որտեղ սպանվեցին նաև Ամարեն և Հյուսեինը: Քրդերը փախուստի դիմեցին: Փետրվարի 16-ին գյուղի վրա հարձակում գործեց Թուրքական բանակը Թնդանոթների հետ: Գյուղի հայությունը բնաջնջվեց:

Ապրիլի 6-ի առավոտից սկսած Արճեշի գայմագամը հրավերներով և զանազան պատրվակներով կառավարչատուն է բերում քաղաքի բոլոր հայերին: Սակայն եկողներն այլևս հետ չէին դառնում: Ովքեր կառավարչատուն էին մտնում՝ խուզարկվում էին, ձեռքերը կապում էին, պարանով ընդհանուր շղթայի էին կցվում: Այդպես կապեցին արու սեռի 12 տարեկանից բարձր բոլոր մարդկանց: Ապա նրանց տարան Օրորան գետն ու ափին բոլորին գնդակահարեցին: Սպանվեց 1200 հոգի: Սպանդն անձամբ ղեկավարում էր գայմագամ Ալի Ռիզան:

Քաղաքը հրդեհվեց:

Օգտվելով ստեղծված հնարավորությունից՝ բաշիբոզուկներն ու քրդերը խուժեցին տները, կանանց բռնաբարեցին ու տարան իրենց հետ, երեխաներին շպրտեցին հրդեհի բոցերի մեջ:

Ն. Օգանովսկին «Русские ведомости»-ի 1915 թ. մայիսի 12-ի համարում գրում է, որ Վանա ծովի հյուսիսային ափին գտնվող այդ քաղաքում մասնակի սպանություններն ու կողոպուտները սկսվեցին մարտ ամսից: Կոտորածները ծավալվեցին և ապրիլի սկզբին դարձան ընդհանուր և պլանավորված: Բոլոր հայ զինվորներին զինաթափեցին և ուղարկեցին ճանապարհ կառուցելու: Ապրիլի 6-ին ժանդարմներն ու չեթեները տղամարդկանց ձերբակալեցին և կեսգիշերին խումբ-խումբ ոչնչացրին: Հաջորդ օրը ջարդերը տեղափոխվեցին գյուղերը:

Ականցի, որտեղ բնակվում էին 300 տուն հայ և 700 տուն մահմեդական, ապրիլի 6-ի դեպքերի մասին պատմում է որմնադիր Է. Սիմոնը: «...Հանկարծ կառավարական մունետիկն անցնելով փողոցներով, 15 տարեկանից բարձր հայ բոլոր տղամարդկանց հրավիրեց հյուքյումեթ:

Միաժամանակ ժանդարմները փողոցներում և նույնիսկ տները մտնելով առաջին իսկ պատահած հային քշում էին հյուքյումեթ: Վերջիններից մեկը ես էի: Ավելի քան 400 չափահաս տղամարդ և երիտասարդներ տարվեցին հյուքյումեթ և փակվեցին առանձին սենյակներում և բանտում: Երբ արդեն տեղ չկար, ձերբակալված հայերին սկսեցին քշել զորանոցները... Այնտեղ ավելի շատ մարդ հավաքվեց, քան մենք էինք: Գիշերվա կեսին ներս մտավ բանտապահ Ալին: Նա մերոնցից տասնմեկին հանեց միջանցք, նրանց շարեց և կապեց բոլորի ձեռքերը: Այդ շարքում էի և ես: Հետո հանեց ևս ութ մարդ և նրանց ևս իրար կապեց: Նույն կերպ վարվեց նաև երրորդ խմբի հետ, որը կազմված էր ինը հոգուց:

... Երբ այդ գործողությունն ավարտվեց, բանտապահը դիմեց ժանդարմներին (8-10 հոգու) և ասաց.

– Սրանց հանձնում եմ ձեզ, տարե՛ք զորանոց:

Ժանդարմները մեզ... զորանոցի փոխարեն տարան դեպի նավահանգիստ: Տղաներից մեկը խնդրեց մի փոքր թուլացնել թևերի կապը, ժանդարմը խզակոթով այնպես հարվածեց նրան, որ տղան ցավից ճչաց ու կախվեց պարանից:

Հարքեն գյուղի ներքևում մի կիրճ կա, որի միջով հոսում է Դարա-Զամին անունը կրող գետակը: Նոր էինք տեղ հասել, երբ ժանդարմները մի կողմ քաշվեցին և հրացանները մեզ ուղղելով սկսեցին կրակել...

Անցավ մի քանի րոպե. մարեցին ողբն ու ճիչերը, միայն ծանր տնքոց էր լսվում: Այդ ժամանակ մոտեցան ժանդարմները և սկսեցին մեզ մեկ առ մեկ չոչափել և պարանները քակել: Ես գիտակցությունս կորցրեցի: Ժանդարմներից մեկը վառված լուցկին մոտեցնում էր ընկածների դեմքերին: Կրակում էին նրա վրա, ով կենդանության նշան էր ցույց տալիս: Այդ պահին հեռվում կրակեցին... կրակում էին մեր ուղղությամբ: Բարձրացավ աղեկտուր ճիչերի նոր աղմուկ... ժանդարմները մեզ թողեցին ու փախան:

Շուրջբոլորը ձյուն էր, մի մեծ քարի տակ տեսա սև տեղ և գնացի չունչ առնելու: Սարսափը նորից ինձ պատեց, երբ քարերի հետևում տեսա մարդկանց: Նրանք ինձ նման փախստական հայեր էին՝ 123 հոգի, մեր շրջանի Սոսկուն գյուղից: Լսելով Ակունցի կոտորածի մասին՝ գյուղից փախել էին:

Քաղցած ու հոգնած հասանք Դիադին, որտեղ ռուսական զորքն էր»[1]:

Ականցի կոտորածի մասին պատմում է նաև հրաչքով վերապրած Մկրտիչ Հովհաննիսյանը: Քսան տարի առաջ Մկրտիչը բնակվում էր հայրենի (Արճեշի Բանոն) գյուղում իր երիտասարդ կնոջ և մեկ տարեկան դստեր հետ: Նա Բենոնի ամենահարուստ տներից մեկից էր... 1896 թ. կոտորածների ժամանակ... Բենոնը թալանվեց ու ավերվեց: Մկրտչի կինն ու աղջիկը. ավագ եղբոր՝ Ասլանի կինն ու երկու աղջիկը. մյուս եղբոր՝ Հարությունի տղան ու աղջիկը սպանվեցին: Իսկ Մկրտիչը փախավ սարսափների երկրից և ապաստան գտավ Արարատյան դաշտում: Այստեղ ամուսնացավ, երեխաներ ունեցավ: Թուրքական սահմանադրության հռչակումից հետո ընտանիքի հետ վերադառնում է Բանոն, որտեղ 40 տների փոխարեն տեսավ հինգ խղճուկ հյուղակներ:

«1915-ի ապրիլի 2-ին լուր տարածվեց, թե տասնապետ Ալին 7-8 ժանդարմների հետ գյուղերում դասալիքներ էր փնտրում: Հետաքրքրասիրությունից մղված, մասամբ էլ գործ ունենալու պատճառով գնացի Գանձակ,- պատմում է Մկրտիչը:- Նոր էի տեղ հասել, երբ տասնապետ Ալին ինձ ձերբակալեց: Ես ազատված էի զինվորական ծառայությունից: Ալին դրան ուշադրություն չդարձրեց, գրպանը դրեց ծննդյան վկայականս, ինձ խառնեց ուրիշ ձերբակալվածների հետ, ասելով, թե հրամայված է 18-ից բարձր տարիքի բոլոր տղամարդկանց քաղաք տանել:

Ապրիլի 4-ին հասանք Ականց քաղաքը, որտեղ մեզ ուղիղ զորանոց տարան: Այնտեղ տեսանք շատ հայերի: Նրանց թիվն անընդհատ ավելանում էր և հասավ 800-ի:

---

[1] *"Армянский вестник", 1916 г., № 10.*

Ապրիլի 5-ին մի քանի հոգու ուղարկեցին ոստիկանատուն, որտեղ մեզ գրեցին ոստիկան: Սակայն հաջորդ օրը բերեցին հետ և ասացին, թե տանելու են Դիարբեքիր:

... Զորանոցի առջև հրապարակում հավաքված էր բավական թվով միլիցիա՝ ծեր թե ջահել: Եկավ նաև գայմագամ Ալի Միրզա բեյը, որը միլիցիոներներին ինչ-որ հրամաններ տալով, ուղարկեց տարբեր ուղղություններով:

Լուր տարածվեց, թե թեմի առաջնորդի տեղապահն ու մյուս հեղինակավոր հայերը քաղաքից հանվել ու սպանվել են: Շուտով մեր կացարանի դուռը բացվեց և 39 հոգու տարան: Քառորդ ժամ անց դուռը կրկին բացվեց և ևս նույնքան մարդ դուրս հանվեց... Երբ 50 հոգով դուրս եկանք՝ զորանոցի միջանցքում ժանդարմները գազանի նման հարձակվեցին մեր վրա: Մեզ ժանդարմներով շրջապատված ու միմյանց կապած քաղաքից հանեցին: Տարան Կուրաչի Յուրդի գետափ: Հեռվում, մթության մեջ նշմարեցի մի քանի դիակ... Սկսվեց իրարանցում: Ժանդարմներն ու միլիցիոներներն այդ նկատելով անմիջապես կրակ բացեցին: Շատերն ընկան, առաջացավ դիակների կույտ, և ես մնացի այդ կույտի տակ ...Երկար ճամփա անցա և հաջորդ օրը հասա մեր տուն: Այնտեղ մնալն անհնար էր: Քաղաքից սարսափելի լուրեր էին հասնում կոտորածների մասին, հարևան քուրդ ցեղերի շրջանում շարժում սկսվեց, մի քանի գյուղեր հարձակման ու թալանի ենթարկվեցին: Ես սպասեցի մինչև երեկո և գիշերը վրա հասնելու հետ բախտի քմահաճույքին թողնելով կնոջս ու երեխաներիս, գնացի Ալադաղի ուղղությամբ»[1]:

ԹԻՄԱՐ. *- Թիմարի 50 գյուղերից 30-ը հայաբնակ էր: Գավառն ինքնապաշտպանության համար ուներ հարմար դիրք: Լիմ և Կտուց անապատները լավ հնարավորություններ էին ընձեռում պատսպարվելու, դիմադրություն կազմակերպելու և փրկելու մեծ թվով մարդկանց: Գայմագամ Զիան Բերկրիի հայությանը ջարդելուց հետո իր հարյուրավոր միլիցիոներներով, Արճեշից եկած հրոսակախմբերի և տեղի թուրք ու քուրդ խուժանի հետ մտավ Թիմար: Մարտի սկզբին թուրք ժանդարմները հարձակվեցին Էթերին, Այյուր և Խավենց գյուղերի վրա: Նորից ավեր, թալան, սպանություն: Թիմարցիները Ռուբեն Իսրայելյանի ղեկավարությամբ դիմեցին ինքնապաշտպանության: Հայերի և 500 հոգու հասնող թուրքական զորամասի միջև գլխավոր բախումը տեղի ունեցավ մարտի 10-ին Բողանց գյուղում: Թուրքերին չհաջողվեց հայերի դիմադրությունը հաղթահարել և «հաշտություն» առաջարկեցին: Կատաղի մարտեր տեղի ունեցան նաև Տիրամեր (Աստվածածին), Ինժիչկ և Մարմենդ գյուղերում: Ապրիլի 12-ին թուրքական զորքերը հարձակվեցին Թիմարի ամենամեծ գյուղի՝ Այյուրի վրա, որի 343 տուն հայերին գումարվել էին մերձակա գյուղերի բնակիչները: Հայերը Այյուրցի Աբիսողոմի և Սարգիս Մարդոյանի գլխավորությամբ համառ դիմադրություն ցույց տվեցին թշնամուն: Թուրքերը առաջարկեցին դադարեցնել դիմադրությունը՝ խոստանալով գյուղին չվնասել: Դա տարընթացություն առաջացրեց հայերի շրջանում, ինչից օգտվեց թշնամին և լցվեց գյուղը: Երկու օր շարունակ Այյուրը թալանվում ու կոտորվում էր:*

---

[1] *"Армянский вестник", 1916 г., № 21.*

Այնուամենայնիվ, Հայոց ձորի հայության զգալի մասը փրկվեց:

Թիմարից գինված ջոկատները, Շիրինի հրամանատարությամբ, փոքրիկ ընդհարումներով Վարագի վրայով անցան Վան: Թիմարում ողջ մնացածներից 12.000 հոգի հեռացավ Լիմիի վանք և այնտեղ մնաց մինչև հայ կամավորների գալը:

Ջևդեթի հրամանով՝ Թիմարի կանանց, երեխաներին և ծերերին տեղափոխեցին Վան, որպեսզի հնարավորին չափ արագ սպառվեն հայերի սննդամթերքի պաշարները: Վանեցիներն այդ թույլ չտվեցին և նրանց ուղարկեցին Փեսանդաշտ: Շնորհիվ Լևոն Շաղոյանի հնարամտության ու ջանքերի՝ Թիմարցիների այդ հատվածը փրկվեց՝ 1915-ի հուլիսին գաղթեց Արևելյան Հայաստան: 1917 թ. 1200 հոգի վերադարձավ Հայոց ձոր, բայց նույն տարում հարկադրված եղավ նորից հեռանալ հարազատ վայրերից:

«Кавказское слово» թերթը ապրիլի 29-ին անդրադառնալով Վասպուրականում ծավալված իրադարձություններին, գրում է, որ Թիմարի գյուղերում տեղակայված ասկյարները զբաղվում էին թալանով ու հրկիզումներով: 370 ասկյարներ շրջափակեցին Մերմետ գյուղը: Վանից գյուղին օգնության ուղարկվեց 70 մարդ: Ընկնելով խաչաձև կրակի տակ, թուրքերը վերացրեցին շրջափակումը: Նույն ժամանակ նրանք երեք թնդանոթով հարձակվեցին Բոզանդ և Նաբաթ գյուղերի վրա, սակայն հայերը նրանցից խլեցին թնդանոթներն ու սպանեցին թուրքերի հրամանատարին:

Բանդե Մահու գետի կիրճի խորխորատը գայմագամ Զիան դարձրեց հայերի գերեզմանոց: Ապրիլին Բերկրիում հավաքված չուրջ 1000 հայ տղամարդկանց 50-100-ական հոգանոց խմբերով տարան այդ կիրճը և սպանեցին կամ կենդանի նետեցին խորխորատները: Մասնավորապես շատ տուժեցին Խաչան, Ղայմազ, Սընդ, Պզտիկգեղ, Գործոթ գյուղերը: Միայն Գործոթի գյուղացիները փորձեցին պաշտպանվել:

ԳԱՎԱՇ. - 1914 թ. դեկտեմբերի 6-ին Բելլու գյուղում ոչնչացվեց չուրջ 100 մարդ, ինչը ցնցեց հարևան գյուղերի հայ բնակչությանը: Աթանան գյուղի վրա հարձակում գործեց Ռուսաստանից եկած 150 հոգիանոց ժանդարմերական մի ջոկատ: Հայերը դիմեցին ինքնապաշտպանության: Մասնավորապես կատաղի մարտեր տեղի ունեցան դեկտեմբերի 6-7-ին: Հայերի պաշտպանությունը ղեկավարում էր խառակոնիսցի Լևոնը: Թուրքերն այդպես էլ չհաջողեցին կոտրել հայերի դիմադրությունը և «հաշտություն կնքեցին»: Այդ կռիվներում հայերը կորցրին 700 մարդ: Գավաշի բնակչության մեծ մասը գնաց Փեսանդաշտ և Մոկս: Երբ ռուսական բանակն ազատագրեց Վասպուրականը, շատ գավաշցիներ վերադարձան և սկսեցին վերաշինել իրենց ավերված շենները: Սակայն ռուսական բանակի հուլիսյան նահանջը գավաշցիներին էլ նետեց Արևելյան Հայաստան:

ՀԱՅՈՑ ՁՈՐ. Այստեղի բնակչության 80 տոկոսը (12.000 մարդ) հայ էր: Կազայի 38 գյուղերից 30-ի բնակիչները հայեր էին: Ապրիլի 5-ին թուրքերը հարձակվեցին Հիրճ գյուղի վրա, 50 հայի լցրեցին Ռաշիդ աղայի ախոռը, սրախողխող արեցին և դիակները հորը գցեցին: Դա զգաստացրեց Հայոց ձորի բնակչությանը: Նրանք ինքնապաշտպանության դիմեցին:

Ապրիլի 6-ին Թուրքական մի զորախումբ Էդհեմի հրամանատարությամբ հարձակվում է Վարին Հայոց ձորի վրա: Թշնամին ավերեց Պլթենց գյուղը, ապա հարձակման անցավ Սպիտակ վանք և Աթանանց գյուղերի վրա: Մի քանի բնակավայրերի բնակիչների հաջողվում է քաշվել Քերծի լեռը:

Գյուղը ռմբակոծելու հետ միաժամանակ Թուրքերն այն առան օղակի մեջ: Բայց երբ փորձեցին մոտենալ Պլթենցի տներին, ընկան հայերի ուժեղ կրակի տակ և փախուստի դիմեցին: Հայերը հետապնդեցին նրանց: Քիչ անց թշնամին նոր հարձակում սկսեց: Հայ մարտիկները հետ քաշվեցին գյուղ և կազմակերպեցին բնակչության տեղափոխությունը Աթանանց գյուղ: Բայց այնտեղ երկար մնալ չկարողացան և նահանջեցին Խարականց, Քյոչք, Խորգոմ և Իշխանի գոմ գյուղերը: Ստացվում է հրահանգ՝ բախումների տեղիք չտալ, տղամարդիկ պետք է քաշվեին լեռներ, իսկ կանայք ու երեխաները մնացին գյուղերում: Սակայն տեղի ղեկավարները չկատարեցին այդ հրահանգը և դիրքեր բռնեցին Իշխանի գոմ գյուղում:

Նույն ժամանակ Վերին Հայոց ձորում սկսել էր մոլեգնել Ահմեդի հրոսակախումբը: Սակայն հայերն այնպիսի հակահարված տվեցին, որ քրդերը փախան:

Հաջորդ օրը կատաղի մարտեր եղան Կեմ և Անգղ գյուղերում: Հայերը գնացին նահատակության՝ թշնամու վայրագություններից փրկվելու համար:

Թուրքերը շարժվեցին Իշխանի գոմ գյուղի վրա: Հարձակմանը մասնակցում էր 1000 զինվոր և չորս թնդանոթ: Այդ ուժի դեմ կանգնած էր չուրջ 100 կռվող հայ:

Կռիվն սկսվեց ապրիլի 7-ի առավոտյան: Իշխանի գոմը երեք կողմից շրջապատված էր և ռմբակոծվում էր չորս թնդանոթներով, որոնք գործում էին գերմանացի զինվորականների հրամաններով: Գյուղը լրիվ շրջափակելու թշնամու փորձերը հայերը ձախողեցին:

Հայերի փամփուշտների պաշարը չնչին էր, և նրանք կրակում էին «իրենց լինելը հաստատելու համար»: Կռիվը տևեց մինչև մութն ընկնելը, որից հետո գյուղի բնակչության մի մասը շարժվեց դեպի Արտամետ՝ Վան անցնելու համար, սակայն այստեղ հարձակման ենթարկվեց ու ինքնապաշտպանության դիմեց: Նրանց մի մասը հաջողեց կռիվներ տալով բարձրանալ Վարագ, որտեղ հասել էր նույն գյուղի բնակիչների մի ուրիշ խումբ: Հայկական մարտական ջոկատներից մեկը Վարագից վերադարձավ Կիմ և Իշխանի գյուղ ու տեղում մնացած բնակչությանը նույնպես հասցրեց Վարագ:

ԿԱՐԿԱՌ. – Այս կազայում կար 18 հայաբնակ գյուղ, որոնցում իշխանությունները դասալիք զինվորներ հայտնաբերելու համար գործադրում էին զազրելի կամայականություններ: Դրանք առանձնակի դաժանությամբ իրականացվեցին Ձկոր և Հուկուրձու գյուղերում: Հայկական մի քանի գյուղեր Գալուստ Պողոսյանի և Վուչիկ Գալոյի ղեկավարությամբ Թուրքերին հակահարվածներ հասցրեցին: Գյուղում մարտերը շարունակվեցին մի քանի օր, որից հետո գյուղի բնակիչները քաշվեցին Մոկս ու Գավաչ: Հայկական գյուղերն ավերվեցին: Գալոն զոհվում է: Թուրքերը գտնում են նրա դիակը, գլուխը կտրում ու բարձրացնում ցցի վրա:

Այս գավառի որոշ գյուղեր մեկ ամիս չարունակ պաշտպանական մարտեր մղեցին: Քրդերի հետ մի քանի բախումներ ունեցան նաև Սպարկերտի հայերը և տեղափոխվեցին Գավաշ:

ՇԱՏԱԽ. – 1914 թ. բնակչության 53%-ը (6600 մարդ) հայ էր: Ջևդեթը գլխավոր հարվածն ուղղեց Շատախի դեմ: Թուրքական զորքերը թնդանոթների հետ մտան Շատախի կենտրոն Թաղ ավանը, որի Վերին և Ներքին թաղերը հայաբնակ էին: Ուժեղացվեցին ոստիկանական ջոկատները գյուղերում: Ջևդեթը հանձնարարեց գայմագամ Համդիին բնաջնջել հայերին:

Շատախի ինքնապաշտպանության նախապատրաստական աշխատանքներն սկսվել էին դեռ 1912 թ., երբ ստեղծվեց «Անտառ» անունը կրող զինվորական մարմինը, որը լուծեց երեք խնդիր՝ ամբողջ Շատախի կյանքը ծառայեցրեց ինքնապաշտպանության պահանջներին, հաշվառեց գավառի տնտեսական կարողությունները, որոշեց յուրաքանչյուր գյուղացու նյութական մասնակցության հնարավորությունը զինամթերքի ու զենքի ձեռքբերման գործին: 1915-ի ապրիլին Շատախն ուներ նոր մակնիշի 120 հրացան. 70 «Մաուզեր», 50 ատրճանակ, 100 «Բերդանկա» հրացան: Կուտակված էր մեծ քանակությամբ վառոդ, կապար: Գյուղերից դուրս ստեղծվել էին զենքի թաքստոցներ:

1915-ի հունվարի 7-ին զինվորական մարմինը որոշեց ինքնապաշտպանության դիրքերը, դրանց ղեկավարներին: Պաշտպանական այդ գծի երկարությունը 50 կմ էր: Պահեստավորվեց 300 հոգու համար վեց ամսվա պաշար: Ստեղծվեցին թռուցիկ խմբեր, որոնցում երիտասարդությունը ռազմական պատրաստության հմտություններ ու գիտելիքներ էր ձեռք բերում:

Փետրվարին իշխանությունների վարձած մարդիկ դավադրաբար սպանում են խիզախ խմբապետ Պետրոսին: Մարտի 30-ին խմբապետների ժողովը որոշում կայացրեց՝ թուրքերի հետ համաձայնության հասնելու փորձերը համարել ապարդյուն ու վնասակար, հայտարարել ռազմական դրություն և խզել բոլոր կապերն իշխանությունների հետ:

Սկսած փետրվար ամսից Շատախում տեղի ունեցան մի շարք ձերբակալություններ ու սպանություններ: Դրությունն ավելի վատթարացավ, երբ ապրիլի 3-ին Հիրճում սպանվեցին Իշխանն ու նրա ուղեկիցները: Սպանություններն ու սովորական ջարդերն անխուսափելի դարձան: Շատախցիները վտանգը զգալով գործի անցան: Կազմվեց Ռազմական մարմին, որի մեջ մտան Տիգրան Բաղդասարյանը, Ազատ Սիմոնյանը, Սամվել Մեսրոպյանը և այլոք:

Թաղի հայությունը կենտրոնացավ Վերին և Ներքին թաղերում, իսկ մահմեդականները՝ Ջրաղացի թաղում, որտեղ գտնվում էին նաև կառավարչատունը, ոստիկանատունը և այլն: Ապրիլի սկզբին ավանի հայ և մահմեդական բնակչության միջև կապն իսպառ խզվեց: Ապրիլի 4-ին թուրքերը կրակ բացեցին հայերի վրա: Նրանք հաջողեցին գրավել Թաղի մերձակա՝ Բոլս, Այգի, Սողվանց և մյուս գյուղերը, շրջափակել ավանը:

Հայերը չընկճվեցին: Նրանք եկեղեցում կազմակերպեցին զենքի արտադրություն, նույնիսկ թնդանոթներ չինեցին, որոնցով ռմբակոծում էին թշնամու դիրքերը և նրա շարքերում խլրտումներ առաջացնում: Ապրիլի 27-ին գայմագամը խոստովանեց. «Շրջակայ գիւղերը գրաւելով մէկտեղ, Թաղի մէջ մեր ան-

յաջողութիւնը, մեր բոլոր շարժումները ցաւալի կերպով անարդիւնք թողուցին»[1]:

Հայերը կռվում էին խելահեղ անձնուրացությամբ: Հերոսացան նաև շատ կանայք: 12-ամյա Սրբուհին և 50-ամյա Ասմարը անսահման նվիրումով էին կատարում բոլոր հանձնարարությունները, նրանք նաև հետախույզ էին ու կապավոր:

Հայերի դեմ կռվում թուրքական զորքերը մշտապես ստանում էին քրդական համալրումներ: Մասնավորապես զգրելի էր Նորագյուղի գայմագամ Խալիդի հրամանատարության տակ գտնվող քրդական հրոսակախումբը:

Հայկական շատ գյուղեր վերածվեցին ավերակի: Դրանց բնակիչները հավաքվեցին կազայի հյուսիսային մասում գտնվող Փեսանդաշտում: Այդ շրջանում հավաքվեց 6000 հայ և ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության: Ունեին 150 հրացան և 70 ատրճանակ: Փամփուշտների պաշարը մեծ չէր:

Ապրիլի կեսերին թուրքական 600 հոգանոց մի զորամաս Հաջի Դարվիշի գլխավորությամբ հարձակման անցավ: Բայց Պարագոտիկի տակ հակահարված ստացավ և կորուստներ տալով նահանջեց: Թուրքերն անընդհատ համալրում էին ստանում: Շատախի Ռազմական մարմինը կոչով դիմեց հայերին. «Յուսահատուելու կարիք չկայ երբեք... Թշնամին իր վերջին ճիգն է թափում... Աշխատենք, ուրեմն, մեր սերունդին փառաւոր պատմութիւն մը թողնել»[2]: Այդ լավատեսությունը հիմքից զուրկ չէր: Ռուսական զորքերը մոտենում էին: Թշնամին նահանջեց: Մայիսի 6-ին շատախցիները վերագրավեցին Սողվանցը: Մայիսի 10-ին Համդին ու թուրքերը փախան: Երկու օր անց հայ կամավորները մտան Թաղ: Փրկվեցին նաև Փեսանդաշտում շրջափակված և սովի մատնված 6000 հայերը: Շատախի հերոսամարտը տևեց 42 օր, և թուրքական յաթաղանի դեմ հայ ժողովրդի պայքարի ամենափայլուն էջերից է:

ՄԱՄՐՏԱՆՔ. *– Տեղի հայ ղեկավարները տևական բանակցությունների մեջ էին քուրդ աշիրեթապետների հետ, որպեսզի միասնական ջանքերով գավառը զերծ պահեին կոտորածներից: Նահանգի իշխանությունները համառորեն հանձնարարում էին Սպարկերտի մյուդիրին քրդերի միջոցով կոտորել տեղի հայերին: Քրդերը երկար դիմադրեցին, խուսափում էին հայերին հաշվեհարդարի ենթարկելուց, թուրքերի շահերի համար արյուն թափելուց: Բայց ի վերջո տեղի տվեցին և հայերին անակնկալի բերելով պարտության մատնեցին: Հայերը փախան Սպարկերտ և Մոկս: Այստեղ նրանք կռվի մեջ մտան քրդերի հետ: Սակայն կոտորածներ տեղի չունեցան, որովհետև քուրդ առաջնորդ Աբդուլլահը թույլ չտվեց: Դրա շնորհիվ Մոկսը վերածվեց ոչ պատերազմական՝ չեզոք գոտու, որտեղ մեծ թվով հայեր ապաստան գտան՝ մինչև որ տեղ հասան հայ կամավորները:*

«Русские ведомости»-ն 1915 թ. ապրիլի 24-ին գրեց. «Վանի վիլայեթը բռնված է ապստամբությունով... Վառվում են հայերի գյուղերը: Զորահավաքի

---

[1] *Վասպուրական: Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի 15-ամեակին առթիւ. 1915-1930, Վենետիկ, 1930, էջ 70:*

[2] ***Ա-Դօ,*** *Մեծ դէպքերը Վասպուրականում, Եր., 1917, էջ 431:*

պատրվակով սարսափելի բաներ են կատարվում: Ազգաբնակչությունը համատարած ջարդերի մղձավանջի մեջ է: Վանդալիզմն ամենաեռուն վիճակում է...»: Զորս օր անց ռուս դիվանագետներից մեկը արտաքին գործերի նախարարություն գրեց. «Հայերը Վանից նամակ ստացան, գրաբերի հագուստի աստառի մեջ կարված, որի բովանդակությունը հետևյալն է. նահանգում սպանված է մոտ վեց հազար մարդ: Վանն ու Շատախը համառորեն դիմադրում են, արկերը քաղաքին չատ չեն վնասում: Հավաքում ենք մեր վերջին ուժերը: Սպասում ենք ռուսական օգնության: Աղաչում ենք, չտապե՛ք: Հետո ուշ կլինի: Այս նամակը գրված էր ապրիլի 15-ին»[1]:

«Кавказское слово»-ն ապրիլի 29-ին տպագրեց Դուխովի հոդվածը Վանի վիլայեթի մասին, որում գրում է. «Թաչլիչայ հասան Վանի վիլայեթից մոտ 200 հայ գաղթականներ, որոնք փրկվել էին թուրքական կառավարության և զորքերի՝ հայերի հանդեպ կիրառած սարսափելի գործողություններից... Մեծ պասից 10 օր առաջ թուրքական կառավարությունը Վանի հայ երևելիներից պահանջում է հանձնել 6000 հայ դասալիքների, որոնք թաքնվում էին քաղաքում»: Միաժամանակ Ջևդեթը ասկյարներ ուղարկեց քաղաքի մերձակա գյուղերը՝ դասալիքներ բռնելու և հայերին զինաթափելու համար: Սակայն սրանք Թիմարում զբաղվել են թալանով և հրդեհել հայերի ունեցվածքը: «Մարտի 19-ին Վանում լուր ստացվեց, որ Մարմետ հայաբնակ գյուղը չրջապատվել է 370 ասկյարներով և գյուղացիները նրանց համառ դիմադրություն են ցույց տալիս: Գյուղացիներին օգնության է ուղարկվում 70 հոգի, որոնք Թիկունքից հարվածեցին թուրքերին և հարկադրեցին վերացնել գյուղի չրջափակումը: Նույն պահին լուր է ստացվում, որ ասկյարները երեք թնդանոթներով հարձակվել են Բոխանց և Նարաթ գյուղերի վրա»: Զինված հայերի խումբը գնում է օգնության և թուրքերից խլում է թնդանոթները: Ջևդեթը հարկադրված եղավ բանակցություններ սկսել: Նա հայտարարեց, թե «սուլթանական բոլոր հայերն ազատված են զինապարտությունից» և կոչ արեց Վանում հավաքված մերձակա գյուղերի բնակիչներին՝ «վերադառնալ իրենց գյուղերը և լծվել դաշտային աշխատանքներին»: Ակնհայտ էր, որ վալին «ուղղում էր իր սխալը», ձգտում էր գյուղացիներին հեռացնել Վանից:

Լքված գյուղերում բաշիբոզուկների ու քրդերի ավազակախմբերը խուժում էին տները, բռնաբարում անպաշտպան կանանց ու աղջիկներին, նրանց տանում իրենց հետ: Եղել են երեխաներին կրակը նետելու դեպքեր:

Փրկվածներից մեկը պատմել է, թե հրաման եղավ հայ տղամարդկանց հավաքել «ամելե թաբուրի» համար, ապա սկսվեց կոտորածը, մերձակա գյուղերը հրդեհվեցին: Ընդ որում՝ հայերի ճնշող մեծամասնությունը, վտանգավոր որևէ բան չկասկածելով, մասնակցեց զորահավաքին, որովհետև դա տարածվում էր նաև թուրքերի ու քրդերի վրա: Սակայն զորակոչված մահմեդականներին անմիջապես ազատ արձակեցին և նրանց հրամայեցին ջարդել գյավուրներին:

Ընդհանուր առմամբ, Վասպուրականի հայության ջարդերը հիմնականում

---

[1] АВПР, Политархив, д. 3505, л. 4.

տեղի ունեցան 1914 թ. դեկտեմբերից մինչև 1915 թվի ապրիլի սկզբները: Ոչնչացվեց 16.000 մարդ, գրեթե նույնքան հայ էլ ապաստանեց Վան քաղաքում: Նույն ժամանակ սկսվեց հայ զինվորների զինաթափումն ու ոչնչացումը»[1]:

Վասպուրականի գյուղերում գորակոչը քող դարձվեց հայ երիտասարդությանը ոչնչացնելու համար, գրում է «Հնչակը» 1915 թ. օգոստոսին (№ 3):

Վանի բանտում սպանվեց 150 հայ, որոնց թվում էին գրող Ասոն (Տիգրան Օտյանը), ուսուցիչներ, հասարակական գործիչներ: Թուրք-պարսկական սահմանամերձ գյուղերի բոլոր տղամարդիկ սպանվեցին, կանայք ու աղջիկները սեփականացվեցին քրդերի կողմից: Երեխաներին սպանում էին մայրերի գրկում, կանանց մերկացնում ու ծեծում էին: Հայկական գյուղերը հարձակմանը չէին նախապատրաստված և լուրջ դիմադրություն ցույց տալ չէին կարողանում: Կոտորածները սարսափելի էին Հայոց ձորում: Շատախում հայերը կատաղի դիմադրություն ցույց տվեցին: Նրանց ոչնչացնելուն էր կոչված «մսագործների բրիգադին» Ջևդեթի հրամանը՝ «Գնա՛ Շատախ և բնաջնջի՛ր այնտեղի ժողովրդին»[2]: Մինչև մայիս նահանգում բնաջնջվեցին 100 գյուղերի հայեր[3]:

1915 թ. ապրիլի 15-ին Վանից հայտնեցին՝ Վասպուրականում տեղի ունեցած կոտորածների մասին, որ Վանի շրջապատում և Շատախում սպանվել էր 6000 մարդ: Այդ մասին Ռուսաստանի դեսպանը տեղյակ է պահում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին: Իսկ երբ Խոյում Ռուսաստանի հյուպատոսը Պետրոգրադ հայտնեց Բաչկալեում, Շատախում և մի քանի այլ վայրերում տեղի ունեցած կոտորածների մասին, Վաշինգտոնում Ռուսաստանի դեսպան Մ. Բախմետևը հանձնարարություն ստացավ այդ մասին տեղյակ պահել Հենրի Մորգենթաուին, առաջարկելով հանդես գալ հետապնդվող հայերի պաշտպանությամբ[4]:

Նահանգի գյուղաբնակ հայերի վիճակն անտանելի դարձավ Վանը ռմբակոծելու նախօրյակին: Կազաների բոլոր հայ պաշտոնատարները, մտավորականներն ու հեղինակություն վայելող անձինք գնդակահարվեցին կամ խեղդվեցին:

Գերմանացի հոգևորական Ֆիշերը պատմում է. «Վանի շրջանում տեսա այնպիսի բաներ, որ լավ կլիներ, եթե տեսնեին նրանք, որոնք հայերին են համարում անկարգությունների մեղավորներ: Աղջիկների մի խմբի կախեցին ծառերից ու սկսեցին քերթել... Մեզ մոտ եկած մի կնոջ երեխայի մարմինը բաժանել էին կտորների և այդ կտորները մտցրել էին մոր բերանը, շատ աղջիկներ որբանոցներում սարսափելի վիճակում էին... Մի անգամ անցնում էի թուրքական սահմանագծի երկայնքով և տեսա, որ ծառից ինչ-որ մուգ բան էր

---

[1] «Տարոնի արծիւ», 1950 թ., № 30, էջ 11-15:

[2] Usher C., նշվ. աշխ., p. 238.

[3] **Beylerian A.,** *Les Grandes Puissances. l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Francaises. 1914-1918, Paris, 1983, p. 25.*

[4] АН Арм. ССР, Документы французских архивов о геноциде армян, Ер., 1985, с. 9.

կախված... Դա մարդ էր, որի մաշկն ամբողջությամբ հանել էին»[1]:

«Անցած աշնանը վերադարձած քրդերը, գրում է Արամ Մանուկյանը, մորթեցին և թալանեցին Բերգինի, Արչակի, Սարայայի, Բաշկալեի և Սալմաստի շրջանների հայկական գյուղերը: Ռուսների հեռանալուց հետո հենց այս քրդերը մորթեցին Բաշկալեի հայ տղամարդկանց սկսած 10 տարեկանից, թալանեցին ու կրակի տվին նրանց ողջ ունեցվածքը: Այդ նրանք Արանք գյուղում հավաքեցին Փանդ, Փիս, Ալաս, Սետան, Ռուսուլան և մյուս հայկական գյուղերի տղամարդ ազգաբնակչությանը և դաշտ քշելով մորթեցին ավելի քան 500 հոգու, բռնությամբ տարան ու բռնաբարեցին կանանց ու երեխաներին, շատերին բռնությամբ մահմեդականացրին: Անցյալ տարվա դեկտեմբերից սկսած նրանք ավերեցին ու կրակի տվեցին Աղբլջեվազի, Արճեչի, Բերկրիի, Սարայի, Բաշկալեի, Խոշաբի, Հայոց ձորի, Խարաքարայի և Կարճկանի բոլոր հայկական գյուղերի տներն ու եկեղեցիները: Հրդեհեցին հետևյալ նշանավոր վանքերը՝ Տեր-Ոսկան Վերդի (ս. Ստեփանոս), Բաշկալեի մոտերքում ս. Բարդուղիմեոսի, Կարճկանում ս. Սորպ և Ուրանցի. ս. Գրիգոր, Կարմրավոր, Վարագա...»[2]:

Սկզբից ի վեր պաշտոնական Թուրքիան աղավաղում էր իրողությունը, փորձում կատարվածի մեղքը բարդել հայերի վրա: Հենց Եղեռնի տարիներին մշակվեց այդ խնդրում թուրքական ստահոդ հայեցակարգը, որը լեչի նման քարշ է գալիս մինչև օրս: Այդ հայեցակարգը մշակողն ինքը Թալեաթն էր: Ահա թե նա ինչպե՛ս է ներկայացնում Վասպուրականում կատարվածը. «1915 թ. Թիմար գյուղում ոչխարների գլխաքանակի հաշվառման ժամանակ տեղի ունեցավ խռովություն, մոտավորապես 1000 հայ հարձակվեց մահմեդականների վրա և սպանեց ոստիկաններին...

Ինքնապաշտպանության նպատակով մահմեդական գյուղերի շրջապատում գտնվող գյուղերի հայերը փոխադրվեցին հայաբնակ վայրեր և սկսեցին հեղափոխություն պատրաստել: Երիտասարդ հայերը հիմնական դիրքերն էին զբաղեցնում, իսկ կոմիտեի մնացած անդամները զենքի տակ էին առնվում... գյուղերում ձեռնարկում են սպանել մուսուլման ժողովրդին... Իմանալով, որ կառավարությունը նահանգի կենտրոնից զինված ջոկատներ է ուղարկել Շատախի, Հայոց ձորի, Թիմարի և Գավաշի ապստամբական շարժումները զսպելու համար, վանեցի հայերը հրդեհում են Համմուդ աղայի զորանոցը, ոստիկանական շենքերը և քաղաքում վայրենի կոտորած սարքում:

Միայն Վան քաղաքում ապստամբած հայերի թիվը հինգ հազարից ավելի էր և բոլորն էլ զինված էին նոր տեսակի զենքերով: Սրանք մինչև վերջը պաշտպանում էին իրենց դիրքերը: Քաղաքում քանդել էին կառավարական շենքը, զինվորական հաստատությունները, Հանրային պարտքի շենքը, Օտոմանյան բանկի մասնաճյուղը և ուրիշ շինություններ, կրակի էին տվել իսլամական թաղերը: 700-ի չափ ապստամբներ ձեռնառումբերով պայթեցրել էին Վանի ամրոցը: Ապստամբական այս շարժումները շարունակվեցին մինչև ապրիլ ա-

---

[1] *Deutsches Zentralarchiv, Historische Abdeilung P, Akten № 2/3340, B1. 192.*

[2] **Чалхушьян Гр.,** *Красная книга, Ростов на Дону, 1919, с. 116.*

միսը: Ռուս սպաների հրամանատարության տակ առնվազն 400-ական մարդուց բաղկացած հայ հրոսակների խմբեր ապրիլի կեսերին սկսեցին անցնել սահմանը: Տեղի ունեցած բախումների հետևանքով գրավվել են «Անկախ Հայաստան» վերտառությունը կրող դրոշներ և «Վրեժ» բառը պարունակող տախտակներ»[1]:

Հարկ է նկատի ունենալ, որ Թալեաթի այս և նման շատ այլ հարցադրումները չծնվեցին նրա հուշերը գրելու ընթացքում: Դրանք դեռ մինչև պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը քարոզչական միջոցներով տարածվում էին ոչ միայն կայսրությունում, այլև նրա սահմաններից դուրս և հաճախ էին գործածվում տերությունների դիվանագիտական խաղերում:

Թուրքական քարոզչությունը սկսած 1910-ական թվականների սկզբներից Թուրքերի (ու նաև ոչ Թուրքերի) մեջ այն տրամադրությունն էր ներարկում, թե Թուրքիայի բոլոր հայերն են կայսրության համար վտանգավոր, բայց վտանգներից ամենավտանգավորը սպասվում է Վան-Վասպուրականում:

1912 թ. սեպտեմբերի 17-ին Տրապիզոնից հաղորդեցին, թե Վանի վիլայեթում Դաշնակցությունն աչխույժ գործունեություն է ծավալում հայերին կազմակերպելու և անլեգալ գործող պարտիզանական խմբերի միջոցով նրանց պաչտպանելու համար: Հայերը զինված են ժամանակակից հրազենով և ռումբերով: Նրանք լուրջ վտանգի պահին կունենան նաև փորձառու ղեկավարներ: «Պարտիզանական խմբերը պարբերաբար այցելում են հայկական գյուղերը, վերցնում են ռազմատուգանք, պատժում են անհավատարիմ հայրենակիցներին և հայերին պաչտպանում են քրդերից: Ասում են, թե վերջնական նպատակը իչխանության հասնելն է... Այնտեղ հայերը միայն քրդերի հետ գործ ունեն, որովհետև Թուրքերը փոքրամասնություն են կազմում»[2]:

Երկար տարիներ Արևմտյան Հայաստանում աչխատած ամերիկացի միսիոներ Քլարենս Ըչըրը ուրիչ տեսքով է ներկայացնում իրավիճակը: Նա գրում է, թե հայերը պարտավոր էին տանել մահմեդականների քմահաճույքները, իսկ երբ ընդդիմանում էին, գործը վերջանում էր հայկական բնակավայրերի վրա հարձակումներով[3]: Նա Վանի իրադարձությունների նախապատրաստության ժամանակաչրջանը ձգում է մինչև երիտԹուրքերի Սալոնիկի 1911 թ. համաժողովը: Այդ ժամանակ էր, որ Վանի կայազորի զորքերը 8 գումարտակից հասցվեցին 32-ի:

Որ հայերի հանդեպ բռնությունների ծննդոց հայկական չէր, այլ բխում էր երիտԹուրքերի գաղափարախոսական և քաղաքական սկզբունքներից, վկայում են նաև Թուրքական և օտար չատ ուրիչ աղբյուրներ:

Հանրի Բարբին գրում է. «... 1914 թ. նոյեմբերի 15-ին վիլայեթի քարտուղարը և ժողովրդական լուսավորության տնօրենը ոստիկանական գործակալների ուղեկցությամբ, առանց ֆրանսիական հյուպատոսական աչխատողի, ներկայացան Դոմինիկյան հայրերին և օրդենի քույրերին... ու պահանջեցին

---

[1] **Թալեաթ,** Հուշեր, անտիպ: ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարան, էջ 71:
[2] Wienn, HHSTA PA XXXVIII 357, Trapizont, 17 September 1912.
[3] **Usher C.,** նչվ. աչխ., էջ 156:

անմիջապես հեռանալ վանքից և բոլոր դպրոցական չենքերը ու բարեգործական հիմնարկները հանձնել օսմանյան կառավարությանը»:

Հոգևորականները հարկադրված եղան թողնել իրենց կացարանները: Միսիայի բոլոր չենքերը կնքվեցին: Հրաման արձակվեց 24 ժամվա ընթացքում վիլայեթից դուրս վռնդել ֆրանսիացի միսիոներներին[1]:

1917 թ. Թիֆլիսում լույս տեսավ «Մի թուրք սպայի հիշատակարանից» օրագիրը: Հեղինակը թուրքական բանակի 44-րդ գնդի 4-րդ վաշտի չավուշ, սալոնիկցի Հագղն է: Նա պատմում է 1915 թ. մայիսին նաև Վանի վիլայեթում կատարված դեպքերի մասին, երբ իրենց գունդը պարսկական սահմանից մեկնում էր Դիարբեքիր:

«Զինվորներից մեկը,- գրում է Հագղը,- պատմում էր, որ հայերի դիակներն ընկած էին խառնիխուռն... ոմանք էլ հոգեվարքի մեջ էին: Նա տեսել էր ժանդարմի, որը հինգ հայի առաջը գցած տարել էր քաղաքից դուրս և հանկարծակի... մաուզեր հրացանից կրակ էր բացել հայերի թիկունքին և բոլորի մեջքներին պատուհան բացելով գետին էր փռել՝ «Փչացածնե՛ր, վերցրե՛ք ձեր անկախությունը»... Մի ժանդարմ ինձ ասաց, թե փոքր երեխաներին մահմեդականացնում են, երիտասարդ աղջիկներին իրենց են վերցնում, իսկ տղամարդկանց ու ծերերին կոտորում են...

Ասում են, որ մենք պետք է մինչև Բիթլիս գնանք խանգարելու ռուսների առաջխաղացումը... Ահա տե՛ս Բաչկալեից գաղթող թուրք գաղթականների թշվառ վիճակը... Ռուսները հրդեհում են Բաչկալեն... Հայ կամավորները հարձակվել են այդ կողմի գաղթականների վրա ու բոլորին կոտորել են ու նրանց հոտերն էլ գավթել են... Զինվորների վիճակը ծանր է: Նրանց մի բուռ ցորեն ենք տալիս և նրանք երեք օր ճանապարհ են գնում, մեռնում սովից ու հոգնածությունից... Նրանք խոտ են ուտում: Սկսվել է տիֆը: Զինվորներն իրար հետևից մեռնում են:

Այսօր ճանապարհին տեսանք մի սատկած ձի: Զինվորներն իսկույն վրա թափվեցին, նրանք բոկոտն էին և քերթեցին տրեխ կարելու համար... զինվորները հում միս են կրծոտում... նրանցից մսի հոտ է գալիս, որովհետև պարկերում հում միս են պահում:

... Սղերդում կոտորել են 2000 հայ»:

Ընայած իր թթու թուրքականությանը, այս չավուշը ներկայացնում է իրերի վիճակը, այն ավերներն ու քայքայումները, որոնց ստեղծման գործում հայերը որևէ դեր չեն խաղացել, մանավանդ թուրքական բանակի քայքայման և դասալքության գործում: Նրա պատմածները լրացուցիչ վկայություն են, որ թուրքական բանակը կործանվում էր ոչ թե մարտերում, հայ «ապստամբների» դեմ կռվում, այլ մատակարարման բացակայությունից, քաղցից ու համաճարակներից:

---

[1] **Барби А.**, *В стране ужасов. Мученица Армения, Тифлис, 1919, с. 143-144.*

Երբ հրապարակվեց զորակոչի հրամանը (1914 թ. հուլիսի 27-ին), Վանի հայ երիտասարդությունը չդիմադրեց, մասնակցեց զորահավաքին: Դրությունը բարդացավ հետո, երբ հայտնի դարձավ, թե թուրքական բանակում ինչպիսի վայրագությամբ էին վերաբերում հայ զինվորներին: Խնդիրը Վանում ավելի սուր բնույթ ստացավ նաև այն պատճառով, որ քաղաքում զինվորագրվածների մեծ մասը այլևայլ պատճառներով նշանակման վայր չէր մեկնել, օրինակ, ուսուցիչները մնացել էին մինչև նրանց փոխարինողների հարցի լուծումը, արհեստավորները մնացել էին բանակի համար հագուստ, կոշիկ, հանդերձանք պատրաստելու համար, շատերը բանակից ազատվել էին զինվորական հարկ (50 ոսկի) վճարելու միջոցով: Շուտով հայտնի դարձավ, որ որոշ թվով երիտասարդներ դասալքել էին: Նրանց հետապնդող ոստիկանների ու հայ բնակչության միջև հաճախ էին միջադեպեր ծագում:

Սակայն իրավիճակն արմատապես սրվեց Ջևդեթի գալուց հետո, հասկանալի պատճառով՝ որովհետև նրան վալի էին նշանակել նահանգի հայությանը բնաջնջելու հանձնարարականով:

Վան քաղաքը բաժանվում էր երեք մասի՝ Քաղաքամեջ, Նավահանգիստ և Այգեստան: Քաղաքամեջը լճից բաժանում էր նեղ, ճահճապատ լճափը, որի վրա կախված է վիթխարի զառիթափը՝ հին բերդի ավերակներով: Այդ մասում էր կառավարչատունը, որ վարչական կենտրոնն էր: Այստեղ կային 300-500 հայկական տներ: Նավահանգիստը գյուղ-արվարձան էր: Այգիները, դաշտերը և լճի երկայնքով ձգվող մյուս տարածքները պատկանում էին մահմեդականներին և Քաղաքամեջը միացնում էին Այգեստանին: Այգեստանի մուտքը Խաչ-փողան չուկան էր, որից էլ սկսվում էին հայկական թաղերը:

Վանում կար թուրքական երկու գորանոց: Մեծը հայկական թաղամասի կենտրոնում էր՝ Խաչ-փողանի մերձակայքում:

Այգեստանը Քաղաքամեջից բաժանված էր 5-6 կմ լայնությամբ և մահմեդականներով բնակեցված տարածքով: Այգեստանում բնակվում էր 20.000, իսկ Քաղաքամեջում՝ 3.000 հայ:

Վանի պաշտպանության գլխավոր ամրոցը դարձավ Այգեստանը և դա հասկանալի էր, որովհետև՝ ա) Այգեստանը թուրքերի դեմ պայքարում երբեք չէր պարտվել, բ) Այգեստանում բնակվում էին միայն հայեր: Այնտեղ հավաքվեցին նաև ծայրամասերի և քաղաքի թուրքախառը թաղերի հայերը: Այգեստանում, բացի անգլիական հյուպատոսարանի և Համմուդ աղայի զորանոցի պահապան զորաջոկատներից, ոչ թուրք կար և ոչ էլ քուրդ, այլ զորաջոկատներն էլ կռվի հենց սկզբին վերացվեցին, գ) Այգեստանի ոռգմաճակատային դիրքերն «ավանդական» էին, հայերը բազմիցս էին այդ դիրքերից կռվել թշնամու դեմ և ժամանակ չպահանջվեց պաշտպանական գծի ձևավորման համար:

1915 թ. մարտի 13-ին Վռամյանը գրում է Ջևդեթին. «Այստեղ կառավարութեան հանդէպ ո՛չ մէկ անպատեհութիւն յառաջ չգալուն համար պատուոյս վրայ կը վստահեցնեմ, ինչպէս որ ամիսներ յառաջ մեր անհատական ջանքերով ապացուցինք: Այս առթիւ կառավարութիւնն ալ ներկայ կացութեան չրջանին,

հայերը ապահովցնելու համար պետք եղած միջոցները ձեռք առնելու է»[1]: Ջևդեթի պատասխանը թունոտ էր, թե «իմ կրկնակի ազդարարութիւններուն հակառակ կասկածոտ վերաբերուելով, ձեր հազարաւոր ցեղակիցները ռուսերու ծրագրով գայթակղեցնելով, թշուառութեան մատնեցիք... կառավարութեան բռնելիք արդար և ուղղամիտ դիրքին բոլորովին ապահով եղէ՛ք, այդպէս էլ յայտնեցէ՛ք ժողովուրդին...»:

Իրավացի է Ա-Դոն, երբ գրում է. «Ջևդեթը վարպետ էր, վարպետ չարագործությունների, դավադրական ծրագրերի և միևնույն ժամանակ կեղծելու, խաբելու արհեստի մեջ»: Նա մի կողմից հայ ղեկավարներին հավաստիացնում էր, որ իշխանությունները որևէ չարամիտ դիտավորություն չունեին հայերի հանդեպ, իսկ մյուս կողմից «քաղաք էր բերում ռազմական ուժ, դավադրություն էր նյութում... կազմակերպում էր ջարդեր...»[2]:

Ահա ջարդերի սարսափազդու վտանգն էր, որ հայերին մղեց գործողությունների, որոնք որքան համեստ, նույնքան էլ մասնակի էին, որպեսզի կարողանային հօգուտ հայերի որևէ լուրջ խնդիր լուծել: Դրանք մասնավորապես թուրքական իշխանությունների, մասամբ նաև բանակի հայահալած գործողությունների վրա խափանարար ազդեցություն ունեցող ձեռնարկումներ էին: Օրինակ՝ Գավաշի Բելլու գյուղի մոտ հայերը կտրեցին հեռագրագիծը, կտրեցին նաև Գավաշը Հայոց ձորին կապող հեռագրագիծը, քանդեցին Անգղի կամուրջը, հեռագրագիծը կտրեցին նաև Փեսանդաշտի մոտ և այլն[3]:

Թե ի՞նչ խնդրի էին ծառայում նման ձեռնարկները, դժվար է ասել. դրանք ո՛չ պարտիզանական կռիվ էին, ո՛չ ինքնապաշտպանության և ո՛չ էլ սաղրանք[4]: Բացարձակ ակնհայտ էր, որ դրանք «կենտրոնից» կազմակերպված դիվերսիոն գործողություններ չէին, այլ պարզապես խեղդվողի ճիչ, անելանելի վիճակից մղված հակազդեցություն: Միանգամայն ճշմարիտ է Էրզրումում Գերմանիայի հյուպատոս Շոյբներ Ռիխտերը, երբ գրում է. «Առանձին պատահարներ, ինչպիսիք էին հեռավոր գյուղերում բռնագրավումներին զինված դիմադրությունը, հայ աղջիկներ ու կանայք պահանջող թուրքերի սպանությունները, հեռագրային և հեռախոսային գծերի կտրելը, դրանց աշխատանքը խափանելը, ինչպես նաև լրտեսությունը, նկատի ունենալով, որ այդ ամենը տեղի էր ունենում պատերազմի ժամանակ և խառը բնակչություն ունեցող շրջաններում, արտակարգ ոչինչ չէին նշանակում... Թուրքերը մշտապես սխալներ են թույլ տվել հայերի հանդեպ իրենց վարքագծում»[5]:

Վահագն Տատրյանը ճիշտ է նկատում, որ հայերի հակաթուրքական գործունեությունը աննշան ողորմելիություն էր համեմատած քրդերի հակաթուրքական գործունեության հետ՝ ռուսական բանակին գրեթե անթաքույց աջակցություն, թուրք բնակչության թալան, կռիվներ թուրքական այլևայլ ուժերի

---

[1] **Ա-Դո,** *նշվ. աշխ., էջ 147:*
[2] *Նույն տեղում, էջ 150-151:*
[3] **Ա-Դո,** *նշվ. աշխ., էջ 150-151:*
[4] **Լէօ,** *Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 143-144:*
[5] *FO AA Botschaft Konstantinopel K-168, № 9 (3224).*

դեմ, հարկեր բացարձակապես չվճարել և այլն: Մինչդեռ թուրքական իշխանությունները քրդերի դեմ ոչ միայն պատժիչ լայնամասշտաբ գործողություններ չէին ձեռնարկում, այլև դրանց առաջ աչք էին փակում: Հայ կամավորների չուրջ թուրքերը համաշխարհային աղմուկ բարձրացրին և մինչև օրս էլ աղմկում են, իսկ որ հրեաները ստեղծեցին Հրեական զորագունդ, որը մասնակցեց Դարդանելի կռիվներին թուրքերի դեմ, որ հրեական կամավորական ուժերը նշանակալից դեր խաղացին Պաղեստինի ազատագրության գործում, որ հրեաները հակաթուրքական լրտեսական լայն ցանց էին ստեղծել, Կ. Պոլիսը ոչ միայն հրեաների դեմ լուրջ քայլերի չդիմեց, այլ պարզապես լռեց, իսկ հայերի հանդեպ ծրագրեց ու իրականացրեց համընդհանուր բնաջնջման քաղաքականություն[1]:

Սակայն դժվար է համաձայնվել Վ. Տատրյանի հետևյալ մտքի հետ. «Վանի ինքնապաշտպանութեան դրուագը արդարացիօրէն ապստամբութեան հանգամանք ստացաւ...»[2]: Ինքնապաշտպանությունը երբեք ապստամբություն լինել չի կարող և այն, որ ինքնապաշտպանական կռվում հայերը հաղթեցին, չփոխեց դրա բնույթը, այլ մնաց ինքնապաշտպանական հաջող կռիվ, որը ժողովրդի այդ հատվածին փրկեց բնաջնջումից:

Նաև նշենք, թե ինչ բնույթ էլ այն ունենար, ինչպես Ա. Զոպանյանն է գրում. «Յուսատու, գեղեցիկ, ուժեղ ինչ որ ունինք Կովկասի հայկական կամաւորներու բանակն է եւ Վանայ ապստամբութիւնը: Ապրի՛ հայ ժողովուրդը»[3]:

* * *

Վասպուրականի հայերի «հարցի լուծումը» երկակի նշանակություն ուներ: Նախ, բնաջնջվում էր Վասպուրականի հայությունը, որը թե՛ թվային տեսակարար կշռով, թե՛ հստակ ընդգծված ազգային կեցվածքով և Ռուսաստանի հետ մշտական կապի շնորհիվ առանձնապես էր անհանգստացնում թուրքական իշխանություններին և, երկրորդ, առանց Վասպուրականի հայության բնաջնջման շատ դժվար էր Վանի հայ բնակչության ոչնչացումը: Պահանջվում էր Վանը շրջափակել և քաղաքի գյավուրներին հարկադրել ենթարկվելու Մահմեդի հետևորդների կամքին:

Ջևդեթը հրաման արձակեց, որ 18–45 տարեկան արու բնակչությունը պարտավոր էր անմիջապես ներկայանալ զորահավաքի կետեր և զորակոչվել որպես ամելե (չինարար զինվոր): Հայերը պահանջեցին իրենց զորակոչել ոչ թե ամելե թաբուրների կազմում չինարարությամբ զբաղվելու, այլ գործող բանակ՝ իսկական զինվորական ծառայության, նաև համաձայնվել, որ թույլատրվի դրամական հատուցման միջոցով (50 օսմանյան ոսկի) զերծ մնալ զինվորական ծառայությունից:

Ջևդեթը մերժեց: Հայերը խնդրեցին թույլ տալ, որ իրենք զորակոչվեն ոչ թե

---

[1] **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանական եւ պատմագիտական քննարկումներում, Ուոթերթաուն, 1995, էջ 52–53:

[2] Նույն տեղում, էջ 54:

[3] **Զոպանյան Ա.**, Երկեր, Ե., 1988, էջ 125:

միանգամից, այլ մաս-մաս: Վալին համաձայնվեց պայմանով, որ ամեն չաբաթ պետք է զորակոչվեր 500 հայ և զորակոչը ավարտվեր երկու ամսում: Այսինքն՝ բանակին պետք է տրամադրվեր 4000-5000 մարդ:

Ապրիլի 1-ին Վանում տեղի է ունենում մի ժողով հայկական բոլոր կուսակցությունների և առաջնորդարանի ներկայացուցիչների մասնակցությամբ, որը պարտադրված էր համաձայնվելու վալու պահանջի հետ: Ժողովն անգամ հանձնաժողով է ստեղծում հայ երիտասարդության զորակոչը կազմակերպելու համար: Քաղաքի երիտասարդությունն ընդվզեց այդ որոշման դեմ ոչ միայն այն պատճառով, որ Թուրքական իշխանություններին չէր վստահում, այլ նաև գտնելով, որ «այդ ձեւով զինուորագրուած երիտասարդութիւնը կորուստի է ենթարկուելու»: Երիտասարդությունը պահանջում էր անհապաղ ձեռնամուխ լինել ինքնապաշտպանության:

«Միևնույն է,- ասում էին նրանք,- մեռնելու ենք, ինչպես մեռան մեզանից առաջ մեկնողները... Մեզ անզեն ուղարկելն ինքնին բացատրում է Ջևդեթի դիվային մտադրությունը: Ուրեմն, թույլ տվեք զեն ի ձեռքն մեռնինք պատվավոր կերպով, մեր ժողովրդի համար»[1]:

Մարտի 29-ին լուր հասավ, որ Հ. Զոլոյանի և նրա ընկերների անհարկի ձերբակալության պատճառով Շատախի երիտասարդությունը զենք է վերցրել:

Հաջորդ օրը երիտասարդության նախաձեռնությամբ հրավիրված ժողովում սուր բանավեճ ծագեց: Դաշնակցական գործիչները մեղադրվեցին հարմարվողականության, իշխանությունների հետ գործարքի համար:

Մերժելով այդ քննադատությունը, Վռամյանն ասաց. «Դուք կը խօսիք կառավարութեան դաւադրութեան մասին: Այո, ես գիտեմ, որ օր մը իմ դիակը փռուած պիտի մնայ Այգեստանէն քաղաք տանող ճամբուն վրայ... Գիտեմ, որ քաղաքը պաշարուած է արդէն և օր մը թնդանօթներով պիտի քանդեն այս գեղեցիկ շէնքը («Աշխատանքի տունը»)... Գիտեմ, որ այս 500 ամելէները, զոր մենք խոստացեր ենք տալ առաջին իսկ առիթով դէպի անստոյգ ապագայ մը, թերեւս դեպի մահ կ'առաջնորդենք: Բայց... մենք չպիտի սկսինք... որովհետեւ մենք ապստամբներ չենք եւ ապստամբութիւնը ինքնին բաւական է ամբողջ Հայկական բարձրաւանդակը գերեզմանի վերածելու: Եւ վերջապէս, մենք համոզուած ենք, որ հակառակ մեր բոլոր զիջումներուն ու խաղաղասիրական ձգտումներուն, օր մը ահարկու փոթորիկը պիտի պայթի մեր գլխուն: Այդ օրերը մօտեցած են»: Մի ելք կա՝ համբերել: «Միայն վերջին րոպէին, երբ այլեւս ոչ մէկ ճամբայ կը մնայ եւ թշնամիի սուրը կ'երկարի ամբողջ ազգին պարանոցին..., այն ատեն ոչ ոք պիտի մեղադրէ ձեզ, եթէ դուք ևս դիմէք ձեր առաջարկած ինքնապաշտպանութեան զէնքին...»[2]:

Անձնազոհ, բայց տարօրինակ տրամաբանության, պարտվողականության հավասարում, ճակատագրապաշտության, բացառված չէ նաև՝ վախկոտության քողարկված անձնազոհության մասին խոսքերով: Դա կործանման

---

[1] «Վան-Վասպուրականի հերոսամարտը», Ե., 1990, էջ 20:

[2] «Հայրենիք» ամսագիր, 1924 թ. ապրիլ:

բանաձև էր, որի առաջին զոհերից մեկը դարձավ ինքը՝ Արշակ Վռամյանը (Օննիկ Դերձակյան):

Իսկ ամենաառաջին զոհը եղավ Իշխանը (Նիկողայոս Միքայելյան):

Ջևդեթը Իշխանին խնդրեց գնալ Շատախ՝ լուծելու հայերի ու քրդերի միջև ծագած վեճը: Պատմում է ականատեսը. «Յանկարծ քրքիջի աղմուկով մը, իրար ետեւէն ներս մտան Ճեւտեթ պէյ, Վռամեան, Արամ, Իշխան: Անոնց խորհրդակցութեան եզրակացութիւնն այն եղած էր, որ Իշխանը ոստիկանութեան տնօրէն Վեֆիզ պէյի հետ յաջորդ առաւօտը Շատախ պիտի մեկնէր...»[1]: Նման գործուղման նախադեպեր Վանում եղել էին: Ավելի վաղ նույնանման խնդիրներով Բելլու էր գնացել Վռամյանը, իսկ Թիմար՝ Արամը: Այսինքն՝ Իշխանը այդ առումով կասկածելու հիմք չուներ: Իշխանն ըմբոստ ոգի էր, քաջ: Նա դեմ էր Ջևդեթի հետ համագործակցելուն, առավել ևս դառնալ նրա հանձնակատարը, բայց ի չահ որդեգրած «զիջումների քաղաքականության»՝ համաձայնվեց գնալ: Մինչդեռ Ջևդեթը Իշխանին ուղարկում էր սպանվելու: Նրա հանձնարարությամբ՝ ապրիլի 3-ին Շատախի Հիրջ գյուղում Իշխանն ու նրա երեք թիկնապահները՝ Վ. Խռանյանը, Քոթոթ Պողոսն ու Մ. Տեր-Մարգարյանը սպանվում են քուրդ դավադիրների կողմից:

Ջևդեթը եբիտթուրքական «բարոյականության» կերտվածք էր: Նա Իշխանին նահատակելով չբավարարվեց: Հաջորդ օրը, ապրիլի 4-ին «եղբայրական ջերմ ողջույն» հղեց Ա. Վռամյանին ու Ա. Մանուկյանին և հրավիրեց լուծելու «հրատապ հարցեր»: Առաջինը գնաց Վռամյանը: Վալին ասաց, թե հանձնարարություն ունի նրան ուղարկելու Կ. Պոլիս:

Մինչև վալու մոտ գնալը Վռամյանը երկտողով այդ մասին տեղյակ է պահում Ա. Մանուկյանին, ինչը և վերջինիս փրկեց իր ընկերների ողբերգական ճակատագրին արժանանալուց: Կա նաև կարծիք, որ Արամին զգուշացրել էր Վռամյանին վալու մոտ տարած կառապանը[2]:

Նույն օրը մերձակա գյուղերի մի խումբ քրդեր հայ ղեկավարներին հայտնում են, որ թուրքերը ծրագրել են ապրիլի 6-ին ընդհանուր կոտորած կազմակերպել քաղաքում և գյուղերում:

Արամն Իտալիայի հյուպատոսի միջոցով անմիջապես բանակցությունների մեջ է մտնում Ջևդեթի հետ, Վռամյանին ազատ արձակելու և հայ-թուրքական ընդհարման առաջն առնելու համար:

Վռամյանի հարցում Ջևդեթը չքմեղանում է, թե նրա ազատումը իր իրավասությունից վեր է: Նա հյուպատոսին ասաց. «Վռամեանը երեսփոխան է եւ պէտք է իր պարտականութեան գլուխն անցնի... Արամ էֆէնտին կանչեցի՝ չեկաւ եւ լաւ ըրաւ, որ չեկաւ... Այլեւս զոմիթէներու հետ գործ չունիմ եւ անոնք պէտք չէ խառնուին պետութեան գործերուն»[3]: Նույն գիշեր նա Վռամյանին ճանապարհ հանեց:

---

[1] **Թերզիպաշեան Ա.,** նշվ, աշխ., էջ 155:

[2] Տես «Հերոսամարտեր», Լոս Անջելես, 1985, էջ 18:

[3] **Թերզիպաշեան Ա.,** նշվ, աշխ., էջ 158

Վռամյանի հետ կատարվածի մասին ԱՄՆ-ի ներկայացուցիչ Լևիս Հեսկը 1919 թ. հունվարի 21-ին գրեց, որ Վռամյանին ոչ թե ուղեկցել էին Կ. Պոլիս, այլ Բիթլիսի «սարսափելի զնդաններից մեկը, լրիվ մերկ, մարմնին բազմաթիվ վերքեր, աչքերը խամրած ու հիվանդ»: Նրան գրկել էին սննդից: Դրա փոխարեն ոստիկանական զորանոցի բակում հասցրել էին գավազանի 50 հարված: «Քթից ու բերանից արյուն էր հոսում»:

Երկու շաբաթ այդպես պահելուց հետո 50 ժանդարմների ուղեկցությամբ նրան ձեռները կապած քշեցին դեպի «Արաբական կամրջի կիրճը՝ ճանապարհին անընդհատ հարվածներ հասցնելով»[1]: Նրան սպանեցին Մուֆարկինում դարանակալած քուրդ ջարդարարները Բիթլիսից Դիարբեքիր տանող ճանապարհին՝ Բաթմանսու կամրջի մոտ[2]:

Այս առնչությամբ Ա. Մանդելչտամը նկատում է. «Կառավարությունը մի շարք անգամներ օգտագործեց Դաշնակցության կուսակցության ղեկավարներին՝ հայերին հանգստացնելու և որևէ վտանգավոր ապստամբություն թույլ չտալու համար: Այսպես, Վռամյանին իբրև հաշտարար միջնորդ ուղարկեց Ոստան և Բայրաք, որտեղ հայերը պաշտպանվում էին քրդերի հարձակումներից: Ռազմաճակատից վերադառնալուց հետո Ջևդեթը շնորհակալություն հայտնեց Վռամյանին:

Սակայն այդ նույն Ջևդեթին չխանգարեց Շատախի խռովությունների ժամանակ սպանել տալ Իշխանին և նրան ուղեկցող հայերին... դավաճանաբար ձերբակալել Վռամյանին և այլոց...»[3]:

Վանի հայության ղեկավարների ոչնչացումը մի նպատակ էր հետապնդում՝ հեշտացնել վիլայեթի հայերի բնաջնջման գործը: Այդ ողբերգական իրադարձությունները ակնհայտ դարձրեցին, որ փրկվելու միակ հնարավորությունն ինքնապաշտպանությունն էր: Ապրիլի 5-ին Այգեստանի երիտասարդությունը մտավ դիրքեր:

Շոյբներ Ռիխտերը 1915-ի մայիսի 15-ին տեղեկացրեց, որ Վանի «խռովությունների արտաքին դրդապատճառը... մի քանի ականավոր հայերի, հատկապես Իշխանի և երեսփոխան Վռամյանի, որոնք հայերի շրջանում հարգանք էին վայելում, ձերբակալությունն ու սպանությունն է...»: Դա հայերի հանդեպ թուրքերի սխալ քաղաքականության հետևանք է:

Արտակ Դարբինյանը նկատում է, որ Վանում հասունացող իրադարձությունների պայմաններում թե՛ Արամ Մանուկյանը և թե՛ Վռամյանը «...չատ ջանք էին թափում, որ ինչ-որ չափով զոհացում տային կառավարության պահանջին»[4]:

Սակայն այդ չխանգարեց, որ Իշխանից հետո Արամն ու Վռամյանը դառնային Ջևդեթի թիրախը:

---

[1] *US National Archives Record Groop. 256, 867, 4016/3.*

[2] *FO AA Botschaft Konstantinopel K-168, № 9 (3224).*

[3] **Зареванд,** *նշվ. աշխ., с. 26-28.*

[4] **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 260:*

Վանի հայությունը իմանալով, թե թուրքական իշխանություններն ինչպիսի հաշվեհարդարի էին ենթարկում գյուղաբնակ հայերին և տեսնելով, թե որքան է կոչտացել վերաբերմունքն իրենց հանդեպ, հասկացան, որ փրկության մի հնարավորություն կա՝ կռիվ, ինքնապաշտպանություն: Բայց նաև չէին ուզում այրել բոլոր կամուրջները: Ապրիլի 4-ին Արամի նախաձեռնությամբ գումարվում է հայերի խառը (ոչ կուսակցական) ժողով, որը որոշում է ևս մի փորձ անել բախումը կանխելու համար՝ դիմել վալուն և փորձել ցրելու առճակատման մթնոլորտը: Ժողովականների խնդրանքով միջնորդի առաքելությունն իրենց վրա վերցրեցին ամերիկյան միսիոներներ Յարսունն ու Ըշերը:

Ջևդեթը համաձայնեց ընդունել հայերի պատվիրակությանը: Բայց դա արդեն նախկին սիրալիր Ջևդեթը չէր: Նա ոչ թե լսեց հայերին, այլ աշխատեց սպառնալիքներ տեղալով նրանց ահաբեկել: Պահանջեց, որպեսզի 24 ժամվա ընթացքում հայերը հանձնեն բոլոր զենքերը, այլապես Այգեստանում «քարը քարի վրա չի թողնի»: Նա իր պահանջները համատեղում էր հայերի հասցեին լպիրշ արտահայտություններով: Վերջում հոխորտաց. թե եթե հայերը դիմադրեն՝ «քաղաքն ամբողջությամբ կկործանեմ՝ չթողնելով ծնկիցս բարձր ոչ մի երեխա»[1]:

Ըշերը հայերին խորհուրդ տվեց. «Ձեզի կը մնայ պաշտպանել ձեր կեանքը, վասն զի ամեն յոյս վերջացած է...»[2]:

Ընդհանուր վտանգը միավորեց հայերին, հետին պլան մղեց կուսակցական, դավանաբանական և այլ հակասությունները:

«Կուսակցական խնդիրը,- պատմում է իրադարձությունների մասնակիցը,- կռուի ամբողջ ընթացքին վերացուած էր մեր միջէն: Միեւնոյն ազգին զաւակներն էինք բոլորս եւ միեւնոյն ճակատագրին մատնուած եւ կենաց ու մահուան պայքարն էր մերինը, պէտք է կա՛մ միասին ապրեինք եւ կա՛մ միասին մեռնէինք»[3]:

Վանի ինքնապաշտպանության հաջողության գլխավոր գրավականներից մեկը հենց այն էր, որ քաղաքի ամբողջ հայությունը, անկախ կուսակցական պատկանելությունից, դավանանքից, սոցիալական վիճակից, համոզված էր, որ փրկության ուրիշ ելք չկար, բացի ինքնապաշտպանությունից:

Հայերի և թուրքերի միջև հարաբերությունները գնալով սրվում էին և ի վերջո դադարեցին: Բախումն անխուսափելի էր: Հայերի կողմից դեռևս մարտական բնույթի որևէ շարժում չկար, երբ թուրքերն սկսեցին խրամատներ կառուցել ու զորքեր տեղաբաշխել:

Ջևդեթը ռազմական ուժեր է տեղադրում Այգեստանի կողքով հոսող Ուրբաթ առվի ափին եղած խրամատներում: Նա հոխորտաց, թե հայերը խռովություն են բարձրացրել և ինքը ամեն եղանակով ճնշելու է այն: «Եթե

---

[1] ***Knap C.,*** *The Mission at Van in Turkey in War Time. New York, 1915, p. 16. նաև տես* ***Երամեան Հ.,*** *Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. 1, Աղեքսանդրիա, 1929, էջ 324:*

[2] ***Արամ...,*** *էջ 76:*

[3] ***Կէորկիզեան Ա.,*** *Վասպուրականի հերոսամարտը, Պէյրութ, 1965, էջ 6:*

ապստամբները,- հայտարարեց վալին,- բաց թողնեն թեկուզ մեկ գնդակ, բոլոր քրիստոնյաներին՝ տղամարդ, կին, թե երեխա, ոչնչացնելու եմ»: Թուրքերը հայկական թաղերը շրջափակեցին:

Ամերիկյան քաղաքացիներին պաշտպանելու պատրվակով նա փորձեց զորք մտցնել Այգեստան: Հայերը թույլ չտվեցին: Նա միաժամանակ իրականացնում էր բռնի զորահավաք և այդ անում էր այլանդակ եղանակներով՝ նպատակ ունենալով սադրիչ գործողություններով հայերին մղել ապստամբության և դա պատրվակ դարձնել կոտորածների համար:

Հայերն, իսկապես. միանգամայն հակառակ դիրքորոշումն ունեին, սակայն հակամարտությունը խաղաղ միջոցներով լուծելու նրանց ջանքերը թուրքերը ձախողեցին:

Եվ դեռ մինչև ռազմական գործողությունների սկսվելը Վանի հայությունը հոչակվեց ապստամբ: Մինչդեռ հայերը պաշտպանական միջոցառումներ սկսեցին իրականացնել միայն այն բանից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ բախումն անխուսափելի էր:

Ապրիլի 5-ին Վանում գավառից նամակ է ստացվում, որ պատմում էր Իշխանի սպանության և սկսված կոտորածների մասին: Այլևս պարզ էր՝ անգամ կարծեցյալ խաղաղությունը փրկելն էր անհնար: Ապրիլի 6-ին կապը խզվեց ոչ միայն Վանի ու գյուղերի, այլև Քաղաքամեջի ու Այգեստանի միջև:

Հայերը սկսեցին պատրաստվել մարտական գործողությունների:

Ապրիլի 5-ին ստեղծվեց Վասպուրականի հայ ինքնապաշտպանության Զինվորական մարմին, որին տրվեցին անսահմանափակ լիազորություններ վիլայեթի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Այդ բարձրագույն մարմնի մեջ մտան Արմենակ Եկարյանը, Բուլղարացի Գրիգորը և Կայծակ Առաքելը:

Մինչև ապրիլի 10-ը ձևավորվեցին նաև օժանդակ և տնտեսական խնդիրների լուծմանը կոչված մարմիններ՝ Հայթայթիչ, Պարենավորման, Կարմիր խաչի, զենքերի հավաքման խմբեր, ինչպես նաև Տեղեկատու դիվան (ղեկ. Հմ. Մանուկյան), Զինաբաշխ մարմին (ղեկ. Դ. Փափազյան), հաշվառման խումբ: Ձևավորվեցին նաև Կանանց միությունը, Ոստիկանական վարչությունը, Քաղաքապետարանը, Դատարանը:

Վանի ինքնապաշտպանության իրական ու ամբողջական ղեկավարն ու ոգին Արամ Մանուկյանն էր:

Ի դեպ, Զինվորական մարմնի կազմի մասին տարբեր տվյալներ կան: Վկայվում է նաև, որ Ա. Մանուկյանը նույնպես այդ կառույցի անդամ էր: Զինվորական մարմնի անդամների թվում նշվում են նաև Գաբրիել Սեմերջյանը, Հրանտ Գալիկյանը և Փանոս Թերլեմեզյանը:

Զինվորական մարմնի ղեկավար Ա. Եկարյանը նրա անդրանիկ նիստում ասաց. «Վանը առաջին անգամը չէ, որ ցոյց պիտի տայ իւր համերաշխ ոգին, երբ գործ ունի ընդհանուր թշնամիին հետ... Այս անգամ ալ պիտի տանինք այս կռիւը միեւնոյն համերաշխ ոգով... Մեր ուզելով չէ, որ պիտի կռուինք, ան մեզ պարտադրուեցաւ: Երկու ճամփայ ունինք... կա՛մ գլուխ ծռել բռնաւորին առջեւ

եւ բնաջնջուիլ անպատիւ մահով եւ կա՛մ անվեհեր ու բաց ճակատ դուրս գալ անոր առջեւ..»[1]:

Իրար դեմ կանգնած էին երկու ուժեր, որոնցից Թուրքերը մտնում էին հայութեանը բնաջնջելու խնդիրը լուծող պատերազմ, իսկ հայերը պայքարում էին գոյատեւման համար:

Ջեղեթը մարդուժի և սպառազինության նորանոր համալրումներ էր ստանում, մասնավորապես ստացավ գերմանական նորագույն մակնիշի թնդանոթներ, թուրքական թաղերից մինչև հայկական դիրքերը խրամատներ փորել տվեց:

Այգեստանը բաժանվեց հինգ ռազմական գոտիների, յուրաքանչյուրն ուներ իր հրամանատարն ու կռվող ուժը: Կռվում էր 73 դիրք՝ 1053 մարտիկներով:

Առաջին գոտին ամենաերկարն էր, ձգվում էր Թութունջյանների թաղամասից մինչև Արարուց հրապարակ և ապա մինչև Հաջի Բեքիրի զորանոց: Այդ գոտու մեջ էին մտնում արևմտյան ճակատի կեսը, հարավային թևն ու հարավարևելյան ճակատի զգալի մասը: Գոտու հրամանատարությունը հանձնվեց Ն. Նալբանդյանին: Գոտին ուներ 20 դիրք, 209 զինվոր, 127 հրացան, 109 մաուզեր և 26039 փամփուշտ: Շուտով այս գոտին կիսվեց և Դարդանելի չրջանը հանձնվեց Ա. Պարսամյանին:

Երկրորդ գոտին ձգվում էր Ավոյի ձորից և հասնում Թաղա-Քահրիզի ծայրը և զբաղեցնում էր հարավարևելյան ճակատը: Հրամանատարն էր Ռ. Խաչատրյանը: Ուներ 14 դիրք, 252 զինվոր, 143 հրացան, 128 մաուզեր. 28536 փամփուշտ:

Երրորդ գոտին ձգվում էր Շան թաղից մինչև Զավուչ Բաչին և զբաղեցնում էր հյուսիսային և հյուսիսարևելյան ճակատը: Հրամանատարն էր Հ. Մանուկյանը: Ուներ 10 դիրք, 114 զինվոր, 40 հրացան, 55 մաուզեր, 10012 փամփուշտ:

Չորրորդ գոտին ձգվում էր Պողպատի դարից մինչե Խաչ-փողանը և զբաղեցնում էր հյուսիսային ճակատը: Հրամանատարն էր Մ. Էյնաթանյանը: Ուներ 13 դիրք, 215 զինվոր, 89 հրացան, 119 մաուզեր, 25117 փամփուշտ:

Հինգերորդ գոտին ձգվում էր Խաչ-փողանից մինչև Թութունջյանների թաղամասը և զբաղեցնում էր արևմտյան ճակատի մեծ մասը: Հրամանատարն էր Փ. Ժամհարյանը: Ուներ 16 դիրք, 263 զինվոր, 106 հրացան, 138 մաուզեր, 24229 փամփուշտ:

Այսպիսով, Այգեստանն ուներ 5 գոտի (չրջան), 11 հրամանատար (չրջանապետ), 1053 զինվոր. 505 հրացան՝ 74824 փամփուշտ, 549 մաուզեր՝ 39089 փամփուշտ: 40 հոգանոց մի խումբ 40 հրազենով ու 6000 փամփուշտով գործում էր անմիջապես Ա. Մանուկյանի հրամանատարության տակ:

Հայկական այս փոքրաթիվ ուժերի դեմ Ջեղեթն ուներ 6000 կանոնավոր զորք, 12 լեռնային և ծանր թնդանոթ, տասնյակ հազարավոր քուրդ և թուրք ամբոխ: Միայն ապրիլի 7-ին գիչերը թուրքերը սպառեցին ավելի քան մեկ միլիոն փամփուշտ: Ջեղեթը Այգեստանի հարավային ճակատի դեմ Հաջի Բեքիրի բարձրադիր զորանոցներում տեղադրել էր 500 զինվոր և 4 թնդանոթ,

---

[1] **Կէորկիզեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 93:*

կառուցել խրամատներ, որոնք ձգվում էին մինչև Ուրբաթ առվի բլուրները և վտանգում Շուշանցին: Կլոր Դարի և Արարուց աղբյուրի մերձակա թաղի հայերի և թուրքերի դատարկված տներում զորքեր էին տեղադրված: Արևմուտքից թուրքերի դիրքերը հասնում էին մինչև հայերի պաշտպանության գիծը: Այստեղ դրված էր 3 թնդանոթ: Նույն դրությունն էր նաև մյուս մասերում: Այգեստանը շրջափակված էր, բացի մեկ կետից, որտեղ ամերիկյան և գերմանական միսիոներների շենքերն էին: Ջևդեթը փորձեց այդ հիմնարկների պաշտպանության պատրվակով դրանց շենքերում նույնպես զորքեր տեղադրել, բայց միսիոներները թույլ չտվեցին: Դա այգեստանցիներին հնարավորություն էր ընձեռում կապ ունենալ Շուշանցի, Վարագի և քաղաքի արվարձանների հետ: Դրա փոխարեն թուրքական հրամանատարությունը Համմուդ աղայի զորանոցում ու շենքերում, որոնք հայկական թաղերի սրտում էին գտնվում, 200 մարզված չեթեներ տեղավորեց: Հայերին լուրջ վտանգ էր սպառնում նաև Թոփրաք-Կալեի կողմից:

Հայերի հանդեպ թուրքերի ռազմական մեծ գերակշռությունը ակնհայտ էր բոլոր առումներով: Այդ գերակշռությունները կարելի է խմբավորել հետևյալ կերպ: Թուրքերն ունեին ըստ պահանջի զինամթերք և սննդամթերք, ինչպես նաև ցամաքային և ջրային կապ դրսի հետ, ինչը հնարավորություն էր տալիս ստանալ թե՛ մարդկային ուժի և թե՛ սպառազինության և սննդամթերքի համալրումներ: Հայերը փամփուշտները համրելով էին օգտագործում, մշտապես սննդամթերքի սուր կարիք կար, Շուշանցի անկումից հետո նրանք լրիվ շրջափակվեցին:

Հայ կովողները արհեստավորներ էին, խանութպաններ, մտավորականներ, պաշտոնատարներ, հողատերեր, քաղաք լցված գյուղացիներ: Ընդ որում, քաղաքում կար 18.000 մահմեդական բնակչություն: Ջևդեթի տրամադրության տակ էին նաև 6000 զինվոր ու սպա, 5000–6000 համիդեականներ և չեթեներ, 125 լեռնային ծանր թնդանոթ, նավահանգիստ ու նավատորմ: Հայերն ունեին 800 զինվոր, որոնց միայն կեսը հրացան ուներ, մյուսները կռվում էին մաուզերներով[1]: Մի քանի օր անց, ի հաշիվ քաղաք եկած գյուղացիների, հայ կովողների թիվը դարձավ 1053, որոնք ունեին 505 հրացան և 549 մաուզեր[2]:

Այդ նույն ժամանակ քաղաքում հայերի թիվը հասել էր 70.000-ի, որոնցից 40.000-ը «մերկ ու անօթի փախստականներ» էին[3]:

Ըստ Ռաֆայել Նոգալեսի, որը ծառայում էր օսմանյան բանակում, Վանում թուրքական զորքերի թիվը հասնում էր 12.000-ի[4]: Հրաչ Տասնապետյանը նշում է, որ սկզբում Վանի հայկական թաղերը պաշարել էր 6.000, ապա 10.000 զորք, իսկ հայերն ունեին 800 կռվող, որից 400-ի ձեռքին նոր մակնիշի հրացաններ էին:

---

[1] ***Մխիթարեան Օ.,*** *Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 65:*

[2] *«Վասպուրական: Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի 15-ամեակին առթիւ», էջ 30:*

[3] ***Երամեան Հ.,*** *նշվ. աշխ., հ. Բ, էջ 324:*

[4] ***Nogales R.,*** *Memoirs of Soldier of Fortune. New York, 1932, p. 271.*

Պրոֆեսոր Ա. Համբարյանի տվյալներով, երբ Թիմարի, Հայոց ձորի և մյուս գավառների գյուղացիները լցվեցին Վան, հայ մարտիկների թիվը հասավ 1053-ի՝ 505 մարտական հրացանով[1]:

Թուրքերն ամեն օր Այգեստանի վրա նետում էին չուրջ 300 արկ ու ռումբ:

Այդ ընթացքում շարունակվում էր Վասպուրականի հայության ջարդը: Ապրիլի 13-16-ի երեք օրում կոտորվեց 24.000 հայ:

Հասկանալով, որ վալու միջոցով դրությունը փրկելու ջանքերը դատապարտված էին, Զինվորական մարմինը փորձեց ինչ-որ համաձայնության հասնել չրջանցելով նրան: Ապրիլի 5-ին տարածվեց մահմեդականներին ուղղված կոչ. «Արիւնառուչտ առնաութ կուսակալ մը երկիրը պատերազմի աղէտներուն ենթարկելէ եւ անմիտ յարձակումներով մեր մօտաւորապէս 16.000 հայ զինուորներու արիւնը զուր տեղը հոսեցնելէ ետք, այսօր կ'ուզէ այդ անզգամութիւնը ծածկել վանեցիներու արեան մէջ: Ասոր համար է, ահա, որ սահմանին վրայ գտնուող զինուորները քաշելով՝ տեղւոյս անմեղ ժողովուրդը ոչնչացնել կ'ուզէ:

Խորհեցէ՛ք, թէ ինչպէս ինքը կ'ըսէ. «անիկայ այս երկրի մէջ ձի մը ունի միայն»: Հետեւաբար անիկայ երկու ազգերուն արիւնը հոսեցնելէ ետք, իր ձին հեծնելով՝ երկրէն դուրս կ'ելլէ ու փախչելով երկիրն ու, մանաւանդ ձեզ, սահմանն անցնող թշնամիներուն ձեռքը պիտի յանձնէ: Գիտէք, որ այս կուսակալը ծառէն ճիւղ մը կտրելու համար կացինը արմատին կը զարնէ... Եթէ լսէք կուսակալին, երկու ազգերու միջեւ ահարկու անդունդ բանալուն օգնած կ'ըլլաք: Ուստի զանց առէք ճեւտեթ պէյի գործակալներու քարոզները, մի՛ իյնաք անոր լարած թակարդը: Եղեր են ժամանակներ, որ մենք ենք օգներ ձեզ, այժմ դուք, գոնէ ձեր չէզոքութեամբ օժանդակէք մեզ»[2]:

Նույն օրը կոչեր հղվեցին նաև հայ բնակչությանը. «Մեր համար թշնամիի անհանդուրժելի պահանջներուն տեղի տալը անկարելի ըլլալով եւ մանաւանդ դառը փաստերով համոզուած ըլլալով, որ ան իւր հայաջինջ դիւային ծրագիրը անպայման իրագործել կ'ուզէ, ուստի հակառակ մեր խաղաղասիրական ջանքերուն եւ զգացումներուն, պարտաւորուեցանք ակամայ կռուի ասպարէզ դուրս գալ պաշտպանելու համար մեր ազգային գոյութիւնը, չխնայելով մեր արեան վերջին կաթիլը»[3]: Եվ ապա. «... եթէ երկրի փրկութեան եւ երջանկութեան փափաքող էք, անմիջապէս սկսիք գործել: Ըսէք ճեւտեթ պէյին, թէ տեղէ մը կառավարութիւնը կրնայ վերացուիլ, բայց ազգերը մնայուն կը մնան: Ըսէ՛ք, թէ երկու ազգեր պէտք չէ իրար զարկել տալ: Ըսէ՛ք, դուք հիւր եք, իսկ մենք ընդմիշտ աս երկրին մէջ պիտի ապրինք, հետեւաբար, պահանջեցէք, որ նա այս երկրէն ելլէ երթայ, պաշարումը վերցնէ եւ գաւառներու մէջ տեղի ունեցող դէպքերուն անմիջապէս վերջ տայ: Հակառակ պարագային գործը իւր ելքին պիտի յանգի եւ վախճանը աղէտալի պիտի ըլլայ»[4]:

---

[1] «1915. Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր»: Տե՛ս **Համբարյան Ա.,** Վանի 1915 թ. հերոսամարտը, Եր., 1995:

[2] **Մխիթարեան Օ.,** նշվ. աշխ., էջ 71, 241-242:

[3] Նույն տեղում, էջ 54:

[4] «Յուշամատեան Մեծ Եղեռնի. 1915-1965», Պէյրութ, 1965, էջ 733:

Ապրիլի 6-ին կայացավ հայ Զինյալ ուժերի ղեկավարների խորհրդակցություն: Բուլղարացի Գրիգորն ասաց. «Մեր առջեւ կանգնած է թշնամին, որն անհամեմատ ուժեղ է մեզնից, բայց նրան պակասում է այն բարոյական ուժը, որ մենք ունենք, դա մեր մեռնելու պատրաստակամությունն է: Մեզ համար... այս կռիվը մէկ նշանաբան պիտի ունենայ՝ մեռնել միայն մեր դիրքերու վրայ»[1]:

Հայերի բարոյական առավելության հսկայական նշանակությունը կռվի ընթացքի վրա նշում են շատերը:

Այսպիսով, ինչպես գրում է Փ. Թերլեմեզյանը. «Վանի հայությունը... համոզուեց, որ թուրք կառավարությունը որոշել է ամբողջովին բնաջնջել մեր ցեղը: Ուրեմն կռուիլն անխուսափելի դարձաւ»: Վանեցին «չուզեց իր վիզը դնել թուրքական եաթաղանի տակ եւ վճռեց կռուել: Որովհետեւ հերոսական կյանքը թէ՛ պարտաւոր եւ թէ՛ պարտավորիչ էր»: Ի հերոսամարտը «ժողովրդական պատերազմ էր». այլ ոչ թէ որևէ կուսակցության գործ: «... Ամենքն իրենց բաժին աշխատանքն ունեցան եւ ուս-ուսի կռվեցան»[2]:

Ապրիլի 6-ին մի խումբ թուրք զինվորներ բռնեցին Շուշանց գյուղից քաղաք մտած մի քանի հայ կանանց: Երկու հայ մարտիկներ խրամատներից բարձրացան այդ կանանց օգնելու համար, բայց անմիջապես գնդակահար ընկան: Դա ազդանշանի նշանակություն ունեցավ:

Փ. Թերլեմեզյանը հաստատում է կռվի սկսվելու նշված իրողությունը: Նա գտնում է. «Հայ մարտիկներից երկուսը՝ Եղյանը և Թյուրզյանը տեսնելով, որ թուրքերը փորձում են բռնաբարել Շուշանցի կանանց, ատրճանակը ձեռքերում դուրս թռան մարտական տնակից, բայց անմիջապես սպանվեցին»: Այդ տեղի ունեցավ գերմանական որբանոցի դիմաց: Միսիոներուհի Սպերին թուրքական հրամանատարին հասցեագրված նամակում գրում է. «Սեփական աչքերով տեսա, որ առաջինը դուք սկսեցիք և պահպանվում եմ, որ դուք էլ առաջինը կռիվը կանգնեցնեք...»[3]: «Այդպէս սկսուեց Վանի դիւցազնական կռիւը»[4]:

Նախորդ օրը մարտական խմբերին բաժանվել էին Զինվորական մարմնի հրահանգները մարտեր վարելու և զինվորական կարգապահության վերաբերյալ: Գիշերը բոլոր խմբապետները ժողովի հավաքվեցին և ստացան վերջին հրահանգներն ու մաղթանքները:

Թուրքերի արձակած գնդակին հետևեցին համընդհանուր կրակահերթեր: Թշնամու թնդանոթները գործի անցան ամբողջ հզորությամբ: Այգեստանը գնդակոծվում էր սկսած Խաչ-փողանից մինչև Հակույսներ: Հայերը պատասխանում են իրենց ունեցած զինամիջոցներով: Հրապարակում հայտնվում է վարժապետանոցի «Շեփոր» նվագախումբը, հնչում է «Մեր հայրենիքը»:

Հայերը մարտնչում էին խելահեղ: Գիտակցաբար, թե ենթագիտակցաբար հասկանում էին, որ Վանում թուրքական իշխանություններն ու բանակն իրենց վերջին օրերն էին ապրում, որ ռուսական բանակի գալուն երկար չեն սպասե-

---

[1] «Վասպուրական...», էջ 34:
[2] ՀԱԱ, ֆ. 30, գ. 423, թ. 412:
[3] "Армянский вестник", 1916 г., № 18.
[4] ՀԱԱ, ֆ. 30, գ. 423, թ. 404:

լու: Եվ վանեցիներն այդ սարսափելի ամիսը վերածեցին հայ ժողովրդի պատմության ամենահերոսական էջերից մեկի:

Դոկտոր Ըշբրը գրեց, թե վանահայերի վարքագիծը պատիվ կբերեր յուրաքանչյուր ժողովրդի, իսկ այն, ինչ արեցին թուրքերը՝ սազում է քինախնդիր վախկոտներին: Թուրքերի փախչելուց հետո ռուսները հավաքեցին ու այրեցին հայերի 55.000 դիակ:

Վանում «հեղափոխության» մասին պատմությունը, գրում է Բարբին, ես չարադրեցի ոչ միայն որովհետև այն մի ամբողջ ժողովրդի վերացնելու փորձի առաջին էտապն էր, այլ նաև նրա համար, որ այդ կռիվները մշտապես թուրքերի կողմից վկայակոչվում են իրենց գազանություններն արդարացնելու համար: Թալեաթը, Էնվերը և մյուսները մշտապես Վանի «հեղափոխութիւնը» ներկայացնում են որպես հայկական ուխտադրժության օրինակ: Մինչդեռ այդ «հեղափոխությունն այլ բան չէր, եթե ոչ հայերի վճռականությունը՝ փրկելու իրենց կանանց պատիվը, իրենց սեփական կյանքը, և դա այն բանից հետո, երբ թուրքերը ոչնչացնելով վանեցիներին հարևան հայերին, հասկացրեցին, թե ինչ է սպասում նաև նրանց:

Վանում Իտալիայի հյուպատոս Գ. Սբորդոն պատմում է. «Ապրիլի 1-ին շաբաթ օրը, հայկական թաղամասերը հանկարծակի շրջապատվեցին զորքերով ու թնդանոթներով: Կիրակին ու երկուշաբթին անցան վալու հետ իմ անարդյունք բանակցություններով: Երեքշաբթի, մի քանի հայի սպանության հետևանքով, որոնք պաշտպանել էին քրիստոնյա գաղթական աղջկան, որին բռնել էին թուրք զինվորները, հուզումները համընդհանուր են դառնում: Բոլոր զորանոցներից զինվորներ են դուրս գալիս ու կրակ բացում բնակչության վրա: Սկսվում է ռմբակոծությունը»:

Կառավարության տրամադրության տակ կար 12 թնդանոթ և վիթխարի քանակությամբ ռազմամթերք, 6000 զինվոր (թուրք, քուրդ, չերքեզ), հինգ զորանոց, լճում նավահանգիստ, ոչ մեծ չոգենավ և շատ առագաստանավեր:

«... Հայերը թնդանոթ չունէին, իսկ մարտիկներ ունէին՝ 100-120 հոգի Քաղաքում և 1500 հոգի Այգեստանում... Թուրքերի համար շրջապատման ամբողջ գործողությունը հանգում էր օր ու գիշեր Քաղաքամէջը եւ Այգեստանը գնդակոծելուն, նաեւ հայերի տները հրդեհելուն... եւ հայերի դիրքերը գրաւելուն»[1]:

Թերլեմեզյանը նույնպես հետաքրքիր է գնահատում կռվող կողմերի ուժերի փոխհարաբերությունը: «Թուրքերն ունեին 6-8 հազ. զինվոր, 13 թնդանոթ և հսկայական քանակությամբ ռազմամթերք: Մեր առավելությունն էր անսահման հավատն ու ցանկությունը ապրելու և չարունակելու մեր նախնիների ժառանգած մշակութային, ստեղծագործական աշխատանքը»[2]:

Ապրիլի 7-ի առավոտյան մարտերն սկսվեցին բոլոր դիրքերում: Թշնամին նորից գործի դրեց թնդանոթները, որոնց ռմբակոծություններից ավերվում էին հայերի դիրքերը, նրանց տներն ու այգիները: «Անհնարին է փողոցով անցնիլ:

---

[1] ***Պարպի Հ.,*** *Սարսափի երկրին մէջ. Նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 148-149:*

[2] *"Армянский вестник", 1916 г., № 18.*

Ամեն քայլափոխը կապուած է մեծ վտանգի մը հետ: Ոչ միայն հրացանի գնդակները կը սողան անվերջ, այլեւ թնդանօթներու հարուածները որոտալով կը պայթին բարդիներու գլխուն ու կը ցրուին փողոցի երկայնքի ու լայնքի վրայ»[1]: Շատ տեղերում գնդակների կարկուտ էր տեղում, ամենուրեք ծուխ էր, վառոդի հոտ: Բայց հայկական դիրքերը մնում էին կանգուն, հայերը կռվում էին աներեր, հակահարված տալիս առաջանալու թշնամու փորձերին:

Կռիվը չարունակվեց մինչև օրվա երկրորդ կեսը: Փ. Թերլեմեզյանը «Армянский вестник»-ի 1916 թ., թիվ 18-ում գրեց, որ Վանի ինքնապաշտպանությունն սկսվեց ապրիլի 7-ին: Դա սկսվեց, որովհետև «վերջին ամիսների ծանր իրադարձությունները լցրեցին համբերության բաժակը»: Հայերն այլևս չէին ուզում իրենց որդիներին հանձնել դահիճ կառավարության ձեռքը, որովհետև իմացան, որ «ճամբարներում նրանց մի մասը գնդակահարվել էր»:

Հայերի անձնազոհությունն արտահայտվում էր հաղթանակի կերտման գործում առավել ներդրում ունենալու նրանց բուռն ձգտման մեջ: Այգեստանի տներն ու ցանկապատերը հողաշեն չէին, բայց չէին դիմանում ականների հարվածներին: Վիճակը փրկում էին անձնազոհ քարագործներն ու գյուղացիները, որոնք քանդված պատերը նույն օրը վերականգնում էին «կռվելու համար բոլոր հարմարություններով»: Վանեցի վարպետները բազմաթիվ ստորգետնյա անցուղիներ փորեցին թշնամու դիրքերի կամ չինությունների տակ՝ դրանք գրավելու կամ հրդեհելու համար: Հայկական դիրքերի շուրջ գյուղացիների փորած ամրաչերտը հայերին պաշտպանում էր ռմբակոծություններից: «Մեզանում,- չարունակում է Փ. Թերլեմեզյանը,- շատ գիտակից, կենսախինդ անձինք սպասում էին իրենց հերթին՝ զոհված մարտիկի տեղը զբաղեցնելու, իսկ թշնամին իր զինվորներին ճիպոտի հարվածներով էր հարկադրում մարտի գնալ կամ բորբոքում էր կրոնական մոլեռանդությունը»:

«Շեփոր» նվագախումբը վաղ առավոտից մինչև ուշ գիշեր դիրքերում էր: «Անգամ մեր հինգ տարեկան երեխաներն էին աշխատում», նրանք հավաքում էին թշնամու գործածած գնդակները և հարմարեցնում մեր զենքերին: Թշնամու արձակած ամեն մի ռումբից հայերն ստանում էին 5-7 ֆունտ վառոդ: Բեռնակիր Մուկուչն իր տան միակ անկողինը տարավ խրամատներ, որպեսզի մարտիկները չմրսեին:

Վանի հերոսամարտի մասնակից Ա. Փոխարյանը հայերի «թիկունքի» աշխատանքը ներկայացնում է հետևյալ կերպ: Կռվողների սննդի, կոշիկի և մյուս կարիքները հոգալու համար ստեղծվեց «Հայթայթիչ» հանձնախումբը, որը ոչ միայն հոգաց կռվողների, այլև Այգեստան լցված հազարավոր սովալլուկ ժողովրդի, կոտորածից ճողոպրած կանանց ու երեխաների կարիքները: «Հայթայթիչն» իր տրամադրության տակ ուներ ջրաղաց, փռեր, սպանդանոց, խոհանոցներ և այլն: «Հայկական Կարմիր խաչը» մատակարարում էր դեղորայք, վիրաբուժական գործիքներ, հիվանդանոցը ապահովում մահճակալներով, չտապ օգնության հասնում ճակատում վիրավորվածներին: «Վասպուրականի

[1] **Մխիթարեան Օ.,** նշվ. աշխ., էջ 72-73:

Հայ կանանց միությունն» իր գործունեությունն ամբողջովին ենթարկեց ինքնապաշտպանությանը, որի մասնակիցներին էին ծառայում նրա արհեստանոցները (կարուձևի), հավաքած նվիրատվությունները:

Կազմակերպվեց նաև «Ամրաշեն խումբ», որի կազմում աշխատում էին շուրջ 500 արհեստավորներ, որոնք կռվի ամենավտանգավոր տեղամասերում էին, ու բահ ու բրիչով վերականգնում էին արկերի գործած ավերածությունները: Նրանք Այգեստանը շրջափակեցին խրամատներով, չինեցին թունելներ և հաղորդակցության ստորգետնյա ուղիներ: Ստեղծվեց նաև հրկիզող ու պայթեցնող սարք՝ «Թուլումբա»:

Հայերը ցուցաբերում էին նաև անձնական հերոսության փայլուն օրինակներ:

Իննը հոգանոց մի խումբ 8 օր շարունակ հետ մղեց թշնամու մեծաթիվ ուժերի կատաղի գրոհները: Թշնամին մեծ կորուստներ էր ունենում հայ հրաձգահարի նշանառու կրակից: Հայերը թափանցում էին թշնամու ճակատային գիծ ու թիկունքը և հրկիզում ու ավերածություններ գործում: Ինքնապաշտպանության շահերին էր ենթարկված ամեն ինչ, վերջին ունեցվածքը:

Փանոսի արհեստանոցը օրվա ընթացքում արտադրում էր 2000 փամփուշտ: Ոսկերիչներն ու փորագրիչները վառոդ էին պատրաստում: Այգեստանի ջրաղացները մնացել էին թշնամու ձեռքը, հարկ եղավ շտապ վերանորոգել լքվածները և կառուցել նորերը:

Կանայք զբաղվում էին հագուստ ապահովելով՝ կարկատում էին հները, կարում նորերը, սնունդ պատրաստում ու կրակի տեղատարափի տակ հասցնում կռվողներին: Մի քանի կանայք զբաղվում էին նաև հետախուզությամբ, անցնում թշնամու թիկունքը և արժեքավոր տեղեկություններ բերում: Նրանցից 19-ամյա Իսկուհի Համբարձումյանը (Սևո) նույնպես պարգևատրվեց Զինվորական մարմնի «Պատվո խաչ» շքանշանով: Պատանիներն ու երեխաները վնասազերծում էին թշնամու արձակած ռումբերը և տալիս զինագործներին՝ դրանց վառոդը օգտագործելու համար, հրկիզում էին թշնամու դիրքերը և շինությունները: 14 տարեկան Արամը հրկիզեց ֆրանսիական հյուպատոսարանը, որտեղ դիրքավորված էին թուրքերը:

Ուսուցիչ Հ. Մկրտչյան-Գյուլօղլյանի ստեղծած «Քանքար (Շեփոր)» նվագախումբը, որը ոգևորում, բարձրացնում էր կռվողների մարտական ոգին, այնքան էր անհանգստացրել Ջևդեթին, որ նա պոռթկաց. «Նրանք իրենց երաժշտությունով ինձ կխելագարացնեն»:

Գյուղերից հայերի հոսքը քաղաք շարունակվում էր. գալիս էին Շահբազից, Արճակից, Խառակոնիսից, Կուռուպաշից և այլ գյուղերից: Քաղաքում գյուղացիների թիվը հասավ 40.000-ի, ինչը պարենավորման լրացուցիչ դժվարություններ ստեղծեց: Փախստականների հանդեպ հոգատարությունն ու նրանց ուժերի օգտագործումը կենսական, բախտորոշ խնդիր էր: Ա. Մանուկյանը փայլուն լուծեց այդ խնդիրը. նրանց երեխաներին, ծերերին, ինչպես նաև հիվանդներին տեղավորեցին ունևոր տներում: Կազմակերպվեցին գաղթականական խոշոր ապաստարաններ օրիորդաց դպրոցում և բարեսիրականի մանկապարտեզում: Գյուղացիների մի մասը կռվի մեջ մտավ Այգեստանի դիրքերում,

մյուսներից ձևավորվեց ամրաչինական երկու բրիգադ[1]:

Մարդկանց մի խումբ էլ զբաղված էր ածուխ և ծխավոր վառոդ ստանալով, զենքեր վերանորոգելով և պատրաստելով: Մ. Գարիպճանյանն ու Ա. Պողոզանճյանը բացեցին զինագործարան, որտեղ Բուլղարացի Գրիգորը ձուլեց առաջին թնդանոթը: Երբ Ջևդեթն այդ թնդանոթի կրակը լսեց՝ սարսափեց, կարծեց թե ռուսներն արդեն Վանում էին:

Ապրիլի 7-ի ցերեկային ռմբակոծությունները արևամուտին դադարեցին:

Պայքարի ելան բոլոր հայերը՝ անկախ տարիքից ու սեռի: «Վանի հայությունը,- գրում է Փ. Թերլեմեզյանը,- համոզվեց, որ թուրքական կառավարությունը վճռել է ամբողջովին բնաջնջել մեր ցեղը: Ուրեմն կռվելն անխուսափելի դարձավ... Հերոսացումը այս կամ այն կուսակցությանը վերագրելը հիմնովին թյուրիմացություն է, ամենքն իրենց բաժին աշխատանքն ունեցան և ուս-ուսի կռվեցան»[2]:

Երեկոյան հայկական և թուրքական դիրքերում տարօրինակ լռություն էր, գրում է ժամանակակիցը, քաղաքում կարծես որևէ չարժում չկար: Միայն Խաչփողանն էր անհանգիստ, այնտեղ հայերի տներն էին այրվում: Սակայն խորհրդավոր լռությունը միայն կես ժամ տևեց և քաղաքը նորից սուզվեց հրանոթային գնդակոծության, մարդկային ճիչերի, լացի, ողբի դժոխային աղմուկի մեջ: Ամենուրեք հնչում էին հրացանային համազարկեր, ականջ էր ծակում պատուհանների փշրվող ապակիների խշշոցը, օդն էին ճեղքում լուսարձակների փնջերը: Հայ հրամանատարությունը իսկույն հասկացավ, որ Ջևդեթը ահաբեկելու խրախճանք է կազմակերպել և որոշեց որևէ կերպ չարձագանքել դրան: Ռմբակոծություններն ու կրակահերթերը վնասեցին տներին, այլևայլ ինությունններին, բայց ո՛չ կռվող ուժին, որն իր զսպվածությամբ ու սառնասրտությամբ ձախողեց Նալբանդի պլանը:

Նաև հարկ է նկատի ունենալ, որ հայերը ստեղծել էին լրացուցիչ հնարավորություններ՝ տասնյակ կետերում թշնամուն հակահարված տալու համար:

Այգեստանի արևմուտքում գտնվող Աղիսև ձոր թաղամասում Սահակ բեյի և Թովմասյանի կարևոր դիրքերն ուժեղ ռմբակոծության ենթարկվեցին: Միաժամանակ թուրքերը դարան էին մտել 25 մետր հեռավորության վրա: Նրանց կողմից այդ դիրքերի գրավելը ոչ միայն բացասական առումով հոգեբանական խոչոր նշանակություն կարող էր ունենալ, այլև Այգեստանը փաստորեն բաժանելու էր երկու մասի: Քիչ անց ռմբակոծության տակ էին հայերի բոլոր դիրքերը: Հրանոթները խփում էին Հաջի Բեքիրի զորանոցից ու Թոփրախ-Կալեի բարձունքներից: «Կրակ կը տեղար չուրջերնիս,- գրում է Արմենակ Եկարյանը,- կրակի առաջին մկրտութիւնն էր... Շուրջերնիս չփոթ, աղմուկ ու աղաղակ, ողբ ու կոծ... Ընկերներուս հետ Շտապը նստած, սրտատրոփ կը սպասենք դժբախտ լուրերու, ո՞ր դիրքը ինկաւ արդեօք...

Բայց ահա, ո՜վ հրաշք, ամեն կողմէ լրաբերներ կը հասնին. «Մենք մեր դիր-

---

[1] «Հայրենիք», 1924, № 2, նոյեմբեր:

[2] Հայաստանի պետական պատկերասրահ, ֆ. 30, ինվ. 423, թ. 412:

քերու վրայ ենք, յառաջացումի ոչ մէկ փորձ թուրքերու կողմէ...»: Շունչ մը կ՚առնենք: Ժողովուրդէն շատերը գինիի կամ օղիի չիչերը առած, ուտելիքներու հետ կը դիմեն դիրքերը, կոուողներուն ոգեւորելու եւ իրենց գոհունակութիւնը յայտնելու...»[1]:

Ջեղեթը փրփրել էր: Նա չտապում էր. Դիլմանում Խալիլը խայտառակ պարտություն էր կրել ռուսներից: Վերջիններիս առաջ բաց էր Վանի ճանապարհը:

Դա հաղթանակ էր, հաղթանակ կամքի, հմտության և սառնասրտության: Բայց մինչև հանգուցալուծումը դեռ շատ օրեր ու փորձություններ կային: Զինվորական մարմինն այդ նկատի ունենալով ապրիլի 7-ի գիչերը դիմեց ինքնապաշտպանության մասնակիցներին. «Պզտիկ յաջողութիւն մը թող չի հեռացնէ զձեզ խոհեմութենէ. ամեն բանի վերջն է գովելի: Թշնամին ուժեղ է եւ խորամանկ, ձեր անվեհերութեանը միացուցէ՛ք զգուշութիւն եւ խոհեմութիւն: Մի՛ հայհոյէք թշնամիի կրօնքին, ատիկայ անվայել է մեզի համար... Եղէ՛ք կարգապահ»[2]:

Ապրիլի 8-ին բոլոր ճակատներում կռիվն ավելի է բորբոքվում: Դաշտի հայկական գյուղերը ավերմունքի են ենթարկվում զորանոցի թնդանոթային ռմբակոծությունից: Կռիվը կատաղի է դառնում Խաչ-փողանում, որտեղ թուրքական գերակշիռ ուժերը մի պահ ընկճում են հայերին: Թուրքերը հրդեհում են մերձակա հայկական գյուղերը: Նույնը նրանք անում են Խաչ-փողանում: Բոցերը անցնում են ս. Հակոբի թաղը, թալանվում ու հրդեհվում է նաև Ս. Հակոբի եկեղեցին: Ժողովրդի մեջ իրարանցում սկսվեց: Սակայն հայերի մյուս դիրքերն աներեր էին:

Զինվորական մարմինը հետևյալ հայտարարությունը հրապարակեց. «Երէկ գիչերուան ամբողջ թնդանօթաձգութիւնն ու թշնամիի կողմէ վատնուած հարիւր հազարաւոր գնդակներն ու հայկական տուներու հրդեհումները նպատակ ունեցան միայն վախցնել ժողովուրդը... Խուճապի պէտք չի կայ»[3]:

Հաջորդ օրը թուրքերը ուժեղ ռմբակոծություն սկսեցին ու հարձակման անցան Դարդանել թաղամասում: Ականատեսը նկատում է, թե «Հրազէններու լոյսին տակ ամբողջ գիչերը հնարաւոր էր կարդալ ու գրել...»: Կես գիչերին փորձ արվեց ճեղքելու Սահակ բեյի և Թովմասյանի դիրքերը: Սակայն հայերը հակահարված տվեցին, ու թուրքերը մեծ կորուստներ կրելով հետ քաշվեցին: Ձախողվում են հարձակումները նաև Խաչ-փողանի վրա: Գործը ձեռնամարտի հասավ Հայնկույսերի չրջանում՝ թուրքերը հաջողում են գրավել Շահբենդերյանի դիրքերը, սակայն մի քանի ժամ անց օգնության հասած հայերը թուրքերին դուրս են չպրտում: Ցերեկը թշնամին հաջողում է, չնայած հայերի համառ դիմադրության, հետ գրավել այդ դիրքերը: Իսկ երեկոյան տիրեց լռություն, միայն լսվում էին Քաղաքամիջի դիրքերը ռմբակոծող թնդանոթների խուլ որոտները:

---

[1] *«Յուչամատեան Մեծ Եղեռնի», էջ 734:*

[2] *Նույն տեղում, էջ 736:*

[3] *Նույն տեղում, էջ 734:*

Սակայն դա չարագույժ լռություն էր: Կես ժամ անց, գրում է Օ. Մխիթարյանը. «Ահեղասաստ կայծակի որոտի ուժգնութեամբ բոլոր դիրքերու վրայ կը լսուի դժոխային աղմուկ մը... Մարդկային լսելիքը ուղղակի խլութեան կը դատապարտուէր եւ ամեն մարդ անգիտակցօրէն կը փակէր իր աչքերն ու ականջները... Բայց ահա ծառերու խշրտուքը՝ հրացաններու գնդակներու տակ, լուսամուտներու ապակիներու անընդհատ դղրդոցը, կայծակնային փայլը կամ օդին մէջ զիկզակ եւ ալետատան հրթիռները, եւ վերջապէս, այս արի մարդիկ, որոնք ամբողջ օրը այնքան քաջաբար կռուեցան եւ որ այս անդունդային որոտին մէջ դալկացան ջղային անընդհատ կծկումներով»[1]:

Հայկական թաղերում ու նրանց շուրջը թուրքերն ունեին զինվորական և ոստիկանական հսկիչ կետեր, որոնք նեղում էին հայերին: Թուրքերը նաև փորձեցին մտնել հայերի տները և կռվել դրանցում: Մասնավորապես մեծ վնաս էին հասցնում անգլիական հյուպատոսարանում դիրքավորված թուրքերը: Բուլղարացի Գրիգորի խումբը հաջողում է չենքը հրդեհել: Թուրքերը դուրս են փախչում և ընկնում հայերի կրակի տակ: Սա մեծ հաղթանակ էր՝ նախ թուրքերը զգալի զոհեր տվեցին և ապա, այդ չենքից թշնամին վերահսկում էր հայերի մի քանի դիրքերի վրա: Գործողության մասնակիցները պարգևատրվեցին եռագույն երիզներ ունեցող «Պատվո խաչերով»:

«Հայ ազգային ինքնապաշտպանութեան կեդրոնական մարմինը, գնահատելով ձեր աննման արիութիւնը... յարգանօք կը նուիրէ ձեզ ներփակ «Պատուոյ խաչը», որուն կատարելապէս արժանի ըլլալիդ փառաւոր կերպով ապացուցեցիք»[2]:

Ֆրանսիական հյուպատոսարանի չենքը ևս վտանգավոր դիրք էր հայերի համար, որտեղ 70 զինվոր կար, ինչպես նաև Համմուդ աղայի զորանոցը 650 զինվորով: Այստեղ կենտրոնացած էին Ջևդեթի լավ մարզված չեթեները: Նրանք անընդհատ կրակի տակ էին պահում հայկական դիրքերը և անհնար դարձնում որևէ շարժում: Մանավանդ, որ զորանոցը կապ ուներ արևելյան մասի հայկական դիրքերի վրա իշխող տների հետ: Համմուդ աղայի զորանոցին հայերը ղշլա էին կոչում. նա վանահայի համար թուրքական բռնության խորհրդանիշ էր: Գրոհով զորանոցին տիրանալ հնարավոր չէր, համենայն դեպս մեծ զոհեր կպահանջվեր: Բուլղարացի Գրիգորի առաջարկով՝ երկու օրում փորվեց ստորգետնյա անցք, որով պայթուցիկ նյութեր փոխադրեցին զորանոց և այն հրդեհեցին: Թուրքերը խեղդվում էին չենքի ներսում կամ դրսում դառնում թիրախ: Վանեցիները նրանց հետապնդում էին, հրդեհում նաև մի քանի ուրիշ չենքեր: Առավոտյան հայերը տոնախմբության մեջ էին: Հրապարակվեց Զինվորական մարմնի կոչը հաղթանակի առթիվ: Դա ապրիլի 10-ն էր:

Հաջորդ քայլը հայերի դիրքերին մոտ գտնվող թուրքական կետերի ոչնչացումն էր: Դրանցից մեկը Արարուց հրապարակի վրա գտնվող ոստիկանա-

---

[1] «Հայրենիք» ամսագիր, 1924 թ., № 11, էջ 84:
[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 766:

տունն էր: Ապրիլի 13-ին վարժապետ Տիգրանը հաջողում է թշնամու կրակի տարափի տակ մոտենալ ոստիկանատանը և հրդեհել մերձակա խանութները: Սակայն գիշերն անձրև է տեղում և թուրքերը հաջողում են հրդեհը հանգցնել: Երկու օր հետո Տիգրանը նորից սողաց այդ դիրքերը, բայց երբ տեղ հասավ, շները հաչալով աղմուկ բարձրացրեցին, և թուրքերը զանգվածային կրակ բացեցին: Սակայն դա չի խանգարում մի քանի խանութներ հրկիզելուն: «Թուրքերը,- գրում է ականատեսը,- տեսնելով, որ այլեւս անհնար է դիմանալ, թողեցին իրենց հրդեհուող դիրքերն ու փախան», իսկ Տիգրանն անվնաս վերադարձավ և արժանացավ «Անվեհեր հրձիգ» կոչմանը[1]: Նույն օրը հրկիզվում է նաև Շան թաղում գտնվող թրքական դիրքը, ապա նաև Խաչ-փողանի հրապարակի վրայի Խուլի տունը: Թուրքերը հարկադրված լքում են Սարաճյանի դիրքերը, որին անմիջապես տիրանում են հայերը:

Ծանր մարտեր են գնում Փոս թաղի, Խաչ-փողանի, Շմավոնյանի ու Նալբանդյանի դիրքերի շրջանում: Նույն ժամանակ հայերը ոչնչացնում են թուրքերի ուժեղ հենակետերից մեկը՝ Թոփալ Մոլլայի տունը՝ նորից ստորգետնյա անցումով հրդեհելու միջոցով: Նման եղանակով հայերի դիրքերը ոչնչացնելու թուրքերի փորձը ձախողվեց. ստորգետնյա անցք փորողները նկատվեցին ու ոչնչացվեցին:

Ապրիլի 15-ին Զինվորական մարմինը նամակ ուղարկեց ռուսական հրամանատարությանը, որում նկարագրվում էր իրավիճակն ու նշվում. «Ամեն օր սպասում ենք ռուսական օգնության: Խնդրում ենք չտապել: Հետո ուշ կլինի»[2]:

Ապրիլի 23-ին Կովկասի փոխարքայի գրասենյակից ԱԳ նախարարին գրեցին, թե մինչև ապրիլի 15-ը Ջևդեթը քաղաքի վրա նետել էր 1700 ական, Վանի շրջակայքի 100 գյուղերի հայերը մորթված էին, կանանց տարել էին լեռներ: Շրջափակված հայերի ուժերը սպառվում էին[3]: Մեկ օր անց «Русские ведомости» թերթը գրեց, որ Վանի վիլայեթում վառվում են հայկական գյուղերը, «զորահավաքի պատրվակով սարսափելի բաներ են կատարվում: Ազգաբնակչությունն ահավոր վիճակում է, համընդհանուր կոտորած է»[4]:

Այդ ընթացքում քաղաք են լցվում Վասպուրականի հայության ջարդարար հրոսակները: Լրացուցիչ թնդանոթներ ու ռազմամթերք են բերվում Բիթլիսից:

Ապրիլի 16-ին թուրքերը զանգվածային ռմբակոծության տակ առան Սահակ բեյի դիրքերը, ապա հարձակման անցավ հետևակը: Վիճակը ծանր էր, բայց հայերն անսասան էին, նրանք թշնամուն մեծ զոհեր պատճառելով փախուստի մատնեցին, ինչը հնարավորություն տվեց ժամանակ շահել սեփական դիրքերն ամրացնելու համար: Այդ օրը ռմբակոծվեցին Այգեստանի հայկական բոլոր դիրքերը, մասնավորապես Փոս թաղը և Լավանդ օղլին: Հաջորդ օրն ավելի սաստիկ մարտեր տեղի ունեցան հատկապես Սահակ բեյի և Թովմասյանի դիրքերի շրջանում: Հայերը թշնամուն թողնում էին մոտենալ և հանկար-

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 740:

[2] "Геноцид армян в Османской империи", Ереван, 1982, с. 281.

[3] АВПР, Политархив, д. 3505, л. 2.

[4] "Русские ведомости", 24 апреля 1915 г.

ծակի հակահարձակումով նրան ոչնչացնում էին: Թուրքերն անխնա ռմբակոծության են ենթարկում Արարքի հայոց դիրքերը, ապա գրոհի են անցնում 300 զինվորներով: Փոքրաթիվ հայեր Ալես Պարսամյանի հրամանատարությամբ հաջողում են նրանց հետ շպրտել: Թուրքական 200 հեծյալներ շարժվում են դեպի Շուշանցի՝ Վարագա դիրքերը: Սակայն նորից անհաջող:

Ապրիլի 18-ին ռմբակոծվեցին Այգեստանի ոչ միայն դիրքերը, այլև տները, փողոցները, դպրոցները, եկեղեցիները՝ արձակվեց 400 ռումբ, եղան զոհեր: Ռմբակոծությունը շարունակվեց գիշերը:

Գլխավոր հարձակումը սկսվեց ապրիլի 19-ին: Խաչ-փողանում ռմբակոծվում էին Նալբանդյանի և Օթելի դիրքերը: Տների վերնահարկերն ավերվեցին: Ռմբակոծությունների կարկտի տակ հայերը վերականգնում են ավերված դիրքերը:

Հայ նշանառուները որոնում էին թուրք թնդանոթաձիգներին: Թշնամին գրոհի է անցնում, հրդեհում հայերի դիրքերը, խուճապ առաջացնում: Հայերը հավաքելով վերջին ուժերը՝ թշնամուն փախուստի են մատնում: Խաչ-փողանը հարձակման ենթարկելու հետ միասին ռմբակոծվում է Այգեստանի ամբողջ արևմտյան հատվածը: Ավերածությունները մեծ էին: Թուրքերը ամրանում են Կլոր դարի այգիներում ու չորս թնդանոթներով ավեր տարածում: Հայերը մինչև մութն ընկնելը դիմադրեցին, ապա վերականգնեցին ավերված դիրքերը:

Թաղաքեահրեզում Դարդանելի դիրքերի հայերը բաց կռվի դուրս եկան՝ օգտվելով այգիների հողե պարիսպների ընձեռած հնարավորությունից: Թշնամու թնդանոթներն անընդհատ ռմբակոծում էին: Հայերի դիրքերից մի քանիսը լրիվ ավերվեցին: Վանեցիները հարկադրված էին խրամատներ փորել: Իսկ օրվա երկրորդ կեսին 500 թուրք գրոհի է անցնում, որպեսզի ճեղքի, երկու մասի բաժանի հայերի այգիներում եղած դիրքերը: Առաջին հարձակումը հետ է մղվում, երկրորդի ժամանակ թուրքերն ընդհուպ մոտենում են այդ դիրքերին (20 մետր), սակայն նորից հետ են շպրտվում: Հետևում է 3-րդ հարձակումը, թշնամին նույնիսկ հասնում է դիրքերին: Սկսվում է հուսահատ կռիվ, որը թուրքերից խլում է 40 կյանք: Նրանք հարկադրված նահանջում են:

Թոփրախ-Կալեի գորանոցից նույն օրը ավերիչ ռմբակոծության է ենթարկվում Հակույսները. թշնամին հարձակման է անցնում, բայց զոհեր տալով նահանջում է: Թուրքական ստվար ուժերը նորից գրոհում են Շուշանցի դիրքերը և նորից անհաջող:

Զինվորական մարմինը թռուցիկ տարածեց, որում այդ օրվա հարձակումներն անվանվում էին հուսահատ՝ «ապացոյց նախ թուրքերի անզօրութեան եւ ապա՝ մեր փառաւոր յաղթանակի»[1]:

Կռիվներն ավելի սաստկացան ապրիլի 20-ին: Արարքի շրջանում հաջողվում է սպանել թշնամու թնդանոթաձիգներին: Սահակ բեյի ու Թովմասյանի դիրքերի վրա նետվում է 100 ռումբ: Ամբողջ Այգեստանը ռմբակոծության տակ

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 748:

էր: Ապրիլի 21-ին թշնամին գրոհի է անցնում Հայնկույսների շրջանում, հայերը, մեջքները պատին, կրակի տակ են առնում թուրքերին ու փախուստի մատնում: Մի այլ դիրքում թուրքերը հաջողում են քանդել այգու պատը: Հայերը հարկադրված հակահարձակման են անցնում: Սկսվում է ձեռնամարտը: Այդ կռվում սպանվում է 1535 բաշիբոզուկ՝ թուրք և քուրդ[1]:

ՔԱՂԱՔԱՄԵՋ. - Քաղաքամեջի և Այգեստանի միջև կապը լրիվ խզվեց ապրիլի 4-ին: Խզվեց կապը նաև գյուղերի հետ: Այսինքն՝ Քաղաքամեջը հենց սկզբից մեկուսացված էր: Ապրիլի 4-ին հայերի զինված ուժերը մոտենում են պաշտպանական գծին, որպեսզի կարողանան անմիջապես դիրքեր գրավել:

Քաղաքամեջը նույնպես հերոսամարտի կանգնեց, կռվեց ոչ թե միայն հանուն գոյատևման, այլ նաև հանուն ազատության, կռվեց թուրքական լուծը թոթափելու համար:

Քաղաքամեջում ու Այգեստանում մարտական գործողություններն սկսվեցին գրեթե միաժամանակ: Ինչպես Այգեստանում, այնպես էլ Քաղաքամեջում առաջին իսկ պահից կռիվն ընդունեց համընդհանուր բնույթ: Ապրիլի 7-ին Քաղաքամեջի տները բարբարոսական ռմբակոծության ենթարկվեցին: Թվում էր, թե ամեն ինչ ավերվեց, թաղում կենդանի էակ չմնաց: Սակայն այդպես թվում էր միայն առաջին պահին: Երբ թուրքերը գրոհի անցան՝ ավերակները կենդանացան, հայերը բոլոր կետերից կրակ բացեցին թշնամու վրա և նրան հարկադրեցին հետ փախչել: Հայերը հետապնդեցին փախչող թշնամուն ու գրավեցին նրա «Թեքյալիֆի հարբիե» կոչվող պաշտպանական ամրությունը: Հաջողվեց պայթեցնել զորանոցը:

Ջևդեթը հասկացավ, որ վանեցիների դեմ կռիվը օրհասական է լինելու: Վանի պաշտպաններին ահաբեկելու համար նա տխրահռչակ չերքեզ Ահմեդին հանձնարարեց ոչնչացնել գյուղերում մնացած հայերին:

Վանի Քաղաքամեջում համառ մարտեր գնացին ապրիլի 10-ից մինչև 20-ը: Ջևդեթը նորից դիմեց խորամանկության: Նա լուր տարածեց, թե Այգեստանը դադարեցրել է դիմադրությունը, ապա քաղաքի հայերին առաջարկեց նույնպես հանձնվել: Հայերը սկզբում երկմտեցին, մարտերը օրուկես դադարեցվեցին: Բայց հաջողվում է համոզվել, որ Ջևդեթը նորից ստում էր: Մարտերը վերսկսվում են ու շարունակվում մինչև թուրքերի անսպասելի փախուստը:

Քաղաքամեջում նույնպես ստեղծվեց Զինվորական մարմին: Այստեղ ինքնապաշտպանությունը ղեկավարում էին Շուշանյան վարժարանի տեսուչ Հ. Կոսոյանը, խանութպան Դ. Սարգսյանը, առևտրական Լ. Գալայջյանը, Հ. Ներկարարյանը, Ս. Շահինյանը, Մ. Թորոմանյանը, Մ. Միրզախանյանը, Եղնիկ վարդապետը:

Մինչև մարտական գործողությունների սկսվելը Զինվորական մարմինը երկու անգամ Եղնիկ վարդապետին բանակցությունների ուղարկեց Ջևդեթի մոտ: Վերջինս պատասխանեց. «Այս երկիրը կարող է մնալ հային կամ թուրքին,

---

[1] **Մխիթարեան Օ.,** նշվ. աշխ., էջ 146:

երկուսի մեկտեղ բնակվելն արդեն անհնար է»: Այսինքն՝ պատերազմ:

Քաղաքամեջը Այգեստանից հեռու է 5-6 կմ: Ընկած է դրանից արևմուտք և անջատված թուրքաբնակ թաղերով: Այն պատմական Շամիրամաբերդն է՝ Վանա լճից 1,5 կմ հեռավորության վրա: Ուներ 400 տուն (3000 հոգի) հայ բնակչություն և 250 տուն (1500 հոգի) թուրք բնակչություն: Քաղաքամեջում էին հայոց առաջնորդարանը, 7 եկեղեցի, ծխական դպրոց, գրադարան-ընթերցարաններ, Վանի չուկան, նահանգապետի գրասենյակը, ոստիկանատունը, դատարանը և վիլայեթի ու քաղաքի մյուս պաշտոնատները:

Քաղաքամեջում նույնպես հայերը նախապատրաստվեցին դիմակայելու ամբողջական բնաջնջման աղետին: Այստեղ ստեղծվեցին նաև Զինական (զենքերի հաշվառում, զինապահեստ), Մարտական (զինված ուժի տեղաբաշխում, դրանց ղեկավարում), Մատակարարման հանձնախմբեր: Պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց անմիջապես հետո Քաղաքամեջը ձեռնամուխ եղավ նախապատրաստվելու ինքնապաշտպանության և կարողացավ իր զինուժը կրկնապատկել: Հայերն ունեին 80 մաուզեր 200-ական փամփուշտով և 84 հրացան 150-200-ական փամփուշտով: Կռիվն սկսվելուց հետո մաուզերների թիվը հասավ 90-ի, իսկ հրացաններինը՝ 101-ի: Ունեին նաև 120 որսորդական հրացան ու ատրճանակ: Ռազմամթերք գնելու համար հանգանակվեց 23340 ղրուշ:

Այստեղ պաշտպանական գիծը բաժանված էր չորս գոտու.

ա) Թավրիզի դռան գոտի, ուներ վեց հիմնական և մի քանի օժանդակ դիրքեր: Հրամանատարը Վ. Սարգսյանն էր, կռվողների թիվը՝ ավելի քան 50 հոգի:

բ) Թեքյալիֆի հարբիեի. սա գլխավոր գիծն էր և ընդգրկում էր ռազմաճակատի հարավային մասը: Ուներ 8 դիրք: Հրամանատարն էր Հ. Ներկարարյանը, զինվորների թիվը՝ 52:

գ) Յաղմալուի և Խանի տակ (հարավ-արևմուտք), ուներ 5 դիրք: Հրամանատարն էր Մ. Թորոմանյանը: Կռվողների թիվը՝ 43:

դ) Ամբարի գոտի (արևմուտք), ուներ 6 դիրք: Հրամանատարը Մ. Միրզախանյանն էր. կռվողները՝ 26 հոգի:

Թուրքերն ամրացել էին մինարեթներում, քարաշեն մզկիթներում, զորանոցներում և բերդում: Հայերի յուրաքանչյուր գոտու դեմ թշնամին ուներ մեկ թնդանոթ. Բերդից ռմբակոծում էին 3 նոր և 4 հին մակնիշի թնդանոթներ: Հայերի զոհերի 90 տոկոսը ընկավ Բերդից արձակված ռումբերից: Թուրքերն ունեին 1000 զինվոր:

Ապրիլի 21-ի կռիվների մասին լրատու դիվանը ապրիլի 22-ին թռուցիկ տարածեց՝ «Երէկուայ մեր փառաւոր յաջողութիւնը» անունով. «Երէկ թշնամին կատարեց ամենաբուռն յարձակումը մեր հիւսիսարեւելեան ամբողջ գծին վրայ, խուժելով այգիները»[1]: Թոփրախ-Կալեի զորանոցում պայթեց մի թնդանոթ, զոհվեց չորս մարդ: Ապրիլի 19-21-ի կռիվներն «իրենց կատաղութեամբ

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 750:

ոչ նախընթացն ունէին եւ ոչ ալ այլեւս կրկնուեցան»[1]: Օրական հայկական դիրքերի ու տների վրա ընկնում էր 400 ռումբ, ժամում արձակվում էր 10.000 փամփուշտ[2]:

Ջևդեթը էրզրումից հրավիրել էր գերմանացի զինվորական մասնագետի, որը սակայն վիճակը փրկել չկարողացավ և մեկնեց հայտարարելով, թե «ես չէի սպասում այդպիսի դիմադրություն»[3]:

Ապրիլի 22-25-ին եղան մասնակի կռիվներ: 22-ի գիշերը հայերը հրդեհեցին թուրքերի Աղալուխի և Համզիի դիրքերը: Ընդ որում՝ վերջինի հրկիզման գործողությունների ընթացքում դրա մասնակիցները (բացի մեկից) զոհվում են: Ապրիլի 25-ին թուրքերը հաջողում են հայերին անակնկալի բերել և գրավել Շուշանցի դիրքերը:

Այդ նույն օրերին Դիլմանում թուրքական բանակը խայտառակ պարտություն կրեց, տալով 20 հազար սպանված: Ջևդեթն այս մասին չգիտեր: Թուրքերը հենց հայ էին տեսնում՝ յաթաղանի հարվածով գլուխը կտրում էին[4]:

Ք. Ըշրը վկայում է, որ ռազմական չտաբն արգելել էր ոգելից խմիչքներ գործածելը, մահմեդական կանանց ու երեխաների վրա կրակելը:

Հայերը կռվում էին բարձր տրամադրությամբ. «մահացածի համար ոչ մի սուգ»: Նոգալեսը նկատում է, որ հայերը կրակում էին դիպուկ, հատկապես մաուզերից: Նրանք չաղափների միջով անցքեր էին բացում որպես հրակնատներ: Նա Վանի կռիվն անվանում է «բացառիկ», «հրեղեն սպանդանոց»: Անհնար էր չսարսռալ, երբ Բերդից տեսնում էի «այրվող գյուղերն ու ագռավների սև երամները, որոնք չների հետ վիճարկում էին», թե իրենցից ո՞ւմն են պատկանելու «հայերի ու թուրքերի անկենդան մարմինները, որոնցով ծածկված էին Վանի նեղ փողոցներն ու մերձակա դաշտերը»[5]:

Գործում էին ինքնապաշտպանությունն ապահովող ծառայություններ (սակրավորների, բժշկական): «Ստեղծվեցին կոմիտեներ, որոնք զբաղվում էին անակնկալներով... մի մարդ տվեց իր ամբողջ ցորենը... Ապահովված էր հասարակական փոի աշխատանքը, բաժանվում էին հացի քարտեր, բացվեց տաք կերակուրների խոհանոց, օրապարեն էին տալիս ... բոլորին, ով դրա կարիքն ուներ»:

Կռվողներին զենքով ապահովելու խնդիրը լուծելու նպատակով զինարանից բացի ստեղծվեցին փամփուշտարան, վառոդարան, որտեղ աշխատում էին մասնագետ արհեստավորները, ինչպես նաև քիմիկոս-պրոֆեսոր Միքայել Մինասյանը, որոնք հին զենքերը նորոգելու հետ միասին պատրաստում էին նորերը:

Սակայն վանեցիները կռվում էին ոչ միայն մարտական զենքով, այլև «եղունգներով, ատրճանակներով, որսի հրացաններով եւ կը դիմադրէին

---

[1] **Մխիթարեան Օ.,** նշվ. աշխ., էջ 146:
[2] **Եկարյան Ա.**, Յուշեր, Գահիրէ, 1947, էջ 320:
[3] **Барби А.,** նշվ. աշխ., էջ 76:
[4] **Nogales R.**, նշվ. աշխ., էջ 64:
[5] Նույն տեղը, էջ 270:

Կրուպպի թնդանօթներուն, որովհետեւ հաւատն իրենց կուրծքերէն բրոնզի պատնէշներ կերտեց»[1]:

Կռվում էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք, ոչ միայն չափահասները, այլև երեխաները (Ասլանյան Ասլան, Իսաջանյան Բարկեն, Ատոմյան Անդրանիկ, Գյոլոզյան Մարտիրոս, Հայդուդյան Հակոբ, Թովմասյան Արամ-Լեռ Կամսար): Իսկ Կիրակոս Կիրակոսյանն անցավ թշնամու դիրքերը, սպանեց երկու թուրք զինվորի ու նրանց զենքերը վերցրած հետ եկավ: Կիրակոսը պարգևատրվեց «Պատվո խաչով»: Երեխաները վերցնում էին դեռ չպայթած ռումբը, վնասազերծում և տալիս զինագործներին՝ վառոդն օգտագործելու համար:

Թուրքերը դժգոհում էին ամերիկացիներին. «Մենք բան չենք կարող անել այդ հայերի դեմ: Նրանք կռվում են իրենց պատերի հետևից... Նրանք սպանում են մեզ»[2]: Իրենց անզորությունը թաքցնելու համար հնարում էին, թե հայերը գործածում էին թունավոր և պայթուցիկ ռումբեր:

Դրա փոխարեն հայերը փոքրիկ չան վզից կապում էին վառվող լապտեր և քշում թուրքական թաղեր, թուրքերը սկսում էին բոլոր կողմերից կրակ բացել: Կամ ձիու պոչից տակառ էին կապում և աղմուկ-աղաղակով քշում դեպի թուրքերը: Աղմուկն ընդունելով որպես հակառակորդի հարձակում, նորից սկսվում էր հրացանաձգություն:

Նոգալեսը հայերի գործողություններն ու անձնազոհությունը անթաքույց հիացմունքով է նկարագրում: Նա թուրքական գումարտակը հարձակման է տանում և գրավում մի քանի տներ, որտեղ տեղադրում է ուղիղ նշանառությամբ կրակող թնդանոթներ: Դրանք քարուքանդ արեցին հայկական մի շարք ամրություններ: Հայերը կռիվը շարունակեցին ավերակներում: Երբ Նոգալեսը մարտի է նետում իր վերջին ուժերը հեշտ հաղթանակի վստահությամբ, այդ հարձակումը նույնպես ձախողվում է, հարձակվողների մեծ մասը սպանվում կամ վիրավորվում է: «Դանդաղորեն և համառորեն հայերը պահում էին քաղաքը, կատաղի հուսահատությամբ պաշտպանվելով իրենց քանդվող... բոցավառվող տներում»:

Թե որքան հնարամիտ, ռազմավարական առումով գրագետ էր կազմակերպված Այգեստանի պաշտպանությունը, երևում է նաև այն փաստից, որ ցարական բանակի շտաբը ուսումնասիրելով պաշտպանական այդ համակարգը, կազմեց քարտեզ և այն ներկայացրեց զլխավոր հրամանատարությանը՝ որպես ռազմավարության լավագույն նմուշ: Գեներալ Նազարբեկովը ծանոթանալով ինքնապաշտպանության մանրամասներին, ասաց. «...Հպարտ եմ, որ հայ եմ»[3]:

Մեկ անգամ ևս նշենք, որ Վանի և Վասպուրականի հերոսամարտերում վիթխարի էր կանանց ներդրումը: Նրանցից մեկն էր Սախոյենց Նանոն, որն Այգեստանի կռվի ժամանակ դրսևորեց անսահման նվիրվածություն և անվախություն: Նա սուրհանդակ էր և անընդհատ դիրքից դիրք էր անցնում, հետախուզության գնում, հայրենասիրական երգերով ոգեշնչում կռվողներին:

---

[1] «Վան-Տոսպ», 1916 թ., № 22-23:

[2] Knapp G., նշվ. աշխ., էջ 31:

[3] «Գրքերի աշխարհ», 30-ը հունիսի 1990 թ.:

«Բնությունը կ'երգէ, երբ գարուն է, իսկ ես կ'երգեմ, որովհետեւ չուտով բացուելու է մեր ազատութեան արշալոյսը»[1]:

Աշխենը (Ազգային մայրիկ) հիսուն տարեկան կին էր, բայց անսպառ եռանդով: Մեծ աշխատանք ծավալեց Վասպուրականի հայ կանանց միությունում: Նրա ղեկավարությամբ էր աշխատում կարի արհեստանոցը: Նա եռանդուն մասնակցություն ունեցավ հայ գաղթականների տեղավորման, նրանց սննդի կազմակերպման գործին:

Շատախում հայերի ամենակարևոր դիրքը Սողուանց գյուղն էր: Ապրիլի 26-ին գյուղը պաշարվում է և սկսվում է կատաղի կռիվ: Կտրվեց կապը մյուս դիրքերի հետ: Սուրհանդակ էր պետք: Ահա այդ պահին 10 տարեկան Սրբուհին իր ծառայությունն է առաջարկում: Գնդակների տեղատարափի տակ աղջնակը ընկնելով, վերկենալով. թաքնվելով ու սողալով տեղ է հասնում և տեղեկություններ հավաքելով վերադառնում է: Թաղի կռվում նույն բանն է անում մի ուրիշ աղջնակ՝ Ասմարը:

Կանայք ցուցաբերեցին անձնական խիզախության, հերոսության, անսահման նվիրվածության փայլուն օրինակներ: Նման օրինակներից էր նաև Աղավնի Վարդանյանի վարքագիծը, որ ինքնամոռաց հանդգնությամբ մինչև վերջ պաշտպանելով ռազմաճակատի ամենահանգուցային դիրքը, դրանով փրկեց ամբողջ քաղաքը: Նա հայ մարտիկներին թաքուն անցկացնում էր թշնամու դիրքերը՝ հանկարծակի հարձակման համար:

Պատանյակ Արամ Կապուտիկյանը ռումբը ձեռքին թշնամու գնդակների տարափի տակ երեք անգամ մտավ թուրքական դիրքերը, դրանք հրդեհեց և հայերի համար նպաստավոր վիճակ ստեղծեց: Կարապետ և Մարտիրոս Մուրադյանները հրկիզեցին փոստ-հեռագրատունը՝ դրանցում եղած զինվորների հետ միասին: Պատանի հերոսները հրկիզեցին նաև օսմանյան բանկի տեղական բաժանմունքի շենքն ու կառավարչատունը: Ջևդեթը խոստովանեց՝ «կառավարության նամուսը քաղաքում կործանվեց»[2]: Հայ վրիժառուները պայթեցրին պետական զինապահեստը:

Ահա՛ նաև ինքնապաշտպանության ղեկավար Հայկակ Կոսոյանը՝ սառնարյունություն, կամքի անսասանելի ուժ, հմտություն:

Ջևդեթը հայերի մոտ նորից պատվիրակներ է ուղարկում և առաջարկում հանձնվել, զենքերը հանձնել, խոստանալով ապահովել նրանց անձի անվտանգությունը: Հայերը պատասխանում են. «Ե՛կ վերցրո՛ւ»:

Երբ Քաղաքամեջում սնունդը սպառվելու վրա էր և հուսահատության ալիքներ էին նշմարվում, թուրքերի մոտ աշխատող մի հայ արհեստավոր թաքուն ունկնդրում է երկու սպաների զրույցը, թե Դիլմանում ռուսները հաղթել են և թե թուրքերը նահանջում են: Նա անմիջապես այդ լուրը հասցնում է հայերին, ինչը մեծ ոգևորություն է առաջացնում:

Վանեցիների համար դադարել էին գոյություն ունենալուց «Չեմ կարող», «Դժվար է» հասկացությունները. այն ինչ հարկավոր էր կռվի համար, անվե-

---

[1] **Զէյթլեան Ս.**, Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Պէյրութ, 1968, էջ 95-96:
[2] **Համբարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 51:

բապահ պետք է արվեր: Վանեցին դարձել էր Նվիրյալ: Մ. Փորթուգալյանի, Մ. Ավետիսյանի, Պետոյի հեղափոխական մկրտության քուրայով անցած տարեց մարդիկ Հովհաննես Մկրտչյանն իր սիրած նվագախմբի առաջն ընկած գնաց Զինվորական մարմնի նստատեղին և պատվով մեռնելու երդում տվեց. «Կեանք ու մահուան օր է, հայրենակիցնե՛ր. պատուով մեռնելու գերագոյն ժամը... Յառա՜ջ, դէպի դիրքե՜ր, դէպի ազատ կեանք ու անմահութի՛ւն»[1]: Ամրաշեն ջոկատի անդամները Գրիգոր Պանիրյանի գլխավորությամբ գործում էին անձնվիրությամբ. «Յաճախ շարք մը դիրքեր... միեւնոյն օրուան մէջ վեց-եօթը-ութը անգամ քանդուեցան եւ... նոյնքան անգամ նորէն վերաշինուեցան ճարտար եւ անձնազոհ ամրաշէն բանուորներու աշխատանքով»[2]:

Այնուամենայնիվ Վանի ինքնապաշտպանության վիճակը գնալով ծանրանում էր: Սկսած ապրիլի 12-ից սուրհանդակներ էին ուղարկվում Կովկաս՝ ռուսական բանակի ծրագրերի մասին լուրեր ստանալու համար, սակայն նրանցից միայն մեկը հաջողեց տեղ հասնել: Դրանք երեք հոգի էին, ուղարկված Արամի կողմից հայտնելու, որ ապրիլի 15-ից «բոլոր հայերը փակված են քաղաքի թաղերում: Ջևդեթ փաշան ռմբակոծում է քաղաքը, արձակվել է 1700 արկ: Շրջապատի մոտ 100 հայկական գյուղեր մորթված են, կանանց տարել են լեռներ..»[3]: Ապրիլի 20-ից հետո ուղարկված բանագնացները չէին հաջողում Բերկրիից այն կողմ անցնել:

Բայց թե՛ Այգեստանը ու թե՛ Քաղաքամեջը մնում էին կանգուն և խիզախաբար հետ էին մղում թշնամու գրոհները[4]:

Ապրիլի 20-ին մի թուրք սպա դիմեց հայդուկ Շատախցի Ավոյին, թե հայերն ի՞նչ են պահանջում: Ավոն պատասխանեց. «Էսօր մեր նամուսի համար թվանք ձեռքիս կկուիմ. քանի Ջեւդեթը կայ, կուզեմ անոր գլուխը, հասկցա՞ր»[5]:

Հաջորդ օրը Ջևդեթը երկու հայ կանանց միջոցով նամակ է ուղարկում Զինվորական մարմնին և պահանջում զինաթափվել ու հանձնվել, այլապես «այսօր Գաւաշէն եկող հրետանիները ... ամբողջովին քաղաքի վրայ պիտի ուղղեմ... ձեզ փրկութիւն չկայ»[6]: Հայերը մերժեցին այդ պահանջը ևս: Մերժվեց Ջևդեթի նաև ապրիլի 22-ի նույնաբնույթ վերջնագիրը: Սկսվեց Քաղաքամեջի անխնա ռմբակոծությունը: Հայերն աննկուն էին: Վալին նորից գնաց սադրանքի: Նա գյուղերից եկած 500 հայի քշեց Քաղաքամեջ՝ այնտեղ սով ու համաճարակ առաջացնելու դիտավորությամբ:

«Յուսահատական դրութեան մէջ էինք,- գրում է Ա. Եկարյանը,- լուր չունէինք նաեւ Քաղաքէն, վերջապէս յաջողուեցաւ տեղեկանալ, որ Քաղաքի մեր տղաքը իրենց դիրքերու վրայ էին միշտ»[7]:

Իսկ կռիվները չարունակվում էին: Թուրքերն իրենց բոլոր ուժերը կենտրո-

---

[1] *«Հերոսամարտեր...», էջ 27:*

[2] *Նույն տեղում, էջ 29:*

[3] *АВПР, Политархив, д. 3505, л. 2.*

[4] *«Վան քաղաքի ժողովրդային հերոսապատումը», Թեհրան, 1916, էջ 121:*

[5] *Նույն տեղում, էջ 125:*

[6] *Նույն տեղում, էջ 126:*

[7] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 756:*

նացրին Քաղաքամեջի ու Այգեստանի վրա: Նրանք նոր ուժեր ու ռազմամթերք էին բերում: Նախապատրաստվում էին նաև հայերը, ստեղծվեցին մի քանի թուուցիկ խմբեր նեղն ընկած դիրքերին օգնելու: Սակայն «այս անգամ,- հայտնում է Եկարյանը,- յաջողութեան չատ յոյս չունէինք: Մեր ամբողջ ուժն անոր մէջ էր, որ որոշած էինք կռուիլ մինչեւ վերջին բոպէն, վերջին փամփուշտը»[1]: Քաղաքի հյուսիսից մինչև արևելք՝ Սղդա գյուղը, 5-6000 թուրք զինվոր հավաքվեց: Սկսվեց օրհասական կռիվ[2]:

ԱՅԳԵՍՏԱՆ. - Ապրիլի 27-ին կռիվները չատ բուռն էին Արարքի հատվածում. հայերի դիրքերն ավերվում են: Թուրքերը նորից գրոհի են անցնում ու նորից հետ մղվում: 28-ին թուրքերը ձեռնարկեցին վերջին ու վճռական գրոհը: Զորս թնդանոթներ անընդմեջ ռմբակոծում էին Թաղաքեահրիզի Հայնկույսների հատվածները: Մի չարք դիրքեր մինչև կեսօր լրիվ ավերված էին: Թուրքերը նետվում են սվինամարտի, սակայն ավերակների միջից նորից հառնում են հերոսները և թշնամուն հետ շպրտում: Նույն ժամանակ հարձակում է սկսվում Մրոտյանի և Աղունիկյանի դիրքերի վրա: Արդյունքը նույնն էր: Կռիվը չարունակվում է գիշերը: Հաջորդ օրը խաղաղ է անցնում: Թիմարից (Այյուր) եկած մի կին պատմեց, թե իրենց գյուղացիներից «ով որ կրցաւ՝ փախաւ, մնացեալ տղամարդիկ անխնայ կոտորուեցան: Իսկ փոքր մաս մը ջահել եւ գեղեցիկ կիներ ու աղջիկներ քիւրտերու բաժնեցին: Ես Թուրքին քով էի եւ մի քանի օրէ ի վեր կով կը կթէի ու այգիին մէջ քաղհան կ'ընեի, երբ տեսայ, որ մեծ իրարանցում մը ինկաւ Թուրքերուն մէջ: Քիչ ետք տանտերը եկաւ եւ սկսաւ ձեռքերով գլուխը ծեծել, թէ «քեաֆիր Մոսկով կելեճէք»: Կիներն ու երեխաները սկսան լալ, աղաղակել ու մազերնին փետել: Ես կծկուեցայ այգիին թուփերուն մէջ... Միեւնոյն աղմուկն ու իրարանցումն ինկաւ դրացի տուներուն մէջ եւս: Իմ տան տիրուհին սկսաւ խմոր շաղել, իսկ հայր ու որդի սկսան բեռները կապել: Նոյնը կը կատարուէր նաեւ դրացի տուներուն մէջ... Գլուխս առի ու փախայ: Ճանապարհին տեսայ քիւրտերու քարաւաններ...»[3]: Փախստականներից չատերն էին հայտնում նման լուրեր:

Իսկ Վանում Թշնամու դիրքերը լռում էին: Դրանք մասամբ դատարկվում էին. Թուրքերն ու քրդերը հեռանում էին Արտամետի ուղղությամբ:

Զինվորական մարմինը ապրիլի 29-ին հայտարարեց. «Զանազան աղբիւրներէ կ'իմանանք, թէ Թուրքերու մէջ խուճապ կը տիրէ եւ թէ անոնք իրենց դիրքերը կը լքեն»[4]:

Սակայն Թուրքական դիրքերը գրավելու հայերի փորձերը հանդիպեցին ուժեղ համազարկի: Միայն Այգեստանի «գլխավոր պողոտան եղող Խաչ-փողանի վրայի դիրքերը գրաւուեցան եւ հնչեց հայոց նվագախմբի խրոխտ նուագը»[5]:

Կռիվն աշխուժացավ մայիսի 2-ին, վերսկսվեցին ռմբակոծությունները: Մայիսի 3-ին դրանք ավելի կատաղի դարձան: Ռմբակոծում էին բոլոր կետե-

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 756:
[2] **Եկարյան Ա.,** նշվ. աշխ., էջ 212-215:
[3] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 760:
[4] Նույն տեղում:
[5] **Եկարյան Ա.,** նշվ. աշխ., էջ 223:

րից, ոմբակոծում էին նաև Այգեստանի ներսի խաղաղ թաղերը: Ռմբակոծությունը չարունակվեց մինչև ժամը 16-ը: Հայնկույսների հատվածում հայերը հակահարձակման անցան: Նույնը կատարվեց Դարդանելի դիրքերում: Թշնամին փախուստի դիմեց: Հայերը մտան Թոփրախ-կալեի զորանոց ու հրդեհեցին: Նրանք գրավեցին նաև Զըմզըմ Մաղարայի բարձունքը՝ դրանով իսկ տեր դարձան Այգեստանի ելք ու մուտքի վրա հսկող կետերին: Գրավեցին ու հրկիզեցին Հաջի Բեքիրի զորանոցը, ապա առաջ շարժվեցին հինգ մղոն երկարություն ունեցող Խաչ-փողանով՝ Այգեստանն ու Քաղաքամեջը միմյանց կապելու համար:

Այդ ընթացքում Ջևդեթը հասցրել էր փախչել: Նրա լքված տանը գտան տեղի իտալական փոխհյուպատոս Բ. Սպորտոնիին հասցեագրված մի երկտող. «Պատերազմական հարկադրութեանց պատճառով քաղաքը կը թողում: Ճիշդ է, որ ցաւի արժանի վիճակ մըն է եղեր խռովութեանց մէջ գտնուող երկրի մը մէջ նախագահութիւն ընելը: Աչքի առջեւ գտնուող երախաներուն գթալը արգելեց մեզի գիշերային յարձակումներ գործել: Ռուսերը կացութենէն օգտուեցան: Աստուած փորձանք հասցնէ դաւաճան քոմիթաճիներուն»[1]:

Մայիսի 3-ը ազատության օր էր: Հայերի ձեռքին էին Շամիրամի տակից սկսած մինչև քաղաքի հեռավոր արվարձանները, Հայկավանքից մինչև պատմական բերդը, Թավրիզի դուռը և Քաղաքամեջը: Գիշերը բոլոր տները գրավված էին, բոլոր չենքերը քողարկված, շատերն էլ հրկիզված:

Մայիսի 4-ին Այգեստանի և Քաղաքամեջի պաշտպանները միացան իրար: Ճառով հանդես եկավ Փանոս Թերլեմեզյանը. «Մենք բերեր ենք ձեզ Այգեստանի ձեր զինակից ընկերներու համբոյրն ու հիացմունքը: Երկու տեղն ալ փառքով յաղթանակեցինք, թշնամին անզօր ու խայտառակ փախաւ»[2]:

Խորհրդանշական մի փաստ: Գեներալ Նիկոլաևը երբ տեսավ հայերի կառուցած դիրքերը, հարցրեց. «Արդյոք ձեր շարքերուն մէջ զինուորական ամրութեանց կառուցման մասնագէտներ եղա՞ծ են: Որովհետև այս դիրքի (Թեքյալիֆի-հարբիեի ամրոցի) վիճակը, անոր նկուղային ամրացումը... կը յիշեցնէ Փորթ-Արթուրի բերդային ամրութեանց...»[3]:

Կռիվների ընթացքում թուրքերը հայերի վրա արձակել էին 16.000 արկ, որից 10.000-ը՝ Քաղաքամեջում[4]:

Վանում իտալական գործակալի տվյալներով՝ թուրքերը սպանել էին 100 կին ու երեխա և մի քանի տղամարդ, իսկ իրենք գրոհներից միայն մեկի ժամանակ կորցրել էին 60-70 մարդ: Ա.-Դոն գրում է, որ Քաղաքամեջում հայերից սպանվել էր 43 և վիրավորվել 71 մարդ: Այգեստանում հայերի կորուստներն անհամեմատ մեծ էին[5]: Հ. Կոսոյանի տվյալներով Քաղաքամեջում սպանվել էր 34 և վիրավորվել 69 հայ[6], իսկ Ա. Եկարյանը նշում է, որ Այգեստանում հայերի

---

[1] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 766:*

[2] ***Կոսոյեան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 162:*

[3] *Նույն տեղում, էջ 175-176:*

[4] ***Барби А.,*** *В стране ужасов. Мученица Армения, стр. 75.*

[5] ***Ա.-Դո,*** *նշվ. աշխ., էջ 364:*

[6] ***Կոսոյեան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 166-169:*

կորուստները կազմում էին 250 մարդ, որից կռվողներ՝ 145 մարդ[1]: Շոյբներ Ռիխտերի տվյալներով Վանում Թուրքերը կորցրեցին 1000, իսկ հայերը՝ 300 մարդ[2]:

Գրավվեց նաև քաղաքի բանտը, որի հայ բանտարկյալներին, սակայն, Թուրքերը հասցրել էին սպանել: Մայիսի 4-ին և 5-ին Վանում հրդեհ էր ու կողոպուտ: Պահանջվում էր կերակրել 70 հազար կիսաքաղց մարդկանց: Ոչնչացվում էին զորանոցները, ոստիկանատունը, բանտերը, մարտական դիրքերը՝ անակնկալներից խուսափելու համար: Հրդեհվեցին Թուրքական Թաղերը, որպեսզի դրանց տերերն այլևս չվերադառնային, իսկ քաղաքում մնացած Թուրք բնակչության հանդեպ ցուցաբերվեց միանգամայն ուշադիր վերաբերմունք՝ նրանց բոլորին անվնաս հանձնեցին ամերիկյան ու գերմանական միսիաների ներկայացուցիչներին:

Մայիսի 5-ի երեկոյան քաղաք են մտնում հայ կամավորները: Հաջորդ օրը ժողովրդին դիմում է Զինվորական մարմինը. «Ամիս մը առաջ, այսօր, երբ Թշնամին վատաբար կռիւ յայտարարեց քաղաքակրթութեան եւ արդարութեան դէմ, մեր դէմ. մենք հաւատքով փարեցանք զէնքին եւ մեր հոգիին խորէն զգացինք, որ յաղթանակը մերը պիտի ըլլայ այս կռուին մէջ, վասնզի մեր կռիւը խաւարին դէմ էր, տգիտութեան եւ բռնութեան դէմ՝ ճշմարտութեան եւ արդարութեան համար...

Մեր զինուորի արի ու անսասան դիմադրութիւնը ամեն տեղ թշնամիին զգացնել տուաւ, որ մեր երակներուն մէջ չէ դադրած, կը հոսի տակաւին արիւնը ազատութեան ու կռուի...

Արբած ենք մենք եւ աստուածային խենթութեամբ լեցուած, որովհետեւ հազարաւոր տարիներու մեզ թալանող, կողոպտող, խաչողն է, որ գլխապատառ կը փախչի այսօր եւ հազարաւոր տարիներու մեզի թալանողին եւ խողխողողին է, որ կը թալանենք, կը կոտորենք, կը խաչենք մենք:

Վրէժի անողորմ, բայց արդար աստուածն է, որ նստած է մեր ներսը եւ մեր գլխավերեւը: Վրէժի ձայնն է, որ կը լսենք մենք հիմա եւ այդ ձայնը կու գայ հազարաւոր տարիներու ընթացքին սրախողխող հայ սերունդներու, թոնիրի մէջ խորովուող մանուկներու եւ բռնաբարուած կոյսերու սասանեցնող եւ աղեկտուր կանչերու մէջէն...

Այսօր, ուրեմն, տօնն է ոչ միայն մեր ամսօրեայ պայքարին եւ յաղթանակներուն, այլեւ նախատօնը Հայկական Ազատութեան բոլոր բռնաւոր լուծերէն, բոլոր յոչոտած ճիրաններէն»[3]:

Հայ կամավորների պաշտոնական մուտքը տեղի ունեցավ մայիսի 6-ին, երբ նրանք Շահբազի գյուղից ձգվեցին մինչև Այգեստան: Ամբողջ ժողովուրդը նրանց դիմավորում էր քաղաքից դուրս՝ 60 հազար մարդ նվագախմբի հետ:

Սահակ Ջանգոյանը բարձրացավ Վանա բերդի պարիսպը և դեն չպրտեց

---

[1] **Եկարյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 228:*

[2] **Lepsius J.,** *Berichte uber die Lage des Armenischen Volkes in der Turkei, Potsdam, 1916, s. 65.*

[3] **Եկարյան Ա.,** *նշվ. աշխ., էջ 268-269:*

օսմանյան դրոշակը և տեղն ամրացրեց հայկական դրոշակ:

Վանեցիների հաղթանակն առաջին հերթին ճիշտ կողմնորոշման արդյունք էր՝ հային բնաջնջել նպատակադրած թշնամու հետ միայն մեկ հարաբերություն է արդյունավետ՝ կռվել ոչ թե հանուն կյանքի, այլ հանուն մահվան: Մեծ նշանակություն ունեցան նաև կուսակցական ներհակությունից ձերբազատվելը, գերազանց կազմակերպվածությունն ու կարգապահությունը, ճիշտ մարտավարությունը՝ ոչ թե հարձակում, այլ ուժեղ պաշտպանություն, ռազմական հիանալի ամրությունների ստեղծում, ու նաև այն, որ իրական հույս էր հայ կամավորների ու ռուսական բանակի մոտալուտ գալը:

Վանի հերոսամարտը փրկեց հայության վարկը, նրա մարտունակության համարումը, ինչպես նաև 150-200 հազար հայի կյանք:

«Երկու իրադարձություն՝ Վանի հայերի օրինական ինքնապաշտպանությունը նրանց սպառնացող ջարդին դեմ հանդիման և ռուսների առաջխաղացումը իրար հետ որևէ կապ չունեն և չեն կարող դիտվել որպես պատճառ և հետևանք... Իրենց ինքնապաշտպանությամբ Վանի հայերը լոկ նպատակ էին հետապնդում՝ փրկել հարազատների կյանքը»[1]: Այսինքն՝ կառավարության դեմ Վանում կանխամտածված շարժում գոյություն չուներ: «Կանխամտածված էին միայն այն հալածանքները, որոնք իրականացվում էին հետևողականորեն»[2]:

Վանում հայերի դեմ կռվում էին նաև 1200-1300 քրդեր Սուլեյման բեյի հրամանատարությամբ: Նոգալեսը պատմում է մի ընդունելության մասին. «Նահանգապետը երեկոյան լավ հագուստով նստած էր դիմացս... Կապիտան Ռաշիդ բեյը ձախ կողմում էր անթերի համազգեստով: Նա լազերի գումարտակի հրամանատարն էր և նահանգապետի աջ ձեռքը... Նրան այստեղ տեսնելով... ինչպես կարող էի պատկերացնել, որ այդ նրբագեղ մանիկյուր արված և գահազարդ ձեռները կարող էին թրջված լինել մեծաթիվ անմեղ զոհերի արյունով: Ջենտլմեն կոչվող Ահմեդ բեյը.. իր ազնվական շարժուձևով ... նման էր պճնամոլի.. Բայց նա ոչ այլ ոք էր, եթե ոչ տխրահռչակ Չերքեզ Ահմեդը, որ հետո սպանեց Զոհրապին, Վարդգեսին և Տաղավարյանին...»[3]:

Քրդերի ախորժակը գրգռելով նրանց մարտունակությունը բարձրացնելու համար Ջևդեթը խոստացել էր նրանց տալ ամբողջ ավարը: «Ֆախրէտտին փաչայ իր ներկայութեան ճեմալ պէյի բերանը բացաւ կտրուկ եւ ահաւոր յայտարարութիւնով, Վան, Տեորթ-Եոլ և Զեյթուն իրար խառնեց, որպէս թէ Վանայ 10.000 հայերու օգնութեամբ կովկասցի 25.000 հայ կամաւորներ յաջողած են քաղաքը գրաւել»[4]:

Մայիսի 4-ին Վանը լրիվ ազատագրված էր: Հաջորդ երեք օրերին քաղաք մտան հայ կամավորական գնդերը: Ի պատիվ նրանց՝ թուրքերից խլված թնդանոթներից 50 համազարկ արձակվեց:

---

[1] *Lepsius J., նշվ. աշխ., էջ 129:*

[2] *Նույն տեղում, էջ 198:*

[3] *Nogales, նշվ. աշխ., էջ 73-74:*

[4] *«Կիլիկեան կսկիծներ». Վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն. 1903-1915, Պէյրութ, 1927, էջ 191-192:*

* * *

Մայիսի 5-ին Վան մտան Խեչոյի, Ա. Մելիք-Մուսյանի և Դալի Ղազարի կամավորական ջոկատները: Գիշերը և հաջորդ օրը տեղ է հասնում Դրոն: «Մայիսի 6-ին,- գրում է Ա. Բարբին,- ռուսական բանակը մտավ Վան: Դրանից առաջ Վան մտավ հայկական ջոկատը Վարդանի ղեկավարությամբ, որը միավորում էր Քեռու, Համազասպի ու Դրոյի գնդերը, որոնք քիչ անց նորից բաժանվեցին ու հարձակվեցին քրդերի վրա: Ապա Դրոն չարժվեց դեպի Մուշ, մտավ Խնուս ու ջախջախիչ հարվածներ հասցրեց Թուրքերին»:

Հանդես գալով ռուսական բանակի պատվին կազմակերպված ճաշկերույթում, Արամ Մանուկյանն ասաց. «Երեք ամիս առաջ մենք հույս չունեինք ռուս զորքի գալու վրա: Մեր դրությունն անելանելի էր. կա՛մ թույլ տալ, որ մեզ մորթոտեն ոչխարների պես, կա՛մ կործանվել «Տիտանիկ» նավի նման՝ երաժշտության հանդիսավոր հնչյունների տակ: Մենք գերադասեցինք վերջինը և մենք կը կործանվեինք, բայց մեզ օգնության եկաք դուք, եկաք անսպասելի կերպով և մեր հաղթանակների կեսը ձեզ ենք պարտական»:

Պետրոգրադն ի լուր աշխարհի հայտնեց, որ ռուսական բանակը «Վանում բռնագրավել է 26 հրետանի, մեծ քանակությամբ ռազմամթերք, կառավարական գանձերը: Հայ բնակչությունը խանդավառությամբ ընդունեց ռուսական զորքին»[1]:

Նույն օրը հրապարակվեց ինքնապաշտպանության մարմնի դիմումը հայ ժողովրդին. «Ամսօրեայ պայքարը, զոր տարինք փառքով ու պատուով, այսօր իր կատարելիութեան մեջ կը վայելենք... Այսօր ահա հայկական զրօշակն է, որ հազարաւոր տարիներու ընթացքին առաջին անգամն է կը ծածանի, ու բռնութիւնը հայ զինուորի գնդակէն հալածական կը փախչի»[2]:

Նիկոլաևը հեռագրեց բանակի հրամանատարին. «Շնորհիւ զինուած հայ ժողովրդի եւ ռուսահպատակ Արամի ղեկավարութեամբ, Վանը մէկ ամիս պաշտպանուեցաւ եւ երեք օր առաջ միայն հայերը գերակշռեցին, ու թուրքերը սկսան նահանջել: Քաղաքը այրուած է: Ազատ են մնացեր քանի մը հայաբնակ թաղեր եւ ռուսական հյուպատոսարանը: Հայերը յանձնեցին բերդի բանալիները: Ժողովուրդը եւ Վանի պաշտպանները, եպիսկոպոսի եւ հոգեւորականներու առաջնորդութեամբ կազմակերպեցին հանդիսաւոր ցոյցեր»[3]:

Նիկոլաևի ներկայացմամբ՝ ռուսական բանակի հրամանատարությունը մայիսի 7-ին հաստատեց Ա. Մանուկյանի նշանակումը Վանի ժամանակավոր նահանգապետ: Այդ առթիվ գեներալ Օգանովսկու հեռագրերում ասվում է, որ որպես նահանգապետ Ա. Մանուկյանին է հանձնվում «Վանի շրջակայքի կառավարութիւնը: Ան կազմելու է վարչութիւն միմիայն հայերէն եւ յենուելու է հայ երկրապահներու վրայ...»: Հավանաբար ավելի բարձր ղեկավարությանը չուրախացրեց նման նշանակումը, մանավանդ այն, որ հայի էր հանձնվում ամբողջ նահանգի նահանգապետությունը և Վանի ղեկավարությունը կազմը-

---

[1] *«Բնօրրան», 1995 թ., № 1, էջ 13:*

[2] **Կէորկիզեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 198:*

[3] *«Հայրենիք», ամսագիր, 1925 թ., մայիս, էջ 86:*

ված էր լինելու «միմիայն հայերէն եւ յենուելու էր հայ երկրապահներու վրայ»: Ահա թե ինչո՛ւ նա Նիկոլաևին ուղարկում է երկրորդ հեռագիրը, որում ասվում է, թե Արամը նահանգապետ է նշանակվում «պայմանով, որ ան ենթարկուի զինուորական իշխանութեան, այսինքն՝ բերդապահ զօրքի գլխաւորին...»[1]:

Մայիսի 8-ին Ա. Մանուկյանը կոչով դիմում է ժողովրդին, որում մասնավորապես ասվում է. «Ռուսական յաղթական բանակի առաջխաղացումը նոր դարագլուխ եւ իրաւակարգ կը բանայ մեր քաղաքի եւ գաւառի իրաւազուրկ ժողովուրդին համար...

Ներկայ պատմական պատասխանատու օրերուն մէջ հայ ժողովուրդը միայն մէկ նշանաբան պիտի ունենայ՝ համախմբուիլ ամբողջ եռանդով կառավարութեան շուրջը՝ վերակազմակերպելու կեանքը ... արժանի լինելու համար քառորդ դարէ աւելի մղուած պայքարին մէջ ինկած հերոսներու յոյսերուն եւ յիշատակին...»[2]:

Ա. Մանուկյանը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ ավերված քաղաքի ու նահանգի վերածնման գործին: Ընդամենը մի քանի օրում նա կարողացավ ձևավորել կառավարական մարմինները: Դա Արևմտյան Հայաստանի տարածքի վրա առաջին հայկական կառավարման համակարգն էր: Ստեղծվեցին նահանգային վարչություն, տնտեսական մարմին, քաղաքական վարչություն, կրթական տեսչություն, երկրագործական, առողջապահական, առևտրի մարմիններ, ոստիկանական տեսչություն, դատական մարմիններ: Ձևավորվեց 14 գավառների ղեկավարությունը, նշանակվեցին գավառապետներ: Թե՛ նահանգային և թե՛ գավառային կառավարման ղեկավարներ նշանակվեցին միայն հայեր: Ոստիկանության կազմում կար 360 մարդ: Կազմվեց նաև 1915 թ. մարտ-դեկտեմբեր ամիսների բյուջեն, որի եկամտային մասը պլանավորված էր 178.340 ռուբլի:

Դարավոր ստրկական լուծը թոթափած հայն աներևակայելի եռանդով լծվեց իր երկրի վերաշինության գործին:

Վան են գալիս արևելահայ մտավորականության նշանավոր ներկայացուցիչներ: Սկսեց ձևավորվել քաղաքի մշակութային կյանքը. կազմակերպվում էին տոնախմբություններ, հանդեսներ, համերգներ, մեծարման երեկոներ (Հ. Թումանյան, Ռոստոմ):

Սակայն Վան է գալիս նաև գլխավոր հրամանատարի տեղակալ Յուդենիչը: Ա. Մանուկյանը գնում է նրա գալուստը ողջունելու, բայց ռուսական թթու մեծապետականության այդ ոչ չարքային ներկայացուցիչը նրան չի ընդունում: Հետագա իրադարձությունները վկայեցին, որ ցարական կառավարության համար Հայաստան անունով երկիր գոյություն չուներ, այլ կար միայն ռուսական բանակի նվաճած տարածք, որի վրա, բացի ռուսից, ուրիշ ոչ ոք որևէ իրավունք կամ հավակնություն չէր կարող ունենալ:

Մայիսի 20-ին ռուսական գործող բանակից Վ. Շչերբինը Պետրոգրադ գրեց. «Մեր փառապանծ հերոսների արագ երթը ծայրաստիճան ծանր պայմաննե-

---

[1] *«Արամ...», էջ 466:*

[2] *Նույն տեղում, էջ 467:*

ում՝ անկանոն մատակարարում և ճանապարհների բացակայություն, ժամանակին օգնություն հասցրեց Վանի պաշտպաններին մի այնպիսի բախտորոշ պահին, երբ նրանք ապրում էին իրենց վերջին օրերը: Փամփուշտները լրիվ սպառված էին, հաց չկար, երբ Ջևդեթ փաշան, գրավելով քաղաքի բերդը, և Վանա լճի այն կողմում գտնվող Դատվանի միջոցով օգնություն ստանալով, անդադար կրակի տակ էր պահում խրամատներում գտնվող հայերին:

Հարմար արտահայտություններ չկան նկարագրելու Վանի հայությանը համակած ոգևորությունն ու եռանդը մեր զորքերի Վան մտնելու պահին: Զորքերը ծածկվեցին ծաղիկներով: Մատուցվեցին հաց ու աղ, ինչպես նաև քաղաքի բանալին, տրվեց հրանոթային համազարկ...

Մեր կողմից Վանի գրավումն ունի չատ կարևոր քաղաքական նշանակություն: Մերն է ծաղկուն երկրամաս կուլտուրական ազգաբնակչությամբ, Թուրքա-Հայաստանի հին մայրաքաղաքով, որը ռուսական բանակը գրավում է առաջին անգամ...»[1]:

«Ռուսական ռազմական իշխանությունը,- գրեց «Кавказское слово»-ն,- Վանում և նվաճած նահանգում ստեղծեց քաղաքացիական վարչություն պատերազմական ժամանակի իրավունքներով, որի ղեկավար նշանակվեց Վանի ինքնապաշտպանության հերոս Արամը: Կյանքը քաղաքում աստիճանաբար հունի մեջ էր մտել, երբ հանկարծ էվակուացիայի հրաման ստացվեց: Վանի ու Վասպուրականի հայությունը բռնեց գաղթի ճամփան»[2]:

Ռուսական զորքերը Վանից լճի հյուսիսային և հարավային ափերով շարժվեցին դեպի Դատվան, ապա նաև՝ դեպի Բիթլիս և Մուշ: Բայց ոչ Բիթլիս հասան և ոչ էլ Մուշ, հուլիսի 1-ին նահանջեցին Սորբ ու Ախլաթ: Օգտվելով դրանից՝ քրդերը հարձակման անցան Մոկսում և Շատախում: Թուրքերը եռանդուն գործողություններ ծավալեցին նաև Օլթիի, Ալաշկերտի և Սարիղամիշի ուղղություններով, ինչը հայերի շրջանում խուճապ առաջացրեց:

Հուլիսի 18-ին ռուսական հրամանատարությունը հայերին տեղյակ պահեց, որ իրենք նահանջում են և առաջարկեց, որ Վանի ժողովուրդը նույնպես թողնի քաղաքն ու մեկնի Կովկաս: Սկսվեց «Վասպուրականի մեծ գաղթը»: Դա վանեցիների առաջին գաղթն էր:

Վանի հայկական իշխանությունն ունեցավ 70 օրվա կյանք:

Երբ պարզ դարձավ, որ Վանը թողնվելու է թուրքերին, Ա. Մանուկյանը առաջնորդարանում ժողով հավաքեց և այդ մասին տեղյակ պահեց քաղաքի ավագանուն: Վանեցիները հուսալքվեցին, մանավանդ, որ անգամ ճամփա ընկնելու համար նախապատրաստվելու ժամանակ չտվեցին: Վանեցիների գաղթը չես ասի, թե կազմակերպված բնույթ ուներ: Գործում էր. «Ով կարող է, թող փրկվի» սկզբունքը: Հեշտ է ասել, Բերկրիի կիրճն անցնելու համար վանեցիները երեք օրում պետք է կտրեին 100 կմ: Զկային փոխադրական միջոցներ, ինչն անելանելի կացություն էր ստեղծում ծեր, հիվանդ կամ փոքր երեխա ունեցող ընտանիքների համար:

---

[1] *АВПР, Политархив, д. 3505, л. 29.*

[2] *"Кавказское слово", 1 января 1916 г.*

Գաղթում էր 150.000 մարդ, գաղթում հիմնականում հետիոտն: Քայլում էին արևի այրող ճառագայթների տակ, ամպի վերածված ճանապարհի փոշու միջով: Քարավանը մշտապես հարձակման էր ենթարկվում թուրքերի ու քրդերի կողմից, նա արագ մաշվում էր, փոքրանում, մեռնում էին քաղցից, հոգնությունից, հիվանդություններից, զոհ դառնում թշնամու հարձակումներին:

Ռուսական սահմանն անցան ավելի քան 100.000 Վան-վասպուրականցի փախստականներ, որոնց Համլենն ու Բրոնը անվանում են «ցեղասպանությունից փրկված բացառություններ»[1]: Դրանք իսկապես բացառություններ էին, որովհետև այդ գաղթը նշանակեց նաև տասնյակ հազարավոր վանեցիների ու վասպուրականցիների կոտորած ու մահ: Շատախի, Մոկսի, Գավաշի հայության առջևը թշնամին կտրեց Ջանիկի կիրճում, տեղի ունեցավ ահռելի կոտորած:

Հուլիսի 19-ին, երբ հազարավոր հայեր փորձում էին անցնել Բերկրիի կիրճը, հրաձգություն սկսվեց: Ժողովուրդը խուճապի մատնվեց: Սակայն այդ պահին տեղ հասան Դանիել վարդապետ Զաղոյանի և Հովհաննես վարդապետ Հուսյանի զինված խմբերը, որոնք երեք կողմից գրոհեցին թշնամու վրա: Բայց ժողովրդին փրկել չկարողացան: Կոտորվեց 12 հազար մարդ: Կամավորական գնդերը գաղթող հայերին լուրջ օգնություն ցույց տալ չկարողացան, քանի որ Անդրանիկի և Դրոյի գնդերը Արճեշի վրայով նահանջեցին դեպի Իգդիր, իսկ Քեռին ու Համազասպը Բաչկալեի վրայով՝ դեպի Խոյ:

Ամենաուշ հեռացողներն էին Արամ Մանուկյանը, Արմեն Գարոն և նրանց ուղեկցող զինյալ խմբերը[2]:

«Кавказское слово» թերթի 1915 թ. հունիսի 24-ի համարում Դուխովը գրում է. «Հարյուրավոր վերստ երկարությամբ, Օրգովից մինչև Վան, Կարաքիլիսայից մինչև Ալաշկերտ և դրանից հարավ՝ անցնում են յաթաղանից փրկված սովահար հայերը... Արճեշի, Բաթնոսի, Ախլաթի, Կոփի և Խնուսի կազաներում ու սանջակներում թուրքերը վալիների հրամանով շատ տեղերում ջարդել են մի քանի հազար կանանց ու երեխաների... Սիպան լեռան մերձակայքում թափված է հայ կանանց ու երեխաների մոտ 2000 դիակ: Բոլոր այդ շրջաններում մոլեգնում են տիֆը, ջրծաղիկը և ուրիշ հիվանդություններ... Միայն Մանազկերտում կա տիֆով հիվանդ ավելի քան 1000 մարդ»:

«Վանում ամբողջ հայ բնակչությունը,- 1915 թ. օգոստոսի 24-ին գրում է Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ի. Համամջիևը,- որ չի հաջողել փախչել,- տեղի մուսուլմանները սրի են քաշել: Խնայվել են միայն յոթ տարեկանից ցածր երեխաները, որոնց տեղավորել են առանձին չենքում, հավանաբար թուրքացնելու նպատակով»[3]: Զմյուռնիայի իշխանությունները տեղի մահմեդականներին հաշվառում են, որպեսզի բնակության ուղարկեն Վան:

---

[1] **Համլեն Ա., Բրոն Ժ.,** Վերականգնված հիշողություն, Ե., 1995, էջ 104:

[2] «Տարոնի արծիւ», 1950 թ., № 30, էջ 11-15:

[3] София, ЦДИА, ф. 321, оп. 1, д. 2464, л. 24.

* * *

Արտասահմանյան պետական գործիչներից ու դեսպաններից Վանի իրադարձությունների մասին առաջինը տեղյակ դարձավ Վանգենհայմը:

Ապրիլի 11-ին նրան հրավիրում են Թուրքիայի ՆԳ նախարարություն և խիստ գաղտնի հայտնում, որ Վանում ապստամբություն է բռնկվել և ձեռնարկվում են համապատասխան հակամիջոցներ: Դեսպանը հույս է հայտնում, որ կառավարական ուժերը կարգ ու կանոն հաստատելիս կխուսափեն քայլերից, որոնք կարող են համարվել քրիստոնյաների ջարդ: Նախարարության պաշտոնատարը կիսաբերան պատասխանում է. «Վանի կայազորը կազմված է վատ վարժված ջոկատներից և հազիվ թե հնարավոր լինի ամբողջովին խուսափել ծայրահեղություններից»[1]: Կարինում Գերմանիայի հյուպատոսը հաջորդ օրը հեռագրեց՝ Վանում և շրջակայքում խռովություն է ծագել, հավանաբար ռուսական գրգռությունների հետևանքով: Փողոցային կռիվներ են ընթանում: Հեռագրական գծերը ոչնչացված են, Պարսկաստանի հետ հաղորդակցությունը՝ խզված: ՆԳ նախարարությունը հաստատում է նշված լուրի ճշտությունը, սակայն խնդրել է առայժմ հրապարակման չտալ: Գերմանական դեսպանության տվյալներով՝ թուրքերը Վանում կորցրել են 600 մարդ:

Ռումբերի մեծ պաշարներ են հայտնաբերվել Կեսարիայում և Դիարբեքիրում, որի հետևանքով «կառավարությունը նախազգուշական լայն միջոցառումներ է ձեռնարկել հայկական շարժման տարածումը կանխելու համար: Կարինում ձերբակալուած է 200 հոգի: Մեծ բնակավայրերից հայերի տարագրությունը շարունակւում է: Տարագրուածների տեղերը զբաղեցնում են մահմեդական գաղթականները»[2]:

Այսպիսով գերմանական դիվանագետները համահունչ էին Ջևդեթի և երիտթուրքական մյուս պարագլուխների հետ՝ Վանում կատարվածը ոչ թե ինքնապաշտպանություն էր, այլ ապստամբություն: Ահա այդ «ապստամբությունը» հիմք դարձրեցին հիմնավորելու հայերի զանգվածային ջարդերը: Մեծ եղեռնին վերաբերող թուրքական որևէ հուշագրություն, պատմագիտական ուսումնասիրություն կամ լրագրային հոդված չկա, որում Վանի իրադարձությունները չներկայացվեն որպես Հայոց ցեղասպանության գլխավոր պատճառներից մեկը:

Նախորդ գրքում օգտագործված վավերագրերը հիմնովին հերքում են թուրք-գերմանական այդ թեզը: Անգամ Կարինի գերմանական հյուպատոսի վերը նշված հեռագիրն է դա հերքում հետևյալ արտահայտությամբ. «Մեծ բնակավայրերից հայերի տարագրությունը շարունակվում է»:

1915 թ. հունիսի վերջին Բարձր Դուռը հայտարարեց, թե Վանի վիլայեթում մնացած 150 հազար մահմեդականների ճակատագիրն անհայտ է, իսկ օգոստոսին Էնվերը պնդեց, որ հայերը նրանց բոլորին սպանել են: Երկու ամիս անց Բեռլինում թուրքական դեսպանությունը «ոչնչացված» մահմեդականների թիվը 180 հազարի հասցրեց:

---

[1] *FO Turkei 183, BL 36, Վանգենհայմի 11/24-ը ապրիլի 1915 թ. հեռագիրը:*

[2] ***Տաշեան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 48:*

Թուրքերն ու գերմանացիները, մասնավորապես արդի պատմաբանները, պնդում են, որ Վանի իրադարձությունները ոչ թե թուրքական իշխանությունների քաղաքականության հետևանք էին, այլ ռուսների թելադրանքով տեսական ժամանակաընթացքում նախապատրաստված ապստամբություն: Այդ միտքը հիմնավորելու համար նրանք օգտագործում են նաև հայ որոշ գործիչների ու պատմաբանների մտքերը:

Անաչառ ականատեսներն ու ժամանակակիցները հակառակ կարծիքին էին: «Այսպես կոչված Վանի ապստամբությունը,- գրում է Լեփսիուսը,- օրինական պաշտպանության սովորական գործողություն էր, մի դրվագ (հայերի) ջարդի պատմության, բայց ոչ մի դեպքում դավաճանություն, ինչը հաստատում են նաև պաշարմանն ականատես գերմանացիները»[1]:

Էլիզաբեթը նկատում է. «Զնայած վալին այդ (ինքնապաշտպանությունն) անվանում է ապստամբություն, իրականում այն հայերի տներն ու կյանքը պաշտպանելու փորձ էր»[2]:

Ամերիկյան միսիոներների վկայությամբ՝ հայերին գրգռել էր Ջևդեթը, որպեսզի պատրվակ լիներ նրանց ջարդելու համար: Գրեթե նույն միտքն է հաստատում Բրայսը. «Հայերը Վանում չեն ապստամբել, այլ պարզապես պաշտպանվել են»[3]: Ջևդեթը հայերին զորակոչում էր ոչ թե բանակում ծառայելու, այլ նրանց կոտորելու նպատակով[4]:

«New York Times»-ը մայիսի 25-ին գրեց. «Վանը Թուրքա-Հայաստանում և Ուրմիան Պարսկաստանում մի քանի ամիս շարունակ հալածանքի և հարձակման էին ենթարկվում թուրքերի և քրդերի կողմից: Դրությունն այնքան լրջացավ, որ եվրոպական պետությունները բողոք ներկայացրեցին»:

Նանսենը հեգնում է հայերի ապստամբության մասին թուրքական թեզը: Նա գրում է. «... Պայթեց Վանի ըմբոստությունը, որ թուրքերն անվանեցին «Հայկական դավադրություն»... Այսպես կոչված Վանի «ապստամբությունը» թուրքերը չահարկեցին որպես հայերի դավաճանության իրական ապացույց»[5]:

Թուրք գործիչ Ահմեդ Ռեֆիկը գտնում էր, որ «Վանի հայերի ապստամբությունը, ռազմական գործողություններին խոչընդոտելը երիտթուրքերին պատրվակ ընձեռեցին ազգային իդեաների իրականացման համար: Իրավական և ուժեղ պետությունում, նման իրավիճակներում, կառավարությունը կսահմանափակվեր հակակառավարական ելույթների ճնշումով, սակայն երիտթուրքերն ընտրեցին հայերի ֆիզիկական բնաջնջման և այդ եղանակով արևելյան վիլայեթների հարցի վերացման ուղին»[6]:

Վանի հերոսապատումը ծնեց կարծիքների ու տեսակետների ավելի քան բազմազանություն: Թուրքիայում տարածված է այն կարծիքը, որ Վանում կատարվածը տևական ժամանակ նախապատրաստված ապստամբություն էր:

---

[1] ***Lepsius J.,*** *նշվ. աշխ., էջ 128-129:*

[2] ***Barrows J.,*** *In the Land of Ararat, London, 1916, p. 128.*

[3] ***Bryce J.,*** *նշվ. աշխ., էջ 627:*

[4] ***Մորգենթաու Հ.,*** *նշվ. աշխ., էջ 298:*

[5] ***Նանսեն Ֆ.,*** *Խաբված ժողովուրդ, Ե., 2000, էջ 251:*

[6] ***Refik A.,*** *Iki komite. Iki kitab, Istanbul, 1919, s. 19.*

Քյամուրան Գյուրունը գրում է, որ այդ մասին Ջևդեթին հայտնի էր, դեռ 1914 թ. նոյեմբերի 29-ին[1]: Ըստ նրա՝ Վասպուրականը հեղեղված էր «հայկական ավազակախմբերով»: Մարտի 20-ին Ջևդեթը հեռագրել էր. «Նահանգի բոլոր մասերում զինված բախումները չարունակվում են... Ենթադրվում է, որ ապստամբների թիվը 2000-ից անցնում է»[2]:

Ալի Իսհանի կարծիքով՝ վանեցիների կռիվը նպաստեց «Դիլմանում ռուսների հաղթանակին»: Էնվերը պահանջում էր ոչնչացնել Վանը, ռուսներին մեղադրում էր մահմեդականներին աքսորելու մեջ և առաջարկում էր նույն կերպ վարվել հայերի հետ: Նոգալեսը կատարվածի մեղքը բարդում էր հնչակյան և ռամկավար կուսակցությունների վրա, ժխտում, որ թուրքական բանակը մասնակցել է հայերի ջարդերին, որ Թալեաթի՝ «այրել, ավերել, սպանել» կոչող հեռագիրը կոտորածների վրա որևէ անդրադարձ չի ունեցել: Ըստ նրա՝ հայկական թաղերի վրա նետվեց 16.000 արկ[3]:

«Ապրիլի 14-ին Գևորգ կաթողիկոսը հեռագրեց Վորոնցով-Դաշկովին, որ Թավրիզի առաջնորդից տեղեկություն է ստացվել, թե Թուրքիայում ապրիլի 10-ից սկսվել է համատարած ջարդ: 10.000 հայեր զենք են վերցրել և կռվում են քրդերի ու թուրքերի դեմ: Կաթողիկոսը խնդրում էր, որ փոխարքան փութացնի ռուս զորքի արշավանքը դեպի Վան»: Սրանից Լեոն եզրակացնում է, թե «վաղօրոք եղել է պայմանավորվածություն՝ ապստամբություն և արշավանք Վանի վրա»[4]:

Վանի վրա արշավող ռուսական բանակի առաջնամասում,- չարունակում է Լեոն,- գնում էր Վարդանի «Արարատյան» կամավորական գունդը, որի կազմում կար 2000 մարդ: Գունդը մայիսի 6-ին մտնում է Վան:

Մենք ձեռքի տակ վկայություններ չունենք ռուսների հետ վանեցիների նախնական պայմանավորվածության մասին և չենք բացառում, որ ռուսների չահագրգռվածությունը նրանց մղած կլինի հարաբերություններ հաստատելու իրենց սահմանի վրա գտնվող Վանի հայ գործիչների հետ: Սակայն նաև ակնհայտ էր, որ այդ կապը ոչ թե ջարդերի պատճառ էր, այլ բնաջնջվելուց փրկվելու օժանդակ հնարավորություն, որովհետև հայերը ո՛չ նպատակ ունեին թուրքական լուծը զինված պայքարի միջոցով տապալելու և ո՛չ էլ նախահարձակ են եղել:

Վանում պարտվելուց հետո Ջևդեթը չարժվեց դեպի հարավ-արևմուտք: Սկզբում նրա «ղասաբ-թաբուրները» (դահիճների գումարտակ: Նա ինքն էր իր զինված ուժերին այդպես անվանում) հարձակվեցին Սղերդի վրա և մորթոտեցին տեղի հայ և ասորի բնակչության մեծ մասին: Հուլիսի 25-ին նա կազմակերպեց Բիթլիսի հայության ջարդը: Կանայք ու երեխաները, ինչպես անասունների հետ են վարվում, բաժանվեցին քրդերին ու թուրքերին: Ջևդեթը,- գրում է Քրիստոֆեր Ուոկերը, ոչնչացրեց Սալնո ձորի ամբողջ հայությանը, ապա չարժվեց Մուշի ու Սասունի վրա[5]:

---

[1] **Gurun K.**, The Armenian File, London, 1985, p. 96.

[2] Նույն տեղում, p. 61:

[3] **Bryce J.**, նշվ. աշխ., էջ 627.

[4] **Լեո**, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 320:

[5] **Walker Ch.**, The Survival of a Nation. New York, 1980, p. 4-5.

Երբ գարնանը ռուսները նահանջեցին, Թուրքերը դա համարեցին բարենպաստ պայման հայերին հաշվեհարդարի ենթարկելու: «Հետեւաբար, փոխանակ նահանջող թշնամիին հետեւելու, Թուրք բանակը ետ դարձաւ եւ Վանի հողամասը արշաւեց: Փոխանակ ռուսական մարզուած զինուորներով բանակին դէմ կռուելու, Թուրքերը իրենց հրացանները, գնդացիրները եւ ուրիշ զէնքերը դարձուցին Վանի գիւղերը բնակող կիներուն, տղոց եւ ծերերուն դէմ»: Սկսեցին խժդժութիւնները, «չորս օր անընդհատ ջարդ կատարեցին: Ապրիլի 15-ին (2-ին) 500-ի չափ երիտասարդ հայեր կանչուեցան Ականցէն, լսելու համար սուլթանին մէկ հրամանը. արեւմուտին, անոնք քաղաքէն դուրս հանուեցան եւ անխղճօրէն հրացանազարկ սպանուեցան»[1]: Վանա լճի հյուսիսային մասում գտնվող գյուղերում երեք օրում 24.000 հայ սպանվեց:

Մահմեդականների հանդեպ Վանում հայերի «գազանությունների» մասին լուրերը տարածվում էին բոլոր միջոցներով՝ բանավոր, թե գրավոր: Վիեննա ուղարկված լրտեսագրերից մեկում կարդում ենք. թե «Էրզրումի մի երեսփոխան, որը երիտթուրքական կոմիտեի ազդեցիկ անդամներից է (հավանաբար Բ. Շաքիրը), ասաց ինձ, որ կառավարությունը մեծագույն ջանքեր է թափում, որպեսզի Վանի չրջանում հայերի կատարած գազանությունները թուրքական հասարակությանը հայտնի չդառնան, որովհետև, եթե դառնան, հետևանքը թուրքական վրեժխնդրության սարսափելի պոռթկումը կլինի: Ասում են, թե հայերը Վանում թուրքերին, անգամ կանանց ու երեխաներին, այնպես էին կոտորում, որ ռուս սպաները փորձել են վերջ տալ այդ արյան բաղնիսին՝ ծանր պատիժներ սահմանելով»[2]:

Փաստերն ու վավերագրերը լրիվ հակառակն են ասում: Երբ ռուսները գրավեցին Վանը, ամերիկյան միսիոներների մոտ թաքնված 3000 հայեր դուրս եկան ու նրանց տեղը թաքնվեցին 1000 թուրք կին և երեխա: Հայ կամավորները միսիոներներին հանձնեցին նաև մի թուրքի, որը պարծենում էր, թե 20 հայ է սպանել:

Ահա թե ինչ են պատմել Ըշրրը և Վանի գերմանական որբանոցի տնօրեն Շպյորրին. «Մեր հողամասում կան հազար թուրք կանայք և երեխաներ, որոնց մեզ մոտ են բերել հայ զինվորները, որովհետև սա թուրքերի համար լավագույն ապաստանն է... Հայերն, ընդհանրապես, թուրք գերիների նկատմամբ հիացմունքի արժանի ինքնազսպում են դրսևորում, եթե հիշենք, թե ինչպես էին նրանց վերաբերվել թուրքերը»[3]:

Վերը նշված 150 հազար մահմեդականների առնչությամբ Լեփսիուսը գրում է. «Վանի վիլայեթում կա 180 հազար մահմեդական, որից 30 հազարը թուրք է և 150 հազարը՝ քուրդ: 30.000 թուրքեր ռուսական բանակի առաջխաղացման ժամանակ փախել էին Բիթլիսի վիլայեթ... Վանի վիլայեթի 150.000 քրդերը, որոնք հիմնականում ապրում են հարավային և հարավարևելյան

---

[1] **Մորգենթաու Հ.,** նշվ. աշխ., էջ 247:

[2] *Wien, HHSTA PA XII 272 Konst. 15 August 1915.*

[3] **Lepsius J.,** *Der Todesgang des Armenischen Volkes: Bericht über das Schicksal des Armenischen volkes in der Turkei warend des Weltkrieges. Potsdam, 1919, s. 96.*

շրջաններում, շարժվեցին Ղավի վերին հովիտ՝ Տիգրիսի հոսանքն ի վար, մնացել էին ռուսական ճակատի հետևում և ռազմական գործողությունների շրջանում չեն եղել: ...Այդ 150.000 մահմեդականներին ընդհանրապես ոչինչ և ոչ ոք չի սպառնացել, ուր մնաց, թե կոտորված լինեին հայերի կողմից...»[1]:

Նույն խնդրի մասին Ֆայեզ էլ-Ղուսեյնը գրում է. «Ես զբաղվել եմ այդ գործով, հարցափորձ եմ արել Դիարբեքիր եկած Վանի բնակիչներին ու պաշտոնյաներին, թե Վանում կամ վիլայեթի որևէ մասում հայերը մահմեդականներին սպանե՞լ են: Բոլորը ժխտողական պատասխան տվեցին և ասացին, որ կառավարությունը մինչև ռուսների գալը ... քաղաքն ազատել էր տվել մահմեդական բնակչությունից»[2]:

Ինչ վերաբերում է մեծաթիվ թուրքերի ոչնչացմանը, ապա դա հնարավոր չէր նաև այն պատճառով, որ նրանք Վանի վիլայեթում «բնակչության միայն չնչին մասն էին կազմում»[3]:

Նոգալեսը գրում է. «Եթե Վանում շրջափակված 3000-4000 հայերը զինվորական նվագախմբեր ստեղծելու, ժամանակավոր կառավարություն կազմելու և մեդալներ ու զինվորական շքանշաններ պատրաստելու փոխարեն զանգվածային գրոհ ձեռնարկած լինեին, ո՞վ գիտի, թե մեր վիճակն ինչ կլիներ»[4]: Հայերը չէին հարձակվում, որովհետև ոչ թե պատերազմի մեջ էին թուրքերի դեմ, այլ պարզապես պաշտպանվում էին ոչնչացումից:

Դրա փոխարեն, երբ ռուսները նահանջեցին, թուրքերը վերադառնալով Վան (օգոստոսի 11-ին) հայտարարեցին, թե «Վանի գրավումն ավելի շատ հայերի, քան ռուսների արածն էր» և հայերին սպասում է «սարսափելի դատաստան»: Երբ Պալավիչինին Մեծ վեզիրին խնդրեց մեղմացնել հայերի հանդեպ քաղաքականությունը, նա խոստացավ, բայց չարեց և հայերի վիճակն ավելի ողբերգական դարձավ: Սրի քաշվեցին քաղաքում ու գյուղերում մնացած բոլոր հայերը, որոնք հիմնականում ծերեր, հիվանդներ և երեխաներ էին: Երբ ռուսական զորքերը երկրորդ անգամ մտան Վան, քաղաքում և գյուղերում 55.000 դիակ հավաքեցին և այրեցին:

Բրայսը բերում է օրիորդ Կնափի վկայությունը՝ նրա նամակները գրված Բարտոնին 1915 թ. մայիս-հունիս ամիսներին, ինչպես նաև Ե. Ռչտունու՝ «Կոչնակ» թերթում 1916 թ. տպագրված հոդվածաշարը: Վանի ինքնապաշտպանության մասին նյութեր կան նաև ականատեսներից Մելարինի «Բիթլիսի ողբերգությունը» գրքում, Ուշելինի (1917 թ.) նամակներում, Դ. Քլարեսի «An American Physician in Turkey» (Boston, 1918) գրքում, Հոլանդական նպաստամատույց հանձնաժողովի հրատարակած «Mastaling der Armeniers in Turkija, naar Berichten, Van Joggetuingen Urtgegeven Door let Niderlandisch Comite ist Halpbetoon aan de Needlijdende Armeniers»-ում (Haarlem, 1918):

---

[1] **Lepsius J.,** *Deutschland und Armenien 1914-1918, Sammlung diplomatischer Aktenstucke. Potsdam, 1919, s. LXXIV.*

[2] **El-Ghassein F. S.**, *Die Turkenherrschaft und Armeniens Schmerzenschrei. Zürich, 1918, s. 95.*

[3] *Wien, HHSTA PA XXXVIII 375, Trapezunt, 17 September 1912.*

[4] **De Nogales,** *Vier Jahre, s. 57.*

Կարևոր սկզբնաղբյուր է ինքնապաշտպանության ժամանակավոր Զինվորական մարմնի «La Defanse Lezuque de Van» (Génève, 1916) ժողովածուն, որում զետեղված են նաև Ջևդեթի նամակները, ինքնապաշտպանության կոմիտեի հրամանները և նման այլ նյութեր: Արժանահավատ նյութեր կան Հայաստանի և Ռուսաստանի արխիվներում, այլևայլ հրապարակություններում և ուսումնասիրություններում:

«Երկար ժամանակ,- գրում է Շպյորրին,- թուրքերը, քրդերն ու չերքեզները կեղեքում էին տեղի հայերին: Թալանը, սպանությունները, բռնություններն այնպիսի արագությամբ էին հաջորդում միմյանց, որ չատերը հարկադրված փախան Կովկաս: Վանի վալի Ջևդեթ բեյը ... խոստացավ վերջ դնել այդ անիրավություններին, մեղավորներին պատժել: Նա կարգուկանոն հաստատելու համար իր մոտ հրավիրեց հայ համայնքի ակնառու ներկայացուցիչներին, որոնց թվում՝ երեսփոխան Վռամյանին, բայց դավադրաբար բոլորին կոտորել տվեց: Այսպես սկսվեցին Վանի դեպքերը: Քաղաքն ուներ մոտ 50.000 բնակիչ, որի 3/5-ը հայեր էին... Թուրքական զորքերը գրոհում էին քաղաքի վրա, իսկ բնակչությունը դիմադրում էր: Սկսվեց պաշարումը: Հաջորդ 15 օրերին Ջևդեթ բեյն իր մարդկանց հրամայեց հարձակվել մոտակա բնակավայրերի վրա: Թալանվեց ու ավերվեց 258 գյուղ, մոտ 26 հազար հայ կոտորվեց, տներն ու այգիներն ավերակի վերածվեցին: 10.000 փախստականների Ջևդեթ բեյը թույլատրեց քաղաք մտնել, որպեսզի հայերի թիվը ավելացնելով արագացնի սովամահությունը»:

Ապրիլին սկսվեցին անկարգությունները Վանում,- վկայում է գերմանական մի այլ աղբյուր,- այնտեղ ապրիլի 15-ին հայ երկու գործիչ սպանվեց, երբ վալու հանձնարարությամբ թուրքական ժանդարմների ուղեկցությամբ գնում էին վիլայեթի լեռնային շրջանը: Երրորդ ղեկավարը՝ Արամը, զգուշանալով ընդհանուր ջարդից, հայկական թաղը ամրացրեց պաշտպանության համար: Նա հաջողեց 30 օր դիմադրել թուրքական զորքերին, մինչև որ մայիսի 5-ին Վանը հանձնվեց ռուսներին[1]:

Եթե ուրուգվայական «El Tempo»-ն գրեց. «Թուրքիայի վիճակն ավելի է բարդանում: Վան նահանգի և նույնանուն քաղաքում պայթել է հայերի ապստամբությունը: Բնակչությունը գտնվում է ապստամբների իշխանության տակ», ապա Սազոնովը լսելով Վանի իրադարձությունների մասին Փարիզի և Լոնդոնի իր դեսպաններ Իզվոլսկուն և Բենկենդորֆին հայտնեց, որ հայերի զինված դիմադրությունը հանդիսանում է թուրքական ավազակախմբերի և քրդական հորդաների կողմից իրականացվող բռնությունների ու կոտորածների հետևանք ու դրանց պատասխան: Նույն օրը հայտարարություն հրապարակվեց, որ Սազոնովը հերքում է Սալոնիկում Ֆրանսիայի հյուպատոսի կարծիքը, թե հայերի զանգվածային ջարդերը կազմակերպվել են ի պատասխան Վանի և Զեյթունի ապստամբությունների: Հենց այդ ժամանակ Սազոնովը միտք հղացավ հանդես գալու հայտարարությամբ Օսմանյան կայսրությունում

[1] *R 14098, Ab. 39028.*

հայերի հալածանքների ու ջարդերի դեմ: Նա Բենկենդորֆին ու Իզվոլսկուն հղած հեռագրերում անհրաժեշտ համարեց այդ հարցում Անտանտի երկրների կառավարությունների համատեղ հանդես գալը, նաև չարադրեց այդ հայտարարության հիմնական դրույթները[1]:

Բենկենդորֆը Սազոնովին տեղեկացնում է, որ ինքը Նիկոլսոնին հայտնել է Վանի դեպքերի մասին: Նիկոլսոնն ասել է, որ անգլիական կառավարությունը կատարվածից անտեղյակ է, սակայն եթե դա հաստատվի, ապա Թուրքիան այդ իրադարձությունների մեջ կգտնի ապացույց՝ հաստատելու, թե հայերը ապստամբություն են բարձրացրել: Ռուսաստանի դեսպանը պատասխանել է, որ հավանաբար արյունալի սադրանքներից հետո հայերին այլ ելք չէր մնում: Նա գտնում է, որ Թուրքերի նմանօրինակ փաստարկները զուրկ են որևէ նշանակությունից[2]: Սազոնովը մայիսի 2-ին հեռագրում է. «Լիովին հավանություն ենք տալիս Նիկոլսոնին ձեր տված պատասխանին: Տարակույս չկա, որ Վանում հայերի ապստամբությունը հարուցված է կոտորածով, և ոչ ընդհակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև մեր զորքերի տեղ հասնելը սկսել չարժում քրդերի և Թուրքերի գերակշիռ ուժերի դեմ»[3]: Բենկենդորֆը Գրեյի հետ ունեցած զրույցի մասին մայիսի 7-ին գրում է. «Երբ ես նրան ասացի, որ այսպես կոչված Վանի ապստամբությունը չի կարելի նկատի առնել, քանի որ այն, ակնհայտորեն, հաջորդել է կոտորածներին, Գրեյը չառարկեց»[4]:

Նույն օրերին «Berliner Tagenblat» թերթը տպագրեց իր Թղթակցի հարցազրույցը Թուրքական խորհրդարանի նախագահի հետ: Վերջինս, գրում է թերթը, հայերին համարում է դավաճան, թեև ընդունում է, որ իրենք որոշ սխալներ թույլ տվել են, որի համար ցավում է: Թուրքերի և քրդերի հակահայկական հալածանքները նա բացատրում է թշնամիների հետ հայերի համագործակցելու դիտավորությամբ»[5]:

«Ձեռքի տակ ունենք ականատես գերմանացի և ամերիկացի միսիոներների վավերական գրությունները: 1915 թ. փետրվարին Վանի Ջևդեթ բեյը Թուրքերի մի ժողովում հայտարարել է. «Բնաջնջեցինք Ադրբեջանի հայերին ու սիրիացիներին, բնաջնջենք և Վանի հայերին»: Հօգուտ բանակի բռնագրավումներ կատարելու նպատակով, հայերին ամոթալի միջոցներով կողոպտեցին, չրջակա գյուղացիները քրդերի և ոստիկան-զինվորների ավազակությանը և բռնաբարումներին ենթարկվեցին:

... Ջևդեթ բեյը հարձակում պատրաստեց Վանի հայկական թաղերի վրա, միաժամանակ հրամայեց ջարդեր կազմակերպել Արճեշի և Հայոց ձորի գյուղերում: Կանանց և երեխաներին պաշտպանելու համար հայերը քաշվեցին Վանի իրենց թաղերը...

---

[1] *"Документы французских архивов", с. 9.*

[2] *«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Ե., 1972, էջ 370:*

[3] *Նույն տեղում, էջ 374:*

[4] *Նույն տեղում, էջ 376:*

[5] *«El Tempo» 27 հոկտեմբերի 1915 թ.:*

Թուրքերը հայկական թաղերը ռմբակոծեցին թնդանոթներով ու հրացաններով: Հայերը պաշտպանվեցին, ինչպես կարողացան: Միայն մի քանի ատրճանակ ու հրացան ունեին. ռազմամթերք չունեին: Իրենց ձեռքերով ղենքեր, փամփուշտներ և ռումբեր պատրաստեցին: Թուրք զինվորներն ու քրդերը ավերում են Վանի շրջակայքը, այրում են տները, կոտորում ծերերին, կանանց ու երեխաներին:

... Պաշարումն ու ռմբակոծումը տևեցին չորս շաբաթ: Մայիսի 16-ին (ն. տ.) դրանք հանկարծ դադարեցին և Ջևդեթ բեյն ու թուրքերը փախան: Ի՞նչ էր պատահել: Ռուսական մի զորաբանակ էր մոտենում Վանին: Հայերը նույնիսկ լուր չունեին:

Մայիսի 18-ին (ն. տ.) ռուսական առաջապահ գնդերը մտան Վան. ահավոր եղելության մասին ռուսները ևս տեղեկություն չունեին...

Թուրքական հարձակման դեմ Վանի հայկական ինքնապաշտպանությունը ունեցավ իր պատմիչը՝ Էնվեր փաշան: Թուրքական կառավարությունը Բեռլինում հրատարակեց մի տեղեկագրություն, որն ուղարկեց նաև այլ երկրներ: Ըստ այդ տեղեկագրության, ըմբոստ հայերի խմբերը հարձակվել էին մահմեդական ժողովրդի վրա: Վանի վիլայեթի 180 հազար մահմեդականներից միայն 30 հազարը ճողոպրեց մահից:

Ավելի ուշ, 1915 թ. հոկտեմբերի 1-ին, Բեռլինի թուրքական դեսպանատունը հայտարարեց, որ «ոչ պակաս, քան 180 հազար մարդ սպանված է: Դրանից հետո մահմեդականները վրեժ են լուծել և ի՞նչ հարկ կա զարմանալու: Հարձակման պահին սպանված 18 թուրքեր դարձել են... 18 հազար...

Վանի դեպքերը բնորոշ օրինակ էին հայերի նկատմամբ թուրքերի կեցվածքի ու ողջ գործելակերպի՝ իրողությունները խեղաթյուրելու, հայտարարելով, թե հայերը գործել են որպես դավաճաններ և ըմբոստներ: Բոլոր մյուս փաստերը, որ թվարկում են երիտթուրքերը իրենց արարքները արդարացնելու համար, նույն բնույթի են[1]:

Լսենք թուրքական «Սաբահ» թերթի խմբագիր, իրադարձությունների ժամանակակից Ա. Քեմալին.

«Ի՞նչ պետք է անենք... Ներո՞ւմ պիտի խնդրենք:

Վանում կեղեքիչ ոճիրներ գործեցին մի քանի անհատներ, և կառավարական ուժը պարտավոր էր բնաջնջել միայն այս ոճիրների հեղինակներին, մինչդեռ մեր կառավարությունը որոշեց ջարդեր կատարել, մորթել տվեց մարդկային զանգվածների, կողոպտել տվեց նրանց ունեցվածքը և հրապարակեց լքյալ գույքերի օրենքը՝ գրավելու համար այն կալվածքները, որոնք հնարավոր չէր եղել հափշտակել:

Մեր՝ թուրքերիս առաջ քաշած պատճառաբանությունները, համաձայն որոնց Վանում հայերն են մեր վրա նախահարձակ եղել և որ մենք Անատոլիայում փոխվրեժի դիմեցինք, գոհացում կարող է տալ միայն նրանց, ովքեր «զգացմունքայնությամբ» և ոչ թե գիտական ու իրավական տրամաբանությամբ են գործում»[2]:

---

[1] **Նանսեն Ֆ.**, *Հայաստան և Մերձավոր Արևելք, Վերիտոն, 1956, էջ 253-255:*

[2] *«La Renaissance», 1 մարտի 1919 թ.:*

Անդրե Մանդելչտամը գրում է, որ մի ամերիկուհի՝ միսս Գրաս Հիգլեյ Կնապպը, Վանի հայկական թաղի թուրքական պաշարման միջոցին գտնվում էր «Ամերիկայի տանը»: Նրա վկայությունն ամենաարժեքավորն է: Նա ժխտում է, թե հայերը գրգռեցին թուրքերին. ճիշտ հակառակը, նրանց ղեկավարներն աշխատում էին արգելել բախումը: Իրականում բախման պատճառը նահանգապետ Ջևդեթ բեյն էր: Տեսնելով իրենց ղեկավարների ոչնչացումը «հայերն այլևս ամեն վստահություն կորցրին կուսակալի հանդեպ, և մերժեցին տալ նրան այն 3000 զինվորները, որ նախապես խոստացել էին, փոխարենը առաջարկեցին 400 հոգի: Ջևդեթը, սակայն, պնդեց 3000-ի վրա և հայտարարեց, թե ինչ էլ որ լինի, պիտի ճնշի «ապստամբությունը», չնայած այդպիսին դեռ չկար: Կուսակալը հայոց թաղը շրջապատեց խրամատներով: Հայերը վճռեցին իրենց կյանքը ծախել որքան հնարավոր է թանկ, պատրաստեցին պաշտպանական գիծ: Գործողություններն սկսեցին թուրքերը՝ 1915 թ. ապրիլի 20-ին (ն. տ.), բայց թուրքական զենքերը փառքով չպսակվեցին: Մինչ Վանի 1500 հայերը հաջողությամբ պաշտպանում էին իրենց թաղը օսմանյան կանոնավոր զորքի դեմ, թուրքերն ու քրդերը հրդեհում էին շրջակա գյուղերը և կոտորում տղամարդկանց, կանանց և երեխաներին...»:

Միսս Կնապպի պատմածը հաստատում է պարոն Յարոն՝ ամերիկյան վարժարանի տնօրենը: Թուրք հիշատակագրի հավաստիացնելը, թե ռուսների կողմից Վանը գրավելուց հետո «քաղաքում մնացած իսլամ բնակչությունը կոտորվեց», պարզապես թուրքական սուտ է: Ընդհակառակը, իսլամները՝ մեծ մասամբ ռուսների գրաված վայրերից փախստականներ՝ շուրջ 1000 հոգի, խնամվեցին ամերիկացի միսիոներների ու կոմսուհի Տոլստոյայի կողմից և ռուս զորավարի միջոցով տեղավորվեցին գյուղերում: Վանի ինքնապաշտպանության մասին հայ պարոն Ռշտունու հետաքրքրական պատմությունից ուշադրության ենք առաջարկում հետևյալ դեպքերը. «Հենց որ գերմանացիները պատերազմ հայտարարեցին ռուսներին, թուրքական կառավարությունը պաշարողական դրություն հայտարարեց Վանում և զենքի տակ կանչեց 21 տարեկանից մինչև 45 տարեկան բոլոր այր մարդկանց՝ առանց ցեղի և կրոնի խտրության: Հայերն իրենց գլխավորների հորդորով պատրաստակամ արձագանքեցին այդ կոչին: Սկզբում նրանց հարաբերությունը թուրքերի հետ բավական լավ էր: Բայց և այնպես, հայ ու ասորի զինվորների մեծ մասը մնաց առանց զենքի և զինվորական հանդերձանքի, նրանց տալիս էին վատ սնունդ, որը դասալքություն առաջ բերեց: Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո կառավարությունն սկսեց հայերին կասկածանքով վերաբերվել[1]:

Որպես Մեծ Եղեռնի իրողություններից ու տրամաբանությունից հետևություն են հնչում Ա. Ջիվելեգովի հետևյալ խոսքերը. «Վանա լճի ափերից, հարավից, արևմուտքից, անգամ արևելքից և հյուսիսից, Մուշի ու Բիթլիսի շրջակայքից, պարսկական սահմանից պոկվեցին ու շարժվեցին այս անգամ արդեն զինված կանայք, երեխաներ, ծերեր: Տղամարդիկ ... գնացին լեռներ, որպեսզի

---

[1] **Зареванд,** *նշվ. աշխ. Ա. Մանդելչտամի առաջաբանը:*

պարտիզանական կռվով խաղաղեցնեն Թուրքերին և քրդերին մինչև ռուսական զորքերի վերադարձը: Տեղերում մնացածները չհասցրեցին հեռանալ, հավանաբար այլևս չեն ապրում: Նրանք բոլորը մորթվել են»[1]:

Միանգամայն ճշմարիտ բնութագրություն: Նրանից սակայն հետևություն է հանվում, ինչի հետ համաձայնվելն անհնար է, որովհետև սխալ է ու վտանգավոր: «Այն բանից հետո,- եզրակացնում է Ջիվելեգովը,- երբ Վանում հայերը չցանկացան իրենց վիզը ինքնակամ դնել դահիճի դանակի տակ, կամավոր ձևով խայտառակության և տանջանքների հանձնել իրենց կանանց ու երեխաներին, երիտթուրքերը ընդունեցին որոշում: Այն, ինչի առաջ ընկրկել էր անգամ արնախում Համիդը՝ գաղանային արարքների նկարիչը, ձգտում են իրականացնել քաղաքագետներ, ովքեր իշխանությանը տիրել և իրենց ձեռքում պահում են գերմանական սվինների օգնությամբ: Նրանք որոշեցին բնաջնջել հայ ժողովրդին, արմատահան անել քրիստոնեական ռասային, որի գոյությունը ներկայումս արդեն լրջորեն սպառնում է Օսմանյան կայսրության ամբողջականությանը»[2]:

Անհնար է համաձայնվել երկու պատճառով. ա) հայերի բնաջնջման վերաբերյալ երիտթուրքերը որոշում կայացրել էին Վանի իրադարձություններից ամիսներ, անգամ տարիներ առաջ և այդ իրադարձությունները պարզապես պատրվակ գործածվեցին, բ) հայերի գոյությունը Օսմանյան կայսրության ամբողջականության համար սպառնալիք չի եղել և չէր լինի, եթե Թուրքական տիրապետությունը չսպառնար հայերի բուն գոյությանը: 1914-1916 թվերին տեղի ունեցածն ասում է, որ անգամ բնաջնջման վտանգի առկայության պայմաններում ոչ թե առաջինը հայերն ինքնապաշտպանական կռվի ելան, այլ թուրքերը ձեռնամուխ եղան ամբողջական բնաջնջման ծրագրի գործադրմանը: Վանի իրադարձությունների հստակ և օբյեկտիվ գնահատականը տվել է Հ. Մորգենթաուն: Նա այդ իրադարձություններն անվանում է «ամբողջ ազգ մը բնաջնջելու կազմակերպուած փորձի մը առաջին» քայլ ու Թուրքերի համար նաև «արդարացում իրենց յաջորդ ոճիրներուն... Ամեն անգամ, երբ Հայերու նպաստին կը դիմէի էնվերին, Թալէաթին եւ նմաններուն, անոնք անփոփոխելիօրէն կը յիշէին Վանի «յեղափոխականները», իբրեւ օրինակ «դաւադրութեան»: Մինչդեռ այդ «յեղափոխութիւնն» այլ բան չէր, եթէ ոչ «Հայերի դիմադրութիւն», որոնք որոշել էին «պաշտպանել իրենց կիներու պատիւը եւ իրենց կեանքը...»[3]:

Միանգամայն իրավացի է նաև Ա. Շիրակյանը. «Յետագային Թրքական կառավարութիւնը պիտի շահագործէր Վանի դէպքը, զայն ներկայացնելով որպէս ծրագրուած Հայկական ընդհանուր ապստամբութեան փորձ մը, որուն նպատակն էր Թիկունքէն հարուածել Թիւրք բանակը: Վանի հերոսամարտի նկարագրութիւնը... ցոյց կու տայ, որ Հայերը, տեսնելէ ետք, թէ ինչեր կը կատարուին շրջաններու մէջ, լոկ ինքնապաշտպանութեան էին դիմած: Արդեն

---

[1] "Русские ведомости", 24 августа 1915 г.

[2] Նույն տեղում:

[3] **Մորգենթաու Հ.,** նշվ. աշխ., էջ 249:

պատերազմական ճակատի, սահմանային շրջանների կոտորածները, ինչպէս նաեւ Զէյթունի տեղահանութիւնը աւելի կանուխ տեղի ունեցած էին. շատ աւելի կանուխ, քան Վանի հայութեան կարծեցեալ ապստամբութիւնը, որ իբր թէ պատճառ եղած է հայութեան ընդհանուր տեղահանութեան ու ջարդին»[1]:

* * *

Ռուսական բանակի նահանջը կարճ տեւեց, ընդամենը 3–4 օր: Այդ 3–4 օրում հայերի արյունը գետի նման հոսեցնելուց հետո Ջևդեթը նորից բռնեց փախուստի ճամփան: Ականատեսներից Հեղինե Խեչինովան պատմում է, որ թուրքերի մեջ միատեղված էին դաժանությունը, ընչաքաղցությունը և մարդասպանությունը... Մեր վիրավոր կողակներից մեկն ասաց. «Սրանց հարկ է կախել, միայն թե նախապես պետք է ներողություն խնդրել ծառի այն ճյուղից, որից կախելու ես...»[2]:

Թուրքերն ու քրդերը փախան, հայերը վերադարձան: Նրանց դիմավորեց ավերված, դիակներով ծածկված Վանը: Գեներալ Զերնոզուբովը հեռագրեց Պետրոգրադ, թե քաղաք մտնել հնարավոր չէ դիակների գարշահոտության պատճառով: Վանը «ամբողջությամբ ավերված է: Լավագույն շինությունները հրկիզված են, իսկ կավաշենները՝ փլված: Փողոցներում և բակերում ամենուրեք թափված են կենդանիների ու հայերի դիակներ... Թուրքահայաստանի՝ իր ծավալով նախադեպը չունեցող, ոչնչացումը, ինչը վերջին ժամանակներս թուրքական կառավարությունը վերածել է համակարգի, տեղի է ունենում ... Թուրքական բանակի հանկարծակի հարձակումներին զուգընթաց... Դրանք ծայր աստիճանի կործանարար են հայ ժողովրդի համար և նպատակ ունեն հայ ժողովրդին ջնջել աշխարհի երեսից»[3]:

«Ռուսական իշխանությունների օգնությամբ,– պատմում է իրադարձությունների մասնակիցներից մեկը,– Արամը իր շուրջը հավաքեց շուրջ 100 հեծյալ ու հետևակ զինված երիտասարդների և ուղարկեց Վան: Նրանց հետևեցին ուրիշները, և ժողովուրդն սկսեց աստիճանաբար վերադառնալ հարազատ քաղաք: Ջնայած իշխանությունների հանձնարարականին՝ վերադառնան միայն տղամարդիկ, գնացին նաև կանայք ու երեխաներ: Փախստականներն ու Արամն իր ջոկատով մեծ դժվարությամբ վերադարձան Վան, որն արդեն ռուսների ձեռքին էր: Արամը միջոցներ ձեռնարկեց մարդկանց տեղավորելու, կարգուկանոն հաստատելու համար և կանխարգելու ամեն տեսակի տհաճություններն ու թալանը: Քաղաքի մի մասը առաջին նահանջի ժամանակ ավերվել էր, սակայն շատ տներ կանգուն էին և հնարավոր եղավ աստիճանաբար վերականգնել»:

Բայց այդ հերոսական բնակչությանը բախտ չվիճակվեց ապրելու հարազատ քաղաքում: Առաջին իսկ օրերից նրանք տեսան, որ ռուսական զորքերը

---

[1] **Շիրակեան Ա.,** Կտակն էր նահատակներուն, Պէյրութ, 1965, էջ 44:

[2] «Հայրենիքի ձայն», 3 հոկտեմբերի 1984 թ.:

[3] "День", 6 сентября 1915 г.

վախեցած են և ամեն պահի պատրաստ էին նահանջելու: Մի անգամ ռուսների շրջանում լուր է տարածվում, թե դեպի Վան են շարժվում Թշնամու խոշոր ուժեր, և նրանք որոշում են նահանջել Խոշաբ: «Ռուս հրամանատարը Արամին առաջարկում է զինյալների և զորքի հետ քաշվել դեպի Խոշաբ»:

Քաղաքում խուճապ սկսվեց: Բնակչությունը նորից ամեն ինչ լքեց ու հետիոտն շարժվեց դեպի Երևան: Երբ հասան Խոշաբ, ռուս հրամանատարությունը ասաց, թե Թուրքերի հարձակման մասին լուրերը ճիշտ չեն և որոշվել է վերադառնալ Վան: Հոգնած. տանջահար ժողովուրդը վերադարձավ: Սակայն նույն օրվա գիշերը հրաման ստացվեց նահանջելու: Ռուսական զորքն ամեն ինչ լքելով փախչում էր: Արամը ժողովրդին հորդորեց մեկնել Երևան: Նորից գաղթ[1]:

Դա 1915 թ. սեպտեմբերի 26-ին էր: Հայերը շարժվեցին դեպի Իգդիր: 1916-ի սկզբներին ռուսները նորից գրավեցին Վանը: Նրանց հետևից վերադարձան նաև հայերը: Ս. Գորոդեցկին 1916-ին լինում է Վանում և գրում. «Այն զգացումը, որով կանգնած ես ջարդի վայրում, չի կարող համեմատվել և ոչ մի վչտի հետ: Անուղղելի դժբախտություն, չմաքրվող խայտառակություն, անհուն զայրույթ մարդկային ոգու անարգման համար՝ ահա՛ առաջին զգացումները, որ տալիս է Թուրքիան: Նրա զոհն է տանջված, փոքրիկ Հայաստանը»[2]:

1917 թ. Սալմաստից ռուսական բանակի հեռանալուց հետո համաթուրանական իղձեր փայփայող որոշ տարրեր աշիրեթապետ Սմկոյին հանձնարարում են սպանել ասորիների առաջնորդ Մար-Շիմոնին: Սմկոն վերջինիս հրավիրում է Հին քաղաք ավան և դավաղրաբար սպանում իր 80 զինվորների հետ: Ուրմիայից Մելիք Խոչապան և Աղա Պետրոսը, Սալմաստից Աղա Դավուդը, Մահլամից Ջիբրայել Վարդանյանը, հայդուկ Ջիրոն հարձակվում են Ջարա բերդի վրա և Սմկոյին պարտության մատնում: Սմկոն 150 հեծյալով փախչում է Խոյ, գրավում Կոթուրի բարձունքները՝ Վասպուրականի հայությունից վրեժխնդիր լինելու համար: Դրա շնորհիվ մարտի 29-30-ը Սալմաստ հասած 18.000 հայեր փրկվում են[3]:

1917 թ. ռուսները ստեղծեցին Վանի հայկական վարչությունը Կոստի Համբարձումյանի գլխավորությամբ, որը գործեց մինչև հայության երրորդ նահանջը՝ 1918 թիվը:

Մինչև ռուսական բանակի ու վանեցիների երրորդ նահանջը Վանը հիմքեր ուներ վերադառնալու իր երբեմնի կարգավիճակին: Նա դառնում էր Արևմտյան Հայաստանի վարչական կենտրոնը:

Բայց ավա՜ղ...

---

[1] *ЦГВИАР, ф. 521, д. 492, л. 46а-46б.*

[2] ***Городецкий С.,*** *Об Армении и армянской культуре, Ер., 1974, с. 23-24.*

[3] *«Տարոնի արծիւ», 1950 թ., № 30, էջ 16-18:*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԷՐԶՐՈՒՄ– ԿԱՐԻՆ

Էրզրում քաղաքը մինչև 19-րդ դարի կեսերը լինելով Արմենիա Էյալեթի կենտրոնը, փաստորեն այդպես էլ մնաց Արևմտյան Հայաստանի քաղաքական, նաև տնտեսական, որոշ առումներով նաև վարչական կենտրոնը:

Պատերազմի նախօրյակին Էրզրումի վիլայեթում բնակվում էին 11 ազգությունների 630.000 ներկայացուցիչներ, որոնցից հայեր էին 220 հազարը[1]: Հայերը հիմնականում բնակվում էին Էրզրումի (Կարին), Երզնկայի, Բայբուրդի (Բարերդ), Քեմախի (Կամախ), Դերջանի, Քղիի, Իսպիր-Թորթումի, Հասան-Կալեի, Ալաշկերտի, Բայազետի վարչական միավորումներում, և կազմում էին 10 հոգևոր թեմեր: Այդ թեմերը պահպանել էին միլիեթների համակարգով Հայ եկեղեցուն տրված իրավասությունների փչրանքները:

Էրզրումի վիլայեթում նույնպես հայերի հանդեպ խստությունները ուժեղացան պատերազմի նախօրյակին: Դրա արտահայտություններից էր հայ ուսուցիչների համատարած զորակոչը: Հայերի ունեցվածքի բռնագրավումներն էլ վիլայեթում սկսվեցին պատերազմի նախօրյակին:

Նաև հարկ է հաշվի առնել, որ հայերի հանդեպ քաղաքականության խստանալը տեղի էր ունենում ամբողջ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական ծանր վիճակի համայնապատկերի վրա: Քաղաքների համառուսական միության Սարիղամիշի լիազոր Արղութինսկին գրում է. «Թուրքական տիրապետության շրջանում ամեն ինչ արվեց, որպեսզի Էրզրումը վերածվի նրա բնակչության առողջությանն ու կյանքին մշտապես սպառնացող վարակի օջախի... Թուրքական սանիտարական ծառայության տվյալներով՝ 100.000 բնակիչ ունեցող Էրզրումում մի ժամանակ բծավոր տիֆով հիվանդ էր 40.000 մարդ, մահացությունը կազմում էր 50-60 տոկոս»[2]:

Էրզրումի վիլայեթը 1915 թ. մուտք գործեց, երբ հարևան չատ շրջաններում հայերի բնաջնջումն արդեն իրողություն էր: 1914 թ. դեկտեմբերին թուրքերն իրականացրին Արդահանի ու դրա գյուղերի (Մեթիյամ, Սաղարա, Խելավան, Սեղերեկ, Ուր, Պանգիս, Օլչակի, Կերմակ, Դաղազյուլ, Ռևագ, Շեղեվան, Զիկովա, Կևդեղաման, Ալարա) հայ բնակչության ոչնչացում: Դրանից մեկ ամիս առաջ բնաջնջվել էր Արդվինի հայ բնակչության կեսը:

Էրզրումի նահանգի հայաթափումն ավելի չուտ սկսվեց, քան մյուս վիլայեթներում: Օրինակ, Երբեմնի հայաչատ Ալաշկերտում պատերազմի նախօրյակին մնացել էր միայն 22 հայաբնակ գյուղ: Դրա պատճառներից մեկը ռուս-

---

[1] *"Армянский вестник", 1916 г., № 23.*

[2] *Նույն տեղում:*

Թուրքական սահմանի վրա գտնվելն էր: Ի դեպ, Ալաշկերտի և Հարևան շրջանների հայաթափմամբ շահագրգռված էր նաև Ռուսաստանը, և պատահական չէ, որ երբ 1916-ին եղեռնից վերապրած ալաշկերտցիները ուզեցին վերադառնալ իրենց գյուղերը, ռուսական հրամանատարությունը թույլ չտվեց:

Հայր Հակոբոս Տաշյանը գրում է, որ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց «Հազիւ քանի մը շաբաթ ետք ... Կարինը դարձեր էր գորշ ու հսկայ մեռելատուն մը: Մահն իր մանգաղը սրած ման եկաւ փողոցներուն մէջ եւ կոտորեց անխնայ: Հազարաւոր զինուորներ մեռան մայթերու վրայ, ուրիշներ՝ փողոցներուն մէջ մնացին սառած»: 1915 թ. «Կարինի մէջ հավաքուած թիւրք գունդերէն ... երրորդ մասը հիւանդացած է,- գրում է Շոյնբեր Ռիխտերը,- եւ ուրիշ երրորդ մաս մըն ալ... դասալիք եղած է»[1]:

Ուրուգվայական «El Dia» թերթը ապրիլի 28-ին գրեց, «Էրզրումում օրական 1000 մարդ է մեռնում տիֆից ու ծաղկախտից: Քաղաքի փողոցներում թափված են անթաղ դիակներ: Շատ տների դռներն այլևս չբացվեցին, որովհետև դրանց բոլոր բնակիչները մեռել էին:

Ռուսները վարանում էին Էրզրումի ուղղությամբ առաջանալ, վախենալով վարակիչ հիվանդություններից, որոնք ավերում էին քաղաքը»:

Սկսած 1914-ի կեսերից, չուրջ 30-35 հազ. հեծյալ և հետևակ համիդիեներ ապրում էին հայերի տներում, իսկ հայ տղամարդկանց տարան զորանոցներ:

Էրզրումի 1914 թ. քաղաքական կյանքի ամենանշանակալից իրադարձություններից մեկը ՀՅ Դաշնակցության 8-րդ համագումարն էր: Դրա մասնակիցներից Վահան Մինախորյանն իր «1915 թուականը: Արհաւիրքի օրեր» հուշերում անդրադառնում է այդ համագումարի աշխատանքներին: Այն բացվեց Էրզրումի դաշնակցական կազմակերպության ակումբում: Համագումարը պետք է քննարկեր ու լուծեր բարենորոգումներին առնչվող մի շարք հարցեր և լսեր տեղական կոմիտեների զեկույցները: «Տխուր փաստերով լի էին այդ զեկուցումները: Բռնագրաւումներ, մասնակի տեղահանութիւններ, անհաշիւ սպանութիւններ... իրաւազրկման այնպիսի դէպքեր, որ առանց կսկիծի՝ անհնար էր լսել»[2]:

Խոսքը 1914 թ. հուլիսի ու դրանից առաջ ընկած ժամանակաշրջանի մասին է, երբ ո՛չ պատերազմ կար և ո՛չ էլ «պատերազմական անհրաժեշտություն»: Թուրքական իշխանությունները պարզապես «կատարում էին» հայկական բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. փետրվարի 6-ի ռուս-թուրքական պայմանագիրը: Պատմությունը կրկնվում էր. Բեռլինի 1878 թ. դաշնագրի 61-րդ հոդվածը ծնեց հայերի «փճացման» զուլումի քաղաքականությունը, իսկ 1914 թ. փետրվարի համաձայնագիրը՝ նորից հայերի «փճացմանն» ուղղված միջոցառումների մի ամբողջ համակարգ: Դա կյանքի էր կոչվելու՝ անկախ սկսվելո՞ւ էր Առաջին աշխարհամարտը, թե՞ ոչ: Պատերազմը պարզապես նպաստեց այդ քաղաքականության կիրառմանը, դրա համար ստեղծեց բարենպաստ պայմաններ:

---

[1] ***Տաշեան Յ.***, *Հայ ազգային տարագրութիւնը գերմանական վավերագիրներուն համեմատ, Վիեննա, 1921, էջ 171-172:*

[1] ***Մինախորեան Վ.***, *1915 թուականը: Արհաւիրքի օրեր, Վենետիկ, 1949, էջ 66:*

Եվ որպես վաղվա չարագույժ իրողություն, համագումարին ցնցեց աշխարհամարտը սկսվելու լուրը և այն հարկադրված էր ամբողջությամբ վերակառուցվել «պատերազմի ոգով»: Դեռ մինչև Թուրքական պատվիրակության երևալը համագումարն սկսեց քննարկել բախտորոշ հարցը՝ ռուս-Թուրքական պատերազմ սկսվելու դեպքում (իսկ ոչ ոք չէր կասկածում, որ դա սկսվել էր), հայությունն ի՞նչ դիրքորոշում էր ունենալու:

Համագումարի մեծամասնությունն այն կարծիքին էր, որ եթե Թուրքիան պատերազմի մեջ մտնի, հայությունը պետք է կատարի իր քաղաքացիական պարտքը: Իսկ եթե Թուրքիան պատերազմի մեջ մտներ Ռուսաստանի՞ հետ: Ինչպիսի՞ն էր լինելու հայության երկու հատվածների կեցվածքը: Մեծամասնությունն այն կարծիքին էր, որ թե՛ արևմտահայությունը և թե՛ կովկասահայությունը պարտավոր էին կատարել իրենց քաղաքացիական պարտքը որպես Ռուսաստանի քաղաքացիներ: Դա նշանակում էր, որ հայ ժողովուրդի երկու գլխավոր հատվածները մի կողմ էին դնում համազգային խնդիրները և ռազմաճակատի երկու կողմերում կռվելու էր միմյանց դեմ՝ հանուն Ռուսաստանի և Թուրքիայի, այլ ոչ թե սեփական ազգային շահերի: «Ժողովականները գիտակցում էին այս դրութիւնից բխող անհեթեթութիւնները: Ջխօսելով եղբայրը եղբօր դէմ հանելու գործնական դժուարութիւնների մասին... կար քիչ առաջ բարենորոգումների չուրջը ծնունդ առած համազգային շարժման հմայքը»[1]:

Ահա թե ինչու համագումարը պառակտվեց: Ոմանք (Հ. Սրվանձտյան, Տ. Խաչիկյան) առաջարկում էին Արևմտյան Հայաստանում ընդհանուր ապստամբություն կազմակերպել, իսկ Ռ. Տեր-Մինասյանն առաջարկեց «կամաւորական գնդեր ստեղծել եւ միանալ թրքական բանակին՝ ռուսների դէմ»[2]:

Համագումարը մերժեց թե՛ մեկ և թե՛ մյուս առաջարկությունները և որոշեց մնալ չեզոքության դիրքերում: Այդ ժամանակ համագումարի պատվիրակների հետ բանակցություններ սկսեցին Բեհաէդդին Շաքիրն ու Նաջին: Նրանց հետ բանակցում էին Ա. Վռամյանը, Ռոստոմն ու Ակնունին: «Քաղաքացիական պարտականությունները բարեխիղճ կատարելու 8-րդ համագումարի որոշումը թուրքերի համար ընդունելի չէր», նրանք պահանջում էին, որ հայերն անվերապահորեն կանգնեն թուրքերի կողքին, հրաժարվեն Հայկական հարցից:

Հայերը մերժեցին թուրքական առաջարկությունը և բանակցությունները ձախողվեցին:

Երկու օր անց ոստիկանությունը պահանջեց համագումարի մասնակիցների ցուցակը, չնայած այն էրզրումում գումարվել էր Թալեաթի առաջարկությամբ:

Դրան հաջորդեցին անսանձ բռնությունները հայերի հանդեպ: «Армянский вестник»-ի 1916 թ. թիվ 44-ում կարդում ենք. «Կառավարական ավազակների խումբը զորքերի համար պարեն հավաքելու պատրվակով մտնում էր հայերի տներն ու այլանդակություններ կատարում: Հայկական գյուղերից քշեցին անասունների ամբողջ հոտեր՝ հայտարարելով, թե դրանք ձեռք են բերվել Ռուսաստանում»: Հիմնարկների դռները փակվեցին հայ հոգևորականների

---

[1] ***Մինախորյան Վ.,*** *նշվ. աշխ., էջ 68:*

[2] *Նույն տեղում, էջ 69:*

և պաշտոնական անձանց առաջ: «Իսկ քիչ անց հայերի դիակներով ծածկված կռվի դաշտում թուրքական զորքերն ու ամբոխը ընկածների արյունով էր հագեցնում ծարավը»:

Հոկտեմբերի սկզբներից սկսած Ալաշկերտում ամեն օր տեղի էին ունենում հայ գործիչների ձերբակալություններ և աքսորներ: Հայերի տներում խուզարկություններ էին կատարվում՝ ցանկանալով սպառնալիքների միջոցով հարկադրել ասելու գոյություն չունեցող ռուս լրտեսների թաքստոցները: Եվ դա՝ մինչև ռուս-թուրքական պատերազմը: Տանը միայնակ մնացած կանայք և ծերերը լրտեսներ թաքցնելու մասին նույնիսկ մտածել չէին կարող: Սակայն կառավարությունը «կասկածում էր» և դա բավական էր, որպեսզի տանջեին ու սպանեին հայերին:

Հայ պաշտոնատարներից մեկն այն հարցին, թե «գյուղերի հայ բնակիչներին վերադարձվելո՞ւ են թալանված ունեցվածքն ու կանանց, որոնց տարել էին համիդիեները», արցունքն աչքերին պատասխանեց. «Պարո՛ն, կառավարությունից որևէ լավ բան մի՛ սպասեք... Իմ հարազատները նույն բախտին են արժանացել: Նրանք մեզ վերջնականապես կխժռեն, լրիվ կոչնչացնեն: Մեր բոլոր դիմումներին ու խնդրանքներին նրանք միայն մի պատասխան ունեն՝ «Հայը, նրա կինը, նրա ունեցվածքը, այդ ամենը պատերազմի համար են»:

Ալաշկերտում, ինչ-որ ժամանակ հայկական հոծ բնակչությամբ գավառում, 1914 թ. մնացել էր 22 հայկական գյուղ: 1914-ի դեկտեմբերի գաղթի օրերին ոչնչացվեց Մոլլա-Սուլեյման և Զեյդկան գյուղերի բնակչությունը:

Այդպես էր վիճակը ոչ միայն Ալաշկերտում, այլ ամբողջ Բասենում, որտեղ հայ բնակչության թիվը 8-10 հազարից չէր անցնում, իսկ հայաբնակ էր մնացել ընդամենը 57 գյուղ: Բասենի առաջին խոշոր արտագաղթը տեղի ունեցավ 1914 թ. նոյեմբերի 22-24-ին՝ կապված ռուսական բանակի նահանջի հետ: Վերին Բասենը դատարկվեց 1915 թ. մայիս-հունիսին:

1915 թ. մարտի 15-ին ռուս դիվանագետ Սերաֆիմովը տեղեկագրեց, որ Էրզրումի մերձակայքի 17 գյուղերից կանգուն են միայն երեքը»[1]:

Ալաշկերտի երեք գյուղերում ոչնչացվեց 490 ընտանիք, ռուսական սահմանն անցան չորս գյուղերի բնակիչները[2]:

1914 թ. սեպտեմբերի 18-ին իշխանություններն սկսեցին զենք բաժանել վիլայեթի մահմեդական ամբողջ բնակչությանը:

Ռուսաստանի փոխհյուպատոսի տեղեկագրերից մեկում նշվում է. 1914 թ. հոկտեմբերին Բայազետում իշխանությունները զինել էին քրեական հանցագործներին՝ հայերին բռնությունների ու հալածանքների ենթարկելու համար: Դրանից խուսափելու համար շատ հայեր արտագաղթեցին: Մեկ ամիս անց ռուսական զորքերը գրավեցին Բայազետը, բայց շուտով այն թողեցին: Ռուսական զորքերի հետ հեռացան մեծ թվով հայեր: «Армянский вестник»-ի թղթակիցը 1914 թ. օգոստոսին լինում է Բայազետում և նշում, որ այդ քաղաքում և գավառի գյուղերում «վիճակն աղետալի էր: Ամբողջ համայնքից մնացել

[1] АВПР, Политархив, д. 3504, л. 19.

[2] "Русские ведомости", 14 апреля 1915 г.

էին միայն կանայք ու երեխաներ... Իրենց գործն սկսեցին նաև Համիդիե գնդերը: Հայկական գյուղերում թագավորում էին բացարձակ կամայականությունն ու ավերածությունը: Քյոփրի-Քեոյի, Յուզվերանի և Վալի-Բաբանի բնակչությունը ենթարկվեց աներևակայելի տանջանքների»[1]:

Թե՛ Բայազետում և թե՛ Ռուսաստանին սահմանակից մյուս շրջաններում 1914 թ. երկրորդ կեսին տեղի ունեցան հայ բնակչության թե՛ արտաքսում, թե՛ խոշտանգումներ և թե՛ զանգվածային սպանություններ: Դա ցեղասպանության թուրքական քաղաքականությունն էր, որը գործողության մեջ դրվել էր պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց և, առավել ևս, Վանի իրադարձություններից ամիսներ առաջ:

Թուրքերը հայերի բռնագաղթի առաջին պատճառը համարում էին ոչ թե Վանի հերոսամարտն ու Զեյթունի ինքնապաշտպանությունը, այլ Սարիղամիշի ճակատամարտը: Սարիղամիշից հետո էր, որ Էնվերի հրամանով հայ զինվորներին զինաթափեցին, իսկ բժիշկներին ձերբակալեցին և կոտորեցին Էրզրում-Երզնկա ճանապարհին:

Գիշերային ժամապահները 1914 թ. հոկտեմբերի 14-ին, այսինքն՝ մինչև Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելը, փոխերեց Հ. Տեր-Մինասյանին տնից դուրս հանեցին և նրա մարմինը մանր մասերի բաժանեցին: Այդպես վարվեցին մեկի հետ, որը չնայած մտահոգություն ուներ, որ հայերը ենթարկվելու էին կողոպուտի ու կոտորածի, երեք ամիս շարունակ իշխանություններին մատուցել էր ամենատարբեր ծառայություններ՝ բանակի կարիքների համար հայերից հավաքել էր հացահատիկ, վարսակ, յուղ, հագուստ: Նրան մեղադրեցին «ռուսների հետ կապի մեջ»: «Ոչ ոք չէր համարձակվում նրա դիակի մնացորդները հավաքել ու թաղել: Միայն երբ ռուսական զորքը գրավեց Ալաշկերտը և ռուս գնդապետի հրամանով հավաքեցին զոհվածների դիակները, թաղեցին նաև Տեր-Մինասյանի դիակը»[2]:

«Ռուսական զորքերը հնարավորություն ունեցան ականատես լինել, թե ինչպես էր մերկ ու սոված հայերի ամբոխը թափառում դաշտերում և ուտելիք փնտրում: Դրանք ավերված հայկական գյուղերի բնակիչներն էին:

Դեկտեմբերյան նահանջից երկու ամիս անց ռուսական զորքերը նորից գրավեցին մի քանի օր առաջ իրենց թողած վայրերը և արդեն ականատես եղան ոչ թե եզակի դիակների, այլ դրանց ամբողջ սարերի եկեղեցիներում ու տներում, որտեղ նրանք ապաստան էին փնտրել թուրքական գաղանություններից փրկվելու համար: Թուրքական զորքերը չէին հանդուրժում ոչ մի հայի գոյությունը: Բնակավայրերից մեկում հայ կանայք չտանելով թուրքական զինվորների կողմից խայտառակությունը, Բիթլիսի չեյխի ներկայությամբ ինքնասպանություն գործեցին: Հայկական Զիթիլան և Մոլլա-Սուլեյման գյուղերում մորթվեց մոտ 40 հայ ընտանիք, սկսած օրորոցի երեխայից մինչև գառամյալ ծերը: Ալաշկերտի բնակչությունը «մի այլ չեյխի ներկայությամբ մոխրի վերածվեց Համիդիե սպաների ու չարքայինների կողմից»: Հրաշքով փրկվեց մի

---

[1] "Армянский вестник", 1916 г., № 44.

[2] Նույն տեղում. տե՛ս Փախստականի հոդվածը:

քանի մարդ, որոնք վկայեցին. «Երբ Թուրքերը ռուսական նահանջից հետո մտան Ալաշկերտ, սպանների գլխավորությամբ կազմակերպեցին հետևյալ թատերական ներկայացումը: Քաղաքի բոլոր հայ կանանց ու աղջիկներին լրիվ մերկացրին, իրար կողքի կանգնեցրին և հերթով բռնաբարեցին, իսկ նրանց ամուսիններին, որոնք ներկա էին, սպանեցին, որից հետո միայն սպանվածների պատվազրկված կանանց ազատ արձակեցին»[1]:

1914-ի նոյեմբեր, դեկտեմբեր և 1915-ի հունվար ամիսներին մամուլում տպագրվեցին բազմաթիվ պաշտոնական և ոչ պաշտոնական հաղորդագրություններ, որոնք հաստատում են, թե հայերի հանդեպ Թուրքական գազանությունները Ալաշկերտում, Բայազետում և Բասենում ծայր էին առել ապրիլյան իրադարձություններից շատ առաջ:

Բայազետ-Էրզրում ճանապարհի երկու կողմերի գյուղերը վերածվել էին ավերակների կույտերի, արտերում բազմաթիվ փոսեր լցված էին Թուրքական զինվորների սպանած հայերի դիակներով[2]:

«El Dia» թերթը 1915 թ. հունվարի 1-ին գրեց, «Էրզրումի կառավարիչը հրամայել է բնակչությանը՝ հեռանալ քաղաքի ռազմական ամրոցների շրջակայքից»:

Ռուս զորահրամանատարներից Է.-ն 1915 թ. հունվարի սկզբներին գրում է Ա. Խատիսյանին. «Հայկական մի չարք գյուղեր, որոնցով մեր հարձակման ընթացքում ես անցա գնդի հետ, տառացիորեն մորթված են: Ահավոր տեսարան էր: Դիակներ, դիակներ, դիակներ... տղամարդիկ, կանայք, կրծքի երեխաներ: Հաշմված, այլանդակված, գազանաբար պղծված: Անհնար է արցունքը զսպել: Միայն Մոլլա-Սուլեյման գյուղում ... ականատեսները թաղեցին ընդհանուր գերեզմանում 13 կին, 14 երեխա, 18 տղամարդ»[3]:

Կարինում կենտրոնացված էր 150.000-անոց մի բանակ, որը նույնպես մատակարարվում էր հայերին կողոպտելու միջոցով: Զինվորների մի մասը տեղավորված էր հայերի տներում ու ձրի ապրում էր նրանց հաշվին: Ով զինվորների «կարիքները հոգալ չէր կարողանում... անարգվում էր: Հրապարակավ գանակոծումը սովորական երևույթ էր»: Հազարավոր փախստականներ հեռանում էին Հայաստանի խորքերը: 100.000 փախստական հասել էր ռուսական սահման: Թուրքերին սպառնում էր խստագույն պատիժ, եթե փորձեին ինչ-որ կերպ պաշտպանել իրենց հայ ծանոթներին[4]:

Ռուսաստանում բնակվող իր համախոհների հետ կապերի համար խոշտանգվեց Վյուջի թեմի առաջնորդը, իսկ ս. Հովհաննեսի վանքի վանահայրը փրկվեց փախչելու, անհետանալու միջոցով:

Այդ պայմաններում օրեցօր ավելի ու ավելի թուլանում էր հայերի քաղաքական կառույցների ազդեցությունը: Խուզարկվում էին հայ պաշտոնատարների տները, նրանց հաճախ էին տնից հանում ու խոշտանգում: Դրությունն

---

[1] *"Армянский вестник", 1916 г., № 44.*

[2] *Նույն տեղում:*

[3] *ՀԱԱ, կոլեկցիոն ֆոնդ, ց. 1, գ. 200, թ. 13:*

[4] *Bryce J., նշվ. աշխ., էջ 237:*

անտանելի դարձավ, երբ թուրքական բանակը ռազմական անհաջողություններ կրեց[1]:

Դեռ հունիսին Կարին էր գնացել Բեհաէդդին Շաքիրը և իր ձեռքը վերցրեց արևելյան նահանգների, առաջին հերթին Էրզրումի վիլայեթի՝ հայության ջարդի նախապատրաստական աշխատանքների ղեկավարությունը:

Ստեղծվեց այդ աշխատանքների կազմակերպման հատուկ մարմին, որի մեջ մտան Բ. Շաքիրը, վալի Թահսինը, Օսմանյան խորհրդարանի անդամ Սեյֆուլլահը, նրա որդի Նեջեթը, Զաֆեր Մուստաֆան, Քիրզա օղլի Ադիլը, Նալչաջ օղլի Հաջին, Աբդուրռահման օղլի Իբրահիմը, Քոթուրճու օղլի Խուլուսին, Մալաթիայի կառավարիչ Ֆուադը, Երզնկայի կառավարիչ Մեհմեդը, քուրդ ցեղապետներ Հաջի Բեդիրը, Զեյնալը և ուրիշներ[2]:

1914 թ. հուլիսի 21-ին Էրզրումի պատերին երևացին կարմիր գույնի հայտարարություններ «սեֆեր-բերլիքի» (ռազմական դրության) մասին: Այս հայտարարությունը պատրաստված էր պատերազմից երկու ամիս առաջ և պահվում էր համապատասխան հիմնարկներում: Հուլիսի 22-ին Էրզրումի ամբողջ հայ բնակչությունը ողբում էր իր վիշտը: Չնայած թուրքական կառավարությունը երեք տարի առաջ հավաստիացրել էր, որ «նկատի ունենալով հայերի զինակոչի ծանրաբեռնվածությունը ռազմական չափից մեծ հարկերով, նրանցից զինակոչի ենթակա են միայն 28-30 տարեկանները», պահանջվեց ներկայանալու 20-45 տարեկան բոլոր հայերը: Նշված ժամկետին չներկայացողներին սպառնում էին մահապատիժով:

Այդ ամենը տեղի էին ունենում ապրիլյան իրադարձություններից 10 ամիս առաջ: Սկսվեց խանութների կողոպուտը: Հայերը պետք է անտրտունջ ականատես լինեին սեփական ունեցվածքի թալանին: Հայոց «առաջնորդարանը լեփլեցուն էր, մասնավորապես գյուղացիներով, որոնք եկել էին իրենց քահանաների գլխավորությամբ: Սարսափելի տեսարան էր: Լացն ու ողբը բռնել էին ամբողջ քաղաքը: Շուտով ստացվեց մի գրություն, որը եկավ կարծես խեղդելու այդ ողբը լացողների կրծքերում»:

Առաջնորդարանում ստացվում էին Էրզրումում այս կամ այն պատճառով գտնվողների անունով հազարավոր հեռագրեր: Խնդրում էին անմիջապես վերադառնալ տուն: «Սակայն, ավա՜ղ, նրանք բոլորը վաղուց ձերբակալված էին թուրքական ժանդարմերիայի կողմից»[3]:

ՀՅԴ 8-րդ համագումարի ելույթներում խոսվեց բռնագրավումների, մասնակի տեղահանումների, անհաշիվ սպանությունների և կյանքի, ունեցվածքի, պատվի վտանգվածության, իրավազրկության այնպիսի դեպքերի մասին, որ առանց ցասման ու կսկիծի անհնար էր լսել: Համագումարը նշեց, որ սպառնացող արհավիրքների հանդեպ հայությունն անզեն էր ու անպաշտպան: Սակայն նաև ակնհայտ էր, որ «Դաշնակցութիւն-Իթթիհատ մեղրալուսինը թուրքը վերահասու էր դարձուցեր հայկական ներքին կեանքին...»[4]: Համագումարը

---

[1] "Армянский вестник", 1916 г., № 44.

[2] **Ակունի Ս.,** Միլիոն մը հայերու ջարդին պատմութիւնը, Կ. Պոլիս, 1921, էջ 138-139:

[3] "Армянский вестник", 1916 г., № 44.

[4] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 442:

գտավ, որ «արեւմտահայութիւնը չպէտք է ապստամբուի, պատերազմին ընթացքին յստակ ազգային խնդիր չպէտք է յարուցանի, իր վրայ ընկնող բոլոր քաղաքացիական պատասխանատուութիւնները պէտք է կատարի բարեխիղճ...»[1]: Կարին եկավ Նաջի բեյի 27 հոգանոց (լազեր, չերքեզներ, պարսիկներ) պատվիրակությունը: Մինչ այդ Թուրքերը համաձայնության էին եկել վրացիների, ադրբեջանցիների և հյուսիսկովկասյան լեռնականների հետ[2]: Սակայն համագումարը մերժեց Թուրքերի առաջարկը՝ համագործակցել իրենց հետ ռուսների դեմ և գտավ, որ հայերը պետք է մնան չեզոք ու բարեխղճությամբ կատարեն օսմանյան և ռուսական հպատակի իրենց պարտականությունները:

Հանրի Բարբին նկատում էր, որ Սարիղամիշի պարտության պատճառը Թուրքերը համարեցին այն, որ «բանակում հայեր կային (սկսած 1915 Թ. մարտից)՝ նրանց զինաթափում և ցրում էին Թիկունքի զանազան քաղաքներ, որտեղ նրանց գործածում էին կա՛մ ամրությունների կառուցման աշխատանքներում և կա՛մ որպես ոստիկան պահակներ՝ Էրզրում-Երզնկա, Դերջան-Տրապիզոն և Երզնկա-Սրվաս ճանապարհները պաշտպանելու համար»:

Ընդ որում մահմեդական մոլեռանդ ագիտատորները քնած չէին: Նրանք Թե՛ բանակին և Թե՛ Թուրք ժողովրդին տրամադրում էին հայերի դեմ: Նման քարոզչության հետևանքն եղավ «հայ մտավորականության կոտորածը: Սակայն մարդատյացների համար այդ քիչ էր: Նրանք ուզում էին ամեն տեսակի զրկանքներով ու բռնություններով հայերին մղել ծայրահեղությունների, բողոք առաջացնել, և դրանք պատրվակ դարձնել նրանց ոչնչացման համար»:

Հայերին հրամայեցին ոչնչացնել 1878 Թ. պատերազմի զոհերի հիշատակին նվիրված և ռուսների կառուցած հուշարձանը[3]: Հետևեց նոր հրաման՝ հայերը պետք է ազատեին իրենց տները, որոնք գործածվելու էին որպես հանգստարաններ ու զինվորական հիվանդանոցներ, իսկ երբ հայերը խնդրեցին այդ չանել, նրանցից պահանջեցին սեփական միջոցներով հոսպիտալ կառուցել: Հայերը համաձայնվեցին և յուրաքանչյուրը վճարեց 50.000 ֆրանկ: Սկսեցին ձևավորվել հակահայկական քարոզչական ու ավազակային խմբեր:

1915 Թ. ապրիլի 18-ին քաղաքից դուրս տեղի ունեցավ մահմեդականների ժողով: Նաջին հայտարարեց՝ քանի դեռ Թեկուզ մեկ հայ կենդանի է, Կիսալուսինը հաղթանակի երես չի տեսնի: ԵրիտԹուրք գործիչ Հիլմի փաշան էր հրահրում հայերին ոչնչացնելու տրամադրությունները: Ահաբեկված հայերը դիմում են 3-րդ բանակի հրամանատար Քյամիլ փաշային: Սա հայ երևելիներին խորհուրդ տվեց կամավոր տեղահանվել, հեռանալ քաղաքից: «Գուցե դա հանգստացնի մահմեդականներին»: Հայերը դիմեցին Գերմանիայի հյուպատոսի օգնությանը: Պատասխանը եղավ. «Կատարվածի համար ձե՛զ մեղադրեք: Ձեր հանդեպ Թուրքերի վերաբերմունքը տրամաբանական է»[4]:

---

[1] **Մինախորյան Վ.**, նշվ. աշխ., էջ 71:

[2] **Անտոնեան Ա.**, Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները եւ Թալէաթ փաշան, Ե., 1990, էջ 118-120:

[3] **Բարթ Ա.**, նշվ. աշխ., էջ 2:

[4] Նույն տեղում, էջ 3:

Ապրիլի 31-ին երիտթուրքերի տեղական կոմիտեն նոր հանրահավաք անցկացրեց, որտեղ հայերը հռչակվեցին «թշնամի, դավաճան և թուրքական կայսրութեան քայքայումին բաղձացող... Մահմեդական խուժանին տրվեցին խստագույն հրահանգներ և սպառնալիքներ տեղական այն բոլոր թուրքերին, որոնք պիտի համարձակվեին նվազագույն պաշտպանություն ու օգնություն տալ իրենց հայ բարեկամներին»[1]:

Նման մի ժողով էլ տեղի ունեցավ մայիսին քաղաքից դուրս՝ Փաշա Քեոշքը անունը կրող վայրում: Դրան մասնակցած մի թուրք պատմել է, որ ժողովին ներկա էր 10.000-ից ավելի մարդ: Վալին՝ Թահսինը, ասաց. «Հայերը մեր ձեռքէն Վանը խլեցին եւ յանձնեցին մեր թշնամիին... Որտեղ հայ կայ, հոն վտանգ կայ Վանայ տխուր իրականութեան կրկնումին»: Ապա փաշան հարցրեց ամբոխին՝ ինչպե՞ս վարվել հայերի հետ: «Բոլոր ժողովուրդը պոռացին. «Կոտորենք, ոչնչացնենք կեավուրներուն»: Ելույթ ունեցողներից Սեֆիրն ասաց. «Մենք 1895-1896-ին խնայեցինք երեխաներուն եւ որքան սխալուեցանք: Մեր խնայած այդ երեխաները այսօր մեծցան, իբր կամաւոր, մեր դէմ կապար կը նետեն, մեզ կը կոտորեն. Վանը կ'առնեն մեր ձեռքէն...»: Հանրահաւաքը միաձայն վճռեց անխնայ կոտորել հայերուն... Բանաձեւը ստիպողական հեռագրով կը ծանուցուի Պոլիս»[2]:

Մի ուրիշ թուրք էլ պատմել է, թե Էրզրումում զինվոր էր, երբ բանակում հայերին առանձնացրեցին ու «զինաթափ ընելով մեզի գնդակահարել տուին»: Երբ սկսվեցին ձերբակալությունները «չատերը փախած էին: Շուներով զանոնք կը հալածէինք լեռներուն վրայ եւ բռնելով կը սպաննէինք»[3]:

Հ. Ֆիրբյուխերը պատմում է Էրզրումում կազմակերպված հրոսակախմբերի մասին, որոնք «սարսափելի խոշտանգումների էին ենթարկում այն հայերին, որոնց կասկածում էին զենք պահելու մեջ: Մի հայ տղամարդու այնպես ծեծեցին, որ այլևս քայլել չէր կարողանում: Բանտում աքցաններով քաշեցին նրա ատամները և մազերը:

Գյուղերում հայերին կոտանքների էին ենթարկում և հարկադրում քրդերից զենքեր գնել ու հանձնել: Մոլլահ գյուղի գյուղացիներին դաժանորեն ծեծեցին ու նետեցին գետը: Եկեղեցում պատարագը կանգնեցրին ու քահանային խոշտանգեցին: Կտրեցին մի գյուղացու երկու մատները: Եթե ամուսինը պահանջված տեղեկատվությունը չէր տալիս, կնոջը բռնաբարում էին[4]:

Էրզրումում ԱՄՆ-ի հյուպատոս Սթեփբլտոնը և ամերիկյան հիվանդանոցի տնօրեն Քեյսը վկայել են, որ վիլայեթի իշխանությունները թուրքերին հայերի դեմ ավելի գրգռելու նպատակով հայտարարեցին, թե Էրզրումից օսմանյան խորհրդարանի երեսփոխան Գարեգին Բաստրմաջյանը (Արմեն Գարոն) կռվում է ռուսական բանակի կազմում: Դրան հետևեց Ա. Գարոյի եղբոր ահաբեկումը[5]:

---

[1] **Bryce J.**, նշվ. աշխ., էջ 237:

[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 632, թ. 17-18:

[3] **Քոչեան Ա.**, Կարմիր դրուագներ հերոսներու կեանքէն. 1915-1918, Հ. Ա, Պուքրէշ, 1938, էջ 101-106:

[4] **Фирбюхер Г.**, Армения 1915, Уничтожение Турцией культурного народа, Е., 1991, с. 50-51.

[5] "Кавказское слово", 6, 9 и 17-го марта 1916 г.

Այդ առնչությամբ Լեփսիուսը գրում է. «Արդեն պատերազմի սկզբներից Էրզրումի վիլայեթից հյուպատոսությունները բողոքներ էին ստանում թուրքական ժանդարմների ու չեթեների կատարած կողոպուտների և հայ գյուղացիների նկատմամբ նրանց բռնությունների մասին: Այդ բռնությունների հեղինակները գավառային քաղաքների իթթիհադական ակումբներն էին: Փետրվարի 10-ին Էրզրումի օսմանյան բանկի տնօրենի հայ տեղակալը դավադրաբար սպանվեց: Սպանողները հայտնի էին, բայց չձերբակալվեցին»:

Նույն խնդրի մասին գերմանացի սպա Շտանգեն 1915 թ. օգոստոսի 23-ին գրում է. «...Այս տարվա փետրվարի 10-ին երեկոյան ժամը 6.00-ին մարդաշատ փողոցում սպանեցին 2-րդ օսմանյան բանկի տնօրենին... Այժմ արդեն ակնհայտ է՝ սպանությունը բացառապես քաղաքական նպատակներ էր հետապնդել: Նույն օրը Երզնկայում սպանեցին հայ եպիսկոպոսի»[1]:

Քիչ անց քաղաքի կայազորում ծառայող հայ զինվորներին զինաթափեցին և ուղարկեցին սնագործ աշխատանքի: Նույն ժամանակ Կարին-Երզնկա ճանապարհի շինարարության վրա աշխատող հայ զինվորներից ամեն օր 200-300 հոգի պակասում էր: Նրանց հանձնում էին Բ. Շաքիրի ավազակներին պատճառաբանելով, թե կրակել են «իրենց թուրք ընկերների վրա»: Դա, իհարկե, զրպարտություն էր այն պարզ պատճառով, որ հայ զինվորները զենք չունեին: Կարինի բերդապահ զորքի հրամանատարը մայիսի 9-ին հայտարարեց. «...Անկարելի է, որ հայ զինուորները իրենց թիւրք ընկերներու վրայ կրակած ըլլան. հայերը միշտ ճակատին ետեւը կը գործածուին»[2]:

Նորից առաջ քաշվեց հայերի մեծ տները ռազմական և այլ նպատակներով օգտագործելու խնդիրը: Քաղաքի տասն ամենահարուստ հայերից պահանջեցին ազատել իրենց տները: Ձերբակալությունից խուսափելու համար վերջինները 1.5 միլիոն լիրա փրկագին վճարեցին: Բայց ապարդյուն, որովհետև մի շաբաթ անց աքսորվեցին և իշխանությունները տիրացան նրանց ունեցվածքին:

Քաղաքում ստեղծվեց անորոշ, հեղձուցիչ մթնոլորտ: Կարինի հայության վիճակի վատացմանը նպաստեց Իթթիհադի և ՀՅ դաշնակցության միջև Էրզրումում ընթացող բանակցությունների ձախողվելը: Իսկ երբ Անտանտի պետությունների հյուպատոսները պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու հետևանքով հեռացան քաղաքից, հայերի հանդեպ վերաբերմունքը վերածվեց վայրագությունների: Նոյեմբերի 20-ին կախաղան հանեցին ռուսական հյուպատոսարանում աշխատող երեք հայի, իսկ անգլիական և ֆրանսիական հյուպատոսարաններում աշխատող հայերին բանտ նետեցին:

Թուրքերը մինչ այդ հայերի բնաջնջման մասին չչնջում էին, իսկ պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուց հետո նման խոսակցությունները դարձան բացահայտ ու առօրյա:

Նոյեմբերի 20-ին «ճամբորդական նպատակների համար» բռնագրավեցին հայերի անասունները (ձի, ջորի, եզ, ցուլ), ինչպես նաև փոխադրամիջոցները: Գյուղացին մնաց առանց քաշող ուժի[3]: Օր չէր անցնում, որ մի քանի հայ բանտ

---

[1] "Армянский вестник", 10 марта, 1992 г.

[2] **Տաշեան Յ.,** նշվ. աշխ., էջ 10:

[3] «Արարատ», Լոնդոն, 1914 թ., էջ 83:

չնետվեր ամենաչնչին պատրվակներով, անգամ՝ առանց պատրվակի: Ծեծը, խոշտանգումները, բռնաբարությունները, սպանությունները, կախաղանները սովորական դարձան, մանավանդ, որ գենքերը հավաքելու գործը հաջողություն չէր արձանագրում:

Բացարձակապես ակնհայտ էր, որ հայերի հանդեպ բռնությունների սաստկացումը ոչ թե մահմեդական զանգվածի մոլեռանդության պոռթկում էր, այլ՝ ծրագրված էր և կազմակերպված իշխանությունների կողմից:

Էրզրումում կառուցվող երիտթուրքական ակումբի մասին Թեհլիրյանը պատմում է, որ դա մի կիսակառույց էր հայկական գերեզմանատան կողքին և «կոչուած էր լինելու իթթիհատականների ամենամեծ ակումբը, խաղասրահներով, մարգանքի բաժիններով, լիճով, ճեմելիքներով եւ այլն... Շէնքի երկու մեթրաչափ պատերը կառուցուած էին հայկական գերեզմանատունէն բերուած տապանաքարերով»[1]:

Ի դեպ, որոշ աղբյուրների վկայությամբ, բռնագաղթից հետո քաղաքում բացի հայ արհեստավորների 20-22 ընտանիքներից մնացել էին նաև 50 որմնադիրներ, որոնց հարկադրեցին հայկական գերեզմանաքարերով և խաչքարերով, ինչպես նաև եկեղեցիների սրբատաշ քարերով կառուցել այդ ակումբը: Շինարարության ավարտից հետո նրանց նույնպես ոչնչացրեցին:

Ատրպետը «Армянский вестник»-ի 1916 թ. № 25-ում հրապարակեց Էրզրումի հայ գյուղացիների պատմածները զորահավաքի մասին: Զորակոչվում էին 17-50 տարեկան բոլոր տղամարդիկ, բացի նրանցից, որոնք բեղել էին վճարում: Գյուղացիները վաճառում էին ամեն ինչ՝ այդ գումարը հավաքելու համար:

Մի քանի ամիս անց ժանդարմները լցվեցին գյուղերը բանակի կարիքների համար «նվիրատվություններ» հավաքելու: Գյուղացուց խլում էին ինչ ցանկանային, և որևէ մեկն ընդդիմանալ չէր կարող:

Հինգից վեց օր գյուղը վերածվում էր «նվիրատվությունների» հավաքման դժոխքի: Ոչ քիչ դեպքերում նույն գյուղից «նվիրատվություն» հավաքում էին մեկից ավելի անգամներ: Օրինակ, Քրդաշենի գյուղացիներին լրիվ կողոպտելուց հետո ժանդարմները հեռացան, և հայերը կարծեցին, թե դրանով պետական կողոպուտն ավարտվեց: Բայց ոչ: Հենց Թուրքիան պատերազմի մեջ մտավ՝ մի քանի տասնյակ ժանդարմներ նորից լցվեցին գյուղը:

Քաղաքում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ հայ կար, բայց հայկական կյանք՝ ոչ:

Բուլղարական «Болгарская трибуна» թերթի թղթակիցը 1915 թ. մայիսի 13-ին Էրզրումից հաղորդել է. «Բասենի չրջանը վերածվել է անապատի: Որոշ գյուղերում կենդանի մնացած բնակիչները տեղահանված և աքսորված են դեպի երկրի խորքերը: Երեկ սկսվեց նահանգի նաև բոլոր գյուղերի հայերի տեղահանությունը: Կ. Պոլսից տրված կարգադրությունները ... պարտադիր են ամբողջ գավառի համար»: Երեք օր անց նույն թղթակիցը գրեց. «Ավելի քան 15.000 հայ Էրզրումի դաշտի գյուղերից աքսորված են կայսրության խորքերը...

---

[1] ***Թեհլիրեան Ս.,*** *Վերյիշումներ. Թալէաթի ահաբեկումը, Գահիրէ, 1956, էջ 83:*

Լքված գյուղերը թալանված կամ բնակեցված են թուրք գաղթականներով, որոնք ամեն տեսակի բռնություն գործադրելու ազատ են: Գաղթի ճանապարհին հայերը թալանվում են Իթթիհատի կազմակերպած ավազակախմբերի կողմից... Նահանգի ողջ բնակչությունը կոտորվելու է... Մի մայր հուսահատության պահին իր նորածին երեխային գցել է Եփրատը: Իթթիհադական շատ ղեկավարներ (Հիլմի, Բ. Շաքիր, Սեյֆուլլահ) ... Էրզրում եկան կազմակերպված ավազակախմբերով: Նահանգապետ Թահսին բեյը ... հայտարարում է, թե հրամանը տրված է Կ. Պոլսից»: Չորս օր անց բուլղարացի դիվանագետ Կոլուչևը գրեց. «Հայերին կոտորելը վերջնականապես վճռված է»: Ռուս զինվորին նվիրված հուշարձանի քանդումը գլխավորում են ոստիկանները, փողոցներում հայերին բռնում ու տանում են հայոց գերեզմանատան մատուռն ավերելու: Նրանց վիրավորում են, ծեծում և այդ ամենն արվում է «ժողովրդին գրգռելու» և ինչ-որ գործողության մղելու դիտավորությամբ, որը պատրվակ է դարձվելու «ջարդերը սկսելու համար»: Մայիսի 25-ին բուլղարացի դիվանագետը գրեց. «Երզնկայի, Քղիի և Բայբուրդի շրջանները դարձել են անմարդաբնակ՝ հայ բնակչության բռնի տեղահանության պատճառով»: Խիստ հրաման ստացվեց, որ հայերը թողնեն Էրզրում քաղաքը[1]:

Երբ «Էրզրումում զորահանդես էր անցկացվում, գերմանացի սպաները հայերի գենքերը վերցնում էին» և նրանց ուղարկում տաժանակիր աշխատանքի, իսկ վերջում բոլորին կոտորում: «Նամարդ թշնամին այս ձևով ոչնչացրեց մեր մարտական ուժերը...»: Ականատեսի վկայությամբ՝ միայն 2000 հոգու հաջողվեց ճեղքել ռազմաճակատային գիծը և անցնել ռուսների կողմը[2]:

Քաղաքի հայ բնակչությունը պաշարողական դրության մեջ էր, տնից դուրս գալը նրանց համար անվտանգ չէր, Էրզրումը, բառի իսկական իմաստով, վերածվել էր վիթխարի զորանոցի: Այնտեղ կուտակված էին հսկայական զինվորական ուժեր, որոնք ուղարկվում էին ռազմաճակատ: Մարդկային այդ զանգվածը սնվում (ոչ քիչ դեպքերում՝ նաև հագնվում) էր հայ գյուղացու, հայ մարդու հաշվին:

Կարինում և գավառական այլ քաղաքներում պետական և անձնական չենքերը խճճված են ինքնակոչիկներով,- պատմում է ժամանակակիցը: «Զորակայաններու չուրջ կարելի է տեսնել 18-65 տարեկան մարդեր, որոնց տխեղծ դեմքերէն յայտնի է, որ կա՛մ վատ սնունդէ եւ կա՛մ ալ սնունդի պակասէն կը տառապին: Կ՚ըսեն թէ անոնցմէ շատեր կոյր, կաղ, կամ ձեւով մը պակասաւոր են»: Զինվորներից շատերը կոշիկ չունեին, բոբիկ էին և քրջերի մեջ: Ո՛չ անկողին կար և ո՛չ էլ ճաշ: «Զինուորական իշխանութիւնները կը պահանջեն, որ զորակոչիկներն իրենք հայթայթեն իրենց զգեստն ու հինգ օրուան սնունդը»: Եվ՝ հայը թալանվում էր: «Անոնք, որոնք իրենց պէտքերը չեն կրնար հոգալ՝ կ՚ա-նարգուէին սպաներու կողմէ: Ընդհանուրին առջև գանակոծումը սովորական է»[3]:

---

[1] *Геноцид над армеництите..., ф. 321, оп. 1, д. 2462, л. 76.*

[2] *"Армянский вестник", 1917, № 7.*

[3] ***Տէրտէրեան Ի.,** Հայկական գոյամարտ, Թեհրան, 1957, էջ 233:*

Չնայած այդ ամենին՝ «Էրզրումի վիլայեթի գորակոչին ամբողջ հայերը ընդառաջ գացին. բոլոր տեսակի պետական ու արտակարգ զինուորական տուրքեր տալիս էին, տանում ամեն տեսակի զրկանքներ ու հարստահարութիւններ, հրաժարւում որեւէ, թէկուզ արդարացի, ընդդիմութիւնից եւ դիմադրութիւնից»[1]:

Դրությունն է՛լ ավելի ծանրացավ, երբ սկսեցին Էրզրում բերել վիրավորներին: Նրանց հետ քաղաք մտավ նաև ժանտախտը: Մի քանի շաբաթ անց Էրզրումը նմանվեց մեռելատան: Հազարավոր զինվորներ մեռան փողոցներում, հանգեցին բազմաթիվ օջախներ, հիվանդություններից ու ցրտից մեռածների թիվը 1915-ի սկզբին հասավ 10 հազարի: Էրզրումում եղած բանակի կազմի 1/3-ը,- հունիսի 2-ին գրում է Գերմանիայի հյուպատոսը իր դեսպանին,- հիվանդացել է, իսկ 1/3-ն էլ՝ դասալիք է[2]:

Գարնան սկզբին թուրքական բռնություններն անհավատալի չափերի հասան: Բ. Շաքիրի ուժերն առաջին ծանր հարվածը հասցրին Տուիկ, Պազիչին, Թարղունի, Հինձկ, Ձիթոն գյուղերին: Հայերի գանգատին Կարինի բերդի գերմանացի հրամանատար Պոսսելթ փաշան արձագանքեց՝ անմիջապես զինաթափել բոլոր հայ զինվորներին, նրանց ռազմաճակատից հետ բերել և ճանապարհաշինարարական աշխատանքներում օգտագործել[3]:

Լուրեր էին տարածվում, թե Ադանայում հայերն ապստամբել էին: Մթնոլորտը չիկացած էր: Պոլսից ժամանեցին պատվիրակներ Ջեմալն ու Սեյֆուլլահն, և վալի Թահսինի բնակարանում խորհրդակցություն ունեցան: Պատվիրակները պահանջեցին անմիջապես սկսել ջարդերը, իսկ Թահսինը երկմտում էր և առաջարկեց ժամկետների հարցը որոշել մի անգամ ևս Պոլսի հետ խորհրդակցելուց հետո: Որոշվեց նախ լրիվ զինաթափել հայ բնակչությանը: Էրզրումի վիլայեթի հայության բռնագաղթի վերաբերյալ գաղտնի հրամանն ստացվել էր մայիսի 5-ին: Մենք ձեռքի տակ վկայություն չունենք, բայց համոզված ենք, որ այդ հրամանը բերել էին նշված երկու երիտթուրք գործիչները, քանի որ մյուս նահանգներում, համենայն դեպս դրանց մեծ մասում, տեղահանության հրամանները բերում էին Իթթիհադի պատասխանատու քարտուղարը կամ Իթթիհադի կենտրոնի ներկայացուցիչը: Սեյֆուլլահն ու Ջեմալը նման ներկայացուցիչներ էին: Սկսվեցին ձերբակալությունները, որոնք փորձնական նշանակություն ունեին, և ձերբակալվածների հիմնական մասը մի շաբաթ անց ազատ արձակվեց: Որոշվեց նրանցից 30 հոգու աքսորել և, ինչպես նկատում է Գերմանիայի հյուպատոսը, «անկարելի չէ, որ ասոնք ճամբան սպաննուին»[4]: Էրզրում հասան նաև Բաբերդում տեղի ունեցած ձերբակալությունների լուրերը՝ եպիսկոպոսի հետ ութ հոգու մայիսի 15-ին տարել էին Ուրղաջի օղլու դերե վայրը և խողխողել: Հայտարարեցին, թե «անոնք դաւաճաններ էին... թշնամիին դրամ էին ղրկեր և աշխատեր ժողովուրդը ըմբոստու-

---

[1] **Ռուբեն,** նշվ. աշխ., էջ 89:
[2] **Տաշեան Յ.,** նշվ. աշխ., էջ 171-172:
[3] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 222:
[4] **Տաշեան Յ.,** նշվ. աշխ., էջ 11:

թեան մղելու»: Ինչ վերաբերում է մնացած հայերին, ապա «նրանք վախենալու պատճառ չունեն»[1]:

Մայիսի 4-ին հասավ Վանի անկման լուրը, իսկ ռուսական բանակը սրընթաց առաջ էր շարժվում, քանի որ թուրքերը փախչում էին առանց դիմադրություն ցույց տալու և ինչպես Սթեփըլտոնն է նկատում, այլևս բանակ չկար, այն վերածվել էր համազգեստ կրող թուրքական ու քրդական խուժանի: Ահա այդ ավազակախումբը մայիսի 19-ին կոտորեց Խնուսի հայությանը[2]: Նույն ժամանակ տեղահանվեցին Մանազկերտի ու Բաղեշի 38 գյուղեր, որոնց բնակչությանն ուղարկեցին Կարին: Այդ տարագիրներին հարկադրեցին մնալ քաղաքից դուրս, ցրտին ու անձրևի տակ, իսկ տասը օր անց քշեցին Երզնկա և ոչնչացրեցին: «Մեզի համար վատթարագոյնը,- կարդում ենք ամերիկյան օգնության կոմիտեի տեղեկագրում,- եւ ամենաաներեւակայելի սարսափները վերապահուած էին (Արեւմտեան) Եփրատի եզերքներու վրայ և Երզնկայի դաշտին մէջ,- պատմում է մի հայուհի,- կիներու, աղջիկներու եւ մանուկներու յօշոտուած մարմիններ սարսռեցուցին բոլորը: Զեթէները ամեն տեսակի սարսափելի արարքներու ենթարկեցին մեզի հետ եղող կիներուն եւ աղջիկներուն, որոնց աղաղակները երկինք կը հասնէին: Եփրատի մոտ չեթէները եւ ոստիկան զինուորները գետը նետեցին տասնհինգէն վար մնացեալ բոլոր մանուկները: Անոնք, որոնք կրնային լողալ՝ գնդակահարուեցան...»[3]:

Մայիսի 26-ին Կարինում բռնում էին պատահած մարդուն, պատահած վայրում: Ջերբակալություններն սկսվեցին մայր եկեղեցու մերձակայքի շուկայում: Մինչև ճաշ շուկայում եղած բոլոր հայերը ձերբակալված էին: Ապա անցան թաղից թաղ և կողոպտեցին: Սրբապղծվեցին անգամ մեռելները:

Հաջորդ մի քանի օրը խաղաղ անցավ, քանի որ ջարդարարներն զբաղված էին Խնուսով: Կարինահայերը չէին հավատում, որ իրենք նույն բախտին էին արժանանալու, որովհետև նախ մեծաթիվ էին, և ապա Կարինը Թուրքիայի արևելյան մայրաքաղաքն էր: Տեղի վերնախավի մի մասը առաջնորդ Սմբատ արք. Սաադեթյանի գլխավորությամբ գտնում էր, որ աղետից հնարավոր է խուսափել իշխանություններին սիրաշահելու միջոցով:

Մայիսի վերջերին առաջնորդին կանչեցին կառավարչի մոտ, որն ասաց, թե քաղաքական ու սոցիալական նկատառումներով ստիպված է 170 հայ երևելիների ուղարկել Երզնկա: Ուղարկվողների ցուցակը կազմելու էր առաջնորդարանը: Առաջնորդարանում գումարված ժողովը պառակտվեց: Երիտասարդությունը պահանջեց ինքնապաշտպանության կանգնել: Սակայն այդ առաջարկությունը չանցավ: Ժողովը համաձայնվեց կատարել կուսակալի պահանջը պայմանով, որ երաշխավորվի այդ 170-ի կյանքի և ունեցվածքի անվտանգությունը: Տասն օր տրված ժամկետի ավարտին ճամփա հանվեց 50 առևտրական իրենց ընտանիքներով ու շարժական ունեցվածքով: Նրանց ժանդարմները

---

[1] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 244:

[2] Նույն տեղում, էջ 222-223:

[3] **Toynbee A.,** Armenian Atrocities, The Murder of a Nation. With a Speech Delivered by Lord Bryce, London, 1916, p. 11: Տե՛ս «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 1012:

օղակի մեջ առած տարան Խարբերդի ուղղությամբ: Դրան հաջորդեց 160 հոգանոց խումբը, որին տարան Երզնկայի ուղղությամբ: Խաբեությամբ ճանապարհ հանեցին ևս 300 հայ հարուստ ընտանիքների և Մուշի ու Քղիի վրայով քշեցին դեպի Բալու: Ճանապարհին նրանց մորթեցին ու կողոպտեցին, քարավանի միայն 10 տոկոսը հասավ Ուրֆա: Այս քարավանի հետ պատահածի մասին 1918 թ. դեկտեմբերի 14-ին Մյունիրը՝ Էրզրումի նոր վալին, հեռագրեց. «Կարինէն Քղիի ճամբով ղրկուած հարուստներու կարաւանը սպաննուեցաւ եւ կողոպտուեցաւ Իթթիհատի ընդհանուր կեդրոնի անդամներէն Պ. Շաքիր պէյի կազմած չեթէներու եւ տերսիմցիներու կողմէ»[1]:

Չեթեներին օգնեցին Երզնկայի իթթիհադական պատվիրակ Մեջիդը, դեղագործ Մահմեդը և օսմ. խորհրդարանի անդամ Խալեդը[2]:

Ժամանակակիցներից մեկը գրում է, որ հունիսի 4-ին Կարինի դաշտի 100 հայկական գյուղերից պահանջեցին երկու ժամ անց ճանապարհ ելնել: Երկու օր անց ուղարկվեց երկրորդ քարավանը: Թե՛ առաջին և թե՛ երկրորդ քարավանները ջարդվեցին ճանապարհին: Նույն օրերին Բարձր Դուռը հայտարարեց՝ «բացարձակ սուտ է, թե հայերի սպանություններ ու ջարդեր են տեղի ունեցել»: Մինչդեռ Վանգենհայմը Բեռլին գրեց, որ «հայկական տեղահանությունները միայն ռազմական նպատակ չէ, որ հետապնդում էին»:

Ատրպետը «Армянский вестник»-ի 1916 թ. № 114-ում գրում է, որ Էրզրումի նահանգի գյուղաբնակ հայերի տեղահանությունն սկսվեց 1915 թ. մայիսին: «Սկսած Կանից և Մութուրջոյից վերջացրած Կարմիր Վանքով, Բաչկալեով ու Մամախաթունով՝ բոլոր չրջանների հայկական գյուղերի բնակիչներին դուրս հանեցին և 10-20 վերստ հեռավորության վրա մորթեցին»: Խնայեցին միայն գեղեցիկ կանանց, աղջիկներին ու երեխաներին, որպեսզի «դարձնեն իրենց հարեմների զարդեր»: Բռնագրավեցին ազգաբնակչության ոչ միայն ունեցվածքն ու անասունները, այլև չորթեցին բոլոր թանկարժեք իրերը, զարդերը, խոստանալով, որ դրանք հանձնելու դեպքում նրանց կյանքը կխնայվի:

Նույն բանը կատարվեց Կեսքիմի, Նարիմանի, Բասենի, Սպերի, Քղիի, Դերջանի, Բայբուրդի կազաներում:

«Համաձայն նախապես կազմված ընդհանուր պլանի, ամենուրեք նախ ձերբակալեցին երիտասարդներին, խուզարկեցին կանանց, զինաթափեցին բոլորին, ապա միայն տարան անպաշտպան կանանց ու երեխաներին»: Ամենուրեք նույն պատճառաբանությունն է՝ «հեռացնում են լրտես հայերին և հեղափոխական տարրերին»: «Վանի պաշտպանությունը և հայերի ու ռուսների համերաշխ գործողությունները պատրվակ էին կոտորածների համար»: «Կարճ ժամանակում,- գրում է Շտանգեն,- մարդկանց անխղճաբար սեփական տներից, դաշտերից դուրս չպրտեցին, զրկեցին սննդից ու ապրելու բոլոր միջոցներից և ժանդարմների հարվածների տակ քշեցին անջուր անապատներ... Հայերին ուղեկցող զինվորականների թողտվությամբ և օգնությամբ Բարձր Հայքի հայերին ջարդեցին չեթեները, աշիրեթները և դրանց

---

[1] **Անտոնեան Ա.,** *նշվ. աշխ., էջ 291-292:*

[2] **Ակունի Ս.,** *նշվ. աշխ., էջ 148:*

նման թափթփուկները»: Հյուպատոսությունների աշխատակիցները տեսել էին այսուանդին թափված բազմաթիվ դիակներ:

Տեղահանությունն իրականացվեց դաժան, բարբարոս եղանակներով և հանդիսացավ ապօրինության, կամայականության, գազանության օրինակ: «Թուրքական կառավարությունը բան չձեռնարկեց աքսորվողներին օգնելու համար: Բարձրագույն իշխանությունների տրամադրությունները հայտնի էին ժանդարմներին, ովքեր, իրենց հերթին, ամեն ինչ արեցին, հայերին առավելագույն տանջանք ու զրկանք պատճառելու համար: Բռնագաղթն օր օրի ձեռք էր բերում ահագնացող բնույթ...

Շատ հաճախ բռնագաղթի վերաբերյալ հրամանը ստորագրվում էր ուշ երեկոյան և գործադրվում հաջորդ առավոտից...»[1]:

Էրզրումի նահանգում սկզբում տարագրեցին գյուղացիությանը: Երրորդ բանակի հրամանատար Ֆյամիլ փաշայի հրամանով նախ բռնագաղթվեցին Էրզրումից հյուսիս ընկած գյուղերը:

Ռ. Սթեփըլտոնի վկայությամբ «Էրզրումի վիլայեթի հայերին աքսորելու մասին հրամանը տրվել է հունիսի 1-ին, քիչ անց նման հրաման տրվեց նաև Էրզրում քաղաքի հայերի վերաբերյալ»: «Վալին ինձ ասաց,- շարունակում է հյուպատոսը,- կառավարության նպատակը ոչ միայն հայերին աքսորելն էր, այլև տեղափոխելը «ռազմական նկատառումներով»[2]: Այն, որ ոմանք Կարինի գյուղերի բռնագաղթի հրամանի ստացվելը նշում են հունիսի 1-ին, իսկ ուրիշները՝ հունիսի 4-ին հետևանք էր Բասենի բնակչության տարագրության տարբեր ժամանակների՝ Վերին Բասենն ավելի շուտ տարագրվեց:

Նույն հյուպատոսը հունիսի 2-ին հաղորդում է, որ բարձրագույն հրամանատարության հետ իր բանակցությունը որևէ դրական արդյունք չունեցավ:

Կա՞ր արդյոք Էրզրումի վիլայեթում հայկական ապստամբության վտանգ:

Գերմանական ռազմական միսիայի անդամ գեներալ Պոսալթը ապրիլի 26-ին հայտարարել է, որ հայերի վարքը «անբասիր էր»:

ԱՄՆ-ի հյուպատոսը դա հաստատում է և նշում. «Քանի որ այստեղ հայերի խռովություն (ապստամբություն) չի սպասվում, այս սարսափելի և բացառիկ միջոցառումն անհիմն է և վրդովմունք է առաջացնում»:

Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, որի առաջ դեսպանը հարց է բարձրացրել արտաքսման միջոցառումները մեղմելու մասին՝ «չի համաձայնվել», պատճառաբանելով, որ հենց Էրզրումում մայիսի 29-ին գտնվել են հայերին մերկացնող թղթակցություններ, զենքեր և ռումբեր: Այդ մասին դեսպանության հարցումին հյուպատոս Շոյնբեր-Ռիխտերը պատասխանեց. «Էրզրումում և նրա շրջակայքում ռումբեր և նման բաներ չեն գտնվել, դա կարող է հաստատել նաև վալին»:

«Կիլիկիայում և Էրզրումի վիլայեթում,- գրում է Լեփսիուսը,- դեպքերը իրենց հունով ընթացան: Կապ գոյություն չուներ: Թվում էր, թե կայսրության հայ բնակչության դեմ ընդհանուր միջոցառումների մտադրություն չկար:

---

[1] "Голос Армении", 10 марта 1992 г.

[2] **Барби А.**, նշվ. աշխ., էջ 9-10:

Էրզրումի վիլայեթում նույնպես մինչև մայիսի վերջերը ջարդեր տեղի չունեցան, եղան միայն արտաքսումներ...»:

Ռազմական անհրաժեշտության պատճառաբանությամբ Էրզրումի հայկական բոլոր գյուղերը դատարկվեցին կանանցից և երեխաներից, իսկ տղամարդիկ բանակ էին զորակոչվել: Հրամանն արձակել էր 3-րդ բանակի գլխավոր հրամանատար Ֆյամիլ փաշան,- գրում է Լեփսիուսը,- Էրզրումի վալի Թահսին բեյը, որը դեմ էր այդ միջոցառումներին, անզոր գտնվեց: 1915 թվականի մայիսի 18-ին Շոյնբեր-Ռիխտերը հեռագրում է Վանգենհայմին. «Աքսորվող հայերի չրջանում թշվառությունը ծայրաստիճան է: Հազարավոր կանայք և երեխաներ առանց սննդի տեղավորվում են քաղաքի չրջակայքում: Անհիմն աքսորը բուռն զայրույթ է առաջացնում: Թույլ կտա՞ք այդ առթիվ միջոցներ ձեռնարկել...»:

Պատմում է քրդաղեմցի տարագրվածներից մեկը. «...Եկան ժանդարմներ և հրամայեցին պատրաստվել, քանի որ մի քանի օր հետո մեզ արտաքսելու էին մեր գյուղից, իսկ թե ուր՝ չգիտեինք:

... Չնայած սպառնալիքներին, գյուղացիներն սկզբում փորձեցին դիմադրել, սակայն ժանդարմները հայտարարեցին, թե հետագա դիմադրության դեպքում Կիսկիմից զորքեր կգան ու բոլորին կմորթեն:

... Ժանդարմներից մեկը, որին մեր գյուղացիներն անձամբ ճանաչում էին, խորհուրդ տվեց անվտանգության համար մահմեդականություն ընդունել»: Բացի հինգ ընտանիքներից, մյուս բոլորը գյուղի տերտերի գլխավորությամբ երդվեցին մեռնել քրիստոնյա: «Մահմեդականություն ընդունածների թվում էի նաև ես: Մեզ գյուղում թողեցին, իսկ բոլոր քրիստոնյաներին... քշեցին դեպի Երզնկա: Ըստ որում ճանապարհին, բացի գեղեցիկ կանանցից, բոլորին անխղճորեն մորթեցին: Կանանց ժանդարմներն իրար մեջ բաժանեցին:

Մի ամիս անց մեզ ևս տեղափոխեցին և ուղարկեցին Երզնկա: Մի քանի տասնյակ ոսկով գնեցինք ժանդարմներին և հայտնվեցինք ազատության մեջ՝ փախանք Երզնկայից ոչ հեռու գտնվող մի լքված գյուղ: Այստեղ մնացինք մի քանի ամիս քաղցած և մշտական սարսափի տակ, մինչև որ ռուսական զորքերը գրավեցին Երզնկան ու մեզ ազատեցին»[1]:

1915 թ. մայիսին Էրզրումի կուսակալը կանչում է չեթեբաշի Ամրվանլի Էյուբ օղլի Կադիրին և ցույց տալով Կ. Պոլսից եկած հրամանը՝ ասում. «Տեղի հայերին հանձնում եմ քեզ, նրանց անվնաս կհասցնես Քեմախ, այնտեղ բաշիբոզուկները հանկարծակի կհարձակվեն: Դու կձևացնես, թե ուզում ես պաշտպանել հայերին, մի երկու անգամ կկրակես հարձակվողների վրա, ապա կհասկացնես, թե չես կարող գլուխ հանել, կթողնես ու կվերադառնաս»: Փոքր-ինչ մտածելուց հետո Կադիրն ասում է. «Դու ինձ հրամայում ես ձեռներն ու ոտները կապված ոչխարներին և ուլերին սպանդանոց տանել: Այդպիսի դաժանությունը վայել չէ ինձ... Երբեք չեմ համաձայնի ձեռներս կեղտոտել անմեղ մարդկանց արյունով »:

Ռուսները սլանում էին դեպի Կարին: Թուրքերն աշխատում էին այն հայե-

---

[1] *"Армянский вестник", 1916, № 25.*

րից ազատել մինչև ռուսների գալը: Ահա թե ինչու Թահսին փաշան հունիսի 9-ին հայերից պահանջեց հեռանալ քաղաքից: Քաղաքը թողեցին նաև թուրքերն ու հույները: Շոյնբեր-Ռիխտերն իսկույն հասկացավ, որ հայերի համար տեղահանությունը հավասարազոր է ոչնչացման և խնդրեց Վանգենհայմի միջամտությունը: Ստացավ պատասխան՝ գերմանացիներն իրավունք չունեն խառնվելու Թուրքիայի ներքին գործերին:

Իշխանությունները հրաման արձակեցին, որ հայերը քաղաքը թողնեն անմիջապես: Ռ. Սթեփըլտոնի համառ ջանքերի շնորհիվ հաջողվեց գաղթին նախապատրաստվելու համար 15 օր ժամանակ տրամադրել:

Գավառներում կատարված գազանությունները ահաբեկեցին Էրզրումի բնակիչներին, որոնք արդեն զգում էին, որ չուտով հերթն իրենց է հասնելու: Դրա համար էլ շատերն ուզում էին կամավոր հեռանալ Միջագետք կամ այլուր, սակայն կառավարությունը թույլ չտվեց և դատարկ խոստումներով հանգըստացրեց, նրանց զգոնությունը բթացրեց:

«Հունիսի սկզբներին Կ. Պոլսից՝ կենտրոնական կառավարությունից հրաման ստացվեց՝ Էրզրումի բնակչությանը աքսորել Միջագետք:

... Յուրաքանչյուրը մոլորված, միջոցներ էր փնտրում, որպեսզի արյուն և սարսափների երկրից փախչելու միջոցով փրկի իր և իր ընտանիքի կյանքը թուրքի յաթաղանից: Գիշատիչ պաշտոնատարները չորթեցին հայերի տնտեսությունը, նրանց թանկարժեք իրերն ու հողերը որպես պարգև այն բանի, որ նրանց ցույց տվեցին Խարբերդի, Դիարբեքիրի, Մուսայի և Ուրֆայի ճամբան: Իսկ երիտասարդությանն ու մտավորականությանը պարզապես ոչնչացրեցին»[1]:

Արդեն մայիսին քաղաքի հայ երիտասարդությունը ձերբակալվում էր անկախ նրանց քաղաքական կեցվածքից: Բանտերում սկսվեցին թաքուն սպանություններ և ոչնչացվեց ողջ երիտասարդությունը: Թաչխանեի Սարայի և Բերդի բանտերում այդ երիտասարդությունը պարզապես հոշոտվեց:

Դրան հաջորդեց հրամանը քաղաքի ամբողջ հայ բնակչությանը տեղահանելու վերաբերյալ: Վալին հայերին համոզում էր, թե նրանց տեղափոխում է «մի ապահով վայր, որ խուժանը չվնասի»: Ապա պահանջում է տնային իրերը և ունեցվածքը հանձնել կամ պահ տալ: Հայերը գերադասում են զարդերը, թանկարժեք իրերը պահ տալ ԱՄՆ-ի հյուպատոսին, միսիոներական դպրոցին, հայոց եկեղեցուն...[2]:

Էրզրում քաղաքի հայերի առաջին քարավանը մեկնեց հունիսի 16-ին: Քարավանում եղածներից Խարբերդ հասավ մեկ տղամարդ և քառասուն կին: Ամենամեծ քարավանը քաղաքից մեկնեց հունիսի 19-ին: Վերջին քարավանն, այդ թվում հոգևորականները, մեկնեցին հուլիսի 28-ին[3]: Մինչ տարագրվելը քաղաքի հարուստ հայերը հիմնավորապես կողոպտվեցին հատկապես մութեսարիֆ Ռեշիդի, գնդի հրամանատար Համդիի և ոստիկանապետ Աբդուլլայի կողմից:

---

[1] *"Армянский вестник", 1916, № 14.*

[2] *«Մշակ», 9 մարտի 1916 թ.:*

[3] **Барби А.,** *նշվ. աշխ., էջ 9-11:*

Նրանց ավազակաբարո կեցվածքից ոգևորված ամբոխը հարձակվեց հարուստ հայերի տների վրա ու կողոպտեց: Բացում անգամներ քուրդ բեկերը հայ ունևորներից մեծ գումարներ վերցրեցին՝ խոստանալով պաշտպանել նրանց կյանքն ու ընտանիքը, բայց հենց նրանք բռնաբարեցին աղջիկներին, իրար մեջ բաժանեցին կանանց ու երեխաներին: Այդ աղջիկներից մեկի օրագրում նկարագրված է, թե Բալուում քրդերն ինչպես էին խորտակում տարագիրների կացարանների պատերն ու տանում աղջիկներին: Հարյուրավոր երիտասարդ կանայք ու աղջիկներ նետվեցին Արածանի գետը:

Էրզրումի հայ հարուստների և միջին կարողության տեր մարդկանց քարավանը հունիսի 10-ին ճանապարհ ընկավ դեպի Մամախաթուն և Երզնկա: Քարավանը գիշերելու համար ճանապարհին կանգ առավ Թուրքաբնակ գյուղում: Գիշերը քրդերը հարձակվեցին քարավանի վրա՝ սպանեցին, բռնաբարեցին, կենդանի մնացած կանանց ու երեխաներին իրար մեջ բաժանեցին:

Հունիսի 14-ին ճանապարհ ընկավ արհեստավորների քարավանը և նույն բախտին արժանացավ: Հունիսի վերջին քաղաքից հանվեցին որբևայրի կանայք, որբերը, աքսորվածների երեխաները, հաշմանդամները, հիվանդները: Այդ դժբախտներին Քեմախում նույն դաժանությամբ ջարդեցին: Քաղաքում մնաց արհեստավորների 22 ընտանիք, որոնց վեց ամիս չարունակ օրը 18 ժամ աշխատեցնում էին, մինչև որ ռուսները գրավեցին Հասան-Կալեն: Այդ 22 ընտանիքներին տեղահանեցին Ալաշկերտ և 1916 թ. հունվարին մորթեցին: Արհեստավորները մահն ընդունեցին հպարտ, թուրքերին մեղադրեցին գաղանային արարքների համար: Նրանց քարկոծում էին, բայց առանց դրա վրա ուշադրություն դարձնելու, հայերը չարունակում էին մեղադրանքներ տեղալ: Միայն յաթաղանի հարվածները կարողացան նրանց լռեցնել:

2500 հայ ընտանիքներից միայն 22-ը հաջողեց ապաստանել ամերիկյան հյուպատոսարանում:

Կարինի կաթոլիկ հայերի առաջնորդ Հ. Մելիքսեթյանը հունիսի 14-ին գրեց Շոյնբեր–Ռիխտերին. «Ժամերն ու օրերն արդեն վերջանում են և շատ մոտ է այն պահը, երբ այս քաղաքի 20.000 հայ բնակչությունը (չհաշված 30.000 հայ գյուղացիները), անմեղ ու անգետ կատարվածից, գնան կործանվելու, մեռնելու»:

Ուրֆա մեկնելու հրաման ստացած հայ ժողովուրդը կազմված էր մեկ ամսականից մինչև 13 տարեկան երեխաներից, ինչպես նաև չափահաս ու դեռահաս աղջիկներից, կանանցից և որբևայրիներից, յոթանասունից ավելի տարիք ունեցող ծերերից ու հիվանդներից և, վերջապես, ուժասպառ դարձած մարդկանցից և հղի կանանցից:

«Ինչպես երևում է, այս տեղահանությունը տևելու է երեք ամիս: Խեղճ ժողովուրդն ինչպե՞ս է երեք ամիս չարունակ քայլելու անձրևի և արևի կիզիչ ճառագայթների տակ, առանց դրամի, ուտելիքի պաշարի, փոխադրամիջոցի... Տարագրությունը դառնալու է հոգեվարքի տանջանք»[1]:

Կարինի հայության տարագրության վերաբերյալ աղբյուրները համեմա-

[1] R 14088, Ab. 28584.

տարբար չատ են: Դրանց բովանդակությունները հիմնականում համընկնում են: Բայց նաև պարունակում են տարբերություններ, նոր մանրամասներ ու փաստեր:

Ընթերցողին առաջարկում ենք Էրզրումի տեղահանությունների վերաբերյալ վկայությունների ևս մի տարբերակ:

Թահսին փաշան 1915-ի հուլիսի 15-ին հեռագրում է Կ. Պոլիս, «Ֆայիգ անունով յիսնապետ մը յափշտակած է Արապեանի չորս աղջիկները: Յիսնապետ Քեամիլ էֆէնտին ալ գողցած է 1863 ոսկի, 35 բեռ կարասի եւ չատ մեծ քանակութեամբ գոհարեղէն: Դրամի եւ կնոջ համար գործադրուած խայտառակութիւնները ծայրահեղօրէն ամօթալից են եւ հակառակ մարդկութեան:... Պէտք է առաջն առնել այս կացութեան, եւ մանաւանդ վերջ տալ ամեն կողմ Թեչքիլաթի Մախսուսէ անունին տակ գործող չեթէներուն: Խարբերդի կուսակալը կը գրէ, թէ բոլոր ճամբաները լեցուն են կիներու եւ երեխաներու դիակներով, ժամանակ չենք գտներ թաղելու զանոնք: Լաւ կ'ըլլայ եթէ պահենք մեր վեհանձնութիւնը եւ ազգային պատմութիւնը»[1]:

Կարինի վերջին՝ հինգերորդ քարավանը 7000 հոգուց էր և մեկնարկեց հունիսի 18-ին: Այստեղ էին ձերբակալված մտավորականները, ինչպես նաև առաջնորդ Սահակ արք. Սաադեթյանը, Ներսես վարդապետը: Մամախաթունի մոտ բաց դաշտում մտավորականներին ու հոգևորականներին կոտորեցին, իսկ մյուսներին առաջ տարան: Մալաթիայի Ֆրնճըլար վայրում քարավանը վաճառվեց քուրդ Զեյնալ աղային: Ֆրնճըլարի բացատը չրջապատվեց զինված քրդերով: Ով մտներ բացատ՝ բռնվում ու կապվում էր: «Մէկ քանիներ,- գրում է Ղազար,- հազիւ դիմադրութիւն ցոյց տուած, գնդակահար, թոպամահ կամ քարկոծուած ինկան: Կալանաւորներու ընտանիքները գաւազանի հարուածներով եւ հրացանի կոթով ստիպուած կ'ըլլային առաջ շարժուիլ, հեռանալու համար ոճիրի այդ վայրէն: 2-3 ժամուայ մէջ հազարաւոր այր մարդիկ արդէն կապուած էին: Զէյնալը նստած բացատի մը մէջտեղը՝ յանձն կ'առնէր կողոպտուած իրեղէնները, զարդերն ու ոսկիները»[2]: Կանանց ու աղջիկներին ոչ միայն առևանգեցին, այլև առաջին անգամ նկատվեց վերջինների ինքնակամ ամուսնություն թուրքերի ու քրդերի հետ: Այդպիսիներից մեկը գրում է. «Թուրք խնամական կապերը կը սկսէին կապուիլ. հայ կիները սկսան կամաւ իրենց աղջիկները տալ թուրքերուն, ճարահատեալ իրենց ցարդ կրած տառապանքէն:

Յաճախ թուրք փեսայ մը բոլոր ընտանիքը կը տանէր իր հետ... Գեղեցիկ աղջիկներ կը տրուէին տարեց այրերու՝ անոնց երկրորդ կինը ըլլալու համար, դեռահաս աղջիկներ ալ գացին ամուսնանալու»[3]:

Ականատես կինը եզրահանգում է. «Առաջին (սպանութեան) արդիւնքը պիտի ըլլար անհատներու ֆիզիքական մահը, քանի մը հարիւրները կամ հազարները պիտի պակսէին, բայց երկրորդին մէջ կար բարոյական փճացում, ազգային այլասերում, որ չատ աւելի մահացու հարուած պիտի տար ազգին, քան

---

[1] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 285-286:

[2] **Զաբրգ Ղ.,** Յուշամատեան Բարձր Հայքի. Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 479:

[3] Նույն տեղում, էջ 461:

առաջինը: Ֆրնճըլարի դժոխքը հայ ազգին գերեզմանը եղաւ, որովհետեւ ողջը մեռելին խառնուեցաւ ու հայն ալ՝ Թուրքին»[1]:

Քեմախում Եփրատի կամրջի վրա հազարից ավելի երիտասարդներ նահատակվեցին, իսկ 400 երեխաներ կենդանի թաղվեցին հորերի մեջ[2]:

Կարինում մնացին հայ կաթոլիկները, ովքեր վայելում էին Ավստրո-Հունգարիայի հյուպատոսարանի պաշտպանությունը: Սակայն նոյեմբերին, ըստ Սթեփրլտոնի, նրանք էլ տեղահանվեցին: Կառքերով հասցրեցին Երզնկա և ցրեցին տարբեր ուղղություններով: Մի մասը հասավ Պոլիս ու մտավ Ավստրո-Հունգարիայի դեսպանատան պաշտպանության տակ[3], իսկ մի փոքր մասը, ըստ Հիասինթ Սիմոնի, հասավ Միջագետք և Տարաա գյուղում նետվեց Դահրե արքայի կառուցած ջրամբարները, իսկ ով փրկվեց՝ 1915 թ. սեպտեմբերի 22-ին ջարդվեց Խալիլի ներկայությամբ[4]:

Կաթոլիկների մի խումբ էլ գնաց Հալեպ:

Ֆայեզ ալ-Ղուսեյնի նկարագրությամբ՝ այդ խումբը կազմված էր հիմնականում կանանցից՝ «իրենց աղջիկներով եւ քանի մը հիւանդոտ մարդոցմով: Այս դժբախտները ողբալի վիճակի մը մէջ կը գտնուէին, որովհետեւ Էրզրումէն Սրուճ ճանապարհը ոտքով կտրած էին... Իրենց ընկերացող զինուորները ընդհանրապէս զիրենք ամայի տեղեր կ՚առաջնորդէին, ուր զանոնք կը ձգէին առանց ջուրի:

Անոնք, որոնք ծննդաբերութիւն կ՚ունենային ճամբաներու ընթացքին, պէտք է որ լքէին իրենց զաւակները, որովհետև այժ չունէին չալկելու, կամ մնային անապատին մէջ՝ մեռնելու անոնց հետ: Եւ այսպէս, այս դժբախտ զոհերը անգութ քիւրտերու յանձնուեցան, իրենց կեանքն ու պատիւը... Անոնց մէ չատեր նախընտրեցին անձնասպանութիւնը, քան թէ այս քիւրտերուն յանձնուիլ»[5]:

Վատիկանի նվիրակ Հ. Հոֆերը Էրզրումում ականատես լինելով հայերի հալածանքին 1915 թ. հոկտեմբերի 26-ին գրում է. «Տեղահանում (բռնագաղթ) բառը նշանակում է.

1. Լիակատար բաժանում ամուսիններին իրենց կանանցից, մայրերին՝ իրենց երեխաներից: 2. Թուրքերի սպառնալիքներ ու չողոքորթություններ հայերին մղելու հավատափոխության: Հավատափոխվածներին ... անմիջապես տանում են մահմեդական բնակավայրեր, որտեղից այլևս վերադարձ չկա: 3. Այն կանանց, ովքեր իրենց մարմնական հատկանիշներով հարմար են հարեմներին վաճառելու կամ ազնվականների ու պահակների ստոր ցանկությունները բավարարելու համար, առևանգում են: 4. Փոքր աղջիկներին դարձնում են աղախիններ Թուրքերի տներում, ովքեր պարտավոր են այդ երեխաներին տալ համապատասխան մահմեդական կրթություն: Նրանցից ոմանց նույնիսկ Կ. Պոլիս են բերել: Բոլոր քրիստոնյա տղաներին թլպատում և տանում են Թուրքերի տները:

---

[1] ***Փայլաճու Ա.*** *– Գարտանեան Յաւակ, Նիւ Եորք, 1923, էջ 98:*

[2] ***Ակունի Ս.,*** *նշվ. աշխ., էջ 143:*

[3] ***Bryce J.,*** *նշվ. աշխ., էջ 225:*

[4] ***Նազլեան Հ.,*** *Յուշեր: Մերձաւոր Արեւելքի 1914-1918 թթ. չրջանի կրօնական-քաղաքական դէպքերու մասին, Պէյրութ, 1960, էջ 181:*

[5] ***Ղուսեյն Ֆ.,*** *Հերոսական հայութեան անցեալեն, Գահիրէ, 1960, էջ 6:*

Թուրքական հայրենիքի համար մարտնչող հայ զինվորների կանանց ու աղջիկներին հավաքում են թուրքական գյուղերի վրա բաշխելու համար:

Այս ընտրությունը կատարելուց հետո, մնացածներին ստիպում են լքել իրենց ամբողջ ունեցվածքը՝ տները, դրամը և գնալ երկրի խորքերը: Մեծ մասամբ բիրտ ժանդարմների ուղեկցությամբ, առանց հագուստի, նրանց տանում են գյուղից գյուղ, հարթավայրից հարթավայր, դեպի անհայտություն: Տառապանքից ու բաժանման ցավից ցնցված նրանց օրգանիզմն այլևս անկարող է տանելու վատ եղանակն ու զրկանքները և շատերը մեռնում են ճանապարհին: Մյուսներին պարզապես սպանում են»[1]:

Շոյնբեր Ռիխտերը օգոստոսի 5-ին գրեց Վանգենհայմին. «Մինչև մայիսի սկիզբը հայերը այստեղ անվրդով ապրում էին և հնարավորություն ունեին իրենց գործերով զբաղվել: Առանձին դեպքեր, ինչպես, օրինակ, բանկի տնօրեն Բաստրմաջյանի սպանությունը, թվում էին անցողիկ երևույթներ»: Թուրքերից սպասվող ջարդի վախը, սակայն, միշտ էլ կար և հիմք ուներ, բայց հայերին թվում էր, որ գեներալ Պոսալթի, ինչպես նաև գերմանական հյուպատոսի ներկայությունը և գործունեությունը կխոչընդոտեին վայրագությունները:

Մայիսի սկզբին Վանում տեղի ունեցած իրադարձությունները հանգեցրին այն բանին, որ կառավարությունը և ռազմական մարմինները ձեռնարկեցին մեծ և խիստ պատիժներ հայերի նկատմամբ: Հայ զինվորականներին հեռացրեցին բանակից և հարկադրեցին ծառայել աշխատանքային գումարտակներում, Էրզրումի և Բասենի հարթավայրի բնակիչները, որոնք բաղկացած էին կանանցից, երեխաներից և ծեր տղամարդկանցից, քշվեցին իրենց գյուղերից դեպի Միջագետք: «Ռազմական նկատառումներով հիմնավորված այս միջոցառումները անցկացվում են դաժան և ոչ շրջահայաց ձևով»:

Հունիսի սկզբին տարագրվեց Էրզրումի հայ երևելիների առաջին խումբը: Մոտ 500 մարդ հունիսի 13-ին թողեց Էրզրումը և լեռներով Խարբերդի վրայով անցավ Ուրֆա: Նրանցից միայն 14 մարդ ողջ մնաց: «Երկրորդ խումբը, մոտ 3000 մարդ, հունիսի 19-ին և 20-ին թողեց Էրզրումը, Բայբուրդի մոտ նրանց մի մասը, հատկապես տղամարդիկ, խմբից բաժանվեցին... Նրանք պետք է, որ սպանված լինեն: Մյուսները հասել են Երզնկա...»:

Հունիսի 19-ին մեկնած քարավանը պահակախմբին և դրա հրամանատար Քյամիլին վճարեց և առանց լուրջ պատահարի հասավ Քեմախ, որտեղ Քյամիլը 200 հոգու անունները կարդաց ու հայտարարեց, որ նրանք սպանվելու են: Քարավանը հասավ Մալաթիա: Տեղի իշխանությունները հայերից խլեցին 400 վրան: Քարավանը Մալաթիան նոր էր թողել, երբ հետապնդող քրդերը իրենց շեյխերի՝ Հաջի Բադրի և Զեյնալի գլխավորությամբ բոլոր տղամարդկանց (2115 հոգի) հավաքեցին մի փոքր հարթության վրա, իսկ մյուսներին հարկադրեցին առաջանալ: Քրդերը հայ տղամարդկանց ասացին. «Դա կառավարության պահանջն է»: Նրանց կապեցին, ապա մեկառմեկ մոտեցրեցին Զեյնալին: Հայերից ամեն ինչ խլեցին և տասը քայլ այն կողմ բոլորին սպանեցին դանակով ու կա-

[1] Wien, HHSTA PA XII 464. Wien, 26 Oktober 1915.

ցինով: Սպանվեց մոտ 2000 մարդ: Հրաչքով փրկվեց 114 հոգի[1]:

«Արտաքսվածների երրորդ խումբը, մոտ 300 ընտանիք, հունիսի 26-ին թողեց Էրզրումը. նրանք լավ վիճակով տեղ են հասել Երզնկա: Չորրորդ խումբը, մեծ մասամբ արհեստավորների ընտանիքներ, որոնք նախապես կառավարության կողմից ստացել են մնալու թույլտվություն, բայց այդ թույլտվությունը հետագայում բանակի գլխավոր հրամանատարի հրամանով չեղյալ էր հայտարարվել, նույնպես Բայբուրդի վրայով հաջողությամբ հասել էր Երզնկա»: Այսպիսով, մինչև հուլիսի 15-ը համարյա բոլոր հայերը Էրզրումից տարագրվեցին: Միայն քչերը հիվանդության և այլ պատճառներով կառավարությունից ստացել էին մնալու թույլտվություն: «Էրզրումից իմ և վալիի բացակայության ժամանակ այդ թույլտվությունը բանակի գլխավոր հրամանատարի կողմից չեղյալ էր հայտարարվել: Նրանք պետք է կարճ ժամանակում թողնեին Էրզրումը. նրանցից շատերը չեն կարողացել իրենց հետ վերցնել ճանապարհի համար անգամ ամենաանհրաժեշտը»: Վերջին խումբը Ալքալների և Բայբուրդի մոտ մասամբ կողոպտվել էր[2]:

Գերմանացի ղիվանագետի կարծիքով՝ «տարագրման ընթացքում Էրզրումի բնակչության հետ ավելի լավ են վերաբերվել, քան մյուս քաղաքների հայերի հետ: Շնորհիվ վալու ընդառաջելուն և իմ ջանքերով, նրանց ընձեռվեցին հետևյալ դյուրությունները. 1) Մեծ մասին 14 օր ժամանակ տրվեց ճանապարհի նախապատրաստվելու համար, 2) Թույլ տրվեց իրենց հետ իրեր վերցնել ու վաճառել, 3) Վաճառականների մի մասը և վերնախավը հնարավորություն ստացավ ապրանքները և թանկարժեք իրերը հայկական եկեղեցու միջոցով հանձնել օսմանյան բանկի պահպանությանը, 4) Կառավարությունը շատ չքավորների հատկացրեց եղան սայլեր, 5) Այն տղամարդիկ, որոնց ընտանիքները մնացել էին առանց արական սեռի, ազատվեցին աշխատանքային գումարտակներից և իրավունք ստացան ուղեկցելու իրենց ընտանիքներին»:

Էրզրում քաղաքում տարագրությունն սկսվեց մայիսի 15-ին և, ի տարբերություն Կիլիկիայի, անմիջապես լայն ծավալ ընդունեց:

Կարելի է նշել Էրզրումի տարագրության նաև ուրիշ առանձնահատկություններ, սակայն հազիվ թե հնարավոր լինի համաձայնվել գերմանացիների այն թեզի հետ, թե «տարագրության ընթացքում Էրզրումի բնակչությանն ավելի լավ են վերաբերել»: Եվ դա մի պարզ պատճառով, որ ամենամեծաթիվ կորուստներ ունեցել են Էրզրումից բռնագաղթվածների քարավանները: Եթե խոսք է լինում բնակչության ամբողջական ոչնչացման մասին, ապա դա առաջին հերթին վերաբերում է Կարինի հայությանը:

Այսպիսով Էրզրումի վիլայեթի հայության ոչնչացման գործընթացը ներկայացնում է հետևյալ պատկերը: 1914-ի օգոստոսից սկսած բանակ զորակոչվեցին 15-65 տարեկան հայ պատանիներն ու տղամարդիկ: 1915-ի սկզբին հայ զինվորականները զինաթափվեցին, վերածվեցին չինարար բանվորների և մտցվեցին ամելե թաբուրների մեջ: Վիլայեթի քաղաքների ու գյուղերի հայ համայնքներում մնացին միայն կանայք, երեխաներ ու ծերեր: Սկսած 1914 թ.

---

[1] Kons / Ankara, 171, Ab. Zu, № 25-27.

[2] **Lepsius J.,** Berichte, s. 116-121.

հոկտեմբերից հայ ծառայողները պաշտոնաթող արվեցին: 1915-ի ապրիլին ձերբակալվեցին ու ոչնչացվեցին հայ մտավորականության ու հոգևորականության ներկայացուցիչները: Սկսած 1914 թ. երկրորդ կեսից Էրզրումի նահանգի տարբեր մասերում, մասնավորապես արևելյան գավառներում տեղի էին ունենում հայերի արտաքսումներ ու խմբակային սպանություններ:

1915-ի մայիսի կեսերին սկսվեց բռնագաղթը: Դա նախ սկսվեց նահանգի գյուղերում, ինչը Թուրքերն իրականացրին «ամենադաժան եղանակներով» (Շտանգե), որովհետև գյուղերում ժամանակ չտրվեց վերցնելու ճանապարհի համար ամենաանհրաժեշտ բաները:

Ապա սկսվեց քաղաքների հայության բռնագաղթը: Երզնկայից առաջին քարավանը ճանապարհ ելավ հունիսի 7-ին: Միաժամանակ տեղի ունեցան Էրզրումի հայության «փորձնական առաքումները», որոնք այլ բան չէին, եթե ոչ քաղաքի ազդեցիկ դեմքերի բռնագաղթեցում ու ոչնչացում: Էրզրումից քարավաններ ուղարկվեցին հունիսի 7, 8, 9 և 10-ին, այսինքն՝ 20-25 հազ. մարդ: Եվ այդպես մինչև հունիսի կեսերը (Հ. տ.):

Հետևանքն այն եղավ, որ երբ 1916-ին ռուսական բանակը մտավ Կարին, քաղաքի 120.000 հայից մնացել էր չուրջ 200 մարդ[1]:

«New York Times»-ը 1916 թ. մարտի 6-ին գրում է. «Ռուսները Էրզրումում գտան միայն 16 կենդանի հայ 40.000-ի փոխարեն»:

Էրզրումի հայության բռնագաղթի քարավանների մեկնարկների տարեթվերը հուշագրություններում տարբեր են: Ոմանք գտնում էին, որ ամենամեծաթիվը հունիսի 9-ին ուղարկված քարավանի տարագիրների թիվն էր 25.000 մարդ: Քարավանը հունիսի 14-ին թալանվեց, ապա չորս ժամ շարունակ կոտորվեց: Դա Քեմախի մերձակայքում էր: Կոտորածից մազապուրծ Եպրաքսիա Յանդյանը հիշում է. «Ժանդարմները հարևան վրանի տակ գեղանի Արմինեին առևանգելու համար մորթեցին նրա հորը, եղբորը, նրա որդիներին: Արմինեն այլևս չվերադարձավ:

Երկու ժանդարմներ սվինահարելով սպանեցին Ա. Գասպարյանին ու նրա կնոջն առևանգեցին: Երբ վեց տարեկան երեխան լաց էր լինում հոր արյունաթաթախ դիակի վրա, նրա հետույքը մի ձող մտցրեցին և ժողովրդին ցույց տալով բղավեցին. «Ահա ձեր դրոշակը»:

Հաջորդ օրը Արաբկիրի մոտակայքում հայերին վրաններից հանեցին ու քշեցին մի ամայի վայր, որտեղ,- շարունակում է պատմել Ե. Յանրգյանը, «որդուս՝ Լևոնին, մորթեցին դստերս ծնկների վրա, ապա նրան առևանգեցին»:

Մի կին ծննդաբերության ցավերի մեջ էր: Ոստիկանը նորածնին մոր արգանդից դուրս քաշեց և երկու մասի բաժանեց: «Տե՛ս,- ասաց գազանը երեխայի մորը,- երկվորյակ ունեցար»: Քիչ անց ծննդաբերող կինը մեռավ:

«...Թուրքերը մշակեցին պլան,- պատմում է Հ. Բարբին,- Էրզրումի և շրջակայքի ամբողջ հայ բնակչությունը պետք է աքսորվեր Միջագետք: (Դրա) իսկական պատճառն էր՝ ամբողջ հայերին միաժամանակ քաղաքից աքսորելու միջոցով հեշտացնել նրանց բոլորի կոտորածը»:

---

[1] *"Армянский вестник", 1916, № 7.*

Պատրաստվելու համար տրված էր 15 օր: Հայերն իրենց ունեցվածքը լցնում են եկեղեցի և հանձնում ամերիկյան հյուպատոսությանը և ամերիկացի դոկտոր Քեյսին:

1915 թ. հունիսի 16-ի գիշերը զինվորները հայերին տներից հանեցին, երեխաներին ու կանանց բաժանեցին տղամարդկանցից: Փոքր խմբերի բաժանված էրզրումցիները լացով ու կոծով բռնեցին բռնագաղթի երկար ճամփան: Շուտով թույլերը հոգնեցին և ընկնում էին՝ «իրենց մարմնով գծելով քարավանների անցած ուղին»: Սկսվում է սովը, իսկ քիչ անց նաև կոտորածը: «Երևում են քրդերի ավազակախմբերը և գայլի նման նետվում անզենների վրա»: Խլում են կանանց ու աղջիկներին, ինչպես նաև ամրապինդ պատանիներին՝ ստրուկ դարձնելու համար: Մնացածներին մորթում են: Քչերին է հաջողվում փրկվել և ուժասպառ հասնել Քեմախ, որտեղ ևս կոտորած է տեղի ունենում: «Եփրատի ջրերն արդեն այնքան շատ դիակներ են տանում: Տեղ-տեղ դիակները կուտակվելով վերածվում են ամբարտակի և խանգարում գետի ազատ հոսքին»:

Կենդանի մնացածները Մոսուլ են հասնում բացարձակապես առանց ոչնչի, սակայն երբ դիմում են էրզրումի բանկին իրենց դրամը ստանալու, դրանց առաքումն այնքան է քաշքշվում, որ մինչև տեղ էին հասնում, տերերն արդեն քաղցից մեռած էին լինում[1]:

Կոտորածների սկզբում հնարավոր էր փրկվել ընդունելով իսլամը: Կամա թե ակամա ոմանք հրաժարվեցին իրենց կրոնից: Նրանք բոլորն ստացան նոր անուն՝ Աբդուլլահ (գերմանացիների մտահղացումն էր՝ հետագայում կրոնափոխներին իմանալու համար): Սակայն շուտով այդ էլ չէր փրկում: Հայը, անկախ կրոնական պատկանելությունից, աքսորվում էր:

«Սարսափից խելագարված մայրերին դահիճները հարկադրում էին խմելու հենց նոր միայն իրենց աչքի առաջ մորթված փոքրահասակների տաք արյունը: Լկտի դաժանությունը հասնում էր «նրբագեղության»: Բռնագաղթված հայերի խումբը հանդիպեց մի մութեսարիֆի որը «խղճահարությունից դրդված» դարձավ ուղեկցող... Արտաքնապես բարեհամբույր ու բարեհաճ այդ թուրքը խմբին առաջնորդեց դեպի մի նեղ կիրճ, որտեղ հանգիստ և ժպտերես հրամայեց ժանդարմներին բոլորին մորթել»:

Քաղաքում մնացին միայն 50 հայ կոշկակարներ և դերձակներ բանակին սպասարկելու համար: Բայց երբ հարկադրված եղան էրզրումը թողնել նրանց բոլորին (բացի հրաշքով փրկված մի ծերունուց) խեղդեցին: Հայկական եկեղեցին ավերվեց, հայ բնակչության ունեցվածքը կողոպտվեց: Սեպտեմբերի 28-ին հրաման ստացվեց հայերի ունեցվածքն աճուրդի հանելու մասին, որից առաջացած գումարները մուծվեցին պետական գանձարան:

Իսկ գերմանացի սպաներն այդ ամբողջ ժամանակ զբաղված էին խնջույքներ սարքելով: «Հափշտակելով քաղաքի բարեկեցիկ ընտանիքներին պատկանող մի քանի երիտասարդ հայուհիների, գերմանացիները նրանց վերածեցին իրենց քմահաճույքներին հնազանդ ստրուկների: Հետագայում հեռանալով

[1] **Барби А.,** նշվ. աշխ., էջ 3-4:

էրզրումից, այդ դժբախտներին իրենց հետ տարան»:

Պատերազմի նախօրյակին էրզրումում բնակվող 20 հազ. հայից, երբ ռուսները քաղաք մտան, մնացել էր 120-ը՝ հիմնականում կանայք և երեխաներ[1]:

Նրանց փրկել էր Ռ. Սթեփըլտոնը: Վերջինս և ամերիկյան հիվանդանոցի վարիչ Քեյսը պատմում են. «Արդյոք աշխարհում կա՞ն ուրիշ կանայք ու մայրեր, որոնք կրած լինեն այնքան տանջանքներ, որքան հայ կանայք: Նրանց մահը վրա էր հասնում միայն դաժանագույն տանջանքներից, անտանելի զրկանքներից, սարսափելի հուզմունքների անվերջանալի օրերից հետո»: Առանց հանգստի, առանց հացի ու ջրի, արևի այրող ճառագայթների և ուղեկից դահիճների ճիպոտների հարվածների տակ նրանք ձգվում էին Անատոլիայի անապատների միջով, որոնք ծածկված էին նրանց ու երեխաների դիակներով: Այդ ճակատագրից ազատվում էին երիտասարդ կանայք և աղջիկներ, որոնք նախատեսված էին հարեմների, կամ «ավելի վատ հաստատությունների համար»: Ողբերգության հենց սկզբից Փոքր Ասիայում ամենուրեք քաղաքների դարբասների տակ կազմակերպվեցին ստրուկների չուկաներ, որտեղ վաճառվում էին կանայք, աղջիկներ և երեխաներ, որոնք գաղթի ճանապարհին հափշտակվել էին քուրդ ու թուրք ավազակախմբերի կողմից:

Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոսը 1915 թ. հուլիսի 11-ին գրել է.

«Հուլիսի սկզբներին Խարբերդ եկան էրզրումից ու Երզնկայից աքսորվածների առաջին խմբերը՝ քրջերի մեջ, սովյալ, հիվանդ: Նրանք ճանապարհը, մոտ երկու ամիս, անցել էին առանց սննդի ու ջրի: Ծղոտ բերեցին: Նրանք այնքան քաղցած էին, որ ագահությամբ վրա ընկան այդ կերին, սակայն զափթիեները ճիպոտի հարվածներով հեռացրին՝ մի քանի մարդու վերջը տեղում տալով: Մայրերն իրենց երեխաներին առաջարկում էին ցանկացողներին: Թուրքերը բժիշկներ ուղարկեցին աղջիկներին բժշկական քննության ենթարկելու, որպեսզի նրանցից ամենագեղեցիկներին ընտրեին հարեմների համար»:

Հայերի մեծամասնությունը սպանվել էր ճանապարհին քրդերի կողմից, իսկ չատերը մեռել էին սովից ու հյուծվածությունից:

Էրզրումի քարավաններից մեկում էին երեք քույրեր, որոնք խոսում էին անգլերեն: Նրանց ընտանիքի 25 անդամներից 11-ը սպանվել էր ճանապարհին, իսկ արու անդամներից կենդանի էր միայն 8 տարեկան մի տղա:

«Էրզրումից դուրս գալիս բռնագաղթվածներն ունեցել են թե՛ ձի, թե՛ ծանրոցներ և թե՛ դրամ: Սակայն ճանապարհին այդ ամենը նրանցից խլել են, խլել են նույնիսկ նրանց վրա եղած հագուստները, աղջիկներից մեկը լրիվ մերկ էր: Էրզրումի բողոքական քահանայի դուստրը ևս այդ խմբում էր, նրանց ընտանիքի բոլոր անդամներին սպանել էին քուրդ ավազակախմբերը...»: Քարավանում կար վեց երեխա ունեցող մի կին: Հոգնած ու հյուծված այդ կինը երեխաներից երկուսին գրկած էր տանում, իսկ մնացած չորսը քարշ էին գալիս բռնած նրա փեշերից: Երեխաներից մեկն այլևս քայլել չկարողանալով, ընկավ, մայրը թեքվեց դեպի ընկածը, բայց հետևեցին ճիպոտի ուժեղ հարվածները՝

---

[1] **Барби А.,** *նշվ. աշխ., էջ 5-8:*

դահիճները նրան հարկադրեցին առաջ գնալ «գետնին թողնելով իր երեխային, որն, իհարկե, ընկած տեղը մեռավ: Քարավանը դանդաղ առաջ էր գնում, բայց հանկարծ տանջանքի ու սարսափի աղմուկ և անկասելի փախուստ... Լեռներից իջնող քրդերը կրակ բացեցին... Զոհերը ընկնում ու ընկնում էին... Մայրերից մեկն իր երեխաների հետ ջուրն է նետվում, իսկ մի ուրիշը, տանջանքներից խելագարված, խեղդում է իր փոքրիկներին...»:

Թուրքերն ու քրդերը կշտացած սպանելուց, խեղդելուց, փորեր թափելուց և բռնաբարելուց, սկսեցին հնարել դժոխային կտտանքներ, որպեսզի հոշոտեն իրենց զոհերի նաև հոգին: «Իրար կողքի շարված մայրերին հարկադրում էին ականատես լինել իրենց երեխաների փորերը թափելուն, որոնց հետո կախում էին պատերից, ինչպես մսավաճառի կրպակում՝ միսը, ապա ճիպոտի հարվածով քշում էին սարսափից սգացող և ողբացող դժբախտ կանանց... Բռնագաղթվածներին լցնում էին Եփրատ: Ժանդարմները մայրերի գրկից ուժով պոկում էին երեխաներին և բարձում գերանների լաստի վրա, որոնք կապված էին պարաններով:

– Կտրե՛լ պարանները,– հետևում էր հրամանը»:

Ժանդարմները կտրում էին և լաստերը քշում դեպի գետի արագ հոսանքը, որտեղ գերաններն իրարից հեռանում էին, և երեխաները գլորվում էին ջրի մեջ: Մի քանի գերաններ դրանց կառչած երեխաների հետ մոտեցան ափին, սակայն ժանդարմները նորից հրեցին գետի խորքը: Փոքրիկները ձեռքները մեկնում էին իրենց մայրերին, բայց ջուրն էին ընկնում: Բոլորը խեղդվեցին[1]:

«Кавказское слово» թերթը 1916 թ. մարտի իր երեք համարներում (6, 9, 17-ը) նույնպես անդրադարձել է Էրզրումի տեղահանություններին ու ջարդերին:

Էրզրումի հարուստների մի քանի հարյուր հոգուց կազմված քարավանը ահավոր վիճակում հասավ Մամուրեթ-ուլ-Ազիզ և տեղավորվեց մի լքված շենքում: Պատմում է Խարբերդում Ամերիկայի հյուպատոս Դևիսը, որ անձամբ է եղել տարագրվածների ճամբարում: «Նրանք Էրզրումից դուրս էին եկել մի ամիս առաջ: Ճանապարհին հենց նրանց աչքի առաջ քրդերը տղամարդկանց կոտորել էին», կանանց կողոպտել, անգամ հագուստները խլել, շատերին լրիվ մերկ թողել, իսկ ուղեկցող ժանդարմները ձևացրել էին, թե անզոր էին ավազակներին դիմադրել:

Ամռան ընթացքում Խարբերդ հասան շատ քարավաններ Էրզրումից ու մյուս նահանգներից: Դրանցից առաջիններից մեկը կանգ առավ քաղաքի ծայրամասի դաշտում, բարկ արևի տակ: «Բոլորը ցնցոտիներով էին, ոմանք՝ գրեթե մերկ»: Տարագիրները հյուծված էին, տանջված, հիվանդ, կեղտոտ, ոջլոտ, «ավելի շատ վայրի գազանի, քան մարդկային էակների էին նման»: Շաբաթներ շարունակ նրանց անասնահոտի պես քշել էին, ուտելիք գրեթե չէին տվել: Տղամարդիկ շատ քիչ էին, նրանց մեծ մասին ոչնչացրել էին մինչև Խարբերդ հասնելը: Քիչ չի եղել նաև սպանված կամ մեռած կանանց ու երեխաների թիվը:

---

[1] **Барби А.**, նշվ. աշխ., էջ 42-44:

«Ինչին մասն էր Խարբերդ հասել, նրանք էլ չուտով մեռան»: Երբ ինչ-որ օտար մտնում էր ճամբար, մայրերը «մեկնում էին զավակներին, խնդրում տանել, տիրություն անել կամ փորձում էին վաճառել մի քանի պիաստրով (պիաստրը մոտավորապես 4 սենթ է)»:

Այդ քարավանները մի քանի օր Խարբերդում մնալուց հետո չարունակում էին ճանապարհը: Յուրաքանչյուր քարավան հեռանալիս զգալի թվով բռնագաղթվողներ մնում էին տեղում, անզոր ճամփան չարունակելու: «Ամենասահմռկեցուցիչը, որին ականատես եմ եղել երբևէ, որը գերազանցում է նույնիսկ Դանթեի նկարագրած դժոխքը, նրանց վիճակն էր, որոնք քարավանի չարժվելուց հետո մնացել էին ճամբարում», որը լիքն էր «հարյուրավոր մեռյալներով ու մեռնողներով», մեծ մասը հողին էր պառկած: Ճանապարհի մեջտեղում մեջքի վրա ընկած էր միջին տարիքի տղամարդու դիակ: Ամենուրեք թափված էին «կանանց, երեխաների բազմաթիվ դիակներ, ամեն քայլափոխի հիվանդներ ու մահամերձներ», ծերերն անզոր էին տեղից չարժվելու: «Գզգզված մազերով, փոս ընկած աչքերով կանայք նստել-քարացել էին»: Նրանք այնքան էին հյուծված ու նիհար, որ «գլուխը գանգ» էր թվում: Բոլորը մահամերձ ջղագարության մեջ էին: «Ուռած փորով երեխաները թաղվել էին աղտեղության մեջ, ոմանք ներքին ջղակծկումներից ցնցվում էին»:

Մի քանի քայլ այն կողմ փոս էր փորված, ուր ժանդարմներն ամեն օր նետում էին «մահացածներին կամ ում մահացած էին համարում»[1]:

Էրզրումից քարավանները հասան նաև Խարբերդ ոչ այնքան կողոպտված ու հոշոտված, բայց նրանք էլ սպանվեցին Խուլագյաչի ճամբարից դուրս գալուց մի քանի օր անց:

Ամռան վերջին հասած քարավաններին տեղավորեցին քաղաքի հայկական գերեզմանատանը, որի ծայրին մի խորը փոս էր փորված, ուր նետում էին մեռածներին[2]:

Վանի իրադարձություններից հետո սկսված կոտորածը,- գրում է «Кавказское слово»-ն 1916 թ. մարտին,- քողարկվում էր բռնագաղթով: «Իշխանությունները չէին համարձակվում անմիջապես սկսելու հայերի զանգվածային ցեղասպանությունը, նկատի ունենալով մուսուլմանական լայն խավերի տրամադրությունը:

Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակի պարտությունները թուրքերի չրջանում ցասում էին առաջացրել երիտթուրքերի հանդեպ: Երիտթուրք պարագլուխները «վախենում էին, որ Հայաստանից հայերի համատարած արտաքսումը կարող է հարուցել մուսուլմանների բողոքը», ուստի որոշեցին գործել զգույշ, քողարկել իրենց իսկական նպատակը»:

Նախ, տարագրեցին գյուղացիությանը: Ապա խուժանն սկսեց կոչ անել գլխովին բնաջնջելու հայերին: Մահմեդական զանգվածների տրամադրությունները սպառնալից դարձան, և Թահսին փաչան, որը համեմատաբար հաչտ էր տրամադրված հայերի նկատմամբ, որոչեց քաղաքի մեծամեծների հետ

---

[1] **Դևիս Լ.**, Սպանդի նահանգը, Ե., 2001, էջ 158-160:

[2] Նույն տեղում, էջ 161-162:

քննարկել, թե ինչ անել: Ժողովը տեղի ունեցավ քաղաքի Թախտե-Քյոչք արվարձանում: Որոշվեց կոտորել բոլոր հայերին: Սակայն, վերջնական վճռի գալու համար հարցը հանձնվեց հատուկ հանձնաժողովի քննարկմանը: Վալին հաջողեց հայերին ոչ թե կոտորել, այլ տարագրել Միջագետք: Հայերի և օտարերկրացիների բազմաթիվ վկայություններով՝ տարագիրներին՝ ծեր թե երեխա, կին թե հիվանդ, հարկադրում էին քայլել: Որոշ ժամանակ անց ճանապարհի դժոխային դժվարություններից հյուծված տարագրյալները դեն նետեցին այն բոլոր իրերն ու հագուստները, որոնք չալակած էին տանում: «Գաղթականներին «պաշտպանելու համար «հոգատար» իշխանությունները պահակախմբեր էին կազմել հասարակության տականքներից, բանտերից ուղարկված ոճրագործներից ու ուրիշ մութ անձերից, որոնք մտել էին չեթեական ջոկատները»: «Երզնկայից հետո առաջին իսկ կանգառին հայերից խլեցին մթերքի պաշարները... Հետո պահակներն սկսեցին բացեիբաց փող պահանջել, սպառնալով չտալու դեպքում կոտորել բոլորին»: «Կողոպտում էին միմյանց փոխարինող բոլոր պահակախմբերը և չուտով տարագրյալները մնացին առանց որևէ բան, զուրկ անգամ հաց գնելու հնարավորությունից: Փողերը լրիվ չորթելուց հետո պահակներն սկսեցին աղջիկ ու կին պահանջել, չխնայելով անգամ 5–10 տարեկաններին: Դիմադրության աննշան փորձն իսկ դաժանորեն պատժվում էր»:

Գաղթականների խմբերը բաղկացած էին ծերերից, կանանցից ու երեխաներից: Վանի իրադարձություններից հետո նրանց մեջ երևացին նախկին զինվորականներ, որոնց մեծ մասին կոտորեցին տարբեր վայրերում, իսկ փրկվածները բառացիորեն մերկ էին և կանայք նրանց հագցնում էին իրենց քրջերից:

«Գաղթականների ամբողջ ուղերթի բոլոր գյուղերում գործում էին թուրք չեթեների ջոկատներ... Դրանք նախապես դիրքավորվում էին գաղթականների ուղերթին և այդտեղից կրակում էին քարավանների վրա կամ պարզապես հարձակվում էին ու կոտորում: Նման դարան էր սարքվել օրինակ, Զաղահ բնակավայրում՝ Երզնկայից ոչ հեռու, որտեղ չեթեները հարձակվում էին անպաշտպան մարդկանց վրա և շատ քչերին էր հաջողվում փրկվել: Հայերին նույն արյունոտ «բաղնիքն» էր սպասում Քեմախ քաղաքի մերձակա կիրճում: Փրկվածներին մահ էր սպասում նաև բուն Քեմախում, որտեղ գետը նետեցին գրեթե բոլորին, չխնայեցին անգամ երեխաներին»:

«Հայերի ընաջնջումը համընդհանուր ընդգրկում ուներ: Դա իրականացվում էր ամբողջ Հայաստանում և ձգվում էր մինչև Մոսուլ... Հայերը հալածվում էին անկախ հպատակությունից: Օրինակ, Էրզրումում մեծ թվով ամերիկահպատակ հայեր սպանվեցին, չօգնեցին անգամ դիվանագիտական միջամտությունները»[1]:

«Армянский вестник»-ն անդրադառնալով եղեռնի տարիներին քրդերի վարքագծին, գրում է. «...Քանի՞ անգամ քուրդ բեկերը հարուստ հայերից ստացան 1000 լիրա, խոստանալով պաշտպանել նրանց ընտանիքն ու կյանքը, սա-

---

[1] *"Кавказское слово", 6, 9 и 17-го марта 1916 г.*

կայն քիչ անց իրենք բռնաբարեցին անմեղ աղջիկներին, երեխաներին ու կանանց իրար մեջ բաժանեցին»:

Հարյուրավոր երիտասարդ կանայք ու աղջիկներ նետվեցին Մուրադ-չայի (Արածանիի) կամուրջներից՝ իրենց պատիվը գաղաններից պաշտպանելու համար:

«Մի դժբախտ աղջնակ հանուն իր հարազատների փրկության ոչ միայն մտավ թուրքական հարեմ, այլև ընդունեց իսլամ»:

Էրզրումի հարուստների երկրորդ խումբը Մամախաթունով մեկնում էր Երզնկա: Հայերը գերադասեցին կանգ առնել ոչ թե քրդական, այլ թուրքական գյուղում, սակայն թուրքերը քրդերից ոչ պակաս դաժանությամբ նրանց կոտորեցին, բռնաբարեցին, իրար մեջ բաժանեցին:

«Որբերը, աքսորվածների կանայք, երեխաները, կաղերը, կույրերը, հաշմանդամները թուրքական կառավարությանը որևէ վնաս պատճառել չէին կարող, սակայն այդ դժբախտներին ևս կոտորեցին անլուր դաժանություններով»[1]:

Բռնագաղթվածների բնաջնջման խնդրում իշխանություններն ու մահմեդական խուժանը համախումբ ու ներդաշնակ էին գործում, նրանց աշխատանքը համակարգված էր թե՛ հայերի բնակավայրերում և թե՛ աքսորի ճանապարհին:

«Հենց մեր գնացքը շարժվեց,- պատմում են գթության քույրերը,- մենք տեսանք իրար հետևից շարժվող գնացքները լեփ-լեցուն այդ դժբախտ մարդկանցով, որոնց անապատ էին տանում: Դրանք բոլորը ապրանքատար գնացքներ էին: Կողքի դռները լայն բացված էին, և մենք տեսնում էինք ծերերին, պառավներին, երիտասարդ մայրերին մանուկների հետ, տղամարդկանց, կանանց և երեխաների: Բոլորն իրար էին սեղմվել ինչպես ոչխարները կամ խոզերը: Այս մարդկային էակների հետ ավելի վատ էին վարվում, քան անասունների հետ:

Պառավները ողբում էին: Երեխաները լաց էին լինում: Մենք սարսափով էինք նայում նման դաժանությանն ու նման տանջանքին: Մեզ պատմեցին, որ երբ գնացքն անցնում էր գետի վրայով, 20 կրծքի երեխաների նրանց մայրերը չպրտեցին գետը, որովհետև այլևս չէին կարողանում տանել իրենց սոված երեխաների տառապանքները: Մի երիտասարդ կին վագոնում ծնեց երկվորյակներ և նրանց հետ միասին գետը նետվեց...»[2]:

Էրզրումի տարագիրների քարավանին ուղեկցող գայմագամը Երզնկայում իր 400 զինվորի հետ «անհայտացավ» և մոտ 30 հազ. հայ դեմ դիմաց մնաց ավազակախմբերի հետ: Գրում է ականատեսը. «...Դաշտը ծածկուած էր քիւրտերէ, թուրքերէ եւ զինուորներէ կազմուած խուժանով մը, որոնք խառնուած էին անպաշտպան ժողովուրդին... կը կողոպտէին, կը կոտորէին եւ կ'առեւանգեին: Ճիչ, աղաղակ, ցաւի եւ յուսահատութեան գոչիւններ կը խառնուէին թշնամիին հայհոյութիւններուն եւ ծաղրանքներուն... Շատերը ոտքի տակ կոխկոտուած էին: Մանուկներ, ծեր կիներ դեռ նոր մորթուած սիրելիներուն կառ-

---

[1] *"Армянский вестник", 1916, № 14.*

[2] *ՀՍՍՀ ԳԱ, Ինֆորմացիոն բյուլետեն, 1982 թ., № 4:*

չած՝ կու լային եւ կը ճուային: Հազարաւոր դիակներ փռուած էին ամեն կողմ: Փոքր մաս մը արդէն մեծ բազմութենէն ցաք ու ցրիւ եղած էր լեռներու եւ դաշտերու մէջ, իրար կորսնցուցած, խելակորոյս վիճակի մէջ...»[1]:

Հալեպի գերմանական հյուպատոսը 1915 թ. օգոստոսի 15-ին գրում է, որ «անընդհատ նոր հասնող տեղեկութեանց համեմատ Արեւելքի մէջ (Կարին եւ այլն) արդէն այսօր հայերը գրեթէ լիովին ոչնչացած են: Արեւելքէն եկողները, որոնցմէ հոս իբր 6000 հոգի կան եւ օրական ալ 300 հոգի կու գան՝ բան մը չեն ընդունիր»[2]: Այսինքն՝ սնունդ չէին ստանում:

«Դժբախտ աքսորյալների առաջին քարավանը դեռ չէր հասցրել մոտենալ Ջիբեյ-Ջեյիի լեռան,- պատմում է ականատեսը,- երբ բալաբան քրդերի 50 հեծյալներով երեւաց Խալիլ աղան և պահանջեց 5000 թուրքական ֆունտ՝ դիմացը խոստանալով հովանավորություն»: Ստանալով այդ գումարը, նա հեռացավ: Երկու ժամ անց քարավանի վրա հարձակվեց 200 քուրդ և սկսվեց կոտորածը, որ տևեց չորս ժամ[3]: Քրդերն իրենց հետ առնելով գեղեցիկ կանանց ու աղջիկներին, հեռացան:

«Այսպիսով, Էրզրումի ամբողջ բնակչությունից Մամախաթուն հասավ միայն 5000-ը»: Այս քաղաքի գայմագամը խոստանալով տարագիրներին մինչև Եփրատ անվնաս հասցնել՝ չորթեց ևս 300 ֆունտ: Հունիսի 22-ին քարավանը Դերջանի Փիրիչ գյուղում էր: Հաջորդ օրը երբ նրանք գյուղից դուրս եկան, երևացին չաթաք քրդերը: Գայմագամը, թե քրդերը եկել են քարավանը պաշտպանելու ու ուղեկցելու: Սակայն նա հենց որ հեռացավ, «քրդերը սկսեցին կոտորել խեղճերին ու մարմինները նետել գետը: Մոտ երկու ժամ անց, սպանդից փրկված մի քանի պառավ ու երեխա հետ փախան գյուղ և պատմեցին կատարվածի մասին: Հունիսի 24-ին քրդերը հարձակվեցին գյուղի վրա և կոտորեցին այնտեղ մնացած հայերին»:

«Դիարբեքիրի վիլայեթում,- գրում է Ֆայեզ ալ-Ղուսեյնը,- մի իջևանատուն լեփ-լեցուն էր հայ կանանցով ու փոքր երեխաներով: Նրանք թշվառ վիճակում էին, քանի որ Էրզրումից մինչև Սրուջ անցել էին ոտքով: Նրանք պատմեցին, թե ժանդարմները իրենց բերել էին ամայի վայրերով, թողնելով առանց ջրի... Կանայք ստիպված էին նորածիններին նետել բախտի քմահաճույքին՝ անմարդաբնակ վայրում: Ոմանք էլ ... իրենց մանկիկների հետ միասին զոհվում էին անապատում»[4]:

Կարինի հայության բռնագաղթն ու ոչնչացումը անմիջականորեն ղեկավարում էր Բեհաէդդին Շաքիրը, հայության ամենաոխերիմ թշնամին, բռնագաղթի ու բնաջնջման գաղափարախոսը և դրանց իրականացման անմիջական ղեկավարներից մեկը: Սկսած 1914 թ. կեսերից նա Կարինը դարձրեց իր գործունեության կենտրոնը: Պատահական չէ, որ նա Կարինից էր պատգամավոր օսմանյան խորհրդարանում: Երիտթուրքական ղեկավարությունը նրա վրա էր դրել Արևմտյան Հայաստանի հայության բնաջնջման և, ընդհանրապես, Կ.

---

[1] **Լեւոն Մեսրոպ.** *1915. Աղէտ եւ վերածնունդ, Փարիզ, 1952, էջ 104-105:*

[2] **Տաշեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 103-104:*

[3] **Барби А.,** *նշվ. աշխ., էջ 13-14:*

[4] **Ghoussein F.,** *նշվ. աշխ., էջ 20-22:*

Պոլսի արևելյան քաղաքականության իրականացման ղեկավարությունը: Այդ նա էր, որ փետրվարի 18-ին բացեց վիլայեթի բանտերի դռները և ավազակներից ձևավորեց չեթեական խմբեր: Նրա ղեկավարությամբ իրականացվեցին նաև բռնագրավումները: Յուրաքանչյուր զինվորի հաշվով բռնագրավվեց 30-120 կգ հաց և ուրիշ սննդամթերքներ[1]:

Հ. Բարբին Էրզրումի նահանգում բռնագաղթի ու կոտորածների գլխավոր կազմակերպիչներից է համարում նաև 3-րդ բանակի հրամանատար Քյամիլին և շտաբի պետ Գուղին, գերմանացի գնդապետ Ստաղեչին, գերմանական հյուպատոս Շոյբներ Ռիխտերին, հրետանու հրամանատար գերմանացի Շտանկեին: Ակունին ավելացնում է վալի Թահսինին, օսմանյան խորհրդարանի անդամ Սեյֆուլլահին, նրա որդի Նեջդեթին, ինչպես նաև Զ. Մուստաֆային, Ք. Ադիլին, Հաջի աղային, Աբդուլռաշման Իբրահիմին և այլոց, բայց գրեթե բոլոր հեղինակները մոռանում են գլխավոր դերակատարներից երիտթուրքերի Էրզրումի պատասխանատու քարտուղար Հիլմիին և Կ. Պոլսից Էրզրում որպես կենտկոմի ներկայացուցիչ ուղարկված Ջեմալին: Որ Էրզրումի նահանգին Իթթիհադի ղեկավարությունն առանձնակի նշանակություն էր տալիս, վկայում է նաև այն, որ եթե բռնագաղթը կազմակերպելու համար ուղարկվում էր մի ներկայացուցիչ կամ ոչ ոք, ապա Էրզրում ուղարկվեց երկու հոգի՝ Սեյֆուլլահն ու Ջեմալը:

Ա. Արղութինսկի-Դոլգորուկին 1916 թ. սկզբին Էրզրումում լինելուց հետո ասաց. «Մինչև 600 հազ. բնակչություն ունեցող այդ քաղաքը գրեթե դատարկ էր: Ռուսներն այնտեղ գտան ոչ ավելի քան 20-25 հազ. մարդ, մնացած բնակչությունը փախել կամ տարագրվել էր... Բռնագաղթն սկսվել էր 1915-ի հունիսին և տևել մինչև օգոստոս: Կառավարությունը հայերին առաջարկել էր տեղափոխվել Երզնկա ... տարագրվածներին խոստացել էին փոխադրական ու այլևայլ աջակցություն: Տեղահանվեց ավելի քան 20 հազ., մարդ՝ տղամարդ, կին, երեխա, իրենց հետ տանելով ունեցվածքի մի մասն ու թանկարժեք իրերը: Սակայն նշանակման վայր հասավ բռնագաղթվածների միայն մի մասը, նրանք հիմնականում զոհվեցին ճանապարհին, կոտորվեցին թուրքերի ու քրդերի կողմից: Հայերի թողած ունեցվածքը պահվում է թաքուն տեղերում կամ բարեկամ թուրքերի մոտ: Բայց մեծ մասը թափված է հայոց եկեղեցում՝ ապրանքներ, տնային իրեր, մի քանի միլիոն ռուբլու արժեքներ...»[2]:

Արղութինսկի-Դոլգորուկին պատմել է Մորգենթաուին, թե ինչպես հարյուրավոր երեխաների թուրքերը սվինահարել ու գետն էին նետել, թե ինչպես էին մերկացրել կանանց ու տղամարդկանց, հարյուրներով միմյանց կապել, գնդակահարել ու գցել գետը: Երզնկայի մոտ գետի մի հատվածում հազարավոր դիակներ այնպիսի մեծ թումբ էին կազմել, որ Եփրատը 100 յարդ իր ընթացքը փոխել է[3]:

«Новое время» թերթը փետրվարի 24-ին տպագրեց նամակ Էրզրումից: Նամակի հեղինակը 20 տարի այդ քաղաքում աշխատած ամերիկացի բժշկուհի

---

[1] **Барби А.**, նշվ. աշխ., էջ 16:
[2] **Bryce J.**, նշվ. աշխ., էջ 237:
[3] **Մորգենթաու Հ.**, նշվ. աշխ., էջ 264:

է: Նա նկարագրում է Էրզրումահայերի բռնագաղթը. «Մենք միջնորդեցինք վալուն, պնդեցինք, խնդրեցինք չտարագրել այս կամ այն հային, տեղահանվածներին մատակարարեցինք, սայլեր տրամադրեցինք ճանապարհի համար, որը նրանցից բազում հազարների համար դառնալու էր մահվան ճանապարհ, երեք ամիս պահպանեցինք նրանց ունեցվածքը:

Ապա լուրեր ստացվեցին հայերի կոտորածների մասին Դերջանում, Քեմախում, Քղիում, Տրապիզոնում մի խոսքով՝ ամենուրեք... Էրզրումում Թուրքին ջարդից հետ պահեց վրեժի սարսափը ռուսներից...»: Խոսքն այն մասին է, որ Կարինի Թրքությունը համեմատաբար ձեռնպահ մնաց հայերի ջարդին մասնակցելուց: Էրզրումի հայերին բռնագաղթեցրին չորս խմբով: Մայիսի 8-ին տարագրեցին մոտ 20.000 գյուղացու, որոնք կոտորվեցին Խարբերդի և Դիարբեքիրի արանքում՝ Բերմազ լեռան փեշերին: Էրզրումի 70 հարուստ ընտանիքներ մորթվեցին Հունիսին Բալու և Խարբերդ քաղաքների արանքում, Բայազետի մութեսարիֆի ղեկավարությամբ:

Հուլիսի 6-20-ը Էրզրումում հայ չմնաց...[1]:

Կարինի հարուստ հայերն իրենց ունեցվածքը Սթեփրլտոնին և ամերիկյան հիվանդանոցի պատասխանատու Քեյսին հանձնելուց բացի հակերով լցրեցին մայր եկեղեցի: Ամերիկացիներին հանձնվեց 1400 հակ՝ 10-15 հազ. թրքական լիրա արժողությամբ: Նրանց հանձնեցին նաև 5559 թրքական հնչուն ոսկի, մեծ գումար, արծաթե ռուբլիներ, զարդեղեն, որից 5000 թրք. ոսկի հետագայում տրվեց Պոլսի գաղթականների կարիքների համար, իսկ մնացածը Սթեփրլտոնի անունով պահ տրվեց օսմանյան բանկին[2]:

Ոստիկանների համար հայերի քարավանների կողոպտելը մեծ հարստություն կուտակելու միջոց էր: Նրանք չէին խորշում կողոպտելու անպաշտպան կանանց ու աղջիկներին, դրամաշորթությամբ ու թալանով զբաղվել: Եղան ոչ քիչ դեպքեր, երբ նրանք թալանն ավարտելուց հետո քարավանը վաճառում էին: Օրինակ, Մալաթիայի մերձակայքում Կարինի մտավորականության քարավանը վաճառվեց քուրդ ցեղապետ Զեյնալին:

Կարինի 3-րդ քարավանից ողջ մնացածներին Սեբաստիա տանելու փոխարեն, քշեցին Արաբկիրի ուղղությամբ: Քեմախում տղամարդկանց բաժանեցին, կանանց հարվածների տակ առաջ քշեցին, քիչ անց տղամարդիկ հարձակման ենթարկվեցին ու խողխողվեցին, իսկ կանայք բլրի գագաթից դրա ականատեսը դարձան: Ջարդվածների դիակները նետեցին Եփրատ:

Այդ քարավանը քաղաքից մեկնել էր հունիսի 29-ին, ուներ 8000 հոգի: Այն առաջին անգամ ջարդվեց Կարինի մերձակայքում՝ Աշկալեյում՝ սպանվեց 300 երիտասարդ: Մնացածներին երկու օր չարունակ առաջ քշեցին, առանց որևէ հանգստի: Այդպես քարավանը հալվեց, փոքրացավ:

4-րդ քարավանը (9000 հոգի) ճամփա ելավ հուլիսի 3-ին: Սա ևս Աշկալայում կոտորվեց՝ 100 զոհ տվեց: Երբ Երզնկայից չարժվում էր Քեմախ՝ Բ. Շաքիրի ավազակախումբը՝ ժանդարմները, զինվորները, Թուրք ու քուրդ մեծաթիվ

---

[1] *"Кавказское слово", 20 февраля 1916 г.*

[2] **Чалхушьян Гр.,** *նշվ. աշխ., էջ 151-153:*

խուժանը հարձակման անցավ: Բոլորն սպանվեցին, բացի 400-500 երեխաներից ու կանանցից, որոնք կիսամեռ վիճակում հասան Միջագետք[1]:

Պատմում է ականատեսը. «Կարինի 5-րդ քարավանը Երզնկայի դաշտում փռված դիակների կողքին մնաց երկու օր: Ոստիկաններն ասացին, թե այլևս սայլի ճանապարհ չկա և կարող եք պահել միայն եղները: Մի քանի օր անց հավաքեցին տղա երեխաներին: Գնալով չատանում էին կանանց առևանգումն ու կողոպուտը, ով այլևս անզոր էր քայլել՝ սպանում էին: Քեմախի կամրջին հերթապահող զինվորներն սկսեցին ձերբակալել տղամարդկանց: Քաղց, հոգնածություն, դժվարանցանելի տեղանքներ, բայց քայլել, անընդհատ քայլել: Ակնի ճանապարհին քարավանի վրա կրակ բացեցին դերսիմցի քրդերը: Ակնը դատարկ էր, ավերակ, գետափին հենց նոր կացնահարված դիակներ էին ընկած: Մեկ ժամ հետո մի ավելի սահմռկեցուցիչ տեսարան. «արյունաթաթախ ուռած մարդկային դիակներ, ցիրուցան մազերով, խոշտանգված կրծքերով կանայք, ցնցոտի հագած մանուկներ... մեծ մասամբ կացնահար եղած անհաչվելի դիակներ...

Գնալով ավելի չատ ծեր ու երեխաներ էին թողնվում ճանապարհին, դեն էին նետվում նաև ավելորդ համարվող իրերը: Այլևս ուժ չկար: Մալաթիայի ճանապարհի չինարարության վրա աշխատում էին քաղցից հյուծված հայ տղամարդիկ: Հասանք Ֆուրունճուլար վայրը, որտեղ մնացինք 17 օր դիակների խրձերի հարևանությամբ: Մեռնում էին նաև մեզանից չատերը: Այստեղ հավաքվեցին այս կամ այն կերպ փրկված բոլոր տղամարդիկ ու տղաները՝ 500 հոգի, որոնց միացրին Խոտրջրից բերված կաթոլիկ հոգևորականներին ու սպանեցին: Մնացին կանայք ու երեխաները: Աղրյամանի մերձակայքում՝ Սամսաթ գետի ափին մնացածներին ջարդեցին»:

Ս. Թեհլիրյանի դատավարության ժամանակ Վ. Թերզիբաշյանը ցուցմունք տվեց, որ 1915 թ. հունիսին Էրզրումում «նախ ոստիկանների ու պաշտոնյաների միջոցով քաղաքի հարուստներին լուր տրվեց, թե քաղաքը պիտի դատարկվի, որովհետև գտնվում է ռազմագծի վրա, և քաղաքացիները պետք է հեռանան: Քաղաքի հարուստները 8 օր առաջ լուր ստացան, իսկ մյուսները՝ տեղահանումից մեկ ժամ առաջ: Ապա իմացան, որ եղածը խաբեություն էր, և միայն հայ բնակչությունը պիտի արտաքսվեր: Զորս խմբով՝ 8 օրում: Ես երկրորդ խմբում էի: Մեր ընտանիքը բաղկացած էր 21 անձից: Նրանցից մնացել են միայն 3-ը... Իմ աչքերով տեսա բոլորի կորուստը... Երդվում եմ, որ Կ. Պոլսի հրամանով տեղահանվեցին:

Երբ թողեցինք քաղաքը և Կարնո բերդի դռների առջև էինք, եկան ոստիկանները: Զենք էին փնտրում: Դանակ, անձրևանոց և այլն առան մեզնից: Կարինից եկանք Բաբերդ: Երբ անցնում էինք այս քաղաքի կողքով, գեղագեղ դիակներ տեսանք: Ես ստիպված էի դիակները կոխել անցնել, այնպես որ ոտքերս արյունով ներկվեցին... Հասանք Երզնկա... Նույնիսկ ջուր խմելու հրաման չէին տալիս: Ստիպված էինք նույնիսկ եղները հանձնել... Երբ առաջ գնացինք, խմբերից 500 երիտասարդներ ջոկեցին ... և ջարդեցին ... իրար կապեցին և

---

[1] ***Լեւոն Մեսրոպ***, *նշվ. աշխ., էջ 104-105:*

ջուրը գցեցին... և հոսանքն այնպես սաստիկ էր, որ բոլորին ջուրը քշեց-տարավ... Բայց լացել անգամ թույլ չէին տալիս, սվիններով առաջ էին մղում 80 ոստիկան և մի ջոկատ զինվորներ...

Ինչ որ կարող էինք չալակել, դրանով Մալաթիա եկանք: Այնտեղ մեզ լեռան վրա հանեցին ու տղամարդկանց կանանցից բաժանեցին ... և 10 մետր հեռավորության վրա կացիններով սպանեցին ու ջուրը նետեցին:

Երբ մի քիչ մթնեց, եկան ոստիկանները, ընտրեցին ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին և որպես կին առան... Հնազանդվել, տեղի տալ չուզողները սվիններով էին խոցվում, և նրանց սրունքներն էին պատառոտվում: Նույնիսկ փչրում էին հղի կանանց կողերը և դուրս էին հանում երեխաներին... Եղբորս գլուխն էլ կտրեցին: Երբ մայրս տեսավ այդ, գետին ընկավ ու մեռավ... Մի թուրք վերցրեց որդուս ու մի կողմ նետեց ինձ... Հեռվից ծուխ նշմարեցի ու գնացի ծխի ուղղությամբ»[1]:

Երբ Էրզրումի վերջին քարավանը շարժվում էր դեպի Ուրֆա, Մալաթիայի ճանապարհին աշխատում էին «խումբ մը կիսամերկ մարդիկ՝ կմախքացած ու անճանաչելի», նրանց հսկում էր զինված ոստիկանը: Հենց քարավանը մոտեցավ, նրանք սկսեցին հաց մուրալ: Դրանք Սանասարյան դպրոցի նախկին սովորողներն էին:

«Արեւի կիզիչ ճառագայթներուն տակ,- պատմում է տարագրյալներից մեկը,- կը բարձրանայինք դէպի վեր, բոպիկ քալելով մէյ մը խճոտ գետնի, մէյ մը՝ ցեխոտ, մէյ մը տաք ու չոր ավազի վրայ, ու մէյ մը՝ ճահիճի մէջէն: Կը զգայինք, որ մեզ կը դարձնէին նոյն օղակի մէջ, իրենց նպատակը չէր մեզ տեղ հասցնել, այլ՝ յոգնեցնել: Ճանտարմաները իրենք կ'ըսէին, թէ պիտի տանէին մինչեւ Սամսաթ ու հոն գետը պիտի թափեին մեզ»: Ուրֆայի մերձակայքում տղամարդկանց քարավանից հանեցին ու տարան՝ իբր տանում էին Մալաթիա՝ բնակարաններ ճարելու[2]: Իրականում, այդ 170 տղամարդը «քիւրտ պէյի հրամանով չարաչար մահուամբ փակեցին իրենց աչքերը իրենց սիրելիներու ներկայութեամբ իսկ... Աչքովս տեսայ ամեն մեկուն սոսկալի սպանուիլը կամ տառապանքէ ու անոթութենէ մեռնիլը...»[3]:

Մի ուրիշ նամակում կարդում ենք. «...Տղաքը զարկեր են, իսկ հարսս ... թրքացուցին... Մեծերը զարկեր են, պզտիկները ողջ են... ոմանք փրկուեր են՝ քիւրտերու մէջ կը մնան... Կերածներս անալի խոտն է... Շատ գաղթականներ անօթութենէ, ցուրտէ եւ ամեն բանէ զուրկ մեռան հոս. թուրքերը մեզ անանկ կողոպտեցին, որ քովերնիս դրամը բոլորը առին ու մերկ թողուցին»:

«Ռուսաստան անցած ուրիշ մարդ չունինք,- գրում է գաղթական Ս. Կարապետյանը,- միայն ես երկու երեխան առի, մահս աչքս առի, ձիներու եւ ձորերու մէջէն քալելով ... ազատեցայ»[4]:

Մի ուրիշ նամակ. «Եթե քո տնեցիներուդ հարցունես, ոչ ոք մնացած է, միայն Աստուրին կինը մնացեր էր, ան ալ քիւրտերը առած են... Մեր տնեցի-

---

[1] *«Թեհլիրեան արդարահատոյցը», Պէյրութ, 1981, էջ 63-65:*

[2] *«Արարատ», 3 մայիսի 1985 թ.:*

[3] *«Նաւասարդ», 1990 թ., № 92:*

[4] *Նույն տեղում:*

ներէն մէկը չէ ազատեր...»: Քաղվածքներ ևս երկու նամակից. «Եթէ ձեր տնեցիները հարցնէք, յոյսերնիդ կտրեցէ՛ք բոլորովին...»: «Եթէ ձեր տունը հարցունես՝ յուսահատիր... Մինակ դուն մնացեր ես...»:

«Միայն սեպտեմբերին,- գրում է Սթեփըլտոնը,- ինձ հասան առաջին լուրերը աքսորվածների մասին: Գրել էին կանայք ու հարցնում էին, թե ինձ ի՞նչ է հայտնի իրենց ամուսինների մասին: Քիչ անց այդ բոլոր կանանց ուղարկեցին Սրուջ, Ուրֆա, Խարբերդ: Երզնկայում աքսորյալներից փոխադրամիջոցները բռնագրավել էին և ուղերթը փոխել ու քշել Քեմախ:

Դեպի Խարբերդ մեկնած քարավանը դարձել էր աննկարագրելի գաղանությունների զոհ: Էրզրումի իմ բարեկամներից մեկի՝ բժիշկ Թաշճյանի դուստրը սարսափներից խելագարվել է և այժմ իր քրոջ հետ Խարբերդի հարեմներից մեկում է»[1]:

Պատմում է Կարին քաղաքի բնակիչ Ա. Քրմոյանը. «Մեզ Կարինից տարան 4-րդ քարավանով: Երզնկա չհասած՝ դաշտում շատ դիակներ տեսանք: Երկու օր անց, ճանապարհները նեղ լինելու պատճառով սայլերը խլեցին: Հետո հավաքեցին քարավանի տղա երեխաներին:

Հետզհետե կանանց առևանգումը, կողոպուտն ու գողությունը, քայլելու անկարող և ճանապարհներին մնացողների սպանությունը ամեն օր պատահող սովորական դեպքեր դարձան:

Դժվարություններով հասանք Եփրատի վրա կառուցված Քեմախ կամուրջը, որն անցնելու ժամանակ հավաքվեցին բոլոր տղամարդիկ: Շատ չանցած քարավանի վրա հարձակվեցին դերսիմցի քրդերը: Հասանք Ակն: Մեռելային լռություն է. կան միայն հենց նոր կացնահարված դիակներ: Ծարավ ենք, բայց թույլ չեն տալիս ջուր խմել: Հաջորդ օրը հասանք մի տեղ՝ արյունաթաթախ..., ուռած մարդկային դիակներ, ցիրուցան մազերով, խոշտանգված կրծքերով կանայք, ցնցոտի հագած մանուկներ՝ ոմանք խոտերի, մյուսները՝ ճահիճների մեջ, մեծ մասամբ կացնահար արված անհաշիվ դիակներ:

Օգոստոսի 21-ին հասանք Արաբկիր: Մալաթիայի մոտերքում հանդիպեցինք տղամարդկանց, որոնք ճանապարհ էին կառուցում: Սոված էին. նրանց ոսկորն ու կաշին էին մնացել: Քիչ անց Ֆրընճըլար վայրում էինք, շատ դիակներ կային: 17 օր այդ գարշահոտության հարևանությամբ մնացինք: Այդ տեղում սննդի ու ջրի պակասից շատերը մահացան: Այստեղ վերջնականապես հավաքեցին բոլոր տղամարդկանց և պատանիներին ու բոլորին սպանեցին: Մնացին կանայք ու երեխաները: Մեր գողգոթան քարշ գալով հասավ Աղբյաման: Կանգ առանք դաշտում: Հաջորդ օրը Սամսաթ գետի եզերքին պետք է բոլորին սպանեին:

Մայրս մի ոստիկանի կաշառեց և մեզ ուղարկեցին մի չեչենի տուն, որը քրեական հանցագործ էր և բանտից ազատվել էր հայերին ոչնչացնելու համար: Նա պարծենում էր, թե «այս դաշույնով մեկ օրում 60 կարնեցի եմ սպանել»: Մեզ հայտնաբերեցին և ոստիկանները տարան Խան: Շատ հայեր էին այդտեղ հավաքված: Բոլորի ներկայությամբ կանանց բռնաբարում էին: Նորից

---

[1] **Барби А.,** *նշվ. աշխ., էջ 11:*

կաչառք տալով դուրս եկանք և ընկանք գայմագամի բնակարանը, որի կինը Թրքացած հայ էր: Նոյեմբերին գայմագամից գաղտնի փախանք Մալաթիա»:

1916 թ. փետրվարի 13-ին Կարինը թողեց Գերմանիայի, ապա Պարսկաստանի հյուպատոսը: Թահսինը Սթեփրլտոնին ասաց, թե հաջորդ օրը թուրքական իշխանության մարմինները թողնելու են Կարինը և խնդրեց ռուսական հրամանատարության առաջ բարեխոսել, որպեսզի խնայեն թուրք ազգաբնակչությանը, քանի որ Կարինի թուրքերը հայերի ջարդերում մեղք ու պատասխանատվություն չունեն: Այս խնդրանքը կատարվեց: Ռուսական բանակի հետ քաղաք մտան նաև հայ կամավորները, որոնց ջանքերը քաղաքում հայ գտնելու որևէ արդյունք չտվեց, բացառությամբ չորս հայ աղջկա՝ թուրքերի տներում և Սթեփրլտոնի մոտ եղածները[1]:

Հայերի բոլոր տներն արդեն բնակեցված էին թուրքերով: 1916-ի ամռանը Կարինում ստեղծվեց Գաղթականական կոմիտե, որն զբաղվում էր հայահավաքությամբ, վերապրող հայերին հայրենի բնակավայրերում վերահաստատելու գործով: Մոսկվահայերի նախաձեռնությամբ Էրզրումում սկսեց գործել Մոսկվայի հայկական կոմիտեի մասնաճյուղը, որի ուժերով բացվեցին որբանոց և հիվանդանոց: Էրզրումում աշխատանքներ ծավալեցին նաև Քաղաքների, Եղբայրական օգնության միությունները և այլն:

Աստիճանաբար քաղաքը վերակենդանանում էր, աշխուժանում էր հայ ազգային կյանքը: Էրզրումը հավակնությունը չէր կորցրել դառնալու ազատ Հայաստանի քաղաքական կենտրոն: Այդ միտումը առավել նկատելի էր սկսած 1917 թ. կեսերից: 1918 թ. սկզբին ստեղծվեցին 500 հոգանոց պաշտպանական ջոկատ, Զինվորական միություն և կամավորական կոմիտեներ: 1918 թ. հունվարի 30-ին Թորգոմը հռչակագիր հրապարակեց, թե վերականգնվում է հայկական պետականությունը Էրզրում մայրաքաղաքով, ինչն առաջացրեց ռուսական հրամանատարության զայրույթն ու Թորգոմը բանտ ընկավ: Քիչ անց հայերը թողեցին Կարինը:

ԵՐԶՆԿԱ

Երզնկա քաղաքն ու Կամախի 52 գյուղերը միասին ունեին 30.000 հայ բնակիչ, որից 20.000-ը քաղաքում: Սանջակի բնակչության թիվը հասնում էր 55.000-ի: Դրանք հիմնականում քրդեր, կարափափախներ, թուրքեր, լազեր ու հույներ էին: Երբ 1916-ին ռուսները մտան Երզնկա՝ այնտեղ գտան միայն մի քանի տասնյակ հայուհիներ, որոնք օգտվելով խառնաշփոթից, փախել էին հարեմներից[2]:

Տեղի հայերի տեղահանության նախապատրաստման հարցով Երզնկա մեկնեցին իթթիհադական գործիչ Մեջիդը և օսմանյան խորհրդարանի անդամ Խալեդը[3]:

Տեղացի Ս. Իբրահիմի վկայությամբ՝ մինչև բռնագաղթը բանտերից հանվե-

---

[1] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 348-353:*

[2] *"Армянский вестник", 1916, № 7.*

[3] ***Ակունի Ս.,*** *նշվ. աշխ., էջ 148:*

ցին քրեական հանցագործները: Այս վկայությունը հաստատեցին մեծ թվով չեթեներ[1]:

Երզնկայի հյուրանոցի տնօրենը մտերիմների շրջանում ասել է. «Կ.Պոլսում որոշում է ընդունված, որ այս (հայ) կանայք ու երեխաները պիտի մեռնեն»[2]:

Սկզբում ձերբակալեցին 2000 տղամարդու, որոնց գիշերը քաղաքից հանեցին ու գնդակահարեցին[3]:

Առանց դատի ու դատաստանի ոչնչացվեց մտավորականությունը: Մայիսի սկզբին Եփրատի ափին գտնվող Մահմուտցիկ գյուղը ենթարկվեց 800 քրդերի հարձակման: Հայերի մի մասը ինքնապաշտպանվեց ու զոհվեց հերոսաբար կռվելով, մյուսներին գերի վերցրեցին ու խեղդեցին Եփրատում: Իսկ երբ Բաբերդի բռնագաղթվածները հասան Քեմախ (Կամախ), որը Եփրատի բազուկի առաջացրած խոչոր կիրճ էր և հանդիսացավ հայ քարավանների բնաջնջման սարսափազդու կետերից մեկը, «Հոն իթթիհադի պատուիրակ ճեմալ էֆէնտիի կազմակերպած յելուզակային խմբերը,- գրում է Բրայսը,- յարձակուեցան հայ խլեակներու վրայ ու մաքրագործեցին զանոնք: Քեմախ հասած հայերէն չատեր փրկելու համար իրենց հայու անունն ու պատիւը՝ նետուեցան գետը՝ նախընտրելով ջրախեղդ ըլլալ, քան թէ Թուրքին սուրին եւ կրակին զոհ դառնալ»[4]:

Բայց Քեմախ Բողազում հայերը ոչ միայն ինքնասպան էին լինում, այլև զանգվածաբար ոչնչացվում: Գերմանական «Algemeine Missions Zeitschrift» հանդեսը 1915 թ. իր № 11-ում ներկայացնում է հայերի բռնագաղթի և ոչնչացման սխեման: «Բռնագաղթի սկզբնական կետ, ապա միջանկյալ քաղաք, որոնցով էին անցնում աքսորյալների ամբոխները, և վերջապես, անապատ...»: Հանդեսը ճիշտ է նկատել, որ հայերի տարագրությունը եռաստիճան էր՝ տեղահանության մեկնարկ, միջանկյալ բնակավայր և վերջնագիծ: Եթե առաջին և երրորդ աստիճանները թվական փոփոխություն չէին կրում՝ մշտապես մեկնարկն ու վերջնագիծը մեկական էին, ապա երկրորդը՝ այսինքն միջանկյալ կայանը, կարող էր լինել մեկ կամ մի քանիսը: Նման միջանկյալ կայանները խնդիր ունեին «թեթևացնելու» քարավանները՝ միջանկյալ ջարդեր ու սպանություններ կազմակերպելու միջոցով: Այդպիսի միջանկյալ կայաններից էր ոչ այնքան Կամախ (Քեմախ) բնակավայրը, որը գտնվում էր Երզնկա քաղաքից հարավ արևմուտք, Արևմտյան Եփրատի ձախ ափին, նրա Թանաձոր վտակի վրա, որքան նրա կողքին գտնվող Քեմախ-Բողազը: Այստեղով էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Անատոլիայի հայ տարագիրների քարավանների մեծ մասի (Կ. Պոլիս, Նիկոմեդիա, Իկոնիա, Կեսարիա, Պարտիզակ), մասնավորապես Էրզրումի, Բաբերդի, Երզնկայի, Խարբերդի, Տարոնի բռնագաղթվածները: 1915-ի հունիսին այստեղ այնքան մարդ էին նետել գետը, որ կամրջի առաջ առաջացել էր խցանում, արնագույն ջուրը դուրս էր եկել ափերից: Մեծ թվով հայ կանայք միայնակ, թե իրենց երեխաների հետ այդ կամրջից էին գետը նետվել հետագա տանջանքներից փրկվելու համար: Առաջին հերթին Քեմախը

---

[1] **Чалхушьян Гр.,** նշվ. աշխ., էջ 87:

[2] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 248:

[3] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 502:

[4] **Ակունի Ս.,** նշվ. աշխ., էջ 121:

նկատի ունենալով էր Թալեաթը հանձնարարություն հանձնարարության հետևից տալիս՝ դիակները գետը չնետել, այլ թաղել: Մոտավոր հաշվարկով՝ Եփրատում խեղդամահ էր արվել 55-60 հազ. հայ, որի կեսը՝ Քեմախում: Կաթողիկոսին հասցեագրված նամակներից մեկում կան հետևյալ տողերը. «Ընդհանրապես Էրզրումի վիլայեթի բնակչության մեծ մասը կոտորվեց Մամախաթունի և Քեմախի միջև ընկած տարածքում[1]:

Քեմախի մասին Հ. Ֆիրբյուխերը գրում է. «Երզնկայի և Սրվազի արանքում է գտնվում Քեմախի կիրճը: 1915 թ. հունիսյան օրերին աննկարագրելի տանջանքներից հետո վիթխարի բարձունքներից այստեղ նետեցին տասնյակ հազարավոր կենդանի կանանց ու երեխաների: Հարկ էր այս կիրճն անվանել Դանթեական: Նա իրապես վերածվել էր անեծքի հուշակոթողի, որ նկարագրել է Դանթեն իր դժոխքում, որոնք անիծում են պատերազմը: Հարկ է միավորվել և մարդկանց մղել ուխտի գնալու Քեմախ-Բողազ: Այնտեղ ուխտագնացները իրենց հոգում պետք է վերապրեն 1915-ին կատարվածը, ունկնդրեն խորխորատի գերեզմանին, և իրենց մեջ հարություն տալով այդ աներևակայելի, բայց իրական սարսափին, մարդկանց մեջ վճռականություն ներարկեն երբեք այդպիսինը թույլ չտալու»:

Մայիսի երկրորդ կեսին Քեմախում ոչնչացվեց մի մեծ քարավան: Ականատեսը պատմում է, որ չեթեներն ու ոստիկանները գետը նետեցին 15 տարեկանից ցածր բոլոր երեխաներին: Ով փորձում էր լողալով դուրս գալ, գնդակահար էր լինում:

Պատմում է ուղտապահ Ալի Մեհմեդը. «Ես ռազմամթերք կը փոխադրէի Երզնկայէն Կարին: Մէկ անգամ 1915 յունիսի մէջ, երբ եկայ Խոթուրի կամուրջին մօտ, ահռելի տեսարան մը ներկայացաւ իմ աչքերուն: Անթիւ, անհամար մարդու դիակներ մեծ կամուրջին 12 կամարները լեցուցած էին, դէմ էին առած եւ ջուրը իր ընթացքը փոխած՝ կամուրջէն անտին կը վազէր: Սոսկալի էր տեսնելը, երկար սպասեցի քարավանովս, մինչեւ որ այդ դիակները քաշուեցան եւ կարողացայ կամուրջէն անցնիլ: Սակայն կամուրջէն մինչեւ ճիշիս ամբողջ ճանապարհը լեցուն էր դիակներով, ծերեր, կիներ, երեխաներ, արդէն հոտած, նեխուած եւ ուռած: Այնպիսի գարշահոտութիւն մը կար, որ անցնիլ այդ ճանապարհով անհնար էր: Իմ երկու ուղտապաններս այդ հոտէն հիւանդանալով մեռան եւ ես ստիպուեցայ ճանապարհս փոխել: Անլուր եւ զարհուրելի ոճրագործութեան զոհեր եւ հետքեր էին ասոնք, իսկ բոլոր դիակները հայեր, թշուառ հայեր էին»[2]:

Երզնկայի բնակչությունը տեղահանվեց հունիսի 7-10-ը: Երեք քարավանով բռնագաղթվեց քաղաքի գրեթե ամբողջ բնակչությունը: Նախապատրաստվելու համար տրվեց ընդամենը 24 ժամ ժամանակ: Միայն մի քանի հարուստներ կառք վարձեցին, մնացած ամբողջ բնակչությունը տարագրվեց հետիոտն: Քաղաքի բնակչությունը տարվեց Քեմախ, որտեղ էլ նրանք ոչնչացվեցին: Այդ ջարդերից սարսռում էին նաև իրենք՝ թուրքերը:

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 126, թթ. 20-24:

[2] Նույն տեղում, ց. 1, գ. 632, թթ. 17-18:

Քեմախի կոտորածի հեղինակը մի հեծելազորային գունդ էր Խալիլ բեյի հրամանատարությամբ[1]: Երզնկայի բնակչությանը խեղդեցին Եփրատում, որը «ընդհանուր լողացող գերեզման» դարձավ երզնկացիների համար:

Օգոստոսի կեսերին քաղաքի 1800 ընտանիքներից կազմված քարավանը քրդերը հոչոտեցին Նաքրագ դաղի կիրճում: Քարավանին ուղեկցող ոստիկանները միացան ավազակներին: Տղամարդկանց կոտորեցին, կանանց մերկացրին և հագուստները տարան: Երբ քարավանը Մարաչ հասավ՝ ընդամենը 30 տղամարդ էր մնացել: Մեծ թվով ծերեր, հիվանդներ, երեխաներ ընկած մնացին ճանապարհներին: Բայց բզկտված քարավանը չարունակում էր առաջանալ դեպի հարավ:

Փիզվանում (Երզնկայից վեց վերստ հեռավորության վրա) սպանվեց 4000 հայ զինվոր[2]: Քեմախի կամրջից հազարավոր երիտասարդների վար նետելով թուրքերն ու քրդերը չէին հագենում, նրանք «400 երեխայի ողջ-ողջ թաղեցին հորերի մեջ»:

Ներկայացնում է Հ. Բարբին. «Էրզրումից ուղարկված առաջին քարավանը,- պատմում է ջարդից փրկված Սուքիասյանը,- թվով 1200 ընտանիք, 200 զինվորների ուղեկցությամբ գնաց դեպի Խարբերդ: Քարավանը կոտորվում է Թորթումի և Դուլի հարթավայրում: Երբ այդ լուրը հասավ Էրզրում, դեռևս չտեղահանված հայերը հրաժարվեցին քաղաքը թողնել: Սակայն գայմագամը նորից հաջողեց հայերին խաբել: Տարագիրների ևս մի խումբ շարժվեց Երզնկայի ուղղությամբ, դրան հաջորդեց 3-րդ խումբը: Սակայն հենց որ վերջին քարավանը թողեց Էրզրումը, Երզնկա հասածներին մորթեցին Քեմախի կամրջի մոտ և մարմինները նետեցին Եփրատ, իսկ 3-րդ խումբը նույնիսկ Երզնկա չհասավ ու ոչնչացվեց Ճորոխի ափին: Ես անձամբ ներկա էի այս սպանդին, որին զինվորների հետ միասին մասնակցում էր նաև թուրք բնակչությունը... Երբ կոտորածն ավարտվեց, իշխանությունները Բասենից, Վանից, Մանազկերտից, Նարանից ու Թորթումից կանչեցին թուրքերի ու նրանց բաժանեցին հայերի տներն ու ունեցվածքը»[3]:

Թուրք զինվորներից մեկը պատմել է, որ Բայբուրդից տեղահանվածների քարավանը երթաղաղար էր արել Քեմախում: Քարավանի բոլոր հայերին մեկը մյուսի հետևից սպանում ու նետում էին կիրճը: Միաժամանակ բղավելով. «Սպանե՛ք, սպանե՛ք, նորեն են գալիս»: Սպանելուց առաջ կանանց ու աղջիկներին բռնաբարում էին, ջախջախում էին երեխաների գլուխները, երբ նրանք լաց էին լինում կամ այլևս քայլել չէին կարողանում: Ուղեկցող զինվորն ինքն էր բռնաբարել մի հայ աղջնակի: «Այստեղ երեք մերկ աղջիկների դիակներ էին ընկած,- չարունակեց նա,- ես դրանց թաղեցի բարի գործ կատարելու համար»[4]: Քեմախի չրջանում ոչնչացվեց Էրզրումի տղամարդկանց ճնշող մեծամասնությունը, այնտեղ մորթեցին Էրզրումցի 700 ընտանիքի անդամների, 800 երեխայի կենդանի թաղեցին, իսկ 500-ին նետեցին ջուրը: Քեմախում ոչնչաց-

---

[1] **Lepsius J.,** Berichte..., s. 309.

[2] **Чалхушьян Гр.,** նշվ. աշխ., էջ 82-83:

[3] **Барби А.,** նշվ. աշխ., էջ 15-16:

[4] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 248:

վեց Էրզրումից բռնագաղթվածների 70 տոկոսը:

Կոտորածների ընթացքում Էրզրում-Սվազ խճուղին կառուցող մոտ 3000 հայ երիտասարդներ նույնպես այդ վայրերում՝ Սանասար դարասում (Էրզրումի ու Մամախաթունի արանքում) ոչնչացվեցին:

Մի ջարդարար պատմել է. «Անգամ մը կամուրջի մը վրայ հայեր սուինահարելով գետը կը նետէինք, որովհետեւ մէկ հայը գնդակ մը չարժէր, ըստ հրամանի: Հայ մը շատ պաղատեցաւ, որ ժանտարման զինք գնդակով սպաննէ եւ անոր քանի մը կարմիր ոսկի խոստացաւ: Համաձայնեցան: Հայը ոսկիները վճարեց: Ժանտարման նորէն սուինով զարկաւ ու գետը նետեց զայն»[1]:

Երզնկացիների ջարդին եռանդուն մասնակցություն ունեցավ նաև օսմանյան խորհրդարանի անդամ, տեղի չեթեների հրամանատար Ալաթը:

«Երզնկայի կողմերում հայերի դեմ գործադրված արարքները,- ասել է տեղի թուրքերից մեկը,- ոչ Ղուրանն է ընդունում, և ոչ էլ Շերիաթը»: Երզնկայի կառավարիչ Մեհմուդ բեյը հայերին կոտորելով 50.000 լիրայի տեր դարձավ և առաջ քաշվեց ու նշանակվեց Կաստամոնուի վալի: Երզնկա քաղաքի շրջակայքում բնաջնջվեց մոտ 30.000 հայ, «կանայք ու երեխաները թաղվեցին ողջ-ողջ: Հարյուրավոր կանայք ու կույսեր նետվեցին Եփրատ», հայ երեխաները բաժանվեցին թուրքերին[2]: Նույն միտքը հաստատում է նաև Ե. Գեղամյանցը: Նա գրում է, որ Երզնկայի 30.000 հայությունը բնաջնջեց, ցաք ու ցրիվ արեց Մեհթուն (Մահմեդը)[3]:

Առաջին քարավանը Երզնկայից մեկնարկեց մայիսի 27-ին: Նա հիմնականում կազմված էր ունևոր մարդկանցից, որոնք փոխադրամիջոց վարձելով ի վիճակի էին: Նրանք իսկապես հասան տեղահանման երթուղու միջանկյալ վայրը՝ Խարբերդ: Հունիսի 8, 9 և 18-ին նոր քարավաններ մեկնեցին՝ ընդհանուր թվով մոտ 20.000 հոգի: Շուտով լուր ստացվեց, որ քրդերը հարձակվել են անպաշտպան քարավանների վրա և նրանց լրիվ կողոպտել: Այդ լուրերի ճշտությունը հաստատեց մի թուրք խոհարարուհի: Նա «արցունքների միջից պատմեց, որ քրդերը պատվազրկել են կանանց և ապա սպանել, իսկ երեխաներին նետել են Եփրատ»: Հունիսի 11-ին զորքեր ուղարկվեցին քրդերին պատժելու: Սակայն այդ անելու փոխարեն զորքը կոտորեց անպաշտպան քարավանը, որը հիմնականում կազմված էր կանանցից ու երեխաներից: Կոտորածին մասնակցած թուրք զինվորը վկայեց, թե «կանայք ինչպես էին ծնկաչոք աղաչում խնայելու և թե ինչպես նրանցից մի քանիսը իրենց երեխաներին գետը նետեցին: Մենք սարսափած հարցրեցինք. «Եվ դուք կրակո՞ւմ էիք կանանց ու երեխաների վրա»: Հետևեց պատասխանը. «Իսկ մենք ի՞նչ պետք է անեինք: Դա հրաման էր: Ծանր էր կատարվածին նայել: Եվ ես չկրակեցի»[4]: Կոտորածից հետո մի քանի օր շարունակ Երզնկայի շրջակայքի ցորենի դաշտերում, որտեղ պետք

---

[1] **Քոչեան Ե.**, *Հողը փլաւ մեր գլխուն. Էջեր հայաջինջ սարսափներէն, Փարիզ, 1986, էջ 97:*

[2] **Lepsius J.**, *նշվ. աշխ., էջ 51-54, "Армянский вестник", 1916, № 7, Статья П. Бурыскина "В Эрзруме":*

[3] **Գեղամյանց Ե.**, *Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում, մաս 2-րդ, Բաքու, 1917, էջ 668:*

[4] *АН Арм. ССР, Информационный бюллетень, 1982, № 4, с. 17-18.*

է, որ թաքնված լինեին ինչ-որ թվով հայեր, մարդկանց որս էր տեղի ունենում[1]:

Հունիսի 8-ին, 9-ին և 10-ին Երզնկայից մեկնած քարավանները,- գրում է «Algemeine Missions Zeitschrifts»-ը.– արտաքնապես վատ տպավորություն չէին թողնում (երեխաները տեղավորված էին ձիասայլերին՝ ապահովված ջրով), ուղեկցում էին զինվորականները: Սակայն նրանց միայն մի մասը հասավ հաջորդ կայան: Քաղաքից արևելք դեպի Խարբերդ տանող ճանապարհի հարթավայրային մասը դեռ չանցած՝ քարավանը բարձրանում է Եփրատի գետափնյա բարձունքները: Ճանապարհն անցնում էր լեռների փեչերով, գետի ոլորաններին զուգահեռ:

Ուղիղ գծով մինչև Քեմախ 16 կմ էր, իսկ այդ պտույտների հետևանքով հասնում էր 55 կմ-ի: Այդտեղ քարավանները հարձակման են ենթարկվում և ընկնում աքցանի մեջ՝ մի կողմում քրդերը, մյուսում զինվորները: Տղամարդիկ գրեթե չկային, միայն անզեն կանայք ու երեխաներ էին: Սկզբում բոլորին լրիվ կողոպտեցին, ապա ահավոր եղանակներով մորթեցին և դիակները նետեցին գետը: Հազարավոր մարդիկ կոտորվեցին Երզնկայի կայազորի և մութեսարիֆի նստելատեղի Քեմախի կիրճում, որը քաղաքից միայն 12 ժամ հեռավորության վրա էր:

Երզնկայում էր նաև 3-րդ բանակի հրամանատարությունը: Այն, ինչ Քեմախում կատարվեց հունիսի 10-14-ին, գրում է մի օտարերկրացի, տեղի ունեցավ իշխանությունների գիտությամբ ու համաձայնությամբ:

Երկու երիտասարդ ուսուցչուհիներ հետևում են Քեմախով անցնող քարավաններից մեկին, որը հունիսի 10-ին ընկավ խաչաձև կրակի տակ: Առջևից ճանապարհը փակել էին քրդերը, հետևում՝ Թեչքիլաթի-մախսուսեի ջոկատները: Հայերը սարսափած նետվեցին գետին, իսկ երբ հրացանաձգությունը դադարեց, աղջիկներն ու նրանցից մեկի փեսան, որը քողարկվել էր կնոջ հագուստի մեջ, կարողանում են զարտուղի ճանապարհով հասնել Երզնկա: Այստեղ ժանդարմներից մեկը աղջիկներից փեսացու ունեցողին ուզեցավ տանել: Փեսան առարկեց և գնդակահար եղավ: Աղջիկներին տարան մի հարուստ թուրքի տուն, որտեղ նրանցից պահանջեցին մահմեդականություն ընդունել:

Գերմանացի բուժքույրեր Տ. Վեդելն ու Ե. Էլվերսը էրզրումից հետո աշխատանքի են անցնում Երզնկայում: 1915 թ. հունիսի սկզբին միսիայի ղեկավար Քոլեյը նրանց ասում է, որ հայ բնակչությունը Երզնկայի ծայրամասերից տեղափոխվելու է Միջագետք, սակայն որևէ կոտորած տեղի չի ունենալու: Տեղահանվածների սննդի հարցը լուծված է, նրանց անվտանգությունն ապահովելու են զինվորական ջոկատները: Կատարվեց լրիվ հակառակը: Կարմիր խաչի անձնակազմին արգելվեց չփումներ ունենալ տեղահանվածների հետ: Հայերին մի քանի օր ժամանակ տվեցին իրենց գույքը վաճառելու: Դրանք գնվեցին ծիծաղելի գներով: Բնակարանների բանալիները հանձնեցին կառավարչատուն: Շուտով հեռագիր ստացվեց, որ քարավանը հասել էր Խարբերդ[2]: Քաղաքում չարունակվեց բռնագաղթը: Շատ երեխաների տիրացան մահմեդական ընտա-

---

[1] *«Algemeine Missions Zeitschrift», 1915, № 11.*

[2] *АН Арм. ССР, Информационный бюллетень, 1982, № 4, с. 17-18.*

նիքները: Սակայն ավելի ուշ նրանք ևս ուղարկվեցին: Ուղարկեցին նաև տիֆով հիվանդ մի կնոջ: Հերթապահ հայ զինվորներից մեկն ասել է. «Շուտով կդառնամ 46 տարեկան, բայց վերցրել են զինվորական ծառայության, չնայած ամեն տարի բանակից ազատվելու համար վճարվել է... Երբեք կառավարության դեմ որևէ բան չեմ արել, այժմ ինձնից խլում են ամբողջ ընտանիքս, իմ 70 տարեկան, դժբախտությունից խեղճացած մորս, կնոջս և հինգ երեխաներիս: Եվ ես չգիտեմ, թե նրանց ո՞ւր են տանում»: Նա երեխայի նման լաց էր լինում, իսկ հաջորդ օրը եկավ միանգամայն հանգիստ և ասաց. «Այժմ գիտեմ, նրանք բոլորը մեռած են»: Զինվորը ճիշտ էր:

Թեհլիրյանի դատապաշտպան Ադոլֆ ֆոն Գորդոնը դատարանում ասաց. «1915 թ. հունիսին Երզնկա հասավ Կ. Պոլսի հրամանը և մունետիկն ազդարարեց հայերին. «Դուք պետք է մի քանի օրում կապեք այն իրերը, որ կարող եք ձեր հետ վերցնել, որովհետև տեղահանվելու եք»: Տեղահանությունը սկսվեց հունիսի 10-ին: Նախ հերթը հարուստներին և ունևորներին էր, որոնք ձի ու կառք ունեին, սա առաջին խումբն էր: Երկրորդ խմբին էր պատկանում Թեհլիրյանն իր ամբողջ ընտանիքով: Թե որքանով էր մեծ այդ խումբը, Թեհլիրյանն ի վիճակի չէ ասելու: Այս երկու խմբերին հետևեցին ուրիշ շատերը: Քաղաքի դռների մոտ սրանց միացան գյուղերից հավաքված բազմաթիվ հայեր:

Նրանք դեռ չէին հեռացել, երբ հարձակման ենթարկվեցին: Ո՞ւմ կողմից: Ժանդարմների, ինչպես նաև զանազան տեղերից հավաքված խուժանի՝ քրդերի, թուրքերի և այլոց կողմից: Նրանք նախ հայերից պահանջեցին հանձնել զենքերը: Խլեցին մինչև իսկ հովանոցները, ապա սկսեցին դրամ, ոսկի, ուտելիք փնտրել, իսկ կանանցից առան ամենից թանկագինը՝ իրենց անասնական կրքերին հագուրդ տալու համար: Դեռատի աղջիկներին, այդ թվում նաև ամբաստանյալի 15-16 տարեկան քույրերին, քարշ տվեցին թփերի մեջ, փոսի միջից ծնողների և եղբոր ականջին հասան այդ երկու երեխաների աղեկտուր ճիչերը... Աղջիկներն այլևս չերևացին: Քույրերից մեկի դիակն ամբաստանյալը կարողացավ տեսնել, երբ արթնացավ ուշաթափությունից: 22 տարեկան եղբոր գլուխը ... ճեղքված էր կացնով: Նրա աչքի առաջ մայրը գետին ընկավ՝ հավանաբար գնդակահարված»: Ընտանիքի մյուս անդամներն անհայտ կորան: Նա ինքն էլ հարված ստացավ գլխի հետևի մասում: Վիրավորվեց թևից ու ծնկից, որոնց հետքերը մնացել են[1]:

Երզնկացիների քարավաններից մեկը երեք օրում հասավ Քեմախ: Հաջորդ օրն իսկ, հունիսի 14-ին քարավանը հարձակման ենթարկվեց ու կողոպտվեց, առևանգեցին կանանց, աղջիկներին ու երեխաներին, սպանվեցին մեծ թվով մարդիկ: Ականատեսի վկայությամբ՝ ջարդեցին չորս ժամ չարունակ և այդ, ըստ Լեփսիուսի, «Քեմախի կառավարիչի բարի կամեցողութեամբ եւ Երրորդ բանակի հրամանատարի գիտութեամբ»[2]:

Պատմում է մի վերապրած հայ կին. «Երբ Քեմախի կիրճ հասանք՝ ժանտարմաներուն վերաբերմունքը փոխուեցաւ, սկսան հաւաքել այն հարստու-

---

[1] *«Թեհլիրեան արդարահատոյցը», էջ 159-161:*

[2] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 454:*

թիւնը, որ իրենց հետ տարած էին տարագրեալները: 50.000 ոսկի եւ դէզ մը զարդեղէն յանձնուեցաւ զինուորներուն... Կողոպտուած ժողովուրդը ժանտարմաներու հրամանին համաձայն դուրս ելաւ կիրճէն. անմիջապէս քիւրտերու խուժանը դիմաւորեց մեզ: Կիներն ու այրերը բաժնեցին իրարմէ եւ այրերը, որոնք բոլորովին անզէն էին, առաջնորդեցին մերձակայ բլրակի մը մօտ, ուր սկսան կոտորել անխնայ՝ բիրերով, քարերով, չարաչար սպանելով եւ գլուխները ջախջախելով... Քիւրտ խուժանը ... եկաւ կիներուն խումբին քով: Երբ ընտրեցին գեղեցիկ աղջիկները ու տարին, այն ատեն ժանտարմաները մեզ առաջնորդեցին մեծ աղբիւրի մը մօտ եւ հոն արգիլեցին մեզ ջուրին մօտենալ... Մինչեւ երեկոյ այս դրութեան մէջ սպասելէ ետք ստիպուեցանք մէջտեղ հանել թագցրուած դրամ եւ զարդեղէն եւ կաշառել ժանտարմաները, որով միայն հաւանութիւն առինք ջուր խմելու»[1]:

Այդ Երզնկայում էր, որ բժշկական փորձարկումներով հայերին մեռցնում էին: Նման փորձեր արվում էին մասնավորապես քաղաքի կենտրոնական հիվանդանոցում բծավոր տիֆով հիվանդների չաղտոտերծված արյունը ներարկելով առողջ հայ երիտասարդներին, հիմնականում բանակ զորակոչվածներին[2]:

«Ալեմդար» թերթը 1919 թ. հունվարի 8-ին գրում է՝ հարկ է, որ նկատի առնվի «աշխարհամարտի տարիներին հայերի վրա գործադրված ոճրագործություններն ու անգթությունները»: Անպատժելիության գերիշխանության հետևանքով էր, որ «Երզնկայում հայերի վրա բծավոր տիֆի փորձեր արվեցին: Մեր ասածը հաստատելու համար ունենք բավարար փաստեր...

Ինչպես հայերի տարագրության, ջարդին և կողոպուտին պատճառ եղողները, այնպես էլ այս գործին մասնակցողները պատասխանատու են... Ճշմարտությունը ոչ թե թերթերի սյունակներում, այլ դատարանում պետք է հաստատվի»:

Երզնկայի վարժարանին 70 հայ սաների գիշերը տարան և դպրոցի պատի տակ փորված փոսերում կենդանի թաղեցին: Մի հինգ տարեկան տղա հպարտությամբ պատմել է. «Ես ժամանակին գյավուր էի, ինձնից փոքր մի եղբայր էլ ունեի: Մահմեդական մորս հետ գյուղի վերևի ժայռը բարձրացանք, մայրիկս ինձ մի դանակ տվեց ու ասաց. «Այս դանակով եղբորդ գլուխը կտրի՛ր, որ լավ մահմեդական դառնաս և նրա համեղ կերակուրները ևս դու ուտես»: Կտրեցի եղբորս գլուխը: Նրան ժայռից վայր գցեցի ու տուն վերադարձա»:

Շոյբներ-Ռիխտերը 1915 թ. օգոստոսի 5-ին իր կրկնակի հաղորդագրությունում նշում է. «Էրզրումի և Բասենի հարթավայրերում, ճանապարհին, Մամախաթունի, Սանասարի, Եփրատի կամրջի վրա և Պերեսում, բացառապես երեխաների և ծերերի վրա, որոնց Երզնկա էին աքսորում, հարձակվեցին քրդերը և թուրք կամավորները: Վերջիններս հայերին կողոպտեցին ու սպանեցին: Զոհերի թիվը կազմում էր 10.000-20.000, մինչդեռ կառավարությունը պնդում է, որ այդ թիվը ընդամենը 3000-4000 էր»[3]:

---

[1] **Լեւոն Մեսրոպ,** նշվ. աշխ., էջ 214-215:

[2] «Թյուրքչի Ստանբուլ», 22 և 23 դեկտեմբերի 1918 թ.:

[3] **Lepsius J.,** Berichte, s. 116-121.

Երզնկայի հարթավայրի բնակիչները, թվով մոտ 20.000-25.000 հայեր, Խարբերդի ճանապարհին, ուր նրանց քշում էին ոմն Թալեաթը, ոստիկաններն ու քրդերը, այն պահին, երբ նրանք անցնում էին Քեմախի նեղ անցումով, ընկան թուրք զինվորների ճանկը: Բոլորին «կողոպտեցին ու ոչնչացրեցին, կանանց առևանգեցին»: Պետք է կարծել, որ Երզնկայի եպիսկոպոսն էլ զոհերի թվում է եղել: «Դիակները դարսվեցին սայլերի վրա, որ հենց այդ նպատակով էին պատրաստվել, և նետվեցին Եփրատի ջրերը: Այս կոտորածները տեղի ունեցան 1915 թ. հունիսի 10-19-ը»:

«Կապույտ գրքի» նախաբանում Բրայսը գրում է. «Այս հիշողություններն ապացուցում են, որ դա (երիտթուրքական քաղաքականությունը) փորձ էր բնաջնջելու մի ամբողջ ազգ, առանց տարիքի և սեռի տարբերության»:

«Թուրքերը,- Բրայսը մեջբերում է կատարում եղեռնը վերապրածներից մեկի պատմածից,- հավաքեցին բոլոր կանանց և երեխաներին, բոլոր ծերերին և նրանց, որոնք ի վիճակի չէին քայլելու, սպանեցին: Մոտ 100 քուրդ պահակներ շրջապատել էին մեզ, և մեր կյանքը կախված էր նրանց ողորմածությունից: Շատ հասարակ բան էր նրանց համար բռնաբարել աղջիկներին մեր ներկայությամբ: Շատ հաճախ նրանք բռնաբարում էին 8 կամ 10 տարեկան աղջիկներին, և քանի որ դրա հետևանքով շատերը ի վիճակի չէին լինում քայլելու, սպանվում էին: Մեր քարավանը դանդաղորեն առաջ էր շարժվում՝ ետևում դիակների կույտեր թողնելով...»:

Զարուհի անունով մի մեծահասակ տիկին, որին նետել էին Եփրատը, փրկվեց՝ կառչելով գետաքարերից: Նա սարսռում էր վերհիշելով, թե ինչպես հարյուրավոր երեխաներ թուրքերի կողմից «սվինահար էին լինում և նետվում Եփրատը, թե ինչպես տղամարդկանց ու կանանց մերկացնում էին, հարյուրներով միասին կապում, կրակում և նետում գետը»:

Ջարդերից մեկի մասին պատմում է ոստիկան Մստոն. «Քիւրտերը այս լեռները կտրեր են ձեզ կողոպտելու համար: Ձեր դրամները եւ զարդեղէնները բերէ՛ք մեզի պահ տուէ՛ք, որպէսզի Արաբկիր հասած ատեն վերադարձնենք» ասացինք հայերին:

«Ցորենի դէզի պէս ոսկեղէն եւ արծաթեղէն կուտակեցաւ հոն: Երեք ջորի բեռցան զանոնք ու ետ, Տիվրիկ ղրկեցին: Հասանք Արաբկիր: Անկէց անդին անջրդի դաշտ մը կար: Ժողովուրդը ծարաւէն հոն թափուեցաւ: Հայրանեանի կինը Արաբկիր չհասած ճամբան մեռաւ: Շատերը թոյն ունէին իրենց քով ու անձնասպան կ՚ըլլային: Ես չէի երեւակայէ, որ մահն ալ այդքան դիւրին է: Ժողովուրդին 1/4-ը հազիւ մնացած էր, երբ Մալաթիա հասանք: Այնտեղ ծանօթացայ թիւրքի մը հետ, որ իր գոհարեղէնները Սրվաս ծախելու կը տանէ: Հարցուցի անոր, թէ ուսկի՞ց են ատոնք: Մարդը պատասխանեց.

- Եփրատի վրայ մակոյկավար էի: Հոն բերին Կարնոյ եւ Երզնկայի հայերուն մնացորդները: Կարաւանը կանգ կ՚առնէր գետափին վրայ: Տեսնելու բան էր անոնց խեղճութիւնը: Կարելի չէր, որ անկեղծ միւսիւլման մը չհրճուէր ատոնք տեսնելով: Երբ սպաննելու ժամը գար, ոստիկանապետը կը հրամայէր, որ մնացած այրերը, ծերունիները մէկ-մէկ սիկար վառեն: Անոնք կը հնազանդէին: Յետոյ բոլորին ալ հրաման կ՚ընէր, որ աղօթեն: Աղօթքի պահուն կը գոռար

«ամէ՛ն»: Ու ժողովուրդը չղթայող ժանտարմաները կը սկսէին գնդակ թափել անոնց վրայ: Բոլորը ինկած կը հոնդային: Այն ատեն ժանտարմաներու ետեւը սպասող խուժանը կը յարձակէր անոնց վրայ քարերով, մահակներով, կացիններով ու մանգաղներով: Քիչ վերջը դիակներուն ջարդուփշուր կոյտը ափունքին վրայ սփռուելով՝ կը սեւցնէր դայն: Մենք, բազմաթիւ մակոյկավարներ, ջուրին վրայէն այս բոլորը կը դիտէինք մեր սովորութեան համեմատ, մինչեւ որ մեր գործելու կարգը գար: Այդ բոլոր դիակները մակոյկներով կը տանէինք գետին մէջտեղը ու կը թափեինք ջուրը: Այս գոհարեղէնները, ահա՛, այդ դիակներուն վրայէն հաւաքած եմ»[1]:

«Армянский вестник»–ը 1916 թ. իր № 41-ում տպագրեց Ա. Վեղել–Յարլսբերգի պատմածը Բասեն-Եփրատ շրջանում իր և իր ընկերուհու դեգերումների մասին:

1914 թ. աշնանը, Ռուսաստանի հետ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց անմիջապես հետո, Էրզրումում թաքուն պլաններ մշակեցին հայերին լրիվ ոչնչացնելու համար: Սակայն եղան ազնիվ Թուրքեր, որոնք բժիշկ Թաշչյանի (ռազմական հոսպիտալում աշխատող) միջոցով այդ մասին տեղեկացրին գերմանուհի քույրերին: Քույրերը, իրենց հերթին, հայերին սպառնացող վտանգի մասին տեղյակ պահեցին գերմանական պարետին, որն այն ժամանակ հայ բնակչությանը կոտորածից փրկեց, սակայն հարկադրված եղավ հրաժարական տալ:

Որպեսզի օտարերկրացիներից թաքցվեր այն ամենն, ինչ տեղի էր ունենում հայկական նահանգներում, Փոքր Ասիայում աշխատող բոլոր միսիոներներին արգելվեց նամակներով իրար հետ կապվել: Նրանց թույլատրված էր հեռագրեր ուղարկել և այն էլ միայն դրամական խնդիրներով ամերիկյան միսիայի ղեկավար Պիտտին, որը բնակվում էր Կ. Պոլսում: Երբ 1915-ին Երզնկայում սկսվեցին զանգվածային հիվանդություններ, քույրերը չտապեցին այնտեղ՝ հայկական կոտորածների մասին չարագույն լուրերի ճնշող տպավորություններով: Զանցած մի ամիս սկսվեցին հարուստ և մտավորական հայերի ձերբակալությունները: Մի քանի օրվա ընթացքում նրանց բոլորին ուղարկեցին Խարբերդ, սակայն քչերը տեղ հասան: Քույրերի կարծիքով՝ մեծամասնությունը կոտորվեց ճանապարհին: Չորս օր անց Երզնկայից դուրս եկան երկրորդ, ապա նաև երրորդ քարավանները և քաղաքում գրեթե հայ չմնաց: Երբ այդ քարավանները հասան Քեմախի կիրճ և ոտ դրեցին կամրջի վրա, նրանց ուղեկցող զինվորները հրացանային կրակ բացեցին հայերի հետևից, իսկ առջևից՝ կամրջի այն կողմը գտնվող ժանդարմները: Այդ ամենի մասին հետագայում քույրերին պատմեցին իրենք՝ ժանդարմները, արդարանալով, որ իրենք լոկ կատարել են պետերի հրամանը:

Երզնկայում քույրերն ապրում էին բարձրադիր տեղում, որն իշխում էր Էրզրումի, Բայբուրդի և Դերջանի ճանապարհների հանգույցի վրա: Նրանք ամեն օր տեսնում էին հայերի երկար քարավանները, որոնք գնում էին անհայտ էր, թե ուր: Երբ քույրերն այդ մասին հարցրեցին ժանդարմներին, վերջինները

[1] **Քոչեան Ե.,** նշվ. աշխ., էջ 74-75:

պատասխանեցին, թե դա բացարձակապես նշանակություն չունի, քանի որ այդ հայերից որևէ մեկը նշանակված վայրը չի հասնի: Քարավանները, ասացին ժանդարմները ավելի մարդաշատ են եղել, ճանապարհին նրանց աստիճանաբար «կրճատում են»: Եվ երբ քույրերից մեկը շատ հուզված բղավեց. «Աստվա՛ծ իմ, արդյո՞ք նման բարբարոսություն հնարավոր է», ժանդարմները անտարբերությամբ պատասխանեցին.

– Այդ ի՞նչ է որ: Եթե դուրս գայիք ճանապարհի վրա, այնտեղ հայերի դիակներն այնքան շատ են, որ չարժվել չես կարող:

Քույրերն սկսեցին համոզել ժանդարմներին, որ անպաշտպաններին սպանելը ծանր մեղք է և դրա համար էլ նրանք պետք է այդ անելուց ձեռնպահ մնան...

Ամեն անգամ, երբ Երզնկայի կողքով նոր քարավան էր անցնում, մահմեդական ամբոխը դիվային ցնծությամբ դուրս էր նետվում քաղաքից և ամեն մեկը վերցնում էր իրեն դուր եկած աղջիկներին ու երեխաներին: Ի վերջո քույրերը ևս որոշեցին իրենց համար երեխա վերցնել, որպեսզի այդպիսով գոնե մի քանիսին փրկեն: Նրանց հաջողվեց ստանալ չորս տղա և երկու 8–14 և մեկ չորս տարեկան աղջնակի: Վերջինին նրանք տվեցին մի Թրքուհու՝ Հիվանդանոցի խոհարարուհուն, խնդրելով նրան տանել Հիվանդանոց և հոգալ մինչև իրենք վերադառնան: Սակայն Հիվանդանոցի վերակացու Թուրքը դժբախտ երեխային փողոց էր նետել, իսկ խոհարարուհուն՝ ծեծել:

Երբ քույրերը երեխաների հետ վերադարձան Հիվանդանոց, նրանց ներս չթողեցին:

Այդ ժամանակ Երզնկայով պետք է անցներ հայերի վերջին քարավանը: Քույրերը որոշում են նրանց հետ գնալ, որպեսզի քրդերի կամ Թուրքերի հարձակման դեպքում համոզեն ձեռք չտալ դժբախտ աքսորյալներին: Մինչ այդ նրանք գնացին մութեսարիֆի օգնականի մոտ՝ հայտնելու իրենց խնամքի տակ վերցված երեխաների մասին: Պաշտոնատարը իմանալով երեխաների տարիքն ու սեռը, հարցրեց, թե ինչո՞ւ նրանք աղջիկներից բացի տղաներ են վերցրել, ապա հրամայեց երեխաների քրիստոնեական անունները փոխել մահմեդական անուններով: Հաջորդ օրն առավոտյան քույրերը ներկայացան մութեսարիֆին, որը նրանց ընդունեց կոպիտ հայհոյանքով:

– Լսեցի, որ դուք ցանկանում եք գնալ քարավանի հետ: Այդ ես երբեք Թույլ չեմ տա... Հենց այժմ դուք պետք է այստեղից մեկնեք:

Նա ծառաներին հանձնարարեց գնալ հյուրանոց և այնտեղից տանել քույրերի վերցրած երեխաներին:

Իմանալով, որ որոշված է իրենց արտաքսել Թուրքիայից, քույրերը կառք վարձեցին և նույն օրը մեկնեցին Սվազ:

Հիվանդանոցի գերմանացի ծառայողներից մեկը նրանց հրաժեշտ տալով հայտնեց, որ մի հայի լքված տանն ինքը տեսել է ավելի քան 50 երեխա, որոնց Թվում էին նաև մութեսարիֆի խլած վեց երեխաները և որ վերջինիս հրամանով նրանք բոլորը մորթված են:

Հասնելով Էնդերեզ՝ քույրերը գիշերը հրացանների համազարկի ձայն լսեցին: Առավոտյան նրանց բացատրեցին, որ «ազատվել են գաղթականներից

և այն երիտասարդ հայերից, ովքեր աշխատում էին ճանապարհաշինության վրա»: Թուրքերը միշտ այդպես էին վարվում՝ աշխատանքն ավարտելուց հետո սպանում էին դա կատարող հայերին: Ժանդարմները քույրերին պատմեցին, որ այդ գիշեր իրենք իշխանությունների հրամանով 350 մարդ են սպանել:

Քանի որ ստորադաս պաշտոնյաները և ժանդարմները գիտեին, որ այդ քույրերը գերմանուհիներ էին և Թուրքերի բարեկամ, դրա համար էլ նրանց սրտաբաց պատմում էին այն ամենի մասին, ինչ կատարվել էր հայերի հետ: Քույրերին հաջողվեց, օրինակ, իմանալ, որ «Երզնկայից մինչև Սվազ ընկած ամբողջ տարածքի մահմեդականներին հրամայված էր սպանել ձեռք ընկած բոլոր հայերին»:

Քույրերի հետ Սվազ գնացին երկու սպա: Նրանց ուղեկցող ժանդարմները անընդհատ փնթփնթում էին, թե սպաներին ևս «պետք է ուղարկեին նրանց մոտ»: Երրորդ օրը սպաների կառքն այլևս չերևաց: Քույրերը հարցուփորձ անելով իմացան, որ այդ սպաները և նրանց կառապանը հայեր էին: Թուրքերը կառապանին հարկադրել էին կառքը ճանապարհից հանել և սպանել էին թե՛ նրան, թե՛ սպաներին:

Հունական մի գյուղով անցնելիս քույրերը տեսան մի զինված թուրքի, որը հպարտությամբ հայտարարեց, որ «ինքը կառավարության կողմից նշանակված է ոչնչացնելու բոլոր այն հայերին, որոնք ապաստան կփնտրեն գյուղում»:

Քույրերը «նեխող դիակների հոտ առան, իսկ չուտով նկատեցին բազմաթիվ դիակներ թափված ճանապարհի երկու կողմերին»:

Էնդերեզից մինչև Սվազ քույրերը անընդհատ հանդիպում էին հայերի մեծ խմբերի, որոնք աշխատում էին ճանապարհների նորոգման վրա: «Այդ բոլոր դժբախտները չուտով կոտորվեցին»:

Գյավուր Կաղում արական սեռի որևէ հայ չէր մնացել: Քոջաջիքում քույրերը լսեցին կառավարական շենքի մոտ հավաքված ամբոխի խոսակցությունը՝ «Բոլորին կոտորեցին, մնաց միայն Հովհաննեսը, որին գտնել չկարողացան»[1]:

Տրապիզոնցի մի կին վկայել է, որ Երզնկայում գետինը պատված էր կտրված գլուխներով, մարդկանց ձեռքերով ու ոտքերով, կանանց մազերով. «Եփրատը տանում էր բազմաթիվ մարդկային դիակներ»: Երզնկայի մութեսարիֆ Մահմուդը փոս էր փորել տվել ու նրանում 450 հայ երեխա ողջ-ողջ թաղել[2]:

Ահա մի քանի քաղվածքներ դատարանում Թեհլիրյանի տված ցուցմունքներից. «Ծնողներս միշտ պատմում էին, որ ... (1915-ին) միշտ ահ ու դողի մեջ էինք, թե նորից տեղի են ունենալու ջարդեր, բայց պատճառները հայտնի չէին... Մայիսին լուր տարածվեց, թե դպրոցները պետք է փակվեն ու քաղաքի մեծամեծներն և ուսուցիչները խմբով այլ տեղ պիտի առաքվեն... Այս խմբերին արդեն տարել էին, երբ լուր տարածվեց, որ նախորդ տեղահանվածներն արդեն սպանվել են...

Հունիսի սկզբին հրաման տրվեց, որ ժողովուրդը պատրաստվի քաղաքից

---

[1] *"Армянский вестник", 1916, № 4.*

[2] *Bryce J., նշվ. աշխ., էջ 246:*

դուրս գալու ... Երեք օր հետո առավոտյան չատ կանուխ ժողովուրդը քաղաքից դուրս հանվեց: ...Քաղաքից դուրս եկած օրն իսկ ծնողներս սպանվեցին ... Երբ խումբը քաղաքից մի քիչ հեռացավ, կանգնեցրին, ժանդարմները սկսեցին կողոպտել... Կողոպուտի ժամանակ քարավանի առջևից մեզ վրա կրակեցին: Այդ պահին ժանդարմներից մեկը քաչեց-տարավ քրոջս: Մայրս սկսեց գոռալ. «Աչքերս կուրանան»... Քրոջս տարան ու բռնաբարեցին... Զինվորներն ու ժանդարմները սկսել էին ջարդը, երբ վրա հասավ խուժանը, և այդ ժամանակ կրտսեր եղբորս գլուխը ճեղքեցին, իսկ մայրս ընկավ... Գլխիս մի հարված ստացա ու ընկա գետնին. դրանից հետո ոչ մի տեղեկություն չունեմ... այդպես մնացի գուցե երկու օր: Երբ բացեցի աչքերս, չուրջս լի դիակներ տեսա, քանի որ ամբողջ քարավանը սպանված էր... Մորս դիակը տեսա երեսնիվայր ընկած, իսկ եղբորս դիակն ընկած էր ինձ վրա... Սրունքս վիրավոր էր, թևիցս արյուն էր հոսում...

Լեռների մեջ մի գյուղ գնացի: Այնտեղ մի պառավ (քրդուհի) ինձ իր տունն առավ, բայց երբ բուժվեցին վերքերս, ասացին, որ ավելի երկար ինձ պահել չեն կարող, որովհետև կառավարությունն արգելել էր. նրանք, որոնք իրենց մոտ հայեր էին պահում, պատժվում էին մահվամբ... Շատ բարի մարդիկ էին այդ քրդերը և ինձ խորհուրդ տվեցին անցնել Պարսկաստան: Ինձ քրդական հին հագուստներ տվեցին: Անցա Պարսկաստան:

Լուր ստացվեց, որ ռուսները գրավել են Երզնկան... 1916-ի վերջին էր... Երբ Երզնկա հասա, մեր տան բոլոր դռները խորտակված էին, մի մասը կործանված էր, իսկ երբ ներս մտա, ընկա գետնին... Երբ ուշքի եկա, գնացի երկու իսլամացած ընտանիքների մոտ, սրանք ամբողջ քաղաքում միակ ազատվածներն էին»[1]:

Հ. Ֆիրբյուխերը «Freidens Ward» ամսագրի 1930 թ. համարում նկարագրելով Երզնկայի հայության ջարդը Քեմախում, գրում է. «Այն, ինչ տեղի ունեցավ այնտեղ բազմահազար հայերի հետ, ներկայացնում էր աներևակայելի գազանության ու դաժանության մի պատկեր, որը, թվում էր, հազարամյակների խելահեղության խտացումն է... Անիծված հողի այդ պատառիկին այն հառնեց վիթխարի հրեշի կերպով հունիսյան չոգ օրը՝ հանդիսավոր հաստատելով, որ ողջ քաղաքակրթությունը թվացյալ չղարշ է, որն ամեն օր ու պահ կարող է պատռվել երկոտանի գազանի դաժան կամքով»: Հունիսի 8-ին Քեմախում մի թուրք վեց տարեկան երեխային մորից խլեց, մեխեց փայտե խաչին ու կանչեց. «Ձեր Քրիստոսն ու խաչը թող ձեզ ազատեն»[2]: Թուրք ժանդարմը բացականչեց. «Դա սարսափելի էր (Քեմախում տեսածը)»[3]:

«Երզնկայում,- գրում է Դուխովը,- տեղաբնակ հայերից միայն մի քանի տասնյակ կին էին մնացել, որոնք մեր (ռուսական) բանակի կողմից քաղաքը գրավելուց հետո դուրս էին պրծել հարեմներից: Երզնկայի հարթավայրում և մերձակա լեռների փեշերին մինչև այժմ թափված են տասնյակ հազարավոր

---

[1] **Թեհլիրեան Ս.,** Վերյիշումներ, էջ 8-29:
[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 538:
[3] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 248:

մորթված հայերի ոսկորներն ու գանգերը, այդ թվում նաև երեխաների: Դրանք այն հայերի մնացորդներն էին, որոնք անցյալ տարվա հունիսին բռնագաղթվել էին Էրզրումից, Խարբերդից, Բայբուրդից և այլ վայրերից»[1]:

Երբ ռուսական զորքերը մտան Երզնկա, նրանց հրամանատարին ներկայացան մի քանի հայեր, և մի աղջիկ՝ Հեղինե Ասատրյանը: Նա պատմեց. «Մարզի հարյուր հազարավոր հայերից փրկվել են մի քանի հարյուր պղծված ու ստորացված աղջիկներ ու երեխաներ... Մենք պատվազուրկ եղանք, նաև զրկվեցինք ծնողներից, հարազատներից, ունեցվածքից... Նետվել ենք բախտի քմահաճույքին»[2]:

Քաղաքը դատարկ էր, չուկան՝ կողոպտված ու ավերված: Երզնկայի կազան վիլայեթի գերեզմանոց էր, որտեղ իրենց մահկանացուն կնքեցին 200 հազ. հայ բոլոր վիլայեթներից: Քղիից ոչ հեռու մորթվեցին տասնյակ հազարավոր էրզրումցիներ: Մամախաթունի և Երզնկայի միջև գտնվող Սանսարդարասիում ջարդվեցին էրզրում-Սվազ ճանապարհը կառուցող անդեն հայ զինվորները՝ իննը գումարտակ: Այստեղ մի փոսում կենդանի թաղել էին 1-5 տարեկան ավելի քան հազար երեխայի: Նրանց ոսկորներն ու գանգերն ասում էին թուրքերի գազանությունների մասին: Երզնկայից 20-25 վերստ հեռավորության վրա գտնվող Խան գյուղի մոտ թափված էին Էրզրումի գյուղերի բնակիչների ոսկորներն ու գանգերը:

1915 թ. հունիսին ժանդարմների հսկողությամբ Տրապիզոնի, Օրդուի, Սամսոնի, Կիրասունի, Բայբուրդի, Սվազի, Խարբերդի, Քղիի, Էրզրումի հայերին քշեցին Երզնկայի ուղղությամբ, ճանապարհին չատերին սպաննելով քարավանները հասցրեցին Քեմախ, որի կիրճում զոհերին սպասող ժանդարմներն ու ասկյարները մի անգամ ևս քարավանները մաքրազարդեցին՝ հանեցին հայերի հագուստները, մայրերի աչքի առաջ բռնաբարեցին դուստրերին, նրանցից գեղեցիկներին տարան իրենց հետ, մյուսներին միմյանց կապելով սպաննեցին սառը զենքերով և դիակները եփրատ նետեցին: «Երբ ես ռուսական զորքի հետ մտա Երզնկա,- գրում է Հ. Բարբին,- տեսա փողոցներում թափված մարդկային ոսկորները», որոնք ժամանակի ընթացքում սպիտակել էին: Այդպիսիք հազարներով կարելի էր տեսնել Երզնկայի հարթավայրում և այն չրջափակող լեռների լանջերին»[3]: «Армянский вестник»-ն իր 1916 թ. թիվ 26-ում նույն իրողությունը արձանագրելուց հետո ավելացնում է, թե դրանք ոչ միայն Երզնկայի, այլև Էրզրումի, Խարբերդի և ուրիշ այլ նահանգների տարագրվածների ոսկորներն էին:

Ռուսները 1916-ին գրավեցին Երզնկան: Նրանք թուրքերի մեջ գտան ավելի քան 300՝ տասից բարձր տարիքի երեխա, որոնց մահմեդականացրել էին: Նրանցից չատերը մոռացել էին իրենց անունը և հայերեն չէին խոսում: Նույն ձևով փոխվել էին մի քանի տասնյակ հայուհիների անունները: Նրանցից չատերը հղի էին[4]: Ռուսական բանակի գրավումից հետո ֆիդայիները՝ Սեբաս-

---

[1] "Кавказское слово", 31-го июля 1916 г.

[2] Նույն տեղում, 1-го августа 1916 г.:

[3] **Барби А.,** նշվ. աշխ., էջ 52:

[4] "Армянский вестник", 1916, № 32.

տացի Մուրադ, Կայծակ Առաքել, Վարդան Շահպազ, ձեռնամուխ եղան հայա-հավաքման գործին:

Զգալի թվով հայեր վերադարձան իրենց բնակավայրերը, մասնավորապես, շատ հայեր գնվեցին Դերսիմի քրդերից: Ըստ Բրեստ–Լիտովսկում 1917 թ. դեկտեմբերի 2-ին կնքված համաձայնագրի, դեկտեմբերի 5-ին ռուսական կովկասյան և թուրքական երրորդ բանակների հրամանատարները Երզնկայում նույնպես կնքեցին զինադադարի պայմանագիր, ըստ որի՝ մինչև Եփրատ ընկած շրջանները մնում էին ռուսներին:

1918-ի հունվարին թուրքական բանակը օգտվելով Ռուսաստանի կովկասյան ռազմաճակատի փլուզումից, ընդհանուր հարձակման անցավ, որի առաջին զոհերից մեկը դարձավ Երզնկան:

ԲԱԲԵՐԴ

Բաբերդ քաղաքում և Սպերի հայկական 29 գյուղերում կար 15.000-16.000 հայ:

Բաբերդի գավառում միշտ ուժեղ է եղել թուրքական հալածանքների դեմ պայքարը: Աշխարհամարտի նախօրյակին գավառում մեծաթիվ հայդուկային խմբեր կային, որոնց անդամներից շուրջ 550 հոգի հետագայում հայ կամավորական գնդեր մտավ:

1914 թ. դեկտեմբերին չեթեները խուզարկեցին Լուսհոնք գյուղը և 16 հոգու ձերբակալեցին դասալքության մեղադրանքով: Ապա բանտերից ազատ արձակվեցին քրեական հանցագործները, որոնցից 500 հոգին իրականացրեցին Քսանթա, Քարավերակ, Խայեկ, Սալասա, Լուսհոնք գյուղերի կողոպուտն ու ջարդը: Ընդ որում՝ այդ գյուղերը հիմնովին ու վերջնականապես հիմնահատակ արվեցին: Բաբերդի բոլոր եկեղեցիները վերածեցին զինվորական հիվանդանոցի ու մզկիթների, մեծ թվով մտավորականներ ոչնչացվեցին բանտերում: Մայիսի 26-ին Բաբերդ են գնում մի խումբ թուրք և գերմանացի սպաներ: Հաջորդ օրը հայկական բոլոր գյուղերը շրջապատվում են: Ականատեսներից մեկը պատմում է, որ հունիսի 1-ին Բաբերդի գյուղերը շրջափակվեցին և մեկ շաբաթում բոլորը կողոպտվեցին ու ավերվեցին: Երրորդ բանակի 4000-5000 զինվորներ նախ գյուղերից հեռացրեցին մինչև 50 տարեկան տղամարդկանց, որոնց քիչ անց սպանեցին[1]:

Կ. Պոլսից ստացված մի հեռագիր հավաստում էր, որ Բաբերդում մայիսի վերջին վեց-յոթ օրում 15 տարեկանից բարձր տարիք ունեցող ամբողջ արու բնակչությունն սպանվեց, իսկ մյուսները տեղահանվեցին երեք քարավաններով: Բացի զորանոց կառուցող 20 որմնադիր վարպետների ընտանիքներից, բոլոր հայերը տեղահանվեցին, որոնց հինգ օր շարունակ խոչտանգելով հասցրեցին Կարաղուլաղի դաշտ: Այնտեղ բոլոր տղամարդիկ առանձնացվեցին ու հանձնվեցին թուրք խուժանին, որը նրանց հաշվեհարդարի ենթարկեց Այ-Տողան լեռան ստորոտում: Մեծ թվով կանայք ու աղջիկներ նետվեցին Ճորոխ գետը, շատերը ոչնչացվեցին Երզնկա-Քեմախ-Խարբերդ գծի վրա:

---

[1] **Lepsius J.**, *Berichte, s. 4.*

Քաղաքի բնակչությունը տեղահանվեց հունիսի 3-ին: Նրանց առաջին քարավանից 260 երիտասարդի սպանեցին Սորդանի կիրճում, Թեմի առաջնորդ Անանիա ծ. վրդ. Հազարապետյանին կախաղան հանեցին: Իսկ տարագրվածների մեծ մասին ոչնչացրեցին Դերջանի Կոտուր գյուղի մերձակայքում ու Քեմախում: Բաբերդում բռնագաղթն ու ջարդը անձամբ ղեկավարում էր գայմագամը, որին քիչ անց ռուսական զորքերը գերի վերցրեցին: Լսելով Բաբերդի տեղահանության մասին, Թուրքական բանակում ծառայող մի խումբ սպերցի երիտասարդներ լուսհոնքցի Մ. Արսլանյանի ղեկավարությամբ փախուստի դիմեցին և, ձևավորելով 60 հոգանոց մարտական ջոկատ, մեկ ամիս չարունակ հաջող կռիվ մղեցին Թուրք ջարդարարների դեմ: Նրանք հաջողեցին Խրրխզյաթաղ լեռան մոտ ճեղքել թշնամու պաշարողական գիծը և միանալ ռուսական բանակին, մտնել Անդրանիկի կամավորական գունդը:

1916-ին ռուսական բանակը գրավեց Բաբերդը: Եղեռնից փրկված սպերցիները վերադարձան իրենց բնակավայրերը: Գավառապետ նշանակվեց Սեպուհը, որը, երբ 1916-ին ռուսները նահանջեցին, իր 350 մարտիկներով դեմ դիմաց մնաց Թուրքական բանակի հետ: Սեպուհը հաջողեց բաբերդցիներին, այդ թվում 70 որբերի, փրկել ու հասցնել Արաքսի մյուս ափը:

«Армянский вестник»-ը 1917 թ. իր №№ 48-49-ում Բաբերդի մասին գրում է. «Հարկ կա՞ ավելորդ անգամ հիշեցնել, թե այս գեղեցիկ, հարուստ և բերրի երկրամասը ներկայումս այցելուին ներկայանում է ամենից առաջ ավերակներով ու մոխրակույտերով, վհատ կանանցով ու որբ երեխաներով: ... Բայբուրդից 50 կմ հեռավորության վրա Մամախաթունի ուղղությամբ մի ոչ մեծ բարձունք վերածվել էր մարդու սպանդանոցի... Ամենուրեք չարունակում են թափված մնալ դեռևս չթաղված հազարավոր երեխաների, կանանց ու տղամարդկանց դիակներ, որոնց միակ մեղքն այն էր, որ հայ էին ծնվել:

Կաթողիկոսին հասցեագրված մի նամակում նշվում է. «Բաբերդի հայությունը Կոթերի կամրջի մոտ հարձակման ենթարկվեց չեթեական խմբի կողմից ու ամբողջությամբ ոչնչացվեց»[1]:

Վկայում է Բրայսը. «Բաբերդի և շրջակայքի մի քանի տասնյակ հազար հայեր քշվեցին Երզնկայի ուղղությամբ, «առավելապես ծերերէ, անկարներէ, կիներէ, աղջիկներէ եւ մանուկներէ կազմուած այս խումբը ենթարկուեցաւ յարձակման: Ելուզակները եւ քիւրտերը սուրէ անցուցին բոլորն ալ, երբ միւս կողմէ անոնց պարապ ձգած տուներն ու գիւղերը կը յանձնուէին թիւրք ներգաղթողներուն»[2]:

Եղեռնից մազապուրծ Սուքիասյանը ականատես է դառնում մի քանի վայրերում հայերի բնաջնջմանը, այդ թվում նաև Բաբերդում, որտեղ Թուրք «բնակչությունն ու զորքը բոլոր հայերին հատ-հատ կոտորեցին ու նետեցին ձորոխ: Մերձակա գյուղերի հայերը նույնպես սպանվեցին»[3]:

«Ծանր տեսարան էր,- պատմել է քարավաններին ուղեկցող մի ոստիկան,- չատ կանանց ու երեխաների թունավորեցին դաշտերում, չների

---

[1] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 126, թ. 20-24:

[2] **Բրայս Ջ.,** նշվ. աշխ., էջ 255 կամ «Կոչնակ», 4 հոկտեմբերի 1915 թ.:

[3] Նույն տեղում:

միջոցով»: Բաբերդից բերվում էին կանանց ու երեխաների խմբեր և ամեն օր 10–20 հոգու ընտրում և սպանում էին, գիշերը նետում գետը: «Բացում են փոքր երեխաների գանգերը»: Պատմողն ինքն էր թաղել հինգ կնոջ, որոնք մեռել էին ծննդաբերության ժամանակ[1]:

«Տասնհինգ տարեկանից վեր որևէ արու անհատ ողջ չմնաց»,– պատմել է ականատեսը: Քաղաքից երկու ժամ հեռավորության վրա քարավանը հարձակման ենթարկվեց «հրացաններով ու կացիններով» զինված խուժանի կողմից[2]:

Բաբերդցի մի հայ կին, որ հարուստ ընտանիքից էր, պատմել է, թե իր աղջկա հետ տարագրվել է հունիսի 14–ին մեկնած քարավանի կազմում, որում կար 400–500 մարդ: «Քարավանին ուղեկցում էին 15 ժանդարմներ: Երկու ժամվա ճամբա էին անցել, երբ քարավանը չրջապատեցին զինված գյուղացիները: Ժանդարմները այդ կնոջ ձիերը խլում ու վաճառում են մուհաջիրներին: Ապա խլեցին մոտս եղած փողերը, դուստրիս զարդեղենն, ամբողջ սննդամթերքը»: Քարավանից բաժանեցին տղամարդկանց և մի քանի օրում բոլորին սպաննեցին: Սպաննեցին նաև երկու հոգևորականի, բոլոր գեղեցիկ աղջիկներին ու կանանց տարան լեռներ: «Ճանապարհին թափված էին տարբեր սեռի դիակներ, դեգերում էին ուժասպառ ծերեր ու երեխաներ: Գիշերները գյուղերում անցկացնելն արգելված էր, քնում էինք բաց երկնքի տակ, գետնին և հաճախ էինք հարձակման ենթարկվում»:

Ճանապարհին քարավանը հանդիպում է պատերազմում ամուսիններ կորցրած թրքուհիների խմբի: Նրանցից մեկը գրպանից հանում է դանակը և սպանում մի հայ տղամարդու: Այդ թրքուհիներից յուրաքանչյուրն իր հետ ուներ տասը տարեկան և ավելի փոքր հինգ–վեց հայ աղջնակներ: Տղաների չէին վերցնում, գերադասում էին նրանց սպանել՝ անկախ տարիքից[3]:

Բայբուրդի քարավանը Երզնկա հասավ հուլիսի 18–ին և գիշերը անցկացրեց բացօդյա: Թուրք ժանդարմի պատմածով՝ առավոտյան «հայերին անասունների նման խփելով էին քաղաքից քչում: Ամեն օր սպանում ու Քեմախի կիրճն էին նետում 10–12 տղամարդ: Քարավանի հետ գնալ չկարողացող երեխաների գանգերն էին փչրում: Փախցնում էին կանանց և անպատիվ անում: Հաջորդ օրը,– չարունակում է ժանդարմը,– մենք քայլում էինք դատապարտված մարդկանց հետևից: Նրանց ողբն աննկարագրելի էր: Մնացել էր միայն երկու տղամարդ»: Որոշ կանայք խելագարվել էին: Նրանցից մեկը բացականչում էր. «Մենք ցանկանում ենք դառնալ մահմեդական, մենք ցանկանում ենք դառնալ գերմանացի, ինչ–որ դուք ուզում եք, միայն փրկեք մեզ: Այժմ նրանք մեզ կտանեն Քեմախ ու կմորթեն...»: Անցնում ու անցնում էին մարդկային զանգվածները, միայն մի քանի տղամարդ, մնացածները կանայք և բազում երեխաներ: «Նրանցից չատերը բաց գույնի մազերով և մեծ, երկնագույն աչքերով նայում էին մեզ այնքան լուրջ և այնքան չգիտակցված փառահեղ հայաց-

---

[1] **Чалхушьян Гр.,** *նշվ. աշխ., էջ 66:*

[2] **Lepsius J.,** *Berichte, s. 54–56.*

[3] *R 14093, Ab. 21766.*

քով, կարծես երկնային հրեշտակներ էին: Նրանք դանդաղ ու լուռ առաջ էին գնում, փոքր ու մեծ, ընդհուպ մինչև պառավ կանայք, որոնց դժվարությամբ էր հնարավոր պահել ավանակի վրա: Առաջ էին գնում բոլորը, որպեսզի իրար կապված, բարձր ժայռերից նետվեին Եփրատի ալիքների մեջ»:

Դիակները գետի հոսանքով լողում էին վար: Հարցին, թե ինչո՞ւ հայերին տեղում չեն սպանում, այլ այդ անում են տեղահանելու ընթացքում, ժանդարմը պատասխանել է. «Այսպես ճիշտ է, նրանք պետք է դառնան ողորմելի: Եվ բացի դա, ի՞նչ ենք անելու նրանց դիակների հետ: Նրանք վարակի բույն են»[1]:

Բաբերդում, պատմում է մի ուրիշ ականատես, հունիսի 14-ի գիշերը ոստիկաններն ու ելուզակները, առանց նախապես զգուշացնելու, մտան հայերի տները ու նրանց անկողիններից դուրս քաշեցին, նույնիսկ չթողեցին հագնվել: Քարավանը հարձակումներից պաշտպանելու համար առաջին օրը ոստիկանները պահանջեցին երկու աղջիկ և 50 ոսկի. երկու հայ աղջիկներ մյուսներին փրկելու համար հանձնվեցին, տրվեց նաև ոսկին: Երկրորդ օրը պահանջեցին 500 ոսկի և 5 աղջիկ և այսպես չարունակ՝ կողոպուտ ու բռնաբարություն: Երզնկայի մերձակայքում բոլորին մերկացրին և թողեցին միայն ներքնահագուստով: Քեմախի ճանապարհին քարավանի վրա հարձակվեցին չեթեները, հայերը փորձեցին հետ փախչել Երզնկա, բայց ընկան ոստիկանների կրակի տակ: Քարավանի 9/10 մասը ոչնչացվեց: Մնացածները հասնելով Քեմախ, այնտեղ հարձակման ենթարկվեցին: Շատերն իրենց գետը նետեցին անպատիվ մեռնելուց ազատվելու համար: Հունիսի 19-ին Բաբերդ հասավ Կարինից բռնագաղթվածների երկրորդ քարավանը, որին միացել էին նաև ուրիշ տեղերից բերվածները՝ 15.000 մարդ: Մի քանի օր մնալուց հետո քարավանը չարժվեց դեպի Երզնկա: Այստեղ ոստիկանները, որոնք ուղեկցելու համար մեծ գումարներ էին վերցրել, անհետացան: Ահա այդ ժամանակ, պատմում է ականատեսը, «Դաշտը ծածկվեց քրդերով, թուրքերով ու խուժանով, որոնք խառնվեցին անպաշտպան ժողովրդին... Կողոպտում էին, կոտորում և առևանգում... Հաջորդ օրը, կենդանի մնացածներին տարան Քեմախի ուղղությամբ: Այստեղ տղամարդկանց առանձնացրեցին, իսկ մյուսներին սվինների ու փայտերի հարվածներով առաջ քշեցին: Հայերը բլրի վրայից տեսան, թե ինչպես են սրախողխող անում իրենց հայրերին, եղբայրներին, ամուսիններին ու որդիներին: Դիակները թափվեցին Եփրատ: Իսկ կանանց ու երեխաների քարավանը, մեռնելով ու բռնաբարվելով, հալվելով ու մաշվելով գնաց մինչև Հալեպ»:

Կ. Պոլսում լույս տեսնող թուրքական «Թերջումանը հակիկաթ» թերթը 1920 թ. օգոստոսի 5-ին ընդարձակ նյութ տպագրեց Բաբերդի բռնագաղթի վերաբերյալ ռազմական ատյանում հարցի քննության ու վճռի մասին: Մի քանի քաղվածքներ այդ հոդվածից, նաև դատավարությունից:

Բաբերդում բռնագաղթը ղեկավարելու համար ուղարկված էր Նեջաթին, որի տրամադրության տակ 30-40 հոգանոց մի ջոկատ կար: Հասան օղլու էմմերը դատարանում վկայություն տվեց. «Բայբուրդի աշխատանքային վաշտի

---

[1] *R 14095, Ab. 4543.*

հրամանատարի տեղակալ Ֆ. Քյաչիֆը..., Է. Սաբիտը և մի քանի ուրիշ անձինք քարավան առ քարավան հայերին թշվառ վիճակում Բաբերդից տարագրեցին: Տարագրողները երկու ժամից վերադարձան՝ իրենց հետ բերելով քարավաններում եղած հայ երեխաներին... Այդ մանուկները 1-5 տարեկան էին... Ճանապարհներին, տարագրած հայերի մոտ եղած իրերն ու դրամները կողոպտելուց հետո նրանց սպանել են»:

Մի այլ վկա՝ Ալին, ցուցմունք տվեց. «Մեկ գիշերվա ընթացքում, առանց նախագգուշացնելու, գայմագամ Նուսրեթ բեյի հրամանով, ոստիկաններով ու ժանդարմներով, գոռում-գոչյունով, առանց մարդկային որևէ զգացմունքի, բոլորին տարագրեցին»: Նուսրեթը, լինելով Էրզրումի վալի Թահսին բեյի բարեկամը, չէր խորշում ամեն տեսակ արարքներ կատարելուց: Բայբուրդի հայերին 15 օրում տարագրեցին: Նրանց ուղեկցում էին ժանդարմներ, զինվորներ և բաշիբոզուկներ: Վկան լսել էր, որ հայերին ճանապարհներին սպանել էին: «Նուսրեթ բեյը շուրջ 150 փոքր աղջիկ ու տղա որբերի բերել լցրել էր Բին Բաշի խան կոչված վայրը և Թուրք ժողովրդին տեղյակ պահել, որ գնան ու իրենց հավնած տղաներին և աղջիկներին ընտրեն ու գնեն: Հետագայում Նուսրեթ բեյը իսլամների մոտ գտնվողներին (հայ որբերին) հավաքել տվեց ու տարագրեց»:

Բաբերդի նախկին գայմագամ Զիա բեյը վկայեց. «Բաբերդի տարագրությունը և ջարդը կատարողները եղան այնտեղ եկած Սաադի բեյը, որ ծերակուտական Ահմեդ Ռիզա բեյի քրոջ որդին և ծերակույտի քարտուղարներից մեկն էր... Նրա հետ էր նաև Պիրե Մեհմեդ կոչված Նեջաթի էֆենդին, և լսել էի, որ նրանք էին ղեկավարում ջարդերը»:

Էրզրումի ժանդարմական գնդապետ Ադիլը վկայեց, որ Բաբերդի հայերի տարագրողը Մ. Նեջաթին էր, որը 24 ժամում ժողովրդին դուրս հանել տվեց և Բաբերդից երկու ժամ հեռավորության վրա, Դեյիրմեն կոչված վայրում, Թեչքիլաթի մախսուսայի զինվոր-չեթեների հետ հարձակվեց ու սպանեց նրանց: Ինքը պաշտոնի բերումով հետաքննություն է կատարել ... և տվյալները ուղարկել է վալի Թահսին բեյին:

Բաբերդում եղած զորամասի փոխհրամանատար, փոխգնդապետ Մեհմեդ Ալիի վկայությամբ՝ Նեջաթիի՝ հայերի նկատմամբ կատարվածի մասին ինքը տեղյակ է պահել վերադաս մարմիններին:

Մի շարք վկաներ ցուցմունք տվեցին, որ չեթեների ղեկավար Նուսրեթը Բինբաշի և Հինդի խաներում հետևել է քարավաններին, մտրակով հարվածել տարագրվածներին, նրանցից դրամ է պահանջել: Ջարդերի ժամանակ ներկա է գտնվել ու ժանդարմների հետ փախցրել է գեղեցիկ աղջիկների:

«...Բազմազան վայրերում տեղի ունեցած ողբերգական ջարդերի մասին,- գրում է Թերթը,- մինչև հիմա ռազմական ատյանների եզրակացությունը այն է, որ այդ բոլոր ոճիրները նախապես Իթթիհադ վե Թերաքքը կուսակցության ընդհանուր կենտրոնում ծրագրված ու որոշված էին: Նշված կենտրոնի անդամներից դոկտ. Բեհաէդդին Շաքիր կոչված արյունարբու անձնավորության նախագահությամբ և «Թեչքիլաթի մախսուսա» անունը կրող խմբերի կողմից մի շարք ամենաստոր և ամենագռեհիկ արարքներ գործեցին, վերոհիշյալ որոշումը (բոնագաղթի վերաբերյալ) հատուկ պաշտոնյաների միջոցով գավառների պե-

տերին, պաշտոնատար անձանց հայտնեցին և ստացան նրանց մեծամասնության հավանությունը...

Հետո, ըստ ստացած հրամանների, քրեական տարրերի միջոցով ղեկավարել են տարագրություններն ու ջարդերը:

Դրանք ռազմական ատյանի ունեցած տեղեկանքների փաստերով և սկզբունքային նշանակություն ունեցող փաստաթղթերով հաստատված են:

Նուսրեթը տեղյակ լինելով այդ ողբերգական իրադարձություններին, դրանք արգելելու համար քայլ անգամ չանելուց բացի, վերը նշված վկայությունները իր վերադաս մարմիններին նույնիսկ հաղորդելը հարկ չի համարել և «Երզնկա ուղարկած» անձանց համար էլ ստացական չունենալու մասին լռեց, իսկ հարցաքննության ժամանակ ասաց, թե առաջին քարավանը պաշտոնագրով էր ուղարկել Երզնկա, բայց այդ գրությունների պատասխանները չի ստացել: Այն հարցին, թե ինչո՞ւ դրա դեմ չի բողոքել, պատասխանել է, թե «այդ ժամանակ ամեն ինչ արդեն վերջացած էր»:

Ժողովուրդը նրան անվանում էր «Երկաթե ճանկերով կառավարիչ»:

«Նուսրեթը Բաբերդի տարագրությունն ավարտելուց անմիջապես հետո առաջ է քաշվում ու նշանակվում Երզնկայի փոխկառավարիչ, որից հետո՝ Արղնիի մութեսարիֆ: Երբ հեռավոր վայրերից տարագրված հայերը, ճանապարհների բազմատեսակ դժվարություններից ու թշվառություններից հետո, ուժասպառ հասնում էին Արղնի, Նուսրեթը, լսելով, որ նրանք 2 կամ 3 օր խաներում են մնալու,... բոլորին չարաչար աշխատացրեց և օրավարձ անգամ չտվեց: Նա Արղնիի մութեսարիֆի պաշտոնում կենդանի մնացած հայ պատանիներին ու մանուկներին՝ «Դիարբեքիր պետք է ուղարկվեն» ասելով, հանձնել է Տիգրանակերտի արյունռուչտ վալի Ռեշիդի վայրագություններին: Արղնիից հետո նշանակվեց Ուրֆայի մութեսարիֆ և երկրի տարբեր կողմերից այնտեղ հասած 15-20 հազ. հայ տարագրյալների դեմ ողբերգական արարքներ կատարեց: Այստեղ ևս պաշտոնի բարձրացում ստանալով, շարունակեց ոճրագործների հետ գործակցելը...

Նուսրեթ բեյը հայտնել էր, թե «հրաման էր ստացվել, որ որևէ հայ կենդանի չպետք է մնար, այլապես սպառնում էին մահապատիժով»:

Բաբերդի կառավարչատան գանձապահ Հովակիմ էֆենդու ընտանիքը մահմեդականություն էր ընդունել և զերծ մնացել տարագրությունից:

«...Նուսրեթը նրանց տուն գնալով, պահանջել է, որ նրա աղջիկներն իրեն հանձնվեն և սպառնացել, թե մերժման դեպքում ընտանիքը տարագրվելու է: Նկատի ունենալով, որ տարագրության ժամանակ, ենթարկվելու էին տարագրյալներին բաժին հասած գազանություններին՝ ջարդվելու ու բնաջնջվելու էին, Հովակիմի կինը, դուստրերը և քույրը թույն են խմում ու մեռնում, իսկ ինքը և իր որդին կախվում են»:

Նուսրեթը Արղնիում բռնաբարել էր դեռահաս Նոյեմին և նրա քրոջը՝ Ֆիլոմենին:

«Նուսրեթի հետ Նեջաթի էֆենդին ևս, Բաբերդի հայերին տարագրելու պատրվակով, նրանց սպանել էր ու ունեցվածքները կողոպտել...»:

Նրանք երկուսն էլ մահապատժի դատապարտվեցին: Բաբերդի ջարդերի

գործով 26 հոգի դատապարտվեց բանտարկության:

Սակայն Թուրք մեծապետականությունը դրա հետ հաշտվել չէր կարող: Դատավճռից 15 օր անց Թուրքական իշխանություններն սկսեցին ձերբակալել վճիռներ ստորագրած Թուրք դատավորներին: Քյազիմ Կարաբեքիրը Հայաստանի Հանրապետության վրա հարձակման օրերին, 1920 թվականի նոյեմբերի 8-ին ձերբակալեց պատերազմական ատյանի դատավոր Մուստաֆային ու նրա գործընկերներին, իսկ դեկտեմբերի 7-ին սկսվեց նրանց դատավարությունը: Նուսրեթին ներկայացված մեղադրանքներն ու նրա դատավճիռը չեղյալ հայտարարվեցին, իսկ դատողները՝ դատվեցին[1]:

ԴԵՐՋԱՆ

Այստեղ ջարդերն սկսվեցին 1915-ի ապրիլի առաջին օրերին: Բոլոր հայաբնակ գյուղերը տեղահանվեցին ու աքսորվեցին մայիսի 1-17-ն ընկած շրջանում: Բռնագաղթվածների մեծ մասը ջարդվեց Երզնկայի մերձակայքում ու Քեմախում: Մայիս-հուլիս ամիսներին Դերջանում ոչնչացվեց Բաբերդի և Էրզրումի գյուղերի հայ բնակչության մի մասը:

Մայիսին ընդամենը տասը տուն ունեցող Սուրբ Թորոս գյուղը ուղարկվեց 40 չեթե ոմն Օսմանի հրամանատարությամբ՝ «հայերին զինաթափելու և բռնագաղթեցնելու համար»: Որպեսզի գենքերի թաքստոցների տեղերը իմանան, չեթեները հայերին հարկադրում էին կանգնել կրակի վրա կամ նրանց վրա էին կրակ չաղ տալիս: Ոմն Սուլեյման հաջողեց հայերին «համոզել» դառնալու մահմեդական:

Այդ ջարդարարը նաև հաջողում է գյուղ բերել լեռներում թաքնված հայ տղամարդկանց, որոնց անմիջապես գնդակահարեցին, իսկ կանանց ու երեխաներին, «կին ընտրելուց հետո» թափեցին Եփրատ:

Նույն գյուղի բնակիչ Հրանուշ Թորոսյանը պատմում է, որ ինքը Եփրատի այդ մասում տեսել է կրծքի երեխաների «լողացող» դիակներ[2]:

Դերջանում կանգուն մնացին միայն չորս եկեղեցու պատերը: Բացի մի Ավետարանից, այդ եկեղեցիների ամբողջ սպասքն ու գրքերը կողոպտվեցին:

Այս ամենով հանդերձ Էրզրումի վիլայեթում քիչ թե շատ փրկվեցին Դերջանի հայերը՝ 11.000-ից 2000-ը: Փրկվածները ռուսական բանակի կողմից 1916 թ. այդ գավառը գրավելուց հետո իրենց՝ ավերակի վերածված բնակավայրեր վերադարձան: Նրանցից շատերը կամավորական գնդերը մտան[3]:

Մամախաթունի շրջանում տեղի ունեցած ջարդերից մազապուրծ Կարապետ Գևորգյանը Գերմանիայի հյուպատոսին պատմել է, որ «Բասենի և Էրզրումի հարթավայրերի 13 գյուղերի 9.000-10.000 բնակիչներ հաջողությամբ հասնում են Եփրատի կամրջին: Նրանց ուղեկցում էր գայմագամը՝ 10 ժանդարմների և 20 չեթեների հետ: Ջիվիդե լեռան նեղ ոլորապտույտներում բոլոր կողմերից քարավանի վրա կրակ բացվեց: Գայմագամը հրամայեց հետ դառնալ, սա-

---

[1] **Ղազարեան Հ.**, Ցեղասպան Թուրքը, Պէյրութ, 1968, էջ 292-302:
[2] **Чалхушьян Гр.**, նշվ. աշխ., էջ 87:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 126, թ. 20-24:

կայն լեռան բարձունքների թփերի տակից դուրս թռան քրդերն ու հարձակվեցին քարավանի վրա: Սկսվեց խուճապ, նույնիսկ պահակախմբի անդամները փախան: Սակայն չեթեներին (հայդուկներին) հաջողվեց փրկել 100 սաղ և հայերի մեծ մասին, որոնք ճանապարհը շարունակեցին Բայբուրդի ուղղությամբ: Եփրատի ափին քրդերը նորից հարձակվեցին: Սկսվեց խուճապ, մի մասն անցավ գետի մյուս ափը, չատերին խեղդեցին գետում: Որևէ սայլ փրկել չհաջողվեց: Առավոտյան մահմեդական չեթեները կենդանի մնացածների վրա կրակ բացեցին: Կանանց որսացին ու փակեցին մարագում, իսկ տղամարդկանց գնդակահարեցին: Քարավանի մնացորդները հավաքվեցին Մամախաթունում: Կանայք կիսամերկ էին: Քրդերը նրանցից չատերին սպանեցին, ոմանց էլ տարան իրենց հետ: Մամախաթունի մերձակայքում այդ հայերը նորից հարձակման ենթարկվեցին: Շատերին սպանեցին, չատերին գերի տարան, մնացածները փախան տարբեր ուղղություններով»[1]:

ՔՂԻ

Մայիսի սկզբին Քղիում ձերբակալվեց 50 մտավորական: Գավառի հայության բռնագաղթը ղեկավարում էր Համիդ բեյը: Նրա հրամաններով մինչև մայիսի 29-ը մի քանի քարավաններով տեղահանվեց գավառի ամբողջ հայ բնակչությունը, որի մեծ մասը կոտորվեց «Կամախ Գուրուչայ նահիեի տարածքում», Քեմախի կիրճում և Մեսքենեում: Մի խումբ երիտասարդներ փախուստի դիմեցին թուրքերի դեմ կռվելու և իրենց հայրենակիցներին փրկելու համար, սակայն տեղի եպիսկոպոսը համոզեց հնազանդվել, ասելով, թե իշխանությունները խոստացել են նրանց նկատմամբ բռնարարքներ չգործադրել: Սակայն երբ հանձնվեցին, բոլոր այդ երիտասարդներին կոտորեցին: Քղիի 26373 հայերից ցեղասպանության զոհ դարձավ 23149-ը: Քղիի տարածքում ոչնչացվեցին Էրզրումի և Բիթլիսի վիլայեթներից բռնագաղթված 53600 հայեր:

1915 թ. վերջին Կարինից «Հորիզոնին» գրեցին. «Հենց նոր այստեղ եկան ութ հայ փախստականներ, որոնք հաստատում են, թե Քղիի շրջանում կղլբաչների մոտ փրկվել է 8000 հայ... Այս լուրը ճշմարտությունից զուրկ չէ, քանի որ հաստատվում է նաև ուրիշ աղբյուրների կողմից»:

1916-ին Քղի հասան հայ կամավորները: Ողջ մնացած քղիցիները 1917 թ. վերադարձան իրենց բնակավայրերը: 1918-ին թուրքական հարձակման ժամանակ քրդերը թիկունքից փակեցին Քղիի և Երզնկայի հայ գաղթականների ճանապարհը: Սակայն Սեբաստացի Մուրադի և Մ. Թուրիկյանի ջոկատների ջանքերով հաջողվեց թշնամու օղակը ճեղքել և գաղթականներին հասցնել Էրզրում:

---

[1] *R 14088, Ab. 28584.*

Կիսկիմի կազայի ամենահարուստ և ամենախոշոր գյուղը Խոտորջուրն էր, որն ուներ 12 թաղ՝ 1500 ծուխ: Այս կազայում ոչնչացվեց 5000 հայ:

Պատերազմն սկսվելուց հետո յուրաքանչյուր տղամարդուց վերցնում էին 500 ոսկի՝ բանակից ազատելու համար: Հայերից բռնագրավեցին ոսկի, արծաթ, թանկագին քարեր, մեղր, անասուն, սննդամթերք: Ապա վրա տվեցին լազերը և կողոպտեցին ինչ որ չէին տարել իշխանությունները: Այս կազայի հայ երիտասարդության մեծ մասը արտագնա աշխատանքի էր Անդրկովկասում: Թերևս այդ էր պատճառներից մեկը, որ գյուղերում բռնություններն ու կողոպուտը մեծ չափերի հասան: Դրա վկայությունն Մեսրոպ վրդ. Թաթամյանի գրությունն են Խոտորջրի չինությունների պատերին: Ահա՛ դրանցից մի քանիսը:

«10 հունիս 1915. Արդեն 7-րդ օրն է, որ մեզ պաշտոնապես հայտարարել են աքսորելու մասին: Ամենուրեք լացուկոծ է: Մեզ տանում են դեպի հաստատ մահ: Քիրմանի վանահոր ձեռները կապեցին ու տարան Էրսիս, այսինքն՝ մյուղիրի նստավայր:

13 հունիս. Ահա և վերջապես հասավ վաղաժամ կործանման պահը և Խոտորջուրը ավերվում է: Քիրմանի բնակիչներն արդեն ուղարկված են Խուլ Մարինի ուղղությամբ: Օ, դժբախտներ, դեռ ինչպիսի սարսափներ եք կրելու...

22 հունիս: Մեր տունը նույնպես կնքեցին: Միջին թաղից լսվում է լաց ու աղմուկ... Հանդաձորի բնակչությունը պատրաստվում է մեկնելու: Երեկ բնակիչներն առաջին անգամ գիշերը անցկացրին իրենց օջախներից դուրս... Պետությունը մեզ աքսորում է: Մեզ տանում են մորթելու: Հարևան թուրքերը մեզ զգուշությամբ թալանում են, գործն ավարտում են ավազակները: Բնակչությունը կարկամած է, և չի գիտակցում, թե ինչ է կատարվում:

Կառավարության հրամանն աննախադեպ է, թուրք հարևանների վարմունքը՝ զզվելի: Գառներին քշել են գայլերի հոտի մեջ... Հիշե՛ք մեզ: Ապրե՛ք որպես մարդ: Նրանց հետ վարվե՛ք այնպես, ինչպես նրանք վարվեցին մեզ հետ...

23 հունիս. Ժողովուրդը դեռևս Միջին թաղում է... Մահ, Աստված, խելագարվում եմ: Ինչ անարդարություն, ինչ անմարդկային հալածանքներ: Դո՛ւ, Հիսուս Քրիստո՛ս, փրկի՛ր երեխաներին, խղճա՛ նրանց և մի՛ թող առանց ցավակցանքի... Այսօր Հանդաձորի բնակիչները սլացան Միջին թաղ ... Խոտորջուրը կործանվեց: Մի չարք դարեր գոյություն ունեցող այս հարուստ շրջանը զրկված է բնակիչներից, որոնք երկար չարանով գնում են դեպի անդունդ: 7-8 հազար հոգու՝ չափահաս երեխա, տղամարդ և կին, տանում են դեպի մահ՝ ամեն օր նրանց ենթարկելով անասելի բարոյական տանջանքների: Անհրաժեշտ է վրեժ լուծել հավերժ հանցագործներից...

24 հունիս. Մեր տեղահանությունից երեք օր անց ես և վանահայր Պ. Գարագաշյանը մտանք այստեղ... Մեր հանրահայտ հայրենակիցները մի կողմ էին քաշվել, մենք, հոգևորականներս, նրանց հետ միասին, ձեռքներս ծալած նստել էինք: Մենք մեղավոր ենք լինելու պատմության առաջ:

26 հունիս. Ժողովուրդը հեռանում է, այստեղ մնում է միայն 150 հիվանդ...

Հունիսը Խոտորջրի համար դժոխային տանջանքների ամիս էր: Քրմանի բնակիչներն արդեն դուրս են եկել Լեհանի կիրճը: Գիշերը նրանց վրա հարձակվել են ավազակները և մի տղա սպանվել է: Ժողովուրդը սարսափած է: Ով Աստված, ինչպե՞ս է այս սատանայական կառավարությունը վարվելու մեր ժողովրդի հետ... Ժողովուրդը շրջապատված է վայրի գազաններով: Կատարվում են սարսափելի հանցագործություններ:

27 հունիս. Եղբայրնե՛ր, մենք ապրեցինք շատ սարսափելի օրեր, մենք անտանելի վիճակում ենք... Մեր հույսն Աստվածն է:

Մնացե՛ք բարով, մենք գնում ենք մեռնելու: Թող Աստված նրանց պատժի:

28 հունիս. Վարդավառի նախօրյակին վարդապետ Պ. Գարագաշյանի հետ վերադարձանք Միջին Թաղ: Անտառում թաքնված ավազակները հարձակումներ են գործում: Մենք հին եկեղեցում թաքուն պատարագ կարդացինք: Ախ, Աստվա՜ծ, այս ի՞նչ օրեր են. հայրենի հողին ոտք դնելն արգելված է, եկեղեցում աղոթելն արգելված է:

30 հունիս. Հնարավոր է, որ սա մեր վերջին այցելությունն է Խոտորջրին: Մեզ չեն թողնում մեր հայրենի հողերը: Երբ մութն ընկավ, մենք գյուղ մտանք և անմիջապես հետ դարձանք: Ջտա՛ Աստված, որ մեզ տեսնեն թուրքական պաշտոնյաները»[1]*:*

Պատմում է ռազմաճակատայինը, թե ռուսական բանակում ինչպես իմացան, որ հայերին ջարդում են. «Թուրքական զորքերի ճակատային գծից անցան մարդիկ՝ գզգզված, տանջահար, վիրավոր, դեմքերին մահվան դիմակը, աչքերում անիմանալի սարսափը: Նրանք առաջին լրաբերներն էին, որ պատմեցին հայկական կոտորածներն սկսվելու մասին: Խելագար աչքերով, վերքերի արյունով նրանք ավելի շատ բան էին ասում, քան բառերով... Նրանք հեռու չգնացին, մնացին մեր մեջ ինչպես համր, բայց չարագույժ ստվերներ: Նրանց սկսեցին տանել Ռուսաստան: Մեկնում էին հայացքները երկար հառած հարազատ վայրերին»:

Մի տարի անց Էրզրումի ռազմաճակատի մերձակայքում թուրք սպան, պատասխանելով հայկական սպանդի մասին տրված հարցին, ասաց. «Հայերն ավելի մեծ աղետի են արժանի: Եթե չլիներ նրանց համակրանքը Ռուսաստանի հանդեպ, ոչ թե դուք էիք կանգնած լինելու Էրզրումի պարսպի տակ, այլ մենք վաղուց տիրացել էինք Կարսին»[2]*:*

1916 թ. փետրվարին ռուսական բանակը գրավեց Խոտորջուրը, որի վերապրած բնակիչները վերադարձան իրենց գյուղը: 1918-ի սկզբներին թուրքերը վերագրավեցին Խոտորջուրը: Հայերն ինքնապաշտպանության կանգնեցին և հերոսաբար կռվեցին, իսկ ապա հեռացան Արևելյան Հայաստան և այլուր:

---

[1] *"Армянский вестник", 1916, № 25.*

[2] *Նույն տեղում:*

* * *

Հայոց Ցեղասպանության, ընդհանրապես և Բասենի հայության բնաջնջման գործում, մասնավորապես, առաջնակարգ դեր է պատկանում գերմանական դիվանագիտական և ռազմական գործիչներին: Այդ դերը պաշտոնապես կողմնորոշված է եղել հօգուտ բնաջնջման թուրքական քաղաքականությանը: Սակայն սխալ են նրանք, որոնք այս հարցում Բեռլինի և Կ. Պոլսի քաղաքականությունը նույնացնում են: Եթե թուրքական կառավարությունը հայերին բնաջնջելով լուծում էր աշխարհաքաղաքական առաջնային նշանակության և բախտորոշ խնդիր, ապա Գերմանիայի շահերը չէին թելադրում հայերի բնաջնջում, այլ հայ բնակչության բռնագաղթի օգտագործում տնտեսական և քաղաքական այլևայլ խնդիրներ լուծելու համար:

Դրանով է բացատրվում Բեռլինի և նրա շատ գործիչների երկիմաստ մոտեցումները հայերի հանդեպ թուրքական քաղաքականությանը:

Գերմանիան մի կողմից խրախուսում էր երիտթուրքերին՝ բոլոր հնարավոր միջոցներով Ռուսաստանին զրկելու հայկական գործոնն իր շահերին ծառայեցնելու հնարավորությունից, իսկ մյուս կողմից՝ ամեն կերպ աշխատում էր «ձեռքերը չկեղտոտել» թուրքական արյունարբու քաղաքականության թոհուբոհում:

Մի կողմից, բարբարոսական հրճվանք, որ թուրքերը վիթխարի արյան բաղնիք էին ստեղծել, իսկ մյուս կողմից, զգուշություն, զսպվածություն, տագնապ ու նաև զզվանք դրանց հանդեպ:

Հ. Բարբիի կարծիքով՝ տեղահանության կազմակերպմանը ու ղեկավարմանը մասնակցել է նաև գերմանացի գնդապետ Ստաղեչի, փոխհյուպատոս և թուրքական ավազակախմբերի հետ համագործակցող Շոյնբերգ-Ռիխտերի և հրետանու հրամանատար Շտանդեի, ինչպես նաև շտաբի պետ թուրք Գուզի բեյի մասնակցությամբ ձևավորված խումբը[1]:

Երբ Բ. Շաքիրի ավազակախմբերը խժդժություններ սկսեցին Էրզրումի Դաուիք, Բագիչին, Թարգունի, Հինձք և Ձիթոտ գյուղերում, վերջինների գյուղացիները օգնության խնդրանքով դիմեցին Կարինի բերդի գերմանացի հրամանատար Պոսիլդ փաչային, որը հայերին օգնելու փոխարեն թուրքական հրամանատարությանն առաջարկեց անմիջապես զինաթափել Կարինի և շրջակայքի զորամասում եղած հայ զինվորներին ու նրանց քշել շինարարական աշխատանքների[2]:

Էրզրումից երկրորդ՝ հարուստների, քարավանին Թահսինը խոստացել էր իր օժանդակությունը, որի դիմաց հայերը վճարեցին 1000 «Թրքական հնչուն ոսկի»: Ավելի մեծ գումար վճարեցին այն 40 ժանդարմների համար, «որոնք որպես թե պիտի պաշտպանեին հայերին մինչև նրանց տեղ հասնելը»[3]:

Հայերից դրամ, զարդեր և այլևայլ հարստություններ շորթելու գործում գերմանացիները թուրքերից հետ չէին մնում և այդ անում էին «քաղաքակիրթ եղանակներով»:

---

[1] **Барби А.,** *նշվ. աշխ., էջ 34:*

[2] **Bryce J.,** *նշվ. աշխ., էջ 222:*

[3] *Նույն տեղում, էջ 238-239:*

Քեմախի զազրելի ջարդերի ականատեսներից մեկը պատմել է, որ այդ մարդաորսի ընթացքում «մեզի մօտեցան քանի մը գերմանացի «գթութեան քոյրեր» ու սկսան քահ-քահ ծիծաղիլ շատ զուարճալի գտնելով քրիստոնեայ ցեղի անմեղ զաւակներուն այսպիսի գազանային ոչնչացումը»[1]:

Էրզրումում, ավելի քան մի ուրիշ տեղ, դրսևորվեց գերմանացիների, մասնավորաբար գերմանական զինվորականության երկդիմի վերաբերմունքը հայկական ջարդերի հանդեպ: Եթե Շոյնբերգ-Ռիխտերի տեղեկագրերում «օբյեկտիվության և սրտացավության դրսևորումներով» Բեռլինի քաղաքականության իսկական դեմքը չաղախված էր զանազան դիմակահանդեսներով, ապա գերմանացի սպաների վարքագիծը շատ ավելի որոշակի էր՝ նրանք անվերապահորեն պաշտպանում էին Թուրքական հայաջինջ քաղաքականությունը: Գերմանացի սպաները, գրում է ժամանակակիցը, խրախուսում էին իշխանության քաղաքականությունը և իրենք էլ էին մասնակցում կոտորածին: Այսպես, ոմն կապիտան Շիրները հանդիսացավ այն «չեթէներու կազմակերպիչ, որոնք անոր հետ միասին գացին Մոսուլ՝ հայերուն կոտորելու... Ան մորթեց շատ հայեր եւ անձամբ իր համար տարաւ երեք հայ աղջիկներ: Մեկնելով Էրզրումէն՝ Քարլ Վերթը... բռնի կերպով իր հետ տարաւ տեղի հարուստ հայ Զիլինգարեանի աղջկան: Մայոր Սթաշեւսքին եւ Էրզրումի ամրութիւններու պետ գնդապետ Շթանկէ... օրը ցերեկով իրենց հետ տարին, ինչպէս իրենք կ'ըսէին, որպէս «յիշատակ» մի քանի աղջիկներու, «չնայած անոնց ծնողներու արցունքներուն եւ աղաչանքներուն»[2]:

Դրա փոխարեն, ինչպես 1915-ի հունիսի 30-ին Վաշինգտոն հեռագրեց Հ. Մորգենթաուն, Լեփսիուսն ուներ «հավաստի տեղեկատվություն, որ Էրզրումի օկրուգից աքսորված հայերը, մեծ մասամբ կանայք և երեխաներ, կոտորվել էին Քեմախի մոտ, Երզնկայի ու Խարբերդի միջև... Դոկտորն ուզում է նշված գործը հանձնել Միջազգային կարմիր խաչին, որպեսզի այդ կազմակերպության հետ միասին ստիպի Գերմանիային՝ ազդելու իրավիճակի վրա և վերջ տալու սարսափներին»[3]:

«Բռնագաղթի սկզբին,- գրում է Շոյնբերգ-Ռիխտերը,- ես բողոք ներկայացրեցի Էրզրումի քաղաքացիական և զինվորական իշխանություններին: Ընդորում, իմ արտահայտություններում մնացի (դեսպանի) հրահանգով նախատեսնվող բարեկամական խորհուրդներ տալու շրջանակներում և հրաժարվեցի որևէ պաշտոնականությունից:

Վալին ընդունեց հայերի հանդեպ բռնությունների, թալանի և սպանությունների վերաբերյալ իմ նկատառումները, սակայն ասաց, որ դրանց պատասխանատվությունն ընկնում է ոչ թե իր, այլ բանակի գլխավոր հրամանատարության վրա, որի ենթակայության տակ է ինքը գտնվում: Հրամանատարը հրամայեց, թե «չնայած ճանապարհները ակնհայտորեն անվտանգ չեն, հայերին տարագրել առանց հոգ տանելու նրանց պաշտպանության մասին»: Դրա հետևանքով հայերին աքսորելու միջոցառումը վերածվեց վրեժխնդրության,

---

[1] ***Թորլաքեան Մ.,*** *Օրերուս հետ, Լոս Անճելոս, 1953, էջ 329:*

[2] *"Геноцид армян...", с. 387.*

[3] *Նույն տեղում, էջ 366:*

ոչնչացման ու թալանի» գործողությունների: «Թուրք բնակչության լրջմիտ շրջանակների, հատկապես հողատերերի կողմից նույնպես կոտորածները հավանության չեն արժանանում: Նրանք նկատում են Հայկական հարցի լուծման այս նոր եղանակի պարունակած տնտեսական ու քաղաքական մեծ վտանգը:

Հողագործ թուրքերը հաճախ հարցնում են, թե «ինչո՞ւ գերմանական կառավարությունը թուրքական կառավարությանը մղեց նման գործողությունների... Հարգանք վայելող մի ազդեցիկ բեյ ասաց, որ կարող է և նախկիններում նույնպես հայերի ջարդեր տեղի ունեցել են, սակայն դրանք շատ հաճախ սահմանափակվում էին տղամարդկանց կռվով: Ներկայումս, հակառակ Ղուրանի պահանջների, ոչնչացվում են հազարավոր անմեղ կանայք ու երեխաներ: Սա ոչ թե գրգռված ժողովրդի աքսոր է, այլ՝ Կոմիտեի կառավարության հրամաններով, հայերի հետևողական ոչնչացում... Թուրքական և հայկական կրթված շրջաններում պատմում էին, թե պրոֆեսոր Ռոհրբախը կայզերին զեկուցելու ժամանակ մատնանշել է, թե հայերը շատ հարմար տարր են բնակեցնելու Միջագետքի ոչ մարդաշատ տարածքները, որոնցով անցնում է Բաղդադի երկաթուղին: Այս հիմքի վրա գերմանական կառավարությունը թուրքական կառավարությանը մղեց հայերի աքսորին»: Այս մտայնությունն այն տարիներին շատ տարածված էր թուրքական շրջաններում, և դժվար է հաստատ պնդել՝ դա համոզմո՞ւնք էր, թե՞ կատարվածի հրեշավորության գիտակցում և դրա մեղքը Թուրքիայի վրայից վերցնելու ցանկություն:

Մանավանդ, որ թուրքերի գիտակից մասը քաջ գիտեր, որ հայերի վարքագիծը նման վայրագ վերաբերմունքի որևէ հիմք չէր տալիս:

Շոյներերգ-Ռիխտերը գրում է. «Իմ կարծիքով՝ նախապես մտածված և նախապատրաստված հայկական ընդհանուր խռովության իրողությունը հաստատող որևէ ապացույց գոյություն չունի: Օրինակ, Էրզրումի վիլայեթում ո՛չ զենք գտան և ո՛չ էլ հայերին մեղադրելու համար պիտանի փաստաթուղթ»:

Եթե այստեղ խռովություն պլանավորված լիներ, ապա դրա համար ամենահարմար պահը հունվար ամսին էր, երբ ռուսները կանգնած էին քաղաքից 35 կմ հեռավորության վրա, Էրզրումի կայազորում կար ընդամենը մի քանի հարյուր մարդ և դա այն ժամանակ, երբ միայն բանվորական գումարտակներում ընդգրկված էր 3000-4000 հայ: Զարմանալի չէ, որ սեփական կառավարության կողմից ճնշված ու վատ վերաբերմունքի արժանացած և այդ պատճառով այլ ազգության ու հավատի պատկանող սահմանամերձ շրջանների դժգոհ բնակչությունը միանում է հավատակից և հաղթականորեն առաջ շարժվող թշնամու բանակին, որն իրեն ներկայացնում է որպես ազատարար, խոստումներով գրավում է բնակչությանը: Ինձ թվում է, թե դա արժանի է ափսոսանքի, սակայն նաև միանգամայն բնական է: Նման իրողություններ տեղ են գտել նաև ռազմական գործողությունների մյուս թատերաբեմերում: Սակայն ինձ անբնական և ոչ պարկեշտ է թվում, որ քաղաքակիրթ երևալու հավակնություն ունեցող կառավարությունը որևէ միջոց չի ձեռնարկում կանխելու ժողովրդի իրապես դժգոհ որոշ մասի կանխատեսելի խռովությունը համապատասխան ռազմական միջոցառումների, կամ քաղաքական բանակցությունների միջոցով:

Հենց նրա անգործությունը, ոստիկանական մարմինների և չեթեների սադրիչ վարքագիծը այդ ժողովրդին տրամադրում են իր դեմ: Դրանով նա սեփական ժողովրդի լայն շրջաններին դատապարտում է վերածվելու անսանձահարելի զանգվածի, տոգորված ռասայական ատելությունով և «վրիժառության խելահեղությամբ»: Սակայն հետո նույն այդ կառավարությունը օգտագործում է հարմար պահը, որպեսզի ... ջարդի և բնաջնջի մի ամբողջ ժողովրդի»:

Շոյնբերգ-Ռիխտերը փորձում է սեփական անզորությունը քողարկել իրենից դուրս գոյություն ունեցող հանգամանքներով: Այդպիսի ցանկությունը նրան մղում է տարօրինակ եզրահանգման ոչ թե իրավական վիճակը աղճատելու, այլ ազգամիջյան բախման միջոցով հանգուցալուծում գտնելու ձգտման առումով:

«Այն, որ այդ ջարդը հնարավոր է,- գրում է նա,- որ տասնյակ հազարավոր հայեր, ինչպես այստեղ եղավ, ոչ մեծ թվով քրդերին ու պարտիզաններին թույլ տվեցին իրենց արյունահեղ հաշվեհարդարի ենթարկել... նույնպես ապացույց է, թե այդ ժողովուրդն իրեն որքան ոչ բավարար մարտունակ և ոչ բավարար հեղափոխական է դրսևորում: Հայերը, մասնավորապես, քաղաքաբնակները, մեծ մասամբ ընդունակ առևտրականներ ու ոչ հեռատես քաղաքագետներ են, սակայն, որքանով ես նրանց ուսումնասիրել եմ, չեն հանդիսանում եռանդուն հեղափոխականներ: Սովորաբար ամենուրեք տեղահանությունը ընթացավ առանց որևէ միջադեպի, քանի որ հայերը աստվածապաշտ հնազանդությամբ թույլ տվեցին իրենց կոտորել...»: Հյուպատոսը նաև փորձում է նեղացնել, անգամ նենգափոխել Հայոց Ցեղասպանությունը ծնող պատճառները: Իհարկե, սուբյեկտիվ գործոնները Մեծ Եղեռնում դեր խաղացել են, սակայն՝ ոչ գլխավոր: Նրա կարծիքով՝ «Երիտթուրքերի տեղական կոմիտեում կա մի ոչ մեծ, բայց մյուսներին ահաբեկող, ստորին մտածողության տեր անձանց խումբ, որը դեկավարվելով անձնական չահերով և չահադիտությամբ, քարոզում է կոտորել հայերին... Այդ մարդկանց համար, «սրբազան պատերազմը» վերածվել է բռնությունների ու կողոպուտի քողի... Դժբախտաբար, կոմիտեի այս կասկածելի սադրիչների ազդեցությունն ... ավելի ուժեղ է, քան հակառակ վարքագիծ դրսևորողներինը... Հայկական Հարցի հանդեպ վերաբերմունքի բնույթը ակնհայտորեն ցույց տվեց, թե ինչպիսի վտանգավոր գործիք է հանդիսանում իշխանությունն այնպիսի մարդկանց ձեռքում, որոնք որևէ պատասխանատվություն չեն զգում, այլ միայն անձնական չահեր են ճանաչում»[1]:

Կարինի արևելյան գավառների հայությունը փաստորեն ջարդվեց մի քանի անգամ: Օրինակ, Ժամանակավոր կառավարության 1917 թ. հունիսի 5-ի որոշումից հետո, որը թույլ էր տալիս արևմտահայերի վերադարձը իրենց նախկին բնակավայրերը, կենդանի մնացածներից չատերը վերադարձան, սակայն 1918 թ. թուրքական հարձակման ժամանակ նրանց մի մասը ոչնչացավ, իսկ մյուս մասը հեռացավ Կովկաս:

«Հայերի ոչնչացման հետևանքով Անատոլիան զրկվեց ամենաարժեքավոր աշխատող ուժից,- շարունակում է հյուպատոսը:- Թուրքերը հայերին փոխա-

---

[1] *R 14088, Zu Ab. 28584.*

րինել չեն կարող նաև այն պատճառով, որ բանակ զորակոչվելու հետևանքով նրանց թիվը պակասել է, իսկ քրդերը մինչև ընտելանային աշխատանքի, տասնամյակներ կանցներ»: Կարծում եմ, ասում է Ռիխտերը, որ «կրթության տենչող հայ ժողովրդին հնարավոր է կարճ ժամանակում մեր կողմը թեքել գերմանական դպրոցների միջոցով»:

Դրա համար էլ, նաև գործնական նկատառումներով, նպատակահարմար կլիներ բռնագաղթված հայերին թույլատրել վերադառնալու իրենց բնակավայրերը: Հայերի ընդունակությունները հնարավորություն կտան կարճ ժամանակում իրենց ձեռքը վերցնել Մերձավոր Արևելքի տնտեսական կյանքը և խաղալ հրեաների դերը:

«Հազիվ թե հնարավոր լինի լուծել Հայկական Հարցը հայերին Միջագետք տարագրելու միջոցով: Նրանք կձգտեն վերադառնալ և այդ կանեն Ռուսաստանի և մյուս տերություններին դիմելու և նրանց աջակցությունն ստանալու միջոցով, ինչը կհանգեցնի Թուրքիայի ներքին գործերին նոր միջամտության»:

Միանգամայն խելամիտ այս դատողությանը հետևում է իմպերիալիստական գիշատչին բնորոշ առաջարկությունը՝ միավորել Հայաստանի երկու մասերը, բայց միավորել ոչ թե Ռուսաստանի, այլ՝ Թուրքիայի կազմում: Նա գրում է. «Նպատակահարմար է ռուսական սահմաններին մերձակա շրջանները միավորել Ռուսահայաստանի հետ, որի կենտրոնը կարող է լինել Էջմիածինը: Որոշակի ինքնավարություն տալու դեպքում հայ ժողովուրդն իրեն լավ կզգա և թուրքական արդար կառավարման դեպքում կպահպանի իր մշակույթի առանձնահատկությունները, ինչն անհնար է Ռուսաստանում»[1]:

Կարինն ու վիլայեթը, մի կողմից, դատարկվում էին հայերից, իսկ մյուս կողմից, բնակեցվում մահմեդականներով: Քաղաքն ու նահանգը ստանում էին բոլորովին այլ տեսք ու բովանդակություն: «1914-ին 215.000 հայ բնակչութիւն հաշուող Կարինը եւ շրջակայքը յեղակործօրէն առեր էին սեւ քղամիդը Թրքութեան: Լքուած աւերակոյտի վերածուած տեսք մըն էր ամբողջ նահանգին ունեցածը, որուն հիմա կարօտով կը նայէր ռուսական սահմանէն Կովկաս անցած իւրաքանչիւր կարինէցի, քղեցի, բաբերդցի կամ երզնկացի: Անոնք, որոնք կարող էին հասնիլ Միջագետքի եւ Սուրիոյ անապատները, ցաւով կը յուսային այն օրը, երբ պիտի արդարութիւն ըլլար կոտորակուած, բզկտուած, խորտակուած հայութեան»[2]:

Երբ ռուսական բանակը 1916-ին նորից գրավեց Բարձր Հայքը, այն համընդհանուր ավերակ էր: Եկեղեցիները հիմքից քանդած էին: Հարյուրավոր կիլոմետրերի վրա միայն փլատակներ էին: Բարձր Հայքը վիթխարի գերեզմանատուն էր: Ավերակների մեջ երբեմն հանդիպում էին միայն նիհար, գրեթե սատկած կատուներ, շներ: Այդ ամենը Թուրքերը հասցրել էին անել մեկ ամսում: Տարել էին ամբողջ բերքն ու անասունը:

Ամբողջ նահանգում հավաքվեց ընդամենը 300-400 հայ, այն էլ՝ միայն կանայք ու երեխաներ: Տղաներից ոմանք փրկվել էին աղջկա հագուստ հագնելով:

---

[1] *Kons/Ankara 176, Ab. Zu, № 2725.*

[2] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 463:*

Մի գյուղում գայմագամը հրամայել էր սպանել բոլոր տղա երեխաներին[1]:

Թուրքերը մինչև Կարինից հեռանալը հրդեհեցին մի շարք շինություններ (մասնավորապես չուկաները), և «դարերով կուտակված անմաքրությանն ավելացավ այրված տների աղբը»: Ռուսները քաղաք մտնելուց հետո անմիջապես ձեռնամուխ եղան մաքրման աշխատանքներին:

Տեղի գաղթականները բաժանվում են երկու խմբի՝ թուրքական ջարդարարներից հրաշքով փրկված հայեր և ռուսական զորքերի գրաված վայրերից արտաքսված մահմեդականներ[2]:

Մի երկխոսություն հայի և թուրքի միջև Կարինի թեյարաններից մեկում: Հայի խոսքին, թե էրզրումն առաջներում գեղեցիկ քաղաք էր, թուրքը պատասխանում է. «Այո՛, հայերու ժամանակ այդպէս եղած է: Բայց ի՞նչ ընենք ... էրզրումը վերաշինելու համար հայե՞րը բերենք... Մէյ մըն ալ սա քոմիթաճի Անդրանիկը ... Այդ աւազակը այս կողմերը թիւրք չէ ձգած, ջարդեր է»: Քաղաքում հայ չկա: «Ասոր դիմացը եկեղեցի մը ունէին, հիմա ախոռի եւ միզարանի վերածուած է... Քանդեր ենք բոլորը, պտղատու ծառերն անգամ կտրեր վառեր ենք... որպեսզի հայու հետ չը մնայ...»[3]:

Ատրպետը «Армянский вестник»-ի 1916 թ. № 14-ում տպագրած «Резня в районе Эрзерума» հոդվածում ներկայացնում է Լարջինգյան քույրերին, որոնք 1915-ի մայիսից ապրել էին էրզրումի ամերիկյան հյուպատոսարանում, այսինքն՝ սեփական աչքերով էին տեսել եղեռնը: Նրանք գրում էին, որ էրզրումի գյուղերից հայերի տարագրությունն սկսվեց 1915 թ. մայիսին: Նրանց բոլորին տարան 10-20 վերստ հեռու և ոչնչացրեցին, բացառությամբ գեղեցիկ կանանց ու երեխաների: Թուրքերը ոչ միայն խլեցին հայերի ունեցվածքն ու անասունները, այլև խաբեությամբ չորթեցին նաև նրանց թաքցրած դրամն ու զարդեղենը: Բռնագաղթն իրականացվում էր հետևյալ նշանաբանով՝ հեռացնել լրտես հայերին և հեղափոխականներին՝ հանուն երկրի անվտանգության:

---

[1] *"Кавказское слово", 31 июля 1916 г.*

[2] *"Армянский вестник", 1916, № 12-13.*

[3] ***Սահակեան Ց.,** Հայ դատը, Պէյրութ, 1984, էջ 90:*

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՎԱԶ – ՍԵԲԱՍՏԻԱ

Սեբաստիան հայկական ամենամեծ նահանգն էր, հայ հոծ բնակչությամբ, նա նաև Արևմտյան Հայաստանի ամենաբարեշեն ու խիտ բնակեցված երկրամասն էր: Սեբաստիայի նահանգը Փոքր Հայքն էր: Ուներ չորս սանջակ՝ Սեբաստիա, Թոխաթ, Ամասիա, Շապին Կարահիսար: Վիլայեթում կար 28 կազա, 257 գյուղախումբ և 4761 գյուղ: Միայն Սեբաստիայի սանջակի տարածքը երկուսուկես անգամ ավելի մեծ էր, քան Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքն է: Նահանգը զբաղեցնում էր 83.000 քառ. կմ տարածություն:

1845 թ. նահանգում բնակվում էր 300.000 մարդ: Պատրիարքարանի տվյալներով 1878 թ. վիլայեթում կար 280.000 հայ (առանց Շապին Կարահիսարի, որն այն ժամանակ մտնում էր Տրապիզոնի վիլայեթի մեջ): Վ. Քինենը հենվելով թուրքական վիճակագրության տվյալների վրա, նշում է, որ 1890-ին նահանգում կար 170423 հայ: 1906 թ. թուրքական սալնամեն նշում է 149465 թիվը, իսկ ըստ պատրիարքարանի՝ 1911 թ. միայն Սեբաստիայի սանջակում բնակվում էր 255430 հայ, որից լուսավորչականներ՝ 249201 հոգի: Կարապետ Գաբիկյանն սանջակի հայ բնակչության թիվը նշում է 192164 հոգի: Թուրքական աղբյուրներով՝ հայերը կազմում էին նահանգի բնակչության 60 տոկոսը: Պատրիարքարանը հայ բնակչության նախապատերազմական չրջանի թիվը նշում է 225.000, իսկ հայոց Ազգային պատվիրակությունը՝ 165.000 հոգի, առանց նահանգի հյուսիսարևելյան մասի: Մաղաքիա արք. Օրմանյանի տվյալներով՝ նահանգում բնակվում էր 192750, որից Սեբաստիայի սանջակում՝ 86.000 հայ:

Բերված թվերն ասում են, որ Սեբաստիայի նահանգի հայ բնակչության թվի հարցում կարծիքների մեծ բևեռացում կար: Այդ թիվը տատանվում է 180.000-ից 418.000-ի միջև[1]:

Մի բան որոշակի էր՝ վիլայեթի բնակչության 38.9 տոկոսը հայ էր, իսկ 26.24 տոկոսը՝ թուրք: Հայերը գրում է Լեփսիուսը, «թուով չրջաններուն մէջ... ամեն տեղէն գերակչռող են»[2]:

Սեբաստիա քաղաքում տարագրության նախօրյակին կար 11.500 տուն, որից 7000-ը հայերինն էր: Ոստիկանության տվյալներով՝ 1915 թ. հունիսի 15-ի վիճակով քաղաքում բնակվում էր 47.500 հայ, որի 90 տոկոսը տարագրվեց: Որոշ աղբյուրներում քաղաքի բնակչության թիվը նշվում է 36.000 հոգի, ինչը ճիչտ չէ:

Սեբաստահայերի կենսամակարդակը ոչ միայն վիլայեթում, այլև Արևմտյան Հայաստանում ամենաբարձրն էր:

---

[1] ***Արզումանյան Մ.,*** *Դարավոր գոյամարտ, Ե., 1989, էջ 378:*

[2] *«Der Christliche Orient», 1913 թ. մայիս-հունիս, կամ «Հորիզոն», 26 հունիսի 1913 թ.:*

Ֆրանսիայի դեսպանի հանձնարարությամբ թարգմանիչ Մ. Անսուրյանը հայերի տնտեսական վիճակի մասին տեղեկագիր է կազմում (1911–1914 թթ.), ըստ որի՝ Սեբաստիայի արհեստավորների և առևտրականների 90 տոկոսը հայ էր: Սեբաստիա քաղաքում խանութպան էին 600 հայ և 5 թուրք, մանուֆակտուրատեր՝ 18 հայ, ոչ մի թուրք: Վիլայեթում՝ խանութպան և արհեստավոր էին 6800 հայ, 2550 թուրք, արտահանող առևտրական՝ 127 հայ, 23 թուրք, ներմուծող առևտրական՝ 141 հայ, 13 թուրք, գործարան-արհեստանոցի տեր՝ 170 հայ, 25 թուրք, սեղանավոր՝ 32 հայ, 5 թուրք: Սրանք Գր. Զոհրապի տվյալներն են[1]: Նույն 1913 թ., երբ Փարիզում լույս էր տեսնում նրա գիրքը, Ալեքսանդր Մյասնիկյանը Մոսկվայում կարդացած դասախոսություններից մեկում նշեց, որ Սեբաստիայի նահանգում եթե հայերը կազմում էին բնակչության 35 տոկոսը, ապա հայ էր առևտրականների 85 տոկոսը, արհեստավորների 70 տոկոսը, արդյունաբերական արտադրության տերերի 85 տոկոսը[2]:

Նահանգի 17700 բանվորից հայ էր 14.000-ը:

Թուրքերը մեծամասնություն էին կազմում կալվածատերերի մեջ: Նրանք էին զբաղեցնում քաղաքացիական և զինվորական պաշտոնների ճնշող մեծամասնությունը[3]:

Ինչպես մի քանի այլ քաղաքներում, այնպես էլ Սեբաստիայում, հայերին մեղադրեցին զենքերի՝ հրացանների ու ռումբերի պահեստներ ունենալու համար:

«United Press» թերթը գրում է, որ Սվազում հայերի դեմ սադրանքներն սկսվեցին 1915-ի սկզբներից: Ավելի քան 1000 մարդ նետվեց բանտ: Քաղաքի հայ բնակչությունը չփոթմունքի մեջ էր, որևէ մեկը չգիտեր, թե վաղն ի՞նչ է կատարվելու իր հետ: Վալին օտարերկրացիներին խորհուրդ էր տալիս հեռանալ Սեբաստիայից, այլապես նրանց անվտանգությունը, այդ թվում նաև բանտում չհարձակելը, երաշխավորել չէր կարող:

Բոլորն զգում էին, որ քաղաքը դժբախտ իրադարձությունների շեմին էր, բայց միայն քչերն էին ենթադրում, որ լինելու է հայերի զանգվածային բռնագաղթ[4]:

Սեբաստիան այն նահանգներից էր, որտեղ հայերը բնաջնջվում էին առանձնակի դաժանությամբ: Վիլայեթը ստացել էր «սև հողեր» անունը: Երիտթուրքերի հավաքներից մեկում նախագահողը թաքրիր (զեկուցագիր) է ներկայացնում Թալեաթին, որում նկարագրված էին հայերի հանդեպ գործադրված դաժանությունները և պահանջվում էր դատաքննություն սկսել տեղական իշխանությունների մի շարք ներկայացուցիչների դեմ: Դիմումում Ռեշիդի, Ջեմալ Ազմիի, Սաբիթի, Աթրֆի, Իբրահիմի հետ միասին նշված էր Սեբաստիայի վալի Մուամմերի անունը: Թալեաթը մի կողմ չպրտեց դիմումը, որովհետև դրանում թվարկված ջարդարարները իր դրածոներն ու կամակատարներն էին[5]:

---

[1] **Leart M.,** *La Question Arménienne a la Lumière des Documents, Paris, 1913, p. 65-67.*

[2] «Հորիզոն», 25 դեկտեմբերի 1913 թ.:

[3] ՀԱԱ Քաղվածքների ֆոնդ, գ. 3, թ. 334:

[4] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 303:

[5] «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Ե., 1988, էջ 45, «Takvim-i Vekai», № 3540:

Էնվերը 1915 թ. ապրիլին Սեբաստիայով անցնելիս կանգ է առնում Կեմերիկ գյուղաքաղաքում, որի 13.000 բնակչից 10.000-ը հայեր էին: Դահիճը հրամայեց ոչնչացնել հայերին Սարիղամիշի «դավաճանության» համար[1]:

Ի դեպ, Սարիղամիշում Էնվերին գերի ընկնելուց փրկել էին սեբաստացի հարյուրապետ Հ. Ակինյանը և Մ. Զամեյանը:

Սեբաստիա նահանգում ստեղծված գաղթականական հանձնաժողովի 1919 թ. փետրվարի 27-ին կազմած տեղեկագրում նշվում է, որ վիլայեթում հայերի սպանություններն սկսվեցին 1914-ի նոյեմբերին ու շարունակվեցին մինչև 1915-ի մայիսը: Դրանք մինչ բռնագաղթը տեղի ունեցած ջարդերն էին: Նույն տեղեկագիրը վկայում է, որ նահանգում բռնագաղթի հրամանն ստացվեց հունիսի 17-ին[2]:

Ոչ միայն այս, այլ նաև մի քանի նման վկայություններ հաստատում են, որ տարածված կարծիքը, թե հայերի բնաջնջման գործընթացն ունեցել է համապարփակ ընդգրկումով սխեմա, ճիշտ չէ: Ամենուրեք չէ, որ բռնագաղթը նախորդել է կոտորածին կամ այդ երկուսը միաժամանակ են տեղի ունեցել: Ու նաև այն, որ հայերի զանգվածային ջարդերը մինչև ապրիլի 24-ը ամիսներ շարունակ տեղի են ունեցել ոչ միայն Արևմտյան Հայաստանի արևելյան, այլև արևմտյան նահանգներում:

Սեբաստիան նաև այն նահանգն էր, որտեղ հայերի տարագրությունը կազմակերպվեց չատ արագ: Անթալիայի մութեսարիֆին Բ. Շաքիրի ուղարկած հայտնի ծածկագրում այն նահանգների թվում (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Տրապիզոն), որտեղ «ոչ մի հայ չէր մնացել և բոլորն արտաքսվել էին Մոսուլի և [Դեր] Զորի կողմերը», նշվում է նաև Սեբաստիան[3]:

Ղանի բեյի՝ Սեբաստիայում երիտթուրքերի պատասխանատու ներկայացուցչի, կարգադրությամբ էր, որ օգոստոսի 6-ին Կարդաշլարի ձորում Յոզղատի առաջին քարավանի 472 տղամարդու կոտորեցին ու նետեցին գետը[4]: Նույն քարավանի կոտորածին մասնակցեց նաև Մուամմերի ուղարկած հրոսակախումբը: Դահիճները չորսական հայի միմյանց կապեցին, նախ կողոպտեցին, ապա սպաննեցին[5]:

Յոզղատի փոխմութեսարիֆ Քեմալը հոխորտացել էր. «Մենք հայերին բնաջնջելու որոշակի հրաման ունինք եւ որեւէ մէկի վրայ ուշադրութիւն չենք դարձնելու. Մուամմերին, Ռեշիդին եւ ինձ որոշակի հրաման է տրուած եւ որեւէ այլ հրաման չեմ ընդունում»[6]:

Սեբաստիայի հայության բռնագաղթին և բնաջնջմանը Կ. Պոլսում առանձնահատուկ նշանակություն էին տալիս: Կոտորածը ղեկավարում էին նաև Բ. Շաքիրն ու 3-րդ բանակի հրամանատար Քյամիլը: Վերջիններիս նախաձեռնու-

---

[1] **Թիւրապեան Յ.,** Դրուագներ հայկական եղեռնէն եւ վերածնունդ. 1915 թ. ջարդերու մասին տեղեկագիրներ եւրոպական, ամերիկեան եւ հայկական աղբիւրներու. Փարիզ, 1946, էջ 90-92:

[2] Այս փաստաթուղթը պահվում է Փարիզում, Նուբարյան գրադարանում:

[3] «Հայերի ցեղասպանությունը...», էջ 47: Երիտթուրքերի դատավարության, հարցաքննությունների թղթապանակ, էջ 44:

[4] «Ժամանակ», 6 մարտի 1919 թ.:

[5] Դե, Հ., 519:

[6] «Ժամանակ», 12 փետրվարի 1919 թ.:

թյամբ առաջին աշխարհամարտի նախօրեից սկսած վիլայեթի ղեկավար կադրերի կազմը գրեթե ամբողջությամբ «թարմացվեց»:

Այդ փոփոխությունները կապված էին նաև 1913 թ. երիտթուրքական պետական հեղաշրջման և Իթթիհադի կուսակցական բռնապետության հաստատման հետ: Պետական պաշտոններում աշխատանքի առաջ քաշվեցին արմատական իթթիհադականներ, այլամերժներ, վրիժառու կադրեր՝ հիմնականում սերված Ռումելիայից:

Այդպիսի հայատյացներից էր Մուամմերը (Մուամմար), որը Սեբաստիայի վալի նշանակվեց 1913 թ. մարտի 16-ին: Նրան կնքել էին «օձ ու կարիճ» մականունով: Մուամմերը սիրում էր ասել, «եթե Սեբաստիան Ադանայեն գեչ չընեմ, փուֆ թող ըլլայ անունս»[1]: «Հայ ժողովուրդին արիւնը գաւաթ առ գաւաթ խմելով էր հարբում»[2]:

Մուամմերը նույնպես Մալթա աքսորված երիտթուրքական գործիչներից էր, բայց հաջողացրեց փախչել ու անհետանալ:

Նույնանման արյունարբու հայատյաց էր կաղ Աբդուլ Ղանին, որին Կ. Պոլսից 1914 թ. նոյեմբերին ուղարկեցին Իթթիհադի Սեբաստիայի կոմիտեի ղեկավար: Նա իր հետ բերեց տեղահանության հրամանը: Սեբաստիայի հայության դահիճների ղեկավարներն էին նաև 10-րդ գնդի հրամանատար Փեթեն, երեսփոխաններ՝ Ֆազըլը, Ռահիմը, Մ. Մութևելիզադեն, Հաջի Էմինը, ժանդարմների պետ Խալիլը, ժանդարմերիայի հազարապետ Շեֆիգը, «Թեչքիլաթի» ղեկավար Խալիսը, մութեսարիֆներ ու գայմագայմներ Մ. Լյութֆի, Ահմեդ, Հասան-Հյուսնի, Իբրահիմ, ռազմական դատարանի նախագահ Մ. Սաբրի, ոստիկանապետ Ռիֆաթ:

Նրանց հետ համերաշխ էին Սեբաստիայում Գերմանիայի հյուպատոս Կ. Վերթն ու գերմանացի զինվորականները[3]:

1914 թ. օգոստոսին սկսվեց զորահավաքը, բանակ զորակոչվեցին անգամ ղեռահասները, որոնք այլևս չվերադարձան[4]: Սեբաստիայում նույնպես՝ բռնագրավումները տնտեսական կյանքն ավերեցին, հայության լայն զանգվածներին թշվառության մատնեցին: Այստեղ նույնպես՝ հայերին զինաթափեցին: Ձենքեր բռնագրավողները հայերի աչքի առաջ դրանք վաճառում էին մահմեդականներին:

Մուամմերի հրամանով՝ նահանգի դատախազը 1914 թ. նոյեմբերին Բինկյանի բանտից ազատ արձակեց 124 ոճրագործի: Հանցագործներ ազատ արձակվեցին նաև ուրիշ բանտերից: Նրանցից կազմվեցին ավազակախմբեր՝ հայերին ոչնչացնելու համար:

1914 թ. վերջերին մեծ թվով սեբաստացիներ քշվեցին հարկադիր աշխատանքի և կոտորվեցին: Ոչնչացվեցին նաև բազմաթիվ հայ զինվորականներ:

1915 թ. փետրվարի 3-ին, Բ. Շաքիրի հրամանով բանտերից հանված հանցագործների մի հրոսակախումբ հարձակվում է Ալիս հայկական գյուղի վրա,

---

[1] **Արզումանյան Մ.,** նշվ. աշխ., էջ 379:

[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 370:

[3] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 82:

[4] Նույն տեղում, էջ 2-3:

բայց հակահարված է ստանում: Ավազակներին օգնության են հասնում զորքերը: Գյուղի հայությունը ջարդվում է;

Սեբաստիայում նույնպես իրականացվեցին բռնագրավումներ: Բռնագրավվեցին վանքեր, եկեղեցիներ, հիվանդանոցներ, գործարաններ, ջրաղացներ, մեծ տներ: Էրզրումից Սեբաստիա տեղափոխված Սանասարյան վարժարանի համար բերված չինանյութերով և հայոց գերեզմանատան քարերով ու հայ վարպետների ու բանվորների ձրի աշխատանքով կառուցեցին Թուրքական հիվանդանոց և զորանոց:

Զորակոչեցին մինչև 45 տարեկան, 110 սանտիմետրից բարձր հասակ ունեցող բոլոր արական սեռի հայերին: Դրանց մեջ պատահում էին նաև 10-12 տարեկաններ: Զորակոչվածներից փրկվեցին միայն արհեստավորներն ու իսլամացածները: Սակայն, երբ վերջիններիս թիվը մեծացավ, հայտարարեցին, թե «ճեննէթին մէջ իսլամացման տոկոսը փակուած է»[1]:

Ազգային պաշտպանության անունով հանձնաժողովը (Հ. Սուլեյման. Ջ. Բեկիր, Ա. Սաբրի, Հ. Մուստաֆա) մի անգամ էլ՝ խանութներում եղած ապրանքները հաշվառեց և դրանց մի մասը բաժանեց Թուրքերին:

Դեկտեմբերի 18-ին Սահակ ծ. վրդ. Օդաբաշյանը, որը Մուամմերի երաշխավորությամբ նշանակվել էր Երզնկայի առաջնորդ, չեթեների մի խմբի կողմից (Զառացի Մահիր, Խալիս, էթհեմ, Ալի) ճանապարհին սպանվում է: Լուր տարածվեց, թե հայերը թունավորել էին Թուրք զինվորների հացը:

Նույն դեկտեմբերին, Սարիղամիշի պարտությունից հետո, զինաթափեցին հայ զինվորներին և որոշ ժամանակ անց թաքուն սպաննեցին:

Հայերին զինաթափելու համար Թուրքերը գործադրեցին առավել դաժան միջոցներ՝ Խուրախոն գյուղում մի մարդու գործածեցին որպես ձի, երկու հոգու ստիպեցին իրենք իրենց սպանել:

1915-ի փետրվարի 2-ին բռնագրավեցին հռչակավոր Ս. Նշան վանքը: Մարտի 6-ին կախաղան հանվեցին կյուրինցի վեց հայեր, իբրև դասալիքներ: Ճանապարհներին սպանվեցին շատ անզեն զինակոչիկներ՝ «փախչելու փորձի համար»:

Նահանգի իշխանությունը նախապես կազմել էր հայերի ընդհանուր մահացանկը:

Մարտի 15-ին ձերբակալվեց 40 հայ գործիչ, որոնց 40 օր բանտում պահելուց հետո, Մուամմերի հրամանով գնդակահարեցին Յոզղատի ճանապարհին՝ Մաչատլար Յերի վայրում:

Հայերի ապստամբությունը կանխելու պատրվակով ապրիլի վերջերից սկսած զորքերը շրջափակեցին քաղաքի հայկական թաղերը և ձերբակալեցին 500 մտավորական, որոնց մի մասին խումբ-խումբ գնդակահարեցին Ալիս գետի ափին՝ Փաչա Զայիր վայրում: Կախաղան հանվածների թվում էին Բ. Դարբինյանը, Գորու Նշանը, Բիձա Մկրտիչը: Հունիսի 3-ին ձերբակալվեց 3500, նույն ամսի 11-ին՝ չուրջ 600 հայ և գնդակահարվեց Մայրագոմի Ղարլըղ վայրում՝

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 370:

Մուամմերի ներկայությամբ: Տնային կալանքի ենթարկեցին եպիսկոպոս Գ. Գալեմքերյանին:

Սկսեցին այս ու այն կողմ ցրել հայ զինվորներին: Օրինակ՝ Թոխաթի ամելե-զինվորներին տարան Թոնուզ կամ Սեբաստիայի մոտերքը, իսկ Սեբաստիայից ուղարկում էին Ղանդալ կամ Թոխաթ, Ամասիայից՝ Նիկսար, այսինքն՝ աշխատանքային վաշտերը հեռացնում էին իրենց ծննդավայրերից ու մեկուսացնում:

Հունիսի 2-ին սպանեցին Թոխաթի առաջնորդ Շավարշ ծ. վրդ. Սահակյանին: Սպանությունն իրականացրել էին չեթեները՝ Մուամմերի հրամանով: Հաջորդ օրն սկսվեցին Սեբաստիայի և մերձակա բնակավայրերի հայ բնակչության զանգվածային բանտարկությունները: Տասն օրում բանտ նետվեց 5000 մարդ: Սեբաստիա բերվեցին գավառների երևելի անձինք: Բանտերին հատկացված շենքերը, մի կողմից, սպանություններով դատարկվում էին, իսկ մյուս կողմից, նոր ձերբակալություններով լցվում: Սեբաստիայում ոչնչացվեցին ոչ միայն այդ նահանգի, այլև անգամ Անկարայի նահանգի Յոզղատի 500 հայեր՝ առաջնորդ Ներսես եպիսկ. Դանիելյանի հետ: Նրանց սպանեցին Դաշլը Դերե վայրում:

Սեբաստացի Մուրադ. – Սեբաստիայի քաղաքական և ռազմական գործիչների շարքում, իհարկե, ամենանշանավորը Սեբաստացի Մուրադն էր, որը ծնվել է Կովտուն գյուղաքաղաքում 1874 թվին:

Մուրադն հայդուկային կյանքի փառավոր ուղի էր անցել: Նա Սասունի 1904 թ. ինքնապաշտպանական կռիվների ղեկավարներից էր: Մի տարի անց Սյունիքում ղեկավարեց հայերի ռազմական գործողությունները հայ-թաթարական կռիվներում: Երբ հռչակվեց օսմանյան սահմանադրությունը, Մուրադը դրա երիտթուրքական նշանակությանը չհավատաց, գնաց Սեբաստիա և ղեկավարեց ինքնապաշտպանության գործը: 1913 թ. նա Մուամմերի ներկայությամբ հայտարարեց. «Իթթիհադը չէ չեղած սուլթաններու քաղաքականութենէն...»: Մուամմերը փորձեց Զերքեզ Ահմեդի միջոցով նրան սպանել, բայց ձախողվեց:

Երբ Սարիղամիշի ճակատամարտից հետո Էնվերն անցնում էր Սեբաստիայով, Մուրադը նրան ասում է. «Փաշա՛, ինչպես որ մենք՝ թիւրքահայերս կը կատարենք մեր պարտականութիւնը օսմանեան հայրենիքի հանդէպ, նոյնպէս ռուսահայերն ալ ստիպուած են կատարել իրենց պարտքը ռուս պետութեան նկատմամբ»: Էնվերը պատասխանում է՝ «Թիւրքահայերն ալ կամաւորներ ունէին, որոնցմէ մեր ձեռքը գերի ինկածներ ալ կան... Վստա՛հ եղէք, շատ խիստ պիտի պատժուիք»[1]:

Երբ նահանգում սկսվեց կուսակցական գործիչների ձերբակալությունը, ամենից առաջ փորձեցին Մուրադին ձերբակալել, բայց ձախողվեցին: Մուրադը յոթ հոգով բարձրացավ Ղավրաղ լեռը: Նա նամակ գրեց իրենց գյուղի հայրենասեր գործիչներին և օգնություն խնդրեց, որովհետև իշխանությունները տեղի զինվորական ուժերին, ոստիկանությանն ու ժանդարմերիային ոտի էին հանել նրան բռնելու: Մուրադի օգնության կանչին նրա համախոհները բանտից պատասխանեցին. «Քաղաքը պաշարուած է, որեւէ օգնութիւն հասցնելու հնա-

[1] **Գանգրունի Հ.,** նշվ. աշխ., էջ 293:

բաւորության չկայ, հաւանաբար այս պատասխանը քեզի հասնելու պահին մենք մեռած ըլլանք»[1]:

Նյու-Յորքի «The New Armenia» թերթը 1916 թ. մարտի 1-ին անդրադառնալով Մուրադի փախուստին, գրում է, որ նա հայրենի գյուղ վերադարձավ 1914 թ. դեկտեմբերին: Բայց այն, ինչ տեսավ ու լսեց, նրան հավասարակշռությունից հանեց: Մեկնեց Սեբաստիա՝ տեղեկատվություն ստանալու համար: Բոլորին տարել, ոչնչացրել էին: Վերադարձավ ու մի խումբ մարտիկների հետ գյուղից հեռացավ: Նա լեռան բարձունքից սեփական աչքերով տեսավ իր հարազատ գյուղի բնակիչների և իր ընտանիքի բռնագաղթը: Սաչար սարում թուրքական հեծյալ զորքերը նրան շրջապատեցին, բայց Մուրադը կարողացավ ծուղակից դուրս գալ: Նա ծանր վիրավոր պառկած էր Խանծախ գյուղում, երբ լուր բերեցին, որ թուրքական մեծ ուժեր են գալիս: Խնդրեց իրեն տեղափոխել լեռան գագաթը, որտեղ նա մտավ անտառ ու անհետացավ: Թուրքերը կեղծ լուր տարածեցին, թե Մուրադի խմբում 1000 մարդ կար: Նրան բռնելու համար դրամական պարգև նշանակեցին: Մուրադը 1915-ի աշնանը շարժվեց Սամսոնի ուղղությամբ[2]: Նրան միացավ ևս 10 հոգի:

Դժվարությամբ հասնում է Բաթումի: 1916-ին ձեռնամուխ եղավ որբահավաքությանը: Զոհվեց 1918 թվին Բաքվում, երբ կռվում էր կոմունայի բանակի շարքերում:

Սեբաստիայի հայ գյուղացիության ջարդերը, յաթաղանի դեմ հայ մարդու պայքարը պարզաբանելու համար անգնահատելի նյութ է պարունակում Սեբաստացի (Խրիմյան) Մուրադի օրագիրը: Ինքը՝ Մուրադը, առանձնահատուկ երևույթ է արևմտահայության ազատագրական պայքարի գործիչների համաստեղության մեջ: Նա ինքնատիպ, առաջին հայացքից հակասական գործիչ էր: Գնաց մեռնելու ռուսների շրջապատում, բայց նաև գրում էր. «Հայերուս ապիկարութիւնը ալ այս է, որ այս պատերազմին ռուսաց կողմը բռնեցին եւ մասնակցեցան բացարձակ կերպով: Սխալ էր: Թէ՛ Թիւրքիան եւ թէ՛ մենք չէզոք մնալու էինք, որպէսզի մեր գոյութիւնը պահպանէինք... Ռուսիան հայի գոյութիւնը չի ուզեր: Ազգերն իրենց անկախութիւնը կը կորսնցնեն խելքի պակասութենէն»[3]:

Մուրադն օժտված էր բացառիկ բարեմասնություններով, ահաբեկիչ էր, բայց նաև պետական մտածողության տեր վիթխարի անհատականություն:

Ուներ տեսնելու, զգալու հազվադեպ տաղանդ: Նրա օրագիրը կյանքի ոչ թե «իմի» դիրքերից դիտարկում է, այլ մարդասերի ափսոսանք, մարդկային առաքինության առջև ծնկադրություն:

Պատմում է դեռահաս օրիորդի՝ Խանումի մասին, որն ականատես լինելով իր յոթ եղբայրների վայրագ սպանությանը, անմիջապես կտրում է իր երկար հյուսքերը, հագնում տղամարդու հագուստ և հինգ ընկերների հետ փակվում քարայրում: Ջրի գնացող նրա ընկերներն ընկնում են հրացանային կրակի տակ:

---

[1] ***Ղազարեան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 93:*

[2] ***Bryce J.,*** *նշվ. աշխ., էջ 317-318:*

[3] ***Եսայեան Զ.,*** *Մուրատի ճամփորդութիւնը, Ե., 1990, էջ 8:*

Խանումը նետվում է գետակը և կրակահերթով պաշտպանում նրանց: «Երկու ժամ կռիւէն վերջ,- հիանում է Մուրադը,- կը զարնուի հինգ տեղէն ու կ'իյնայ անշնչացած: Պատիւ ու յարգա՜նք քեզ, հերոսուհի՛»[1]:

Դեմ էր չհիմնավորված «քաջութիւններին», բայց նաև համոզված, թե «ժողովուրդ մը, որ ինքզինքը պաշտպանելու միջոցներ չունի եւ ոչ էլ քաջութիւն դիմադրելու, միշտ ենթակայ է ջարդուելու...»[2]:

Տաք էր, բռնկուն, բայց նաև հաշվենկատ: Ականատեսն էր հայերի նկատմամբ քրդերի բռնությունների, բայց իրեն նվիրեց հայ-քրդական համագործակցության ձևավորման պայքարին:

Ահեղ երևույթ էր: Ո՛չ բանակ ուներ և ո՛չ էլ իշխանություն, բայց իշխանավոր էր: Նույնիսկ այնպիսի հայատյաց արյունախում, ինչպիսին Մուամմերն էր՝ ընկրկում էր նրա խոսքի առաջ: Նրան սիրաշահում էր անգամ ինքը՝ Էնվերը:

Պատահական չէ, որ երբ երիտթուրքերը գործողության մեջ դրեցին իրենց հայասպան ծրագիրը, նախ ձգտեցին «չեզոքացնել» երկու Մուրադներին՝ Մեծ Մուրադին և Սեբաստացի Մուրադին:

Երկրորդ Մուրադը հարկադրված եղավ հեռանալ իր հայրենի Կովտունից և սկսել մի ողիսական, որ պատիվ կբերի մարդկությանը հայտնի ամենախիզախ գործիչներին: Մարտերի ու թափառումների երկարաձիգ ամիսներին նա սեփական աչքերով տեսավ հայ ժողովրդի նահատակվելը և ամեն օր, ամեն ժամ առասպելական արդար վրիժառուին վայել խիզախությամբ ու հնարամտությամբ ոչնչացրեց դահիճներին:

Նրա այդ ողիսականը Սեբաստիայից մինչև Սև ծով նաև հանդիսացավ թուրքական վայրագություններին ականատես լինելու մի տանջալից գողգոթա:

Թուրքական իշխանությունները նրան ոչնչացնելու համար ոտի էին հանել մեծաթիվ ոստիկանական և զինվորական ուժեր, քրդերի ու թուրքերի: «Կառավարութիւնը խիստ հրամաններ եւ ոստիկաններ արձակած էր ամեն կողմ. գիւղերը պաշարուած էին եւ լեռան ճամբաները՝ բռնուած: Կառավարութիւնը յայտարարած էր, որտեղ որ գիս եւ իմ խումբս գտնային, գիւղը ոչնչացնել եւ ետքը, խոտերը անգամ պիտի հրդեհէին»: Բայց անգամ այդ դաժան սպառնալիքն անզոր գտնվեց հետ պահելու հարյուրավոր մարդկանց ապաստան տալու, սնելու, հոգալու իր առասպելական հերոսի ու նրա մարտական խմբի կարիքները, հարկ եղած դեպքում նրանց թաքցնել, հետախուզության գնալ, նրանց կողքին կռվի մեջ մտնել:

Մուրադի փախուստից հետո Կովտունում ձերբակալում են 12 հոգու, որոնց օրական գավազանի 120 հարված էին հասցնում Մուրադի տեղը հայտնելու համար: Ապարդյուն: Խոշտանգվողները մինչև վերջ լռեցին:

Ասում են, թե լուսապսակ ունեցողները երջանիկ են բոլոր առումներով: «Իմ մասին երբեք մի՛ մտածեր,- գրում է Մուրադի կինը,- ես ինքզինքս կը սպաննեմ: Խնդրեմ գրէ՛ դեղագործին, որ ինծի քիչ մը թոյն տայ»: Եվ գրում է՝

---

[1] **Եսայեան Զ.,** Նշվ. աշխ., էջ 10:
[2] Նույն տեղում, էջ 11:

հավատալով կնոջ ճակատագրական նվիրվածությանը: Ծանր հիվանդացավ, իսկ Թշնամին քայլ առ քայլ հետապնդում էր: Ընկերները պատգարակ են պատրաստում և ուսերի վրա պահած էին նրան տանում:

Իսկ գյուղերից ստացված լուրերը մեկը մեկից ողբերգական էին ու սահմռկեցուցիչ: Տուգասարը «պաշարուած է, անդադար հրացանաձգութիւն կ'ընեն գիւղին վրայ եւ տուգասարցիները կ'ենթարկեն սոսկալի չարչարանքի: Կառվայ գիւղին մէջ կիները կը բռնաբարեն... Աբիկ քահանային ոտքերը եւ թեւերը ջախջախուած են եւ գիւղացիք կը խնդրեն, որ զէնք մը ճարէք տաք, որպէսզի զինուորներուն յանձնեն եւ հանգստանան ու Խոռխոն գիւղն ալ աւերած էին եւ քանի մը մարդ սպաննել»: Սպանեցին նաև Մուրադի մեծ եղբորը և «վիրաւոր վիճակի մէջ տարեր թաղեր էին աղբանոց մը եւ հոն ենթարկեր էին ամեն տեսակ տանջանքի»: Խարվազ գյուղում մի օրում սպանել էին ութ հայի:

Մուրադի խմբին Հայկի գոմերում ոստիկանները շրջապատում են: Մուրադը չնայած դեռ չէր ապաքինվել, գոմից դուրս է գալիս և Թշնամու կրակի տակ բարձրանում է սարը: Ապա շուռ է գալիս ու կրակ բացում: Երեք հոգի գետին գլորվում են, իսկ մյուսները փախչում են: Լուրն իսկույն հասնում է Սեյֆե և Սեբաստիա: Մուրադի դեմ ուղարկվում է 140 զինվոր և ոստիկան: Բայց նրան այդպես էլ չեն գտնում:

Երբ այդ կռվի լուրը հասնում է Մուրադի կնոջը՝ նա ամուսնուն գրում է. «Ուրախութեանս սահման չկայ կռուի յաջողութեանդ համար: Ոստիկանները գիշեր ցերեկ կը հսկեն մեր տանը վրայ, բայց անհո՛գ եղիր, քու զաւակներդ լաւ կը պահեմ»:

Զառայի գայմագամությունում մահմեդականներին թույլատրել էին հայ գյուղացիների ունեցվածքը ոչնչացնել: Կոթնի գյուղում ամենուրեք ոստիկաններ էին. «սայլով դիակներ կը բերէին, ասոնք սպաննուած հայեր էին... Գիւղը մնացած էին չորս այր մարդ միայն»: Հայ դասալիք զինվորները պատմեցին, թե «ինչպէս կը սպաննեն ճամբաներու վրայ աշխատող հայ զինուորները: Գիշեր էր արդէն... երբ մէկալ երեք կիներ, ներս մտան», մեզ կերակուր էին բերել:

Խորսան գյուղում Հարությունն անունով մի երիտասարդի խոշտանգում են՝ աքցանով միսը պոկում, պայտում, որպեսզի ասի Մուրադի թաքստոցը: Տղան ոչ միայն հրաժարվում է ասել, այլև սկսում է հայհոյել թուրքերին ու նրանց կրոնը: Նրան չսպանեցին և չարունակեցին խոշտանգել այնքան, որ այլևս ուժ չունեին և Հարությունը դրանից օգտվելով դուրս թռավ տնից ու անհետացավ: Նույն գյուղի տանուտեր Նիկոլի ատամները քաշել էին, թևերը ջարդել: Գյուղից տարել էին 46 մարդ: «Մաթերէի մօտիկ սպաներ էին՝ չաթալ չեքիճով»: Տղաներից մեկը կապանքից պոկվել, հարձակվել էր ոստիկաններից մեկի վրա և կծել կոկորդը: Այդ «տղուն մատները, ձեռքերը մաս-մաս կտրելով, սպաներ էին»: Խուժանը 140 հոգի էր, որոնց մի մասը վալու հեծյալներն էին: Սպանեցին Խառվազում 25, Տաղասարում 32, Կովտունում 42 հոգու: Պատկերը նույնն էր հայկական բոլոր գյուղերում:

Ոստիկանները հանկարծակի հայտնվում են գյուղում ու կանգ առնում այն չինության դռանը, որտեղ թաքնված էր Մուրադի խումբը: Վիճակն անելանելի

էր: Բայց մոտենում է մի երիտասարդ կին ու ոստիկաններին ճաչի հրավիրում, այդպիսով փրկում հայդուկներին:

Պատրին գյուղում էին Մեհրալի անունով քուրդ ավազակապետն ու նրա եղբայր Ալին: Մեհրալին 1877–78 թթ. պատերազմի ժամանակ Բաբերդի, Դերջանի, Երզնկայի չատ գյուղեր ավերելուց հետո հաստատվել էր այդ գյուղում, տիրացել հայերի հողերին և նրանց դաժանորեն շահագործում էր: Ավազակ էր նաև Ալին, որը կառավարական փոստը կողոպտելուց հետո փաչայի տիտղոսի էր արժանացել:

Մուրադի խումբն այդ գյուղում լինում է այն օրերին, երբ թուրքական իշխանությունները եղեռնից վերապրած հայերին խաբեությամբ որսալու համար «ներում էին հայտարարել»:

Մուրադը նկատում է, որ մերձակա սարով 500 հոգանոց քարավան է անցնում: Պարզվում է, որ Կովտունից տարագրվածներն էին: Անմիջապես մոտենում են քարավանին: Սակայն որևէ բան անել չեն կարողանում: Մուրադը հաջորդ օրն իմանում է, որ քարավանում է եղել նաև իր մայրը: Կովտունցիներին տարագրեցին երեք քարավանով: Մուրադը գրում է, թե ինքն այդ օրը լիապես հասկացավ, որ կատարվածը «ընդհանուր հայկական հալածանքներու ծրագիր մըն էր, որ կը գործադրէին»: Նրա մտքի մեջ գծագրվեց այդ ծրագրի ամբողջ ֆիզիոլոգիան. «Մարդիկը նախապէս ձերբակալուած, զէնքերը գրաւուած էին. գիւղը մնացեր էին միայն պատանիներ, անոնք ալ փախստական վիճակի մէջ», իսկ մնացածներին տեղահանում էին[1]: Նա իր ընկերների հետ բարձունքից դիտում էր անցնող քարավանները: «Ետ կը բերէին խումբ-խումբ հայեր ոստիկաններով շրջապատուած ... Ետքը իմացանք, որ կ'առաջնորդէին դէպի ձորերը եւ հոն կը սպաննէին»:

Անցան նաև քաղաքից տարագրվածները. «Չի կարելի բացատրել, թէ ինչպէս կը թալլէին այդ խեղճերը եւ կը չարչարէին: Տասը տարեկանէ վեր գտնուող տղամարդիկը բաժնուած էին եւ տարած ուրիշ ուղղութեամբ... Մենք մեր աչքովը կը տեսնէինք գրեթէ խմբական սպանութիւններ եւ առանձին սարսափելի ոճիրներ»[2]: Անզեն ու անպաշտպան ժողովրդին թափում էին ճանապարհներին: «Դրացի վայրերէ խուժանը կու գար, կը թալլէր զիրենք: Ժողովուրդին ճիչը, աղաղակը, լացը եւ հեծեծանքը կը բռնէր արար աշխարհ... Քանի՜ անգամ ապարդիւն կերպով ուզեցի գիտնալ, թե կինս ու երեխաներս ո՞ր խումբին մէջ էին...»[3]:

Մուրադը պատմում է նաև մի դեպքի մասին, որը նույնպես վկայում է թե թուրքական իշխանություններն ինչպես էին բթացրել մահմեդական ժողովրդի ուղեղը: Նրա խմբի գերի վերցրած մի ոստիկան այն հարցին, թե այս կողմերում «գյավուրներ մնացե՞լ են», պատասխանեց. «Ո՛չ»: «Կեավուրը կատղած է, Վան, Մուշ եւ Զէյթուն իսլամ չի թողուցին, մենք ալ պիտի զիրենք բնաջինջ

---

[1] **Եսաեան Զ.,** նշվ. աշխ., էջ 46:
[2] Նույն տեղում, էջ 47:
[3] Նույն տեղում, էջ 48:

ընենք»[1]: Զիմանալով իրենց բռնողների ինքնությունը, ոստիկանները մանրամասը պատմեցին, թե «հայերը մեծ խումբերով կը տանէին եւ ձորերու մէջ կը սպաննեին»:

Մի երիտասարդ Մուրադին խնդրում է խմբում պահել իր երկու քրոջն ու հորեղբոր դստերը, այլապես քրդերը նրանց կառևանգեին: Նրա հայրն ու հորեղբայրը սպանված էին, իսկ մյուս հորեղբայրը ողջ էր մնացել, մահմեդականություն ընդունելով:

Հայ զինվորներից մեկը ճանապարհի վրա աշխատելիս անցնող քարավանի մեջ նկատում է իր կնոջը և գնում ու փաթաթվում է նրան: Ժանդարմը երկուսին էլ գնդակահար է անում: «Այդպես կային հազարներ, հարիւր հազարներ ասդին, անդին զարնուած եւ թաղուած»[2]:

«...Ճամբուն վրայ կար 5000 հոգիէ բաղկացած ժողովուրդ մը, զատեր էին այրերը եւ երեխաները եւ, անոնք իրարու կապելով, չղթայ մը կազմած էին. կէոչուորներուն դիմաց նստեցուցած՝ մէկ-մէկ կը զարնէին, եւ ով որ հրացանի գնդակէն ողջ կը մնար, կ'երթային, քարով գլուխը կը ջախջախէին,... իսկ իրենց կարգին, մահուան սպասող կապկպուած զոհերը աղիողորմ ճիչեր կ'արձակէին»[3]:

«Երեկոեան,- չարունակում է Մուրադը,- թիւրք ոստիկաններու տարազով ձերբակալեցինք երեք ոճրագործներ եւ առաջարկեցինք, որ մեզի բերեն մէկ քանի կեավուր կիներ:

– Անթիւ են,- ըսին,- եւ ինչ կիներ... Կան, որ կը խօսին ֆրանսերէն, անգլերէն...»: Ապա պատմեցին իրենց «քաջագործությունների» մասին, թե ինչպես են «քարերով ջախջախեր մահամերձներու գլուխները»[4]:

Մուրադին լուր են բերում, որ նախորդ օրվա քարավանում եղել է նաև նրա կինը՝ «պառկած սայլի վրայ: Ոստիկանները հարցուցեր են, թէ ո՞րն է Մուրադի կինը»: Որպեսզի փրկեն նրան ժողովուրդը պատասխանել է, թե նա հետո է գալու:

Ծարվա գյուղից Խանում անունով մի 18-ամյա աղջկա յոթ եղբայրներին սպանել էին, և աղջիկը խնդրում էր մտնել Մուրադի ջոկատը՝ նրանց վրեժը լուծելու համար: Խանումը Մուրադի կողքին նստած էր, երբ կռիվ սկսվեց հայդուկների ու ժանդարմների միջև: Մազերը կտրած, տղամարդու չորեր հագած Խանում Շահինյանը իսկույն հասնում է կովի վայրը, դիրք է գրավում առվի մեջ ու կրակ բացում թուրքերի վրա: Նա ծանր վիրավոր ընկնում է:

Մարտից հետո 40 հոգանոց ժանդարմական ջոկատը սկսում է կողոպտել զոհված հայերի դիակները: Մուրադի խումբն ականատես եղավ Սամսոնի, Մարզվանի, Թոխաթի, Կեսարիայի, Կիրասոնի հայերի տարագրությանը: Ղազը Մազրայի փախստականները պատմեցին, թե ոստիկաններն ինչպես դհոլ զուռնայով, հրացանային համազարկերով տարել էին «իրենց հանած հարսերն ու աղջիկները»:

---

[1] ***Եսաեան Զ.,*** *նշվ. աշխ., էջ 48-49:*

[2] *Նույն տեղում, էջ 50-51:*

[3] *Նույն տեղում, էջ 51:*

[4] *Նույն տեղում:*

Մուրադի խմբի վրա հուլիսի 25-ին հարձակվում է մի մեծ հրոսակախումբ, որն իրեն ձևացնում էր, թե տարագիրներից էր: Մուրադը թույլ է տալիս, որ նրանք մոտենան: Ապա նրա ջոկատը չրջանցում է թուրքերին ու բոլորին ոչնչացնում: Ջոկատի վրա հարձակվում է մի ուրիշ ավազակախումբ կազմված 500 հոգուց, բայց սա էլ մի քանի զոհ տալուց հետո հեռանում է: Նույն օրերին Մուամմերը Մուրադի ջոկատի դեմ է ուղարկում «100-ի չափ սայլ լեցուն զինուորներ, 7 թնդանօթով...»: Լուրեր էին տարածել, թե հայդուկային խմբում կար 700 մարդ, մինչդեռ իրականում ընդամենը իննը հոգի էին: Թեշեր սարի վրա ջոկատը չրջապատվում է: Թուրքերը բերել էին նաև թնդանոթներ: Սակայն յոթ օր այդպես, առանց հարձակման անցնելու, կանգնած մնալուց հետո հեռացան:

Թոխաթի չրջանում ջոկատը բռնում է յոթ դասալիք թուրք զինվորների: Նրանցից մեկը, կարծելով, թե իրենց բռնողները թուրքեր էին, պատմել է, թե մի հայ աղջիկ ինչպես է դիմադրել իրեն բռնաբարել փորձողներին, հարկադրված են եղել այդ աղջկան տալ մի թուրքի: Աղջիկը գիշերը ածելիով կտրում է թուրքի կոկորդն ու փախչում: Յոթ օր հետո նրան բռնում են ու բռնաբարելով սպանում:

Հույները հայերին ասում էին. «Համոզուած ենք, որ թուրքերը ոչ միայն ձեր, այլեւ մեր թշնամիներն են. վաղը, միւս օրը նոյն բաները մեզի ալ պիտի ընեն»[1]:

Մուրադը պատահմամբ հանդիպում է 170 անգեն դիվրիկցու սպանած Յուսուֆին իր խմբի հետ: Սկսվում է կռիվը: Յուսուֆը սպանվում է, սպանվում է նաև նրա ավազակախմբի մեծ մասը: Այդպես Մուրադը պարտիզանական կռիվներով կտրեց անցավ Փոքր Ասիայի հյուսիսային մասը և իր խմբի հետ անցավ Ռուսաստան:

* * *

Մայիսի 27-ին, ամիսներ տևած խոչտանգումներից հետո, հայ քաղաքական գործիչներին ձեռները կապած տարան Իթ Մեղար և գնդակահարեցին, որին նորից ներկա էին Մուամմերը, ժանդարմների հրամանատար Ալի Շեֆիկը, Իթ-թիհադի պատասխանատու քարտուղար Ղանին: Նրանք գնդակահարության վայրում լուսանկարվեցին, հավերժացրեցին իրենց «քաջագործությունը»:

Քաղաքի այդ 150 երևելի հայերի թվում էր վիլայեթում բացարձակ հեղինակությունից օգտվող, կառավարական չրջաններում մեծ ազդեցություն ունեցող բժիշկ Հայրանյանը, որին Մուամմերը սպառնացել էր. «...Դուք (հայերդ) երես առնելով չատ առաջ գացիք ու չափը անցուցիք: Հիմա սպասեցէ՛ք եւ տեսէ՛ք, թէ ձեզի ինչե՞ր պիտի ընենք»:

Հունիսի 3-16-ը 5000 հայեր չարունակում էին փակված մնալ բանտերում ու մեղրեսներում (Գեով Մեղրեսե, Շիֆայի, Մուգաֆերէդդին):

Ղանի բեյը Կ. Պոլսից բանավոր հրաման բերեց և հունիսի 22-ին սկսվեց բռնագաղթը, որն ավարտվեց հուլիսի 9-ին: Դրանից հետո, հուլիսի 11-ին,

---

[1] ***Եսաեան Զ.,*** *նշվ. աշխ., էջ 67:*

հայերի նոր ցուցակագրում կատարվեց, որն ավարտվեց 19-ին: Սկսած հուլիսի 20-ից, մինչև օգոստոսի 4-ը, ըստ կազմված ցուցակների, բանտերից օրական հանվում էին 250-300 ձեռները կապված մարդիկ և այլ վայրեր տեղափոխելու պատճառաբանությամբ տարվում էին քաղաքից 5-10 մղոն հեռավորության վրա ու տարբեր վայրերում չարաչար խոշտանգումներով սպանվում: Սպանությունները կատարվում էին հիմնականում հետևյալ վայրերում՝ Ակյորենի ձորեր, Կարտաշլարի ստորոտ, Կայա (Գայա) Դիբի և Տավրան Բողազի ձորեր, Իշխան Թագավոր վայր, Մուտ Արասը գյուղի ձորեր, Գյուն Գյորմեզ և Ղարլըխը վայրեր, Մերիկյումի ստորոտ, Մերեմ Օվա, Նյումունե Զիֆտլիկ, Շունկուրակի Զալլրի, Զելեբիլերի ձորեր, Խնդրականի վանքի մերձակայք, Զերչի Դերե, Զարչի խան Կրչլա զորանոցի հետև, Սեյրան Թեփեսիի մոտ, Սեյֆեի ճանապարհ, Դիվրի, Վարի Բալահոռ, Վերին Բորոզուտ, Սեոյիդիվ խանի հետև, Դաշլը Դերե, Փորսուղ և Ֆաթլամ:

Մտավորականների թվում էր Սեբաստիայի թեմի Քաղաքական ժողովի անդամներից մեկը, որի ճակատագիրը պարզելու համար գերմանական դեսպանատնից ստացված հարցմանը Կաղ Վերթը 1917 թ. փետրվարի 22-ին պատասխանել է. «...Որոշ ժամանակ տեղի բանտում է գտնվել, ապա ուղարկվել է անհայտ ուղղությամբ... Նրա մասին, նրա գոյություն ունենալն ապացուցող որևէ լուր չկա»: Հայերի տները գույքի հետ կնքվում էին, սակայն տեղի բնակչությունը միջոց գտնում էր ներս մտնելու և տները կողոպտելու: Գույքի մի մասն էլ տեղափոխվեց մայր եկեղեցի՝ աճուրդի հանելու համար:

Կողոպտեցին մայր եկեղեցին, Ս. Սարգիս, Ս. Փրկիչ, Ս. Մինաս եկեղեցիները, Ս. Նշան հին վանքը և այլ վանքեր, տարան եկեղեցական սպասները, ս. Նշանի հնությունների գանձարանը և 293 ձեռագիր: Այդպես 9 վանք, 90 եկեղեցի: Զփրկվեցին նաև կաթոլիկների ու բողոքականների աղոթարանները, ֆրանսիական և ամերիկյան դպրոցները, չվեյցարական որբանոց-դպրոցը: Իսկ Սեբաստիայի նահանգը դպրոցների բավական զարգացած ցանց ուներ: 1902 թ., տվյալներով՝ Սեբաստիայի սանջակում կար 70 դպրոց, որոնց թիվը 1915-ին հասավ 95-ի, որի մեջ չէին մտնում կաթոլիկական և բողոքական դպրոցները: Նշված դպրոցները 1902 թ. ունեցել են 5025 արական և 797 իգական սեռի երեխաներ, 113 ուսուցիչ:

Մինչև 1916-ի հունիսը Սեբաստիայում և շրջակա գյուղերում կային 10 հազար հայ զինվորներ, որոնք տաժանակիր աշխատանք էին կատարում զինվորական կայաններում, այլուրի գործարաններում, շինարարության վրա, արհեստանոցներում: Հայերի գերեզմանոցի քարերով կառուցեցին թուրքական դպրոցի ուսուցչանոց, երեք զորանոց, հիվանդանոց, Իթթիհադի ակումբ, պանդոկ, կազինո: Բանվորական վաշտերի հետ զինվորները ճամբարներ կառուցեցին Սեբաստիայում, Ղանղալում, Թոխաթում, Ռեշադիեում, Կեսարիայում և այլն: Շինարարությունն ավարտելուց հետո այդ զինվորներին կոտորեցին: Նախ նրանց 20 օր բանտում պահելով ուժասպառ արեցին, իսկ 1916-ի հունիսի 22-ից հուլիսի 3-ը բոլորին վայրագաբար սպանեցին Գայա Դիբի, Շար Կրչլա վայրերում, Սեբաստիայի և Կեմերեկի մոտերքում: Կարինից արևմուտք սպանեցին մի անգամ 2000, մի այլ անգամ՝ 7000 զինվորի: 1000-ական զինվոր-

ներ սպանվել են Զառայում, Ռեչադիեում (Թոխաթի սանջակ) և Ռեֆայեում (Շապին Կարահիսարի սանջակ): Մեծ թվով մարդիկ սպանվեցին Մայրագոմի լեռներում Ս. Հակոբի վանքի վերևում՝ Ղարլբխ վայրում, Զելեբիլերի ձորում:

Հայ զինվորների արգելափակումների մասին Վերթը 1916 թ. հունիսի 27-ին հեռագրեց իր դեսպանին. «Երեկ երեկոյան դեռևս այստեղ թողնված հայերից ճանապարհ և կամուրջ կառուցողները, նաև այն հայերը, որոնք արհեստների վարժարանում (այսինքն՝ Սեբաստիայի Արամյան վարժարանի չորս հարկանի մեծ շենքում էին, որտեղ մինչև պատերազմը սովորում էր 1500 աշակերտ: Շենքը 1914 թ. դեկտեմբերի 12-ին բռնագրավվել և վերածվել էր զինվորական արհեստանոցի)... Նրանցից հույներն ու իսլամություն ընդունած հայերն այսօր սաստիկ ծեծից հետո ազատ արձակվեցին: Մյուս հայերին առաջարկելու են իսլամանալ: Եթե մերժեն՝ ուղարկելու են...», այսինքն՝ կոտորելու են:

Նույն հյուպատոսը 1916 թ. հուլիսի 23-ին իր դեսպանին հաղորդեց. «Այսօր, ազգային տոնին (սահմանադրության օր) բոլոր հայ բժիշկներին սպառնալիքների հարկադրանքով իսլամացրին: Նրանք հարկադրված եղան կրոնափոխվել»[1]: Այս օրը մանուկներին թլպատելու հանդեսներ կազմակերպվեցին: Թուրքերը սպանեցին ավելի քան 1000 հայ բժիշկների և դեղագործների:

1915-ի մայիս-հունիս ամիսներին ձերբակալվեցին Սեբաստիայի, Եվդոկիայի, Մարզվանի, Ամասիայի, Զիլեի, Նիկսարի, Հերեկի և այլ բնակավայրերի հարյուրավոր մտավորականներ ու գնդակահարվեցին Սեբաստիայի մերձակայքում: Կովտունի շատ բնակիչներ ջուրը նետվեցին Ալիս գետի կամրջից:

Սեբաստիայի գյուղացիների ստվար մասին ոչնչացրին Պունազի ձորում: Դաշտերը հնձելու համար բռնագաղթից ազատվեցին միայն Դավռու (300 տուն), Բրգնիք (500 տուն), Ուլաչ (400 տուն) և Դդմաճ (300 տուն) գյուղերի բնակիչները: Նրանց տեղահանեցին սեպտեմբերին և կոտորեցին Վերան-Շեհիրի ճանապարհին:

1915 թ. սկզբներից հակահայկական քարոզչությունը սանձարձակ բնույթ ստացավ, որին եռանդուն մասնակցություն էին ունենում նաև թուրքական խորհրդարանի անդամները: «Մեր բուն թշնամիները,- ասում էին նրանք,- մեր մոտ են, մեր քովը, մեր մէջ են՝ հայերը, որոնք բոլոր աշխարհը այսօր մեր դէմ հանած են, մեր արիւնը թափել կու տան, մեր պետութեան ու հայրենիքի հիմները կը քանդեն. ուստի պէտք է, որ նախ մեր այդ ներքին թշնամիները մաքրենք, բնաջնջենք մեր մէջէն»[2]:

Հունիսի 3-ի, 10-ի և 15-ի բանտարկություններից հետո միայն հունիսի 18-ին պատերին փակցվեց տեղահանության հրամանը. «Կայսերական բարձրագոյն հրամանով եւ չեյխ ուլ իսլամի չերիական ֆեթվայով որոշուած է հայերի մշտնջենական տարագրումը Միջագետք, արաբական անապատներ, ոչ ոք չպիտի մնայ»[3]: Այնուհետև թվարկվում էին տարագրության պայմանները.

«1. Բարձրագոյն հրամանով Ջեզիրե և Դեր Զոր եք մեկնելու: 2. Անվտանգ

---

[1] **Ղազարեան Հ.,** *նշվ. աշխ., էջ 101:*

[2] **Գաբիկեան Կ.** *(Գուժկան Սեբաստիոյ). Եղեռնապատում, Պոսթոն, 1924, էջ 53:*

[3] *Նույն տեղում, էջ 92:*

եք գնալու ուղեկցողների հսկողության տակ: 3. Ճանապարհին ձեզ հետ բան չի պատահի: 4. Այս տեղահանությունը պատերազմի պատճառով է: 5. Եթե ընդդիմանալու փորձ արվի, բնաջնջվելու եք: 6. Թաղ առ թաղ եք մեկնելու: 7. Գարագոլներին հայտնված է: 8. Կարող եք վարձել կառք, ձի, էշ: Զունևորների գույքը տեղափոխելու համար կառավարությունն է կառք վարձելու»[1]:

Հայերի աղաչանքին՝ հետաձգել տեղահանությունը Մուամմերը պատասխանեց. «Եթէ գիտնամ մազերուս մէկուն մէջ գութի նշոյլ մը կայ, կը փրցունեմ կրակը կը նետեմ»[2]:

Հունիսի 18-ից հուլիսի 4-ը, այսինքն կես ամսում, երեք քարավանով տեղահանվեց Սեբաստիա քաղաքի հայ բնակչությունը՝ 5850 ընտանիք՝ չուրջ 28.000 մարդ: Քաղաքում թողնվեցին մի քանի տասնյակ արհեստավորներ, որոնց աքսորեցին հոկտեմբերի 2-ին և Կ. Պոլսի ճանապարհին սպանեցին:

Ծրագրված էր Սեբաստիա քաղաքից տարագրել 47500 հայ և այդ անել 17 քարավանների միջոցով: Թվերի միջև եղած տարբերության պատճառը դժվար է ասել: Կա՛մ քաղաքում 50.000 հայ չէր բնակվում և կա՛մ տարագրվածների թիվը գիտակցաբար փոքրացված էր: Հավանականը երկրորդն է:

Մուամմերը ռազմական ատյանին գրեց, թե Սեբաստիայում 30.000 հայ պատրաստվել էին ապստամբելու: Այս գրությունը հրապարակվեց ոչ միայն ժամանակի մամուլում, այլ նաև «Ermeni komitelerin amale ve hareket ihtiliyesi» (Կ. Պոլիս, 1916 թ.) փաստաթղթերի ժողովածուում (էջ 190-194):

Սեբաստիայում Բ. Շաքիրն ու Քյամիլը բռնագաղթն սկսեցին նրանով, որ Քյամիլը ավելի քան հազար հայ աղջիկներ նվեր ուղարկեց Կ. Պոլսի ընկերներին, որոնց մեծ մասը պարզապես վաճառքի հանվեց: Սեբաստիա բերվեցին 1700 ռուս գերիներ, որոնց աշխատեցնում էին քաղցած, որպեսզի հյուծեն: Երբ հայերը օգնություն ցույց տվեցին նրանց, իշխանությունները հայերի դեմ հանեցին ամբոխին[3]: Այնուամենայնիվ, հայերն իրենց վտանգելով, ռուս զինվորների դիակները հողին հանձնեցին:

Բ. Շաքիրը Սեբաստիայի ջարդարարներին հանձնարարել էր հայերին չխնայել:

Մի քանի օրում հողին հավասարեցրեցին Փոքր Հայքի չեն գյուղերը, կոտորեցին բնակիչներին, իսկ հուլիսի 5-ին անցան քաղաքի հայերի հարցի լուծմանը:

Մահմեդականություն ընդունելու պահանջին ընդառաջ գնացող հայերին առաջարկեցին թուրքական որբանոցներ հանձնել մինչև 12 տարեկան տղաներին և վերաբնակվել այնտեղ, որտեղ իշխանությունները նպատակահարմար կհամարեն: Սակայն չուտով հետ կանգնեցին անգամ այդ տարբերակից և նրանց նույնպես բռնագաղթեցին ու ճանապարհին մեռցրեցին[4]: Ամերիկյան միսիոներ Ու. Ջեքսը Մալաթիա-Սեբաստիա խճուղով անցնելու ժամանակ ինքը

---

[1] **Ղազարեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 94:*

[2] *Նույն տեղում:*

[3] **Միրզենց Վ.**, *Հայկական ջարդերու փաստաթուղթերը. Մաս Ա, Կ. Պոլիս, 1920, էջ 133:*

[4] **Ակունի Ս.**, *նշվ. աշխ., էջ 96:*

ժամ չարունակ տեսել էր միմյանց կապված երկուական կամ հինգական դիակների (հիմնականում արու սեռի) խիտ շարքեր[1]:

Ամենադաժան բախտ բաժին ընկավ տարագիր կանանց, երեխաներին և ծերերին: Լսենք օտարերկրացի ականատեսներին:

1915 թ. մայիսին Սեբաստիայի ձերբակալված անվանի հայերին հասցրեցին Դիարբեքիր, որտեղ նրանց միացրեցին տեղի մտավորականներին և այդ 1200 հոգուն 30 լաստերով Տիգրիսով տարան ու ջրախեղդ արեցին: Հաջորդ օրը զոհերի հագուստները վաճառվում էին Դիարբեքիրի չուկայում[2]:

Ամերիկացի միսիոներ Մ. Գրաֆֆան, որն ուղեկցել էր տարագիրներին, նկարագրում է Սեբաստիայի հայության մի քարավանի հետ կատարվածը: Քարավանում հավաքված էին կանայք, աղջիկներ ու երեխաներ: Վալու հրամանի պատճառով չատերը ճանապարհ ելան բացարձակապես առանց որևէ նախապատրաստության: Քարավանը գիշերեց բացօդյա: Արդեն հաջորդ օրը հայերի մեծ մասն այլևս ուտելու բան չուներ և սկսեց վաճառել ունեցածը, այդ թվում նաև փոխադրամիջոցները՝ ավանակ, ձի, եզ: Գայմագամի հանձնարարությամբ՝ մյուդիրը կազմեց տղամարդկանց ցուցակը, ապա նրանց առանձնացրին և տարան: Մի օր անց վերադարձավ միայն մեկը, որը պատմեց, թե իրենցից վերցրին ունեցած դրամը և պատանդ պահեցին:

Կանգալ գյուղում հայերի մեծ մասին ոչնչացրեցին:

Գնալով մեծանում էր որբ մնացած երեխաների թիվը: Կանգալից հետո քարավանում կենդանի էին մնացել միայն մահմեդականացածները[3]:

Կաղի Մահարա դաշտավայրը, որ խիտ բնակչություն ուներ, դատարկված էր[4]: Նա լցված էր մարդկանց դիակներով: Հարազատներն իրար կորցրել էին:

Առանց ամուսնու մնացած կանանց (30–35 տարեկան) տիրացել էին[5]: Երիտասարդ կին և երեխա չէր մնացել, բոլորին տարել էին Թոքաթ (Թոխաթ): Երեխաներին տարել էին առանց ծնողների: Թոքաթում երեք օր նրանց ուտելու որևէ բան չտվեցին:

Կանգալը թողնելուց մեկ օր հետո գայմագամը քարավանը հանձնեց քրդերի տնօրինությանը: Վերջինները իրավասու էին հայերի հետ վարվել ինչպես ցանկանային: Կանայք ու երեխաները հազիվ էին քայլում, նրանք հետ էին ընկնում: Մյուդիրը պահանջեց Սեբաստիա վերադառնալու համար տղամարդիկն առանձնացնել: Սակայն քարավանում տղամարդ չէր մնացել: Ոստիկանները կանանց ասացին, թե «Թոքմասուում ձեզ սպանելու են, ունեցած դրամը և զարդերը տվեք մեզ, որպեսզի ձեզ հետ գանք ու փրկվեք»: Քարավանի հանդեպ ամենադաժանը վերաբերվում էր զինվորների հրամանատարը: Քրդերը չարունակում էին սպանել ու բռնաբարել[6]:

Թոքմասուում չոգ էր, բայց թույլ չտվեցին ջուր խմել: Քրդերը ջուրը վաճա-

---

[1] **Լեփսիուս Յո.,** Գաղտնի տեղեկագիր..., էջ 63:

[2] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 25:

[3] Նույն տեղում, էջ 305, «Missionary Herald», դեկտեմբեր, 1916 թ.:

[4] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 305, «Missionary Herald», դեկտեմբեր, 1916 թ.:

[5] Նույն տեղում, էջ 306:

[6] Նույն տեղում, էջ 307:

ռում էին: Ամեն տեղ թափված էին դիակներ, մեռնում ու մեռնում էին: Գրաֆֆան անձամբ տեսել է 49 հոգու, որոնք հոգեվարքի մեջ էին: Քարավանի հետևից գալիս էր քուրդ ամբոխը: Հենց հասան կամրջին, սկսեցին հայերին նետել գետը:

Ոստիկանությունն ամեն կերպ աշխատում էր օտարերկրացիներին հեռացնել հայերի քարավանների երթուղիներից՝ ջարդերը թաքուն պահելու համար[1]: Սակայն այդ նրանց չէր հաջողվում: Կատարված վայրագությունների ականատես օտարերկրացիները «անզգա, խելագար էին դարձել»:

Տասը տարեկանից բարձր բոլոր հայերը ոչնչացվեցին:

Բռնագաղթի ճանապարհները վերածվել էին ոչնչացման հրապարակների: Սեբաստիա քաղաքի առաջին քարավանից՝ մոտ 6000 հոգուց, Հալեպ հասան 350 կին և երեխա:

«United Press» թերթում Հ. Վուդը գրում է, որ Սեբաստիայում մինչև տարագրելը, թուրքերը հայերին կողոպտում էին, միաժամանակ հաշվառում էին, ցուցակներ կազմում: Հայերի տներից անգամ հատակին փռված կարպետներն էին տանում: Երեխաներին անկողիններից հանում էին և հարկադրում ականատես լինել, թե ինչպես էին սպանում իրենց ծնողներին[2]:

Արտասահմանցի (ամերիկացի) թղթակիցներից մեկը 1915 թ. հուլիսի 13-ին գրեց, որ Սեբաստիայի բնակչությունը ահաբեկված հեռանում էր քաղաքից, այդ թվում նաև բողոքականները, հեռանում էին նաև որբ երեխաները, ամերիկյան հոսպիտալի աշխատողները[3]: Նա գրում է, որ վիլայեթում գրեթե հայ չմնաց:

Երկուշաբթի օրը, նկարագրում է Վուդը, ուղարկեցին հայերի առաջին խումբը: Իսկ բողոքականներին զգուշացրեցին, որ տարագրությունը չարունակվելու է չորեքշաբթի օրը: Բողոքականներին տեղափոխելու համար միսիոներուհի Գրեյֆը վագոններ ու ավանակներ վարձեց:

Դիմեցինք Մորգենթաուին՝ որբ երեխաներին Սեբաստիայից դուրս հանելու: Դեսպանը խոստացավ:

Իսկ երբ հասանք Կ. Պոլիս, հասկացանք, որ այն ինչ կատարվում էր Սեբաստիայում, հրամայված էր Կ. Պոլսից:

Հայերը բռնագաղթվելիս իրենց հետ տարան միայն մի քանի օրվա սննդամթերք, իսկ դրամ քիչ վերցրեցին, վախենալով, որ ճանապարհին կխլեին[4]:

«Թալասի ճանապարհին մենք հանդիպեցինք երկու գյուղերից բռնագաղթվածների, որոնց մի մասը գնում էր ոտքով, մյուսները՝ ավանակներով: Նրանք ոչ ուտելիք ունեին և ոչ էլ քնելու տեղ: Տղամարդիկ ու կանայք հազիվ էին ոտի վրա մնում, երեխաները լաց էին լինում, քաղցած էին, ծարավ»:

Անգամ թուրք ոստիկանները չէին թաքցնում, որ այդ բռնագաղթի նպատակը բնաջնջումն էր. «Իթթիհատը որոշած է հայը բնաջինջ ընել,- ասաց նրանցից մեկը հայ տարագիրներին,- Հայաստան անունը սրբել աշխարհացոյց-

---

[1] Bryce J., նշվ. աշխ., էջ 307:
[2] Նույն տեղում, էջ 2-3:
[3] Նույն տեղում, էջ 302-303:
[4] Նույն տեղում, էջ 303-304:

ներու վրայէն, Թիւրքիան Թիւրք-իսլամական աշխարհ մը ընել: Մի՛ կարծէք, որ որոշեալ տեղ մը կը դրկուիք ու հոն հաստատ բնակութիւն մը կունենաք: Ոչ երբեք, ամենդ, ամենդ պիտի սպանուիք, ջարդուիք, բնաջինջ պիտի ըլլաք: ԻԹԹիհատը ձեզի այս ընելէն վերջը նոյնը պէտք է ընէ քիւրտերուն, արաբներուն, կրզրլպաշներուն, վերջապէս՝ երկրին բաղկացուցիչ որեւէ տարրերուն, ալ Թիւրքիան պիտի ըլլայ զուտ Թիւրքերուն. այս է ԻԹԹիհատի ծրագիրը, հետապնդած նպատակը»[1]:

Սեբաստիա-Խարբերդ խճուղու վրայի Հասան-Զելեբի գյուղը նոյնպես դարձավ հայերի սպանդանոց: ԻԹԹիհադականները դիմեցին այդ գյուղի մահմեդականներին. «Եկե՛ք, ձեր հայրերը, ձեր զավակները պատերազմի մեջ սպանողները գերի բերեր ենք: Եկե՛ք դուք էլ նրանց ջարդեք, ձեր վրեժը լուծեք, սրտներդ հովացրեք»: Եվ եկան. «Սպանութիւնները կը կատարուէին խիստ մարդախողխող եղանակով՝ մանգաղներով, նաջախներով, մահակով, կացնով, սրածայր ձողերով, սղոցով: Խեղճ զոհերը ինքզինքնին բարեբախտ պիտի համարէին, եթէ, գնդակով մը մէկ անգամէն սպաննեն զիրենք, բայց այդ իսկ կը խնայեն, մէկ գնդակին երկու ոսկի գին ուզելով: Ժամերով կը տուայտէին, կտապլտկեին, կը չարչարուէին արեան ճապաղեաց մէջ, ահռելի հոնդիւններով, ոգորումներով, գալարումներով: Զոհերուն զգեստները, վրանուն եղած դրամ, ժամացոյց կը բաժնէին ջարդարարներուն, իսկ արիւնոտ չուվաները կը դարձնէին կարաւանի տէրերուն»[2]:

Քարավաններից մեկի 4000 երեխայի թուրքերը Եփրատ թափեցին: Երեխաներին խլում էին «մայրերու գրկերէն, քարերուն հարուածելով կը սպաննէին, սրունքներէն դեմ դիմաց քաշելով՝ մեջտեղէն կը հերձէին, ի մի հարուած գլուխը իրանէն կը բաժնէին, արգանդներ կը պատռէին, դեռ արեւաշխարհը չտեսած, դուրս կը քաշէին, սուրերու ծայրը անցուցած կ՚զուարճանային. «Կեավուրին հաւկիթն ալ ջախջախեցէ՛ք, ոտնահարեցէ՛ք,- կ՚ըսէին,- չըլլայ, որ մէջէն աքաղաղ ելլէ, արու արմատ դուրս գայ»[3]:

Պատմում է ականատեսը. Այստեղ ևս եղեռնը սկսվեց մտավորականության և երևելի անձանց ձերբակալությունով: Հետո հավաքեցին 16-ից բարձր բոլոր տղամարդկանց, բայց ոչ բանակի, այլ զանազան աշխատանքների համար: Այդ մարդահավաքը մեկուկես ամիս տևեց: Ապա հրաման եղավ երեք օրից պատրաստ լինել տեղահանության համար: Ասում էին, թե տեղափոխում էին Մալաթիա, որտեղ արդեն տարված տղամարդիկը տներ են կառուցում նրանց համար: Եփրատի ափին հավաքեցին քարավանը: Գետի վրա հոսում էին դիակներ, իսկ օդում սև ագռավներն էին ճախրում: Լաստերով դիակները գետից հանում էին և լցնում խորը փոսերը: Դիակները միմյանց կապված էին:

Մալաթիայի Ֆուրունճըլարից տարագիրներին տարան Ուրֆայի ուղղությամբ: Քարավանն ուղեկցող ժանդարմները իրենց պարտականությունը հանձնեցին չեթեներին: Ճանապարհին նույնպես դիակներ էին թափված,

---

[1] **Գաբիկեան Կ.,** *նշվ. աշխ., էջ 138-139:*
[2] *Նույն տեղում, էջ 169:*
[3] *Նույն տեղում, էջ 248:*

գարշահոտություն էր: Բռնագաղթվողներն ամբողջ օրը ծարավ էին մնացել: Երեկոյան մահմեդական գյուղացիները ջուր բերեցին և ամանը մեկ մեջիդիեյով վաճառեցին: Կիզիչ արև էր: Քարավանն անընդհատ հարձակումների էր ենթարկվում: Տղամարդկանց ու երեխաներին առանձնացրեցին և տարան բլրի հետևն ու գնդակահարեցին, իսկ ժանդարմները ժողովրդին հարվածելով առաջ էին քշում:

Մերի Գրեյֆը, լսելով տեղահանման լուրը, գնեց եզան տասը սայլ, երկու ձիակառք, վեց ավանակ՝ որբանոցի սաներին տեղափոխելու համար: Սակայն հենց առաջին կանգառին քարավանի վրա հարձակման ժամանակ դրանք բոլորը, ինչպես նաև ամբողջ սննդամթերքը խլեցին: Մի քանի օր անց սկսվեցին թոցնել որբերի հագուստները, անգամ ներքնազգեստները:

Երբ Մ. Գրեյֆը բողոքեց դրա դեմ, ժանդարմները հռհռալով պատասխանեցին. «Ի՞նչ ես դողդողում սրանց վրա: Մեկ-երկու օրից ամենքն էլ պիտի առևանգվեն, ջարդվեն, վերանան»:

Թոխմա գետն անցնելիս կամրջին կանգնած թուրքերը ջոկում էին տղաներին ու աղջիկներին, իսկ ով դիմադրում էր, գետն էին նետում: Նրանց ետևից ճչալով իրեն գետը նետեց Մ. Գրեյֆն ու սպառնաց թուրքերին. «Զհամարձակվե՛ք սաներիս մազին անգամ դիպչել... Հիմա ձեր գազանությունների մասին իմ երկրի (ԱՄՆ) դեսպանին հեռագիր եմ ուղարկելու»: Թուրքերն ընկրկեցին, որբերն անցան: Հավանաբար այս և նման դեպքերի մասին լուրերը հասնում էին Կ. Պոլիս և ստացվեց Թալեաթի հանրահայտ հեռագիրը տարագրության վայրերից օտարերկրացիներին հեռացնելու մասին:

Մ. Գրեյֆին ևս հեռացրեցին, սակայն նա համառ էր՝ սկսեց որբերի հավաքը և որբերի հետ վերադարձավ Սեբաստիա:

Հետագայում նա թուրքերի վայրագությունների վերաբերյալ իր հուշագրությունները տպագրեց ամերիկյան «Missionary Herald» լրագրի 1915 թ. դեկտեմբերի համարներում, որոնք փաստորեն Մեծ եղեռնի մասին առաջին հուշագրական հրապարակումն էին և ցնցող տպավորություն գործեցին: Մարդասեր կինը հանգանակություն կազմակերպեց հօգուտ որբերի և Սեբաստիայում որբանոց բացեց: Նա գյուղից գյուղ էր անցնում, որբեր փնտրում, նրանց գնում էր և տեղավորում Արամյան վարժարանի սերտարանը, քանի որ երեխաներից շատերն արդեն հայերեն չգիտեին: Այդպես նա փրկեց ավելի քան 1000 երեխա: Բռնագաղթված հայերի պահ տված ոսկիներով նա աղջիկների համար գործվածքային արհեստանոց բացեց, ստեղծեց կարպետների արտադրություն: Նաև կազմակերպեց լեռներում մաքառող ֆիդայիներին սննդամթերք, դեղորայք հասցնելու գործը:

Սակայն 20 տարի իր կյանքը հայությանը նվիրած Մ. Գրեյֆը երկար չդիմացավ: Ծանր հիվանդացավ և կնքեց իր մահկանացուն: Նրան թաղեցին Աստղ լեռան վրա:

Պատմում է ականատեսը: Հունիսյան մի վաղ առավոտ քաղաքի փողոցներ խուժեցին հեծյալ ժանդարմները: Պատերին փակցվեցին ազդագրեր, թե հայերը «պետք է 5 օրում նախապատրաստվեն մեկնելու»: Արգելվեց փողոցներում հավաքվել ու չուկա գնալ: Նաև արգելվեց բանկից դրամ հանել: Տեղյակ պահ-

վեց, որ ճանապարհի համար թույլատրվում է վերցնել միայն ամենաանհրաժեշտ բաները: Խիստ պատիժ էր սպառնում նրան, ով չկատարեր իշխանությունների հանձնարարականները: Երկու օր անց հայերին առաջարկվեց իսլամությունն ընդունել: Վերջինները միահամուռ հրաժարվեցին:

Սկսվեց տարագրությունը: Սկզբում տղամարդիկ գնում էին ընդհանուր քարավանի հետ: 20-րդ օրը նրանց բաժանեցին ու սպանեցին: Ժանդարմները հարձակվեցին անպաշտպան քարավանի վրա, կողոպտեցին, չատերին լրիվ մերկ թողեցին: Մի քանի օր անց քարավանի կողքին մանգաղով ու բահով սպանվեց տղամարդկանց մի ուրիշ քարավան:

Հաջորդ օրերին նրանք տեսնում էին ճանապարհներին թափված բազում դիակներ[1]:

Թուրք բժիշկ Ազիզը վկայում է, որ Մարզվանի կառավարիչ Ֆայիկը «քաղաքի 13.000 հայի կոտորել տվեց կացնով». հայերն առանց երկմտելու իրենց վիզը երկարում էին դահիճներին: Այդ թուրքը ծաղրով, թե լուրջ ասում է. «Հնարավոր չէր չհիանալ մահվան հանդեպ նրանց արի կեցվածքով, վախի ամենանվազ արտահայտությունից զերծ վերաբերմունքով»[2]:

Ականատես օտար լրագրողներից մեկը 1915 թ. օգոստոսի 29-ին գրեց. «Սվազում գրեթե մարդ չի մնացել: Կանգուն է չվեյցարական մանկատունը, Սանասարյան դպրոցը: Մնացել էին միայն հաշմանդամները, վիրավորները և թուրքերի մոտ ծառայող մասնագետները (բժիշկ, արհեստավոր և այլն)»[3]:

Սիրիացիների և հայերի օգնության ամերիկյան կոմիտեն 1916 թ. մարտի 10-ին հաղորդեց, որ մի ամերիկուհի Թալաս-Մենդել երկաթուղագծի երկայնքով տեսել էր մեծ թվով ամենատարբեր տարիքի մարդկանց դիակներ: Երկաթուղու երկայնքով հազարավոր տարագիրներ էին կուտակվել[4]: Սեբաստիայում մնացածները մահմեդականացվել էին: Մեծ թվով հայ աղջիկների թուրքերը կնության վերցրին: Շատ աղջիկների ու երեխաների հետ բերեցին Սեբաստիա, մտցրեցին որբանոցներ կամ փակեցին դատարկ տներում: Մահվան սպառնալիքի տակ աղջիկներին հարկադրեցին իսլամանալ և ամուսնանալ մահմեդականների հետ[5]:

Թուրք զինվորները հարձակվում էին տարագիր հայերի վրա ու անարգելք սպանում: Մեկին խաչել էին պատին ու կացնի հարվածներով կտոր-կտոր էին անում: Մի խմբի երեք օր փակեցին առանց հացի ու ջրի:

Թոքաթում նույնպես աղջիկներին փակում էին տներում՝ առանց հաց ու ջրի: Հայ գաղթականները եվրոպացիներին ասում էին, որ իրենց բոլորին չուտ թե ուշ սպանելու էին:

Թղթակիցն ականջալուր էր եղել հոջաների զրույցին, որոնք մեծ ափսո-

---

[1] *«Der Orient», 1920 թ. № 1/2, էջ 46-49:*

[2] *Վանգենհայմի 7-ը հուլիսի 1915 թ. № 433 տեղեկագիր, նաև «Հայրենիք», 24 հունվարի 1987 թ.:*

[3] *Bryce J., նշվ. աշխ., էջ 309:*

[4] *Նույն տեղում, էջ 313-314:*

[5] *Նույն տեղում, էջ 314:*

սանքով էին խոսում հայերի հետ կատարվածի մասին: Կայսերիի մերձակայքում հայ կանայք երեք շաբաթ կռվում էին քուրդ ավազակների դեմ և պաշտպանում իրենց երեխաներին[1]: «Մենք լսեցինք,- գրում է նա,- որ այս ճանապարհի վրա եղած բոլոր գյուղերի հայ բնակիչները սպանվել էին»:

Սեբաստիա-Թալաս ճանապարհին թակարդներ էին ստեղծել: Հայերը իրար կպած էին քայլում, վախենում էին միմյանցից բաժանվել: Հայտարարության մեջ ասվում էր, որ հայերին թույլ չէին տվել իրենց հետ սննդամթերք վերցնել, որ քաղցից շուտ մեռնեին[2]:

Կ. Վերթը 1916 թ. ապրիլի 20-ին գրում է. «Էրզրումից Սվազ գնալիս ականատես եղա զանազան սարսափելի դեպքերի՝ խեղճ, դեռևս կենդանի, բայց թալանված ու սպանված հայ տղամարդիկ, թալանված ու առևանգված հայ կանայք: Ոչ միայն նրանց, այլ նաև աղջիկներին փախցնում էին թուրք գյուղացիները՝ հարեմների համար»:

Հայերի հանդեպ թուրքերի վրեժխնդրությունը Էրզրումի անկումից հետո նոր բռնկում ունեցավ: Թուրք գաղթականներն ասում էին, որ այդ պատիժը Աստված է իրենց ուղարկել բռնագաղթելու, կողոպտելու և մորթելու համար, հիմա իրենք թուրքերն են փախչում ռուսներից: Որևէ մեկը նրանց որևէ դժբախտություն չի պատճառել, բայց և այնպես շատերը ճանապարհին մեռնում են ցրտից ու քաղցից[3]:

Կրոնական գործիչ Քրիստոֆերը 1916 թ. ապրիլին Սվազից գրում է, որ ինքը վերջին հայ քրիստոնյաներին տեսել է Էրեյլիում, որտեղից մինչև Սեբաստիա բոլորին հիմնավորապես «մաքրել են», «աքսորել կամ կրոնափոխել են և կամ ոչնչացրել: Այլևս որևէ տեղ ոչ մի հայ բառ չէր լսվում»[4]:

Վերթը 1918 թ. հուլիսի 23-ին հեռագրեց. «Մի շաբաթ առաջ այստեղ կախաղան հանվեցին երկու հայեր, իսկ այսօր առավոտյան կառավարչատան առաջ՝ ևս չորս տղամարդ: Թոքաթում վերջին ժամանակները նման պատիժներ հաճախ են գործադրվում[5]:

Սեբաստիայի հայերի մի մասին կոտորեցին Հալեպի ճանապարհին և Դեր Զորում: Ըստ Թեոդիկի՝ փրկվեց 16800 սեբաստահայ, որոնց մի մասը 1918-20 թթ. վերադարձավ իր բնակավայրերը:

«... Տարագիրներու քարաւաններուն մէջ,- գրում է Մուստաֆա Նեղիմը,- տղամարդիկ շատ սակաւ էին: Էրիկ մարդ բոլորովին չկար Խարբերդէն և Սվազէն եղածներուն մէջ:

Սեբաստիայի կուսակալ, դահիճ դասակարգի անսիրտ, այլանդակ ներկայացուցիչ Մուամմեր փաշան կոտորել տուեր է Սեբաստիոյ մէջ գտնուող բոլոր այր մարդիկը»:

Մ. Նեղիմը նկարագրում է Հալեպ հասած սեբաստացիների քարավանը.

---

[1] **Bryce J.**, նշվ. աշխ., էջ 315:
[2] Նույն տեղում, էջ 316:
[3] R 21019, Ab. 12155.
[4] **Lepsius J.**, նշվ. աշխ., փաստ. № 287:
[5] R 14192, Ab. 19989.

«... Որ մը փողոցին մէջ տեսայ մարդկային հօտ մը բաղկացած ծերերէ, տղաքներէ, հիւանդներէ, որոնք մեծ դժուարութեամբ կը քալէին չրջապատուած բիրերով, սուիններով, մտրակով զինուած ոստիկաններէ: Շատերուն ոտքերը ուռած՝ տանջանքով քայլ կը նետէին, կարգ մը մարդիկ, անդամները նոյն այդ կարաւանին, մտած էին հիւանդներուն թեւը, զորս կը տանէին կոր պարզապէս քաշկոտելով»[1]: Տեղի իշխանութիւնները մահմեդական բնակչութեանը համոզում էին, որ հայերը ոխերիմ թշնամիներ են, նրանք ձգտում են կործանել կայսրությունն ու Շերիաթը: Հայերից շատերը փորձում էին ապացուցել, որ իրենք անմեղ էին, բայց իզուր: Զոհերը բախտավորություն էին համարում, եթե գնդակահարվում էին: Կացնահարում էին անգամ երեխաներին, նրանց ողջողջ չպրտում գետն ու անդունդները: Շատ կանայք ու աղջիկներ անարգանքից խուսափելու համար ինքնասպան եղան:

Բռնագաղթված հայերին «սպասարկելու համար» գոմերում ստեղծվեցին «բաղչաներ» (հիվանդանոցներ), որտեղ ոջիլ ու աղտեղություն, քաղց ու համաճարակներ էին «բաժանում» տարագրյալներին: Մահացածների դիակները թափվում էին փողոցներում ու դառնում շների կեր, իսկ «բաղչաներում» թաղում էին նրանց, որոնք համառում էին՝ չէին մեռնում, հաճախ հարկադրելով, որ գերեզմանափոսերը վարեն նրանց հարազատները:

Հայերին դիտավորյալ այնքան էին քաղցած պահում, որ նրանցից ոմանք գազանի նման հոչոտում էին դիակները:

Սեբաստիայի մի քարավանից կենդանի մնաց 450 հոգի, որից 60-ը՝ տղամարդ: Բռնագաղթվածներից Վերոնիկա Քեոչեյանը պատմել է, որ հուլիսի 4-ին 25 կանանց ու աղջիկներին լցրեցին գետն ու խեղդեցին: Քարավանին 12 ժամ թույլ չտվեցին ջուր խմել, և ինքը դստեր մեզն է խմել:

Հերմոն Հովսեփյանը պատմել է, որ հուլիսի 1-ին Մալաթիայի մերձակայքում ընկած էին 23 աղջկա մերկ դիակներ, որոնց սեռական օրգանների մեջ քարեր էին խցկված:

Նա հիշում է. «15 ժամ ծարավ մնալուց հետո շատերը նետվեցին առաջին իսկ հանդիպած ջրհորը և այլևս դուրս գալ չկարողացան»[2]:

Սեբաստացի մի փոքրիկ աղջիկ միսիոներ Բարլետին պատմել է, որ «թուրքերն իր հորն ու մյուս տղամարդկանց միմյանց կապեցին, կտտանքների ենթարկեցին ու սպանեցին»:

Մուսամերը հայերի բնաջնջման գործում լայնորեն ներքաշեց չերքեզներին, որից հետո նրանց նույնպես ոչնչացրեց[3]:

Սեբաստիայում 1916 թ. սեպտեմբերին նոր ջարդ է տեղի ունենում: Կենդանի մնացած 6000 հայից 5000-ին ոչնչացրեցին[4]: «Անհայտ պատրվակով Սվազում ծագել է հայկական նոր կոտորած»: Դա արդեն 1917 թ. հունիսին էր[5]:

---

[1] ***Նետիմ Մ.,*** *Իմ վկայութիւններս եւ Տոքթ. Նագգաչեան Ա., Այաչի բանտը: Պէյրութ, 1978, էջ 84, 89:*

[2] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 543:*

[3] *«Ալիք», 24 մայիսի 1986 թ.:*

[4] *"Армянский вестник", 1916, № 39.*

[5] *"Армянский вестник", 1917 г., № 26.*

«Թագուհի անունով սեբաստացի մի աղջիկ վեց տարեկան է լինում, երբ սկսվում է բռնագաղթը,- գրում է Նեղիմը:- Իրենց ընկերակցող ոստիկաններէն մին փորձեր է բռնաբարել իր քրոջ, հազիւ 13 տարեկան աղջկան մը կուսութիւնը: Աղջիկը ընդդիմացեր է բուռն կերպով, ոստիկանը կը կատղի եւ Գըզել Ըրմաք կը նետէ զայն. աղջկան երկու եղբայրները, մին ութ, միւսը տաս տարեկան: Ասկից ազդուելով, կ'անիծեն ոստիկանը եւ կը հայհոյեն: Անգութը սուինահար կը սպանէ գանոնք ալ, ջարդելով անոնց թոքերը: Այս եռեակ աղէտները կը փճացնեն իր եղկելի մայրը, որ վեց տարեկան աղջկան ձեռքէն բռնած լաց ու կոծով կու գայ մինչև Հալէպ. հազար դժուարութեամբ ինքզինքը ընդունիլ կու տայ աշխատանոցը: Ատեն մը ետք, երբ կ'անհետանայ Թագուհին, կը խելագարի եւ կը դրուի ամենավատ յիմարանոցը:

Իմ անխախտ համոզումն այն է, որ այսքան աղեխարշ ոճիրներէ ետք, Աստուած անպատիժ չի պիտի ձգէ անոնց հեղինակները եւ գործադրողները:

Եթէ գրի առնէի իմ տեսածներս եւ իմացած բոլոր դէպքերս, քանի մը հազար էջնոց գիրք մը մէջտեղ կու գար»[1]:

Հալեպում,-շարունակում է Մ. Նեղիմը,- սկսեցին վատ լուրեր ստացվել: Մի օր էլ փողոցում տեսա մարդկանց մի հոտ՝ բաղկացած ծերերից, երեխաներից, հիվանդներից... Մոտեցա ոստիկաններից մեկին ու հարցրի.

- Ովքե՞ր են սրանք:

- Հայ գաղթականներ:

- Որտեղի՞ց են գալիս:

- Սեբաստիայից:

Ինչի՞ հետևանք է այս տարագրությունը: Սեբաստիայի կողմերում դեռ պատերազմ չկա: Բացի դա, բիրի, մտրակի ուժով են գնում տարագիրները: Դա ի՞նչ է նշանակում: Նույն պահին հանդիպեց մի բարձրաստիճան զինվորական: Տեղի ունեցավ հետևյալ խոսակցությունը:

- Սրանք գաղթակա՞ն են, գալիս են Սեբաստիայի՞ կողմերից: Նման գաղթականությունը չհասկացա: Ի՞նչ կա Սեբաստիայում:

- Սրանք գաղթական են: Սեբաստիայում բան չկա:

- Այդ դեպքում ինչի՞ց է առաջացել տարագրությունը:

- Հայերին իրենց երկրից հանում են. կառավարությունը նրանց ուրիշ կողմ է ուղարկում:

- Լավ, պատճա՞ռը:

- Խռովությամբ են զբաղվել, բնականաբար՝ պատերազմի ժամանակ ներքին հոգսերի առիթ չի տրվում:

- Որտե՞ղ են խռովություն բարձրացրել:

- Ամեն տեղ:

Հասկացա: Հավանաբար ինչ-որ մի տեղ 2-3 զինվոր զառանցել են ու պատրվակ փնտրող կառավարությունն էլ դա պատճառ է համարել գողության և ոճրագործության առաջ նոր դռներ բանալու համար: Ակներև էր, որ պաշ-

[1] **Նեղիմ Մ.**, նշվ. աշխ., էջ 116:

տոնյաները, ոստիկանները, քաղաքապահ զորքերը ջանալու էին օգտվել այդ պատճառներից ու պատրվակներից, որովհետև առաջին դեպքերի (1894–96 թթ. ջարդերի) համը բերաններն էր մնացել[1]:

ԱՄԱՍԻԱ

1915 թ. ապրիլին ձերբակալվեցին քաղաքի 16 հայ կուսակցական գործիչներ, մայիսին բանտ նետվեցին ուսուցիչները, հոգևորականները, մյուս մտավորականները, որոնց խմբերով քաղաքից հանեցին և Սաղդաղի ձորում կացնահարելով սպանեցին: Հունիսի 15-ին հրապարակվեց տեղահանության հրամանը: Մի խումբ երիտասարդներ լեռ բարձրացան, մարտնչեցին ջարդարարների դեմ ու այդպես զոհվեցին: Հունիսի 20-ից ամասիացիները բռնագաղթվեցին երեք քարավաններով: Քաղաքում թողնվեցին միայն մի քանի որակյալ արհեստավորներ: Տարագրվածների առաջին քարավանը ջարդեցին Թոքաթի ճանապարհին՝ Սարը Կըշլա վայրում և Մալաթիայում: Երեխաներին խլում էին ծնողներից ու վաճառում մահմեդականներին: Կենդանի մնացածներին երեք ամիս չարունակ քշեցին հարավ:

Երեք ամիս անց ամասիացիների քարավանների մնացորդները հասան Սուրուճ: Սուրուճում սկսվեց համաճարակը: 20.000 տարագրվածներից Սուրուճում 1915 թ. դեկտեմբերին մնացել էր 1800 հոգի, որոնց մի մասին 1916-ի գարնանը քշեցին Դեր Զոր:

Որ Ամասիայի հայության բնաջնջումը թելադրված էր պետական մարմինների կողմից, վկայում են Ամասիայի ոստիկանապետ Նուրիին Մուամմերի հեռագրի հետևյալ տողերը. «Հայերին ուղարկեք կարճ ճանապարհով, չրջանցելով Եվդոկիան»[2]: Բայց քանի որ Եվդոկիան չրջանցելը գործնականում անհնար էր, ապա հեռագիրը պահանջում էր ոչնչացնել աքսորվողներին: Երբ Մարզվանում մի միսիոներ քաղաքի իշխանությանը բողոքեց տեղի ունեցող չարագործությունների դեմ, նրան պատասխանեցին, թե հայերին վերացնելու վերաբերյալ հրամանը վերևից է տրվել[3]:

Ամերիկյան «Current History Magazine» ամսագիրն իր 1917 թ. նոյեմբերի համարում հրապարակեց Մարզվանի Անատոլիական քոլեջի տնօրեն Ջ. Ուայթի վկայությունները՝ «Թուրքերը հայերին սպանում են կացնով» վերնագրի տակ:

1915 թ. օգոստոսի 13-ին Ամասիայի Օրթա Քեոյ և Հաջի Քեոյ բնակավայրերից հավաքեցին տարբեր սեռի և տարիքի 700 հայի: Նրանց քարավանը օգոստոսի 22-ին հասավ Բողազլյան: Այստեղ քարավանն ուղեկցողներին միացավ մահմեդական ամբոխը: Թենե խան վայրում տղամարդկանց առանձնացրեցին քարավանից ու տարան մի լքված իջևանատուն, որտեղ նրանց մոտ

---

[1] **Նետիմ Մ.,** նշվ. աշխ., էջ 84-86:
[2] **Ղազարեան Հ.,** նշվ. աշխ., էջ 107:
[3] **Լեփսիուս Ցո.,** նշվ. աշխ., էջ 67:

եղած դրամն ու իրերը խլեցին և բոլորին հանձնեցին զինվորներին և մարդասպանների խմբերին: Վերջինները նրանց խմբերով միմյանց կապեցին և ոչնչացրեցին: 250 հոգու սպանեցին կանանց ու երեխաների ներկայությամբ: Քարավանում մնացին միայն կանայք, ծերեր և երեխաներ, որոնց քշեցին Էսքիշեհիր (Կայսերիից հյուսիս), որտեղ Թուրքերը հափշտակեցին գեղեցիկ կանանց, աղջիկներին ու տղաներին: Մնացածին տարան Ադանայի ուղղությամբ: Ճանապարհին ժանդարմները յուրաքանչյուր ընտանիքից պահանջեցին 40 դուրուշ[1]:

«Literary Digest» թերթի 1919 թ. հունիսի 7-ի համարում մեջբերված են Բարլետի խոսքերը. «Սվազում մի փոքր աղջիկ պատմեց, որ Թուրքերն իր հորն ու մյուս տղամարդկանց միմյանց կապեցին, խոշտանգեցին և ապա սպանեցին»:

Երբ 1918 թ. գարնանը անգլիացիները գրավեցին Սիրիան, փրկվեց 1800 ամասիացի հայ, որոնցից 650-ը վերադարձավ հայրենի քաղաք: Ստեղծվեց Ազգային վարչություն, որը գործեց մինչև 1923 թ. և զբաղվում էր ամասիացիների տունդարձի խնդիրներով: Սակայն դա երկար չտևեց: Շուտով Ամասիան լրիվ հայաթափվեց:

ՄԱՐԶՎԱՆ

Մարզվանի 22.000 բնակչից 12.000-ը հայ էր: 1915 թ. մայիսի սկզբից տեղի ունեցան զանգվածային ձերբակալություններ: Տեղի ամերիկյան քոլեջի միսիոները գրում է, որ հայերի դեմ մահմեդական բնակչությանը գրգռելու համար իշխանությունները խոշտանգումների միջոցով մի քանի հայի հարկադրեցին «խոստովանել», թե հայերի մոտ մեծ քանակությամբ զենք կար: Լեփսիուսը վկայում է. «Անոնք, որ չարչարանքներն ի գործ կը դնէին, առաջուց զոհին կը հաղորդէին, թէ ի՞նչ տեսակ խոովութիւններ կը սպասէին իրենից եւ կը ծեծէին զայն, մինչեւ որ իրենց սպասածը ձեռք անցունէին»[2]:

«Current History Magazine»-ը 1917 թ. նոյեմբերին գրում է, թե Մարզվանում «բռնագաղթն սկսվեց գիշերը: Գեղեցիկ կանանց ու աղջիկներին առանձնացրեցին և վաճառեցին 2-4 դոլարով... Իշխանությունների կարգադրությամբ՝ քաղաքի հայոց գերեզմանատունը հերկեցին ու հացահատիկ ցանեցին»:

Միսիոներներից մեկը Մարզվանի տեղահանության մասին պատմում է, թե ժանդարմները գիշերը կապեցին 300 ձերբակալվածների ձեռները՝ իբր Ամասիա տանելու համար, սակայն Զիլե գյուղի մոտ կացիններով ջարդեցին: Թուրք պաշտոնատարն ասաց, որ այդ եղանակով ոչնչացվեց 1215 մարդ: Այն վրանից, որտեղ հարցաքննում ու խուզարկում էին զոհերին, քիչ հեռու մեծ փոս փորեցին: Հինգական հայի, մերկ ու ձեռքերը կապած, բերում էին փոսի մոտ, ծնկի իջեցնում և կացնով կամ սրով սպանում էին: Սկզբում կանանց ու երեխաներին

---

[1] *R 14088, Ab. 30012.*

[2] ***Լեփսիուս Յո.,*** *նշվ. աշխ., էջ 65:*

ազատ արձակեցին, բայց հետո Մոսուլ ուղարկեցին[1]:

Հունիսի սկզբներին Մարզվանում,- վկայում է Հ. Ֆիրբյուխերը,- կարմրած երկաթի և աչքեր հանելու միջոցով հարկադրում էին ասելու գենքերի թաքստոցների տեղերը, և երբ խոստովանությունը ստացան, այդ մասին լուրը լայնորեն տարածեցին մահմեդական բնակչությանը գրգռելու համար: Ապա հավաքեցին «բոլոր տարիքի և խավի պատկանող տղամարդկանց, ինչպես նաև հիվանդներին, որոնց դուրս քաշեցին անկողնուց: Նրանց բաժանեցին 30-150 հոգիանոց խմբերի և աքսոր քշեցին: Ճանապարհին նրանք բոլորը անխնա կոտորվեցին: Կանանց ու երեխաներին թույլատրեցին իրենց հետ սննդամթերք վերցնել միայն մեկ օրվա համար: Քաղաքի 12.000 հայից միայն մի քանի հարյուրը փրկվեցին:

Վիրավոր հայ զինվորը ռազմաճակատից վերադառնալիս հայրենի Ծիլեհա գյուղում տեսավ, թե ինչպես էին Սեբաստիայի թեմի առաջնորդին պայտել: Վալին ցինիկաբար հայտարարեց, թե «չէր կարելի թույլ տալ, որ եպիսկոպոսը մեկներ հետիոտն»: Ծիլեհա գյուղի տղամարդկանց իրար կապեցին, քշեցին գյուղի կենտրոն և սպանեցին բոլորի աչքի առաջ: Մի կնոջից պահանջեցին մահմեդականություն ընդունել, և երբ հրաժարվեց, սվինահար արեցին երեխաների աչքի առաջ[2]:

* * *

Նահանգի կառավարական մեքենան ամբողջությամբ, բանակը, ոստիկանությունը, մահմեդական խուժանը, քրդական և չեչենական ավազակախմբերը մասնակցեցին Փոքր Հայքի 370.000 հայության ջարդին:

Մուամմերը Սեբաստիայի նահանգից տեղահանվածների վերաբերյալ ՆԳ նախարարությանը ներկայացրել էր հետևյալ տվյալները:

Սեբաստիայի սանջակ՝ ընդամենը 77.037 հայ, որից Սեբաստիայի կենտրոնական կազա՝ 23455. Ազիզիեի կազա՝ 939, Թոնուզեն՝ 13113, Ենի խան՝ 1366, Կոչասար՝ 11347, Զառա՝ 5978, Տիվրիկ՝ 8262, Դերենդե՝ 2783, Կյուրին՝ 7606, Ղանղալ՝ 3088 հայ: Ըստ Մուամմերի հեռագրի՝ Ամասիայից տեղահանվել էին 22871, Թոքաթից՝ 20403, Շապին Գարահիսարից՝ 20271 հայ:

Մուամմերի հեռագրի (1915 թ. հուլիսի կես) մեջ կան հետևյալ տողերը. «Վիլայեթում տարագրությունն ավարտված է: Տարագրված-քշված հայերի թիվը վիլայեթում նախատեսված էր 160 հազար: Սակայն հայերի մի մասը Գարահիսարի և Ամասիայի դեպքերի ժամանակ ընաջնջվել ու սպանվել է, դրա համար էլ վիլայեթից տարագրվածների թվի մասին տոմարներում արձանագրվածն ընդունելի է»[3]:

Սեբաստահայության կոտորածների իրականացմանը մասնակցել են ժանդարմներ, չեթեներ, ոստիկաններ, սպաներ և նրանց հետ գործակցող հազարա-

---

[1] *R 14093, Ab. 24663.*

[2] ***Фирбюхер Г.,*** *Армения 1915, Ер., с. 54-55.*

[3] ***Ղազարեան Հ.****, նշվ. աշխ., էջ 106-107:*

վոր Թուրքեր: Սակայն գլխավորն էր 3-րդ բանակի հրամանատար Մահմեդ Քյամիլը: Սանդերսի բնութագրմամբ՝ նա որպես զինվորական ոչնչություն էր, բայց նաև հայակեր էր, Բ. Շաքիրի մերձավոր գործակիցն էր, որը Էրզրումում գերմանական հյուպատոս Շոյնբերգին ասաց. «Պատերազմից հետո այս վայրերում որևէ հայի գոյությունը ցանկալի չէ»: Նա եռանդուն մասնակցություն ունեցավ ամբողջ Արևմտյան Հայաստանի հայության բնաջնջման գործին, որն ավարտելուց հետո մեկնեց Կ. Պոլիս ու դարձավ Էնվերի խորհրդականը:

Սեբաստիայի հայերին հասցված նյութական վնասը կազմեց 500 մլն. դոլար: Հաշվվում է, որ յուրաքանչյուր սեբաստացի հայն ուներ 50 օսմանյան ոսկուն համարժեք ունեցվածք, ընդամենը 18.5 միլիոն ոսկի: Հ. Նագգաչյանն այս թվերի իրական լինելն ապացուցում է հետևյալ կերպ:

1914 թ. հուլիսի 21-ի զինվորագրությունից ազատվելու համար հայերը վճարեցին 12 քարյուղի թիթեղ ոսկի: Թեքելիֆի-հարբիե անվան տակ իշխանությունները վերցրեցին մեծ քանակությամբ մթերք: Տեղահանությունից առաջ հայերն ամերիկացի միսիոներներին հանձնեցին մեծ քանակությամբ ոսկեդրամ և գոհարեղեն, շատ հարստություններ թաղեցին տների հատակներում, այգիներում և այլուր: Թուրքական կառավարությունը տիրացավ օսմանյան բանկերում հայերի ավանդներին: Հայերից բռնագրավված ունեցվածքի չնչին մասը զինադադարից հետո հանձնվեց առաջնորդարանին: Հայերը մեծ գումարների ավանդներ ունեին միջազգային խնայողական և ապահովագրական հիմնարկներում: Գոյություն ունեին վիթխարի թվով պարտամուրհակներ, որոնց մեջ մեծ տոկոս էին կազմում կառավարության պարտքերը հայերին: Քարավանների անվտանգության համար ամեն օր մուծվում էր 30-50 ոսկի: Այդ քարավաններից կողոպտվեց մեծ քանակությամբ հարստություն:

Մի քանի վկայություն:

Ամասիայի հայերի վախճանի մասին Հեղինե Իգնատոսյանը պատմել է. «1915 թ. հուլիսի 25-ին... տեղի գայմագամը մեր քարավանից 1500-ի չափ աղջիկներ ընտրեց և վաճառեց գյուղացիներին... Ամասիայից 18 հազար հոգի տարագրվեց: Ութ տղամարդ և իննսուն կին միայն մնացին»:

«12 ժամ չարունակ,- գրում է նա,- որևէ կաթիլ ջուր չէինք խմել: Ջուր խմելու թույլտվություն խնդրող 25 կանանց գետում խեղդեցին: Այդ գիշեր ծարավից մեռավ 205 հոգի... Օգոստոսի 10-ին ստիպեցին, որ կրծքի երեխաներին գցենք: 500 երեխա ողջ-ողջ թաղեցին... Տեսա մի երեխայի, որ մեռած մոր կուրծքն էր ծծում»:

Լուսի Ժամկոչյանը պատմում է, որ երկու վարդապետների և 15 այլ հոգևորականների Թոքաթի բերդում սոսկալի տանջանքների ենթարկելուց հետո, նրանց աչքերը փորեցին, քիթն ու ականջները կտրեցին և ապա այրեցին: Մեր քարավանի վրա հարձակվեցին 25 ձիավոր Թուրքեր, կողոպտեցին հագուստները, դրանք մեր աչքի առաջ վաճառեցին քրդերին և մեզ հարկադրեցին ճանապարհը չարունակել մերկ վիճակում:

Հուլիսի 26-ին ցեղապետ Հաջի Բեգրին և իր մարդիկ մեր քարավանից տղամարդկանց առանձնացրեցին և մեր աչքի առաջ մորթեցին, իսկ մեզ այդ նույն ժամանակ հարկադրում էին բղավել. «Կեցցե՜ Փադիշահը»:

Մի քանի օր արևի տակ լրիվ մերկ քայլելուց հետո, այլևս չդիմանալով, շատ կանայք իրենց գետը նետեցին:

Հերմոն Հովսեփյանը պատմել է. որ Մալաթիայի ու Ադըյամանի միջև ընկած մի վայրում տեսել է 23 հայ աղջիկների մերկ դիակներ, որոնց սեռական օրգանների մեջ քարեր էին մտցված: Դաս ուլ-Այնի անապատը դիակներով էր ծածկված: Մի քանի թուրքեր այրում էին այդ դիակները և դրամ ու ոսկի փնտրում:

Ազիբեկ անունով մի բժիշկ պատմել է հետևյալը, «Երբ ինքը գտնվում էր Սվազի վիլայեթի Մարզվան կազայում, իմանալով, որ մի խումբ հայեր սպանվելու են ուղարկվում, գնաց գայմագամի մոտ և խնդրեց, որ իրեն թույլատրեն ներկա գտնվելու այդ գործողություններին: Թույլտվություն ստանալով, նա գնում է դեպքի վայրը և տեսնում չորս դահիճների, որոնցից յուրաքանչյուրի ձեռքին կար մի երկար դանակ: Դատապարտյալներից 10-ական մարդ առանձնացնելով, ժանդարմները նրանց մոտ էին ուղարկում: Դահիճները հայերին մորթում էին ոչխարի նման: Բժիշկը հայտնում է իր զարմանքը, թե ինչպե՞ս էին հայերը մեռնում՝ առանց որևէ խոսք ասելու: Ինչ վերաբերում է կանանց ու երեխաներին, ապա ժանդարմները նրանց կապելով՝ բարձունքից ցած էին գլորում..»[1]:

Բոնագաղթի 3000 հոգիանոց քարավանն ուղեկցող թուրք ժանդարմը խոստովանել է. «Բոլորը զոհվեցին, բոլորը մեռած են»[2]:

Թուրքական բարբարոս իշխանությունները հայասպանության գործի մեջ ներքաշել էին ամբողջ հասարակությանը: Մահմեդական զանգվածները հոժարակամ էին գնում դրան, որովհետև չահ ունեին՝ հարստությունների էին տիրանում ու նաև հագուրդ տալիս մահմեդական իրենց այլամերժ, մոլեռանդ կրքերին: Սեբաստիայի ճանապարհներին վխտում էին մահմեդական մարդասպանները: Նրանք այդ վայրերում գտնվում էին իշխանությունների հանձնարարությամբ կամ ինքնակամ և, ինչպես նրանցից մեկը խոստովանեց, ճանապարհներին հերթապահում էին «սպանելու անցնող հայերին» և այդ սրիկան արդեն հասցրել էր սպանել 250 հոգու[3]:

Էնդերեսում մի հայի տան պատին մեծ տառերով գրված էր.

«Մեր տունը լեռնագագաթն է:
Մեզ այլևս սենյակ պետք չէ:
Մենք խմել ենք մահվան դառը բաժակը
Դատավոր մեզ այլևս պետք չէ»[4]:

Բոնագաղթը Սեբաստիայի նահանգում նշանակեց, եթե մինչև աշխարհամարտը նահանգում բնակվում էր 225.000, ապա պատերազմի վերջին՝ 16800 հայ[5]: Սակայն դա՝ շատ կարճ ժամանակ: Շուտով Սեբաստիան լրիվ հայազրկվեց:

---

[1] **Bryce J.,** նշվ. աշխ., էջ 248-250:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] R 14092, Ab. 20411.
[5] «Ամէնուն տարեցոյցը», ԺԶ. տարի (1922 թ.). Հայ միտքը երէկ եւ այսօր:

Շապին Կարահիսարի սանջակն ուներ 16 գյուղ: Պատերազմի նախօրյակին վարչատարածքում բնակվում էր 95.000 մարդ, որից 25.000-ը՝ հայ: Սանջակում բնակվում էին նաև Թուրքեր, քրդեր, չերքեզներ և հույներ:

Դեռ 1914 թ. օգոստոսին բանակ զորակոչվեց 300 հայ: Նրանց ոչ միայն զենք չտվեցին և ուղարկեցին չինարարության վրա աշխատելու, այլև Թուրք սպաները հայ տղաների համար անտանելի պայմաններ ստեղծեցին: Վիրավորում էին նրանց արժանապատվությունը, ծեծում էին, ամեն տեսակի վիրավորանքներ հասցնում: Հայերը նման վերաբերմունքին պատասխանեցին դասալքությունով: Իշխանություններն սկսեցին նրանց հետապնդել ու դաժանորեն պատժել: Դրան զուգահեռ, Թուրքական բանակում ծառայող հայ զինվորները զինաթափվում ու ոչնչացվում էին: Դասալիքներ և զենք գտնելու պատրվակով խուզարկություններ էին կատարվում, բանտ էին նետվում բացարձակապես անմեղ մարդիկ:

1915 թ. սկզբներից զանգվածային ձերբակալություններն սկսվեցին, բանտ տարվածների մեծ մասը ոչնչացվեց: Մայիսի վերջերին ձերբակալությունները զանգվածային բնույթ ստացան:

Սկսվեց հայերի կողոպուտը: Բռնագրավեցին նրանց ողջ ունեցվածքը՝ խանութներից մինչև օրվա հացի պաշարը: Դրա հետևանքով քաղաքի մատակարարումը ձախողվեց, խանութները դատարկվեցին: Անելանելի դրությունից քաղաքի բնակչությանը հանեց տեղի առաջնորդ Վաղինակ ծ. վրդ. Թորիկյանը, որը հաջողեց բավարար քանակությամբ սննդամթերք քաղաք ներմուծել:

Մեծ թվով տղամարդկանց, ծերերի և դեռահասների վերածեցին չալակավորների և գործածեցին ռազմական բեռներ տեղափոխելու գործում: Նրանցից շատերն սպանվեցին ճանապարհներին:

Շապին Կարահիսարը մեկուսացած էր հայկական շրջաններից, ինչը նույնպես դեր խաղաց, որ տեղի հայությունը մատնվի ծանր կացության: Ամեն օր ձերբակալություններ, խուզարկություններ: Հայերի զենքերը խլում էին, իսկ Թուրքերին զենք էին բաժանում: Ոստիկանատուն է կանչվում Թեմի առաջնորդն ու դավադրաբար սպանվում: Հայերը դրանից հետո էլ հույսը չէին կտրում, Թե հնարավոր էր լեզու գտնել, խուսափել արյունահեղությունից:

Շապին Կարահիսարը ռազմաճակատամերձ տարածք էր, որտեղ կուտակված էին մեծ Թվով զորքեր ու ռազմական տեխնիկա: Բանակը և Թուրք, քուրդ չերքեզ մոլեռանդ զանգվածը շրջապատել էին սանջակը:

Դեռ 1914 թ. հոկտեմբերին Թուրքական զորքերը (մոտ 15000 զինվոր) Ահմեդի հրամանատարությամբ տեղակայվեցին Էնտերես, Քյուրք, Մեսարա, Աղրավես, Քերթանոս, Վերի Ածպտեր, Վարի Ածպտեր և մի քանի ուրիշ գյուղերում: Ասկյարները կողոպտում էին հայ գյուղացիներին, սպանություններ գործում: Հայ բնակչության վրա հարձակումներ էին գործում նաև Սեբաստիայում մարզված չեթական երկու գնդերը (4000 մարդ):

Բանտերից հանեցին մահմեդական քրեական հանցագործներին և նրանց նույնպես ուղղեցին հայերի դեմ: Չեթեների հետ էր Քել Հասանն իր ավազակախմբով, որը պատուհաս դարձավ հայ բնակչության համար: Օր չէր լինում

առանց կրակոցի, սպանության և բռնարարքների: Վաղինակ վրդ.ը դեռ 1914 թ. սեպտեմբերի 20-ին գրել էր պատրիարքին. «Հայոց հանդէպ անբարեացակամ վերաբերմունքը որոշակի կը շեշտուի ամեն օր քաղաքիս եւ շրջակայ հայաբնակ գիւղերու մէջ՝ բռնի գրաւումներն ու տարապարհակը ամենէն աւելի ու վերջին ծայր խստութեամբ կը գործադրուի: Գնալով քաղաքին՝ վնասուողներուն ամենամեծ մասը դարձեալ հայն է, որովհետեւ գրաւուած առարկաները՝ շաքար, պայտ, կտաւ, քարիւղ մոմ, բրինձ եւ այլն, եւ այլն, հայ խանութներէն առնուեցան, մինչդեռ թիւրքերուն նախապէս լուր տրուելով՝ անոնք կա՛մ պահեցին, կա՛մ խանութնին գոցելով իրենք պահուեցան, իսկ հայերու գոցուած խանութները բռնութեամբ բացին եւ ուզածնին առին»[1]:

Ինքնապաշտպանության նվազագույն փորձ համարվում էր ապստամբություն ու նաև՝ աջակցություն ռուսներին: Չնայած Շապին Կարահիսարի հայությունը ռուսամետ գործունեությամբ չէր զբաղվում, բայց թուրքական բարբարոսություններն անպայման ուժեղացնում էին նրանց հակվածությունը դեպի ռուսները. «Մենք ի՞նչ խղճով կռուի պիտի ելլենք մեր ազատարարի դէմ,- ասում էին նրանք:- Նախապատիւ կը համարեմ կախաղան բարձրանալ, քան թէ Ռուսիոյ դէմ կռուիլ, գնդակ արձակել անոնց զինուորներուն վրայ, որոնց շարքերուն մէջ կան նաեւ հայ զինուորներ, մեր ազգակից ռուսահայ եղբայրներ...»[2]:

Ջարդերի հրամաններ չեթեներին տրվել էին 1914 թ. նոյեմբերի 16-ին, 20-ին և դեկտեմբերի 16-ին:

Հունվարին խզվեց կապը քաղաքի ու գյուղերի միջև, միմյանցից մեկուսացվեցին նաև գյուղերը:

Փետրվարի 8-ին չեթեները հարձակվեցին Բյուրքի գյուղի վրա: Հայերը համառ դիմադրություն ցույց տվեցին: Դա բավական էր, որ Մուամմերը Բարձր Դռնից թույլտվություն խնդրեր «ջախջախելու հայերի ապստամբությունը»: Էնդիրեսի գաղանաբարո գայմագամն սկսեց գյուղացիների խոշտանգումները՝ դաղում էին չիկացած երկաթով, քաշում եղունգները, փորում աչքերը: Դրանք ընդվզումներ առաջ բերեցին: Եղիայի լեռներում ձևավորվեց հայդուկային խումբ: Դրան հետևեց Բյուրք գյուղի կանանց ու երեխաներին թունավորելով մեռցնելը: Մայիսի 12-ին, 23-ին և 31-ին Կ. Պոլսից գաղտնի հրամաններ ստացվեցին հայերի հանդեպ ներողամիտ չլինել, նրանց չխնայել: Շապին Կարահիսար քաղաքում երևացին ոստիկանական ուժեղացված ջոկատներ, լուրեր տարածվեցին Վանի և Կ. Պոլսի իրադարձությունների մասին:

Աղետ էին գուժում կայսրության տարբեր վիլայեթներում հայերի տեղահանությունները[3]: Առնոլդ Թոյնբին նկատում է, որ ոչ թե ըմբոստություններն էին տեղահանությունների պատճառը, այլ տեղահանություններն ու ջարդերն էին չապինկարահիսարցիների ընդվզման պատճառը: 4000-ի հասնող հայ բնակչությունը չէր կարող չմտահոգվել իր փրկության համար, զենքով չհաստատել գոյատևելու իր իրավունքը[4]:

---

[1] **Զաւէն Արք.**, նշվ. աշխ., էջ 62:

[2] **Տէր-Յարութիւնեան Հ.**, Շապին-Գարահիսարի ապստամբութիւնը, Թիֆլիս, 1917, էջ 46-47:

[3] **Bryce J.**, նշվ. աշխ., էջ 629:

[4] **Toynbee A.**, Armenian Atrocities..., p. 70-71.

Բանտերից ազատված հանցագործները ոստիկանների ուղեկցությամբ հարձակում գործեցին քաղաքի չուկայի վրա: Հրոսակապետ Քել Հասանը 200 ավազակներով սկսում է կողոպտել ու սպանել: Քաղաքի հայկական թաղերն աստիճանաբար դատարկվում էին:

Գրեթե միաժամանակ քաղաք լցվեցին արհեստավորներ, գյուղացիներ, կանայք, երեխաներ, ծերեր: Նրանց մեջ կային նաև զենք ունեցողներ և անմիջապես ձևավորվեց աշխարհազոր՝ թուրքերի և ոստիկանության ոտնձգություններից պաշտպանվելու համար[1]: Ծայր առան փողոցային մարտեր: Հունիսի 2-ին հայկական թաղերը շրջափակվեցին, ոչնչացվեց 400 հայ: Դա հայերին մղեց ինքնապաշտպանության, որը կազմակերպված կերպարանք ստացավ մարտերի ընթացքում: Ակնհայտ էր, որ թուրքերը դիտավորություն ունեին բնաջնջելու հայ բնակչությանը, ինչը համախմբեց նրանց: Տարբեր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ՝ Ղուկաս Դեովլեթյան (Ղուկաս Աղբար), Ավագ Տուրիկյան, Շապուհ և Իսրայել Օզանյաններ, Գարեգին Կարմիրյան, Վահան Հյուսիսյան, Հմայակ Կարագյոզյան, Գասպար Ղուկասյան, ժողովի հավաքվեցին:

Ձևավորվեց Ռազմական խորհուրդ: Խորհուրդը քաղաքի հայությանը ինքնապաշտպանության կոչեց, որոշեց պաշտպանության կետերը, դրանց պատասխանատուները: Բնակչության սննդի գործը կազմակերպելու համար առանձին հանձնաժողով ստեղծվեց: Շ. Օզանյանին հանձնարարվեց կազմակերպելու հայ բանտարկյալների փախուստը, ընթերցվեց Մուրադի նամակը, թե ինքնապաշտպանության նպատակով 2000 հոգով լեռ են բարձրացել և մտադրություն ունեն շարժվել դեպի ռուսական սահման: Մուրադը չապինկարահիսարցիներին առաջարկում էր միանալ իրենց: Ժողովը չարձագանքեց այդ առաջարկին, որովհետև քաղաքը շրջափակված էր և ժողովրդին քաղաքից հանելն՝ անհնար: Ինքնապաշտպանությունն երկընտրանք չուներ:

Սահմանվեց խստագույն կարգապահություն. ով փորձեր կուսակցական վեճեր հրահրել, ենթակա էր մահապատժի, արգելվեց քաղաքից հեռանալ առանց Ռազմական խորհրդի գիտության:

Սկսեցին տներն ամրացնել, պաշտպանական պատնեշներ ստեղծել: Քանդեցին փողոցների սալահատակները ու դրանցով դիրքեր կառուցեցին, դիրքերի վերածեցին մի շարք տներ: Նշանաբանն էր՝ «Բնաջնջուելէ առաջ՝ բնաջնջել»:

Հունիսի 2-ին 200 ոստիկան շրջապատեց հրապարակը: Քել Հասանը թաղից թաղ էր անցնում ու փնտրում «գյուղերից եկած փախստականներ»: Նա ձերբակալում է 20 հոգու, ապա միանում չուկայի վրա հարձակվողներին, սպանություններ կատարում, զբաղվում կողոպուտով:

Հայերի դեմ գործում էր թուրքական 6000 հոգանոց ռազմական ուժ: Հունիսի 3-ին սկսվում է հայկական թաղերի ռմբակոծությունը, սակայն հաջողվում է կասեցնել թուրքերի առաջխաղացումը: Շ. Օզանյանի ջոկատն անցնում է Թշնամու թիկունք, մտնում է բանտ, բայց այնտեղ եղած բոլոր հայերն սպանված էին: Շ. Օզանյանը սպանվում է, իսկ ջոկատը հաջողում է վերադառնալ:

---

[1] **Կիտուր Ա.**, *Պատմութիւն Ս.-Դ. հնչակյան կուսակցության, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 449:*

Հայերի տները փայտաշեն էին և Թուրքերը հաջողում են հունիսի 5-ին դրանք կրակի տալ: Հայերը հարկադրված են լինում բնակչությանը մաս-մաս տեղափոխել բերդ: Թուրք խուժանը լցվում է հայոց թաղերն ու սկսում կողոպտել այրվող տները:

Թշնամին 12 թնդանոթից անդադար ռմբակոծում էր հայկական թաղերը: Մի քանի օրում հրո ճարակ դարձավ ու ավերվեց 3000 տուն: Հայերը քաշվեցին բերդ՝ հետները տանելով ինչ-որ քանակությամբ պարեն, զինամթերք, անասուններ: Բերդում ապաստանեց 5032 հոգի:

Բերդ տեղափոխվածներից տղամարդ էր միայն 1500 հոգին, իսկ կռվող՝ 150-ը:

«La Campana» թերթը 1915 թ. հոկտեմբերի 27-ին գրում է. «Կարահիսար քաղաքը կողոպտվել և հրկիզվել է զորքերի կողմից: Հայկական թաղամասը վերածվել է մոխրակույտի: Այրվեցին նաև դրա հարևանությամբ եղած 800 Թուրքի տներ: Եկեղեցին և առաջնորդի բնակարանը հրդեհեցին»:

Թուրքերը հարձակվում են միջին մասի թաղերի վրա: Հայերը նրանց կրակի տակ են առնում ու չատերին ոչնչացնում, ապա հրկիզում են Թուրքերի տները: Նահատակի ձորում Թուրքերը ծանր կորուստներ են կրում:

8500 հայեր ամրանում են բերդում ու ժայռերում, ծերպերում ու քարանձավներում: Բերդի կարևոր կետերի պաշտպանությունը հանձնվեց 5-25 հոգանոց մարտական խմբերին: Բնակչությունը հավաքվել էր բերդի պարսպի հետևը և դա վերածել պաշտպանության առաջին գծի: Երզնկայից ու Սեբաստիայից Նեջդեթի հրամանատարությամբ նոր զորքեր են գալիս:

Քաղաքի բերդը կառուցված էր ապառաժների վրա, այնտեղ հնարավոր էր մտնել միայն հայկական թաղով, որն իշխում էր քաղաքի վրա: Բերդի կենտրոնում միջնաբերդն էր, որը կարող էր տեղավորել 1200 հոգանոց զորք: Միջնաբերդի մոտ խոր ջրհոր կար:

Հայերն ունեին 320 հրացան, 330 ատրճանակ, չուրջ 500 ձեռնառումբ և զենքեր, որ նրանք վերցնում էին սպանված Թուրքերից:

Կռիվն ընթանում էր յուրաքանչյուր տան և դիրքերի ամեն մի հատվածի համար: Կռիվները գնալով ավելի ու ավելի արյունահեղ էին դառնում[1]:

Հունիսի 9-ին մութեսարիֆը մի հայ կնոջ միջոցով առաջարկում է հանձնվել՝ խոստանալով խնայել հայերի կյանքը: Ռազմական խորհուրդը մերժում է այդ առաջարկը: Հունիսի 10-ին Թուրքերը վերսկսում են ռմբակոծությունը, սակայն բերդը գրավելու նրանց բոլոր փորձերը ձախողվում են:

Հունիսի 15-ին վալի Մուամմերը նոր բանագնաց է ուղարկում առաջարկելով հանձնվել, այլապես «թնդանոթներով հիմէն կործանելու է բերդը»[2]:

Հայերը նորից են մերժում: Երկու օր չարունակ բերդը ռմբակոծվում է, բայց ապարդյուն: Չնայած մեծ ավերածություններին, բերդը կանգուն մնաց, թշնամին մեծ զոհեր տալով հետ քաշվեց: Սակայն հայերի պաշարներն սպառվում էին, անթաղ դիակները՝ նեխում, համաճարակը թակում էր բերդի բնակչու-

---

[1] **Ակունի Ս.,** նշվ. աշխ., էջ 216

[2] **Արամ Հայկազ,** Շապին-Գարահիսարը եւ իր հերոսամարտը, Նիւ Եորք, 1957, էջ 207:

թյան դռները: Թշնամու անընդմեջ ռմբակոծությունները թույլ չէին տալիս մեռածներին ու սպանվածներին թաղել:

Հունիսի 19-ին Մուամմերը նոր բանագնացներ է ուղարկում հանձնվելու պահանջով: Սովն ու ծարավն արդեն տիրապետող էին, հայերի մեջ եղան մարդիկ, որոնք պատրաստ էին Թուրքերի հետ բանակցություն սկսելու, սակայն մեծամասնությունը գտնում էր. «Մեռնելու երկու ձեւ կայ, պատուաւոր եւ անպատիւ մահ. թող աչխարհը լսէ, թէ՝ չապինգարահիսարցիք պատուով մեռան»[1]:

Թշնամին ավելի մեծ ուժեր է մարտի նետում: Հունիսի 23-ին զինվորները թնդանոթային կրակի պաշտպանությամբ չորս ուղղություններով գրոհի են անցնում: Հայերը համառ դիմադրություն են ցույց տալիս, Թշնամուն ծանր կորուստներ պատճառում, սակայն Թուրքերից 70 հոգի հաջողում է հյուսիսային կողմից մագլցել բերդը: Թշնամուն կանգնեցնելու մի միջոց կար՝ միջնաբերդի վերևում կանգնած հացթուխ կանանց հատվածը, որոնք, սակայն, ռումբեր չունեին: Ռումբ նրանց հասցնում է 14-ամյա Հմայակ Թևեքելյանը որը քիչ անց զոհվում է: Կանայք ռումբը նետում են Թուրքական խմբավորման վրա և խուճապի մատնում:

Բերդը վերածվել էր կրակի հսկա օղակի փոթորկախառն անձրևի նման տեղացող գնդակների տարափի տակ. համատարած ծուխ, քանդված ու կիսաքանդ տներ, ածխացած գերաններով անանցանելի դարձած փողոցներ, խավարի մեջ կորած հսկա ժայռ: Օրական հայերի վրա 300 ռումբ էր նետվում:

Դիմադրությունը թե՛ սոսկալի էր և թե՛ խելահեղ. կյանքի ու մահվան անհավասար պայքար հզոր Թշնամու դեմ: Բերդն ու ժողովուրդը դիմադրում էին 6000 կանոնավոր զորքի և 10.000 բաշիբոզուկի հարձակումներին: Հետ մղվեց չորս ընդհանուր գրոհ: Հայերը կռվում էին երգելով, կռվում մեծ խանդավառությամբ: Նրանք կարծես ուրախ էին, որ հնարավորություն է ստեղծվել կռվելու, զենք արձակելու հարյուրամյակներ շարունակ իրենց ճնշող, նվաստացնող ուժերի դեմ:

Սակայն նրանց վիճակն ավելի քան ծանր էր, այլևս չկար ո՛չ պարեն, ո՛չ ռազմամթերք, իսկ ռուսական բանակն էլ ուշանում էր:

Հարցը քննարկվում է Ռազմական խորհրդի նիստում: Կարծիքները բաժանվում են. մի մասն առաջարկում է ճեղքել պաշարման գիծը և դուրս գալ, իսկ մյուսները դա վտանգավոր են համարում և պահանջում անձնատուր լինել: Հունիսի 25-ին, այսինքն՝ ինքնապաշտպանական կռիվների 23-րդ օրը, առաջին առաջարկության կողմնակիցները (800 հոգի) Ղուկաս Դեռվլեթյանի և Վահան Հյուսիսյանի գլխավորությամբ հնարամիտ սրընթաց հարձակումով ճեղքում են Թշնամու օղակը և բարձրանում են Էնդերես լեռը: Իսկ մյուս առաջարկության կողմնակիցները մնում են բերդում: Առավոտյան բերդի վրա սպիտակ լաթ կախվեց: Բերդից դուրս եկածները պարտիզանական կռիվներ են մղում, Թշնամուն կորուստներ պատճառելով և իրենք էլ կորուստներ տալով շարժվում են դեպի Կիրասոն-Օրդու: Զոհվում են Ղուկաս Աղբարը, նրա զինակիցներից շատերը, իսկ մնացածները կարողանում են միանալ ռուսական բանակին[2]:

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 777:

[2] Տե՛ս **Տէր-Յարութիւնեան,** նշվ. աշխ.:

Ճակատագրական ճակատամարտը տեղի ունեցավ հունիսի 20-ին: Թուրքական թնդանոթների ռմբակոծություններին հայերը պատասխանում էին հրացանային համազարկերով:

Քանդվում են հայերի դիրքերը, զոհվում են հայ մարտիկները, սպառվում է ռազմամթերքը, բայց դիմադրությունը չարունակվում է: Թուրքերը խորամանկում են, նրանց մի խումբ ներկայանում է որպես հայ ֆիդայի, խաբում է պատանի պահապաններին ու մտնում է բերդ: Սկսվում է ձեռնամարտ: Թուրքական ռումբ է ընկնում բերդի այդ մասում և «Թուրք ֆիդայիները» սարսափահար փախչում են:

Թշնամուն հանձնվելու փոխարեն, բերդում մնացածները թույն են ընդունում: Սակայն երկու օր Թուրքերը չէին համարձակվում մտնել բերդ: Միայն հունիսի 29-ին նրանք խուժեցին ներս և կոտորեցին կենդանի մնացած կանանց, ծերերին ու երեխաներին: Մայրերը երեխաներին գրկած նետվում էին ժայռերից:

Թշնամուն ուժեղ դիմադրություն ցույց տվեցին նաև մի քանի հայկական գյուղեր:

Ահա թե ինչպես է Շապին Կարահիսարի իրադարձությունները ներկայացնում Թալեաթը. «Կոմիտեները (հայկական կուսակցությունները) իրենց անդամներից շատերին այստեղ էին ուղարկում իբրև ուսուցիչ և հոգևորական, որոնք ապստամբական մտքեր էին տարածում... Մի հոգևորական ամբողջ նահանգը շրջագայելով ժողովրդին զինված ապստամբության էր գրգռում: 1915 թ. հունիսի 2–15-ին հայկական թաղամասում զենք գտնելու համար խուզարկություններ կատարող ոստիկաններն սպանվեցին», հեռագրալարերը կտրեցին ու քաշվեցին բերդի ներսը: «Այստեղ հավաքված էր մեծ քանակությամբ ռազմամթերք ու պարեն: Կրակի տրվեց ամբողջ քաղաքը, հազիվ 100 հոգի ազատվեց: Դրսից բերված զորամասերը պաշարեցին բերդը: Հայերը 25 օր պաշտպանվեցին... 300 հայ կարողացավ փախչել: Մյուսները կանանց ու երեխաների հետ հանձնվեցին... Սպանվեց երկու սպա և 84 զինվոր (Թուրքերից)»[1]:

Իրադարձությունների նկարագրության հարցում Թալեաթի հետ կարելի է և չվիճել, բայց անհնար է չասել, որ այդ դահիճը ստում էր, երբ ամեն ինչի պատճառը համարում էր հայ կոմիտեների ու հոգևորականների ապստամբական քարոզչությունը: Ա. Թոյնբին գրում է. որ Շապին Կարահիսարում 4000 հայեր, ի պատասխան արտաքսման պահանջի, զենքի դիմեցին և Թուրքական զորքին դիմադրեցին մայիսի կեսերից մինչև հուլիսի սկիզբը: Թուրքերը համալրումներ և հրետանի բերեցին և քաղաքը հեշտությամբ կործանեցին[2]:

Կռիվները չարունակվում են մինչև հունիսի 28-ը, երբ կռվելն արդեն անհնար էր: Ո՛չ կռվող էր մնացել, ո՛չ փամփուշտ և ո՛չ էլ սննդամթերք:

Ականատեսը Շապին Կարահիսարի պաշտպանության վերջին օրվա՝ հունիսի 29-ի մասին պատմում է. «Այսօր ամենքն ալ ոտքի վրայ ելած են: Բերդին մէջ եղած բոլոր պաշարը հատած է եւ ամեն յոյս կորած: Բոլորին ալ յայտնի է, որ այսօր վճռական օր է: Տղամարդիկ կազմ ու պատրաստ կը սպասեն

[1] Թալեաթի հուշերը, էջ 75:
[2] Toynbee A., նշվ. աշխ., էջ 69-72:

հրամանի: Կիներն ու փոքրիկ տղաները, շրջապատած անոնց չորս բոլորտիքը՝ կու լան եւ կ'անիծեն իրենց սեւ բախտը: Վայնասունը ինկած է ամբողջ բերդին մէջ: Աղիողորմ ճիչերն ու սրտմաշուք հառաչանքները քարերն անգամ կը յուզեն: Անմեղ հրեշտակի պէս սիրուն երեխաները՝ բնազդմամբ փաթթուած իրենց ծնողներուն՝ չեն ուզեր բաժնուիլ, ամենքը ապրիլ կը բաղձան, ամենքը ազատուել կուզեն, սակայն ազատութիւնը ծածկուած է սեւ քօղով: Շատ մը կիներ, իրենց ամուսիններէն բաժնուելէն առաջ թոյն ընդունած են արդէն եւ սոսկալի տանջանքներով գետնին վրայ կը տապլտկին՝ իրենց վերջին հրաժեշտը տալով աշխարհին, այն աշխարհին, որ դժոխք մը եղաւ իրենց համար: Անոնց չորս բոլորը սփռուած են երեխաներու թունաւորուած դիակներ: Տղամարդերէն շատերը՝ անկարող տեսնելու և դիմանալու այդ աննկարագրելի տանջանքները, կիներեն կխնդրեն, որ իրենց մեկնելեն վերջ ընդունին թույնը»[1]:

Գերմանացի սպա Շուլենբուրգը Կարահիսարի մասին պատմում է, որ նա շատ գեղեցիկ քաղաք է, ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա՝ երկու բարձունքներով, որոնցից մեկն հին բերդն է: Առևտրի աշխույժ կենտրոն էր: Ինքնապաշտպանության (1915 թ.) ընթացքում քաղաքը գրեթե ամբողջությամբ հրդեհվեց՝ 5000 տնից կանգուն մնաց չուրջ 100-ը: Բերդում ամրացան 4000 տղամարդ, կին, երեխա ու կրակի տակ առան քաղաքը: Պահանջվեցին 20 օրվա մարտեր, 9-ը դաշտային թնդանոթներ և 2500 հետևակ՝ բերդը գրավելու համար: Բոլորն սպանվեցին, բացի աղջիկներից, որոնց տարան և այժմ նրանց կարելի է գտնել տարածքի բոլոր հարեմներում որպես ծառաներ: Հայերը քարերից ստեղծել էին ամուր պաշտպանական գծեր, որոնք հետագայում շուռ տվեցին զոհվածների վրա: Ամենուրեք թափված են հագուստի մասեր, գանգեր, կանանց կտրված մազեր և մարմնի այլ մասեր: Բերդում ընկած էին մի քանի հարյուր դիակներ:

Կովում էին ծեր ու մանուկ: Կովողներին ոգևորելու համար դպրոցականները հայրենասիրական երգեր էին երգում: Դիրքերում հաճախ էին հնչում «Կեցցե՜ Անդրանիկը», «Կեցցե՜ Շապին Կարահիսարի փառքը» նշանախոսքները:

Ոչ միայն Ամասիայում ու Շապին Կարահիսարում, այլև մի քանի ուրիշ բնակավայրերում հայությունը համառ դիմադրություն ցույց տվեց ջարդարարներին: Զարևանդի «Турция и пантюркизм» (Փարիզ, 1930) գրքի առաջաբանում Ա. Մանդելշտամը գրում է. «Սեբաստիայի վիլայեթի Դուզասար, Գավրա, Խոսան, Խանձոր և այլ վայրերի հայերը պատերազմի սկզբին ամեն ինչ արեցին թույլ չտալու հայ-թուրքական որևէ բախում, բայց երբ տեսան, թե իրենց այս կրավորական դիմադրությունը որևէ օգուտ չունի, դիմեցին զենքի և երկար օրեր պաշտպանվեցին: Շապին Կարահիսարի և Ամասիայի հայերը հաջողեցին մինչև իսկ թուրքերին քշել իրենց քաղաքներից, բայց գերակշիռ ուժերի կողմից նրանք ոչնչացան մինչև վերջին մարդը: (Մուրադի պատմածը. Կապույտ գիրք): Շապին Կարահիսարի դեպքը թուրք հիշատակագիրը պատմում է այնպիսի լպիրշ ու այլանդակ կերպով, որի գաղտնիքը միայն թուրքերը գիտեն. «Այս տարվա հունիսի սկզբներին հայերը հանկարծակի և առանց որևէ շարժառիթի

---

[1] ***Տէր-Յարութիւնեան**, նշվ. աշխ., էջ 103:*

հարձակվեցին Շապին Գարահիսար քաղաքի վրա և հրդեհեցին իսլամների թաղը: Ութ հարյուր ապստամբներ, որոնք փակված էին քաղաքի միջնաբերդում, լսել անգամ չուզեցին կայսերական կառավարության հայրական խորհուրդները և հաչտարար առաջարկները: Նրանք պատճառ եղան հարյուր հիսուն մարդու սպանության, որոնց թվում և ժանդարմերիայի հրամանատարի»:

Սեբաստիայի և Յոզղատի 200 հայեր չենթարկվեցին թուրքական ոճրագործություններին, 1915-ին քաչվեցին Ալիս գետի հյուսիսային կողմում գտնվող Ակդաղ լեռը և մինչև 1918 թ. զինադադարը մարտնչեցին ջարդարարների դեմ: Ակդաղի հերոսամարտի մասնակիցների մի մասը կարողացավ միանալ Անդրանիկի հրամանատարության տակ գործող զորքերին: Ակդաղի քաջարի լեռնականները, առանց դրսից որևէ օգնություն ստանալու, հին ու սակավաթիվ հրացաններով, հաճախ քաղցած, մարտնչում էին կանոնավոր բանակի, հրանոթների դեմ և հաղթանակում: Անգամ ճակատամարտի պահերին էին ջոկատի անդամները զենք հայթայթում. պատանիները սողում էին դեպի սպանված թշնամիները և վերցնում նրանց զենքերն ու փամփուշտները: Այդ մանկահասակներն էին խմբին ապահովում նաև սննդով՝ բերելով մերձակա գյուղերից: Քաջությամբ առանձնապես աչքի ընկավ Գյուլբենկ Գուլյանը:

Խումբն անընդհատ համալրվում էր ջարդերից մազապուրծ մարդկանցով, հաճախ գալիս էին նաև վիրավորներ, ծերեր, կանայք, երեխաներ: Նրանք խնամքի, սննդի կարիք ունեին: Անհրաժեշտ էր նրանց ռազմաճակատային գիծն անցկացնել՝ ուղարկել Ռուսաստան: Այս ամենը գնալով դժվարանում էր: Մի կողմից կողոպտված, ավերված գյուղեր, մյուս կողմից՝ թուրքերի չդադարող հարձակումներ: Սկսեցին ռազմամթերք ու սննդամթերք խլել բանակից ու ելուզակներից:

Արամ Զավուշի ղեկավարած խումբը հարձակվեց Զաթում հանգրվանած ոստիկանների վրա: Զնայած վերջինների մեծաթվությանը, հայդուկների հարձակմանը չդիմացան ու փախուստի դիմեցին: Հայերի դեմ զորքեր ուղարկվեցին: Մինչև կոկորդը զինված հեծյալներին դիմակայում էր կիսաքաղց փախստականների մի փոքրիկ խումբ, որը ժայռերի հետևից կրակ բացեց թշնամու վրա: Կռիվը երեք ժամ տևեց: Թշնամին 12 սպանված և մի քանի տասնյակ վիրավոր տալով փախուստի դիմեց: Ճակատամարտին մասնակցող կանայք բարձունքից քարե կարկուտ էին թափում թշնամու գլխին:

Թուրքերը որոշեցին սովամահության մատնել հայդուկներին ու ծնկի բերել: Նրանք կտրեցին մթերք հայթայթելու բոլոր ուղիները, հրդեհեցին հացահատիկի դաշտերը: Սակայն հայդուկները չհանձնվեցին: Նրանք հավաքեցին այրված արտերի հատիկները և դրանցով սնվեցին: Թուրք գնդապետը բացականչեց. «Այս ժողովրդին նվաճել անկարելի է, ամեն նեղության տակում և քարից հաց է ստեղծում»:

Զորս տարի թուրքերը չկարողացան ընկճել հայդուկներին: Արամ Զավուշի, Հաջի Փափազյանի, Բենիամին Եփրեմյանի և նրանց ընկերների անունները հայ ազատագրական շարժման հերոսների անունների թվում են[1]:

---

[1] *Տե՛ս* ***Գալուստեան Գ., Գաբրիկեան Ն.****, Ագ-Տաղի քառամեայ գոյամարտը, Մարսել, 1932:*

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԽԱՐԲԵՐԴ – ՄԱՄՈՒՐԵԹ ՈՒԼ – ԱԶԻԶ

Նահանգի վարչական և ռազմական կենտրոնը Խարբերդ քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մեզիրե (Մամուրեթ ուլ-Ազիզ) փոքրիկ քաղաքն էր: Այն վալու և 11-րդ զորաբանակի հրամանատարության նստատեղին էր:

Խարբերդի դաշտում ավելի քան 100 գյուղ կար, յուրաքանչյուրը՝ 50-500 տնով: Գյուղական բնակչության մեծամասնությունը նույնպես հայեր էր[1]: Սակայն թե՛ հայկական բնակավայրերի թվի ու թե՛ հայերի թվաքանակի տվյալներում խառնաշփոթ է տիրում:

Ի՞նչ էր Խարբերդի նահանգը մինչև Առաջին աշխարհամարտը: Նա զբաղեցնում էր 37800 քառ. կմ տարածություն, ուներ երեք սանջակ՝ Խարբերդ–Մեզիրե, Մալաթիա, Դերսիմ: Կենտրոնական սանջակի կազմի մեջ էին մտնում Խարբերդի, Արաբկիրի, Կեպան-Մատենի և Ակնի կազաները:

Թուրքական տվյալները նահանգի հայ բնակչության թվի վերաբերյալ հետևյալն են: 1891 թ.՝ 74.206, պատերազմի նախօրյակին՝ 168.000 (բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 575.000): Մահմեդական բնակչությունից 275.000-ը քրդեր էին, 136.000-ը՝ թուրքեր: Համաձայն նույն վիճակագրության՝ Խարբերդ քաղաքի 30.000 բնակչից հայ էր 10.000-ը, Մալաթիայի 35.000-ից՝ 23.000-ը: Նահանգի 360 բնակավայրերից հայաբնակ էր 65-ը:

Տարագրության ընթացքում ՆԳ նախարարության ներկայացրած տեղեկանքում Խարբերդի վալի Սաբիթը կենտրոնական սանջակի հայ բնակչության թիվը նշում է 50.024, Մալաթիայի և Դերսիմի սանջակներինը համապատասխանաբար՝ 11.323 և 12.859 հոգի: Ամբողջ նահանգում՝ 74.206 հոգի: Նա գրում է. «Վիլայեթի հայերի թիվը պետք է համարել 60.000, քանի որ թե՛ նահանգում, թե՛ աքսորավայրերում և թե՛ ուրիշ նահանգներից այստեղով անցածները, քանի որ դիմադրել էին կառավարական ուժերին՝ ապստամբել են, մի մասն ընդհարումների ժամանակ զոհվել է: Այդ պատճառով տարագիրների թիվն ավելի է պակասել: Վիլայեթում տարագրությունն ավարտվում է: 52.000-ն արդեն ուղարկված է, 14.000–ի առաքումն ընթացքի մեջ է»[2]:

Անդրադառնանք հայկական տվյալներին: Ըստ պատրիարքարանի՝ հայերի թիվը 1882 թ. 270.000, 1913 թ.՝ 168.000 հոգի էր: Նույն թիվն է նշում նաև Մարսել Լեարդը (Գր. Զոհրապը): Մաղաքիա արք. Օրմանյան՝ երեք սանջակներում՝ Խարբերդ, Մալաթիա, Դերսիմ, համապատասխանաբար՝ 57.000, 23.000, 18.500

---

[1] **Դևիս Լ.**, *Սպանդի դաշտը, Ե., 2001, էջ 82:*

[2] **Ղազարեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 121:*

հոգի: Ինչպես նաև Զմչկածակում՝ 9.000, Արաբկիրում՝ 19.500, Ակնում՝ 10.200 հոգի: Ընդամենը՝ 137200 հայ: Հայոց Ազգային պատվիրակությունը Խարբերդի հայերի թիվը նշում է 204.000 հոգի:

Բրիտանական հանրագիտարանի 12-րդ հրատարակության 30-րդ հատորի 197-րդ էջում կարդում ենք, որ 1914 թ. վիլայեթում բնակվում էր 130.000 հայ:

Եթե թուրքական աղբյուրները նահանգի հայաբնակ բնակավայրերի թիվը նշում են 67, ապա հայկական աղբյուրները՝ 180:

Այսպիսով, վիլայեթի հայերի, ինչպես նաև հայաբնակ բնակավայրերի թվի հարցում թուրքական և հայկական աղբյուրների տվյալների միջև տարբերությունը կազմում է 2.5-3 անգամ: Թուրքերը, հավատարիմ իրենց «վիճակագրական» ավանդույթներին, հայերի թիվը կրճատում էին մի քանի անգամ:

20-րդ դարի առաջին տասնամյակին Խարբերդի նահանգում գործում էր 210 եկեղեցի, 18 վանք, 82 հայկական դպրոց 6882 աշակերտով և 157 ուսուցչով: Այս թվերի մեջ չեն մտնում կաթոլիկների, բողոքականների, ամերիկացի միսիոներների, գերմանական որբանոցների և դպրոցների, ամերիկյան քոլեջի («Եփրատ») հայ աշակերտների, ուսանողների և ուսուցիչների ու դասախոսների թիվը:

Ինչպես ամբողջ Օսմանյան կայսրությունում, այնպես էլ Խարբերդում հայերի իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը ծանր էր և գնալով դառնում էր անտանելի:

Սիմանթոն 1914 թ. հոկտեմբերին գրում է. «Այս յուսահատութեան, զզուանքի, անկարելի ստրկութեան, պոռնիկ համակերպումի ... օրերուն մէջ, բովանդակ ծաղիկ հայ երիտասարդութիւնը ծեր «բորենիները» զինուոր տարին... մինչև 45 տարեկան... Դէպի մահ... Այլեւս հայ եւ յոյն վաճառական կամ վաճառականութիւն չէ մնացած: Կառավարութիւնը բոլորն ալ հաւաքեց, թալանեց, կողոպտեց եւ գրաւեց, նոյնիսկ ստացագիր չի տալով: Ամեն կողմ գրաւում, ոչ թէ ալիւր կամ կերպաս, այլ ինչ գտնեն... ամեն բան: Արդէն կը մոլտան, պիտի կոտորեն բոլոր քրիստոնեաները»[1]:

Երուխանը 1914 թ., հունվարի 29-ին գրում է. «Անցեալ օրը տեղւոյս նախնական դատարանին դատաւորը ... յայտարարեց հայերուն, որ եթէ ընտրութեանց չմասնակցին, ահռելի կերպով պիտի ջարդեն հայերը, ինչպէս ըրին Ատանայ: Եւ այդ իթթիհատական սրիկան դատաւոր է...»[2]:

Խարբերդն ու նրա նահանգը ընկած էին կայսրության խորքերում և ոչ միայն ռազմաճակատային շրջան չէին, այլև գրեթե կտրված էին արտաքին աշխարհից: Այն ժամանակ Խարբերդը նավահանգիստներից «նուազագոյնը տասներեք, չոգեկառքի կայարաններէն տասնութ օրուայ հեռաւորութիւն ունէր»: Հավանաբար դա էր պատճառներից մեկը, որ այդ վիլայեթն «ընտրուեց սպանդի վայր»: «Հոն կը կուտակէին եւ ապա կը բնաջնջէին ոչ միայն տեղւոյն, այլեւ Արեւմտեան Հայաստանի տարբեր գաւառներէն եւ նահանգներէն քչուած քարաւանները»: Դա հիմք տվեց ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Դևիսին Խարբերդի վիլայեթն անվանելու «Սպանդի նահանգ»:

---

[1] *Գուժկան Սերաստիոյ..., էջ 302, 304:*

[2] *«Լրաբեր» ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, 1966 թ., № 8, էջ 67:*

Նահանգում տուրքերը հավաքում էին ոստիկանները հայ երևելիների օգնությամբ՝ ծեծով, բիրերով, կեղծ մուրհակներով: Տուրքերը բազմաթիվ էին՝ հողի, անասունների, գինու և խմիչքների, արական սեռին պատկանողների, ճանապարհների, կրթության և այլն: Որոշակի տարիների հաշվառում էին արական սեռին ու զինվորական հարկ նշանակում: Գյուղացիները տղա երեխաներին թաքցնում կամ ծննդյան թիվը փոխում էին: 1915-ին շատ երիտասարդների գրանցեցին 18 տարեկանից փոքր՝ բանակ զորակոչվելուց ազատելու համար:

Յուրաքանչյուր հայ 15-60 օր պետք է իր բնակավայրից հեռու ձրի, առանց սնունդ ապահովելու աշխատեր բանակի կարիքների համար: Խարբերդի գյուղերից մեկում մի գրագետ, թուրքերեն լավ իմացող Հակոբ անունով քահանա կար: Նա աղքատներին կեղծ փաստաթուղթ էր բաժանում հարկերից ազատվելու համար: 1915 թ. գյուղի տեր Հաջի բեյը կրակում է քահանայի վրա, սակայն նա չի տուժում, որովհետև ամբողջ կուրծքը ծածկել էր գրքերով: Բայց քահանան չի փրկվում, նրան բիրերով սպանում են ու ապա այրում:

Թուրքերը սովորություն ունեին ձրի աշխատեցնել հայերին: Թուրքերի և հայերի միջև լինում էին նաև ընդհարումներ, միմյանց սպանելու դեպքեր. իշխանությունները միշտ թուրքերի կողմն էին: 90-ական թվականներին հարյուրավոր հայ կանանց ու աղջիկների փախցրին: Նրանցից շատերը 1915 թ. դեռ կապի մեջ էին իրենց ազգականների հետ: Մի առավոտ քրդերն ու թուրքերը դանակներով ու յաթաղաններով զինված խուժեցին գյուղ: Հայերի մի մասը փախավ Մեզրեի ուղղությամբ, մյուսները թաքնվեցին թուրքական գյուղերում:

1914 թ. ամռանը գյուղերում հայտարարություն փակցրեցին, որով զորահավաքի էին կանչում 20-40 տարեկաններին: Հաջորդ օրը գյուղացիները գնացին Մեզրե՝ զինվորագրվելու: Քաղաքի բոլոր դպրոցներն ու մեծ շենքերը բռնագրավվեցին: Հայերը մասնակցեցին սեֆերբերլիքին ու թեքալիֆի-հարբիեին միայն մի պատճառով՝ որպեսզի չսրեին հարաբերությունները ոչ միայն իշխանությունների, այլ նաև հենց թուրքերի հետ: Բայց պարզվեց, որ նրանց նման դիրքորոշումը թե՛ իշխանություններին և թե՛ թուրք բնակչությանը գոհունակություն չպատճառեց: Հայերի հանդեպ կամայականություններն աճում էին ժամ առ ժամ: Դասալիքներ և զենքեր գտնելու պատրվակով կողոպտում, ոչ քիչ դեպքերում, նաև սպանում էին անմեղ մարդկանց:

1915-ի մայիսին տեղի իշխանությունները Դատեմ գյուղից պահանջեցին 35 սայլ և 40 սայլվոր: Հայերը տրամադրեցին: Նրանց տարան Հաբուս գյուղի ուղղությամբ, բայց չթողեցին գյուղ մտնել և ոչ էլ ուտելիք ու ջուր տվեցին: Հաջորդ օրը Եփրատի ափին հավաքվել էին հարյուրավոր սայլեր, որոնցից յուրաքանչյուրին բարձեցին չորս սնդուկ զենք ու տարան Տարոնի ուղղությամբ: Ճանապարհին ոստիկանները խլեցին սայլվորների մոտ եղած սննդամթերքը: Խնաչ գյուղի ճանապարհի երկու կողմերում թափված էին դիակներ: Դիակներ էին թափված նաև Ճապաղջրի ամբողջ երկայնքով: 300 սայլից կազմված քարավանին ուղեկցում էր հիսուն ոստիկան՝ Օսմանի հրամանատարությամբ: Մեկնելու երկրորդ օրը 30 սայլվորի տարան ձորն ու սպանեցին:

Գրեթե նույն ժամանակ, բանակում ծառայող հայերի մեծ մասին փակեցին Կարմիր կոնակի շենքում: Մինչ այդ նրանց զինաթափել էին, մի քանի օր քաղ-

ցած ու ծարավ պահել, խոշտանգել էին: Գիշերը նրանց չենքից հանեցին, ասելով, թե տանում են Ուրֆա՝ ճանապարհներ կառուցելու: Այլևս նրանցից և նրանց մասին որևէ լուր չստացվեց: Հետո պարզ դարձավ, որ բոլորին սպանել էին:

Սակայն Խարբերդում հայերի տեղահանումն իրողություն դարձավ, երբ սկսեցին ավերել հայկական կրթական հաստատությունները: Սկսած 1915 թ. մարտի 28-ից դրանք բոլորը փակվեցին, այդ թվում նաև «Եփրատ» քոլեջը՝ հայտարարելով, թե «համաճարակ կա»: Ուսումնական չենքերը զորանոցների ու զինվորական հիվանդանոցների վերածվեցին:

Քաղաքի հայերից մեկի տանը հավաքել էին հարյուրավոր հայ որբեր, որոնք մեռնում էին ցրտից, սովից ու համաճարակից: Գերմանուհի Դանթե Հելենն, արհամարհելով վախը, գնում է այդ երեխաներին կորստից փրկելու: Թուրքերը նրան այնքան են ծեծում, որ մեռնում է:

Թուրքերն իրենց չէին զրկում ազդեցիկ մտավորական գործիչներին գաղանաբար սպանելու հաճույքից: Նույն բանտի բակում հունիսի 25-ին դահիճներն այրելով մեռցրեցին բժիշկներ՝ Ն. Նահիկյանին, Վեղնեջյանին և Վ. քհն. Ասլանյանին[1]: Խարբերդի ամերիկյան դպրոցի դասախոսներին մեռցրեցին կտտանքներով: Այդ կտտանքները տեսնելով՝ դասախոսներից մեկը խելագարվեց: Պրոֆեսոր Լյուլեջյանի խոշտանգումներին մասնակցում էր նաև վալին: Նա՝ ինքը քաղաքի լավագույն մտավորականին այնքան ծեծեց, որ հոգնեց ու դիմելով ներկա գտնվող Թուրքերին ասաց. «Ով սիրում է իր կրոնն ու ժողովրդին, կարող է շարունակել»[2]:

Խարբերդն ու նրա գյուղերը դատարկվեցին, ավերակ դարձան: Բնակավայրերում միայն գազազած շների կաղկանձն էր լսվում: Մնացել էին միայն հատուկենտ, կմախքացած որբուկներ: Ոչ միայն սպանդանոցային վայրերում, այլ ամենուրեք՝ ճանապարհի եզրերին ու փողոցներում, քարերի ու թփերի ետևում ընկած էին դիակներ, մարդու մարմնի մասեր, փչրված գանգեր:

Երիտթուրք պարագլուխները հասկանում էին իրենց քաղաքականության գարշելիությունը: Դրա համար էլ խոստովանում էին, թե «հայրենասիրական մղումներից դրդված են ստանձնում այն խայտառակության պատասխանատվությունը, որ սևացնելու է օսմանյան պատմությունը»:

Պատմում է խարբերդցի Կ. Ժամկոչյանը. «Մի օր նստած եմ մեր գյուղի ատաղձագործի մոտ, երբ մոտեցավ գյուղի զինվորական հրամանատարն ու ասաց. «Սեֆերբերլիկը (զորահավաքը) սկսված է»: Եթե հայերը բարձր տրամադրությամբ էին զինվորագրվում, ապա քրդերը խուսափում էին զորակոչից: Մամուրեթ ուլ-Ազիզում դպրոցները գրեթե փակ էին: Քաղաքի հայության շրջանում ճնշիչ մթնոլորտ էր, մանավանդ, երբ Պոլսից լուր ստացվեց հնչակյանների ձերբակալության մասին:

---

[1] **Ակունի Ս.**, նշվ. աշխ., էջ 509:
[2] **Фирбюхер Г.**, նշվ. աշխ., էջ 55:

Հայ երիտասարդությունը բանակ մեկնեց անտրտունջ, սակայն նրան զենք չտվին կամ տվածները հետ առան: Եվ այդ հայերն առավոտից մինչև երեկո արևի ու անձրևի տակ, հաճախ առանց սննդի ու ջրի, պարտավոր էին քարեր ջարդել և ճանապարհ կառուցել[1]: Մի մասին էլ գործածում էին որպես փոխադրամիջոց. նրանք օրեր շարունակ չալակով ծանր բեռներ էին փոխադրում տեղից տեղ: Զորակոչվածներից շատերին զբաղեցրին գյուղատնտեսության մեջ: Ճնշումների, հարստահարությունների հետևանքով տնտեսական կյանքը գնալով հանգչում էր: Թեքալիֆի հարբիե (պատերազմական տուրք) անվան տակ հայերից խլում էին ամեն ինչ: Ապա հայերին սկսեցին կողոպտել փախըստականներ բռնելու պատրվակով: Դրան հաջորդեցին զենքեր հավաքելու խժդժությունները: Ոչ քիչ դեպքերում պլան էր իջեցվում, թե ո՛ր բնակավայրը որքա՞ն զենք պիտի հանձնի: Ժողովրդի խոշտանգումներին վերջ դնելու խնդրանքով հայերի մի պատվիրակություն դիմեց վալուն: Վերջինս պատվով երդվեց, որ եթե հայերը կամովին հանձնեն զենքերը բռնություն չի գործադրվի: Դրան հավատաց անգամ գերմանական հաստատությունների տնօրեն Էհմանը, որը նույնպես սկսեց հորդորել հայերին՝ հանձնելու զենքերը: Եվ հանձնում էին: Խարբերդցիները խաղաղ մարդիկ էին, զենքին անծանոթ ու անախորժ, մանավանդ, երբ ներքաշվեցին միսիոներների ազդեցության ոլորտը:

Ռուսական մի փաստաթղթում նշվում է, որ 1915-ի գարնանը հայ զինվորները զինաթափվեցին և տարվեցին բանվորական գումարտակներ (ամելե-թաբուրի): Արդեն մարտի 15-ին «զորքերում ծառայող ոչ բոլոր հայերը զինաթափված» էին[2]:

Հայ զինվորների զինաթափմանը հաջորդեց հարձակումը քաղաքացիական բնակչության վրա: 1915 թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցան զանգվածային խուզարկություններ ու ձերբակալություններ: Հայ մտավորականությունն, այդ թվում Հովհաննես Թլկատինցին, Երուխանը, ինչպես նաև քաղաքական գործիչներ ու ազդեցիկ դեմքեր բանտ նետվեցին: Երբ Խարբերդի քոլեջը խուզարկում էին, տնօրեն Հովհաննես Պուճիգանյանը (Սոկրատը) զանգը փչրեց ու խուզարկողներին ասաց. «Անոր ռումբը զանգին մեջ է»: Ձերբակալվեց քաղաքի ու վիլայեթի մանկավարժական կազմի մեծ մասը: Նրանց ահավոր տանջանքների էին ենթարկում՝ ածելիով կտրտում մարմինները և աղ ու քացախ լցնում վերքի վրա, մազերն ու եղունգները քաշում, տանջամահ անում: Մի քանի քահանաների պայտեցին, կուսակցական գործիչների նետեցին ցցերի վրա[3]:

Չնայած դրան՝ բանտարկվածները չէին ընկճվում, չէին հանձնվում դահիճների կամքին: Երբ գիշերը ոստիկանները փորձեցին նրանց դուրս հանել, նրանք ասացին՝ «Մեզմէ ոչ ոք գիշերով դուրս կու գայ, իսկ եթէ բռնութեամբ զմեզ պիտի հանէք, համեցէ՛ք, եթէ կրնաք»: Բանտարկյալները որպես բողոքի նշան այրում են իրենց անկողինները, որից հրդեհ է առաջանում: 37 հոգի նահատակ-

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 378:

[2] ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 385.

[3] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 383:

վում է: Կենդանի մնացածներին տանում են Դիարբեքիր և Դևե-բոյնու վայրում կացնահարելով սպանում: Մի ուրիշ անգամ հայ բանտարկյալներն իրենց հագուստներին նախապես յուղ են քսում ու, երբ գալիս են իրենց տանելու, իրենց հրդեհում են ու զոհվում:

Զենքերի բռնագրավումները, զորակոչը, հայ զինվորների զինաթափումն ու ձերբակալություններն 1915-ի սկզբներից տեղի էին ունենում գրեթե միաժամանակ: Այդ բոլոր միջոցառումները միտված էին հայ արու սեռի աստիճանական ոչնչացմանը, որի համար ի գործ էին դրվում ամենատարբեր առիթներ ու պատրվակներ:

Հայ զինվորներին սպանում էին նաև առանց առիթի, սուտ պատրվակներ հնարելով: Խարբերդի Սուրսուրի գյուղից երեք հայ երիտասարդներ ծառայում էին բանակում: Մի ուրբաթ գրավոր թույլտվությամբ այցելում են իրենց ծնողներին: Նրանց բռնում են, թույլտվության թղթերը վերցնում և գնդակահարում, միաժամանակ հրդեհելով նրանց տները ունեցվածքի հետ:

Մունետիկները, ընկած հայկական գյուղերն ու թաղերը, բղավում էին՝ պահանջվում է հանձնել բոլոր հին ու նոր զենքերն ու ռումբերը:

Խուզարկությունն սկսելուց առաջ ոստիկանները գյուղը կամ քաղաքը պաշարում էին, որպեսզի որևէ մեկը չկարողանար փախչել: «Այնուհետև ուրիշ ոստիկաններ ներխուժում էին տներն ու բնակիչներին հրամայում զենքերը հանձնել»:

«Ես բազմաթիվ տներ եմ տեսել,- գրում է Լ. Դևիսը,- որոնց հատակը զինվոր-ոստիկանները փորել, հատակները քանդել են»՝ իբր զենք գտնելու համար: «Խուզարկությունները այնպիսի բռնություններով էին ուղեկցվում, որ մարդիկ ... ոստիկաններին խոշոր գումարներ վճարելով հին հրացան, ատրճանակ էին գնում...»[1]: Մթնոլորտը մեղմելու համար հայ կանայք սկսեցին բանակի համար գուլպաներ, բաճկոններ գործել:

Բանվորական վաշտերից մեկի զինվորը պատմում է. «Մենք ճամփաներ չենք չիներ հոն, այլ խրամատներ կը բանանք, այսինքն՝ երկար գերեզմանափոսեր, դրանց մեջ թաղվելու համար: Մեր աշխատանքը ռազմաճակատին մերձակայ չրջաններում չէ, այլ լրիվ ամայի վայրերում... Եթե մի բան ասացիր՝ հրացանի խզակոթն իջնում է գլխիդ և ընկնում ես փոսը: Ապա ընկերներիդ հարկադրում են վրադ հող լցնել: Քանիսները այդպես թաղվեցին»[2]:

Բանտերը լեփ-լեցուն էին, իսկ բանտարկությունները գնալով սաստկանում էին: Եթե հայ վաճառողը ապրանքի համար թուրքից փող էր ակնկալում, ուրեմն իրեն անպայման վտանգում էր. հայի երեսին չպրտում էին «թուրքի կողոպտիչ, խաբեբա, գյավուր» պիտակները ու սպառնում՝ «կգա՛ օրը»:

---

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 101:

[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 561:

Հունիսին Խարբերդում բռնություններն աներևակայելի բնույթ ստացան: Քաղաքում այս կամ այն չափով հեղինակություն ունեցող բոլոր հայերը բանտում էին: Նրանց բրածեծ էին անում, մեջքերը մերկացնում էին ու խարազանում, եղունգները, մազերը, բեղերն ու մորուքը քաշում, ժամերով ձեռքերից կախում, օրերով քաղցած պահում:

Հունիսի 23-ի գիշերը նրանց եղան սայլերով քաղաքից հանեցին ու տարան անհայտ ուղղություններով: Նրանց թվում էր նաև տեղի թեմի առաջնորդը: Որոշ ժամանակ անց հայտնի դարձավ, որ ողջ մտավորականությանը ջարդել են Արխանա Մաղենի մոտերքում, Խարբերդ-Դիարբեքիր ճանապարհի գրեթե միջին մասում: Այդ օրվա ձերբակալությունների մասին Դևիսը հուլիսի 11-ին գրեց Վաշինգտոն. «Շչուկներ են պտտվում, որ բոլորին սրախողխող են արել ու շատ քիչ հավանականություն կա, որ այդպես չէ»[1]:

Հուլիսի 5-ին, այսինքն՝ տարագիրների երկրորդ քարավանի մեկնելուց երկու օր անց Խարբերդում, Մամուրեթ ուլ-Ազիզում և մերձակա գյուղերում ձերբակալվում է 800 մարդ: Նրանց առանց որևէ մեղադրանք ներկայացնելու բանտ են նետում: Հուլիսի 6-ի գիշերը մյուդիրի հրամանով այդ մարդկանց ևս դուրս են հանում, բակում շարում, 14-ական հոգու իրար կապում ու տանում քրդական ինչ-որ գյուղ, որտեղ նրանց առանց հաց ու ջրի փակում են մզկիթում և հարակից չինություններում: Հաջորդ օրը տանում են մի հովիտ, հրամայում են նստել ու այդպես նրանց գնդակահար ու սվինահար են անում[2]:

Վկայում է Մորգենթաուն. Հուլիսի սկզբին 2000 ամելեների Խարբերդից տարան ճանապարհներ կառուցելու: Հայերը վալուն խնդրեցին «խնայել»: Վալին հավաստիացրեց, որ նրանց բան սպառնում և Էհմանին պատիվի խոսք տալով, թե նախկին զինվորները պիտի պաշտպանվեին, բայց բոլորին ջարդեցին: Նրանց մարմինները նետվեցին նկուղի մեջ»: Մի քանի օր անց 2000 հոգու էլ ուղարկեցին Դիարբեքիր:

«Որպէսզի անոնք դիմադրելու կամ փախուստով ազատուելու յոյս չունենան... կանոնաւոր կերպով անօթի կը պահուէին», ապա նախապես քրդերին տեղյակ պահեցին նրանց գնալու մասին և հանձնարարեցին «կատարել իրենց սրտահաճոյ պարտականութիւնը: Ոչ միայն քիւրտ ցեղի այրերը լեռներէն վար կը խուժէին... այլ նաև քիւրտ կիները կու գային մսագործի դանակներով, որպէսզի Ալլահի աչքին շահին այն արժանիքը, որ քրիստոնեայ մը սպանելէն առաջ կու գայ»[3]:

Վերևում բերված փաստերը վկայում են, որ Խարբերդի նահանգում նույնպես ջարդերը սկիզբ առան 1914 թ. վերջերից, որ այնտեղ էլ գործողությունների հերթականությունն այնպիսին չէ, ինչպիսին ավանդաբար ընդունվում ու հրամցվում է:

Հավանաբար հարկ կա այս առումով բռնագաղթն ու ջարդերն, ինչպես

---

[1] ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/122:

[2] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 131-132:

[3] **Մորգենթաու Հ.**, նշվ. աշխ., էջ 251-252:

նաև դրանց բաղադրիչ հանդիսացող միջոցառումները միմյանցից տարանջատել: Արևմտյան Հայաստանի երեք նահանգներում (Էրզրում, Սեբաստիա, Խարբերդ) բռնագաղթը ոչ միայն սկսվեց համաձայն Կ. Պոլսից ստացված հրամանների, այլև դրանց ժամկետները նույնպես (չնչին շեղումներով) որոշվում էին Թալեաթի գրասենյակում: Ինչ վերաբերում էր խուզարկությունների, բռնագրավումների, մտավորականության ու հասարակության ազդեցիկ մասի ձերբակալությունների և այլնի, այդ թվում նաև զանգվածային ջարդերի, ժամկետները, ապա դրանք որոշվում էին նահանգներում:

Ով էլ լիներ դրանք գործողության մեջ դնողը, այդ բարբարոսություններն ամենուրեք հայությունն ընկալեց որպես բնաջնջման միջոցներ, ինչը նրան զգաստացրեց: Դրանով է բացատրվում այդ միջոցառումների հանդեպ հայերի վերաբերմունքի մեջ կատարված կտրուկ շրջադարձը: Թե՛ զորահավաքի և թե՛ զենքերի հանձնման գործում հայերը որդեգրեցին խուսանավման, ժամանակ շահելու միջոցով դրանք ձախողելու քաղաքականություն: Դժբախտաբար այդ խնդրում հայ համայնքների ղեկավարները ճկուն չգտնվեցին: Դեռ ապրիլի վերջերին Խարբերդում ոստիկաններից մեկն իր հայ ծանոթին ասել էր. «Մի քանի օրէն հայերու գլխին շատ ծանր բան է պայթելու»[1]: Երբ այդ մասին տեղյակ են պահում ՀՅ Դաշնակցության տեղի կազմակերպության ղեկավարին և Պսակ վարդապետին, ստանում են պատասխան՝ զենքերը թաքցնել ու համբերել: Մի քանի օր անց սկսվեցին մտավորականների ձերբակալությունները: Իբր գաղտնիքներ կորզելու համար նրանց այլանդակ խոշտանգումների ենթարկեցին, սպանեցին, կախեցին: Խոշտանգվածներից ոմանք խելագարվեցին: Կուսակցական կազմակերպությունների ղեկավարներին նստեցրեցին ցցին, ինչն առաջացրեց օտարերկրացիների զայրույթը: Եփրատ քոլեջի տնօրեն Է. Ռիկսը մեկնեց ԱՄՆ և պատմեց կատարվածների մասին: Բայց չհաջողվեց դրսում բողոքի շարժում ձևավորել: Խարբերդի վալին կանչում է հայոց առաջնորդ Պսակ վարդապետին, գերմանական համայնքի ղեկավար Էհմանին, հայ ավետարանականների հովիվ Վ. Ամիրխանյանին և սպառնալից տոնով ասում. «Եթե ժողովուրդը կուզե բանտի մեջ եղող չեզոքները չուտ արձակուած տեսնել, քովերնին եղած որևէ զենք և ռազմամթերք չուտով մեզի հանձնելու են...»:

Հրավիրվածները հավատացին վալու ասածներին և սկսեցին նորից հորդորել ժողովրդին զենքերը հանձնելու: Խնդրի լուծումը հեշտացնելու համար «խորամանկ կառավարությունը հաջողեցավ թշնամանք և դժգոհանք սերմանել ժողովրդյան մեջ. կուսակցականները և ոչ կուսակցականները ... սկսան զիրար խծբծել, մեղադրել, որուն հաջորդեցին կարգ մը անախորժ դեպքեր...»:

Տեղի առաջնորդը գյուղերը մարդիկ ուղարկեց, նամակներ գրեց, որ զենքերն անմիջապես հանձնեն: Զենքերը հանձնեցին: Դիմադրողները ոչ միայն ենթարկվում էին իշխանությունների բռնություններին, այլև հայ ջոջերի հալածանքներին: Զենքերի հավաքումը տևեց մայիսի վերջերից մինչև հունիսի 10-ը: Դրանից անմիջապես հետո աքսորեցին բանտում եղածներին, մոտ 1500-1600 մարդ: Խարբերդի ու գյուղերի միջև երթևեկությունը կանգ առավ, փողո-

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 381:

ցում հանդիպած տղամարդուն անմիջապես ձերբակալում էին, ծեծում, գլխի, բեղերի, մորուքի մազերը փետում: Տնից տուն գնալն անգամ անվտանգ չէր: Պսակ վարդապետին նույնպես բանտ նետեցին և 15 օր քաղցած պահելուց հետո 900 մտավորականների հետ տարագրեցին:

1915-ի գարնանը ձերբակալվեցին նահանգի երևելի հայերը, այդ թվում «Եփրատ» քոլեջի դասախոսները: Նրանց մեռցնելու աստիճան տանջեցին: Մի կին պատմում է, որ 1915-ի մայիսի 1-ին ձերբակալվեցին հայ մտավորականությունն ու վերնախավը: Նրանց խոշտանգում էին, որպեսզի ցույց տային զինապահեստները: Երբ դրանից բան դուրս չեկավ, բանտ նետեցին հարուստ ընտանիքներին պատկանող մի խումբ կանանց: Սակայն կանայք նույնպես չբավարարեցին դահիճների հետաքրքրությունը: Կանանց բանտից հանելու համար հայերն որոշ քանակությամբ զենք հանձնեցին[1]: Կանանց ազատեցին, իսկ տղամարդկանց՝ ոչ: Նրանցից շատերը դաժանություններին չդիմացան ու մեռան բանտում, ոմանք խելագարվեցին[2]: Դիմանալն իսկապես անհնար էր, ձերբակալվածների «գլուխները դնում էին մամլիչի տակ ու ճզմում, աքցանով եղունգները, անգամ մատերն էին պոկում, ձեռների մեջ յուղ լցնում ու վառում»: Որոշ ժամանակ անց ասացին՝ «Հեռագիր ունինք՝ չեզոքները պիտի արձակենք, իսկ կուսակցականները թեթևորեն պիտի պատժենք. ժողովուրդը գրգռելու չէ»:

Խարբերդում շարունակվում էր տղամարդկանց ձերբակալությունը, իսկ գյուղերում զանգվածային ջարդեր էին ընթանում: Կանայք դիմեցին Էհմանին, թե «Մեր էրիկներու արիւնաթաթախ հագուստները դիտմամբ մեր դռները կը ձգեն»: Ստացան պատասխան. «Ձեմ հաւատար ձեր խօսքերուն, կառավարութիւնը մեզի վստահեցուցած է, թէ աքսոր պիտի ըլլայ, բայց ոչ ջարդ»: Երբ Էհմանը կուսակալին հիշեցրեց, որ պատվո խոստում է տվել, վերջինս պատասխանեց. «Եթէ մենք գերման կառավարութեան հրահանգը գործադրենք, աւելին ընելու ենք»[3]:

Գերմանացի գործարարներից Ֆ. Շուխարդը գրում է. «Մամուրեթ ուլ-Ազիզի վալին մեր այնտեղի կայանի պետ Էհմանին խոստացել էր, թե բոլոր հայերը բացարձակապես անպատիժ կմնան, եթե հաջողվի նրանց համոզել հանձնելու զենքերը: Էհմանը ստանձնեց այդ գործը, սակայն ժողովուրդը կոտորվեց ու ջարդվեց»[4]:

Հունիսի 15-ին մունետիկները շրջում էին քաղաքի փողոցներով ու բղավում «Բոլոր հայերը, կաթնակերից մինչև խորը ծերունիները, առանց բացառության, պետք է գաղթեն Ուրֆա»: Թաղերը մեկը մյուսի հետևից դատարկվում էին, հայերին քշում էին Դիարբեքիրի ու Մալաթիայի ուղղությամբ: Քաղաքից խումբ-խումբ հանվող հայերին ժամուկես ճանապարհ կտրելուց հետո կանգնեցնում էին Գյոլջյուկ լճի ափին, լեռների գրկում և կողոպտում ու ջարդում էին այլանդակ եղանակներով, այն էլ կանանց, ծնողների, երեխաների աչքի առաջ:

---

[1] Տե՛ս "На пути от Харберда до Урфы", М., 1917:

[2] Նույն տեղում:

[3] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 384:

[4] Lepsius J., նշվ. աշխ., էջ 213:

Հուսեյնիկում «չատ երիտասարդների գանակոծեցին, որպեսզի զենքեր հանձնեին: Այստեղ ևս հայերը հարկադրված եղան Թուրքերից զենքեր գնել ու տալ կառավարությանը»[1]:

«Армянский вестник»-ն իր 1917 թ. № 4-ում տպագրեց հետևյալ փաստաթուղթը: 1915 թ. հունիսի 26-ին մունետիկը Խարբերդի փողոցներում գոչում էր. «Հե՛յ, լսեցե՛ք, խոսքս գյավուրներին է վերաբերում: Մեր պանծալի պետության և Թագավորաց Թագավորի հրամանով որոշված է Խարբերդի բոլոր գյավուրներին Ուրֆա ուղարկել: Օրորոցի մանուկից մինչև ամենավերջին ծերը ճամփորդ պիտի դառնա: Ով չհնազանդվի օրենքին, իր տան առջև կախաղան է բարձրացվելու: Իսլամնե՛ր, լսեցե՛ք, ով իր տանը հայ պահի, ինքն էլ հայի հետ կախաղան է հանվելու, ա՛յս է մեր Թագավորի հրամանը»[2]: Զինվորներն անմիջապես շրջապատեցին քաղաքը, գրեթե ամեն քայլափոխի «հրացանը ձեռքին զինվոր էր հայտնվում ու հարցաքննություն կատարում: Քաղաքում տղամարդ գրեթե չէր մնացել: Մունետիկը Մահմեդ Զավուշն էր, որը գոչում էր թմբուկ խփող մի տղայի հետ փողոցից փողոց անցնելով:

Հայտարարեցին, որ առաջին քարավանը ճանապարհ է ընկնելու հունիսի 1-ին, երկրորդը՝ հուլիսի 3—ին: Մեկնելու էին Թաղ առ Թաղ: Մամուրեթ ուլ-Ազիզի և Խարբերդի օտարերկրյա ներկայացուցիչները՝ Լ. Դևիսը, Հ. Էհմանը օսմանյան բանկի փոխտնօրեն ավստրահպատակ Շ. Պիլիտոն, ամերիկացի երեք միսիոներներ լինում են վալու մոտ և խնդրում, որ գաղթին նախապատրաստվելու համար նախատեսված ժամանակը երկարացվի: Վալին խոստանում է՝ առանց տղամարդու մնացած ընտանիքներին, թույլատրել տարագրվելու վերջին քարավանով, իսկ մյուսները պետք է մեկնեին համաձայն հաստատված գրաֆիկի: Նա մերժեց նաև խնդրանքը՝ թույլ տալու, որ քարավաններին միսիոներներ ուղեկցեն:

Իրարանցում սկսվեց: Մոլորված հայերը չարժական ունեցվածքը վաճառքի հանեցին և վաճառում էին «իրենց առաջարկված» գնով: Փողոցները լցված էին Թուրքերով, որոնք «չնչին գներով ձեռք էին բերում երգեհոններ, կարի մեքենաներ, կահույք, գորգեր»: 200 դոլար արժեցող երգեհոնը գնվում էր 5 դոլարով, իսկ 25 դոլար արժեցող կարի մեքենան՝ 50 սենթով, թանկարժեք գորգը՝ մեկ դոլարով: Հայերի ունեցվածքի մեծ մասը մահմեդականները պարզապես ձրի տարան: «Տեսարանը,- գրում է Լ. Դևիսը, ինձ հիշեցնում էր որսին գիշանգղների հետապնդելու տեսարանները: Թուրքերի համար իսկական տոն էր, նրանք զուգված–զարդարված ելնում էին փողոց, ցնծում էին, հրճվում ուրիշի դժբախտությունով»[3]: Ամենատարբեր միջոցներով (բանկ, օտարերկրացի, ծանոթ, մուսուլման) պահպանության էին հանձնում իրենց թանկարժեք իրերն ու զարդերը, ինչպես նաև դրամը: Ի վերջո, այդ ամենի մեծ մասը անցավ լքված գույքերի հանձնաժողովին: Եվ կատարվեց այն, ինչ հնարավոր էր ենթադրել: «Հարյուր հազարավոր դոլարների տիրանալուց հետո հանձնաժողովը ճիշտ ժամանակին «կորցրեց» հաշվեգրքերը» և հայտարարեց, թե ամբողջ գումարը

---

[1] **Bryce J.**, նշվ. աշխ., p. 68:

[2] **Վահէ Հայկ**, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 1420:

[3] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 113-114:

ծախսվել է հայերի ունեցած պարտքերը մարելու վրա[1]:

Այսպիսով, Խարբերդի հայության տեղահանման հրամանը տեղ հասավ հունիսի 26-ին, այն բերեց Իթթիհադի նահանգային ներկայացուցիչ Ղանին: Խարբերդում բռնագաղթի իրականացման գործում առաջնային դեր խաղաց 11-րդ բանակաթևը, որը տեղահանման հրամանի հրապարակման օրը բերվեց քաղաք: Բանակը մասնակցել էր թե՛ հայ գործիչների ձերբակալություններին, թե՛ խուզարկություններին, թե՛ զենքերի բռնագրավումներին և թե՛ տղամարդկանց ոչնչացմանը: Փաստորեն, հունիսի 3-24-ը Խարբերդում վերը նշված միջոցառումների իրականացման ամենաեռուն օրերն էին: Այդ ընթացքում սպանվեցին քաղաքի լուսավորչական, կաթոլիկ և բողոքական կրոնական ղեկավարները: 800 տղամարդիկ Հերոզլի լեռան ստորոտին հրացանազարկ եղան հունիսի 24-ին: Սկզբում Բերդակում, ապա նաև բոլոր կազաներում ոչնչացվեց մի քանի հազար տղամարդ: Այսինքն Խարբերդի վիլայեթում հունիս ամիսը ոչնչացման առաջին շրջանից՝ խմբակային ոչնչացումից, երկրորդ շրջանին՝ ամբողջական բնաջնջմանն անցնելու ամիս էր: Այդ երկու շրջանները միմյանցից բաժանում էր միայն մի օր՝ հունիսի 25-ը, որովհետև հաջորդ օրը ոչ միայն մունետիկը ազդարարեց զանգվածային բռնագաղթի մասին, այլև համապատասխան հրամաններ երևացին չինությունների պատերին: Իսկ չորս օր անց արդեն քաղաքից դուրս եկավ տարագիրների առաջին քարավանը:

Հավանաբար այդ անցումը նկատել էր կամ դրա մասին տեղյակ էր Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանատունը, որը հունիսի 24-ին հայտարարեց. «Խարբերդի, Աղանայի և Սվազի հայերը բնաջնջվում են»[2]:

Խարբերդի տարագիրների մի քանի քարավանների Զոր աղբյուրի ճանապարհով տարան արևմուտք, իսկ մյուսներին՝ Դեվե-բոյնուի ճանապարհով՝ դեպի արևելք:

Ռաս ուլ-Այն հասան միայն այդ քարավաններից մի քանիսի խլյակները: Զխնայեցին որևէ մեկի, անգամ որբերին: 700 որբից քաղաքում մնացին 13-ը:

Խարբերդի հայության հիմնական մասը ջարդվեց Քեղին Խանում, Գյոլջյուկի մոտ, Խուլբենիքում, Քյոմեր խանում, Շուբկահանում:

Բայց ամենասարսափելին տեղի ունեցավ Մալաթիայի սանջակում, որտեղով անցան տարբեր վիլայեթների չուրջ 500.000 տարագիրներ, հիմնականում կանայք ու երեխաներ: Նախճիրները կատարվեցին Մալաթիա քաղաքից հարավ-արևելք ընկած Քյախտա անմարդաբնակ լեռներում ու ձորերում, Կանլը Դաղի գագաթներին ու փեչերին: (Դիակները թափեցին Կանլը դերե վիհը, որը 2000 ոտք խորություն ունի): Այստեղ դիակները թափված մնացին մինչև զինադադարը:

Խարբերդ քաղաքում թողեցին մի քանի հարյուր երիտասարդ կին ու աղջիկ, որոնց մի մասին գործածեցին քաղաքում բացված հասարակաց տանը՝ թուրքերի կրքերին հագուրդ տալու համար[3]:

---

[1] ***Դևիս Լ.***, *նշվ. աշխ., էջ 118:*

[2] ***Ղազարեան Հ.***, *նշվ. աշխ., էջ 130:*

[3] ***Նազլեան Ց.***, *նշվ. աշխ., էջ 295:*

Խարբերդում և Մեզրեում հայ բնակչությունը ենթարկվեց ահավոր տանջանքների: Հանում էին «տղամարդկանց աչքերը, դուրս քաշում եղունգները կամ ձիերի նման պայտում, կտրում կանանց կրծքերը: Այդ ամենն արվում էր գիշերը բանտի պատերից ներս: «Խոշտանգվածների ճիչերը խլացնելու համար զինվորները թմբուկ էին խփում»: Ապա հրաման տրվեց, հայերին հավաքվել որոշակի կետերում: Երբ հավաքվեցին, նրանց բոլորին բանտ նետեցին, իսկ 1–2 օրից խմբերով իրար կապեցին և քշեցին հարավ և հարավ-արևելք:

Մեկին ասում էին, որ «իրենց քշում են Մոսուլ, իսկ մի ուրիշին՝ Բաղդադ: Հայերին ժամանակ չտվեցին ոչ գործերն ավարտելու, ոչ հրաժեշտ տալու... Առաջին իսկ կանգառին մի խուլ վայրում նրանց սպանեցին»: Այսպես տղամարդկանց վերջը տվին: Ապա հավաքեցին կանանց ու երեխաներին, որոնց նույնպես քշեցին հարավ: «Նրանց մեծամասնությունը զոհ դարձավ ճանապարհի դժվարություններին, ինչպես նաև ուղեկցողների դաժանությանն ու հեշտանքներին»: Քրդերին իրավունք էին տվել հարձակվել տարագրության քարավանների վրա: Յուրաքանչյուր գետանցը, մասնավորապես Եփրատի գետանցը, ուղեկցվում էր զանգվածային սպանություններով: «Թուրք զինվորները կանանց ու երեխաներին քշում էին ջրի մեջ ու ջրասույզ անում. Եթե որևէ մեկը լողալով հեռանալու փորձ էր անում, հրացանազարկ էին անում»: Փոքրաթիվ կենդանի մնացածները Հալեպ հասան լրիվ մերկ, քանի որ զինվորները նրանցից վերցրել էին մինչև վերջին թելը: Հալեպ հասած կանանց մեջ այլևս չկար այս կամ այն չափով գեղեցիկ կին, ճանապարհին նրանց բոլորին տարել կամ սպանել էին: Թողել էին միայն տգեղներին: «Եփրատի ափերը ու Էրզրումի հարթավայրը ծածկված էր կանանց և երեխաների այլանդակված դիակներով»:

Լսենք Էհմանին, ծանոթանանք նրա և Վանգենհայմի գրագրությանը:

Որոշ ժամանակ անց բանակից հանեցին հայ զինվորներին, նրանց զինաթափեցին և հարկադրեցին զբաղվելու ֆիզիկական աշխատանքներով: Այդ նպատակով ստեղծվեց ամելե թաբուր: Հայ զինվորները քար էին ջարդում, ճանապարհ կառուցում: Գործում էր նաև զրաաթ թաբուր (երկրագործական բանակ) և զբաղվում գյուղատնտեսական աշխատանքներով: Թեքելիֆի-հարբիեի (պատերազմական տուրք) անվան տակ ժողովրդին ուղղակի թալանում էին: Ոչ մի հայ ընդդիմանալու իրավունք ուներ: Հայերից խլեցին ամեն ինչ: Բռնագրավվածը տեղափոխելու պատրվակով հավաքեցին ձիերը, ջորիները, էշերը, եզները, կովերը և վերջապես երիտասարդներին և նույնիսկ կանանց:

Բանակում տարածվեց ոջիլը, դրա հետ միասին ժանտախտը, որ առաջ բերեց դասալքություն, ամենից շատ դասալքում էին թուրքերն ու քրդերը: Դասալիքների մեջ կային նաև հայեր: Դրանց փնտրելու պատրվակով ոստիկանությունն ամենուրեք բռնություններ գործադրեց:

1915 թ. մայիսի 5-ին Էհմանը գրեց. «Մի քանի օր է, որ քաղաքի ու շրջակա գյուղերի քրիստոնյաների տներում խուզարկություններ են կատարվում: Կառավարության աչքում կասկածելի թվացող անձինք ձերբակալվում են և քրիստոնյաներից պահանջվում է զենքերը հանձնել: Այդ պատճառով քրիստոնյա ողջ ազգաբնակչությունը սոսկումի մեջ է, վախենում է վատթարագույն հետևանքներից: Այս երկրում իմ անցկացրած 18 տարիների փորձից ու ճշգրիտ

տեղեկություններից ելնելով ցանկանում եմ Ձերդ մեծության ուշադրությունը հրավիրել այն իրողության վրա, որ այս կուսակալության բնակչության բացարձակ մեծամասնությունը կառավարությանը հնազանդ է և երբեք մտքով չի անցկացրել նրա դեմ ապստամբել: 20-45 տարեկան տղամարդիկ, առանց որևէ դժվարություն հարուցելու, արդեն զորակոչվել են: Քրիստոնյա բնակչությունը հնարավոր ամեն ինչ արել է զինվորական բռնագրավումների խնդրում կառավարությանը ընդառաջ գնալու համար: Ընդհանուր կառավարիչը նույնպես համոզված է՝ այստեղի քրիստոնյաները խաղաղասեր են: Սակայն վտանգը կա ու մնում է, որ հայատյաց ուժերը գերիշխեն և վատթարագույն քայլեր կատարեն...»[1]:

Թուրք ազգաբնակչությանը հայերի դեմ գրգռելու համար զանազան միջոցներով ձեռք գցած զենքերը կախում են հրապարակում և դրանց առաջ հայերին նկարում՝ իբր նրանք են այդ զենքերի տերերը: Արկղներով ածելիներ էին ցուցադրում և Թուրքերին հայտարարում. «Այս զենքերով կառավարություն էին տապալելու, իսկ ածելիներով մեր մայրերին, կանանց ու աղջիկների ստինքներն էին կտրտելու»:

Հունիսի 17-ին Վանգենհայմը Էհմանին հեռագրում է. «Բնական ու հասկանալի է, որ կառավարությունը Վանի ցավալի դեպքերի հետևանքով առանձին նախազգուշական միջոցների դիմի և այս առիթով երբեմն խաղաղ բնակչությունն էլ տառապի»[2]:

Վանգենհայմը ստում էր կամ թյուրիմացության մեջ էր, քանի որ այդ նույն օրերին Կարինի տարագրյալների առաջին քարավանն արդեն հասել էր Խարբերդի նահանգ: «Մուշէն եկաւ գերմանուհի մը,- գրում է Էհմանը,- որ միամտութիւն ունեցած էր ընկերանալու գաղթողներուն: Պատմութիւններն իրարմէ աւելի փչաքաղ էին: Պիթլիսէն գաղթողներուն ընկերացող ամերիկացի միսիոներ միսթր Նեփը սպաննուած է: Սասունն ապստամբած է կ'ըսուի, իսկ Վանը՝ կոտորուած»[3]: Նա զարմանքով նշում է, թե հայերը նույնիսկ փորձ չարեցին գավառների միջև կապեր հաստատել: Իսկ իշխանությունները գործում էին: Բանտերից ազատ էին արձակվում ոճրագործները, իսկ հայ զինվորները պարտադրված էին քաղցած ու ծարավ քարշ գալ անմարդաբնակ վայրերում: Ով փորձում էր պատահած աղբյուրից ջուր խմել, վար էր գլորվում արյունաշաղախ:

Էհմանը նորից է հեռագրում դեսպանին. «Քրիստոնեաներն իրենց ունեցած զէնքերը յանձնեցին: Քաղաքներուն մէջ անմեղները կը կազմեն ստուար մեծամասնութիւն... Առեւտրական խոշոր համայնքը քաղաքական գործունէութեան հանդէպ բոլորովին օտար եւ անմասն է»[4]: Վանգենհայմը պատասխանում է. «ՆԳ նախարարութեան տուած տեղեկութիւններով՝ այդտեղի բնակչութեան տարագրութիւն չի մտադրուած»[5]:

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 380-381:

[2] Նույն տեղում, էջ 382:

[3] **Lepsius J.**, Deutschland und Armenien, 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstucke. Potsdam, 1919, LXXX+541s.; Bremen, 1986, էջ 380-384.

[4] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 385:

[5] Նույն տեղում:

Վահե Հայկի վկայությամբ՝ քրիստոնյաները 44 օսմանյան ոսկի էին վճարում և զորակոչից ազատվում: Շատերը վճարեցին: Որոշ ժամանակ անց նորից 44 ոսկի ուզեցին... Այդպես՝ մի քանի անգամ: Դա քողարկված կողոպուտ էր: Սակայն չուտով սկսվեց նաև բացահայտ կողոպուտը: Մահվան սպառնալիքով հավաքում էին զենքերը: Սկսվեցին խոշտանգումները: Տներում անգամ դանակ և ուրագ չէին թողնում: Բնակչությունից խլում էին ամեն ինչ, այդ թվում մեծ տները, գոմերը, մարագները և վերածում զինվորական հիվանդանոցների: Դրանք լրիվ կահավորում էին հայերը:

Ահա թե Դևիսն ինչպես է ներկայացնում բռնագաղթի սկիզբը Խարբերդում: «Շաբաթ օրը, հունիսի 28-ին, հրապարակայնորեն հայտարարեցին, որ հինգ օր անց բոլոր հայերն ու ասորիները պետք է հեռանան այստեղից: Մամուրեթ ուլ-Ազիզ և Խարբերդ քաղաքները բաժանել են թաղամասերի, յուրաքանչյուր տան բնակիչներին տեղյակ պահել, թե ե՞րբ պիտի ճամփա ընկնեն: Մամուրեթ ուլ-Ազիզի հայերին, նախապատրաստվելու համար երկու օր էր հատկացված՝ հուլիսի 1-3-ը: Խարբերդցիներին՝ երեք՝ հուլիսի 4-8-ը: Խոսքը, ըստ Դևիսի, երկու քաղաքներում բնակվող 17.000 հայերի՝ մոտ 3000 ընտանիքների մասին էր: Գյուղերում բնակվում էին անհամեմատ մեծ թվով հայեր, որոնք նույնպես 4-5 օրից թողնելու էին իրենց բնակավայրերը: Նախապատրաստվելու համար տրված օրերը Դևիսը պետքարտուղարությանն ուղարկված տեղեկանքում ներկայացնում է հետևյալ կերպ: Թուրքերն, օգտվելով իրավիճակից, «գրեթե ձրի ինչ ուզում, գնում են: Խաբեությունն ու կողոպուտը երբեք այսքան բացահայտ չեն եղել: Թուրքերը՝ տղամարդ թե կին, մտնում են հայերի տները, ցանկացած իր չնչին դրամով գնում»: Շատ հայեր զոհ էին լինում, երբ «ընդհանրապես որևէ բան են ստանում իրենց ապրանքի կամ ունեցվածքի դիմաց: Փողոցները լցված են թալանը տեղափոխող ուղտերով... Դժվար է պատկերացնել ավելի ճնչող տեսարան, քան այն, ինչ այժմ տեղի է ունենում մեզանում»[1]:

Հուլիսի 1-ին հայերի առաջին քարավանը (2500 մարդ) Մեզրեից դուրս է հանվում, տղամարդկանց առանձնացնում ու կոտորում են, իսկ մյուսներին քշում առաջ: Ուղեկցող ժանդարմների վայրագություններին քարավանի կանայք ու երեխաները պատասխանում են բոյկոտով՝ հրաժարվում են նրանց հրամանները կատարել: «Ոստիկանները,- պատմում է Աղավնի Պոյաճյանը,- տեսնելով, որ զմեզ չեն կրնար համոզել ու մենք մեր տեղէն չենք շարժիր, սկսան փայտերով, խարազաններով ու հրացանի կոթերով մեզի զարնել: Բռնութեամբ զմեզ ճամփայ հանեցին... Հոս շատ աղջիկներ ծեծելով, քաշելով տարին: Ոստիկանները մայրերուն կուրծքերէն փոքրիկներ բռնի քաշելով կ՚առնէին ու դրամով արաբներուն կը ծախէին»[2]: Քարավանը ոչնչացվեց Եփրատի ձորում, Քեչինխան վայրում և Շապկահան գյուղի ձորակում:

Երկրորդ քարավանը Խարբերդից դուրս եկավ հուլիսի 3-ին: Այնուհետև քարավաններ մեկնեցին հուլիսի 9-ին, 18-ին և 19-ին: Երկու քարավաններում

---

[1] *ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/269:*

[2] ***Վահէ Հայկ,*** *նշվ. աշխ., էջ 1421:*

մարդկանց թիվը հասնում էր 10.000-ի: Ականատեսներից մեկը պատմում է. «Ես երկնից տակ չէի լսած այդքան ցաւագին ու այդքան սրտապատառ լաց ու ճիչեր, որքան այդ բռնագաղթի մեծ քարաւանին՝ սուիններու, փայտերու եւ խարազաններու ստիպման տակ քշուող, արեւէն խանձուած անպաշտպան որբերուն ու որբեւայրիներուն լացն ու ճիչերը»: Այդ մեծ քարավանից Հալեպ հասավ 68 հոգի[1]:

3000 հոգուց կազմված 2-րդ քարավանն գնդապետի, մի քանի հարյուր ժանդարմների և Հուսեյնիկի կառավարիչ, երիտթուրք Ֆայիկ բեյի ուղեկցությամբ ուղարկեցին մինչև Խան գյուղը, որտեղ Ֆայիկ բեյը իր հետ տանելու համար ընտրեց կանանց և վերադարձավ Խարբերդ: Մալաթիայի ճանապարհին Ֆրունջլար գյուղի մոտերքում մայրերից խլեցին բոլոր երեխաներին՝ որբանոցներում տեղավորելու պատրվակով, որոնք իբր բացվել են կառավարության կողմից: Ֆրունջլարի մոտերքին քարավանին միացան 11 հազ. հայեր՝ Սամսոնի, Սվազի, Ամասիայի բնակիչները: Նրանց հանձնեցին Ադրյաման քաղաքի կադիին՝ Բադիր բեյին, որը քարավանն «անվտանգ» ուղեկցելու համար տարագիրներից չորթեց 20 հազար ոսկի լիրա: «Բեգդաղ և Վան-դաղ լեռների փեշերին թուրքերը մորթեցին քարավանում եղած բոլոր տղամարդկանց: 15-16 հազար հոգուց Ռաս ուլ-Այն հասավ 3.5 հազարը: Տասն օր անց սովից ու ծարավից մեռավ 2000 հոգի: Արաբաբնակ շրջաններում գիշերները հայերի վրա հարձակումներ էին գործում արաբները և նույնպես առևանգում գեղեցիկ և երիտասարդ կանանց: Վերանշեհիրից հետո քարավանում մնաց 300 կին, Ռաս ուլ-Այն և Հալեպ հասավ միայն 23 տղամարդ..»[2]:

Երկրորդ քարավանի մասին ականատեսը պատմում է, որ Մամուրեթ ուլ-Ազիզից ամենաբազմամարդ քարավանը հունիսի 3-ինն էր, որին տարան դեպի Մալաթիա: Մինչև քաղաք մտնելը ժանդարմները տղամարդկանց առանձնացրել և ճանապարհից փոքր-ինչ հեռացնելով սպանել են: «Տղաներին, կանանց ու աղջիկներին բռնաբարեցին նույն այդ ժանդարմները, ինչպես նաև ճանապարհին հանդիպած քրդերն ու արաբները»: Քարավանը ամբողջությամբ թալանվեց, անգամ հագուստները խլեցին: Քարավանի մի մասը հաջողեց հասնել Ուրֆա, Նիզիբին, Հալեպ և Բաքքա: Սակայն թույլ չտվեցին մի վայրում հաստատվել, այլ տեղից տեղ քշեցին, ի վերջո տարան Դեր Զոր, որտեղ մի տարի դիմացան ծայրահեղ թշվառության մեջ և ապա ջարդվեցին քաղաքի մերձակայքում:

Խարբերդի հունիսի 1-ին մեկնարկած քարավանի հետ կատարվածը բռնագաղթի տեխնոլոգիայի դասական օրինակ է: Այդ է պատճառը, որ այդ քարավանի հետ վտարվածների մանրամասը նկարագրությունը տեղ է գտել ցեղասպանության պատմությանը նվիրված մեծ թվով աշխատություններում:

Քարավանը, որում կար 3000 մարդ, մեծամասամբ կանայք, երեխաներ ու ծերեր, Խարբերդը թողեց 70 ոստիկանների ուղեկցությամբ, որոնց ղեկավարում էր վիլայեթում մեծ ազդեցություն ունեցող թուրք Կ. բեյը: Քարավանը

---

[1] **Ճիզմէճեան Մ.,** Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրեզնօ, 1955, էջ 424:

[2] **Чалхушьян Гр.,** նշվ. աշխ., стр. 84.

հաջորդ օրը, առանց միջադեպի հասնում է Խանքոյ: Բեյը հայտարարում է, որ Մալաթիայում քարավանին վճարելու է 400 լիրա և ուղեկցելու է մինչև Ուրֆա: Սակայն նույն օրը նա անհայտացավ հետը տանելով խոստացած դրամը:

Երրորդ օրը քարավանը հասավ Թաղլիքեն, որտեղ արաբներն ու քրդերը փախցրեցին կանանց ու աղջիկների: Քարավանը պաշտպանելու կոչված ժանդարմներն, իրենք հրահրեցին բարբարոսներին կատարելու կողոպուտ, սպանություն, առևանգումներ:

Տասնհինգերորդ օրը, երբ քարավանը մեծ դժվարությամբ բարձրանամ էր լեռան թեք լանջով, քրդերը 15-90 տարեկան 150 տղամարդու քարավանից հանեցին, տարան քիչ հեռու և բոլորին սպանեցին, ապա վերադարձան ու սկսեցին կողոպտել կենդանի մնացած կանանց ու երեխաներին: Նույն օրը տարագրության մի ուրիշ քարավան, որում կար 300 տղամարդ ու մի քանի հազար կին և երեխա (Սեբաստիայից, Թոքաթից), միացավ խարբերդցիներին և առաջացավ 18.000 հոգուց կազմված մի մեծ քարավան:

Տասնյոթներորդ օրը այդ քարավանը ճամփան շարունակեց քուրդ բեյի ուղեկցությամբ, որը լեռներից կանչեց իր մարդկանց, որոնք հարձակվեցին քարավանի վրա ու կողոպտեցին:

Երեսուներկուերորդ օրը քարավանը մտավ Քիաղհի գյուղը և այնտեղ մնաց երկու օր: Այդ գյուղում նույնպես առևանգեցին կանանց ու աղջիկների:

Քառասուներորդ օրը քարավանը մոտեցավ Մարաշ գետին, որտեղ տեսան 200 դիակ, որոնց ջրի հոսանքը քշում էր: Ափին թափված էին արյունոտ հագուստներ: Հարևան գյուղի ավազը տարագիրներից փրկագին հավաքեց՝ նրանց գետը չնետելու համար:

Հիսուներկուերորդ օրը քարավանը հասավ մի ուրիշ գյուղ, որտեղ քրդերը նրանց կողոպտեցին լրիվ մերկ թողնելու աստիճանի: Հաջորդ հինգ օրերին նրանք այդպես մերկ քայլեցին կիզիչ արևի տակ: Հաջորդ հինգ օրերին տարագիրները չստացան «ոչ մի կտոր հաց և ոչ էլ մի բաժակ ջուր»: Նրանք ծարավից ու քաղցից թուլացել, հյուծվել էին և ճանապարհին մեռնում էին հարյուրներով: Նրանց լեզուն սև էր, ածուխի նման: Իսկ երբ մի քանի օր անց մոտեցան աղբյուրի ու նետվեցին դեպի այն, ժանդարմները փակեցին նրանց ճանապարհը: Նրանք ջուրը վաճառում էին բաժակը 1-3 լիրայով: Սակայն դրամն ստանալուց հետո էլ նրանց թույլ չտվեցին մոտենալ ջրին: Երբ 70-րդ օրը քարավանը հասավ Հալեպ՝ 18.000 հոգուց մնացել էր 150 կին և երեխա[1]:

Խարբերդի հայերի վիթխարի դանգվածներին,- «Кавказское слово» թերթի 1916 թ. հուլիսի 23-ի համարում գրում է Դուխովը,- տարագրեցին և «Մալաթիայից ոչ հեռու մի վայրում բոլորին թալանեցին, ամեն ինչ խլեցին, իրար մեջ բաժանեցին առավել գեղեցիկ կանանց ու աղջիկներին, իսկ մնացածներին հազարներով կոտորեցին ու դիակները Եփրատը նետեցին: Շատ քիչ երջանիկներին հաջողվեց հասնել աքսորավայր՝ Միջագետք, որտեղ նրանց սպասում էր մահը՝ համաճարակներից, կլիմայական պայմաններից և, գլխավորապես քաղցից...

---

[1] *НАН РА, Из истории Геноцида армян, Ер., 1984, с. 15-16.*

Մինչև տարագրությունը 300 հայուհիներ իսլամ ընդունեցին և նրանց թույլատրվեց ապրել Խարբերդում...»:

Զէին բռնագաղթում որոշ թվով գեղջկուհիների, որպեսզի կատարեին գյուղատնտեսական աշխատանքներ, մասնավորապես, հավաքեին բերքը: Սակայն ի վերջո նրանք էլ չփրկվեցին:

1915 թ. նոյեմբերին Խարբերդից հանվեց ևս մի քարավան և քաղաքում մնաց մոտ 200 հայ, որոնց մի մասը թաքնվել էր «հայերու բարեկամ թուրքերուն քով»:

Լսենք ժամանակակիցներին ու ականատեսներին:

«...Խարբերդի կուսակալը,- գրում է Մ. Նեդիմը,- տղամարդկանց զատել էր իրենց ընտանիքներից և Խարբերդի ու Մալաթիայի միջև գտնվող Քեոմուրխան վայրը տանելով գնդակահարել ու դիակները Եփրատ էր նետել»:

Գերմանիայի հյուպատոսը հուլիսի 11-ին (ն. տ.) գրեց. «Հուլիսի 1-ին սկսվեց հայերի մի մեծ խմբի տեղահանությունը: Դրան հետևեց ևս 300 մարդ: Հուլիսի 11-ին հայտարարվեց, թե բոլոր հայերը առանց բացառության, պետք է քաղաքը թողնեն: Հուլիսի առաջին օրերին Խարբերդում երևացին Էրզրումի աքսորյալների առաջին քարավանները՝ ցնցոտիների մեջ, կեղտոտ, սովյալ. հիվանդ մարդիկ: Նրանք երկու ամիս գտնվել են ճանապարհին գրեթե առանց սննդի ու ջրի: Նրանց, ինչպես անասուններին, ուտելու համար ծղոտ տվեցին: Այնքան քաղցած էին, որ նետվեցին ծղոտի վրա, բայց ժանդարմները նրանց մահակներով քշեցին, իսկ ոմանց էլ սպանեցին: Մայրերն իրենց երեխաներին առաջարկում էին բոլոր նրանց, ով ուզում էր վերցնել...»:

«Զորքերը չրջապատեցին մեր թաղամասերը,- պատմում է խարբերդցի մի կին,- ոստիկանները մտան տները բռնելու ու ձերբակալելու բոլորին (սկզբում միայն տղամարդկանց): Բանտում մոտ 1000 հոգու ձեռները կապեցին, ապա խմբերով միմյանց շղթայեցին ու գիշերը դուրս հանեցին քաղաքից»: Հայերն առավոտյան այդ մասին իմացան և մեծ աղմուկ բարձրացրեցին, սակայն ոստիկանները նրանց ցրեցին հրացանների խզակոթերով ու մտրակներով: Մի քանի օրում քաղաքի բոլոր տղամարդիկ աքսորվեցին, ապա հավաքեցին կանանց ու երեխաներին և 1000–1500 հոգանոց խմբերով քաղաքից դուրս տարան:

Բանտում մնաց չուրջ 200 տղամարդ, մեծահարուստներ, որոնք մեծ կաշառք տալով թույլտվություն էին ստացել բռնագաղթվելու իրենց ընտանիքների հետ:

Քաղաքի ունևորներից ու մտավորականներից կազմված քարավանը, որին ճամփա էին հանել հունիսի 14-ին, հինգերորդ օրը, Խզոլի գյուղում կողոպտեցին, նրանց մոտ եղած բոլոր մթերքները խլեցին:

Գյուղի կողքով հոսում էր Եփրատը, և մենք տեսնում էինք, «թե ինչպես հոսանքը քշում տանում էր այլանդակված, ուռած դիակներ՝ երկուական դիակ միմյանց կապված: Դրանք այնքան շատ էին և տեսարանն այնպես սարսափելի, որ մենք աշխատում էինք գետի կողմը չնայել»[1]:

Երբ երեկոն վրա հասավ՝ տղամարդկանց առանձնացրին: Նրանց առան-

---

[1] *"На пути от Харберда до Урфы", с. 12-15.*

ձին-առանձին կամ երկուական հոգով տարան գետափ և սպանելու սպառնալիքով ոսկի պահանջեցին: Ով ոսկի չուներ՝ սպանեցին ու դիակը գետը նետեցին[1]:

Տասը-տասնմեկ տարեկանից բարձր տարիք ունեցողներին արգելում էին սայլ նստել, չատերի ոտնամանները խլել էին և նրանք քայլում էին ոտաբոբիկ՝ բոլորը հյուծվել էին, քաղցած: Ուժասպառ ընկածի գլխին քացով հարվածում էին ու դիակը թողնում տեղում:

Մալաթիայում առանձնացրին տասը տարեկանից բարձր բոլոր տղաներին ու տղամարդկանց, իսկ կանանց տեղավորեցին իջևանատներում: Որևէ մեկի մոտ դրամ չէր մնացել, բոլորը խլել էին:

Հաջորդ օրն սկսվեց խուզարկությունը, կանանց մեկ առ մեկ մերկացնում էին, մոտեցնում մութեսարիֆին, հրամայում չուռ գալ, կռանալ, լկտի խոսքեր էին ասում:

Կանանց ու երեխաների այդ քարավանին ճամփա հանեցին դեպի Ուրֆա: Սայլերն ու ձիերը խլեցին, ուստի մայրերը երեխաներին չալակներն առան: Ուտելու համար միայն հաց էին տալիս: Լացող երեխաներին խլում էին մայրերից ու քարերի հարվածներով մեռցնում: Գիշերները բռնաբարությունները սովորական դարձան, յուրաքանչյուր 10 զինվորի հատկացնում էին մեկ կին, որին լլկելով 2-3 ժամ զվարճանում էին, ապա կիսամեռ վիճակում թողնում հեռանում: Բռնաբարում էին անգամ 8-10 տարեկաններին. «Որպեսզի փրկվեին հետապնդումներից, չատերը վերքերով այլանդակում էին իրենց դեմքն ու մարմինը, կեղտոտում, զզվելի դարձնում իրենց արտաքինը: Քարավանն այսպես առաջ գնաց երկու ամիս չարունակ: Բոլորը ցնցոտիների մեջ էին, չատերը՝ գրեթե մերկ: Մերկությունը ինչ-որ բանով ծածկելու համար տերևներից ու խոտից գոտիներ էին հյուսում: Երբ հասան Ուրֆա՝ քարավանում մնացել էր 200 հոգի (2000-ից)»[2]:

Առաջին (հուլիսի 1-ի) քարավանի ճակատագրի մասին մանրամասը տեղեկություններ կան նաև դիվանագիտական տեղեկագրերում: Քարավանին ուղեկցում էր 70 ժանդարմ, գրում է Մորգենթաուն, որոնք ապացուցեցին, որ «Հայերուն պաշտպանները չեն, այլ՝ խոշտանգիչները եւ դահիճները»: Նախ քարավանապետ բեյը չորթեց 400 ոսկի և անհետացավ, հայերին թողնելով ոստիկան-զինվորների «փափկազգաց գթասրտութեանը»: Նրանց աջակցությամբ, քրդերը չատ անգամներ հարձակումներ գործեցին քարավանի վրա, «աղջիկները կը փախցնէին»: Կանանց բռնաբարությանն ու սպանությանը այդ ժանդարմները մչտապես մասնակցում էին:

Նրանք 13 օր չարունակ ...«իրենց պաշտպանեալները կողոպտելէ, ծեծելէ, բռնաբարելէ եւ սպաննելէ ետք» լքեցին: Որից հետո քարավան են խուժում քրդերը և հավաքում այն բոլոր արու անձերը, որոնք դեռ ողջ են: Գտնում են 15-90 տարեկան 150 հոգու և տանում մորթում են[3]:

---

[1] *"На пути от Харберда до Урфы", с. 12-15.*

[2] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 125, թթ. 13-15: Տե՛ս Խարբերդից Ա. Խաչիկյանի նամակը կաթողիկոսին (28. XI. 1916):*

[3] ***Մորգենթաու Հ.**, նշվ. աշխ., էջ 264-265:*

Այդ քարավանի մասին պատմում է նաև Լ. Դևիսը. «Հուլիսի 1-ի առավոտյան զարմանքով նկատեցի, որ տեղահանվող հայերը ամենաչնչին դիմադրությունն իսկ ցույց չէին տալիս»: Պատճառն այն էր, որ գրեթե տղամարդ չէր մնացել, իսկ մնացածներն էլ «հուսահատված ու ընկճված էին»: Ոչ ոք խույս չտվեց բռնագաղթից: Այդ 3000 հոգանոց քարավանում գնում էին ոմանք եզան սայլերով, ոմանք ջորիներով ու ավանակներով, ոմանք իրենց ունեցվածքը բարձել էին կովերին: Բայց մեծ մասը գնում էր հետիոտն՝ իրերը չալակին, երեխաները գրկին: Որոշ ժամանակ անց «ջորիներն ու ավանակները, որ կառավարությունն էր տրամադրել, վերադարձան»[1]:

Թուրք սպա Ասիմ բեյի վկայությամբ՝ Խարբերդից տարագրված 60 հազ. հայից Մոսուլ հասել էր 15.000-ը: Մարդինից մի քուրդ հայտարարեց, թե Խարբերդում, Դիարբեքիրի, Մարդինի ու Վերանշեհիրի բոլոր հայերը մորթված են[2]:

«Սկսած մայիսից,- պատմել են տեղի միսիոներները,- սկսվեցին ահավոր խոշտանգումները: Բանտարկված, ամբարների մեջ փակված հայերի ոտքերին մեխ էին խփում և պայտում, ինչպես ձիերի, դուրս էին քաշում մորուքի մազերը, հոնքերը, մատների եղունգները, ատամները, գլխիվայր կախում էին և այլն: Հասկանալի է, որ շատերը մահացան... Որպեսզի խոշտանգումների աղմուկը դրսում չլսվի, բանտի մոտ նվագում էին դհոլ և զուռնա... Առաջինը ձերբակալվեցին զենք հանձնողները: Հունիսի 18-ին աքսորեցին 2000 զինվորի և ուղարկեցին Հալեպ՝ ճանապարհներ կառուցելու, սակայն բոլորին սպանեցին Մուչի մերձակայքի կիրճում: Այս մասին լուրեր հասան Խարբերդ, հայերի շրջանում հուզմունքն ահագնացավ:

Հաջորդ օրը ևս 2000 հոգի ուղարկվեց Դիարբեքիրի ուղղությամբ՝ իրարու կապված:

Քանի որ այս քարավանից մի քանի հոգու հաջողվեց փախչել, դրանից հետո տեղահանվածներին երեք օր քաղցած էին պահում, ուժասպառ անում և ապա միայն ուղարկում:

Հուլիսի 3-ին հարուստ ընտանիքների 6000 անդամներ (ոչ միայն Խարբերդից) ճամբա հանեցին մի քարավանով, բոլոր տղամարդկանց սպանեցին և միայն մի քանի կնոջ հաջողվեց հասնել Ուրֆա:

Օգոստոսի վերջերին Մամուրեթ ուլ-Ազիզով անցավ 8000 հոգանոց մի քարավան, որը նույնպես ոչնչացվեց Թուրք բնակչության միջոցով»[3]:

Հուսեյնիկ գյուղի բնակչուհի Մ. Քեչեջյանը 1915 թ. նոյեմբերի 2-ին պատմել է, որ Խարբերդում ու մերձակա գյուղերում մեծ թվով հայերի ձերբակալեցին ու բանտերում խոշտանգեցին՝ ծեծեցին, դուրս քաշեցին մազերն ու եղունգները, տանջեցին տաքացրած երկաթներով: Զինվորներից մեկը նստեց հղի կնոջ փորին, իսկ մյուսները նրան ծեծեցին, որպեսզի հայտնի ամուսնու տեղը[4]:

Հայ բնակչության ոչնչացումը նաև ուղեկցվում էր ստոր շահարկումներով

---

[1] ***Դևիս Լ.***, *նշվ. աշխ., էջ 124-125:*

[2] *R 14088, Ab. 30012.*

[3] *R Konst/Ankara, 98, Ab. 10299.*

[4] ***Դևիս Լ.***, *նշվ. աշխ., ն. տ.:*

ու խարդավանքներով, սադրանքներով ու խաբեություններով:

Երբ ամբողջ հայությունն արդեն տարագրված էր, Թուրքական կառավարությունը հայտարարեց, թե որոշ խավերի համար բացառություն է արվում, այսինքն՝ արտոնություն էր տրվում այն ժամանակ, երբ այլևս դրանից օգտվող չկար: Օրինակ, կաթոլիկները չտարագրելու մասին հրամանը հայտնի դարձավ այն ժամանակ, երբ նրանք արդեն տարագրված էին:

Հուլիսի վերջին տեղահանվեց 40 հոգանոց մի խումբ, որի մեջ էին քաղաքի բարձր խավի ներկայացուցիչները, այդ թվում՝ կաթոլիկ թեմի առաջնորդ Ստեփանոս եպս. Իսրայելյանը, վալու անձնական ծանոթներ ու մտերիմներ: Վալին տպավորություն էր ստեղծում, թե ամեն ինչ անում է, որ այս խումբը անվտանգ տեղ հասնի: Բայց երբ Քյազըմ խան հասան, հայերին հավատացրին, որ նախապես որոշված երթուղին վտանգավոր է և տարան ուրիշ ճանապարհով: Քիչ անց տարագիրներին հրամայում են կառքերից իջնել: Հայերն անմիջապես շրջափակվում են քրդերի ու ժանդարմների կողմից: Նրանց թևերը կապում են, խճուղուց դուրս հանում և սպանում:

Երկու ամսում ոչ միայն Խարբերդ քաղաքը, այլև նահանգի հայաբնակ մյուս քաղաքներն ու գյուղերը դատարկվեցին, դրանցում մնացին միայն հատուկենտ սովյալ որբեր: «Պաշտոնական սպանդանոցներէ դուրս գրեթէ ամեն ցանկապատի տակ, ամեն փոսի, քարերու կամ թուփերու ետեւը, ճամբաներու եզերքը, ամայի տեղերը՝ ամեն կողմ դիակ, կտրուած մարմնոյ անդամներ, փչրուած գանգեր»[1]:

ՄԱԼԱԹԻԱ

Մինչև Մեծ եղեռնը Մալաթիայի սանջակում բնակվում էր 25.000 հայ, որից քաղաքում՝ 15.000–ը: 1914 թ. աշնանը գաղանաբար սպանվում է տեղի մութեսարիֆը՝ կոտորածների նախապատրաստության վերաբերյալ Կ. Պոլսից ստացված հրահանգի մասին հայերին տեղյակ պահելու համար:

1915 թ. փետրվար–մարտ ամիսներին Զիֆթլիկ և Մամուրան վայրերում ոչնչացվեցին ճանապարհ կառուցող 1500 հայ զինվորներ:

Մարտի 10–ին սկսվեց զենքերի հավաքումը: Հայերը հանձնեցին ունեցած բոլոր զենքերը, ոմանք անգամ 20 ոսկով թուրքերից զենք գնեցին ու տվեցին: Ապրիլին ձերբակալվեց 80 մտավորական: Նրանց բոլորին սպանեցին բանտում: Մայիսին քաղաքի մոտակայքում չեթեները ոչնչացրեցին Խարբերդի մտավորականության քարավանը: Հունիսին իշխանությունների ձեռքն է ընկնում տեղի դաշնակցականների ցուցակը և սկսվում է նրանց ձերբակալությունը: ՀՅԴ և Հնչակյան կուսակցության 350 անդամներ գնդակահարվում են նույն ամսվա 10–ին:

Այդ օրերին զինաթափվում ու Փունար Բաչի վայրում ոչնչացվում է ևս 1200 հայ զինվոր, 500 հոգու էլ գնդակահարում են Օրդուզ գետի ափին:

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 391

Հունիսի 30-ին սկսվեց Մալաթիայի հայության տարագրությունը: Առաջին քարավանը կոտորվեց Եփրատն անցնելիս, ինչպես նաև Սուրուճում և Դեր Զորում: Երկրորդ քարավանը ջարդվեց Ֆուրնջըլարի կիրճում: Նույն օրերին Դեյիրմեն դերեսի ձորում և Ուրֆայի շրջանում ոչնչացվեց աղբյամանցիների մեծ մասը: Մալաթիացիների երրորդ քարավանը ոչնչացվեց Ֆուրնջըլարի ճանապարհին:

1916 թ. նոյեմբերի 3-ին Թալեաթն այցելում է Մալաթիա և տեսնում, որ քաղաքում հայ բոլորովին չի մնացել: Նա հանձնարարում է ոչնչացնել ջարդերի վերաբերյալ Կ. Պոլսից ստացված բոլոր փաստաթղթերը: Հրեշը կարգադրեց ջարդել նաև մահմեդականացված հայերին, որոնց ոչնչացրեցին Գյոչենեի մերձակայքում:

Սպանում էին ամենավայրենի եղանակներով, պատմում է Մարիա Յակոբսոնը, օրինակ, «ցից մը կը գամեն գետնին, ցիցին գլուխը կը տաշեն կը սուրցնեն, երիտասարդը կը նստեցնեն վրան, երկու ուսերէն կը չոքեն, չարչարանքով կը մեռցնեն, այդպէս ցցուած կը թողուն գետնին»[1]:

Մալաթիա–Եփրատի կիրճ գիծը ստացավ Կանլը դերե (Արյան ձոր) անունը: Այդ ձորում հայերի արյունը գետ կազմեց: Այստեղ գործադրվեցին սպանության ամենադաժան եղանակները: Ժանդարմը նկատելով, որ մի հայ կին ոսկի կուլ տվեց, անմիջապես թրատում է նրան ու ոսկին հանում: Այս և նման գազանություններն օրինակներ չէին, այլ սպանության կերպ, մոլեռանդ մարդասպանների գործողությունների եղանակ:

Հայ բժիշկ Ա. Ճեպեճյանը 1916 թ. սեպտեմբերին լինում է Մալաթիայում ու գրում. «Այստեղ ալ հոս-հոն կը հանդիպէինք հայ գաղթականներու: Դէպի Բալու մեր ճանապարհին առաջին կանգառը եղավ Խապուսէ հայկական գիւղը՝ ամբողջովին պարպուած... Մնացած էին հինգ ընտանիք միայն... Այս կողմեր հարիւրաւոր նման հայ գիւղեր կան, բոլորը դատարկ, բնակչութիւնը տեղահան»: Խոշմաթ հայկական գյուղի 300 տնից մնացել էր 4-5 ընտանիք: «Քիւրտ տարագիրները փլած էին բոլոր տունները»[2]:

Հոկտեմբերի սկզբին նա մեկնում է Բալու. «Ինչ սրտաճմլիկ տեսարաններ... ամեն տեղ աւեր, տուներ՝ քիւրտ գաղթականներով լեցուն: Փողոց պառկող ու հոն մեռնողներ շատ... Քաղաքը թէ՛ աւերակ, թէ՛ ալ հրդեհուած... ամեն կողմէ դէպի հարաւ կու գան գաղթականներու խումբեր անդադրում: Ա՛լ հիւանդութիւն, կեղտ, աննկարագրելի թշուառութիւն»[3]:

---

[1] **Ճեյքըփսըն (Յակոբսոն) Մ.**, Օրագրութիւն, 1907-1919, Խարբերդ, Պէյրութ, 1979, էջ 238

[2] «Բժիշկ Ճեպեճեանին օրագիրը», Պէյրութ, 1986, էջ 69

[3] Նույն տեղում, էջ 69-70

1915-ի ջարդերի նախօրյակին համանուն կազայում բնակվում էր 16–17 հազար հայ, որից մոտ 10.000-ը՝ քաղաքում:

Ապրիլի 30-ին սկսվեցին ձերբակալություններն ու ձերբակալվածների ոչնչացումը: Մայիսին տեղի ունեցան բռնագրավումներն ու խուզարկություն-ները: Զենք փնտրելու անվան տակ Թուրքերը քանդեցին անգամ հայկական գերեզմանները, ավերեցին Մայր եկեղեցին և վարժարանը: Հայ մտավորական-ներին մեկ ամիս շարունակ խոշտանգելուց հետո, հունիսի 6-ին ոչնչացրեցին Եփրատի ափին՝ Կապան-Մաղեն քաղաքի մոտակայքում գտնվող Լևենկի ձորում:

Արաբկիրցիների առաջին քարավանը քաղաքից հանվեց հուլիսի 18-ին և ուղարկվեց Մալաթիայի ուղղությամբ: Հոկտեմբերին գավառակում այլևս հայ չէր մնացել: Տեղահանվեցին անգամ մահմեդականացված հայերը: Այստեղ ևս սկզբում տարագրության չենթարկվեց միայն արհեստավորների մի փոքր խումբ: Արաբկիրցիների մեծ մասը կոտորվեց, քաղցից ու համաճարակներից մեռավ Մալաթիայի և Եդեսիայի կողմերում Ռաս ուլ-Այնում և Դեր Զորում:

Քաղաքաբնակների հետ գրեթե միաժամանակ սկսեցին բռնագաղթեցնել նաև գյուղաբնակ հայերին: Իչնել գյուղի բոլոր տղամարդկանց ժանդարմները տարան լեռները և կոտորեցին: Երբ ժանդարմները գյուղ վերադարձան, կանանց հարցին պատասխանեցին, թե նրանց ամուսինները սպանվել են: Շատ գյուղերում հայերի ոչնչացման պարտականությունը դրված էր բանտերից ազատված հանցագործների, չեթեական հրոսակների վրա:

«Բազմաշենը,- գրում է Դևիսը,- ավերակույտի էր վերածվել: Նա մոտ 300 տուն ունեցող հայկական գյուղ էր, ամեն տնից գոնե մեկը գտնվում էր Ամե-րիկայում: Այժմ Բազմաշենում երկու ընտանիք էր մնացել, որոնց թողել էին սպասարկելու տեղահանությունն իրականացնող ժանդարմներին»[1]: Ոչ մի տան վրա անգամ դուռ ու լուսամուտ չէր մնացել, շատ տներ փուլ էին եկել: «Փո-ղոցներում միայն մի քանի քաղցած կատու էր թափառում»: Խուլագյուղում նույնպես հիմնականում հայեր էին բնակվում: Այս գյուղում ևս շուրջ 300 տուն կար: «Մենք անցանք անմարդ փողոցներով, որոնք լցված էին աղտեղու-թյունով... Այդ գյուղն էլ էին քարուքանդ արել, բացի 5-6 հոգուց՝ մնացածին աքսորել էին»: Մի քանի օր անց այդ գյուղերը բնակեցվեցին մուհաջիրներով:

«Եղեգիի կողքի գյուղի եկեղեցու մեծ զանգը ... թաղվել էր գավիթի փլա-տակների տակ: Կրոնական մոլեռանդությամբ համակված մահմեդականները որոշել էին բնաջնջել ոչ միայն քրիստոնյա ազգաբնակչությանը, այլև վերացնել այն ամենը, ինչ քաղաքակրթությամբ էր ստեղծվել»[2]: Նույն ավերածու-թյուններն էին Հուսեյնիկ, Մորենիկ, Խարբերդ-Սերայ, Վ. Մեզիրե, Քեսրիկ, Եղե-գի, Սուրսուրի, Թաղեմ, Խոյլու, Շենթիլ, Կարմրի, Գեղվանք, Գայլու, Վարդաթիլ, Փերչենճ, Երդմնեք, Մորեյ, Գոմք, Հող, Հաբուսի, Հնձվոր, Հին Ագարակ, Զոր եղ,

---

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 165:

[2] Նույն տեղում, էջ 165-166:

Վիզիան, Քեորբե, Հակոբ Մեղիրե, Ծառուկ, Հարսեկ, Բերդակ գյուղերում: Խոյլուց գյուղի հայերից հրաշքով փրկված մի կին պատմել է, որ իրենց գյուղացիներին քշեցին քրդաբնակ Քուրդեմլիք գյուղը ու բոլորին հրացանազարկ արեցին: Նախճիրի վայրում Դևիսը տեսել է բազմաթիվ դիակներ, որոնց մի մասը ողջակիզված էր[1]:

Դիվանագիտական մի փաստաթղթում կարդում ենք. «Ճանապարհներին թափված էին տղամարդկանց դիակներ, իսկ Արղուն գյուղի մոտ՝ նաև կանանց դիակներ: Քարավանը 6-րդ օրը հասնում է քրդաբնակ մի գյուղ: Ժանդարմները պահանջում են փող և զարդեղեն: 4-րդ օրը խլեցին սպիտակեղենը, իսկ Դիարբեքիր հասնելուն պես՝ եղներն ու ձիերը, տարան մի կնոջ և երկու աղջկա: Քարավանը դեռ քաղաքի պարիսպների տակ էր, երբ թուրքերը տարան նաև երեխաներին, իսկ երեկոյան հարձակում գործեցին, և հայերը ամեն ինչ թողնելով փախան՝ ով որտեղ կարող էր: Այնուամենայնիվ, գիշերը փախցրին ևս մի խումբ կանանց ու աղջիկների: Հաջորդ քարավանին ուղղակի քշեցին հարավ, տարագրյալները ընկնում էին քաղցից ու ծարավից: Ամեն օր քարավանը հարձակման էր ենթարկվում: Մի կնոջ, որը դիմադրում էր, կամրջից ցած նետեցին: Մարդինի մերձակայքում քարավանը ութ օր պահեցին դաշտում բորբ արևի տակ: Հայերին ծաղրում ու վիրավորում էին ամենատարբեր եղանակներով, օր չէր անցնում առանց առևանգման ու բռնաբարության: Ռաս ուլ-Այնի մերձակայքում երեք խոշոր ամբարներ լիքը լցված էին դիակներով: Հաճախ էին հայերին առաջարկում կամ հարկադրում ընդունել իսլամ: Բայց նրանք համերաշխ մերժում էին»[2]:

* * *

Թե ի՞նչ տեղի ունեցավ տարագրված խարբերդցիների հետ, իմանում ենք Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջ. Ջեքսոնի 1918 թ. մարտի 4-ի տեղեկագրից, որը կրում է «Բարբարոսություններ հայերի հանդեպ» անունը: «...1915 թ. հուլիսին,- գրում է հյուպատոսը,- երբ ջերմաչափը ցույց էր տալիս 105-115 աստիճան, խարբերդցի կանանց ու երեխաների մի խումբ, ավելի քան հազար հոգի, հասավ Դիարբեքիրից հարավ՝ Վերանշեհեր: Նրանց հանձնեցին քրդական մի ոճրախմբի: Քրդերը խմբից առանձնացրեցին գեղեցիկ կանանց, աղջիկներին ու երեխաներին: Կանայք դիմադրեցին, ինչը «կատաղեցրեց քրդերին, և նրանք այդ դժբախտներից չատերին սպանեցին», մյուսների հագուստները խլեցին ու ստիպեցին «ճանապարհը շարունակել մերկ»: 300 հոգի Ռաս ուլ-Այն հասավ բոլորովին մերկ, գզգզված մազերով, որը «նրանց վայրենիների տեսք էր տվել»: Նրանք 6 օր անընդհատ քայլել էին կիզիչ արևի տակ, նրանց մաշկը այրված էր, ձիթապտղի գույն էր ստացել և լայն շերտերով պոկվում էր: Ջեկսոնն անձամբ էր նրանց տեսել: Նա գրում է. «Կանանցից չատերն

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 167-168:
[2] R 14093 Ab. 24668.

սպիներով և վերքերով էին ծածկված: Դրանք Թուրքերի հասցրած սոսկալի հարվածների հետևանք էին»[1]:

Խարբերդի ջարդերի ամենահավաստի աղբյուրներից է Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուպատոս Լեսլի Դևիսի 132 էջանոց տեղեկանքը և զանգվածային կոտորածների վայրերի նրա տեղեկագրային նկարագրությունները, որոնք հայտնաբերվել են Միացյալ Նահանգների պետական արխիվներում ու Վաշինգտոնի վարչակազմի արձանագրություններում: Այդ եզակի փաստաթղթերը, վեցամյա արխիվային հետազոտություններից հետո, գտել և հրապարակել է Սյուզան Ք. Բլերը:

Դևիսը նաև լուսանկարել է հայ տարագիրներին ու կոտորածի վայրերը:

Պետական դեպարտամենտին Դևիսի ուղարկած տեղեկագրերում Խարբերդի վիլայեթն անվանվել է «Սպանդի նահանգ», որովհետև կայսրության չատ քաղաքներից ու գյուղերից տեղահանված ու դեպի հարավ աքսորված հայերի մեծ մասը բռնի մահով մեռնում էր Մամուրեթ ուլ-Ազիզի վիլայեթի սահմաններում:

Նա գրում է, որ «այստեղ որևէ մեկի համար գաղտնիք չէր, որ խոսքը այնպիսի ճանապարհորդության մասին է, որի նպատակը մահն է»:

«...Պետական դեպարտամենտի մի քանի արձանագրություններից գիտեի,- գրում է Բլերը,- որ Դևիսն այցելել է կոտորածի վայրերը, լուսանկարներ արել, սակայն երկար ու հանգամանալից հաշվետվության հայտնաբերում մեծ անակնկալ է... Ես ցնցված էի»:

Բլերի ուսումնասիրության թեման ամերիկյան բարեգործությունն էր, սակայն ծանոթանալով Դևիսի տեղեկագրին, լուսանկարներին ու դրանց կից մյուս փաստաթղթերին, նա մի կողմ դրեց նախկին թեման՝ այդ եզակի արխիվը ուսումնասիրելու ու հրատարակելու համար[2]:

Որքան խիզախ էր Դևիսը, նույնքան էլ անվախ է Բլերը: «Սպանդանոց գավառը» «Washington Post»–ում տպագրելուց հետո (1989 թ.) նա իր ընտանիքով բնակվում է անհայտ հասցեներում, հետապնդվում Թուրքերի կողմից: Դրան ԱՄՆ-ի համապատասխան ծառայությունների արձագանքը եղան՝ «չենք կարող ապահովել ոչ Բլերի և ոչ էլ նրա գրքի հրատարակչի անվտանգությունը»:

«The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide. 1915-1917» գիրքը նույնպես հրատարակվեց 1989 թ. Նյու Յորքում: «Սպանդի նահանգը» անունը կրող այդ գիրքը հայերեն լույս է տեսել Երևանում, 2001 թ., Գրիգոր Ջանիկյանի թարգմանությամբ:

Գրքում զետեղված են Բլերի ներածությունը, Դևիսի տեղեկագրերի գգալի մասը, Խարբերդի վիլայեթի դպրոցներում ու հիվանդանոցում աշխատող ամերիկացի միսիոներների վկայությունները, Խաղաղության համաժողովում ամերիկյան պատվիրակության համար միսիոներների պատրաստած զեկույցները:

Գրեթե 70 տարի Դևիսի տեղեկագիրը մնացել էր Պետական դեպարտա-

---

[1] ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/105:

[2] **Մորգենթաու Հ.**, նշվ. աշխ., էջ 372:

մենտի թղթապանակներում, իսկ լուսանկարները, մոռացված, լցված էին կոշիկի տուփում: Պատճառը տարօրինակ է: Պարզվում է, որ ոչ միայն Գերմանիայում, այլև ԱՄՆ-ում այդ տարիներին խստագույնս արգելված էր նման նյութերի հրապարակումը:

Լայն հասարակայնությանն անծանոթ էր Դևիսի գործունեության նաև մի այլ բնագավառ: Նա ԱՄՆ-ի հյուպատոսությունում թաքցրել է 80 հայի՝ նրանց փրկելու համար: «Դժվար էր կերակրել այդ բոլոր մարդկանց,- հիշում է Դևիսը,- քանի որ այն ժամանակ չունեի ծառաներ... Ժամանակ էր լինում, երբ ստիպված էի ինքս չուկա գնալ ու նրանց համար հաց գնել: Դա պետք է արվեր շատ զգուշությամբ, որպեսզի ուշադրություն չգրավեր: Երկար ժամանակ չէի համարձակվում իմ հայ դավադներին (պահակներին) չուկա կամ ուրիշ տեղեր ուղարկել: Այդպիսով դերերը փոխվում էին: Փոխանակ նրանք ինձ պաշտպանեին, ես էի պաշտպանում նրանց: Որոշ ժամանակ անց ծառայության վերցրի մի երիտասարդ թուրքի, որին մտադիր էի դավադի պաշտոն տալ, եթե վստահություն ներշնչեր: Սակայն նա այնքան հարցասեր էր, և հաճախ էր թաքուն հայացքներ նետում ինձ մոտ եկող հայերի վրա, իսկ տունն ու պարտեզը լիքն էին հայերով, որ ստիպված էի հնարավորին չափ շուտ ազատվել նրա ծառայություններից»:

Դևիսն այդ հայերից շատերին օգնեց փախչել Դերսիմի քրդերի չինած թաքուն ճանապարհով, որն ստացել էր «ստորերկրյա երկաթուղի» անունը: Դա անցնում էր Եփրատով և տանում դեպի հյուսիսային լեռնոտ շրջաններ:

Լ. Դևիսը դեռ ապրիլի 19-ի տեղեկագրում նշում էր, որ թուրքերը պատրաստվում էին «հայերին կոտորել»:

Նա առաջին արտասահմանցին էր, որ գրեց, թե այն ինչ սկսվել է Թուրքիայում՝ նոր միջոց է «հայ ժողովրդին բնաջնջելու»: «Խոսքը ամբողջ ազգաբնակչության բռնագաղթելու մասին է», այն էլ բոլոր վեց նահանգներից, որոնք «Հայաստանն են կազմում»: Բռնագաղթի ենթակա են բոլոր հայերը: «Մարդկության պատմության ընթացքում, հավանաբար, նման զանգվածային տեղահանություն չի եղել»: Նման ծավալի տեղահանություն երբևիցե ոչ միայն չի իրականացվել, այլև չի մտահղացվել[1]:

«Ջարդը,- գրում է Դևիսը,- որքան էլ սարսափ հարուցի բառը, բռնագաղթի համեմատությամբ ավելի մարդկային է: Կոտորածներից հետո թերևս ոմանք ողջ մնան, մինչդեռ Թուրքիայի նման երկրում համընդհանուր տեղահանությունը նշանակում է յուրաքանչյուրի համար թեև դանդաղ, բայց թերևս անհամեմատ ահավոր մահ: Ես չեմ հավատում, որ հարյուրից, հազարից մեկը անգամ ողջ մնա»[2]: Ակնհայտ է, թե որքան համահունչ է Դևիսի տրամաբանությունը Լեփսիուսի, Մորգենթաուի, Բրայսի, Թոյնբիի, Մանդելչտամի կարծիքների հետ, ինչը նույնպես հաստատում է այն միտքը, թե «Բռնագաղթը բնաջնջման ամենադաժան եղանակն է»:

---

[1] ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/269:
[2] Նույն տեղում, 4016/105:

Սա զգացմունքային ակունքներ ունեցող մտահանգում չէր, այլ՝ իրավիճակի քաջատեղյակությունից բխած եզրահանգում, որն ամբողջությամբ հաստատվեց Մեծ եղեռնի ընթացքով:

Հայերին քչում էին Միջագետք, որտեղ այն ժամանակ «չէր կարող ապրել ոչ մարդը, ոչ էլ անասունը»: Ամռանը այդ տարածքներով անցնելը դժվար էր անգամ լավ նախապատրաստվածների համար: «Ճանապարհի մեծ մասը անցնում է տոթ, կիզիչ անապատով, ջուր, բուսականություն գրեթե չկա»: Ուրֆա հասնելու համար պահանջվում էր ոչ պակաս քան 15 օր անընդհատ քայլել: Ճանապարհը գրեթե անմարդաբնակ է, եղած մի քանի բնակավայրերում անհնար էր «թեկուզ 20-30 հոգու համար ուտելիք ճարել», ո՞ւր մնաց՝ հազարների համար:

Դևիսը, ելնելով սեփական փորձից, գրում է. «Ամենալավ պայմաններում անգամ նման ճամփորդությունը ահավոր տառապանք է... Մինչդեռ բռնագաղթվողների, այսինքն՝ հայերի մեծ մասի համար, դա ստույգ մահ է»[1]: Խարբերդի վիլայեթում «հազիվ 25 սայլ» գտնվի, մի քանի տասնյակ այլևայլ սայլեր, ավանակներ և ուրիշ ոչինչ, այսինքն՝ գրեթե «բոլորը ստիպված էին լինելու հետիոտն գնալ»:

Բացի դա, կասկած լինել չէր կարող, որ քրդերը հայերին ճանապարհին հաչվեհարդարի «ենթարկելու հրահանգ էին ստացել»: Դևիսը մարգարեանում է. «Տղամարդկանց կսպանեն, ամենագեղեցիկ կանանց ստրկության կտանեն, մյուսներին երեխաների հետ անպայման կթողնեն, որպեսզի մահանան»[2]:

Այդ մտահոգություններին գումարվում էին լուրերը ուրիշ նահանգներից արդեն տարագրվածների ողբերգությունների վերաբերյալ, ու նաև այն, որ վալին կտրականապես հրաժարվում էր թույլ տալ, որ քարավաններին ուղեկցեն օտարերկրացիներ:

Պետական դեպարտամենտին 1915 թ. հուլիսի 11-ին ուղարկած տեղեկագրում Դևիսը կատարում է հետևյալ ընդհանրացումը. «Սա ... ամենայն մանրամասնությամբ նախապատրաստված, ամենաարդյունավետ սպանդն է, որը երբևիցե տեղի է ունեցել այս երկրում»[3]: Հուլիսի 24-ին նա տեղեկագրեց. «Այլևս գաղտնիք չէ՝ հատուկ ծրագրով նախատեսված է բնաջինջ անել հայերին որպես ցեղ, ազգ, և այդ նպատակն այնպիսի սառնասրտությամբ ու բարբարոսությամբ, ավելին՝ արդյունավետությամբ էր իրագործվում, որ սկզբում գլխի չէինք ընկնում, թե ինչ է կատարվում»[4]: «Լիովին հաստատվել է, որ մինչև այժմ այստեղից բռնագաղթողները քաղաքից դուրս գալուց մեկ-երկու օր անց մորթվել են կամ որևէ այլ ձևով սպանվել, ընդ որում՝ դա արել են ոչ միայն ճանապարհին նրանց սպասող քուրդ հրոսակախմբերը, այլև, ու հիմնականում, աքսորականներին ուղեկցող ոստիկաններն ու չեթեները...»[5]:

---

[1] *ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/105:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, 4016/122:*

[4] *Նույն տեղում, 4016/269:*

[5] *Նույն տեղում:*

Դևիսը այս տեղեկատվությունում նորից չեչտում է. «Չեմ կարծում, որ համաշխարհային պատմության մեջ երբևէ իրագործվել է ավելի համընդհանուր ու արմատական նախճիր, քան այն, ինչ տեղի է ունենում այժմ մեր տարածաշրջանում և ոչ էլ հավատում եմ, որ մարդկային ուղեղը ի զորու է հղանալ ավելի ահավոր ու ողբերգական ծրագիր»: Այն հանգամանքը, որ պաշտոնական հրամանը հայերին այս նահանգներից լոկ տեղափոխելու մասին է, «արտաքին աշխարհին որոշ ժամանակ կարող է թյուրիմացության մեջ գցել», մինչդեռ իրականում՝ այն ինչ կատարվում է՝ «ամենադաժան սպանդն է»[1]: Կատարվածը սպանդ կարող էր կոչվել նաև այն դեպքում, եթե թողնեին, որ տեղահանվածները ճանապարհին մեռնեին: Իրականում նրանց մեծամասնությունը կառավարության հրամանով «ուղղակի նախճիրի է ենթարկվել»: Դա «համազգային եղեռն է»:

Ապա նա ներկայացնում է այդ եղեռնի տեխնոլոգիան: Դա նախապատրաստվել էր ամիսներ շարունակ: Նախ «հեղափոխական դավադրություն հրահրելու համար» կալանավորեցին մարդկանց մի խմբի: Հետո մի քանի ռումբ գտան ու ձերբակալությունները շարունակեցին: Ամենադաժան խոշտանգումների միջոցով բանտարկվածներից «կեղծ խոստովանություններ կորզեցին», ստիպեցին զրպարտելու լրիվ անմեղ մարդկանց: Սկսվեց զենքերի հավաքումը: «Մարդկանց տանջեցին այնքան, մինչև ընդունել են, որ թաքցրած» հրազեններ ունեն, չնայած այդպիսիք չեն ունեցել: Ապա ձերբակալեցին տղամարդկանց: Հաստատ էր մի բան, ձերբակալված հայերը «ոչ մի հեղափոխական դավադրության չեն մասնակցել»: Միաժամանակ ձերբակալեցին բոլոր հեղինակավոր հայերին, ապա քաղաքից հանեցին ու սպանեցին: Ճանապարհ կառուցելու պատրվակով ու պատճառով հավաքեցին ու տարան հայ զինվորներին, որոնց նույնպես կոտորեցին:

Այս ամենից հետո «բռնագաղթին հրամանին քիչ թե շատ լուրջ դիմադրության մասին այլևս խոսք լինել չէր կարող: Բռնագաղթն այնքան խորամանկ էր ծրագրված, որ ոստիկաններն ու ժանդարմները դա իրականացրեցին առանց իրենց անգամ չնչին վտանգի ենթարկելու: Այսպիսով մի քանի հազար ծառայողներ կարողացան» Խարբերդի տարածաշրջանից 15.000–20.000 հայ արտաքսել[2]:

Եվ ոչ միայն արտաքսեցին, այլև ոչնչացրեցին, որովհետև «կառավարության նպատակը ոչ թե աքսորելն էր, այլ՝ ոչնչացնելը»: Տարագրվածների որոշ մասին ողջակիզեցին Խարբերդի ու Դիարբեքիրի միջև ընկած տարածքներում, ուրիշներին պարզապես գնդակահար կամ սրախողխող արեցին: Մյուսներին արտոնեցին՝ «դանդաղ, բայց անխուսափելի վախճան, որը վրա էր հասնում չաբաթների ու ամիսների տառապանքից հետո և ամենավատթարն էր»[3]:

Երբ հանդիպում ես 70–80 տարեկան կույր, հիվանդ ծերերի, անպաշտպան կանանց ու երեխաների, որոնց քշում են դեպի հաստատ մահ, անհնար է դա արդարացնող որևէ պատրվակ գտնել:

---

[1] ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/269:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Դևիսը Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոսն էր 1914 թ. ապրիլի 24-ից մինչև 1917 թ., երբ Միացյալ Նահանգները պատերազմի մեջ մտավ: Պետական քարտուղարին և Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուին հասցեագրած նրա տեղեկագրերում ոչ միայն ներկայացված են թուրքերի ոճրագործությունների «սահմռկեցուցիչ մանրամասները»: Նա նաև հորդորում, խնդրում էր «իր երկրի կառավարության անունով միջամտել, դադարեցնել արհավիրքը: Նա խիզախություն ունեցավ չրջելու սպանդի վայրերը, թուրքական իշխանություններից խնդրել, անգամ նաև պահանջել դադարեցնելու հայերի հոչոտումը»: Նա «հիւպատոսարանը ապաստարանի վերածեց, տարիներով մէկ քանի տասնեյակ հայ պատսպարեց, իսկ որուն որ կրցաւ, Տերսիմի քիւրտերին կաչառելով Արեւելեան Հայաստան փախցրեց»: Նա 1917 թ. գրեց Խարբերդում երեք տարվա իր աշխատելու հաշվետվությունը, որը «դիւանագիտական փաստաթուղթ ըլլալէ աւելի ականատեսի անողոք մեղադրական է»: Նա անհերքելի փաստերով ու մանրամասնություններով ներկայացնում է «երիտթուրքերուն յղացած, նախաձեռնած ու իրագործած այն ոճրագործութիւնը», որը կոչվեց առաջին ցեղասպանություն: Հաշվետվությունը, որն անվանված է «1914-1917 թվականներին Խարբերդի ամերիկյան հյուպատոսարանի գործունեության մասին», կազմված է 132 մեքենագիր էջից:

Տեղեկագրում տեղ գտած զեկուցագրերը 1918 թ. ներկայացվեցին Խաղաղության համաժողովին: Նա բարձր գնահատականի արժանացավ դիվանագիտական շրջանակներում, որպես «բացառիկ արժեքավոր և հետաքրքիր հաշվետվություն»[1]: Բացառիկ նշանակություն ունեն նաև այն լուսանկարները, որ կատարել է են Դևիսն ու, մասնավորապես, Կարմիր խաչի բժիշկ Վիլֆրեդ Պոստեն, որոնք ուղարկվել էին պետքարտուղար Ռ. Լանսինգին:

Այդ լուսանկարների ստեղծման մասին Խարբերդում գործող կաթոլիկ միսիոներ Հ. Ռիցը պատմում է, որ դրանց հեղինակը երկու ամերիկացիներ էին: Դրանցից մեկը Դևիսն էր: Նրան լուրեր էին հասել, որ Խարբերդից հարավ ձգվող ճանապարհին «բռնագաղթվածները զանգվածային ջարդերի են ենթարկվել»: Համոզվելու համար, որ այդ լուրերը ճիշտ են, Դևիսը որոշում է սեփական աչքերով տեսնել դրանք: Եվ նա իր հայրենակցի ուղեկցությամբ անցնում է տարագրության ճանապարհով, այսինքն՝ գնում են Գյոլջուկ (Ծովք) լճի ափերով: Նրանք համոզվում են, որ լճի «ափերը սպանդանոցի էին վերածվել... Մարդկանց սպանել էին սվիններով ու մահակներով, հագուստները նախօրոք հանել էին»: Այդ հագուստները «դեզերով վաճառում էին Մեզրեի չուկայում»: Դիակների հսկա կույտեր կային բոլոր կիրճերում: «Խոցոտված, բզկտված, այլանդակված, ճեղքված որովայններով... Բազմաթիվ կանանց մարմինների դիրքն ու վիճակը ուղեկցող զինվոր-ոստիկանների այլասերվածության և անմարդկայնության աղաղակող մեղադրական էին»: Դիակների մի մասը այրված էր, որպեսզի, նախ, կարողանային՝ գտնել հայերի կուլ տված ոսկեղենը և ապա խուսափեին համաճարակից: Չնայած դրան, մերձակա գյուղերի բնակիչների մեծ մասը համաճարակի զոհ դարձավ: Քրդական մի քանի գյուղեր

---

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 20-21

«անտանելի նեխահոտից ու գարշահոտությունից» դատարկվել էին:

Դիակները հագուստից զուրկ էին: Մահմեդականները սպանելուց առաջ մարդուն մերկացնում էին, որովհետև մեռած մարդու վրայից հանված հագուստը հագնելը Ղուրանն արգելում էր:

Վ. Ռիցը Խարբերդի մերձակայքի ամայի վայրում տեսել էր մի դիակ: «Շներն ու անգղները ամբողջովին հոշոտել էին մարմինը, այնպես որ հնարավոր չէր որոշել, թե ով է» այդ մեռածը: Գլուխն անջատված էր մարմնից: Հասկանալի էր՝ թուրքը բռնաբարելուց հետո կնոջ գլուխը կտրել էր: «Այս երկրի հովիտներից ու դաշտերից անհետացող համր վկաները,– բացականչում է Վ. Ռիցը,– դեռևս աղաղակում են Աստծուն բազում տեսարանների աննկարագրելի սարսափների մասին, աղաղակում են դիվային գործնականության ու անասնականության զուգակցման դեմ, որով չարունակում է առաջնորդվել Թուրքիան»[1]:

Խարբերդում կատարված լուսանկարները որպեսզի թուրքական իշխանությունների ձեռքը չընկնեին, թաքցրել էին ջրհորում և, բնականաբար, որակի կորուստ ունեցել էին: Դրանք «ցնցոտիներով տեղահանվածների» լուսանկարներ էին: Հիվանդ տեսքով մի տղա կանգնած է «հյուծված, տառապած, մարդկանց մեջտեղում», մարդկային զանգեր, խառնիխուռն պառկած, իրար վրա ընկած դիակներ, հագուստների ծվեններ ... լճափին նեխող կմախքներ, ավազից դուրս ցցված ձեռքեր ու ոտքեր, սևացած մաշկ, հողմնահարված մարմին»[2]:

Ամերիկացի միսիոներ Ատկինսոնը Գյոլջուկ կատարած երկրորդ ուղևորության ժամանակ ուղեկցել է Դևիսին և ստացած տպավորությունները հանձնել Թղթին, որը ներկայացվեց Փարիզի Խաղաղության համաժողովի (1919 թ.) ամերիկյան պատվիրակությանը: Այդ ուղևորության մասին կարդում ենք, որ նրանք նոր էին Խարբերդից դուրս եկել, երբ տեսան ճանապարհին թափված դիակներ: Լեռան ստորոտում «դրանց թիվը չափազանց մեծ էր»: Ատկինսոնի հաշվումներով՝ լճափին «հինգից տասը հազար ամբողջովին մերկ դիակներ» է տեսել (մեծ մասամբ՝ կանանց, երեխաների): Կանանց դիակները կտրտված էին, նրանք սպանվել էին տարբեր եղանակներով: «Մի մասին գնդակահարել են, մյուսին՝ գլխատել, երրորդին՝ դանակով մորթել կամ կացինով անդամահատել»: Խորխորատում չորս-հինգ շարքով իրար վրա թափված դիակներ կային: Մերձակա գյուղերի քրդերը դիակների մի մասն այրել էին:

Դևիսի Գյոլջուկ երրորդ ուղևորությունը կատարվել է հյուպատոսարանի թարգման Կարապետ Պետրոսյանի հետ, որը հետագայում գրեց այդ մասին: Երբ Դևիսը լուր է ստանում, թե տարագիրներին քաղաքից հանելուց հետո սպանել են, որոշում է ստուգել այդ լուրի ճշտությունը: Հենց քաղաքից դուրս են գալիս՝ տեսնում են ճանապարհին թափված դիակներ, իսկ 15 մղոն հեռու հանդիպում են «հազարավոր խողխողված տղամարդկանց, կանանց ու երեխաների»:

---

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 55-58:

[2] Նույն տեղում, էջ 62:

Ճանապարհներին թափված դիակների հարցը մշտապես անհանգստացնում էր Խարբերդի իշխանություններին՝ այնքան դրանք շատ էին:

Վալին հետևյալ խիստ հեռագիրն ուղարկեց Մալաթիայի մութեսարիֆին. «...Դարձեալ շատ դիակներ են գտնուում ճանապարհներու վերայ... խստօրէն պիտի պատժուեն դրանց համար մեղաւոր պաշտօնեաները... ՆԳ նախարարութիւնը հրամայում է մեծ ուշադրութեամբ թաղել սահմաններում եղած բոլոր դիակները»: Պահանջվում էր այդ գործում օգտագործել «բաւարար թուով ոստիկան-զինուորների և պաշտոնյաների[1]:

Ռից Մերին պատմում է, որ երբ հեռանում էին Թուրքիայից և անցնում էին Խարբերդի դաշտով, տեսան մեծաթիվ հողե թարմ թմբեր, որոնք «բերներերան դիակներով լցված խանդակներ էին»: Շատերից դուրս էին ցցված ոտքեր ու ձեռներ: Լեռնային ճանապարհներին հաճախ էին հանդիպում «անդամահատված դիակներ, չափազանց շատ գանգեր, գանազան ոսկրամասեր»: Գրեթե բոլոր դիակները մերկ էին, դեմքով՝ գետնին: Գարշահոտություն էր: Կույսի կիրճի խորխորատներում «անթիվ անհամար դիակներ կային, որոնք նետված էին բարձունքից»: Հովիտներից մեկը «կարծես ռազմադաշտ լիներ: Ամբողջովին ծածկված էր դիակներով»[2]:

Մի հատկանշական փաստ ևս: Լ. Դևիսը վալիին առաջարկել էր դադարեցնել տարագրությունը: Վերջինս հյուպատոսի մոտ է ուղարկում մյուդիր Ռեշիդին, որն ասում է, թե վալին հնարավորություն կունենա բռնագաղթը դադարեցնել, եթե հյուպատոսը մի նամակ գրի հետևյալ բովանդակությամբ. «Հակակառավարական դավադրության համար մեղադրվող բոլոր հայերն արդեն աքսորվել կամ որևէ այլ կերպ պատժվել են, տեղերում մնացածները հակապետական խռովության չեն մասնակցել, իշխանությունների հանդեպ հանցանք չեն գործել»[3]: Այս առաջարկությունն արվում էր մի ժամանակ, երբ հայերի 80 տոկոսը քշված էր, այսինքն՝ «հանցագործ ու ապստամբ» էր:

150.000 հայի տարագրումն ու ոչնչացումը հիմնավորվում էին հայերի՝ թուրքեր սպանելու 4-5 և իշխանության մարմիններին դիմադրություն ցույց տալու 10-12 աննչան դեպքերով: Վալու ստորագրությամբ հյուպատոսին ուղարկված տեղեկանքում, օրինակ, նշվում էր, որ Սեղրակ անունով մի երիտասարդի փախչելու ժամանակ ժանդարմները Հաբուսի գյուղի մոտ շրջապատում են: Սեղրակը ատրճանակով կրակում և սպանում է մի ժանդարմի և ինքն էլ ընկնում է մյուս ժանդարմների արձակած գնդակներից: Մյուս դեպքը, «Մորենիկի հարևան գյուղում մի խումբ տղամարդիկ թաքնվում են նկուղներում և չեն հանձնվել ժանդարմներին, որոնք եկել էին նրանց ձերբակալելու: Ժանդարմները գյուղը հրդեհում են, և ծուխը երիտասարդներին հարկադրում է թաքստոցներից դուրս գալ: Բանտարկված հայերը, համոզված, որ իրենց սպանելու էին, օգոստոսի 5-ին հրդեհում են բանտը և փորձում են փախչել: Նրանք բոլորն այրվեցին կամ հրացանազարկ եղան:

---

[1] **Անտոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 152-153:

[2] ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 808:

[3] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 152-153:

Ահա՛ Խարբերդի հայության «ապստամբությունը»:

Լ. Դևիսը պատմում է, որ Ծովք լճի մերձակա հովիտներում թափված էին հազարավոր դիակներ: «Խարակների բարձունքից լճի մեջ հարյուրավոր աճյուններ ու ոսկրակույտեր էին երևում»: Դրանք ժանդարմների կողմից ժայռի գագաթներից լիճը նետված հայերի դիակներն էին: Շատ հովիտներում դիակների թիվն անցնում էր հազարից: Մի ծերուկի գանգը քարով փշրել էին և քարը թողել գանգի մեջ: Շուրջն ածխացած դիակներ էին: Երևացին նաև չատ ջարդված գլուխներ, կմախքի ոսկորներ: Ծառերի տակ գետի պես հոսած արյան հետքեր կային: Մի հարթավայրում մեր առաջ «ավազի տակից ցցվեցին 20–30 գլուխներ. ջուրը ավազը քչել տարել էր և դիակները բացվել էին: Ծառերի տակ 10–15 դիակներ կային, չատերը նստած էին մահացել: Դրանք հիվանդներ կամ վիրավորներ են եղել, որոնց թողել են, որ մեռնեն»:

Այդ հովիտները շրջափակված էին բարձրաբերձ, անանցանելի լեռնաշղթաներով: Տարագիրներին լցնում էին հովիտն ու կոտորում: «Յուրաքանչյուր կողմում կանգնած 2–3 ոստիկանն ի վիճակի էր փախուստի ամեն մի փորձ կասեցնել»:

Մի քուրդ Դևիսին պատմել է, որ ժանդարմներն այդտեղ հավաքել են 2.000 հայի և հարևան գյուղերի քրդերի միջոցով կոտորել են տվել: Մասնագետներից ոմանք այն կարծիքին են, թե 1914–1916 թթ. Բաղդադում տարածված որովայնախտի և արնալուծի համաճարակը նաև հետևանք էր Գյոլջուկի ավազանի սպանդի, որովհետև լճից սկիզբ առնող մի գետակ թափվում է Տիգրիս[1]:

Քարավանների բնաջնջումը կատարվել է հետևյալ կերպ: Նախ նրանց թույլ են տվել նշված հովիտներում կամ ուրիշ հարմար վայրում 2–3 օրով վրան խփել: Այդ ընթացքում ժանդարմները բերել են քրդեր, որոնք ժանդարմներից գնում էին քարավանը, ապա հայերին կողոպտում ու սպանում էին:

Ինչպես չատ ուրիշ վայրերում, այստեղ ևս քչերին էին փամփուչտով սպանում, որովհետև փամփուչտը թանկ էր: Ավելի էժան էր մեռցնել սվինով կամ դաչույնով: Հիմնականում ծակում էին որովայնը, կուրծքն ու կոկորդը: Բոլոր կանանց դիակներն ընկած էին մեջքի վրա: Նրանց մարմնի վերքերը վկայում էին, որ դահիճներն իրենց զոհերին սվիններով անմարդկային կտտանքների էին ենթարկել, ամենայն հավանականությամբ՝ կանանց մարմիններում ոսկի են փնտրել[2]:

Լեռնաշղթայի և Գեղվանք գյուղի արանքի դաշտում հազարավոր հայեր էին ջարդվել: Դա ամենախոշոր սպանդանոցներից մեկն էր՝ Մամուրեթ ուլ-Ազիզից ընդամենը 10 կմ հեռավորության վրա: Վալին ինքն է Դևիսին խոստովանել, որ քրդերին ուղարկում է ոչնչացնելու Խայլու գյուղի դիմացի փոքրիկ կղզում ապաստանած հայերին: Սակայն վերջինները նրանց հակահարված են տալիս և չեն թողնում մտնել կղզի: Համագյուղացիներն ամեն գիշեր մակույկով

---

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 171–172:

[2] Ամերիկայի Ա.Ա., Խաղաղության կոնֆերանսի ամերիկյան պատվիրակության փաստաթղթեր, 256 խփ., № 811:

սնունդ են հասցրել: Ի վերջո, հայերը հաջողում են փախչել լեռները, բայց նրանց մեծ մասն այնտեղ ձերբակալվում է:

Ծովք լճի ափին Դևիսը մի օրում տեսել էր 10.000 հայի դիակ: Նա գրում է, որ դա մոտավոր թիվ էր, որովհետև «մեծ թվով զոհեր արդեն ոսկրակույտի էին վերածվել, քանի որ խողխողվել էին ամիսներ առաջ և ամբողջովին քայքայվել: Երբեմն հանդիպում էին նաև թարմ դիակներ, որոնք ուռած էին»:

Դևիսը եզրահանգում է. «...Ամբողջ հայ ժողովրդին բնաջնջելու, վերացնելու դժոխային ծրագրին թերևս ոչ մի վայր այդքան չհամապատասխաներ, որքան Ասիական Թուրքիայի խորքում գտնվող, զառիթափ ափերով ու անելանելի հովիտներով այս խաղաղ լիճը, որը շրջապատված էր վայրենաբարո քրդերի գյուղերով... Թերևս դրա համար ամենահեռավոր վիլայեթների բնակիչներին քարավաններով կարողացան մինչև Մամուրեթ ուլ-Ազիզ հասցնել և Թուրքիայի «Սպանդի նահանգում» բնաջնջել»: Այն, ինչ 1915-ի ամռանը տեղի է ունեցել Գյոլջուկ գեղեցիկ լճի ափին, վեր է երևակայությունից: Տասնյակ հազարավոր հայեր, մեծ մասամբ անմեղ ու անպաշտպան կանայք, երեխաներ, ամենաբարբարոս եղանակներով կոտանքների ենթարկվեցին և լճափի ավազների վրա կոտորվեցին: «Ով քաղաքակիրթ աշխարհում է ապրում, դժվարությամբ կհավատա, որ նման նախճիրներ հնարավոր են»[1]:

«Հայերի մեծ ողբերգությունը»[2] աշխատանքում Հ. Մորգենթաուն գրում է. «Մյուս ահավոր բանը, ինչով աչքի էր ընկնում Մամուրեթ ուլ-Ազիզը, այն խոշտանգումներն են, որոնց ենթարկվել են հայերը երկու ամիս շարունակ: Առանձնապես վայրագորեն են վերաբերվել բարձր դասի կանանց: Ոտքեր, ձեռքեր և մարմնի պատառոտված այլ մասեր մեխել էին տախտակներին, աքցանով քաշել եղունգները, հոնքերն ու մորուքները, ոտնաթաթերին մեխեր խփել, ինչպես պայտում են ձիերին: Ուրիշներին գլխիվայր կախել էին զուգարանների պատերից...»:

Հուլիսի 1-ին երկու հազար հոգուց բաղկացած առաջին խումբն ուղարկվեց Խարբերդից: Նրանք զինվորներ էին, և լուր տարածվեց, իբր նրանց տանում են ճանապարհներ կառուցելու: Սակայն մարդիկ սարսափի մեջ էին: Դա նկատի ունենալով, վալին իր մոտ կանչեց գերմանացի միսիոներին՝ պարոն Մ.-ին և խնդրեց նրան հանգստացնել բնակչությանը, ասաց, որ ինքը ևս սաստիկ վշտացած է մարդկանց այդքան վախեցած տեսնելով: Մեկ օր էլ չէր անցել, որ հայ զինվորներին սպանեցին լեռնանցքում: Երբ թուրք զինվորներն ու քրդերը սկսել են կրակել իրար կապված հայերի վրա, նրանցից մի քանիսին հաջողվել է, օգտվելով մթությունից, փախչել: Հաջորդ օրը ևս երկու հազար հոգու ուղարկեցին Դիարբեքիրի ուղղությամբ: Սրանց մեջ էին նաև մեր որբերից շատերը, որոնք ամբողջ տարին աշխատել էին կառավարության համար: Հայերի կոտորածին մասնակցել են նույնիսկ քուրդ կանայք, որոնք դանակներով սպանել են հայերին: Այս խմբից ևս մի քանիսին հաջողվեց փախչել: Երբ կառավարությանը հայտնի դարձավ, որ հայերը փախչելու առիթը բաց չեն թողնում, կար-

---

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 181-182:

[2] **Morgenthau H.,** The Tragedy of Armenia. Տե՛ս «Red Cross Magazine», March 1918.

գաղրեց տեղահանության ենթականերին երկու օր առանց սննդի թողնել՝ փախչելու համար անզոր դարձնելու նպատակով[1]:

Գյուղերից մեկում հայերին փակել էին եկեղեցում ու մերձակա տներում և երեք օր թողել առանց հաց ու ջրի, ապա մոտակա հովտում գնդակահարել:

Այդ սպանությունները սովորաբար ուղեկցվում էին անմարդկային կտտանքներով: Սվազ-Խարբերդ ճանապարհին, որով տարագրվել էր մոտ 500.000 հայ, տղամարդկանց առանձնացրել են կանանցից, հեռացրել են մի քանի քայլ, պարանով միմյանց կապել: Այդ ընթացքում գլանակ ծխող և կանանց հետ դատարկաբանող սպաներից մեկի հրամանով մի ժանդարմ կանգնեց տղամարդկանց շարքի ծայրին ու կրակեց մի քանի անգամ: Կանանց աչքի առաջ մեկ առ մեկ սպանեցին բոլոր տղամարդկանց, իսկ կանանց մտրակների հարվածներով առաջ քշեցին: Ով հրաժարվում էր գնալ, սպանվում էր տեղում: Քարավանն առաջանում էր ճանապարհին թողնելով դիակներ ու կիսամեռ էակներ: Այդ ճանապարհին այնքան հաճախ էին հայ ջարդել, որ նա ստացել էր «Նեխվածության դժոխք» անունը: Նույնիսկ ձիերը ջրելն էր անհնար: Ժանտահոտը սարսափելի էր, քանի որ հազարավոր անթաղ դիակներ էին չորս կողմը: Այդ ամբողջ շրջանն անգամ 1916 թ. լիքն էր մարդկային գանգերով:

Ոչնչացվող հայերի դեմ երբեք որևէ մեղադրանք չի առաջադրվել: Նրանք բոլորը ձերբակալվեցին ու սպանվեցին միայն մի պատճառով՝ կառավարության գլխավոր ծրագիրն էր՝ ազատվել հայ ազգից»[2]:

Գուցե Դևիսի «Սպանդի նահանգը»-ն է Հ. Բարբիին մղել իր գիրքն անվանել «Սարսափի երկիր», որտեղ նա գրում է. «Ով այժմ (1916 թ.) անցնում է ամայացած Հայաստանով, չի կարող չսարսռալ՝ այնքան շատ բան են ասում ավերակների ու մահվան այդ անծայրածիր հորիզոնները: Զկա ոչ մի ծառ, ոչ մի ժայռ, ոչ մի բառ, որը չվկայեր մարդու կոտորածը, որոնք պղծված չլինեին թափված արյան հեղեղներով: Զկա գետի կամ գետակի հոսք, որը դեպի հավիտենական մոռացության չտաներ հազարավոր դիակներ: Զկա ոչ մի անդունդ, ոչ մի կիրճ, որոնք չլինեին գերեզմաններ բաց երկնքի տակ և որոնց խորքերում չլինեին կմախքների կույտեր, քանի որ գրեթե ոչ մի տեղ մարդասպաններն իրենց նեղություն չէին տալիս թաղելու իրենց զոհերին»[3]:

Դիվանագիտական մի փաստաթղթում նկարագրվում է քարավանների ընթացքը Խարբերդում ու դրանից հետո: Գրեթե բոլոր քարավանները քրդերը կողոպտել էին: Հարձակումների ժամանակ շատերն էին զոհվել, հատկապես տղամարդիկ: Շատերն էլ մահացել էին քաղցից ու տանջանքներից: Քարավանները երկար կանգ չէին առնում, նրանք գնում էին հարավ: Այնտեղ հասածները մեկնարկային կետում եղածների կեսից պակաս էին: Տեղահանվածների հանդեպ եղած վերաբերմունքը շարունակվելու դեպքում հնարավոր կլինի նրանցից «ազատվել կարճ ժամանակում»: Բռնագաղթվածների ճամբարները

---

[1] «Red Cross Magazine», (London), March 1918. Տե՛ս H. Morgenthau «The Greatest Horror in History».

[2] **Lepsius J.**, Bericht, s. 96, **Барби А.**, նշվ. աշխ., էջ 145-148:

[1] **Барби А.**, նշվ. աշխ., էջ 46:

նման էին բանտերի՝ դաշտում, բաց երկնքի տակ: Թե Խարբերդից մեկնելուց հետո ինչ եղան այդ քարավանների հայերը՝ անհայտ է: Խարբերդի հոգևորականների, մտավորականների, երևելի անձանց քարավանը քաղաքից մեկնեց Հունիսի 10-ի գիշերը: Նրանց բոլորին ճանապարհին սպանեցին: Նույն ձևով ոչնչացրեցին նաև հայ զինվորներին: Հունիսի 5-ին շատ տղամարդիկ բանտ նետվեցին ինչպես Խարբերդում, այնպես էլ Մեզրեում: Ամսի 8-ի լուսաբացին նրանց տարան լեռ: 800 հոգի էին, խումբ-խումբ կապված, ամեն խմբում՝ 14 մարդ: Գիշերեցին քրդական փոքրիկ գյուղում: Այդ ամբողջ ժամանակ նրանց քաղցած պահեցին, դուրս բերեցին հարթավայր, հրամայեցին նստել ու սկսեցին կրակել, բոլորին մեռցրեցին նաև դանակներով ու սվիններով: Միայն մի քանիսին հաջողվեց պարաններից ազատվել ու փախչել: Հունիսի 10-ին նույն ձևով սպանեցին մի քանի հարյուր տղամարդու, այդ թվում՝ զինվորագրվածների: Գյուղերում նման սպանությունները կրկնվում էին պարբերաբար: Իչնել և Հաբուսի գյուղերից հավաքեցին 300 տղամարդ, նրանց տարան լեռ ու մորթեցին: Թվում է, թե գոյություն ունի հայ բոլոր տղամարդկանց ոչնչացնելու վերջնական ծրագիր: Ամերիկյան որբանոցներում հայ որբերին տեղավորելու հյուպատոսի առաջարկը վալին մերժեց, ասելով, «Մենք կարող էինք աջակցել այդ մարդկանց, եթե ցանկանայինք»[1]:

Սպանություններ կատարվում էին քարավանների երթուղիների ամբողջ երկայնքով: Կանանց հափշտակություններ՝ նույնպես:

«...Մայրերը իրենց ձեռքերով կը կտրեն իրենց գեղանի աղջկանց մազերը, երեսնին գչիռոտ, աղտ քսելով տգեղցնելու համար, հայ կիները եւ հայ աղջիկները յօժարաբար ինքզինքնին ջուրերը կը ձգեն, ոմանք ալ բռնի կնութեան կ'առնուին: Խարբերդի եւ Մալաթիոյ մէջ 5000-6000 հայ աղջիկներ կան... որոնք ակամայից կիներ են Թուրք զապիտներու, խոճաներու եւ ժանտարմներու: Տիարպէքիրի եւ Խարբերդի չրջանակին մէջ 3000-էն աւելի 8-10-12 տարեկան մանչեր կան քիւրտերու եւ Թուրքերու տունները..

Աքսորանքը յուղարկաւորութեան փոխուած էր»: Քաղաքում հատուկենտ աղջիկներ մնացին, այն էլ Թրքանալու միջոցով:

Օգոստոսին սկսեցին գյուղերի եկեղեցիներն ու գերեզմանատները քանդել: Թողեցին միայն այն եկեղեցիները, որոնք Թուրքերը գործածում էին այլևայլ նպատակներով:

Ռումելիցի Մեհմեդ Ալին ասել է, Թե հայերի «բնաջնջումը պիտի ըլլար Պուլկարական պատերազմին ատենը, սակայն չյաջողեցանք... Անգլիայէն, Ռուսաստանէն ու Ֆրանսայէն վախցանք, իսկ այժմ, որ այս երեքն ալ մեր Թշնամիներն են եւ գերման հզօր պետութիւնն ալ մեր կողմն է եւ ինքը մեզի ազատութիւն տուաւ մեր ներքին գործերը անկախօրէն վարելու, ալ ի՞նչ կ'արգիլէր ձեզ նման վատ, ըմբոստ ազգ մը փճացնելու... Ըսենք, եթէ դուք խելացի ազգ լինէիք, երբ քաբիթիւլասոնները ջնջուեցան, ձեր ջնջումն ալ հասկնալու էիք»: Ալմա Յոհանսոնը գրում է, որ Խարբերդում հայերին գանակոծում էին,

[1] R 14093 Ab. 24663.

«կտրում հոնքերն ու եղունգները, կուրծքն ու ոտքերը, մեխեր խփում ոտքերին, ինչպես պայտում էին ձիերին»[1]: «Թուրքերը պարծենում էին, որ լրիվ ազատվեցին հայերից: Ես ականջովս լսել եմ, թե ինչպես սպաները չնորհավորում էին միմյանց, որ ոչնչացրել էին հայերին»[2]:

Մ. Յակոբսոնը 15 տարեկան էր, երբ ուկնկնդրեց մի բանախոսություն հայերի 1895–96 թթ. հալածանքների ու ջարդերի մասին: Նա ստացած տպավորությունից ազատվել չկարողացավ և 1907 թ. մեկնեց Խարբերդ ու նշանակվեց որբանոցի վերակացու: Սկսեց սովորել հայերեն: Նա խնամում էր քրիստոնյա և մահմեդական հիվանդներին: Խարբերդում ժողովուրդը սարսափի մեջ էր: Հինգ օր ժամանակ էին տվել հայերին՝ զենքերը հանձնելու համար: Թուրքերը սաղրանքի էին ենթարկում, սուտ մեղադրանքներ ներկայացնում, որպեսզի աշխարհին համոզեն, թե նրանք պատժվում էին հանցանքների համար: Հայերի տեղահանության ժամանակ Յակոբսոնը դիմում է վալու կնոջը՝ խնդրանքով, որ գոնե հիվանդներին խնայեն: Պատասխանը լինում է. «Եթե Ալլահը որոշել է, որ չաբաթ օրը պիտի մեկնես, ես ոչինչ անել չեմ կարող: Ալլահը նաև որոշել է, որ այս տարի ջրի փոխարեն արյուն է հոսելու»:

Հիվանդանոցի մոտ պահակություն անող զինվորները զարմանքով ասում էին. «Ինչո՞ւ եք դրանց (հայերին) դրամ և ուտելիք տալիս, նրանք գնում են լեռները՝ մեռնելու»:

Բոլոր հայերին տեղահանեցին: «Ասում են մեզ,– գրում է Յակոբսոնը,– տնային կալանքի են վերցնելու, քանի որ վախենում էին, որ կպատմեինք այդ աներևակայելի ոճիրների մասին»: Մենք ասելով Մարիան նկատի ուներ նաև Քարեն Ենսենին և Քարեն Պետերսոնին, որոնց հետ համատեղ էր գործում:

«Որքան դժվար էր տեսնել թուրք կանանց հայկական արդուզարդով ներս ու դուրս անելիս: Ամեն օր նոր գաղթականներ են գալիս: Նրանց պատմածները մեկը մյուսից սոսկալի են, բայց՝ ճշմարիտ... Ես բառեր չեմ գտնում նկարագրելու այս ժողովրդի ցավերն ու տառապանքը... Դժվար է նկարագրել, երբ մայրերը, չդիմանալով լեռների ու ճանապարհների տանջանքներին, տեղ չհասած մեռնում էին՝ որբ թողնելով իրենց զավակներին:

Ինչպիսի՜ երկիր, ինչ ժողովուրդ և ինչ դժբախտություն: Տղամարդիկ սպանված են, կանայք ու երեխաները՝ անտեր: Թուրքերը հայ կանանց համոզում են ամուսնանալ իրենց հետ... Կանայք դիմադրում են... Թուրքերը կատաղում են... հոգնում սպանելուց»:

Տողեր Յակոբսոնի օրագրից.

«Թուրք մարդ մը,– պատմում է նա,– որ արիւնլուայ վիճակին մէջ հիւանդանոց եկաւ, դարմանուելէ յետոյ երբ իրեն հարց տուին, թէ հանգի՞ստ էր, ըսաւ. «Պիտի ջանամ, որ չուտով աղէկանամ, որպէսզի վերադառնամ եւ օգնեմ կեավուրները սպանելու եւ անոնց կիները բռնաբարելու»:

1 սեպտեմբեր 1915: Մի թուրք Մր. Էհմանին ասում է. «Եթէ քսան տարի

---

[1] ***Յոհաննոն Ա.,*** *Աքսորեալ ժողովուրդ. 1880–1974: Տե՛ս «Յուսաբեր»՝ նվիրված Մեծ Եղեռնի 50-ամյակին, Գահիրէ, 1965:*

[2] ***Մորգենթաու Հ.,*** *նշվ. աշխ., էջ 396, 400:*

վերջ ապստամբութիւն մը ծագի՝ յանցանքը ձերն է: Դուք 6000 ոճրագործներ կը պահեք ձեր քով: Թիւրքերու համար ասիկա մեծ մտահոգութիւն մըն է, նոյնիսկ այն քիչ կամ քանի մը համեստ որբերը, որոնք կ'ապրին: Մր. Էհմանը զինք վստահեցուցած էր, որ ապստամբութիւն պիտի տեղի չունենար, քանզի արդէն հայ չէր մնացած»:

«10 յունիս 1915: Յայտնի էր, որ ջարդ պիտի սկսուէր եւ կիները պիտի բռնաբարուէին...

14 օգոստոս: Մեզրէի գերեզմանոց գացինք, ուր կառավարութիւնը հիւանդ հայեր հաւաքած էր: Շատ հեռուէն գարշահոտութիւն մը մեզ դիմաւորեց... Զորս կողմ կիսամերկ կիներ երկնցած էին: Նոյնիսկ յայտնի չէր անոնք մեռա՞ծ էին, թէ՞ ողջ էին: Երկու պստիկ աղջիկներ՝ 9–10 տարեկան, մօտ վեց տարեկան տղայի մը դիակը կը քաշկռտէին...

22 հոկտեմբեր 1915: Բոլոր հայ փոքրիկները, որոնք Թրքական որբանոց-ներուն մէջ կը գտնուէին, սայլերով տարուած ու գետը լցուած էին:

22 նոյեմբեր: Կամաց-կամաց չատ յստակ եղաւ, թէ ինչ էր Թիւրքերու նպա-տակը: Շատ պարզ էր՝ բնաջնջել հայ ազգը...»:

Եվ իսկապես, Խարբերդում բռնագաղթը ուղեկցվում էր զանգվածային ջարդերով: Թեբե գյուղի հորերը լցված էին հայերի դիակներով, դրանք հիմնականում կանանց դիակներ էին, չնայած Ղուրանն արգելում է սպանել կանանց ու երեխաներին: Գյուղի մերձակայքի անտառներում թաղված էին տղամարդկանց մեծ թվով դիակներ: Փոսեր կային, որոնցում լցված էին ամբողջ ընտանիքներ՝ փայտերով խողխողված ու անարգված:

Էհմանը հաջողեց որբանոցների մոտ 1000 տղաների ու աղջիկների բռնագաղթից ազատել: Ամերիկյան հյուպատոսությունում Կ. Ռիկսը փրկեց 25 աղջիկների:

Մի օր մունետիկներն ընդհանուր ներման հայտարարություն արեցին և այս ու այնտեղ թաքնված հատուկենտ մարդիկ դուրս եկան: Սակայն չուտով նրանց բոլորին ձերբակալեցին:

Յակոբսոնը կատարվածն ամփոփում է հետևյալ խոսքերով. «Առաջ հայերն էին, որ ամեն գործի գլուխն էին: Հիմա նրանք սպանված են: Թուրքերը ո՛չ արհեստավոր ունեն, ո՛չ էլ հողագործ: Երկիրը լրիվ ուրիշ դարձավ... Հիմա միայն աղքատություն և թշվառություն է տիրում...»:

Հետաքրքիր է Յակոբսոնի նաև հետևյալ միտքը. «Միակ մխիթարական երևույթը այն էր, որ հասնելով Խարբերդ, մենք տեսանք, որ որբանոցները լցված էին հայ երեխաներով: Մամուրեթ ուլ-Ազիզը վերածվել էր հայկական մեծ գերեզմանոցի: Տարբեր նահանգներից բոլոր հայերին քշել բերել էին Խարբերդ և ով ճանապարհին չէր անհետացել, հասնում էր Մամուրեթ ուլ-Ազիզ՝ իր գերեզմանն այստեղ գտնելու համար»:

Նույն միտքն է հաստատում Հ. Բարբին. «Այս լայնարձակ տարածքներում, որոնք մի ժամանակ բարգավաճում էին հայ բնակչության ուժերով, ներկայումս թագավորում են քայքայումն ու անմարդաբնակությունը»[1]:

---

[1] ***Барби А.,*** *նշվ. աշխ., էջ 46:*

1916 թ. փետրվարի 21-ին Էրզրումն ընկավ, գրում է Յակոբսոնը: Թուրքերը խուճապի մեջ են: Նրանք հայերին ասում էին. «Ձեր ջարդն ամռանն էր, մերը ձմռանն է տեղի ունենալու»:

1916 թ. ապրիլին մեծ խմբերով թուրք գաղթականներ էին գալիս Մուշից և Վանից: Թուրքերն անընդհատ կրկնում էին. «Մեր վերջը եկել է»:

1916 թ. մայիսի 11-ին մի խումբ խոջաներ գնացին Մեզրե՝ Էնվերին դիմավորելու: Նա քրիստոնյաներին բարեկամ չէր: Մայիսի 29-ին մեծ թվով երեխաներ բերեցին, հյուծված ու տանջահար[1]:

Պատմում է Խարբերդի Հաբուսի գյուղից սերված Անդրանիկ Տոնիկյանը: Հաբուսի գյուղը հայաբնակ էր և ուներ 300-400 տուն:

Թուրքերը գյուղում եղած զենքերը հավաքեցին, իսկ ով զենք չուներ, հարկադրեցին գնել ու հանձնել: Երիտասարդությանը զինվորագրեցին և քիչ անց սպանեցին:

«...Թուրք գյուղացիների մեջ կային մարդիկ, ովքեր հավանություն չէին տալիս կառավարության հայահալած քաղաքականությանը»:

1916-ի վերջերին Թուրքերը համոզվելով, որ պատերազմը տանուլ էր տրված, հայերին առանձնապես չէին նեղում:

Նաև եղան ջարդարարներին հակահարված տալու փորձեր:

Մորենիկ գյուղում երիտասարդների մի խումբ փակվում է տներից մեկում ու մինչև վերջին փամփուշտը կռվում ու նահատակվում է: Երիտասարդների մի այլ խումբ Ծոփքում ամրացավ Ս. Նշան կղզում և կռվեց մինչև վերջ: Եվ երբ այլևս ո՛չ փամփուշտ կար ու ո՛չ էլ ուտելիք, երիտասարդությունը նետվեց Եփրատ՝ խոշտանգումներից փրկվելու համար, մի մասն էլ փորձեց անցնել Սասուն:

Տեվերիկի Խուսանվիլ գյուղ: Զորակոչվածներին տարան հնձելու բռնագաղթված ու անմարդաբնակ դարձած Օթուր գյուղի հասած արտերը: Թուրքերը հայտնում են, թե հնձից հետո հայ զինվորներին կոտորելու են: Վերջիններս ապավինում են քուրդ Մեհմեդին, որը հավատարիմ էր հայերին, սովորել էր հայկական դպրոցում և բռնագաղթի չորս տարիներին հայերի գրաբերի պարտականություն էր կատարում:

Բինկայա գյուղում խուսանվիլցիների քարավանից տղամարդկանց հանում են ու լցնում եկեղեցին: Արմենակ և Հայկ եղբայրները հաջողում են խույս տալ նահատակի ճակատագրից, ապա սպանում են Թուրք զինվորին, սպառազինվում և կողոպտում բանակի պարենի քարավանը: Ձևավորվում է հայդուկախումբ ու սկսվում է կռիվ Թուրքերի դեմ: «Առաջին աշխարհամարտի տարիներին ամեն Թուրք մեկական հրեշ էր դարձել», և տղաները զգալի թվով հրեշներ սպանեցին: Թուրքերը մի քանի անգամ նրանց դեմ զորք հանեցին, բայց հաջողություն չունեցան:

Թուրքերի ջարդարար քաղաքականության խթանման գործում մեծ դեր էր խաղում ռուսական բանակի առաջանալը և դրա կազմում հայ կամավորական գնդերի գոյությունը, հանգամանք, որը նաև նպաստում էր, որ քրդերը մեր-

---

[1] *«Հայրենիք», 28 հունվարի 1987 թ.:*

ձենան հայերին: Դերսիմի քրդերն ու Խարբերդի հայերը մարտական խմբեր ձևավորելով անցան Զարսանջակ, որտեղ դրության փաստական տերերը քրդերն էին:

Արչակ Ալպոյաճյանը պատմում է կառավարության դեմ Մալաթիայի Պալյանցի Պողոյի խմբի ընդվզումների մասին: Խումբը «օրը ցերեկով մտաւ Մալաթիոյ Ջըրմխտի արուարձանը և սպաննեց տեղւոյն ոստիկանապետը եւ ահագին վնասներ պատճառելէն ետք հեռացաւ եւ կանոնաւոր կռիւներ մղեց կառավարական ոյժերուն դէմ եւ անոնց պատճառեց աւելի քան 2000 հոգու կորուստ: Բայց ի վերջոյ ընկճուեցաւ»[1]:

ԴԵՐՍԻՄ

Իրադարձությունների ականատես Վահե Հայկը գրում է, որ Խարբերդի հայերի մի մասը փրկվեց Դերսիմ անցնելու միջոցով: «...Գիշերանց բազմաթիւ երիտասարդ եւ չափահաս մարդիկ քանի մը քիւրտերու առաջնորդութեամբ սկսան խուժել դէպի Զարսանճագ, ուր քիւրտ աղաներ եւ տէրէպէյիներ գրեթէ անկախ իշխանութիւններ հաստատած էին...

Մեծ պատերազմի տարիներուն, 1914-ի ատեն Տերսիմի մէջ կային ծանօթ ու զօրեղ քանի մը աշիրէթներ. - 1) Ահմէտ աղայի աշիրէթը, որ ունէր 4000 չախմախլու (կռուելու պատրաստ մարտիկներ), 2) Իտրիս աղայի աշիրէթը, որ ունէր 8000 չախմախլու, 3) Իտարէ աղայի աշիրէթը, որ ունէր 10 հազ. չախմախլու, 4) Խըտրը աղայի աշիրէթը, որ ունէր 12 հազ. չախմախլու, 5) Տիապ աղայի աշիրէթը, որ ունէր 15 հազ. չախմախլու: Ասոնց բոլորին գումարը կը հասնէր 50 հազար լեռնական մարտիկներու, որոնք էին քաջ, յանդուգն, անգութ, անխիղճ, զինավարժութեան ընդունակ եւ աննման նշանառու»[2]:

«Դէպի Տերսիմ,- շարունակում է Վահե Հայկը,- հայերու փախուստը յետոյ շատ աւելի լայն չափերու հասած է: Մեհմէտ աղայի մարդիկը բազմաթիւ հայեր ազատած են եւ մեծ գումարներ ստացած...

Քիւրտերուն վարպետութեան խօսքի առարկայ դարձեր է: Անոնք նախապես կը լրտեսէին եւ յետոյ կը քալեցնէին ազատութեան գացող հայուն դժբախտ զաւակները»[3]:

Գ. Երանյանը գրում է. «Տերսիմի մեկուսացած դիրքը եւ հայերուն անհեռատեսութիւնը աղէտի առաջնորդեց երկուքն ալ: 1915-ի հայոց ջարդը տեսնելէ ետք է, որ Տերսիմ զգաց իր գործած պատմական մեծ սխալը, երբ աչքերը գոցած էր իր հարեւան հայերուն սպանդին ժամանակ: 1915–1916-ին թէեւ Տերսիմը սթափեցաւ եւ ուզեց կանխել նաեւ իր մահավճռին գործադրութիւնը եւ զէն ի ձեռին իջաւ Մեծկերտէն մինչեւ Խարբերդ, բայց շատ ուշ էր արդէն»[4]:

Հայ-քրդական համագործակցության ուղղությամբ աշխատանք էր տա-

---

[1] ***Ալպոյաճեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 956:*

[2] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 566-567:*

[3] *Նույն տեղում:*

[4] ***Երանեան Գ.,*** *Պատմութիւն Զարսանճագի հայոց, Պէյրութ, 1956, էջ 142:*

նում նաև սերաստացի Մուրադը, բայց հաջողություն չունեցավ:

Դևիսը ճաշի է հրավիրում Մեհմեդ Ալիին: Ամերիկյան հյուպատոսարանի աշխատակից Հ. Բեքմեզյանին քուրդ առաջնորդն ասում է. «Դուք, հայերդ, պարզամիտ ժողովուրդ եք, մշտապես խաբվում եք թուրքերի չողոքորթ լեզվին և ջարդվում եք: Մենք բնավ չենք հավատում նրանց բարեկամությանը և խոստումներին»[1]:

Եղեռնի առաջին օրերից սկսվեց հայերի փախուստը դեպի Դերսիմ, ինչը գնալով ծավալվեց ու անընդհատ գործընթաց դարձավ: Հայերին ընդունելը, թաքցնելը կամ ռուսական սահման անցկացնելը քրդերի մի մասի համար համերաշխության արտահայտություն էր, իսկ մյուս մասի համար՝ վաստակի աղբյուր: Մեկ հայի փրկելու համար քուրդն ստանում էր 40–50 ոսկի: Այդ գործն առաջ տանելու համար քրդերը հատուկ նավակներ էին պատրաստել:

Դևիսը Դերսիմի քրդերի վարքագծի մասին գրում է. «Ճիշտ է, իշխանությունների դրդմամբ քրդերը շատ հայ են կոտորել, բայց դրա հետ մեկտեղ, մեծ թիվ են կազմում այնպիսիները, որոնք իրենց գյուղերում ապաստան էին տալիս տարագիրներին, տարբեր ձևերով օգնում: Դերսիմի քրդերը շատ բան են արել հայերի համար»: Աղունիկ գյուղը դարձել էր Ռուսաստան փախչող հայերի տարանցիկ կենտրոն[2]: Քրդերը երբեմն խոշոր, երբեմն համեմատաբար համեստ գումար պահանջելով, հայերին մեծ խմբերով Դերսիմ էին տանում, ապա անցկացնում Ռուսաստան:

1916-ի գարնանը Դերսիմի քրդերն ապստամբեցին: Թվում էր, որ նրանք անգամ Խարբերդն էին գրավելու: Սակայն զինվորական խոշոր ուժեր կենտրոնացվեցին ու ապստամբությունը ճնշվեց: Հազարավոր քրդեր՝ տղամարդ, կին, երեխա աքսորվեցին: Բայց իշխանությունները լավ գիտեին, որ «քրդերի հետ չի կարելի» հայերի նման վարվել: Նրանք բռնագաղթը չչարունակեցին:

Դերսիմում թաքնված հայերը 1916 թ. ամռանը անցան Ռուսաստան:

Սաբիթը առանձնակի շահագրգռվածություն հանդես չէր բերում հայերի՝ Դերսիմ փախչելու դեմ: Թերևս նաև այդ պատճառով մինչև նրա հեռանալը վալու պաշտոնից (1917 թ. փետրվար)՝ այդ գործընթացը չարունակվեց:

1915 թ. դեկտեմբերի 30-ի տեղեկագրում Դևիսը Դերսիմում ապաստանած հայերի թիվը նշում է 500-1000 հոգի[3]: Ջ. Կիրակոսյանը նշում է, որ 1915-1916 թթ. Դերսիմում ապաստանած հայերի թիվը հասնում էր 5000-ի[4]:

Խարբերդի վիլայեթում տեղահանությունն ու ջարդը չարունակվեցին մինչև աշնան վերջը: Մունետիկները բազմիցս հայտարարում էին, թե բռնագաղթն ավարտվել է: Եղան միամիտներ, որ հավատացին ու թաքստոցներից դուրս եկան ու անմիջապես ձերբակալվեցին: Եվ այդպես՝ մի քանի անգամ:

Զանգվածային վերջին ձերբակալությունները տեղի ունեցան նոյեմբերի 4-5-ին: Հավաքվեց շուրջ 500 հայ: Ձերբակալություններ կատարվեցին նաև գյուղերում: Օրինակ, Հող գյուղում ձերբակալվեց 300-400 կին և երեխա: «Ես

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 567:

[2] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 226:

[3] ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/269:

[4] **Կիրակոսյան Ջ.**, նշվ. աշխ., գ. 2-րդ, էջ 35:

տեսա,- գրում է Դևիսը,- թե ինչպես էին նրանց, անասունների նման քշելով, քաղաք մտցնում»: Հայկական գերեզմանատանը հավաքվածների թիվը հասնում էր 1000-ի: Նրանք բոլորը ոչնչացվեցին Դիարբեքիրի ճանապարհին[1]:

1915–1916 թթ. ձմռանը Էրզրումում, Մուշում և Բիթլիսում ամելեթաբուրների մեջ ներգրավված հայ զինվորներին տեղափոխեցին Մամուրեթ ուլ-Ազիզ: Նրանցից շատերը բռնագաղթի մասին գաղափար իսկ չունեին, որովհետև պահվել էին ծայրահեղ մեկուսացված պայմաններում: Այդ զինվորներին մի քանի օր բանտում փակեցին, ապա քաղաքից հանեցին: Ոմանք դիմադրեցին, ոմանք փախան, իսկ հիմնական մասը ոչնչացվեց...

«Ես նրանց դիակները քաղաքից ոչ հեռու, ճանապարհի կողքին տեսել եմ»[2]:

1916-ի փետրվարին Խարբերդում խուճապ էր, թուրքերն ու քրդերը վախենում էին, որ ռուսական զորքը կգրավի վիլայեթը: Շատ թուրքեր իրենց ընտանիքները հանեցին Խարբերդից:

Հայ ոչ քիչ թվով կանայք մնացին թուրքերի տներում, հատկապես այն գյուղերում, որոնց բնակիչները խառն էին, իսկ զուտ հայկական գյուղերն ամբողջովին դատարկ էին[3]:

Տեղում մնացած հայերի մեծ մասը տարագրությունից ազատվել էր մեծ փողեր ծախսելու միջոցով: Ամենախոշոր կաշառակերներից էր Խարբերդի գայմագամը, որ տասնյակ հազարավոր լիրա գրպանեց:

1915 թ. աշնանն ու ամռանը գլխավոր խնդիր դարձավ դիակները հավաքելը, թաղելն ու անհետացնելը: Այդ խնդիրը ծառացած էր բոլոր վիլայեթների, բայց առավելապես Խարբերդի առջև, քանի որ շատ վայրերից բռնագաղթվածներին բերում էին այստեղ՝ կոտորելու համար:

Իշխանությունների մյուս հոգսը հայերի թողած ունեցվածքի իրացումն էր: Բացեիբաց աճուրդ կազմակերպվեց և մեծ «քանակությամբ վաճառվում էին ... սպանված հայերի հագուստներ»: Դևիսը 1915 թ. դեկտեմբերի 30-ին գրեց. «Հագուստների բազմաթիվ հակեր են բերվել, որոնց վաճառքը քանի օր է շարունակվում է չուկայում»[4]: Նման պատկեր էր վիլայեթի բոլոր քաղաքներում և ավաններում: Դրանցից մեկին ներկա գտնվելուց հետո հյուպատոսը գրեց. «Ավելի ահավոր ու զարշելի տեսարան անհնար է պատկերացնել»[5]: Վաճառում էին ոչ միայն հայերի ունեցվածքը, այլ նաև իրենց՝ հայերին, վաճառում էին քրդերին, որպեսզի սպանեն և կողոպտեն:

Այդ չրջանի «երրորդ հոգսը» հայկական եկեղեցիների ավերումն էր:

Ու նաև մի հավաքական սպանություն այն հարյուրավոր խարբերդահայերի, որոնց կառավարչատունն իրենց սայլերով ուղարկել էր Մուշ՝ հացահատիկ բերելու: Նրանց վերադառնալուց հետո բոլորին բանտ նստեցրին և ապա սպանեցին:

---

[1] ***Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 192-193:*

[2] *Նույն տեղում, էջ 196:*

[3] *ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/210B:*

[4] *Նույն տեղում, 4016/269:*

[5] *Նույն տեղում:*

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին էրզրումից 200-300 հոգանոց խմբերով Խարբերդ բերեցին մեծ թվով հայերի և քաղաքի մերձակայքում կոտորեցին: Փրկված մի քանի հոգին պատմել են, որ ժանդարմները մի մասին տեղում էին սպանել, իսկ մյուս մասին տարել էին լեռները ու այնտեղ խողխողել:

Նույն ժամանակ կայսրության արևելյան շրջաններից Խարբերդի նահանգ ներխուժեցին մահմեդական ամբոխներ, մասնավորապես քրդեր: Նրանք փախչում էին ռուսներից: Նրանց մեծ մասին տեղավորեցին հայերի դատարկ տներում: «Շատերը կարծում են,- գրում է Դևիսը 1915 թ. դեկտեմբերի 30-ին,- որ հայերին բնաջնջելու չարժառիթներից մեկն էլ մահմեդականների համար ապրելու տեղերի ստեղծումն է: Ինչ էլ լինի, նրանք այնքան շատ էին, որ կարողացան զբաղեցնել ազատված տարածքները»[1]: Եթե 1915-ի սեպտեմբերին նա գրել էր, որ վիլայեթում փրկվել էր 6000-8000 հայ, ապա տարեվերջին գրեց, որ փրկվել է 4000 հոգի, ավելացնելով, որ անգամ այդ թիվն է կասկածելի: Հայերը հիմնականում կուտակվել էին քաղաքներում, որովհետև գյուղերում առանձին հայերի բնակվելը գործնականում անհնար էր: Իսկ քաղաքներում մնացած հայերի «կարևոր մասը» գերմանական որբանոցի 400-500 երեխաներն էին: Գերմանական աղբյուրների վկայությամբ՝ Խարբերդից տեղահանված 60.000 հայից Մոսուլ հասավ 15.000-ը: Մնացածները ոչնչացվեցին ճանապարհին[2]:

Ներմուծվող մահմեդական բնակչության հոսքը գնալով աճում էր: 1916 թ. օգոստոսի 25-ին Խարբերդից տեղեկացրեցին, որ վիլայեթի կենտրոնական սանջակ եկած գաղթականների թիվը հասել էր 5000-ի, որից 3000-ը քրդեր են, որ նրանց կեսին տեղավորել էին շրջակա գյուղերում[3]:

Հայ բժիշկ Ա. Ճեպեճյանը, որը 1917 թ. հունվարին եղել է Խարբերդում, գրում է. «Ամեն օր ճամբաներու վրայ սառած անհաչիւ մարմիններ կը բերեն... Թիֆուս հիւանդութիւնը տիրական է ամենուրեք....»[4]:

Թե Խարբերդում և ոչ միայն այդ նահանգում որքա՞ն հայ է ոչնչացվել,- շատ դժվար է ճիշտ որոշել: «Որովհետև,- գրում է Հ. Մորգենթաուն,- հայերու այս ջարդը, դատուած թէ՛ ընդգրկած թիւին եւ թէ՛ գործադրուած մեթոտներուն տեսակէտէն, միակ մեծագոյն արհաւիրքն է, որ երբեք մարդկութեան պատմութեան մէջ գործուած ըլլայ: Յաճախ պիտի յուզուին սա հարցերը, թէ իրապէս քանի՞ հայեր սպաննուեցան կամ մեռան անօթութենէ կամ մերկութենէ»[5]:

Լեփսիուսի և «Ամէնուն տարեցոյցը»-ի հրապարակած 1921 թ. ապրիլի 1-ի տվյալներով[6] Խարբերդի նահանգում պատերազմի նախօրյակին ընակվում էր 131.000 հայ, որից Խարբերդում 51.000 և բոլորը տեղահանվել են: Աղինի հայ բնակչությունը նույնպես (10.200) լրիվ տեղահանվեց: Նույնը Արաբկիրի (19.500), Զմչկածագի (9.000), Զարսանջակի (18.500), Մալաթիայի (23.000)

---

[1] *ԱՄՆ ՊԴԱ 59 խփ., տասնորդական թղթապանակ № 867, 4016/269:*

[2] *R 14088 Ab. 30012.*

[3] ***Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 206:*

[4] *«Բժիշկ Ճեպեճեանին օրագիրը», էջ 75-76:*

[5] ***Մորգենթաու Հ.**, նշվ. աշխ., էջ 348:*

[6] *"Турецкая политика истребления армян (1880-1922)", Ер., с. 339, «Ամէնուն տարեցոյցը» ԺԶ. տարի, 1922.*

հայությունը: «Ամէնուն տարեցոյցը»-ի տվյալներով՝ Խարբերդի 204.000 հայությունից պատերազմից հետո մնացել էր 35.000 հոգի: Դևիսը գտնում է, որ վիլայեթի 150.000 հայից փրկվեց 8.000-10.000 հոգի, որից 1.000-2.000-ը մյուս նահանգներից փախածներն էին[1]:

Մինչդեռ թուրքերը գոհ էին. հայերին բնաջնջելով տիրացել էին նրանց ունեցվածքին: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Հաջի Սայիդը 1918 թ. խորհրդարանում հայտարարեց. «Երկիրը դրախտի վերածվեց: Ժողովրդի անունից երախտապարտ ենք ազգի այն իմաստուն ղեկավարներին, որոնք լավագույնս ընկալելով ազգի երազանքները՝ նրան զարգացման հնարավորություն ընձեռեցին»[2]:

Հ. Ղազարյանը գրում է, որ Խարբերդի նահանգում ոչնչացվեց 150.000 հայ, իսկ նյութական վնասը կազմեց 250 մլն դոլար[3]:

Հ. Ղազարյանն հայերին հասցված նյութական վնասի (250 մլն դոլար) թիվը վերցրել է Տ. Տաշյանից, որը նաև գրում է, թե բռնագաղթի նախօրյակին Խարբերդի հայ հարուստները «Եփրատ» քոլեջի տնօրեն Հենրի Ռիքսին հանձնել են կես միլիոն դոլար: Թուրքերն անգամ այդ գումարն են յուրացրել: Ռիքսը դա հանձնեց օսմանյան բանկ, իսկ Բարձր Դուռը՝ բռնագրավեց: Ինչպես մյուս նահանգներում, այնպես էլ Խարբերդում, ով համաձայն չէր Իթթիհադի ջարդարար քաղաքականության հետ կամ եռանդ չէր դրսևորում հայասպանության գործում, անմիջապես հեռացվում էր: Մամուրեթ ուլ-Ազիզի մյուդիրը պաշտոնազրկվեց. որովհետև «համեմատաբար մեղմ անձնավորություն էր»: Նոր մյուդիր Ֆեսիրիկցի Ռեշիդը «ամառվա ողբերգության ամենաարյունոտ դերերից մեկը խաղաց»: Նա նախ վերացրեց «մանկուց իրեն ծանոթ բոլոր հայ հարևաններին»: Նա իր ողջ եռանդը, նպատակամղվածությունը, հետևողականությունն ամբողջությամբ ենթարկեց բնաջնջման գործընթացին և դա առաջ տարավ մոլեռանդ կրքոտությամբ:

Այդ ամենով հանդերձ նա առաջին մեծության ջարդարար չէր: Խարբերդի նահանգում որո՞նք էին հայերի բռնագաղթի ու ջարդի իսկական ղեկավարները: Դա, առաջին հերթին, Բեհաէդդին Շաքիրն էր, վալի Սաբիսը և Իթթիհադի Խարբերդի պատասխանատու քարտուղար Ռեսնեցի Նազըմը:

1915 թ. մայիսի 4-ին Բ. Շաքիրը Նազըմին հեռագրում է. «Այդտեղ տարագրված հայերի հաշիվը մաքրվե՞լ է: Նրանց սպանելու և բնաջնջելու հանգամանքների մասին տեղյակ պահեք: Թե չէ քաղաքից լոկ հանվում և ուղարկվում են»: Բ. Շաքիրն այստեղ նույնպես առաջին դեմքն էր: Մյուս ղեկավար անձը Նազըմն էր: 1915 թ. մայիսի 4-ի հեռագիրը վկայում է, որ նա տարագրության ժամանակ մշտական կապի մեջ է եղել Բ. Շաքիրի և Մամուրեթ ուլ-Ազիզի վալի Սաբիս բեյի, ինչպես նաև Իթթիհադի ընդհանուր քարտուղար Մեհմեդ Շուքրիի հետ: Նա իրականացված ոճիրների գլխավոր դերակատարներից մեկն է: Խորհրդանշական է, որ նրա և Շաքիրի հեռագրերը նույն օրն են տրվել:

Խարբերդի ջարդը քննող դատարանի դատավճռում ասված է. «Ռեսնեցի

---

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 201:

[2] **Պալաքյան Գ.**, նշվ. աշխ., էջ 172:

[3] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 132:

Նազրմը նույնպես քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով դատապարտվում է 15 տարի ժամանակով: Դերսիմի երեսփոխան Մ. Նուրին Հոլոնեկ գյուղի մոտ հայերին կոտորելու պահին ասել է. «Ձեզ «ոսկորների գյուղ» (գերեզման) եմ ուղարկելու... Տիկին Մարգարիտը դատարանում ցուցմունք տվեց, որ այդ գազանը Հոլոնեկ գյուղում ասել է հայերին, պիտի տարագրվեք և ձեր տների տեղը գարի եմ ցանել տալու..., այստեղ եթե որևէ անձ որևէ մեկին թաքցնի, կենդանի չի մնա: Նաև ցուցմունք կա, թե այդ գիշատիչը ինչպես էր կողոպտում հայերին, ծաղրուծանակի ենթարկում կանանց, որից հետո «հրոսակները սրընթաց հարձակվեցին գյուղի վրա»[1]:

Զինադարից հետո հետաքրքիր նյութեր հայտնաբերվեցին երիտթուրք ղեկավար գործիչների անձնական արխիվներում, որոնց մի մասը հանձնվեց Մազհարի հանձնաժողովին:

Սաբիսի մասին Դերսիմի ոստիկանապետ Մ. Նամրկը ասել է, թե նա «բարձր հեղինակությունների խելամիտ հաճոյակատար էր» և համագործակցում էր Նազրմի հետ: Սաբիսը նույնպես գտնում էր, որ «միջոցառումներ պետք է ձեռնակվեն ամբողջ հայ ժողովրդի դեմ»: Նրա հանձնարարությամբ՝ Մ. Նամրկը զենք թաքցնելու մեղադրանքով ձերբակալեց 29 դաշնակցականի, չնայած նրանց մոտ հայտնաբերեց «չատ քիչ ռումբեր»: Սաբիսը չի համաձայնվում պատժել միայն ձերբակալվածներին, պատճառաբանելով, թե Բ. Շաքիրի ստորագրությունով կենտրոնական կառավարությունից հրաման է ստացվել, թե «ողջ հայ ազգաբնակչությունը պետք է տեղահանվի ու ոչնչացվի»[2]:

Սաբիսն իր հուշերում չեշտում է Բ. Շաքիրի դերը հայերի ջարդերի և պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու գործում, նաև նրա «պանթուրքիստական հայացքների բացասական ազդեցությունը Սարիղամիշի ճակատամարտի վրա»[3]:

Երկու վկայություն Սաբիսի մասին: «Խարբերդի կուսակալն ալ,- գրում է Մ. Նեղիմը,- իրենց ընտանիքներէն ջոկեր է տուեր Խարբերդի այրերը եւ Խարբերդի ու Մալաթիայի միջեւ գտնուած Քէոմիւր խան յորջորջուած տեղը առաջնորդելով՝ գնդակահարեր է գանոնք ու դիակները նետեր Եփրատ գետը»[4]:

«Սաբիս բեյը,- բնութագրում է Լ. Դևիսը,- չափազանց տգետ, անքաղաքավարի էր: Բռի շարժումներ ուներ, անկիրթ լինելու պատճառով, հաճախ էր կոպտում: Նա դերսիմցի էր, աշխատել էր այնտեղի մութեսարիֆ: Օժտված էր «արևելյան նենգությամբ» և հանդիսացավ «մարդկության դեմ գործադրված մեծագույն ոճրագործության իրագործողներից մեկը»[5]:

Այս երեքից բացի, Խարբերդի վիլայեթի հայերի ջարդերի կազմակերպիչներն էին գայմագամ Ասրմը, մուֆթի Ֆայրգը, Իթթիհադի ակումբի անդամ Նուրին, լքյալ գույքերի տեղական հանձնաժողովի նախագահ Մ. Ալին, ոստիկանական կոմիսար Ս. Ռյուշդին, գնդի հրամանատար Ֆերիդը, չեթեների պետեր Է. Շոուքեթը, Քյազրմը, Վեհիբը, Ֆ. Սուլեյմանը, Փ. Խալիլը, Հաջի Կայան:

---

[1] «Takvim-i Vekai», 1920 թ. № 3771.

[2] FO 371/6500, 30/ A / 4, հավելված B:

[3] **Sabis A.**, նշվ. աշխ., cilt I, s. 64-65:

[4] **Նետիմ Մ.**, նշվ. աշխ., էջ 89:

[5] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 86-87:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԴԻԱՐԲԵՔԻՐ – ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

Դիարբեքիրի նահանգը՝ պատմական Աղձնիքը, իր աշխարհագրական դիրքի պատճառով, այսինքն՝ լինելով Հայաստանի ամենահարավային նահանգը, դարձավ հայության ամենախոշոր սպանդանոցներից մեկը: Այստեղ ոչնչացվեց Թուրքական բանակ զորակոչվածների նշանակալի մասը, Տիգրիսի ջրերում խեղդամահ արվեցին տասնյակ հազարավոր հայեր, ոչնչացվեցին մեծ թվով տարագրված հայեր և տարագրյալների ամբողջ քարավաններ: Վերջապես, Դիարբեքիրում էր գործում ամենաահարկու ռազմական դատարանը, որը մահվան դատապարտեց կայսրության տարբեր մասերի, այդ թվում նաև Կ. Պոլսի, մեծ թվով հայ գործիչների, մտավորականությանը:

Դիարբեքիր նահանգը կազմված էր չորս սանջակներից՝ Դիարբեքիր, Արղնի, Մարդին, Սեվերեկ:

Պատրիարքարանի տվյալներով՝ 1878 թ. վիլայեթն ունեցել է 150.000, իսկ թուրքական մարդահամարի (սալնամե) տվյալներով՝ 180.000 հայ բնակիչ: Վ. Քինգը նշում է, որ 1890 թ. նահանգի 471.462 բնակչից հայ էր 132.549-ը:

1913 թվին պատրիարքարանը հայերի թիվը նշում է 105.000, Օրմանյանը՝ 96.000 (առանց Սեվերեկի), Գր. Զոհրապը՝ 105.000: Նույն տարում նահանգի թուրքերի թիվն էր 45.000, քրդերինը՝ 82.000: Ընդամենը՝ 296.000[1]:

Թուրք պատմաբան Էսադ Ուրասը գրում է, որ 1913-ին վիլայեթում բնակվում էր 72.129, իսկ 1914 թ.՝ 73.166 հայ (ընդհանուր բնակչության թիվն էր 616.825):

Այս բոլոր թվերը չատ մոտավոր են և, եթե հավատանք վալի Ռեշիդի տվյալներին՝ նաև չատ պակասեցված: «Takvim-i Vekai» թուրքական պաշտոնաթերթի՝ № 3540-ում տպագրված է Ռեշիդի 1915 թ. սեպտեմբերի 15-ի ծածկագիրը, որում ասված է, թե տեղահանված է 120.000 հայ: Այս թվի մեջ չէին մտնում 1914 թ. օգոստոս – 1915 թ. հուլիս ամիսներին բանակ զորակոչված հայերը: Այսինքն, եթե հավատալու լինենք Ռեշիդին, Դիարբեքիրի նահանգի հայության թիվը 1915 թ. մոտենում էր 150.000-ի: Մինչդեռ վիլայեթի կառավարության տոմարներում՝ տարագրված հայերի թիվը նշված է 60.283: Հետևաբար, կա՛մ վալին էր չափազանցնում՝ չեչտելու համար իր «մեծ վաստակը», և կա՛մ վիլայեթի կառավարությունը տարագրված հայերի թիվն արհեստականորեն նվազեցրել էր՝ սեփական հրեչագործության ծավալները փոքրացնելու և դատաստանից խույս տալու համար:

Հավանական են թե՛ մեկը և թե՛ մյուսը:

---

[1] ***Léart M.,*** *La Question Arménienne a la Lumiére des Documents, Paris, 1913, p. 61.*

Լեփսիուսի տվյալներով՝ 1915 թ. վիլայեթում բնակվում էր 471,5 հազ. մարդ, որից հայեր՝ 105.000, ասորիներ՝ 60.000, քրդեր՝ 200.000, թուրքեր՝ 63.000, կղլբաչներ՝ 27.000, չերքեզներ՝ 10.000, եզդիներ՝ 4.000, հրեաներ՝ 1.500: Դիարբեքիր քաղաքում հայերի թիվը նշվում է 45.000 հոգի:

Թվում է, որ թե՛ թուրքական աղբյուրները և թե՛ նրանց ազդեցության տակ, հայ հեղինակները կամայականորեն փոքրացնում էին հայ բնակչության թիվը: Իրապես 1915 թ. սկզբին Դիարբեքիրի նահանգում բնակվում էր 150.000 հայ:

Նաև նշենք, որ 1890 թ. վիլայեթում գործում էր 159 դպրոց 5120 աշակերտով և 176 ուսուցիչով:

Գր. Զոհրապի տվյալներով՝ 1902 թ. Դիարբեքիրում գործում էին հայկական 4 դպրոց 1114 աշակերտով և 27 ուսուցիչով, ինչպես նաև 12 եկեղեցի և 6 եպիսկոպոս: (Նահանգում կար հինգ վանք, 105 եկեղեցի)[1]:

Դեռ 1910 թ. Դիարբեքիրում իթթիհադականները ստեղծեցին «Ինթիբահ չիրքեթի (Վերածնության ընկերություն)» թուրքիստական կազմակերպությունը, որի ղեկավարն էր հայատյաց, թուրքական խորհրդարանի անդամ Փիրինջի-զադե Ֆեյզին: Նա Ռեչիդի հետ միասին գլխավոր դերը խաղաց նահանգի հայ բնակչության բնաջնջման գործում: Նրա հայրը՝ Փիրինջի Արբֆը եղել էր Դիարբեքիրի հայության 1895 թ. ջարդերի կազմակերպիչը: Մի հայ պատրիարքարանին գրում է, որ 1914 թ. հուլիսի 15-ին Ֆեյզին իրեն ասել էր, թե հայերը չատ վատ վարվեցին թուրքերի հետ. «Պալքանեան պատերազմէն վերջ մեր էն տկար միջոցին Զաւէն պատրիարք, Էջմիածնի կաթողիկոս եւ Պողոս փաշայ միանալով՝ մեր վրայ օտար տէրութեանց միջամտութիւնը հրաւիրեցին»: Ապա ավելացրել է. «Մեզի դաւաճանելու համար դուք չատ պիտի տուժէք, ձեր ապագան վտանգուած է»[2]: Օգոստոսի 27-ին նա Մեծ Բրիտանիայի հյուպատոսին ասում է. «Թուրքիայի շահերը պահանջում են, որ անցնենք Գերմանիայի կողմը: Գերմանիան խոստացել է, որ եթե օգնենք, կվերադարձնի մեր կորցրած բոլոր երկրները՝ Եգիպտոս, Բենգազի, Տրիպոլիս, Թունիս, Ալժիր, Ռումելիա, Արշիպելագներ, Կրետե, Կիպրոս, Կովկաս, ինչպես նաև Հնդկաստանը: Այն ժամանակ կստեղծենք Օսմանյան կայսրություն 300 միլիոն մահմեդականներով»[3]: Նա հայերին խորհուրդ էր տալիս «Կովկասի հայերի միջոցով խռովություն բարձրացնել Ռուսաստանում և դրանով օգնել Թուրքիային՝ վերստանալու իր կորցրած այդ մասը (Կովկասը)... Բայց եթե հայերը չարունակեն իրենց հիմար ընթացքը, դա նրանց վրա ծանր է նստելու: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանն օգնել և նրանց ազատել չեն կարող, մինչդեռ մենք ի զորու ենք նրանց հետ վարվել ինչպես ցանկանանք և մեր դաշնակիցներ Գերմանիան և Ավստրիան ձայն չեն հանելու... Հայերը պետք է մտահոգվեն, նրանք փոքրաթիվ են և, եթե կոտորվեն, կվերջանան»[4]:

Օգոստոսի 1-ին Դիարբեքիր է հասնում զորահավաքի, իսկ քիչ անց՝ նաև

---

[1] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 407:*

[2] *Նույն տեղում, էջ 406:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում, էջ 407:*

ռազմական դրություն մտցնելու հրամանները: Վիլայեթում ստեղծվեց զորահավաքի և ռազմական տուրքերի հանձնաժողով, որը գլխավորում էր նահանգի իթթիհադականների ղեկավար Աթթար Հագգրն: Հանձնաժողովի մասնաճյուղեր ստեղծվեցին բոլոր բնակավայրերում:

Դիարբեքիրի հայության վիճակն ավելի քան ծանր էր, նրա կյանքը՝ վտանգված: 1913 թ. ապրիլի 22-ին տեղի ֆրանսիական հյուպատոսը տեղեկացրեց, որ վիլայեթում «չի բացառվում հայերի նոր կոտորածների հնարավորությունը»[1]: Մեկ ամիս անց Ա. Բերեզովսկին հաղորդեց. «Այստեղ չկա հայ, որ վստահ չինի՝ եթե վաղը շուկա դուրս գա, վայրագորեն չի խողխողվի կամ գնդակահարվի, իսկ տանը մնացած նրա կինը կամ աղջիկը՝ չեն պատվաղրկվի: Այստեղ չկա հայ կին կամ աղջիկ համոզված, որ իրեն ամենանողկալի ձևով չի անարգի վայրի սրիկաների հրոսակախումբը: Այստեղ չկա հայ ծնող, որ չկասկածի, թե դպրոց ուղարկված իրենց զավակները կենդանի կվերադառնան»[2]:

Զորահավաքի ու առաքումի հանձնաժողովի հետ միասին կազմակերպվում է «Պատերազմական նպաստի» հանձնաժողով՝ երիտթուրք գործիչ Քոռ Յուսուֆի գլխավորությամբ: Հանձնաժողովի մասնաճյուղերը, որոնք ստեղծվեցին նահանգի բնակավայրերում, խնդիր ունեին «ռազմական կարիքների» պատրվակով բռնագրավել հայերի ունեցվածքը՝ «բրդեղեն ու կտորեղեն, պատրաստի և չմշակված ապրանքներ, երկաթյա և պղնձյա ամաններ ու գործիքներ, շաքար, թեյ ու սուրճ, լուցկի ու աբեթ, բոլոր տեսակի յուղեր և նավթ. ցորեն, գարի, հաճար, բրինձ և բամբակ, ձի, ուղտ, նժույգ, ջորի և էշ, կով ու գոմեշ, այծ, եզ ու ոչխար, կարպետներ, գորգեր, վերմակ ու անկողին...»[3]: Հայ արհեստավորներին հարկադրեցին անվճար աշխատել շտեմարաններում, գործարաններում, շինարարության վրա:

«Ժողովուրդը՝ ցորեն, ալիւր, գարի, ձի, ջորի, ոչխար, ձաւար, իւղ, թացան, տրեխացու մորթիներ, գեղջկուհու գլխի սաւաններ եւ այլն ունեցողը,- գրում է Զավեն պատրիարքը,- լրիվ մնջիկ կու տայ արդէն, իսկ չունեցողները պէտք է դրամով ճարեն ու բերեն, հակառակ պարագային կը յանձնվեն Պատերազմական ատեանին: Դժբախտաբար հոս չի վերջանար չարիքը, ամիսէ մը ի վեր քիւրտը սկսած է իր հին արհեստը, գուցէ իրմէ եղած գրաւումներու տեղը լեցնելու եւ իր վրէժխնդրութեան ծարաւը յագեցնելու համար հայու գլխուն»[4]:

Մեկ ամսվա ընթացքում հայերը լրիվ կողոպտվեցին: Կողոպուտը գյուղերից չալակով քաղաք էր բերում նույն հայ գյուղացին:

Այս առիթով Մեծ Բրիտանիայի հյուպատոս Թ. Մկրտչյանը գրում է, որ չնայած քաղաքի ազգաբնակչության 1/3-ն էր քրիստոնյա, նրանց էր բաժին ընկնում բռնագրավված ունեցվածքի 5/6-ը: Հայերին պետք էր տնտեսապես ու ֆիզիկապես քայքայել: Այդ նպատակն էր հետապնդում նաև երիտթուրքերի տեղական կոմիտեի որոշմամբ քաղաքի շուկայի հրդեհումը 1914 թ. օգոստոսի 19-ին, որը ոչնչացրեց 1080 խանութ, 13 փուռ և 3 հյուրանոց: Դրանք բոլորը

---

[1] АВПР, Канцелярия, оп 470, д. 114, л. 249.

[2] "Биржевые ведомости", 14 мая 1913 г.

[3] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 404:

[4] **Զաւէն Պատրիարք**, նշվ. աշխ., էջ 54-55:

պատկանում էին հայերին, որովհետև Թուրք առևտրականներին նախապես զգուշացրել էին հրդեհի մասին և նրանք դատարկել էին իրենց խանութները[1]: Հրդեհողը Ֆեյզիի հրամաններով գործող Մեմդուհն էր:

Այդ ժամանակ վալին էր Համիդ բեյը, որն ուղղամիտ մարդ էր: Նա վարչական միջոցառումներ ձեռնարկեց մի քանի չարագործ պաշտոնատարների նկատմամբ: Պաշտոնազրկեց Մեմդուհին, բանտ նետեց քուրդ ազդեցիկ աշիրեթապետներ Սարհանին, Ալիին, Հաճոյին և այլոց:

Համիդ բեյը երբ լսեց, որ Թուրքիան պատերազմի մեջ էր մտել, դա անվանեց «անձնասպանութիւն: Անգլիայի դէմ պատերազմ սկսիլը կը նշանակէ անձնասպան ըլլալ»[2]:

Մի խորհրդանշական փաստ. եթե հայերն ամեն ինչ անում էին չուկայի հրդեհը մարելու, ապա իշխանությունների ներկայացուցիչները նավթ գործածելով հրդեհը տարածում էին: Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հյուպատոսները հրդեհի պատճառած վնասը գնահատում էին 2.5 միլիոն դոլար[3]:

Կառավարությունը,- գրում է Լեփսիուսը,- 16-20 տարեկան 700 երիտասարդի կանչում է «իբր զինուորական ծառայութեան համար եւ Տիարպէքիրէն Ուրֆայի միջեւ՝ Գարապագչայէն-Հալէպ ճամբուն վրայ զանոնք կը լծէ աշխատանքի: Այս զինուոր գործաւորները աշխատանքի ընթացքին իրենց վրայ հսկայ ոստիկաններու կողմէ զէնքով սպաննուեցան: Հետագային, տասնապետը, որ կը հրամայէր ոստիկաններուն, կը հպարտանար, որ կարողացած էր միայն հինգ ոստիկաններով սպանել այս անզէն 700 հայերը...»[4]:

Ապրիլին ստեղծվեց «Միլլի Թաբուրի» կիսապաշտոնական հրոսակախումբը, որի ղեկավարությունը նույնպես ստանձնեց Ֆեյզին: Խմբի հազարապետներից տասը վիլայեթում հայտնի ավազակապետներն էին, իսկ չավուշներից յուրաքանչյուրն ամեն օր 4-5 հայ էր սպանում: Խումբն ամբողջությամբ կազմված էր մարդասպաններից:

Ձևավորվեց նույնպես չեթեական մարդասպաններից կազմված երկու վաշտ՝ «Ղասաբ Թաբուրի» անունով:

Երբ Ուրֆա հասանք (1914 թ. օգոստոսի 27-ին), գրում է հայ պաշտոնատարը, և Դիարբեքիրի նախկին վալի Հ. Ջելալը հայտնեց, որ Հոֆֆը հեռացել է Վանից. Ֆեյզիի «ուրախութեանն այլևս սահման չկար»: Նա չուռ գալով դեպի Թ. Մկրտչյանն, ասաց. «Այժմ պիտի տեսնէք, թէ ձեր գլխուն ի՞նչ պիտի գայ»:

Հայերը չփոթված էին: ՀՅ Դաշնակցության տեղական կոմիտեն դիմեց Արևմտյան բյուրոյին. «Ի՞նչ անել»: Ստացվում է պատասխան. «Պաշտպանվեցե՛ք ունեցած հնարավորություններով ու միջոցներով, զգուշացե՛ք (ձեռնպահ մնացե՛ք) նախահարձակ գործողություններից, զենքի օգտագործումից, սպասե՛ք մեր հրահանգին»[5]:

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 406:

[2] Նույն տեղում:

[3] **Մկունդ Տ.,** Ամիդայի արձագանգներ, Նիւ Եորք, 1950, էջ 246-253:

[4] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 414:

[5] Նույն տեղում, էջ 406:

Հալածանքներն այնքան են սաստկանում, որ տեղի առաջնորդ Մկրտիչ վրդ. Զլղատյանը պատրիարքին հասցեագրած (սեպտեմբերի 27-ի) նամակում նշում է. «Ժողովուրդը հասցուած է այն աստիճանին, որ այլեւս անկարելի է տանիլ: Ամենաբուռն սաստկութեամբ եւ սպառնալիքներու ներքոյ կը գրաւեն»: Առաջնորդը թվարկում է բազմաթիվ սպանությունների և կողոպուտների փաստեր, որոնց հանդեպ իշխանությունները ցուցաբերել են բացարձակ անտարբերություն[1]:

Չնայած բռնությունների ու սպանությունների սաստկացման՝ Կ. Պոլսում դժգոհ էին դրանց ծավալների փոքրությունից ու խստության պակասից: Մինչդեռ Ռիցը տեղում լինելուց հետո հայտարարեց, թե «Դիարբեքիրում ահաբեկչության այնպիսի ահավոր մթնոլորտ է տիրում, որպիսին ինքը որևէ տեղ չի տեսել: Որևէ հայ չի համարձակվում փողոց ելնել: Զինվորները դիրքեր են գրավել տանիքներին ու պատրաստ են կրակելու հայտնված ամեն մի հայի վրա», եթե նույնիսկ բակ էր ելնում: Գրեթե բոլոր տղամարդկանց ձերբակալել և աքսորել են, ինչը «անխուսափելի մահ» է նշանակում:

Թուրքական իշխանությունները հաջողում են հայ դավաճանի օգնությամբ զինվորական ծառայությունից խույս տվողներին մի վայրում հավաքել ու ոչնչացնել: Սակայն դասալքությունը չի դադարում: Վալին նորից է այդ հարցով դիմում առաջնորդարանին, որ եթե դասալիքները հանձնվեն, նրանց ներում կշնորհվի: Առաջնորդը համաձայնվում է. սակայն առաջին իսկ հանձնված զինվորը սպանվում է:

Դիարբեքիր է գալիս Մկրտիչ Յոթնեղբայրյանը՝ այստեղ ինքնապաշտպանական աշխատանքներ ծավալելու համար, բայց տեղացիները հրաժարվում են դրանով զբաղվելուց, և նա վերադառնում է Ուրֆա:

Սակայն, երբ վտանգն անկասելի է դառնում, տեղի դաշնակցական և հնչակյան կազմակերպությունները որոշում են միացյալ ուժերով պայքարել թուրքական հայակեր քաղաքականության դեմ: Բայց քաղաքի հարուստ հայերը ձեռնպահ են մնում, չեն ուզում հարաբերությունները խզել իշխանությունների հետ և ձախողում են երկու կուսակցությունների նախաձեռնությունը:

Այնուամենայնիվ, հայկական թաղերում նախապատրաստական աշխատանք էր տարվում մահմեդականների հարձակումից պաշտպանվելու համար:

1915 թ. մարտի 28-ին Համիդն ազատվում է վալու պաշտոնից ու նոր վալի է նշանակվում «Մոսուլ գտնուող արիւնարբու տոքթ. Ռեշիտ պէյը, ծագումով չերքէզ»: Նա իր հետ բերում է մի խումբ չերքեզ պաշտոնյաների ու նաև 40-50 չեթեների՝ ժանդարմի հագուստով: Նախկին պաշտոնին է վերականգնվում կոմիսար Մեմդուհը: Այս տեղափոխություններում վճռական դեր է խաղում Ֆեյզին[2]:

Փոխվեցին վիլայեթի ուժային կառույցների պետերը: Դրանց ղեկավարներ նշանակվեցին Բեդրէդդինը, չերքեզներ Ռուշդին և Շաքիրը, որոնք Ռեշիդի հետ եկածներից էին:

---

[1] **Դեխս Լ.**, նշվ. աշխ., էջ 104-105:

[2] Տե՛ս **Քասունի Հ.**, 1915 և կոտորածները Տիարպեքիրի մէջ, էջ 409-410:

Դիարբեքիրի հայերի ջարդի ծրագիրը կազմել էին Ֆեյզին, Ռեշիդը, Բեդրէդդինը, Ռուշդին: Ապրիլի 6-ին Ֆեյզին մեկնում է Ջեզիրե՝ ճանապարհին համապատասխան հանձնարարություններ տալով աշիրեթապետներին:

Ռեշիդի գլխավորությամբ գործում էր ջարդերի կազմակերպման 25 հոգուց կազմված հանձնախումբ, որին անվանում էին «Հայկական հարցի քննիչ հանձնաժողով»: Դրա կազմում էին Բեդրէդդինը, Հոֆֆը, Ֆեյզին, Ռուշդին, Շեքը, Շերիֆը: Ջեթեների ընդհանուր հրամանատար նշանակվեց Ֆ. Մուստաֆան[1]:

Ապրիլի 8-ին այդ կազմակերպության երկու ղեկավարներ գնում են հայոց առաջնորդարան և Մկրտիչ վրդ. Զլղատյանից պահանջում, որ հայերը հանձնեն բոլոր զենքերը: Հրավիրվում է ազգային ժողովի նիստ: Զլղատյանն ու մի խումբ երիտասարդներ գտնում էին, որ զենքերը հանձնելն ինքնասպանություն է և պետք է դիմել ինքնապաշտպանության: Սակայն ժողովի մեծամասնությունն դեմ արտահայտվեց, իսկ Խ. Տիգրանյանը սպառնաց առաջնորդին. «Ծո՛, վարդապե՛տ, ինչպես եկեր ես, անանկ ալ քեզի ձիու վրայ դրած կը ղրկենք»:

Ժողովը գտավ. «Մենք կառավարութեանը հակառակ չենք կրնար երթալ եւ մեր հաւատարմութիւնը ցոյց տալու համար պէտք է, որ հայոց քով եղած զէնքերը յանձնենք»:

Ապրիլի 19-ին Ֆեյզին ճամփորդության է մեկնում վիլայեթի բնակավայրերը և գրգռում է թուրքերին ու քրդերին հայերի դեմ՝ պահանջելով վերջիններին անխնա ջարդել: Նա դիմում է նաև մոլլաների աջակցությանը: Քրդական ռաման աշիրեթում հանդիպում է տխրահռչակ ավազակ, մի քանի անգամ մահվան դատապարտված ու փախուստի մեջ գտնվող Ամարոյին և նրան ներում չնորհում, պայմանով, որ ստանձնի հայերի կոտորածը[2]:

Տ. Մկունդը իր «Ամիդայի արձագանգներ» գրքում վերարտադրում է Ֆեյզիի խոսքերը. «Զաւա՛կս, Ամարո՛, մի քանի օրէն 600-700 հայեր, մեր եավեր չերքէզ Շաքիր պէյի հրամանատարութեան տակ Մոսուլ աքսորելու պատրուակով պիտի հասնին Շքաֆթան գիւղն, այնտեղ եավեր Շաքիր պէյին հրահանգին համաձայն ամբողջ աշայիրովդ պիտի ոչնչացնէք զանոնք, առանց մէկ հայի մը խնայելու եւ եթէ իմանանք մէկ հայ ազատած էք. պատասխանատու էք, գիտցած եղէ՛ք»[3]:

Քաղաքում ձերբակալություններ սկսվեցին 1915 թ. ապրիլի 16-ին: Նույն օրն էլ չրջապատվեցին հայկական թաղերը: Դասալիքներ փնտրելու պատրվակով խուզարկություններ են սկսվում, 300 երիտասարդ բանտ է տարվում:

Ապրիլի 19-ին ձերբակալեցին քաղաքի հայ ազգային ավագանուն, 21-ին՝ կուսակցական ղեկավարներին, մայիսի 1-ին՝ պետական պաշտոնատարներին, մտավորականներին, առևտրականներին, սեղանավորներին ու բոլորին խոշտանգումների ենթարկեցին:

Մայիսի 7-ին վերսկսեցին զենքերի հավաքումը: Ապա ձերբակալեցին

---

[1] **Զաւէն Պատրիարք,** նշվ. աշխ., էջ 408:
[2] **Մկունդ Տ.,** նշվ. աշխ., էջ 249-250:
[3] Նույն տեղում, էջ 246-253:

հոգևորականներին, այդ թվում նաև առաքելական և կաթոլիկ առաջնորդներին:

Մայիսի 25-ին Ուրֆայից վեց մղոն հեռավորության վրա, Կարաքյոմի մոտ սպանեցին 1500 հայ զինվորի:

Մայիս ամսվա ընթացքում ձերբակալվածների թիվը, ըստ Լեփսիուսի, 1000-ի էր հասնում: Այնուհետև ձերբակալեցին ևս 400 հոգու, ապա նաև 11.000 հոգու, որոնք զոհ գնացին թուրքական գաղանություններին:

Մայիսի 14-ի գիշերը հայկական թաղերը շրջապատվեցին: Լուսաբացին ժանդարմները, ոստիկաններն ու չերքեզները խուժեցին փողոցներն ու տները:

«Դիարբեքիրում ձերբակալված հայերը,- տեղեկագրում է Կոլուչևը,- սպանված են բանտերում: Գնդակահարելու սպառնալիքով հայերին արգելված է քաղաքից դուրս գալ... Տեղի վարդապետի փոխանորդը նավթ խմելով ինքնասպան է եղել»[1]:

Հունիսի 3-ին նա տեղեկացրեց, որ քաղաքում «խանութներ են հրկիզվել...»[2]:

Մայիսի 28-ին թնդանոթը բերդից կրակ է բացում Ս. Կիրակոս եկեղեցու զանգակատան վրա:

Բանտարկվածներին խոշտանգելու եղանակներ գտնելու համար «կուսակալն ու մեպուս Ֆեյզին գանգեր կը ճաթեցնեն»: Առաջին զոհերը, ըստ Լեփսիուսի, լինում են 27 երևելիները, որոնց «խոշտանգեցին բանտի մէջ եւ Օսման պէյի եւ ոստիկանութեան տնօրէնին՝ Հիւսէյին պէյի ձեռքով զանոնք սպաննել տուին: Քահանայի երիտասարդ կինը 10 զափթիէներու կողմէ պղծուեցաւ... Մօտաւորապէս 30 օր օրական մեծ թիւով հայեր կը ձերբակալուէին, որոնք անմիջապէս բանտին մէջ գիշերը կը սպաննուէին: Ապա երկու հայ բժիշկներու ստիպեցին վկայել, որ անոնց բոլորին ալ մահուան պատճառը ժանտախտն էր»[3]:

Բանտարկվածներից ոմանց պայտեցին ու հարկադրեցին քայլել, մարմինները երկաթով այրեցին, գլուխները ճզմեցին մեքենաների մեջ, անդամահատեցին, խաչեցին: Մեռնում էին տանջանքներին չդիմանալով:

«Տոքթ. Վահանը,- գրում է Լեփսիուսը,- ձերբակալուեցաւ 10 երեւելիներու հետ եւ անոնց յայտարարուեցաւ, թէ Մալաթիա պիտի աքսորուին: Ճամբան բոլորն ալ սպաննուեցան»: 12 դաշնակցականների բանտերում տանջելուց հետոյ կախաղան հանեցին[4]:

Առաջնորդ Մկրտիչ վրդ. Զլղատյանին մայիսի 30-ին Գաբուում առանձնացնում են հայ տարագիրների քարավանից, «փողոցներուն մէջ թմբկաւոր ամբոխով մը, իբր արջ երեսը մուր քսելով, վիզը զանգակներ կախելով, գլուխը պախուրձ անցընելով, կը խայտառակէին հոգեւորականին անվայել ընթացքներու մէջ»: «...Կէս գիշերին կը վերադարձնեն մզկիթին բակը, ուր կառավարական պաշտօնեաներուն, իսլամ ամբոխին ու չէյխերուն ու թմբկահար տերվիշներուն

---

[1] *"Геноцидът над арменците", ф. 321, оп. 1, д. 2462, л. 76.*

[2] *Նույն տեղում:*

[3] *«Յուշամատեան Տիարպէքիրի», էջ 410:*

[4] *Նույն տեղում, էջ 411:*

ներկայութեանը նախ կը քաշեն տարաբախտ վարդապետին ակռաները մէկիկ-մէկիկ, քունքերուն չիկացած երկաթ կը մեխեն, կը կտրեն զմելիով մարմնին միսերը, կը փորեն աչքերը եւ յետոյ կաթիլ-կաթիլ քարիւղ թափելով կը վառեն եւ կէս ածխացած վիճակի մէջ կը ձգեն կ'երթան»[1]:

Ապա, գրում է Տիգրան Մկունդը, «ջուր կը լեցնեն՝ մարելով կրակը: Խելակորոյս վիճակի մէջ կը վերցնեն զինք՝ նետելով բանտին հիւանդանոցին մէկ ախոռը... յետոյ փայտի հարուածներու տակ կը վերջացնեն Զլղատեանի կեանքը»:

Այս իրողությունների մասին վկայում է նաև Հ. Ֆիրբյուխերը:

Բանտում սպանեցին 26 նշանավոր դեմքերի, այդ թվում Արփիար քահանային: Տասը ժանդարմներ բռնաբարեցին և մահամերձ դարձրեցին նրա երիտասարդ կնոջը: Հինգ հոգևորականի լրիվ մերկացրեցին, ձյութ քսեցին և պտտացրեցին քաղաքում[2]: Մի հերթապահ հպարտացավ, թե հինգ ժանդարմի հետ սպանել է 700 հայի[3]:

Կաթոլիկների առաջնորդ Անդրեաս եպս. Զելեպյանին «Հալէպ ղրկելու պատրուակով Հոռոմ դուռնէն դուրս կը հանեն... եւ պարապ սառնարանին մէջ իջեցնելով կը հարցնեն. «Ինչպէ՞ս կ'ուզես, որ քեզ սպաննենք»: «Քարկոծցէ՛ք»,- լինում է պատասխանը: Քարկոծում են և քրոջ ներկայությամբ սպանում:

Քաղաքից հանվում է 10 հազ. հայ երիտասարդ և ինչ-որ տեղերում ոչնչացվում:

Գյուղերը բռնագաղթվեցին:

Մայիսին մոտ 10.000 հայ երիտասարդների քաղաքից տարան վիլայեթի գյուղերի հայերի տարագրությունը կազմակերպելու անվան տակ, բայց քշեցին ձորերն ու սպանեցին: Մեծ թվով կանայք և աղջիկներ առևանգվեցին: Ամեն գիշեր 4-5 գյուղ էր ոչնչացվում:

Հունիսի 2-ին Ռեշիդի գիտությամբ ոստիկանապետ Մեմդուհը ժանդարմների ու չեթեների գլուխն անցած շրջապատում է Մարդինը և սպանում 403 հայ: Հունիսի 4-7-ը բանտ նետվեց 1420 հայ: Մեկ օր հետո Ջեմալի հրամանատարությամբ 2000 չեթե հայերին լցրեցին Թել Էրմենի եկեղեցին, որը հրդեհեցին և բոլորին ոչնչացրեցին:

Ռեշիդն ու Ֆեյզին մի քանի օր շարունակ քաղաքի մահմեդականներին հորդորում էին անխնա ոչնչացնել հայերին: Ֆեյզիի նախագահությամբ կայանում է Իթթիհադի տեղական կազմակերպության ժողով, որին մասնակցում էին ջարդարարների ղեկավարները և մուֆթին: Քննարկվող հարցն էր՝ բոլո՞ր հայերին ոչնչացնել, թե՞ երեխաներին խնայել: «Ժողովը միանձնութեամբ որոշում կու տայ հայոց բնաջնջման»: Որոշումը հանձնում են կառավարչին[4]:

Ի դեպ, ըստ Ս. Ակունու (Սեպուհ Ակոնյան), ժողովը երեք օր է տևում:

---

[1] **Ակունի Ս.**, նշվ. աշխ., էջ 66:
[2] **Մկունդ Տ.**, նշվ. աշխ., էջ 376:
[3] **Ֆիրբյուխեր Գ.**, նշվ. աշխ., էջ 55:
[4] «Յուշամատեան Տիարպէքիրի», էջ 412:

Մուֆթին առաջարկում է մինչև 12 տարեկան երեխաներին ու գեղեցիկ աղջիկներին խնայել՝ քրդերին գեղեցկացնելու համար: Առաջարկը չի անցնում: Ժողովի յուրաքանչյուր մասնակից «Կ'երդնու Քուրանին անունով սպանել ամեն հայ, ո՛վ կ'ուզէ ըլլայ, իսկ այն թուրքը, որ կ'օգնէ հայու մը, իր կարգին պիտի սպաննուի, իբր դաւաճան կրօնի»:

Ռեշիդի գործունեությունն այնպիսի զգրելի բնույթ էր ստանում, որ անգամ Վանգենհայմը հարկադրված եղավ հուլիսի 12-ին Բարձր Դռնից պահանջել «միջոցներ ձեռնարկել», որպեսզի նրա դաժան քաղաքականությունը չհանգեցնի այդ «չրջանի քրիստոնյաների գլխովին ոչնչացմանը»[1]:

«Տիգրանակերտի վալին,- գրում է Նոգալեսը,- դոկտ. Ռեշիդ բեյը 50 տարեկան է: Կրթությունն ստացել էր Փարիզում, սերված էր Կ. Պոլսի ազնվական ընտանիքից», բայց ջարդերի ամենամոլի կազմակերպիչներից էր: Նա ասաց, թե «ջարդերի հրամանները ստացել է ՆԳ նախարար Թալեաթից»[2]:

Այդ օրերին Դիարբեքիր է գնում Ամարոն իր «չաքմաքլիով, լայն-լայն չալվարով, կինտոյի ապա վերարկուովը եւ կէս մեթր բարձրութեամբ բուրդէ չինուած քիլայովը: Կատարեալ լերան արջ մը»:

Դիարբեքիրում Ամարոյին հանդիսավորությամբ ընդունում է վալին ու ասում. «Քանի մը օրէն 700-ի չափ հարուստ հայեր վելեքներով (լաստերով) մեր Թիկնապահին հսկողությամբ աքսոր պիտի տարուին դեպի Մոսուլ: Երբ անոնք գիւղը հասնին, պէտք է ամենն ալ սպաննես, անոր փոխարէն պատուանշաններով ու ընծաներով պիտի պատուրուիս» և «որ թէկուզ խնայուած անգամ մէկ հայի համար պատասխան ես տալու»:

Քուրդը համաձայնվում է և հաջորդ օրը մեկնում է Շքաֆթան՝ հետը տանելով «երկու կառք պարան»:

Մայիսի 30-ին բանտերում եղած 1000 մտավորականներից 635-ին քարավան կազմած ուղարկում են իբր Մոսուլ: Նրանց նստեցնում են 13 լաստեր և տանում են դեպի հարավ: Քարավանը կազմված էր հայ երևելիներից, մտավորականներից, հոգևորականներից:

Հունիսի 19-ին նրանք հասնում են Ամարոյի գյուղի՝ Բչերիկի մոտակայքը: Լաստերը գյուղ չհասած կրակի տակ են ընկնում, երկու հոգի վիրավորվում են: Աքսորյալներին ուղեկցող Շաքիրը ոստիկաններին հանձնարարում է հետապնդել քրդերին և պատճառաբանելով, թե ճանապարհը վտանգավոր է, համոզում է հայերին ունեցած դրամը հանձնել իրեն: Հանձնում են: «Երբ հասան Շքաֆթան, եկավ Ամարոն և խնդրեց, որ այդ գիչերը հյուրընկալեն իրեն: Աքսորյալները լաստերից դուրս են գալիս վեցական հոգով, իբր քրդերի կողմից չնկատվելու համար: Ամարոյի մարդիկ նրանց գյուղ հասցնելով անմիջապես մերկացնում են ու տանում Պեղվանի ձոր ու մեռցնում: Հայերի հագուստները վաճառվում են Դիարբեքիրի չուկայում: Դիակներին քրդական տարազ են հագցնում ու լուսանկարում՝ իբր հայերի կողմից սպանված քրդեր են:

---

[1] FO Turkey 183, Bd 37, Վանգենհայմի 1915 թ. մայիսի 31-ի նամակը:

[2] De Nogales, նշվ. աշխ., էջ 139:

Ֆայեզ էլ-Ղուսեյնը գրում է. «Թուրք կառավարութիւնը մտածեց, որ եւրոպական պետութիւնները պիտի չուշանան հասկնալու հայոց բնաջնջումը եւ որ լուրը ամբողջ աշխարհի մէջ պիտի պտտուի, ինչ որ պիտի չուշանար աշխարհի հանրային կարծիքը Թուրքերու դէմ հանելու: Որով կառավարութեան գործակալները որոշ թիւ մը հայեր ջարդած ըլլալով, ծպտեցին դիակները՝ զանոնք քիւրտերու վերածելով, անոնց գլուխները փաթթոցներով ծածկելով եւ բազմաթիւ քիւրտեր բերել տուին, որոնք չրջապատեցին դիակները, ողբեր արձակելով: Պատկերահան մը, վարձուած այդ նպատակով, այս տեսարաններուն պատկերը քաշեց՝ ապագային Եւրոպայի կլլեցնելու մտադրութեամբ, թէ հայերն էին նախայհարձակները, որոնք քիւրտերու վրայ յարձակելով, անոնցմէ մեծ թիւ մը սպաննած էին: Եւ որ այն ժամանակ միայն քիւրտերը, զայրացած, վրէժ առին հայոցմէ, առանց որ Թուրք կառավարութիւնը խառնուած ըլլայ այս վերջիններուն ջարդին մէջ, ինչ պարագայի մէջ ալ, որ եղած ըլլայ»: Բայց տեղի մարդկանց խաբել չէին կարող և նրանք լուր հասցրին Դիարբեքիր:

Էլ-Ղուսեյնը նաև գրում է. «700 անձերու տարագրութեան յաջորդող քանի մը օրերուն... կառավարութիւնը իր պաշտօնեաներուն միջոցով նամակներ գրել տուաւ, որոնք տարագրուածներուն անուններով կը ստորագրէին: Տարագրուածներու ծնողները մեծ գումարներ կը վճարէին՝ ստանալու համար նամակ մը»:

«Յայտնի աւազակ մը քաղաքապահ զինուորութեան պետ նշանակուած էր: Ան տարագրեալները սպաննելէ ետք պաշտօն ստանձնած էր փոխանցելու այդ թղթակցութիւնը:

Այս գաղտնի առաքելութիւնը աւարտած՝ կառավարութիւնը զինք սպաննել տուաւ: Ան կը կոչուէր Ամի Հասան»[1]:

Անդրուսելը «Literary Digest» թերթի 1917 թ. հոկտեմբերի 27-ի համարում գրեց. «Դիարբեքիրի մոտակայքից 2500 տղամարդու նստեցրեցին լաստերը, յուրաքանչյուրում՝ 75-100 զոհ: Նրանց ուղեկցում էին քրդերն ու զինվորները: Երբ հասան Տիգրիսի ամենախոր մասը, զոհերին նետեցին ջուրը: Ով փորձում էր լաստ բարձրանալ, քրդերն ու զինվորները սպանում էին, մինչև որ բոլորը խեղդվեցին»[2]: Այս վայրագությանն անդրադարձավ նաև գերմանական «Allgemeine Missions Zeitschrift»-ը. «1915-ի մայիսի 10-30-ը Դիարբեքիրի և Մամուրեթ ալ-Ազիզի միջև հայ նշանավոր գործիչներից ձերբակալվել է 1200 մարդ: Մայիսի 20-ին նրանցից 674 հոգու Տիգրիս գետում նստեցրել են 12 նավակներ իբր Մոսուլ տեղափոխելու համար: Տեղական վալին 50 ժանդարմներով ուղեկցում էր այդ քարավանին: Ժանդարմների կեսը նավակի վրա էր, իսկ մյուս կեսը կանգնած էր ափին: Ափից նավակների հեռանալուց հետո ժանդարմները նրանցից պահանջեցին ամբողջ կանխիկ գումարները և հավաքեցին 6000 Թուրքական լիրա: Ապա հրամայեցին հանվել և հագուստները տալ իրենց: Դրանից հետո ժանդարմները բոլորին խեղդեցին գետում: Ափում եղած ժանդարմներին հրամայված էր կրակել նրանց վրա, որոնք կփորձեն ջրից դուրս

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 414:
[2] **Էլ-Ղուսեյն Ֆ.,** նշվ. աշխ., էջ 39-40:

գալ: Հետագայում այդ տանջամահ արվածների հագուստները վաճառվեցին Դիարբեքիրում»[1]:

Մեկ շաբաթ հետո Ֆեյզին և Ռեշիդը Ամարոյին հանձնարարում են բռնել կամ ոչնչացնել Ամպար գետի շրջանում գործող հայ հեղափոխականներին: Նրան «օգնելու» համար տրամադրված 10 չերքեզներն առաջինը սպանում են Ամարոյին՝ հայ մտավորականության ջարդի հետքերը ջնջելու համար:

Նույն օրերին Բեդրէդդինը նշանակվեց Մարդինի մութեսարիֆ, իսկ Մեմդուհը՝ կոմիսար՝ տեղի հայության ջարդը կազմակերպելու համար: Նրանց հանձնարարված էր նախ փոսեր փորել տալ հայերի դիակների համար: Սակայն դրա կարիքը չզգացվեց, որովհետև Բեդրէդդինը Ռաս ուլ-Այնի մերձակայքում գտավ մի քանի մեծ հորեր և գնդաններ, որոնք և դարձան հազարավոր հայերի գերեզմաններ:

Մոսուլում Գերմանիայի հյուպատոսը 1915 թ. հունիսի 10-ին հեռագրեց. «614 հայ՝ ծեր, կին և երեխա Դիարբեքիրում լցվեցին լաստերը և խեղդամահ եղան, լաստերը Մոսուլ հասան դատարկ: Գետը մարդկային մարմինները կուլ տվեց: Նման էլի ուրիշ լաստեր պատրաստվեցին: Հունիսի 18-ին Էրզրումում Գերմանիայի հյուպատոսը տեղեկացրեց, որ Երզնկայի մոտ ջարդեր եղան: Հեծելազորային 86-րդ գունդը, իրենց սպաների հրամանով և քրդերի աջակցությամբ, ավելի քան 20 հազար կին ու երեխա կոտորեց Քեմախի կամրջի վրա: Բիթլիսում հայերի մեծ մասը սպանվեց, 900 կին և երեխա Տիգրիսի ջրերի մեջ նետվեցին: Սա անվերջ շարքն է անարգ, զազրելի անգթությունների: Հայերից ոմանք ողջ-ողջ հրկիզվեցին իրենց տներում: Այն հայ զինվորները, որոնք թուրքական բանակին ծառայել էին քաջությամբ ու հավատարմությամբ և իրենց այդ քաջության ու հավատարմության համար արժանացել էին նույնիսկ էնվեր փաշայի մեծարանքին, հետագայում զինաթափ եղան, լծվեցին տաժանակիր աշխատանքի բանակի թիկունքում և ապա հրացանազարկ եղան իրենց երբեմնի զինակիցների կողմից, իրենց իսկ սպաների հրամանով»[2]:

Դիարբեքիր քաղաքի տարագրությունը տեղի ունեցավ հունիսին: Ուղարկվում էին տարբեր ուղղություններով՝ դեպի Մարդին, Կարաբախչա, Դարա, Ռաս ուլ-Այն, Նիզիբին, Դեր Զոր: Մեծ թվով հայեր զոհվեցին Կարաբախչայում, Զարոխիկ գյուղում, Շեյթան դերեսիում և Կայնազ գյուղի մոտի Բիգատլան ձորում:

Հուլիսի 10-ին Դիարբեքիրից հանեցին չուրջ 2000 կին ու աղջիկ: Նրանց տարան Ուրֆա և բաժանեցին թուրքերին:

Միլիս թաբուրիի ղեկավարներ Շեքի և Ռուշդի բեյերը ամեն օր առավոտյան մթնշաղին մտնում էին հայերի տները, հաշվառում ընտանիքի անդամներին, յուրաքանչյուր տան մուտքին հերթապահ-չերքեզ նշանակում, որպեսզի տնից դուրս եկողներ չլինեին: Նույն օրվա գիշերը նշված տներից հայերին հանում էին: Այդպես ամեն օր, օրը 30-40 ընտանիք, մինչև հոկտեմբեր ամիսը: Քաղաքից հանվեց 35-36 հազար հայ:

«Տիգրանակերտ չհասած, հայ կիներու քարաւանի մը հանդիպեցանք, զոր

---

[1] "Армянский вестник", 1916, № 35.

[2] Lepsius J., նշվ. աշխ., էջ 118:

ոստիկաններու խումբ մը դէպի Սեվերէկ կ'առաջնորդէր: Այս դժբախտները այնքան տառապանքի ու թշուառութեան մէջ էին, որ նոյնիսկ կենդանիներու գութը պիտի շարժէր եւ արցունքներ պիտի կորզէր կարծր ժայռերէն: ...Դիակները կը տարածուէին մինչեւ սեւ Տիգրանակերտի պատնէշները»[1]:

Մարդինում կոտորվում են 2000 հայ կաթոլիկներ: Ատելությունն այնքան բուռն էր, որ աքսորվեցին նաև հայերին օգնող երեք ամերիկացիներ, որոնցից մեկը ճանապարհին մեռավ: Մարդինում հազիվ 200 ընտանիք ողջ մնաց:

Նահանգում ոչ մի հայ չխնայվեց: Մի պատվիրակ էլ-Ղուսեյնին պատմել է, թե ինչպես է հայերից «բազմաթիւ անձեր ջարդած»: Նրանք պատսպարվել էին քարանձավի մեջ և երկու հոգու անմիջապես ինքը սպանեց: «Սուլթանի հրամանն է, իսկ սուլթանի հրամանը Աստուծոյ հրամանն է, ու այս հրամանը գործադրելը պարտականութիւն մըն է»[2]:

Մեկից երեք տարեկան հայ երեխաներին թուրքերը հավաքում էին, կառքերով տանում Տիգրիս գետի մոտ և «ողջ-ողջ, ամենքն ալ, բռնելով ոտքերէն, ձեռքերէն կամ գլուխներէն, կը նետէին գետին մէջ: Ուրիշ հարիւրաւոր որբեր ալ կը տանին Կարադաշ, քաղքէն 1-1.5 ժամ հեռու գիւղ մը եւ հոն երկուքի կը ճեղքեն զանոնք, կտոր-կտոր կ'ընեն, շատ որբեր կը նետուին կատղած շունեռու առջև եւ կը յօշոտուին: Իսկ գազանաբարոյ սրիկաներ կը զուարճանան այս տեսարաններուն առջեւ»[3]:

3-րդ բանակի հրամանատար Ս. Քյամիլը հայկական նահանգների վալիներին և զինվորական հրամանատարներին ուղարկեց շրջաբերական. «Որեւէ հայի պաշտպանող մահմետական իր տան առջեւ մահապատժի կ'ենթարկուի, իսկ տունը կը հրդեհուի: Եթէ նա պաշտօնատար է, կ'արտաքսուի ու կը յանձնուի Ռազմական դատարանին: Հային պաշտպանելը ճիշդ համարողները, եթէ զինուորական են, պէտք է զորացրուին եւ դատուելու համար յանձնուին Ռազմական դատարան»[4]:

Այս հրահանգը դուռ բացեց չորթումների համար, «հայ պաշտպանելու պատրվակով» դրամ էին չորթում, նույն այդ հայերին սպանում և տիրանում նրանց կանանց ու աղջիկներին:

Հուլիսի 27-ին Դիարբեքիրից հարավի անապատներում անհետ կորան Տրապիզոնից և Էրզրումից եկած մի քանի քարավաններ:

Սեբաստիայից, Ակնից, Թոքաթից, մասամբ նաև Խարբերդից եկած և իրար հետ խառնված քարավանները Սեվերեկից հարավ գտնվող Եղի Գույուն և Մուսա Գույուն անցնելուց հետո, 18 հազ. հոգանոց այդ ժողովուրդը մահացավ քաղցից ու ծարավից: 150 կմախքացած կանայք հասան Հալեպ, իսկ Խարբերդի 3.000-անոց քարավանից փրկվեց միայն 35 կին: Բողուրթլուում և մերձակայքում ծարավից մեռավ 24.000 հոգի:

Սեպտեմբերի 3-ին հայերին կոտորեցին Ջեզիրեում, որին մասնակցեցին

---

[1] **Էլ-Ղուսեյն Ֆ.,** նշվ. աշխ., էջ 12:

[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 415:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս Ռազմական դատարանի 13-րդ թղթածրարը, վավերագիր № 1:

նաև Բաղդաղ մեկնող զորքերը: Սեպտեմբերի 9-ին սպանվածների թիվը 12.750 հոգի էր:

Դուդանի անդունդը գլորեցին 5.000 հայ կին ու երեխա: Կանանց մեջքերին փայտեր էին խփել և իրար վրա դիզել: Բլուրին մերկ կանայք կային՝ ոտքերը դեպի վեր: Նրանց բռնաբարելով մեռցրել էին:

Այս դժոխային արարքների ականատես վկաներ էին Հայր Հիասինթը, Հայր Բերեն, Դր Նոգալեսը, Ֆայեզ էլ-Ղուսեյնը:

Ժողովուրդների մշտական դատական ատյանի 1984 թ. Փարիզի նստաշրջանում հրապարակվեցին հետևյալ դիվանագիտական փաստաթղթերը.

«Թվում է, թե այս կարգի պատահարները առանձնապես հատկանշական են եղել Դիարբեքիրի գավառի համար, որը ազգագրական տեսակետից շատ խառն է եղել և որտեղ 1894-1896 թթ. կոտորածները տեղիք էին տվել իսկական գազանությունների, ոչ միայն հայերի նկատմամբ, այլև սիրիական ուղղափառ բնակչության նկատմամբ»:

Մարդինի, որի բնակչության մեծամասնությունը հայեր էին, քրիստոնյա բնակիչներից 700-ը, ինչպես նաև նրանց հայ եպիսկոպոսը «մորթոտվեցին գառների նման» քաղաքի շրջակայքում (հյուպատոս Հոլշտեյն): Ըստ Մոսուլում Գերմանիայի հյուպատոսությունից հասած տեղեկությունների, կատարված ոճրագործությունների համար պատասխանատու է Դիարբեքիրի նահանգի կառավարիչ Ռեշիդ բեյը, որն ինչպես պատմում են, իրեն արյունախում և կատաղած գազանի պես էր պահում:

«Տիգրանակերտի մէջ,- գրում է էլ-Ղուսեյնը,- շատ քիչ հայեր մնացած էին, զորս կառավարութիւնը յարմար դատած էր պահել բանակին ծառայութեան համար, ինչպէս կօշկակարները եւ այլ արհեստաւորներ»[1]:

«Երբ որ կառավարութիւնը,- շարունակում է էլ-Ղուսեյնը,- սկսաւ հայոց բնաջնջում, որոշ թիւով հայուհիներ դիմում ըրին Տիգրանակերտի միւֆթիին ու մեծ դատաւորին՝ մահմետականութիւն ընդունելու խնդրանքով: Անոնց առաջարկութիւնը հաւանութիւն գտաւ եւ զանոնք ամուսնացուցին Տիգրանակերտի քիւրտերուն կամ թուրքերուն հետ:

Բայց քիչ ժամանակ ետք, կառավարութիւնը այս կիները հաւաքել սկսած ըլլալով, երբ դատաւորն ու միւֆթին բողոքեցին, կառավարիչը պատասխանեց. «Այս կիները իժեր են, անօնք օր մը չէ օր մը պիտի խածնեն: Քաղաքականութիւնը կրօնք չունի» և պահանջեց չխառնվել իշխանությունների գործերին[2]:

Կանայք տարագրվեցին: Բայց, երբ հայերի լքված ունեցվածքի իրացման գործում խարդախություններ թույլ տալու համար կառավարիչն աշխատանքից հեռացվեց, կանանց նորից արտոնեցին ընդունելու իսլամություն: Սակայն այդ նույնպես խաբեություն էր, որովհետև քիչ անց, իսլամություն ընդունած բոլոր կանայք տարագրվեցին:

«Գալով դրամին եւ զարդեղէններուն,- շարունակում է էլ-Ղուսեյնը,-

---

[1] «Յուշամատեան Տիարպէքիրի», էջ 417:

[2] Նույն տեղում, էջ 418:

անոնք հրամանատար Ռիչտի պէյի եւ կուսակալ Ռեշիտ պէյի հոգածութեամբ հաւաքուեցան: Այս վերջինը գանոնք իր հետ Կ. Պոլիս տարաւ, անձնապէս Թալէաթ պէյին յանձնելու համար»[1]:

Էլ-Ղուսեյնը գտնում է, որ «Հայոց եղած խժդժութիւններուն պատասխանատուութիւնը կ'երթայ Իթթիհադ վե Թերաքքիի անդամներուն. որոնք ... Հայոց հանդէպ ցեղային մոլեռանդութենէ եւ նախանձէ մղուած միայն գործեցին»[2]:

Հայերը որևէ հանցանք չէին գործել և զենք բարձրացրել են միայն ինքնապաշտպանության համար: Նրանք Տիգրանակերտում, Թուրքերի ջարդարարությունն արդարացնող որևէ բան չկատարեցին:

Ընայած ոչ մեծ թվով, բայց, այնուամենայնիվ, եղան Թուրքեր ու քրդեր, որոնք դեմ էին հայերի ոչնչացմանն ու լկումներին[3]: 1914-ի սեպտեմբերի 15-ին Դիարբեքիրում ինքնասպան եղած Մուշտակ բեյը երեք հասցեներով նամակ է գրում: Նա բողոքում է «Թեքալիֆի հարբիեի» զուլումների դեմ, որոնք պարզապես «կողոպտում էին ամբողջ ժողովուրդին իրենց քմահաճույքով, մանավանդ հայերին»: Նա դատապարտում է սեպտեմբերի 10-ի հրամանը, ըստ որի պետք էր «ճնշել ու չնչասպառ անել հայերին»: Այս խոսքերով է նա ավարտում նամակը. «Վերջ եմ տալիս կյանքիս՝ այլևս ամոթ համարելով Թուրք անունի տակ ապրելը»[4]:

Իլիջայի ալբանացի գայմագամը մերժում է հայերին ջարդելու վալու բանավոր կարգադրությունը: Նա աշխատանքից հեռացվում է և դավադրաբար սպանվում: Նույն բանը կատարվում է Ալբեչիրի արաբ կառավարիչ Սաբեթ բեյ էլ-Սուեյդի հետ: Կուսակալի հրամանին չի ենթարկվում նաև Մարդինի մութեսարիֆը: Նա նույնպես պաշտոնազրկվում է, որի մեկնելուց հետո «նախ 500, ապա 300 հայ և ասորի երևելիներ ճամբայ են հանվում դեպի Դիարբեքիր: Առաջին 500-ից որևէ մեկը տեղ չի հասնում, իսկ 300-ից որևէ լուր չկա»[5]:

Սակայն այս նոր մութեսարիֆը նույնպես չուտով հասկացավ կատարվածի ահավորությունը և նույնպես հրաժարական տվեց[6]:

Դիարբեքիրում հայերն ինքնապաշտպանության կանգնեցին, նաև կռվեցին, բայց երկար դիմանալ չկարողացան: Մարտական գործողությունների ընթացքում ոչնչացվեց 2000 խաղաղ բնակիչ[7]:

Թշնամու ջարդարարության դեմ պայքարում հերոսություն դրսևորեցին Մարդինցի Մարդոն, Կաղրացի Կիրակոսը, Զավդավաթցի Մընջոն, Իսպիրի որդի Մարդոն: Նրանք «կռուած են ամիսներով, տարիներով՝ ամենադժնդակ պայմաններուն մէջ եւ դիմադրած մի քանի վաշտի»[8]:

Իշխանությունների դեմ ըմբոստացան նաև Մարդինի և Միդիաթի հայերը:

---

[1] «Յուշամատեան Տիարպէքիրի», էջ 418:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 420:
[6] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 419:
[7] R 14096 Ab. 2888.
[8] «Յուշամատեան Տիարպէքիրի», էջ 417:

Նրանք ավերեցին հեռագրագծերը[1]: Նույն օրերին Մոսուլում ապստամբություն բարձրացրեցին արաբները:

Բնութագրական է Բալուի Պաղնատուն (Պաղին) գյուղի օրինակը: Գյուղն ուներ ավելի բան 1000 բնակիչ, գործում էր վարժարան, նաև եկեղեցուն կից՝ դպրոց: 1915 թ. մայիսը ողբերգական եղավ այս գյուղի համար: «Մայիսի 5-ի առաւօտեան կը հաւաքեն բոլոր տղամարդերը,- պատմում է ականատեսը,- մինչև անգամ 10-12 տարեկան տղաքը եւ 80-90 տարեկան ծերունիները: Ամենքն ալ իրարու կը կապեն պարաններով, ապա օր մը վերջ, այն է՝ մայիսի 6-ին, խումբ առ խումբ կը հանեն գիւղէն դուրս ձոր մը... Հոն կը կատարուի ամենէն զարհուրելին: Բոլորն ալ կը կոտորուին կացիններով, սուիններով ու սուրերով»[2]:

Պեյսիի զորքերի հրամանատարը հրաման արձակեց. «Նախ կը ձերբակալէք Նիսբինի (Մծբինի) մեր մթերանոցին պատասխանատու կեավուրները... Զանոնք նեղը կը դնէք ու կը ստիպէք», որ խորհուրդ տան իրենց ազգականներին՝ ապաստանելու բանակային մթերանոցներում: «Մինչ այդ կը հասնին մեր ներկայացուցիչները, շարժման կը մղեն ջարդարար խումբերը, միւս կողմէ, կրակի կու տան քարիւղով օծուած մթերանոցները... Այսպես գործելով, կը փակեն հաշիւը Նիսբինի 12.000 հայերու...»[3]: Ավելի պարզ չես ասի: Ռազմական մթերային պահեստները նախապես նավթով «օծում են», ապա այնտեղ լցնում հազարավոր հայերի, դռները փակում ու կրակի տալիս:

1915 թ. հուլիսի 31-ին Գերմանիայի դեսպանը գրեց կանցլերին. «Այս ամսվա սկզբից Դիարբեքիրի վալին՝ Ռեշիդ բեյը, սկսել է իր տնօրինության տակ գտնվող քրիստոնյա բնակչության զանգվածային ջարդը, առանց հաշվի առնելու դավանանքը և ռասան: Յաթաղանի զոհ են դառնում հատկապես Թեզ Էրմեի, Մարդինի կաթոլիկ հայերը և քաղդեացի քրիստոնյաներն ու սիրիացիները...

Դրա հետևանքով, ըստ Մոսուլի հյուպատոսության հաղորդումների, Մարդինի և Միդիաթի քրիստոնյա բնակչությունն ըմբոստացել է կառավարության դեմ: Հեռագրային գծերը վնասվել են:

Միաժամանակ, ապստամբ Շամմար արաբները գրավել են Մոսուլի փոստային և երկաթուղային ճանապարհները (Նիսբինի շրջակայքում), և ընդհատելով երթևեկությունը այնպես արել, որ կառավարությունը Նիսբինում դադարեցրել է ռազմամթերքի տեղափոխումը:

Ապստամբության մի ուրիշ օջախ է կազմակերպվել Ջեբել Սինջարում՝ Մոսուլից դեպի արևմուտք, որտեղ եզդիները զենք են վերցրել:

Վերջապես, ռուսական վարձկանների թվին պատկանող քուրդ հայտնի առաջնորդ Աբդուրրեզակ Բեդրբխանը Բայազետից քրդերի և հայերի հետ շարժվել է դեպի Սղերդ և ջոկատը համալրել է քրդերով, որոնք ճանապարհին միացել են նրան»[4]:

---

[1] Տե՛ս Վանգենհայմի № 477 հեռագիրը Գերմանիայի կանցլերին:

[2] «Պատմութիւն Պաղնատան», Պոսթոն, 1966, էջ 140:

[3] **Շաւարշեան,** Մեծ Եղեռնը հայոց, Պուէնոս Այրէս, 1987, էջ 477:

[4] **Bryce J.,** նշվ. աշխ., փաստ. № 126:

Նման բովանդակությամբ հաղորդագրությունների թիվը դժբախտաբար շատ չէ, բայց եղածը ևս հիմք է տալիս ասելու, որ ցեղասպանության տարիներին դիմադրություն և ինքնապաշտպանական կռիվներ եղել են, որ որոշ վայրերում դրանք կրել են ինտերնացիոնալ բնույթ: Բայց այդ կռիվները թույլ էին և կոտորածների առաջն առնել չկարողացան:

Բացի այդ, թուրքերն առիթներ էին փնտրում հայտնաբերելու գործողություններ, որոնց հնարավոր լիներ կպցնել «ապստամբություն» անունը:

Ոչ միայն Դիարբեքիրում և ոչ միայն էլ-Ղուսեյնն է վկայում կատարված ոճրագործությունների մեղքը հայերի վրա բարդելու թուրքական իշխանությունների ջանքերի մասին, այլև Լ. Դևիսը և Խարբերդի նահանգում գործող մյուս օտարերկրացիները: Երիտթուրքերի հրատարակած «Հայկական կոմիտեների ձգտումներն ու հեղափոխական գործունեությունը օսմանյան սահմանադրության հռչակումից առաջ և հետո» գրքում զետեղված են թուրքական բանակի համար ստացված նոր մակնիշի մաուզերների 12 լուսանկար: Դրանք ներկայացված էին որպես «վտանգավոր հայ հեղափոխականներից բռնագրավված» զենքեր: Նույն գրքում զետեղված մի լուսանկար պատկերում է կանանց փարված տղամարդկանց դիակներ: Վերջինների սեռական օրգանները փակված են: Նկարի տակ մակագրված է, թե դրանք հայերի սպանած թուրքերի դիակներ են: Իրականում՝ սպանվածները հայեր էին և «ազդրերը ծածկող լաթերը» կոչված էին թաքցնել «տղամարդկանց թլպատված չլինելը»: Իսկ կանանց բերել էին հարևան գյուղերից ու վճարել, որպեսզի «համապատասխան դիրք գրավեն լուսանկարող սարքի առջև»: Եվ դա ոչ թե ենթադրություն է, այլ գերմանացի հեղինակի վկայությունն այդ բեմադրության[1]:

Խարբերդում նույնպես՝ բռնագաղթի նախօրեին լուրեր տարածվեցին, թե «թուրքական կառավարության դեմ դավ նյութող հայկական հեղափոխական խմբերի» պահեստարաններում հայտնաբերվել են մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք: Լ. Դևիսը նկատում է, թե դրանք հաճախ «ոստիկանությունն էր նախօրոք» որոշակի տեղերում թողնում, որպեսզի «հայերի դեմ հանցանշաններ ունենար»: Պատահական չէր, որ դրան հաջորդեցին զանգվածային խուզարկություններ: Թուրքական այդ սադրանքներին հավատաց անգամ Դևիսը, որը Վաշինգտոն գրեց, թե «որոշ հայկական շրջաններում ապստամբական շարժումներ են բացահայտվել. կանխելու համար ձեռք են առնվել որոշ միջոցառումներ»: Սկզբում նա այն տպավորությունն էր ստացել, թե զանգվածային ձերբակալություններն ու խուզարկությունները «համընդհանուր բնույթի պատիժներ էին», առանց տարբերություն դնելու «լիովին անմեղների և նրանց միջև, ում կասկածել էին շարժմանը մասնակցած լինելու համար»: Տրամաբանության այս ուղին նրան հանգեցրեց ինքնաժխտման: Նա գրում է. «Գործնականում արական սեռի ամեն հայ արդեն ձերբակալվել է ... Նրանք ենթարկվել էին ամենադաժան կտտանքների, որոնց մեծ մասը չէր դիմացել, մահացել էր»: Երևույթների զարգացման ընթացքն ու բնույթը նրան

---

[1] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 50-51:

չուտով համոզում են, որ «կոտորած է նախապատրաստվում ... Գրեթե կասկած չկա, որ դա վաղուց ծրագրված է»[1]:

Դիարբեքիրի բանտում մի մուսուլման ինձ պատմեց,- գրում է Էլ-Ղուսեյնը,- որ նոր վալի Ռեշիդ բեյի և ժանդարմերիայի պետ Ռուշդի բեյի գալուց հետո շատ զենքեր են հայտնաբերվել տներում և եկեղեցիներում: Դա պատրվակ է ծառայել, որպեսզի բանտ նետեն քաղաքի երևելի հայերին: Նրանց պաշտպանությամբ հանդես եկած հոգևոր պետերը նույնպես բանտարկված են: Ձերբակալվել է շուրջ 700 մարդ...

Մի զինվորական պատմել է. հենց որ մի որևէ հայ ընտանիք բնաջնջելու հրաման էին ստանում, ընտանիքի բոլոր անդամներին անմիջապես հանձնում էին ժանդարմական սպայի: Մութն ընկնելուց հետո սայլ էին բերում և նրանց տանելով գնդակահարում էին կամ սպանում կացնի հարվածներով:

Հայերին ոչնչացնելուց հետո ամեն ինչ՝ կահ-կարասի, սպիտակեղեն, իրեր ու գործիքներ, ինչպես նաև խանութների, կրպակների ամբողջ պարունակությունը փոխադրվում էր եկեղեցի կամ այլ խոշոր շինություն: Ստեղծված էին հատուկ կոմիտեներ, որոնք այդ ապրանքները վաճառում էին ամենաչնչին գներով և գոյացած գումարները մուծում պետական գանձարան: «30 ոսկի արժողությամբ գորգերը վաճառվում էին 4-5 ոսկով...»:

Դիարբեքիրի հայությանը հասցրած նյութական վնասը կազմեց 240 մլն դոլար[2]:

Ժանդարմները կանանց ու երեխաներին կապում էին իրար ու մեծ բարձրությունից ցած նետում, շարունակում է պատմել Էլ-Ղուսեյնը: Այդ վայրը... գտնվում է Դիարբեքիրի ու Մարդինի միջև, այսօր այնտեղ մարդկային ոսկորների բլուրներ կան: Դիարբեքիրում հայերին խումբ-խումբ նետում էին ջրհորները կամ փոսերը և ողջ-ողջ թաղում: 2000-ից ավելի հայերի կոտորել էին Դիարբեքիրի պարիսպների մոտ, քաղաքից կես ժամ հեռավորության վրա, սուլթան Մուրադի ապարանքի ու Տիգրիսի միջև ...

Դիարբեքիրի հայերին կոտորելու հանձնարարություն ունեցող պետական պաշտոնյա Շևքեթ բեյը վկայել է. «Ես ուղեկցում էի աքսորված հայերի մի շարասյուն: Երբ Դիարբեքիրի սահմաններից դուրս եկանք և սկսեցինք գնդակահարել հայերին, առջևս հայտնվեց մի քուրդ ... Նա աղաչեց իրեն տալ մի տասնամյա աղջնակի: Ես դադարեցրի հրացանաձգությունը և կարգադրեցի բերել այդ աղջնակին: Նրան ասացի. «Մենք քեզ կհանձնենք այս մարդուն և կփրկվես»: Նա անմիջապես նետվեց մահապարտների կողմը: Նրան ետ բերեցին: Համոզեցի գնալ քրդի հետ: Չհամաձայնվեց ու հետ փախավ ծնողների մոտ ու նրանց հետ միասին գնդակահար եղավ»:

Երբ կառավարությունը որոշում կայացրեց տեղահանել ու կոտորել հայերին, հրաման եղավ զորակոչված հայերից կազմել առանձին գումարտակներ՝ ճանապարհներ կառուցելու և քաղաքային այլևայլ գործեր կատարելու համար: Դրանք ութ ամիս ծանր աշխատանքներ կատարեցին: Ապա տարբեր նահանգ-

---

[1] *ԱԱ, ՊԴ, 59 խփ տասնորդական թղթապանակ, № 867 4016/269:*

[2] ***Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 203:*

ներից այդ գումարտակները ուղարկվեցին Դիարբեքիր, նրանց ընդառաջ գնացին մինչև ատամները զինված ժանդարմներ, որոնք նրանց հրացանազարկ արեցին: «Վերջին չարաչարությունը, որ բաղկացած էր 840 երիտասարդներից, այդ կերպ իր վախճանը գտավ Դիարբեքիրի պարիսպների տակ...»:

Նկարագրում է Մ. Նեդիմը. «Երբ տունիս առջևը եկայ, հանդիպեցայ նոր բազմութեան մը, երկու ուրիշ կիները մտած էին ծեր հիւանդ կնոջ մը թեւերը եւ կը ջանային քալեցնել զայն, կիներէն մէկուն գիրկը տղեկ մը կար. կմախքացած: Զորս ուրիշ արաբ լալով-ողբալով կ'ընթանային քովերնուն, ասոնց պզտիկը վեց եւ մեծը տասը տարեկան պիտի ըլլար»: Տիգրանակերտից էին: Պատմում է կինը՝ Մարիամը. «Օր մը յանկարծ քաղաքապահ զօրքերը մեր տունը կոխեցին, առնելով տարին երկու փեսաները, ժամ մը ետքը կրկին եկան ու տարին մեզ ալ. թող չտուին, որ անկողին, վերմակ առնենք հետերնիս... Տիգրանակերտէն մինչեւ հոս եկանք քալելով. ճամբան ոստիկանները առին մեր դրամներն ու ոսկիները, միեւնոյն ատեն փճացուցին զաւակներուս պատիւը, պիտի երթանք եղեր մինչեւ Տէր Զօր, կաղալով-կաղալով թերեւս կարողանանք քալել մէկ-երկու օր ալ, անկից ետքը անապատներու մեջ իյնալով կը մեռնինք:

Երկու օր ետքը մեռաւ մօր գիրկը եղող երկամսանոց տղան:

Զարմանալով կը զարմանայինք, երբ մտիկ կ'ընէինք իրենց գլխէն անցածդարձածը եւ անոնց վրայ ի գործ դրուած կեղեքումներու եւ անզգամութիւններու չափն ու աստիճանը»[1]:

Գնդապետ դը Նոգալեսը 1915 թ. հունիսի վերջերին լինում է Տիգրանակերտում և Ուրֆայում:

Տիգրանակերտ-Ուրֆա «ճանապարհների եզրերը լցված էին դիակներով»,- գրում է նա: Տիգրանակերտից Սևերեկ ճանապարհին նա հեռվում տեսնում է սև կետեր, մոտենում է: Անթաղ դիակներ էին: Ջարդը ղեկավարել էր Մ. Ասրմը, իսկ իրականացրել էին ժանդարմները[2]: Դիակների հոտից նրա ձին ընկրկում է: «Շինարարական վաշտերի հայ զինվորների դիակներն էին: Սվիններով նրանց մարմինները հոշոտված, ծակծկված էին»: Տիգրանակերտի ամբողջ նահանգը, նշում է նա, սպանդանոց էր դարձել:

Կ. Պոլսի դատավարության արձանագրության մեջ (տպված «Takvim-i Vekai»-ի թիվ 3543 համարում) կարդում ենք. «Սպանությունները իրականացվել են Թալեաթ, Ջեմալ և Էնվեր բեյերի հրամանով ու գիտությամբ»: Դիակները, ծակծկված սվիններով, թափված մնում էին, չնայած դրանք թաղելու մասին մշտապես հրահանգներ էին ստացվում, որպեսզի «անցորդների ուշադրությունը չգրավեին և գիշատիչ կենդանիները և անգղները դիակերության ժամանակ չմատնեին եղեռնի վայրերը»[3]:

Դը Նոգալեսը 1917 թ. երկրորդ անգամ անցնելով Տիգրանակերտով, նշում է, որ հայերի սպանդից հետո քաղաքը ամայացել էր: Նա ոճիրի հետքերը ոչընչացնելու իշխանությունների ճիգերի մասին գրում է, որ «մի տևաբար գործող

---

[1] **Նետիմ Մ.,** նշվ. աշխ., էջ 86-89:
[2] **De Nogales**, նշվ. աշխ., էջ 149:
[3] **Ղազարեան Հ.,** նշվ. աշխ., էջ 383:

հրահանգ՝ անցորդների ուշադրությունը հրավիրելու և դիակները տեսողությունից հեռու պահելու վերաբերյալ, և որպեսզի գիշատիչ գազաններն ու թռչունները դիակերության ժամանակ չմատնեին եղեռնի վայրերը»:

Ջեմալ փաշան 1915 թ. հունվարի 1-ին Տիգրանակերտի վալիին հեռագրեց. «Եփրատ գետով հարավ քշված դիակները, հավանական է, ապստամբական շարժման մեջ սպանված հայերի դիակներն են: Դրանց թաղելն ու եղած տեղերում չթողնելն անհրաժեշտ է»: Դրան Ռեշիդը հուլիսի 9-ին պատասխանում է. «Եփրատը մեր վիլայեթի հետ առնչություն չունի, հավանաբար, այդ դիակները գալիս են Էրզրումի և Խարբերդի կողմից: Այստեղ ապստամբության ժամանակ սպանվածների դիակները գցում են ամայի վայրերի խոր քարայրները կամ էլ այրում են: Թաղելը բացառվում է»[1]:

«День» թերթը 1915 թ. սեպտեմբերի 6-ին տպագրեց քաղվածքներ թուրք բժշկի օրագրից. «(Զորքերի տեղափոխության) ճանապարհին հանդիպեցինք տասնյակ գետերի, հովիտների, ձորերի, ավերված գյուղերի՝ լեփլեցուն կոտորված տղամարդկանց, կանանց, երեխաների դիակներով: Երբեմն՝ փորերը ցից խրված: Սևերեկ գյուղում ... մեկը կաչառել էր ժանդարմին, և սա թույլ էր տվել բանտարկյալի կնոջը, որ երեխայի գլուխը զգուշորեն ներս մտցնի լուսամուտի նեղ վանդակից, որպեսզի հայրը կարողանա համբուրել: Այդ պահին հայտնվում է պահակախմբի պետը: Նա հայհոյեց ստորադրյալներին, բռնեց երեխայի ոտքից և դուրս քաշեց լուսամուտի նեղ վանդակից՝ կիսամեռ և արյունաշաղախ անելով... Նա մորը ծեծեց մտրակով, իսկ գետնին ընկած երեխային սապոգով դեն շպրտեց:

Դիարբեքիրը, դիվիզիայի մտնելու ժամանակ, կիսով չափ հրկիզված դիակներով լցված էր...»:

Դիարբեքիրի ջարդերի մասին մեծ թվով վկայություններ կան: Ներկայացնենք դրանցից մի քանիսը ևս:

Սիսի կաթողիկոսի պատմածով՝ Դիարբեքիրում «նախաքննության ընթացքում երկու տասնյակ հայեր դանակահարությամբ մեռցվել են, տեղի հայ եպիսկոպոսը ինքնասպան է եղել»[2]:

Դիարբեքիրում տեղի ունեցած դատավարությունների մասին Խալիլը Վանգենհայմին ասել է. «Դիարբեքիրի ռազմական դատարանը այս պահին քննում է Դաշնակցության մի շարք առաջնորդների գործը՝ դավադրական գործունեության համար: Ենթադրվում է, որ բոլոր ամբաստանյալները, որոնց շարքերում կան նաև Իթթիհադի հետ սերտ կապերի մեջ գտնվողներ, մահվան են դատապարտվելու»[3]:

Հոհենլոհեն գրում է. «Սկսած ամսվա սկզբներից, Դիարբեքիրի վալին՝ Ռեշիդ բեյը, սկսել է իր իրավասության տակ եղած չրջանների քրիստոնյա ժողովրդին զանազան հնարքներով արմատախիլ անել՝ առանց ցեղի ու ազգության տարբերության: Մասնավորապես տուժել են Մարդինի և Թել Էրմենի կա-

---

[1] ***Փափազեան Ա.***, *նշվ. աշխ., էջ 43:*

[2] ***Lepsius J.***, *նշվ. աշխ., էջ 108:*

[3] *Նույն տեղում:*

թոլիկ հայերը և քաղդեացի քրիստոնյաները»[1]:

Մայոր Վ. Միկուչը, որը Մոսուլից Հալեպ էր հասել 1915 թ. հուլիսի 8-ին, պատմել է. «Մի չաբաթ առաջ քրդերը Թել Էրմենում և մերձակա մի քանի հայկական գյուղերում կոտորած են սարքել, կործանել են մեծ եկեղեցիներ»: Միկուչը անձամբ տեսել էր 200 դիակ: Երկրապահ զորքին և ոստիկանությանն առնվազն թույլատրել էին մասնակցելու կոտորածին: Մծբինի և Թել Էրմենի մեջտեղում զորակոչված գնդերը կոտորել ու լրիվ կողոպտել են հայկական գյուղերը և իրենց սպաների հետ մեծ ոգևորությամբ պատմում էին կոտորածի մասին: Ջարաբլուսի մոտ հաճախ կարելի է տեսնել իրարու կապված դիակներ՝ թափված գետը[2]:

Սղերդում (Բիթլիսի վիլայեթ) և Ջեզիրեթ իբն Օմարում (Դիարբեքիրի վիլայեթ) ոչնչացվեցին նաև քաղդեացիները, իսկ Մարդինից հյուսիս ընկած շրջաններում՝ բոլոր քրիստոնյաները:

Մարդինում սպանեցին հայ կաթոլիկների առաջնորդ Իգնատիոս Սալոյան արքեպիսկոպոսին՝ իր 700 հավատացյալների հետ միասին[3]:

Ջարդարար հոգեբանության մի արտահայտություն ևս: Բալուի Սակրատ գյուղի տեր Իբրահիմը մի խումբ հայերի թաքցնում է իր տանը, սակայն քիչ անց նրանց լրիվ կողոպտում ու գյուղից վտարում է:

Ահա՛ նաև մի հեռագիր, որ ստացել է Հալեպում Գերմանիայի հյուպատոսը 1915 թ. օգոստոսի 21-ին.

«Պարո՛ն հյուպատոս,

Հալեպում մի կին կա, որն ապրում է ամուսնու եղբոր Ֆաթհուլլահ Օբեգի մոտ, Տիբի թաղամասում: Այդ կինը Դիարբեքիրում է եղել իր ամուսնու՝ Յորկի Օբեգի և նրա եղբոր՝ Նուրի Օբեգի հետ: Այնտեղ նա ուներ չորս եղբայր: Երբ Դիարբեքիրում նոր ձևի ջարդերը սկսվեցին, Նուրի Օբեգին իր ընտանիքով թաքնվեց մի բարեկամ աղայի տանը: Թուրքական հյուրընկալությունը համազո՞ր է արաբական հյուրընկալությանը, թե՞ ոչ, այդ չենք կարող ասել, պարզ է միայն այն, որ այդ օրվանից նրանց մասին այլևս որևէ լուր չկա: Յորկի Օբեգին, կինը, որդին և դուստրը, ինչպես նաև կնոջ չորս եղբայրները, բոլորը հույն կաթոլիկներ, արտագաղթվեցին: Հազիվ դուրս եկան Դիարբեքիրից, Յորկի Օբեգին և չորս երիտասարդներին, ինչպես նաև արու հայերին բաժանեցին կանանցից և տարան մեկ այլ ուղղությամբ, և այլևս այդ կինը որևէ լուր չունեցավ իր ամուսնուց և չորս եղբայրներից: Ճանապարհին Օբեգի կնոջից գաղտնի խոչտանգեցին նրա երկու զավակներին, և ահարկու դժվարություններից հետո միայն նա կարողացավ գտնել իր որդուն, իսկ 8-9 տարեկան աղջիկը անհայտացավ»:

Դիարբեքիրում միայն հայեր չէին բնակվում: Ապա որտե՞ղ են այլազգի մյուս տղամարդիկ: Դժվար չէ այդ իմանալ, եթե հարցնենք տեղի հյուպատոսության ղեկավարին:

---

[1] Bryce J., նշվ. աշխ., փաստ. № 126:

[2] Նույն տեղում, էջ 98:

[3] Wien, HHSTA PA 209 Konstantinopel, 13 օգոստոսի 1915 թ.:

Օսմանյան մի քրիստոնյա սպա, որը Դիարբեքիրում է և ուզում է անհայտ մնալ, ինձ պատմեց՝ Դիարբեքիրում միայն մեկ հույն քահանա կար, նա էլ սպանվել է, և ոստիկանապետը իրեն ասել է, որ անձամբ ինքն է սպանել:

Ամփոփ լինելու համար ասեմ, որ Հալեպում մեծ թվով կանայք կան բաշխված համապատասխանաբար քաղդեական, հունական, սիրիական և այլ եկեղեցիների վրա, որոնք առանց ամուսինների են, իսկ որտե՞ղ են տղամարդիկ: Այս մի քանի օրը Մալաթիայից Հալեպ եկած մի մուսուլման առևտրական տեղի իր քրիստոնյա բարեկամներից մեկին, որը ցանկություն է հայտնել գնալ Մալաթիա, պատասխանել է. «Մալաթիայում այլևս որևէ քրիստոնյա չի մնացել»: Այդ շարժումը, եթե սկզբից հակահայկական էր, այլակերպվել, դարձել է հակաքրիստոնեական: Դրանում որևէ կասկած լինել չի կարող, և շատ հեշտ կլիներ համոզվել, եթե հետաքննություն կատարվեր հենց տեղում: Սակայն ո՞ր մի խեղճ քրիստոնյան հանձն կառնի այդ անել:

Գերմանական աղբյուրներում կարելի է գտնել միանգամայն որոշակի պատասխան այն հարցին, թե որո՞նք էին հայկական ցեղասպանության ծրագրողներն ու կազմակերպիչները:

1915 թ. սեպտեմբերի 9-ին Հոլշտայնը Մոսուլից հեռագրով հաղորդում է, որ ըստ Մոսուլի վրայով Ջեզիրեից Բաղդատ եկող թուրքական ջոկատներից ստացված տվյալների, մոտ մեկ շաբաթ առաջ քրդերի հրոսակախումբը Դիարբեքիրից Ֆեհթի բեյի կողմնակիցների կողմից նետվում էր Ջեզիրե, որոնք տեղական մարմինների թույլտվությամբ և ռազմական ուժի մասնակցությամբ Ջեզիրե քաղաքի ամբողջ քրիստոնյա բնակչությանը ընաջնջել են:

Ջեզիրեի բնակչությունը 1831 թ. կազմում էր մոտ 10.000 շունչ, որոնցից կեսը մահմեդական (այդ թվում՝ 2000 քուրդ): Մյուս մասը կազմում էին 4750 հայեր...

Այս դեպքը, ինչպես նաև մինչև այժմ հաղորդված իրադարձությունները, Տրապիզոնում և Անկարայում, բացահայտ հակասում են ներքին գործերի նախարարության ցուցմունքներին, որոնք հույս էին ներշնչում, որ հայերի հալածանքը և դրանց հետ կապված անկարգությունները այսուհետև դադարեցվելու էին:

Դրանք, իհարկե, չդադարեցվեցին, այլ գնալով ավելի ծավալվեցին, մերթընդմերթ փոխելով միայն ջարդարար գործողությունների ձևերը: 1915 թ. օգոստոսի 3-ին Հալեպում կազմված մի տեղեկագրում կարդում ենք.

«Ուղղակի հարձակման և ջարդի եղանակը, որ մինչև այժմ գործադրվում էր, ներկայումս փոքր ինչ փոփոխված է: Իրենց երկրներից մեծ թվով տղամարդիկ ու տղաներ են տարագրում և նրանց ոչնչացնում են ճանապարհին, նրանց հետևից տանելու համար կանանց ու երեխաներին»: Բոլոր «ճամփորդներն ընդհանրապես նույն բանն են ասում, թե տղամարդիկ սպանված էին, թե բազմաթիվ դիակներ ճանապարհի երկարությամբ էին մնացել կամ ճոճվում էին գետի ջրերի վրա, թե երիտասարդ կանայք, աղջիկները և մանուկները նրանց ուղեկցող ժանդարմների կողմից հանձնված են քրդերին և թե այդ նույն ժանդարմներն ու քրդերը անլուր ոճիրներ են գործադրել: Օգոստոսի 2-ին Հալեպ հասան չուրջ 800 միջին տարիքի կանայք, ծերեր և 10 տարեկանից փոքր

երեխաներ: Տիգրանակերտից ոտով էին գալիս, ամենաթշվառ վիճակում, 45 օր քայլելուց հետո: Սրանք պատմում էին, որ բոլոր աղջիկներին ու երիտասարդ կանանց քրդերն առևանգել էին, թե իրենց ամբողջ դրամն ու մնացած ունեցվածքը կողոպտված էին... Նրանց թշվառ վիճակը իրենց պայմանների անտույգության երաշխիքն էր:

Տեղեկացա, թե Սղերդից 4700 հոգի Ռաս ուլ-Այն են ուղարկված, ավելի քան 2000-ը՝ Մեզրեից Տիգրանակերտ, թե Բաղեշի, Մարդինի, Մոսուլի, Սևերեկի, Մալաթիայի, Բեհեսնիի և այլ քաղաքների հայերը տեղահանված էին, թե տղամարդիկ, երիտասարդներ և շատ կանայք սպանված են, իսկ մնացածներն էլ երկրում ցաք ու ցրիվ են արված...

Երեխաները հաճախ էին վաճառվում, որպեսզի քաղցից չմեռնեն, քանի որ կառավարությունն ապրելու համար նրանց բան չէր տալիս[1]:

Դիարբեքիրը վերածվեց մահմեդական ցեղերի ընդունման ու դրանց Արևմտյան Հայաստան և Կիլիկիա ուղարկելու կենտրոնի: Գաղթականության գրասենյակի տնօրեն Աբդուլահադ Նուրին տեղափոխվել էր Դիարբեքիր և անձամբ էր բաշխում այդ գաղթականներին ըստ նահանգների: Հոկտեմբերի 12-ին նա ծածկագրեց, որ Դիարբեքիրից Սևերեկի ուղղությամբ ուղարկված է 1139 գաղթական, իսկ հայդարանցիներից 1200 հոգի հասան Դիարբեքիր: «Արձանագրվածը կատարվում է»: Ա. Նուրին հոկտեմբերի 20-ին ծածկագրեց, որ Ուրֆա ուղարկվեց 1520 հոգի, այնտեղ են ուղարկվում նաև Սիլվանում բնակվող հայդարանցի, ջիբրանցի և չուլեցի աշիրեթները: Հոկտեմբերի 25-ին՝ «Ռաս ուլ-Այնից 2613 քուրդ մուհաջիրներ 1534 ընտանի կենդանիներով ուղարկվում են Թել Աբիադ: Ուրֆա ուղարկեցինք 3207, Խարբերդ՝ 1974, Սիլվան՝ 1915, Սևերեկ՝ 3592, Մարդին՝ 1257 քուրդ: Հոկտեմբերի 31-ին տեղյակ պահվեց, որ Ուրֆա ուղարկված քրդերի կեսը տեղավորված են տներում (հայերի), իսկ մյուսները վրանների տակ են»[2]:

Ներքին գործերի նախարարության Մուհաջիրների և աշիրեթների տեղաբաշխման բաժնի, որն ուներ իր օղակները գավառներում, 1915 թ. հունիսի 10-ի հրահանգը պահանջում էր հայերի տներում տեղավորել մուհաջիրներին, թուրք և քուրդ աշիրեթներին: Նույնիսկ այդ իրականացնելու կանոնադրություն կազմվեց: Հուլիսի 29-ի հրահանգում պահանջվում էր արևմուտքից արևելք ուղարկվելիք մուհաջիրներին կենտրոնացնել Անկարայի վիլայեթում և ուղարկել Սեբաստիայի, Կեսարիայի, Խարբերդի բնակավայրերը, նաև՝ Կոնիայում՝ Ադանա և Դիարբեքիր ուղարկելու համար:

Աբդուլահադ Նուրին կազմակերպում էր հայերի կոտորածները, իսկ 1916-ից՝ նաև նրանց տներում մահմեդականներ տեղավորում:

Դիարբեքիրի գաղթականների գրասենյակի ընդհանուր տնօրեն Շաքիրը

---

[1] (**Լեփսիուս Յո.**, *Հայկական ջարդերը): Տոքթ, Եհաննէս Լեփսիուսի տեղեկագիրը, Կ. Պոլիս, 1919, էջ 25:*

[2] **Ղազարեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 206:*

1916 թ. օգոստոսի 14-ին հաղորդում է ՆԳ նախարարությանը. «Մինչև հիմա Դիարբեքիր են հասել 40000 գաղթականներ, որոնցից 25 հազ. ... ուղարկված են Կենտրոնական Անատոլիա: 12 հազարին տեղավորել են Դիարբեքիր քաղաքում և շրջակա գյուղերում: 4000-5000 քրդեր քշվել են:

Մարտ ամսին տեղ հասած 20 հազարից 9000-ը տեղավորվել են Դիարբեքիրի սանջակում, 10.000 ուղարկվելու են... Հարավում աշիրեթների թիվը 100 հազարից չատ է... Նրանց տեղաբաշխման և սննդի հարցը պետք է լուծվի:

Ծածկագիր Խարբերդից՝ 25.08.1916. «Խարբերդի սանջակում 5000 գաղթական կա, որոնցից 3000-ը՝ քուրդ... Նրանց կեսը տեղավորված է շրջակա գյուղերում: Մյուսներն... ուղարկվել են նշանակված վայրերը»[1]:

Աբդուլահադ Նուրիի 1916 թ. հոկտեմբերի 16-ի ծածկագիրը ՆԳ նախարարությանը. «3533 գաղթականներից 200-ը հասավ Ռաս ուլ-Այն: Սևերեկի ճանապարհով ուղարկվեցին 1139-ը: Հայդարանլի աշիրեթից 1200 հոգի հասան Դիարբեքիր»: Չորս օր անց, հեռագրից. «Այս առավոտ Դիարբեքիրից դեպի Ուրֆա ուղարկվեց 1526 հոգի: Սիլվանում բնակվող հայդարանլը, ջիբրանլը և չուլեցի աշիրեթները ուղարկվեցին ևս դեպի Խառան: Նրանց պետերը ... պետք է բնակեցվեն Ուրֆայում»:

Հոկտեմբերի 31-ին՝ «Հոկտեմբերի վերջին կեսին Ռաս ուլ-Այնից 2615 քուրդ մուհաջիրներ, 1554 անասուններով, Թել Աբիադ են ուղարկվել, որտեղ նրանց թիվը հասել է 4487-ի: Ներկայումս Ուրֆա ուղարկվել են (քրդեր) 6207, Խարբերդ՝ 1974. Սիլվան՝ 1915. Սևերեկ՝ 3592, Մարդին՝ 1257»: 1916 թ. հոկտեմբերի 1-ին հեռագրեց. «Սավուրից (Մարդինի հյուսիս) ... 6000 հոգի (քուրդ) ուղարկվել է դեպի Ռաս ուլ-Այն»: Երեք օր անց. «Սիլվանում եղած 5300 ջիբրանցիներ ուղարկվեցին Դիարբեքիրի ուղղությամբ»: Դեկտեմբերի 7-ին՝ «Քանի որ Խառանը լցված է, այսուհետև (քրդերի) քարավանները ուղարկել Արաբ Փունար: Մարդինից մինչև օրս ուղարկված է 10945 հոգի»:

Դեկտեմբերի 9-ի հեռագիրը Դիարբեքիրից. «Վան, Բիթլիս, Էրզրում վիլայեթներից և մերձակայքներից, սկսած 1915 թ. հուլիսից այս նահանգը (Դիարբեքիր) մտել է 158418 հոգի: Նրանցից 46003-ը ուղարկված են, 12415-ին միայն սնունդ է տրվում»: Հինգ օր անց Ջևդեթը հեռագրեց. «1062 ընտանիք՝ 6441 հոգի, ուղարկվեց Սևերեկի ճանապարհով»: Ա. Նուրին 1916 թ. նոյեմբերի 16-ին հրահանգեց. «Մինչև հիմա Խառանում տեղավորված է 13422 հոգի: Սրանից հետո եկածներին պետք է տեղավորել Սուրուջի և Բիրեջիկի կազաներում»: «1916 թ. նոյեմբերի 13-ին Դիարբեքիրից 1983 և նոյեմբերի 14-ին 1057 քրդեր ուղարկվեցին Ուրֆա»: 1916 թ. հոկտեմբերի 15-ի տվյալներով՝ միայն միլան աշիրեթից Դիարբեքիր հասել էր 100400 մարդ[2]:

Իշխանությունները շարժման մեջ դնելով քրդերի նման վիթխարի զանգվածներ տագնապում էր, որ հայերին հաչվեհարդարի ենթարկելուց հետո այդ աշիրեթները կարող էին զենքը չուռ տալ իրենց դեմ: 1916 թ. դեկտեմբերի

---

[1] ***Ղազարեան Հ.***, *նչվ. աշխ., էջ 206:*

[2] *Նույն տեղում, էջ 209:*

10-ին ՆԳ նախարարության անունից հրահանգեցին. «...Զմոռանաք աչիրեթներում եղած զենքերը հավաքել, քրդերին զինաթափել»[1]:

Ա. Ճեպեճյանը 1917 թ. մարտին լինում է Դիարբեքիրում: Նա օրագրում է. «Ճամբուն ականատես եղայ սիրտ ճմլող տեսարաններու, ամեն տեղ հայերու ոսկորներ... Տիգրանակերտն ալ աւերուած է ուրիշ կեղրոններու յար ու նման: Ամեն տեղ փլատակ»: Քաղաքից դուրս նույնպես «անթիւ ողբալի դէպքեր լսեցի»: Սևերեկի ճանապարհին «անհամար քիւրտ գաղթականներու հանդիպեցանք»[2]:

Այդպես էր. հայերին զանգվածներով ոչնչացնում էին և նրանց ոսկորների վրայով քրդերին բերում բնակություն հաստատելու հայերի բնակավայրերում, նրանց տներում, տեր դառնալու նրանց կայքին և ունեցվածքին:

* * *

Մեծ եղեռնի իրադարձությունները ներկայացնելու համար հաճախ ենք դիմել Ֆայեզ էլ-Ղուսեյնի օգնությանը, որովհետև հանդիսանում է այդ իրադարձությունների ժամանակակիցը, ականատեսն ու օբյեկտիվ գնահատողը:

Ո՞վ էր նա:

Ազգությամբ արաբ էր, բարձրագույն կրթությամբ, զբաղվել է ուսուցչությամբ, տարբեր պաշտոններ վարել, եղել է Խարբերդի նահանգի կառավարիչ:

Երբ սկսվում է պատերազմը՝ նրան ձերբակալում են մեղադրելով, որ Լիբանանում գաղտնի կազմակերպություն է ստեղծել և ձգտում է ապստամբության միջոցով հասնել արաբների անկախության:

Չնայած այս մեղադրանքը չի հաստատվում, բայց այդ Ջեմալ փաշային չի խանգարում նրան աքսորելու Դիարբեքիր: Ահա աքսորի այս ճանապարհին էլ-Ղուսեյնն ականատես է լինում հայերի ցեղասպանությանը և հետագայում իր տեսածն ու լսածը հրատարակում է առանձին գրքով, որը 1917 թ. լույս տեսավ Բոմբեյում «Temoignage d'un Arabe Musulman sur l'innocence ef le Massacre des Arméniens» խորագրով, որը հայերեն թարգմանել են Գ. Պասմաճյանը «Հերոսական հայութեան անցյալէն. Ջարդերը Հայաստանի մէջ» (Գահիրէ, 1960) և Բ. Կիրակոսյանը «Մարտիրոսուած Հայաստան» (Նոր Ջուղա, 1920) վերնագրերով:

Գիրքը նախնական անունով՝ «Մի արաբ մահմեդականի վկայությունը հայերի անմեղության և կոտորածների վերաբերյալ», 1917-1918 թվերին լույս էր տեսել ոչ միայն անգլերեն, այլև ֆրանսերեն ու գերմաներեն:

Նախաբանում կարդում ենք. «Երբ ավարտվի պատերազմը, այս գրքի ընթերցողները կհամոզվեն, որ ես գրել եմ ճշմարտությունը և որ այս պատմու-

---

[1] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 206:

[2] «Բժիշկ Ա. Ճեպեճեանի...», էջ 76-77:

թյունը լոկ փոքր մասն է դժբախտ հայ ժողովրդի հանդեպ կատարված չարագործությունների»[1]:

Նա Դիարբեքիրում մնաց վեց ամիս: «Այնտեղ,- պատմում է էլ-Ղուսեյնը,- ես ինքս տեսա կամ լսեցի վստահելի աղբյուրներից այն ամենը, ինչ կատարվել էր հայերի հետ»: Դեպի Դիարբեքիր ճանապարհին մեզ միացրին հինգ հայ կրոնավորների, որոնք պատմեցին, թե իրենց էրզրումից հանեցին և ոստիկանների ուղեկցությամբ «տարան անապատներով, թողնելով առանց ջրի: Ծննդաբերող կանայք հարկադրված էին նորածիններին թողնել անմարդաբնակ վայրերում՝ բախտի քմահաճույքին: Մի քանիսին էլ մայրական սերը թույլ չէր տալիս բաժանվելու իր երեխաներից և նրանք միասին կործանվեցին անապատում»[2]:

Ուրֆայի մոտերքում հանդիպեցինք ոստիկանների ուղեկցությամբ ընթացող հայ կանանց քարավանին: «Եթե կանանցից որեէ մեկը ուժասպառ ետ էր ընկնում, ոստիկանները նրան ծեծում էին խզակոթով ու հարկադրում հասնելու քարավանին: Իսկ հիվանդությունից անուժ դարձողներին թողնում էին միայնակ, ճանապարհին, որպեսզի վայրի գազանների բաժին դառնային կամ ոստիկանները այդպիսիներին գնդակահարում էին»:

Ուրֆայից վեց ժամ հեռավորության վրա գտնվող մի վայրում էլ-Ղուսեյնը նկատում է գետնին պառկած կիսամերկ կնոջ՝ կապկպված, արյունոտ հագուստներով: Կնոջ կրծքին երեում էին չորս գնդակների արյունոտ հետքեր: Երբ էլ-Ղուսեյնը ցնցված ետ է շրջվում, տեսնում է մի ութ տարեկան տղայի գանգը կացինով երկու մասի բաժանված: Սևերիկ տանող ճանապարհի երկու կողմերը ծածկված էին դիակներով, որոնց մի մասը արևի տակ երկար մնալով սևացել, ածխի գույն էր ստացել: Մեծ թիվ էին կազմում երեխաների դիակները: Սևերեկից Դիարբեքիր տանող ճանապարհին հանդիպում են բռնագաղթվող հայ կանանց քարավանի: Կանանց վիճակն այնպիսին էր, որ ինչպես էլ-Ղուսեյնն է նկատում, «նույնիսկ գազանի խղճահարությունը կառաջացներ»:

էլ-Ղուսեյնը արդարացի հարցեր է առաջադրում. «Ի՞նչ հանցագործություն են կատարել այս կանայք: Մի՞թե նրանք պատերազմել են թուրքերի դեմ և կամ սպանել են նրանցից գոնե մեկին: Ո՞րն է այս անպաշտպան էակների հանցագործությունը: Նրանց միակ մեղքը այն է, որ հայ էին, որոնց համար այս աշխարհում իրական են միայն գործն ու տնտեսությունը, նրանք դաստիարակում էին իրենց երեխաներին և երբեք ուրիշ բանով չեն զբաղվել, բացի իրենց ամուսինների ու որդիների համար ընտանեկան հաճելի պայմաններ ստեղծելուց...»:

Դիարբեքիրի մոտերքում «ամենուրեք դիակներ էին. այստեղ՝ կրծքից գնդակահարված տղամարդ, այնտեղ հոչոտված մարմնով կին, կողքին՝ հավերժ քնած երեխա, քիչ հեռուն՝ ձեռքերով իր ամոթը փակած մերկ աղջիկ»: Կարա Փունար կամրջին հասնելով «մենք տեսանք լրիվ այրված դիակներ: Միայն Աստծուն է հայտնի թե քանի՞ պատանիներ ու աղջիկներ են այստեղ կենդանի այրվել, որպեսզի թաքցվեն թուրքական դաժանությունները»:

Ֆայեզ էլ-Ղուսեյնին բանտում մի թուրք ոստիկան պատմել է, թե ինչպես

---

[1] ***էլ-Ղուսեյն Ֆ.,*** *նշվ. աշխ., էջ 3-4:*

[2] *Նույն տեղում, էջ 6:*

ինքը հայերից «բազմաթիւ անձեր ջարդած է, եւ ըսաւ մեզի՝ որ անոնցմէ ոմանք քարանձաւի մէջ ապաստանած ըլլալով քաղաքին սահմաններէն դուրս, ինքը գտած էր այս պատսպարանը, զանոնք դուրս հաներ տուաւ և այդ դժբախտներեն երկու հոգի սպաննեց:

Իր բարեկամը չկրցաւ ինքզինք զսպել հարցնելու.

– Ուրեմն չես վախենար Աստուծմէ, ո՞ր օրէնքով կը համարձակիս սպաննել էակներ, զորս Աստուած կ'արգիլէ սպաննել:

– Սուլթանին մէկ հրամանն է,– պատասխանեց ան,– եւ սուլթանի հրամանը Աստուծոյ հրամանն է, ու այս հրամանը գործադրելը պարտականութիւն մըն է»[1]:

Քշվում են հայերը, իսկ 1–3 տարեկան երեխաները հավաքվում են և տարվում Տիգրիսի ափը, և «ողջ-ողջ բոլորին բռնելով ոտքերից, ձեռքերից կամ գլուխներից չպրտում գետի մեջ: Ուրիշ հարյուրավոր որբերի տանում էին Գարաղաչ, քաղաքից 1.5 ժամ հեռավորության վրա մի գյուղ, և այնտեղ նրանց երկու մասի էին բաժանում, կտոր-կտոր անում, չատ որբերի նետում էին կատաղած շների առաջ, որոնք նրանց հոշոտում էին: Իսկ գաղանաբարո սրիկաները հրճվում էին դիտելով այս տեսարանը»:

Այդ կապակցությամբ Նայիմ բեյը գրում է. «Նրանց մահը տեսնելը դժվար բան էր, բայց անսահման սրտակեղեք տեսարան էր, երբ շները անդամահատում էին երեխաների դիակները:

Նրանք Սվազի, Դիարբեքիրի և Խարբերդի դժբախտ հայերի մնացորդներն էին: Երբ հասան իրենց համար որոշված աքսորավայրեր՝ հազիվ 100–150 կանայք ու երեխաներ էին մնացել յուրաքանչյուր քարավանից, որ նշանակում էր, թե նրանք կոտորվել էին ճանապարհին»:

Հրաչքով ազատված Սիրանույշ Տատոյանը, որ այն ժամանակ 14 տարեկան է եղել, գրում է, որ երբ հասել են անապատ՝ «երեկոյան բացօդյա իջևանեցինք, մայրերը իրենց երեխաներին հավաքած արթուն հսկում էին: Մութի մեջ մի ոստիկանի խոպոտ ձայն լսվեց, մի աղջնակի սուր ճիչ և ամեն ինչ մի քանի բոպեից լռում էր: Եվ այդպես շարունակ... Առավոտյան մայրերի արցունքոտ պատմությունը՝ աղջիկները չկային, և մենք ճանապարհ էինք հանվում քայլելու դեպի խորքերը, դեպի Մարդին»:

«Տիգրանակերտի նահանգում զոհվեց 81 հազար հայ»,– գրում է էլ-Ղուսեյնը:

«Թուրքերը հավաքել էին բոլոր զինապարտ հայերին,– շարունակում է արաբ վկան,– և նրանց բաժանել տարբեր գնդերի վրա: Երբ կառավարությունը որոշում ընդունեց բոլոր հայերին զաղթեցնելու և ոչնչացնելու մասին, հրաման ստացվեց ստեղծել առանձին հայկական գումարտակներ, և դրանք ուղարկել ճանապարհներ կառուցելու և քաղաքի ներսի աշխատանքները կատարելու համար»... Ութ ամիս անց այդ գումարտակները բոլոր տեղերից ուղարկվեցին Դիարբեքիր: Բայց դեռ քաղաքին չհասած՝ նրանց դեմ դուրս եկան լավ զինված ոստիկաններ ու բոլորին ոչնչացրին: Այդպիսով Դիարբեքիրի պարիսպների

---

[1] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 415:*

տակ ոչնչացվեցին տասնյակ հազարավոր երիտասարդ հայեր»:

Մի արաբ էլ-Ղուսեյնին պատմել է, թե Թուրքերը Դեր Զորի մոտերքում ինչպես մերկացրին մի հայ կնոջ ու տիրացան նրա հագուստին: Մի այլ հայ կին երեխան ձեռքին հաց էր մուրում: Բայց որևէ մեկը նրան հաց չէր տալիս: Զգալով, որ մահը մոտ է, կինը երեխային թողեց չուկայի հրապարակում, իսկ ինքը նետվեց Եփրատի ջրերի մեջ:

էլ-Ղուսեյնի հաշվումներով՝ ջարդերին զոհ գնաց 1.2 մլն հայ:

«Հայոց ոչնչացումէն ետք, կառավարութիւնը ձեռք դրաւ անոնց բոլոր ինչ-քերուն վրայ,- պատմում է էլ-Ղուսեյնը,- զորս կրցան գտնել անոնց բնակա-բաններուն եւ խանութներուն մէջ: Ամբողջն ալ ցուցակագրուեցան եկեղեցիներու կամ մեծ բնակարաններու մէջ, եւ յանձնախումբեր կազմուեցան՝ վարելու համար այն իրեղէններու վաճառումը, ինչպես կը ծախեն վաճառական անձի մը գոյքերը, միայն այն տարբերութեամբ, որ այս ինչքերուն արժէքը սովորապէս իր ժառանգներուն կը յանձնուի, մինչ հոս հայոց փոխարժէքը Թուրք գանձարան կը փոխանցուի:

Վաճառումը աներեւակայելի գիներով եղաւ. գեղեցիկ գորգ մը, որ կրնար արժել մօտաւորապէս 30 ոսկի՝ աճուրդի դրուած էր 5 ոսկիի: Այնուհետև գե-ղարուեստները կը տրուէին գրեթէ ոչինչ գիներով:

... Օր մը եկեղեցի գացի անձնապէս տեսնելու համար այն ձեւը, որով կը վաճառէին հայոց ինչքերը... Տեսարան մըն էր, որմէ պէտք է խուսափած ըլլայի, որովհետեւ մարդուն սիրտը կը ճմլուի ցաւէ...

Ո՞վ կրնայ նկարագրել այն զգացումները, որոնք հանդիսատեսի մը սիրտը կը ճմլեն, երբ կը մտաբերէ այս դժբախտ եւ հերոս ազգը, որ զարմացուց աշ-խարհը իր արիութեամբ եւ քաջասրտութեամբ, որ երէկ տակաւին, ամենէն աշ-խոյժը եւ ամենէն յառաջադիմականն էր այն ազգերէն, որոնք Օսմանեան կայս-րութեան մեջ կը բնակին, մինչդեռ այսօր՝ անցեալի յիշատակն են միայն: Իր վարժարանները, որոնք անցեալին դպրոցականներով լեցուն էին, այժմ ամայի են: Ամենէն արժէքաւոր գիրքերը նպարավաճառներուն պանիր փաթթելու կը ծառայեն: Ֆրանսերէն 30 հատորներ յիսնեակ մը դուրուշներու ծախուեցան: Ականատես եղայ հայկական եկեղեցիներու զանգակատուներու վրայէն խաչե-րու վերացուելուն: Եկեղեցիները պահեստանոցներու կամ վաճառման սրահնե-րու կը վերածուէին»[1]:

Այստեղ մի ճշգրտում, հայերի ունեցվածքի կողոպուտը, այն էլ զանգվածա-յին կողոպուտը, սկսվել էր շատ վաղ, քան նրանց բնաջնջումը:

Լոնդոնում հրատարակվող «Արարատը» դեռ 1914 թ. սեպտեմբերին գրեց. «Տեղական իշխանութիւնները ճամբորդական նպատակներու համար բռնա-գրաւեցին բոլոր կենդանիները (ձիեր, ջորիներ, եզներ ու ցուլեր)՝ բոլոր նա-հանգին մէջ, ինչպես նաեւ կառքերն ու սայլերը, առանց բացառութեան... Գրեթէ ամեն տեղ՝ իրենց դաշտային գործին համար գիւղացիներուն մնաց ոչ իսկ զոյգ մը լծկան»[2]:

---

[1] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 418-419:*

[2] *Նույն տեղում, էջ 445:*

Էլ-Ղուսեյնը ուսումնասիրել էր նաև թուրքական այն թեզի ճշմարտացիությունը, թե իրենք հայերին սպանեցին, որովհետև նրանք ուզում էին ապստամբել ու անկախանալ, որ մասնավորապես Վան քաղաքում իրենց ձեռքն էին ընկել այդ հաստատող փաստաթղթեր: Պարզվում է,- գրում է Ղուսեյնը,- որ դա հերյուրանք է, կառավարությունը բնակիչներին հրամայել է հեռանալ քաղաքից շատ ավելի վաղ, քան ռուսների մուտքը կամ անգամ մի թուրքի սպանվելը: Իշխանությունները պահանջեցին, որպեսզի հայերը հանձնեն զենքերը, բայց վերջիններս հրաժարվեցին՝ վախենալով նույն այդ իշխանությունների հարձակումից... Ինչ վերաբերում է Դիարբեքիրին, ապա «այնտեղ ոչ մի դեպք, ոչ մի սպանություն կամ անդորրի խանգարում չի եղել, ինչը կարողանար թուրքական կառավարության համար պատրվակ դառնալ հայերի դեմ գազանություններ կատարելու համար...»:

Էլ-Ղուսեյնի գիրքը ավարտվում է հետևյալ խոսքերով՝ ինքը «նախ և առաջ նպատակ է հետապնդում մերժելու բոլոր այն մեղադրանքները, որոնք կարող են հարուցվել իսլամի դեմ և ապացուցել, որ հայերի հանդեպ իրականացված դաժանությունների պատասխանատվությունն ընկնում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամների վրա...

Վերջում,- գրում է նա,- ես դիմում եմ եվրոպական պետություններին և հայտարարում եմ, որ նրանք թուրքական կառավարությանը խրախուսեցին, որովհետև իմանալով թուրքական վարչակազմի հիմարությունների և թուրքերի կողմից բազմիցս կատարված հանցագործությունների մասին, այդ տերությունները նրանց չխանգարեցին...»[1]:

Ինչ վերաբերում է գերմանացիների վարքագծին, ապա արտահայտությունն էր Մարդինիում կատարված հետևյալ դեպքը: Մի քուրդ աշիրեթապետ առևանգում է Արուսյանների համբավավոր ու հարուստ տան դստերը, որը փրկվելու ակնկալիքով դիմում է գերմանական գնդապետի օգնությանը: Վերջինս համաձայնվում է օգնել, եթե համաձայնվի դառնալ իր սիրուհին: Աղջիկը մերժում է և գնդապետի երեսին շպրտում. «Նախամեծար կը համարիմ ըլլալու կրթութիւն չունեցող մարդասպան քիւրտի մը կինը, քան թէ զարգացած հազարապետի մը հոմանուհին»: Եվ հերոսական մահով մը վերջ կու տայ իւր կեանքին»[2]:

---

[1] ***Էլ-Ղուսեյն Ֆ.,*** *նշվ. աշխ., էջ 43-44:*

[2] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 417:*

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲԻԹԼԻՍԻ – ԲԱՂԵՇԻ ՆԱՀԱՆԳ

Բիթլիսի վիլայեթը զբաղեցնում էր 22.000 քառ. կիլոմետր տարածություն, ուներ չուրջ 660 բնակավայր, որոնցում բնակվում էր 216.000 հայ: Վիլայեթը կազմված էր չորս սանջակներից՝ Բիթլիս, Մուշ, Սղերդ, Խիզան:

Թե՛ Տարոնում ու Սասունում և թե՛ Սալնո ձորում, չնայած անցած տասնամյակներին ունեցած մեծ կորուստներին, հայերը շարունակում էին մնալ մեծամասնություն: Նրանք կազմում էին Տարոնի բնակչության 60 տոկոսը, Բուլանըխի՝ 65 տոկոսը, Ախլաթի՝ 55 տոկոսը, Սասունի՝ 50 տոկոսը: Հայերը մեծամասնություն էին կազմում նաև Դատվանի, Տատիկի, Ազնվաձորի գյուղախմբերում:

Լեփսիուսի տվյալներով, որոնք տեղ են գտել նաև պատմագիտական մի շարք աշխատություններում, Բաղեշի նահանգից փրկվել էր միայն 2000 հայ, որն, իհարկե, ճիշտ չէ: Երբ Անդրանիկը մտավ Բիթլիս, Սասունից իջավ 4000-5000 հայ: Իսկ դրանք Սասունում ապաստանած բոլոր հայերը չէին: Անհնար է համաձայնվել, որ Մշո սանջակի բոլոր հայերը ոչնչացվել էին: Տարոնաբնակ 15.000 հայեր անցան սահմանը և ներկայումս բնակվում են թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ մի շարք օտար երկրներում:

Հանրի Բարբին գրում է. «Բիթլիսի, Մուշի և Սասունի շրջաններում բնակվում էր մոտ 160.000 հայ, այժմ նրանց թիվը 10.000-ի չի հասնում: Հիմնականում կանայք ու երեխաներ են, որոնք թշվառ ու ողբերգական վիճակում են... Կենդանի են մնացել նաև մի քանի տղամարդ, որոնք ստրկական վիճակում են քրդերի մոտ»[1]:

Սահմանադրության հռչակմանը հաջորդած կարճատև խաղաղ շրջանն իր բարերար ազդեցությունն ունեցավ նաև Սալնո ձորի, Ախլաթի, Տարոն-Տուրուբերանի հայ բնակչության վիճակի վրա: Սակայն աշխարհամարտի առաջին օրերից վերականգնվեցին խստությունները, որոնք վայել էին «արդուլհամիդյան» կոչվելու: Զորահավաքն այնպիսի էությամբ տարվեց, որ պատերազմական չունչն անմիջապես տիրապետող դարձավ: Այն ուղեկցվում էր կամայականություններով ու ամեն տեսակի բռնարարքներով: Հենց սկզբից զորակոչվածներին համակեց զգացողություն, որ իրենց տանում էին ոչ թե ռազմաճակատ կռվելու, այլ թիկունքից խփվելու համար, որ զորահավաքը այլ բան չէր, եթե ոչ հայությանը հաշվեհարդարի ենթարկելու միջոց: Հայի համար՝ թուրքական բանակը սպանդանոց էր:

---

[1] **Барби А.,** *նշվ. աշխ., էջ 47-48:*

Չի կարելի ասել, թե հայ քաղաքական գործիչները չէին զգում զորակոչի և զինաթափման վտանգավոր հետևանքները, բայց, ինչպես Հրաչ Տասնապետյանն է նկատում, երևակայել անգամ չէին կարող, որ այդ վտանգը լինելու է բնաջնջումը: Թերևս նաև դա դեր խաղաց նրանց ակնհայտ անհոգության և անփութության մեջ: Թեև արաբ զինվորները չնչին գներով զենքեր էին վաճառում, Տարոնի հայերը Մեծ եղեռն գնացին գրեթե անզեն: Դա մի ժամանակ, երբ քրդերը լրիվ զինված էին, համախմբված համիդիե գնդերում և ենթակա Կ. Պոլսից ստացված գաղտնի հրահանգներին՝ հալածել, մաշեցնել, հյուծել հայերին:

Բաղեշի վալի Մ. Աբդուլխալիկը, Մշո մութեսարիֆ Սերվեթը և օսմանյան խորհրդարանի անդամ Հաջի Իլիասն էին գլխավորում նահանգի հայ բնակչությունը ոչնչացնելու նախապատրաստական աշխատանքները:

Գեղամ Տեր-Կարապետյանն այս առիթով գրում է. «Էրզրումի նման, Տարօնին ալ բնաջնջման սեւ թակարդը կանուխէն սկսեր էին լարել: ՆԳ նախարարի երկու վատ օժանդակները՝ Պիթլիսի կուսակալ Ապտիւլ-Խալիք, Մշու կառավարիչ Սերվեթ՝ հոն էին: Հոն կը հասնէին 1914-ի սեպտեմբերի վերջերը, Մշոյ մեպուս (խորհրդարանական)՝ Հոճա-Իլիաս, Կէնճի մեպուս՝ Մեհմէտ, որոնք նոյն Թալէաթ պէյի մտերիմներն էին եւ արդէն Էրզրումի մէջ Պ. Շաքիրէն ընդուներ էին հայաջինջ չեթէներու հրահանգները...»[1]:

Զորահավաքը կազմակերպվում էր ժողովրդին սարսափեցնող մթնոլորտում: Օրը «մի քանի անգամ թմբուկը փողոցները կ'այցելէ՝ զարհուրանքի մէջ պահելու համար սարսափահար ժողովուրդը»[2]:

Զորահավաքից խույս տալու ցանկություն ունեցողների թիվն ավելի քան չատ էր: Մարդկանց համար խորթ էին պատերազմի նպատակներն ու կռվելու անհրաժեշտությունը, բայց դասալքողները քիչ էին, որովհետև դրա համար դաժան հաշվեհարդարի էին ենթարկվում նրանց ընտանիքները: «Ու ահա ամբողջ Տարօնը զորանօց դարձած, բոլոր տուներն իրենց չափահաս արուներէն զրկուած»[3]: Եթե զորակոչվում էին մինչև 50 տարեկան հայ տղամարդիկ, ապա զինապարտ էին համարվում միայն մինչև 31 տարեկան մահմեդականները:

«18-50 տարեկան պարտաւորիչ զինուորացու են,- գրում է ժամանակակից և ականատես Մ. Բարխյանը,- 5-10 ոստիկաններ կը խուժէին գիւղերը, դասակարգի բաժանուած անուանացանկ մը կը ներկայացնէին... Ոստիկանները տեղաւորուեցան սաքուները: Եւ հրամաններ. անկողինները մաքուր ըլլան, կերակուրները հաւի միսէ պատրաստուած, ձիերու համար առոյտ ու գարի, այս բոլորը ձրի: Եթէ բան մը պակաս գտնեն, վայ եկեր է գիւղացիի գլխուն»: Զինակոչիկները «գառան նման հլու կու գան ու կը յանձնուին: Նախ ծեծ մը քաշելով, իբրեւ բանտարկեալներ կը փակեն ախոռի մը մէջ»: Սպառնում էին. «Քեաֆիրնե՛ր, ձեր երեսէն այս պատերազմը կը քաշենք»[4]:

---

[1] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 842:

[2] Նույն տեղում, էջ 720:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս «Յառաջ» թերթում Մ. Բարխեանի «Քանա լեռ, 1914-ի ընդհանուր պատերազմը» վերնագրված հոդվածը:

Ոստիկանները չահագրգռված չէին, որ հայը բանակ մեկներ: Ուստի զորակոչը չարաչահում էին չորթումների համար: Նրանք զորակոչվածների մոտ եղած դրամը, իրերն ու հագուստեղենը վերցնում էին և նրանց ազատ արձակում, իսկ հրամանատարությանն ասում, թե իրենց քնած ժամանակ հայ զինակոչիկները փախել էին: Պատմում է հրաշքով փրկված հայ զինվորը. «Մենք 250-300 հոգի էինք, որոնք զինաթափվելուց հետո զբաղվում էին շինարարությունով: Այդ աշխատանքների ամբողջ ընթացքում մենք ամեն օր համոզվում էինք, որ հանձնված էինք թուրք զինվորների կամայականությանը: Մեզ այնքան սնունդ էին տալիս, որ հազիվ էինք կարողանում գոյություն քարշ տալ: Դրա փոխարեն պահանջում էին բարձր արտադրողական աշխատանք, իսկ ճիպոտն ու խզակոթը հարկադրում էին մեզ գործադրելու վերջին ուժերը: Աշխատանքն ավարտելուց հետո մեզ կապեցին չորսական հոգով, շարքի կանգնեցրեցին, տարան կիրճ և հարկադրեցին պպզել մեջք-մեջքի տված: Լեռան այդ լանջը ... շրջափակվել էր զինվորներով, ժանդարմներով և քրդերով, որոնք մեր վրա կրակ բացեցին»[1]:

Եղիշե քհ. Պարսամյանն իր հուշերում հանգամանալից անդրադառնում է զորահավաքին: Նա գրում է. «Մէկ կողմէ երիտասարդները ահու սպառնալիքին տակ գունդագունդ կ'երթային զինուորագրուելու, միւս կողմէն, նախապէս կազմուած ցուցակի մը համաձայն պարտադրուեցաւ իւրաքանչիւր տան՝ կառավարութեան յանձնելու որոշ թիւով ձիեր»: Հրամանը վերաբերում էր բոլորին, տարբերությունը տրվող ձիերի քանակի մեջ էր: Հայ վաճառականը «պէտք է տար 3-4 ձի. իսկ Թուրք կալուածատէր ազա մը, պէյ մը՝ մէկ ձի»[2]:

Միաժամանակ սկսվում է պաշտոնական կողոպուտը, բռնագրավվում են խանութների ապրանքները: Տանում էին ամեն ինչ՝ զինվորին պիտանի իր, թե կանացի զարդ, հագուստ: Գյուղերում բռնագրավումները վերածվեցին ավազակային կողոպուտի: Տանում էին ինչ ձեռքներն ընկներ՝ յուղ, սայլ, ձու, գուլպա: Կողոպուտը զուգակցվում էր խոշտանգումներով, «ամեն Թիւրք եւ քիւրտ ազատ էր իր կողմէն հրաման ընել եւ գործադրել»: Հայ գյուղացիների մեկ առ մեկ անասունները հաշվառվեցին և դրանք այլևս նրան չէին պատկանում՝ ո՛չ մորթելու և ո՛չ էլ վաճառելու իրավունք ուներ, իսկ սատկելու դեպքում պարտավոր էր հատուցել:

Անասունների և ինչքի հաշվառումը նույնպես գործածվում էր հայ-քրդական հարաբերություններն ավելի սրելու համար: Հայերի ունեցվածքի հաշվառումը հանձնարարում էին քրդերին, իսկ քրդերինը՝ հայերին:

Սահմանված էր, որ յուրաքանչյուր ընտանիք 100 ոչխարից 5-ը պետք է տար (ամեն անգամ) բանակի կարիքների համար, բացի դա, պարտավոր էր յուրաքանչյուր ոչխարի համար հանձնել 200 գրամ յուղ, ինչպես նաև կաշի, բուրդ: Գյուղացուց վերցնում էին ցորենի բերքի 10-20 տոկոսը: Վճարվելիք մթերքների քանակը գնալով ավելանում էր: Հազար անգամ իրավացի է

---

[1] "Deutscher Hilfsbund für Christl. Liebeswerk im Orient". Frankfurt am Mein, 1919, Februer, s. 2.

[2] **Զաւէն Արք.,** Պատրիարքական յուշերս, վաւերագրեր եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 71:

ժամանակակիցներից մեկը՝ Հ. Տեր-Զաքարյանը, երբ գրում է՝ տպավորությունն այնպիսին է, որ կարծես պետությունը ձգտում էր վերացնել հայերի սեփականությունը: Գյուղացին նաև պարտադրված էր իրենից հավաքած մթերքներն ու իրերը պետական պահեստներ տեղափոխել:

Երկուսուկես ամսում՝ զորահավաքի սկզբից մինչև պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը, տարոնահայությունը «պատերազմի կարիքներին» տվեց 400.000 փութ (64.000 ցենտներ) ցորեն, 15.900 ոչխար, 8.000 լիտր յուղ, 40.000 ոսկեղեն իր, հազարավոր ձի: Մեծ թվով եկեղեցիներ ու դպրոցներ վերածվեցին զորանոցների ու պահեստների:

Գյուղերը մեկուսացվեցին, գյուղից դուրս բռնված հային տանում էին բանտ կամ չալակավորների կայան:

Սակայն նաև իրողություն էր, որ Տարոնը շատ հաճախ հրաժարվում էր թուրքական բանակին զինվոր տալուց, իսկ չալակավոր սասունցիները հնար էին գտնում ճանապարհի ինչ-որ հատվածում ծլկելու:

Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես եպս. Խարախանյանը գրեց պատրիարքին, թե կառավարությունն է «ամեն կերպ անկարգութեան եւ չարիքներուն աղբիւրը եւ պատրուակ կը փնտռէ գաւառիս հայերը աղէտներու ենթարկելու»:

Որ դեռ 1914 թ. էր նախապատրաստվում տարոնահայության բնաջնջումը, վկայում է նաև գերմանացի ականատեսը. «1914-ի նոյեմբերին մենք իմացանք կոտորածի նախապատրաստման մասին: Մուշի մութեսարիֆը, որը Էնվեր փաշայի անձնական բարեկամն էր (ոմանք Սերվեթին համարում էին Թալեաթի անձնական բարեկամը), բոլորովին բացահայտ հայտարարեց, որ թուրքերն առաջին հարմար առիթի դեպքում ձեռնամուխ կլինեն հայերի կոտորածին և կոչնչացնեն այդ ամբողջ ազգությունը»[1]:

Տարոնում ջարդերի նախապատրաստության գլխավոր գործիքը համիդիե գնդերն էին, իսկ դրա բովանդակությունը՝ 1. Օգտագործել զորահավաքից խուսափելու առանձին դեպքերը՝ հայերին դաժանապես պատժելու համար, ստեղծել պատժիչ խմբեր, հարձակումներ գործել հայկական գյուղերի վրա՝ խուզարկել, կողոպտել, բռնաբարել, ձերբակալել, նաև ձեռնպահ չմնալ սպանություններից: 2. Հափշտակել հայերի սննդամթերքը՝ իբր բանակի կարիքների համար: 3. Պարտադիր անվճար աշխատանքի լծել չզորակոչվածներին (ճանապարհներ մաքրել, քաղաքի փողոցներն ավլել), նրանց հարկադրել հլու-հնազանդ կատարելու իշխանությունների բոլոր հանձնարարությունները: 4. Հավաքել բոլոր ձիերն ու քաշող ուժը, հարկադրել այդպիսիք հանձնելու նաև այն հայերին, որոնք քաշող ուժ չունեին: 5. Բռնագրավել բոլոր տաք ու սառը զենքերը, ինչպես նաև խոշոր ու մանր եղջերավոր անասունները: 6. Հավաքել հայերի ունեցած հացահատիկը, յուղը, փոխադրական միջոցները, անգամ... գուլպաները: 7. Հալածել հայ մտավորականությանը, կրոնավորներին, գործիչներին, նրանց այնպիսի վիճակում պահել, որ լռեն նույնիսկ ջարդերի դեպքում: 8. Հայերին՝ տղամարդ, ծեր, կին, անչափահաս, ներգրավել բեռների տեղափոխման գործում:

---

[1] Bryce J., նշվ. աշխ., էջ 91

Ալմա Յոհանսոնը պատմում է, որ երբ պատերազմն սկսվեց՝ Թուրք սպաները ազդարարեցին՝ հայերից կվերցնեն այն ամենն, ինչ պետք է պատերազմին ու բանակին: Դա վերածվեց կատարյալ անիշխանության և հայերի ունեցվածքի կատարյալ կողոպուտի: Թալանվածի միայն «մեկ տասներորդն էր պատերազմի նպատակի համար, իսկ մնացածը չի կարելի կոչել այլ կերպ, քան մաքուր գողություն»[1]:

Հարկ է նշել, որ հայերի կողոպուտի միջոց էր նաև զինվորական հարկի վճարումը: Քաջ գիտենալով, որ զորակոչվելու էին բոլորը, այնուամենայնիվ, զինվորական հարկ գանձվում էր, որն ամենածանր հարկն էր՝ կազմում էր ընտանիքի միջին եկամտի 1/3-ը[2]:

Բնաջնջման միջոց դարձավ նաև չալակով բեռների տեղափոխումը: Շալակավորը բեռը տեղափոխում էր 10 օրվա քայլքի հեռավորության վրա: Նա պետք է անցներ ձորերով ու լեռներով, հաղթահարեր ձյան հաստ շերտը, բեռներն առանձին դեպքերում, անգամ մինչև 60-70 կգ բեռ, կարողանար չալակած քարշ տալ ուղեկցող ոստիկանների ձիերի ընթացքի արագությամբ: Շալակատարների քարավանը Տարոնից հասնում էր մինչև Քյոփրի քեոյ, Հասան-Կալե: Հետ մնացողն ստանում էր մտրակի, իսկ ճանապարհին ընկածները՝ ամեն տեսակի հարվածներ կամ նրանից խլում էին ամեն ինչ, այդ թվում նաև հագուստը և թողնում մեռնելու ընկած տեղում: Եղել են դեպքեր, որ նմաններին գնդակահարել են: Բեռնակիր էին օգտագործում նաև բանակ զորակոչված հայերի նշանակալից մասը:

«1915 թ. մարտից սկսած,- գրում է Լեփսիուսը,- հայ զինվորների մեծամասնությունից ետ վերցրեցին զենքերը և նրանց գործածեցին որպես բեռնակիրներ, կամ ճանապարհային շինարարության վրա աշխատող հատուկ միավորումներում («աշխատանքային գումարտակներում»): Հետագայում նրանց գաղտնի, 80-100 անձից բաղկացած խմբերով հեռացրեցին և գնդակահարեցին, մահացու ծեծեցին փայտե մահակներով կամ այլ ձևերով ոչնչացրեցին զինվորների և ոստիկանների միջոցով...»[3]:

Ինչպես պատմում է Ալմա Յոհանսոնը, այդ տաժանակիր աշխատանքներից հայերի քառորդ մասը միայն վերադարձավ: «Երբ պատերազմն սկսվեց, բոլոր հայերը, որոնք զինվորական ծառայության տարիք ունեին, զինակոչվեցին... Նրանք, ովքեր մնացել էին տեղում, օգտագործվեցին ռուսական ճակատում Թուրքական զինվորներին մթերք մատակարարելու համար: Քանի որ այլևս կենդանիներ չէին մնացել, բեռներն անհրաժեշտ էր տեղափոխել մարդկանց մեջքով (ամբողջ տարածքում երկաթուղի չկար), Մուշի և Էրզրումի շրջաններում ձմեռը միշտ ավելի երկար է և հաճախ երկուսից երեք ամիս էր անհրաժեշտ լինում մինչև հասնեն նշանակված վայրը: Նրանք ո՛չ դրամ ունեին, ո՛չ էլ անհրաժեշտ հագուստներ՝ այդպիսի ճանապարհորդության համար:

---

[1] **Morgenthau H.**, *Memoires Survis des Documents Inédits du Department d' État. Flammaran, 1984, p. 395.*

[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի»: Տե՛ս **Օ. Սարգիսեանի** «Տարօնի գոյամարտն ու եղեռնը», էջ 428-429:

[3] **Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., փաստ. №№ 17, 21, 27, 42:

Ովքեր ինչ-որ դրամ ունեին, զինվորական ոստիկաններն անմիջապես խլեցին: Երբ որևէ մեկը հոգնությունից ուժասպառ կանգ էր առնում, նրան այնքան էին ծեծում, մինչև ճիգ գործադրեր նորից ոտքի կանգնելու և ճանապարհը շարունակելու համար, կամ էլ ուժասպառ ընկնում էր գետնին ու մեռնում: Կենդանի մնացածները վերցնում էին մահացածների հագուստները՝ որպեսզի մի քիչ ավելի լավ պաշտպանվեին ցրտից:

Այդ ժամանակ թափառաշրջիկներին, որոնք աշխատանք չէին կարողացել գտնել, ընդունեցին ոստիկանության շարքերը: Եվ ահա նրանք հանկարծ զգացին, որ անսահմանափակ իշխանություն ունեն: Դրան հաջորդեց դաժանություններով ու անմարդկային արարքներով լի մի երկար պատմություն»[1]:

Աշխատանքային պարհակը «զօրահաւաքէն աւելի երեւոյթ մըն էր, բայց շատերը կը կարծէին, թէ ատով զինուորութենէն պիտի ազատին»[2]:

«Հայ կիներ, աղջիկներ եւ 10 տարեկան տղաներէն սկսած մինչեւ զինուորութեան տարիքը,- վկայում է Ե. Տեր-Պարսամյանը,- յատկացուեցան շալակով փոխադրութեան»[3]:

Շալակավորներին ուղեկցողները դաժանագույն մարդիկ էին. «Ու խարազանը կը շաչէ, ու տղան կ'իյնայ անկանգնելի, կինը կը վիժի ու կը մեռնի, ծերը կը փռուի գետին, իսկ ինկնողին բեռը իյնալիքները կը վերցնեն ու կ'անցնին, իբր թէ ոչինչ պատահած ըլլար»[4]: Ճանապարհին սպանում էին մի քանի, անգամ տասնյակ շալակավորների, բայց ոչ միայն պատասխանատվության չէին ենթարկվում, այլև հաշվետվություն չէին տալիս: Յուրաքանչյուր երթի ժամանակ շալակավորների 30 տոկոսը մեռնում էր ծեծից, «դիակները ձգուած ճամբուն եզերքը», իսկ վերադարձողների 70 տոկոսն՝ իսկույն անկողին էր ընկնում: Քաշող ուժի միայն 30 տոկոսն էր հետ գալիս, 70 տոկոսը մահանում էր ճանապարհին:

«Կառավարութիւնը,- գրում է Ե. Տեր-Պարսամյանը,- բացէիբաց ջարդ մը կ'ուզէր ստեղծել եւ պատճառներ կը փնտրէր, բայց հայերը կը զգուշանային»[5]: Առաջնորդարանը գրեթե ամեն օր, գրավոր, թե բանավոր, ժողովրդին զգուշացնում էր՝ տալ ամեն ինչ և որևէ ընդդիմությունով պատրվակներ չստեղծել: Ժողովրդին համոզելու, նրան հնազանդության մղելու նպատակով հոգևորականներ էին ուղարկվում գյուղերը:

Հայերի անմոռուչ ենթարկվածությունը ծնում էր արհամարհանք ու այլանդակ վերաբերմունք նրանց հանդեպ: Իլիասի ազգակից Դայիրը պատգարակով էր տեղից տեղ գնում, և այն տանում էին հայերը, որոնց գործածում էին որպես քաշող ուժ:

Սերվեթը հայերի կողոպուտի և զինվորագրության պատասխանատու նշանակում էր հայ գործիչների: Օրինակ, բանակի մատակարարմամբ զբաղվող

---

[1] «Le Sorte...», p. 120-122.

[2] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 720:

[3] Նույն տեղում, էջ 721:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում:

հանձնաժողովի նախագահ նշանակված էր Վահան Փափազյանը (Կոմս): Այդ հանձնաժողովն էր հավաքագրում չալակավորների և կազմակերպում բեռների տեղափոխությունը: Տարօրինակ է, որ Կոմսը դա դրական երևույթ էր համարում, քանի որ «այդ խնդիրներու մէջ կառավարութեան խստութիւնները առերեւոյթ կը մեղմանային», բայց անմիջապես ավելացնում է. «Մութեսարիֆի անուղղակի քաջալերութեամբ, աւելի լայն ծաւալ կը ստանային պատերազմէ խուսափող աշիրէթներու սխրագործութիւնները հայ գիւղերուն մէջ»[1]:

Բեռնակիրներից մեկը մանրամասը նկարագրել է չալակավորների 11-րդ քարավանի (1915 թ. փետրվարի 9-ի) շարժը:

Անձրևախառն ձյուն էր տեղում, սառը քամին հասնում էր մինչև մարդու ոսկորները: Քարավանին ուղեկցելու համար նշանակված էին երեք թուրք, երկու հայ: Քարավանի բեռները դասավորված էին հրապարակում: Այնտեղ էր նաև Սերվեթը: Բացվում են զորանոցի դռները և դրանց «գիճացած, մզլոտած ու ապականած սենյակներուն եւ նկուղներուն մէջէն մաս առ մաս դուրս կը բերուին մարդ-բեռնակիրները, գունատ, պատռած շորերով, կարկտնուած տրեխներով պատանիներու, չափահասներու եւ ծերերու ամբոխ մը, աւելի ստրուկներու պարանցուկ մը, քան կենդանի մարդերու զանգուած մը»: Ամենքին մեկական հաց են տալիս և ուղարկում նրանց սպասող բեռան մոտ: «Էֆենտի՛, ոտքերուդ մեռնիմ», աղերսելով յառաջ կու գայ գունատ, տկարութէնէն մէկ կողմին թեքուած 50-ի մօտ դժբախտ մը: «Ոտքդ պագնեմ, էֆենտի՛, Աստուած ալ գիտէ հիւանդ եմ, ութ օր չկայ, որ վերադարձեր եմ Հասան Գալէէն...»:

Հսկող հանձնաժողովի նախագահ Բաղրխանը «զայրոյթի նշան մը կ'ընէ և առանց հաց իսկ տալու, կը հրէ դէպի չալակները: Եւ այսպէս իրարու ետեւէն կ'առաջնորդուին պատանիներ, ծերեր, չափահասներ, մէկը մէկէն տժգոյն, մէկը մէկէն յուսահատ, մէկը մէկէն հոգեխռով»: Քարավանի հրամանատար Մուստաֆան դիմեց Սերվեթին. «...Ասոնց (մինչեւ Հասան Կալէ) առանց բեռի իսկ տանիլ հնարաւոր չէ»:

Շարժվում են: Սուլուխ գյուղի մերձակայքում քարավանը կանգ է առնում հանգստի համար: Նրա «երկար ծայրերը իրարմէ հեռու տարածութեան վրայ թեք ընկած, կողք-կողքի կ'իյնան թուլացած: 2-3 րոպէ վերջ նոյն չարչարանքով ու փոխադարձ օգնութեամբ ոտքի կ'ելլէ ու կը շարունակէ իր անիծապարտ ճանապարհը»: Ծանր շնչառության, ողբի, հառաչանքի ձայների համահավաք աղմուկն էր ուղեկցում քարավանին: Ապա լսվում էին ձայներ. «Աղա՛, հոս երկու հոգի մնացին»: Վրա են հասնում զայրացած ոստիկանները:

Քարավանի համար ճանապարհին ո՛չ գիշերելու տեղ էր պատրաստված և ո՛չ էլ սնունդ: Շալակավորները գիշերում էին իրար վրա թափված: Երկրորդ օրը 15 հոգի տեղից բարձրանալ չկարողացան: Մինչև Խնուս հասնելը քարավանը ճանապարհին թողեց 100 չալակավոր:

Խնուսում քարավանին չունչ առնելու հնարավորություն չտվեցին: Քիչ անց, «յոգնութենէն քուրջի կտորի վերածուած, ջրաթաթախ կարաւանը ...

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 724-725:*

անկարող ոտքի կանգնելու՝ կեանքէ ալ ձեռք քաշած դրութեամբ ու կիսաքանդ վիճակով վար թափուեցաւ ձիւնի ու ջուրի մէջ»: Քիչ անց չալակավորների այդ կիսակենդան զանգվածը կենդանացավ, դեն նետեց բեռներն ու սկսեց ցաք ու ցրիվ փախչել: Շալակավորների 1/3-ն անհետացավ: Մյուսներին անմիջապես ոտի հանեցին և լրացուցիչ ոստիկանական ուժերի ուղեկցությամբ, առանց հացի կտոր իսկ տալու, առաջ քշեցին: 1500 չալակավորից տեղ հասավ 523-ը[1]:

Այդ ժամանակահատվածում հայերի հանդեպ թուրքական իշխանությունների կիրառած գրեթե բոլոր միջոցառումները, բացի տնտեսական այլևայլ խնդիրներ լուծելը, հետապնդում էին նաև բնաջնջման նպատակ: Այդպիսին էին ամելե թաբուրները, այդպիսին էր նաև չալակով բեռնափոխադրումը: Գործողությունների այդ երկսայր բնույթն առկա էր ամենուրեք:

Պատմում է Յ. Լեփսիուսը. «Պատերազմի սկզբից ևեթ հայկական գյուղերն ու քաղաքները լցվեցին թուրքական ու քրդական հրոսակախմբերով, որոնք բանակ էին վերցվել որպես ժանդարմներ: Նրանք խուզարկելու պատրվակով զբաղվում էին ավազակությամբ ու կողոպուտով: Հայերից խլվեցին ձմեռվա համար տնտեսված ողջ պաշարը, վախ կար, որ գարնանը սովի կմատնվեն:

Բիթլիսի նահանգապետը Մուստաֆա Աբդուլխալիկ փաշան էր՝ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի փեսան: Նա քաղաքի և շրջակա գյուղերի 20-ից մինչև 45 տարեկան բոլոր հայ տղամարդկանց զինծառայության էր զորակոչել (այսինքն՝ ճանապարհաշինարարական աշխատանքների և բեռնակրության):

Հայերի եկեղեցիներն ու տները դատարկվում էին՝ թուրք զինվորականներին այնտեղ տեղավորելու նպատակով: Ջիհադ հայտարարելուց հետո մոլլաները, շեյխերն ու հանրահայտ ավազակները զբաղվում էին հրահրիչ գործունեությամբ: Մահմեդականները զինվեցին, իսկ մզկիթներում մոլլաները քրիստոնյաների դեմ ատելություն էին քարոզում: Բիթլիսի թուրքերը քրդերից հրոսակախմբեր կազմեցին, պաշարեցին Ուրդափ գյուղը:

300 հոգուց բաղկացած մեկ այլ հրոսակախումբ, Խումաջի Ֆարսոյի (վատահամբավ շեյխ Ջալալէդդինի հետնորդի) և Էմիր Մեհմեդի առաջնորդությամբ, հարձակվեց Գյարգարի շրջանի հայկական տասը գյուղերի վրա, կողոպտեց ու կրակի մատնեց դրանք...

Բացի բանակ զորակոչված հայերից, ամեն տարիքի տարբեր թվով հայեր բռնի քշվում էին ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարելու և բեռնակրության՝ ողջ ձմեռը մինչև 35 կգ ծանրության բեռներ փոխադրելու կովկասյան ճակատ: Վատ սնվելու և քրդական հարձակումներից անպաշտպան լինելու հետևանքով նրանց կեսը կոտորվում էր ճանապարհին, հաճախ միայն 1/4-ն էր վերադառնում: Սարիղամիշի և Արդահանի ճակատամարտերից հետո, երբ թուրքական բանակը մնաց անօթևան, ձյունի ու սառույցի վրա, շատ զինվորներ դասալքեցին: Բայց հինգ քուրդ դասալիքին ընկնում էր միայն մեկ հայ դասալիք:

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 731-743:*

Ոմանք վերադարձան իրենց տները, և ժանդարմները դասալիքների ցուցակներն առած գյուղից գյուղ էին անցնում՝ պահանջելով հանձնել նրանց: Միաժամանակ խուզարկություններ էին կատարում զենք գտնելու համար: Եթե դասալիքին չէին գտնում, այրում էին նրա տունը, բռնագրավում արտերը: Ժանդարմների շուրջկալները երբեմն վերածվում էին ընդհարումների»[1]:

Իշխանությունները Տարոնում վերածնեցին քրդական ավազակախմբերին: Սահմանադրության շրջանում բանտ նետված, թաքնված, արտասահման փախած քուրդ ցեղապետները հրապարակ իջան: Մուսա բեկը, Ղասրմ բեկը և մյուս տխրահռչակ ավազակները նորից «գործի անցան»: Նրանք հսկայական նյութական հնարավորությունների տեր էին և ունեին մեծաթիվ ռազմական ուժեր: Մուսայի տրամադրության տակ կար 20.000 զինյալ: Նրանք նորից պատիժ դարձան հայերի գլխին: Բանը միայն այն չէր, որ հայը կրկին պարտադրվեց անվերապահ ենթարկվելու քուրդ ավազակապետների, և ոչ միայն նրանց, այլև անգամ մահմեդական սինլքորի, քմահաճույքներին, ծառայել, քնելու տեղ տալ, կերակրել նրանց ու նրանց ձիերին, այլև քրդերը պարզապես հանձնարարություն էին ստացել բռնություններ գործադրելու հայերի հանդեպ, նրանց կողոպտելու, առևանգելու, սպանելու:

Վերականգնվեցին համիդիե գնդերը իրենց հին անուններով ու հին արտոնություններով: «...Մինչ հայութեան մէջ կը վերցուէին 20-60 տարեկան արուները զինուոր եւ բեռնակիր անուան տակ, կը պարպուէին տուներն ու գիւղերը, միւս կողմէ, անձեռնմխելի կը մնար կարգ մը վայրերու քրտութիւնը ... Հայ ազգաբնակչութիւնը ամբողջովին ծառայութեան կը կանչուէր, անդին քրտութիւնը կը մնար իր վայրերուն մէջ...»[2]: Պետությունը քրդերին վիթխարի քանակությամբ զենք ու ռազմամթերք էր տրամադրում իբր մարտական ուժեր ձևավորելու՝ պատերազմին մասնակցելու համար: Քրդերն այդ ամենը հաճույքով ստանում էին, բայց չկամությամբ էին ռազմաճակատ մեկնում: 10.000 մարդու համար սպառազինություն էին ստանում, բայց ռազմաճակատ ուղարկում 500 հոգի: Իշխանություններն աչք էին փակում դրա վրա: Մինչդեռ նույն այդ իշխանությունները հայերից պահանջում էին իրենց ունեցած զենքերով կամավորական խմբեր կազմակերպել: Հայերին մահվան սպառնալիքով զորակոչում էին բանակ, դարձնում չալակավոր, իսկ քրդերից հատուկենտ մարդ էր զորակոչվում: Նրանք չալակավոր դառնալուց ընդհանրապես ազատված էին:

Ընթանում էր հայերին վարկաբեկելու, նրանց դեմ մահմեդականներին գրգռելու եռանդուն գործընթաց: Եվ դա ջարդերի հեղինակներին հաջողվում էր: Զեթեապետ Մահմուդը հայտարարեց. «Այս անիծեալ ազգը (հայ) մեզ հարստահարեց, կողոպտեց: Ես բաւական ժամանակ Մշոյ կողմերում ապրել եմ. մեր աշխատանքի արդիւնքը նրանք էին վայելում: Իբր վաճառական են. մեր ցորենը գնում են շատ չնչին գնով, իսկ ապրանքները մեզ վաճառում են թանկ գնով: Բարեբախտաբար, կառավարութիւնը հասկացաւ եւ այդ անիծեալ ազգը խտամի դատապարտեց: Կարող եմ պարծենալ եւ արար աշխարհը կը

---

[1] **Լեփսիուս Ցո.**, նշվ. աշխ., փաստ. №№ 17, 21, 27, 43:

[1] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 729:

վկայի, որ կառավարութեանը չատ եմ օգնել ու հաւատարմութեամբ կատարել նրա հրամանները: Հպարտ եմ ասելու, որ 4000-5000 կեավուրի այս ձեռքովս եմ սպանել, 8000-ից աւելի կեավուրի իմ ջանքերով եւ իմ հեծեալներով ենք այն աշխարհը ուղարկել...»[1]:

1915 թ. հունվարին Թուրքերն ու քրդերն անցան հայկական բնակավայրերի բացարձակ կողոպուտի: Վիլայեթի չատ գյուղեր փետրվարի 5-ի դրությամբ լրիվ կողոպտված էին ու հրդեհված: Փետրվարի 23-ին Դիլման մտած ռուսական գորքերն ու հայ կամավորները տեսան կացնահարված ու գլխատված հայերի հարյուրավոր դիակներ: Մինչ այդ հայերը զոհ չէին տվել, որովհետև նրանք ու ասորիները թաքնվել էին պարսիկների տներում: Փետրվարի 14-ին Թուրք զինվորներն ու քրդերը թաքնվածներին դուրս հանեցին և խոշտանգելով սպանեցին: Անդրանիկը այդ ահավոր ոճրագործության մասին մարտի 10-ին գրում է ռուսական հրամանատարությանը. «Թե ինչ է կատարվել այդ շրջանում, հնարավոր չէ նկարագրել ո՛չ գրչով, ո՛չ էլ լեզվով: Պատկերացնելու համար՝ պետք է տեսնել»:

* * *

Տարոնն ու, մասնավորապես, Սասունը, չնայած ինչ-որ դիմադրություն ցույց տվեցին Թուրքական ջարդարարությանը, բայց ո՛չ վճռական, ո՛չ կազմակերպված և ո՛չ նպատակասլաց:

Ինչո՞ւ:

Մինչև օրս էլ սասունցին չի կարողանում պատասխանել մի հարցի՝ ինչո՞վ բացատրել, որ 1891-94 թվերին, 1904 թ. սուլթանը Սասունի ազգաբնակչությանը ոչնչացնելու համար մեծաթիվ ռազմական ուժեր ուղարկեց, բայց, չնայած հայերի տված մեծաթիվ զոհերին (առաջին դեպքում՝ 10 հազար, իսկ երկրորդում՝ 8 հազար), Լեռնաշխարհը դիմակայեց, նրա հայ բնակչության ճնշող մեծամասնությունը մնաց կառչած Սասնո լեռներին, իսկ 1915 թ. համեմատաբար ոչ մեծաթիվ ուժերով, առավելապես քրդերի միջոցով, հնարավոր եղավ ոչնչացնել թե՛ Տարոնի և թե՛ Սասունի հայ բնակչությանը:

Զէ՞ որ Թուրքիան պատերազմի մեջ էր, երեք ռազմաճակատներով կռվում էր Անտանտի դեմ և նրա ռազմական ուժերն ամբողջությամբ ենթարկված էին պատերազմի պահանջներին:

Այս հարցը նոր չէ: Ամեն անգամ, երբ որևէ մեկը փորձել է դրա իսկական պատճառները բացահայտել, ազգադավի պիտակին է արժանացել: 1915 թ. Սասունի հայ համայնքի ղեկավարը Ռ. Տեր-Մինասյանն էր, իսկ Տարոնինը՝ Վ. Փափազյանը (Կոմսը): Արդեն 1914 թ. վերջերից ակնհայտ դարձավ, որ Թուրքերը հայ ազգաբնակչությանը ջարդելու են: Հայերը ելք էին որոնում: Ի վերջո որոշվեց, քանի որ Տարոնը, այդ թվում նաև Մուշ քաղաքը, իրենց աշխարհագրական դիրքով Թուրքերին լուրջ դիմադրություն ցույց տալ չէին կարող, Տա-

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 540:

րոնի զինված ուժերը բարձրացնել Սասուն և Թշնամու դեմ կռիվներ մղել այն-տեղ: Այս պլանի դեմ վճռականապես հանդես եկավ Կոտոյան Հակոբը, սակայն նա չկարողացավ էական ազդեցություն գործել և Մուշի կռվող ուժի հիմնական մասը բարձրացավ Սասուն: Հակոբը չընկճվեց և փոքրաթիվ ուժերով կազմա-կերպեց Մուշի պաշտպանությունն ու Թշնամուն հարկադրեց օրեր կորցնել քա-ղաքի հայկական թաղերը ներխուժելու և բնակչությանը ընաջնջելու համար:

Այդ նույն ժամանակ Սասունում կենտրոնացվեցին զգալի թվով զինված ուժեր: Սակայն այդպես էլ չհաջողվեց նրանց միավորել մեկ ընդհանուր հրա-մանատարության ներքո: Ձևականորեն, այդ ուժերի ընդհանուր ղեկավարը Ռ. Տեր-Մինասյանն էր, իսկ գործնականում առաջացան երկու ռազմաճակատներ իրենց ինքնավար հրամանատարներով:

Քանի դեռ թուրքերն զբաղված էին Մուշ քաղաքով, սասունցիները կարո-ղանում էին հետ մղել հարավից եկող թուրք-քրդական ուժերին, իսկ երբ Մուշն ընկավ և թուրքական բանակը Կուրտիկն անցնելով շարժվեց Սասունի վրա, Լեոնաշխարհը հայտնվեց աքցանի մեջ, ինչը մեկ անգամ ևս ապացուցեց, որ Սասունի պաշտպանության գլխավոր հենարանը Մուշն է և որի անպաշտպան թողնելը ճակատագրական սխալ էր: Մեծ եղեռնում տարոնահայության ոգ-բերգության արմատները պետք է փնտրել հայության այդ հատվածի՝ ոչ միայն երիտթուրքական, այլև, ամբողջությամբ վերցրած, թուրքական քաղաքակա-նության դեմ ընդվզումների պատմության մեջ, որոնք ձգվում են մինչև 17-րդ դարի վերջերը:

Տարոնն ու Զեյթունը ավանդաբար հանդիսացել են հայ ազատագրական պայքարի կենտրոնները: Իրականությունն այն է, որ Սասունն ի սկզբանե որևէ օտար նվաճողի չի ենթարկվել: Նա կռվել է պարսկական նվաճողների դեմ, Տա-րոնը հանդիսացավ Ավարայրի հերոսամարտի ողնաշարը, Արածանին դարձավ Հայաստանում քրիստոնեության ընդունման անդրանիկ ու գլխավոր մկրտա-տաշտը, որպեսզի հայը զրադաշտականություն չընդուներ ու չպարսկանար: Մեսրոպ Մաշտոցը Տարոնից սկսեց իր գրական-լուսավորչական գործունեու-թյունը, ինչի ուղղակի արդյունքը հանդիսացավ 5-րդ դարի մշակութային թռիչ-քը, որի օրրանը նույնպես Տարոնն էր: Հետո եկան արաբները և բարձրացավ Խութեցի Հովնանը: Տեղի ունեցավ ազգային ոգու անօրինակ պոռթկում՝ ծնվեց «Սասունցի Դավիթ» էպոսը: Դրանից հետո իրարու հաջորդեցին Հայաստանով անցնող թուրք-մոնղոլական հորդաները, բայց Սասունը մնաց անկախ: Նա շատ առումներով անկախ էր նաև Օսմանյան կայսրության ժամանակաշրջա-նում: Եվ ոչ միայն անկախ էր, այլև թուրքական տիրապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի նախաձեռնողն ու կազմակերպիչը:

18-րդ դարում հայկական շարժումների համար սկսվեց մի նոր շրջան, որի հիմնադիրը Հովնան Վարդապետն էր: Այն ձևավորեց ժողովրդի պատվի, կյանքի և ունեցվածքի պաշտպանության համար պայքարողների համաստե-ղություն՝ Հակոբ Սարկավագ, Հրայր Դժոխք, Գ. Ալթայաճյան, Ն. Խարախան-յան, Վարդան Վարդապետ, Հ. Կոտոյան, Արաբո, Աղբյուր Սերոբ, Անդրանիկ, Գևորգ, Սպաղանցի Մակար, Իսրո (Կորյուն), Փեթարա Մանուկ և շատ ու շատ ուրիշներ...

Հերոսապատումների չղթայի անդրանիկ օղակը Հովնան Վարդապետն էր: Նա Տարոնի Գիբնե գյուղից էր, 1749 թվից՝ Ս. Կարապետի վանքի վանահայր: Միքայել վրդ. Զամչյանի վկայությամբ՝ 1763 թ. Հակոբ կաթողիկոսի մահից հետո Հովնանի թեկնածությունը նույնպես դրված էր կաթողիկոսության համար, սակայն կաթողիկոս ընտրվեց Սիմեոն վրդ Երևանցին: Հավանաբար նաև այդ հանգամանքը դեր խաղաց երկու գործիչների միջև եղած, եթե ոչ թշնամական, ապա լարված հարաբերությունների համար: Գործը հասավ նրան, որ կաթողիկոսը Հովնանին բանադրեց, գտնելով, որ նա թշնամաբար էր տրամադրված Մայր Աթոռին և «վնասակար» գործերով էր զբաղվում: Բանադրանքի թուղթը պարունակում էր 10 մեղադրանք:

Դրանցից առաջինը կաթոլիկների հանդեպ հանդուրժողականությունն էր: Եվ իսկապես, Հովնանը կաթոլիկ հայերին չէր հետապնդում, նույնիսկ թույլ էր տալիս, որ աղոթեին լուսավորչականների հետ: Հովնանին հասկանալ կարելի էր. նա համազգային ապստամբություն էր նախապատրաստում և դեմ էր դավանաբանական պատճառներով հայ հասարակության պառակտմանը: Մյուս մեղադրանքն էր՝ Հովնանն արգելել էր Էջմիածնի նվիրակի մուտքը իր թեմը և գործել էր նաև իր թեմից դուրս, նամակներ հասցեագրել ողջ հայությանը, որ նա իր գործակալներն ուներ Հայաստանի խոշոր կենտրոններում: Նրա տրամադրության տակ կային վարձկան քրդեր: Բնականաբար այս ամենը միջոցներ էին պահանջում և Հովնանն այդ նպատակով օգտագործում էր եկեղեցական հաստատությունների եկամուտները: Նա նաև մեղադրվում էր, որ ոչ թե Աստծուն էր ապավինում, այլ «մարդուն»:

Սիմոն կաթողիկոսի «Յիշատակարանում» նշվում է, որ Հովնանը մեծ գումարներ էր տվել Տարոնի քուրդ տիրակալ Ալաէդդին բեկին, որպեսզի ուժեղացնի բարեկամական հարաբերությունները քրդերի հետ: Այդ գումարներով Ալաէդդինի համար սուլթանական ֆերմաններ էր ստացել, որոնք թույլատրում էին բերդ կառուցել (կառուցման ծախսերն էլ Հովնանն էր հոգացել): Վանքի սպասքները հալում էր, դրամ կտրում ու տալիս Ալաէդդինի որդի Մաքսուդին, որովհետև նա հաճախ էր ապստամբում Բարձր Դռան դեմ: Դա նկատի ունենալով էր Հովնանը Հովսեփ Էմինին գրում, թե հայկական ապստամբությանը կմիանան նաև քրդերը:

Հովնանի բանադրությունը համընդհանուր դժգոհություն առաջացրեց, որովհետև մեծ հեղինակություն էր ամբողջ Հայաստանում: Նրա պաշտպանությամբ հանդես եկան նաև քրդերը: Մաքսուդն այդ կապակցությամբ բողոքի նամակ գրեց Վանի վալի Իհսան աղային, իսկ վերջինս բողոքագիր ուղարկեց կաթողիկոսին: Բողոքներն այնպիսի թափ ու ծավալներ ընդունեցին, որ կաթողիկոսը հարկադրված եղավ վերացնել բանադրանքը:

Երբ Հովսեփ Էմինը Մոսկվայում էր, նրա հետ բանակցությունների մեջ էր Հովնանի ներկայացուցիչ Սուքիաս վարդապետը, որը Էմինին հավաստիացնում էր, թե Տարոնի հոգևորականությունը հավանություն էր տալիս նրա ծրագրին: Երբ Էմինը եկավ Թիֆլիս, չտապեց կապ հաստատել Հովնանի հետ, որին նա համարում էր «իր միակ բարեկամը» հայ հոգևորականների շրջանում: Նրանց միջև սկսվում է աշխույժ նամակագրություն: Վանահայրը Էմինին հրավիրում է գրավելու Արևմտյան Հայաստանը, եթե կարողանա ձեռք բերել Վրաստանի

Հերակլի թագավորի աջակցությունը: Հովնանը եռանդուն գործունեություն է ծավալում Օսմանյան կայսրության հայկական և հայաբնակ շրջաններում, իր գործակալների միջոցով տարածում համահայկական ապստամբության գաղափարը: Նա էմինին ուղարկում է 600 ոսկի, նաև խոստանում վեց օրվա մեջ նրա տրամադրության տակ դնել 40.000 մարդ: Հայերի ապստամբությանը մասնակցելու պատրաստակամություն հայտնեցին նաև ասորիներն ու քրդերը:

Հովնանը գտնում էր, որ ապստամբությունը հաջողությամբ կպսակվի, որովհետև Թուրքիան թուլացել էր, նրա քաղաքները պաշտպանված չէին: Թուրքերի որոշ շրջաններում նույնիսկ այն մտայնությունն էր տարածում գտնում, որ իրենց իշխանության վախճանը հասել էր:

Ըստ Հովնանի, եթե Հերակլի թագավորը հրաժարվեր աջակցել ապստամբությանը, հայերը պետք է հույսը դնեին սեփական ուժերի վրա և էմինին առաջարկում էր դառնալ հայրենիքի ազատագրության պայքարի ղեկավար:

Հովնանի եռանդուն աջակցությամբ Մաքսուդը 1766 թ. բարձրացրեց նոր ապստամբություն, որը դաժանորեն ճնշվեց: Սկսվեց հալածանքը նաև Հովնանի դեմ: Նա հարկադրված էր թաքնվել, ծպտված տեղից տեղ անցնել: Հովնանի դեմ դուրս եկավ նաև Ս. Կարապետի վանքի միաբանության զգալի մասը:

Պատրիարք Գրիգոր արք. Բասմաջյանը Հովնանից պահանջում է գնալ Կ. Պոլիս: Այդ իրադարձությունների ժամանակ փոխվում է Սիմեոն կաթողիկոսի վերաբերմունքը, նա հանդես է գալիս Հովնանին հալածող ուժերի դեմ: Հովնանը մեկնում է Կ. Պոլիս, որտեղ կարճ ժամանակում մեծ ազդեցություն է ձեռք բերում հայ հոգևոր և աշխարհիկ շրջաններում:

Ռուս-թուրքական պատերազմն անհնար էր դարձնում Հայաստանից հեռու գտնվելը և 1769-ին Հովնանը Ս. Կարապետի վանք է վերադառնում: Բայց բանսարկությունները չեն դադարում և արդեն 1770-ին նա նորից Կ. Պոլսում էր: Էմինի հուշագրություններում նշվում է, որ Հովնանը ձեռք էր բերել 8000 հրացան՝ հայերին բաժանելու համար[1]:

Հովնանի ձևավորած շարժումը նրա մահով չավարտվեց: 19-րդ դարասկզբին այդ շարժման ջատագով ու ղեկավար դարձավ Հակոբ Սարկավագը, իսկ ապա նաև հայդուկային համաստեղությունը՝ Արաբո, Աղբյուր Սերոբ, Վարդան Վարդապետ, Անդրանիկ, Հրայր Դժոխք, Գևորգ, Սպաղանաց Մակար, Փեթարա Մանուկ և ուրիշներ: 1885-1907 թվականները հանդիսացան հայ ազատագրական շարժման հայդուկային կռիվների շրջանը:

Սուլուխի (1907 թ. մայիսի 28) կռվում Գևորգի սպանվելը նշանավորեց այդ շարժման վերջին փայլատակումն ու ողբերգական ավարտը:

Դեռ Սահմանադրությունը հռչակելուց առաջ, Դաշնակցության պարտադրանքով, հայդուկների հիմնական մասը հեռացավ Սասունից, անցավ Դիարբեքիր և Խնուս: Նրանցից շատերը բանտ ընկան: Սահմանադրության հռչակումից հետո հայդուկները լեռներից իջան, դուրս եկան բանտերից:

Սկսվել էր հայ-թուրքական «եղբայրացման» շրջանը, և Ռ. Տեր-Մինաս-

---

[1] «Տարոնի արծիւ», 1952 թ., № 32, էջ 58-71:

յանցը հայդուկներից պահանջեց ընդառաջ գնալ այդ «եղբայրացմանը»:

Հայդուկները ենթարկվեցին «պարոնի» հրամանին, անցան խաղաղ տնտեսական գործունեության, բայց գենքերը չհանձնեցին, որովհետև հայ-թուրքական բարեկամությանը չէին հավատում: Իսկ չատերը՝ Փեթարա Մանուկ, Մորուք Կարո, Սասունցի Մուչեղ, Կորյուն և ուրիշներ, մնացին հայդուկ: Նրանք, կտրվելով Ռուբենից, համագործակցեցին սկզբում Ս. Զավարյանի, իսկ ապա Զավրիևի հետ: Շուտով ձևավորվեց հայդուկային նոր «ընտանիք», որի գործունեությունը ղեկավարում էին Կորյունն ու մչեցի Միջոն: Շարունակեց ակնհայտ մնալ մի իրողություն, որ, եթե թուրքերի և հայերի չահերը հակոտնյա էին, նրանց միջև կային հիմնարար հակասություններ, ապա քրդերի հետ, չնայած նման հակասություններ չկային, բայց ապրելակերպի, զարգացման մակարդակների տարբերությունը երկու ժողովուրդների միջև այնպիսի թշնամություն էր ձևավորել, որն ավելի մեղմ չէր, քան հայ-թուրքական առճակատումը: Ժամանակն այդ հարաբերությունների մեջ էական փոփոխություն չմտցրեց, ընդհակառակը երկու ժողովուրդների թշնամությունը դարձրեց ավանդական:

19-րդ դարասկզբին անգլիացի ճանապարհորդ Ջորջ Ֆաուլթոնը «Three Years in Persia» երկհատոր գրքում (Լոնդոն, 1841) նկարագրում է իր ուղևորությունը Պարսկաստանից Տարոն, որի ընթացքում նա ականատես էր եղել իրավիճակների ու դեպքերի, որոնք բացահայտում էին հայ-քրդական հարաբերությունների մի չարք կողմերը: Պարսիկների և քրդերի հետամնացությունից հետո նա հայտնվում է Բերկրիում. «...Տարբերությունները չատ էին... ավելի բերրի, քան նախորդ օրերի երկրները: Հանդիպեցինք հայերի խմբերի, գոմեշները հացահատիկ էին տանում Բայազետի մոտակայքում գտնվող թուրքական բանակը պարենավորելու, իսկ մի մեծ խումբ բաղկացած էր գաղթող գյուղից, որին տեսնել էր պետք հասկանալու համար, թե դա ինչ էր: Փոքր երեխաները կողովների մեջ էին դրված գոմեշների վրա: Այծեր ու ամաններ, հորթեր ու գորգեր... կանանց ծվեն-ծվեն հագուստ, նրանք քիթ-օղերով, ապարանջաններով և պչրանքի փորձերով կազմում էին աներևակայելի պատկեր:

Դրանից առաջ մենք անցել էինք վայրենի տեսքով քրդերի բանակատեղիներով, խեղճուկրակ սև վրանների կողքով: Նրանց արտաքինը նման էր ասորական չրջանի բնակչությանը... տառապում էին տարափոխիկ հիվանդություններից ... Անցանք ժամանակին չատ լավ կառուցված հայկական կամուրջով: Դա ավերված էր: Նկատեցի, որ բանալի քարերը քանդակված էին խաչերով... դիտեցի ավերակները, որոնք կրում էին քրիստոնեական կրոնի բազմաթիվ նշաններ...

Քրդական մի խումբ անցավ մեր բանակատեղիի մոտով, պարտված վերադառնում էր Բայազետից... Սա ճանապարհի ամենավտանգավոր հատվածն էր... Նահանջող զորքերից հնարավոր էր ամեն ինչ սպասել, մանավանդ սրանցից, որոնց սովորությունն էր ոչ միայն իրենց ճանապարհի վրա եղած ճանապարհորդներին ու գյուղերը թալանելը, այլև միմյանց կողոպտելը, երբ սեփական ավազակատենչության համար այլևս ուրիշ սնունդ չկար... Ավերն ու կործանումը մատնում էին թուրքական բանակի հետքերը և բնաջնջում էր

սպասվում բոլոր նրանց, ովքեր հանդիպեին նահանջողներին»:

Արճեշի բերդ՝ «արտաքինից պատկառելի մի քաղաք»[1]:

Մանազկերտում գնացի աղայի նստավայրը: «Շուտով մեծ հետաքրքրությամբ ինձ նայող ամբոխ հավաքվեց ... Սովորականից ավելի մտերմաբար ոտքերիցս, ձիուս թամբից քաշելով կարծես ուզում էին ասել. «Մեր ձեռքում ես»: Բերդի դիվանատանը 60-ից ավելի քրդեր՝ ծերակուտականներ, գետնին նստած ծխում էին: Նրանք քրդական տարբեր տարազներ էին կրում, քրջերով զարդարված: Ինձ ռուս լրտեսի տեղ էին ընդունում, սակայն ի վերջո մեզ գիշերելու տեղ տվեցին «հին գորգի վրա, որ սարսափելի կեղտոտ էր»: Հանկարծ երկու ահարկու դեմքով զինված մարդիկ ներս մտան, իսկ երրորդի ձեռքին կացին կար: Նրանք մոտեցան ու մոտս կանգնեցին, կարծես նրանց բանտարկյալն էինք: Երբեք չեմ մոռանա նրանց բարբարոս ժպիտները... Վրաս նայում էին արհամարհական ձևով՝ կոթնած հրացաններին... Գտնվում էի մի ցեղի միջավայրում, որը լրիվ բարբարոս էր... Նրանց ոչ այնքան հուզում էր իմ «ռուսական լրտես», որքան «անհավատ» լինելը, ինչը բավարար պատճառ էր արդարացնելու առանց դատի ու դատաստանի սպանելը:

Տեղի աղան մտադրվել էր մեզ հետ գնացող քարավանը կողոպտել և լուր էր ուղարկել հարևան ցեղապետին այդ գործում իրեն օգնելու: Ազատ արձակելու համար խոշոր կաշառք առաջարկեցինք: Աղան մերժեց: «Ինչո՞ւ չորս կամ հինգ քսակ առնեմ, երբ կարող եմ ամբողջին տիրանալ»:

Սկսվեց հրաձգություն, քրդերն իրար վրա էին կրակում և կողոպտիչներն իրենք էին կողոպտվում: Քարավանը չրջապատեց «զինված մարդկանց մի մեծ խումբ: Այնպիսի իրարանցում էր, որ անհնար է նկարագրել», ինձ էլ բռնեցին ու հրացանի կոթով այնպես էին հրում, որ քիչ էր մնում ձիուց ընկնեի: «Նախ գողացան ատրճանակներս, ապա մեզ տարան բերդ: Հարվածներով ու սպառնալիքով հարկադրեցին ձիուց իջնել, իսկ ուղեկցիս արդեն հասցրել էին թալանել: Գրպաններս լրիվ դատարկվեցին, խլեցին վերարկուս: Կողոպտեցին ոչ միայն քարավանը, այլև բոլոր ճամփորդներին: Քարավանը բերդի պարսպի տակ էր քշված. ջորեպանները ցաք ու ցրիվ էին արված, ամեն ինչ քրդերի ավազակությանն էր ենթարկվել ...: Մի ծանոթ մոլլա մեզ խորհուրդ տվեց ճանապարհը շարունակել, քանի որ քրդերի խումբը մեզ էր սպասում, իսկ ավազակներից մեկը չպրտեց երեսիս՝ «Ամեն ինչ տուր, այլապես չան նման սպանելու եմ», որովհետև անհավատ էի: Մոլլայի միջամտությունը փրկեց ինձ»:

Նույն ժամանակ Օսման աղան, ձին նստած, բերդից դուրս եկավ մեծաթիվ պահակազորով, ցույց տալով, թե քարավանի կողոպուտի հետ առնչություն չունի, թե այդ արել են ավազակախմբերը, որոնց վրա ինքն ազդեցություն չունի:

Հուլիսի 18-ի առավոտյան աղմուկ բարձրացավ. «Քրդե՛ր, քրդե՛ր»: «Մեր հետ եղած քրդերը, սարսափած, այս ու այն կողմ ծլկեցին: Ներսի քրդերը վա-

---

[1] «Տարոնի արծիւ», 1950 թ., № 30, էջ 44-47:

խենում էին դրսի քրդերից: Պարսպի ներսի հյուղակների տանիքներն անմիջապես ծածկվեցին հրացանակիրներով...»: Քրդերը լքում էին Մանազկերտի բերդը, իսկ հայերը ներս էին խուժում քրդերի վախից: Մարդիկ անասունների հետ «խռնված էին բերդի փոքրիկ մուտքի առաջ... Տղամարդ, կին, երեխա, գոմեշ, էշ, բոլորն իրար խառնված, խուժող ու ծեծկռտվող, վիճող ու ճգնող... Մի հայ կին տեսնելով, որ ներս մտնել չի կարող, իր փոքրիկին ուրիշի ուսերին դրեց, որպեսզի գոնե նրան փրկի... Երեկոյան բերդը լեփլեցուն էր հայերով: «Բակի, պատերի, տանիքների, ավերված աշտարակների ամբողջությունը գրավված էր նրանցով: Մարդ և անասուն իրար էին խառնված...»:

Քրդերն այնքան վայրագ էին, որ «մի հայ ընտանիքի վրա հարձակվեցին, մեկին հրացանազարկ արեցին, մեկ ուրիշի ականջները կտրեցին»: Բերդում կար 3000 հայ ընտանիք, որոնք «իրենց փոքր, գետնափոր խրճիթներում մեծ թշվառության մեջ էին»: Մանազկերտը «երեք հարյուր գյուղերի մայրաքաղաք է, որոնք քրդերի կռիվներից ու կեղեքումներից շատ նվազել էին: Ես գտա բաղնիքներ, գնդաններ, պահեստներ և այլն: Ավերակներից շատերն իսկապես պատկառելի էին, ինչը վկայությունն էր առաջնակարգ ճարտարապետական ճաշակի: Ես դրանք վերագրեցի հայերի ժամանակաշրջանին, այսինքն՝ մինչև թուրքմենների կողմից այս երկրի նվաճելը»[1]:

Սա մի պատառիկ է հայ-քրդական հարաբերությունների, այդ երկու ժողովուրդների զարգացման մակարդակների, աշխարհընկալումների, բարոյականի ու անբարոյականի վերաբերյալ պատկերացումներում նրանց միջև եղած վտանգավոր տարբերությունների և իրարամերժությունների:

«Մուշը,- գրում է անգլիացի հիւպատոս մը որ հոն պաշտօն վարած է, Թուրքիոյ ամենէն յոռի վարչութիւնն ունեցող քաղաքն է. հասկնալի է, թէ որքան ահռելի պէտք է ըլլայ բայաներու կացութիւնը ամենէն յոռի վարչութիւնն ունեցող քաղաքին մէջ պետութեան մը, ուր ամենուրեք անճոռնի է վարչութիւնը... Հայերը ձգուած են թիւրքերու եւ քիւրտերու քմահաճոյքին, որ զանոնք իբր իրենց ճորտերը կը նկատէին, կը կեղեքէին, կը շահագործէին, կը վիրաւորէին իրենց կրօնական զգացմանց մէջ՝ փողոցներէն պտտեցնելով չուներ, սկիհ մը վզներուն կախուած, առանց երբեք պատժուելու պաշտօնեաներէն, որոնք, ընդհակառակն՝ անոնց հարստահարութեանց կ'օժանդակէին տուրքերը հաւաքելու իրենց կամայական ու ելուզակային եղանակով»[2]:

Կ. Պոլիսը խրախուսում էր, որ «քիւրտերն ու պաշտօնատարները քամէին, տկարացնէին, ջախջախէին ժողովուրդը Հայաստանի մէջ: Խորապէս խաղաղասէր, աշխատասէր ու պետութեան օգտակար տարր մը՝ այդպիսով յուսահատութեան մղելով, ըմբոստացման տարրի կը փոխարկուէր»[3]:

«Ռուս-Թուրք պատերազմը պայթեցաւ... Պատերազմը իր գերագոյն սաստկութեանը հասցուց մահմետականներու կատաղութիւնը Հայաստանի քրիստոնեաներուն դէմ. թուրքական իշխանութեանց հրամանով... Հայ քաղաք-

---

[1] *«Տարօնի արծիւ», 1950 թ., բացառիկ, № 50, էջ 95-113:*

[2] ***Ջօպանեան Ա.,*** *Երկեր, Ե., 1988, էջ 443:*

[3] *Նույն տեղում:*

ներու եւ գիւղերու վրայ թափեցան, հազարաւոր անզէն մարդիկ կոտորեցին, կիներ բռնաբարեցին ու կոչկճեցին, ամբողջ գիւղեր այրեցին բովանդակ Վասպուրականի նահանգին, Բասենի ու Բագրեւանդայ գաւառներուն եւ Մշոյ դաշտին մէջ»[1]:

Խրիմյան Հայրիկը գրում է. «Մորեխի ու թրթուրի նման թափեցան, հայոց գիւղեր և դաշտեր ծածկեցին, մի խուռն ժամանակի մէջ ամեն կանաչութիւն կերան ու չորցուցին, այն չէնաչէն գիւղեր եւ աւաններ անապատ դարձուցին:

Եւ ո՞րք էին քիւրտերու անկարգ հրոսակներու վարիչ եւ առաջնորդ. նոցա մոլեկրօն դեմպետներն էին, որոնց ոգիներն ի բռէ անտի ոխութեամբ լցուած կը զայրանային հայոց ժողովրդին դէմ...»[2]:

Հայ-քրդական առճակատման ավանդական բնույթը շատ պարզորոշ է արտահայտված Գևորգի և քուրդ ցեղապետ Ղասրմի հարաբերությունների մեջ: Վերջինս Տարոնի փաստացի տերն էր, արյունարբու հայատյաց: Հայդուկներից շատերն առաջարկում էին նրան ոչնչացնել: Գևորգը հակառակ կարծիքին էր՝ ոչ թե ոչնչացնել, այլ հարկադրել փոխելու վերաբերմունքը հայերի հանդեպ:

Նա ծպտվում է հազարապետի հագուստի մեջ և Գալեի հետ միասին գնում Ղասրմի քեռչքը, որտեղ մեծ ընդունելություն էր: Գևորգը Ղասրմի հետ առանձնանում է իբր Բիթլիսից բերված ինչ-որ գաղտնի հրաման հայտնելու համար:

Նրա ու Ղասրմի միջև տեղի է ունենում հետևյալ երկխոսությունը:

Եթե հինգ տարեկան աղջիկդ մի բռնապետի կողմից պղծվի,- հարցնում է Գևորգը,- եթե կինդ առևանգվի, եթե ոչխարիդ հոտերը բռնագրավվի, եթե նորածինդ դաշունահարվի, եթե քո աղոթած սրբավայրն աղբանոցի վերածվի, նման դեպքում կարո՞ղ ես վրեժդ զսպել, հոգուդ փոթորիկը սանձել...

- Անշուշտ ոչ,- պատասխանում է Ղասրմը:

- Ուրեմն ինչո՞ւ մեղադրել հայ հեղափոխականներին, որոնք լքել են քուն, հանգիստ, տուն ու տեղ և դիմել են փոխվրեժի:

- Հայը ծնվել է մեզ ծառայելու, մեր հաճույքները բավարարելու և կարիքները հոգալու,- պատասխանեց քուրդը:

- Աստված բոլորին ստեղծել է ազատ և պատվավոր կյանքի համար: Ես իրավունք չունեմ յուրացնելու ձեր կինը, ապրելու ձեր ճակատի քրտնքի վաստակով:

- Իրավունքը ուժեղինն է, անգղը ապրում է աղավնիով, կատուն՝ մկով:

- Այդ դեպքում ես քեզնից ուժեղ եմ և խանչալիս ծարավը քո արյունով եմ հագեցնելու,- ասաց Գևորգն ու սուրը դուրս քաշեց:

- Ա՜յ, ա՜յ, դու ո՞վ ես, խնայի՛ր կյանքս,- ծնրադիր աղաչեց բեյը:

- Գևորգ Զաուշն եմ: Եկել եմ քեզ հասկացնելու, որ հայը աղավնի կամ մուկ չէ, այլ՝ վրեժխնդիր առյուծ:

Ղասրմը խոստացավ աջակցել հայերին:

- Դու կնոջդ քողը գլխիդ դրած պետք է ասես. «Կին դառնամ, եթե դրժեմ ուխտս»:

---

[1] ***Զօպանեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 447:*

[2] *Նույն տեղում, էջ 447-448:*

Բեկն այդպես էլ արեց[1]:

Բիթլիսի նահանգի, մասնավորապես տարոնահայության կոտորածների կազմակերպման գործում Աբդուլ Համիդի հետևորդները նորից գործածեցին Տարոնի 1890-ական թվականների ջարդերի գլխավոր դերակատարներից մեկին՝ տխրահռչակ ավազակապետ Մուսա բեկին: Երբ 1918-ին նրան աքսորեցին Մեսքենե և հարցրեցին, թե ինչո՞ւ է բանտ ընկել, պատասխանեց. «Ես 70.000 հայ եմ սպանել: Հիմա ինձ բանտարկել են, որովհետև հալածել եմ մի ժանդարմի»:

Այդ այն Մուսան էր, որ ամբողջությամբ կողոպտեց Ավզուտ գյուղը, գյուղապետի ընտանիքին լցրեց մարագն ու այրեց, հարձակվեց Մուշեղաշենի գյուղապետի տան վրա և, սկսած օրորոցի երեխայից մինչև ընտանիքի ամենատարեց անդամը, մորթեց, հարսներին ու աղջիկներին առևանգեց, զավթեց ամբողջ ունեցվածքը: 1915 թ. մարտ-ապրիլ ամիսներին Մուսայի ոհմակները, դասալքելով ռազմաճակատից, ոչնչացրեցին Ներքին Բուլանըխի Քոսուրի լեռների գյուղերի հայ բնակչությանը:

Մուսան Տարոնի ու Սալնո ձորի ամենահզոր ու ամենավայրագ ավազակն էր, թիվ 1 չեթեն: Նրա կողքին ու նրա բարքերի տեր չեթեների թիվը շատ մեծ էր: Նրանք տարոնահայության գլխին չարիք էին: Սակայն, երբ չէին ունենում իշխանությունների ուղղակի կամ բարոյական աջակցությունը, միշտ չէ, որ հայերի հետ բախումներում հաջողության էին հասնում: Օրինակ, նրանք հարձակվեցին Վարդենիսի վրա, սակայն հակահարված ստացան: Իշխանությունները զայրացան, որ հայերը պաշտպանվել են: «Անզորրությունը» վերականգնելու անվան տակ Ալո օնբաշին, անցած ոստիկանների գլուխը, մտնում է Վարդենիս ու սկսում բռնարարքները: Հօգուտ չեթեների ցուցմունք ստանալու համար կանանց վարտիքների մեջ կատու էին գցում, տասնհինգ տարեկանից բարձր բոլոր տղամարդկանց չղթայակապ տարան Մշո բանտ:

Քրդերն ավելի սանձարձակ դարձան, երբ զգացին երիտթուրքական իշխանությունների արտաքուստ անտարբեր, բայց ըստ էության քաջալերիչ կեցվածքը: 1913-ին Տարոնի Դերեկ գյուղ է գնում Ֆարամազ Ալի անունով քուրդը 50 հեծյալների հետ և պահանջում, որպեսզի բոլոր հայերը գնան օլամի, այսինքն՝ անվճար խոտ հավաքելու: Հայերը հրաժարվեցին, քուրդը սպառնալիքներ տեղաց, բայց նաև բռնությունների չդիմեց, վախենալով ոչ թե իշխանություններից, այլ՝ հայդուկներից:

Թուրք պատմաբան Ս. Սամին հերքում է թուրքական այն թեզը, թե կոտորածների քաղաքականությունը գործողության մեջ դրվեց 1915 թ.: Նա գրում է. «Բ. Շաքիրը կոտորածներ կազմակերպելու համար էրզրում և Մուշ մեկնեց 1914 թ. դեկտեմբերի սկզբներին»: Թվում է, թե թուրք պատմաբանը վախենում է արմատական երևալուց և չի ասում ամբողջ ճշմարտությունը: Բ. Շաքիրը էրզրում և Մուշ գնաց ոչ թե դեկտեմբերին, այլ հունիսին: Առաջին աշխարհամարտը դեռ չէր սկսվել, երբ նա արդեն Մուշում էր: «Սարիղամիշի ճակատա-

[1] «Տարոնի արծիւ», 1952 թ., № 32, էջ 89-94:

մարտի օրը համիդիե զորքերն արդեն չրջապատել էին Ալաշկերտի բնակավայրերը,- խոստովանում է Սամին,- և սկսել հայ ազգաբնակչության կոտորածը: Երբ հունվարի կեսերին ռուսները եկան, մահմեդականները, վախենալով քրիստոնյաների դեմ իրենց կատարած չարագործությունների համար պատժվելուց, ընտանիքներով լքեցին իրենց գյուղերը և կառավարության օգնությամբ հաստատվեցին Մանազկերտի և Բուլանըխի գյուղերում»[1]:

Այսինքն՝ նա հերքում է նաև թուրքական այն պնդումը, թե ռուսների գալուց հետո սահմանամերձ չրջանների, այդ թվում Ալաշկերտի մահմեդական բնակչությունը բնաջնջվել էր հայերի կողմից:

Իթթիհադի հակահայկական քաղաքականությունը հայ–քրդական առճակատումը հասցրեց ծայրահեղության: Իշխանության մարմիններն ու քրդերը ընդհանուր ճակատ էին կազմել հայերի դեմ այս անգամ արդեն նրանց ոչ թե հյուծելու, քայքայելու, թուլացնելու, այլ անհետացնելու համար: Տարոնի առաջնորդարանի քարտուղար Տ. Հարությունյանը 1914 թ. ապրիլին գրում է կաթողիկոսին. «...Հայերը գարունէն մինչեւ աշուն կ'աշխատին միայն կչտացնելու համար գազանաբարոյ մարդասպաններ, որ միշտ կը սպառնան զանոնք բնաջինջ ընել»[2]: Աբդուլ Համիդի վարչակարգի չրջանում ձևավորված միջոցները՝ ուղղված հայերին անիրավազուրկ ու թշվառ վիճակի հետագա խորացմանը, երիտթուրքական կառավարման մինչպատերազմյան վեց տարիներին այնքան կատարելագործվեցին ու ամոլացնող դարձան, որ եթե «նախկինում գոնե իշխանություն կար»[3], ապա նշված տարիներին հայ ազգաբնակչությունը հոչոտվում էր բացարձակ անիշխանության պայմաններում քրդերի վայրագությունների: Քրդերը ոչ միայն ընձեռնված պայմանների, այլև իշխանությունների ուղղակի հրահրումների հետևանքով իրենց զգում էին հայերի թե՛ ունեցվածքի և թե՛ կյանքի լիակատար տերեր: «Биржевые ведомости» թերթի թղթակից Ա. Բերեզովսկու վկայությամբ՝ երկու թուրք առաջատար գործիչներ քրդերի չրջանում հակառուսական և հակահայկական քարոզչություն էին տանում[4]: Իշխանությունները ոչ միայն համիդիե գնդերին, ոչ միայն չեթենական խմբերին, այլև ողջ թուրք ժողովրդին զինում էին հայերի դեմ: Երբ քրդերը Բիթլիսի վալուց զենք պահանջեցին, հայերը դիմեցին Ռուսաստանի հյուպատոսի միջամտությանը: Վալին հյուպատոսին խոստացավ քրդերին զենք չտալ, բայց տվեց, հայտարարելով, թե այդ զենքը քրդերը բռնագրավել են փոստին ուղեկցող 115 թուրք զինվորներից[5]: Իսկ թե ինչպե՞ս էին քրդերը զինվորներից ու ոստիկաններից զենք խլում, խոստովանել է նաև Վանի վալին՝ «ավազակներին պատժելու համար ուղարկվող զինվորներն ստանում են բանավոր հրահանգ՝ «մահմեդականների վրա չկրակել»[6]:

---

[1] ՀՍՍՀ ԳԱ ինֆորմացիոն բյուլետեն, 1983, № 3, էջ 18:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 66, թ. 12:
[3] ЦГВИА РФ, ф. 2000, оп. 1, д. 7716, л. 433.
[4] «Մշակ», 29 մայիսի, 1913 թ.:
[5] "Русское слово", 20 декабря 1913 г.
[6] АВПР, "Посольство в Константинополе", оп. 517; д. 1603, л. 143.

Դիարբեքիրի, Բիթլիսի և Վանի նահանգներում հայերի ոչնչացման գործում քրդերը վճռական դեր խաղացին: Մասնավորապես Սալոն ձորի բնակավայրերում և Բիթլիս քաղաքում տեղի ունեցած իրադարձություններն անհնար է քննել չրջանցելով քրդերին ու քրդական չարժումը: Հանգամանքների բերմամբ՝ Բիթլիսը քրդական առաջատար կենտրոններից մեկն էր դարձել: Եղեռնի տարիներին քրդերն առանձնապես ուժեղ էին Բիթլիսի վիլայեթում:

Այստեղ ազդեցիկ լուրջ ուժ էր մոլլա Սելիմը, որը քրդության առաջնորդ չեյխ Սաիդ Ալու հանձնարարությամբ բանակցություններ էր վարում հայ գործիչների հետ՝ քուրդ-հայկական համատեղ ուժերով Արևմտյան Հայաստանն անկախ հռչակելու վերաբերյալ[1]:

1914 թ. Թուրքական կառավարությունը ծանրացրեց հարկերը և խստացրեց դրանց գանձումը: Քրդերին հատկապես մեծ վնաս էր հասցնում անասնահարկը (աղնամ): Բիթլիսի վիլայեթում 3.000.000 ոչխար կար, որի ճնչող մեծամասնությունը պատկանում էր քրդերին և աղնամը հատկապես հարվածում էր նրանց:

1914 թ. գարնանը հարկերի առնչությամբ խմորված զայրույթը պոռթկաց: Սելիմն սկսեց ապստամբություն նախապատրաստել և հայերին հրավիրեց համագործակցության[2]:

Բիթլիսի վալու ուղարկած ուժերը դեռ ապստամբներին չհանդիպած՝ փախուստի դիմեցին: Հաջողության չհասան նաև կանոնավոր բանակի զորամասերը: Ապստամբները գրավեցին Բիթլիսը[3]: Վալին ու մյուս պաշտոնատարները փախուստի դիմեցին:

Իթթիհադը քրդական չարժումը վարկաբեկելու և հայ-քրդական համագործակցություն թույլ չտալու համար, Բիթլիսի ապստամբությունը հռչակեց պայքար սահմանադրության և հայկական բարենորոգումների դեմ: «Մշակը» նույնպես այն կարծիքին էր, որ այդ ապստամբությունն ուղղված էր հայկական բարենորոգումների դեմ[4]:

Սակայն այս խնդրում հայկական չրջաններում միասնական կարծիք գոյություն չուներ: «Բիւզանդիոնը» 1914 թ. իր № 5-ում գրեց, որ քրդական չարժումները ներկայացնելը որպես հայերի դեմ ուղղված քայլեր, ճիչտ չէ: Ընդհակառակն, «քիւրտ ապստամբները հայերու հանդէպ չատ բարեացկամօրէն վերաբերուեցան... Շարժման արտաքին նպատակն էր չերիաթ պահանջել..., որովհետև քիւրտ տգէտ ժողովուրդը անկարող է ըմբռնել կառավարութեան դէմ չարժման այլ նպատակ»:

Վանու և Բիթլիսու Ռուսաստանի փոխհյուպատոսներ Օլֆերովն ու Շիրկովը տեղեկագրում էին, թե քուրդ ապստամբները կապի մեջ էին տեղի հայերի հետ[5]:

---

[1] **Սասունի Կ.,** Քիւրտ ազգային չարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները (ԺԵ. դարէն մինչեւ մեր օրերը), Պէյրութ, 1969, էջ 211-212:

[2] «Մշակ», 1914 թ., № 64:

[3] АВПР, "Посольство в Константинополе", д. 3573, л. 340.

[4] «Մշակ», 1914 թ., № 64:

[5] ЦГВИА РФ, ф. 2000, оп. 1, д. 991, л. 525.

Քրդական ապստամբության դեմ կռվող թուրքական բանակի հրամանատար Իսհանը սադրանքի դիմեց: Նա Տարոնի հայ ղեկավարներին կրկին առաջարկեց կառավարության տված զենքերով կամավորական վաշտեր կազմել ու կռվել ապստամբների դեմ[1]:

Հայերի հիմնական մասը տարանջատվեց այդ գործընթացից: Իսհան փաշան կարողացավ ընդամենը 150 մաուզեր բաժանել[2]: Հայերը քրդերին հավաստիացրին, որ նրանց դեմ որևէ քայլ իրենք չեն ձեռնարկի:

Քրդերը երկար դիմադրել չկարողացան: 1914-ի գարնանը թուրքական իշխանությունները սանձարձակ բռնություններ ծավալեցին: Ապստամբությանը մասնակցած քրդերի գյուղերը հիմնահատակ կործանվեցին:

Հայերի չեզոք կեցվածքը հաղիվ թե ամբողջական արդարացում ունենա: Դա թելադրված էր ոչ այնքան հայերի համար քրդական շարժմանը մասնակցելու վտանգավորությամբ, որքան երիտթուրքերի հետ սիրախաղի շահերով: Հայերը ոչ միայն չփորձեցին օգտագործել հարմար պահը հայ-քրդական դաշինք ձևավորելու համար, այլև իրենց երկդիմի կեցվածքով քրդերի շրջանում խորացրեցին անվստահությունն ու թշնամությունը հայերի հանդեպ: Բնորոշ մի երևույթ՝ քրդերը անհաջողության մատնվելուց հետո չհապաղեցին հավաստելու իրենց հավատարմությունը Օսմանյան կայսրությանը:

Կ. Պոլիսն անմիջապես «մոռացավ» քրդական ապստամբությունը և իր հիացմունքն արտահայտեց «ասպետական ոգի ունեցող ..., խալիֆին անսահման նվիրված» քրդերի հանդեպ[3]: Նույնիսկ ձայներ հնչեցին, թե Բիթլիսի ապստամբություն ասածը երբևիցե չի եղել, որովհետև քրդերը, որ «ի բնէ ուշիմ եւ սկզբունքով հայրենասէր են, հայրենիքին վնաս չեն հասցնի եւ այդ տեսակ անպատշաճ արարքներին համամիտ լինելու մակարդակից շատ բարձր են»: «Թասֆիրի էֆքյարը» քրդերի մասին գրեց. «Կրօնքի եւ հայրենիքի կապերն իրենց կեանքին գլխաւոր կապերը կը նկատեն եւ այդ արժեքաւոր ու քաջարի հայրենակիցները շատ հեռու են հայրենիքը վտանգի ենթարկելու եւ իսլամութեանը վնաս պատճառելու ընթացքներէ»[4]:

Մինչ Կ. Պոլսում փառաբանում էին քրդերին, վերջինները նոր ապստամբության ելան: 1914 թ. գարնանը ծագեց բարզանցի քրդերի ապստամբությունը: Դա ևս նույն բախտին արժանացավ և նույն հետևանքներն ունեցավ:

* * *

ԽՆՈՒՍ. – 1914 թ. ամռանը արևը խավարեց, ինչը ողբերգության նշան համարվեց: Նույն տարի ռազմաճակատ մեկնելու համար Խնուս բերված 10.000 արաբ զինվորներ մեռան ցրտից ու քաղցից:

Հայերի համար վրա էին հասել ահարեկիչ օրերը: Գարնանից տարածվեցին

---

[1] «Բիւզանդիոն», 1914 թ. № 5, էջ 318:
[2] Նույն տեղում, էջ 308:
[3] «Մշակ», 1914 թ., № 75:
[4] «Բիւզանդիոն», 1914 թ. № 5, էջ 308:

չարագույժ լուրեր, ինչը զգաստացրեց հայ բնակչությանը և նրանք անակնկալի չմատնվեցին, երբ քրդերը հարձակվեցին հայկական գյուղերի վրա:

Սկզբում որոշված էր Խնուսում նույնպես հայերին ջարդել տեղում, սակայն թուրքերը այդ մտքից հրաժարվեցին զուտ առողջապահական նկատառումով՝ լուրջ դժվարություն էր դիակները բնակավայրերից հանելը:

Ռուսական բանակը հանկարծակի նահանջեց, որի հետ միասին սկսվեցին ջարդեր գավառակի գյուղերում: Փրկվածները երեխաների հետ քաղաք լցվեցին: Թուրք երեխաները փողոցներում գոչում էին. «Կառավարության հրամանն է՝ բոլոր հայերը պետք է աքսորվեն»: Հունիսի վերջին հայերին տեղահանեցին ու տարան Մուշ քաղաքի ուղղությամբ: Վարդոյի Զրոու կիրճում նրանց սպասում էր զինված խուժանը:

Խնուսի հայության բռնագաղթը չուտ սկսվեց, որովհետև մոտ էր ռազմաճակատին: Մեկ ամսում բնաջնջվեց 25.000 խնուսցի: Տարագրության և ջարդի ղեկավարներն էին գայմագամ Թահրին, Ալի աղան, Հ. Իսաֆը, Նուրէդդինը, Մուհիէդդինը և ուրիշներ:

Ջարդն իրականացրին համիդիեն, չեթեներն ու քուրդ խուժանը: Ժանդարմերիայի չավուշ Օսմանը ջարդարարներից ամենավայրագն էր:

Խնուսում իրականացվեց նաև քրդերի զորակոչ համիդիե գնդերում ծառայելու համար: Այդ գնդերը կենտրոնացված էին Խնուս բերդում, Կարաչոբանում, Գովանդուկում, Հարամիկում և Զեվիրմեում: Մինչև այդ գնդերի մեկնելը ռազմաճակատ՝ նրանց սնունդն ապահովում էին Խնուսի հայկական գյուղերը:

Թեքելիֆի հարբիե պետական պարտադիր փոխառության անվան տակ հայերից խլում էին ամեն ինչ: Այստեղ նույնպես ստեղծվեցին բեռնակիր գնդեր՝ «Օլամջի թաբուր», որոնց բռնությամբ ներգրավում էին նաև հայ կանանց: Խնուսի առաջնորդ Կ. Յոթնեղբայրյանը 1914 թ. հոկտեմբերի 10-ին գրում է պատրիարքին. «Կրակի գծին մերձաւոր հայ ազգաբնակչութիւնը պէտք ունի գերմարդկային համբերութեան... Տնտեսական քայքայուած վիճակի մասին աւելորդ կը համարեմ գրել... Կ'ապրինք ահեղ տագնապալի օրեր եւ չուարած ենք...»[1]: Օրըստօրե վատթարացող վիճակից անհանգստացած գյուղերի ներկայացուցիչները հանրագրով դիմեցին իշխանություններին: Վերջինները օգտագործեցին այդ առիթը և ձերբակալեցին ոչ միայն նրանց, այլև Բերդի երևելի անձանց՝ 650 հոգի: Նրանց չղթայակապ տարան իբր Կարինում դատելու համար, սակայն ճանապարհին սպանեցին:

1915 թ. մայիսի 1-ին Գովանդուկ է գալիս մի համիդիե գունդ և հայերին հանկարծակիի բերելով սկսում է ջարդը: Համիդիեականներին միանում է նաև թուրք խուժանը: Հայերը հակահարձակման են անցնում և քրդերին փախուստի մատնում:

Նույն օրը համիդիե մի ուրիշ գունդ հարձակվում է Սալվորի գյուղի վրա: Տեղի մարտական ջոկատը կռվի մեջ է մտնում և հնարավորություն տալիս բնակչությանը հեռանալու գյուղից: Սալվորին կողոպտվեց, գյուղացիներից շատերն սպանվեցին:

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 799:*

Հաջորդ օրը Համիդիեի հարձակմանն է ենթարկվում Խրամխայա գյուղը: Նույն բանն է կատարվում, ինչ տեղի ունեցավ Սալվորիում: Ապա Համիդիե ու քուրդ խուժանը հարձակվեցին Կարաչորան գյուղի վրա: Հայերը ոչ միայն դիմադրություն ցույց տվեցին, այլև տարան առաջին հաղթանակը: Թշնամին 59 դիակ թողած՝ փախավ: Մյուդիրն ու Օսման չավուշը սպանեցին մի քանի անզեն հայի: Նրանք նոր հարձակում են սկսում: Հայերի մարտական ջոկատը հերոսաբար դիմադրում է և ժողովրդին հնարավորություն տալիս հեռանալ գյուղից:

Այդ ընթացքում Խալիլի Համիդիեականներն զբաղված էին մարդաորսով, հիմնականում սպանվում էին անզեն մարդիկ, խաղաղ բնակչությունը: Մայիսի 3-ին Խալիլը հարձակվում է Կոբալի գյուղի վրա, որտեղ նույնպես լուրջ հակահարվածի է հանդիպում: Հաջորդ օրը հասնանցիների աշիրեթը Ի. Ուսուֆի հրամանատարությամբ հարձակվում է Կարաքյոպառի վրա: Գյուղացիները փախչում են ով որտեղ կարողանում է: Նույն օրը ջարդվեցին ու կողոպտվեցին Դուման, Մարուֆ և Շաբադին գյուղերը: Մայիսի 5-ին հասնանցի քրդերը շրջապատում են Յաղջամելիք գյուղն ու գաղանաբար ջարդում բնակիչներին: Կոտորվեցին նաև Բարնազ, Խրոտ, Ենիքեոյ, Եզրդլու գյուղերը: Մայիսի 6-ին հարձակման է ենթարկվում Խոզլուն: Տեղի մարտական ջոկատը կռվի մեջ է մտնում և ապահովում բնակչության հեռանալը: Նույն օրը քրդերը հարձակվեցին Քաղկիկ գյուղի վրա, որի բոլոր բնակիչները սպանվում են իրենց «բարեկամ» քրդերի ձեռքով: Մայիսի 6-ին ջարդվեց նաև Ելփիսը: Արյունահեղ կռիվ տեղի ունեցավ գյուղի ջրաղացում: Մայիսի 7-ին ջարդվեց Խալչավուշը: Հերոսաբար կռվեց Հարամիկ գյուղը:

Ս. Սարուխանյանը վկայում է. «Երբ ռուսերը Տարօն հասան, Ալաշկերտի աշիրէթներն ու իրենց հրամանատար Քոռ Հուսէին փաշան փախան, եկան Խնուս ու Վարդօ, միացան տեղի աշիրէթներու հետ եւ սկսան կոտորել հայերուն, յափշտակել անոնց ունեցուածքը, հալածել կենդանի մնացածներուն»:

Գարուն էր, երբ նրանք լցվեցին 350 տուն ունեցող Գյունդեմիր հայկական գյուղը: Նախ քչեցին ոչխարները, ապա փորձեցին գյուղ մտնել: Հայերը դիմադրեցին: Մինչև երեկո քրդերը չկարողացան նրանց դիմադրությունը հաղթահարել: Երկու կողմերն էլ զոհեր ունեցան: Քրդերին օգնության եկան մուհաջիրները և լցվեցին Գյունդեմիր: Հայերը ցրվեցին քրդական գյուղերը: Գյուղի անտառում քրդերը գաղանաբար սպանեցին Խնուսի հոգևորականներին: Քոռ Հուսեյինի ավազակները գյուղում հավաքեցին մոտ 500 տղամարդ և դեռահաս ու տարան Խնուսի անտառը և հրացանային համազարկի տակ առան: Դա հունիսի 18-ին էր[1]: Ժողովրդի ոչնչացումն ուղեկցվում էր պատմական հուշարձանների, վանքերի ու եկեղեցիների պայթեցումներով ու ավերմունքով: Ռուսական կայսերական ակադեմիայի կոնֆերանսի մասնակիցները 1915 թ. հոկտեմբերի 14-ին դիմում հղեցին Կովկասի փոխարքային, որում ասված է, թե «ավերվել են բազմաթիվ հին հուշարձաններ, թալանվել են եկեղեցական գրադարանները, թանկարժեք ձեռագրերը, որոնք հարյուրավոր տարիներ պահպանվում էին վանքերում և եկեղեցիներում...»[2]:

---

[1] «Տարօնի արծիւ», 1948 թ., № 32, էջ 89-94:

[2] Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 13, ց. 3, գ. 1591, թ. 2:

Ռուսական մամուլի լրագրող Լ. Ղիփիանին «Բասկանի կոտորածը» հոդվածում մանրամասը նկարագրում է խնուսահայության ողբերգությունը:

Բասկան փոքրիկ գյուղը Վարդոյի կազայում է՝ Զապան սարի ստորոտում: 1915 թ. մայիսի 20-ին Խնուսի և նրա 27 հայաբնակ գյուղերի ողջ բնակչությանը հրամայվեց թողնել իրենց բնակավայրերը և գնալ Վարդո: Ըստ որում՝ պահանջվում էր վերցնել ամբողջ շարժական ունեցվածքը: Հայերին դժվար կացության մեջ դնող այդ հրամանը բացատրվում էր, թե իշխանությունները իբր մտահոգված են հայերին տեղափոխելու անվտանգ վայր: 1700 ընտանիք շարժվեց դեպի Վարդո: Հասան Կյում-Կյում, որտեղ այդ ժամանակ քուրդ Ահմեդ աղայի ղեկավարությամբ տեղական քրդերից ու կղլբաչներից ստեղծվել էր միլիցիա: Կյում-Կյումի հայերը խնուսցիներին զգուշացրին, որ առաջ գնալը վտանգավոր էր, որովհետև նրանց հայտնի էր դարձել, որ Զապանի բարձունքներին խնուսցիներին սպառնում էր կոտորածը: Վերջիններս, անհանգստացած, հեռագիր ուղարկեցին սուլթանին և պաշտպանություն խնդրեցին: Պատասխան չստացան[1]:

Հունիսի 11-ի ժամը 12-ին նրանք սկսեցին լեռնային կածանով բարձրանալ երկուական հոգով: Քարավանում հիմնականում ծերեր էին, կրծքի երեխաներով երիտասարդ կանայք, աղջիկներ, երեխաներ, կային նաև տղամարդիկ[2]:

Նրանք անցան լեռնային գետի վրայի նեղ կամուրջը: Հենց այդ ժամանակ հատուկ ազդանշանով՝ հրացանից կրակելով բոլոր կողմերից դեպի հայերը վազեցին քրդերը:

«Ինձ հաջողվեց ոչ միայն լինել այդ վայրերում, որտեղ մահը կատարեց իր արյունալի խրախճանքներից մեկը, այլ նաև ոչ մեծ թվով կենդանի մնացածների մեջ փնտրել Բասկանի բնակիչներին, որոնք այդ օրվա բոլոր սարսափների ականատեսներն էին: Նրանք պատմեցին, թե սկզբում հավաքեցին բոլոր արժեքավոր իրերը, հետո հրամայեցին հանվել և ոմանց հենց տեղում սպանեցին, իսկ մյուսներին ճանապարհից հանեցին, տարան խուլ վայրեր և այնտեղ ոչնչացրեցին:

Մենք տեսանք սարսափից իրար փարված և այդպես սպանված երեք կանանց: Մենք տեսանք, ինչպես մի կնոջ մերկ ոտները կապել էին ծառից, ներքևում թողնելով նրա փոքր երեխաներին, որոնք չէին կարողանում հասնել իրենց մորը: Խնուսի եպիսկոպոսին և 2-3 ամենախոշոր վաճառականներին տարան Զապանի ամենավերևի մասերը: Աներևակայելի աղմուկ էր ու ողբ, մարդու մազերը բիզ-բիզ էին կանգնում: Մի խնուսցի դիակների մեջ գտավ 27 կրծքի երեխաներ, որոնք ծծում էին իրենց մեռած մայրերի կուրծքը: Խնուսի ևս երեք գյուղերի բնակիչներ իրենց մահը գտան Զապանի բարձունքներին: Ճիշտ է, աշխատեցին ինչ-որ կերպ թաքցնել կատարված հանցագործության հետքերը՝ ճանապարհներից հանեցին դիակները և դրանք լցրեցին փոսերը... Կոտորածներից քիչ անց այստեղ եկավ գերմանական բարձր աստիճան ունեցող գոր-

---

[1] **Чалхушьян Гр.,** *Красная книга, Ростов-на-Дону, 1919, с. 88, տե՛ս նաև "Кавказское слово", 5-ое октября 1916 г.*

[2] **Чалхушьян Гр.,** *Красная книга, Ростов-на-Дону, 1919, էջ 89:*

ծակալը: Տեսնելով, որ կամուրջից դեպի բարձունքները տանող ճանապարհը ամբողջությամբ ծածկված էր դիակներով, նա, որպեսզի անցորդների աչքից թաքցնի վայրագության հետքերը, հրամայեց դիակները հեռացնել ճանապարհից[1]:

Կամուրջից այն կողմ 200 սաժեն հեռավորության վրա ես տեսա մարդկային երկու գանգ ու ոսկորներ, և որքան ճանապարհը դեպի վեր էր ձգվում, մենք այնքան ավելի հաճախակի էինք հանդիպում չորացած դիակների՝ արդեն այրված խոտերի մեջ:

Ինձ ուղեկցողը արահետից մի կողմ թեքվեց և այնտեղ տեսավ խմբերով, միայնակ, զույգերով՝ քարերով և չչերով ծակծկված, պառկած մարդու կմախքներ...

Եվ այսպես մի թմբից մյուսը անցնելով մենք գնացինք 5-6 վերստ: Նկատելի էր, որ սպանվելուց առաջ կանանց բռնաբարել էին»:

Ղիփիանին այս վայրում եղել է կոտորածից 14 ամիս հետո: «Ձմռանը,- գրում է նա,- սոված շներն ու գայլերը հասցրել էին փախցնել տանել շատ դիակներ կամ նրանց առանձին մասեր: Նույն ժամանակ 300 կանանց խեղդել էին Ամարակ լճում»[2]: Հայ կամավոր Ս. Մելիքյանը ռուսական բանակի հետ լինում է նաև Խնուսում և իր «Հայ կամաւորի յուշերից» (Թիֆլիս, 1917) գրքույկում գրում է. «Խնուսը գիւղաքաղաք է, որի բնակչութեան մեծ մասը, պատերազմից առաջ, հայեր էին... Թուրքերն, իրենց «ազնիվ» սովորության համաձայն, մեր խմբի (ռուսական բանակի) մօտենալուն պէս քաղաքը դատարկելով՝ կրակի էին տուել, բայց հրդեհը սպասուած արագութեամբ չէր ծաւալուել: Այն սակավաթիւ բնակիչները, որոնք ազատուել էին կոտորածից, մի սարսափելի սով էին անցկացրել, եւ ամեն տեղ աչքի էր զարնում քաղցի կերպարանքը, որ կարծես դուրս էր նայում տների միջից:

Երբ պատրաստուեց հայ ցեղի բնաջնջման ծրագիրը եւ գաւառական կառավարիչները համապատասխան հրաման ստացան, կոտորածը սկսուեց մանրակրկիտ նախապատրաստութիւնից յետոյ: Տեղի գայմագամի հրամանով՝ Թուրքերը հազար հայ հաւաքեցին ու նրանց ուղարկեցին Գիւմգիւմի ուղղութեամբ, որը Խնուսի եւ Մշոյ կէս ճանապարհին է՝ «ռազմական անհրաժեշտութեան» պատրուակով: Բայց քարաւանը, որին ուղեկցում էին զօրաջոկատներն ու քրդերը, հեռու չգնաց: Հազիւ քաղաքից դուրս եկած, մի սրտակեղեք բան տեղի ունեցաւ՝ տղամարդկանց անջատեցին կանանցից ու երեխաներից, կողոպտեցին եւ ապա սպաննեցին... Կանայք հեծկլտում էին, լացուկոծ բարձրացնում, ճչում էին: Քիչ անց նրանց ու երեխաներին թափեցին գետը: Բայց երբ երկրորդ խումբը ոտքի հանեցին, կանայք վախենալով նախորդների բախտին ենթարկուելուց, ժանդարմների առաջը նետուեցին, ծնկաչոք թախանձելով աղաչեցին՝ չսպանել իրենց ամուսիններին ու զաւակներին:

Բայց այդտեղ էլ հոսեց արիւնը...»[3]:

---

[1] **Чалхушьян Гр.,** Красная книга, с. 90-91, նաև "Армянский вестник", 1916, № 10.

[2] **Чалхушьян Гр.,** նշվ. աշխ., էջ 92-93:

[3] **Մելիքեան Ս.,** Հայ կամաւորի յուշերից, Թիֆլիս, 1917, էջ 8-9:

«Армянский вестник»-ն իր 1916 թ. № 4-ում գրում է, որ երբ ռուսական զորքերը 1916 թ. սկզբներին մտան Խնուս, փրկվեց չուրջ 1000 հայ, առավելապես կանայք ու երեխաներ, որոնց քրդերը տարել էին որպես կին և ծառա: Նրանց թվում էր 17 տարեկան Մարիամը: Ռուսական բանակի 1915 թ. ձմռան նահանջից հետո քրդերը հարձակվեցին Ալաչկերտի Զեյդեփյան գյուղի վրա և բոլոր հայերին սեփական տներում մորթեցին: Քրդերի չեյխ Մուհամմեդը Մարիամին կնության է վերցնում ու տանում Խնուս: Մուհամմեդի յոթ եղբայրներից հինգը հայ կին ունեին: Երբ Քարա-քեոփրի գյուղի մոտ ռուսները թուրքերին ջախջախեցին, չեյխը զգալով, որ վտանգ է սպառնում, իր ընտանիքով հեռացավ Խնուսից: Մարիամը հիվանդ ձևացավ ու մնաց:

Մուչի ուղղությամբ նահանջող թուրքերն ու քրդերը հավաքեցին ավելի քան 1000 կին և երեխա, նրանց տարան Բիթլիսի ուղղությամբ ու սպանեցին:

Նույն թերթը 1916 թ. իր № 16-ում տպագրեց քրդերի մոտ գտնված ևս մի խնուսցի հայուհու պատմածը: «Խնուսի անկումից հետո մեր զինվորները փրկեցին այն հայերին, որոնք թուրք չեթեներից և քուրդ արյունախումներից փախել էին լեռներն ու կիրճերը... Այնտեղ նրանց կյանքը սարսափելի էր եղել. ութ ամիս շարունակ, սկսած 1915-ի հուլիսից, նրանք ապրել էին բացօդյա, ենթակա չոգին ու ցրտին, անձրևին, ձյունին ու կարկուտին և հետապնդվել թուրք ասկյարների և քրդական ավազակախմբերի կողմից:

Նույնքան էլ տանջվել էին փախցված հայ կանայք, աղջիկներն ու երեխաները թուրք և քուրդ «աղայի» ծածկի տակ: Իգդիրում խնուսցի մի 12 տարեկան աղջիկ ահա թե ինչ է պատմել. «Երբ անցյալ տարի (1915-ին) չեթեները բնակչությանն արտաքսեցին Խնուսի գյուղերից, քշեցին նրանց անասունները, կողոպտեցին ունեցվածքը, տղամարդկանց նույնպես անասունի նման քշեցին: Առավել ճարպիկները, խիզախները փրկվեցին, իսկ մնացածները մորթվեցին կամ գետում խեղդվեցին...»:

Կանանց, աղջիկներին և երեխաներին փակեցին մարագներում... Մորը բաժանեցին աղջկանից, հարսին՝ կեսուրից, քրոջը՝ քրոջից ու տարան տարբեր ուղղություններով: Նրանցից ամեն մեկին տիրացավ մի աղա կամ բեկ... Մեր երեխաները նույնպես այդ գաղանների մոտ էին: Հարկադրեցին իսլամ ընդունել: Նրանց չահագործում էին:

Ինձ փախցրեց չեյխ Շերիֆի որդի Մուսեն: Նա չորս կին և ինը հարճ ուներ: Ես 14-րդն էի: Այդ տանն իմ վիճակը սարսափելի էր, առավոտից երեկո բոլորն ինձ նախատում էին, անվանում գյավուր, անիծում էին...

Ես ոչ միայն ծառայում էի Մուսեի հարեմում, այլև պետք է կթեի ոչխարները: Մուսեի մոտ կային նաև հինգ հայ երեխա, որոնք գառներ էին արածացնում: Բոբիկ, տկլոր այդ երեխաները օրը երկու անգամ հոտը քշում էին լեռան ստորոտը՝ արածացնելու: Այդ երեխաներին նույնիսկ չէին տալիս այն, ինչ նետում էին շներին: Նրանք սկսել էին քրդերեն խոսել:

Երբ ես համարձակվում էի երեխաներին մի կտոր հաց, մածուն, կաթ և այլն տալ, քուրդ կանայք ինձ ծեծում էին:

Խնուսի բերդում կար ոչ պակաս 600-700 իմ վիճակում գտնվող կին և 2000 երեխա, որոնց այստեղ էին քշել հարևան հայկական գյուղերից»:

Հայուհիներն իրար հետ տեսնվել չէին կարող, բացի աղբյուրից ջուր տանելու մի քանի րոպեից, երբ իրար հետ մի քանի բառ էին փոխանակում: «Թե՛ տանը և թե՛ դրսում մեր մնալու նույնիսկ գոյությունը կախված էր մեզ հետևողների քմահաճույքներից: Մեզնից շատերը սպանվեցին:

Մեզ բոլորիս հարկադրեցին իսլամանալ: Թույլատրվում էր խոսել միայն քրդերեն: Ամեն օր մոլլան գալիս էր՝ նամազ սովորեցնելու: Վա՜յ չենթարկվողին: Մենք իրավունք չունեինք առանց լվացվելու ծեսը և նամազ կատարելու մոտենալ ներերի (քրդի կանանց) սեղանին կամ ուտելիքին ձեռք տալ:... Մենք չէինք օգտվում ոչ միայն կնոջ, այլև հարճի իրավունքներից: Պարզապես բավարարում էինք նրանց տոփանքը: Մեզ, անասունի նման, հարկադրում էին աշխատել վաղ առավոտից մինչև ուշ երեկո:

Պարտավոր էինք նաև ավլել բակը, մարագը, գոմը, կերակրել անասուններին, ջուր բերել: Կովերը կթելու գործը քչացել էր: Սակայն տվեցին բուրդ և իլիկ ու մենք գործում էինք գուլպա, շալ, գորգ... Այդ աշխատանքները կատարում էինք գիշերը՝ մարխի աղոտ լույսի տակ... Ներերը մեզ հարկադրում էին հայհոյել մեր սրբություններին: Այդ դահիճները, մտրակը ձեռքներին, մեզ հարկադրում էին դատապարտել բոլոր այն սրբությունները, որոնք դարերի ընթացքում սերտաճել էին մեր հոգիների հետ: Ռուսների կողմից Էրզրումի շրջապատումից և Խնուսն ընկնելուց հետո քրդերը հարավ փախան: Նրանք իրենց հետ տարան հայ երեխաներին ու իրենց ոչխարները...

Մոտ 500 կին և երեխա ազատվեցին, բայց դեռ քրդերի մոտ շատերը կան, որոնց պետք է ազատել»:

Նշենք նաև, որ Խնուսի գյուղերը (Քարաչորան՝ 800 տուն, Գովանդուկ՝ 300 տուն, Սարվորին՝ 50 տուն, Խրմախտեան՝ 150 տուն, Գոբալ՝ 200 տուն, միավորվում և ինքնապաշտպանության են կանգնում: Նրանք հաջող կռիվներ էին մղում: Սակայն բավարար քանակությամբ ռազմամթերք չունեին և հարկադրված փախուստի դիմեցին:

* * *

ՍԱԼՆՈ ՁՈՐ. – Ախլաթի, Դատվանի, Հարզոյի, Բիթլիսի մյուս շրջաններում զորահավաքը կատարվեց նույն խստությամբ, ինչպես նախկին պատերազմների ժամանակ. զորքը, չեթեներն ու աշիրեթները կերակրվում էին հայկական գյուղերի հաշվին և, նախկինի նման, միտումնաբար փչացնում էին հայերի ունեցվածքը, մասնավորապես սննդամթերքը, սովի մատնելու միջոցով նրանց մղում արտագաղթի: Մատնիչների օգնությամբ հավաքվեցին Ախլաթի հայերի մոտ եղած բոլոր զենքերը, բացի հին ֆիդայիների հրացաններից, որովհետև վերջիններն սպառնացին, թե զենք պահանջողին սպանելու էին ու լեռ բարձրանալու:

Ախլաթի մի քանի հայկական գյուղեր ոչնչացվեցին մինչև 1915 թ. գարունը: Վասպուրականի ջարդերի ժամանակ հայ գյուղացիների մի մասը Վան հասնել չի կարողանում և ապաստանում է Ախլաթում: Արամ Մանուկյանը նամակով Բալաբեղ Կարապետին խորհուրդ տվեց լեռ բարձրանալ: Հետևելով այդ խորհրդին, Կարապետը հին հայդուկ Սողոյի հետ հավաքում է 300 երիտասար-

դի ու Նեմրութի փեչին ժողով անցկացնում: Բայց հստակ կողմնորոշվել, թե ինչ անել, չեն կարողանում: Սողոն Շամիրամ գյուղի մարտիկների հետ բարձրանում է Նեմրութ:

Կարապետին ոչնչացնելու նպատակով Թուրքերը գյուղապետի մասնակցությամբ դավադրություն են կազմակերպում: Վերջինս հաջողում է ժողովի մասնակցելու պատրվակով Բալաբեղին ծուղակը գցել: Երբ նա մտնում է ժողովատեղ, վեց ոստիկան անմիջապես նրա թևերը ոլորում են, կապկպում ու տանում Բաղեչի բանտ:

Սողոյին բռնելու համար ապրիլի 10-ին 15 ոստիկան գնում են Շամիրամ ու տեսակցում են նրա հորեղբոր հետ, որպեսզի ծերուկը Սողոյին համոզի գնալու վալու մոտ՝ քննարկելու հայկական գյուղերի անվտանգությանը վերաբերող հարցեր: Սողոն մերժում է: Թուրքերը համոզում են, թե Ա. Վռամյանն ու Բալաբեղ Կարապետը վալու մոտ են և նրան կանչում են: Սողոն իջնում է Շամիրամ գյուղ, 15 ոստիկան նրան սիրալիր ընդունում են, տանում Բաղեչ և նետում նույն բանտը, որտեղ Բալաբեղն էր: Երկուսին էլ գազանաբար հոշոտում են:

Այդ մասին լսելով՝ երիտասարդները բարձրանում են Նեմրութ, որտեղ նրանց միանում են Սոխորդի, Տափավանքի, Ջրհորի, Շամիրամի և Կծակի երիտասարդները իրենց ընտանիքների հետ: Սակայն սառնամանիքի պատճառով կանայք ու երեխաները հարկադրված վերադառնում են գյուղ: Քրդերը նրանց բոլորին ոչնչացնում են:

Երբ Թուրքերը Վանում պարտվելով փախան արևմուտք, նրանց մի մասն անցավ Ախլաթով և վրեժխնդիր եղավ հայ բնակչությունից: Հատուկենտ մարդիկ փրկվեցին:

Նեմրութ ապաստանած երիտասարդների թիվը ապրիլին հասավ 300-ի, որոնց ղեկավարներն էին չամիրամցի Արամը, Մուշեղը, Այվազ Գևորգյանը և Հարություն Դերոյանը: Քրդերը մի քանի հարձակում գործեցին նրանց վրա, բայց մեծ զոհեր տալով՝ փախան: Նույնը կատարվեց Թուրքական զորքերի հետ:

Նեմրութի ինքնապաշտպանական կռիվներն սկսվեցին ապրիլի 2-ին և շարունակվեցին մինչև հուլիսի 2-ը՝ երեք ամիս: Այդ «երկարակեցության» պատճառներից մեկն այն էր, որ նախնական հարձակումների ժամանակ հանդիպելով հայերի ահեղ դիմադրությանը, Թուրքերն ու քրդերը այլևս խուսափում էին Նեմրութ բարձրանալ:

Հայդուկների կյանքը Նեմրութում ծանր էր, մասնավորապես դժվար էր սննդի կազմակերպումը: Սննդի համար անասուններ փախցնելու նպատակով հայդուկները հաճախ էին բախումներ ունենում քրդերի հետ և դա ոչ առանց զոհեր տալու:

Հունիսի վերջին Ախլաթ հասավ ռուսական զորքը և այդ «տարօրինակ մարդիկ» Նեմրութից իջան: Մի քանի օր կազդուրվելուց հետո բոլոր 300 կտրիճներն էլ մտան կամավորական գնդեր:

Սղերդի Բարվարիի գյուղերում նույնպես գործում էին հայդուկային խմբեր: Ոզմի հայդուկները Լաթոյի ղեկավարությամբ ինքնապաշտպանական կռիվներով նահանջեցին Մոկս և Փեսանդաշտ ու մասնակցեցին վերջինիս հերոսա-

մարտին: Իսկ Բարվարիի հայկական գյուղերի (Ալկեֆ, Բեդար, Արջկանց, Դաշ-տրկ, Կոռիչ, Պերոզ և այլն) բնակչությունը գրեթե ամբողջությամբ ոչնչացավ:

Ռուսների կողմից Վանը գրավելուց հետո Ջևդեթն իր տրամադրության տակ ունեցած ռազմական ուժերով շարժվեց Բաղեշի ուղղությամբ: Նա հոխոր-տում էր, թե գնում է լուծելու Վանում հայերի դավաճանության վրեժը: Ոչ միայն նա, այլև երիտթուրք մյուս գործիչներն իրենց ռազմական բոլոր պար-տությունների պատճառը համարում էին հայերի «դավաճանությունը»: Կրած պարտությունները հայերի դավաճանությունով պատճառաբանելը նրանց հա-մար բնավորություն էր դարձել: Այդպես էր Սարիղամիշում կրած պարտության ժամանակ, այդպես էր Ատրպատականում և Ուրմիայի շրջանում ձախողում-ների դեպքերում: Նույնն էր նաև Վանի գրավման պարագայում:

Իրականում գլխավոր պատճառը թուրքական բանակում զինվորի ծանր վիճակն էր, որն այդ բանակին զրկել էր մարտունակությունից: Թուրքական բանակի 44-րդ գնդի 4-րդ վաշտի հիսնապետ Յազդին իր հուշերում, որոնք լույս են տեսել Թիֆլիսում 1919 թ. «Մի թուրք սպայի հիշատակարանից» անունով, գրում է. «Այսօր ճանապարհին տեսանք մի սատկած ձի: Զինվորները բոկոտն լինելու պատճառով խկույն վրա թափվեցին և նրա կաշվից մի-մի կտոր քեր-թեցին՝ տրեխ կարելու համար: Մի սոսկալի տեսարան էր՝ ճանապարհին խումբ-խումբ թաղում ենք հիվանդներին, տեսնում ենք, որ զինվորներից ոմանք... հում միս են կրծոտում... Նրանց հագուստները սոսկալի էին: Նրանցից մսի հոտ էր գալիս, որովհետև ուսապարկերում հում միս էին պահում: Խոլերայի վտանգ կար»:

Նույնն էր վիճակը ռուսների դեմ կռվող բոլոր զորամասերում՝ քաղցը, գո-յության տարրական հնարավորությունների բացակայությունը, համաճարակ-ներն ու այլևայլ հիվանդությունները հնձում էին թուրք զինվորներին, թուրքա-կան զորամասերին վերածում ավազակախմբերի, վրիժառու հրոսակների:

«...Հասնում ենք մի հայկական գյուղի,- շարունակում է թուրք սպան,- և գիշերում դրա մոտակայքում: Ժողովուրդը փախել է. փոքրիկ գյուղ է, որի շրջապատի արտերը հերկված են: Մարդիկ (հայերը) իսկապես որ աշխատասեր են... Երեկոյան հանգստանում ենք Թախրիվաջիրում: Խսխերից սկսած մինչև այստեղ մեր ճանապարհին եղած գյուղերում բնակվել են Բեղրրխանները, որոնք մահմեդական են, բայց կողմնակից են ռուսներին, սպանել են մեր զինվորներին և նրանց զենքերը խլել: Խալիլ բեյը քանդել տվեց նրանց գյուղերը, իսկ հանցավորներին ձերբակալելով, ճանապարհի վրա կախեց: Ինչ գեղեցիկ տեսարան էր, սակայն ափսոս պարանները: Մարդ հրճվում է, երբ տեսնում է, որ ոչնչացնելու արժանիներն անպատիժ չեն մնում... Սղերդում 2000 հայի են կոտորել: Տեղի ժանդարմները անցյալ օրը վերադարձել էին: Ասել է, թե եկել էին մաքրազարդելու: Դիարբեքիրում էլ են կոտորում: Աստված իմ, արժանի արա վայելելու մեր հաղթանակի հրճվանքը»:

Ահա այս տրամադրությամբ էր գործում թուրքական բանակը, նա ոչ այն-քան տենչում էր ռազմական հաղթանակ, որքան ջարդ ու կողոպուտ Յազդին շարունակում է պատմել. «Բիթլիսում եղող հայերին դեռ չեն կոտորել: Հավա-նաբար մեզ հենց դրա համար են բերել: (Բիթլիսում) ժողովուրդը (քրդերը) մեզ դիմավորելու համար խռնվել էր ճանապարհներին: Ժողովրդի տարազն ու շար-

ժումները հիշեցնում են հին դարերը: Կատարյալ վայրենի մարդիկ են: Հայերի տներն ավելի ամուր են: Նրանք ապաստանել են այդ բերդանման տներում և երբեք դուրս չեն գալիս: Գյուղերի հայերին լրիվ կոտորել են, իսկ ով կարողացել էր փախչել, ապաստանել էր քաղաքում: Մեր անցնելու ժամանակ նրանք հետաքրքրությամբ նայում են պատուհաններից՝ հավանաբար մտածում են, թե սրանք եկել են մեր կյանքին վերջ դնելու: Մի հայ երեխայի հարցրի. «Ինչո՞ւ տներից դուրս չեն գալիս»: «Սպանում են»,- պատասխանեց տղան: «Դու սպանվել ուզո՞ւմ ես»,- կրկին հարցրի երեխային: «Դու այդ բանը ուզո՞ւմ ես, որ ես ուզեմ»,- պատասխանեց գուլպա վաճառող փոքրիկ հայը:

Երեկ տեսնվեցի մի ոստիկանի հետ: Նա ասաց. «Քաղաքի հայերի թիվը 10 հազար է: Տները շատ ամուր են, իսկ իրենք մեծից մինչև փոքրը՝ զինված: Սակայն վանեցիների չափ կտրիճ չեն: Մինչև այժմ որևէ բան անել չկարողացանք, քանի որ վախեցանք, որ կրկնվի Վանում կատարված անմտությունը»:

Մի ուրիշ ոստիկան ասաց. «Այս քաղաքի առանցքը պետք է գտնել ու դա պայթեցնելով՝ քաղաքը հօդս ցնդեցնել: Ուրիշ ելք չկա: Առայժմ հավաքում ենք դաշնակցականներին և հայ երևելիներին»:

(Հաջորդ օրը քաղաքից վերադառնալիս մեր զորատեղում) իմացա, որ մեզ մոտ եղած հայ զինվորներին էլ են պահանջել: Վաչտում եղածներին տարան: Միհրանը համբուրեց ձեռքս և ասաց, «էֆենդի՛, իրավունքդ ինձ հալալ արա»: Նրանց հանձնեցին ամրություններ կառուցող գումարտակին: Զափազանց ողբերգական տեսարան էր, խուզարկում էին նրանց գրպաններն ու ծոցերը և ինչ գտնում՝ վերցնում էին: Մի քանի զինվորներ էլ եկել էին մեզ մոտ: Սրանք հայ զինվորներին իբր Բիթլիս պիտի տանեին, բայց Ազրայիլի նման սպասում են: Դեպի մահ էին տանում հայ զինվորներին»:

Բաղեշի հայերի կազմած մի տեղեկագրում, որը ներկայացվեց Անտանտի ներկայացուցիչներին, ասվում է, որ Բիթլիսում զորակոչեցին 21-45 տարեկան բոլոր հայ տղամարդկանց, հաշվի չառնելով ո՛չ առողջական և ո՛չ էլ ընտանեկան վիճակը:

Զորակոչվածներին անմիջապես ուղարկեցին ռազմաճակատ և բոլորը ջարդվեցին: «Ճակատէն գնդակ չստացողը թիւրք զինուորներու կը յանձնուէին, ու բանակէն կէս ժամ հեռացնելով կը ջարդէին»: Այդ մասին Կարինի առաջնորդ Սմբատ եպս. Սաադեթյանի հարցմանը վալի Թահսինը պատասխանել էր. «Այո՛, թերեւս այդպիսի դէպքեր պատահած են... Հրաման տրուեցաւ չկրկնուելու: Այսուհանդերձ չարունակուեցաւ ցվերջ փճացնելով ամբողջ հայ զինուոր երիտասարդութիւնը...

Թիւրք և քիւրդ ժողովուրդեան արիւնարբու ոճրագործներէն կազմուեցան չեթէական խումբեր, որոնց մէջ մտնողները ներման կ'արժանանային հին ու նոր բոլոր դատապարտութիւններէն եւ զինուորական ծառայութիւնէն: Թիւրք ժողովուրդը իրարու կարգ չէր տար այս վայրագ գործին մասնակցելու, որոնք հայերու օճախները պիտի քանդէին»: Բաղեշում գլխավոր ջարդարարներն էին Ն. Նուրէդդինը, Մ. Մուսան, Հ. Յուսուֆը, Ջ. Ալին, Ս. Թուրսունը, Մ. Նասրուլլահը, Հ. Շեմսէդդինը, Հ. Խալիլը, որոնց տրամադրության տակ եղած հազարավոր գործակալներն ու ելուզակները օր ու գիշեր կողոպտում էին հայկական

գյուղերը, սպանություններ և առևանգումներ կատարում: Նրանց ընդդիմացողները ենթարկվում էին ոստիկանների վայրագություններին:

Տատիկ գավառի Կչտոնկ գյուղի Թուրք և քուրդ ջարդարարները 1915 թ. փետրվարին մերձակա հայկական գյուղերի բոլոր արու բնակչությանը լցրեցին Գեխի եկեղեցին և սրով ու կացնով մորթեցին, բնակչությանը կողոպտեցին, մեծ թվով աղջիկների գերեվարեցին:

Նույն վիճակն էր Դատվանի. Ախլաթի և Արճեշի կազաներում: Նրանք ապրիլ ամսին ենթարկվեցին թուրքական նահանջող բանակի խժդժություններին: Բազմաթիվ հայեր կոտորվեցին: Տեղի հայերից չուրջ 300 հոգի փախավ Տարոն, որոնց որոշ ժամանակ անց թուրքերը սպանեցին:

Մանազկերտի և Բուլանըխի հայ բնակչությունը, բացի հարավային գյուղերից, զերծ մնաց ջարդերից, որովհետև նախ, այդ տարածքները պատերազմական գոտի էին, և ապա, ռուսական զորքերը դրանք չուտ գրավեցին: Դրա շնորհիվ Բուլանըխի և Մանազկերտի կազաներից փրկվեց 25.000 հայ:

Վարդոյի Գյունդեմիր գյուղի հայերն իրենց անասունները հափշտակությունից փրկելու համար անտառ փախցրին: Ոստիկանները գյուղ լցվեցին, հավաքեցին չուրջ 100 հոգու և տարան բեռներ տեղափոխելու: Նրանց մեծ մասը ճանապարհին ցրտահարվեց, շատերը մահացան[1]:

Բաղեշում խմբակային ձերբակալություններն սկսվեցին 1915 թ. մայիսի վերջերին: Քաղաքի 70 մտավորական ու երևելի դեմքեր բանտ նետվեցին: Դրանից հետո էր, որ բաղեշցիները փակվեցին իրենց տներում և քաղաք չէին իջնում, իսկ տներում հայերին ոչնչացնելը դժվար էր ոչ միայն այն պատճառով, որ նրանք բնակվում էին քարե ամուր տներում, որոնք բերդի նշանակություն ունեին, այլև տեղադրված էին կիրճի բարձրադիր մասերում, ինչը դժվարացնում էր հարձակումը դրանց վրա: Ահա թե ինչո՛ւ վալին ամեն ինչ անում էր հայերին իրենց բերդ-տներից վար բերելու, որի միակ միջոցը խանութները (որոնք ցածում էին, քաղաքի կենտրոնում) բացելն էր: Հայերին համոզելու համար վալին ձերբակալվածներից 60 հոգու ազատ արձակեց: Հայտարարվեց, թե պատժվելու են միայն վտանգավոր հանցագործները: Բայց նույն այդ օրերին բանտում զազրելի խոշտանգումներով սպանեցին քաղաքի մտավորականության մի քանի ներկայացուցիչների:

Հայերը հավատացին վալու երդմանը և չտապեցին խանութները բանալ: Դա նրանք նաև արեցին «կառավարության աչքին վտանգավոր մարդ չերևալու համար»: Նույն օրը չուկայում ձերբակալվում է 700 հայ, որոնց փակում են զորանոցներում: Ձերբակալում էին 12-80 տարեկան պատանիների, չափահաս տղամարդկանց ու ծերերի և քաղցած խումբ-խումբ իջեցնում էին ձորն ու սպանում:

Հայերի վիճակն ավելի ծանրացավ, երբ քաղաք լցվեցին Վանից փախած աշիրեթներն ու չեթեները:

Ընդհանուր հուսալքության ու ջարդի համայնապատկերի վրա ավելի ընդ-

---

[1] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 749-750:

գծվում էր հինգ տների կանգուն ու փակ մնալը: Այդ տները հետ էին չպրտում ոհմակների բոլոր գրոհները: Քաղաքի փողոցներում արյունը հոսում էր գետ դարձած, ամենուրեք դիակներ էին, իսկ հինգ՝ Երմոյանների, Ժամհարյան Պետրոսի, Կազնյանի, Հակոբ Գասպարյանի և Տիգրան Մաթևոսյանի տներում ինը խիզախներ՝ Հովսեփ Երմոյան, Մուշեղ Կըճնյան, Մուշեղ Զուլանյան, Արամ Ժամհարյան, նրա փեսա Աբրահամ, Լևոն Բատիկյան, Սիրուն Գավուգչյան և տան տերերը սառնասրտությամբ հակահարված էին տալիս ջարդարարներին: Նրանք կռվեցին մինչև վերջին չունչն ու մեռան հերոսի մահով:

Շարունակենք լսել Թուրք սպային. «Այսօր ճանապարհին հանդիպեցինք երկու ժանդարմների, որոնք տանում էին 40–50 հայ կանանց, տղամարդկանց և երեխաների: Ոտաբոբիկ էին ու լալիս էին: Հաց էլ չուներին: Մարդ ցավում է նման բաներ տեսնելով: Բայց ցավել պետք չէ: Անպիտաններն ամբողջությամբ միկրոբներ են: Թող հանուն հասարակական անվտանգության՝ սրանք էլ գնան..., թող գնան տեսնելու իրենց ցանկացած անկախությունը: Ժանդարմներին հարցրեցինք, թե ո՞ւր եք տանում սրանց: Պատասխանեցին, թե մի քիչ տեղ էլ պիտի տանեն և ապա բոլորին սպանելու են: Ճանապարհին հանդիպեցինք նաև մի հայ կնոջ դիակի, որին անփույթ գցել էին ճանապարհի մեջտեղը:

Բիթլիսից երեք ժամ հեռավորության վրա ենք: Ճանապարհին մեր տեսած 40–50 հայերից առաջ հանդիպեցինք բահ ու բրիչավորների: Նրանք փոսեր էին փորում, իսկ մյուսներին (հայերին) էլ մեկ-մեկ, երկու-երկու ուղարկում էին Մարգո փաչայի մոտ:

...Առավոտյան ճամփա ենք ընկնում: Մեկնելուց առաջ տեսա, որ տղաները ճանապարհին մի հայ երեխայի էին կենդանի թաղել: Նրա գլուխն ու ձեռները հողից դուրս էին թողել և քթից ու բերանից արյուն էր հոսել:

Ճանապարհի երկարությամբ ջրի ափին հանդիպեցինք ևս չորս հայի դիակի: Նրանցից մեկի մարմինը, առնանդամն ու ամորձիները չափազանց ուռել էին, մեկ ուրիշը նստատեղում խոշոր պաչար ուներ (երևի վախից), մյուսներն էլ զանազան տեսակ այլանդակություններ ունեին: Բոլորի մարմիններն էլ ծածկված էին բազմաթիվ վերքերով: Մի այնպիսի զզվելի տեսարան էր, անհնար է նկարագրել... Առանց իմանալու, կուչտ-կուչտ խմեցինք դիակներով լի ջրից: Չես հասկանում, թե ինչու դիակները թողնում են բաց և ապականում մթնոլորտը:

Լրիվ անկախություն ասիք, հա՞..., ձեր ախորժակը պահեք այն աշխարհի համար: ...Դարձյալ գարշահոտություն է զգացվում: Նայում ու տեսնում ենք մի ուրիշ դիակ, լրիվ սևացած: Մարդկանց լրիվ մերկացնում են և ապա սպանում: Մի քիչ էլ ենք առաջանում և բանակատեղի մոտ եղած փոսում տեսնում ենք մի ուրիշ դիակ»:

«Հայերն, իրենց խանութները բաց թողած, փախչում են,– շարունակում է պատմել Թուրք սպան,– ժանդարմները բաց են անում հայերի տների դռները, ներսում եղածներին դուրս են հանում ու հավաքում մի հրապարակում: Հավաքվածները ժանդարմների հսկողության տակ են: Մարդիկ որևէ դիմադրություն ցույց չտվեցին: Վերջապես Բիթլիսն էլ մաքրվեց: Մեր կիսաբաժնում 200 հայ զինվոր կար, նրանք էլ մաքրվեցին: Առաջին օրը, երբ գնացի Բիթլիս, կա-

ռավարությունը հայտարարեց, թե բոլորն իրենց խանութները բացեն... Այդ հայտարարությունից հետո հայերը խանութները բացեցին ու սկսեցին առևտուր անել: Հնազանդ ժողովուրդ, իմանալով հանդերձ, որ մեռնելու է, այնուամենայնիվ, կանոնավոր առևտուր է անում: Սա հույսի աչխարհ է՝ չէ՞ որ կարող է մտածել՝ «Գուցե ազատվե՞մ»: Կուսակալը հմտորեն որսում է այս հոգեբանությունը, ասելով. «Գուցե՞ կառավարությունը ձեզ ների: Իսկ ես ձեզ 60 տոկոսով վստահեցնում եմ, որ եթե հավատարիմ մնաք, կազատվեք: Եկող զինվորներից մի՛ վախեցեք, նրանք պատերազմ են գնալու»: Այսպես ասելով (հայերի ձրի աչխատանքով) զորանոցներ է կառուցել տվել, իսկ հետո, մարդկանց մեջ իսկապես վստահություն է ներչնչում ու նրանց բոլորին կոտորում»[1]:

Եվրոպական թերթերը գրեցին, որ Ջևդեթը մայիսին 8000 զինվորով մտավ Սայիստ: Նա սպանեց Սայիստի քրիստոնյաների մեծամասնությանը:

Ըստ հավաստի աղբյուրների՝ նա հրամայեց, որ գլխավոր հրապարակում ողջակիզեն Եղիչե վարդապետին:

Հունիսի 25-ին թուրքերը պաչարեցին Բիթլիսը և կտրեցին բոլոր կապերը հայկական գյուղերի հետ: Ապա բռնությամբ տներից հանեցին բանակային տարիքի բոլոր տղամարդկանց: Հաջորդ օրերին նրանց տարան արվարձանները, ստիպելով, որ փոսեր փորեն, ապա գնդակահարեցին և թաղեցին այդ փոսերում: Կանայք, երիտասարդներն ու երեխաները բաժանվեցին զորքերին: Անպետք համարվողներին քչեցին հարավ, և ենթադրվում է, որ նրանց նետեցին Տիգրիս գետը ու խեղդամահ արեցին:

Ոմանք փորձեցին պաչտպանվել, բայց հաջողություն չունեցան՝ թուրքերը ճնչեցին: Հայերը տեսնելով, որ փամփուչտները վերջանում էին, ինքնասպան եղան իրենց ընտանիքների հետ՝ ջարդարարների ձեռքը չընկնելու համար: Թուրքերը Բիթլիսում ավելի քան 15.000 հայ բնաջնջեցին:

Վկաների հարցաքննության արձանագրություններից մեկում կարդում ենք. «Այս փոսերում զուգահեռ պառկած էին 300 դիակներ երկու չարքով (կանայք և տղամարդիկ): Բիթլիսի Սուրբ Աստվածածին եկեղեցում տեսել եմ հայերի 200 դիակ, այդտեղ էր նաև կախաղանը: Մեր զինվորներն այդ կախաղանից կանանց ու տղամարդկանց դիակները հանեցին ու թաղեցին: Բուն Մուչ քաղաքում 1915 թ. հունիսին սպանվել էր 17 հազար հայ: Մուչ-Բիթլիս չրջանում, փախստականների կարծիքով, սպանվել էր 160 հազար հոգի: Մուչի դաչտավայրում թուրքերը նախապես բանտարկեցին ու մորթեցին բոլոր տղամարդկանց, իսկ կանանց ու երեխաներին հավաքեցին խոչոր գյուղերում և մեծ մարագներում ու այրեցին... Մուչի և Բիթլիսի հայերի կոտորածին մասնակցեց Բիթլիսի նահանգապետը: Այդ ժամանակ Դիլմանից դեպի Բիթլիս էին գալիս երեք հավաքական ջախջախված դիվիզիաների զորամասերը Խալիլ բեյի հրամանատարությամբ (ներկայումս 6-րդ բանակի հրամանատար): Նրա հրամանով՝ դիվիզիայի թուրք ասկյարները զինաթափեցին և սպանեցին նույն դիվիզիայում գտնվող 800 հայ զինվորի, բժչկի և սպայի»:

---

[1] *"Армянский вестник", 1916, № 1.*

Պատմում է Անդրե Մանդելչտամը. «Հետո Ջևդեթ բեյը չարժվեց Բիթլիսի վրա (Հունիսի վերջին): Բռնություններ գործադրելով գանձեց 5000 թուրքական ոսկի փրկագին և կախաղան հանեց 20 հայ երևելիների: Ապա ձերբակալեց քաղաքի պնդակազմ, ուժեղ մարդկանց և քաղաքից դուրս հանեց ու գնդակահարել տվեց: Խուժանը կանանց ու երեխաներին քշեց հարավ, իսկ մնացած ամբողջ բնակչությանը, համաձայն վկայությունների, խեղդեցին Տիգրիսի ջրերում: Դիմադրության փորձերը զինվորները հեշտությամբ էին ճնշում:

Ինքնապաշտպանության դիմածները վերջին փամփուշտն արձակելուց հետո թույն ընդունեցին կամ ինքնասպան եղան սեփական տներում»[1]:

Մի քանի օր անց Բաղեշ այցելած մի մահմեդական վկայեց. «Բիթլիս քաղաքում ոչ մի հայ չկայ: Հայկական տուներն այրուած են ու քանդուած: Ոչ մի եկեղեցի կանգուն չէ: Ս. Կարմրորակը վերածվել է զորանոցի»[2]:

«El Dia»-ն 1915 թ. օգոստոսի 4-ին գրում է. «Թուրքերը շարունակում են համատարած կոտորածի իրենց քաղաքականությունը... Բիթլիսի բոլոր հայ տղամարդիկ սպանվել են: 9000 կանայք և երեխաներ տարվել են Տիգրիսի ափ և նետվել գետը կենդանի կամ սպանված»:

«Մի սպա պատմեց,- գրում է Ֆայեզ էլ-Ղուսեյնը,- որ Բիթլիսում հայերին լցնում էին հարդի մեծ մարագները, դռները ծղոտով փակում էին ու հրդեհում... Նա տեսել էր մի ջահել աղջկա, որը գրկից բաց չէր թողնում իր փեսացուին և աներկյուղ նրա հետ մահվան էր գնացել մտնելով կրակով բռնված մարագը»[3]:

«Գայմագամի հրամանով հրդեհվում էին հարուստ հայերի տները,- պատմում է թուրք ականատեսը:- Նման տներից մեկի երկրորդ հարկում երևաց մի կին՝ երեխան գրկին: Հրացանի փողերն ուղղվեցին դեպի կինը, իսկ կրակը մոտենում էր նրան: Ի վերջո, կինն ու երեխան այրվեցին: Երբ ասկյարներին հարցրին, թե ինչպե՞ս չեն ամաչում խոշտանգել անմեղ երեխաներին, պատասխանեցին. «Սուլթանի հրամանն է»[4]:

«Հնչակը» 1915-ի օգոստոսին (№ 3) գրում է. «Բիթլիսը մոխրակույտի է վերածված, չեն խնայել անգամ կանանց ու երեխաներին: Նրանց տարել են Տիգրիսի ափերը, հրացանազարկ են արել և դիակները նետել գետը: Զոհերի թիվն անցնում է 10.000-ից»:

Բիթլիսում կոտորածները,- գրում է Հանրի Բարբին,- սկսվեցին միայն 1915 թ. հուլիսին՝ Վանից ռուսական զորքերի ժամանակավոր նահանջից հետո: Այդ քաղաքում կոտորածները պարբերական բնույթ էին կրում: Քրդական և թուրքական գյուղերը կամ լեռները փախած հայերը խմբերով քաղաք էին բերվում այստեղ կոտորելու համար: Սկզբում բանակի կարիքները հոգացող արհեստավորներին խնայում էին, սակայն հայ կամավորների և ռուսական բանակի կողմից Բիթլիսը գրավելուց մի քանի օր առաջ նրանք բոլորը խեղդամահ արվեցին:

Բոլոր գյուղերում, ինչպես նաև բուն Բիթլիսում թափված են մարդկային

---

[1] Տե՛ս **Զարեվանդ**, նշվ. աշխ., Ա. Մանդելչտամի առաջաբանում:

[2] **Պալաքեան Գ.**, Հայ Գողգոթան, էջ 272:

[3] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 547-550 կամ F. Ghossein, p. 20-22:

[4] "День", 6-ого сентября 1915 г.

բազմաթիվ ոսկորներ ու կմախքներ: Դրանք դժբախտ հայերինն էին:

Հացահատիկի բոլոր հորերը լեփ-լեցուն են մարդկային ոսկորներով: Բիթլիսում բնակվող 18 հազար հայից կենդանի են մնացել մոտ 300-400 կանայք և երեխաներ, որոնք բոլորը մահմեդականացված են[1]:

Գորդլևսկին գրում է. «Բիթլիսում ինձ պատմեցին, որ հայերի տները, փողոցները, եկեղեցիները ու վանքերը լցված էին դիակներով, կանայք ընկած էին սպանված՝ բռնաբարությունից հետո, թափված էին ածխացած դիակներ «ինչպես խորոված խոճկորներ... Հաճախ որովայնախոռոչը լցված էր լինում ավազով, հյուսքերը կտրված էին, կիսամոխրացած կոչիկի և տաբատի մեջ թաքնված էր ոտքը, իսկ փոքր-ինչ հեռու թավալվում էին գանգը, թևը: Բիթլիսից դուրս կիրճում դիակների բլուրներ էին, ոմանց պարանոցին մետաղե ծայրակալներով պարաններ էին կապված, կարծես թե տանջողները նախ եղջրահարել էին զոհերին: Դա սպանդ էր, ժողովրդի աննախադեպ ջարդ: Մարդիկ, ասես, կորցրել էին խիղճը: Իսկ Եփրատն ամաչել էր և լաց եղել արյան արցունքով: Մուշի մոտակա կամուրջը դեռևս կրում է չերտերը այն հետքերի, երբ գետն արյունից վարարել էր: Այդպես զոհվեցին մեկ միլիոնից ավելի հայեր»:

ԱՄՆ-ի պետական քարտուղարին 1915 թ. նոյեմբերի 9-ին ուղարկած նամակում Հենրի Մորգենթաուն մեջբերում է կատարում Ալմա Յոհանսոնից Մուշի ու Բիթլիսի հայության ողբերգության վերաբերյալ և եզրահանգում. «Սա մի պատմություն է՝ գրված արյունով»[2]:

Բիթլիսի հայության «հաշիվը մաքրելուց» հետո ջարդարարները հյուսիս շարժվեցին:

«...Հասանք Դատվան,- պատմում է թուրք սպան,- ճանապարհին հանդիպեցինք մի դիակի: Իսկ անասունների դիակներն այնքան շատ են, որ հնարավոր էր ենթադրել, թե ճանապարհին գաղթական հայերն ինչպիսի թշվառությունների են ենթարկվել: Նրանք բոլորը լցվել էին Բիթլիս, որտեղ ո՛չ իրենց և ո՛չ էլ անասունների համար կեր ճարել չէին կարողանում: Այժմ մուրացկանությամբ են ապրում և Բիթլիսի լավ ջրից բացի ուրիշ բան չունեն:

(Դատվանում) բոլոր հայերին կոտորել են հենց գյուղում: Ես հանդիպեցի հեռագրատան տեսուչին: Նա հայտնեց՝ Կարճկանի (Ախլաթի դիմացը) 86 գյուղերից 11-ը եղել են թրքաբնակ, իսկ մնացածները՝ լրիվ հայաբնակ: Բոլոր հայերին կոտորել են, որոնց թվում եղել են զենք բռնելու ընդունակ 1600 հոգի:

... Այսօր Բիթլիսից նոր լուր ստացվեց, որ հայերի տների դռները ջարդելով, բռնությամբ ներս են մտնում: Կանայք խելագարվում են: Քաղաքում «դո՜ւն, դո՜ւն» է եղել, քաղաքը շրջապատված է և որևէ մեկին թույլ չեն տալիս Բիթլիս մտնել»:

Նույն Յազդին նաև պատմում է. «Առավոտյան շարժվում ենք դեպի Դատվան: Լճի ափին կան շատ գեղեցիկ գյուղեր՝ բերրի հողեր, առատ ջուր և մաքուր օդ: Բայց ի՞նչ օգուտ, որ նրանց բնակիչ քրդերը 10 փարա չարժեն: Նրանք այն-

---

[1] Барби А., նշվ. աշխ., էջ 49:

[2] Morgenthau H., Memoires..., p. 395-396.

քան զզվելի, խայտառակ և ստոր մարդիկ են, որ գողություն անելու հետևանքով զոհվում են, պատերազմից լեղապատառ են լինում, ո՛չ զինվոր են տալիս և ո՛չ էլ որևէ աշխատանք կատարում: Մնացել են, որպեսզի հանգստությունը խռովեն: Մեր կանայք սրանցից քաջ են... Նրանք չարվել էին ճանապարհի եզերին և լրտեսի նման մեզ նայելով, քրդերեն հարցրին. «Չլինի՞ թե թշնամին գալու է: Մենք ձեր հետ քաշվելուց վախենում ենք»: Ես նրանց պատասխանեցի. «Մենք ձեր նման կին չենք, որ թշնամու առջևից փախչենք»:

Հայերը սրանց այնքան են սարսափեցրել, որ անհնար է նկարագրել: Երբ լսեն հայերը գալիս են, այն ժամանակ քրդին բաց թող, որ փախչի: Ափսոս այդ հաղթանդամ մարմինները»:

Ռոյտերը Պետրոգրադից հաղորդում է. Բիթլիսում թուրքերի կողմից հայերի կոտորածի անհավատալի մանրամասներ են հասել Պետրոգրադ: Գյուղերից մեկում հազար տղամարդ, կին ու երեխա են փակել փայտյա շինության մեջ ու այրել: Մեկ ուրիշ մեծ գյուղում սպանդից փրկվել է ընդամենը 36 մարդ, մեկ այլ դեպքում էլ, ըստ հավաստի տեղեկությունների, տասնյակ տղամարդկանց ու կանանց են միասին շղթայակապ արել և Վանա լիճ նետել[1]:

Ն. Օգանովսկին «День» թերթի 1915 թ. սեպտեմբերի 6-ի համարում տպագրեց «Թուրքական բանակի բժշկի օրագրից» հոդվածը, որտեղ նշվում է, որ հայերի ոչնչացումը սկզբում անհատական բնույթ ուներ, իսկ հետո «Կ. Պոլսից ստացված մի շարք հրամաններով վերածվեց համակարգի... Թուրքական բանակի սովյալ, ուժասպառ զինվորները միավորվել էին սոսկ «ղազավաթի»... Այստեղ էլ՝ անօգնական հայերի հանդեպ գազանությունների ու բռնությունների այն աներևակայելի պատկերներն են, որոնց հանդիպել էր օրագրի հեղինակը...»: Սիրիայից հյուսիս շարժվելիս, ճանապարհին օրագրի հեղինակը հանդիպել է տասնյակ գետերի, հովիտների, ձորերի, ավերված գյուղերի՝ կոտորված տղամարդկանց, կանանց, երեխաների դիակներով լցված, երբեմն փորերին ցից խրված:

«Դեռ Բիթլիս չհասած՝ անտառում տեսել են ոչ վաղուց մորթված մի խումբ տղամարդկանց և նրանց կողքին էլ՝ երեք կնոջ, միանգամայն մերկ, գլխիվայր կախված: Կանանցից մեկի կողքին սողում էր մեկ տարեկան մի երեխա և թաթիկները պարզում մորը, իսկ մայրը, դեմքն արյունով լցված, դեռ կենդանի, ձեռքերը մեկնում էր երեխային, բայց նրանք չէին կարողանում միմյանց հասնել: Մի քիչ այն կողմ ընկած էին կանանց արնաշաղախ երեք դիակներ և մի մանկիկ՝ մոր արյունով ողողված, որը խլվլում էր կանանցից մեկի կրծքի վրա: Մի քուրդ ասկյար խղճացել է մանկանը ու վերցրել իր հետ, որպեսզի տանի պահի ու լավ մուսուլման դարձնի»:

Հենց Բիթլիսի մոտ, անապատային հարթության վրա, նստած էին 2000 հայեր՝ պահակախմբով շրջապատված: Նրանք սպասել են իրենց հերթին, քանի որ տեղական ոստիկանության ուժերը չեն բավարարել բոլորին միանգամից կոտորելու: Բիթլիսի կոտորածին մասնակցել են նաև 36-րդ դիվիզիայի ասկյարները:

---

[1] *«New York Times», 20 August 1915.*

«Բիթլիսից մինչև Հյուսիսային Պարսկաստան,– գրում է Շոյբներ-Ռիխտերը,– սարսափելի պատկեր է՝ սպանված հայեր դատարկ գյուղերում, մարզերում... Ինձ ուղեկցող թուրք պաշտոնատարները կատարվածը համարում էին թուրքերի ձեռքի գործը... Բիթլիսում կենդանի մնացած կանանց ու երեխաներին իրենց մոտ էին ընդունել ամերիկացի միսիոներները:

Հայերի աքսորումը հավասարազոր է նրանց ոչնչացմանը... Զափազանցություն չէ, երբ ասում են, որ թուրքահայերի վիճակը, բացառությամբ մի քանի հարյուր հազար հոգու, որոնք բնակվում են Կ. Պոլսում և մյուս խոշոր քաղաքներում, ոչնչացումից բացի այլ բան չէր»[1]:

Զեյմե-Գյադուկ լեռան շրջանում հայ կամավորների հետախուզական մի խումբ ճանապարհին տեսնում է «պատառոտված դիակ... Սառելուց դեմքը սևացած, մերկամարմին... Գիշատիչ թռչունները ճիչերով օդ են բարձրացնում մարդկային այդ ցնցոտիի մնացորդները»[2]:

«Մեր ամբողջ գյուղից միայն ես մնացի կենդանի,– պատմում է ականատեսը,– եղբայրս էլ ինձ հետ էր, բայց ծնողներիս սպանվելուց առաջ անհետացել էր, և ես նրան համարում էի մեռած»: Կոտորածի ժամանակ շատերը գյուղերից փախուստի էին դիմել և սպանվել այս ու այնտեղ: Ահա թե ինչո՛ւ որոշ ժամանակ անց Տատիկի ամբողջ դաշտում տիրում էր դիակների նեխահոտը... Եվ ես, կամաց-կամաց համակերպվեցի իմ վիճակին, միայն երբեմն, երբ հայացք էի գցում դեպի մեր ավերակ գյուղը, արցունքներից կուրանում էի...

Այդ ժամանակ ռուսական բանակը, որի առաջին գծում էր հայ կամավորական գունդը զորավար Անդրանիկի հրամանատարությամբ, գրավեց Բիթլիս (Բաղեշ) քաղաքը: Հեռվից լսվում էին հրետանային համազարկերի ձայներ: Մահմեդական բնակչությունը սարսափի մեջ էր: Թուրքական բանակը առանց դիմադրության, խուճապահար նահանջում էր: Դա արդեն կոտորածից 5-6 ամիս հետո էր՝ 1915 թ. աշնանը: Թուրքական բանակը նահանջում էր և ստիպում բնակչությանը (մահմեդական) գաղթել: «Ես ընտելացել էի դրությանս և չէի ուզում տեղաշարժվել: Դեռ ավելին, աղաս նախատեսել էր իր կրտսեր աղջկան՝ Այշեին, ամուսնացնել ինձ հետ: Խեղճ աղջիկը կարծեմ մի քիչ մեծ էր ինձանից և կրքով էր սիրահետում ինձ: Նա գաղտնաբար ինձ կերակրում էր հազվագյուտ համեղ պատառներով, չխնայելով նաև տաք համբույրներ...

Բայց ի՞նչ կարող ես անել, գաղթն սկսվեց: Առաջին անհրաժեշտության իրերն ու սնունդը անասուններին բարձելով, գաղթաքարավանը շարժվեց դեպի Խիզան քաղաքը»:

Ալեքսանդր Ջիվելեգովը «Հայերի վիճակը Թուրքիայում» հոդվածում գրում է. «Ընկավ Բիթլիսը...

Ռուսական զորքերի երևալու հետ, որոնց առջևից փախչում էին թուրքական ալայները, լեռներից՝ Սասունի նշանավոր լեռներից, սկսեցին իջնել հայ խրոխտ մարտիկների երկար շարանները: Անցյալ տարվա վաղ գարնանից նրանք նստել էին այնտեղ և գրեթե մի ամբողջ տարի հետ են մղել թուրքերի

---

[1] *R. 14094, Ab. 33457.*

[2] ***Մելիքեան Ս.,*** *նշվ. աշխ., էջ 44:*

ու քրդերի հարձակումները: Նրանք փամփուշտներ չունեին, սպառվել էր ուտելիքը: Միայն մեծագույն դժվարություններով են նրանք ձեռք բերել սննդամթերք և ռազմամթերք, զոհվել են թշնամու զենքից ու քաղցից, սակայն դիմացել են: Նրանց հետ եղել են կանայք ու երեխաներ: Հանձնվել չէր կարելի:

Եվ նրանք դիմացան: Երբ հայ կամավորների ջոկատը ռուսական բանակի ուղեկցությամբ գնաց հարազատ լեռները՝ իրենց եղբայրներին դիմավորելու, ջոկատի զինվորները այնտեղ տեսան հազար, տասնյակ հազար հայ: Մենք վաղուց գիտեինք, որ մոտ 50 հազար հոգի թաքնվել էր անանցանելի լեռնային կիրճերում և երկնաքեր բարձունքների ահեղ կատարներին:

...Շվեյցարիայում հայ ժողովրդի գերմանացի խիզախ բարեկամ Լեփսիուսը հայտնեց, որ Միջագետքում և Արաբիայում ապրում են, ճիշտ է անտանելի պայմաններում, 500 հազար հայ, որոնք թուրքերի կողմից բռնագաղթվել էին այդտեղ:

...Մեզ ասում էր, որ անհետացել է 800 հազար մարդ: Ներկայումս նրանց նշանակալից մասին փնտրում, գտնում են: Իհարկե, այժմ էլ կորուստները վիթխարի են: Շատ տղամարդիկ են կոտորվել, զոհվել է մտավորականության և հոգևորականության մեծ մասը»[1]:

Ա. Ճեպեճյանը Բիթլիս է հասնում 1918 թ. սեպտեմբերի վերջին ու գրում է. «... Քաղաքի խոշոր մասը աւերակ է, փլատակ տուներու մէջը լեցուն է մարդու ոսկորներով... Դատվանը հիմնովին աւերուած է, կանգուն պատ անգամ չկայ»[2]:

«Մօտաւոր անցեալին Վանէն քչուող հայ գերիները ետ դարձուելով՝ մեր քովէն անցան կրկին անգամ... Շատ սրտաճմլիկ տեսարաններ...

Երեք օր առաջ հիւանդանոցի քոյրերը՝ բոլորը հայ, տեղական կառավարութեանը յանձնելու հրաման եկաւ, խեղճերը դարձեալ արիւնոտ օրերու պիտի ենթարկուին»[3]:

ՏԱՐՈՆ. *– 1913 թ. Ս. Կարապետի ավանդական ուխտագնացության օրերին վանքում կայացավ ՀՅ Դաշնակցության շրջանային ժողովը, որին մասնակցում էին Ռոստոմը, Արմեն Գարոն, Ա. Վռամյանը, Կայծակ Առաքելը և այլոք: Նույն ժամանակ վանքում տոնվեց հայ գրերի գյուտի 1500-ամյակը:*

Այդ օրերին երկնակամարը փակ էր, բայց ոչ չարագույժ ամպերով:

Դրությունն արմատապես փոխվեց Սարիղամիշի ճակատամարտի օրերին, մասնավորապես, երբ դասալքությունը բանակից զանգվածային բնույթ ստացավ: Փախչում էին բոլորը, թերևս ամենաքիչը՝ հայերը, բայց թուրքական իշխանությունների բռունցքն իջավ հայերի գլխին: Մուշ քաղաքում ազդարարություն եղավ, որ եթե որևէ մեկը դասալիք թաքցնի, նրա տունը այրվելու է: Քաղաքից զորակոչված 10000 զինվորների 3/4-ը հայ էր և, բնականաբար, դասալքված մշեցիների թվում նույնպես հայերը նշանակալից մաս էին կազմում:

Զզորակոչված հայերից շատերը ոչ միայն բեղել էին վճարում, այլև իշխա-

---

[1] *"Армянский вестник", 1915, № 5.*

[2] *«Բժիշկ Ա. Ճեպեճեանի...», էջ 80:*

[3] *Նույն տեղում, էջ 83:*

նութիւնների հանձնարարութեամբ այլեւայլ աշխատանքներ կատարում, որպեսզի խուսափեն հարաբերութիւնները սրելուց: Դա կառավարչութեանը հնարաւորութիւն տվեց գնալով ավելի ու ավելի մեծացնել հայերին ներկայացվող պահանջները: Մեծ թվով ձիեր պահանջեցին, ձի չունեցողները պետք է գնեին ու հանձնեին: Սկսվեցին բռնագրավումները թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում, կողոպտում էին հայերի խանութները, գյուղացու պարենն ու անասունը: Տարոնի դաշտում նույնպես հազարավոր հայերի վերածեցին չալակավորների (համալ թաբուրի): «Իւրաքանչիւր երթ ու դարձին,- պատմում է ժամանակակիցը,- 30 առ հարիւրը կը մեռնէին ծեծի տակ ճանապարհին, դիակները ձգուած ճամբուն եզերքը, իսկ վերադարձող 70-ին մեծ մասը ճամբան տաժանքէն, խոշտանգումներէն ու ցուրտէն իր բաժինն առած, իսկոյն կ'իյնար անկողին, քանի մը օրէն իր վերջին յուսահատ ակնարկը գոցելու այն աշխարհին, որուն թուք մը միայն կրնար իր սրտի խորէն բաժին հանել»[1]:

Տարոնից մեկնած խմբերից մեկը, որը կազմված էր 7000 հոգուց, Մուշից Հասան Կալե՝ 150-180 կմ ճանապարհ անցավ յուրաքանչյուր չալակավորի մեջքին 6-8 լիտր ծանրութեամբ: Նրանց մի մասը մահացավ ճանապարհին, իսկ «մեծ մասը կը վերադառնար հիւծուած եւ հիւանդ»[2]: 1915-ի առաջին չաբաթներից չալակավորներն սկսեցին «անհետանալ նախ անհատապէս ու ապա անհետ կորչիլ խումբերով»[3]:

Տարոնցին լրիվ կողոպտված էր: «Գիւղերու մէջ ո՛չ գուլպայ մնաց, ո՛չ տրեխ, ո՛չ իւղ ու ձաւար, խոտ ու յարդ, ցորեն ու կորեկ, ամեն ինչ գրաւուած էր...»[4]:

Մոտ երկուսուկես անգամ մեծացվեց բեղելի չափը՝ 25-ից հասցվեց 60 ոսկու: Պետական կողոպուտին ուղեկցում էր քրդական կողոպուտը, համիդիեները «կը լեցուէին գիւղերը և կը յափշտակէին ամեն ինչ»[5]:

Մուշ քաղաքի «չտեմարանները կը լցուէին գիւղերէ յափշտակուած եւ գիւղացիներու սայլերով եւ անասուններով փոխադրուող հացահատիկներով, չուկան աւերակի էր վերածուած, խանութները դատարկ էին, կեանքը՝ մեռած»[6]:

Գյուղացիներից խլում էին ամեն ինչ՝ կաշի, ձու, թաղիք, գդալ, տրեխ, դանազան թելեր, մսացու, դաւրմա, յուղ, պանիր, պարկ, վերմակ, սպիտակեղեն...

Դեռ 1909 թ. ապրիլի 16-ին արաբական «Le Réveil Arab» թերթը ծաղրելով երիտթուրքական հեղաշրջումից հետո ստեղծված իրավիճակը, գրում էր, թե թուրքիան հավատում էր, որ «հին միապետութիւնը փոխարինուելու էր ժողովրդավար վարչակարգով, սակայն յայտնվեց մի այնպիսի վարչակարգում, որը շատ աւելի բռնապետական էր, քան երբեւիցէ»:

---

[1] «Տարօնոյ ինքնապաշտպանութիւնն ու ջարդը 1914-1915», պատմեց Ե. Տէր-Պարսամեան, Ֆրեզնօ, 1920, էջ 26:

[2] **Փափազեան Վ.,** նշվ. աշխ., Բ. հատոր, էջ 328:

[3] Նույն տեղում, էջ 341:

[4] **Պարսամեան Ե.,** նշվ. աշխ., էջ 27:

[5] **Փափազեան Վ.,** նշվ. աշխ., էջ 317:

[6] Նույն տեղում, էջ 326-327:

Արդեն 1915-ի տարեմուտին արյան հոտ էր գալիս:

Բարձր Դուռը մտահոգ էր, որ Տարոնում ու Վասպուրականում տեղահանությունը կարող է հաջողություն չունենալ, ուստի զորքեր կուտակեց, որպեսզի մահմեդական բնակչության աջակցությամբ հայաբնակ գյուղերը միմյանցից մեկուսացնի և հայ բնակչությանն անջատ–անջատ ոչնչացնի:

Ֆիդայիներն իսկույն հասկացան Թուրքերի մտադրությունը և նորից լեռ բարձրացան:

Կռիվներն սկսվեցին 1915 թ. փետրվարին: Ս. Հովհաննու անտառից, Փեթարից մինչև Մուշ քաղաքից հարավ ընկած բնակավայրերն ու Կուրտիկը վերածվեցին ռազմաճակատային գոտու: Վիճակը նույնն էր նաև Առաքելոց վանքից մինչև Ծիրինկատարի բարձունքները: Դաշտի չատ գյուղեր պաշտպանության կանգնեցին: Դիմադրության ինքնուրույն կենտրոններ դարձան Ս. Կարապետի վանքն ու Խնուսը: Այսինքն՝ կռիվներն ընդգրկեցին Դիարբեքիրից մինչև Սիփան և Ս. Կարապետից մինչև Դատվան ձգված շրջանները:

Ռուսների կողմից Վանի գրավումից հետո իշխանությունները համառ լուրեր տարածեցին, թե այդ արել են հայերը, ոչ միայն «ռուսահայերն, այլև Թուրքահայերը կռվում են ռուսական բանակի կազմում»: Հայերը կայսրության թշնամիներն են և պետք է ոչնչացվեն:

Մուշում Իթթիհադի ներկայացուցիչ Ռեշիդը, որը քիչ անց ռազմական հետախուզության պետ նշանակվեց, իր վրա վերցրեց հայերի ջարդերի կազմակերպման նախաձեռնությունը: Նրա շուրջը համախմբվեց հայատյաց գործիչների մի խումբ, այդ թվում Ազո Մստոն և Մեհմեդ Քաղրմը: Նույն նպատակով Վանից եկավ ոստիկանական ճամբարների պետ Քյազրմը: Այս խմբի փաստական ղեկավարը Մշո սանջակի մութեսարիֆ Սերվեթն էր, որը նույնպես բալկանյան Թուրքերից էր:

Հայերն այս ամենը տեսնում էին և առավել ևս զգում ահագնացող վտանգը և, հակառակ հայ ջոջերի խաղաղարար կոչերի, սկսեցին ոչ միայն անհանգստանալ, այլև գործել... Ոչ միայն բանականությամբ, այլև բնազդով զգալով, որ առջևում աղետ է, հայերը խումբ-խումբ քաշվում էին Սասուն թե՛ փրկվելու հույսով և թե՛ այնտեղ կռվելու չահեկանության համար: Անմոռունչ մորթվելու փոխարեն նրանք ընտրեցին մարտնչելով մեռնելու ուղին:

Սասունը փաստորեն արդեն կռիվների մեջ էր: Զորակոչից խուսափողներին բռնելու, հօգուտ բանակի բռնագրավումներ կատարելու անվան տակ հարձակումներն սկսվել էին:

Որքան ռուսական բանակն առաջ էր չարժվում, այնքան ավելի բարբարոս էր դառնում հայերի նկատմամբ իշխանությունների և մահմեդական բնակչության վերաբերմունքը:

Տարոնը 18-20 մասերի էր բաժանվել և յուրաքանչյուրին ջարդարար հրոսակախումբ էր կցվել: Դաշտի ջարդերը իրականացնելու գործին է լծվում նաև Դիարբեքիրի ջելլաթ օրդուսուն (ջարդարար բանակը):

«Տարօնի հայութիւնը,- գրում է Գեղամ Տեր-Կարապետյանը,- չարչարանքի երկունքը կ'անցընէր արդէն 1914-ի աշնանը: Տուներ, գիւղեր, քաղաք, գաւառ, լեռ ու ձոր՝ գրեթէ հրդեհի մէջ էին, ոչ մէկ հայ տունը հանգիստ կար...

Հենց աչունէն գաղտնի խօսակցութիւններ կային Սասուն ու Դաչտը տեղահան ընելու ու զարնելու, բայց երեւի կը վախնային այդ կողմի հոծ հայութենէն ու մեծ ուժերու պէտք կը տեսնէին...

Կարնոյ ընդհանուր հրամանատարէն պատուէր էր տրուեր, որ Տիարպէքիրէն եկող եօթն վաշտ զինուորները Սասուն ելնեն, բոլոր տղամարդիկ բռնեն եւ ժողովուրդը տեղահան ընեն...

Գլխաւոր պաշտօնէութիւնը կ'ամբաստանէր Տարօն-Սասունի ամբողջ հայութիւնն, թէ ամենքն ալ խորհրդակցաբար ապստամբութիւն կը հանեն...

Հայկական նահանգներու պարպումն ու ջարդերն սկսեր էին. կարգը եկած էր Տարօն-Սասունին»[1]:

Թուրքերի վրեժխնդրության բաժակը լցրեց ռուս-թուրքական ռազմաճակատում վիրավորված թուրք զինվորներին հոսքը Տարոն ու Մուշ:

Հայերն այդ ամենը տեսնում ու զգում էին, բայց դժբախտաբար բան չարեցին ջարդերի առաջն առնելու համար:

Հայ ղեկավարները հավատացին (կամ ձևացրին, թե հավատում էին) թուրքական իշխանությունների խոստումներին: Նրանք նաև հույս ունեին, թե ուր որ էր ռուսները Տարոն էին հասնելու: Իսկ թուրքերը ո՛չ հավատում էին և ո՛չ էլ սպասում: Նրանք հետևողականորեն առաջ էին տանում հայերին հյուծելու և քայքայելու քաղաքականությունը: Այդ արվում էր հայերի ու հայկական բնակավայրերի վրա անընդհատ հարձակումների, ձերբակալությունների ու կողոպուտների միջոցով: Տարոնահայության վիճակը ծանրանում, նրա հուսալքությունը խորանում էր ոչ թե օր առ օր, այլ ժամ առ ժամ:

Եվ դա մի ժամանակ, երբ Տարոնում էին կենտրոնացել ՀՅ Դաշնակցության առաջատար գործիչները:

Կ. Սասունին անդրադառնալով Տարոնի գործիչների անորոշ և անվճռական կեցվածքին, դրա պատճառը համարում է, նախ, Սերվեթի «խորամանկ քաղաքականությունը», սպասողական կացությունը պահպանելու ու սիրալիրության տակ քողարկելու նրա հմտությունը: «Թուրք կառավարությունը,- գրում է նա,- գիտէր, թէ ինչու կը սպասէ: Իսկ հայ ղեկավարութիւնը կը սպասէր... ռուսական եւ հայ կամաւորական բանակներուն: Ռուսական բանակներու յառաջացման յոյսերով եղած սպասումը կրնանք գլխաւոր պատճառը նկատել հայութեան անվճռական կամքին»[2]:

«Մինչդեռ թուրքերի համար սպասողական վիճակը խնդիր չունէր միայն ժամանակ չահել: Նրանք եռանդուն աշխատանք էին տանում ջարդերը ըստ ամենայնի նախապատրաստելու ուղղութեամբ: Նրանք սադրանքներ էին հնարում, հայերին մեղադրում դաւաճանութեան համար», թյուրիմացության մեջ գցում հասարակական կարծիքը:

Հայերն այդ սադրանքների դեմ ոչ թե ընդվզում էին, այլ ավելի մեծ եռանդ էին հանդես բերում «օսմանյան հայրենիքին» հավատարմորեն ծառայելու գործում:

---

[1] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 842-843:
[2] Նույն տեղում, էջ 781:

Մի բան անվիճելի է. Տարոնի գործիչների անվճռականությունը, գործելուց խույս տալը առաջին հերթին հետևանք էր սպասողական կացության՝ բոլորն սպասում էին ռուսական բանակի գալուն:

«Ամենէն մտահոգիչը զինուորական կացութիւնն էր,- գրում է Կ. Սասունին,- յառաջխաղացումը կ՚ուշանար... Դեւոյեանը (ռուսական բանակի հետախուզութեան ղեկավարներից)... ստացած էր չորի կտորի վրայ գրուած ծածկագիր նամակ մը Փափազեանէն եւ Ռուբէնէն: Անոնք կը գրէին Սասնոյ կռիւներու մասին եւ կը յայտնէին թէ հաւանական ընդհանուր բռնկումի մը պարագային, իրենք միայն ութ օր պիտի կրնային դիմանալ: Եթէ այդ կարճ միջոցին ռուսական զօրքերն ու կամաւորները չհասնէին, հայութեան ամբողջ ռազմամթերքը պիտի վերջանար եւ ժողովուրդը կոտորուէր... Անոնք կը խնդրէին, որ պահակներ ունենանք Նեմրութի գագաթին եւ կրակ վառենք հոն, որպէսզի Սասնոյ լեռներէն նշմարուին բոցերը իբր ազդանշան սկսած ընդհանուր յարձակողականին: Իսկ իրենք Սասնոյ լեռներու վրայ պիտի վառէին երկու խոշոր կրակներ, ի նշան օրհասական կռուին... Բազմահազար արծիւներու աչքերը ջուր կտրեցան հեռաւոր Նեմրութին ակնակառոյց, բայց Նեմրութի գագաթին հրեղէն լեզուները չխօսեցան»[1]:

Տարօրինակն այն է. որ տարոնահայ գործիչները զգում, տեսնում, հասկանում էին, որ հայկական ջարդերն անխուսափելի էին և սարերի հետևում չէին:

Դեռ 1915 թ. փետրվարի 24-ին Վ. Փափազյանը, որպես օսմանյան խորհրդարանի անդամ, նամակ է գրում Թալեաթին. «Ընդհանուր զորաշարժից մինչև օրս այս երկրի ժողովուրդը և մասնավորապես հայերը գերմարդկային ուժ ի գործ դնելով և ծայրահեղ զոհողութիւններով ծառայեցին և կը շարունակեն ծառայել իրենց հայրենիքին»: Այնուհետև ասվում է չալակավորների տաժանակիր աշխատանքի մասին և այն ու չեչտվում է. «...իթթիհատական գլխին պատկանող քանի մը անձեր ... առնելու վրայ են այնպիսի քայլեր, որոնք ցաւալի հետևանքներ միայն կրնան յառաջացնել...»[2]:

«Մշոյ-Սասնոյ ժողովուրդը, տաճկական վիլայեթների հայերու նման,- գրում է Ռուբենը,- պատերազմի սկզբնական շրջանում եղել է միանգամայն հաւատարիմ... Մութեսարիֆ Սերվեթ պէյը քանի-քանի՛ անգամներ դիմել է Դաշնակցութեան եւ խնդրել իրեն օգնութեան հասնել եւ Դաշնակցութիւնը եռանդով լծուել էր աշխատանքի...

Կազմակերպուել էին. 1) Զօրակոչի յանձնախումբ, որ շրջում էր հայ գիւղերը, համոզում եւ ոգեւորում երիտասարդներին: 2) Կորիւնի յանձնախումբը, որ դասալիքներին էր ձերբակալում ու յանձնում: 3) Կոտոյի Հաճու յանձնախումբը, որ փոխադրութիւններ էր ղեկավարում ու պարէն էր հասցնում մինչև Լիզ, Կոփ, Ղըլըճ-Կեատուկ: 4) Գեղամի (Էրզրումցի) յանձնախումբ..., որ գործի էր լծել բոլոր կանանց...»՝ ռազմաճակատի շատ կարիքներ հոգալու համար[3]:

---

[1] ***Սասունի Կ.,*** *Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ, 1914-1918, Բոստոն, 1927, էջ 78:*

[2] *Դե, ծրար 19, Ղ, № 421, 423:*

[3] ***Ռուբէն,*** *Հայ-Թրքական կնճիռը, էջ 93-102:*

Եվ ապա. «Հայ յեղափոխական ու մշակութային աշխատանքները իր ուսերի վրայ տանող մտաւորականութիւնը գնում է դէպի մահ այն միամիտ հաւատն ունենալով, թէ անմեղ ու թուրքի անկեղծ բարեկամը չի կարող կոտորուել նոյն թուրքից»[1]:

Ռուբենը խոստովանում է ևս մի քանի դառը ճշմարտություններ՝ թե, ճիշտ է, բոլոր նահանգները Վանի զինական ուժը չունեին, բայց «եթէ հաւատարմութեան շղթան չկաշկանդէր հայութեան ձեռքերը, թուրքին եաթաղանը այնքան հեշտ չէր իջներ անոր գլուխին»: Նա միանգամայն իրավացիորեն նշում է, որ հայերի դեմ դավը իրենց աչքի առաջ նախապատրաստվեց և սեփական անփութությունը չի կարելի արդարացնել «գերմանական տաղանդի եւ թուրքական ծածկամտութեան մասին» պատմություններով: Հայ գործիչներն ամեն ինչ գիտեին և «սուտ կը խօսի, ով որ հակառակը կը պնդէ: Գիտէինք, որ թուրքը պիտի կոտորէր հայը»:

Հայ գործիչների միամտությունն ու անգործությունը ուղեկցվում էր դատարկաբանությամբ և լոպազ բացբերանությամբ, որը գործածվել է և այսօր էլ գործածվում է թուրքերի հակահայկական քարոզչությունում:

Օսմանյան խորհրդարանի 1918 թ. դեկտեմբերի 12-ի նիստում Մշո պատգամավոր Իլիաս Սամին հայտարարեց. «Զորաչարժի սկզբին, երբ դեռևս որևէ դեպք տեղի չէր ունեցել... Մշո պատգամավոր հանգուցյալ Գեղամ էֆենդին..., Փափազյան էֆենդին և մութեսարիֆը հաճախ էին միասին ճաշում ու խմում»: Որևէ նշան չկար, թե ինչ-որ բան է կատարվելու, միայն Փափազեան էֆենդիի բերանից երբեմն ուշագրավ խոսքեր էի լսում: Նա այդ խոսքերն այնքան հրապարակավ էր ասում, որ տեղի բոլոր հայ մտավորականները նրան քննադատում էին, ասելով, թե ինչո՞ւ ես բացեիբաց նման բաներ ասում... Նա ասում էր. «Թուրքիայի ներսում մենք չեզոք ենք մնալու, սահմանների մերձակայքում Ռուսաստանին զինված աջակցություն ցույց տալու եղանակներ կան, սակայն ռուսական հարձակումից ու առաջխաղացումից հետո, չնայած պարտադիր զինվորական ծառայության, թշնամու (ռուսների) նպատակների իրականացմանն ենք ծառայելու»[2]: «ՆԳ նախարարի՝ Մշո կառավարչին ուղարկած գրության մեջ նույն որոշումները, նույն բաները (Փափազյանի ասած) աչքովս կարդացի և ուղղակի ապշեցի: Սրանց որոշումների մասին մեր կառավարությունն ինչպե՞ս էր տեղյակ դարձել... (Դրանով հանդերձ) կառավարությունը մեզ հրահանգներ էր ուղարկում, ասելով, որ մինչև բացահայտ հեղափոխական գործերի չդիմեն, ոչ մի անհատի անգամ քթից արյուն չթափել»:

Չնայած ընդգծված բանսարկու հարցադրման, Իլիասի ասածները հիմքից զուրկ չէին: Ինքը, Վ. Փափազյանն է նշում ՀՅ Դաշնակցության մեջ երկու տեսակետների առկայության մասին: Որոշ գործիչներ պնդում էին հայ կամավորական գնդերի կազմակերպման վրա, որպես գլխավոր միջոց ռուսներին օգնելու և Արևմտյան Հայաստանն ազատագրելու համար, մյուս կողմից, «Բյուրոն պետք է հրահանգեր գավառի իր կազմակերեպություններին գաղտնի նախա-

---

[1] ***Ռուբէն,*** *նշվ. աշխ., էջ 90:*

[2] *Խորհրդարանական արձանագրություններ, էջ 316:*

պատրաստվել, ինքնապաշտպանության: Իսկ վտանգի պահին միանալ ներխուժող հայ գնդերին»: Այս տեսակետի կողմնակիցներն էին Խաժակն ու Արմեն Գարոն: «Երկրորդ տեսակէտն աւելի պահպանողական էր... Վտանգը անխուսափելի էր Թրքահայ ժողովուրդին համար, թէեւ ինքնապաշտպանութեան հրահանգ անհրաժեշտ է, բայց անհրաժեշտ է նաեւ Կովկասում, սահմանների մօտ մի քանի կէտերի վրա հայ մարտական խմբերի խոշոր միաւորումներ համախմբուած պահել, որոնք պէտք է կրաւորական դերի մէջ մնային եւ միայն ծայրայեղ հանգամանքներում (ջարդ կամ Թուրքերի պարտութիւն) սահմանն անցնէին...

Երկրորդ տեսակէտը պաշտպանողները կարծում էին, թէ այժմուանից պէտք է նախազգուշացնել Թուրք ղեկավարներին, յայտնելով, որ սահմանի միւս կողմում գտնուող հայերը որեւէ քայլ չէն կատարի, եթէ ներսում գտնուող ժողովրդի ֆիզիկական գոյութեանը վտանգ չսպառնայ: Այս տեսակէտին յարում էին Ս. Մինասեանը, Հրաչը, Վարդգէսը, Շահրիկեանը եւ ես, իսկ աւելի ուշ՝ Զօհրապը: Երկու իրարից տարբեր տեսակէտները մնացին անհաշտելի»[1]:

Թուրքական «Vakit» թերթի 1933 թ. նոյեմբերի 13-17-ի թերթոնում տպագրված մի նյութում կա վկայություն, թե ՀՅԴ-ի 8-րդ ընդհանուր ժողովի ընթացքում (1914 թ. հուլիսի 28-օգոստոսի 14) և դրա ավարտից հետո, դաշնակցական ղեկավարները «գաղտնի հավաքույթներ էին կազմակերպում, ինչպես նաև թաքուն գնում էին ռուսական հյուպատոսարան և տեսակցություն ունենում հյուպատոսի հետ»:

Միանգամայն հավանական է, որ Բ. Շաքիրն ու նրա գործակալները հետևում էին հայ գործիչների քայլերին: Վահագն Տատրյանը ճիշտ է նկատում, որ Բ. Շաքիրը էրզրում էր եկել ոչ թե ՀՅԴ համագումարի կապակցությամբ, այլ Հատուկ կազմակերպության բանակատեղին ձևավորելու խնդրով: Եվ հայերի հետ բանակցություններ սկսեց ոչ թե որպես Իթթիհադի պատվիրակության ղեկավար, այլ որպես տվյալ օրերին տեղում գտնվող գործիչ, որն օգտագործում էր պատեհ հնարավորությունը ՀՅԴ լծելու Թուրքերի հակառուսական կառքին: Երբ այդ չհաջողվեց, նա հանձնարարեց Ֆ. Հիլմիին ՀՅԴ համագումարի մասնակիցներին ոչնչացնել: Սակայն այդ ահաբեկչական գործողությունը հաջողություն չունեցավ: Բացի Ալոյանից, դաշնակցական ղեկավարները հաջողեցին խույս տալ երիտԹուրքերի ճանկերից՝ երթուղին փոխելու միջոցով:

Շաքիրը Կ. Պոլիս հայտնեց, թե Ռուսաստանը հայերին խոստացել է Մեծ Հայաստան՝ Նախիջևանից մինչև Խարբերդ և Տրապիզոն: Նա այդ տեղեկատվությունը ձեռք էր գցել հետևյալ կերպ: Պարսկաստանի հակառուսական քաղաքականությանը լիցք հաղորդելու նպատակով էրզրում է հրավիրվում պարսիկ գործիչ Ա. Ղաֆարը, որը ծանոթ էր ՀՅԴ մի քանի ղեկավարներին: Շաքիրի հանձնարարությամբ նա հանդիպումներ է ունենում Ռոստոմի և մի քանի ուրիշ գործիչների հետ և նրանցից իմանում է, որ ՀՅԴ գործիչներն իսկապես կապերի մեջ էին Ռուսաստանի հյուպատոսի հետ:

---

[1] **Փափազեան Վ.,** նշվ. աշխ., էջ 279-280:

Սակայն կային նաև դաշնակցական գործիչներ, որոնք առաջարկում էին միանալ Թուրքերին՝ ռուսների դեմ: Մինախորյանը գրում է, որ Ռուբեն Տեր-Մինասյանը Էրզրումի համագումարում առաջարկեց. «Պատերազմի դէպքում կամաւորական գնդեր կազմակերպել, միանալ Թուրքական բանակին եւ կռուել ռուսների դէմ»[1]:

Այս տեսակետը տարածված էր ՀՅ Դաշնակցության որոշ շրջանակներում, որի ակունքին, հավանաբար, կանգնած էր նույն ինքը՝ Ռուբենը: Նրա ամենամերձավոր զինակիցներից սասունցի Մուշեղը գրում է. «Անգլիացոց, ֆրանսացոց մէջ յոյս չկայ: Մոսկուան էլ թիւրքից վատ է»[2]: Սակայն համագումարը մերժեց այդ առաջարկությունը: Այնուամենայնիվ շարունակում էր ավանդական տարընթացությունը՝ եթե արևելահայ գործիչներն անվերապահ Ռուսաստանի կողմն էին, ապա Թուրքիայում գործող հայերը խնդրին վերապահ մոտեցում ունեին: Կ. Սասունին գրում է, «թէ՛ մեր հաւաքականութիւնը եւ թէ՛ մեր քաղաքական մեծ կուսակցութիւնը կատարեալ երկուութեան մէջ կ'ապրեին... Թուրքա-Հայաստանի եւ ամբողջ Թիւրքիոյ մէջ հայութիւնը կը կծկուէր հնազանդութեան եւ ինքնապաշտպանութեան վարագոյրին ետեւը, սպասողական եւ անզէն»[3]:

Իսկ Թուրքերը, իրոք, երկատված չէին, նրանք գործում էին հստակ ու վճռական: Նույն Իլիասը խորհրդարանում հայտարարեց. «Ռուսներին զինված ուժով աջակցելը հանցագործություն է» և վերաբերմունք պահանջեց: «Այս խնդիրն առնչվում է մի հսկայ ազգի, դրանց բոլորին վերաբերող թղթածրարներ, թղթակցություններ, գրություններ գոյություն ունեն, ամեն ինչ պետք է օգտագործվի ու ապացուցվի»:

Նա ասում էր, որ արևելյան նահանգների 5.000.000 բնակչից 200.000 զոհվել է՝ մի մասը ռազմաճակատում, իսկ մյուս մասը «երկիրը գրավող արյունռուչտ չեթեների սրերի զոհ դարձան»: «Արյունռուչտ չեթեներ» ասելով, նա նկատի ուներ հայ կամավորներին ու հայդուկներին:

1914 թ. դեկտեմբերի 17-ին Իթթիհադի պարագլուխներից Էոմեր Նաջին Վռամյանին նամակով սպառնում էր, թե բռնված է մի լրտես, որը հաստատում է, թե «դաշնակցականները ռուսների հետ գործընկեր են... Ձեր եւ ձեր ընկերների անհաւատարիմ լինելը հասկանալի է... Կարլ Մարքսի, Կրոպոտկինի տեսութիւններով պարծեցող ձեր կուսակցութեան ռուսական ցարիզմի գործիք լինելը, 20-րդ դարի ամենածիծաղելի դրսեւորումներից մէկն է»[4]:

Օսմանյան խորհրդարանում Իլիասի հակահայկական մարտնչող կեցվածքը պատահական չէր: Նա վճռական դեր էր խաղացել Մշո դաշտի 70-80 հազարանոց հայ բնակչության կոտորածի գործում: Լինելով օսմանյան խորհրդարանի անդամ և Իթթիհադի շրջանային քննիչ, Հոջա Իլիասը բուռն գործունեու-

---

[1] **Մինախորեան Վ.**, 1915 թուականը, Արհաւիրքի օրեր, Վենետիկ, 1949, էջ 69:

[2] «Դրօշակ», 1990 թ. դեկտեմբեր, էջ 57:

[3] **Սասունի Կ.**, Թիւրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէյրութ, 1966, էջ 27-30:

[4] **Ա.-Դօ**, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թուականին, Ե., 1917, էջ 97:

թյուն ծավալեց քրդերի միջոցով հայերին բնաջնջելու ուղղությամբ: Հազարավոր հայ կանայք, ծերեր ու երեխաներ գոմերում, մարագներում ու չտեմարաններում ողջակիզվեցին: Նախճիրն ավարտելուց հետո նա իր հետ Պոլիս տարավ մի խումբ դեռատի հայ աղջիկների՝ նվիրելու Իթթիհադի մեծամեծներին:

Բուլանըխի նախկին կառավարիչ Շերիֆի վկայությամբ՝ «Հոջա Իլիասը քրիստոնյա աղջիկ բռնաբարելու բուռն մարմաջ ուներ»: Նա զինադադարի շրջանում մի քանի անգամ ձերբակալվեց, ապա տարվեց Մալթա, սակայն խելագար ձևանալով ազատվեց[1]:

«Տարօնի քիւրտ տարրը,- գրում է Վ. Փափազյանը,- իր «քաղաքական» հրահանգները ստանում էր Մշոյ քիւրտ բնակչութեան ղեկավար տարրերից եւ, մանաւանդ, Մուշի Իթթիհադի ակումբից...

Քաղաքի մահմեդական եւ հայ բնակչութեան յարաբերութիւնները, ընդհանուր առմամբ, եղել են մտերմական եւ խաղաղ: Սակայն կար մի ընտանիք, որը մոլեռանդ աւատական էր եւ ձգտում էր հայերին իրաւազուրկ դարձնել եւ որպէս ստրուկ օգտագործել: Այդ տնից էր հռչակաւոր Հոջա Իլիասը, Մուշին երեսփոխանը, որի մայրը յափշտակված հայուհի էր, ինքն էլ հայերէն գիտէր... երիտասարդ, նենգ, խիստ հայատեաց, քսու, գարշելի դեւերից մէկն էր»[2]:

«Ժողովրդի արձագանգ» թերթի 1918 թ. մարտի 22-ի համարում տպագրված է Դիարբեքիրի երեսփոխան Ֆեյզիի և Իլիասի զրույցից մի հատված: Ֆեյզիի այն հոխորտանքին, թե ինքը քաղաքի վանքում 600 հայի սպանել է տվել, Իլիասը պատասխանում է. «600-ը ի՞նչ է որ. ես Մշոյ համայն ժողովուրդն (հայ) արմատախիլ արեցի»:

Ս. Ակունին գրում է. «Ականատեսների բացարձակ վկայությամբ, Մուշի ոմբակոծման պահին, թնդանօթների գլուխը կեցած է չանսատակ Հոճա Իլիասը, որն ի վարձատրութիւն բարւօք ծառայութեան, իրավունք է ստանում իր սպիտակ փաթթոցի վրայ կրելու դեղին երիզ, ամենամեծ պատիւը իսլամութեան մէջ կրոնական առումով... (նա) մասնակցել է նաև Բաղէշի նահանգի ջարդին...»[3]:

Գ. Տեր-Կարապետյանը գրում է, որ Իլիաս Սամին Թալեաթ բեյի մտերիմ բարեկամն էր[4]:

Իլիասը խորհրդարանի նոյեմբերի 18-ի նիստում ասաց. «Պարոննե՛ր, այս խնդիրը մարդասպանությա՞ն, թե՞ արյունալի բախումների խնդիր է: Այս հարցը ես ձեր ներկայությամբ պիտի պարզաբանեմ: Թուրքերը հանցավոր հայտարարվեցին, ամբողջ ազգը հանցագործ որակվեց: ... (Մինչդեռ) իր սկզբնապատճառով այս խնդիրն արյունալի կռիվ էր...

Կառավարությունը ... կրոնակից և ոչ կրոնակից հպատակներին զորահա-

---

[1] **Sina Aksin,** *Istanbul Hukumetleri ve Milli Mucadele, h. II, Son Meşrutiyet (1919-1920), Istanbul, 1992, s. 354.*

[2] **Փափազեան Վ.,** նշվ. աշխ., էջ 322:

[3] **Ակունի Ս.,** Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Պոլիս, 1920, էջ 164:

[4] «Տարօնի դէպքերը Գեղամի ակնոցով». Կ. Սասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, 1957, Պէյրութ, էջ 842:

վաքի հրավիրեց և ամենահաստատուն զենքերը հայերին և հույներին տալով, ուղարկեց սահման..., իսկ ամենավատ, մաշված զենքերը տվեց արևելյան նահանգների քրդերին, որոնք իմ հայրենակիցներն են և որոնց ներկայացուցիչն եմ ես: ...(Սակայն) այս չարաշուք խնդիրն ինչպե՞ս ծագեց... Մի ճշմարտություն եմ ասելու, որը հանրահայտ է: Գարեգին էֆենդին (Գ. Փաստրմաճյանը) դեռևս Ռուսաստանում է գտնվում: Նա պատերազմի հայտարարության ժամանակ օսմանյան կառավարության դեմ կռվող չեթեներով Վանի վրա հարձակվեց...»:

Երբ տակավին բան չէր կատարվել, օսմանյան կառավարությանը վերջնագրի ձևով մի բողոքագիր հանձնվեց..., որն ամփոփված ձևով հետևյալ բովանդակությունն ունի: «Այսօր այլևս խոստումներով օրորվելու ժամանակը չէ: Հիսուն տարիներից ի վեր հայերի փայփայած ազգային նկրտումների քաղաքական ծրագիրը օսմանյան կառավարության կողմից անվերապահ ընդունել ենք պահանջում: Ընդունելու դեպքում... մենք զինված ուժերով Ռուսաստանին ռազմական օժանդակություն ենք ցույց տալու: Մեր ոչ բանակային ուժերով էլ ներքին խնդիրները խառնելով, կառավարության գործը դժվարացնելու ենք...

Պարոննե՛ր, միայն գրված չէ. իր շուրջը 20 հազար զինյալներ հավաքելով և, առանց առիթի, դժբախտաբար, Վանը գրավեց...

...Ընդհանուր բնակչության 70 տոկոսը ոչնչացավ և անհետացավ, կանայք ու երեխաները մեռան ու անհետացան: Արյունոտ իրադարձություններն այսպիսի ծագում ունեցան...

Քանի որ խոսքի ու հայացքների ազատություն, սահմանադրություն գոյություն ունեին և բոլոր իրավունքներն ապահովված էին, պետք չէր, որ զենքի ուժով իրավունքի պահանջատիրությանը դիմեին, հատկապես նկատի ունենալով, որ մենք բոլոր կողմերից շրջապատված էինք թշնամիներով: Ահա թե ինչո՛ւ ես ասում եմ, որ (այստեղ ասվածները հայերի ու հույների կողմից) բոլորը զրպարտություն են: Սրանք բոլորը սխալ զենքեր են, որոնք գործածվում են անմեղ օսմանցիների, մահմեդականների դեմ... Նրանց պարզապես նվաստացնելու համար են: Դրանով ո՛չ մարդկությունը և ո՛չ էլ որևէ մեկը չի խաբվի: (Բուռն ծափահարություններ)»:

Դեկտեմբերի 9-ի նիստում կարդացվեց պատգամավոր Գեղամ Տեր-Կարապետյանի նամակը խորհրդարանին: Ներկայացնում ենք նամակի չարադրանքը որոշ կրճատումներով:

«...Խորհրդարանական ժողովներու ժամանակ մեր մեծագոյն ընկերներէն ոմանք կոտորուած հայերու թիւը նշեցին մէկ միլիոն... Ուրիշ մեծագոյն մահմետական ընկերները սակայն պնդեցին, որ նահատակուածներու թիւը հազիւ 100.000-ի հասնի... Ես կարծում եմ, բուն հարցը, նահատակներու թիւէն առաւել, անմեղներու կեանքին դէմ գործուած ոճիրն է... Այլապէս վստահաբար կարելի է ասել, որ միայն Ճանիկում (Սամսոն), արևելեան Կարահիսարում, Տրապիզոնում եւ Կիրասոնում կոտորուած հայերի թիվը հասնում է 100.000-ի:

...Ինչո՞ւ անմեղ եւ որեւէ ձեւով պատասխանատուութիւն չկրող մարդիկ ջարդուեցին: Ըստ օրէնքի՝ բանակում ծառայող ունեցող ընտանիքները չպէտք է աքսորուէին, բայց արի ու տես, որ հայկական նահանգներում չաքսորուած ընտանիք չմնաց: Ինչպէ՞ս եղաւ, որ արեւելեան նահանգներում, այսինքն՝

Կարին, Սեբաստիա, Խարբերդ, Վան, Տիգրանակերտ նահանգներում եւ Ուրֆայի գաւառում բոլոր հայերը տեղահան անելով, բնաջնջելուն զուգահեռ ջիհադ յայտարարուեց և 1.5 միլիոնից ավելի հայ ցիրուցան եղան, ջարդուեցին ու ոչնչացան: Իմ ընտրական շրջանին պատկանող Մուշի, Բիթլիսի եւ դրանց հետ կապուած գաւառներում պատմութեան կողմից մինչև օրս չարձանագրուած վայրագութիւններ ու բռնութիւններ գործադրուեցին: Մուշ գիւղաքաղաքում թէ՛ տեղացի եւ թէ՛ դրսից ու շրջակայքից բերուած անմեղ հայերին բոլորին թնդանօթային ռմբակոծութեան ենթարկեցին, այրեցին ու բնաջնջեցին, մնացածին էլ այդ կողմերում ոչնչացրեցին... Մշոյ դաշտի գիւղերից շատերը նոյնպէս գնդակոծուել են եւ յարձակման ենթարկուելով դրանց բնակչութիւնը ցիրուցան է եղել:

Ընդհանուր ջարդի հետեւանքով այդ շրջանի բոլոր հայերի շարժական ու անշարժ ունեցուածքը, ինչպէս նաեւ ազգային ու կրօնական առումով նուիրական վանքերու եւ նման կառոյցներում եւ եկեղեցիներում պահուած շատ հին առարկաներ ջարդել ու փչացրել են, եւ բոլոր արժէքաւոր իրերը կողոպտել են, իսկ դրանցում բնակուած վանականներին սպանել ու բնաջնջել են: Այս ահաւոր բռնարարքներից յետոյ մնացած զգալի թուով երեխաներին բռնութեամբ կրօնափոխելով ցրիւ են տուել: Թէ նրանք ինչպիսի թշուառութեան մէջ են, բոլորիս է յայտնի...

...Նիւթական օգնութեամբ դրսէն բերուած գաղթականներին (մուհաջիրներին) ուղարկել են հայաբնակ վայրերում բնակեցնելու համար: ... Իրենց հարազատ հայրենիքում կոտորուած, ընդհանուր ջարդից ճողոպրած եւ զանազան թշուառութիւնների մէջ իրենց գոյութիւնը քարշ տուող հայ ազգի մնացորդներուն եւ հայ անհատներուն պատկանող կալուածքներն ու հողերն իրենց հին տերերից խլելուն եւ կողոպտելուն հետամուտ ձեռնարկների դէմ բողոքում եմ ամբողջ ուժով եւ հարցնում կառավարութեանը, թէ ո՞րն է իր կարծիքն այս հարցի կապակցութեամբ»[1]:

Գ. Տեր-Կարապետյանի այս նամակը մեղադրական լուրջ փաստաթուղթ է, և չնայած իր հակիրճության, ներկայացնում է ցեղասպանության բովանդակությունը կազմող բոլոր բաղադրիչները, համոզիչ փաստարկներով հերքում իրականությունը խեղաթյուրելու փորձերը*:

---

[1] Գ. Տեր-Կարապետյանի նամակը տե՛ս Վ. **Տատրեանի** «Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով», Վաշինգտոն, 1995, էջ 148-152:

* Գեղամ Տեր-Կարապետյան (Տատրակ):

Ծնվել է 1866-ին Տարոնի Խեյպյան գյուղում՝ հոգևորականի ընտանիքում: Լուսավորչական շարժման եռանդուն մասնակից: Նախնական կրթությունն ստացել է Ս. Կարապետի վանքում, ապա շարունակել Մշո Միացյալ ընկերության վարժարանում: 1885-1887 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Տարոնցի հայի բողոքի արտահայտիչն էր:

Մշո հայոց առաջնորդարանի քարտուղարն էր և 50 գյուղապետների հետ 1890-ին գնաց Կ. Պոլիս Գյուլիզարին առևանգող Մուսա բեկի դատավարությանը մասնակցելու: 1892-ին խիզախություն ունենալով ամուսնանալու նույն այդ Գյուլիզարի հետ: 1894-ին հարկադրված եղավ հեռանալ Մուշից և գործել Դիարբեքիրում: 1908 թ. ընտրվեց օսմանյան խորհրդարանի անդամ և մինչև 1918 թ., այսինքն մինչև իր մահը, մնաց խորհրդարանական:

Տատրակը բանասեր էր, պատմաբան, ազգագրագետ ու արձակագիր: Որպես այդպիսին շարունակեց Գարեգին Սրվանձտյանցի գործը: Գրի առավ պատկառելի քանակությամբ ազգա-

Վ. Տատրյանը Տեր-Կարապետյանի դիպուկ ու հստակ հարցադրումները, նրա զայրալից պոռթկումը բացատրում է Տարոնի հայության բնաջնջման եղանակների ու միջոցների առանձնահատուկ վայրագությամբ, ինչը հետևանք էր այդ շրջանում կոտորածների իրականացման երեք առանձնահատկությունների՝ ա) օսմանյան կառավարությունը, քուրդ ավազակախմբերը ու թուրքական բանակը ջարդերը կազմակերպեցին համագործակցված: բ) Խարբերդից բերվեցին բանակային ուժերը, որոնք ունեին թնդանոթային հզոր կարողություններ և նախաղեպը չունեցող ոմբակոծության ենթարկեցին Մուշի հայկական թաղերը և հիմնահատակ կործանեցին դրանք՝ փլատակների տակ ոչնչացնելով մեծ թվով բնակիչների: գ) Դաշտի բնակչության ստվար մեծամասնությանը, հիմնականում ծերեր, կանայք ու երեխաներ, հավաքելով գոմերում, մարագներում ու մեծ տներում՝ ողջ-ողջ այրեցին: Թուրքական 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան 1913-ի փետրվարին անձամբ տեսել էր, թե ինչ էր կատարվել 800 բնակիչ ունեցող Ջրիկ գյուղում:

Տարոնը ստվար մտավորականություն չուներ, նրանց շարքում Տատրակն առանձնակի տեղ էր գրավում: Եղեռնը, չնչին բացառությամբ, ոչնչացրեց

գրական նյութեր Մշո գավառի բառերով, ստեղծեց տարոնահայ բարբառի քերականություն, կազմեց Տարոնի վանքերի ինը ձեռագրերի հիշատակարաններ, որի միայն Բ հատորը պարունակում է 831 հիշատակարան: Հեղինակեց Սուրբ Կարապետի վանքի պատմությունը (2 հատոր): Հավաքեց ժողովրդական երգեր, հեքիաթներ, ավանդություններ: Հրատարակեց ուսումնասիրություն նվիրված հողային հարցին: Գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, ավանդավեպեր, «Տիրացուն և ժամկոչը», «Բարքային» վեպերը:

Տատրակի գրական-հրապարակախոսական գործունեությունը ծավալվել սկսեց զուլումի տարիներին, երբ արդուլհամիդյան հետադիմության հարվածներից չշմած արևմտահայ գրականությունն սկզբում սոսկեց, իսկ ապա վախվորած էր ձայներ արձակում: Քանի որ մամուլում դեռևս մտքեր արտահայտելու ինչ-որ հնարավորություն կար, գրականությունը տեղափոխվեց մամուլ նախապես թոթափելով այնպիսի հասկացություններ, ինչպիսին են ազատությունը, հայրենիքը, հայրենասիրությունը: Դատարկված հրապարակն աստիճանաբար գրավեց իրապաշտական հակումներով գրականությունը:

1884 թ. «Արևելքն» ու «Մասիսը» միավորվեցին ու դարձան գրական կյանքի առանցքը, որի շուրջը հավաքվեցին Ե. Տեմիրճիպաշյանը, Ա. Արփիարյանը, Գ. Զոհրապը, Հրանդը, Տ. Կամսարականը և ուրիշներ: Ազգայինի տեղը գրավեց սոցիալ-կենցաղային խնդիրներ արծարծող գրականությունը:

Այս համայնապատկերի վրա Տատրակի գրականությունն առանձնանում է իր ուրույն բնույթով ու հարցադրումներով: Մի պատառիկ Տարոնի Թիւ գիւղի նրա նկարագրությունից: Նախկինում զուտ հայաբնակ Թիւ գիւղը այլեւս «քիւրտերէ» եւ հայերէ խառն բնակչութիւն մը ունի: Երթալով հայերը նուազեր են ու քիւրտերը շատցեր... Այս գիւղն այսօր շեխնոց է կամ շեյխերու կացարան: Անոնք ունին իրենց մզկիթը, քովն ալ մետրեսէ մը: Մետրեսէին անունը կար, բայց անկիւնը չկար: Մխոռտած, մղլոտած երկու խցիկներ, որտեղ 20-30 ֆախիրներ կապրին...

Կ'այցելենք հայոց եկեղեցին ու դպրոցը, որ համեմատաբար ավելի օգտավետ ու կոկիկ չենք մըն էր... Եկեղեցին՝ հին, ալ նորոգուած իբր 40 տարի առաջ, իսկ դպրոցը սահմանադրութենէն յետոյ չինուած էր... Գիւղն ունի աղբիւրներ, առուակներ և ընդարձակ հողեր, մեծ մասամբ անցած շեյխերուն և անոնց կրոնակիցներու ձեռքը... Գիւղին վերը եւ վարը թէ՛ բլրակի վրայ եւ թէ՛ քովերը ցանուցիր կը մնան ավերակներու դերբուկները... Բլիակին արևմտյան կողմը... պատմական վանքին ավերակն է... Այս ավերակին մեջն էր, որ շեյխերը այս տարի պեղումներ կատարեր էին և եկեղեցիին խորանները բանալով ձեռք բերեր էին... եկեղեցական անօթներ, գրքեր և այլն»: («Տարոնի արծիվ», 1938 թ. № 2, էջ 56-58):

մտավոր գործունեությամբ զբաղվողներին:

Այսպես, Տարոն-Տուրուբերանի 500 հոգևորականից փրկվեց միայն քահանա Ե. Տեր-Պարսամյանը[1]:

Տարոնում հայ-քրդական և հայ-թուրքական լարվածությունը, որ սկսած 1915-ի հունվարից առճակատման բնույթ ստացավ, մարտ ամսին վերածվեց բախման, որի նախաձեռնողը թուրքերն էին:

Կ. Պոլսում Բուլղարիայի ներկայացուցիչ Կոլաչևը մայիսի 15-ին Մուշ քաղաքից գրեց. «Կառավարությունը քաղաքի թուրք բնակչությանը զենք է բաժանում անհրաժեշտության դեպքում հայերին կոտորելու համար: Մուշի և Բիթլիսի շրջանում կատարյալ անտերություն է: Քրդերն օրը ցերեկով սպանում ու թալանում են»: Գոմս գյուղում սպանեցին 10 հայի: «Համընդհանուր կոտորածի լուրջ վտանգ կա: Որքան ռուսական զորքերը մոտենում են, այնքան կառավարության հրամանով ավելի շատ հայ է կոտորվում»: Բուլանըխում ոչնչացվել է 7-8 գյուղ: Կոտորվում են Ախլաթի գյուղերը[2]:

Տարոնում իրադարձությունները զարգանում էին մասնակիից դեպի ընդհանուրը, միջադեպերից դեպի զանգվածային, համընդգրկուն ջարդերը:

ԳՈՄՍ. - 1915-ի փետրվարին Կորյունն ու Ռուբենը գնում են առաջինի հայրենի Գոմս գյուղը: Նույն օրը Գոմս են հասնում Աղջանի մյուդիր Զ. Ուսեն, չեյխ Մ. Էմինը և մի քանի ուրիշ քրդեր ու 15 ժանդարմներ: Կորյունը նրանց տեղավորում է իրենց տանը, հյուրասիրում: Մի քուրդ Կորյունին հասկացնում է. որ եկել են իրենց սպանելու: Կորյունն իր մարտիկներին ու ընտանիքի անդամներին տնից թաքուն դուրս է հանում, խոտը լցնում է տան ու գոմի դռների առաջ, դրանք փակում ու կրակ է տալիս: Կրակի միջից մյուդիրը բղավում է, թե ինքը դավադրությանը մասնակից չէ: Կորյունը նրան և իրեն ճշմարտությունն ասող քրդին կրակից հանում է, իսկ մյուսներն այրվում են:

Դավադրության հեղինակը Սերվեթն էր: Պատերազմը հայտարարված էր: Հաջորդ օրը նա Խարախանյանից ու Վ. Փափազյանից պահանջում է՝ Կորյունին ու Ռուբենին հանձնել իշխանություններին և Վ. Փափազյանին պատանդ է պահում: Վերջինս պահանջում է հետաքննություն անցկացնել մեղավորին պարզելու համար: Փափազյանի, զորքերի հրամանատար Վասրֆի, Բուլանըխի գայմագամ Էսադի և Հազոյի մյուդիր Սուլեյմանի ուսումնասիրությունները հաստատում են դավադրության փաստ, որի հետևանքով Գոմսի բնակչության մեծ մասը լքել էր հայրենի գյուղը, նրանցից չատերին խեղդել էին Արածանիի ջրերում: Քրդերը կողոպտել էին գյուղի տները, ավելի քան 100 կանանց ու երեխաների փակել էին անասնագոմերում:

Այս դեպքից մի քանի օր անց ոստիկանները խուզարկում են Դաշնակցության Մշո ակումբը ու դա փակում:

ՅՐՈՆՔ. - Դասալիքներ բռնելու համար հունվարի 25-ին 500 զինվոր չավուշ Իսմայիլի հրամանատարությամբ լցվում է Դաշտի գյուղերը: Գլխավոր խնդիրներից մեկը ռազմաճակատի հարևանությամբ գտնվող Յրոնք գյուղի

---

[1] **Թէոդիկ,** Ամէնուն տարեցոյցը, ծանոթ. № 47, էջ 124:

[2] "Геноцидът над арменците", ф. 321, оп. 1, д. 2462, л. 76.

հայերին հաշվեհարդարի ենթարկելն էր՝ «բանակի թիկունքն ապահովելու համար»: Տեղի է ունենում բախում Ցրոնքի մարտական խմբի հետ: Գյուղի երիտասարդությունը հաջողում է հեռանալ: Ցրոնքում 150 տուն այրվում է, իսկ ավագանին ձերբակալվում և տարվում է Մուշ:

Գոմսի և Ցրոնքի դեպքերի մասին Լեփսիուսը գրում է, որ մարտի սկզբին կոմիսար Ռահիմ բեյը և լեյտենանտ Ջևդեթ բեյը 40 զաբթիեներով գալիս են հայկական Ցրոնք գյուղը: Մի փախստականի հետ փոխհրաձգության ժամանակ ժանդարմներից մեկի ձին սպանվում է: Ժանդարմը, որպես հատուցում, գյուղացիներից վերցնում է մի լավ ձի, նրանց ստիպում վճարել 40 լիրա սատկած ձիու դիմաց, կրակի է տալիս 25 տուն, գյուղի տղամարդկանց հարկադրում ցատկել թրի սայրի վրայով և բռնագրավում է հայերի արտերը: Զաբթիեների հրամանատարը, «որպես չնորհակալություն», բռնաբարում է իրեն հյուրընկալողի հարսին...

Նման բաներ կատարվում են նաև մյուս գյուղերում, որտեղ մնացած այս կամ այն չափով աշխատունակ հայ տղամարդկանց քշում էին ճանապարհաշինարարական և բեռնափոխադրման գումարտակներ (ամելեթաբուրի), առանց հաշվի առնելու, որ նրանց ընտանիքները մնում էին առանց կերակրողի: Այսպես, օրինակ, Գոմս գյուղից, որտեղ ընդամենը 70 տղամարդ կար՝ ներառյալ ծերունիները, հավաքեցին 50 եզ և 45 տղամարդ, իսկ պակասող հինգ տղամարդու դիմաց պահանջեցին զինծառայությունից ազատվելու գինը: Աղջեմակի մյուդիրը, որ եկել էր Գոմս, ուզում էր այդքանով բավարարվել, սակայն նրա ուղեկից քուրդ Մեհմեդ Ամինը հինգ տղամարդու պակասը պատրվակ դարձրեց գյուղապետին ճիպոտահարելու և յոթը հայ սպանելու համար: Գործը հասավ ընդհարման: Սպանվեց յոթը ժանդարմ և քսան հայ:

Լեփսիուսը նկատում է. «Չնայած բոլոր հալածանքներին, հայերն իրենց հանգիստ էին պահում, ուշադրություն չէին դարձնում թուրքերի ու քրդերի ոտնձգություններին և չէին գայթակղվում ապստամբությունով»[1]:

Մարտի վերջին՝ ռազմաճակատ մեկնող թուրքական 2000 զինվոր կանգ է առնում 80 տուն ունեցող Ջրիկ գյուղում: Գյուղացիներն ընկնում են անելանելի կացության մեջ և առաջնորդարանի օգնությունն են խնդրում: Առաջնորդի փոխանորդ Ե. Պարսամյանը գնում է Սերվեթի մոտ խնդրելու, որպեսզի զորքերը հայերի տներից հանվեն և տեղավորվեն զորանոցում: Սերվեթն ատրճանակ է հանում, բայց Պարսամյանը հաջողում է նրան գետին տապալել ու փախչել: Այս գյուղում կատարվածի մասին Վեհիբ փաշան Մաղհարի հանձնաժողովին ցուցմունք տվեց. «Ջրիկ գյուղի հայ տղամարդկանց, կանանց ու երեխաներին ձերբակալելով, գյուղը հրկիզեցին, բնակչությանը ոչնչացրին, ինչը իսլամի պատմության մեջ նմանը չուներ»[2]:

Մի քանի օր անց Սերվեթի մոտ է լինում Մուշի առաջնորդ Ներսես եպս. Խարախանյանը, որը մութեսարիֆի հետ հանդիպումից հետո Վահան Փափազյանին ասում է. «...Անիծուած թշուառականը գայլի դէմք էր ստացած, չարա-

---

[1] ***Լեփսիուս Յո.***, *նշվ. աշխ., փաստ. №№ 17, 21, 27, 42:*

[2] *Դե № 31 ծանոթ., ծրար 7, № 178, Հիշատակագիր վկայութիւն, թ. Գ:*

գուշակ բան մը կար անոր հայեացքին մէջ...»: Դա առաջին ձնծաղիկն էր: Նախկին բարեհամբույր Սերվեթը, սկսած ապրիլ ամսից, «գայլի կերպարանք ստացած էր»:

Շուտով Խարախանյանը տիֆով հիվանդանում է և ապրիլի 23-ին (Ն.տ.) մեռնում է: Տիֆով ծանր հիվանդանում է նաև Վ. Փափազյանը:

Կ. Պոլիսը, նկատի ունենալով Վանի և Բաղեշի վիլայեթների հայերի զինված լինելը, ըմբոստ պատմությունը, որոշում է դրանց հայությանը ոչ թե տեղահանել, այլ բնաջնջել տեղում, վախենալով, որ տեղահանության դեպքում հազիվ թե հնարավոր լիներ զսպել հայերի ընդվզումը: «Գործն» ավելի անվտանգ առաջ տանելու համար որոշվում է ոչնչացումն իրականացնել գավառ առ գավառ՝ դրանք միմյանցից մեկուսացնելու պայմաններում: Տեղում բնաջնջման հաջողությունն ապահովելու համար պահանջվում էր լուծել երկու կարևոր խնդիր՝ ա) դա իրականացնել քրդերի միջոցով և լուրջ աշխատանք տանել քրդերին դահճի դերի համար նախապատրաստելու ուղղությամբ և բ) ճնշումների, հարստահարությունների, սպանությունների ու ջարդերի միջոցով հայությանն այնքան հյուծել, որ չկարողանա լուրջ օգնություն ցույց տալ բնաջնջման քաղաքականությանը:

Նույն նպատակին էր ծառայում մայիս ամսին Վանի, Մանազկերտի, Ալաշկերտի և Բուլանըխի մահմեդական փախստականներին՝ տղամարդ, կին, երեխա, անասունով, ունեցվածքով, Տարոնի դաշտում կենտրոնացնելը: Քրդերը ողողեցին հայահոծ դաշտը՝ սկսած Բաղեշից մինչև Ս. Կարապետի վանքը:

Սերվեթը մեծ եռանդով էր իրականացնում զորակոչը և զինակոչիկներ ու չալակավորներ հավաքագրելու միջոցով հնարավորին չափ փոքրացնում էր զենք կրելու ընդունակ հայերի տեսակարար կշիռը:

ԿԱՐԱՋՈԲԱՆ. – Այս գյուղն էին ապաստանել մերձակա բնակավայրերի հայերը: Թշնամին չրջապատում է Կարաչոբանը: Հայերին օգնության են հասնում Խնուսի և Կոփալի մարտական ջոկատները: Հայերը հերոսական դիմադրություն են ցույց տալիս: Ճեղքելով թշնամու օղակը՝ նրանց կռվող ուժերի մի մասը գնում միանում է ռուսական զորքերին, իսկ մյուս մասը կռվելով բարձրանում է լեռ, բայց այստեղ երկար մնալ չի կարողանում քաղցի պատճառով և իջնում է Դաշտ, որտեղ և ընկնում է թուրքերի ձեռքը:

ԿԱՐԱՔՅՈՓՐՅՈՒ. – Այս գյուղը հարձակման է ենթարկվում մայիսի 4-ին: Գյուղացիները թշնամուն համառ ու տևական դիմադրություն են ցույց տալիս, բայց ի վերջո ընկճվում են: Գյուղը կողոպտվում է, գյուղացիները ոչնչացվում են:

Ինքնապաշտպանական կռիվներ են մղում նաև Դուման, Մարուֆ, Շաբադին, Յաղջամելիք, Բուրնուզ, Խովլա, Խալչաուշ գյուղերը, բայց չկարողանալով երկար դիմադրել թշնամու գերակշիռ ուժերին՝ կոտորվում են:

Մայիսի 1-10-ի թուրք-քրդական հարձակումները հայկական գյուղերի վրա խնդիր ունեին Դաշտի հայերին ոչնչացնել մինչև ռուսական բանակի գալը:

Այդ հարձակումները ղեկավարում էր Քյուչյուկ Քյազիմը՝ Իթթիհադի ներկայացուցիչը, որի ջարդարար վաշտն ստացել էր «մսագործների վաշտ» անունը:

Սակայն սարսափելին առջևում էր:

Ծրագրված էր ամբողջ տարոնահայությանը բնաջնջել մեկ օրվա ընթաց-

քում: Ջարդարարները խմբերի էին բաժանվում: Ամեն 10 հոգանոց ժանդարմական խմբին կցում էին 500-1000 քրդի՝ մեկ գյուղի կամ մի քանի գյուղի բնաջնջման համար: Ժամանակակիցներից մեկը՝ Մ. Բարխյանը պատմում է, թե Մուշից իրենց գյուղ եկավ Մահմուդն ու հայտարարեց. «Վաղը, Վարդավառի կիրակի, հայերուդ ջարդը կը սկսի: Շրջանները բաժնուած են այսպէս, Հաճի Մուսաբէկ, խոյթեցի, պելեքցի, բագարանցի, ոչկորտացի, բատկանցի և դեռ շատ մը աշիրեթներով, որոնց կը միանայ «միլլի թապուրը», Պիթլիսէն մինչև փոանք Նորշէն»[1]:

Այլ խոսքով ասած, տարոնահայության բնաջնջման նպատակով գործածվում էին քրդական ամենահզոր ցեղերն ու աշիրեթները:

Այդ պայմաններում մեծանում էր նաև կրոնական գործոնի դերը ոչնչացման քաղաքականության կիրառման գործում:

«Բոլոր երիտասարդ թուրքերը,- գրում են Ս. և Մ. Բդեյանները,- ոտքի վրայ էին, գիշեր ցերեկ կ'աշխատէին քրտական ցեղապետները, շէյխերը քաղաք հրաւիրելու եւ համոզելու, որ մեր խալիֆան ճիհատ հոչակած է բոլոր կեավուրներուն դէմ, բայց քանի որ Գերմանիոյ թագաւորը խոստացած է մեր սուլթանին, որ յաղթութենէն ետք իր ամբողջ ազգով եւ դաշնակիցներով պիտի ընդունի հաղ տինը (ճշմարիտ կրոնը), այդ պատճառով ալ՝ մեր դաշնակիցներէն դատ միւս բոլոր կեավուր ազգերը պիտի ջնջենք աշխարհի երեսէն եւ կամ մեր Ղուրանը ընդունիլ պիտի տանք անոնց»[2]:

«Մշոյ դաշտը,- գրում է Ա. Շիրակյանը,- աւելի արիւնալի դէպքերու թատր հանդիսացաւ: Հոս նաեւ պատերազմի սկիզբէն կառավարութիւնը նոյն միջոցներուն դիմեց, սակայն առաւել խստութեամբ՝ բռնագրաւում, կողոպուտ, սպանութիւն, այր մարդիկը քշեցին դէպի ճակատ կամ որպես շալակաւոր եւ կամ ամելէ թապուրիներու մէջ աշխատելու համար. շրջանի քիւրտերն աւելի գործօն մասնակցութիւն ունեցան թալանի ու սպանութիւններու մէջ... Բանտերը լեցուեցան անմեղ հայերով, քանի մը հոգի նոյնիսկ կախաղան հանուեցան Մուշի մէջ»[3]:

Տարոնում արդեն գարնանը բացեիբաց խոսում էին, որ թուրքական կառավարությունը որոշել էր ոչնչացնել հայերին: Հանրահայտ ավազակապետ Մուսան հայերին ասում էր. «Հրաման կա՝ ով որ օսմանների հողում տա Հիսուս Քրիստոսի անունը, չպետք է կենդանի մնա»: Մի ուրիշ քուրդ՝ Թամո Ալին հայտարարեց. «Սուլթանից հրաման է ստացված, որ բոլոր հայերը պետք է անգթորեն ոչնչացվեն... Զորս-հինգ օր հետո այստեղ էլ կսկսվի կոտորածը...»[4]:

Մայիսի սկզբներին ռուսական բանակը հասել էր Բուլանըխը Տարոնից բաժանող Քոսուրի լեռնաշղթա, Մուշ քաղաքից մոտ 50 կմ հեռավորության վրա գտնվող Ցրոնք գյուղը:

Թուրքական նահանջող բանակն ամբողջությամբ կազմալուծված ու բարո-

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 847:*

[2] ***Բդեյեան Ս.,*** *Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, էջ 305:*

[3] ***Շիրակեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 44:*

[4] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 219, Ե. Կարապետյանի ձեռագիրը:*

յալքված էր: Քուրդ անկանոն զորքերը՝ համիդիները, որոնք առանց այդ էլ դժկամությամբ էին պատերազմին մասնակցում, ռուսական զորքերի հզոր հարվածներից ահաբեկ, խուճապահար լքում էին ռազմաճակատը և փախչում Մշո դաշտ, ինչը վարակիչ օրինակ դարձավ նաև Թուրք ու արաբ զինվորների համար:

Հուսալքված ու մոլորված էին նաև Մշո Թուրքական իշխանությունները և Թուրք ու քուրդ բնակչությունը:

Փետրվար-մայիս ամիսներին քաղաքում տիրող կացության մասին Վ. Փափազյանը գրում է. «Շուկայէն կ'անցնէի՝ բացարձակ ամայի, երբեմն այս ու այն անկիւնէն երկչոտ դեմքեր կ'երեւային, որոնք կը փութային աննշմարելի անհետանալ: Փողոցներու երկայնքին՝ ժամանակին զինուորական համազգեստ եղած ցնցոտիներով՝ տասնեակ մը դիակներ ընկած էին ցեխերու մէջ, կամ հողի գոյն ստացած կմախքներ, որոնք մահուան հոնդիւններ կ'արձակէին, բորոտ ու զազրելի շուներու խումբեր դիակները այս ու այն կողմ կը քաշքշէին: Տեսայ երկու շուներ, որոնք դեռ կենդանի զինուորի մը կոկորդը կը պատռէին...»[1]:

«Շատ մը արաբ զինուորներ,- պատմում է Մ. Բդեյանը,- կծկուած կամ պառկած կը տեսնէինք շուկայի մէջ, թաղերու փողոցներու անկիւնները, ուր վայրկեանէ վայրկեան կը սպասէին մահուան: Թրքական բարձրաստիճան պաշտօնեաները, քաղաքային կամ զինուորական իրենց անցուդարձի միջոցին, անտարբեր նայուածքներ կը նետէին այդ տարաբախտներուն վրայ ու կը հեռանային: Օրերով այդպիսի մահացածները կը մնային հոն՝ լքուած վիճակի մէջ»[2]:

Տեղի Թուրք բնակչությունն, իրեն վտանգված զգալով, միջոցներ էր փնտրում հայերի հետ հարաբերությունները բարելավելու համար: Նրանք տագնապում էին, որ ռուսները քաղաքը գրավելու էին և իրենք փախստական էին դառնալու: Դրանից խուսափելու համար քաղաքի հայ բնակչության հետ համաձայնության եկան՝ Թուրքական իշխանության պայմաններում իրենք են պաշտպանելու հայերին, իսկ ռուսների գալուց հետո՝ հայերը՝ Թուրքերին[3]:

Ժամանակակիցներից մեկը նկատում է. «Յուսահատութիւնը կը ծանրանար Թիւրք կառավարութեան եւ ազգաբնակչութեան վրայ, որ, լեղապատառ, բարեկամներ ու ապաստաններ կը փնտռէ հայութեան մօտ: Խուճապ է»[4]:

Տագնապի մեջ էր նաև Սերվեթը, որը կառավարչության փաստաթղթերը, արխիվը, ինչպես նաև իր ընտանիքն ուղարկեց Խարբերդ: Նա երկդիմի ճարպիկ քաղաքականության միջոցով աշխատում էր հայերի հավանական վտանգը չեզոքացնել և նրանց բնաջնջման համար պայմաններ ստեղծել: Այդ նպատակն էր հետապնդում, օրինակ, «Թուրքական անձնագիր» չունեցողներին քաղաքից հեռացնելու նրա պահանջը, որն առաջին հերթին վերաբերում էր ՀՅ Դաշնակ-

---

[1] ***Փափազեան Վ.,*** *նշվ. աշխ., էջ 350:*

[2] ***Բդէյեան Ս.,*** *նշվ. աշխ., էջ 325:*

[3] ***Շարաֆեան Ե.,*** *Տարօնի եղեռնը: Ականատեսի վկայութիւններ, Սան Ֆրանցիսկո, 1965, էջ 13:*

[4] *Տե՛ս* ***Տարօնեցի Ա.,*** *Պատասխանատուները Տարօնի եղեռնին, Սան Ֆրանցիսկո, 1966, էջ 154:*

ցության «դրսից եկած» գործիչներին, մասնավորապես Ռուբեն Տեր-Մինասյանին և Վահան Փափազյանին: Վերջինիս հարցում վճռական միջոցներ ձեռնարկելուց խուսափում էին, քանի որ օսմանյան խորհրդարանի անդամ էր, իսկ Սերվեթի երեկվա «եղբայր» Ռուբենին հետապնդում էին և վերջինս հարկադրված եղավ անցնել ընդհատակ ու հիմնավորվեց Սասունում:

Նրան Սասունից վար բերելու Սերվեթի ու Իլիասի բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Այդ ջանքերը գործադրվում էին «եղբայրությունը վերականգնելու» քողի տակ: Իլիասը նամակ գրեց Ռուբենին՝ հորդորելով, թե պատվաբեր չէր «ավազակի նման փախած մնալ» և «գլխով էր երդվում», որ երաշխավորում էր նրա անվտանգությունը:

Հայերի հետ հարաբերությունների կարգավորումը՝ նպատակ ուներ նրանց աչքերին թոզ փչելու միջոցով ժամանակ շահել մինչև ճգնաժամային վիճակից դուրս գալը: Ռումելիցի երիտասարդ ու եռանդուն կառավարչին հաջողվում էր խաբել հայերին, մինչև վճռական պահը մնալ նրանց «բարեկամի» դիմակի հետևում, ինչը օգնում էր դեպքերի զարգացումը տանել թուրքերի համար ցանկալի ուղղությամբ:

Հայերին սիրաշահելուն զուգահեռ շարունակվում էր նրանց «խեղճացնելու», ամենաչնչին հնարավորություններից իսկ զրկելու, ռազմավարական նշանակություն ունեցող կետերից նրանց քշելու քաղաքականությունը:

Սերվեթի մասին կարծիքները միասեռ չէին: Կան նրան միանգամայն այլ բնութագիր տվող աղբյուրներ: Ինչ-որ չրջանների 1915 թ. փետրվարի 25-ին կազմած «Համառօտ տեղեկագիր Հայաստանի կացութեան ըստ Կարինի, Մուշի, Վանի եւ Սեբաստիոյ մէջ հայերու դէմ կիրարկուած խժդժութիւններուն» անունը կրող անստորագիր փաստաթղթում Սերվեթի մասին ասվում է, որ եթե նա «մնալու ըլլայ, խռովութիւններն անխուսափելի են: Ջղագար, մեծամիտ, դաւադիր թիւրք մըն է, արդարութիւն եւ թաքթ բնաւ չունի... Շրջանը սարսափի մէջ է: Ասպարէզը զինուորի անուան տակ քիւրտ հրոսակներունն է... Այս միւթեսարիֆը եթե չփոխուի, կարող են այստեղ Ատանա մը ստեղծել»[1]:

Մարտի 19-ին իշխանությունները տիրանում են Կեդրոնական վարժարանի շենքին, որը քաղաքի ամենավերին մասում էր և հնարավորություն էր ստեղծում խզել կապը հայաբնակ Վերին և Ձորու թաղերի միջև ու հսկողության տակ առնել, Ձորու և սուրբ Մարինե թաղերը, ինչպես նաև Ծիրինկատարից մինչև Մուշ ձգվող ձորը: Շենքը առանձնակի նշանակություն ուներ նաև գլխավոր խնդրի՝ Սասունը Տարոնից մեկուսացնելու, լուծման համար:

Սերվեթի քայլերից ամենաերկդիմին այն էր, որ հանձնարարեց Հակոբ Կոտոյանին 200 հայ զինվորների հետ երկու թնդանոթ տեղափոխել ռազմաճակատ՝ Բուլանըխի Քոսուրի լեռները: Այդ քայլը թելադրված էր նախ նրանով, որ Մուշ քաղաքը վերածվել էր զինվորական փոխադրությունների միջանկյալ կայանի, որտեղ բերում էին զորակոչիկներին, մի քանի օր զինվորական մարզանքվարժություններ սովորեցնում ու հապշտապ ռազմաճակատ ուղարկում: Քա-

---

[1] *ԴԵ, ծրար 19, Ղ, № 419, 420:*

ղաքում փաստորեն մնայուն՝ ստացիոնար, զինվորական ուժ գրեթե չկար: Համենայն դեպս, ղրանց թիվն այնքան փոքր էր, որ տարրական պահանջներ բավարարել չէին կարող, մի հանգամանք, որը տեղական իշխանություններին դրել էր անզոր վիճակում:

Դեռ փետրվարի 13-ին Պոլեյան Մջոն 80 հոգանոց զինված խմբով բարձրացավ Առաքելոց վանք որպես բողոքի ցույց իշխանությունների քաղաքականության դեմ: Հաջորդ օրը վանքում ոստիկանության հետ բախում է տեղի ունենում, որի ընթացքում սպանվում է վերջինների հրամանատարը մի քանի ոստիկանների հետ: Նախկիններում նման դեպքին հաջորդում էին զանգվածային ահաբեկման միջոցները, եթե ոչ ջարդերը: Իսկ այս անգամ Մջոյի խմբին հետապնդելու համար անգամ զորք կամ ոստիկանություն չուղարկվեց, այլ բավարարվեցին սպանվածների դիակները Մուշ տեղափոխելով: Բայց նրանց թաղման ժամանակ Սերվեթի լեղուն բացվեց:

Մինչ այդ, գրում է Վ. Փափազյանը, Սերվեթը «մեռելի ուժգնութեամբ՝ սմքած, գլուխը կորսնցուցած, թեւս մտնելով տարավ փողոց եւ գրեթէ աղաչական եղանակով խնդրեց ժամ առաջ հեռացնել տալ Մջոն վանքէն»[1]:

Հավանաբար մութեսարիֆի այդ ընկճվածությունը նույնպես դեր խաղաց Կոմսի հետևյալ եզրահանգման համար. «Եթէ այս օրերուն պայթէր կռիւը, կրնանք հաստատապէս ըսել, որ Տարօնը փրկուած պիտի լինէր, զօրք գրեթէ չկար... Կռիւը պիտի ընդլայնուէր, մերինները լեռներէն կ'իջնէին, քաղաքը կը գրաւէինք եւ կը կապուէինք ռուսական յառաջացող բանակին»[2]:

Վ. Փափազյանն այսպես մտածում էր տասնամյակներ անց, իսկ այն տարիներին դարձավ գլխավոր դեմքերից մեկը, որոնք խափանեցին մի նոր «Վանի ինքնապաշտպանության» ծնունդը:

«Մուշից եկած զորքերը վանքը խուզարկելիս,- գրում է Յո. Լեփսիուսը,- առանց պատճառի վեճ սկսեցին, որն արյունալի վախճան ունեցավ: Մուշի մութեսարիֆը ջոկատներ ուղարկեց, սակայն ընդհարման ժամանակ զոհված թուրքերի դիակները տարան Մուշ և մութեսարիֆը դամբանաճառում բացեիբաց ասաց. «Ձեր գլխի յուրաքանչյուր մազի դիմաց հազար հայ եմ մորթել տալու..»[3]:

Սերվեթը որոշ ժամանակ անց Առաքելոց վանք նոր զորքեր է ուղարկում, որոնք վանքը կողոպտում են: Ներսես եպս. Խարախանյանն ընդվզում է: Կողոպուտի մի մասը հետ է տրվում: Տարոնի վանքերում նոր զորքեր տեղադրվեցին, Ս. Կարապետում՝ 200, Ս. Հովհաննեսում և Առաքելոց վանքերում՝ 150-ական հոգի[4]:

Այնուամենայնիվ, փետրվար-մարտ ամիսներին, իրոք, հնարավորություն կար տեղական իշխանությունների դեմ եռանդուն գործողությունների դիմելու և ինչ-որ հաջողության հասնելու համար:

---

[1] **Փափազեան Վ.,** *նշվ. աշխ., էջ 342-343:*

[2] *Նույն տեղում, էջ 356:*

[3] **Լեփսիուս Յո.**, *նշվ. աշխ., փաստ. №№ 21, 27:*

[4] **Պարսամեան Ե.,** *նշվ. աշխ., էջ 41:*

Մինչև Բուլանըխ մեկնելը Հ. Կոտոյանը Դաշնակցության տեղական կոմիտեին առաջարկեց մի ծրագիր, որի էությունը քաղաքը գրավելն ու առաջացող ռուսական բանակի հետ կապվելն էր: ՀՅԴ տեղական կոմիտեում այս առաջարկությունը քննելու ժամանակ Հ. Կոտոյանը մանրամասնեց իր ծրագիրը՝ ռուսական բանակը մի օրվա հեռավորության վրա է, թուրքական բոլոր ուժերը զբաղված են հակառակորդի առաջխաղացումը կասեցնելով, քաղաքում բանակային ուժեր չկան: «Նոյնպէս անոնց կը յայտնէ, որ երկու թնդանօթները փոխադրող պաշտօնեաներեն մէկն ալ ինքն է եւ իրեն ընկերացող խումբ մը հայ տղաներ՝ բոլորն ալ թիւրք բանակին մէջ մարզուած երիտասարդներ, եւ երբ իրենք՝ Ցրօնք գիւղի կոնակը գտնուող Քոսուրայ լեռները հասնին, պիտի սկսին թշնամին հարուածել կոնակէն: Իսկ դուք ալ հոս, քաղաքի մէջ, անմիջապէս կը յարձակիք կառավարական զինարանին վրայ, կը գրաւէք զայն, իշխանութիւնը ձեռքերնիդ կ՚առնէք եւ կը տիրանաք քաղաքին, ուր Խիանքի կողմերէն բերուած անմարդ ու անկազմակերպ փոքրաթիւ ոյժ մը կը գտնուի, եւ ի վիճակի պիտի չըլլայ լուրջ դիմադրութիւն ցոյց տալու:

Սասուն հաւաքուած մեր ֆետայիներն ալ վար կու գան եւ միանալով քաղաքի հայ ոյժերուն. ամբողջ շրջանի իշխանութիւնը ձեռքերնիս կ՚առնենք»:

Նա դիմելով հավաքվածներին, ասաց. «Աստուծոյ սիրոյն, այսօրը մեր օրն է, պէտք է օգտուինք այս հաղուագիւտ պատեհութենէն եւ գործադրենք մեր այս փրկարար ծրագիրը»[1]:

Վ. Փափազյանը պատասխանեց. «Վանը ապստամբուած է, այո, բայց ի՞նչ պիտի ըլլայ վերջաւորութիւնը, չենք գիտեր: Յետոյ, ռուսական բանակը շատ յաջող կերպով կը յառաջանայ, մենք պէտք է շատ անտարբեր ցոյց տանք ինքզինքնիս, կառավարութեան դէմ որևէ ցոյց չկազմակերպենք: Արդէն ռուս զինուորները չուտով կը գրաւեն դաշտն ու քաղաքը, եւ ժողովուրդը կը փրկուի»[2]:

Ժողովը մերժեց Հ. Կոտոյանի առաջարկությունը: Նա մեկնեց Ցրոնք և ցրեց թնդանոթները տեղափոխող ջոկատը:

Այո՛, Տարոնը բոլոր հնարավորություններն ուներ կրկնելու Վանի օրինակը, թոթափելու թուրքական լուծը և ապավինելու ռուսական բանակին: Այո՛, ունե՛ր, և ուներ ոչ միայն յաթաղանի դեմ պայքարի իր դարավոր փորձով, այլև իր մեծաթվությամբ: Բիթլիսի նահանգի 150.000 հայության դիմաց կար 30.000 թուրք, իսկ տեղի քրդությունը դեռ չէր մոռացել մեկ տարի առաջ երիտթուրքերի գործադրած բռնությունն իր նկատմամբ: Վճռական դեր կարող էր խաղալ նաև այն, որ, ինչպես ռուս ականատեսն է նշում, Տարոնի հայությունը «չնորհիվ իր կազմակերպվածության և ինքնապաշտպանվելու ընդունակության», մինչև հունիսի սկիզբն աշխարհատարածքը զերծ պահեց կոտորածից: «Այստեղ հայերի սրտերում սարսափի փոխարեն իշխում է պատրաստակամությունը մինչև վերջ պաշտպանել իր պատիվն ու կյանքը»: Նույն հեղինակը նշում է, որ

---

[1] **Շարաֆեան Ե.,** նշվ. աշխ., էջ 13-14:

[2] Նույն տեղում:

սկզբնական շրջանում Տարոնի հայությունը բացարձակապես անպատրաստ էր, և, եթե Թուրքերն այն ժամանակ սկսեին ջարդը, հայերն անզոր կլինեին դիմադրելու: Բայց Թուրքերը ջարդերը այլևայլ պատճառներով չսկսեցին, իսկ հայերը հասկացան, թե ինչ է իրենց սպասում և սկսեցին նախապատրաստվել: Նրանք հաջողեցին ռազմաճակատից վերադարձող զինվորներից, մասնավորապես արաբներից, զենք ու զինամթերք գնել չնչին գներով: Տարոնի երիտասարդությունը փաստորեն, չզորակոչվեց կամ բանակում չմնաց: Մշո կողքին Սասունն էր իր «հպարտ, ազատասեր հերոսներով»[1]: Անհրաժեշտ էր կատարել առաջին բախտորոշ քայլը: Բայց այդ քայլը չարվեց և չարվեց ոչ թե օբյեկտիվ պատճառներով, այլ որովհետև ո՛չ Ռուբենը և ո՛չ էլ Կոմսը Արամ Մանուկյան չէին: Երկուսն էլ կուսակցական գործակատարներ էին, զուրկ քաղաքական նախաձեռնությունից, պատասխանատվությունն իրենց վրա վերցնելու կամքից, զուրկ սեփական ժողովրդին նվիրվածության, անձնազոհության պատրաստակամությունից:

Ճիշտ է ներկայացնում Հ. Տեր-Զաքարյանը. «Մէկ ներկայացուցիչը Տարօնի բոլոր աչքառու ոյժերու հետ մէկտեղ ծալապատիկ նստած Սասունի լեռնաշուքերը, ամբարտաւան սոնքումով մը՝ սպասեց, որ ամեն ինչ իր ոտքը երթայ, իսկ միւս պետը՝ քաղաքի մեջ կծկուած, գաղտագողի լուրեր հաւաքեց»[2]:

Տարածված կարծիքը, թե Ռուբենի ղեկավարած մարտական խմբերի պայքարի շնորհիվ հետաձգվեց Տարոնի և Սասունի հայերի հաշվեհարդարը՝ ճիշտ չէ: Այդ հաշվեհարդարը ձգձգվեց Սասունի հանդեպ Թուրքական իշխանությունների ավանդական վախի ու զգուշության պատճառով: Սասունը հայերից դատարկելու առաջին երկու փորձերը (1894 թ. և 1904 թ.) չէին հաջողվել և բացառված չէր, որ նույնը կարող էր կրկնվել նաև 1915 թվին: Ռուսական բանակը մայիսի սկզբներին արդեն Վանում էր և առաջ էր շարժվում դեպի Մուշ: Ռազմաճակատային հոգսերի ու տարոնահայության բնաջնջման դժվարությունների զուգակցումը Թուրքերի համար այդ խնդրի լուծումն ավելի քան բարդացնում էին:

Պատմական վճռորոշ պահին անվճռականությունն ու պայքարելու կամքի թուլությունը հանդիսացան հայության այդ հատվածի բնաջնջման հնարավորության գլխավոր պատճառներից: Սա առավել ևս ողբերգական է նաև այն պատճառով, որ տարոնահայությունն, իսկապես, հնարավորություն ուներ, գոնե հիմնական մասով, փրկվելու: Տարոնցիների նման վարքագծի պատճառներն էին ցրվածությունն ու մասնատվածությունը, կապերի թուլությունը, Սասունի և Տարոնի գործիչների միջև եղած հակասությունները, որոնք խորացան Ռուբենի գործունեության հետևանքով: Մինչև 1915 թ. հայերի մեջ միտք անգամ չի եղել, թե Սասունն ու Տարոնը յաթաղանի դեմ կարող էին մարտնչել առանձին-առանձին: Տարոնը լքելու և նրա մարտական ուժերը Սասուն բարձրացնելու որոշումը աղետաբեր էր: Մտայնությունը, թե Թուրքերը հարձակումը սկսելու էին Սասունից, հենվում էր պատմական փորձի վրա, բայց հաշվի չէր

---

[1] "Кавказское слово", 5-ое июня 1915 г..

[2] **Սասունի Կ.,** Պատմութիւն Տարօնի աշխարհի, էջ 834-835:

առնվում այն, որ մինչև Մեծ Եղեռնը թուրքական իշխանությունները Տարոնի հայության ոչնչացում երբևիցե չեն պլանավորել: Մշտապես նրանք ձգտել են ոչնչացնել սասունցիներին: Դրանով է բացատրվում այն փաստը, որ թուրքական հարձակումներն ամեն անգամ սկսվում էին Սասունով և գրեթե միշտ էլ ավարտվում էին Սասունով: 1915-ին դրությունը միանգամայն այլ էր: Որոշված էր ոչնչացնել նաև տարոնահայությանը: Դա համընդհանուր բնաջնջման ռազմավարություն էր և պարզից էլ պարզ էր, որ «գործը» Տարոնից սկսելը տրամաբանական էր: Չնայած Տարոնում էր Մուշ-Սասունի հայ բնակչության 2/3-ը, բայց Դաշտի հայությանը ոչնչացնելն անհամեմատ ավելի հեշտ էր, քան 20.000-25.000 սասունցիներին: Տարոնում էին տնտեսական գլխավոր կարողությունները, առանց տարոնահայության տնտեսական, անգամ նաև ռազմական աջակցության (սննդամթերք, ռազմամթերք, զենք, կովող ուժ), Սասունը դիմակայել չէր կարող: Տարոնահայությունն անպայման խոչընդոտ էր Սասուն հյուսիսից ներխուժելու ճանապարհին:

Տեղաբնակները այս հանգամանքին քաջատեղյակ էին և չեն համաձայնվում Ռուբենի քաղաքականության հետ: Մասնավորապես Տարոնի հայ գործիչները Ռուբենին նամակներ էին գրում, պատվիրակներ ուղարկում և պահանջում միավորել ուժերը: Որքան աղետի սպառնալիքը մեծանում էր, այնքան այդ ձգտումը ուժեղանում էր: Ի վերջո, համաձայնության են գալիս ժողովի հավաքվել որոշելու, թե ինչ անել: Ժողովին հրավիրվում են նաև Ռուբենն ու Կոմսը: Այդ ժողովը տեղի ունեցավ քաղաքի մերձակայքում գտնվող մի հնձանում:

Ժողովում Կորյունը, Գառնեի Մկրտիչը, Սեմալցի Մանուկը, Ա. Շահրիկյանը, Մոկաց Ղազարը, Առինջի Սահակը և Մ. Բղեյանը պաշտպանեցին Հ. Կոտոյանի առաջարկը, մյուսները, այդ թվում Ռուբենը, Կոմսը, Պալեի Մրկոն, դեմ էին:

Հաջիի առաջարկն երեք տարբերակ ուներ:

Առաջին. *Սասունում կուտակված զենքի ու ռազմամթերքի կեսը տեղափոխել Դաշտ, գյուղերին հանձնարարել մի գիշերվա ընթացքում ոչնչացնել տեղերում եղած թուրք պաշտոնատարներին ու ոստիկաններին, նրանց զենքերը հավաքել (միջին հաշվով 1000 զենք), հաջորդ օրն սպանել Մուշից գյուղեր մեկնած պաշտոնատարներին և թույլ չտալ, որ նրանք քաղաք վերադառնան: Երկրորդ գիշերը գյուղերի զինված ուժերը շարժել դեպի Մուշ, քաղաքը շրջապատել, տեղի երիտասարդության հետ միասին հարձակվել զորանոցի ու զինանոցների վրա, հարկադրել ոչ մեծաթիվ զորքին անձնատուր լինել և հայկական իշխանություն հաստատել: Դա հնարավորություն կտար տևական կռիվ մղել թշնամու դեմ, չնայած նման կռվի հարկ չկար, որովհետև ռուսական բանակը մի քանի օրից տեղ էր հասնելու:*

Երկրորդ տարբերակ. *Դաշտի ամբողջ տարածքում ծավալել պարտիզանական կռիվներ, ոչնչացնել թուրք պաշտոնատարներին, չեթեներին, կտրել հեռագրագծերը: Նույն գիշերվա ընթացքում զենք կրելու ընդունակ բոլոր տարոնահայերին հավաքել Ցրոնքի, Աբրլբուհարայի, Հայկի ձորերում: Զխուրի ժողովրդին հավաքել Վարդենիս գյուղում: Սասունի կռվողներին իջեցնել Դաշտ:*

Մի վայրում հավաքել նաև Մուշ քաղաքի մարտական ուժերը: Հաջորդ օրը բոլոր խմբերը պետք է գյուղից գյուղ անցնելով սպանեին քրդերին և տիրանային նրանց սննդամթերքին, ապա շարժվեին դեպի ռազմաճակատ և թիկունքից հարվածեին Թուրքական բանակին: Այդ ընթացքում Տարոնի ամբողջ բնակչությունը նույնպես շարժվելու էր դեպի ռազմաճակատ, անցնելու էր ճակատային գիծն ու այդպես փրկվելու էր:

Երրորդ տարբերակ. *Դաշտի ամբողջ ժողովրդին ունեցած սննդամթերքով հավաքել Սասունի լեռների ստորին փեշերի հայկական գյուղերում և կովի մեջ մտնել թշնամու հետ: Նույն կերպ պետք է վարվեր նաև Մուշ քաղաքի հայությունը: Կռվել մինչև վերջ՝ հաղթել, կամ բոլորով միասին զոհվել*[1]*:*

Ռուբենն ու նրա կողմնակիցները առարկեցին՝ նախ. դժվար թե հաջողվի գրավել քաղաքը զորանոցների հետ միասին, երկրորդ 100.000 մարդու անհնար է մի օրում ոտի հանել ու տեղափոխել, չհաշված նաև վտանգը, որ Թուրքական բանակը կարող էր նախապես այդ մասին իմանալ և թնդանոթները չուռ տալ ժողովրդի վրա: Երրորդ տարբերակն ընդհանրապես անհնար էր համարվում, պատճառաբանությամբ, թե ռազմական մեծ ուժեր են պահանջվելու Ըզլաղաջից մինչև Ալվառինջ ընկած գիծը պաշտպանելու համար:

Հ. Կոտոյանի առաջարկներին Ռուբենը հակադրեց իր ծրագիրը: Դա հետևյալն էր. «Քանի որ Սասնոյ բոլոր գիւղերուն մէջ թէ՛ պարենի եւ թէ՛ ռազմանիւթի բաւական պաշար կենդոնացուցեր ենք», պետք է, որքան հնարավոր է արագ, քաղաքի և Դաշտի գյուղերի մարտական ուժերը զինել ու բարձրացնել Սասուն: Երբ Թուրքերը տեսնեն, որ մենք ուժեր ենք կուտակում Սասունում, ապագա բարդություններից խույս տալու համար, անմիջապես հարձակվելու են Սասունի վրա: Թուրքական ուժերին զբաղեցնելով Սասունում, մենք Դաշտի հայությանը կազատենք հարձակման ենթարկվելու վտանգից: «Որքան ատեն, որ Սասունը կանգուն է եւ Անդոկ լեռը չէ գրաւուած, մենք՝ իբրեւ ամուր բերդ, կանգնած ենք Դաշտի եւ քաղաքի կողքին: Մինչեւ որ մեր ուժերը չջլատեն, ձեզի բան չեն ըներ, քանի որ դուք զէնքով չէք ընդդիմանար իրենց եւ մանավանդ՝ պաշարի փոխադրութեան համար ալ ձեզի պէտք պիտի ունենան, ձեզի չեն ոչնչացներ: Ամեն վտանգ աւելի Սասնոյ է, որ կը սպառնայ. պէտք է բոլոր ոյժերը հոն հաւաքենք եւ զօրեղ դիմադրութիւն կազմակերպենք»: Նաև ասվում էր, որ եթե հայդուկային փոքր խմբերով կարողանում էինք մարտնչել Թուրքական բանակային ուժերի դեմ, ապա միավորման պարագայում 3000 կռվող ենք ունենալու և այդ կանենք ավելի մեծ հաջողությամբ:

Հ. Կոտոյանը ժողովի բոլոր մասնակիցներից ամենախորաթափանցն էր և հասկանում էր, «Ախր... մարդ կոյր կամ խուլ ըլլալու է, որ չտեսնէ ու չլսէ թիւրքի այժմեան հայաջինջ քաղաքականութիւնը: Ահա՛, հեռաւոր եւ մօտակայ շրջաններու ամբողջ հայութիւնը ... առանց օսմանեան կառավարութեան եւ իր զօրքին դէմ որեւէ կերպով ըմբոստացած ըլլալու, բոլորն ալ սուրի քաշուած են»:

Ընդհակառակը, Թուրքերը «նախ, իրենց չդիմադրողները կը ջարդեն...

Դուք կ՚աշխատիք Դաշտի ու քաղաքի մէջ մնացած 80.000 հայութիւնը՝ մեծ

---

[1] ***Բդէյեան Ս.,*** *նշվ. աշխ., էջ 349-351:*

մասամբ՝ կին, աղջիկ, տղայ, անպաշտպան ձգել եւ Սասուն հաւաքուած 30.000 ժողովուրդը փրկել»: Վերջինների կեանքը նոյնպես ինձ համար շատ թանկ է և ես ձգտում եմ փրկել բոլորին, իսկ «դուք, մի քանի անձերդ, ո՛չ թէ ազգի կամ Սասնոյ ժողովուրդի շահն է, որ նկատի ունիք, այլ աւելի յետին մտքով է, որ կը գործէք: Դաշտը եւ քաղաքը սուրի տալէ յետոյ, սասունցիներու արեան գնով ալ՝ ձեր մի քանիներու կեանքը պիտի ջանաք փրկել... Ձեր հաւաքած պարէնը մէկ ամսիս իսկ պիտի չբաւէ 30.000 անձերու: Այն ատեն անօթի ժողովուրդը, ստիպուած, անձնատուր պիտի ըլլայ եւ դուք ալ, ձեր հետ առած մի քանի զինեալ տղաներ, պիտի փորձէք արտասահման անցնիլ»:

Հ. Կոտոյանի առաջարկությունները մերժվեցին: Եվ ոչ միայն: Դաշտում լայնածավալ աշխատանք ծավալվեց սննդամթերք հավաքելու և Սասուն տեղափոխելու համար:

Սրա դիմաց, Սերվեթն ու Քյազրմը Սասունի հարցում որդեգրել էին հետևյալ քաղաքականությունը: Մինչև տարոնահայության բնաջնջումն ավարտելը Սասունում մարտական լուրջ գործողություններ չձեռնարկել, գործել հիմնականում քրդերի ուժերով, տեւական բախումների ու կռիվների միջոցով ծախսել հայերի սննդամթերքն ու ռազմամթերքը, հյուծել սասունցիների մարտական ուժերը, որպեսզի պահանջված պահին նրանք անկարող լինեին լուրջ դիմադրություն ցույց տալ:

Իրադարձությունները զարգացան ոչ թե Ռուբենի գծած ձևով, այլ Հ. Կոտոյանի կանխատեսած եղանակով: Նա մարգարեացավ նաև դաշնակցական գործիչների դրսևորելիք վարքագծի հարցում, որ նրանք լքելու էին ժողովրդին հանուն իրենց անձի փրկության:

Մեծ եղեռնի ժամանակ Տարոն աշխարհի ողբերգության գլխավոր պատճառներից մեկը ինքնապաշտպանության այնպիսի ծրագրի մշակումն էր, որը հենվում էր մասնատվածության հոգեբանության վրա: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ մի քանի օբյեկտիվ պատճառներով Տարոն-Տուրուբերանում նման հոգեբանություն առկա էր տեւականորեն: Սակայն բնաջնջման վտանգի ահագնացումն այդ հոգեբանությունը ոչ թե թուլացրեց, այլ, ընդհակառակը, գերիշխող դարձրեց: Ամեն գավառակ, անգամ գյուղախումբ ու գյուղ մտահոգվեց միայն իր պաշտպանությամբ: Նման դիրքորոշման գործում Ռուբենի և Կոմսի «ծառայությունը» նույնպես շատ մեծ էր: «Օրուան ղեկավարները՝ Ռուբէն Տէր-Մինասեան, Վահան Փափազեան (Կոմս), Կորիւն, Մ. Բոլէյեան (Մճոյ), չեն կրնար ըմբռնել, թէ հարուածը պիտի իջնէր Մշոյ դաշտին հոծ հայութեան գլխուն եւ ապա քաղաքին վրայ, խորտակելով լեռներու ժողովուրդին ու կռուող ոյժերուն յենարանները: Սասունը պատերազմի ճակատէն հեռու գտնուելով՝ Թրքական բանակի կոնակէն պիտի չկրնար հարուածել, այլեւ պիտի չկրնար դիմադրել քիւրտական եւ Թրքական միացեալ գրոհին:

Ըմբոստ ժողովուրդը, հոն ապաստանած կռուողները, ինչպէս նաև Դաշտէն ու Մուշէն լեռները ապաստանողները անօթութեան պիտի մատնուէին, անօթութեամբ ալ պարտուէին»[1]:

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 431:

Ասում են հետին թվով խելոք լինելը դժվար չէ: Հավանաբար դա այդպես է: Հավանաբար քրդական իրավիճակը տարոնահայ շատ պարագլուխներին հնարավորություն չտվեց ճիշտ կողմնորոշվելու:

Հարկ է պատշաճը հատուցել նրանց: Դեռ 1914 թ. դեկտեմբերի սկզբներին ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կենտկոմի հատուկ նիստում քննարկվեց կացությունը և միջոցառումներ մշակվեցին, հաստատվեց ինքնապաշտպանության ծրագիր:

Համաձայն այդ ծրագրի՝ Տարոնը բաժանվում էր ինքնապաշտպանական շրջանների, որոնցից յուրաքանչյուրն, ընդհանուր խնդիրներից բացի, ունենալու էր իր առանձնակի անելիքները: Այդ շրջաններն էին՝ Մուշ քաղաք, Սասուն, Արևելյան Տարոն (Առաքելոց վանքից, Մառնիկից ու Հավատորիկից մինչև Քանասար), Արևմտյան Տարոն (Մուշ քաղաքից արևմուտք ընկած լեռնաշղթան՝ Ս. Հովհաննու վանքն ու անտառը, Փեթար գյուղ): Այն մի կողմից վերահսկելու էր Դիարբեքիրի ճանապարհը, մյուս կողմից հանդիսանալու էր հենարան սասունցիների համար, իսկ Ս. Կարապետի վանքը և անտառը փակելու էին ճապաղջրի կողմից Մշո դաշտի վրա հարձակման ճանապարհը: Հյուսիսային Տարոն՝ Ավրան կենտրոնով (մինչև Կուրավու և Ծխավու՝ Էրզրումի ճանապարհը, Բուլանըխից Մշո դաշտ ընկած շրջանը): Հյուսիս-արևելք՝ Վարդենիսն իր շամբով և Նեմրութի ու Գրգուռի հյուսիսային փեշերը:

Մտահղացումը հետևյալն էր՝ որոշ քանակի ռազմամթերք ունենալու դեպքում այդ շրջաններից յուրաքանչյուրն ի վիճակի կլիներ որոշ ժամանակ ինքնապաշտպանական մարտեր մղել: Դրան հակառակ, ինչպես արդեն նշվել է, իշխանությունները Տարոնը բաժանել էին 18-20 շրջանների, որոնք թե՛ հայերին զսպելու և թե՛ նրանց ոչնչացնելու խնդիր ունեին: Բայց, ի տարբերություն հայերի, իշխանություններն այդ խնդիրը լուծելու համար նախապատրաստված էին: «Նախաձեռնութիւնը կառավարութեանը կը մնար,- գրում է Կ. Սասունին: Այդ ճգնաժամի օրերուն, ով որ նախաձեռնողն ըլլար, ան պիտի շահէր ճակատամարտը: Հայ ժողովուրդը նախաձեռնութեան վճռականութիւնը չունէր... (Թիւրքի վճռական հարուածներէն յետոյ. հայութեան հաւաքական ոյժը արդէն քայքայուած էր)»[1]:

Բացի այդ, ինքնապաշտպանությունը լուրջ նախապատրաստություն էր պահանջում: Դա առաջին հերթին նշանակում էր մարտական ջոկատների ու հայդուկային խմբերի ձևավորում, դրանց մարզում ու զինում և զենքի, փամփուշտի ու պարենի անհրաժեշտ պաշարի հայթայթում: Առաջնորդարանն ընդամենը 200 ոսկի կարողացավ ճարել, որով հնարավոր էր գնել միայն 6-7 հրացան, մի քանի հազար փամփուշտ և որոշ քանակությամբ ցորեն Ավրան գյուղում ինքնապաշտպանական կռիվներ մղելու համար: Տարոնցիներն իրենց ունեցած զենքով կարող էին կռվել միայն քուրդ հրոսակների ու չեթեների դեմ: Նրանք անգամ պատկերացնել չէին կարողանում, թե ինչ ահավոր բնույթի ու ծավալի կռիվ էր իրենց սպասում, որում առաջատար դեր էր խաղալու թուրքական բանակը: Բացի դա, ինչպես 1915 թ. հուլիսի 13-ին գրեց «El Dia» թեր-

[1] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 763:

թը, իշխանությունները Մուշում 40.000 հրացան էին բաժանել քրդերին՝ հայերի դեմ կռվելու համար:

«Кавказское слово» թերթն իր 1915 թ. հունիսի 5-ի համարում տպագրեց Մուշի իրադարձությունների ականատեսներից մեկի պատմածը: Ալաշկերտից փախած բոլոր քուրդ ցեղերը հավաքվեցին Մուշի մերձակայքում և Տարոնի գյուղերում, ինչը հայերին դրեց վտանգավոր կացության մեջ և պատճառ հանդիսացավ սարսափելի ողբերգության, որի զոհը դարձան Վերին Բուլանըխի հայկական գյուղերը: «Երբ մի քանի շաբաթ առաջ Թուրքիայում սկսվեցին հայերի վերջին արյունալի հալածանքները, ապա, հավանաբար գործելով համաձայն թուրքական կառավարության հրամանի, այդ շրջանի քուրդ ցեղերը շեյխ Ազրիտի գլխավորությամբ և Սիմո գյուղի չերքեզները մորթեցին բոլոր տղամարդկանց և կանանց ու երեխաների մեծ մասին, շատ ծերերի»:

Մուշում ու Տարոնի գյուղերում «չնորհիվ հայերի կազմակերպվածության ու ինքնապաշտպանության նրանց ունակության, կոտորած տեղի չունեցավ...»: Դեռ երկու-երեք ամիս առաջ Մուշը սարսափելի վտանգի առաջ էր կանգնած, որովհետև բացարձակապես նախապատրաստված չէր: Սակայն մի քանի հանգամանքներ թուրքերին խանգարեցին կոտորած սկսելու, իսկ հայերը, զգալով բնաջնջվելու վտանգը, ձեռնարկեցին նախապատրաստական աշխատանքներ: Բացի դա, հայ զինվորներին զինաթափելու հրամանից հետո Տարոնի շատ երիտասարդների հաջողվեց փախչել, վերադառնալ տուն: Սակայն այն, ինչ կատարվեց՝ բացարձակապես անբավարար էր յաթաղանին չեզոքացնելու համար, մանավանդ եթե նկատի առնվի Կ. Պոլսի առանձնակի մոտեցումը Տարոնի հայաթափման խնդրին:

Խոսուն մի փաստ. Սերվեթը բողոքականների համայնքի ղեկավարին 1915 թ. մայիսի սկզբին առաջարկեց. «Համոզեք հայերին զենքերը հանձնեն... Եթե հանձնեն, կերաշխավորվի նրանց անվտանգությունը»[1]: Հայերն սկսեցին զենքերը հանձնել: Մինչդեռ այդ նույն Սերվեթը դրանք լուսանկարել տվեց և հետևյալ գրության հետ Բարձր Դուռ ուղարկեց. «Մուշ քաղաքում ապստամբությունը պոռթկալու վրա է... Այն ճնշելու լիազորություններ եմ խնդրում»[2]:

Որ տարոնահայության տեղահանությունը նախապես ծրագրված էր, վկայում է նաև Վանգենհայմի 1915 թ. հուլիսի 11-ի ծածկագիրը, թե Բարձր Դուռը հայտնել է, որ «Մուշից հայերի արտաքսումը սկսվելու է վաղը, և կառավարությունն անհրաժեշտ է համարում, որպեսզի որբանոցի (գերմանական միսիոներական) կանանց անձնակազմը մեկնի Մամուրեթ ուլ-Ազիզ՝ անվտանգության նկատառումով»[3]:

Սակայն Տարոնի իշխանությունները շարունակում էին խուսանավել, չփութի ու անորոշության մատնել հայերին: 1915 թ. հունվարի սկզբին Սերվեթը Ռուբենին առաջարկում է Կորյունի հրամանատարության տակ ստեղծել հայ-

---

[1] **Walker Ch.,** *Sources Britanniques sur les Massacres des Arméniens. 1915-1916* տե՛ս *La Crime de Silence. Paris, 1984, p. 200.*

[2] **Mandelstam A.,** *La Société des Nations et les Puissances devant le Problem Arménien. Paris, 1926* (վերջաբան):

[3] *R 14086, Ab. 1158.*

քրդական կամավորական ջոկատ՝ Դաշտի ու Սասունի բնակչությանը հանդարտացնելու համար, խոստանալով ջոկատը զինելու համար անհրաժեշտ քանակությամբ զենք տրամադրել:

Կորյունը դեմ էր հայ-քրդական խառը ջոկատի ստեղծմանը և մութեսարիֆին առաջարկեց հայկական ջոկատ կազմակերպել: Սերվեթը չառարկեց, պայմանով, որ հայերը դա ստեղծեին սեփական զենքերով: Կորյունը պատասխանեց, թե հայերն անհրաժեշտ քանակությամբ ու բարձրորակ զենք չունեն: Սերվեթը խոստացավ ջոկատին զենք տրամադրելու հարցը համաձայնեցնել վալի Աբդուլխալիկի հետ: Հասկանալի էր, որ նման համաձայնություն լինել չէր կարող ոչ վալու և ոչ էլ իր՝ Սերվեթի կողմից: Եվ չեղավ: Թուրքն ինչո՞ւ պիտի զիներ հային, որին ոչնչացնելու էր:

Նույն այդ օրերին Մուշում տեղի ունեցավ հայ ղեկավար գործիչների մի նոր ժողով: Վ. Փափազյանն այդ մասին պատմում է, թե ժողովի մասնակիցներից «Մջոն, Բերդակալ Ոսկեան եւ ուրիշներ, կ'առաջարկէին նախայարձակ լինել պետական զինանոցներու վրայ: Ռուբէն նպատակայարմար կը գտնէր Սասունի Տափերք գիւղի պահականոցին վրայ յարձակիլ եւ այսպիսով ազատուիլ Սասունի ներքին թշնամիներէն: Ամենքս ալ կը զգայինք անշուշտ, որ ծանր օրեր կը մօտենային, ընդհարումներն անխուսափելի էին: Շատ ընկերներ, որոնց թուին եւ ես, կ'առաջարկէինք, թէ մեր ռազմական ոյժերը շատ սակաւ էին եւ անկազմակերպ յարձակողական կռիւներու համար: Սասունի ժողովուրդը խիստ թերի զինուած էր:

700-800 «չեչխան» եւ որսորդական հրացաններու հետ թերեւս 150–200 քիչ-շատ կանոնաւոր զէնք կը գտնուէր, որոնք, սակայն փամփուշտի չնչին պաշար ունէին: Դաշտը աւելի խղճալի վիճակ մը կը ներկայացնէր... Դաշտի 90 գիւղերը հազիւ 200 կանոնաւոր հրացաններ ունենային, փամփուշտի նոյն թերիներով»[1]*:*

Իհարկե, զինվելու և կռվելու կողմնորոշումը ճիշտ էր, և դա ոչ թե ջարդերը կանխելու, ինչն անհնար էր, այլ կռվելու համար մի քաղաքականության դեմ, որից թուրքերը չէին հրաժարվելու: Խոսքը կոտորածներին զենքով հակազդելու մասին էր, ինչը նախ, կնչանակեր, որ զոհեր էր տալու նաև ջարդարարը և, երկրորդ, այդ դեպքում անհամեմատ մեծ կլիներ փրկված հայերի թիվը:

Դժբախտաբար, Ռուբենն ու նրա կողմնակիցները նախընտրեցին սպասողական, ռուսներին սպասելու, այսինքն՝ անգործության քաղաքականությունը և տարոնահայությունը ոչ միայն չզինեցին, այլև անգործության մատնելով նրան՝ նաև հոգեբանորեն զինաթափեցին:

Ռուբենը դիկտատորին հատուկ համառությամբ ու բանսարկություններով իր կարծիքն հրամայական դարձրեց անգամ այն հանգամանքներում, երբ սասունցիներն զգում, հասկանում էին, որ առանց Տարոնի գործնական աջակցության իրենք երկար դիմանալ չէին կարող: Սասունում հրավիրված խորհրդակցություններում այդ հարցը մի քանի անգամ բարձրացվեց: Դրանցից մեկում գելիեցի Կիրակոսն առաջարկեց իջնել Տարոն ու գրավել Մուշը, դուրս գալ

---

[1] ***Փափազեան Վ.,*** *նշվ. աշխ., էջ 336-337:*

անորոշ սպասողական վիճակից: Բայց ո՛չ: Ռուբենը դրան դեմ էր:

Նույնիսկ Կարո Սասունին, որ ամեն կերպ աշխատում է արդարացնել Ռուբենին, հարկադրված էր խոստովանել. «ԵԹԷ այդ օրերուն (մայիսի կէսերուն) կռիւը պայթէր Մուշի մէջ եւ Սասունէն ոյժերը շարժուէին դէպի Մուշ, շատ բան կրնար փոխուիլ, որովհետեւ թիւրքերու ամենանեղ ժամանակն էր: Բայց հայերը ժամանակը հասած չէին նկատեր»[1]:

Ռուբենն ու սասունցիները սպասում էին Սասունում, իսկ Կոմսն ու մշեցիները՝ Մուշում: Գործողության, անգամ գործելու ծրագրի բացակայությունը կազմալուծեց հավաքական պայքարի գաղափարը, առաջին պլան դուրս եկան անհատապես փրկվելու գործառույթներն ու շահախնդրությունները: Ոչ միայն շարքային տարոնցիները, այլև գործիչները, հույսը կտրած ընդհանրական գործողության հնարավորությունից, մտահոգված էին միայն սեփական ընտանիքը փրկելով: Նրանք հեռանում էին Դաշտից ու Մուշ քաղաքից՝ միամտաբար կարծելով, թե Արևմտյան Հայաստանում կարելի էր գտնել մի վայր, քաղաք կամ գյուղ, որտեղ հայի փրկությունը հնարավոր էր:

Մինչեռ ստեղծված ողբերգական կացությունը հրամայաբար պահանջում էր միակամություն և օրհասական կռիվ: Այդ դեպքում, ինչպես արդեն ասվեց, մի կողմից թշնամին շատ զոհեր էր տալու, իսկ մյուս կողմից, հնարավորություն կստեղծվեր անհամեմատ ավելի մեծ թվով հայեր փրկել, ինչպես այդ եղավ Վանում: Դա միաժամանակ կնշանակեր պատվաբեր մահ, ոչ թե մորթվել, այլ՝ ընկնել մարտի դաշտում:

Իհարկե, անհնար է մտածել, թե Դաշնակցության այդ երկու առաջատար գործիչները միտումնաբար էին իրենց սպասողական կեցվածքով, հայության շրջանում անորոշության և մասնատվածության հոգեբանություն սփռելով նրան դեպի սպանդանոց ուղարկում: Խոսքը մարդկային թուլություններից բխող հետևանքների մասին է, որոնց անհնար է դավաճանությունից ուրիշ անուն տալ:

Դավաճանությանը հանգեցնող մարդկային այդ թուլությունները ծնեցին եսակենտրոնություն և անձնապաշտություն, որոնք սնվում էին այն բացարձակ ճշմարտությունից, թե տվյալ պահին պատերազմը թուրքերի ու քրդերի հետ այլ բան չէր լինելու, եթե ոչ նահատակության կռիվ՝ մի բուռ հայեր պարտադրված էին լինելու մարտնչել շատ անգամ գերակշիռ քրդական զանգվածների, թուրք չեթեների, Տարոնում եղած կանոնավոր բանակի զորամասերի, ոստիկանության, ժանդարմերիայի դեմ ու, բացառված չէր, որ հայերի վրա հարձակման անցնեին նաև ռազմաճակատում եղած թուրքական զորքերը:

Դա այդպես էր: Այդ բոլորն առկա էին: Բայց նաև առկա էին հայրենիքի պաշտպանության հրամայականը, հայ լայն զանգվածների կռվելու ոչ միայն պատրաստակամությունը, այլև պարտադրվածությունը, անցյալի փորձը, բնաջնջվելու անառարկելի վտանգը և պատվով մեռնելու բարոյականությունը: Իզուր է Կ. Սասունին ճգնում արդարացնել իր գաղափարակիցներին, թե Ռուբենն ու Կոմսը «յուսահատ պայքարի մը ժամը հասած չէին նկատեր, որով-

[1] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 830:

հետև չէին հաւատար, թէ ամբողջ հայ ժողովուրդը բնաջնջման դատապարտուած էր»[1]:

Նման արդարացումը ընդունելի կարող էր լինել 1914 թ. վերջերին, 1915 թ. հունվար-ապրիլ ամիսներին, բայց ոչ դրանից հետո, որովհետև համընդհանուր բնաջնջումն արդեն ընթանում էր, այն էլ՝ ոչ միայն Հայաստանի մյուս նահանգներում, այլև Տարոնում, ուր բնաջնջված էր Խնուսի 30 հայկական գյուղերի հայ բնակչության ճնշող մեծամասնությունը, ավերված էին Տարոնի դաշտի տասնյակ գյուղեր, կործանված էր Վարդոյի հայությունը, ոչնչացված էին Խուլբի հարավային մասի գյուղերը, ձերբակալություններն ու ձերբակալվածներին այլևայլ տեղերում ու եղանակներով ոչնչացնելը զանգվածային էր դարձել Մուշ քաղաքում, տարոնահայությանը սպանում կամ մեռցնում էին բանակում և բեռնափոխադրումների ժամանակ և այլն: Կ. Սասունին հարկադրված է քնքշությամբ բացելու իսկական պատճառը քողարկող վարագույրի ծայրը. «Խիզախ եւ անհաչիւ նախաձեռնութիւններու մարդ չէր Ռուբէն: Քաղաքական եւ զինուորական գործիչ մըն էր, աւելի պետական ըմբռնումներով: Ճգնաժամի այդ օրերուն Ռուբէն յուսահատ եւ ելքն անորոշ կռիւի մը վարիչը չէր կրնար ըլլալ... Ինքզինքը գերազանցող մարտական ղեկավար չէր»[2]: «Աւելի խիզախ նկարագիր ունէին Կորիւնը, Մճոն եւ Կոտոյեան Հաճի Յակոբը: Այս երեք մեծ մարտական ոյժերը կռուեցան մինչեւ վերջին չունչ եւ նահատակուեցան հերոսաբար: Անոնք թէ՛ ազդեցութեամբ, թէ՛ փորձառութեամբ եւ թէ՛ կուսակցական իրաւասութեամբ տէրն էին Տարօնին եւ կրնային շատ աւելին ընել իրենց խիզախ ելոյթներէն ետք: Բայց այս աննման հերոսներն ալ սպասողական ընթացքի մը մէջ գտնուեցան: Իրենց տունն ու տեղը կործանելէն, յանդուգն կռիւը մարտ ամսին սկսելէն ետք, չչարունակեցին նոյն բուռն ընթացքը, շրջանն ամբողջ ոտքի հանելու համար»[3]:

Անհնար է չնկատել, որ Կ. Սասունին իր խղճի առաջ մեղք էր գործում, երբ ասում էր, թե այդ երեք հերոսները «կուսակցական իրաւասութեամբ տէրն էին Տարօնի» և «սպասողական ընթացքի մը մէջ գտնուեցան»:

Տարոնի կուսակցական, այսինքն՝ դաշնակցական ղեկավարներ կարգված էին Ռ. Տեր-Մինասյանը (որը ՀՅԴ բյուրոյի անդամ էր ու Տարոն-Տուրուբերանի կենտկոմի ղեկավարը) և Վ. Փափազյանը՝ նույնպես բյուրոյի անդամ ու նրա ներկայացուցիչը Տարոնում: Նրան կցել էին Տարոնի կազմակերպությանը՝ Ռուբենին օգնելու համար: Այսինքն ասել, թե Կորյունը, Մճոն և Հ. Կոտոյանն ավելի մեծ իրավասություններ ունեին, «Տարօնի տէրն էին», մեղմ ասած, իրականությունից շատ հեռու է: Նրանք կուսակցական դիկտատի տակ էին, պարտադրված կատարելու ղեկավարների հանձնարարությունները: Իրականության հետ առնչություն չունի նաև պնդումը թե այդ գործիչները «սպասողական ընթացքի մէջ էին»: Նրանք, մասնավորապես, Հ. Կոտոյանը, հնարավոր ու անհնար ամեն ինչ արեցին դրությունը փրկելու, նախաձեռնությունը վերց-

---

[1] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 833:
[2] Նույն տեղում, էջ 834:
[3] Նույն տեղում, էջ 834-835:

նելու, Սասունի և Տարոնի ուժերը միավորելու և հարձակման անցնելու համար, բայց Ռուբենն ու Կոմսը հսկա ժայռաբեկորի նման ընկած էին ճանապարհին և փակել էին գործելու հնարավորությունների դռները:

Կ. Սասունին ճշմարտության առաջ նորից մեղք է գործում, երբ գրում է. «Բախտը այնպէս դասաւորուեցաւ, որ գնդակներ շատ անցան Ռուբէնի եւ Վ. Փափազեանի ականջին տակէն, բայց անոնք չնահատակուեցան... Բնական օրէնքով, ժողովուրդը ողջ մնացած ղեկավարները պիտի քննադատէր»[1]:

Մեղանչում է, որովհետև կատարվեց հակառակը: Երբ Վ. Փափազյանն ու Ռուբենը դավաճանաբար լքեցին հոգեվարքի մեջ գտնվող տարոնահայությանն ու փախան իրենց անձը փրկելու, ՀՅ Դաշնակցության ղեկավարությունը «հերոսների» վերադարձի առթիվ խնջույք կազմակերպեց, որտեղ նրանց հասցեին փառաբանության ամենաերևակայելի խոսքեր ասվեցին: Միայն Ռոստոմը Ռուբենին ասաց ճշմարտությունը. «Ձկրցա՞ր հոն նահատակուիլ»:

Կ. Սասունին Ռոստոմի խոսքն անվանեց «ժողովրդական դատողություն», այսինքն՝ ամբոխային մտածողություն, իսկ ՀՅԴ-ն դա լռության մատնեց և շարունակեց (մինչև օրս) փառաբանել «իր գրկից դուրս եկած, իր շնչով հերոս դարձած» այդ գործիչներին:

Առնվազը տարօրինակ է Կ. Սասունու նաև հետևյալ միտքը. «Տարօնի շրջանի ազգային եւ կուսակցական ղեկավարները կատարեցին իրենց պարտականութիւնը իրենց ըմբռնողութեան եւ կարողութեան սահմաններուն մէջ, այնքան, որքան մարդկօրէն հնարաւոր էր: Անոնք գերմարդիկ չէին»[2]:

Կուսակցական նեղմտությունն ու «կարգապահությունը» նրան թույլ չէր տալիս ասելու ճշմարտությունը, որ տարոնահայության ողբերգության գլխավոր պատճառներից մեկը ՀՅ Դաշնակցության անլուրջ, անպատասխանատու վերաբերմունքն էր սեփական ժողովրդի պատմական ճակատագրի, նրա հարատևման հիմնահարցերի հանդեպ:

Դաժան չլինենք Կ. Սասունու հանդեպ, որովհետև նա տեղ-տեղ, երբ կուսակցականությունից անցնում է իրադարձությունների անակնոց դիտարկումների, միանգամայն օբյեկտիվ գնահատականներ է ձևակերպում: Ահա՛ դրանցից մի քանիսը. «Ռուբեն, որպէս լիազոր եւ գլխաւոր վարիչ ՀՅ Դաշնակցութեան կազմակերպութեան, չկրցաւ ըմբռնել ահռելի վտանգը այն ծաւալով, ինչ ծաւալով, որ գործադրուեցաւ: Եղաւ անվճռական եւ չհրահանգեց բոլորին եւ բոլոր շրջաններուն՝ կռուիլ եւ մեռնիլ իրենց շրջաններուն մէջ»:

Այն հանգամանքը, որ ռուսներն Վանա ծովի արևմտյան ափին էին արդեն, «ինքնին կը թելադրէր՝ ծանրութեան կեդրոնը դարձնել Մշոյ դաշտէն դէպի Քոսուրի լեռնաշղթան, եւ դաշտին թիկունքը ամրացնել Հաւատորիկի, Մառնիկի եւ Բերդակի բարձունքները գրաւելով»:

Իսկ իրադարձությունները զարգանում էին չեչտակի արագությամբ:

Հավատորիկցի Ե. Կարապետյանը հիշում է. «1915 թ. հունիսի 20-ից Մուշ

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 835:*

[2] *Նույն տեղում:*

քաղաքի մուտքը փակվեց գյուղերի հայերի առջև, միմյանցից մեկուսացվեցին նաև գյուղերը:

Հունիսի 23-ին 10 քուրդ հեծյալներ Հավատորիկի հայերից պահանջեցին տասը ոչխար, 10 չափ այլուր և 10 թաղիք: Հայերը բավարարեցին նրանց պահանջը: Քրդերից Թամո Ալին ասաց. «Սուլթանից հրաման է ստացված, որ բոլոր հայերը պետք է անգթորեն սպանվեն: Սլիվանի հայերն արդեն կոտորված են... Զորս-հինգ օրից այստեղ էլ կոտորած կսկսվի, բոլորը, մինչև վերջին մարդը, ոչնչացվելու են, մեկ մարդ իսկ ողջ չի մնալու»[1]:

Հունիսի 25-ին Խասգյուղից գրեցին. «Հաջի Մուսա բեկը 2000 ձիավորով ու հետևակով արդեն երկու օր է տեղավորվել է մեր գյուղում...»:

Երկու օր անց հարյուրապետ Քյամիլը 200 ժանդարմների ու քրդերի հետ խուժեց Արաղ գյուղը: Բացի ծերերից, բոլոր տղամարդկանց կապոտեցին և նետեցին մի մեծ փարախի մեջ: Ով փախչելու փորձ էր կատարում՝ սպանվում էր:

Հունիսի 28-ին Քյամիլի ջոկատը գնաց Առաքելոց վանք՝ հետն առած արաղցի 55 տղամարդու:

Պատմում է ժանդարմ Ախանդը. «Հենց որ հասանք վանք, Քյամիլ էֆենդին հրամայեց գնդակահարել հայերին: Կրակ բացեցինք, սակայն նրանցից մեկը հանկարծ վեր թռավ ու փախավ: 200 հոգի կրակելով վազեցինք նրա հետևից և սպանեցինք»[2]:

Նույն ժամանակ քրդերը հարձակվեցին Բերդակի, Տերգեվանքի և Ալիզրնանի վրա: Նրանք նախ սպանեցին դաշտում աշխատող հայերին, ապա դուրս քշեցին տներում եղածներին, նրանց անասունների հետ տարան դաշտ, միաժամանակ կողոպտելով բոլոր տները[3]:

Քուրդ Թոնդոն Բերդակի և Արաղի ջարդերի մասին պատմում է. «Եթե հիմա գնաք Բերդակ գյուղը, ձեզ կթվա, թե այդ գյուղում հավանաբար 50 տարի է, որ մարդ չի ապրում: Զեն փրկվել նույնիսկ շներն ու կատուները: Մուսա բեկի մարդիկ ասացին, թե հրաման կա, «օսմանների հողում ընակվող բոլոր քրիստոնյաներին ոչնչացնել: Բոլոր գյուղացիներին քշում են ներքին գյուղերը և փակելով մարագներում, վառում են»: Նորշենը, Սողգոմը, Օխունկը, Հունանը, Քրդագոմը և դաշտի շատ ուրիշ գյուղեր մոխրակույտի էին վերածվել: Հունիսի 29-ին միայն Քրդագոմի և Հունանի մարագներում հազար տղամարդ, կին ու երեխա այրեցին»[4]:

Մի օրվա ընթացքում (Հունիսի 28 հ.տ.) Մշո դաշտը անապատի վերածվեց: 105 գյուղերում 75 հազար հայ ոչնչացրին:

Տարոնահայության բնաջնջման եղանակները որքան բազմազան, նույնքան էլ ստոր էին: Ամենատարածվածը՝ տղամարդկանց առանձնացնելը և կանանց ու երեխաներին մարագներում այրելն էր: Տղամարդկանց իրար էին կապում և գյուղի կողքին գնդակահարում: Դեպի Բաղեշ քշված ժողովուրդը հիմնականում

---

[1] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 219, թ. 24-62:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

ոչնչացվեց Խասգյուղի մերձակայքում:

Վարդոյի Գյունդեմիր գյուղի 100 տղամարդու իրար կապած հարկադրում են ասել. «Կեցցե՛ մեր Թագավորը»: Հրաժարվողներին սպանում էին:

Դաշտի արևմտյան շրջանում ջարդն ու կողոպուտը տեղի ունեցան նույն օրը: 20.000 մարդու լցրեցին Ս. Կարապետի ձորը, անտառն ու ոչնչացրին: Հայերի մի մասը բարձրացավ լեռ, սակայն նրանցից ամեն օր սպանվում էր չուրջ 1000 մարդ:

1916 թ. ռուսական բանակի զինվորները միայն Աղջան ու Ալիկրան գյուղերի փլատակների տակից հանեցին հազարավոր ածխացած, իսկ Գարնեն գյուղի մերձակայքում՝ 5000-6000 սպանվածների հոչոտված դիակներ:

Պատմում են ժամանակակիցներն ու ականատեսները.

«...Անցնում ենք Մշո դաշտի ջրառատ ձորերով,- ներկայացնում է Թուրք սպա Յազդին,- այստեղ-այնտեղ ընկած են անհամար դիակներ: Մի տեղ տեսա դիակները ոչխարի հոտի նման խիտ-խիտ փռվել էին գետնին: Մի զզվելի գարշահոտություն բռնել էր օդը, ձորերն անհամար դիակներով լիքն էին: Շատ տարօրինակ էին ցերեկով տեսած դիակները՝ ոմանք ոչխարի նման գլուխը հետ շրջած՝ տարբեր ձևերով լրիվ մերկ ընկած էին: Նրանց մարմիններն արևի տակ սևացել էին»:

Մշո դաշտում սկզբում եղել է 600 գյուղ, յուրաքանչյուրը 200-300 տնով և բոլորն էլ լի հայ բնակչությունով: Նրանց բնակիչներն արդեն սպանվել են, իսկ փախչողներն ապաստանել են ձյունոտ լեռներում: Այսօր Քոռ Հուսեյին փաշան սպանել է 40-50 հայի, որոնք կրակ էին բացել մեր վրա: Էչրեֆի հրոսախումբը (չեթեներն) էլ մեծ անձնազոհություն դրսևորեցին, այնպես որ Ախլաթը դիակներով ծածկված ենք թողնում թշնամուն:

Մանուկյան Ա., խասգյուղցի. - Տարոնի գյուղերի կոտորածը տեղի ունեցավ 1915 թ. Վարդավառի օրը, այսինքն հուլիսի 12 (25)-ին: Շաբաթ առավոտյան այլևս հայտնի էր, որ Մուսա բեկի 2000 քրդերով Մուշ գնալն ու վերադառնալը, Հաջի Ֆերոյի հայասիրական կեղծ ճառերը, բալակցի, չեկոցի, ոչկոնցի, հասնանցի, բդրդնցի և բազմաթիվ այլ աշիրեթների լցվելը Տարոնի հայկական գյուղերը, դրանց գումարած զորքն ու ոստիկանությունը, գյուղերի միջև հաղորդակցության խզվելը նախապատրաստությունն էին տարոնահայության սպանդի:

Տարոնի ամենամեծ գյուղը Խասգյուղն էր, որտեղ քրդերն ու թուրքերը երեկոյան սկսեցին կողոպուտը՝ քշեցին նախիրներն ու հոտերը: «Մեր վերևում կախված են մռայլ սև ամպեր,- հունիսի 20-ին գրում են այդ գյուղից,- Հաջի Մուսա բեկը 2500 հեծյալ և հետևակ զինված քրդերով արդեն երկու օր է, որ տեղավորված է մեր գյուղում: Նրանց նպատակը առայժմ հայտնի չէ: Ծանոթ քրդերից ոմանք հասկացնում են, որ արշավանք է նախապատրաստվում ռուսների դեմ, մյուսներն ասում են առաջիկայում սպասվող հայերի ջարդի մասին: Մենք հավատում ենք վերջինին, բայց կասկածում ենք, թե այդ բոլորը կվերաբերի բոլորին՝ կանանց և երեխաների՞ն, թե՞ միայն տղամարդկանց»[1]:

---

[1] ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գ. 439, էջ 15:

Հուլիսի 25-ի առավոտյան հավաքեցին տղամարդկանց և սկսեցին տեղում հրացանազարկ անել: «Անմեղ մանուկներու ճիչ ու աղաղակներ, խոշտանգումներու հոնդիւններ եւ... վայրենի քիւրտերու սարսափներ»: Քրդերը ոչ միայն կողոպտում, այլև սպանում էին: Մշո կողմից մի քարավան եկավ՝ 4000 կին և երեխա: Նրանց ասել են, թե տանում են հանձնելու գերմանացիներին, սակայն լցրեցին մարագներն ու հրդեհեցին: Սասունի բարձունքից երևում էին Տարոնի հրդեհված գյուղերը կորած բոցերի մեջ: Բոլոր գյուղերն իրենց հայ բնակիչների հետ միասին ոչնչացվում էին: Հաջորդ օրը քրդերը լցվել էին դաշտերը, լեռներն ու ձորերը և հայ էին փնտրում, այդպես ութ օր չարունակ:

«Հազարաւոր մեռելներ անթաղ, ձեռք-ոտք կապկպուած, մէկը միւսին ետևեն կապուած, փորձի համար թէ մէկ գնդակ քանի՞ մարդ կը սպաննէ, դանազան փորձեր՝ իւրաքանչիւր մէկն իր քմահաճոյքին համաձայն իր զուլումի դրոշմը դրած էր: Բորբ արեւէն դիակները կը ճռճռային, միւս կողմէն, կատաղած շունները իրենց ոհմակով կը յարձակէին մեռելներու վրայ, բզկտելու, բռնած՝ որը ոտքէն, որը ձեռքէն, որը մազերէն, խածնելով դիակները կը լափէին»: «Տեսայ, այո, տեսայ Դրոնիկ գիւղի մէջ բռնած էին քահանայ մը, վրան լեցուցին քարիւղ, կրակը տուին եւ խեղճ մարդուն ազատ ձգեցին: Ան փախաւ, դիտմամբ կը կրակէին ետեւէն, առջեւէն, կողմերէն եւ փորձ կ'ընէին, թէ որքան պիտի տեւէ այդ չարչարանքը, մինչեւ որ հրկիզուած վիճակի մեջ ինկաւ Մարտիրոսը»:

Խասգյուղի շրջանի հայերի կոտորածի մի տեսարանի մասին Գասպար Բդեյանը գրում է. «... Գացի... մարագներու քով, եւ տեսայ, որ ժանտարմաները չուաններ բերին, եւ Սուլէյման օնպաշին հրամայեց, որ մարագի դռները բանան եւ, որպէսզի մէկը չկրնայ փախչիլ, երկուական հոգի դուրս կը հանէին, ...որոնց ձեռքերը իրարու կը կապէին»: Հայտարարեցին, որ այդ հայերին Բաղեշ էին տանում: 350 հայ տղամարդ:

«Տասը հատ ժանտարմայ եւ տասը հատ ալ քիւրտ. շրջապատեցին կարաւանը եւ ճամբայ ելան:

Ողբալի էր մանաւանդ Կորտոնի առջև հաւաքուածներու վիճակը: 2000-3000-ի չափ կիներ ու երեխաներ թէ՛ վախեն եւ թէ՛ անօթութենէն կը հեծկլտային ու կը նուազէին: Ուտելիք չունէին, ժանտարմաներն ալ բան մը չէին տար:

Սուլեյման օնպաշին ձեռքը թուղթ մը բռնած, դուրս եկաւ եւ բազմութեան յայտարարեց, թէ Մուշէն հրաման եկած էր, որ բոլորն ալ Բաղէշ ղրկենք... Եւ իսկոյն ժանտարմաները ամեն կողմ շրջապատելով՝ մտրակներու հարուածներու տակ, բոլորն ալ ճամբայ հանեցին: Անոնք, որ ոտքի վրա չէին կրնար քալել, զանոնք տեղն ու տեղը կը սպանէին: Շատ մը կիներ, չկրնալով իրենց զաւակները հետերնին տանիլ, լքեցին ճամբուն եզերքը, անանկ, որ հազիւ քիչ մը հեռացած, 400-500 փոքր երեխաներ ճամբուն վրայ լքուած մնացին, մէկէն մինչեւ 4-5 տարեկան»:

Քարավանը Երշտերում լցվում է մարագներն ու հրդեհվում: «Իսկ ճամբուն վրա լքուած երեխաներու համար, Սուլէյման օնպաշին հրամայեց 15-ի չափ քոլոսիկցի քիւրտերու» փոս փորեն և «այդ փոքրիկները հաւաքելով մէջը

լեցնեն եւ հողով ծածկեն... Քոլոսիկցի Բաջոն սկսաւ մանկիկները շարել այդ փոսի մէջ եւ իր իսկ ձեռքով կոչտ-կոչտ հողեր խոթել այդ մանկիկներու բերանին մէջ եւ ոտքով ալ անոնց բերաններուն վրայ կոխել, որպէսզի չունչ չկրնային առնել եւ մեռնէին: Իսկ անոնք, որ հինգ տարեկան էին եւ դժուարով կը խեղդուէին, կամ բերաննին չէին բանար, քարով ակռաներնին կը կոտրէր եւ հող լեցնելով բերաննին՝ բռնամահ կ'ընէր: Յետոյ հողով ծածկեցին այդ փոսը...»:

«Տասը զոյգ մարագներ,- գրում է ականատեսներից մեկը,- ուր լեցուցին իմ բախտակիցները, կրակի ճարակ դարձան: Անոնց բոցերուն լոյսը կը լուսաւորէր Խասգիւղի փողոցները: Կը լսէի սարսափելի պայթիւնի ձայներ կրակի մէջէն: Մեռաւ լմնցաւ աշխարհ մը չէնցնող ժողովուրդը մէկ ժամուս մէջ, մսե լեռ մը, մարդկային ծով մը կը փճանար: Եւ այդ բոցերուն առջեւ մարդոց բազմութիւն մը, որ այդ զարհուրելի եւ աշխարհի պատմութեան մէջ չտեսնուած տեսարանին առջեւ բնական քրքիջներ կ'արձակէր»[1]:

«Փախչելուց վերադառնալուց հետո հենց ոտք դրեցի Մշոյ դաշտ, դիմացս փռուած տեսայ երեք դիակներ: Խասգիւղը ոչ միայն թալանել, այլեւ աւերակի էր վերածուել: Քանդել էին տների առաստաղները, պատերը, յատակներին հորեր էին բացել՝ հարստութիւն էին փնտրել... Գիւղում հաստատուել էին քրդեր, տիրացել հայերի ունեցուածքին եւ նրանց լամուկները (տղաները) արածացնում էին հայերի անասունները, որոնք արդէն իրենցն էին...»[2]:

Բեղխնու գյուղում կանանց ու երեխաներին հավաքեցին ու գերմանացիներին հանձնելու հավաստիացումով նույնպես տարան Երշտեր, լցրեցին տներն ու հրդեհեցին[3]:

Թուրք ականատեսը պատմում է Բաղեշից Մուշ ճանապարհին իր տեսածի մասին.

«2300-ի չափ կին ու երեխայ... կը քշէին մտրակներու տակ: Անոնք որ ոտքի վրայ չէին կրնար կենալ, տեղն ու տեղը կը սպաննուէին: Շատ մը կիներ, չկրնալով հետերնին տանել իրենց զաւակները, զանոնք լքեցին ճամբուն եզերքը... Կարաւանը դեռ Երշտեր չհասած, Սուլէյման օնպաշին, ձերբակալուած 4-5 հայերու կոնակը մէկ-մէկ թիթեղ քարյիւղ բեռցնելով, զինուորի մի հսկողութեան տակ, դրկեց Երշտեր: Յետոյ, ժանտարմներէն իմացայ, որ այդ ամբողջ բազմութիւնը՝ այնտեղի մարագներու մէջ լեցնելով՝ վառած են...

Երբ գիւղ վերադարձանք, տեսանք, որ Երշտեր գիւղի վրայ (Խասգիւղէն հինգ քիլոմեթր հեռու) թանձր մուխ մը կը բարձրանար: Մէկ երկու ժամ յետոյ հայ կիներն ու երեխաները տանող ժանտարմաները ետ դարձան»[4]:

Ջարդի նախորդ օրը երեկոյան գրեթե բոլոր հայկական գյուղերը շրջապատված էին թուրքերի ու քրդերի կողմից: Ձենք ունեցող տղամարդիկ մինչ

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 880:*

[2] *«Տարօնի արծիւ», 1939 թ., № 8, էջ 27:*

[3] *Նույն տեղում, 1938 թ., № 4:*

[4] ***Բդէյեան Ս.,*** *նշվ. աշխ., էջ 560:*

այդ գյուղերից հեռացել էին, իսկ զենք չունեցողները՝ թաքնվեցին: Գիշերը գյուղերը լրիվ կողոպտեցին, շատ տղամարդկանց սպանեցին: Քրդերը տիրացան ունևոր հայերի ամբողջ շարժական և անշարժ ունեցվածքին, այսինքն տվյալ տանը ծառա աշխատող քուրդը հայտարարում էր, թե այլևս այդ տան տերն ինքն էր: Գյուղերից փախած երեխաներն ու դեռահասները, խմբեր կազմած, թաքնվում էին բնակավայրերից դուրս և զոհ դառնում քրդերի ու թուրքերի գնդակներին: Փրկվածներին ծառա էին վերցնում:

Փախստականների դրությունն ավելի ծանրացավ, երբ գյուղերի կողոպուտն ավարտվեց, և քրդերն ու թուրքերը սկսեցին հանդերում, լեռներում ու անտառներում հայ որսալ: Տաս տարեկանից բարձր տղաներին որտեղ բռնում, այնտեղ էլ սպանում էին: Ամենուրեք դիակներ էին թափված:

Տեղ-տեղ հայերն ուժեղ դիմադրություն ցույց տվեցին: Օրինակ, Դաշտի Խաչխալթախ գյուղում մի խումբ հայեր հավաքվեցին մարագում և երկու օր դիմադրեցին թշնամու մեծաթիվ ուժերին: Տեսնելով, որ հայերի դիմադրությունն ընկճել չեն կարողանում, քրդերը հրդեհեցին մարագը: Հայերը հետևի պատը ծակեցին և դուրս գալով ճեղքեցին շրջապատման օղակն ու շարժվեցին դեպի Մուրադ գետը: Նրանց մեծ մասը զոհվեց: Զոհեր տվեցին նաև քրդերը: Արածանիի ափը ծածկված էր անթաղ դիակներով: Բազմաթիվ դիակներ լեռներում ու ձորերում կեր դարձան գազաններին ու գիշատիչ թռչուններին:

Տղամարդկանց ոչնչացնելուց հետո 500-600 կանանց լցրեցին մարագներն ու այրեցին: Դրանից հետո սկսեցին փնտրել մահից խույս տվածներին: Այդպիսիներին հավաքում էին խմբերով և լցնում մարագներն ու սպանում: Այդ խմբերից մեկում մի հղի կին չի կարողանամ քայլել և խմբից հետ է մնում: Նրա փորը բացում են, երեխան հանում դնում են մոր կողքին ու երկուսին էլ մասմաս կտրտում[1]:

«Кавказское слово», 27 հունվարի 1917 թ.,- «Սուլուխի՝ երբեմնի ունևոր գյուղի ողջ բնակչությունն անհետացել էր: Գյուղում նույնիսկ շներ չէին մնացել: Միայն կիսաւեր տների այլանդակ երախներն էին, քարուքանդ փողոցներ, կեղտ ու լքվածություն: Եվ սահմռկեցուցիչ լռություն: Գյուղի ամբողջ արու բնակչությանը գարնանը նետել էին վարարած Եփրատը: Սուլուխի կամրջի երկու կողմում հսկողներ էին կարգել, որ նետվածներին թույլ չտան ափ դուրս գալ: Ով համառում էր, գնդակահարում էին: Իսկ կանանց ու երեխաներին լցրեցին մարագներն ու այրեցին: Կմախքների այդ աշխարհում առանձնանում էր մի երիտասարդ մոր կմախքը, որի ոսկրոտ ձեռքերում, կրծքավանդակին սեղմված, հանգչում էր 4-5 ամսական երեխա:

Գանգերի և, առհասարակ, ոսկորների մեծամասնությունը վնասված չէր, բայց մի քանի գանգեր կային, որոնք ճեղքված ու հատված էին սառը զենքով, հավանաբար կացիններով: Այդ մարագները հրկիզված էին: Մի մարագում կար 112 կմախք: Տարոնի մի ուրիշ գյուղի մարագներում գտանք 400 դիակ ու թաղեցինք»:

---

[1] *«Տարոնի արծիւ», 1948 թ., № 28, էջ 37-43:*

Ականատեսը Յողղանք գյուղի հայ բնակչության կոտորածի մասին. «Կին մը կար, շատ գեղեցիկ էր, բայց պժգացին, որովհետև արգանդին մէջ հայու զաւակ կը սնուցանէր: Արգանդը սուրի մէկ հարուածով պատռեցին, երեխան պատէպատ զարկին եւ այդպիսով վերջ տուին թէ՛ մօրը եւ թէ՛ զաւակին: Ճիշդ այդ միջոցին խումբ մը քրիստոնեայ գերմանացի սպաներ թուրք սպաներու հետ տանիքը նստած օղի կը խմէին եւ հաճոյքով կը հրհռային ի տես այս անլուր զուլումին»[1]:

«Հնչակ», 1915 թ. օգոստոս (№ 3). – «Մուշը հերոսաբար դիմադրում է: Պաշտպանական գծից դուրս մնացած շատ գիւղեր կործանւում են: Մուլաքեանթ, Արտկոն, Բերդաշէն, Ապրի, Խոշգելդի, Քոշակ, Պոստաքինի, Քեաբուլան, Համզաշէյխ, Շիրվանշէյխ հայաբնակ գյուղերի ամբողջ բնակչությունը ոչնչացուած է, իսկ գիւղերը՝ հիմնայատակ աւերուած:

Վանից նահանջող թուրքական զորքերը գնում են Մուշ ու Բասէն. նրանց միանում են Մուսաբէկի համիդիէները եւ միասին կոտորում հայերին, աւերում նրանց գիւղերը: Ապա անցնում են Խնուս եւ տեղի քրդերի հետ միասին 30 հայկական գիւղ են աւերակ դարձնում եւ բնակչութեանը ջարդում»:

Բրանտ՝ *Մուշ քաղաքում Անգլիայի հյուպատոս.– «Ամբողջ Մշո դաշտում մահմեդական գյուղացիությունը որևէ տեղ միախառնված չէ հայերի հետ», սակայն իշխանությունների տևական, հետևողական աշխատանքի հետևանքով աշխարհամարտի նախօրյակին պատկերը լրիվ փոխվել էր:*

«Հորիզոն». *– «Քաղաքի փողոցներում և քաղաքից դուրս ճանապարհներին ընկած են մարդկանց ու անասունների մեծ թվով դիակներ: Մերձակա գյուղերում կան տասնյակ մարագներ, որոնցում նկատվում են մարդկանց այրված մարմինների մնացորդներ: Կանայք ու երեխաներն այրվել են միասին, տղամարդիկ՝ նրանցից առանձին: Գետակներում ու ոռոգման առուներում ընկած են ևս հարյուրավոր մարդկային թարմ դիակներ՝ ձեռքերով իրար կապված: Հավանաբար նրանց այդպես են սպանել: Այս շրջանում թուրքերի գազանությունները հասան այն բանին, որ կառավարությունը ծայրամասային գյուղերին անվանեց խասաբխանե (սպանդանոց): Տեղի թուրքերը պնդում են, որ այս գազանությունների գլխավոր պատճառը եղել է գերմանացի միսիոներներից մեկը:*

Պատմական ս. Կարապետի վանքը լրիվ ավերված ու այրված է: Նրանում պահված պատմական թանկարժեք իրերը թալանված են, ինչպես ասում են, գերմանացիների կողմից և տարվել են Բեռլին: Հազարավոր հին գրքեր ու ձեռագրեր չաղ են տված վանքի ավերակներում:

Մակագրությունով գերեզմանաքարերը և, ընդհանրապես, պատմական գրությամբ մնացած բոլոր քարերը կոտրված են:

Նույն ողբալի վիճակում է Առաքելոց վանքը: Նույնը կարելի է ասել Ս. Հովնաննու վանքի մասին... Մի քանի օր առաջ գեներալ Ն... հեռագրեց, որ Առաքելոց վանքի դուռն ու մի չարք պատմական թանկարժեք իրեր գտնվել են Բիթլիսում, որտեղ թաղվել էին թուրքերի կողմից: Միայն մի դուռը գնահատ-

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 851:*

վում է 6000 թուրքական լիրա: Մի թուրք պատմել է, որ գերմանացիները ցանկացել են այդ դուռն ուղարկել Բեռլին, սակայն ռուսական հարձակումը խանգարեց:

Լուր է ստացվել, որ Մուշից մի օրվա հեռավորության վրա գտնվող մի գյուղի քուրդ բեկը փրկել է իր շրջանի 4500 հայի:

Եփրատի ու Մեղրագետի ափերը լցված են հազարավոր տղամարդկանց ու կանանց դիակներով: 13 տարեկան մի տղա պատմել է, որ իր մորը, իրեն և իր երկու եղբայրներին թուրքերը նետել են գետը: Ինքը փրկվել է միայն չնորհիվ այն բանի, որ պատահաբար նետվել էր ափին մոտ: Հիվանդանոցում հանդիպեցի 11 տարեկան աղջնակի, որն ընդամենը մի քանի օր առաջ էր ազատվել թուրքերի ձեռքից: Նա պատմեց իր նկատմամբ թուրք զինվորների կատարածների մասին, որոնց նույնիսկ երևակայելն է անհնար»:

Մելիքյան Ա.՝ *ականատես. – Մինչև պատերազմը Մուշի Ղզլաղաճ գյուղում 2000 հայ էր ապրում: «1915-ի հուլիս ամսին քուրդ Ռասալ բեկը հավաքել էր գյուղից 800 հոգի և ճանապարհներ կառուցելու պատրվակով, իր մարդկանց ու ժանդարմների միջոցով քշել էր տվել ոչ հեռու մի կիրճ, Խուլբի ուղղությամբ և, նրանց ձեռները կապել տալով, հրամայել էր կոտորել: Հրացանազարկ էին արել տասնյակներով, և որովհետև այդ «գյավուրների համար չարժեր փամփուշտ վատնել», անցել էին դաշույնի գործածության... Կրծքերի վրա դաշույնով խաչ են գծագրել, ուրիշների մատներն են կտրել:*

Կանանցից նրանք, որոնք դեռատի էին և ոչ էլ գեղեցիկ՝ ողջ-ողջ այրեցին մի տան մեջ: Ամենաերիտասարդ ու ամենագեղեցիկ կանայք ենթարկվեցին թուրք խուժանի խժդժություններին, և մեր մոտենալուն պես տարվեցին թիկունք: Հարյուրավոր ընակիչներ կոտորվեցին Եփրատի ափերին և հետո թափվեցին գետը:... Ամեն օր Եփրատի մեջ դիակներ էինք տեսնում...»:

Ազգաբնակչության մնացորդներին բռնագաղթեցրին: «Հայերին Միջագետք տանելու համար կազմված մահվան քարավանները ոչ այլ ինչ էին, եթե ոչ տանջալից մահվան դատապարտություն և տեղն ու տեղը սպանելը նրանց կազատեր չատ տառապանքներից:

Ճանապարհին՝ սկզբում ձյունոտ, իսկ քանի առաջ էին գնում դեպի հասարակած, ընկնում էին կիզիչ արևի տակ, մեռնում էին քաղցից ու հոգնությունից, չարունակ կողոպտվում ու խոչտանգվում էին քրդերի կողմից: Կանանց տանում էին հարեմները, երեխաներին մահմեդական էին դարձնում, իսկ նրանք, որոնք ի վերջո խուսափում էին այդ արհավիրքներից, Միջագետք հասնելով թողնվում էին իրենց սև բախտին՝ այդ անապատան ու անսնունդ անապատում»[1]:

Բարխյան Մ.՝ *ականատես. – «Կը ծագի արիւնոտ արեգակը, ահա՛ կը սեւնան Խասգիւղի դաշտ ու դուրան, խուժանը կը հասնի մեր գիւղի տակ, մօտ 500 հոգի կը բարձրանան մեր գիւղը... Գիւղը շրջապատուած է: Կը պայթի հրացանը, ուղղուած գիւղին, բայց պատասխան չկայ գիւղէն: Կը խուժեն ներս, ճիչ ու վայնասուն, առ ու փախ, կ՚որոտան գնդակները, գիւղէն դուրս փախչողները*

---

[1] ***Մելիքեան Ս.,*** *նշվ. աշխ., էջ 31-35:*

հեծեալներու կողմէ կը հետապնդուին ու կը սպաննուին, այր թէ կին...

Գիւղը վարկենական լեցուեցաւ Քոլոսկայ ու չրջակայ քիւրտ գիւղերու կաչեներով...»[1]:

Նորչենը պաշարվեց «Մուսաբէկի աչիրէթով, տեղական և չրջանի խուժաններով ու «միլլի» անկանոն ոստիկաններով: Գիւղը պատերազմի դաշտի վերածուեցաւ: Հանդիպող տղամարդիկ տեղն ու տեղը կը գնդակահարուէին, իսկ կիներն ու պզտիկները կը հաւաքուէին և կը բանտարկուէին ախոռներու մէջ... Կեսօրուն ատենները քսանի չափ արիւնարբու խուժան մը ներս սպրդեցաւ և դուռը գոցուեցաւ: Ասոնք հարս կամ աղջիկ առեւանգող կամ իւրացնողներ չէին, այլ բռնաբարողներ, լկողներ էին: Լաց, ճիչ, ողբ ու վայնասուն կը մնար անլսելի: Այս քստմնելի տառապանքի բոպէին, ահա մայր մը տղաբերքի երկունք կը քաչէ, կը լսուի երեխային սուր ճիչը: Կը փաթթեն ու կը նետեն ախոռի ջրհորին մէջ»: Մյուս օրը կանանց ու աղջիկներին գոմերից հանում են և ոստիկանների ուղեկցությամբ տանում դեպի Քրդագոմ: Երկու աղջիկ իրենց ջուրը նետեցին, ոստիկանները կրակեցին ու երկուսին էլ սպանեցին: «Մայր մը, հազիւ չորս տարեկան տղեկի մը ձեռքէն բռնած, երկու տարեկանը կռնակին կապած և մէկ տարեկանը գրկած, որչափ կարելի է կը ջանայ ձեռքէն բռնած տղուն հետ քալել... Բայց չէ՞ որ չորս տարեկան երախան չի կրնար քալել ձիուն հետ: Տղան ուժաթափ ընկաւ»: Վրա է հասնում ոստիկանն ու տղան մնում է նրա ձիու ոտքերի տակ:

Քրդագոմում Ղասրմի խուժանները «առին իրենց սիրած հարս ու աղջիկ, մնացածը քչեցին» առաջ, չթողնելով գետից ջուր խմել: Նրանց էլ Խաս գյուղում լցրեցին մարագներն ու հրդեհեցին[2]:

Վարդավառի օրը պաշարվեց նաև Յրոնք գյուղը, նախ կողոպտեցին, բռնաբարեցին ութ տարեկանից բարձր աղջիկներին, մարագները հրդեհեցին, որպեսզի դրանցում թափվածները դուրս գային, որոնց բոլորին գնդակահար արեցին: Տղամարդկանց մեծ մասին սպանեցին. մյուսները փախել կամ թաքնվել էին: Գյուղի ողջ բնակչությանը լցրեցին չինություններն ու այրեցին»[3]:

Հանրի Բարբի՝ «Մահվան քարավաններ».- ...Ահա իսկապես ճիշտ անունն այդ աքսորյալների, այդ ողորմելի խմբերի, որոնք մաղապուրծ առաջին կոտորածներից, նրանք թալանված, ուժասպառ, իրենց դահիճների կողմից քշվելով գնում են աքսոր, գնում են սպանդանոց... Ոմանց հարցեր տվեցի, սակայն վերապրածի կոշմարը նրանց այնպես էր ճնշել ու ահաբեկել, որ նույնիսկ վախենում էին դրանք հիշել: Նրանց բոլորի դեմքին նույն դիմակն էր՝ մթնած, դաժան, քարացած դիմակը, և պետք էր երկար, շատ երկար պնդել, երկար չարչարվել նրանց վստահությունը շահելու, որպեսզի վերջապես հարկադրեիր խոսելու իրենց սարսափելի վերապրածների մասին:

Ահա իմ լսած ամենահուզիչ պատմություններից մեկը. «Ես Մշո դաշտից եմ... Այս չրջաններից բռնագաղթված բոլոր ընտանիքները կոտորվել են ճանա-

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 848:*

[2] *Նույն տեղում, էջ 848-850:*

[3] *Նույն տեղում, էջ 850-852:*

պարհին, իսկ նրանց մարմինները նետվել են Եփրատ... Իմ ընտանիքը ևս կոտորվեց: Ես փրկվեցի թաքնվելով Ս. Կարապետի վանքի անտառում:

Մի անգամ գիշերը մեզ մոտ մի կին եկավ: Նա գրկին երեխա ուներ: Կիսամերկ էր... Այնքան նիհար ու գունատ էր, որ թվաց թե ստվեր էր: Սակայն խոսեց. «Հա՜ց»:

Նա պատմեց, թե ինքը Խեյփիան գյուղից է: Սորդար, Բազու, Հասանով, Սալեղան և Կարցիր գյուղերի բոլոր կանանց ու երեխաներին թուրքական իշխանությունները հավաքեցին Ս. Կարապետի վանքում... Նրանց հինգ օր փակ պահեցին: Ապա Մեհտի, Բեղլու, Զիարեթ և Հեյբիան գյուղերի կանանց ու երեխաների հետ քշեցին մինչև Եփրատի կամուրջը, ճանապարհին նրանց միացրեցին նաև Թոմ, Հերկերտ, Հորան, Ալաղին, Գոմս, Խախալտուկ, Սուլուխ, Խորոնք, Քարձոր, Ղզլաղաջ, Գոմեր, Շեյխլան, Ավազաղբյուր, Բլել և Քուրդմեյդան գյուղերի բնակիչներին: Այդպիսով հավաքվեց մոտ 10 հազար կին և երեխա: Առաջին իսկ օրվանից ուղեկցող քրդերն սկսեցին սպանել ամենածերերին և ամենաթույլերին, ովքեր քայլել չէին կարողանում: Տարագիրների կյանքը կախված էր ուղեկցողների քմահաճույքից: Բայց նրանք, որոնք առաջինը սպանվեցին, հետագայում պարզվեց, որ ամենաերջանիկներն էին:

Ամեն երեկո հենց որ քարավանը կանգ էր առնում, քրդերը բացահայտ, բոլորի աչքի առաջ բռնաբարում էին նրանց, որոնք իրենց դուր էին գալիս: Տեսա, թե նրանք ինչպես էին դրա համար ընտրում փոքրիկ, ութ, ամենամեծը տասը տարեկան աղջնակների: Եվ ամեն անգամ այդ զզվելի տեսարանն ավարտվում էր դիմադրողների սպանությամբ: Մայրերին սպանելով, նրանց փոքր երեխաներին էլ կա՛մ սպանում էին և կա՛մ նետում ճանապարհին: Քայլել կարողացողները կպչում էին ուրիշ կանանց փեչերը կամ սողում էին նրանց հետևից, իսկ ամենափոքրերը մնում էին այնտեղ, որտեղ նրանց նետել էին և մեկ-երկու օր անց կործանվում էին: Ով փորձում էր այդ փոքրիկներին վերցնել ու գրկած տանել, նրան չէին խնայում: Այդպես, մեր վիթխարի քարավանը սարսափահար առաջ էր ընթանում, իր անցած ուղին նշմարելի դարձնելով դիակներով: Ամեն անգամ, երբ անցնում էինք քրդաբնակ գյուղերով, տղամարդիկ ու կանայք շրջապատում էին և մեր վրայից պոկում էին ինչ իրենց դուր էր գալիս: Շուտով բոլորս գրեթե մերկ էինք:

Ամեն երկու օրը մեկ մի քիչ հաց էին տալիս, սակայն այն էլ բոլորին հերիք չէր անում: Եվ երբ տանից հետներս վերցրած պաշարները հատեցին, սկսեցինք պոկել ճանապարհի կողքերին եղած հասկերը: Շատերը չկարողանալով տանել քաղցը, մեռան: Հարկադրված էինք քայլել առավոտից երեկո, ամռան արևի այրող ճառագայթների տակ, օրերով ջրի երես չտեսնելով: Եվ ծարավից խելագարության էինք հասնում: Երբ ճանապարհին գետակ էր հանդիպում և քանի որ թույլ չէին տալիս երկար մնալ, հագենալու համար իրար էինք հրմշտում, հարվածում: Առաջինը հասածներին էր հաջողվում ծարավը հագեցնել, իսկ մյուսներին խցանման և ձեռնակոփի հետևանքով այլ բան չէր մնում, եթե ոչ բավարարվել պղտոր, լրիվ աղտոտված ջրով: Այդ բախումների ժամանակ քանի՜ երեխաներ էին վայր ընկնում ու ոտնակոխ մեռնում... Մեզանից ոմանց մեջ մշտական սարսափն ու հուզմունքը բթացրել էին բոլոր, այդ թվում

նաև մայրական զգացմունքը: Շատ մայրեր հուսահատված, քարացած, սովից, ծարավից ու հոգնությունից ուժասպառ դարձած, սկսեցին ճանապարհին նետել սեփական երեխաներին, քանի որ նրանց չալակել կամ գրկել այլևս չէին կարող: Առանձնապես ահավոր էր բազմազավակ մայրերի վիճակը: Բանը հասավ նրան, որ եթե այդպիսիներին հաջողվում էր գոնե մի երեխայի փրկել, համարվում էր երջանիկ, հարգանքի լրիվ արժանի կին:

Ոմանց հաջողվեց բթացնել պահապանների աչալրջությունը, փախչել ու թաքնվել հացահատիկի արտերում՝ հույս ունենալով հետագայում ապաստան գտնել Սասունի լեռներում: Շատերը զոհվեցին Եփրատը լողալով անցնելիս...

...Քրդերը, որոնց անձամբ եմ հարցափորձ արել, պատմեցին, որ չեթեները հետևում էին այս դժբախտներին և Քուրդմեյդանի ու Շեյխլանի հացահատիկի դաշտերում թաքնվածներին նորից հավաքում էին: Երեխաների հետ միասին հավաքվեց մոտ 500 մարդ: Ռաշիդ փաշայի հրամանով՝ նրանց բոլորին քշեցին Շեյխլան գյուղ, որի մերձակայքում լցրեցին մարագները և հրդեհեցին:

Իսկ քարավանն առաջ էր շարժվում: Գեջջի փաշալըքում ուղեկցողները փոխվեցին: Նորերը ավելի դաժան էին... Ճապաղջրում հանկարծակի վրա տվեցին քրդերը: Նրանք քարավանը շրջապատեցին և նշան բռնելով սկսեցին կրակել, բղավելով, թե նետվեք ջուրը: Գնդակները գետին էին տապալում կանանց ու երեխաներին: Շատերը նետվեցին Եփրատ: Քրդերը կրակ բացեցին նաև գետում եղածների վրա: Այդպես, լողալով, իրեն հաջողվում է երեխայի հետ մյուս ափը դուրս գալ: Քարավանը լրիվ կոտորված էր: Մի քանի հարյուր կանանց դիակներ թափված էին իրար վրա: Հազարավոր խեղդված կանանց ու երեխաների դիակներ Եփրատը քշեց տարավ»[1]:

Թորանյան Մ. *մշեցի. – «1915 թ. հունիսի 27–30-ը Մշո դաշտից 100.000 մարդ Քարքար, Ղթնան և Հրեշկերտ գյուղերում այրվեցին՝ ժողովրդին լցրեցին տներն ու գոմերը, դռները փակեցին և ամբողջ գյուղը կրակի տվեցին: Ով փորձում էր փախչել, զոհ էր դառնում խուժանի գնդակին»:*

1916-ին, երբ ռուսական զորքերը գրավեցին Տարոնը, միայն Աղջան ու Ալիզրնան գյուղերի փլատակներից հայտնաբերեցին հազարավոր ածխացած դիակներ, այդ թվում նաև երեխաների, իսկ Գարնեն գյուղում՝ 5000–6000 սպանված հայ սակրավորների դիակներ:

Մշո դաշտում խաղացվեցին սատանայական դաժանությունների տեսարաններ: Դրանց կազմակերպիչը քուրդ Մուսա բեկն էր, որն արյունարբուի համարում ուներ դեռ Աբդուլ Համիդի ժամանակներում և որի անթիվ հանցագործությունները միշտ անպատիժ էին մնում: Նրան օգնում էր Թոռը՝ 16 տարեկան մի պատանի, որը քուրդ հեծելազորի օգնությամբ աքսորի անվան տակ Ավզուտ գյուղ քշեց 8000 հայ, որտեղ նրանց մի մասին կոտորեց, իսկ մյուսներին կենդանի այրեց:

Որոշ թուրքեր իրենք են ընդունում, որ թուրքական կառավարության հանցագործություններն արդարացում չունեն:

---

[1] **Барби А.,** *նշվ. աշխ., էջ 29–35:*

Նրանք ասում են, թե ո՛չ Ղուրանը և ո՛չ էլ Շարիաթը նման չարագործություն թույլ չեն տալիս, որ վաղ թե ուշ Թուրքիան պատժվելու է:

Երբ Ավզուտ գյուղում չեթեներն ընտրում էին ամենագեղեցիկ և երիտասարդ հայուհիներին և Մուսա բեկի հրամանով նրանց փակում մի չենքում, իսկ մյուս բոլորին իրենց երեխաների հետ՝ գյուղի տներից մեկում և պատրաստվում էին այն հրդեհել, այդ պահին գործին միջամտեց մի մոլլա:

«Ձկա ոչ մի կրոն՝ մահմեդական թե քրիստոնյա, որ թույլատրի կենդանի այրել կանանց ու երեխաներին»,- հայտարարեց նա և ... բոնագաղթվածների հետ փակվեց տան մեջ: Սակայն չեթեները՝ ծիծաղելով նրա ասածի վրա, տունը հրդեհեցին և մոլլան զոհվեց այն դժբախտների հետ, որոնց ուղում էր փրկել:

Նույն Մուսա բեկի ավազակախմբերը սպանեցին այն հայերին, որոնք թողել էին իրենց գյուղերը և փախել Սասնո լեռները, սակայն խաբվելով թուրքական իշխանությունների՝ ավազակների գործակիցների կողմից, լեռներից իջել էին դաշտ՝ իբր ընդհանուր ներում էր լինելու:

Այդ ավազակները չխնայեցին և կոտորեցին նույնիսկ այն 300 որբերին, որոնք ապաստան էին գտել Մուշի եվրոպական ու ամերիկյան հիմնարկներում:

Անգլիական «Ֆորեյն օֆիսի» դիվաններում պահվում է օսմանյան բանակի սպա Հասան Մաարուֆի մի գրությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «1915 թ. օգոստոսին Զիարեթից վերադարձին ես Մուշի արվարձաններից մի գյուղում տեսա, թե ինչպես թուրք ժանդարմները 500 հայերի, մեծ մասամբ կանայք և երեխաներ, հավաքեցին մի ախոռում և այնտեղ փակեցին: Կտուրում եղած անցքից ժանդարմները բոցավառվող ջահեր ներս գցեցին: Բոլորը կենդանի վառվեցին: Ես չմոտեցա, բայց հեռվից տեսա բոցերը և լսեցի խեղճ զոհերի ճիչերը»:

Օգոստոսի 19-ին ԱՄՆ-ի հյուպատոս Ջեկսոնը տեղեկացնում է դեսպան Մորգենթաուին, որ հակահայկական ջարդերը վերածվում են հայերին կործանող ծրագրի, ինչպես նաև հայ ցեղը ոչնչացնելու մի վերջնական հարվածի:

«Mssionary Review of the World»-ը 1916 թ. հոկտեմբերի իր համարում, վկայակոչելով «London Times»-ին, բերում է մահմեդականների պատմածները իրենց տեսածների մասին: Նրանցից մեկը վկայում է, որ 1915 թ. օգոստոսին տեսել է «մոտ 16.000 հայի դիակ իրար վրա թափված երկու հովիտներում... 500 հայի փակել էին մի գոմում: Ժանդարմները տանիքի բացվածքից ներս նետեցին վառվող ջահեր: Ես տեսա բոցերն ու լսեցի վառվող զոհերի սարսափահար ճիչերը... Եթե նրանցից որևէ մեկը համարձակվեր դուրս գալ, անմիջապես սպանվում էր: Զէին խնայում անգամ ծերերին, կույրերին ու հիվանդներին:

Մուշ-Խնուս ճանապարհի կողքերի դաշտերում տեսա հայերի անգլուխ դիակներ... Հովիտները ծածկված էին դիակներով: Հիմնականում տղամարդկանց դիակներ էին: Յուրաքանչյուր հովտում հաշվվում էր չուրջ 900 դիակ»:

«The New York Times»-ը 1915 թ. հունիսի 1-ին գրում է. «Ամերիկացի ճանապարհորդները... պատմում են, թե այնպիսի դեպքերի էին ականատես եղել և թե Օսմանյան կայսրությունում քրիստոնյաներն այնպիսի վտանգի մեջ են, որպիսին չէր եղել սկսած այն ժամանակից, երբ թուրքերը ներխուժեցին Բյուզանդական կայսրությունը»:

Ալի աղա՝ *մշեցի Թուրք. – «Այս առավոտ ես, Հաջի Հալիմ էֆենդին և Բաղուլ էֆենդին ձիեր հեծանք ու գնացինք Ալիխան... Գյուղը լեցուն էր ժանդարմներով, որոնք մեզ ասացին, թե 350 հայեր իրենց պարագլխի հետ փակված են մարագում... Մենք բարձրացանք մի փոքր տան տանիքը և սպասեցինք, թե այդ ամենն ինչով էր վերջանալու»: Կես ժամ անց զինվորական բժիշկը 150 ժանդարմների ուղեկցությամբ մոտեցավ մարագին, բացեց դուռը և հրամայեց դուրս հանել հայերին: «Նրանք բոլորը չղթայված էին ու միմյանց կապված... Նրանց բերեցին ու շարեցին կալատեղի կենտրոնում... Սաստիկ գունատ, մելային դեմքերով, նրանք նայում էին մերթ գետնին, մերթ ժանդարմների հրացաններին... Պատրաստ կանգնած ժանդարմները (ազդանշանով) կրակ բացեցին և սպանեցին բոլորին»*[1]*:*

Ռուս բժիշկները Լիջե քաղաքում տեսել էին աղիները դուրս թափված հայ աղջիկների: Նրանց հարցին, թե ինչո՞ւ են այդպես վարվում, ասկյարները պատասխանել են. «Այդպիսին է սուլթանի հրամանը»[2]*:*

Սիրիացի բժիշկը տեսել է Կ. Պոլսից ստացված բնաջնջման հրամանները. «Իմ աչքի առաջ կոտորեցին պատանդ վերցրած կանանց, քանի որ Կ. Պոլսից ստացված հրամաններն արգելում էին որևէ հայի խնայել»[3]*:*

Ռոդովից, *ռուսական բանակի ենթասպա.– Կ. Շամխալիչին 1916 թ. մարտի 16-ին ուղարկած նամակից. – «...Մարտի 6-ին գնացի Դեյրյուք... Ճանապարհին մտա Հախկան գյուղը, որտեղ հրդեհված երեք մարագներում հայտնաբերվեց 200 մոխրացած դիակ... Դրանք հայերինն էին, որոնց թուրքերը լցրել էին մարագներն ու հրկիզել»:*

Ավստրո-Հունգարիայի դիվանագետ.– *Սովորաբար կոտորածն իրականացվում էր հետևյալ կերպ, մի մեծ փոս էր փորվում, բերում էին կանանց ու երեխաներին և մայրերին հարկադրում իրենց երեխաներին նետելու այդ փոսը, որից հետո երեխաների վրա բարակ շերտով հող էին լցնում: Կապկպված հայ տղամարդկանց աչքի առաջ բռնաբարում էին կանանց ու սպանում, ապա սպանվում էին նաև տղամարդիկ և բոլորի դիակները լցնում էին նույն փոսը: Հայերի մի մասին գետն էին նետում կամուրջներից և թույլ չէին տալիս ափ դուրս գալ: Եփրատում ու Արածանիում 25 հազար հայի դիակ կար:*

Այդ գազանությունների դեմ բողոքեց տեղի մահմեդական հոգևորականությունը. քաղաքի իմամ Շեյխ Ավիս Քաղրրը մուֆթեսարիֆին ասաց, որ պետք է հարգել Մուհամմեդի օրենքը, որը թույլ է տալիս սպանել միայն զենք կրելու և դիմադրելու ընդունակ, այսինքն՝ 15-60 տարեկան արական սեռի անձանց: Սակայն իմամին հայհոյեցին և սպառնացին ձերբակալել: «Մահմեդական որոշ հոգևորականներ սկսեցին թաքցնել հայերին, որի համար տուգանվեցին ու արժանացան վիրավորանքների: Հայերին հովանավորողների թվում էին իմամը, շեյխ Աբդուլ Համիդը, երևելի անձինք՝ Ջաֆար և Նադրը խան եղբայրները, Սիջար աղան, Յուսուֆ և Քյարիմ աղաները, Ալի աղան, շեյխ Թաղի օղլին:

---

[1] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 219:*

[2] *"День", 6-ը սեպտեմբերի 1915 թ.:*

[3] *Նույն տեղում:*

Թուրք ճանապարհորդ.– *«Մուշ քաղաքը աւերակների կոյտ է: Հազիւ 15 հայ տուներ կան, որ վերադարձել են... Հայոց թաղն ամբողջութեամբ այրուած է: Եկեղեցիները քանդուած են: Առաքելոց վանքը կիսակործան դրութեան մէջ է: Ս. Կարապետը կիսաքանդ է: Քանդուած մասը ծառայում է իբրև զօրանոց: Սասունում հայի նշոյլ չկայ: Կան հատուկենտ իսլամացածներ: Ս. Աղբերիկի վանքը դեռ կանգուն է, այնտեղ կան երկու արեղաներ... Վանքում կան մօտ 40 հայ որբեր եւ այրիներ միանգամայն անոյշ դրութեան մէջ:*

Վարդենիս գիւղում է բնակւում քիւրտ Մուսա բէկը: Նրա մօտ ծառայում են մի քանի հայ մշակներ: «Ծառայութեան» մէջ են նաև եօթը հայ օրիորդներ եւ կիներ..., նրանց անունները քրդացած են: Անգամ հայկական գերեզմաններ են քանդուած: Թէ՛ քիւրտերու եւ թէ՛ թիւրքերու մօտ կան բաւական թուով իսլամացուած հայ կանայք ու երեխաներ...

Խլաթը և Բուլանըխը աւերակներու են վերածուել... Քրթանցոց եւ մոտկանցոց մէջ կան բաւական թուով հայեր՝ ողբերգական վիճակի մատնուած»[1]*:*

Թուրք ոստիկան. *«Ինձ յանձնարարված էր Տարօնի գիւղերէն մէկը տեղահանել: Գիւղի երիտասարդութեանը խաբելով հաւաքեցինք եկեղեցում եւ բոլորի գլուխները մէկ առ մէկ ջնջխեցինք՝ 30 հոգու: Ապա եկեղեցին հրկիզեցինք: Երբ գեավուրներուն հասցրեցինք գետափ, նախ սրերով սպանեցինք տղամարդկանց ու նետեցինք գետը: Կանանցից ու երեխաներից ընտրեցինք ամենագեղեցիկներին, իսկ մնացածին նետեցինք ջուրը: Եօթ գեավուրի՝ հինգ տղամարդ, երկու կին, տարայ հօրեղբօրս որդուն, որը կոյր էր: Դանակը տուեցի նրա ձեռքը եւ գեավուրներին մէկ-մէկ մօտեցրեցի ու նա սպանեց»*[2]*:*

Թուրնայան Մ.– *ականատես. «Յուլիսի 27-31-ը Մշոյ դաշտի 100.000 հայ Քարքար, Զթնան եւ Հրեշկերտ գիւղերում այրուեցին: Լցրեցին տներ ու գոմերը եւ հրդեհեցին ամբողջ գիւղը: Քուրդ խուժանը խորհրդարանական Իլիասի հրամաններով գնդակահարում էր կրակից փախչողներին»*[3]*:*

Մահմեդ.– *ոստիկան. «Հայերու վրայ այլեւս հավատարմութիւն չունենալով, հարեմիս մեջ գտնուող ամբողջ հայուհիները, ոմանք սպասուհի՝ թուով 17... նուրբ պատիժներու ենթարկեցի: Մէկին բերանը հող լեցուցի ու խաչելով այրեցի: 2-3-ին թեւերնին ու քիթերնին կտրելէ վերջ խազրխի վրայ նստեցուցի... մէկ քանին ողջ-ողջ թաղուելու բախտ ունեցան: 2000 հոգիի դաշտ տարինք, հարկադրեցինք խոր հորեր փորել ու բոլորին կենդանի այդ հորերը լեցուցինք ու հողով ծածկեցինք»*[4]*:*

Շտոֆելս Հ.– *բժիշկ. 1915-ի աշնանը Մուշի և Զյունակերտի արանքում թափված էին կանանց ու երեխաների ածխացած, նեխած դիակներ*[5]*:*

Աշնան վերջին թուրքական իշխանությունները ներում «չնորհեցին»,-

---

[1] ***Պալաքեան Գ.***, *նշվ. աշխ., էջ 272:*

[2] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 550-552:*

[3] *Նույն տեղում, էջ 542:*

[4] *Նույն տեղում:*

[5] ***Օհանջանյան Ա.,*** *1915 թ. Անհերքելի վկայություններ: Ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, Եր., 1997, էջ 121:*

պատմում է իրադարձությունների ականատես Ղ. Սարգսյանը:- Ձերբակալված հայերին այլևս ոչ թե սպանում էին, այլ կերակրում, հագցնում էին և ուղարկում լեռները՝ սասունցիներին համոզելու, թե կառավարության քաղաքականությունը փոխվել է: Հավատացողներին հավաքեցին Տափկ, իսկ մի քանի օր անց տեղափոխեցին Մուշ, որտեղ տղամարդկանց առանձնացրին, որոնց մի մասին տարան ճանապարհների վրա աշխատելու, իսկ մեծ մասին՝ դեպի Արածանիի ափը: Թե՛ առաջինները և թե՛ երկրորդները ոչնչացվեցին: Երբ ձմեռը եկավ՝ սկսեցին մաքրազարդել նաև կանանց ու երեխաներին:

Հունվարի 29-ին Թուրքերի շրջանում խուճապ սկսվեց, իսկ փետրվարի 1-ին նրանք փախուստի դիմեցին[1]: Գաղթական հայերը Շիզան գյուղում էին: Երբ նրանք անցնում էին Արածանին, Թուրքական զորքերը խուճապահար հետ դարձան և ժողովրդին ոտի տակ տալով գնացին Մուշ: Լուր տարածվեց, թե ռուսների առաջխաղացումը կանգնեցվել էր: Ժողովրդի մեջ լաց ու կոծ սկսվեց: Ջիարեթում հավաքեցին Թուրք գաղթականների մեջ եղած հայերին ու կոտորեցին:

Ճապաղջուր-Հայնի ճանապարհին ոստիկանական խմբեր էին հերթապահում, որոնք հայերին բռնում էին ու տեղնուտեղը սպանում: Հայ թաքցնողներին մահապատիժ էր սպառնամ[2]:

Վահան Պատրիկյան (Մուշ).- Մշո կոտորածից մի քանի օր անց մի տան մեջ բռնում են 12 տարեկան Լեոնին: Դրանից երկու օր առաջ մի հաշմանդամ հայի ոտքերը կապում են ու գետնին քարշ տալով սանդուղքներից իջեցնում են և այդպես քաշելով տանում են Ս. Կիրակոսի Կողը և սպանում: Նրա մեծ որդի Մովսեսը քաղաքի պաշտպանության ժամանակ աչքի էր ընկել բացառիկ խիզախությամբ:

Ոստիկանապետը հրամայեց բերել նավթ, որը լցրեցին Լեոնի վրա ու կրակ տվեցին: Տղան բոցերի մեջ գալարվում էր, իսկ հավաքված Թուրքերը փայտերով հարվածում էին նրան, ապա շուրջպար բռնեցին, որի կենտրոնում այրվող Լեոնն էր[3]:

Մշո կոտորածից երեք ամիս անց մութեսերիֆ Սերվեթ փաշան ծանր հիվանդանում է ու անընդհատ զառանցում. «Էս երեխաները թափվել են վրաս և ինձ խեղդում են, հեռո՛ւ տարեք»[4]:

1916 թ. փետրվարին 3-րդ բանակի հրամանատար նշանակված Վեհիբը ցուցմունք տվեց, որ Տարոնի «իգական բնակչությանը երեխաների հետ միասին այստեղ (Ջրիկ գյուղ) և Սողգոմ տեղափոխեցին կապված և բոլորին միասին այրեցին մարագներում»[5]:

Սասունի Կ.- ականատես. «Դեպի Պիթլիս քշուած ժողովուրդը Խասգիւղի եւ շրջականերուն մէջ կը գտնէր իր մահը:

---

[1] «Տարոնի արծիվ», 1938 թ., № 12, էջ 37-44:
[2] Նույն տեղում, էջ 24-29:
[3] Նույն տեղում, էջ 30:
[4] Նույն տեղում, էջ 32:
[5] **Թէոդիկ,** նշվ. աշխ., էջ 82:

Կոտորածի ուրիշ կեդրոն մըն էր Խոբերը, որ կը գտնուէր Մեղրագետի կամուրջին գլուխը: Անել տեղ մը, որ կ'իյնար Մուրատ գետի եւ Մեղրագետի միջեւ: Դէպի Մուշ փախուստը անիմաստ էր եւ ստոյգ կորուստի կը մատնուէր փախչողը: Իսկ այդ եռանկիւնին մէջ քշուած ժողովուրդը կա՛մ մարագներու մէջ կ'այրուէր եւ կա՛մ Մեղրագետի ափերուն վրայ կը կոտորուէր...

Սուլուխի կամուրջը, Շեխլանի գետի անցքը եւ Ղզլաղաճի ճամբան կոտորածի այլ վայրեր էին»[1]:

Տպավորություն չպետք է ստացվի, թե տարոնահայությունը ոչնչացվեց առանց որևէ դիմադրություն ցույց տալու: Իհարկե, ո՛չ: Տեղ-տեղ եղան հերոսական մարտնչումներ, ահեղ հակահարվածներ ջարդարարներին:

Գառնեն. – Գյուղ է Մուշ քաղաքի կողքին: Կոտորածներն այստեղ սկսվեցին քաղաքի կռիվների հետ: Մուշում գործածվող թնդանոթներից երկուսը ռմբակոծում էին նաև Գառնեն գյուղը: Թուրքերը ծրագրել էին «մի թափով» լուծել գառնենցիների հարցը, բայց չկարողացան: Գյուղի հայերը հին հայդուկ Գառնենի Մկրտիչի (Սողոմոնյան) ղեկավարությամբ նրանց ուժեղ հակահարված հասցրեցին: Կռիվն սկսվեց հունիսի 30-ին և երեք օր տևեց: Թուրքերը Գառնենում շատ դիակներ թողեցին: Չեթեներին ու խուժանին օգնության հասավ մի զորամաս, սակայն հայերը հաջողացան մի քանի անգամ հետ մղել նաև զորքերի գրոհները: Ռմբակոծման հետևանքով գյուղի տների մեծ մասն ավերվեց, վերջացան հայերի փամփուշտները, և մարտնչող գառնենցիները, այդ թվում նաև Մկրտիչը, մնացին ռմբակոծություններից քանդված տների փլատակների տակ:

Ալիջան. – Տեղի մարտական ջոկատը Միսակ Բդեյանի և Հայկ Միրիջանյանի ղեկավարությամբ լուրջ նախապատրաստություն էր տեսել գյուղը պաշտպանելու համար: Հունիսի 22-ին թուրքերը փորձ արեցին կոտորել գյուղի հայությանը: Ժանդարմական մի ջոկատ մտնում է Ալիջան և պահանջում գյուղի բոլոր ձիերը: Հայերը 30 ձի են տալիս: Թուրքերը պահանջում են 30 հոգի՝ ձիերին ուղեկցելու համար: Հայերը համաձայնվում են, բայց ուղեկցողներին նույն օրը սպանում են Ալիջանից քիչ հեռու: Փրկվում է մի հոգի և համագյուղացիներին տեղյակ պահում կատարվածի մասին:

Գյուղ է գալիս ժանդարմների մի ուրիշ խումբ և պահանջում, որ տղամարդիկ իրենց հետ մեկնեն կառավարչատուն: Ալիջանցիները չեն համաձայնվում: Նրանք զինաթափում են ժանդարմներին և դիրքեր են գրավում, իսկ կանանց ու երեխաներին տեղավորում են եկեղեցում[2]: Քրդերն ու չեթեները շրջապատում են Ալիջանը: Սկսվում է կռիվը: Հաջողվում է չեթեներին զինաթափել ու վռնդել: Չորս օր շարունակ ալիջանցիները հետ չպրտեցին թշնամու գրոհները, թուրքերն ու քրդերը զոհեր տվեցին: Հարձակվողներին օգնության հասան ժանդարմների նոր ջոկատներ ու մեծ թվով բաշիբոզուկներ: Կ. Սասունին Ալիջանի կռիվն անվանում է Հերոսամարտ և ճիշտ է վարվում:

Գյուղի հերոսական պաշտպանությանը մասնակցում էին ոչ միայն 15

---

[1] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 871-872:

[2] Նույն տեղում, էջ 917:

տարեկանից բարձր բոլոր տղամարդիկ, այլև՝ մեծ թվով կանայք:

Այդ ժամանակ գյուղ են լցվում Ս. Կարապետի վանքի շրջակայքի գյուղերի կոտորածներից վերապրած կանայք ու երեխաները, որոնք նույնպես տեղավորվում են եկեղեցում: Չկարողանալով հաղթահարել հայերի դիմադրությունը քրդերը Մուշից օգնություն են խնդրում և այն ստանալուց հետո վերսկսում են հարձակումը: Թուրք զինվորների մոտ կեսն սպանվեց: Երրորդ օրվա գիշերը հայերը ոչնչացնում են ժանդարմներին:

Հաջորդ օրը համոզված, որ գյուղում երկար պաշտպանվելն անհնար է, ալիջացիները որոշում են հեռանալ Քանա սար[1]:

«Երբ Ս. Գէորգի քով հասանք,- գրում է ալիջանցիներից մեկը,- հայրս ըսաւ. «Դուք հո՛ս կեցէք, երթամ տեսնեմ Սուլուխ ինչ կայ չկայ, յետոյ գամ ձեզ տանիմ»... Քիչ ետք վերադարձաւ եւ ձայնեց, որ գիւղին մէջ ոչ ոք մնացեր է. ամեն տան մէջ իր բնակիչները սպանուած լեցուած են, ոմանք անդամահատուած, ոմանք յօշոտուած»[2]:

Ավրան. - Ս. Կարապետի շրջանում նույնպես՝ գյուղերի վրա հարձակումները տեղի էին ունենում միաժամանակ, դրա համար էլ ավրանացիները պաշտպանության կանգնեցին նախապես: Ինքնապաշտպանությունը ղեկավարում էին Հայկ Տեր-Վարդանյանն ու Մակար Խարախանյանը: Ավրանացիներն ամբողջ տասնմեկ օր կռիվ տվեցին թշնամու գերակշիռ ուժերի դեմ: Ի վերջո, թուրքերն ու քրդերը կարողացան մտնել գյուղ, ուր մարտը շարունակվեց ամեն մի տան համար: Գյուղացիների մի մասը գյուղից դուրս է գալիս, բայց անմիջապես հարձակման է ենթարկվում ու կոտորվում, իսկ մյուս մասը մնում է տներում ու դիմադրում ինչով կարող էր: Գյուղի մարտական ջոկատն ամրանում է եկեղեցում և կռվում մինչև վերջին փամփուշտը: Ավրանը հրդեհվում է: Գյուղից որևէ մեկը չի փրկվում:

Վարդենիս. - Հին հայդուկներ Հասրաթն ու Մարտիրոսը ղեկավարեցին ոչ միայն Վարդենիսի, այլև Զխուրի մյուս գյուղերի ինքնապաշտպանությունը: Նրանք կազմակերպեցին սննդամթերքի և առաջին անհրաժեշտության տնային իրերի ժամանակին տեղափոխումը Շամբի (Եղեգնուտ) ճահճապատ ծանծաղուտի կղզյակները: Հունիսի 25-ին եղեգնուտով պատված այդ կղզյակներում, տեղավորեցին նաև Արդոնքի, Ղարսի և մի քանի ուրիշ գյուղերի բնակչությունը, իսկ մարտական ուժերը դիրքեր գրավեցին ափի ժայռերի հետևում: Խնդիր էր դրված մեկ շաբաթ դիմադրել քրդերի հարձակումներին, բայց նրանք մի ամբողջ ամիս ապրեցին այդպես:

Հունիսի 25-ին քրդերը լցվեցին հայկական գյուղերը և տեղավորվեցին հայերի տներում: Նրանք մի քանի անգամ հարձակում գործեցին Շամբի վրա, բայց եղեգնուտներում դիրքավորված հայերի արձակած գնդակներից զոհեր տալով հետ քաշվեցին: Հայերը փամփուշտները շատ խնայողաբար էին օգտագործում: Նրանց նշանաբանն էր՝ «Ամեն փամփուշտ՝ մահմեդականի մի գլուխ»:

Զխուրցիները տասնհինգ օր պաշտպանվեցին: Կռվում էին հաշվենկատ,

---

[1] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 924:

[2] «Պայքար», 1954 թ. մայիսի համարներ:

խելացի: Տասնհինգերորդ օրը քրդերը փախան: Կազակական մի ջոկատ Վարդենիսի կողքով գնում էր դեպի Մուշ: Ապա երևացին նաև հայ կամավորները և չխուրցիները չարժվեցին դեպի Ախլաթ:

Կատարվեց տարօրինակ բան: Ռուսների գալու չնորհիվ երեք օր հայերի առաջ բաց էր գաղթի ճանապարհը, բայց Քանա սարում կուտակված 20.000 հայությունն այդպես էլ տեղից չչարժվեց: Երեք օր անց ռուսները հանկարծակի նահանջեցին և գաղթի ճանապարհը փակվեց: Վարդենիսցիները և, ընդհանրապես, Շամբում ապաստանածներն, ընդհակառակը, ռուսական բանակի հետ հեռացան: 6000 մարդ փրկվեց:

Ս. Կարապետ. *– Հունիսի 25-ին Զիարեթ, Մեղդի, Բաղլու, Սորտար, Բոգլան, Գվաս, Պազու և մի քանի ուրիշ գյուղեր չրջապատվում են: Գյուղացիները լցվում են անտառ ու բարձրանում լեռները: Կանանց ու երեխաներին սկզբում թողեցին գյուղերում, բայց երբ լսեցին, որ նրանց էլ էր վտանգ սպառնում, նույնպես տարան անտառ ու լեռներ: Բայց զինված չէին, 50-100 մարդուն բաժին էր ընկնում մեկ զենք: Անտառում և լեռներում կուտակվել էր 15.000-20.000 մարդ: Սննդամթերք գրեթե չկար, գյուղերից սննդամթերք բերելու փորձերը վերջանում էին մեծաթիվ զոհերով: Ամենուրեք դիակներ թափված էին*[1]*:*

Սկզբնական չրջանում թշնամին վախվորած էր մոտենում անտառին, բայց երբ համոզվեց, որ հայերը զենք գրեթե չունեն, որոշ քաջություն ձեռք բերեց, բայց այդպես էլ չհամարձակվեց խորանալ:

Հայերն սկսեցին իրենք հարձակվել՝ քրդական գյուղերի վրա՝ սննդամթերք ձեռք բերելու համար:

Ինքնապաշտպանության ընթացքում նրանք բազմաթիվ հաջող և անհաջող ընդհարումներ ունեցան, փորձեցին հեռանալ, բայց մեծ զոհեր ունեցան: Եղան նաև փրկվածներ: Նրանք երկար մնացին այդ վայրերում, ոմանք 1916-ին, երբ ռուսական բանակը հասավ Մուշ, գնացին միանալու նրան:

Ինքնապաշտպանական կռիվներին մասնակցություն ունեցան նաև Զիարեթ, Բաղլու, Բոկլան և մի քանի ուրիշ գյուղերի հայերը:

Ինքնապաշտպանական կռիվներին ղեկավար-կազմակերպող մասնակցություն ունեցան Սարդարցի Արամը, Գոմսա Մոսոն և Մելիքը, վանականներ Ռըպյան Ավետիսն ու Սարգիսը, ուսուցիչ Մկրտիչ Տեր-Մկրտչյանը:

Նչված և նման մի քանի ուրիշ ինքնապաշտպանական կռիվները վկայում են, որ տարոնահայությունը, չնայած իր դաշնակցական ղեկավարների վախկոտության, անբանության ու մորթապաշտության, գոտեմարտի ելավ: Դաշնակցական պարագլուխների մորթապաշտությունը, իսկապես, դավաճանական էր: Երբ գետի նման հոսում էր Տարոնի հայության արյունը, նույն պահին «Ռուբէն, Սասունի մէջ հաւաքել տալով չրջաններում բոլոր կռուող ոյժերը, զէնքերը, ռազմամթերքը եւ պարէնը, քաչուած էր այդ կղզիացած լեռնաչխարհը ու նոր բարձրաբերձ լեռներու եւ զովասուն ձորահովիտներու դարաւոր կաղնիներու ստուարախիտ չարքին տակ, կարծես թէ իր «ամառային արձա-

---

[1] ***Սասունի Կ.,*** *նչվ. աշխ., էջ 930:*

կուրդը» յօրանջելով անցընելու եւ ակնդէտ սպասելու, մինչեւ որ հասնէին ռուսական փրկարար բանակը եւ հայ կամաւորները...»[1]:

Անդրադառնանք ևս մի խնդրի:

Ռուսական բանակի 1915 թ. ամռան հանկարծակի նահանջը չչմեցուցիչ ազդեցություն ունեցավ: Ռուսական հրամանատարության այդ քայլը, մասնավորապես, հայկական շրջաններում արժանացավ միահամուռ բացասական գնահատականի և կնքվեց «տարօրինակ», «դավաճան», «հայասպան» և նման այլ պիտակներով: Նահանջի հարկադրական բնույթը մինչև օրս քննարկվում է, քննադատվում, մերժվում և այլն: Ըստ իս, դա, իրոք, հարկադիր նահանջ էր: Այդ հարցում ռազմական արվեստի մասնագետները միահամուռ են:

Սարիղամիշում ջախջախվելուց հետո Թուրքերը հնարներ էին որոնում վրեժի համար, ինչը ոչ այնքան զգացմունքի, որքան պատերազմի ելքի համար բախտորոշ խնդիր էր:

«Էնվերը մշակել էր մի համարձակ ու իր ծավալներով նախադեպը չունեցող պլան՝ 11 դիվիզիաներից կազմված հզոր խմբավորման միջոցով ճեղքել ռուսական հարձակման գծի Վանա լճից (Նազիկ գյոլ) մինչև Մշո դաշտի Հյուսիսի (Կոպ) հատվածը և Ալաշկերտի ուղղությամբ առաջանալ ու գրավել Մանազկերտը, Ալաշկերտը, Կաղզվանը և Իգդիր-Երևան-Դիլիջան-Ղազախ գծով շարժվել դեպի Թբիլիսի: Այդ պլանը խնդիր ուներ, նախ, գլխովին ջախջախել ռուսական բանակի գլխավոր ուժերը և, երկրորդ, լուծել հիմնական խնդիրը՝ նվաճել Կովկասը»:

Ռուսական բանակն, իրոք, վտանգված էր, որովհետև Օգանովսկու հրամանատարության տակ գտնվող 4-րդ կովկասյան կորպուսի զբաղեցրած ռազմաճակատը ձգվում էր 400 կմ (Վանից մինչև Դալար), որի պաշտպանությունն ավելի քան դժվար ու անհուսալի էր, քանի որ Թուրքերը հնարավորություն ունեին ռազմաճակատային գիծը ճեղքել ցանկացած հատվածում:

Եվ, իրոք, հուլիսի 9-ին Թուրքերը Կոպի մոտ ճեղքում են ռուսների պաշտպանությունը և սլանում դեպի Մանազկերտ: Մինչև հուլիսի 22-ը նրանք գրավեցին Մանազկերտը, Բաթնոսը, Սինջան, Կարաքիլիսեն, Ալաշկերտը և մոտեցան Կաղզվանին: Թուրքերի հարձակվող ուժերի հարավային թևի առաջ խնդիր էր դրվել Դիադինով շարժվել արևելք և դուրս գալ Իրանական Ադրբեջան: Թուրքերի հարձակման հետևանքով ռուսական 4-րդ կորպուսի հրամանատարությունը կորցրեց կապն իր ստորաբաժանումների հետ, Վան քաղաքում գտնվող ռուսական զորքերն ու հայ բնակչությունը հեռացան քաղաքից: Վանի և Ալաշկերտի հայությունը սարսափահար փախչում էր:

Ռուսները վերախմբավորեցին իրենց ուժերն ու հակահարձակման անցան: Բարաթովի զորամասերը չեչտակի առաջ մղվեցին և Դալարի մոտ անցան Թուրքական զորքերի ձախ թևի թիկունքը: Թուրքերը խուճապի մատնվեցին և հարձակումը դադարեցրեցին[2]:

---

[1] ***Տարոնցի Ա.,*** *նշվ. աշխ., էջ 65:*

[1] ***Հարությունյան Ա.,*** *Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաղիվանագիտական պատմությունից, Եր., 1983, էջ 268-270:*

* * *

Տարոնում կոտորածները ամենատարբեր ձևերով ու ծավալներով շարունակվեցին մինչև ռուսական բանակի գրավումը:

Մութեսարիֆ Սերվեթը իսկապես, հանկարծամահ եղավ. հավանաբար անգամ դահճի սիրտը չդիմացավ սեփական գաղանությունների տեսարաններին: Նրան փոխարինեց Շավքի բեյը, որը սակայն չուտով մեկնեց Մոսուլ և մութեսարիֆի պարտականությունների կատարումը դրվեց 34-րդ դիվիզիայի հրամանատար Վելսի վրա:

Ռուսական բանակի մոտենալը չփոթ ու խուճապ առաջացրեց Մշո թուրքերի շրջանում: Քաղաքի ամբողջ մահմեդական բնակչությունն տարհանվում էր, տներն ու մյուս չինությունները հրդեհված կամ ավերված էին, և երբ ռուսական զորքը քաղաք մտավ, վերջինս ավերակի կույտի էր վերածված:

Որոշ ժամանակ անց հրաման ստացվեց, թե հայերն այլևս չեն հալածվի և կարող են վերադառնալ իրենց բնակավայրերը: Ոչ մեծ թվով հայեր հավատացին ու դուրս եկան իրենց թաքստոցներից ու լծվեցին բերքահավաքի գործին: Սակայն 2-3 շաբաթ անց ոստիկանությունը նրանց հավաքեց: Քրդերին նորից արգելվեց հայերին օթևան տալ:

Հայերին հավաքեցին ոստիկանատներում, ապա լցրեցին մի մարագի մեջ ու երդիկից կրակ բացեցին: 85 հայի գյուղից հանեցին, նախ լրիվ մերկացնելով իրար կապեցին: Քարավանը խիտ ցանցով շրջապատել էին ոստիկաններն ու քրդերը: Նրանց տարան մի դարափոս ու գնդակահարեցին: Դա սեպտեմբեր ամսին էր[1]:

1915-ի աշնանն սկսեցին քրդերից հարկ պահանջել: Իսկ քուրդը սովոր չէր հարկ վճարելու, այն էլ բավարարելու պետության մեծ պահանջները: Տարոնի քրդերը որոշեցին հեռանալ իրենց լեռները, որտեղ թուրքերը մուտք ունենալ չէին կարող:

Ծղակ գյուղում նույնպես հայի հետք չկար, սակայն քրդերի մոտ թաքնված 60-70 հայ կար: Մի օր Ծղակը շրջապատվեց. թուրքերը եկել էին թաքնված հայերին հաշվեհարդարի ենթարկելու: Գյուղից 60 հայի սպանդի ենթարկեցին, նեղություններ պատճառեցին նաև քրդերին: Նրանցից մեկն ասաց. «Հայերի ջարդից հետո մեր պատիվն էլ ընկավ թուրքի աչքում, մի քանի օր հարսանիք արեցինք հայերի դիակների վրա, որպեսզի մեզ էլ գերեզման փորեինք»[2]:

1916 թ. փետրվարի 10-ին ռուսները տիրացան ամբողջ Տարոնին: Նրանց հետևից վերադարձան ջարդերից վերապրած տարոնցիները:

Տարոնում ստեղծվում են բնակչությանը օգնություն կազմակերպող մարմիններ, որոնք իրենց վրա վերցրեցին այդ գավառները ղեկավարելու վարչական որոշ իրավասություններ: Ռուսական հրամանատարությունը հայկական ջոկատներին զենք տրամադրեց: Սկսվեց հայության հավաքումը: Մի քանի ամսում Սասունում քրդերի մոտից ազատվեց 13400 երեխա և կին: Գերությու-

---

[1] «Տարոնի արծիւ», 1939 թ., № 11, էջ 28-34:

[2] Նույն տեղում, № 12, էջ 21:

նից ազատված, ինչպես նաև Կովկասից վերադարձած հայերը ձեռնամուխ եղան իրենց ավերված չեների վերականգնմանը:

Նազարբեկյանն ու Սիլիկյանը նույնպես զենք էին տրամադրում հայերին մեծ քանակությամբ: Գրեթե բոլոր սասունցիները զինվեցին:

Մանուկի ջոկատը ռուսական բանակի առաջապահն էր: Անդոկի ստորոտում՝ Խոզմո Գեղիգի և Շենի խոշոր ճակատամարտերում, որոնց թուրքերի կողմից մասնակցում էին նաև արևմուտքից բերված երկու զորամասեր, Մանուկի ղեկավարած սասունցիների ջոկատը հաջողեց անցնել Անդոկ ու հարվածել Թշնամու թիկունքին: Թուրքերը պարտվեցին, սակայն նահանջեց նաև ռուսական բանակը, քանի որ թուրքական գլխավոր ուժերը հարձակում սկսեցին ս. Կարապետի ու Վարդոյի կողմից:

1916-ի աշնանը հայկական կամավորական գնդերը լուծարվեցին: Անդրանիկի և Դրոյի գնդերում կռվող սասունցիները իրենց զենքերով մնացին Տարոնում, որոնց չարքերը գնալով համալրվում էին: Ստեղծվում էր նշանակալից ռազմական ուժ, ինչը քաջալերում էր ռուսական հրամանատարությունը: Հայկական այդ ուժերը սփռված էին Մշո դաշտում, Խնուսում, Բուլանըխ-Մանազկերտում և Ախլաթ-Արճեշում, սակայն գործում էին համագործակցված: Այս զինված խմբերը գոյություն ունեցան 2-3 տարի:

Տարոնում դրանց ղեկավարներն էին Փեթարա Մանուկը, Ախոն, Իսրոն, Թաթոն, Սանդրոն, Ցրոնքցի Մուրադը, Զոփուր Միսակը, քաղաքում՝ Լոլոյի Տիգրանը, Պզտիկ Արամը, Արմենակը, Պոլեի Արշակը, ս. Կարապետի շրջանում՝ Քեռի Հովոն, Սարգիս և Ավետիս Տպեյանները: Այդ ուժերում էին նաև Զոլոն, Մորուք Կարոն, Ղազար Պետոյանը, Ղազար Ֆարհատյանը, Տալվորիկցի Թաթարը և Ֆարեհը, Սեմալցի Ստեփանը, Գելիեցի Պետրոսն ու Ավեն:

Խնուսում էին Սասունցի Մուշեղը (նա կազմակերպեց Խնուսի գունդը), Պուճուր Աբրոն, Փիլոսն ու Շապուհը, Խարաչոպանցի Սիմոնը և Կորալցի Արամը:

Բուլանըխ-Մանազկերտում գործում էին Միհրանը, Արշակը, Կնյազը և Մխիթար Դարմանյանը:

Թվարկված բոլոր անձինք ունեին իրենց մեծ ու փոքր ջոկատները:

ՄՈՒՇԸ՝ ՆԱՀԱՏԱԿ

Սասունցի կանայք ամեն ուրբաթ օր իջնում էին Մուշ քաղաք, ապրանքներ գնում ու դրանք չալակած բարձրանում Սասուն: Այդպես էր եղել տասնամյակներ շարունակ և իշխանությունները երբևիցե դրան արգելք չէին հանդիսացել: Սակայն հունիսի 25-ին սասունցի կանանց բռնում են, պատճառաբանելով, թե գնված ապրանքը նախատեսված է հայդուկների համար:

Կանայք այդ մեղադրանքը միահամուռ մերժում են, բայց նրանց բողոքը անտեսվում է ու բանտ են նետվում բոլոր այն խանութների տերերը, որտեղից սասունցի կանայք գնումներ էին կատարել:

Դրան հետևում են քաղաքի աչքի ընկնող հայերի ձերբակալությունները:

Հունիսի 24-ին Սերվեթը հրաման է ուղարկում Մշո առաջնորդական տեղապահ Վարդան վարդապետին և Քաղաքական ժողովին, թե 24 ժամվա ընթացքում 15-70 տարեկան բոլոր տղամարդիկ գրանցվեն Ուրֆա մեկնելու համար, որտեղ մնալու էին մինչև պատերազմի ավարտը: Վարդան վարդապետի գլխավորությամբ մի պատվիրակություն գնում է մութեսարիֆի մոտ և խնդրում երեք օր ժամանակ տալ այդ հրամանի դեմ վերադաս մարմիններին բողոքելու համար: Սերվեթը մերժում է հայերի խնդրանքը և արգելում որևէ տեղ դիմում գրել:

Այդ պատասխանը քննարկվում է առաջնորդարանում: Կղերն ու հարուստներից չատերը գտնում էին, որ հրամանին պետք է ենթարկվել, իսկ մեծամասնությունը Հ. Կոտոյանի գլխավորությամբ դեմ են դուրս գալիս: «Դուք ինչպէ՞ս կը հաւատաք, որ մինչև Ուրֆա ողջ տանին ձեզ»: Նա բերում է մյուս նահանգներից բռնագաղթվածների օրինակը, որոնց ճնշող մեծամասնությունն այդպես էլ գաղթավայր չէր հասել: Կոտոյանը միանգամայն իրավացիորեն նկատում է, թե Տարոնի ու Սասունի հայության հանդեպ առավել դաժան են վարվելու, քանի որ «երեսուն տարիներէ ի վեր Մշոյ գաւառն է եղած օրրանը յեղափոխութեան...»: Պետք չէ ինքնախաբեությամբ զբաղվել: «Բոլորս ալ, մեր կիներով ու զաւակներով, պիտի ենթարկուինք» նույն ճակատագրին, ինչին արժանացան մյուս նահանգների հայերը:

Վարդան վարդապետը գտնում էր, որ փոխանակ ամբողջ ժողովուրդը ոչնչացվի՝ ավելի ճիշտ էր, որ տղամարդիկ մեկնեին հանուն մյուսների փրկության: Նրան պատասխանեցին, թե տղամարդկանց աքսոր-ընաջնջումը չի փրկելու կանանց ու երեխաներին: Ոչնչացվելու էին բոլորը: Բերվում էր Բաղեշի օրինակը, որի հայ բնակչությունը երբեք որևէ շարժման չէր մասնակցել, ազգային խնդիրներ չէր հետապնդել, բայց բաղեշցի հայերից ոչ մեկին չխնայեցին[1]:

Վարդապետը դրան պատասխանեց. «Ամեն մարդ ազատ է, ուզողը թող մնայ ու դիմադրէ, չուզողը թող ինծի հետ գալ: Ես վաղն իսկ կ'երթամ կ'արձանագրուիմ»:

Շատերը հետևեցին կրոնական առաջնորդի օրինակին:

Բնութագրական մի երևույթ: Հայերին բարեհաճ վերաբերող քուրդ աղաները նրանց ասում էին. «Ձեր փրկութիւնը ո՛չ աղայի եւ ո՛չ էլ պէյի քով փնտրեցէք, այլ՝ դէպի ռուս բանակը, որ հեռու չէ: Պուլանուխի Լիճ գիւղը կը գտնուի: Ցանցառ է թիւրքական բանակատեղին, լուծուած են քիւրտական գունդերը՝ հայերը ջարդելու համար, զանգուածօրէն փախեք, հրաշք կը գործեն ճամբան գիտցողները, երկու օրուայ ճամբայ է ասկէ դա Լիճ, երկու գիշեր քալելով կ'անցընէք ամեն վտանգ»[2]:

Այդ ամբողջ ընթացքում գյուղական բնակչության հոսքը Մուշ գնալով ավելի ու ավելի սաստկանում էր: Թուրքական իշխանությունները դեմ չէին հայերի նման կենտրոնացմանը, մանավանդ, որ դա պարենավորման լուրջ

---

[1] **Բդէյեան Մ.,** նշվ. աշխ., էջ 379:
[2] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 844:

դժվարություններ էր առաջացնում: Առաջնորդարանը դիմեց կառավարչին, որպեսզի օժանդակություն ցույց տա քաղաք լցված 10.000 հայերին: Երբ այդ խնդրով Վարդան վարդապետը այցելեց Սերվեթին, այնտեղ էր նաև Իլիասը, որի երեսփոխան դառնալու գործում մեծ վաստակ ունեին թե՛ առաջնորդարանը և թե՛ ՀՅԴ տեղական կազմակերպությունը: Իլիասը վարդապետին ասում է. «Քո ազգիդ ըրածին չափն անցավ՝ Վան, հայ կամաւորներ եւ նոյնիսկ հօրեղբայրս՝ Հաջի Մուսան սպանողները հայերն են եղել... եւ դեռ եկած եք եւ մեզմէ ողորմութիւն ալ կ'ուզէք ձեր դաւաճան ազգի բեկորներուն համար: Ձեր բռնած այս ընթացքով դեռ շատ որբեր պիտի ունենայ ձեր ազգը: Ասկէ ետք եղած ոճրագործութեանց առաջքն ալ չենք կրնար եւ պիտի չուզենք ալ առնել...

Ահա, Փափազեանի և Ռուբենի փախչիլը... Ինչո՞ւ, մենք կո՞յր ենք, չե՞նք գիտեր, թէ նրանք ինչ շարժումներ կընեն Սասունում: Բայց վստահ եղէք, որ ձեզ բոլորդ ալ մեջտեղէն չմաքրած, մենք մեջտեղէն չենք վերնար»[1]:

Այս խոսակցությունն ու կառավարչի մերժումը տեղի հայությանը բացարձակ չփոթմունքի մատնեց: Քաղաքում զենք ունեին միայն 30 երիտասարդներ: Հայկական զինված ջոկատները գտնվում էին երեք թաղերում և իրարից հեռու: Սուրբ Մարինեի թաղում էր Տիգրան Մկրտչյանը մոտ 20 հոգով:

Հաջի Հակոբի խումբը Ձորու թաղում էր: Լևոն Ասլանյանը 7-8 հոգով Վերին թաղում էր: Հ. Կոտոյանը որոշում է երիտասարդների խմբի հետ բարձրանալ Սասուն՝ «քաղաքը լքելով իր սեւ ճակատագրին»: 27-ի գիշերը չուրջ 100 հոգի Կողի թաղի բլրով վեր է ընթանում դեպի Սաչկի Դուրանի բարձունքը, բայց հայոց գերեզմանոցի մոտ, որտեղ թաղված էին շատ հայ մեծություններ, այդ թվում՝ Գևորգը, Սպաղանաց Մակարը և այլոք, հայերը բախվում են քաղաքը օղակի մեջ առած թուրք զինվորների մի ջոկատի հետ: Մի քանի հոգի հաջողում է անցնել օղակն ու բարձրանալ Սասուն, իսկ մյուսները, հարկադրված, հետ են դառնում: Սասուն մեկնող երկրորդ խումբը, որի հետ էր նաև Հ. Կոտոյանը, երբ անցնում էր Մշո գետը Ձորի թաղում սկսվեց հրացանաձգություն: Հաջին հրամայեց վերադառնալ:

Մուշն ու Մշո դաշտը սպասողական վիճակում էին, գիտեին, որ թուրքերն իրենց չէին խնայելու, բայց գիտակցության ծալքերի ինչ-որ տեղում անթեղված մնում էին հույսի դալուկ կայծերը: Դիրքորոշումը որոշակի էր. նախահարձակ չլինել և զենք վերցնել միայն այն ժամանակ, երբ թուրքերը կսկսեն ռազմական-ջարդարար գործողություններ: Հայությունը ամուլ, անորոշ կացության մեջ էր:

Իսկ թուրքերը դանդաղ, ոչ քիչ դեպքերում՝ աննկատ, նեղացնում էին շրջափակման օղակը: Հունիսի երկրորդ կեսին խզվեց կապը քաղաքի ու Դաշտի միջև: Կապը խզվեց նաև քաղաքին հարևան գյուղերի հետ: Բոլոր կողմերից կոտորածի ու բռնագաղթի վերաբերյալ լուրեր էին ստացվում: Ամեն օր մշեցիները լսում էին, որ Դաշտից ու քաղաքից նոր զինված խմբեր են անցնում Սասուն: Թուրքական զորքերը «անաղմուկ» զբաղեցնում էին քաղաքի վրա իշխող դիրքերը, թնդանոթներ տեղադրում:

---

[1] **Բդէյեան Մ.**, նշվ. աշխ., էջ 360-361:

Մուշ քաղաքի հայ բնակչությունն անտեղյակ էր, թե Դաշտում ինչ էր տեղի ունենում: Առաջնորդարանը հայերին հորդորում էր զգույշ լինել, իշխանություններին գրգռող քայլեր թույլ չտալ: Իսկ քաղաքում գնալով չատանում էին զորքը և «քրտական հոծ բազմութիւնը, Թրքական չեթէները եւ Մուշի դաշտին մօտիկ պատերազմող Թուրքական բանակը կապ դրած էր բեբաններուն»[1]:

Հունիսի 27-ին Սերվեթը և Իթթիհադի տեղական գործիչները Բեզեր էֆենդու միջոցով կանչում են Վարդան վարդապետին և քաղաքի հայ ավագանուն (թվով 350 հոգի) և ասում, թե Կարինի հայերն արդեն հեռացել են քաղաքից և նույնը պետք է անեն նաև Մշո հայերը: Սերվեթն ասաց. «Ինձ անհայտ պատճառներով հրաման է ստացվել, որ դուք բոլորդ պետք է թողնեք Մուշը և տեղափոխվեք Դիարբեքիր՝ մինչև պատերազմի վերջը»[2]:

Իլիաս Սամին սպառնալից հայտարարեց, թե մեկնելուն նախապատրաստվելու համար երեք ժամ ժամանակ էր տրվում:

«Խեղճ Վարդան վարդապետ իզուր կ'աղաչէր,- գրում է Գ. Տեր-Կարապետյանը,- թէ երեք ժամ՝ ինչպես կարելի է պարպել... Գաղանները անդրդուելի կը մնան...

Երբ տեղահանութեան հրաման կը տրուէր, արդէն Մուշի հայոց թաղեր իրենց չրջակայ չորս բլուրներէն պաչարուեր էին եւ ութ վաչտ զինուոր թնդանոթներ և հրացաններ ուղղուեր էին անոնց վրայ»[3]:

Վարդան վարդապետին 70 հոգանոց մի խմբի հետ քաղաքից հանում են ու տանում Բաղեշի ուղղությամբ: Ուղեկցողներից օնբաչի Աբդուլ Ռահմանը փորձում է նրա փարաջան թոցնել: Վարդապետը մտրակը ձեռքին հարձակվում է օնբաչու վրա ու սպառնում. «Բաղեշ հասնենք՝ քեզ ցույց կտամ»: Բայց Ծծմակի Քթի մոտակայքում հետևից կրակում են նրա վրա: Սպանվում է ամբողջ խումբը: Օնբաչին շատ հայեր էր սպանել, բայց առանձնակի հպարտությամբ էր պատմում, թե ինչպես էր գնդակահար արել Վարդան վարդապետին: Հայ հոգևորականների դիակները լցնում են մարագն ու այրում:

Այդ ընթացքում Մուշ քաղաքում ահաբեկիչ իրավիճակը գնալով ավելի ու ավելի ահագնանում էր: Ամբողջ գիշերը հրացանաձգություն էր, որոտում էին թնդանոթները: Տեղի էին ունենում մահմեդական խուժանի և զինվորների ժողովներ, հավաքներ, հնչում էին կոչեր՝ անմիջապես ձեռնամուխ լինել ջիհադի պահանջների կատարմանը:

Հունիսի 28-ին առավոտյան մի չավուշ չրջում էր քաղաքի փողոցներով ու գոչում. «Հայե՛ր, համաձայն մութեսարիֆ փաչայի հրամանի, պարտավոր եք ժամը 10-ին հավաքվել կառավարական գրասենյակի մոտ՝ ձեր ձիասայլակներով, ձիերով, անասուններով, ձեր ամբողջ եղած-չեղածով և ընտանիքներով Դիարբեքիր գնալու համար: Ով չենթարկվի այս հրամանին, կարտաքսվի քաղաքից, իսկ նրա ունեցվածքը կբռնագրավվի»[4]:

---

[1] *«Յուչամատեան Մեծ Եղեռնի», էջ 431:*
[2] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 219:*
[3] ***Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 844:*
[4] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 219:*

Քաղաքի հայ բնակչության զգալի մասը հրաժարվեց տարագրության հրամանին ենթարկվել. «Բաղէշի ժողովուրդը,- մտորում էին մշեցի հայերը,- որ ի բնէ զինասէր յեղափոխական չէ եղած ... ինչո՞ւ զերծ չմնաց կոտորածեն, ինչո՞ւ չխնայուեցաւ անոնց կիներուն եւ երեխաներուն»[1]: Մշեցիները որոշեցին. «...Փոխանակ ծունկի գալու, որ վատ դահիճը իւր հարուածները իջեցնէ մեր գլխուն եւ անպատիւ մեռնինք, նախապատիւ կը համարինք. որ ոչ ոք հեռանայ իւր տունէն, ամեն մարդ աշխատի կատարել իր պարտականութիւնը՝ ըլլայ զէնքով, ատրճանակով, սուրով, երկաթով եւ ինչով, որ կարենայ իւր վրէժը լուծել եւ իբրեւ մարդ մեռնիլ»[2]: Բայց հայերը լռություն էին պահպանում, ինչպես «մահուան դատապարտուածներ. կը զգուշանան ճիչ մը անգամ հանել», գիտեն, որ «թիւրքերը պատրուակ կը փնտրեն», որովհետև նաև լսել էին, որ անցած գիշերը իշխանությունները հանձնարարել էին, որ բոլոր «իսլամներ, զինուոր կամ չեթէ, առաւօտտան տունէն դուրս չելլեն ... եւ զգուշանան իրենց տուներու մէջ որեւէ հայ պահել»: Հետո «ճիհատ կը քարոզուի զինուորականներուն ու չէթէներուն եւ քաղաքի այն թիւրք սրիկաներուն, որ ջարդին կը մասնակցէին»[3]:

Մուշ քաղաքում ջարդն սկսվեց հունիսի 27-ին: Իսկ «նենգաւոր լուսաբացին, յունիսի 28-ին՝ հայոց թաղերը չորս կողմէ թնդանօթի կը բռնուին, բոլոր ժողովուրդը ներսը փակուած, թնդանօթաձգութեան հետ միասնաբար ութը-տասը հազար հրացաններ կ՚որոտան անընդմէջ անզէն ու ահաբեկ ժողովուրդին վրայ, տուները կը հրդեհուին, տուները կը փլին, աղեխարշ վայնասուններ ու աղաղակներ քաղաքը կը լեցնեն:

Ու թնդանօթները կ՚որոտան...»[4]: Ռմբակոծությունն սկսվեց Վերին թաղից, որին միացավ Զորու թաղը: Օրվա վերջին՝ քաղաքի հայկական թաղերը կրակի, ավերմունքի ու կողոպուտի մեջ էին: Քրդերը թալանում էին և իրենց քիրվա (բարեկամ) հայերին ասում. «Եթէ հայերդ ջարդելու հրամանը ետ առնուեցաւ, ձեր եղածները դարձեալ ձեզի կը պատկանին, իսկ եթէ կը ջարդուիք, փոխանակ ուրիշներ օգտուելու, լաւ է, որ մենք առնենք, մենք իրարու բարեկամ եղած ենք»: Եւ Մնօ Ստեփանի 60 ոչխարները կը տարուին ճպրէ Զաթոյի կողմէ[5]:

Ե. Կարապետյանը Մուշ քաղաքի կռվի սկզբի մասին պատմում է. «Սերվեթ փաշան հրամայեց չորս թնդանոթներ դնել քաղաքի բարձունքների վրա և դրանց փողերն ուղղել հայոց թաղերի կողմը: Քաղաքը շրջապատված էր զորքերով: Հաջորդ օրը փորձ արվեց բռնությամբ հայերին դուրս հանել իրենց տներից ու աքսորել: Իմանալով, որ մի խումբ հայեր Ասատուր աղայի տանն ինքնապաշտպանության են կանգնել, Սերվեթը հրամայեց հրետանային կրակ բացել: Հայերը պաշտպանության կանգնեցին: Զորքը խուժեց քաղաք՝ ճանապարհին հրկիզելով հայերի տները: Հայերը նահանջելով կենտրոնացան Զորու թաղում: Քաղաքի թուրք բնակչությունն օգնում էր զորքին:

---

[1] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 379:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 844:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, էջ 847:

Հայերը մեծ կորուստներ էին կրում, քաղաքն անընդմեջ ռմբակոծվում էր: Նրանց փամփուշտները սպառվում էին: Կանայք ու երեխաները լցվել էին նկուղներն ու ձորերը»[1]:

Մշեցիների երրորդ խմբին հաջողվեց հունիսի 30-ին դուրս գալ ու բարձրանալ Կուրտիկ: Նույն օրը Վերին և Ս. Մարինե թաղի հայերի այն տները, որոնք ռազմավարական կարևոր նշանակություն ունեին, թուրքերը դատարկում են և դրանցում զորքեր են տեղավորում: Այդ մի քանի օրերի իրողությունները փոխում են Հ. Կոտոյանի ծրագիրը: Նա որոշում է մնալ քաղաքում և պաշտպանության կանգնել: Նա քաղաքի հայության շրջանում անառարկելի հեղինակություն էր և անմիջապես համախմբեց կռվելու ընդունակներին: Այդ մոլորված ու չփոթ պահին Հ. Կոտոյանը որոշում է անցկացնել քաղաքում մնացած մարտական խմբերի ժողով, որտեղ, ինչպես գրում է Ե. Պարսամյանը, խոսակցությունը «կը դառնար մահու եւ կենաց շուրջը..: Արտաքին աշխարհէն բոլորովին կտրուած, անգէտ թէ ի՞նչ կ՚ընեն կամ ըրին միւս շրջանները...»[2]:

Հ. Կոտոյանի ղեկավարության տակ մտավ 30 կռվող: Ահա այդ երեք տասնյակին վիճակված էր մահուկենաց կռիվ տալ հարյուրավոր անգամներ իրենից շատ թշնամու դեմ: Մշեցի հայերն աներևակայելի սառնասրտությամբ էին ընդառաջ գնում գլխապտույտ արագությամբ զարգացող դեպքերին: Նրանք դիրքեր էին կառուցում, խրամատներ փորում, տների միջև հաղորդակցության անցքեր բացում, համալրում իրենց ջոկատները, և որոշում՝ կռվել մինչև վերջին փամփուշտը:

Նրանք ասում էին. «Մենք կը կռուինք մինչեւ վերջին փամփուշտը: Եթէ Սասուն գտնուող մեր պարոնները մեր ճգնաժամը տեսնելով մեզ օգնություն փութան, արդէն փրկուած կ՚ըլլանք, մեր յաղթանակը կատարեալ կ՚ըլլայ, եթէ ոչ, կրկին անգամ, մենք մեր պարտաւորութիւնը կատարած կ՚ըլլանք, թող անոնք ալ պատմութեան առջեւ պատասխան տան»[3]:

Հ. Կոտոյանի այս որոշման մասին հակադիր կարծիքներ կան: Ըստ իս, իրավացի են նրանք, որոնք դա ճիշտ են համարում, որովհետև, միևնույնն էր, ոչնչացվելու էին և պատվաբեր էր մեռնել զենքը ձեռքին:

Ստեղծվեց ռազմական խորհուրդ, որոշվեցին դիրքերն ու դրանց հրամանատարները՝ Արոյի խումբը դիրքավորվում է «Սատոյի տանը, Տիգրանի խումբը՝ Ջուլկենց տանը, Սամոյի խումբը՝ Խանամիրենց տանը, Հաջի Հակոբի խումբը՝ Կոնջոյենց տանը, Լ. Ասլանյանի խումբը՝ իրենց տանը»: Ընդհանուր հրամանատար՝ Հ. Կոտոյան, տեղակալ՝ Տ. Մկրտչյան: Հաջորդ օրը ոստիկանները փակում են Վերին թաղի փողոցները: Նրանք մտնում են տուն առ տուն և բոլորին ջարդում: Այդպես հասնում են Լ. Ասլանյանի տունը: Թակում են դուռը: Լ. Ասլանյանը թույլ չի տալիս դուռը բացել: Ոստիկաններն սկսում են

---

[1] *ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 219:*

[2] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 893:*

[3] ***Բզէյեան Մ.,*** *նշվ. աշխ., էջ 389:*

կրակել պատուհաններից ներս: Հայերը պատասխան կրակ են բացում և մի քանի ոստիկան սպանվում է:

Կռիվն սկսվում է: Վերին Թաղը անմիջապես վերածվում է ռազմադաշտի: Զենք ունեցող հայերը դիրքավորվում են սեփական տներում ու կրակում: Թաղը խուժած թշնամին ծանր կորուստներ տալով հետ է փախչում: Շուտով կռիվը տարածվեց նաև մյուս թաղերը և ընդհանուր բնույթ ստացավ:

Հայերի դեմ կանգնած թուրքական բանակից 1500 հոգին օղակել էին քաղաքը: Թե՛ նրանք և թե՛ քաղաքում մնացածները նոր զորակոչված, բանակային կյանքին և կռվելու կանոններին անծանոթ, անգամ զինվորական արտահագուստ չունեցող պատանիներ էին:

Հունիսի 29-ին հայերը «անանկ չփոթութեան կը մատնէին բոլոր թնդանօթաձիգները, որ անոնք անընդհատ կը տեղափոխէին թնդանօթները... Անոնց արձակած ռումբերեն ոչ մեկը իր նպատակին կը հասնէր»: Վերին Թաղի զորքերը թուրքական գերեզմանատան քարերի հետևից անկանոն և անկապ կրակում էին տների վրա, հայերին վնասներ չէին պատճառում, որովհետև տների առաջ քարեր էին չարված և դրանց հետևում հողով լցված սնդուկներ էին դրված:

Առաջին օրը թուրքերը բազմաթիվ զոհեր տվեցին, իսկ հայերը՝ ոչ մի: Մշեցիները հրացանային կրակի տակ պահեցին Վերին Թաղի վարժարանն ու եկեղեցին և թույլ չտվեցին, որ թուրք զինվորները դուրս ելնեին ու մասնակցեին կռվին:

Այդ օրը կռվի գլխավոր հրապարակը Վերին Թաղն էր, որը կռվեց անհերևակայելի խիզախությամբ ու հնարամտությամբ: Թնդանոթները հայկական թաղերում ավերածություններ էին գործում: Հաջորդ օրը թուրքերը կարողացան հրդեհել Ս. Մարինե թաղի տները: Զորու և Վերին թաղերում հայերի դիրքերն աստիճանաբար օղակվում էին հրդեհներով:

Զորու թաղում հաջողվում է հետ շպրտել ներխուժող թշնամուն: Հայ նշանառուն մեկը մյուսի հետևից սպանում էր թուրք թնդանոթաձիգներին և անկանոն ու համեմատաբար քիչ վնասաբեր դարձնում ռմբակոծությունները:

Հաջողվում է Վերին Թաղի կանանց և երեխաներին տեղափոխել Զորու Թաղ: Հաջորդ օրը Վերին Թաղը լքում են նաև այնտեղ մարտնչող 28 մարտիկները: Նրանց թիվն անչուշտ ավելի մեծ էր եղել: Գրեթե բոլոր տները վերածվել էին մարտկոցների: Տներ կային, որ ժամեր շարունակ դիմադրում էին թուրքերին մինչև թնդանոթային կրակի տակ չէին ընկնում և ավերվում: Թնդանոթները սկսեցին ռմբակոծությունը կենտրոնացնել Զորու Թաղի վրա, չնայած Վերին Թաղում կռիվն ամբողջ գիշեր շարունակվեց: Սաչքի Դուրանում տեղադրված թնդանոթները, օգտվելով հրդեհների լույսից, գնդակոծում էին կանգուն մնացած շենքերը:

Աստիճանաբար, բոլոր կռվողները հավաքվում են Զորու Թաղում: Արդեն նշվեց, որ կռվի սկզբին հայերն ունեին 30 մարտիկ, բայց մարտական գործողություններն սկսվելուց հետո նրանց թիվը գնալով աճեց, նոր մարդիկ պաշտպանության կանգնեցին: Գնալով աճեց նաև դիմադրության կետերի թիվը: Կռվողներին մեծ օժանդակություն էին ցույց տալիս կանայք ու երեխաները՝ հաց, ջուր, փամփուշտ էին բերում, ոգևորում խոսքով ու երգով:

Զորու թաղում կովի սկզբի վեց դիրքի փոխարեն հունիսի 30-ին կար 13 դիրք, որոնց հրամանատարներն էին Շահկա Արոն, Գանջոյենց Նազարը, Իսպանդարյան Սամսոնը, Բդեի Արթինը, Թարգի Խաչիկը, Կիտուրի Արամը, Նալբանդյան Տելեմակը, Թազանի Կարոն, Սիմոնյան Ալեքսանը, Ղազարի Հայկը, Ջուլկենց Հովհաննեսը և Բալոյենց Միքայելը:

Հերոսական դիմադրություն ցույց տվեց նաև Բրդի թաղը, մասնավորապես Ամբո Գասպարի և Թարգի Գրիգորի տները: Նրանք դիմադրեցին այնքան ժամանակ, մինչև որ բոլորով մնացին ռմբակոծությունից քանդված տների փլատակների տակ:

Հունիսի 30-ին մի քանի անգամ վիրավորվում է Հ. Կոտոյանը, բայց դիրքերը չի թողնում: Երեկոյան Մ. Բդեյանենց տանը տեղի է ունենում Մուշ քաղաքի ռազմական խորհրդի նիստը: Պաշտպանվողներին մնացել էր միայն 8.000 փամփուշտ, այսինքն՝ երկու օրում օգտագործվել էր 24.000 փամփուշտ, ամեն մարտիկ օրվա ընթացքում ծախսել էր 200 գնդակ: Որոշվում է նույն գիշերը երիտասարդ ուժերին քաղաքից հանել և ուղարկել Քանասար:

Հավանաբար բանը միայն փամփուշտների սպառվելը չէր, որ երիտասարդ մարտիկները հեռացան: Թերևս ճիշտ էր Կ. Սասունին, երբ գրում էր. «Դիրքերու մեծ մասը խորտակուած էր եւ դիմադրութեան որեւէ ամուր կէտ մնացած չէր»[1]:

Այո՛, Մշո մի բուռ երիտասարդներ երեք օր աներևակայելի քաջությամբ կռվեցին բազում անգամ գերակշիռ թշնամու ու նրա հրետանու դեմ: Դա իրողություն էր և ոչինչ անբնական չկար, որ նրանց դիրքերը իրոք ավերվել էին և այլևս մարտը շարունակելն անհնար էր, մանավանդ որ ամենքի մոտ մնացել էր ընդամենը 15-20 փամփուշտ:

Անհնար է չհիանալ մշեցի հայերի խիզախությամբ: Նրանք կռվում էին քաջ գիտենալով, որ ժամ առ ժամ մահը մոտենում է, որ փրկությունը, և առավել ևս, հաղթանակն անհնար էր: Թշնամու ձեռքը չընկնելու համար վերջ էին տալիս իրենց կյանքին: «Կնճոյենց Գաբրիէլն ու Խոչկայ Կարագը, իրենց ընտանիքին բոլորին իրենց ձեռքով թոյն կու տան, ասոնց կը հետեւին ժողովրդէն շատերը»[2]:

Հունիսի 30-ը օրհասական օր էր: Թնդանոթները ռմբակոծում էին առանց դադարի: Զորու թաղը չրջանաձև պաշտպանության էր կանգնել: Հայերի բոլոր դիրքերը ռմբակոծվում էին: Պաշտպանները քանդված դիրքերը վերականգնում էին կամ ուրիշ տներ փոխադրվում: Թուրքերը թնդանոթները մոտեցնում են թաղին, նշանառու Զախլախենց Հուսիկը սպանում է ևս մի քանի հրետանաձիգի, բայց ինքն էլ մնում է ռմբակոծությունից փլվող տան քարերի տակ: Նույնիսկ այդ օրհասական պահին Հ. Կոտոյանը կազմակերպում է Հուսիկի և Զքոյի թաղումը: Նրանք առաջին նահատակներն էին: Թաղման արարողությունը կատարում է Ե. Պարսամյանը: «Բայց կռիվը կը դառնար ահաւոր: Թնդանօթներու եւ հրացաններու ձայներէն մարդ կը խլանար: Հրդեհն ամեն կողմէ Զորու թաղի

---

[1] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 906:

[2] **Պարսամեան Ե.,** նշվ. աշխ., էջ 56:

կեդրոնին կը մօտենար: Կոուողներն ու ժողովուրդը ծուխի ու փլած տուներու փոշիի մէջ կը կորսուէին շատ յաճախ»: Ձորու թաղում էր հավաքված քաղաքի կենդանի մնացած ամբողջ ժողովուրդը: Տներն իրար հետևից տապալվում էին, կանգուն էին մնացել միայն այն տները, որոնք պաշտպանության խորքում էին կամ ձորում: Ժողովուրդը, մոլորված, տարուբերվում էր, ալիքավորվում, իրեն փողոցից փողոց նետում: Բայց համատարած ավերում էր, հրդեհ, ծուխ, անգամ շնչելու օդը չէր բավականացնում: Մի բնորոշ փաստ: Երբ սասունցիները լսեցին Մշո անհույս մաքառման մասին նրանցից մի քանիսը դիմեցին Ռուբենին՝ օգնության հասնելու քաղաքին: Փաշան անտարբեր պատասխանեց. «Երթանք ալ՝ անօգուտ է, ոչինչ կարող ենք ընել, մեր ամենալաւ գործը պիտի ըլլար ամրանալ եւ ամրացնել Սասունը եւ դիմադրել մինչեւ ռուսական բանակին գալը»: Նման մոտեցումը ձեռնտու էր միայն Թշնամուն, որը դրանից օգտվելով հիմնովին բնաջնջեց Մշո դաշտի ու Մուշ քաղաքի հայությանը[1]:

Նկարագրում է Ե. Պարսամյանը. «...Փետտուած մազերով այլայլուած կիներ, դալկացած դէմքերով մատաղ կոյսեր, ապշահար ու անտէրացած երեխաներ, վշտաբեկ եւ յուսահատ այրեր, ջղայնացած կոուողներ իրար հրմշտելով, իրար տրորելով, իրարու ուսին բարձրանալով Հաճիին կը փնտռէին... Անըմբռնելի իրարանցում, հոգեւարքի սարսափելի հոնդիւններ: Բայց Հաճին կիսասթափ ցասումով մը կը դիտէր չորս կողմը, հրացանի փողէն բռնած... Կարծես մարմնացումը ըլլար այդ հոգեւարք ամբոխի բովանդակ հոգերանութեան: Կը մեղմանար կարծես, արգահատանքով լի նայուածքով մը կը սկսէր նայիլ յորձանուտ ջուրի մը ալիքներուն նման իր շուրջը ալեկոծուող բազմութեան, կ'երդուընար նահատակներու, երկնքի, երկրի եւ Աստուծոյ անունով, որ ինքը տեղ չպիտի երթար... պիտի կռուէր և եթե մեռնիլ հարկ ըլլար, պիտի մեռնէր իրենց հետ...»[2]:

Գիշերը մշեցիները խումբ-խումբ թողեցին քաղաքը և շարժվեցին տարբեր ուղղություններով՝ հույսի մարող կրակը սրտերում: 600-700 մարդ հեռացավ քաղաքից, որոնց մի մասը զոհվեց քաղաքը շրջափակած զինվորների հետ բախումների ընթացքում: Շատեր, այդ թվում Ե. Շարաֆյանի 70 հոգանոց խումբը հաջողեցավ բարձրանալ Սասուն:

Շահկայի Արոյի 100 հոգանոց խումբը կատաղի կռվով ճեղքում է զինվորների շղթան ու հասնում Հավատորիկ: Զաքարիայի խմբի մի մասը Մշո այգիների հնձաններում մարտի մեջ է մտնում և լրիվ կոտորվում: Ե. Պարսամյանի 230 հոգիանոց խումբը, կազմված հիմնականում դեռահասներից, թաքնվում է Մոկունքի այգիներում: Նրանք այստեղ բազմաթիվ դիակներ են տեսնում և պարզում որ Տերգեվանքի գյուղացիներն են, որոնց ջարդել են հունիսի 23-ին: Այս խմբին փրկում է Ս. Իսկանդարյանի ջոկատը, որը մի քանի ժամ տևած կատաղի կռվում պաշտպանում է խմբին և հաջորդ օրը գիշերը ուղեկցում նրան դեպի Քանասար:

Հ. Կոտոյանը չհեռացավ, չբաժանվեց քաղաքում մնացած, մահվան սար-

---

[1] ***Տարոնցի Ա.,*** *նշվ. աշխ., էջ 206:*
[2] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 904:*

սուռի մեջ գտնվող մշեցիներից: Նրա հետ մնացին Մամիկոն Պետրոսյանը Սիսակ Կոնջոյանը և էլի մի քանի մարդ:

Առավոտ վաղ Հակոբը մտավ դիրք և շարունակեց կռիվը: Կռվեց մինչև երեկո, կրակեց վերջին փամփուշտը:

Ողջ մնացած վերջին մշեցիները նույնպես շարունակում էին պայքարը: Կռվում էին ինչով պատահեր հրացանով, երկաթով, փայտով ու քարով: Դիմադրեցին քանի դեռ շնչում էին:

Դրանից երեք օր անց էլ, երբ թուրքերը շարունակում էին ավերակների մեջ մարդ փնտրել ու սպանել ղրանցում մնացած հայերը, վերջիններս պարպում էին վերջին գնդակը թշնամու վրա և ինքնասպան լինում: Թուրքերը ավերակների մեջ գտնում են մի անդամալույծի և ոտներից քարշ տալով տանում Ս. Կիրակոսի մոտերքն ու սպանում: Գտան նաև 12 տարեկան մի տղայի և տարան հրապարակ, վրան նավթ լցրեցին ու այրեցին[1]:

Կոտոյան Հաջիի գործունեության մեջ նշանակալից է նրա կնոջ՝ Յուղոյի դերը: Մինչև կոտորածը նա ամուսնու քրոջ՝ Փառանձեմի հետ զբաղվում էր ընդհատակյա քաղաքական գործունեությամբ, միշտ պատրաստ ամեն զոհողության՝ հանուն հայրենիքի ազատագրության: Բացառիկ հնարամիտ էր, ճարպիկ, անվախ: Քանիցս բանտ էր ընկել, չարչարանքների ենթարկվել, բայց միշտ մնացել էր աննկուն, գաղտնապահ:

Մուշի պաշտպանության ժամանակ նա ամենաեռանդուն օգնությունը ցույց տվեց ամուսնուն՝ սեփական տունը վերածելու անառիկ բերդի: Կռվեց ամուսնու և որդու հետ կողք կողքի: Որդին երկրորդ օրը սպանվեց, իսկ նա շարունակեց կռվել: Այլևս փամփուշտ չկար և ոչ էլ փրկվելու հույս: Հ. Կոտոյանը նախ գնդակահարեց իր զավակներին, կնոջն ու քրոջը, կրակի տվեց տունը և ապա ինքնասպան եղավ[2]:

Ժամանակակիցներն առանձնակի հիացմունքով են գրում Մշո կանանց հերոսական կեցվածքի մասին: «Ու ինչպես չը սքանչանալ ու չը հիանալ մշեցի հայ կիներու վրայ, որոնք ամենքն ալ լացն ու վախը թողած փոքր տղոց իբրեւ բաժին, իրենք կը մասնակցէին այդ անհաւասար գօտեմարտին, իրենց կռուողներուն ջուր, հաց, ռազմամթերք հայթայթելով, դիրքեր չինելով, անձերովը կռուողները պաշտպանելով իրենց չորս կողմը, խնդուն դէմք ցուցնելով հերոսներուն:

Ծնան աղջիկ, ապրեցան տանջանքը եւ մեռան իբրեւ հերոս տղամարդ»[3]:

Ջարդից առաջ քաղաքն ուներ հայաբնակ հինգ թաղ, որոնցից Վերին թաղում՝ 450, Ձորու թաղում՝ 350, Ս. Մարինեի թաղում՝ 370, Բրտի թաղում՝ 360, Ճիկրաչենի թաղում՝ 300 տուն կար: Ընդ որում՝ Վերին թաղի տներից 20-ը, Ս. Մարինեի թաղի 30, Բրտի թաղի 180, Ճիկրաչենի թաղի 200 տները թուրքերինն էին:

Մուշը դիմադրեց հինգ օր: Կռվող մարտիկների թիվը չէր անցնում 60-ից:

---

[1] «Տարօնի արծիւ», 1939 թ., № 10, էջ 30:

[2] **Զէյթլեան Ս.,** Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Պէյրութ, 1968, էջ 82-83:

[3] **Պարսամեան Ե.,** նշվ. աշխ., էջ 55-56:

«Ես կներկայացնեմ միայն մի վավերագիր,- գրում է ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն,- զարմանալին այն է, որ այդ գեկուցագիրն ինձ տվել է մի գերմանացի քարոզիչ և ես դա թղթին եմ հանձնել անմիջապես դեսպանատանը: Ահա այն. «Շատ հաճախ մենք չգիտենք (Մուշ քաղաքում) որտեղ պատսպարվել: Բոլոր կողմերից շրջապատված էինք այնպիսի հարևաններով, որոնք ամեն րոպե կարող էին մեզ գնդակոծել լուսամուտներից, մանավանդ գիշեր ժամանակ: Հիվանդապահուհին ու ես քնում էինք հատակին՝ հրացանի գնդակներից պաշտպանվելու համար: Որբանոցի պատերը ծակծկվել էին թնդանոթի հարվածներից: Ես հարկադրված եղա որբերին մենակ թողնել: Կառավարական մի նոր հրամանի համաձայն, մենք պետք է նրանց հանձնեինք տեղական իշխանություններին թե՛ մեծերին և թե՛ փոքրերին... Իմ բոլոր թախանձանքներն ու բողոքները անհետևանք մնացին ... Հարկադրված եղա դիմելու կառավարչին: Նա կանգնած էր մի թնդանոթի մոտ և իրեն պահում էր գերագույն հրամանատարի նման, չուզեց անգամ ինձ լսել, դարձել էր մի իսկական հրեշ: Գեթ երեխաներին խնայելու համար իմ արած թախանձանքներին նա պատասխանեց. «Դուք կամենում եք, որ հայ երեխաները մենա՞կ մնան մահմեդականների մեջ: Պետք է, որ նրանք էլ մեկնեն մյուսների հետ»: Նա մեզ թույլատրեց պահել միայն երեք աղջիկների, այն էլ՝ որպես սպասուհիներ:

Նույն օրվա կեսօրից հետո ես ստացա առաջին տեղեկություններն այն (Մուշի) սոսկալի եղելությունների մասին, բայց հավատ չընծայեցի դրանց: Այդ առաջին լուրերն ստացել էին մի քանի հայ ջաղացպաններ ու հացագործներ, որոնք չեն տեղահանվել, որովհետև նրանց ծառայությունները դեռևս անհրաժեշտ էին կառավարությանը: Ասում էին, որ տղամարդկանց կապելուց հետո, քաղաքի պատերից այն կողմ գնդակահարել էին: Կանանց ու երեխաներին քշել էին մոտակա գյուղերը և տներում հարյուրներով կենդանի այրել էին, իսկ մնացածներին նետել էին ջուրը: Մեր շենքերը գտնվում էին քաղաքի գլխավոր թաղամասում և այդ պատճառով լուրերը մեզ հասնում էին անմիջապես: Մի քիչ ավելի ուշ, փողոցներում արդեն կարելի էր տեսնել կանանց ու երեխաների՝ արյունաթաթախ ու ողբալի վիճակում... Ո՞վ կարող է նկարագրել այդ տեսարանը, եթե դրան ավելացնենք նաև հրդեհված տների տեսքն ու այրված դիակների գարշահոտությունը:

Մի շաբաթվա ընթացքում գործը գրեթե ավարտված էր: Սպաներն այժմ պարծենում էին իրենց քաջագործությամբ, որ այդքան հաջող կերպով կարողացել էին բնաջնջել ամբողջ հայ ժողովուրդը: Երեք շաբաթ անց, երբ մենք հեռանում էինք Մուշ քաղաքից, գյուղերը դեռ վառվում էին: Հրամայված էր՝ քաղաքում ու գյուղերում հայերի ունեցվածքից բան չթողնել:

Միայն Մուշ քաղաքում ապրում էր 25 հազար հայ: Բացի դրանից, քաղաքի շրջակայքում կային 300 բազմամարդ հայկական գյուղեր: Մենք մեկնեցինք Մեզրե: Մեզ ուղեկցող զինվորները հպարտությամբ պատմում էին, թե իրենք որտեղ, ինչպես և որքան կանանց ու երեխաների էին սպանել»[1]:

Մուշի ինքնապաշտպանության պատմությունը լավ ուսումնասիրված չէ:

---

[1] «Red Cross Magazine» 1918, Mars: Տե՛ս Morgenthau H., «The Greatest Horror in History».

Նա ունի շատ մութ կետեր, անհամապատասխանություններ, մի քանի խնդիրներում առկա են իրարամերժ կարծիքներ:

Ալմա Յոհանսոնը գտնում է, որ քաղաքը ռմբակոծում էին 11 թնդանոթներ, լրացացիչ բերվել էր 2000 զինվոր: Նա գրում է. «Կեսօրին (խոսքը հունիսի 27-ի մասին է) մութեսարիֆը հայ երևելիներին հավաքեց ու ասաց, թե երեք օրից բոլոր հայ տղամարդիկ պետք է հեռանան Մուշից: Նրանք կարող են իրենց ընտանիքներին թողնել տեղում: Հայերի ամբողջ ունեցվածքը պատկանում է պետությանը: Հարուստները համաձայնվեցին, իսկ մյուսները դա համարեցին մահաբեր և որոշեցին իրենց ընտանիքների հետ մնալ, և եթե կոտորածի փորձ արվի, թանկ վաճառել իրենց կյանքը: Մի քանի ժամ անց զինվորները խուժեցին հայերի տները: Հաջորդ օրը վաղ առավոտյան հրացանային կրակի աղդանշանով սկսվեց ռմբակոծությունը: Բոլոր թուրքերը զինված էին և զինվորական ջոկատներին առաջնորդում էին հայերի տները: Որոշ տներից հայերը կրակ բացեցին: Սակայն շուտով քաղաքը սուզվեց կրակի բոցերի մեջ: Հաջորդ օրն առավոտյան ոտքի հանվեց կանանց ու երեխաների առաջին քարավանը: Մի խումբ կանայք սպանվեցին հենց որբանոցում: Հայտարարեցին, թե մշեցիներին աքսորում են Ուրֆա: Քաղաքում մնացել էին հատուկենտ տղամարդիկ, որոնց բռնեցին և Մուշից դուրս հանելով գնդակահարեցին, իսկ կանանց երեխաների հետ տարան մերձակա գյուղերը, լցրեցին տներն ու մարագները և հրդեհեցին: Շատերին նետեցին գետը: Կանանց մի մասին առևանգեցին: Այսինքն՝ Մուշի ամբողջ բնակչությունը ոչնչացվեց տեղում, առանց բռնագաղթի:

Քաղաքում ռմբակոծությունը չարունակվեց երեք, իսկ հրացանաձգությունը՝ յոթ օր: Ամենուրեք թափված էին դիակներ, որոնց մի մասին հոչոտել էին շները»[1]:

Ա. Յոհանսոնը Մշո եղեռնագործությանն անդրադարձել է բազմիցս: 1917 թ. հոկտեմբերի 1-ին նա գրում է. «Մշո հայկական թաղերը լրիվ այրվեցին, իսկ բնակչությունն ամբողջությամբ գնդակահարվեց, բացառությամբ մի քանի հարյուր կանանց ու երեխաների... Բոլոր հայերն սպանվեցին իրենց տներում... Ես տան բակում թաղեցի առաջին երեք զոհերին, ապա կառավարությունից եկան պարետն ու չտաբի սպան զինվորների հետ և տարան բոլոր երեխաներին: Նրանցից ողջ մնացածներին հավանաբար աքսորեցին Միջագետք: Ես միայն երեք հասած աղջիկների իրավունք ունեի ինձ մոտ պահել որպես ծառաներ: Հաջողվեց հետ ստանալ նաև երեք ուսուցչուհու, որոնց հետ էլ մեկնեցի Մամուրեթ ուլ-Ազիզ: Մնացած բոլոր երեխաները, ինչպես նաև որբանոցի սաներն ու ծառայողները, սպանվեցին, մեծ մասին կենդանի այրեցին տներում: Իհարկե, եղան հայեր, որոնք մինչև ջարդերի սկսվելը հեռացան Մուշից, ոմանց հաջողվեց փախչել Ռուսաստան:

Քաղաքը ավերակի էր վերածվել ... Վարդան վարդապետին զզվելի ձևով խարեցին, իսկ ապա վալադը գնդակահարեց նրան[2]:

---

[1] Kons / Ankara, 98, Ab. 10299.

[2] R. 14097, Ab. 34435.

Մելիքյան Ս., *հայ կամավոր. – «Եթե քաղաքի Թուրքական թաղը չատ չի տուժել, հայկական թաղամասը ընդհակառակը, բոլորովին ամայացած է: Միայն մի քանի տներ չեն տուժել: Իսկ ամբողջ թաղը, այսինքն՝ քաղաքի կեսը՝ մոտ 50 հազար բնակիչ, հիմնահատակ է արված մեթոդիկ ու խնամքով, տեղ-տեղ քարը քարի վրա չէր մնացել... Ամենուրեք ավերակ էր... Ամենուրեք մեռածներ, կմախքներ, ամեն տեղ ավերածության անմիտ չղթայազերծում: Ինչ որ խնայել էին այդ վայրենիները, կրակն էր մոխիր դարձրել:*

Ես չրջում էի Մուշի մնացորդների մեջ, երբ պատահեցի լեռներում կոտորածներից ազատված փախստականների... Վտարանդի իրենց գյուղերից, անպատսպար, անզգեստ, մտամոլոր, քաղցից ու հոգնածությունից մահամերձ, ողբալի դրության մեջ էին... Համարյա տղամարդ չկար նրանց մեջ, բացի մի քանի ծերերից, որոնց թուրքերն, անչուշտ, արհամարհել էին: Գրեթե մերկ երեխաները կմախքների էին նմանվում, այնքան սոսկալիորեն նիհարել էին, որ կարելի էր այդ չորացած փոքրիկ մարմինների ոսկորները համրել, նրանց ամեն օր հավաքում էին Մշո չրջաններից: Այս թշվառ որբերը, որոնց գտնում էին թոնրի մեջ պահված և կամ դեգերելիս՝ իրենց սպանված ծնողներին փնտրելով, ավելի նման էին վայրի կենդանիների, քան մարդկային արարածների: Նրանց դեմքն արտահայտում էր այն խրոնիկական երկյուղը, որ խոր դրոշմ էր թողել երեխաների վրա: Նրանք կարծես դեռ ապրում էին իրենց տեսած վայրագությունները..

...Տեսա մի մանկահասակ աղջիկ, որ նստած մի տան մոտ, լաց էր լինում: Մոտեցա և նկատեցի, որ նա գրավիչ գեղեցկություն ուներ... Նրա ծնողները սպանված էին, եղբորը թուրքերն էին տարել իրենց հետ: Իսկ նա կենդանի էր մնացել, որովհետև մի թուրք սպա պահել էր նրան և չարաչար վարվել հետը: Մի հարուստ հայի նախ կտրեցին ականջները, հետո քիթը, հետո ծոծրակը կտրելով՝ լեզուն հանեցին, և գտնելով, որ այդքան տանջանք բավական չէ՝ աչքերը հանեցին: Այդ բոլոր նողկալի գազանությունները կատարվեցին վաճառականի խուլ և անդամալույծ մոր ներկայությամբ... Նրա կինը խելագարվել ու փախել էր լեռները և երկար ամիսներ ապրել էր խոտ ուտելով: Գիշերները երբեմն իջնում էր գյուղ ու թափառում իր տան ավերակների չուրջը, և այնտեղ, մի քարի վրա նստած, երկար ու աղեկեզ ճիչեր էր արձակում:

Մի ուրիշ հայից ոստիկանությունը 1000 ոսկի պահանջեց: Հայը վճարեց: Հետևյալ օրը ժանդարմները դարձյալ եկան և տունը չրջապատելով՝ սկսեցին դուռը կոտրել... Տեսնելով իր անխուսափելի կործանումը, նա հավաքեց զավակներին և դիրք բռնեց տան մեջ: Թուրքերը չկարողացան ներս խուժել և հրդեհեցին տունը.. Կանայք սրտակեղ աղաղակ էին բարձրացրել և պատուհանից վայր նետվել դահիճների սվինների վրա: Վերջում, պատուհաններից մեկին երևաց մի կին, երեխային գրկած, հագուստն արդեն վառվելիս, աչքերը՝ ահարկու: Սարսափելի մի ճիչով իր ատելությունը թափեց թուրքերի վրա և երեխայի հետ միասին վար գահավիժեց: Բոլորը կորան կրակի մեջ:

Մի ծերունի պատմեց, որ թուրք հարուստների հարեմները հայ կանանցով լցված էին: Նա մեզ առաջնորդեց դեպի հայոց գերեզմանատուն, որտեղ չիրիմները պեղված էին և որտեղ տասնյակներով դիակներ էին թափված:

Մշո դաշտով շարժվում էինք դեպի Տիգրանակերտ: Քանի առաջանում էինք, հանդիպում էինք դիակների, երբեմն առանձին, երբեմն էլ կույտերով, դիզված գյուղերի մեջ: Սոսկալի տեսարան էր մեր անցած ամբողջ շրջանում: Դես ու դենը՝ ավերակների տձև կույտեր:

Մուշից դեպի Սասուն 7–8 կմ հեռավորության վրա գտնվող մի հիմնովին ավերված բնակավայրում, թուրքերը չէին բավականացել սպանելով բոլոր բնակիչներին: Նրանք շրջակա բնակավայրերի հայերին ևս այստեղ էին բերել՝ բոլորին միասին կոտորելու համար:

Մտանք ճամփի վրա գտնվող մի տուն, որ լի էր դիակներով ու կմախքներով: Սրանք հարյուրներով էին ընկած... Թվում էր, թե խոսում էին այդ փչաքաղող գանգերը, մի քանիսին արդեն մկները կրծել, այլանդակել էին, ուրիշների վրա դեռ մազեր կային...

Թոնիրի մոտ ընկած էր մոտ 20 մարդ, իրար վրա թափված... Թվում էր, թե նրանք դեռևս ցնցվում էին վերջին րոպեի սոսկումից, երբ մահը վրա հասավ:

Մի քանի քայլ դենը մի շատ փոքր տնակ նույնպես լի էր ամեն մեծության կմախքներով ու գանգերով՝ կային փոքրերը, մեծերը, միջակները: Կային ջախջախված գանգեր, կմախքներ՝ երբեմն այնքան այլանդակված, ճզմված և սարսռազդեցիկ, որ անկարելի էր զսպել արցունքը:

Կային դեռատի աղջիկներ... բռնաբարված և ապա սպանված...

Կային մանավանդ փոքր դիակներ, իրենց պզտլիկ չորերով... Հաճախ էինք տեսնում գրկախառնված երկու դիակներ՝ մայրն ու երեխան...

Եկեղեցի մտնելով, ամենից առաջ խորանի վրա տեսանք մի տասնյակ կտրված ու կարգով չարված գլուխներ... Գետինը ծածկված էր դիակների անհամար բազմությամբ և այդ խառնիճաղանջից բարձրանում էր մի խիստ սառը, ծանր գարշահոտություն»[1]:

Շիրակյան Ա., *ժամանակակից – «Մշոյ հայկական թաղերը թնդանօթի բռնուեցան: Հայերուն համար սկսաւ յուսահատական պայքար, քանդուող տուներեն կատաղորեն կը դիմադրեին, բայց իզուր, ավերակույտի վերածուած թաղերէն կ'անցնէին մէկ ուրիշը, չատերը իրենց հարազատները թուրքերուն ձեռքը չձգելու համար կրակի կու տային պապենական տունը եւ կը նահատակուէին բոցերուն մեջ: Ռմբակոծութեան երկրորդ օրը քաղաքի հայ բնակչութիւնէն մնացած էր 10–12.000 հոգի, որ վճռեց գիշերը դուրս գալ հրդեհէն լափլիզուող քաղաքէն, նահանջի ժամանակ նշմարուած ըլլալով թշնամիէն, կրակի բռնուեցան ու փախչողներուն հազիւ կէսը կրցաւ ապաստանիլ մօտակայ լեռները: Յաջորդ օրը քիւրտերը հաւաքեցին վիրաւորները եւ քաղաքին մէջ մնացողները ու խարոյկներու մէջ նետեցին զանոնք»[2]:*

«El Dia»–ն գրեց. – «Մուշում հայերը պատսպարվեցին եկեղեցիներում ու քարերով չորս օր շարունակ անհույս պայքար մղեցին: Բայց թուրքական հրետանին, գերմանացի սպաների գլխավորությամբ, վերջ տվեց նրանց կյանքին:

Հուլիսի սկզբներին Մշո կառավարիչը հայերից պահանջեց հանձնել զենքերը...

---

[1] ***Մելիքյան Ս.,*** *նշվ. աշխ., էջ 13–25:*

[2] ***Շիրակեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 45–46:*

Հայերը սարսափելի չարչարանքների են ենթարկվել՝ պոկել էին նրանց եղունգները, քաշել ատամները, կտրել քիթը: Շատերը չդիմացան խոշտանգումներին: Երբ կանայք մոտենում էին իշխանության ներկայացուցիչներին՝ իրենց հայրերի, ամուսինների և եղբայրների համար խնդրելու, բռնաբարվում ու խեղանդամ էին արվում:

Մուշում հայերը զոհվեցին պայքարելով, և երբ լռություն տիրեց, ավերակներում մուսուլմանական ամբոխը երեխաներին քարշ տվեց քաղաքից դուրս, դեպի մեծ ճամբարները, որտեղ գտան նրանց բնաջնջելու ամենահեշտ միջոցը՝ մեծ գոմերի մեջ փակեցին ու ողջակիզեցին: Անօգնական կանայք ու երեխաները մեռցվել են բոցերի մեջ... Դահիճներն անօրինակ դաժանությամբ երեխաների ոտից բռնած՝ նետում էին կրակի մեջ բացականչելով՝ «Ահա ձեր առյուծները»: Օրեր չարունակ օդում զգացվում էր մարդկային մսի հոտը:

Խարբերդցի սայլվոր, որին հարկադրել էին Տարոն զենքեր տեղափոխել. – «Թուրքական բանակն ու բաշիբոզուկները պաշարել էին հայոց թաղերը: Հավանաբար հայերն ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս, քանի որ թուրքերը քայլ իսկ առաջ չէին անում: Սկսեցին հայոց թաղերը ռմբակոծել: Հայերը վեց օր դիմադրեցին: Փլատակների տակից հանված տղամարդիկ տեղն ու տեղը սպանվեցին, իսկ կանանց ու երեխաներին սայլերով քաղաքից հանեցին: Գիշերն սկսվեցին բռնությունները նրանց նկատմամբ: Առավոտյան բոլորին մերկացրին, լցրեցին գոմն ու հրդեհեցին: Բիթլիսի ճանապարհը լցված էր դիակներով, սայլվորներին հարկադրեցին դրանք հավաքել ու լցնել ձորը: Սայլապանների մեջ համաճարակ սկսվեց: Բոլոր հիվանդներին սպանեցին: Քարավանը հասավ Դիարբեքիր, բայց թույլ չտվեցին քաղաք մտնել»:

Արաբ չորս սպաների վկայությունները, որոնք ծառայելիս են եղել թուրքական բանակում.- Նրանցից լեյտենանտ Հասան Մաարուֆը 1915 թ. Մուշում, Բիթլիսում, Սղերդում, Երզնկայում և Մամախաթունում տեղի ունեցած ահավոր ու վայրագ չարագործությունների մասին մի նկարագրություն է հանձնել: Մուշում փայտատներում կենդանի այրած կանանց ու երեխաների նրա նկարագրությունը կատարելապես համապատասխանում է Կապույտ գրքի նո. 22 փաստաթղթի բովանդակությանը. «Մուշում փողոցները ծածկված էին հայերի դիակներով: Հենց որ մի հայ փորձում էր դուրս գալ տնից, անմիջապես ոչնչացվում էր: Նույնիսկ չխնայեցին ծերերին, կույրերին ու հիվանդներին: Իրար շատ մոտ գտնվող Մուշի և Խնուսի միջև տեսել եմ հայերի դիակներով լցված երկու ձոր, յուրաքանչյուրի մոտ՝ 400 դիակ, մեծ մասամբ դրանք տղամարդկանց դիակներ էին: Մի այլ ձոր լցված էր միայն փոքր երեխաների դիակներով: Ղարա Շաբանում տեսա մեծ քանակությամբ հայերի դիակներ, որոնք լողում էին Մուրադ գետի վրա»:

Մուշի փողոցում հայերի դիակները ցրված էին այս ու այն կողմ: Եթե մի հայ համարձակվեր դուրս գալ, վայրկենապես կսպանվեր: Չէին խնայում նույնիսկ ծերունիներին, կույրերին ու հիվանդներին: Մուշից Խնուս գնալու ճանապարհին դաշտերում ես տեսա հայերի անգլուխ դիակներ: Խնուսի և Շերքիսեքեուի միջև գտնվող երկու հովիտները ծածկված էին դիակներով:

Հիմնականում տղամարդկանց դիակներ էին: Յուրաքանչյուր հովտում կար մոտ 900 դիակ[1]:

«The New York Times»-ը 1915 թ. հունիսի 1-ին գրում է. «Մայիսի 12-ին քրդական մի քանի հեծյալ ավազակախմբեր հարձակվեցին Մուշի հայկական թաղամասերի վրա: Նրանք նախ գրոհելով չուկայի խանութների վրա այրեցին, սպանեցին ու կողոպտեցին: Կոտորածը տևեց մինչև կեսգիշեր, դրան մասնակցում էին նույնիսկ ժամապահ ոստիկանները: 250 մարդ սպանվեց: Ծեր կամ տգեղ կանայք՝ սպանվեցին, իսկ երիտասարդ ու գեղեցիկները՝ գերվեցին»:

Մանդելշտամ Ա. - «Մուշն ամբողջությամբ այրվեց: Մի քանի վերապրողներ ուղարկվեցին Ուրֆա: Յուրաքանչյուր սպա պարծենում էր անձամբ սպանած հայերի թվով:

Թուրք կառավարության հիշատակագիրը («Ճշմարտությունը» և այլն) բոլորովին լռում է Մուշի, Բաղեշի և Սասունի արյունալի դեպքերի մասին: Նա բավականանում է թռուցիկ կերպով նշելով, որ 1914 թ. վերջին՝ Մուշում և Խիզանում զինվորները հարձակման ենթարկվեցին»:

Մ.-ում (Մուշում) 1915 թ. մայիսի սկզբին կուսակալը դիմեց բողոքական գերմանացի միսիոներների գրասենյակին՝ համոզելու հայերին՝ զենքերը հանձնել:

Այս միջամտության պատճառով հայերը մի ժողով ունեցան իրենց թուրք համաքաղաքացիների հետ, որոնք երաշխավորեցին հայերի անվտանգությունը, եթե նրանք համաձայնեն հանձնելու զենքերը: Հայերը համաձայնեցին. նույնիսկ բանտարկված մարդիկ (400 զինակոչիկներ) ցույց տվին թաքցրած զենքերի տեղերը: Կուսակալը լուսանկարել տվեց այդ զենքերն և ուղարկեց Պոլիս՝ հայտնելով, թե Մ. քաղաքում ապստամբությունը բռնկվելու վրա է, և խնդրում է արտակարգ լիազորություններ՝ դա ճնշելու համար: Ստանալով այդ լիազորությունները՝ նա տեղահան արեց հայերին (Կապույտ գիրք, միսս Ա-ի վկայությունը նույն տեղի Գերմանական Կարմիր խաչի անդամներից, դանիացի տիկին)»:

Ժակ դը Մորգան. - «Հայաստանի բոլոր նահանգներու մէջ կոտորածները սոսկալի եղած են, բայց Մուշի մէջ կատարված արհաւիրքը բարբարոսութեամբ կը գերազանցէ ուրիշ քաղաքներու մէջ գործադրուած ոճիրներու ամենէն գազանայինները: Ականատես մը կ՚ըսէ. «Այս սոսկալի աղէտը պատահեցաւ 1915 յուլիսի 2-ին. ցաւի, անէծքի, ահաբեկութեան օր թշուառ հայերու համար: Առտուն կանուխ սկսան պտտիլ քիւրտերն ու կանոնաւոր զօրքերը քաղաքին մէջ, սոսկալի աղաղակներ բարձրացնելով խուժեցին հայոց թաղը... 1300 հոգիէ բաղկացած խումբը ճամբելէ յետոյ, սկսան կոտորել տակաւին մնացած հայերը, որոնք հետեւեալ օրը, բոլորն ալ բնաջնջուած էին: Մնացած բնակիչներէն գրեթէ բոլորը՝ այլեւս վստահ իրենց վերապահուած տխուր ճակատագրին, հաւաքուած էին քաղաքի կեդրոնի տուներուն մէջ, ուր իրենք զիրենք աւելի ապահով կը կարծէին: Այստեղ խմբուած էին 40, 50 մինչեւ 100 հոգիէ

[1] Bryce J., նշվ. աշխ., էջ 448-451:

բաղկացած ընտանիքներ, նեղ սենեակներու մէջ սեղմուած, փակած էին դռները, պատուհանները եւ բոլոր անցքերը:

Շատ չանցած՝ ոռնոցները կը մօտենան: Կատաղածներու ոհմակը կը գրաւէ փողոցները: Հրացաններով, տապարներով զինուած աւազակները կը յարձակուին դռներու վրայ, որոնք ճռճռալով կ'իյնան: Կը սկսի աննկարագրելի կոտորած մը: Ահաբեկման ու ճգնաժամի գոռում-գոչումները կը խառնուէին տապարներու հարուածներուն եւ մարդասպաններուն ուղղուած ջղագրգիռ կանչերուն: Փողոցները ողողուած էին արիւնով, դիակները դիզուած էին տուներու առջեւ, թուրքերը անդադար կը կրկնէին՝ «Զարկէ՛ք, զարկէք», քիւրտերը կը կանչուրտէին եւ մահուան աղաղակներով կը լցնէին օդը: Այս կատաղի արիւնարբու գազանները տունէ տուն կ'անցնէին իրենց արիւնաթաթախ տապարները ճօճելով: Դժբախտ հայերը խելակորոյս, իրար սեղմուելով կը ճզմուէին, կը խեղդուէին. կանանց ողբն ու կոծը, սոսկումի աղաղակները կը լսուին. փոքրերը ոտնակոխ կ'ըլլան նոյնիսկ անոնցմէ. որոնք կ'ուզեին զանոնք ազատել:

Դեռատի կին մը, իր բազուկներուն մէջ բռնած զաւակը կ'երկարէ իր դահիճներէն մեկուն, ըսելով, «Ա՛ռ զաւակս, քեզի կու տամ, բայց մի՛ սպաններ զայն»: Դահիճը կառնէ տղան, գետին կը նետէ եւ տապարի մէկ հարուածով գլուխը կը կտրէ: Յետոյ, դառնալով անոր դժբախտ մօրը, տապարի երկրորդ հարուածով մը անոր գանկն ալ կը ճեղքէ:

Տակաւին քանի մը վայրկեան ալ եւ չարագուշակ լռութիւն մը կը յաջորդէ ողբ ու կոծին, հեծեծանքներուն: Այլեւս ոչինչ մնացած էր, բացի փորերը ճեղքուած դիակներու կոյտէ մը, անկերպարանք եւ արիւնաթաթաւ բեկորներ[1]:

Զանազան կողմերէ երկինք կը բարձրանան ծուխի յորձանքներ: Այս մարդոցմէն մին կազատի, կը վազէ դէպի գետը. զինուորները զայն կը ձերբակալեն, քարիւղ կը լեցնեն վրան, կ'այրեն եւ գազանային հրճուանքով հանդիսատես կ'ըլլան անոր կրած տանջանքներուն: Աւելի հեռուն, բարձրաձայն կը խնդան վեց տարեկան տղու մը վրայ, որ ի խոր խոցուած սուինի հարուածէ մը, հոգեւարքի ցնցումներով կը պրկուէր: Հոս կը տեսնենք դժբախտ կիներ, որոնց փորերը ճեղքած են քիւրտերը եւ տղաքը դուրս հանած: Հոն զինուորները իրար հետ կը կռուին՝ դեռատի աղջկայ մը տիրանալու համար: Ամենէն զօրաւորը զայն կը յափշտակէ եւ չարաչար բռնարարելէ վերջ՝ կը գլխատէ»[2]:

«Գիշերը վրայ հասնելով ողջ մնացածները խմբովին կը փախչին դէպի գետը, այն յոյսով, որ անոր միւս կողմը կանցնին ու կը հասնին դաշտավայրը: Թուրքերէն երկու կրակներու մէջ կառնուին, կը նետուին ջուրը եւ մեծ մասով կը խեղդուին: Քաղաքը հուրի մատնուած էր. թնդանօթը անընդհատ կը գոռար՝ ռումբեր արձակելով հայոց թաղերուն վրայ:

Աշխարհի մէջ չկայ լեզու մը այնչափ հարուստ, այնչափ գունագեղ, որ կարենար նմանօրինակ արհաւիրքներ նկարագրել՝ արտայայտելու համար այնքան անմեղ մարտիրոսներու կրած բարոյական ու ֆիզիկական տառապանք-

---

[1] **Մորգան Ժ.,** նշվ. աշխ., էջ 348-349:

[2] Նույն տեղում:

ները: Ահռելի կոտորածներէ յուսալքուած խլեակներ, բոլորն ալ ականատես իրենց սիրելիներու մահացումին, կը ղրկուին կեդրոնացման կայաններ, ու կ'ենթարկուին անասելի տանջանքներու եւ մահը նախընտրելի դարձնող ամօթանքներու:

Երբ Մուհամմէտ Բ.-ը Կ. Պոլիսը գրոհով կ'առնէ, 50 հազար յոյներ կիյնան բարբարոսներու սուրին տակ: Սուլթանը դադրեցնել կու տայ կոտորածները: Այն ժամանակ Եւրոպան կը սարսռայ գործուած արհաւիրքէն: Այսօր ինչո՞ւ չեն մտածեր հայ ազգի կրած ծով տառապանքներուն մասին, որոնք կը տեւեն անչափ երկար տարիներ, 1896–1916, եւ որոնք արդէն միլիոնէն աւելի զոհեր խլած են»[1]:

Ոչ թէ սպանում էին, այլ՝ խողխողելով էին սպանում: Գյուղերից մեկում հավաքեցին 200 հայ տղամարդու և հարկադրեցին գյուղի մերձակայքի տափարակում փոսեր փորել: Ապա բոլորին կարգադրեցին մտնել փոսերը: Նրանց մարմինները մինչև պարանոցները ծածկեցին հողով: Ապա հայտնվեց կառավարիչն իր չքախմբով և սկսվեց սրընթաց ձիարշավ դժբախտների գլուխների վրայով: Շատ չանցած՝ հարթավայրը կարմիր գույն ստացավ:

ՄԱՐՏՆՁՈՂ ՍԱՍՈՒՆ

Սասունը բնական բերդ է, ընկած Տավրոսի հյուսիսային փեշերին և տարածվում է Սղերդից մինչև Գենջ և Տիգրանակերտից մինչև Մուշ: Մուշից Սասունը բաժանում է Կուրտիկ լեռնաշղթան, որի ամենաբարձր լեռը Ծիրինկատարն է:

Սասունը բաժանված է վեց գավառակների՝ արևելյան մասում Խութ-Բռնաշենն է, հարավում՝ Մոտկանը, հարավ-արևմուտքում՝ Բսանքը և Խիանքն են, արևմտյան մասում՝ Խուլբը, կենտրոնական մասում՝ Տալվորիկն է, իսկ հյուսիսում՝ Շատախը:

Սասնո գլխավոր լեռնագագաթներն են՝ Ծովասարը, Մարաթուկը, Ֆրոֆրոքարը, Գարլորը և Գերինը: Ամենաբարձր գագաթն Անդոկն է, որի փեշերը հասնում են մինչև Գելիեգուզան գյուղը: Անդոկից է սկիզբ առնում Տիգրիսի վերին վտակը և հոսում է Գելի գյուղի միջով: Անդոկից արևելք Ծովասարն է, իսկ հարավում մոտ 30 կմ հեռավորության վրա՝ Գերինը:

Սասունում թուրք չէր բնակվում: Հիմնական բնակիչները հայերն ու քրդերն էին: 19-20-րդ դարերը հանդիսացան այդ երկու ժողովուրդների առճակատման ձևավորման ժամանակաշրջան: Ճիշտ է, դրա հետևանքով սասունցիները հարկադրված էին պայքարել երկու ճակատով՝ թուրքական պետական ուժերի և քրդական աշիրեթների և համիդիե զորագնդերի դեմ, սակայն հազիվ թե հնարավոր է համաձայնվել այն պնդման հետ, թե «Սասունի կռիվները երկակի բնույթ ունեին», ինչն այդ կռիվների առանձնահատկությունն էր[2]: Նախ, նման

---

[1] **Մորգան Ջ.,** նշվ. աշխ., էջ 349-350:
[2] **Տարոնցի Ա.,** նշվ. աշխ., էջ 389-390:

վիճակ գոյություն ուներ ոչ միայն Սասունում, այլև Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի ու Խարբերդի նահանգներում և, ապա. հայ-քրդական առճակատումը, չնայած այդ երկու ժողովուրդների զարգացման մակարդակների տարբերության, որոշ հիմնահարցերում նաև նրանց չահերի հակադրության հետևանք էր: Այդ առճակատումն անհնար էր առանց թուրքական պետական քաղաքականության:

Սասունցիների 1914-1915 թթ. կռիվների երկակի բնույթի մասին խոսելն առավել ևս տեղին չէ, որովհետև դրանց բովանդակությունը գոյատևման համար մաքառումներն էին, իսկ հայերի բնաջնջումը ոչ թե քրդական, այլ թուրքական քաղաքականություն էր:

1914 թ. ձմռանը Խութի մյուդիրը սպանվում է, ինչը վերագրվեց հայերին: Շենիկ գյուղից 17 հոգի բանտ նետվեց: Գյուղերում իրականացվեցին բռնություններ և «զինուորական սպաներ եւ միւդիր հայերուն կը ստիպեն, որ քիւրտերուն գոհացում տան, այսինքն՝ իրենց հողերը քիւրտերուն թողուն եւ իրենք վարձուին իբր վարձկաններ»[1]:

Սասունի մի քանի մասերում, որտեղ քրդերը մեծամասնություն էին կազմում, հայերի վիճակն, իրոք, շատ ծանր էր: Այդ մասին վկայություն կա նաև Գևորգ Ե կաթողիկոսին Ներսես եպս. Խարախանյանի 1914 թ. ապրիլի 27-ի նամակում: Դա առաջին հերթին վերաբերում էր Մոտկանին ու Խութին: «Խոյթի հայերուն վիճակը,- գրում է առաջնորդը,- աւելի ևս անտանելի է... Անցեալ տարի տեղւոյն կառավարական պաշտօնեան հայերու հացահատիկները բռնութեամբ քաղելով տուաւ քիւրտերուն, հայերը մատնուեցան ամենաթշուառ վիճակի մը», քրդերի հարձակումների պատճառով գյուղացիները չեն համարձակվում «դաշտ ելնել, տաւարներ, ոչխարներ արածացնելու տանել, լուծք ընել, իրենց հողերը մնացած են անմշակ... Քիւրտերը կը պահանջեն, որ հայերը մուրհակ տան հողերու արդիւնքի կէսը իրենց տալու, ապա թէ ոչ չպիտի թողուն արօրը գետին զարնելու»:

Քրդերը հայերից պահանջում էին «խաֆիրութիւն անունով բռնաւորական տուրքը»[2]:

Մոտկանի Գզեխի գյուղախմբի (նահիե) 20 գյուղերի հայերի սնունդը հիմնականում կորեկն ու գրլգիլն էր: Գյուղացիների աշխատանքի ամբողջ արդյունքը «քիւրտ աղաներ կը յափշտակեն: Բացի գողութեամբ, աւազակութեամբ տարածներէն, քիւրտերը քանի մը անգամ տուրք կ'առնեն, որոնց գլխաւորն է խաֆիրութիւնը»[3]:

Ինչ վերաբերում է կառավարական հարկահաններին, ապա նրանց «չահատակութիւնները աննկարագրելի են... Խեղճ հայերը գարունէն մինչեւ աշուն կ'աշխատին միմիայն կշտացնելու համար գաղանաբարոյ մարդասպաններ, որ միշտ կը սպառնան զանոնք բնաջինջ ընել[4]: Ոմն չեյխ Զեյնադդինը գրավել էր Մետեթաղրը գյուղի «կալուածները՝ առանց վճարելու, հիմա այդ գիւղի 34 ար-

---

[1] *«Արարատ», 1914 թ. մայիս, էջ 408:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

տերուն տիրելէն զատ, տիրած է բոլոր անտառներուն, արոտատեղերուն եւ ջրաղացքի մը... Գրաւուած կալուածներուն տուրքերը աղքատ հայերը կը վճարեն, իսկ ինքը կը տանի բոլոր բերքերը, ամեն տարի գիւղի տասանորդը ինք կը վերցնէ...»[1]:

Լեռնաշխարհի հայությունը թուրքերի ու քրդերի դեմ պայքարի դարավոր փորձ ուներ: Սասնո ռելիեֆը հարմար էր պարտիզանական կռիվների և միանգամայն անհարմար բանակի և ոստիկանական ուժերի գործողությունների համար: Սասունը կիսանկախ էր, նրա մեջ անթեղված էր ազատության համար անպայման մարտնչելու կրակը: Սասունցին ինքնուրույն էր, ազատատենչ, անվախ, պատվախնդիր: Նա երբեք գլուխ չէր խոնարհել թուրքի ու քրդի առաջ:

Սասունցիները թույլ չտվեցին, որ իրենց անասունների հաշվառում կատարվի և, ընդհանրապես, մերժեցին հօգուտ բանակի բռնագրավումները: Նրանք զորակոչին մասնակցեցին այնքանով, որ յուրաքանչյուր գյուղից միայն 4-5 հոգի տվեցին: Թուրքերի պնդմանը տալ նոր զինակոչիկներ, պատասխանեցին, թե 1904 թ. ջարդը խլեց Լեռնաշխարհի երիտասարդ ուժերին և կանգնեցրեց ծնունդը: Այդ պատճառով բանակային տարիքի միայն հատուկենտ սասունցի կա: Նաև հրաժարվեցին չալակավոր տալուց: Մշո իշխանությունները հասկանում էին, որ սասունցիները միտումնաբար հրաժարվում էին իշխանությունների պահանջները կատարելուց, բայց ուժի չէին դիմում, երկնչելով լեռնականների ընդվզումից:

Նրանք լեռնականների փոխարեն ճնշում էին գործադրում առաջնորդարանի և ՀՅ Դաշնակցության Մշո կոմիտեի վրա: Վերջինները հորդորում էին սասունցիներին խոնարհ լինել, կատարել իշխանությունների պահանջները: Ապարդյուն: Միայն մի անգամ 150-200 չատախցի չալակավոր ուղարկվեց, նրանք էլ, հակառակ սասունցիների հասցեին Սերվեթի չաղակրատանքների, ճանապարհի կեսին բեռները նետեցին ու հետ դարձան:

Բացի 1914 թ. հոկտեմբերի բախումից, երբ Գելիի մի խումբ երիտասարդներ հարձակվեցին թուրք յոթ զինվորների վրա, սպանեցին ու տիրացան նրանց զենքերին, ուրիշ դեպք չի արձանագրվել, երբ սասունցիներն առաջինը զենք օգտագործած լինեին իշխանությունների, թուրքերի ու քրդերի դեմ: Որոշ հեղինակներ սասունցիների 1914 թ. վերջերի և 1915 թ. առաջին ամիսների զսպվածությունը համարում են արդյունք «դարաւոր դառն փորձութիւններուն», որ «անոնց մէջ զարգացուցած էր կասկածամիտ զգուշաւոր վերաբերում զիրենք չրջապատող այլազգի ցեղերու հանդէպ»[2]:

Պարզից էլ պարզ է, որ բանը կասկածամտությունն ու երկյուղը չէին, այլ՝ օբյեկտիվ իրավիճակի հետ հաշվի նստելը: Ի դեպ, վերջինը 1914-1915 թվերին սասունցիների վրա էական ազդեցություն չունեցավ, որովհետև նրանք նախահարձակ գործողությունների բացարձակապես անպատրաստ էին[3]:

Զորակոչից ու չալակավորներ տալուց խուսափելու սասունցիների գլխա-

---

[1] «Արարատ», 1914 թ. մայիս, էջ 408:

[2] **Տարոնցի Ա.,** նշվ. աշխ., էջ 386:

[3] **Հովհաննիսյան Ղ.,** Սասունը բոցերի մեջ, Ե., 1987, էջ 35:

վոր պատճառներից մեկն այն էր, որ զինվորական ծառայության տարիք ունեցող քրդերը չէին զորակոչվում և սասունցիների անվտանգությունը կվտանգվեր, եթե նրանց կռվող, առողջ ուժերը հեռանային Լեռնաշխարհից:

Սկսած 1914 թ. դեկտեմբերից՝ Սասունն ինքնուրույն էր: Ձմեռը թուրքերին թույլ չտվեցին շրջափակել Լեռնաշխարհը, քրդերն առանձնակի տրամադրվածություն չէին դրսևորում սասունցիների հետ առճակատվելու և դա չէին թաքցնում: Այսինքն՝ ձմռանը հայերը միանգամայն ազատ էին նախապատրաստվելու գալիք արհավիրքներին դիմակայելուն:

Սասունցի երիտասարդները հարձակումներ էին գործում զենքի տիրանալու նպատակով, որովհետև զենքերի մատակարարման՝ արտասահմանից տեղափոխման, գործը վատ էր կազմակերպված: Երկիր մտած զենքի առյուծի բաժինը Վանում էր կուտակվում:

Ի տարբերություն ջարդերի դեմ պայքարի ելած մյուս շրջանների, Սասունն ընկավ հակասական իրավիճակի մեջ: Սասունցիները միահամուռ ու վճռական էին, որ մինչև վերջին շունչը կռվելու էին թուրք-քրդական ոտնձգությունների դեմ, միաժամանակ շատ քիչ գործ արեցին դրան նախապատրաստվելու ուղղությամբ: Ի տարբերություն նախորդ կռիվների (1894 և 1904 թվերի), սասունցիները գրեթե դադարել էին մտահոգվել ինքնազինմամբ և այդ գործը թողել էին Ռուբենին ու նրա կուսակցությանը, որոնք էլ դա հաջողությամբ ձախողեցին: Եվ սա այն պարագայում, երբ բոլորը համոզված էին, որ գարնանը թուրքական բանակն ու քրդական ուժերը ողողելու էին Լեռնաշխարհը, որ թուրքերը օգտվելու էին պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ հայությանը հաշվեհարդարի ենթարկելու նպատակով:

Հասկանալի է, որ ինքնապաշտպանությանը նախապատրաստվելու, մասնավորապես զինվելու խնդրին սասունցիների անփույթ վերաբերմունքը երկար շարունակվել չէր կարող: Եվ 1914-1915 թթ. ձմեռը սասունցիների համար նախապատրաստական եռուն աշխատանքի ժամանակ եղավ: Չնայած ձյան հաստ շերտին, գյուղերի միջև կապն անխափան էր պահվում: Գյուղապետները մի քանի անգամ խորհրդի հավաքվեցին: Սասունցիներն սկսեցին նորոգել զենքերը, ձեռք բերել նորերը, տեղի էին ունենում զինավարժություններ, ձևավորվում էին մարտական խմբեր:

Տալվորիկում հողի մեջ երկաթ կար: Նրանք այդ հանքը լցնում էին փուռը և այրում: Բարձր ջերմությունից երկաթը հալում էր և փոի անցքից հոսում էր դուրս: Գյուղում գործում էին արհեստանոցներ, որոնք մշակում էին այդ երկաթը, պատրաստում ամանեղեն, աշխատանքի գործիքներ, զենքեր:

Սերվեթը «խորհրդակցելու» համար Մուշ է հրավիրում Սասունի մեծ գյուղերի տանուտերներին և նրանց առաջարկում եռանդուն մասնակցություն ունենալ զորահավաքի կազմակերպմանը: Մութեսարիֆի բանսարկություններից խույս տալու համար, սասունցիների անունից Քաթիբ Կիրակոսն ասում է, թե սասունցիները պատրաստ են «զորակոչիկներով ու այլ անհրաժեշտ հարցերով օգնել կառավարությանը»: Մի քանի օր անց մի խումբ թուրք զինվորականներ բարձրանում են Սասուն՝ զինվորագրում անցկացնելու համար, սակայն սասունցիներն արդեն գյուղերից հանել էին զորակոչի տարիք ունե-

ցողներին: Նրանք զորահավաքի նորից ներկայացրին դեռահասների ու ասացին, թե 1904 թվի ջարդերից հետո ծնվածները դեռ փոքր են բանակում ծառայելու համար:

Սասունցիները որդեգրեցին երեք սկզբունք՝ զորահավաքին չմասնակցել, ժողովրդին զինել և քրդերի հետ հարաբերությունները լավացնել:

Նրանք պատվիրակություն ուղարկեցին Մուշ և ՀՅ Դաշնակցության կոմիտեից զենք խնդրեցին: Ռուբենն այդ խնդրանքը մերժում է, ավելացնելով թե զենքի համար պետք է վճարեն:

Սասունցիների՝ Շենիկում տեղի ունեցած ժողովը զինակոչիկ տալու պահանջին պատասխանում է. թե ստեղծված վտանգավոր իրավիճակում Սասունը չի կարող զրկվել իր՝ զենք կրելու ընդունակ տարրից: «Մենք անցյալի դառը փորձերը չենք մոռացել և զինվոր չունենք տալու»:

Սերվեթին հասցեագրված նամակում սասունցիները գրում են. «Մենք շրջապատված ենք քրդական զինված աշիրեթներով, որոնք զինվորներ չեն տվել կառավարությանը: Նրանք թշնամաբար են վերաբերվում մեր ժողովրդին: Երբ մեր երիտասարդ ուժերը հեռանան գյուղերից, զինված քրդերը կհարձակվեն մեր անպաշտպան բնակչության վրա և կկոտորեն կանանց ու երեխաներին»: Սասունցիներն առաջարկում էին զինաթափել աշիրեթներին, նրանց հավաքագրել գործող բանակ և «այն ժամանակ մենք ... անվտանգ և ապահով զգալով մեզ, առանց տարիքի խտրության, կամովին կմեկնենք ռազմաճակատ...»[1]:

Նամակն ուղարկվեց այն պահին, երբ խստաշունչ ձմեռը փակել էր Սասունի ճանապարհներն և սասունցիներին անմիջապես պատժելն անհնար էր: Սերվեթը ժողովի է հավաքում քուրդ աշիրեթապետներին, նրանց տրամադրում զենք ու զինամթերք և հանձնարարում պատրաստվել ու սպասել իր հրամանին: Նա բանտերից հանում է բաշիբոզուկներին, զինում է, հարվածող գնդեր կազմակերպում:

Գարունը բացվելու հետ սկսվեցին քրդական հարձակումները: Մայիսին բըլրքցի աշիրեթը Ու. Սալիմի ղեկավարությամբ հարձակվում է Ծովասարի արևմտյան լանջին եղած անասնահոտերի վրա, որոնք պատկանում էին Աղբիկ գյուղին: Նրանք հոտերի հետ նաև չորս հովիվների տարան: Աղբիկցի տղամարդկանց չհաջողվեց ազատել ոչխարն ու հովիվներին: Մի քանի օր անց քրդերը հարձակվում են Կոփ և Իրիցունք գյուղերի վրա: Հայերին չեն կարողանում ուժեղ դիմադրություն ցույց տալ: Նրանք փախչում են Գերմավ գյուղը, որի մարտական ջոկատը Ստ. Գրիգորյանի հրամանատարությամբ կռվի մեջ է մտնում: Օգնության են հասնում նաև սեմալցիները և հաջողվում է քրդերին փախուստի մատնել: Սակայն կռվի վերջնական բախտը որոշում են Պոլեյ Մջոյի և Գելիի Կիրակոս Հեպոյանի մարտական ջոկատները: Իրիցունքը, Կոփը և Գերմավը, ինչպես նաև քրդերի փախցրած անասնահոտերը հետ են գրավվում: Այդ գյուղերի բնակիչները ժամանակավորապես տեղափոխվում են Սեմալ և Շուչնամերկ:

---

[1] ***Հովհաննիսյան Ղ.,*** *Սասունը բոցերի մեջ, Ե., 1987, էջ 36:*

Գարնանը դեպի Սասուն են սկսում չարժվել Տիգրանակերտի աշիրեթները: Նրանց միանում են Խուլբի ու Խիանքի քրդերը: Քրդերը Սասունի վրա էին գնում բանակային ուժերի ու ոստիկանության ուղեկցությամբ:

Բայց որովհետև իշխանությունները վստահ չէին, որ աշիրեթները, բացի կողոպուտից, կամք ու ցանկություն կդրսևորեին բնաջնջելու Սասունի հայությանը, զինեցին քուրդ ռայային, նրանից ձևավորեցին միլիցիայի և ժանդարմերիական ջոկատներ, որոնք Սասունի վրա հարձակման ընթացքում առաջապահ ուժ հանդիսացան: Դրանով ցեղապետների իշխանության տակից հանվեց քուրդ հասարակության թափթփուկը: Պատճառը մեկն էր՝ ցեղապետները թուրքերին չէին հավատում: Նրանք անցյալի փորձից գիտեին, որ իրենց ձեռքերով հայերին բնաջնջելուց հետո թուրքերը հաշվեհարդարի կենթարկեն նաև իրենց: Իսկ ռայա, լյումպեն քրդին ղեկավարող ուժը կողոպուտի ու սպանության մոլուցքն էր:

Քրդերը Սասուն կարող էին բարձրանալ երկու ուղղություններով՝ Խուլբ-Տալվորիկ-Անդոկ և Հազրո-Բսանք-Անդոկ: Այս երկու գծերի վրա էլ հաստատված էին քրդական բագրանցի, բատկանցի, մամրկանցի աշիրեթները, բայց քանի որ Խուլբ-Տալվորիկ ուղղության վրա ստեղծված էին զինվորական կայաններ, հարձակման համար ընտրվեց այդ գիծը, ինչը նույնպես նշան էր, որ թուրքերը քրդերին չէին վստահում:

Հետևաբար հարձակման առաջինը ենթարկվելու էր Խուլբի գավառակը: Խուլբի հայկական գյուղերը պատրաստ էին դիմակայման: Թուրքերի բոլոր ջանքերը՝ ուժազրկելու տեղի հայությանը զենք կրելու ընդունակներին զորակոչի անվան տակ հավաքելու և ոչնչացնելու միջոցով, հաջողություն չունեցան: Կարողացան հավաքել ընդամենը 100 մարդ, որոնց զգալի մասը դասալքեց:

1915 թ. մարտի 25-ին Ահրոնք գյուղ են գալիս ոստիկաններ ու ձերբակալում հին ու նշանավոր հայդուկ Գալուստ Սասունուն ու նրա եղբայրներին: Որդիներին ազատելու համար Փասուր գյուղաքաղաք գնացած Աննա Մայրիկը, Սասունում շատ հայտնի մի քաղաքական գործիչ, ձերբակալվում է կառավարչի աշխատասենյակում: Որոշ ժամանակ անց բոլոր չորսին էլ սպանում են՝ դրանով գլխատում Խուլբի ինքնապաշտպանությունը:

Սահմանադրության հռչակումից հետո «կամաց-կամաց բարուոքուեցաւ մեր տնտեսութիւնը,- գրում է Գեղաշէն գյուղից Ղ. Սարգսյանը: Դաշտի եւ Սասնոյ գիւղերուն մէջ դպրոցներ բացուեցան... Սահմանադրութիւնը նաեւ հոգեբանօրէն զինաթափած էր հայութեանը: Ժողովուրդը կը զգար, որ իր համար ճակատագրական նոր շրջան բացուած է, խելօքները օրինապահութիւն կը քարոզէին եւ կը թելադրէին անտրտունջ արձագանգել զօրակոչի հրաւէրին: Վարիչներն էին լծուած զորահաւաքի գործին: Դէպքերը, սակայն, օրըստօրէ յոռետես կը դարձնէին զանոնք ալ: Սկսաւ ռուս եւ թուրք պատերազմը եւ լսուեցան հայ զինուորները զինաթափելու եւ ոչնչացնելու լուրերը: Այլեւս բուռն էր զինուելու ձգտումը, բայց զէնք չկար: Հազիւ կրցան 300 «հունան մաուզեր» բերել և 50-ական փամփուշտ բաժնել Սասնոյ ժողովրդին, հատը՝ 7 ոսկի: Գեղաշէնը 30 տուն էր և 100 զէնք վերցնող ունէր, բայց մեզի բաժին ընկաւ միայն 7 հրացան»:

Ձմռանը Դաշտից տխուր լուրերը չատացան: Բոլորն ռուսական բանակի գալուն էին սպասում անհամբեր:

Սակայն արտաքուստ ամեն ինչ խաղաղ էր, միայն հատուկենտ լուրեր էին ստացվում այլևայլ վիլայեթներում տեղի ունեցած ջարդերի ու Վանի ապստամբության մասին: Իշխանությունները հայերի հետ նույնիսկ սիրալիր էին վարվում: Հայերն, իրենց հերթին, ամեն ինչ անում էին իշխանությունների հետ խնդիրներ չստեղծելու համար: Ճշմարտությունն այն է, որ զորահավաքի առաջին օրերին քաղաքական ուժերը հաջողեցին որոշ թվով երիտասարդների ուղարկել բանակ՝ զորակոչվելու համար, բայց, երբ զորակոչվածներն սկսեցին լքել բանակը և «սև լուրեր» բերել հայ զինվորի վիճակի մասին, սասունցին այլևս մերժեց թե՛ զինակոչին մասնակցելը և թե՛ չալակավորներ տալը: Սասունի հայությունը թույլ չտվեց, որ բանակի համար բռնագրավումներ կատարվեին: Նա բանակին չտվեց նաև անասուն, քաշող ուժ, սայլ, տրանսպորտի որևէ ուրիշ միջոց: Իշխանությունների սանձազերծած առճակատման քաղաքականությունը փոխանցվեց սասունցիներին, գնալով ավելի անզիջում դարձրեց նրանց:

«Հնչակը» 1915 թ. օգոստոսին (№ 13) գրեց. «Սասունը հրաժարուեց զօրակոչին մասնակցելուց: Տեղի հայերը սպանեցին բռնարարքներ կատարող քուրդ պաշտօնատարներին: 700 սասունցի հայ դասալիքներ իջան Տարօնոյ դաշտ եւ օգտագործում էին բոլոր միջոցները փրկելու տեղի վտանգուած հայերին»:

Իշխանություններն, իրենց հերթին, Սասունի դեմ կռվին մասնակցելու համար ոտքի էին հանում բատկցի, բագրանցի, խուլբեցի, խիանքցի, խոշկանցի, ոշկոտանցի, բալկցի, բոզկցի և սասունցի աշիրեթները, դրմլիկ քրդերը, Մուշ քաղաքի թուրքերը, կովկասյան ռազմաճակատից բերված զորքերը և Տարոնի իսլամ ժողովուրդը՝ ավելի քան 30.000 մարդ: Սասունի երկնակամարին օր օրի խտանում էին չարագույժ ամպերը:

Վարդավառի օրերին լուր ստացվեց, որ Դաշտը կոտորվում է, իսկ Մուշը Հաճի Հակոբի ղեկավարությամբ կենաց և մահու կռվի մեջ է: Սասունցիների մի խումբ փորձեց Կուրտիկն անցնել ու օգնության հասնել Մուշին: Սակայն հաջողություն չունեցավ, թուրքերը փակել էին Սասունը Մուշի հետ կապող ուղիները: Զորքեր էին լցված մինչև Ղզըլգիարաթ և Միրզաղի աղբյուրը: «Սասունէն «անկարելի» եղաւ երթալ, բայց քաղաքի անկումէն յետոյ քանի մը տասնեակ կռվողներ թուրքական շղթան ճեղքելով բարձրացան Սասուն»[1]:

Սերվեթի հրամանով՝ հունիսի կեսերին Լաճկանի, Դալբկի, Գելիեգերմավի, Մրկեմոզանի ամառանոցների քրդերը հարձակվում են Շենիկի արոտավայրերի և հովիվների վրա ու քշում երկու հոտ: Վ. Գրիգորյանի (Գրգեի) ջոկատը հետ է խլում այդ հոտերը: Շենիկցիներին ահաբեկելու նպատակով քրդերն անընդհատ հարձակումներ էին գործում, բայց որպես կանոն հակահարված ստանալով հեռանում էին:

Նույն օրերին Շեկոյի տան քրդերը Հ. Յուսուֆի հրամանատարությամբ նորից են հարձակվում Աղբերիկի վրա: Բորբոքվում է թեժ մարտ, օգնության

---

[1] «Տարօնի արծիւ», 1939 թ., № 11, էջ 40:

է հասնում գելիցիների 50 հոգանոց ջոկատը՝ Հ. Հովսեփյանի գլխավորությամբ: Քրդերը 16 սպանված թողած՝ փախչում են: Գերմավ, Կոփ, Իրիցունք, Ընկուզնակ, Արդկունք, Սևիթ գյուղերի հայերն անվտանգության համար բարձրանում են Անդոկի ու Գերինի լանջերը, իսկ Խիանքի Հեղին, Սաղտուն, Բացա, Բերմ, Աղորք, Փառքա, ինչպես նաև Խուլբի Ահրոնք, Շուշիք, Գեզուրվանք, Ընձքար և մի քանի ուրիշ գյուղերի բնակիչներ մնում են իրենց գյուղերում և շարունակում զբաղվել խաղաղ աշխատանքով:

Զենքերը հանձնելուց խույս տալու համար Սասունի հարավարևմտյան ծայրամասի մի քանի գյուղերի տղամարդիկ ձմռանը հեռացան Իշխանձոր, Արտխոնք, Սևիթ և Խիանքի ուրիշ գյուղեր: Քրդական և թուրքական ուժերն անմիջապես դրանից օգտվում են: Նրանք մտնում են երիտասարդությունից դատարկված գյուղերը և շուրջ 3000 կանանց և երեխաների տանում են դեպի Բալու և ճանապարհին սպանում: Փրկվում են երեք հոգի, որոնց հաջողվում է հասնել Տալվորիկ և պատմել կատարվածի մասին:

Նման քայլերի իշխանություններն այլևս ոչ միայն չդիմեցին, այլև աշխատեցին սասունցիների հետ բախումների տեղիք չտալ: Սերվեթը Վարդան վարդապետին և մի քանի պաշտոնատարների Սասուն ուղարկեց տեղի ավագանուն հորդորելու, որ զորակոչի չներկայանալու փոխարեն բանակին տան չոռ, հաց, յուղ, ոչխար, դրամ, հանձնել զենքերը և «լեռներում ապաստանող ռուս կոզակներին ու արևելահայերին»:

Սասունցիները խոստացան առաջին պահանջը կատարել, իսկ մյուսները՝ ոչ: Հայերի ունեցածները միայն չափմախլի հրացաններ էին, որոնցով պաշտպանում էին արտերն արջերից, իսկ իրենց էլ քրդերից, հետևաբար նրանք այդ հրացանները հանձնել չէին կարող: Հանձնել չէին կարող նաև կոզակների, որովհետև այդպիսիք Սասունում չկային:

Սակայն հետագա դեպքերը զարգացան ուրիշ ուղղությամբ և գլխապտույտ արագությամբ: Մեկը մյուսի հետևից ավերակի վերածվեցին Դաշտի գյուղերը, հայ բնակչությունը ոչնչացվեց, ապա ընկավ Մուշը:

Տարոնի գյուղերի ու Մուշ քաղաքի փրկված բնակչության մի մասը «կռուելով կը քաշուի Քանայ սար, մաս մը Ս. Կարապետի անտառ, մաս մը՝ Շամբ»[1]: Թուրքերն առանց հապաղելու Սասունի վրա չարժեցին հյուսիսից թուրքական բանակը, իսկ հարավից ու արևմուտքից՝ քրդերին:

Հարձակմանը մասնակցեցին 30.000 զորք և նույնքան էլ քուրդ:

Սասուն էին գնում ոչ միայն թուրքերն ու քրդերը, այլև տարոնահայությունը: Հուլիսին նրանց թիվը Լեռնաշխարհում հասավ 30–35 հազարի: 15.000 տարոնցիներ հավաքվեցին Քանասարի անտառում:

Հայերին ահաբեկելու նպատակով Քյամիլի հրամանով քրդերը Առաքելոց վանքում սպանեցին վանականներին, 20 որբերի և սկսեցին հետապնդել Հավատորիկի սարերը փախած անզեն հայերին: Նրանք հրդեհեցին Քանասար գյուղը (62 տուն):

---

[1] *«Տարոնի արծիւ», 1939 թ., № 11, էջ 40:*

Կ. Պոլիսը չտապեցնում էր Մշո իշխանություններին, պահանջում արագացնել Սասունի հայության ջարդը: Կ. Պոլսի կառավարության ներկայացուցիչ Նուրին հանձնարարում է Հիլմիին. «Կառավարութիւնը խստիւ կը հրահանգէ, առանց ժամանակ կորսնցնելու, քանդել այդ աւազակային որջը»: Հիլմին առարկում է. «Մտահոգիչ պարագայ մըն է եւ զգուշութեամբ պիտի գործել...»: Նուրին, թե «ինչ որ ալ ըլլայ, պէտք է քանդենք այդ աւազակաբոյնը»[1]:

Մուշում ձևավորված տրամադրություններն ու գործողությունների պլանները հասնում էին կազանների ու նահիններեի ղեկավարներին, քուրդ ցեղապետներին ու աշիրեթապետներին: Վիթխարի զանգվածներ շարժման մեջ են դրվում:

Հյուսիս-արևելքում՝ Տափքի գայմագամ Թալիբի հրամանով քրդերը նորից հարձակվում են Կոփ, Գյարմավ, Շուշնամերկ և Գեղաչեն գյուղերի վրա: Հայերը հզոր դիմադրություն են ցույց տալիս: Օգնության են հասնում գելիեցիները, չենիկցիներն ու սեմալցիները: Կռիվը տևում է երկու օր և ավարտվում է թուրքերի ու քրդերի փախուստով:

Դրան հաջորդում է հարձակումը Աղբի գյուղի վրա: Հայերը թույլ են տալիս թշնամուն մոտենալ, ապա հակահարձակման են անցնում ու փախուստի մատնում: Քիչ անց հայ-քրդական նոր բախում է տեղի ունենում, հայերը պարտվում են ու հեռանում Անդոկ: Թուրքերն սկսում են ոմբակոծության ենթարկել Լեռնաշխարհի գյուղերը: Երեք օր կատաղի կռիվներ են ընթանում: Հայերի փամփուշտները վերջանում են և միայն Զոլոյին է հաջողվում մի փոքր խմբով հեռանալ Անդոկ: Զնայած թշնամին 1000 մարդ կորցնում է, բայց չարունակում է առաջանալ դեպի Շենիկ, Կուրտիկ և Ծովասար: Կուրտիկի և Ծովասարի հայերը չրջափակվելուց խույս տալու համար բարձրանում են Անդոկ: Թուրքերը դրանից հետո է, որ գրավում են Սեմալը, Շենիկն ու Շուշնամերկը և բարձրանում Գրեկոլ, որի հետևում 25.000 հայ էր կուտակված: Գրեկոլում ճակատամարտ է տեղի ունենում:

Սասունի 150 գյուղերի գրեթե ամբողջ բնակչությունը հավաքվում է Գելիեզուզան գյուղում ու նրա մերձակայքում՝ Անդոկի, Գերինի և Ծովասարի ստորոտներին:

Զորքն ու աշիրեթները չորս կողմից խուժում է Սասուն, զորքը՝ Կուրտիկից, իսկ քրդերը՝ Տափքից ու Տալվորիկից: Գնալով հարձակման օղակը ավելի է նեղանում և «չորս կողմէն խուժան, հեծելազօրք եւ հետեւակազօրք կը հոսին դէպի լեռնաշխարհը՝ մարելու համար ըմբոստութեան այդ խարոյկը... Գոյամարտի ոյժերը, ինչպէս եւ ժողովուրդը Անդոկի փէշերուն վրայ հաւաքուած են: Անդոկը հրաբուխի վրայ է, չորս կողմէն կրակի տակ առնուած պիտի պայթի...»[2]: 60-70.000 զորքերի և քրդերի դեմ կանգնած էր Սասնո լեռնաշխարհն իր զավակների հետ, որոնց նշանաբանն էր՝ «Մեռնել կամ ազատվել կռվով»: «Տալվորիկի եւ Իշխանձորի լեռները եւ անդունդները կը դղրդային համազարկերէն, մթնոլորտը լեցուն էր հայերէն եւ քիւրտերէն երգերով, զէնքերու խլա-

---

[1] **Երիցեան Գ.,** Լեռնաշխարհի գոյամարտը, Պէյրութ, 1959, էջ 2-3:

[2] Նույն տեղում, էջ 105:

ցուցիչ ձայներուն կը միանար սուրերու չաչիւնը, ձիերու խրխինջը, վիրաւորներու ոռնոցը, կանանց սգաւոր երգը: Ցեղապետական կռիւ մըն էր, ուր կիները գօտեմարտին մէջ կը նետուէին քաջալերական խօսքերով կամ սուգի անհուն լացով: Դիրքերն անորոշութեան կը մատնուէին: Մահ-պատերազմ մըն էր բոլորի համար: Տալվորիկ կարծես երկրաշարժէ մը բռնուած էր: Լեռները կը շարժէին, ժայռերը թաւալգլոր դէպի ձորերը կ'իջնեին թշնամի ոհմակները ճզմելու, ժողովրդական բանակը փառքի պսակով մեռնելու գինովութեամբ կը սաւառնէր Սպիտակ լեռան կիրճերու վրայ»[1]:

Ճակատի հրամանատար Իսրոն (Կորյունը) անցավ Շեքյուսիֆ Զիարաթ, այնտեղից Կոփ: Գելիի ուժերը Պետո Ղազարի և Տեր Քաջի Գրգոյի գլխավորությամբ շարժվեցին դեպի Շենիկ: Քրդերը դիրքեր գրավեցին Փուրթո քեռչքի մեջ: Գրգոն հարձակվում է նրանց վրա: Մարտը շարունակվում է մինչև գիշեր: Առավոտյան հայկական բոլոր գյուղերը դատարկվեցին և բնակչությունը տեղափոխվեց Գրբեսոր: Հաջորդ օրը կատաղի ճակատամարտ սկսվեց: Թուրքական զորքերը հասան Շենիկ, այն հրդեհեցին ու անցան Սեմալ: Գյուղի փողոցներում կատաղի մարտեր մղվեցին: Սեմալը նույնպես հրո ճարակ դառավ: Հայ մարտիկները Սեմալում դիմադրեցին այնքան, որ բնակչությունը զորքին անհասանելի դարձավ և բարձրացավ Գրեգոլ, որն անմիջապես պաշարվեց Դիարբեքիրից, Ճապաղջրից ու Մուշից եկած զորքերով և քրդական մեծաթիվ ուժերով: Սասունցիները զենքի և զինամթերքի մեծ պակաս ունեին, և թշնամին այդ իմանալով՝ անմիջապես հարձակման անցավ: Նրանք հեռացան Գրեգոլից: Հայերը պաշտպանական կատաղի մարտեր մղեցին Գելիում: Սեմալի ուժերը Մանուկի հրամանատարությամբ մարտնչում էին եկեղեցու մոտ: Սեմալցիները 20 զոհ տվեցին, Մանուկը երեք տեղից վիրավորվեց: Վերին դիրքերից օգնություն ստանալով՝ հայերը թշնամուն հետ չպրտեցին և ապա բարձրացան Անդոկ, որտեղ ժողովրդի մեծ կուտակում կար արդեն:

Իշխանությունները քրդերին նորից առաջարկեցին երկընտրանք՝ բանակ զորակոչվել կամ Սասունը հայերից մաքրել: Բնականաբար, քրդերն երկրորդը ընտրեցին: Նրանց մեծ մասն, առանց այդ պահանջի էլ, վաղուց էր հարձակումներ գործում հայերի վրա:

Սասունցիներն ունեին չուրջ 3000 մարտական և նույնքան էլ այլևայլ տիպի հրացաններ[2]:

Քրդերը մեծաթիվ էին, բայց անկազմակերպ, ինչի շնորհիվ հայերը հաջողում էին փոքրաթիվ ուժերով նրանց հակահարված տալ և տևական կռիվ մղել այդ հորդաների դեմ:

Հայկական գրեթե բոլոր գյուղերը համառ դիմադրություն ցույց տվեցին, սակայն անզոր էին կանգնեցնելու թշնամիների առաջխաղացումը: Սասունի պաշտպանության ղեկավարները ճակատագրական նշանակության երկու սխալ թույլ տվեցին: Առաջին, որոշեցին, որ յուրաքանչյուր գյուղ պետք է ինքն իրեն պաշտպանի, այսինքն՝ սասունցիները դրվեցին մի վիճակում, երբ հար-

---

[1] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 975:

[2] Նույն տեղում, էջ 443:

կազրված էին տասնյակ հազարավորների դեմ յուրաքանչյուր դեպքում կռվել փոքրիկ խմբով, որին ոտնատակ անելը բարդ խնդիր չէր: Սասունցիների մասնատված կռվելու պարտադրանքը Լեռնաշխարհի ողբերգության հիմնական պատճառն էր: Երկրորդ, Թշնամու հետ առաջին բախումներից հետո Սասունի ողջ բնակչությանը հանձնարարվեց քաշվել Անդոկ և Գեբին, այսինքն՝ նորից (1894 և 1904 թվերի նման) խախտվեց պարտիզանական կռվի պարտադիր սկզբունքը՝ գլխավոր ճակատամարտ չտալ, Թշնամու դեմ կռվել փոքրիկ գործողություններով, հարվածել անսպասելի և այնտեղ, որտեղ հակառակորդը չի սպասում, հարվածել կիրճերում, անտառներում, անանցանելի վայրերում:

Ժողովրդին Անդոկում հավաքելը օբյեկտիվորեն Թշնամու օգտին էր, որովհետև նրան հնարավորություն էր տալիս իր ամբողջ ուժերը միաժամանակ գործողության մեջ դնել տարածքի որոշակի հատվածում: Ահրոնքի մարտական ջոկատն ամրացել էր գյուղի հարևանությամբ եղած անտառներում ու ժայռերին և թույլ չէր տալիս, որ քրդերը Սասունի խորքերը անցնեին: Գեղերվանք և Քարձոր գյուղերի ջոկատները պաշտպանում էին Անդոկի հարավային փեշերը:

Խուլբի բնակչության զգալի մասն ապաստանել էր գյուղերից հեռու ընկած անասնագոմերում և քարանձավներում: Նրանց կապը բնակավայրերի հետ և պարենի տեղափոխությունը հնարավոր էին միայն գիշերները:

Հարավում հայ-քրդական բախումները չարունակվեցին երեք ամիս՝ մինչև հունիսի կեսերը: Խուլբի և Խիանքի գյուղերի վրա հարձակումները նույն խնդիրն ունեին՝ հայերից մաքրել Սասուն ներխուժելու Փասուր-Տալվորիկ-Անդոկ գիծը և մաշել նրանց կռվող ուժերն ու զինամթերքը:

Ահա թե ինչո՛ւ այդ շրջանի հայկական գյուղերի վրա հարձակումները, ավերումները, կողոպուտն ու սպանությունները տեղի էին ունենում անընդմեջ: Դրանք առանձին հաջողություններ արձանագրում էին միայն այն պատճառով, որ խուլբեցիներն ու խիանքցիները քրդական հորդաների դեմ կռվում էին միայնակ: Հունիսի վերջերից նրանք Սասունի մյուս շրջաններից օգնություն ընդհանրապես չէին ստանում զանազան պատճառներով (հեռավորություն, իրենք էլ էին հարձակման ենթարկվում, յուրաքանչյուր գյուղ պետք է իրեն պաշտպաներ ըստ հրամանի, կապի և տեղեկատվության բացակայություն և այլն):

«Ճշմարտությունն այն է,- գրում է Կ. Սասունին,- որ Տարօնի ամբողջ շրջանը իր միջնաբերդը կը նկատէր Սասունը: Հոն ուղղուած էին բոլորի աչքերը: Հոն կ'երթային կուսակցական եւ մարտական ղեկավարները: Հոն կը բարձրանային հին ֆիդայիները, կռուելու եւ մեռնելու համար»: Նա մոռանում է, որ Սասուն են տեղափոխվում Դաշտի թաքստոցների զենքերը, որոնք, սակայն, հակառակ Դաշնակցության գործիչների հավաստիացումների, ավելի քան քիչ էին:

Ռուբենն ու նրա կոդմնակիցները ցանկությունն ընդունում էին որպես իրականություն: Կարծում (և ցանկանում) էին, որ թուրքական հարձակումը սկսվելու էր Սասունից՝ մեխանիկորեն գտնելով, որ այդպես էր մտածում նաև Սերվեթը, և այն իրողությունը, որ այդ հարձակումը ամիսներ չարունակ տեղի չէր ունենում, ձգձգվում էր, բացատրում էին ռուսական բանակի հարձակողական գործողություններով: Ռազմավարության համար կործանարար հե-

տևանքներ ունեցող մտահղացումը՝ որևէ տարբերակով տարվելն ու մյուս տարբերակները բացառելն ուղղակիորեն նպաստեց տարոնահայության կոր-ծանմանը:

Իհարկե, Թուրքական հրամանատարությունն աշխատում էր առաջին հեր-թին ամրանալ Կուրտիկում և վերահսկողության տակ առնել Սասունը Տարոնի հետ կապող ուղիները:

Դեռ ապրիլին փորձ արվեց ամրանալու Կուրտիկում, բայց հայերը թույլ չտվեցին: Փեթարի, Գոմերի, Սեմալի և Շենիկի մարտական ջոկատները հաջո-ղեցին մի քանի օրվա համառ կռիվներով Կուրտիկում տիրանալ իշխող դիրքե-րին: Այդ կռիվները ղեկավարում էր Փեթարա Մանուկը, մասնակիցների թվում էր հայկական դասական հայդուկության մի ամբողջ համաստեղություն: Հայե-րը թշնամուն հակահարված տվեցին նաև հարավում՝ Սպիտակ սարում՝ տալ-վորիկցիների և հարավային Սասունի մի քանի ուրիշ գյուղերի նահանջող բնակ-չության համախումբ ուժերով: Քրդերը վախվորած էին և դանդաղ ու շատ երկչոտ էին առաջ շարժվում:

Իշխանձորի, Խուլբի և Խիանքի ուժերը քրդերի առաջ փակեցին Անդոկի հարավային փեշերը բարձրանալու ուղիները: Փաստորեն, հայերը կարողացան Կուրտիկ-Սպիտակ սար-Իշխանձոր-Ընկուղնակ-Աղբի գծի վրա կանգնեցնել թշնամու առաջխաղացումը: Թուրքական հրամանատարությունն ան-հանգստացած էր, բայց օգնական ուժեր ձեռքի տակ չուներ:

Մայիսին հարձակման անցան նաև Բսանքի վրա: Տեղի հայերը հակառա-կորդին մի քանի կետերում համառ դիմադրություն ցույց տվեցին և ապա ամ-րացան Գոմուց վանքի անմատչելի պարիսպների հետևում:

Քրդերը դադարեցնում են հարձակումը և սպասում են, որ իրենց միանան Թուրքական զորքերն ու թնդանոթները, ինչը Բսանքի հայությանը հնարավո-րություն է տալիս թշնամուն հակահարված տալ, ճեղքել նրա հարձակման գիծն ու բարձրանալ Անդոկ: Ինչ վերաբերում է Գոմաց վանքի կռվին, ապա նա դարձավ Սասնո ինքնապաշտպանական կռիվների ամենահերոսական դրվագ-ներից մեկը: Վանքը մի ամբողջ ամիս դիմադրեց: Քրդերը փակեցին վանքին ջուր մատակարարող ջրատարը, դավաճանաբար սպանվեց պաշտպանության ղեկավարներից իշխան Շառոն: Նրա հետ միասին հայերի մարտական գոր-ծողությունները ղեկավարում էին Ստեփան վարդապետը և Դավիթ Երեցյանը: Որպեսզի Մազե (Սատանի) կամուրջը բաց լիներ և Բսանքի ու Խիանքի ժո-ղովուրդը կարողանար Տալվորիկ անցնել, Սասունցի Մուշեղը, Ֆարեն, Թա-թարը, Համզոն, Ռըզգոն և մի քանի ուրիշ ֆիդայիներ անձնազոհ կռվի մեջ մտան մի քանի հարյուր քրդերի դեմ: Նրանք չեչտակի գրոհով ձեռնամարտի անցան: Քրդերը բազմաթիվ զոհեր տալով փախուստի դիմեցին:

Մի բուռ ժողովուրդ, որը դրսից որևէ օգնություն չէր ստանում, և ընդհան-րապես, կտրված էր արտաքին աշխարհից, ապավինած հայրենի ժայռերին, «նախնադարյան» հրացաններով հերոսաբար մարտնչում էր իրենից թվապես բազմապատիկ գերակշիռ, շատ ավելի լավ զինված թշնամու դեմ:

Արդեն մայիս ամսին գծագրվեց, որ բախտորոշ իրադարձությունները տեղի էին ունենալու Անդոկ և Գերին լեռների վրա ու Տալվորիկում: Հայերի տրա-

մաղրության տակ մնացել էր 40 կմ երկարությամբ և 30 կմ լայնությամբ մի տարածք: Այդ տարածքի վրա էր հավաքվել Սասունի ամբողջ հայությունը՝ 15.000 հոգի, ինչպես նաև Սասունում ապաստանած 40.000 տարոնցիների մեծ մասը: Եթե Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում ընթանում էին հայերի զանգվածային տարագրություններ ու ջարդեր, ապա Սասունում՝ պատերազմ: Սասունցին վճռական էր՝ առանց կռվի ոչ մի թիզ հող չզիջել թշնամուն:

Հայերը բանակցությունների մեջ մտան քրդերի հետ, որոնք հասկանում էին, որ թուրքական իշխանությունները սասունցիներին հաշվեհարդարի ենթարկելու համար էին հեղում քրդի արյունը: Քրդերը հայտարարեցին, որ այլևս առանց թուրքական բանակի մասնակցության կռվի մեջ չեն մտնի: Շենիկ գյուղում տեղի ունեցավ Սասնո գյուղերի մարտական ուժերի ղեկավարների ժողով, որին մասնակցում էին Ռուբենը, Կորյունը, Սասունցի Մուշեղը, Մնջոն, Փեթարա Մանուկը, Սեմալցի Մանուկը, Գելեցի Կիրակոսը, Շենիկցի Ղազարը, Զոլոն: Որոշվում է Լեռնաշխարհի պաշտպանական գիծը յոթ գոտու բաժանել:

Պաշտպանական այդ գոտիները ներկայացնում էին հետևյալ պատկերը:

Տալվորիկ-Խիանք. Հրամանատարը Սասունցի Մուշեղն էր: Նրան օգնում էին Ալիջանցի Տիգրանն ու Բսանցի Դավիթ Երեցյանը: Այս ճակատում հայկական ուժերի կորիզը կազմում էին տալվորիկցիները՝ իշխաններ Թաթարի Համզեի, Բազեի և Ռըզգոյի հրամանատարությամբ:

Ժամանակակիցներից մեկը վկայում է, որ Տալվորիկի ճակատում կար 165 տալվորիկցի, որոնք ունեին 3 մոսին, 4 քյուչուկ չափլի, 15 հունական մեկ կրականոց, ինչպես նաև այնալու և չախմախլու հրացաններ: Այստեղ էին նաև Սպաղանքի նշանավոր հայդուկներ Կարոն ու Հագեն: Այստեղ էին Տարոնից Սասուն բարձրացած 50-60 տարոնցիներ, որոնք զինված էին մոսին և քյուչուկ հրացաններով: Կռվողներից ոմանք ունեին նաև տասնոց մաուզերներ: Այս ճակատի հրամանատարների թվում էին Սասունի ինքնապաշտպանական կռիվների վետերաններ, 1894 և 1904 թվերի հերոսամարտերի մասնակիցներ Գասպարը, Ավոն, Շաչո Ֆարեն, Ավդալի Մակարը, ուսուցիչ Միքայել Քեմալյանը, նախկին զինվորական Աչոտ Սարգսյանը: Քրդական անընդմեջ հարձակումները մեկը մյուսի հետևից ձախողվում էին, իսկ տալվորիկցիների հակահարձակումների պատճառով էլ մեծ կորուստներ էին տալիս: Մասնավորապես շատ զոհեր էին տալիս տալվորիկցիների ավանդական թշնամի բագրանցիները, որոնք ռազմաճակատի այդ մասում քրդերի գլխավոր ուժն էին: Օրինակ, մարտական գործողությունների երկրորդ օրը հայերը գիշերը հարձակվեցին քրդերի վրա ու փախուստի մատնեցին: Չորրորդ օրվա գիշերը նրանք նոր հարձակում գործեցին խրզանցիների վրա և 18 քուրդ սպանեցին:

Այս ճակատում այդպես անցավ ամբողջ մայիս ամիսը: Քրդերին օգնության հասան Խաբլջոզի աշիրեթները: Հունիսի 20-22-ին տեղի ունեցան կատաղի կռիվներ, որոնք նույնպես ավարտվեցին հայերի հաղթանակով: Քրդերը մի օրում 80-100 կռվող կորցրեցին: Ավար վերցրած զենքերով տալվորիկցիները մարտական լրացուցիչ ուժերի զինեցին: Երկու օրում Տալվորիկի ճակատում քրդերը չուրջ 200 սպանված տվեցին: Գիշերը տալվորիկցիները թողեցին Գաբլորի դիրքերն ու Ավխուրկների բարձունքները քաշվեցին, իսկ գյուղի բնակչու-

թյունը Գերինի հարավային լանջերը բարձրացավ: Այդ կռիվներում հայերից սպանվեց 17 և վիրավորվեց 20 հոգի:

Քրդերն այս ճակատում այլևս մարտական լուրջ գործողություններ չձեռնարկեցին մինչև Դիարբեքիրից կանոնավոր բանակի գալը:

Թվենք մյուս ռազմաճակատները:

Շենիկ-Սեմալ. այստեղ հայերը կռվում էին Զոլոյի, Շենիկի Ղազարի, Սեմալցի Մանուկի և Ադամի հրամանատարությամբ:

Աղբի. հրամանատարներն էին Ազրկա Մարդեն և Մշեցի Արոն:

Գերին-Խուլբ. հրամանատարներն էին Իշխանձորի Արթինը, Հեղինցի Վահանը, Սաղտունցի Հովհաննեսը և Ահրոնքցի Մանոն:

Գելիեգուզանի ճակատ, ամենաերկարն էր, հրամանատարներն էին Կորյունը, Մճոն, Մորուք Կարոն, Պետոյան Ղազարը, Սրգոյի Հովսեփը, Քյաթիբ Կիրակոսը, Մարգեն, Տեր Քաջի Ադամը, Ֆահրադյան Ղազարը, Գորոյի Պետրոսը: Այս ռազմաճակատի ուժերը տեղակայված էին յոթ գյուղերում, կռվողների թիվն անցնում էր հազարից:

Սասունի ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատարն էր Ռուբենը: Նրա անմիջական հրամանատարության տակ էին Սասունցի Մանուկի, Մշեցի Ֆահրադի, Արոնի, Պզտիկ Արամի, Ավրանի Արամի, Ղզլաղաջցի Մանոյի (Հրայր Դժոխքի եղբայրը) և մի քանի ուրիշների ջոկատները:

Ե. Պարսամյանը սասունցիների դիրքերի դասավորության մասին տալիս է հետևյալ տեղեկությունը, ա) Ս. Հովհաննու վանք՝ Պոլեի Մճոյի խումբ, չուրջ 50 հոգի և Փեթարա Մանուկն իր տասնյակով, բ) Աղբիի դիրքը՝ Կորյունի 40 հոգանոց խումբը, գ) Գաբլորի և Կոբչիկի դիրքերը՝ Սասունցի Մուշեղի 50 հոգանոց խումբը, դ) Կ. Շարաֆյանի թնդանոթների դեմի դիրքերը՝ շենիկցիների խումբը Զոլոյի գլխավորությամբ, ե) Գրեխլի դիմացի դիրքերը՝ սեմալցիների խումբը Տեր Կարապետի և Մանուկ Շառոյանի գլխավորությամբ, զ) Ղարիբղանայի և Մխիթարի դիրքերը՝ գելիեցիների խումբը (700-800 հոգի) Մորուք Կարոյի գլխավորությամբ, է) Անդոկի ռազմամթերքի թաքստոցների պահպանությունը հանձնված էր առանձին խմբի: Այդտեղ էին նաև Ռուբենն ու իր խումբը: ը) Կենտրոնում կռվում էին ղզլաղաջցիներն ու գոմերցիները[1]:

Վճռական գործողություններն սկսվեցին հուլիսի կեսերին: Հուլիսի 19-ին թուրքական զորամասերն ու քրդերը նոր հարձակման անցան: Այն Տալվորիկի, Աղբիի, Շենիկի, Խուլբի և Սեմալի ուղղություններում սկսվեց միաժամանակ: Հարձակմանը մասնակցում էին 40.000 հոգի և տասնյակ թնդանոթներ:

Սասունի ռելիեֆը, պարտիզանական կռիվներ մղելու սասունցիների փորձն ու հմտությունը, զինյալների նչանակալի թիվը հնարավորություն էր ընձեռնում թշնամուն հակահարված տալու: Ռուբենի ու նրա խմբի անգործությունը սկզբնական շրջանում էական ազդեցություն չունեցան մարտական գործողությունների վրա: Տեղաբնակ հայերը Փեթարա Մանուկի, Երեցյան Մանուկի, Սուլուխցի Տեր-Ստեփանի, Կորյունի, Տեր-Մամբրեի, Սաղտունցի Հովհաննեսի,

---

[1] **Պարսամեան Ե.,** նշվ. աշխ., էջ 75-81:

Իշխանձորցի Արթինի ու Կրպոյի, Մորուք Կարոյի, Զոլոյի ու այլոց ղեկավարությամբ հաջողությամբ էին մարտնչում հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ:

Թշնամու հետ Ծովասարում առաջին բախման ընթացքում թե՛ հայկական և թե՛ քրդական ուժերը մեծ կորուստներ կրեցին: Հայերը հաջողում են քրդերից խլել բազմաթիվ ոչխարի հոտեր և նախիրներ: Գեբինի ուղղությամբ թշնամին նահանջեց՝ մեծ քանակությամբ ավար թողնելով: Գաբլորում հայերը տևական անգիջում կռիվ մղեցին աշիրեթների և կանոնավոր զորքերի դեմ: Տարկոչում նրանք կարողացան պահել Տիգրիսի կիրճի վրա հսկող կետերը: Ծիրինկատարում նույնպես հայերը պահպանեցին իրենց դիրքերը:

Բոլոր ռազմաճակատներում հարձակումները հետ մղվեցին, բացի Շենիկի ուղղությունից, որտեղ թուրքերը հաջողեցան գրավել Մրկեմոգանի և Տալավնեի բարձունքն ու թնդանոթներ տեղակայել: Իսկ Տալվորիկի և Իշխանձորի շրջաններում մղվեցին արյունահեղ մարտեր, գործը հասավ ձեռնակռվի: Սպիտակ սարը ծածկվեց քրդերի դիակներով: Նրանք զինադադար խնդրեցին: Հայերը համաձայնեցին: Քրդերն անիծելով օսմանցուն՝ հավաքում են իրենց զոհվածների դիակները:

Թուրքերը թարմ ուժեր են բերում, բայց նրանց դեմ անառիկ Գաբլորն էր, որը թշնամուն գամված պահեց Տալվորիկի ձորերում:

Հայերը հաջողությամբ հետ մղեցին թշնամու գրոհները նաև Խուլբի, Խիանքի և Իշխանձորի ճակատներում:

Հայերի գործողությունների սրությունը, կռվելու նրանց հմտությունը և անձնազոհությունը քրդերի վրա թանկ էին նստում: Անդոկի հյուսիսային լանջին Բերեչի քրդերի ցեղապետը զոհվեց, իսկ մյուսները խուճապահար փախան: Այդ քրդերին մեծ կորուստներ պատճառեց նաև Ալիանքի մարտական ջոկատը: Անդոկի արևմտյան մասում 2-2.5 ամսվա ընթացքում թշնամին չկարողացավ մեկ թիզ իսկ առաջանալ, չնայած այդ մասում քրդական մեծաթիվ կռվող ուժեր կային և նրանց ղեկավարում էր Ֆարդինի տիրահռչակ Պարան բեկը:

Գելիեգուզանցիները սկզբում հաջողությամբ հետ էին մղում թշնամու հարձակումները: Նրանք եռանկյուն դասավորությամբ դիրքեր էին զրաղեցրել և հակահարված էին տալիս թուրք-քրդական հարձակումներին: Հունիսի 21-ին գելիեցիները թույլ տվեցին, որ քրդերն ընդհուպ մոտենան իրենց դիրքերին, ապա գրոհեցին և նրանց 27-30 զոհ պատճառելով՝ փախուստի մատնեցին:

Սակայն սասունցիների ուժերը գնալով հալվում, պակասում էին: Հունիսի վերջերին կռվողների թիվը հազարից չէր անցնում: Նրանց գլխին կախվեց նաև սովի վտանգը: Հեշտ չէր 50.000 հոգու կերակրել: Սննդամթերք ապահովելու համար գործադրվում էին զանազան միջոցներ, այդ թվում նաև բռնազավթումներ: Այդ նպատակով Լաճկանում և Անդոկի կիրճերում հարձակումներ գործեցին քրդերի վրա և նրանց փախուստի մատնելով 25 կմ երկարությամբ, հազարավոր ոչխարների տիրացան:

Սասունի ինքնապաշտպանության ամենակարևոր ու թերևս ամենավտանգավոր հատվածը հյուսիսային ճակատն էր, որը Լեռնաշխարհի հյուսիսային դարպասն էր: Առաջին շրջանում հայերն այս ռազմաճակատում հաջողությամբ էին գործում: Շենիկ գյուղի շրջանում մարտական գործողությունները ղեկա-

վարում էր հայդուկային պայքարի բովով անցած, մարտիկ-հայրենասերի լավագույն գծերով օժտված Շենիկցի Ղազարը: Նրա հրամանատարության տակ էին փեթարցիների, գոմերցիների, ղզլաղաճցիների և չենիկցիների ջոկատները: Այս տեղամասում հայերը խնդիր ունեին կասեցնելու հարձակումը Մուշ քաղաքի կողմից, որտեղից չատ ավելի հավանական էր ոչ թե քրդերի, այլ թուրքական զորքերի հարձակումը: Ղազարի ուժերը մի քանի անգամ հետ մղեցին թե՛ քրդերի և թե՛ զորքի հարձակումները: Կուրտիկի արևելյան կողմում թուրքական երկու ջոկատներ հարձակվում են չենիկցիների մարտական խմբերի վրա: Կռիվը տևում է մինչև գիշեր: Պաշտպանվողներին օգնության են հասնում չենիկցի գյուղացիներն ու սեմալցիները: Թուրքերը հեռանում են՝ մարտադաշտում մի քանի տասնյակ զոհ թողնելով:

Թուրքերն սկսում են Կուրտիկի շրջանում ամրություններ կառուցել, զինվորական լրացուցիչ ուժեր են բերում: Առաջին անգամ այստեղ գործածեցին մետաղյա արգելաչղթաներ: 10-15 օր չարունակ ոչ մեծ բախումներ տեղի ունեցան:

Ծիրնկատարին հայերի գործողությունները ղեկավարում էր Մանուկ Շառոյանը: Նա 1904 թ. կռիվների համար դատապարտվել էր 101 տարվա բանտարկության, բայց սահմանադրության հռչակումից հետո ազատվել էր: Նրա հրամանատարության տակ էին Շատախի, Սեմալ, Շենիկ, Տապլբ, Շուշանմերկ, Գեղաշեն և Իրիցանք գյուղերի մարտական ուժերը: Այս ճակատում ևս հայերը չաբաթներ չարունակ հաջող մարտեր մղեցին:

Հունիսի 26-ին թուրքական զորքերը նորից գրոհեցին Կուրտիկը, սակայն մեծ կորուստներով հետ փախան:

Գերի բռնված մի քուրդ հայտնեց, որ Նուրի բեկի հրամանատարությամբ թուրքերը զինվորական մեծ ուժեր էին կուտակում և խոշոր հարձակման պատրաստվում:

Հայերն անմիջապես նախապատրաստական աշխատանքներ են սկսում՝ նոր ուժեր են հավաքագրում, դիրքերն ամրացնում:

Ռազմաճակատի կենտրոնի ուժերի առաջ խնդիր դրվեց սպասել մինչև թշնամին մոտենա և հակահարձակման անցնել: Իսկ Վ. Գրիգորյանի, Ա. Պողոսյանի, Գ. Քոթանյանի, Խ. Շառոյանի և Մ. Ղազարյանի ջոկատները դարանակալել էին աջ թևում և հանկարծակի հարձակում էին գործելու թշնամու վրա՝ թիկունքից:

Նախահարձակ եղան քրդերը, ապա մարտի մեջ մտավ զորքը: Նախնական նշանակետերը Շենիկ և Սեմալ գյուղերն էին:

Նուրին հաղթանակի հարցում կասկած չուներ և իրեն ամբարտավան էր պահում: Թուրքերը բղավում էին. «Վախկո՛տ հայեր, անձնատո՛ւր եղեք»: Հայերը թույլ տվեցին, որ նրանք մոտենան իրենց դիրքերին, ապա տրվում է հարձակման ազդանշանն ու սկսվում է կատաղի մարտ, որն ավարտվեց թուրքերի խուճապահար փախուստով: Բայց Նուրին հաջողեց խուճապի առաջն առնել և իր ուժերը կենտրոնացնել աջ թևում: Հայերը կռվելով հետ քաշվեցին: Այդ ժամանակ թշնամուն թիկունքից խփեցին դարան մտած ջոկատները և նրան առան աքցանի մեջ: Նուրին սպանվեց, իսկ զորքը փախուստի դիմեց:

Հայերին ոգևորում էր նաև այն, որ ռուսները հասել են Մկրագոմ, այսինքն՝ մտել են Տարոն: Իրավիճակը քննելու և հետագա անելիքները որոշելու համար հունիսի 28-ին խորհրդակցություն կայացավ: Մասնակիցների մի մասը Ռուբենի գլխավորությամբ գտնում էր, որ պետք է շարունակել կռիվը մինչև ռուսների գալը, իսկ մյուս մասը (Կ. Երեցյան, Գ. Սարգսյան, Վ. Ազատյան և ուրիշներ) նկատի ունենալով մատակարարման անհնարինությունը, գտնում էին, որ անհրաժեշտ էր ժողովրդին դուրս հանել Սասունից: Նրանք առաջարկում էին Ծովասարում ճեղքել Թշնամու ճակատային գիծն ու իջնել Մուշ, ապա առաջ շարժվել և 2-3 օրում հասնել ռուսական բանակին:

Դժվար է հետին թվով որոշակի գնահատական տալ այս կարծիքներին: Ըստ իս, ճիշտը առաջին առաջարկն էր, որովհետև խելոք մարտավարության դեպքում դա շատ ավելի մեծ հնարավորություն ուներ ժողովրդին փրկելու, քան Թշնամու օղակի միջով կանանց, երեխաներին, ծերերին 80-90 կմ տեղափոխելը, այն էլ մի պահի, երբ ռուսական բանակից փախչող մահմեդական զանգվածները ողողել էին Տարոնը և ավազակությամբ ու հայերին բնաջնջելով էին զբաղված:

Այլ բան է, որ ինքնապաշտպանության ղեկավարները, հույսը դնելով ռուսների գալու վրա, լուրջ չվերաբերվեցին ինքնապաշտպանական կռիվների հետագա կազմակերպմանը:

Ռազմաճակատային գծի ոչնչացումն ու ժողովրդի կենտրոնացումը Անդոկում (չնայած այն տեղի էր ունենում աստիճանաբար, բայց անընդհատ), խանգարում էին դիրքային կռիվներին, ինչպես նաև դրանց ու պարտիզանական գործողությունների զուգակցմանը:

Առաջին հայացքից թվում էր, թե օգոստոսի 1-ին հայերի պաշտպանական գծում, բացի Շենիկի և Սեմալի հատվածից, հարաբերական կայունություն էր: Բայց անմիջապես ակնհայտ դարձավ, որ այդ «բացի»ն վճռորոշ դեր ուներ: Այստեղ թուրքերը հնարավորություն ստացան ռմբակոծությունների օգնությամբ ճեղքվածք առաջացնել սասունցիների պաշտպանական գծում: Հավանաբար երկու կողմերն էլ այդ լավ էին հասկացել և Շենիկը մի քանի անգամ ձեռքից ձեռք անցավ: Նախավերջին անգամ հայերը ոչ միայն գյուղը, այլև թուրքական թնդանոթները գրավեցին: Սակայն թուրքական հրամանատարությունը թարմ ուժերի հետ միասին նոր թնդանոթներ է բերում ու տեղադրում Կուրտիկի բարձունքներին: Սկսվում է նոր ընդհանուր հարձակում և Շենիկը պահելը անհնար է դառնում: 50 կմ երկարություն ունեցող ռազմաճակատի ամբողջ երկայնքով անդիջում մարտեր էին ընթանում: Օրհասական կռիվներ էին, մասնավորապես հզոր էր հարձակումը չենիկցիների և գելիցիների դիրքերի վրա:

Բայց հայերն աննկուն էին:

«Օգոստոսի 1-ին թուրքական զորքերն ու քրդերը հարձակման անցան և առաջ շարժվեցին,- գրում է Ա. Համբարյանը:- Տեսնելով ղեկավարների անգործությունը՝ Փեթարա Մանուկը, Երիցյան Մանուկը, Սուլուխցի Տեր Ստեփանը, Գոմսեցի Կորյունը, Տեր Մամբրեն, Սաղտունցի Հովհաննեսը, Իշխանձորցի Արթինն ու Կրպոն և ուրիշ հին հայդուկներ ու ազդեցիկ անձինք համախմբեցին

սասունցիներին ու նրանց մղեցին գոյապայքարի: Ահեղ կռիվներ եղան Գոմուց վանքի, Անդոկի, Իշխանձորի, Շատախի և Գելիեգուզանի գյուղերում: Թշնամին բազմիցս լեղապատառ փախուստի դիմեց, սակայն թարմ համալրումներ ստանալով վերսկսեց հարձակումը:

Սկզբում հայերը հյուսիսում հետ քաշվեցին մինչև Շենիկ, Սեմալ և Ալիանք գյուղերը, այդ ճակատում ունենալով 400 կռվող: Պաշտպանական երկրորդ գիծը ձգվում էր Քափրեչարիֆխանից մինչև Բունգեի հովիտը, Զայից մինչև Դահլազարի բարձունքները: Այստեղ էին Զոլոն, Մոսե Խմոն, Հ. Մանուկյանը, Մ. Մարգարյանը, Թ. Գասպարյանը և Հ. Ղազարյանն իրենց ջոկատներով: Այս դիրքերից աջ ընկած 16–20 կմ երկարություն ունեցող գծի պաշտպանությունը ղեկավարում էին Կորյունը և Կ. Հեպոյանը:

Հուլիսի 12-ին քրդերը Մրկեմոզանից մոտենում են Շենիկ գյուղին՝ դա գրավելու դիտավորությամբ: Հայերը հանկարծակի գրոհ են սկսում ու նրանց ջարդում: Քրդական ուժերի մնացորդները, համալրում ստանալով, թևերից հարձակվում են գյուղի վրա: Բայց Մ. Մարգարյանի և Հասրաթի ջոկատները հաջողում են աննկատ անցնել Թշնամու թիկունքն ու նրան խուճապի մատնել: Հուլիսի 15-ի լուսաբացին թուրքական զորքերն ու քրդերը սկսեցին գլխավոր հարձակումը: Պոլեյ Մջոյի, Ա. Մովսիսյանի, Վ. Գրիգորյանի և Պողոսի Առաքելի ջոկատների վրա ընկավ Թշնամու ավելի քան գերակշիռ ուժերի առաջն առնելու պատասխանատվությունը: Հայերը քրդերի հարձակումը ձախողեցին, բայց նրանց հետևից ընթացող թուրքական զորքերը քրդերին հարկադրեցին վերսկսել հարձակումը: Քրդերը, չնայած մեծ կորուստներին, համառորեն առաջ էին շարժվում: Հայերի վիճակը ծանրանում էր: Այդ պահին Մ. Շառոյանի և Մ. Մարգարյանի ջոկատները ձախ թևում հանկարծակի հակահարձակման են անցնում, իսկ Կ. Հեպոյանի ջոկատը մխրճվում է Թշնամու շարքերը: Թուրքերը հետ են քաշվում: Բայց նրանց և քրդերի թիվը տասնյակ անգամ գերազանցում էր հայերի թվին, ինչը հնարավորություն տվեց հասնել հայերի դիրքերին և հրդեհել ոչխարանոցները: Սկսվում է ձեռնամարտը: Գյուղի հյուսիսային մասի տները հրդեհվում են, իսկ կենտրոնում մարտերը շարունակվում են մինչև գիշեր: Հայերը դուրս են գալիս գյուղից և դիրքեր գրավում հարավային կողմի անտառում: Գյուղը լրիվ հրդեհվում է:

Նույն օրը հաջողվում է բռնել երկու թուրքի, որոնք պատմեցին, թե նախորդ օրվա կռվում զոհվել էին 150 թուրք և քուրդ, այդ թվում՝ երկու բեկեր, 250 վիրավորների տեղափոխել էին Մուշ, ինչը բացասաբար էր անդրադարձել զորքի մարտունակության վրա, իսկ քրդերը լրիվ բարոյալքվել էին: Գերի թուրքերը նաև ասացին, որ նոր զորքեր են գալիս թնդանոթների հետ: Մի քանի օր անց ռմբակոծվում է Շենիկ գյուղից մինչև Դահլազար լեռն ընկած ամբողջ տարածքը, ապա սկսվում է հետևակի հարձակումը: Դա ալիքավորված հարձակում էր: Թուրքերի մի շարքն առաջանում էր, և ընկնելով հայերի հրացանային համազարկի տակ, հետ էր փախչում, որից հետո հարձակման էր անցնում երկրորդ շարքը և այդպես՝ ամբողջ օրը:

Հայերի դիրքերը հարմար էին: Նրանց պաշտպանում էին անտառը, ձորերն ու լեռները: Թուրքերն սկսեցին նահանջել: Ոչ միայն կռվողները, այլև սննդա-

մթերք բերող տղամարդիկ ու կանայք, հետապնդում են թշնամուն և նրա նահանջը խուճապահար փախուստի վերածում: Թուրքերը մարտադաշտում 300 զոհված թողեցին: Ինչպես ամեն անգամ մարտը չահելուց հետո, այս անգամ էլ, հայերը հավաքեցին զոհվածների ու վիրավորների զենքերը և մարտական համալրումներ կազմակերպեցին: Ապա շարժվեցին դեպի Գելի և դիրքեր գրավեցին Սեմալից ու Շենիկից 6 կմ հարավ ընկած լեռնալանջին նախապես պատրաստված խրամատներում: Այսինքն՝ հայերը տեղափոխվեցին նոր պաշտպանական գիծ, որի երկարությունը հասնում էր 22 կմ: Այդ գծին էր դասավորված սասունցիների ամբողջ կռվող ուժը:

Երկու օրվա դադարից հետո, հուլիսի 21-ին թնդանոթային կատաղի ռմբակոծությունից հետո թուրքերն ամբողջ ճակատով հարձակման քշեցին քրդերին:

Առանձնապես համառ մարտեր մղվեցին Զայի հովտում՝ Բարբարի կիրճում: Դա կիսապարտիզանական կռիվ էր: Հայերը կռվում էին ոչ թե դիրքերից, ոչ թե ճակատային գծում, այլ առաջ շարժվող թշնամու վրա հարձակվում էին անտառից կամ ժայռերից: Հետագա կորուստներից խուսափելու համար՝ թուրքերը նահանջի փող հնչեցրեցին: Նրանց զոհերի թիվն էր 155, իսկ հայերինը՝ 55:

Հաջորդ օրվա լուսաբացին նորից աղմկեցին թնդանոթները: Թուրքերը նոր հարձակում սկսեցին և կարողացան հայերի պաշտպանական գիծը ճեղքել և հասնել Բարբարի կիրճի վերին մասը: Սակայն դա դեռ հաղթանակ չէր, որովհետև կիրճի աջ և ձախ ափերին խրամատավորված սասունցիները թշնամուն առան խաչաձև կրակի տակ ու փախուստի մատնեցին: Հայերից զոհվեց 48, իսկ թուրքերից ու քրդերից՝ 120 հոգի:

Սասունում կռիվներն ունեին տարօրինակ տրամաբանություն: Որպես կանոն, մարտերը չահում էին հայերը, իսկ տարածքները՝ թուրքերը: Այդպես եղավ նաև այս անգամ: Նույն օրվա երեկոյան Անդոկի պաշտպանության մարտերից հայտնեցին Կորյունին, Կ. Հեպոյանին և մյուսներին, թե Տալվորիկի և Իշխանձորի շրջաններում թշնամին մեծ համալրումներ ստանալով հարձակման է անցել և հայերի վիճակը ծանր է: Առաջարկվում էր հետ քաշվել Անդոկի արևելյան լանջերի պաշտպանական գծերը: Պարզվում է, որ թուրքերը որոշ թվով ուժերի ռազմաճակատից հանել և ուղարկել էին Սասուն՝ հայերին ոչնչացնելու:

«Ռուբէնը,- գրում է Գալեն,- նախապէս պարպել տալով Շենիկ, Սեմալ գիւղերը եւ այդ կողմի դիրքերը, Սասնոյ ամբողջ հայ գիւղերու բնակչութիւնը եւ դուրսէն եկած փախստականները, բոլորն ալ հաւաքել կու տայ Գելիգուզան, Անդոկ լերան կողերու վրայ: Թշնամին մինչեւ Գելիգուզան իր առջեւ բաց տեսնելով՝ կը յառաջանայ եւ իր թնդանօթները իր յարմար դատած դիրքերու մէջ կը զետեղէ... ու կը սկսի օրն ի բուն ռմբակոծել... Լքուած դիրքերը անմիջապէս կը գրաւուին թշնամիի հետեւակ զօրքին կողմէ, որոնք ... կիներու եւ երախաներու վրայ գնդակ տեղացնելով հազարաւորները կոտորեցին...»[1]:

Դրությունն ավելի բարդացավ նրանով, որ խարզանցի, Շեկոյի տան, բալաքցի քրդերը Ծովասարի կողմից նորից ռազմաճակատ բացեցին և հարձակման անցան Աղբիկի վրա: Ճիշտ է՝ հաջողվեց հարձակումը հետ մղել, բայց

---

[1] **Բդէյեան Մ.**, նշվ. աշխ., էջ 442-443:

հայերը հարկադրված եղան այդ ճակատը ևս ամրացնել: Սակայն մի քանի օր անց Մուսա բեկը քրդական ստվար ուժերով Բոնաշենի վրայով հարձակման անցավ ու գրավեց Աղբիկը, որի բնակիչները նույնպես տեղափոխվեցին Գելի: Իսկ Մուսան սպառնում էր շարունակել առաջանալ դեպի Անդոկ: Հուլիսի 14-ին հայերը մերկացրեցին նաև Քափրեշարիֆխան հովտից և Ալիանքից մինչև Ղարիբշարի բարձունքն ընկած ճակատամասը և նույնպես տեղափոխվեցին Անդոկ:

Այսպիսով, Անդոկի տարածքում հայերի կռվող ուժերը տեղավորվեցին հետևյալ կերպ: Ամբրրնիում և նրա ստորին փեշերին տարոնցիները, գելիեցիները և մասամբ աղբրիկցիներ էին: Ղեկավարը Կորյունն էր, օգնականը՝ Հ. Հովսեփյանը: Խնդիրն էր դիմադրել Մուսայի 2000-անոց ուժերին: Խոտի փեշերին, Ծակքարում, Կաքավաղբյուրում, Մուրեյտուր յայլայում սեմալցիների ջոկատն էր Մ. Շառոյանի հրամանատարությամբ: Անդոկի արևելյան լանջին չենիկցիների ջոկատն էր Օ. Ղազարի հրամանատարությամբ: Անդոկից արևելք տեղավորված էր նաև Ալյանքի 50 հոգիանոց ջոկատը Մ. Մարգարյանի հրամանատարությամբ: Բեսրեյի մեծ հովտում նույնպես գելեցիներն էին Գ. Սարգսյանի հրամանատարությամբ: Գելեցիների մի ջոկատ էլ Զատոյի Լևոնի հրամանատարությամբ Համոյի գոմերի վերին մասում էր: Ճակատի այդ մասում թուրքերը կենտրոնացրել էին 1000-ից ավելի քրդերի՝ Պարան բեկի և չեյխ Սելիմի ղեկավարությամբ:

Ազատյան երկու տասնյակ մարտիկներով գիշերը հարձակվում է քնած քրդերի վրա և փախուստի մատնում նրանց: Երեկոյան, երբ քրդերը նամազ էին կատարում, հայերն աննկատ մոտենում են չեյխի վրանին և սպանում թե՛ նրան և թե՛ նրա հետ նամազ անողներին:

Կրոչիկում մշեցիներն ու աղբրիկցիները Պոլեյ Մջոյի հրամանատարությամբ նույնպես մարտեր էին մղում Մուսայի հրոսակախմբերի դեմ, և գիշերային երկու հարձակումներով նրանց նշանակալից կորուստներ պատճառեցին:

Թուրքերը Գրեգոլում թնդանոթներ տեղադրեցին և ռմբակոծության տակ առան Անդոկն ու Գեբինը: Երկու լեռն էլ օղակվեցին: Երեք օր դաժան մարտեր ընթացան: Լուր տարածվեց, թե Ռուբենը «կարգադրած է դիրքերն ամուր պահել մինչեւ մութը կոխէ, որպէսզի ճեղքելով թշնամիի շղթան անցնինք դէպի Քան, որտեղ հաւաքուած է Դաշտի ժողովուրդի կարեւոր մասը: Բայց ինքը վերցնելով Փեթարայ Ախոն, Մանուկը եւ Թաթուլը՝ իրենց տասնեակներով, կ՚անցնի Կոչկայի ձոր: Մնացած կռուողներին Պոլեյեան Մճօն, Արշակ, Պողոս, Շենիքայ Զոլօն, Կելիեկուզանայ Ղազար, Ավոյ տան Կարապետ, Սեմալայ Մանուկ, Աղբեցի Մթօն, խմբապետ Մուշեղ իրենց ուժերով կ՚ուղղուին դէպի Կեփին»[1]*:*

Աշխուժանում են նաև Խուլբի և Խիանքի քրդերը: Նրանք ձգտում էին Սպիտակ սարով շարժվել Տալվորիկի վրա: Հունիսի 10-ի արևածագին Խիանքի Սլեման աղայի հրոսակները հանկարծակի հարձակում են գործում Հեղին գյուղի վրա: Գյուղը լուրջ դիմադրություն ցույց տալ չի կարողանում: Քրդերը կոտո-

---

[1] ***Սասունի Կ.,*** *նշվ. աշխ., էջ 444-445:*

ռում են անգեն բնակչությանը, կողոպտում տներն ու ավերում: Հեղինի 600 բնակչից փրկվում է չորս հոգի: Սլեմանի ավազակները կոտորեցին ու կողոպտեցին նաև Սաղտունի, Բացուի, Արոկի, Փառկայի և Բերմի բնակչության մի մասին:

Նույն օրերին Խուլբի Հասանը հանձնարարություն տալու պատրվակով Ահրոնքի, Շուղեքի, Գեղբրվանքի և Ընձքարի ազդեցիկ անձանց իր մոտ է հրավիրում ու բանտարկում: Նա քուրդ հրոսակներ է ուղարկում այդ գյուղերը, որոնք կոտորում են բնակիչներին: Փրկվածները փախչում են մերձակա անտառներն ու բարձրանում Անդոկ:

Սերվեթի հանձնարարությամբ և թուրքական սպաների ղեկավարությամբ ստեղծվեցին քրդական երեք զորաբանակներ ու երեք ուղղությունով՝ արևմուտք, հարավ և հարավ-արևելք, մտան Սասունի խորքերը: Արևմուտքից հարձակվում էին մամկանցի, խրրկանցի, Բերեչի, Շենի, Արտաշենի, Լեճի, Փարկինի աշիրեթները՝ Հասանի, Պարանի և Սալիմի ղեկավարությամբ: Նրանց առաջ խնդիր էր դրված Անդոկի արևմտյան և հյուսիսային փեշերով առաջանալ ու գրավել լեռը:

Հարավից հարձակվում էին բատկանցի, սիանքցի, ինիկանցի, Սլիվանի ու Ֆարղինի աշիրեթները՝ Սլեմանի և Ֆարղինի Սատուի հրամանատարությամբ: Հարձակումը խնդիր ուներ Սպիտակ սարի արևելյան փեշերով առաջանալ, գրավել Գաբլոր, Գեբին լեռները և Իշխանձոր գյուղը ու հարձակվել Տալվորիկի վրա:

Հարավ-արևելքից հարձակվում էին Բուզրկանի, Դրրզանի, Շեկոյի, Բալբքի, Ռըշկոտանի, Հազոյի և Խաբլջողի աշիրեթները՝ Փաթայի, Ռ. Սալըմի և Խրչանցի Մահմուդի հրամանատարությամբ: Սրանց խնդիրն էր Ծովասարի արևմտյան փեշերով առաջ շարժվել, գրավել Բսանքի գավառակն ու Տալվորիկ գյուղը:

Ոչ միայն հայերի, այլև քրդերի վարքագծի կողմնորոշման վրա վճռորոշ ազդեցություն ուներ ռուսական բանակի առաջանալը Վանի, Մանազկերտի և Բուլանըղի ուղղությամբ:

Ծանր էր տալվորիկցիների վիճակը: Նրանք զորքի և աշիրեթների անդադար հարձակմանն էին ենթարկվում: Այստեղ ևս հայերը հաջողում են մի քանի հնարամիտ գործողությունների ու դիվերսիաների միջոցով թշնամուն զգալի կորուստներ պատճառել: Բայց նաև անհնար դարձավ թշնամու տասնյակ անգամ գերազանցող ուժերի հարձակումը դիմակայել և տալվորիկցիները նահանջեցին Պերինի (Կեպինի) հարավային փեշերի խրամատները, որոնցից քիչ վերև ժայռերի ու մացառների մեջ ապաստանել էին կանանց, ծերերի և երեխաների բազմությունները: Իսկ ցածում իշխանձորցիները շարունակում էին կատաղի կռիվ մղել թշնամու մեծ ուժերի դեմ:

Օհանի հրամանատարությամբ գործող իշխանձորցիների ջոկատը շրջապատվում է և մահուկենաց կռիվ մղում: Դրան սարի գագաթից ականատես են դառնում կանայք: Նրանցից Վարդ անունով մեկը դիմում է ժողովրդին՝ թե ինչո՞ւ ենք կանգնել ու դիտում ենք, թե ինչպես են ոչնչացնում մեր եղբայրներին: Գնանք օգնության: Եվ գնում են, ժայռերի բեկորներ ու քարեր են թա-

փում: Թուրքերը ընկրկում են և ճանապարհ տալիս մարդկային լավային: Ջոկատը փրկվում է:

Նույն օրը պաշտպանական գիծը Թողեցին նաև ալանքցիք: Այդ նկատելով՝ Թուրքերն առաջ են չարժվում և գրավում Գելին ու միանում Մուսայի կռվողներին:

Անդոկի փեշերը ռազմաճակատի էին վերածվել: Ամեն տեղ կռիվներ էին, դաժան, արյունահեղ կռիվներ: Թուրքերը համառորեն չարժվում էին դեպի լեռան գագաթը, որտեղ հազարավոր կանայք, երեխաներ ծերեր ու հիվանդներ էին: Սասունցիները կռվում էին իրենց նման, մարտնչում ամեն մի թիզ հողի, ամեն մի ծառի, ժայռաբեկորի ու քոլի համար:

Թուրքական զորքերի հրամանատար Քյազիմը ռմբակոծության տակ է առնում լեռան գագաթի բնակչությանը: Թնդանոթներից մեկը ռմբակոծում էր Գրեգոլի, մյուսը՝ Բարբարի կիրճի վերին մասից, իսկ երրորդը Քափրեչարիֆխանից: Քյազիմը հրամայել էր, որ յուրաքանչյուր զինվոր ամեն օր Անդոկի վրա պետք է արձակեր 200-300 փամփուշտ, գնդացիրները պետք է գործեին անդադար, որպեսզի ահաբեկեին ու խուճապի մատնեին հայերին:

Ո՛չ: Սասունցին կմեռնի, բայց զենքը ձեռքին խուճապի մատնվել՝ երբե՛ք:

Մննդամթերքը, մանավանդ հացը սպառվել էր, բայց կանայք ոչ մի օր կռվողներին առանց սնունդի չթողեցին: Նրանք գիշերներն անցնում էին բոլոր դիրքերով և ուտելիք բաժանում:

Երկու գելիեցիներ՝ Արամն ու Հովսեփը Ամբրրնու խրամատներից ոչնչացնում են մեկուկես տասնյակ քրդի՝ Բռնաչենի Մահմուդ աղայի հետ միասին: Դրան հետևում է Մուսայի հարձակումը Ամբրրնու վրա: Աղբրիկցիները նույն կերպ են վարվում Շեկո տան քրդերի մի ջոկատի հետ:

Այդ պահին լուր հասավ, որ ռուսները նահանջում են: Դա ողբերգության դեմ անձնազոհ մարտնչողի համար սառը ցնցուղ էր, հույսի վերջին շյուղի անհետացում: Հայերը խմբվում են լեռան գագաթին ու դրա շուրջը: Փամփուշտն սպառվում էր: Բնակչությունը քարեր է կուտակում թշնամու դեմ դրանցով կռվելու համար: Եվ ոչ միայն քարեր, այլև ժայռաբեկորներ են խուժում հակառակորդի վրա:

Բայց թուրքերի առաջն առնելը արդեն անհնար էր: Թշնամին սողում ու սողում էր դեպի վեր: Ռազմաճակատի բոլոր հատվածներում հայերի վիճակն աղետալի էր: Համընդհանուր ողբերգությունը չատ էր մոտեցել, չոչափելի դարձել:

Հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 2-ը եղավ սասունցիների դարավոր գոտեմարտի եզրափակիչ փուլը: Դա կռիվ էր ոչ թե ապրելու, այլ մեռնելու համար, դա կռիվ էր բանականությունից համբարձված մարդկային աննկուն բնավորության, խելահեղ, հրաբխային պոռթկումների: «Լեռան գագաթներուն վրայ գտնուած սասունցի կիներ ահագին ժայռեր վար կը գլորէին իրենց վրայ յարձակում գործող զօրքերու եւ քիւրտերու վրայ, որոնք գլորուած քարերու հետ միասին դէպի անդունդը կ՚անհետանային»:

Կորյունի ուժերը կռվում էին լեռան փեշին, իսկ Զոլոյի ջոկատը՝ Խոռ կոչվող տեղում: Ընկավ նաև Անդոկի բանալին՝ Գրեգոլը, որի վրայից թուրքական

թնդանոթները ուղիղ նշանառությամբ ռմբակոծում էին գագաթում խոնված ժողովրդին:

Պատմում է Սասունցի Մուշեղը. «... Անդոկի ծերպերուն մէջ խորհրդակցութեան էին նստած ժողովուրդին ներկայացուցիչները եւ հայ ֆիտայիները: Բոլորն ալ հիւծուած երեւոյթ ունէին, շատերս զիրար չէինք ճանչնար այլեւս, այնքան, որ վախեցած էինք: Յոգնութիւնը, տառապանքը մեզ դուրս էին հանած մարդկային կերպարանքէն: Պատմական այս վերջին հանդիպումին ներկայ էին բազմաթիվ հին եւ նոր հայդուկներ, կային վիրաւորներ... Բացակայ էին բազմաթիւ հին ընկերներ... Լուռ էինք բոլորս ալ ու գլխահակ...»: Եղան առաջարկներ՝ «մինչեւ վերջին փամփուշտը սպառել եւ ապա մեծով պզտիկով նետուիլ ժայռերէն վար: Ախոն յարմար կը գտնէ մեծ խարոյկ մը պատրաստել եւ անոր ճարակ դառնալ...»: Մեծ թվով մարդկանց կարծիքն էր. «...Հաւաքական ինքնապաշտպանութեամբ անկարելի եղաւ փրկութիւնը ապահովել... այլեւս ազատ ձգենք կռուողներն ու ժողովուրդը: Մէկ խօսքով, ամեն մարդ պէտք է, որ իր գլխուն ճարը նայի... Յետ այսու հայոց բարձրաբերձ լեռներն ու ծերպերը թող ըլլան ժողովուրդին ապաստարանը...

Գիշերային մութէն օգտուելով, ժողովուրդը ցրուեցին Կրոչիկի խորերը անմատչելի անտառներու եւ ծերպերու մէջ...»[1]:

Մուշեղի այս մտքերին հարկ է վերապահումով մոտենալ, որովհետև այդ ժողովի ու օգոստոսի 2-ի և 3-ի մասին կան նաև միանգամայն այլ բնույթի վկայություններ:

Կ. Սասունին մարտական ուժերի՝ վերը նշված ճակատագրական նշանակության ժողովում Ռուբենի ճառը ներկայացնում է հետևյալ տեսքով. «Կացութիւնը յուսահատական է: Ձեզի կու տամ ազատութիւն՝ ընելու ինչ-որ կ'ուզէք: Կայ Կովկաս մեկնելու հաւանական յաջողութիւնը, կայ պահուելու պարագան եւ կայ նորէն դիրքեր մտնել ու կռուիլ մինչեւ մնացած 5-10 փամփուշտը եւ սպաննուիլ տեղնուտեղը: Ուրեմն ազատ է ամեն ոք՝ ընտրել որը որ կ'ուզէ: Ցրուեցէ՛ք, ուր որ հաճելի է ձեզի»[2]:

Հավանաբար այս աներևակայելի ցինիզմը հավասարակշռությունից հանեց նաև Ռուբենի մերձավոր զինակիցներին: Կողբեցի Տիգրանն ասաց. «Եթէ մենք հայրենիքը եւ ժողովուրդը սիրողներ ենք, պէտք է որ մնանք իրենց հետ եւ մինչեւ վերջին շունչներս կռուինք, մեռնինք, թէ ապրինք, բայց միշտ ժողովուրդին հետ, անոր ճակատագրով: Պ. Ռուբենը պէտք չէր, որ այսպէս խօսէր»[3]:

Ռուբենի վարքագծի մասին Ե. Պարսամյանը գրում է, որ նա «իր որոշումը կը պարտադրէ եւ ինքը առանձին կը զատէ զէնք ունեցողները, կարգ կը շարե եւ քալելու հրաման կու տայ Կրոչիկի, Կապլորի եւ Կեփինի ուղղութեամբ»[4]: Ռուբենը ժողովրդի «առաջին լքողը եղաւ»:

Պատահական չէ, որ դաշնակցական գործիչները հնարավոր ու անհնար

---

[1] **Ռուբէն,** նշվ. աշխ., էջ 80-87:
[2] **Սասունի Կ.,** նշվ. աշխ., էջ 983:
[3] **Պարսամեան Ե.,** նշվ. աշխ., էջ 82:
[4] Նույն տեղում, էջ 83:

միջոցներով աշխատում են լռության մատնել կամ անգամ արդարացնել Ռուբենի այս ստոր դավաճանությունը: Կ. Սասունին Տիգրանի ասած խոսքն անվանում է «աւելորդ ժողովրդասիրութիւն» (պարզվում է, որ դաշնակցականների համար նման հասկացություն գոյություն ունեցել է), որովհետև, նշում է նա, «պայմաններն ու զանազան վայրերը, որոնց մէջ ցրուած ու պահուած պիտի ըլլար ժողովուրդը», կորցնելու էր «իր հաւաքական միութիւնը»:

Բայց նաև իրողություն է, որ հանգուցալուծման օր դարձավ օգոստոսի 2-ը, որն սկսվեց Կորյունի զոհվելով: Օգոստոսի 3-ին պաշտպանական գիծը դադարեց գոյություն ունենալուց և Թշնամու կրակն ամբողջությամբ կենտրոնացավ բնակչության վրա: Սկսվեցին ընդհանուր խուճապ ու փախուստ, բոլորը դես ու դեն էին փախչում փրկվելու, ապաստան գտնելու հույսով: Քիչ անց Անդոկի գագաթը ժողովրդից դատարկվեց, հայերը փախչում էին դեպի հարավ, դեպի Կրոչիկի ձորը, Գաբլոր, Գերին, Գյալիեսան: Իսկ որոշ խմբապետներ հետևեցին Ռուբենի օրինակին և իրենց խմբերով շարժվեցին դեպի հյուսիս՝ ռուսական բանակին հասնելու հույսով:

Ռուբենի խմբի թաքուն հեռանալուց հետո, պատմում է Ա. Մանուկյանը, «կայծակի արագութեամբ գիշերն իր մութ թեւերով տարածեց խուճապը: Զինուորութիւն այլեւս չկար: Անզէն ժողովուրդը, կատաղած, կը բռնէր ցրումի ճամբան, իրականին մէջ գալարելով աննպատակ կերպով»:

Լուսաբացին Թշնամին սկսեց հարձակումը, և տեսնելով, որ դիմադրություն չկա, հանդգնորեն խուժեց հայերի «բանակավայրը»: Անզեն ժողովուրդն իրար խառնված, հնձվում էր Թշնամու գնդակներից... Շատերն «ինքզինքնին ժայռերէն վար կը նետէին խումբ առ խումբ՝ իրենց հաւատի վերջին ճիգով զիրար ողջագուրելով եւ միմեանց ձեռքէն բռնելով... Ով դանակ կամ դաշոյն ունէր, ջերմեռանդօրէն իր կուրծքը կը խրէր կամ... ինքզինքը կը մորթէր... Թշնամիին բարբարոս սուրը հնձած էր տասնեակ հազարներու կեանքը... Մայրամուտին ոտքի ելայ եւ անցայ Քանայ ահաւոր մեռելստանէն: Տարօնը փչած էր իր վերջին շունչը... Ցեղի մը վերջին մնացորդի անիմանալի տանջանքով եւ չարչարանքի գերմարդկային հառաչանքներով մեռելներու մէջ կենդանի հայ կը փնտռէի: Բայց զուր անցան ողբաձայն աղաղակներս: Բոլորը լուռ կը քնանային...»: Հաջորդ օրը լուսաբացին «ի՞նչ տեսնեմ, ամբողջ լեռը պաշարուած էր ոստիկաններով ու քիւրտերով... Տեսայ, որ անտառի եզրին խումբերով մարդիկ կը սպաննուին եւ արձակուած գնդակներու սարսափէն իրենց թաքստոցներէն դուրս կը փախչէին նորանոր խումբեր...

Երեկոյեան դէմ դադրեցաւ կրակը: Դուրս ելայ տեղէս եւ սկսայ վար իջնել լեռնէն: Դիմացի բարձունքէն դէպի մեր գիւղը (Խասգեղ) կ'իջնէր խուժանը՝ առաջնորդելով անտառին մէջ բռնուած հայ գերիներու մեծ խումբ մը (800 հոգի)»[1]:

«Ռուբէնը,- գրում է Ե. Շառոյանը,- երբ տեսաւ այդ նահանջը (բարքերի կողմից Անդոկի ստորոտում գտնվող Հրմոյի գոմերի գրավումն ու հարյուրավոր կանանց ու երեխաների հրի մատնվելը - Ստ. Պ.), առանց զէնքի ընկերներուն

---

[1] *«Տարօնի արծիւ», 1939 թ., № 8, էջ 25-27:*

եւ իր շուրջը խոնուած ժողովրդական տագնապակոծ բազմութեան որեւէ բան ըսելու, տասն եւ հինգ սասունցի լաւ կռուող զինուորներ առաւ եւ յանկարծ անյայտացաւ մէջտեղէն:

Ռուբէնի այս անակնկալ ու տմարդի փախուստն ու անյայտացումը շատ վատ տպաւորութիւն թողեց թէ՛ կռուողներուն եւ թէ՛ սարսափահար ժողովուրդին վրայ: Բոլոր մարտիկները լքեցին իրենց դիրքերը.. Բոլոր դիրքերը անպաշտպան մնացին:

(Ժողովրդի) մեծ մասը Ծովասարի կողմէն դեպի արեւելք սկսաւ փախչիլ: Այդ գիծը սակայն քրտական աշիրէթներու կողմէ բռնուած ըլլալով՝ հայերն անխնայ կոտորուեցան»[1]:

«Վայնասունը, խառնուած պայթող ռումբերու որոտին եւ հրացաններու ձայնին, կը սարսափեցնէր ահաբեկած ժողովրդական զանգուածները: Հրացաններու պայթիւնին եւ թնդանօթներու որոտին կը խառնուէին ահաբեկուած ժողովուրդին ողբն ու կոծը, եւ երբ այդ սարսափահար բազմութիւնը կը տեսնէ, որ ամեն ինչ կորսուած է, իր գլուխն առած, կը փախչի դէպի Կեփին, Կապլոր, Կելիեսան եւ Կրոչիկի Ձոր...

Որչափները նետեցին իրենց գաւակները ճամբաներէն դուրս ու անցան, որչափներու ոտքերը կոխոտեցին իրենց փոքրիկները...»[2]:

«Յուլիս 20-ին (Հ.տ.) առաւօտեան,- պատմում է ժամանակակիցներից մեկ ուրիշը՝ տարոնցի Մ. Դուռնյանը,- հայերը ինքզինքնին պաշարուած կը գտնեն... Իրենց վրայ կեդրոնացած թնդանօթներու, արագահարուածներու եւ հրացաններու կրակին տակ հազիւ չորս օր կրնան դիմադրել: Զորրորդ օրը... Հայ մարտիկները կը յաջողին թշնամիի մէկ թեւը ճեղքել եւ Քանայ սարը փախչիլ, իսկ հոն մնացողները, մեծ մասամբ կիներ ու երախաներ, կը մատնուին թիւրք և քիւրտ խուժանի վայրագութեանց...

...Տասնեակ կիներ ու երախաներ, իրարու կապուած, Սասնոյ բարձրաբերձ լեռներէն... վար կը գլորուէին...»[3]:

Մ. Բդեյանը գրում է, որ Անդոկում հայերն ունեին 3000-ից ավելի լավ և այդքան էլ տնայնագործական զենք: «Փամփուշտն ալ... առատ»:

Անդոկից ստացված մի նամակում գրված էր. «Թշնամին ճեղքելով բոլոր ճակատները եւ դիմադրութեան գիծերը, թափանցեր է Անդոկ լերան մեր դիրքերը...»:

Թշնամին, պատմում է Գալեն, սկսեց «խուժել հոս ու հոն համախմբուած մարդոց, կիներու եւ երախաներու վրայ, շատերը լեռներէն վար... կը գլորեցնէին եւ կը գնդակահարէին... Անխնայ կը ջարդէին բոլորը: Լերան գագաթներու վրայ գտնուող սասունցի կիներ ահագին ժայռեր վար կը գլորեցնէին իրենց վրայ յարձակում գործող զօրքերու եւ քիւրտերու վրայ...

Մենք... 4000-5000 անձերէ կը բաղկանայինք, բայց հազիւ 300 հոգի կրցանք ազատիլ...»[4]:

---

[1] *«Երուանդ Շարաֆեան կը պատմէ Տարօնի եղեռնը», էջ 36-38:*

[2] *Նույն տեղում, էջ 85-86:*

[3] ***Բդէյեան Մ.,*** *նշվ. աշխ.:*

[4] *Նույն տեղում, էջ 443-445:*

Անդոկում հավաքված հայերը կովեցին խելահեղ: «Կատաղի, մարդկային տարողութիւնէն իսկ վեր եղած է այդ օր Պոլէյեան Մկրտիչի, իր Պօղոս եղբոր և, ընդհանրապէս, խումբի դիմադրութիւնը... Կատաղի եւ ամեն դրուատանքի արժանի եղած են Կապլորներու կողմը՝ Ալիջգայի Տիգրանի հերոսամարտը, եւ Ամպարներու գլուխը՝ Կորիւնի չարժումները, որոնք, առանց դիրք մտնելու... դիրքէ դիրք թռեր, հրահրեր, ոգեւորեր, ու ապա՝ անակնկալը ընդունելով, կողքին ինկած է՝ մեծ մարդու պէս, առանց ա՛խ մը իսկ քաշելու:

Ճաշէն առաջ արդէն չկար այլեւս արեւմտեան թեւի ոգին...»: Այդ մասին լսելով Ռուբենը մի խմբի հետ, մութն ընկնելուց հետո, առանց «մնաս բարով» ասելու, կանհետանա... Եվ սկսվում են աներևակայելի խուճապն ու փախուստը, որը՝ ետ Դալվորիկի կողմը, որը առաջ՝ թշնամիին գիրկը, որը ձախ, որը՝ աջ[1]:

Եթե Մշո ջարդերից հետո թուրքերը հավաքում էին հայերին և թաքուն, առանց ինչ-որ բան ասելու, տանում լցնում էին ինչ որ կառույցի մեջ ու հրդեհում, ապա Սասունում «...վայրագութիւն, գազանութիւն, մոլեգին անխնայութիւն մը, երեւակայուած ամեն կերպ նախճիրներէ վեր, որու առջեւ Լենկթիմուրն անգամ շրթունքները պիտի կծէր չիկնելով»[2]:

Քրդական հորդաները հարավից, թուրքական զորքերն ու աշիրեթները հյուսիսից չտապում էին Սասունի խորքերը՝ կողոպուտի ու ջարդի հրճվանքը վայելելու, Շատախի, Գելիեգուզանի գյուղերում, Գոմաց վանքում, Իշխանձորում կրած հակահարվածի վրեժը լուծելու:

Բայց նրանք վայելեցին հեշտ հաղթանակի հրճվանքը, որովհետև հին հայդուկներ Մկրտիչ Պոլէյանը, կողբեցի Վարդանը, Մորուք Կարոն, Զոլոն հաջողում են հակահարված տալ առաջացող թշնամուն և ժողովրդին տանել այլևայլ ուղղություններով: Կռիվը հատկապես արյունահեղ էր Ծովասարում, որտեղ խրամատավորված հայերը շրջանային պաշտպանության կանգնեցին:

Սակայն այդ հաջողություններն անզոր էին փոխելու իրադարձությունների ընթացքն ու բնույթը:

Սասունի ինքնապաշտպանական կռիվներում իրենց փառքով պսակեցին նաև հայ կանայք: Ծիրինկատարում Մոսեի տան Եվան քաջալերում էր կռվողներին. «Ոյժ տուէ՛ք ձեր բազուկներուն. երբ մեզի պէտք ունենաք, պատրաստ ենք դիրքերը պահելու»: Մի այլ կին՝ Խզամը, ապտակում է ծուլացող մարտիկին և նրա հրացանը վերցնում, դիրք է մտնում ու կռվում, իսկ Մաքեն կռվում էր կատաղի վագրի նման, Հուսեն դանակով հարձակվում է սեփական որդու վրա, որը հերթապահության ժամին քնել էր: Գերինի դիրքերում Խանդմը վիրավորների վերքերն էր կապում ու հանդիմանում. «Դուք պողպատէ ձուլուած էք, պէտք չէ գնդակը ձեր մարմնին վրայ վէրք ձգէ...»:

Նա զավակների տեր միջին տարիքի կին էր, բայց կազմակերպեց կանանց մարտական խումբ և մասնակցում էր քրդական գյուղերի վրա հարձակումներին: Հիմնականում գործում էր Անդոկում, բայց հաճախ էր անցնում

---

[1] **Բդէյեան Մ.,** նշվ. աշխ., էջ 179-182:
[2] Նույն տեղում, էջ 183:

Սասնո մյուս շրջանները և մի քանի վայրերում նույնպես կազմակերպեց կանանց մարտական խմբեր: Անսպառ եռանդի տեր էր՝ կռվում էր, ղեկավարում, կազմակերպում, դեղորայք պատրաստում, վիրավորներին խնամում: Զոհվեց Անդոկում[1]:

Շամամի հետախուզական ջոկատը դարանակալած թշնամիների հարձակման է ենթարկվում: Ջոկատը նահանջում է, բայց հարմար պահ ընտրելով՝ հանկարծակի շուռ է գալիս, գրոհում քրդերի վրա ու փախուստի մատնում:

Գաբլորի դիրքերում Նազեն կռվում էր երգելով և թշնամու ուղղությամբ բղավում. «Ինչո՞ւ եք... լեռնաշխարհի հանգույցներում թողնում ձեր պիղծ դիակները. հեռացե՛ք և մի՛ պղծեք այս սուրբ հողը...»[2]:

Անիի կանանցից կազմված խումբը ցերեկները զբաղվում էր զինյալներին սննդամթերք ու ռազմամթերք մատակարարելով, իսկ գիշերները հերթապահում էր դիրքերում: Այդ խումբը թշնամուն դուրս քշեց Ընկուզնակ գյուղից ու կարմիր դրոշակ պարզեց:

Ռազմաճակատային գործողություններից բացի, կռվող կողմերը հարձակումներ էին գործում բնակչության վրա: Օրինակ, Գաբլորի շրջանում հայկական «թռչող» խմբերը գիշերները հարթավայր էին իջնում ու ահաբեկում քրդերին, Ավոյի խումբը քրդական երեք գյուղ հրկիզեց, Ջուռոյի խումբը հարձակում գործեց պարեն և ռազմամթերք տեղափոխող թուրքերի վրա, նրանց փախուստի մատնեց ու տիրացավ պարենին:

*Սասունի 20.000 հայերին, գրում է Ա. Շիրակյանը, ավելացել էին 30.000 ուրիշներ՝ Դաշտի ջարդերից փրկվածները: Մշո դաշտի ու Մուշ քաղաքի ջարդերից հետո «կառավարութիւնը հսկայ զօրք եւ շրջակայ քիւրտ ցեղերը... համախմբած էր Սասունի եւ մօտակայ լեռներուն շուրջ... Թշնամի բազմապատիկ զորքին դիմաց սասունցիներն իրենց նախնական զենքերով ու հաշուած փամփուշտներով հերոսական դիմադրութիւն ցոյց տուին»: Անդոկում հավաքվեց 50.000 ժողովուրդ՝ «մեծ մասամբ կիներ, մանուկներ և ծերունիներ: Կերակրելու պաշար չէր մնացած, կռուողներէն շատերու ռազմամթերքը սպառուած էր. հրացանները կը կոտրէին ու դաշոյններով կը մարտնչէին գրոհող թշնամիին դէմ. կիները եւս կը մասնակցէին օրհասական կռուին եւ ի վերջոյ, թշնամիին ձեռքը չիյնալու համար, կը նետուէին ժայռերէն վար... **Սասնոյ լեռները կարմիր արեամբ էին ներկուած**»[3]:*

Պատմում է Ղ. Սարգսյանը, ժամանակակից.- Տեսնելով, որ հայերը խուճապի մեջ են, թշնամին աշխուժացրեց հարձակումը: «Թնդանօթի ռումբերը եւ գնդակները կարկուտի նման կը տեղան ժողովուրդին գլխին: Երեկոյեան կողմ ժողովուրդը սկսաւ քաշուիլ դէպի Կելիե Սան եւ Կրոչկայ Ձոր: Հայկական դիրքերը կը դիմադրեն կատաղի կերպով: Կռիւը շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր: Երբ կռուող ուժերու խմբապետները դիրքերէն դուրս գալով գացին Ռուբէնի

---

[1] ***Զէյթլեան Ս.,*** *նշվ. աշխ., էջ 80:*
[2] ***Երիցեան Գ.,*** *նշվ. աշխ., էջ 11-12:*
[3] ***Շիրակեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 46-47:*

նամակով որոշուած տեղը, տեսան, որ մարդ չկայ: Բարձրացաւ յուսահատութեան եւ կատաղութեան ալիք:

Անդոկը կործանվում էր, ռազմամթերք այլևս չկար: Հատուկենտ զինվորներ 20-ական փամփուշտ ունեին: Ժողովրդի մի մասը գնաց դեպի Յանգանինա, իսկ մյուս մասը՝ Պոլեյան Մճոյի գլխավորությամբ՝ դեպի Կրոչիկ: Կելիեսան գնացող ժողովրդի մի մասն արդեն գետն անցնում էր, իսկ մյուսները դեռ Անդոկում էին, երբ թուրքական զորքերն ու քրդերը կտրեցին նրանց ճամբան ու սկսեցին անխնա կոտորել: Հայերի մի խումբ Աղբեցի Մթոյի հրամանատարությամբ մարտի մեջ մտավ և կռվեց մինչև մութն ընկնելը և հնարավորություն տվեց, որ ժողովրդի ողջ մնացած մասն անցնի գետը:

Կրոչիկում ևս ծանր մարտեր եղան: Այստեղ զոհվեց Մ. Պոլեյանը: Ժողովուրդը մնաց առանց կազմակերպչի: Ձախողվեց Քան գնալու ծրագիրը: Միայն Ռուբենի փոքրիկ խումբը կարողացավ այնտեղ հասնել, իսկ ժողովուրդը ցրվեց զանազան թաքստոցներ և դիմեց մասնակի ինքնապաշտպանական կռիվների: Մի մեծ բազմություն լցվեց Յանգանինայի անտառը: Երրորդ օրը թուրքական զորքերը տեղ հասան ու հրդեհեցին անտառն ու արտերը: Սակայն անտառը չվառվեց: Նորից կռիվ սկսվեց: Սեմալցիների դիրքերում հերոսաբար զոհվեց Ասատուրը: Նրա զենքը վերցրեց մայրը՝ Խզամը ու կռվեց մինչև վերջին փամփուշտը և 12 ուրիշ կանանց հետ հոչոտվեց թուրք զինվորների սվիններով:

Նույն օրը թուրքերն իրենց սպանվածներին վերցրած գնացին դեպի Մուշ:

Անտառում 5000 հայ կար, որոնք քաղցած, ծարավ, մերկ թափառում էին ծառերի մեջ և ամեն օր բախվում ու մարտի մեջ էին մտնում քրդերի ու ոստիկանների հետ, որոնք ուղեկցվում էին բնակչության մեծ ու փոքր կոտորածներով: Այնուամենայնիվ, մոտ 15.000 սասունցիներ դեռ կենդանի էին:

Անդոկի ու Գեբինի կոտորածներից ամենասարսափելին Գելիեսանի հովտի ջարդն էր: Օգոստոսի 2-ի գիշերը ժողովուրդն ու Սասունի կռվող ուժերը շարժվեցին դեպի այդ հովիտը՝ անտառներում թաքնվելու համար: Հաջորդ օրը նրանք շրջապատվում են, ապա թուրքական զորքն ու քրդերը սկսում են հարձակումը: Հայերը պաշտպանվում էին զենքով ու առանց զենքի՝ ինչ ձեռքի տակ կար, բայց ջարդի առաջն առնել չկարողացան: Մի քանի հազար զինված թուրքեր ու քրդեր ոչնչացնում էին տասնյակ հազարավոր հայերի, որոնց չնչին մասը զենք ուներ: Կոտորում էին հիմնականում կանանց ու երեխաներին: Ջարդի հովիտը կարմրեց, արյան գետեր էին հոսում: Սպանդը շարունակվեց մինչև մութն ընկնելը:

Կրոչիկի անտառում ապաստանած սասունցիները նույնպես հայտնաբերվեցին, բայց չհանձնվեցին, այլ՝ կռիվ տվեցին: Մարտն ու սպանդը շարունակվեցին մինչև մութն ընկնելը: Կրոչիկում հայերը զանգվածաբար սպանվեցին, բայց նաև եղան փրկվածներ, որոնք շարժվեցին դեպի Քանասար:

Սասունում սպանություններն ու կռիվները դեռ երկար շարունակվեցին: Սասունցին սպանվում էր, բայց չէր մեռնում, հարություն էր առնում ու շարունակում կռիվը: Կռվում էին մեծ ու փոքր խմբերով կամ միայնակ:

Քրդական ուժերի հրամանատար Պարան բեկը մի հավաքույթում ասել է. «Անդոկի ու Գեբինի լեռներում զինված սասունցիները հերոսաբար կռվեցին

մեր դեմ՝ պաշտպանելով իրենց պատիվն ու նամուսը... Զնայած նրանք մեր ոխերիմ թշնամիներն են, բայց որպես քաջ, հերոս մարդիկ, արժանի են գովասանքի... Մենք Անդոկը գրավեցինք ոչ թե կռվով, այլ երբ նա դատարկ էր: Հայերի մարտունակությունը մերոնց համեմատությամբ շատ բարձր էր: Հայերին ընկճեց ոչ թե հակառակորդի ռազմական ճնշումը, այլ՝ զինամթերքի պակասը»[1]:

Սասունը լռեց, մահվան լռությունն իջավ Լեռնաշխարհի վրա, որի ծերպերին, անտառներում ու կիրճերում թաքնված, թշնամու փամփուշտից փրկված սասունցիները հայտնվեցին սովի գրկում: Թուրքերը նրանց քշեցին հայրենի բնակավայրերից, իսկ սովը հարկադրեց վերադառնալ՝ ուտելիք գտնելու հույսով: Սովին ընկերացած հիվանդությունները հնձում էին յաթաղանից փրկված հայ խլյակներին:

Նույն ժամանակ Քանա սարում հավաքված էր 15000-20000 տարոնցի: Նրանք ընդամենը 200 հրացան ունեին: Բայց, հավանաբար դա չէր գլխավոր պատճառը, որ այդ հայերը ձեռնպահ մնացին ինքնապաշտպանությունից, փորձ իսկ չարեցին կռվելու, եթե ոչ փրկության, ապա պատվով մեռնելու համար: Պատճառը ղեկավարի, կազմակերպող ուժի խաղացած քայքայիչ դերն էր: Վահան Փափազյանի համար՝ միակ խնդիրը, գերագույն նպատակը սեփական անձի փրկությունն էր: Նա մեկուսացել էր անտառի խորքերում մարտական ջոկատի պահպանության ներքո, խզել էր բոլոր հարաբերությունները փախստական, մոլորված, անելանելի վիճակում գտնվող բնակչության հետ:

Ժամանակակիցներից մեկը նկատում է, որ Կոմսի վարքագիծը Ռուբենի կրկնօրինակն էր՝ զբաղվել միայն սեփական գլուխը փրկելու խնդիրներով: Իրենց առջև տեսնելով չկազմակերպված ամբոխ, թուրքերն ու քրդերը անընդհատ հարձակումներ էին գործում և հայերին մեծ կորուստներ պատճառում: Վ. Փափազյանը կատարեց հերթական ստորությունը. նա պահանջեց, որպեսզի ժողովրդից առանձնանային զինված երիտասարդները՝ մտադրություն ունենալով ժողովրդին լքել և այդ երիտասարդների հետ հեռանալ: Տարոնցիները չենթարկվեցին դավաճանական սադրանքին. «Այծի մորուքավորի» գլխավոր հոգսը դարձավ չերևալ ժողովրդի աչքին: Տպավորությունն այնպիսին էր, որ նա սեփական ժողովրդից ավելի էր վախենում, քան թուրքերից ու քրդերից: Նա այդպես էլ մի խումբ մարդկանց հետ հեռացավ, իսկ ժողովուրդը՝ նահատակվեց:

Ամռանը թուրքական իշխանությունները «ներելու» սուտ խոստումներով հավաքեցին 4000 հայ կին, նրանց ուժերով իրականացրեցին մի չարք գյուղերի բերքահավաքը, ապա բոլորին սպանեցին Արածանու ափին:

Նույն խոստումներով հաջողվեց լեռներից իջեցնել ու թաքստոցներից հանել սովի մատնված հայերին և սպանել: Սակայն մեծ մասը չհավատաց թուրքերի խոստումներին և հավատացողներին զգուշացրեց. «Մի՛ երթաք, եղբայրներ, կամովին մի՛ երթաք սպանդանոց... Մեր լեռներուն մէջ անօթի ու ծարաւ

---

[1] **Հովհաննիսյան Ղ.,** նշվ. աշխ., էջ 102:

մեռնիկն աւելի լաւ է, քան թէ երթալ թշնամիին ոտքը...»[1]:

Աչնանը ռուսական զորքերը Բիթլիսից չարժվեցին դեպի Ախլաթ, իսկ Մանազկերտից՝ դեպի Մուշ: Փետրվարի 3-ին նրանք մտան Մուշ: Քաղաքը թողնելիս թուրքերը 300-400 հայի բեռներ են բարձում, իբրև չալակավոր տանում իրենց հետ և Խուլբի շրջանում սպանում են:

Փետրվարի 12-ին հայ կամավորները չարժվեցին դեպի Սասուն: Բայց ձյունն այնքան շատ էր, որ հարկադրված եղան հետ դառնալ: Իսկ սասունցիների հոսքը չէր դադարում. նրանք հաղթահարում էին ձյան արգելքներն ու հասնում կամավորներին, ռուսական բանակին:

Մորուք Կարո. – Պատերազմի հենց սկզբից Կարոն իր խմբով ժողովրդի հետ էր, մասնակցում էր օրհասական կռիվներին Անդոկում և մի ամբողջ տարի լեռներում մաքառում էր թուրքերի ու քրդերի դեմ: 1916-ի հունվարի 26-ին լսում է, որ ռուսական բանակը մտել է Տարոն: Նա յաթաղանից փրկված խլյակներին հասցնում է Երիցանք (Տափրք): Նույն օրը Դրոյի կամավորական գունդը մտնում է Մուշ քաղաք: Կարոն, անցած 150 հոգանոց հետախուզական խմբի գլուխը, կռվում է Բռնաշենի կողմերում: Մեկուկես ամիս նրա հակառակորդը Մուսա բեկն էր: Կարոն ազատում է 250 հայ գերի կանանց ու աղջիկների, ապա անցնում է Անդոկ, այնտեղից տեղափոխվում Արածանիի ափերը ու գերությունից փրկում ևս 500 հոգու և տեղափոխում Խնուս: Նա Երկրից հեռանում է 1918 թ. փետրվարին:

Ինչպես տեղում նշել ենք, երիտթուրքերի կոմիտեն տարոնահայության ջարդի կազմակերպումը հանձնարարել էր Ջևդեթին, Մշո մութեսարիֆ Սերվեթին և Տարոնից երեսփոխան Խոջա Իլիասին:

Խնդիրը լուծելու համար զինվորական ու քրդական ուժեր են բերվում Բիթլիսից, Գենջից և Դիարբեքիրից:

Հայերի գործողությունների վրա բացասական մեծ ազդեցություն ուներ զենքի, մանավանդ փամփուշտի սակավությունը, որը դարձավ հայերի պարտության գլխավոր պատճառներից մեկը:

Չնայած թուրքերը գրավել էին Գելին, Մորուք Կարոն կարողանում է 500 համագյուղացիներով մտնել գյուղ, անցնել Թշնամու թիկունքը և ապաստանել Գեղաշենի անտառում: Որոշ ժամանակ անց սասունցիների հետ նորից բարձրանում է Անդոկ: Նա ելք էր փնտրում ժողովրդին Կովկաս հասցնելու, բայց բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Սկսվում է սովը: Դրանից օգտվելով՝ քրդերը երկու գելիեցիներից իմանում են Կարոյի թաքստոցը՝ քարայրը և դա չրջապատում են: Սակայն Կարոն ինքն է հարձակվում և Հուսեյին աղային գերի է վերցնում: Նա տեղանքում թաքնված հայերի ոգին բարձրացնելու համար նախ պատժում է դավաճաններին, իսկ քրդերին ազատ է արձակում իրենց զենքերի հետ: Քուրդ աղան իր նստավայր՝ Խուլբ հասնելուց հետո կարգադրում է չհետապնդել թաքնված հայերին, այլ՝ օգնել նրանց: Երբ ռուսական բանակը մտնում է Մուշ, Հուսեյին աղան 300 հայի անվտանգ հասցնում է ռուսներին:

---

[1] **Երիցեան Գ.,** նշվ. աշխ., էջ 252, 341:

Կարոյի խմբին ու թաքնված հայերին սպառնում էր սովը: Նա մի խմբով գնում է Գելիի Տաղվրներում թաքցրած սննդամթերքը բերելու համար, սակայն Տափրքի մյուդիրը անակնկալ հարձակվում է նրա խմբի վրա: Կռիվը տևում է մինչև կեսօր: Հայերի փամփուշտները սպառվում են, բայց թուրքերը նահանջում են, որովհետև սարսափելի սառնամանիքին չեն դիմանում: Կարոն հարձակվում է նրանց վրա և բռնագրավում է հրացաններ ու փամփուշտներ: Այս կռվում հայերից սպանվում է երկու, թուրքերից 12, իսկ քրդերից 2 հոգի: Ծանր վիրավորվում է տխրահռչակ ավազակապետ Սլոն:

1916 թ. հունվարի 26-ին Անդոկում լսվում են թնդանոթների որոտներ:

Կարոն մի խմբով գնում է. պարզելու, թե դրանք ի՞նչ որոտներ են: Գեղաչեն գյուղի քանդված մարագում հանդիպում է թուրք յոթ դասալիքների, որոնք ասում են, թե ռուսները Մշո դաշտ են հասել: Կարոն Անդոկում ապաստանած ժողովրդին տանում է Տափրքի ուղղությամբ և 400 հոգու հասցնում է Մուշ, որտեղ էին Դրոյի կամավորները: Որոշ ժամանակ հանգստանալուց հետո նա 150 զինյալներով մեկնում է Բռնաչեն և ս. Աղբերիկի շրջանում 1.5 ամիս կռիվներ է մղում Մուսա բեկի ուժերի դեմ: Այստեղ թաքնված 270 հայի նա փոխադրում է Մուշ, ապա մի խմբով (60-70 հոգի) նորից բարձրանում է Սասուն՝ Անդոկ: Լուր է ստանում, որ ռուսները նահանջում են: Նա «ցատք» է կատարում և Արածանիի ափին հասնում ռուսական բանակին, որը ձմեռն այդտեղ է անցկացնում՝ գետի մյուս ափին դիրքավորված թուրքերի դեմ: Սկսվում է «Մի հայ մի ոսկի» գործողությունը: Փրկվում է 500 հայ: Այդ գործը ղեկավարում է Փեթարա Մանուկը: Զոլոն և Կարոն «գնած» հայերին տեղափոխում են Խնուս և հանձնում բարեգործականին[1]:

1916 թ. Բիթլիսից հետո Անդրանիկի գունդը անցավ Մուշ, որտեղ իջած 10.000 սասունցիներ նրան խանդավառ ընդունելություն ցույց տվեցին[2]: Այստեղ կենտրոնացան նաև հայդուկները: Նրանց հետ էին նաև վերապրած հայերը, որոնք 1917-ին Խնուս տեղափոխվեցին: Մինչև 1918 թ. ոչ միայն Մորուքի, այլև հայդուկային մյուս խմբերը հակահարված էին տալիս թուրք-քրդական ոտնձգություններին, զբաղվում տեղում մնացած հայ բնակչության բնակեցմամբ ու պաշտպանությամբ:

Առաջին մի քանի օրում Մուշ հասավ 2400 սասունցի: Բայց դրանք բոլորը չէին: Նույն աղբյուրի տվյալներով՝ Բռնաչենից ու Մոտկանից (նույնպես Սասուն) ազատվել էր 11.000, իսկ Մշո դաշտից ու Դիարբեքիրից՝ 400-500 հոգի[3]:

1916 թ. հուլիսին թուրքերը Դարդանելի շրջանից ռազմական ուժեր տեղափոխեցին Սասուն, որտեղ ընդամենը 200 ռուս զինվոր կար: Ճակատը հիմնականում պաշտպանում էին սասունցիները, որոնք հինգ օր հետ չպրտեցին թշնամու գերակշիռ ուժերին ու նահանջեցին: Մուշից 12.000 հայ տեղափոխվեց Խնուս, իսկ մնացածներն անցան Արաքսը: 1916-1917 թթ. Մուշում և Խնուսում բնակվում ու երկիրը վերաշինում էին տասնյակ հազարավոր հայեր՝ Խնուսում՝ 25.000, Բուլանըխում և Մանազկերտում՝ 15.000-20.000 հոգի:

---

[1] «Տարոնի արծիւ», 1950 թ., № 31, էջ 22-28:

[2] "Армянский вестник", 1916 г., № 23.

[3] **Սասունի Կ.**, նշվ. աշխ., էջ 157:

Բայց հայ բնակչությունը հարկադրված եղավ հեռանալ իր հայրենիքից ու բնակություն հաստատել Արևելյան Հայաստանում:

«Այս անգամ Սասունը,- գրում է Մենակը,- դեպի իրեն գրավեց Թուրք և քուրդ զանգվածի ողջ կատաղությունը: Թուրքական կանոնավոր զորքերն ու քրդերը Սասունը շրջափակեցին: Սկսվեց անհավասար կռիվ: Թուրքական հրետանին իրար հետևից ավերում էր սասունցիների դիրքերը: Երեք օր չարունակ ծանր կռիվներ ընթացան: Սասունն ընկավ: Սկսվեց ջարդը: Թվում էր, թե Սասունում կենդանի չունչ չէր մնացել: Բայց ահա Անդրանիկին դիմավորելու էին եկել հազարավոր սասունցիներ:

Տասն ամիս չարունակ նրանք եղել են դժոխքում: 10-12 հազար սասունցի ջարդերից հետո թաքնվել էր անմատչելի գագաթներին, կիրճերում ու քարանձավներում: Ոչ մեծ թվով զինված սասունցիներ այդ բոլոր ամիսներին կռվել են թշնամու գերակշիռ ուժերի դեմ: Թուրքերը հաղթել չկարողանալով, լուր տարածեցին, թե կառավարությունը սասունցիներին ներում է շնորհել: Հազարավոր սովալլուկ հայեր հավատացին և դուրս եկան իրենց թաքստոցներից և ցած իջան լեռներից: Նրանք բոլորը կոտորվեցին: Սասունում մնաց 3-4 հազար բուն սասունցի, որոնք թուրքերի ներման արժեքը լավ գիտեին և լեռներից չիջան: Թշնամու գնդակներն ու սովը հնձում էին նրանց չարքերը, վերջանում էին փամփուշտները: Իշխանություններն ամիսը մեկ Սասուն էին ուղարկում պատժիչ ջոկատներ և ավերում սասունցիների կացարանները: Սասունցիները նորից բարձրանում էին լեռների գագաթները, մինչև որ թուրքերը հեռանային: Եվ այդպես՝ չատ անգամներ: Թշնամուց պակաս դաժան չէր քաղցը: Ուտում էին ինչ պատահեր՝ խոտ, արմատ, կաչի: Ամեն օր մեռնում էր տասնյակ հոգի, հիմնականում կանայք ու երեխաներ: Ջարդից փրկվածների 3/4-ը սովամահ եղավ:

1916 թ. փետրվարի 3-ին ռուսական բանակը մտավ Մուշ, իսկ սասունցիները այդ մասին լսելով՝ փետրվարի 17-ին լեռներից իջան քաղաք[1]:

«Կապույտ գրքում» կարդում ենք. «Հայերը հարկադրված էին թողնել իրենց ամրությունների արտաքին գծերը և աստիճանաբար նահանջել դեպի Անդոկի գագաթները... Կանայք, երեխաներն ու անասունները զգալիորեն խանգարում էին մարտիկների ընթացքը, որոնք 3000 հոգուց մնացել էին միայն 1500-ը: Վրա տվող թուրքերի հետ բախվելիս տեղի էին ունենում սարսափելի դեպքեր: Հայերը, պարպելով վերջին փամփուշտը, պաշտպանվում էին հրացանի կոթերով կամ դանակներով: 30 հազար թուրքական զորքեր ու քրդեր ավելի ու ավելի նեղում էին նահանջողներին, մինչև որ նրանց քշեցին լեռան գագաթն ու շրջապատեցին բոլոր կողմերից: Այդ ժամանակ վրա հասավ վերջին մարտը, որն, ինչպես բոլոր լեռնականների մոտ է լինում, աներևակայելի համառ բնույթ ընդունեց: Տղամարդիկ, կանայք և երեխաները հարձակվող թշնամուն հետ էին մղում մանգաղներով, մահակներով, դանակներով ու քարերով: Ներքև գլորված ժայռաբեկորներով չատ թուրքեր սպանվեցին: Դանակներով զինված կանայք նետվում էին թուրքերի կամ քրդերի վրա»[2]:

---

[1] *"Армянский вестник", 1916 г., № 23.*

[2] *"Армянский вестник", 1917 г., № 4.*

Պատմում է ականատեսը. «Դեռ 1915-ի մայիսին Էրզրումում հայ երիտասարդությունը ձերբակալվեց ու բանտ նետվեց, որտեղ նրանց թաքուն կոտորած էր սպասում: Հունիսին Կ. Պոլսից հրաման ստացվեց հայերին Միջագետք գաղթեցնելու մասին»: Դեպի Միջագետք տանող ճանապարհին չատերին մորթեցին ու կողոպտեցին, գեղեցիկ աղջիկներն ու կանայք բաժանվեցին քուրդ բեկերի ու թուրք պաշտոնյաների միջև և միայն 10 տոկոսը հասավ Դիարբեքիր և Ուրֆա: Փախած հայ կանանցից մեկի՝ Զաբել Փյաչդյանցի նամակում նկարագրված են հայերի նկատմամբ քուրդ հրոսակախմբերի կատարած բռնությունների և բարբարոս խժդժությունների ցնցող մանրամասները: Հարյուրավոր երիտասարդ կանայք, նաև կրծքի երեխայով կանայք և աղջիկներ կամուրջից նետվեցին Եփրատ, որպեսզի գաղաններից փրկեն իրենց պատիվը: Մշո 25 հազար հայ բնակչությունը մորթվեց երեք օրում: «Կոտորածներով բռնված հայկական թաղերը կողոպտվում ու հրդեհվում էին թուրքական կանոնավոր զորքերի կողմից, որոնք հայերին հոշոտում էին իրենց թնդանոթներով: 70 չնչից կազմված մի հայ ընտանիք թույն ընդունեց թուրքերի ձեռքը կենդանի չընկնելու համար: Սասունում ... թուրքերը գործեցին ավելի սարսափելի հանցագործություններ: ... Սասունցիները տեսնելով իրենց վիճակի անելանելիությունը և հույս չունենալով չուտափույթ օգնության, հուսահատ փորձ են կատարում դուրս գալու շրջափակումից և հարձակվում են շրջապատող թուրքերի վրա՝ փամփուշտները խլելու համար: Ի վերջո որոշվում է Սասունից տարհանել կանանց ու երեխաներին: Սակայն ճանապարհին հայերի ամբոխի դեմ են դուրս գալիս քրդերը և սկսվում է աներևակայելի բան:

Քրդերին ընդդիմանալով իրենց կյանքի գնով, խիզախ սասունցիները ճանապարհ հարթեցին դեպի լեռները՝ դեպի իրենց մերձավորները: Իսկ վերջինները թաքնվելով լեռնային կիրճերում և անտառներում, մեռան քաղցից»:

Քրդերը հարձակվելով փախստականների ամբոխին մի ակնթարթում վերածեցին դիակների կույտի: Քրդերի հեռանալուց հետո կույտի տակից դուրս սողաց 9-10 տարեկան տղա: Նա հավաքում է կոտորածներից հրաշքով փրկված 4-6 տարեկան 8-9 երեխայի և նրանց 15 օր սնում է հասկերով, մինչև հանդիպում են սասունցիներ ու նրանց փրկում[1]:

Մանդելշտամ Ա. *- Թուրքերը կոտորել էին Սըլիվանի, Բշերիկի և Դիարբեքիրից մինչև Սասունի լեռների ստորոտը տարածվող դաշտի հայերին: Հազարավոր փախստականներ եկան զգուշացնելու Սասունի և Մուշի բնակիչներին՝ նրանց սպասող ճակատագրի մասին: Հայերը վճռեցին պաշտպանվել: Հունիսի սկզբին քրդական ցեղերը հարձակվեցին Սասունի լեռների վրա, բայց նրանց գրոհը ետ մղեցին այն երեսուն հազար հայերը, որոնք ամրացել էին Լեռնաշխարհում: Սակայն ամսվա վերջին Քյազիմ բեյի հրամանատարությամբ տասը հազար կանոնավոր զինվոր եկավ Կարինից, և թուրքերը, զինաթափելու պատրվակով, սկսեցին բնաջնջել Դաշտի և Մուշ քաղաքի հայերին: Դաշտի հարյուր գյուղերի բնակիչների մեծ մասը խիզախ դիմադրություն ցույց տվեց,*

---

[1] ***Акопов И.,*** *Судьба Армении, Москва, 1918, с. 21-22.*

բայց չուտով վերջացավ փամփուշտի պաշարը և նրանք ոչնչացան:

Իսկ զենք չունեցողներն ու կառավարության դեմ բնավ որևէ բան չարածները նույն պաղարյունությամբ կոտորվեցին: Մուշ քաղաքում հայերը չորս օր կռվեցին, սակայն Թուրքական հրետանին գերմանացի սպաների ղեկավարությամբ խորտակեց նրանց դիրքերը, և բոլոր հայերը սպանվեցին կռվելով: Թուրքերը կանանց ու մանուկներին կենտրոնացրին բանակատեղում և կենդանի այրեցին:

Օգոստոսի 11-ին քրդական մեծաթիվ ուժեր Հավատորիկի ձորում 500 հայ սպանեցին: Մուրադ բեյը 500 քրդերով մնաց Սեմալ գյուղում հայեր որսալու համար: 300 հոգով Առաքելոց վանքում ամրացավ Քյամիլը: Նա հայերից պահանջեց որբ երեխաներին և ամուսին չունեցող կանանց հավաքել՝ Դիարբեքիր մեկնելու համար: Այս պահանջը կատարվեց: Ժանդարմները նրանց հասցնելով Մուրադ գետը, կողոպտեցին ու գնդակահարեցին: Փրկվածները նետվեցին գետը, Թուրքերը նրանց վրա կրակ բացեցին: Միայն մի քանի հոգի փրկվեց:

Հոկտեմբերի 27-ին Շեֆգի փաշայի հրոսակախումբը Արաղ գյուղի հայերից պահանջեց գալ Մուշ և մահմեդականություն ընդունել: Հավաքեցին 600 հոգու, որից 150 տղամարդու գյուղից դուրս գալուց հետո առանձնացրեցին: 600 հոգուն էլ Մշո ճանապարհին սպանեցին: Այդպես վարվեցին Դաշտի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերի հետ:

Սասունի հայկական գյուղերն այրված էին, ամայացած: Կենդանի էին թողել միայն չնչին թվով արհեստավորների:

Մի ուրիշ առիթով Ա. Մանդելշտամը գրում է. «Սասունի լեռնցիները գաղթականների աջակցությամբ որոշեցին պաշտպանվել: Հուլիսի սկզբներին, 20.000 մարդուց բաղկացած բանակով համալրված Թուրքերը Քյազիմ բեյի հրամանատարությամբ, չնայած կատաղի դիմադրության, կոտորեցին Մուշի հարթավայրի բոլոր գյուղացիներին: Հուլիսի 10-ին ռմբակոծվեց Մուշ քաղաքը: Զորսօրյա դիմադրությունից հետո տղամարդիկ սպանվեցին, կանայք ու երեխաները ողջակիզվեցին ճամբարներում, ուր քշել էին նրանց: Բայց սասունցիների դիմադրությունն ընկճվեց միայն օգոստոսի 5-ին, երկարատև և ահավոր մարտերից հետո, որոնցում նրանց մեծ մասը զոհվեց:

Հունվարի վերջերին ռուսական բանակը մոտեցավ Մուշին, հայերը հավաքվեցին քաղաքում: Հավատորիկի 1200 բնակչից կենդանի էին մնացել 8 տղամարդ և 12 կին ու երեխա[1]:

Գրեյ. – «Նորին մեծություն Բաթումի հյուպատոսը քաղվածքներ բերելով Թիֆլիսի մամուլից՝ նկարագրում է սարսափելի գազանություններ, որոնք տեղի են ունեցել Սասունում, որտեղ բնակչությունը բացարձակապես ոչնչացվել է և սոսկ մի քանիսն է հաջողել փրկվել: Ամբողջ երկրամասը լրիվ ավերվել է...»[2]:

Հ. Բարբի. – «Բիթլիսի, Մուշի և Սասունի գավառների չուրջ 150 հազար

---

[1] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, գ. 439:

[2] «Times», 7 Osctober 1915.

Հայից 1916-ին 20 հազար էլ չէր մնացել, այն էլ հիմնականում կանայք ու երեխաներ՝ Թշվառ վիճակում»[1]:

«El Dia»-ն 1915 թ. նոյեմբերի 28-ին գրում է. «Սասունի լեռնային շրջանում 1500 հայ մարտիկներ, որոնք դիմադրում էին սարսափելի հարձակումներին, պաշարվեցին 30.000 քրդերով: Կռիվը հերոսական ու անզիջում եղավ: Տղամարդիկ, կանայք ու երեխաները կռվում էին դանակներով, մանգաղներով ու քարերով՝ այն ամենով, ինչ պատահում էր:

Նրանք նաև քարեր էին գլորում սարերի գագաթներից՝ սպանելով բազմաթիվ Թշնամիների:

Այս դաժան պայքարում կանայք դանակներ էին խրում Թուրքերի կոկորդները: Երբ որևէ մարտիկ չմնաց, մի քանի աղջիկներ, ոմանք՝ կրծքի երեխաներով, նախընտրեցին բարձր ժայռերից նետվել, քան Թուրքերի ձեռքն ընկնել: Կաթողիկոսն անմիջապես արձագանքում է տարոնահայության հետ կատարվածին: Հուլիսի 27-ին նա հեռագրեց՝ «Մշո վիլայեթում (սանջակում) գրեթե բոլոր տղամարդիկ ջարդված են»[2]: 2000-3000 հյուծված ծերեր, տարեց կանայք և փոքրիկ երեխաներ՝ ահա այն ամենը, ինչ մնացել է բարերեր Մշո դաշտի 10.000-ոց ժողովրդից»[3]:

Ականատեսներից Ա. Մանուկյանը պատմում է. «1915 թ. ձմռանը Դաշտից սկսեցին տխուր լուրեր հասնել: Զենքի և ռազմամթերքի չլինելը միացան այս լուրերին: Սասունի ժողովուրդը, միայնակ, անզոր կատաղության էր մատնված: Ոմանք, տարված ռուսի գալու հույսով, սպասողական սպանիչ դրությունն էին տևական դարձնում՝ համբերություն քարոզելով ժողովրդին:

Կռիվը տեղի է ունեցել Առաքելոց վանքում, ոստիկանական ջոկատի հրամանատարը սպանվել է, Թուրքերը փախել են դեպի Մուշ, իսկ ՄՃոն իր զինվորներով բարձրացել էր Սասուն: ՄՃոն ապստամբության ժամը եկած էր համարում, բայց նրա ու իր համախոհների Թևը կոտրողներ կային՝ որպես Թե ավելի հեռատես անձեր:

Զինվորները գիշերը մնացին մեր գյուղում: Հետևյալ օրը բաժանվեցին տասնյակների և ցրվեցին գյուղերը՝ ամեն գյուղ մեկ տասնյակ: Այսպես, Մշո զինված ուժի կարևոր մասը տեղափոխվեց Սասուն, մի բան, որ հետագայում շատ տխուր անդրադարձ ունեցավ Դաշտի ինքնապաշտպանության գործի վրա:

Ձմեռն ու գարունը զուր անցան: Թուրքերը, անշուշտ, երկյուղում էին Տարոնի հայության ապստամբությունից: Դրա համար էլ նրանք անտարբերություն ձևացրին Առաքելոց վանքի և Գոմսա դեպքերի հանդեպ...

Ամբողջ զորքը և քուրդ աշիրեթները չորս կողմից խուժեցին Սասուն, զորքը Կուրտիկի, իսկ քրդերը՝ Տափկա և Տալվորիկի կողմից:

Կռիվն սկսվեց: Հրամանատար Իսրոն (Կորյուն) անցավ դեպի Շեյխյուսուֆ Զիարեթ, Կուրտիկի ետևից դեպի Տափկ, հետո էլ Կոպ: Գելիեգուզանի ուժերը

---

[1] *"Кавказское слово", 22 января 1917 г.*

[2] *"Кавказское слово", 28 июля 1917 г.*

[3] *"Русские ведомости", 1915 г., № 256.*

Պետո Ղազարի և Տեր Քաջի Գրիգորի գլխավորությամբ անցան դեպի Շենիկ: Քրդերը Փուրթո քեռչքի մեջ դիրք էին բռնել: Գրգռն խփվում է քեռչքի դռանը: Կռիվը շարունակվում է մինչև գիշեր: Հավաքեցին ժողովուրդը, վերադարձան Գեղաշեն: Առավոտյան բոլոր գյուղերը պարտվեցին, անցան Գբրեսոր: Զինված ուժերը բռնել էին պետք եղած գծերը: Հաջորդ օրը կատաղի կռիվ սկսվեց: Զորքը Շենիկ գյուղ հասավ: Իրիկունը թուրքերը մտան Շենիկ և կրակի տալով՝ առաջացան դեպի Սեմալ: Հայերն ու թուրքերը գյուղի մեջ իրար խառնված՝ կատաղի կռիվ էին մղում վառվող գյուղի բոցերի մեջ: Գիշերը բարձունքների վրա լցված ժողովուրդն այս սարսափելի տեսարանը դիտելով շարժվում է դեպի Գրեգոլ: Երբ ժողովուրդը բավական ճամփա կտրեց, հայոց ուժերը քաշվեցին Սեմալից: Ժողովուրդը շարժվեց դեպի Անդոկ, կռվող ուժերը մնացին Գրեգոլի դիրքերում: Լեռն արդեն պաշարված է Մուշից, Տիգրանակերտից, Ճապաղջրից եկած զորքերով և անընդհատ կրկնապատկվող քրդական խուժանով: Թշնամին կատաղի հարձակում սկսեց: Մերոնք Գրեգոլն էլ չլքեցին: Թշնամին լցվեց Գելիեգուզան: Սեմալի Քաթիբ Մանուկը դիրք էր բռնել եկեղեցու մոտ: Մանուկի մարտիկներից 20 հոգի զոհվեց, ինքն էլ ծանր վիրավորվեց: Շուտով օգնության հասան վերի դիրքի տղաները, թշնամուն ետ մղեցին և Մանուկին էլ վերցնելով՝ ելան դեպի Անդոկ, որտեղ արդեն հավաքվել էր ժողովուրդը:

Սկսվեցին Անդոկի կռիվները: Թուրքերը թնդանոթներ զետեղեցին Գրեգոլ և Անդոկ-Գերինն օղակի մեջ առան:

Հայերի բախտը գրեթե որոշված էր: Դիմադրական ոգին ընկել էր: Լուր տարածվեց, որ Ռուբեն Տեր-Մինասյանը կարգադրել է դիրքերը ամուր պահել մինչև մութն ընկնելը, որպեսզի ճեղքելով թշնամու շղթան անցնենք դեպի Քան, որտեղ հավաքված է Դաշտի ժողովրդի նշանակալի մասը: Ժողովուրդը, մասերի բաժանված, լցվեց զանազան թաքստոցներ և դիմեց ինքնապաշտպանական մանր կռիվների:

ԳԼՈՒԽ ՅՈԹՆԵՐՈՐԴ

ԿԻԼԻԿԻԱ

Կիլիկիան կազմված է երկու մասից՝ Լեռնային և Դաշտային: Դաշտային Կիլիկիան Ադանան ու դրան հարող տարածքներն են, իսկ Լեռնայինը՝ Միջերկրական, ծովափով դեպի հյուսիս ձգվող լեռնաշխարհն է, Կիլիկիայի հայկական թագավորության միջնաբերդը: Ադանայի վիլայեթի մեջ, բացի Ադանա քաղաքից, մտնում էին Մերսինը, Տարսուսը, Մսիսը, Հաճընը, իսկ Մարաշն ու Այնթափը մտցված էին Հալեպի նահանգի մեջ: Դա արվեց 1875 թ. վարչական բարեկարգումով և խնդիր ուներ հայ ազգաբնակչությանը մասնատել, թույլ չտալ հայերի մեծամասնություն երկու նահանգներից ոչ մեկում:

Այդ դիտավորության հետևանք էր, որ Ադանայի վիլայեթը հյուսիսից հարավ ձգվում էր Իսլահիեից մինչև Ալեքսանդրետ: Նույն նպատակով՝ Կյուրինը, Աչոտին և Դերենդեն մտցվել էին Սեբաստիայի վիլայեթի մեջ, իսկ աշխարհագրականորեն Սեբաստիային պատկանող Մալաթիան տրվել էր Խարբերդի վիլայեթին:

Ադանայի վիլայեթը կազմված էր չորս սանջակներից՝ Ադանա, Ջեբել-Բերեքեթ, Կոզան (Սիս), Իչել: 1915 թ. նահանգում բնակվում էր 403.430 հոգի:

70 տարում՝ 1845-1915 թթ. Կիլիկիայի բնակչությունը կրկնապատկվել էր: Պատրիարքարանի տվյալներով՝ 1878 թ. Կիլիկիայում բնակվում էր 380.000 հայ: Գր. Զոհրապը նշում է ավելի փոքր թիվ՝ 280.000 հայ, որից եթե հանվի Հալեպի նահանգի մեջ մտցված վարչական միավորների հայ բնակչության թիվը՝ 102.000, կմնա 178.000 հայ:

Վիտալ Քինեն նշում է, որ 1890-ական թվականներին Ադանայում բնակվում էր 97450 հայ: Օրմանյանի տվյալներով՝ Ադանայի, Մերսինի, Իչելի սանջակներում կար 31.200, Ջեբել Բերեքեթում՝ 11.000, Հաճընում՝ 21.700 հայ: Ընդամենը՝ 73400 հոգի: Այս թվերը ոչ միայն չատ մոտավոր են, այլև հակասական: Օրինակ, Հաճընում հաշվվում էր 28.000 հայ, իսկ տեղահանված հայերի թիվը նշվում է 32.000:

Թուրք պատմաբան Էսադ Ուրասը գրում է, որ Ադանայամ բնակվում էր 50.135 լուսավորչական, 2511 կաթոլիկ և 5036 բողոքական հայ (ընդամենը՝ 57.682)[1]:

Ադանայի վիլայեթն առանձնահատուկ նշանակություն ունի: Նախ, դա Հայկական Կիլիկիայի հարթավայրային մասն է, երկրորդ, թե՛ Դաշտային և թե՛ Լեռնային Կիլիկիաները երբևիցե ընդգրկված չեն եղել Հայկական հարց հասկացությունը ձևավորող բաղադրիչների մեջ: Բարենորոգումների չուրջ 40-

---

[1] **Ղազարեան Հ.**, *Յեղասպան Թուրքը, Բեյրութ, էջ 143:*

ամյա պայքարը Կիլիկիային չէր վերաբերում: Ադոնցը դա բացատրում է հետևյալ կերպ. «Ադանայի և Հալեպի վիլայեթների միջև բաժանված Հայկական Կիլիկիայի մասին ապարդյուն էր հիշեցնում հայոց պատրիարքարանը: Թուրքերն անտեսում էին Կիլիկիան, իսկ եվրոպական տերությունները չէին հակադրվում, որովհետև Հայաստանի տարածքի ընդլայնումը նշանակում էր ընդլայնել Ռուսաստանի ազդեցության գոտին»: Ադանայի 1909 թ. ջարդերը նախ հակասությունների այդ կծիկի միջնաթելերից էին: Դրանք նաև «աչխարհին ցույց տվեց, որ կա ևս մի հայկական մարզ, որ պաշտոնապես չի մտցված Հայկական հարցի վերաբերյալ դիվանագիտական փաստաթղթերում: Հայերով բնակեցված մարզերի սահմանման առավել ճշգրիտ նշանակը կոտորածներն են... այն ավելի պերճախոս է», քան Բարձր Դռան վիճակագրական բոլոր տվյալները: Եթե տերություններն ավելի լուրջ վերաբերվեին հայերի ճակատագրին, այնքան ժամանակ չէին ծախսի Հայաստանի սահմանների վերաբերյալ Թուրքերի հետ վիճաբանությունների վրա: «Նրանք կարող էին ճիշտ որոշել հայկական հողերն, այն արյունալի հրդեհների հրացոլքով, որոնք Հայկական հարցի ծագման ժամանակներից բռնկվում էին նրանց հայացքի առաջ՝ հայերով բնակեցված շրջաններում»[1]: Ադոնցը հայոց ողբերգությանը տերությունների մեղսակցությունը համարում է այն, որ հայերի կյանքի բարվոքման հիմքում դրեցին թվական գերակշռության պայմանը՝ չնայած դրա անհրաժեշտությունը չկար: Ենթադրենք այս կամ այն վիլայեթում, հարցնում է նա, հայերը մեծամասնություն չէին կազմում, մի՞թե «այդ հանգամանքը նրանց զրկում է իրենց կյանքի պայմանները բարելավելու պահանջի իրավունքից»[2]:

1902 թ. Սսի կաթողիկոս ընտրվեց Սահակ Բ. Խապայանը, որը 1903 թ. ապրիլ 20-ին, 20.000 ուխտավորների ներկայությամբ օծում ստացավ և գահակալեց ութամյա թափուր աթոռը[3]:

Կիլիկիայի կաթողիկոսության թեմերն ունեին 224 եկեղեցի՝ 179.000 հայ հավատացյալներով: Դրան գումարած 17.000 հայ կաթոլիկներն ու 16.000 հայ բողոքականները: Աղբյուրներից մեկը նշում է, որ վիլայեթում բնակվում էին 216.000 քրիստոնյա և 198.000 իսլամ: 1902 թ. Ադանայի վիլայեթում գործում էր 36 հայկական դպրոց՝ 3529 աշակերտով և 100 ուսուցիչով:

Երիտթուրքերի ղեկավարների 1915 թ. փետրվարի 18-ի շրջաբերականն ստանալուց հետո Ադանայի երիտթուրք գործիչներից մեկը բացեիրաց հայտարարեց. «Հայերի գլխին նոր փոթորիկ է պայթելու, որը գերազանցելու է մինչ այժմ պատահածները... Զեյթունի, Հաճընի, Դյորթ Յոլի, ինչպես նաև Ադանայի բոլոր հայերը տեղահանվելու են և նրանց հարստությունները բռնագրավվելու են»:

Որոշ թուրք պատմաբաններ չեն ժխտում, որ հայերի տարագրությունը սկսվել էր շատ ավելի վաղ, քան տեղի կունենային Վանի իրադարձությունները: «Հայերի աքսորն սկսվեց դեռ մարտին,- գրում է Թաներ Ակչամը:-

---

[1] ***Ադոնց Ն.,*** *Հայկական հարց, Ե., 1996, էջ 98-99:*

[2] *Նույն տեղում, էջ 99-100:*

[3] ***Աճառյան Հր.,*** *Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002, էջ 375:*

Օրինակ, սկսած մարտի 15-ից, Մարաշի և Ադանայի վիլայեթների բնակչությունը (Մարաշն այն ժամանակ սանջակ էր) զանազան պատրվակներով բռնագաղթվեց...»[1]:

1915 թ. ամռանը Ադանայի նահանգապետը հեռագրեց Թալեաթին, թե Ադանայի սանջակի կենտրոնական կազայից տարագրվել է 14216, Կարա Իսալու կազայից՝ 33, Ջիհուն կազայից՝ 318, ընդամենը՝ 14567 հայ: Մերսինի կազայից տարագրվել էր 756, Տարսուսից՝ 840: Ընդամենը՝ 1596 հայ:

Ջեբել-Բերեքեթի սանջակի կազաներից տարագրվել էին. Կենտրոնականից՝ 753, Իսլահիեից՝ 496, Դյորթ-Յոլից՝ 7168, Բախչեից՝ 3092, Խասսայից՝ 766: Ընդամենը՝ 12.275 հայ:

Կոզանի սանջակի կազաներից. Սիսի՝ 3586, Քերեկի՝ 2217, Կարսի (Բազարի)՝ 1077, Հաճընի՝ 10523: Ընդամենը՝ 17403 հայ: Իչելի սանջակի կազաներից. Իչելի՝ 306, Գիբլանրից՝ 7:

Վալին նաև հայտնում է, թե «Ադանայում բռնագաղթը նոր է սկսված, դրա համար էլ տվյալները թերի են... Տարագրվածները Օսմանիեի և Ռաջոյի ճանապարհով ուղարկված էին Հալեպ»[2]: Այսինքն՝ տարագրվել էր 46119 հոգի, որը կազմում էր Ադանայի վիլայեթի հայության մի փոքր մասը:

Եթե Դաշտային Կիլիկիայում բռնագաղթը նոր էր սկսվում, ապա Լեռնային Կիլիկիայում դա ավարտվում էր: Զեյթուն քաղաքն ու նրա գյուղերն առաջինը ճաշակեցին տարագրության ու կոտորածների աղետները:

Արդեն 1915 թ. ապրիլի 30-ին Մորգենթաուն հեռագրեց Վաշինգտոն. «...Թուրքական իշխանություններն անհավատալի դաժանությամբ են վերաբերվում Զեյթունի և Մարաշի հայ ազգաբնակչությանը. պատրվակ բռնելով մի քանի դասալիքների արարքները, նրանք տեղահան են անում ու ցրում անմեղ բնակչության մի զգալի մասին»[3]:

Զեյթունահայերը օսմանյան տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում աչքի են ընկել իրենց ազատատենչ ոգով, իրենց մարդկային և ազգային իրավունքների համար պայքարելու աներեր կամքով: Նրանք 1628 թ. սուլթանական ֆերմանով ազատվեցին խարաջ վճարելուց, դրա փոխարեն համաձայնվելով ամեն տարի հօգուտ Այա Սոֆիայի մզկիթի վճարել 1500 ղուրուշ: Նրանք մինչև 1862 թ. ինքնավար և կիսաինքնավար վիճակում էին: Զեյթունցիներին հարկատու դարձնելու Բարձր Դռան բոլոր փորձերը հաջողություն չունեցան: Թուրքական զորքերի ու լեռնցի հայերի միջև զինված ընդհարումներ են տեղի ունեցել 1780, 1782, 1808, 1819, 1832, 1835, 1860 և 1862 թվերին[4]:

Զեյթունը ոչ միայն կիլիկիահայության մարտունակության ոգին էր, այլև հայ ազատագրական շարժման բախտորոշ օջախներից մեկը: 1898 թ. մայիսի 31-ին թուրքական «Թերջուման» թերթը գրեց. «Զեյթունը երեք կողմից լեռներով շրջապատված գյուղաքաղաք է, ելքն ու մուտքը միակ կամրջով է կա-

---

[1] **Акчам Т.,** Турецкое национальное "я" и Армянский вопрос. М., 1995, с. 102-103.

[2] **Փափազյան Ա.,** Արաբական կախաղաններն ու հայկական ջարդերը, Հալէպ, 1992, էջ 168:

[3] **Morgenthau H.,** Memoires. Suivi de documents inédits du Department d'Etat. P., 1984, p. 6.

[4] «Փորձ», 1877 թ., № 3, էջ 171-174:

տարվում: Մեջտեղում բարձրանում է պարիսպ: Օսմանյան շրջանում քաղաքի բնակչությունն ամբողջությամբ հայեր էին: Որևէ մեկը չէր կարող բռնությամբ ներս մտնել, այդ թվում՝ օսմանյան զինվորները, հրամանատարները, նույնիսկ թագավորները... Օսմանյան պատմության շրջանում շուրջ 40 ապստամբության թատերաբեմ էր դարձել Զեյթունը, որտեղ օսմանյան զինվորը մտնել չի կարողացել»:

Պատահական չէ, որ ոչ միայն Ադանայի վիլայեթի ու Մարաշի սանջակի, այլև ամբողջ արևմտահայության տարագրությունն սկսվեց Զեյթունից: Այդ գործում երկրորդական նշանակություն չունեցավ և այն, որ վախ կար, թե Անտանտը հնարավորություն ուներ հեշտությամբ օգտագործել այս տարածքը:

Այս խնդրում չի կարելի իսպառ անտեսել նաև այդ տարիներին շրջանառության մեջ մտցված թեզը, թե Կիլիկիան Հայաստանի անկապտելի մասն է և նրա ճակատագիրը տնօրինվելու է Արևմտյան Հայաստանի ճակատագրի հետ միասին: Ռուս հրապարակախոս Նիկոլաևը «Армянский вестник»-ի 1917 թ. թիվ 16-ում գրում է. «Այն ժամանակ վեց վիլայեթներին, որտեղ նրանք (հայերը) մինչև վերջին կոտորածները գերակշիռ էին որպես ազգային-ռասայական միավոր, Կիլիկիայի կցումը բնական կհամարվեր...

Սակայն կան նաև այլ նկատառումներ, որոնց արհամարհել չի կարելի, խելացի կամ քաղաքագիտորեն կլինի՞, եթե նոր պետությունը թողնվի առանց ելքի Միջերկրական ծով: Կարող են հակառակել, թե Կիլիկիայի միացումը հայկական պետությանը կվնասի Ֆրանսիայի շահերին հյուսիսային Սիրիայում կամ Իտալիային՝ Ադալիայում... Անհասկանալի է, թե երկու տերությունների շահերը ինչո՞ւ պետք է գերակայեն նոր պետության (Հայաստանի) շահերին... Պատմականորեն այս տարածքում է ձևավորվել Փոքր Հայքի թագավորությունը, որը գոյություն ունեցավ մինչև 1375 թ.: Աշխարհագրականորեն Կիլիկիան նոր պետության համար կդառնա առևտրական բնական ելք արտասահման և, եթե չեն ցանկանում, որ նա ընկնի նույն վիճակում, ինչ Սերբիան... Կիլիկիան պետք է միացվի ինքնավար նոր պետությանը, այլապես Հայաստանը կախման մեջ է լինելու հարևան որևէ պետությունից, որպեսզի ապահովված լինի արտաքին աշխարհի հետ կապով...»:

Եվ ապա, այդ տարածքը նոր պետության կազմի մեջ մտցնելը կարևոր էր նաև նրա համար, որպեսզի հայերը կարողանային զգալ իրենց ազգության ամբողջականությունը, իրենց միասնությունը, իրենց տեղը մյուս ազգերի շարքում: «Չափազանցություն չի լինի ասել, որ այդ ձգտումը եղել է հայ ժողովրդի միակ տենչանքը սկսած 1375 թվից, երբ կորցրեց քաղաքական ինքնուրույն գոյությունը... Այն լուսավորել է ժողովրդի կյանքը ամենամռայլ, ամենաողբերգական ժամերին: Կարելի է համոզված ասել, որ վերջին սարսափելի աղետը չմեղմեց այդ ցանկությունը»: Բնութագրական են Լինչի խոսքերը. «Հայերն ամենահամառ ազգայնականներն են, որպիսիք երբևիցե աշխարհը տեսել է»: Այդ նպատակը հետապնդելու խնդրում ժողովուրդը միահամուռ էր նույնիսկ Մեծ եղեռնի ժամանակ, երբ անհոգ աշխարհն ասում էր. «Հայերն այլևս չկան»:

Ադանայի 1909 թ. կոտորածից հետո տեղի ունեցավ «հաշտեցնելու ճաշկերույթը», որին, բացի բարձրաստիճան պաշտոնատարներից, մասնակցում էր

նաև Հայոց եկեղեցու ավագանին: Հայ հոգևորականներից մեկն իր ճառն այսպես սկսեց. «Ճիշտ է, որ մենք, հայերս, այդ կոտորածի օրերին շատ բան կորցրեցինք՝ մեր ամուսիններին,, կանանց, երեխաներին և մեր ունեցվածքը: Սակայն դուք, Թուրքերդ, շատ ավելի եք կորցրել: Դուք կորցրել եք ձեր պատիվը»[1]:

Ա. Շիրակյանն անդրադառնալով հայոց բռնագաղթի կազմակերպմանը, նշում է, որ հարվածի առաջին ու գլխավոր ուղղություններն արևելյան նահանգներն ու Զեյթունն էին: «Պատերազմի սկզբնաւորութենէն զէյթունցիները գրգռելու բոլոր փորձերն ապարդիւն էին անցած, զօրահաւաք, զինահաւաք, խուզարկութիւններ, բռնագրաւումներ, ծեծ ու խոշտանգում չէին կրցած ապստամբեցնել Զէյթունը...», սակայն պատրվակ դարձնելով մի քանի երիտասարդների դասալքությունը, Հալեպից զորք բերեցին, որոնց զեյթունցիները սպիտակ դրոշակով դիմավորեցին, բայց դա որևէ նշանակություն չունեցավ: Որոշված էր Արծվաբույնը հայերից դատարկել և դատարկեցին[2]:

«Հայաստան եւ Կիլիկիա ընդհանուր կոտորած սկսած է՝ ըստ Պուլկարիայէն Թիֆլիսի Ազգային բիւրոյին ուղղուած հեռագրի մը, եւ ըստ նոյն հեռագրին՝ որպէս թէ Կիլիկիա ապստամբութիւն սկսած է...»: Զոպանյանը Կիլիկիայի ապստամբության լուրին չի հավատում, բայց համոզված է, որ «բան մը անցած է» և չտապում է Պողոս Նուբարից իմանալու ճշմարտությունը[3]:

ԶԵՅԹՈՒՆ. - «Զեյթունցիները Կիլիկիայի մյուս հայ բնակիչներից տարբերվում էին նրանով,- գրում է Ա. Թոյնբին,- որ զենք ունեին և թվում է, նախապատրաստվել էին ահագնացող հանգուցալուծմանը: Բայց նրանք զենքերը հանձնեցին, հենց որ խոստացան հնազանդվելու դեպքում՝ կխնայեն նրանց անպաշտպան ազգակիցներին, որոնք բնակվում էին հարթավայրի գյուղերում: Թուրքերը ... դրժեցին իրենց խոստումը: Այսպիսի անբարենպաստ դրության մեջ ընկնելով՝ քաջարի լեռնականներն անխուսափելիորեն պարտվելու էին...»:

Ա. Մանդելշտամի կարծիքով՝ Զեյթունում «խռովությունը» սահմանափակվել է երկու տասնյակ հայերի՝ մի վանքի պաշտպանությամբ, որոնց համբերությունից հանել էին ժանդարմների դաժանությունները: Չնայած այդ գործողությունները պաշտպանություն չէին գտել բնակչության կողմից, վերջինները տարագրվել էին:

Հալեպի նահանգի նախկին վալի, հետագայում ՆԳ նախարար Ահմեդ Ռեշիդը, որ քաջատեղյակ էր Կիլիկիայի իրադարձություններին, ամենայն որոշակիությամբ հայտարարեց. «...Անատոլիայի և Կիլիկիայի հայերը ոչ միայն չեն հարձակվել, այլև նույնիսկ չեն փորձել իրենց պաշտպանել հանկարծակի հարձակումներից»[4]:

1914 թ. հուլիսի 27-ին Թուրքիայում հայտարարվում է ընդհանուր զորահավաք: Զեյթուն քաղաքը զորահավաքի գրանցման կետ նշանակված էր: Դրա հետևանքով այստեղ հավաքվեց երիտասարդության մեծ զանգված, ամեն

---

[1] R 14092, Ab. 20411.

[2] **Շիրակեան Ա.,** Կտակն էր նահատակներուն, Պէյրութ, 1965, էջ 42:

[3] **Զոպանյան Ա.,** Նամականի, Ե., 1980, էջ 124:

[4] **C. Tarihler,** Görduklerim-Yaptiklarim 1890-1922, s. 107.

տանը 20–30 զինակոչիկ էր տեղավորված, սակայն այդ վիճակում անգամ տներում տեղ չկար և շատերը մնում էին բացօդյա: Նրանք քաղցած, թշվառ օրեր էին անցկացնում սպասելով զինվորագրման իրենց հերթին: Այդպես՝ 20–25 օր:

Զնայած զեյթունցիները պատրաստակամ էին կատարելու իշխանությունների պահանջները, այնուամենայնիվ կառավարությունը նրանց թշնամի էր համարում: Ահա թե ինչու, երբ զեյթունցիները անտրտունջ իրենց վրա էին վերցրել գավառի հայ և մահմեդական բնակչության զինվորագրման հետ կապված բոլոր ծանրությունները, երբ զեյթունցիները զորակոչվեցին, գափթիեներն սկսեցին նեղել ժողովրդին: Դեկտեմբերին հրաման ստացվեց հանձնելու զենքերը: Զեյթունցիներն այդ հրամանը նույնպես կատարեցին: Զնայած դրան, ժանդարմները գնալով լկտիանում էին: Աղջիկներին վիրավորելու համար նրանց ու հայերի միջև բախում տեղի ունեցավ: Հասկանալով իշխանությունների չար մտադրությունները, զեյթունցիներն աստիճանաբար փոխեցին վերաբերմունքը նրանց հանդեպ:

Նույն 1914-ի օգոստոսին Տեկ Բեյրկի թուրքական ավազակախումբը խոչտանգում է հաճընցի երկու հայի: Զեյթունցի մի խումբ երիտասարդներ չտապում են դեպքի վայրը, սակայն ավազակները հասցրել էին հեռանալ: Այդ օրերին ընդհարում է տեղի ունենում նաև զեյթունցիների ու Անտրունի թուրքերի միջև: Զնայած զոհեր չեղան, բայց դա պատրվակ դարձավ Մարաշի թուրք երևելիների համար նամակ գրելու Բարձր Դռանը, թե իրենք զորահավաքին չեն մասնակցի, եթե Զեյթունի հայերը չպատժվեն: Կ. Պոլիսն անմիջապես արձագանքում է և Մարաշի կառավարիչ նշանակում թուրքիստ-ազգայնամոլ Ալի Հայդարին, իսկ Զեյթունի գայմագամ՝ արյունարբու Հյուսեյին Հյուսնուն: Զեյթունցիներն չտապեցին նրանց հավաստիացնել, որ հնարավոր աջակցությունը ցույց կտան կառավարիչների աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Տեղի առաջնորդ Հ. Կարանֆիլյանն ու քաղաքապետ Նորաշխարհյանը 40 հոգով մեկնում են Մարաշ՝ նոր կառավարչի հետ հանդիպելու: Վերջինս խոստանում է զեյթունցիներից առանձին գունդ կազմել հայ հրամանատարով: Սակայն ակնհայտ էր, որ նա ստում էր ժամանակ չահելու համար:

Վիճակը քննելու համար Զեյթունի ազգային առաջնորդարանում հայ երևելիները ժողովի են հավաքվում և որոշում են հնազանդվել իշխանությունների ձեռնարկումներին, այսինքն՝ զենքերը հանձնելու պահանջին:

Այդ ժամանակ ստացվում է նաև Սահակ կաթողիկոսի նամակը, որտեղ ասված էր, թե «4-րդ բանակի ընդհանուր հրամանատար և ծովային նախարար աղնվաշուք Ջեմալ փաշան անձամբ խոստացած է ինձ հնազանդ և անմեղ ժողովրդին հանգստութեան և բարօրութեան համար ոչինչ չխնայել: Ջանացե՛ք համակերպիլ և պետական ամեն պահանջի գոհացում տալ, որևէ խլրտում ու աննչան միջադեպ կրնայ ամբողջ ազգին, նամանավանդ Կիլիկիոյ հայութեան տապանաքարը կնքել»[1]:

---

[1] **Նորաշխարհյան Լ.,** *Զեյթունը 1914–1921 թթ. : Հուշեր: Ե., 1984, էջ 13–14:*

1914 թ. օգոստոսին Ալի Հայդարը 600 զինվորով գնում է Զեյթուն՝ զինակոչն ապահովելու և հայերին զինաթափելու համար: Թուրքական զորքերի թիվը գնալով ավելանում էր, և հակառակ նրան, որ հայերը որևէ քայլի չդիմեցին զորակոչը ձախողելու, սկսեցին վերջինների հանդեպ բռնություններ և այլանդակ արարքներ գործադրել: Նազարեթ չավուշը 25 երիտասարդների հետ բարձրացավ քաղաքից երկու կիլոմետր հյուսիս-արևելք գտնվող վանքը:

Ալի Հայդար փաշան հսկողության տակ առավ Զեյթունի չորս կամուրջները և տեղի ոստիկանապետին հանձնարարեց ձերբակալել Նազարեթին: Ոստիկանապետը կարողացավ սեպտեմբերի 6-ին խաբեությամբ այդ հրամանը կատարել: Արգելվում է փողոցային երթևեկությունը, իսկ քաղաքի երևելիներին կանչում են զորանոց:

«Զեյթունը պաշարուեցաւ,- պատմում է Լեփսիուսը:- Ի տես այնքան բազմաթիւ զօրագունդերուն, քաղաքի մէջ սպիտակ դրօշներ պարզուեցան հասկցնելու համար, թէ բնաւ մտքերնէն չէին անցներ ընդդիմադրութիւն ընել: Վանքին մէջ ապաստանողները ինքզինքնին պաշտպանեցին ամբողջ օր մը, եւ մեծ թիւով զինուոր սպաննեցին, որովհետեւ աղէկ պաշտպանուած էին եւ աղէկ նշան կ'առնէին»[1]:

Զենքի հավաքումը վերածվում է խժդժությունների, մարդկանց ծեծում էին, նետում գնդանը: Քաղաք էր բերվել 6000-7000 զորք: Աչքի տակ ունենալով 1895-ի փորձը Ալի Հայդարն ամրացնում է զորանոցը: Միաժամանակ սկսում են ձերբակալությունները ու խոշտանգումները: Թուրքերը զուգահեռաբար ձեռնամուխ եղան հայկական գյուղերի կողոպուտին և գյուղական ավագանու ձերբակալություններին:

Մինչև սեպտեմբերի 10-ը Զեյթունն ու շրջակա հայկական գյուղերը զինաթափված էին, դրանց ավագանին՝ բանտ նետված: Սեպտեմբերի 29-ին մոտ 300 ձերբակալված զեյթունցիների, նրանցից բռնագրավված 1400 հրացանների հետ տեղափոխում են Մարաշ: Երկու օր շարունակ նրանց պտտեցնում են քաղաքի փողոցներով ու գարշելի անարգանքների ենթարկում: Բանտում թունավորելով մեռցնում են Նազարեթ չավուշին:

Զեյթունցիների վիճակը գնալով դառնում էր անտանելի: Խոշտանգում, ծեծ, հալածանք, ձերբակալություններ: Սահակ կաթողիկոսը գնում է Հալեպ և խնդրում Ջեմալ փաշայից օգնել բռնություններին վերջ դնելու: Փաշայի միջամտությունից հետո բանտից ազատվում են զեյթունցի մի քանի գործիչներ, այդ թվում՝ Եղիա Նորաշխարհյանը: Եղիան 1915 թ. հունվարի 1-ին ժողով է գումարում, որը որոշում է կայացնում կռվել թուրքական բռնությունների դեմ: Փետրվարի 14-ին հայերի մի խումբ հարձակվում է զենք փոխադրող թուրք զինվորների վրա, մի քանի հոգու սպանում է ու խլում զենքերը: Դա ազդանշան էր: Խումբը շատ արագ համալրվում է նորանոր մարտիկներով, ինչն անհանգստացրեց թուրքական իշխանություններին: Նոր զորքեր բերվեցին Զեյթուն: Փետրվարի 18-ին Ադանայի վալի Ջեմալը ստանում է Բ. Շաքիրի

---

[1] (**Լեփսիուս**) *Հայկական ջարդերը: Տոքտ. Եոհաննես Լեփսիուսի տեղեկագիրը, Կ. Պոլիս, 1919, էջ 12:*

հեռագիրը, թե Իթթիհադի կենտրոնը որոշում է ընդունել «Թուրքիոյ մէջ ապրող բոլոր հայերը, առանց մէկ հայ իսկ ողջ թողնելու», բնաջնջել[1]:

Փետրվարի 25-ի առավոտյան հնչում են քաղաքի եկեղեցիների զանգերը և փորձ է արվում գրավելու զորանոցը: Սակայն Թուրքերը նախապես իմացել էին պատրաստվող հարձակման մասին: Մինչև մարտի 10-ը երկու կողմերը տենդագին պատրաստվում էր բախմանը, հայերը՝ վանքում, իսկ Թուրքերը՝ քաղաքում: Մարտի 10-ին Մարաշից Զեյթուն է հասնում մի պատվիրակություն գերմանացի Բլանկի գլխավորությամբ: Անձնատուր լինելու Բլանկի առաջարկին հայերը պատասխանում են. «Ցավալին այն է, որ Գերմանիայի նման քրիստոնյա պետությունը քաջալերում է Թուրք ոճրագործներին. հայերի դժբախտության պատճառը Գերմանիան է»: Եվ ապա «...Թուրքերը մեզ ոչ թե կենդանի, այլև անգամ մեր դիակները չպիտի կրնան վայելել»[2]:

Վանքում ապաստանածները Թուրքական իշխանություններից պահանջեցին ազատել բանտարկված 60 երիտասարդներին, կառավարչատունն ու զորանոցը հանձնել հայերին և հեռանալ Զեյթունից: Ժամանակ շահելու համար՝ գայմագամը ազատում է բանտարկվածներին ու միտումնավոր ձգձգում բանակցությունները, որպեսզի տեղ հասնեն Մարաշից եկող ուժերը:

Իսկ երբ այդ ուժերը տեղ հասան՝ սկսվեց հարձակումը վանքի վրա: Զգալի կորուստների գնով հաջողվում է գրավել վանքի մերձակայքի այգիները:

Մարտի 16-ին Սահակ կաթողիկոսը Կ. Պոլսի հայոց պատրիարքին գրում է. «Կառավարութիւնը միջոցներ ձեռնարկեց Զէյթունի փախստականներուն դէմ: Որովհետեւ այս միջոցները կապ ունին արտաքոյ կարգի կարեւորութիւն ունեցող զինուորական գործողութեան մը հետ, որ երբեք համեմատական չէ անոնց չարժառիթին հետ. կը վախնանք, թէ միգուցէ խնդիրը Զէյթունի հաւատարիմ ազգաբնակչութեան հարուած մը տալուն չուրջ կը դառնայ: Ապահով ենք, թէ մեծ դժբախտութիւն մը կը սպասէ մեզի... Յստակօրէն կը տեսնենք, թէ գայմագամը Զէյթունի հրամանատարին հետ համախորհուրդ եւ մէկ քանի դասալիքութիւններէ իբր առիթ օգտուելով, բնակիչներու դէմ անլուր ճնշումներ կը պատրաստէ...»[3]:

Նման կարծիք ունենալով հանդերձ, կաթողիկոսը զեյթունցիներին ոչ թե մարտնչելու, այլ՝ խոնարհվելու խորհուրդ տվեց:

Թուրքական հրանոթները սկսեցին ռմբակոծել վանքը, ապա հարձակման անցավ հետևակը: Թեժ ճակատամարտ սկսվեց: Թուրքերի հարձակումը ղեկավարում էր Զեյթունի ոստիկանապետ Սուլեյմանը: Հայերի վիճակը գնալով անհույս էր դառնում, վանքն ավերակի էր վերածվում: Ռազմամթերքն սպառվում էր: Թուրքերը փորձեցին հրդեհել վանքը: Ահա այդ պահին է, որ զեյթունցիները կատարում են հուսահատ, բայց նաև հերոսական քայլ: Ընդամենը 25 հոգուց կազմված խումբը դուրս է թռչում վանքից ու հարձակվում Թուրքական զորքի վրա: Հանկարծակիի եկած թշնամին խուճապահար փախուստի դիմեց: Երեկո-

---

[1] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 178:
[2] **Նորաշխարհյան Լ.**, նշվ. աշխ., էջ 38:
[3] **Լեփսիուս Յո.**, Հայկական ջարդերը, էջ 12:

յան կողմ վանք մտավ հայ զինված երիտասարդների մի ստվար խումբ:

Մութն ընկնելուն պես զեյթունցիները հեռացան վանքից: Նրանք ժողովրդին ուղեկցեցին քաղաք, ապա գնացին Պապիկ փաչայի քարայր:

Վանքի համար մարտերում զոհվեց ոստիկանապետ Սուլեյմանը, որի հիշատակը հավերժացնելու համար Թուրքերը Զեյթուն քաղաքի անունը փոխեցին և այն կոչեցին Սուլեյմանլը:

Զեյթունը շրջափակվեց: Այդ ժամանակ ստացվեց Ջեմալ փաչայի կոչը Զեյթունի հայությանը. «Անմեղ եւ խեղճ ժողովուրդին որեւէ հալածանք պիտի չըլլայ: Ես զինուորական հրամանատարութեան հրահանգած եմ, որպէսզի ժողովուրդին կեանքին եւ պատուին չդիպչին. ամեն մարդ իր տունը, իր գիւղը թող վերադառնայ եւ իր անձնական գործերովը զբաղուի...»[1]:

Այդ ընթացքում Թուրքերը թալանում էին Կալուջենց գյուղը. բանակի հրամանատարությունը պատրաստում էր «փախստականների և ապստամբների» ցուցակները, որոնց մեջ մտցվում էին նաև դասալիքները: Մոտ 450 երիտասարդ հանձնվեց որպես դասալիք:

Արգելվեց բնակավայրերից դուրս գալ առանց թույլտվության:

Մարտի 25-ի առավոտյան զանգերը ժողովրդին եկեղեցիներ հրավիրեցին: Քաղաքը լեփ-լեցուն էր զինվորներով: 31 հոգու կանչեցին զորանոց: Դրանք քաղաքի ազդեցիկ մարդիկ էին:

Ալի Հայդարը հոխորտաց. «Նազարէթ Ջաուշը նկուղ նետեցի, ամբողջ քաղաքը պաշարուած է... ոչ ոք կրնայ ներսէն դուրս եւ դուրսէն ներս մտնել: Եթէ 12 ժամէն ձեր բոլոր զէնքերը չյանձնէք, քաղաքը պիտի ռմբակոծեմ...:

Զէյթունի մեջ ձեր բնակութիւնը կառավարութեան կողմէ յարմար չի նկատուիր: Այսօր մայրամուտէն առաջ ընտանեօք Մարաշ պիտի երթաք»: Իսկ զորքերի հրամանատարը Բերդում փակվածներին հրամայեց. «Առ այժմ ձեր բնակած զօրանոցը պարպել եւ Զէյթուն տեղափոխուիլ, կամ թէ կառավարութիւնը բնակչութիւնը... կը տեղափոխէ Մարաշ: Ձեր ձեռքը գտնուող բոլոր զէնքերը... պէտք է յանձնէք»[2]:

Այդ ընթացքում հավաքել էին նաև նրանց ընտանիքների անդամներին՝ 96 հոգու, որոնց առանց սննդի պաշարի, առանց հետները հագուստեղեն և այլն վերցնելու զինվորների մեծ խմբով ոտքով ճամփա հանեցին: Տղամարդկանց տանում էին չղթայակապ: Ախբրդաղ լեռան ստորոտին Թուրք գյուղացիները պահանջեցին աքսորյալներին իրենց հանձնել: Սակայն այդ պահանջը մերժվեց: Հայերին Մարաշ հասցրեցին:

Մարտի 30-ին նրանց Թուրք ամբոխի հայհոյանքների, հարվածների ուղեկցությամբ քաղաքից հանեցին և խոշտանգումներով հասցրեցին Օսմանիե: Ապրիլի 2-ին նրանց միացավ Զեյթունից եկած երկու նոր քարավան: Բոլորին գնացքով ուղարկեցին Տարսոն, որտեղից սայլերով տեղափոխեցին Բոզանթիի ռազմական կայանն ու տեղավորեցին վրանների տակ: Հավաքվեց 700 բոնագաղթված, որոնց ապրիլի 22-ին ուղարկեցին Կոնիա: Այստեղ տղամարդկանց

---

[1] ***Նորաշխարհյան Լ.,*** *նշվ. աշխ., էջ 45:*

[2] *Նույն տեղում, էջ 151:*

բաժանեցին և տարան բոլորովին այլ ուղղությամբ: Հավաքված ամբոխը քարեր, այլևայլ առարկաներ էր շպրտում հայերի վրա, հարձակման փորձեր կատարում, աղջիկներ պահանջում: Այսպես ամեն օր մինչև մայիսի 7-ը: Նորից գաղթ, ոմանք ձիով, մյուսները հետիոտն: Ով ձիերի քայլքից հետ էր մնում՝ հարվածների էր արժանանում: Երեք օր անց հասան Կարա-Բունար և Սուլեյմանիեի ճահճուտները: Այստեղ եկան 6000-8000, իսկ Դեր Զոր՝ 15.000-19.000 զեյթունցիներ: Անվերջ քարավաններ անցան Մարաշով, Ադանայով ու Հալեպով:

Այս առիթով Հր. Աճառյանը նկատում է, որ երբ տեղահանության հրամանը ստացվեց, զեյթունցիները «վարանման մէջ էին, ոմանք մերժեցին պետական հրամանը եւ որոշեցին տեղի վրայ մնալ ու կռուով պաշտպանել իրենց գոյութիւնը մինչեւ վերջ:

Ուրիշները խոհեմութիւն էին համարում հնազանդուելը: Կիլիկիայի Սահակ կաթողիկոսը միջամտեց եւ յորդորեց նրանց, որ այդ անխոհեմ քայլին չդիմեն: Թուրքիան նախկին Թուրքիան չէ եւ ըմբոստներին անխնայ պիտի կոտորէ: Դժբախտաբար զեյթունցիներն էլ լսեցին յորդորը եւ մնացեալ հայութեան հետ անապատների ճամբան բռնեցին»[1]: Մարտի վերջերին Զեյթունից ու մերձակա բնակավայրերից տեղահանեցին 18.000 հայի և քշեցին Կոնիա-Էրեյլի ճանապարհով: Հազարավորներ ընկան քաղցից, համաճարակից, բիրտ վարմունքից: Եղան կանայք, որ մի կտոր հացի համար իրենց երեխաներին վաճառեցին գնչուներին:

Կ. Պոլսում Բուլղարիայի ներկայացուցիչ Ն. Կոլուչևը 1915 թ. մարտի 17-ին գրում է իր երկրի վարչապետ Վ. Ռադոսլավովին, որ Զեյթունում բնակչությունն ընդդիմացել է զորակոչին: Հայերը «հարձակվել են բանտի վրա ..., կոտորել են պահակախմբին և ազատել (հայ) բանտարկյալներին... Շուրջ 30 ոստիկաններ և զինվորներ, ինչպես նաև Մարաշի ժանդարմերիայի պետ Սուլեյման բեյը սպանվել են: Ապստամբները նահանջել են Զեյթունից դուրս գտնվող վանքը և ամրացել: Այնտեղ ուղարկվել է զորք և հրետանի: Թուրքերը Զեյթունում մեծ անկարգություններ են կատարել»[2]:

Հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ իրողության վրա:

Մի չվեյցարացի (տե՛ս «Quelques documents», Ժնև, 1916) գրում է, թե X-ի հետ զրույցից ինքը պարզել է՝ Հալեպից մեծ զինվորական ուժեր են շարժվում Զեյթունի վրա: Այդ X-ը նաև ասել է, որ «հայերը չեն ուզում ապստամբել և պիտի համբերությամբ տանեն կառավարության բոլոր արածները»:

Բազմաթիվ գիտակներ բացարձակապես հերքել են թուրքական պնդումը, թե զեյթունցիների ըմբոստությունը կազմակերպվում էր «դրսի ուժերի» կողմից:

Գերմանիայի հյուպատոսը գրում է. «Զեյթունում ծագած խռովությունը արդյո՞ք թելադրված էր արտասահմանից: Ես չկարողացա այդ ապացուցող փաստերի նույնիսկ հետք գտնել... Ընդհակառակը, ներքին ցավերից ծագած

---

[1] **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., էջ 376:

[2] Геноцидът над арменците в Турции в светлината на българските дипломатически документи. София, 1995, фонд № 321, оп. 1, д. 2461, с. 2.

պատճառները լրիվ բավարար են այդ խռովությունները մեկնաբանելու համար:

... Կառավարությունը մարտի սկզբներին քրիստոնյա զինվորների համազգեստն ու զենքը վերցրել էր»[1]:

Վալի Ջելալ բեյը, որ կոտորածներին դեմ էր, Ռեսլերին ասել է. «...Ակնհայտ է, որ Թուրքական կառավարությունում գերիշխող է դարձել մի ուղղություն, որ հայերին ամբողջությամբ դիտում է որպես կասկածելի կամ մանավանդ որպես թշնամի: Ինքն այս փոփոխությունը դժբախտություն է համարում իր հայրենիքի համար և ինձ խնդրեց նորին գերազանցութեան՝ Կայսերական դեսպանին առաջարկել գործելու այս ուղղութեան դեմ»: (Տե՛ս Ռեսլերի 1915 թ. ապրիլի 12-ի զեկույցը):

Այսինքն՝ ապրիլի սկզբից հայերի բնաջնջման որոշումն արդեն կայացված էր:

Սահակ կաթողիկոսը Զավեն պատրիարքին ապրիլի 21-ին գրում է. «Զեյթունի Հյուսեին Հյուսնի գայմագամի, Սուլեյման բեյ հիանապետի, մուֆթիի և կառավարության պաշտոնյաների, որոնք կառավարության վարկն աղավաղեցին, գործած անլուր խժդժություններն ու բռնությունները միայն նպատակ ունեին խաղաղ ժողովրդին ծայրահեղութեան գրգռելու, որպեսզի կառավարությունը առիթ ունենա բնաջնջելու: Հակառակ այդ ամենին ժողովուրդն համբերում է ամեն ինչ և մերթ ընդ մերթ տրտունջներ է արտահայտում... Մի քանի դասալիքներ, որ լեռն էին փախել, փորձեցին ժողովրդին հորդորել միասին ընդդիմանալու, բայց խաղաղասեր ժողովուրդը նրանց չանսաց... (իսկ) դասալիքներին բռնելու համար ուղարկված 16 ոստիկանները ... շրջակա գիւղերում նոր խժդժություններ գործեցին... ժողովուրդը զինաթափվեց...

Մարտի 25 (ապր. 8-ին). երբ 30 նշանավոր անձինք զորանոց կանչվեցին, գայմագամ Խուրշիդ փաշան նրանց այլևս բաց չթողեց: Առանց ժամանակ տալու, որ ճանապարհի համար անհրաժեշտ պատրաստություններ տեսնեն, նրանց աքսորեցին իրենց կանանց ու երեխաների հետ նախ Մարաշ, ապա Օսմանիե և Ադանա»[2]:

Մարաշի որբանոցի վարիչ Կարլ Բլանկը գրում է. «Մարտի սկզբներից ի վեր այստեղ դժվար ժամանակներ են քրիստոնյաների համար, որովհետև ավազակների հետ կառավարության մի ընդհարման ժամանակ Զեյթունի լեռներում շատ ոստիկաններ սպանվեցին: Դա այնքան հուզեց իսլամ ժողովրդին, որ եթե Տերը հրաչք չգործեր, անկասկած, մեծ կոտորած էր տեղի ունենալու... Զինվորագրության ժամանակ կառավարությունը անասունները բռնագրավեց, մասնավորապես քրիստոնյաներն էին շատ հաճախ սաստիկ հարստահարվում: Զնայած դրան, նրանք չարունակեցին մնալ խաղաղ... Բայց վերջապես եկավ մի պահ, երբ ճնշումն ավելի ծանր դարձավ և նրանք դիմեցին իրենց անձը պաշտպանելու: Զինվորական ծառայության տարված քրիստոնյաների նկատմամբ անպատշաճ վարմունքի պատճառով շատերը դասալիք դարձան... Զինվորա-

---

[1] ***Տաշեան Հ.,*** *Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վաւերագիրներու համեմատ, Վիեննա, 1921, էջ 150-152:*

[2] *Նույն տեղում: էջ 157-160:*

կանները ստիպված էին սովից տառապել, նաև հաճախ էին գանակոծվում: Վերջապես նրանցից խլվեցին նաև զենքերը, նախապես ստիպելով հետ տալ համազգեստները: Դրանով մահմեդականների շրջանում տարածվեց նույն կարծիքը, թե արդեն ժամանակն է իրենց սրերը նորից սրելու՝ քրիստոնեաների դեմ կռվելու համար: Այս մասին բացեիրաց էին խոսում... Բնականաբար, կոտորածի երկիւղը ծանրորեն էր ազդում մտքերի վրա: Զեյթունի դասալիքներն ավելի ու ավելի լեռներն էին քաշվում: Զեյթունի բնակիչներից չատերին Թուրք պաշտոնյաներն արդեն վաղուց հարստահարել էին... Ի վերջո կառավարութիւնը զորք ուղարկեց Զեյթունի դեմ»[1]:

Զեյթունում զորակոչ հայտարարվեց 1914 թ. օգոստոսի 10-ին. պահանջում էր, որ մինչև 45 տարեկան բոլոր տղամարդիկ պատրաստ լինեին բանակ զորակոչվելու: Զեյթունցիները, չնայած իրենց կիսանկախ վիճակին, ենթարկվեցին զորահավաքի պայմաններին, բացի 25 երիտասարդներից, որոնք բարձրացան լեռները, ինչպես մեծ թվով մահմեդականներ, որոնք դասալիք դարձան: Հայերի նշված 25 հոգանոց խումբը ստեղծվել էր դեռ 1913 թ. և զորակոչի հետ որևէ առնչություն չուներ:

Այսպիսով, Զեյթունի ու նրա շրջակայքի զանգվածային բռնագաղթն սկսվեց մարտի 23-ին և արդեն մայիսի կեսերին լեռնաշխարհը դատարկված էր: 18.000 հայից տեղում թողեցին միայն վեց արհեստավորի:

Անհնար է չնշել, որ այդ ամենին տարօրինակ էր վերաբերում Սահակ կաթողիկոսը: Ապրիլի 15-ին նա գրեց. «Զէյթունի բնաջնջումը ատեանի մէջ ծրագրաւորուած էր ու գոհ ըլլալու ենք, որ գաղթականութեան վերածուեցաւ, որ ապագային կրնայ դարմանուիլ»[2]:

Իսկ թե կաթողիկոսին գոհացնող այդ բռնագաղթն ի՞նչ էր նշանակում, վկայում են ականատեսները. «Իմ սեփական աչքերովս տեսայ յատկանշական պարագայ մը: Զէյթունի քաղաքացի մը, որ չատ հարուստ էր, իբրեւ խլեակ իւր հարստութեան, երկու այծ կը քշէր հետը տարագրուած ատենը: Վրայ հասաւ ժանտարման եւ բռնեց երկու անասունները: Հայը խնդրեց, որ զանոնք իրեն ձգէ, աւելցնելով, թէ ապրելու ուրիշ ոչ մէկ բան ունէր... Ժանտարման սկսաւ հարուածներ տեղալ, մինչև որ խեղճը գլորուեցաւ փոշիին մէջ եւ փոշին ալ վերածուեցաւ արիւնաշաղախ ցեխի: Այն ատեն երկու հարուած ալ տուաւ հայուն եւ երկու այծերը առած ելաւ գնաց»[3]:

Թեոդիկը պատմում է, որ կիլիկիացի մի հայ կին գաղթի ճանապարհին երեխա է ծնում և որովհետև ուժասպառ էր եղել, թե՛ ինքը և թե՛ նորածինը դառնում են անգղների կերակուր: Վկայում է հայ զինվորը. «Անգամ մը ես ու ընկերս Կիւլեկ Պողազիէն կանցնէինք ձիով... Դիտեցինք, որ խոշոր թռչուններ ձորի մէջ կ'իջնէին ու կ'ելնէին: Հոն ուղղեցինք քայլերնիս... Ծառի մը տակ կին մըն էր պառկեր, կէս-մեռել մը գրեթէ: Կաղկանձիւն մը կը լսուէր և ոտքի տակ

---

[1] ***Տաշեան Հ.,*** *Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վաւերագիրներու համեմատ, Վիեննա, 1921, էջ 157-160:*

[2] *«Յուշամատեան Մեծ եղեռնի 1915-1965», Պէյրութ, 1965, էջ 478:*

[3] *Նույն տեղում, էջ 479:*

տարօրինակ կծիկ մը կ'երեւար... Երկու քայլ եւս մօտեցանք: Կծիկը՝ մօրէ մանկիկ մըն էր, հազիւ քանի մը օրուան, աւելի ճիշդ՝ դիակ մը, քիթ-բերանը թռչուններէն կտցահար: Եւ հոգեվար մայրը չէր դադրեր ձեռքն օդին մէջ շարժելէ դիակէն ագռաւները վանելու օրհասական ճիգով մը»[1]:

Մի թուրք մոր գրկից հափշտակում է երեխային և «ինչպես որ հաւի մը գլուխը ոլորելով կը փրցնեն. իր երկու բիրտ ձեռքերովը բռնեց մանկիկին պարանոցը, սեղմեց, լարեց, պլորեց, գլուխը վզին վրայ գալարեց, խեղդեց ու վերջին շարժումով մը դիակը նետեց քանի մը քայլ անդին»[2]:

Կիլիկիահայերին գաղթեցրեցին հանկարծակի, առանց նախազգուշացման և նախապատրաստման համար ժամանակ տրամադրելու: Նրանց թույլ չէին տալիս նաև ճանապարհին սնունդ ձեռք բերել, ստելով, թե պետությունն կհոգա գաղթվողների պահանջմունքները: Իսկ պետությունը ոչ միայն չէր հոգում, այլ քարավանները ուղեկցողների ձեռքերին ազատություն էր տվել տարագիրների հետ վարվելու սեփական քմահաճույքով՝ կոտորելու ու կողոպտելու հայերին: Ոստիկանները նկատելով, որ մի քանի աղջիկների մազերի մեջ ոսկի էր թաքցրված, հարձակվեցին նրանց վրա, մազերը պոկեցին և ոսկիները հափշտակեցին:

Զեյթունից աքսորված հայերի մասին Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լեսլի Դևիսը գրում է. «Աքսորյալները հիմնականում կանայք, ծերեր ու երեխաներ էին. նրանց գանահարում ու ծեծում էին կենդանիների պես, կանանց ու աղջիկների վրա բռնանում էին ոչ միայն նրանց պահապանները, այլև գյուղերի վայրենիները, որոնցով անցնում էին աքսորյալները, քանի որ առաջինները թույլ էին տալիս, որ երկրորդները գիշերով մտնեն նրանց ճամբարը և նույնիսկ աղջիկներին բաժանում էին գյուղերում: Այդ թշվառ արարածները կգերադասեին սպանվել իրենց տներում, քան այս ձևով քարշ տրվեին երկրով մեկ: Մոտ երկու հազար աքսորյալ անցավ Ուրֆայով և բոլորն էլ ավելի մեռած, քան կենդանի: Հարյուրներով սովամահ էին լինում, մեռնում ծարավից՝ բռնություններից կամ առևանգվում Աննագա արաբների կողմից ու տարվում անապատ: Մենք այս մասին լուր ունենք, քանի որ մի երիտասարդ հայ բժիշկ, որն այդ նույն վայրերում կառավարության զինվորներին էր բուժում, փախավ մեզ մոտ և պատմեց իրողությունը»[3]:

Սկզբում քարավանները փոքր էին՝ 50-60 ընտանիք և հիմնականում ուղարկվում էին երկու ուղղությամբ՝ դեպի Դեր Զոր և Կոնիա: Թուրքերը ձգտում էին, որ քարավաններն աչքի չընկնեին: Դրությունը փոխվեց ապրիլին: Ռեսլերը գրեց. «Ամեն օր Զեյթունից 200-300 հոգի փոխադրվում է ... խիստ հսկողության տակ և գիշերվա կարճ դադարից հետո տարագրվում են այլևայլ ուղղություններով... Կառավարությունը որոշել է մյուս բոլոր հայաբնակ գավառներն էլ բռնի միջոցներով դատարկել: Տարագրվողների թշվառությունն անհնար է

---

[1] ***Արզումանյան Մ.,*** *Դարավոր գոյամարտ, Ե., 1989, էջ 401:*

[2] *Նույն տեղում:*

[3] ***Դևիս Լ.,*** *Սպանդի նահանգը, Ե., 2001, էջ 270-273:*

նկարագրել: Զանգվածներով գնում են ծերեր, հաշմանդամներ, 4-5 տարեկան բոկոտն երեխաներ»[1]:

Զեյթունից մայիսի 10-ին դուրս եկած քարավանին գերմանացի ու թուրք սպաները բռնադատում էին, որպեսզի հայերը լքեին իրենց ունեցվածքը և դրանց տիրանային Թրակիայից եկած մուհաջիրները[2]: Ելնելով այս իրողություններից՝ Ջ. Բրայսը գրում է. «Կիլիկիայի տարագրությունները պետք է ծրագրված լինեին ոչ ուշ, քան մարտ ամիսը, հավանաբար նույնիսկ ավելի վաղ»[3]: Այսինքն՝ Վանի իրադարձություններից 1-1.5 ամիս չուտ: Այդ միտքը հաստատում է նաև Ռուհրի մերձակայքում բնակվող մի օտարերկրացի. «1915-ի մարտ ամսին սկսվեցին առաջին աքսորումները... Երբ դա սկսվեց, հազվադեպ դարձան օրերը, երբ մեկ և ավելի քարավաններ չէին անցնում»[4]:

Ադանայի մերձակայքի մի քաղաքից 1915 թ. մայիսի 30-ին գրեցին. «Սկսած ապրիլի առաջին օրերից Զեյթունից ու շրջակայքից քարավաններ եկան ու անցան հարավ՝ Միջագետքի անապատները: Միայն մեր քաղաքից անցած տարագրյալների թիվը հասնում է 6-7 հազարի... (Զեյթունի) ամբողջ գավառը դատարկված է: Տարագրվածների տեղը բռնում են Բոսնիայից եկած մուհաջիրները: Թուրքերը կատարյալ հրճվանքի մեջ են: Անհնար է նկարագրել տարագրվող հայերի վիճակը՝ բռնաբարություն, բռնի մահմեդականացում, կանանց ու աղջիկների առևանգում, դրանք բոլորը սովորական երևույթներ են: Զեյթունի հայ ժողովուրդը ոչնչացված է, բացառությամբ մեկ կամ երկու գյուղերից»[5]: «The Outlook» թերթը 1915 թ. օգոստոսի 18-ին գրեց. «20.000 թուրք հարձակվեց Զեյթունի վրա և հաստատվեց հայերին պատկանող տներում, այդ տների նախկին տերերը ցիրուցան են եղել կայսրությունում: Մի մասին քշել էին Պարսկական ծոցի անապատները, մյուսներին՝ մալարիաբեր ճահիճները»:

Զեյթունցիների մի քարավանի մասին գրում է նաև ուրֆացի Պ. Տեր-Պետրոսյանը. «Ու ահա մեր աչքերուն պարզուեցաւ սարսռազդեցիկ տեսարան մը: Գաղթականներու առաջին կարաւանն էր, որ կը տեսնէինք, հետիոտն, պատռտուած հագուստներով, յոգնած ու չարչարուած կիներու եւ փոքրիկներու բազմաթիւն մըն էր, որ քաղաք կը մտնէր: Այր մարդիկ ցանցառ էին, մեծ մասամբ ծերունիներ էին: Բոլորի դէմքին վրայ դրոշմուած էին իրենց կրած տառապանքները: Սակայն ինչ որ կը կարդացուէր անոնց աչքերուն մէջ, հպարտութիւնն էր, բոլորն ալ կը ջանային թիւրք խուժանին ցոյց չտալ իրենց յուսահատութիւնն ու տառապանքը:

Թիւրք խուժանը չորս կողմէն կը հայհոյէր, կը սպառնար արիւնաքամ այդ բազմութեան»[6]:

---

[1] **Bryce J. Wiscount**, The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916. Documents Presented to Wiscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs. London, 1916, p. 544.

[2] Նույն տեղում, էջ 483-484:

[3] Նույն տեղում, էջ 466:

[4] Նույն տեղում, էջ 533:

[5] Նույն տեղում, էջ 544:

[6] **Սահակեան Ս.**, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրութ, 1955, էջ 765:

«Զեյթունում,- հեռագրում է Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանության թարգման Սերաֆիմովը 1915 թ. մարտի 15-ին,- որտեղ ուղարկվել է մի գորաջոկատ այնտեղ թաքնված դասալիքներին բռնելու համար, տեղի է ունեցել բախում, որը հանգեցրել է ռազմական դատարանի ստեղծմանն ու բնակչության դաժան հաշվեհարդարի: Դյորթ-Յոլի ողջ արու բնակչությունն աքսորված է»[1]:

«Վերջերս,- գրում է Եգիպտոսում Ռուսաստանի դեսպանորդ Սմիռնովը Սազոնովին,- թուրքական 12 հազարանոց զորքը գրավեց Զեյթունը, որը հանդիսանում է հայերի պատվարը և մոտ չէր թողնում թուրքական ուժերին: Սպառնալիքների, խաբեության և խոստումների միջոցով թուրքերը հայերին մղեցին հանձնվելու, և քաղաքը գրավելով, ամենադաժան միջոցներ կիրառեցին նրա բնակչության և պաշտպանների հանդեպ: Հազարավոր մարդիկ մորթվեցին ու կոտորվեցին... Հայերի դաժան կոտորած տեղի ունեցավ նաև Այբիստանում (Մարաշի կազա)»[2]:

Սակայն Զեյթունում կատարվածի գնահատականները միանշանակ չեն: Դանդինին գրում է. «Զենք հանձնելու թուրքական պահանջին հայերը պատասխանեցին կրակոցներով...»[3]: Տրամագծորեն հակառակ կարծիքի էր Թ. Լորենսը. «Հայերը լավ զինված էին ու կազմակերպված, բայց առաջնորդները նրանց բախտի քմահաճույքին թողեցին: Տղամարդկանց սպանեցին, կանանց և երեխաներին, մերկ ու սոված, ձմռան կեսին քշեցին անապատ որպես ավար ամեն անցորդի համար՝ մինչև փրկության գար մահը: Երիտթուրքերը հայերին ոչնչացնում էին ոչ թե որովհետև նրանք քրիստոնյա էին, այլ՝ հայ»:

Նույնիսկ պաշտոնական Թուրքիան խոստովանեց, որ Զեյթունի ժողովուրդը որևէ հակապետական արարք թույլ չէր տվել: Բարձր Դռան հայտարարության մեջ նշվում է. «Մարտի 31-ին (1915 թ.) մի հայ ավազակախումբ ամրացավ վանքում ... և կրակ բացեց վանք մտնող վաշտի վրա»: Սպա «դասալիքներից ե հայ ավազակներից կազմված խմբերը հարձակվեցին Զեյթունի կառավարական շենքի վրա և փորձում էին ջնջել խալամ ժողովրդին...»: Այսինքն՝ ոչ թե զեյթունցի հայ ժողովուրդն էր ընդվզել իշխանությունների դեմ, այլ՝ «ավազակախմբերը»:

Զեյթունցիներն ապստամբելու մտադրություն չեն ունեցել, գրում է Գրիգորիա ծ. վրդ. Պալաքյանը: Ընդհակառակը, նրանք մի քանի անգամ լրատարի միջոցով Կիլիկիայի կաթողիկոսից և Մարաշի հայ երևելիներից ցուցում էին ստացել որևէ ծայրահեղ միջոցառման չդիմել, ինչից զեյթունցիները զայրացել էին և աքսորից վերադառնալուց հետո դժգոհում էին, թե կաթողիկոսն իրենց խանգարեց ինքնապաշտպանության կանգնելու:

Նրանց զայրույթը հիմքից զուրկ չէր: Ջեմալ-Սահակ «ընկերությունը» ամենամեծ վնասը հասցրեց զեյթունցիներին: Թերևս դա նույնպես դեր խաղաց, որ ազատագրական կռիվների փառավոր ուղի անցած, թուրքական բազմահազարանոց բանակների պարտության մատնած զեյթունցիները 1915-ին չկարողացան համախմբվել ու ջարդարարներին հակահարված տալ: Եթե Օս-

---

[1] АВПР, Политархив, д. 3504, л. 19.

[2] Նույն տեղում, д 3804, л. 34.

[3] Wien HHSTA PA XXXVIII 366, Aleppo, 27.08.1915.

մանյան կայսրության հայաբնակ շրջանների հայության կեցվածքի համեմատությամբ զեյթունցիների գործողությունները կարելի էր անվանել հերոսական, ապա նույն այդ զեյթունցիների անցյալի ընդվզումների (1862 թ., 1895 թ.) համեմատությամբ՝ բարոյամարտական ոգու նահանջ, պարտվողականություն:

«Հնչակը» 1915 թ. օգոստոսին գրեց, որ Կիլիկիայում 40 հազար մարդ կոտորված է: «Թուրքերը մտադիր են բոլոր շրջանները հայերից դատարկել եւ հայերին հետիոտն ուղարկել անապատները՝ նրանց ամբողջ ունեցուածքը թալանելուց յետոյ, որի հետեւանքով անապատում նրանք քաղցից մեռնում են»: Թերթը մեջբերում է կատարում ականատեսի պատմածից. «Մի օր երբ արթնացայ, տեսայ, որ պատուհանիս առջեւ մէկին կախել են, եւ շուրջը հաւաքուել է խուժանը: Մի ուրիշ օր պատուհանիս տակից ... հազարաւոր հալածականներ էին անցնում ... ամենաողորմելի վիճակում»:

Թուրք զինվորները խզակոթերով ծեծում էին հետ մնացողներին և ստիպում անպայման քայլել: Մի հայ գրկած տանում էր իր մեկ օր առաջ ծնված տղային: Հետևից գնում էր երեխայի տանջահար մայրը՝ Թուրքի գավազանի հարվածների տակ... Այս դժբախտները օրեր շարունակ բան չէին կերել և քայլում էին քշվելով Թուրք զափթիեի անողոք գավազանից: Քայլել չկարողացողներին թողնում էին ճանապարհին քաղցից մեռնելու: Թերթն այն կարծիքն է արտահայտում, որ «մինչ այդ զեյթունցիները թոյլ չէին տուել, որ թուրքական վաշտերը մտնէին լեռնաշխարհ, սակայն միջամտել էին գերմանացիները, եւ հայերը համաձայնուել էին զօրքին ներս թողնել: Բայց զօրքը հենց հասնում է Զէյթուն, սկսում է ջարդը: Խաբուած զէյթունցիները զէնքի են դիմում, բայց արդէն ուշ էր: Բնակչութիւնը տարագրւում է: 2000 մուհաջիր է բնակեցւում Զէյթունում: Կիլիկիայից 30 հազար հայ քշուեց Կոնիա, Կեսարիա, Կաստամոնու, մի մասն էլ՝ Միջագետքի եւ Սիրիայի անապատները»:

Հ. Մորգենթաուի 1915 թ. ապրիլի 30-ի հեռագրում կարդում ենք. «Հալեպի հյուպատոսից այսօր ստացված զեկուցագրից հայտնի դարձավ, որ թուրքական իշխանություններն անհավատալի դաժանությամբ են վերաբերվում Զեյթունի և Մարաշի հայ ազգաբնակչությանը, հիմնվելով մի քանի դասալիքների արարքների վրա, նրանք տեղահան են անում և ցրում անմեղ բնակչության մի զգալի մասին»[1]:

Իսկ 25 օր անց, մայիսի 25-ին գրեց, որ Զեյթունում կողոպտված ու ավերված են հայկական շատ գյուղեր, բնակչությունը տեղահանված է ու ջարդված: «Թուրքական իշխանությունների գործողություններն ուղեկցվում են կոտորածներով, բռնաբարություններով և դիակապտությամբ... Այդ քաղաքականությունը հանգում է հայերի զանգվածային արտաքսմանը, որի նպատակներից մեկն է նրանց զրկել գոյության միջոցներից»: Հայերին ոչնչացնում են, մեռցնում և կշարունակեն այդ անել: Ամեն օր դա հաստատող նորանոր լուրեր են հասնում: Թուրքիայում թագավորում է ահաբեկչությունը, իսկ Բարձր Դուռը «մշտապես ժխտում է փաստերը կամ ամբողջությամբ խեղաթյուրում դրանք»[2]:

---

[1] **Morgenthau H.,** նշվ. աշխ., էջ 349-350:

[2] **Walker Ch.,** Armenia. The Survival of a Nation. New York, 1980, p. 352.

Զեյթունի իրադարձությունների մասին Կարմիր խաչի քարտուղար Միսիոներ Թրոպրիջի տեղեկագիրը տպված է «Կապույտ գրքում»: Այդ տեղեկագրում նա նկարագրում է. «...1914 օգոստոսի 14-ին Զէյթուն կու գայ Մարաշի կառավարիչ Ալի Հայտար փաշա 600 զինուորով... Հայտար փաշան Զէյթուն գալով կը պահանջէ, որ իրեն յանձուին լեռը գտնուող 25 փախստականները: Ժողովուրդը գոհացում կու տայ կառավարիչին: Ասոր վրայ Ալի Հայտար փաշա յայտարութեամբ մը կը պահանջէ ժողովուրդին զէնքը եւ այն աստիճան խստութիւն կը բանեցնէ, որ զէնք չունեցողը կը ստիպուի հրացան մը գնել եւ յանձնել կառավարչին, ազատուելու համար խոշտանգումեւն... Կառավարիչը Մարաշ վերադարձին իր հետ կը տանի քանի մը հայ երեւելիներ, զինուորական ծառայութեան պատրուակին տակ, սակայն անոնք, գիտնալով թէ ինչ վերապահուած է իրենց, կը փախչին Զէյթուն: Խիստ խուզարկութիւն կը սկսի...

Հարստահարութիւններն այնքան անտանելի կը դառնան, որ փետրուարի վերջերը քանի մը տաք գլուխներ կը ծրագրեն դիմադրել կառավարութեան... Զէնքի տակ գտնուող 25 երիտասարդներ ... լեռ կ'ելլեն եւ Մարաշի ճամբուն վրայ կը յարձակին ինոր ոստիկաններու վրայ: Զէյթունի հայութիւնը բացէ ի բաց կը դատապարտէ այս ընթացքը եւ կ'օժանդակէ կառավարութեան՝ զանոնք զսպելու համար:

Սակայն կառավարութիւնը պատրուակ կը փնտռէր քանդելու Զէյթունը եւ 1915 մարտի 24-ին (Հ. տ.) 5000 զինուոր կը համախմբէ Զէյթունի մօտ...

Յարձակումը կը սկսի, սակայն հայերը կը սպաննեն սպայ մը եւ բազմաթիւ զինուորներ... Ապրիլի 8-ին թուրքերը կրակի կու տան վանքը...», որից հետո սկսվեց տեղահանությունը: Զեյթունցիները տեղահանվեցին երեք ուղղությամբ՝ Կոնիա, Հալեպ, Դեր Զոր մինչև Բաղդատ:

«Գոնիայի կողմերը այնքան թշուառ վիճակի մէջ կը գտնուին, որ... Գարա Բունարի կայարանը 6000-ի վրայ օրական 150-200 հոգի կը մեռնէր անօթութենէ: Զէյթունի ընդհանուր բնակչութիւնը 26 հազար հոգի ըլլալով, 19 հազար քշուած են Միջագետքի շրջան, ուր ջարդուած են ամենամեծ մասամբ»[1]:

Ընթերցողը նկատում է, որ ամենատարբեր ազգության, դավանանքի, զբաղմունքի տեր անհատների վկայությունները հաստատում են, որ Զեյթունում հայերի ապստամբության մասին թուրքական պնդումները հերյուրանք են, որ Լեռնաշխարհում միայն փոքր ընդվզումներ էին եղել, որոնց տատմերը թուրքական իշխանությունների բռնություններն ու սադրանքներն էին:

Թուրքական քաղաքականության նպատակն ակնհայտ էր, հասկանալի բոլոր նրանց համար, ով քիչ թե շատ ծանոթ էր իրավիճակին:

Լեփսիուսը 1915 թ. հունիսի 22-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը գրեց. «Զեյթունի և Տավրոսի բարձրավանդակի 27.000 բնակիչներից տղամարդկանց աքսորեցին չոգ Դեր Զոր... (և ավելի հարավ) արաբ բեդվինների մոտ (50 կմ հարավ-արևելք), իսկ կանանց, աղջիկներին և երեխաներին, ընդհակառակը, տեղափոխեցին Անգորայի վիլայեթ (500 կմ հյուսիս-

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 481-482:

արևելք), այսինքն՝ տղամարդկանց իրենց ընտանիքներից անջատեցին 1000 կիլոմետրով: Աղջիկներին բռնությամբ տանում էին թուրքական հարեմներ, մահմեդական գյուղերում բռնաբարում էին կանանց: Նույն ժամանակ Զեյթունի հայաթափված շրջաններում բոսնիացի մահմեդականներին բնակեցնելու համար կառավարությունը տրամադրեց 20.000 թուրքական ֆունտ, իսկ հայերը ոչ միայն զրկվեցին իրենց ունեցվածքից, այլև աքսորվեցին առանց նյութական որևէ միջոցի»:

Թալեաթը զեյթունցիներին մեղադրում էր, որ նրանք Հնչակյան Զաքըր օղլու ղեկավարությամբ որոշում էին կայացրել ռազմամթերք ունենալու համար հարձակվել պաշտոնատարների վրա, սպանել նրանց իրենց ընտանիքի անդամների հետ, ոչնչացնել հեռագրագծերը: Հայերը Մարաշ-Զեյթուն ճանապարհին հարձակվեցին թուրքական զորաջոկատի վրա, վեց հոգու սպանեցին, հեռագրագծերն ավերեցին: Սպանեցին խաղաղությունը վերականգնելու համար Զեյթուն գնացած մութեսարիֆի օգնականին, հարձակվեցին զորանոցի վրա, սպանեցին մի զինվորի և մի ոստիկանի, բանտերից հանեցին բանտարկյալներին, ամրացան վանքում, սպանեցին ոստիկանական հրամանատարին և 20 ոստիկանի: «Հայ հրոսակները սպանում էին խաղաղ բնակչությանը»[1]:

Փաստերի այս խառնարանն անտեղյակ ընթերցողի վրա տպավորություն կարող է գործել, որովհետև նա կտրված է հայերի ընդհանուր վիճակի և թուրք-հայկական հարաբերությունների, զորակոչ, զինաթափում ու բռնագրավումներ կատարելու անվան տակ իշխանությունների կիրառած անլուր բռնարարքների ու խոշտանգումների համաչարադրանքից:

Ահա թե ինչ են գրում ոչ թե հայ, այլ օտար ականատեսներն ու դիվանագետները Զեյթունում բռնագաղթի սկզբի ու դրա ընթացքի մասին: Հալեպում Գերմանիայի հյուպատոսը 1915 թ. ապրիլի 20-ին հայտնեց. «Մարաշի և Զեյթունի, դրանց գյուղերի, մինչև Հասանբեյլի, բոլոր հարուստ, կրթված, ազդեցիկ անձինք տարագրվում են: Զեյթունում բռնագաղթն սկսվել է, 30 ընտանիք աքսորվեց, օրերս ճանապարհ կելնեն նաև 2-րդ և 3-րդ կարավանները: Տղամարդիկ կանանցից բաժանվում են: Վերջինները տարագրվում են զինվորների ուղեկցությամբ: 22-45 տարեկան բոլոր քրիստոնյա տղամարդիկ զինակոչվել են, անպայման տարագրվելու համար: Մահմեդականները չեն զինակոչվում: Ստացված կարգադրությունների նպատակը քրիստոնյաների ոչնչացումն է...»: Ստեղծվել է սխալ կարծիք՝ իբր ամբողջ հայ ազգը կասկածելի է, անգամ՝ թշնամի[2]:

Մի քանի օր անց հայտնեցին, որ տարագրությունը լայն թափով առաջ է տարվում ամբողջ Կիլիկիայում: «Զեյթունի և շրջակայքի աքսորված հայերի թիվը հասել է 1000-ի. գուցե անգամ մի քանի հազարի: Նրանց բնակավայրերում տեղավորել են Մակեդոնիայից բերված մահմեդականներին: Աքսորը շարունակվում է»: Եվս մի քանի օր անց Ռեոսլերը գրեց. «Զեյթունի ու շրջակա

---

[1] Թալեաթի հուշագրությունները: Հայերեն չարադրանքի ձեռագիրը պահվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում:

[2] **Lepsius J.**, Bericht uber die Lage des Armenischen Volkes in der Turkei, Potsdam. 1919, s. 27.

գյուղերի տեղահանություններն ավելի մեծ ծավալներ են ընդունել: Սկսել են տարագրել նաև Մարաշից և այնպիսի եղանակներով... Բոլոր ունևոր, կրթված և ազդեցիկ անձանց անհետացնում են և հայերին վերածում առանց հովիվի հոտի»[1]: Ադանայի հայ բնակչությունը վրդովված ալեկոծվում էր, հարյուրավոր ընտանիքներ աքսորվում էին, բանտերը լեփ-լեցուն էին[2]: Երկու չարաթ անց հյուպատոսը հեռագրեց. «Լրիվ վստահելի աղբյուրներից իմացել եմ, որ Մարաշի սանջակի և Ադանայի վիլայեթի արևելյան բնակավայրերից աքսորվել է 2000 հայ ընտանիք, այսինքն 10 հազար հոգի: Տեղահանությունը չարունակվում է»[3]:

«Դեորթ-Յոլում պատրվակ դարձրեցին երկու հայի չնչին արարքը և ամբողջ արու բնակչությունը հավաքեցին և ուղարկեցին Հալեպի վիլայեթ՝ ճանապարհաչինության»[4]:

«Հայերը դավադրության կամ ապստամբության որևէ նպատակ չեն ունեցել»,- մարտի 13-ին հեռագրեց Ադանայում Գերմանիայի հյուպատոսը[5]:

Հունիսի 20-ին թվագրված մի փաստաթղթում նշվում է, որ տեղահանությունն սկսվել է նաև Հաճընում, Սիսում և Կարս-Բազարում: Տեղահանվածներից «5000-ն ուղարկվել է Կոնիայի կազա, 5500-ը՝ Հալեպ ու նրա մերձակա գյուղերն ու քաղաքները, իսկ մյուսները՝ Դեր Զոր, Ռաքքա և Միջագետքի այլ վայրեր մինչև Բաղդադի մերձակայքը»[6]: Որոշ ժամանակ անց Ռեոսլերը գրեց. «Կառավարությունը հրամայել է թե՛ Հալեպի ծովափը և թե՛ Այնթապն ու Քիլիսը, հավանաբար նաև Մարաշը պետք է հայերից դատարկվեն, իսկ այդ վայրերը ո՛չ պատերազմի գոտի են և ո՛չ էլ գտնվում են բանակի մատակարարման ուղիների վրա: Այնթապը 32.000, իսկ Քիլիսը 6000 հայ բնակչություն ունի»[7]:

Կիլիկիայից բռնագաղթվածներից Հալեպ էին հասել (մինչև օգոստոս) 2165 ընտանիք՝ 13155 հոգի: Նրանցից 3270-ը քշվել էր ավելի հարավ: Ռեոսլերը 1916 թ. հոկտեմբերի 2-ին արձանագրեց՝ Մարաշից բռնագաղթված 24 հազար հոգուց կենդանի էին միայն 4000-ը, նրանք էլ քշվում էին ավելի հարավ[8]:

Գթության քույր Բ. Ռոհները 1915 թ. սեպտեմբերի 5-ին գրում է. «Հաճիթերեի բնակիչները, որոնց չրջանում տարածվել է սև ծաղկախտը, ստիպված եղան հանկարծակի ճանապարհ ելնել: Գրեթե անճանաչելի դարձած հիվանդները երկու օրվա ճամփորդությունից հետո հասան Մարաշ, և քաղաքը վարակից զերծ պահելու համար, ստիպեցին քաղաքից դուրս խճուղու վրա կանգ առնել, կիզիչ արևի տակ: Նրանց հանգստի համար թեկուզ մեկ օր չտվեցին և առաջ քշեցին»:

---

[1] Lepsius J., Bericht uber die Lage des Armenischen Volkes in der Turkei, Potsdam. 1919, s. 47-48.

[2] Նույն տեղում, էջ 58:

[3] Նույն տեղում, էջ 66:

[4] Նույն տեղում, էջ 18, 19, 26:

[5] Նույն տեղում, էջ 19:

[6] Bryce J., նշվ. աշխ., էջ 120:

[7] Նույն տեղում, էջ 125:

[8] Lepsius J., նշվ. աշխ., էջ 301:

Զեյթունցի մի բոնագաղթված տանջահար կին գերմանացի բուժքրոջը դիմել է հետևյալ հարցով. «Ինչո՞ւ մեզ անմիջապէս չեն սպաներ: Ցերեկը ջուր չունինք, ծարաւէ տառապած մեր զաւակները կու լան, գիշերները արաբները կու գան եւ մեր անկողինները, մեր զգեստները կը գողնան, մեր դեռատի աղջիկները կ'առեւանգեն, կիները կը բռնաբարեն: Երբ այլեւս չենք կրնար քալել, ոստիկան-զինուորները մեզ կը ծեծեն: Կիները իրենք գիրենց ջուրը կը նետեն չբռնաբարուելու համար, ոմանք նոյնիսկ իրենց ծծկաններով»[1]:

Կարաւանին ուղեկցող զինվորներն ու ժանդարմները նույնպես առիթը բաց չէին թողնում տարագիրներին կողոպտելու համար:

Հայերը ժայռերից վար էին նետվում, վիրավորները խնդրում էին իրենց սպանել[2]:

Մոտիկից ծանոթանալով Զեյթունում և զեյթունցիների հետ կատարվածին, Սահակ կաթողիկոսը ամբողջությամբ փոխեց իր կարծիքը կատարվածի և զեյթունցիների կեցվածքի վերաբերյալ:

1915 թ. ապրիլի 8-ին նա գրեց պատրիարքին. «Մութեսարիֆը հետեւեալ ուշագրաւ եւ երկիւղառիթ յայտարարութիւնը կ'ընէ. «Այս 35-րդ շարժումն է, ամենէն անխոհեմը, պէտք է մտածէիք, թէ ասկէ առաջ եղած շարժումները հօր եւ զաւակի կռիւներ էին, բայց որ այսօր թշնամիներ ձեր հօր գլուխը հեծած են, պէտք չէր, որ դուք ալ անոր ոտքէն քաշէիք:

...Զէյթունցիք ոչ մէկ շարժում ըրած էին կառավարութեան դէմ: Կառավարութիւնը գոյն տուած է եւ շարունակ պաշտպանած է վայրենի եւ աւազակաբարոյ ցեղերը, իսկ զէյթունցիք սոսկ ինքնապաշտպանութիւն փորձած են: Այս անգամ ալ չարաշահ պաշտօնէից անիրաւութիւններն եղան պատճառ ներկայ կացութեան»[3]:

Գերմանացի մի հոգևորական պատմում է, որ թուրք ոստիկանները Ֆոնուզում մեծ թվով տղամարդկանց ձերբակալեցին ու տարան... Մնացածներին հրամայեցին չորս ժամվա ընթացքում ազատել իրենց տները: Թույլատրվում էր վերցնել այնքան իր, որքան կարող էին տանել չալակով կամ փոխադրամիջոցով... Նշված ժամին խեղճերը ոստիկանների հսկողության տակ գյուղից դուրս եկան առանց իմանալու, թե ուր են գնում և նորից տեսնելո՞ւ են իրենց բնօրրան... Առաջին օրերին յուրաքանչյուրին տալիս էին 30 փարա, սակայն հետո այդ վճարումը դադարեցրեցին ու միայն 150-ական գրամ ձավար էին բաժանում: Այսպես քայլեցրին չորս շաբաթ շարունակ՝ մինչև Դեր Զոր, որտեղ կանգ առան, բայց անտուն ու անհաց, անգամ արգելում էին տեղացիների հետ խոսել[4]:

Մետերնիխը նշում է, որ հայերի վերջին խմբերը հարավում, այդ թվում նաև

---

[1] **Մորգան Ժ.,** Հայ ժողովրդի պատմութիւն. իր տարեգրութեան ամենաստոյգ ժամանակներէն մինչեւ մեր օրերը, Պոսթոն, 1947, էջ 345:

[2] **Ակունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը. 1914-1916, Կ. Պոլիս, 1920: Տե՛ս «Յուշամատեան Կիլիկիոյ», էջ 479:

[3] Նույն տեղում, էջ 480:

[4] **Տաշեան Հ.,** նշվ. աշխ., էջ 196-197:

Կիլիկիայում, ցրվեցին 1916 թ.[1]: Դրսից եկած հայերի թիվն անցնում էր 8000-ից: Բացի նրանցից, Միացյալ Նահանգների հյուպատոսի տվյալներով, մեծ թվով տեղաբնակ հայեր ևս վտանգված էին տեղահանվելու, մոտ 15.000 մարդ,[2] չնայած Ջեմալ փաշան բազմիցս հայտարարել էր, որ այլևս տեղահանություն չի կատարվելու:

Ադանայում Գերմանիայի հյուպատոս Բյուգեի 1915 թ. սեպտեմբերի սկզբների տեղեկագրում նշված է. «...Այստեղ սպանված հայերի թիվը հավանաբար արդեն գերազանցում է երիտթուրքերի կողմից ջարդված հայերի թվին»[3]:

Ադանայում լույս տեսնող «Հայ ձայն» թերթը 1920 թ. ապրիլի 10-ին տպագրեց Ե. Քեհիայանի հոդվածը հայերի 1915 թ. ջարդերի մասին: «1915-ի օգոստոսի 1-ին Ղալիբ բեյն իր զորախմբով հարձակվում է Ֆնտըճագի վրա, որտեղ խմբված էր նաև Դերեքեոյի և Քիչիֆլիի հայությունը: Ջարդեց 2800 անմեղ հայերի: Տարագրության ընթացքում 1915 թ. Այրանում ամելե թաբուրի շարքերում աշխատում էին և ապա Մարաշի ճանապարհով աքսորվելու ժամանակ Ֆնտըճագի տարածքում նրանցից 1400 հոգի ջարդվեց»: Ականատեսներից մեկը պատմել է. «Տիրիչաբ կոչված վայրում 80 մետր երկարությամբ փոս փորեցին և թաղեցին կոտորվածների դիակները: Իսկ Բյուզիաճխի վայրում հայերին ջարդելուց ու մորթոտելուց հետո, դիակներն իրար վրա թափելով այրեցին: Զեթինգող, Զարալոլուփ և Դելի-Զայի ամբողջ ափերը լցված էին հայերի ոսկորներով»: Կոտորածին մասնակցեցին թուրքական գյուղերից, մասնավորապես Գյոնուքլու, Բոչնաղը, Ավնդարլը, Բոչլու, Դուդագը և Էոնսեն գյուղերի թուրքերը: 1915–1920 թթ. սպանվեց ավելի քան 5200 ֆնտըճագցի: Վերապրեց ընդամենը 200 հոգի:

Թերթենք Յո. Լեփսիուսի հավաքած վկայությունները: Կոնիայից Կարա Բունար ճանապարհին մի երիտասարդ հայուհի իր նորածին զավակին հորը նետեց, որովհետև այլևս չէր կարողանում կերակրել նրան:

Ականատեսը մայիսի 21-ին գրեց. «Զեյթունցիների երրորդ ու վերջին քարավանը մեր քաղաքից անցավ մայիսի 13-ին... Բոլորն էլ երկու օր ոտով քայլել էին տեղատարափ անձրևի տակ: Բան չէին կերել: Տեսա մի խեղճ փոքր աղջնակի, որն ավելի քան մեկ շաբաթ հետիոտն, բոբիկ քայլել էր, կրում էր միայն մի պատառոտված զոգնոց: Ցրտից ու քաղցից դողում էր և ոսկորները տառացիորեն մարմնից դուրս էին ցցված: Երկու տասնյակ մանուկների ուզեցին թողնել ճանապարհին, որովհետև քայլել չէին կարողանում: Նրանք արդյո՞ք քաղցից մեռան: Հավանական է»[4]:

Կարա Բունար աքսորվածների մասին մայիսի 14-ին գրում են, որ վիլայեթի «ամենավատառողջ վայրերից մեկում 6-8 հազար զեյթունցի հայեր են մեռնում՝

---

[1] **Լեփսիուս Յո.**, Հայկական ջարդերը..., փաստ. № 287, Մետերնիխի 1916 թ. հուլիսի 10-ի զեկուցագիրը:

[2] Նույն տեղում, փաստ. № 293, 1916 թ. օգոստոսի 13-16-ի զեկուցագրերը:

[3] Նույն տեղում, փաստ. № 165:

[4] (**Lepsius J.**), Le report secret du Dr. Johannes Lepsius, président de la Deutche Orient Mission et de la Sociétè Germano-Arménienne, sur les massacres d'Arménie, Beirut, 1917, p. 13.

օրը 150-200 մարդ: Մալարիան (ճահճատենդը) մեծ ավերմունք է գործում սրանց չրջանում, քանի որ լրիվ զրկված են սնունդից և օթևանից»[1]:

«5-7 դյորթյոլցիների Ադանայում հրապարակավ կախելուց հետո, այս բազմամարդ ավանի (Զորք Մարզվան) արու բնակչությանը հավաքեցին ճանապարհների վրա աշխատացնելու համար»: Սակայն չուտով հայտնի դարձավ, որ տարբեր վայրերում այդ անպաշտպան մարդկանց սպանել են իրենց մահմեդական ընկերները: Տղամարդկանց ոչնչացնելուց հետո կանանց ու երեխաներին Դեր Զոր քչեցին: Զորք Մարզվանը, որը դիմակայել էր աբդուլ-համիդյան ջարդերին, լրիվ դատարկվեց:

Մայիս-հուլիս ամիսներին լրիվ դատարկվեցին Ադանայի վիլայեթի և Մարաշի սանջակի բոլոր հայաբնակ գյուղերը: 50 հազար մարդ բռնագաղթվեց[2]: Հայերին ահաբեկելու համար չուրջ 30 հոգու հրապարակավ կախեցին Ադանա, Հալեպ և Մարաշ քաղաքներում:

«Գյուղերում ընդհանրապես հրամանը երեկոյան էր ստացվում, թե առավոտյան պետք է ճանապարհ ընկնեն: Գերենում բնակչությանը հարկադրեցին ճամբա ելնել լվացքի օրը և ստիպեցին իրենց հագուստները թրջված թողնել ջրի մեջ և մեկնել իսկույն ու գրեթե մերկ: Իսլամացողները կարող էին տեղում մնալ... Արաբաչեն գյուղը պաշարված էր զինվորներով և ռմբակոծված: Շեհիրցիներն էլ ասում էին, թե հազիվ գյուղից բաժանված, մոլլան «հավատացյալներին» աղոթքի հրավիրեց քրիստոնեական եկեղեցու տանիքից, որ մզկիթի վերածվեց: Կառավարությունը հայտարարեց տարագրյալներին, ... թե նրանց թողած ինչքերի արժեքը որոշվելու էր և առաջիկայում վճարվելու էր իրենց: Սակայն, բնականաբար, ինչքերի որևէ ցուցակ չպատրաստվեց... Հայերի ինչքերն անցան այստեղ հաստատված իսլամների ձեռքը ... իսկ արտերն էլ՝ անցան նոր եկած մուհաջիրներին: «...Անհնար է նկարագրել, այն անձկությունները, որոնցով տարագրյալներն անցնում են: Բռնաբարություններ, բռնի կրոնափոխություններ, կանանց ու աղջիկների առևանգումներ... Մեծ թվով ընտանիքներ ընդունել են իսլամություն՝ ստույգ մահից փրկվելու համար»[3]:

«Կարավանները գնում էին դեպի Դեր էլ Զոր, որ Հալեպից վեց օր հեռավորության վրա էր և Կոնիայով դեպի Ռաքքա՝ Եփրատի ափին, հետո Բաղդադի երկաթուղու ուղղությամբ՝ դեպի Ուրֆա և Շեհիր, դեպի Միջագետքի անապատը մինչև Բաղդադի մերձակայքը»[4]:

Պաշտոնական տեղեկագրերից մեկում կարդում ենք. «Զորաբանակի հրամանատարները կարող են համեմատաբար մարդկային վերաբերմունք հանդես բերել, սակայն դրանց (տարագրությունների) գործադրումը մեծ մասամբ իրականացվեց անմիտ խստություններով, շատ դեպքերում՝ վայրագ կատաղությամբ՝ կանանց, երեխաների, հիվանդների ու ծերերի հանդեպ: Շատ գյուղե-

---

[1] (**Lepsius J.**), *Le report secret du Dr. Johannes Lepsius, président de la Deutche Orient Mission et de la Sociétè Germano-Arménienne, sur les massacres d'Arménie, Beirut, 1917, p. 15.*

[2] *Նույն տեղում, էջ 14:*

[3] *Նույն տեղում, էջ 16:*

[4] *Նույն տեղում, էջ 17:*

րում տարագրության մասին ծանուցվել է միայն մեկ ժամ առաջ: Որևէ հնարավորություն չի տրվել նախապատրաստվելու համար: Շատ դեպքերում նույնիսկ ժամանակ չեղավ, որպեսզի ընտանիքի անդամները հավաքվեին, այնպես որ շատ փոքր երեխաներ լքվեցին, մնացին տեղում: Մի քանի դեպքերում տարագրյալները կարող էին իրենց հետ վերցնել ամենաանհրաժեշտը՝ ունեցվածքի մի մասը, կամ գյուղատնտեսական գործիքները, սակայն ավելի շատ էին այն դեպքերը, երբ որևէ բան տանել չէին կարող և ոչ էլ որևէ բան վաճառել, եթե նույնիսկ ժամանակ ունենային»:

Գերմանական մի աղբյուր վկայում է. «Լուրեր եկան Կոնիայից (ճահճոտ շրջան է)... Զեյթունցիները հասել են Կոնիա: Նրանց տառապանքները սաստկացել են... Հույներն ու հայերն անմիջապես դրամ ու սնունդ հավաքեցին տարագրյալներին օգնելու, բայց Կոնիայի վալին թույլ չտվեց որևէ բան աքսորյալներին տալ: Ուստի նրանք նորից մնացին առանց սննդի»[1]:

Մի այլ աղբյուր հայտնում է. «Երբ Զեյթունի առաջին աքսորականները Կոնիա եկան, քրիստոնյաները նրանց սնունդ ու զգեստ բերին, բայց վալին մերժեց թույլ տալ աքսորյալների հետ որևէ կերպ հաղորդակցվել, պնդելով, թե նրանք անհրաժեշտ ամեն ինչ ունեն... Իրականությունն այն է, որ կառավարությունը նրանց անպետք հաց էր տալիս, այն էլ՝ մի քանի օրը մեկ»[2]:

Կարա Բունարից ստացված մի նամակում կարդում ենք. «6-8 հազար զեյթունցիներ սովից մեռնում են»[3]:

Սուլթանիեից օգոստոսի 7-ին ստացված նամակում զեյթունցիների մասին ասված է, որ կառավարությունը օրվա համար տալիս է «150 դիրհեմ այյուր յուրաքանչյուրին (15 տարեկանից փոքրերին ընդհանրապես նկատի չէին առնում), հետո քանակը պակասեց 100 դիրհեմի, իսկ արդեն չորս շաբաթ է, այդ էլ դադարեցրել են...

Առնաուտ (ալբանացի) մի հազարապետ, որ եկել էր զինվորական ծառայության, այնքան ազդվեց իր տեսածից, որ խիստ հեռագիր ուղարկեց՝ պահանջելով, որ պարեն տրվի այն այրերի ընտանիքներին, որոնք աշխատանքային գումարտակներ վերցված էին... Մինչև վերջին շաբաթը մեռածների թիվն է 305 հոգի: Աքսորյալները գլխավորապես բնակվում են ուղտերի մեծ ախոռներում կամ նման տեղերում»[4]:

Կարա Բունարը «Կոնիայի վիլայեթի ամենավատառողջ մասերից է» և «շատերը մեռնում են», մահացությունն ամեն օր աճում է: Մալարիան ավերներ է գործում, պատսպարան և սնունդ գրեթե չկան[5]:

«Կարող եմ ասել, որ բյուրավորներ ու բյուրավորներ անցան Կիլիկիայի դաշտով, պատմելով մորմոքեցուցիչ պատմություններ ճանապարհին տեղի ունեցած կոտորածների կամ անարդարությունների մասին:

---

[1] ***Տաշեան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 187:*
[2] ***Bryce J.,*** *նշվ. աշխ., էջ 488:*
[3] *Նույն տեղում:*
[4] *Նույն տեղում, էջ 490-491:*
[5] *Նույն տեղում, էջ 489:*

Տարսոնից ոչ հեռու գտնվող Կեճլիք կայարանի մերձակայքում կուտակվել էին 10–15 հազար հոգի, որոնք պետք է անապատ ուղարկվեին: «Ստիպված էին մնալ արևի տակ, առանց վրանի կամ պատսպարանի, առանց խնամքի, ամեն տարիքի ու դասակարգի, հախուռն լցված որոշ չրջանակի մեջ, որից այն կողմ անցնել չէին կարող»[1]:

Կոնիայում գտնվող գերմանացիները 1915 թ. օգոստոսի 16-ին մի բողոքագիր են գրում այդտեղ հասած նիկոմեդիացի տարագիրների մասին. «Հնարավոր չէ գաղափար կազմել այն սրտաճմլիկ տեսարանների մասին, որոնց ականատես ենք մի չաբաթից ի վեր: Ամեն օր գալիս են երկար գնացքներ լի հայերով, որոնք Նիկոմեդիայից, Ադաբազարից և չրջակայքից են աքսորված»: «Այսօր այստեղի հայերը հրաման ստացան ութ օրվա ընթացքում քաղաքից դուրս գալ», «կանայք ու երեխաները բռունցքի ու գավազանի հարվածներով են քչվում» և գիշերները նրանց «մոտ եղածն էլ հաճախ բռնությամբ խլում էին կամ գողանում»: «Թե որքան մեծ է հուսահատությունը՝ հայտնի է նրանից, որ մայրերն իրենց երեխաներին նվիրում էին ուրիշներին... Այն երեխաները, որոնց վերցրել էին խղճահարված քրիստոնյա ընտանիքները, հետագայում իշխանությունները նրանցից վերցրին ու տվեցին թուրքերին: Մեր տված նպաստների վրա հաչտ աչքով չեն նայում», ամերիկյան առաքելությունը ևս արգելվել է (դեռ ապրիլին) օգնելու զեյթունցի 3000 տարագիրներին: «Այստեղից մինչև Հալեպից այն կողմ ամբողջ ճանապարհը աղքատության ու թշվառության կարավան է... Բոլորն էլ դանդաղ վչտալից սովամահության են մատնված: Տավրոսից այն կողմ լեռնալանջերին և դաչտավայրում այս թշվառները ենթակա են կիսավայրենի մահմեդական ժողովրդի ամոթալից ցանկություններին: Այդ բոլոր միջոցների նպատակը հավանաբար հայերի լիակատար բնաջնջումն է:

Այս անագորույն վարմունքը տիեզերական պատմության մեջ անջնջելի արատ է մնալու ոչ միայն թուրքերի, այլ նաև մեր՝ գերմանացիներիս համար, եթե անգործ հանդիսատես լինենք»[2]:

Ռեոսլերը մայիսի 26-ին գրում է. «Հրամանը տրված է՝ Ադանայի վիլայեթից այստեղ հասնող հայերին ցրել Հալեպի վիլայեթի մահմեդական գյուղերում, որտեղ նրանք ոչնչանալու են...

Հայ աքսորյալների մեջ գերիչխող թիվ են կազմում կանայք: Ճանապարհին կամ գյուղերում անպաչտպան մնալով, նրանք բռնությունների կենթարկվեն... Մեծ թվով երեխաներ զոհվել են փոխադրության ժամանակ»[3]:

Հունիսի 12-ին նույն հյուպատոսը գրեց. «Այստեղ գտնվող Սսի կաթողիկոսը գտնում է, որ մինչև օրս տարագրվել է ավելի քան 30 հազար հոգի: Զեյթունն ու չրջակայքը լրիվ դատարկված են: Բացի «ոչ լրիվ վստահելի» ընտանիքներից՝ աքսորված է ամբողջ ժողովուրդը, նույնիսկ՝ զինվորական ծառայության մեջ գտնվողների ընտանիքները... 3–4-ական ընտանիք գցում են մահմեդական

---

[1] Bryce J., նչվ. աչխ., էջ 505-509:
[2] Bryce J., նչվ. աչխ., փաստ. № 143:
[3] (Lepsius J.), նչվ. աչխ., էջ 76:

գյուղերը, որտեղ, առանց որևէ օգնության, բնաջնջվում են»[1]:

Հալեպում «արդեն կա 10 հազար հայ տարագրյալ, Դեր Զորում՝ 15.000, որոնց սննդի կազմակերպումը կառավարության կողմից լրիվ աչքաթող է արված»[2]: Նույն միտքն է հաստատում Դեր Զորի կառավարիչը:

Հալեպից դուրս ելնող զեյթունցի գաղթականները տեղավորվեցին Ինթիլիում և զբաղվում էին ճանապարհաշինությունով: Թեև թեթև կյանք չէր, բայց տանելի էր, որովհետև աշխատանք ու վաստակ կային: Սակայն 1916-ին այդ կողմերով անցնում է Էնվերը: Տեսնելով աշխատող հայերի, նա զայրանում է ու հրամայում նրանց հեռացնել երկաթուղու մերձակայքից: Հալեպ հասածների մի մասը Դամասկոս և Հավրան տարվեցին: Հյուծված տարագիրները օրական կարողանում էին միայն երեք ժամ քայլել: Մինչև Դամասկոս հասնելը, շատերը մեռան հյուծվածությունից ու քաղցից:

Զեյթունցիների մի մասը տեղավորվեց Դեր Զոր քաղաքում ու մերձակա գյուղերում: Գերմանացի գթության քույր Լ. Մեոհրինգը 1915 թ. հուլիսի 12-ին գրում է. «Դեր Զորը մեծ քաղաք է անապատում, Հալեպից մոտ վեց օր հեռու: Քաղաքի մեծ խանը լեփ լեցուն է: Բոլոր սենյակները, տանիքներն ու պատշգամբները լցված են հայերով: Հիմնականում կանայք ու երեխաներ են, բայց կան նաև որոշ թվով տղամարդիկ...»: Հայերն աստիճանաբար խանութներ, արհեստանոցներ բացեցին: Սակայն Զեքիի գալուց հետո դաժան հալածանքների ենթարկվեցին: Արաբները հայերի հանդեպ բարյացակամ էին, իսկ չեչենները՝ դաժան, նրանք իրենց ապրուստը հայթայթում էին կողոպուտի ու ջարդի միջոցով: Զեքին նրանցից գազանաբարո խմբեր կազմակերպեց և ուղարկեց Խաբուր գետի ափերը, որտեղ նրանք սպանդի էին ենթարկում դեպի հարավ քչվող հայերին: Այդպես առաջինը ոչնչացվեց զեյթունցիների քարավանը: Այդ ջարդերից մազապուրծ զեյթունցիներ Մ. Դեմիրճյանն ու Փ. Բոյամյանը պատմում են, որ կարավանը Խաբուրի ափին շրջապատվեց չեչեն ժանդարմների կողմից: Ութ օր հայերը շրջափակված մնացին և ամեն օր նրանցից խումբ-խումբ տանում էին, որոնք այլևս չէին վերադառնում: Իսկ երբ կարավանն առաջ չարժվեց՝ քոչվոր արաբների հսկա զանգվածի հանդիպեց: Չեչենները զեյթունցիների վերջին իրերն ու զարդեղենը խլելուց հետո տարան բլրի գագաթը, որտեղ այդ քոչվորները լախտերով հայերին գետին էին տապալում, մերկացնում ու նետում էին փոսերը: «Հագուստներու դէզը բլուր մըն էր կազմած... Մահուան փոսը 3-4 քմ. երկարութեամբ քարայրանման տարածութիւն մըն էր, որ լեցուած էր մարդկային դիակներով եւ վիրաւոր ու խելագարուած խլեակներով: Դիակներուն գարշահոտութիւնն ամբողջ քարայրը անշնչելի դարձուցած էր: Կենդանի գերեզման մը...»[3]:

«Երեկոեան, երբ սպանդը կը վերջանար, խարոյկ մը կը վառէին, որպէսզի կենդանի մնացողները չնչահեղձ ըլլային... Քարայրը 2-3 մեթր խորունկ էր...»[4]:

---

[1] (**Lepsius J.**), նշվ. աշխ., էջ 79:

[2] **Bryce J.**, նշվ. աշխ., էջ 125:

[3] **Նորաշխարհեան Լ.**, նշվ. աշխ., էջ 77-79:

[4] Նույն տեղում, էջ 79:

Նման քարայրները մի քանիսն էին, բոլորը լցված հայերի դիակներով: Դրանցից փրկվելու համար կանայք նետվում էին Խաբուր գետը:

Զեյթունցիների մի ուրիշ կարավան կանգ է առնում գետի ափին և տեղավորվում վրաններում: Զեչեններն ու տեղի ամբոխը լցվում էին փալասներից սարքված վրաններն ու փախցնում կանանց և աղջիկներին, իսկ մնացածներին տանում էին սպանդանոց: «Միայն արաբ ազնիւ ընտանիքներու մօտ, կամ քարայրներու, աղբանոցներու, այլեւայլ տեղերու մէջ պահուող կիներն ու մանուկները կրցած էին ջարդէն ազատուիլ»: Տեղացի քրիստոնյա արաբները զգալի թվով որբեր էին հավաքել ու խնամում էին:

«Զէքի թէ՛ ջարդեն ազատուողները եւ թէ՛ որբանոցներու մէջ համախմբուած որբ ու որբուհիները, բոլորը ի սպառ ոչնչացնելու համար հրահանգեց զանոնք միատեղ հաւաքել: Ան ամփիթատրոնի նման փայտէ բարձրաւանդակ մը չինել տալէ ետք՝ հրամայեց որբուհիներուն փայտակոյտին վրայ ելլելու... ուր նախապէս քարիւղ սրսկուած էր, եւ ահա՛ չորս կողմէն կրակը տրուեցաւ, մինչ ոճրագործ Զէքի, աթոռի մը վրայ նստած, անմեղ երեխաներուն բոցերուն մէջ տապլտկուիլը դիտելով զուարճացաւ: Բոլորը հոն հրոյ ճարակ դարձան»[1]:

Զեյթունցիների մի այլ խումբ Դեր Զորից ուղարկվեց Մոսուլ, որտեղ հասավ 2,5 ամիս հետո: «Անարգանք, խոշտանգում, բռնաբարում՝ ամեն ինչ կատարեալ էր: Բոլոր այր մարդիկը հաւաքեցին, տարին եւ անյայտացուցին»: Այդ կարավանում եղածներից Մ. Մարգարյանը գրում է. «120 հոգիէ բաղկացեալ գերդաստանս ջարդուած էր: Կինս ու զաւակներս եւս մեռած էին, միայն երկու աղջիկներս՝ վեց եւ ութ տարեկան կը մնային մօտս, երբ դիս ալ սպաննելու տարին, բայց հրաշքով ազատուեցայ ... ինքզինքս աղբանոցի մը մէջ թաքցնելով»[2]:

Իսկ Զեյթունում հայ քաջամարտիկների փոքրիկ խմբեր, քաշված լեռները, շարունակում էր մաքառել դահիճների դեմ:

Եղիայի 17 հոգանոց խումբը 1915 թ. ձմեռն անցկացնում է Խանոս անտառի լեռան բարձունքին, իսկ գարնանն անցավ Ֆոնուզի լեռները: Հայկական գյուղերը դատարկ էին, նման գերեզմանոցի: Միայն տեղի վանքում կար Գոչող գյուղից երկու ընտանիք:

Արեգնի հայկական գյուղի բնակիչները գյուղապետ Փանոս Եգանյանի գլխավորությամբ քաշվում են անառիկ դիրք ունեցող Գյուրեղինի բերդը: Զեյթունի լեռներում կային զգալի թվով զինյալ հայեր, որոնք մշտապես հետապնդվում էին: 16 հայկական գյուղերում բնակեցնում են Ալբանիայից բերված մուհաջիրների: Գյուղերի մահմեդականացումը ծանր կացություն ստեղծեց հայ հայդուկների համար: Սակայն նրանք չարունակեցին մարտնչել: Շերշերամ և Շեմբեկ լեռան վրա նրանք պարտության մատնեցին Թուրքերին: Սակայն օղակը գնալով նեղանում էր, և հայդուկները փորձում են անցնել ծովափ՝ արտասահման մեկնելու համար, բայց անհաջողություն են կրում ու վերադառնում են Զեյթուն: Այստեղ նրանք բաժանվում են մի քանի խմբերի և ցրվում են տարբեր

---

[1] **Նորաշխարհեան Լ.,** նշվ. աշխ., էջ 81:
[2] Նույն տեղում, էջ 81-82:

կողմեր՝ սննդամթերք հայթայթելու համար: Փանոսի 22 հոգանոց խումբը հասնում է Ֆնտրճագ, որտեղ գաղթի հրաման ստացած հայությունը համախմբվում է հայդուկների շուրջը և որոշում մարտնչելով մեռնել:

Հուլիսի 15-ին 10.000 մահմեդականներ, որոնցից 5000-ը զինվորական, Հալեպի և Ադանայի վալիների ղեկավարությամբ շարժվում են հայկական այդ գյուղի վրա: Հուլիսի 26-ին սկսվում է գյուղի ռմբակոծությունը, որին հաջորդում է անհավասար, օրհասական ճակատամարտ: Հայերը կռվում էին խելահեղ, բայց տասնյակ անգամ գերակշիռ ու լավ զինված ուժերին հաղթել չէին կարող: Նրանք չրջապատվեցին, սակայն շարունակեցին մարտնչել: Թուրքերը հրդեհում են գյուղը: Դիմադրելն այլևս անհնար էր: Նույն գիշեր գյուղի բնակչությունը տեղահանվում է: Իսկ Մարաշի բանտում գտնվող 60 զեյթունցիներին ողջ-ողջ այրում են կրի հնոցներում:

Գերմանացի ճանապարհորդներից մեկը գրում է. «Օգոստոսի 6-ին Մարաշի մերձակայքի Ֆնտրճագ գյուղը՝ 3000 բնակչով, ռմբակոծվեց ու հիմնահատակ ավերվեց: Տեղի ջորեպանները վերջին երեք ամսում հաճախ էին ստիպված լինում հայերին Եփրատի մյուս ափն անցկացնել: Նրանք սեփական աչքերով տեսել էին, թե մահմեդականները ուղղակի գետի ջրերում ինչպես էին կանանց ու աղջիկներին վաճառում կամ բռնաբարում»[1]: Գյուղը որոշեց ինքնապաշտպանվել: Սկսված կռվում հայերը 2000 հոգի կորցրեցին:

1920 թ. հունիսի 28-ին «Ազգ» թերթում (Բոստոն) Դ. Ադամյանը գրում է. «Առաջին անգամը չէ, որ թուրքերը Տեր-Սահակին ուղարկում են զինաթափելու հայերին: 1915-ին, երբ Ֆնտրճագի հայերը չհամաձայնվեցին տեղահանվել և դիմեցին ինքնապաշտպանության, թուրքերը Տեր Սահակին հանձնարարեցին գնալ գյուղ և համոզել հայերին հանձնվել ու հնազանդվել»: Քահանան հուլիսի 30-ին հասավ Ֆնտրճագ: Հայերը, սակայն, «կռահեցին հնազանդվելու վախճանը, որովհետև աչքի առաջ էր զեյթունցիների աղետալի վիճակը: Ուստի մերժեցին քահանային: «Հաջորդ օրը թուրքական 8000 հոգանոց մի զորամաս գնդապետ Ղալիբ բեյի հրամանատարությամբ պաշարեց գյուղը... Օգոստոսի առաջին կիրակի օրվա արշալույսին սկսվեց հրացանաձգությունը: Ֆնտրճագի հայերին միացել էին Դերեքեոյի և Քիչիֆլիի հայերը՝ ընդամենը 3525 հայ, որոնց բոլորը՝ ծեր թե երեխա, երիտասարդ թե կին, կռվեցին առյուծի նման: Անցյալ տարի երկու անգամ այցելեցի Ֆնտրճագ՝ հայերի պաշտպանական դիրքերը և ոսկորների կույտեր տեսա... Այդ ահավոր կռվում հայերը 2050 զոհ տվեցին, որոնցից շատերն սպանվել են անձնատուր լինելուց հետո»:

Վրեժխնդրությամբ լցված թուրքերը օգոստոսի 13-ին հրդեհեցին նաև Զեյթուն քաղաքը, որի 1500 տները մոխրակույտի վերածվեցին:

Հուլիսի 24-ին իշխանությունները հայտարարում են, թե զեյթունցիներին թույլատրվում է վերադառնալ իրենց բնակավայրերը: Հավաքվում են զգալի թվով մարդիկ, սակայն նրանց ոչ թե Զեյթուն, այլ երկրի խորքերը՝ Էրեյլի կայարան են տանում, որտեղ հայերի մեծ կուտակում էր առաջացել: Նրանց աստիճանաբար ցրում էին տարբեր ուղղություններով:

---

[1] «Material» heft 2, Bazel, 1916, s. 17-18.

Տարսոնցիների կարավանը Կաթմա գյուղը հասավ, որտեղ ոստիկաններն ու քրդերը զբաղված էին կանանց ու աղջիկների առևանգումով: Համաճարակները հնձում էին բռնագաղթվածներին: Ամեն օր բազմաթիվ հայերի դիակներ վրաններից քարշ տալով հանում ու դիզում էին փոսերում:

Բայց հայերը չեն երկնչում, շարունակում են պայքարը, գնում ամենախելահեղ ձեռնարկումների՝ սեփական կյանքը թանկ վաճառելու թշնամուն:

Հալեպաբնակ սասունցիները որոշում են զենք հասցնել Զեյթունի և Մուսալեռան հայդուկներին և ինքնապաշտպանությանը: Տալվորիկցի Իգիթի 23 հոգանոց խումբը ճանապարհ է ընկնում, հասնում է Այնթապի լեռները: Բայց այստեղ ենթարկվում է թշնամու մեծաթիվ ուժերի հարձակման ու ցաքուցրիվ լինում:

Խմբի զեյթունցի անդամները բարձրանում են Զեյթուն ու միանում Եղիա Նորաչխարհյանի հայդուկներին:

Միայն Խնուսի վանքում կար մի քանի ընտանիք, որ բռնագաղթից խույս տալով լեռ էին բարձրացել: Նրանք երբեմն թաքստոցից դուրս էին գալիս, հարձակվում անցնող կարավանների վրա և խլում զենք ու սննդամթերք:

Եղիայի խումբը Խնոսում չորս օր մնալուց հետո հեռանում է, սակայն երկար առաջանալ չի կարողանում, և, հետապնդումից խույս տալով, նորից բարձրանում է Զեյթունի բարձրաբերձ լեռները:

Զեյթունահայության կեցվածքում մի երևույթ նրան առանձնացնում է մյուս տարածքների հայերից: Նրանք ջարդարար քաղաքականության դեմ կռվում էին ոչ միայն Զեյթունում, այլև ամենուրեք, որտեղ նրանց չպրտել էր յաթաղանը:

Ինթիլլիում գործում էին հայդուկային երկու խմբեր՝ Նազար Քեհյանի և Թոփալ Հակոբի հրամանատարությամբ: Առաջին խումբը չուտով անցավ Ամանոսի լեռները և վրեժ էր լուծում ջարդված հայերի համար, իսկ երկրորդի ճակատագիրը հայտնի չէ: Նույն ժամանակ Եղիայի փոքրիկ խումբը շարունակում էր պարտիզանական կռիվները: 1917 թ. գարնանը խումբը հաջող դարանակալ գործողություններ կատարեց, որոնց մի քանի տասնյակ թուրքեր զոհ գնացին: Դա անհանգստացրեց իշխանություններին և նրանք զինվորական մեծ ուժեր հանեցին հայդուկների դեմ: Առաջին լուրջ բախումը տեղի է ունենում Զայաքի բարձունքներին, որտեղ հայերը թշնամուն մի քանի դիպուկ հարվածներ հասցնելուց հետո հեռանում են: Սակայն կռիվները խլել էին խմբի անդամների մեծ մասի կյանքը, իսկ ողջ մնացածները հյուծված էին՝ անընդունակ ոչ միայն մարտական գործողությունների, այլև արագ տեղաշարժերի: Խմբում մնացել էր միայն վեց հոգի, երբ Ալաբուլան գյուղի մերձակայքում չրջապատվեց: Եղիան ծանր վիրավորվում է, բայց կարողանում է նետվել մացառների մեջ: Մահամերձ մարտիկը տեսնելով թշնամու մոտենալը, հրդեհում է մացառները և ողջ–ողջ այրվում է այդ բոցերի մեջ՝ թշնամու ձեռքը չընկնելու համար:

Դեռ մինչև նրա հերոսական մահը Ինթիլլիում Եղիայի հարսներից Զմրուխտը կազմակերպում է 14 հոգանոց հայդուկային խումբ և որոշում է մեկնել Զեյթուն և միանալ Եղիայի խմբին: Խումբը Ջիհան գետով անցնում է Շեմպեք լեռը, որտեղ և միանում է Եղիայի խմբին և մասնակցում նրա մարտական

գործողություններին: Վերջինիս կազմում կռվում էին նաև Զմրուխտի ամուսինն ու որդին: Սակայն իրադարձություններն այնպես են տնօրինում, որ Զմրուխտը կտրվում է խմբից և թափառումների ընթացքում Թուրքերը նրան Սարը Գյուղել գյուղում բռնում և ուղարկում են Զեյթուն դատելու: Թուրք հարկահավաք Ահմեդը նրան առաջարկում է դառնալ իր կինը և, մերժողական պատասխան ստանալով, Զմրուխտին պարանով կապում է ձիուց ու քարշ տալիս, ապա նրա ձեռքերն ու ոտքերը կապում է, բերանը չոր մտցնում ու նետում գետին: Բայց Զմրուխտը խորամանկությամբ ազատվում է, բարձրանում Բամբուջագի կատարն ու վար նետվում:

Եղիայի զոհվելուց հետո հայդուկների ղեկավարությունն անցնում է նրա որդի Պապիկին: Նա խմբին հավաքում է Քեչ Դաղ լեռան գագաթին և որոշում ձմեռն այնտեղ անցկացնել: 1918-ի ապրիլին խումբը Ֆոնուզի Ս. Կարապետի վանքում էր: Այստեղից հարձակում է գործում կառավարական փոստատարների զինված խմբի վրա: Ապա Սյուլյուքլյու Գյոլի մերձակայքում շրջապատում է Թուրքական մի ստվար ջոկատի և ոչնչացնում: Այդ պահին տեղ է հասնում զորքը ու շրջապատում հայդուկներին: Սակայն հաջողվում է շրջափակումը ճեղքել ու հեռանալ:

Պապիկի մարտական գործողություններն ահաբեկել էին տեղի մահմեդական բնակչությանը, չփոթության մեջ գցել իշխանություններին: Վերջինները դիմում են տխրահռչակ ավազակապետ Իբրահիմի օգնությանը, որը 500-600 Թուրք երիտասարդների գլուխն անցած շարժվում է հայդուկների վրա: Ավազակախումբը գնալով համալրվում է նորանոր ուժերով: Պապիկը որոշում է խույս տալ բախումից և ժամանակավորապես հեռանալ Զեյթունից:

Քյուչուկ Թրքաբնակ գյուղում հայդուկները իմանում են, որ Թուրքական բանակը Դամասկոսի մերձակայքում գլխովին ջախջախվել է և անգլիացիները գրավել են Հալեպը:

Խումբը շարժվում է դեպի Ջերգմուկ, առաջանալով հասնում է Ջիհան և որոշում է կանգ առնել Քիչիֆլի ավերակ գյուղում: Սակայն դեռ նոր էին կանգ առել, երբ դարանակալած Թուրքերի հարձակման է ենթարկվում: Սկսվում է անհավասար կռիվ: Հայդուկները գերմարդկային ճիգեր են գործադրում՝ շրջափակումից դուրս գալու համար: Կռիվը տևում է ամբողջ գիշեր ու հաջորդ օրվա ցերեկը: Հայերի փամփուշտները սպառվում են, նրանք մարտը շարունակում են դաշույններով: Նրանք աներևակայելի քաջությամբ ճեղքում են Թշնամու օղակը: Սակայն ուժերն ավելի քան անհավասար էին ոչ միայն թվապես, այլ նաև կռվելու հնարավորություններով: Հրացանի դեմ՝ դաշույն: Պապիկը ծանր վիրավորվում է: Կռիվը շարունակվում է: Ընկնում է վերջին հայդուկը:

1918 թ. նոյեմբերի 12-ն էր: Դա նշանակում է, որ Զեյթունում բռնագաղթից հետո, երեք ու կես տարի շարունակ լեռնականների մարտական ջոկատները մաքառել էին Թշնամու գերակշիռ ուժերի և մահմեդական բնակչության դեմ:

ՄԱՐԱՇ. – 1915 թ. մարտի վերջին քաղաքում չչուկներ տարածվեցին, թե Մարաշից նույնպես հայերը տեղահանվելու են: Զեմալ փաշան մարտի 29-ին հայերին խաբելու համար կոչ-հրաման արձակեց. «Զեյթունում ապստամբու-

թյուն է: Բանակը սկսել է գործել: Կառավարության պարտքն է պաշտպանել հայերին և մահմեդականներին: Եթե որևէ իսլամ հարձակվի հայի վրա, անմիջապես հանձնվելու է ռազմական դատարանին: Ժողովուրդը թող հանգիստ մնա: Զինվորական իշխանություններն են հետապնդում ավազակներին»[1]:

Սկսվեց հայերի դեմ սադրանքների մի ամբողջ շղթա: Հ. Տաշյանի վկայությամբ՝ Մարաշի «ազդեցիկ մահմեդականները որոշեցին կենտրոնական կառավարությանը հեռագիր ուղարկել, թե հայերը գրավել են մզկիթները»: Դրան հետևեց խստագույն վերահսկողությունը հայերի վրա, նրանց զենքերը խլեցին, նույն ժամանակ «մահմեդականների համար հնարավորություն ստեղծեցին զենքեր ու փամփուշտ հայթայթելու»:

Գյուղերում բռնություններ գործադրելով՝ հայերին իսլամացնում էին: Մարաշի մերձակայքի Թեքերեկի գյուղացիները լուր ուղարկեցին, թե երկընտրանքի առաջ են՝ իսլամանալ կամ ոչնչանալ: «Մարտի 31-ին մահմեդականները հեռագիր ուղարկեցին կենտրոնական կառավարությանը, թե Զեյթունի բնակիչները (իբր 10.000 հայ) պետք է տեղահանվեն ու քաղաքը հիմնահատակ արվի»:

Ադանայի վալին գնում է Մարաշ և մայիսի 1(314)-ի գիշերը հավաքում է հայ ավագանուն և հայտնում, որ նրանք մինչև ցերեկվա ժամը 2-ը պետք է քաղաքը թողնեն, և թե ով չենթարկվի, «հրացանազարկ կարվի»: Քիչ անց ստացվեց նոր հրաման՝ մինչև օգոստոսի 15-ի երեկո Մարաշի հայերի մեծ մասը՝ 26.000 հոգի, պետք է քաղաքից հեռանար:

Հայերի համար դա միանգամայն անսպասելի էր: Քաղաքից հեռանալուն նրանք ընդհանրապես պատրաստ չէին, նույնիսկ փոխադրամիջոց չունեին: Թուրքերը խուժեցին նրանց տները՝ անվճար կամ չնչին գներով կահավորանքների տիրանալու համար: Մինչև կեսօր քաղաքի հարուստներն իջան մուրացկանի մակարդակի[2]:

Մի ուրիշ աղբյուր նշում է, որ Մարաշը տարագրվեց մայիսի վերջին: «Մայիսի 24-ին, հինգշաբթի օրը, հայերին ազդարարվեց պատրաստվել մայիսի 27-ին ճանապարհվելու... Տարագրվեց (այդ օրը) ավելի քան 2000 հայ»[3]:

Տեղահանության Մարաշի հանձնախմբի ղեկավարը չկեղծեց. «Մենք ուզում ենք հայու անունն իսկ ոչնչացնել»[4]:

Մարաշի հայության առաջին կարավանի մեկնելուց հետո Ադանայի վալի Ջելալ բեյի (որը դեմ էր տարագրությանը), նախաձեռնությամբ Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռեոսլերը գնում է Մարաշ և կանխում ծրագրված գաղթը: Սակայն այդ արգելքը ժամանակավոր էր:

Ռեոսլերը Մարաշում իրադարձությունների զարգացումը ներկայացնում է հետևյալ կերպ: Մարտի վերջերին հավաքեցին 2000 ձի ու ջորի: Ապրիլի 5-ին պահանջեցին 500 էշ: Քրիստոնյա ջորեապաններին չորս շաբաթ ձրի աշխա-

---

[1] **Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., էջ 50:
[2] **Տաշեան Հ.**, նշվ. աշխ., էջ 128:
[3] **Լեփսիուս Յո.**, Հայկական ջարդերը..., էջ 10-11:
[4] "Quelqus Documents sur le Sortie des Arméniens en 1915", Génève, 1916, p. 162.

տեցնելուց հետո բանտարկեցին, իսկ մահմեդականներին ազատ արձակեցին: Հային բռնում էին որևէ վայրում ու որևէ պահին և հարկադրում անվճար աշխատել:

Մարաշում կոտորած առաջացնելու համար զանազան լուրեր էին տարածվում, օրինակ, «հայ զինվորներն իրենց մահմեդական ընկերների հացը թունավորել են»: Մահմեդական կանայք հայերին սպառնում էին նոր կոտորածով:

Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցում մեծ թվով հայեր էին ապաստանել. «Թիւրքերը կը յարձակին եկեղեցւոյ վրայ ու անխնայ կը կոտորեն հայերուն, որոնցմէ 800 հոգի ապաստանած էին քարաշէն եկեղեցիին մէջ... Թիւրքերը մօտակայ տուներէն բացուած ստորգետնեայ ուղիով կը հասնին եկեղեցի, տանիքը կը ծակեն, պէնզինով կ'ողողեն ու կրակ կու տան: Տանիքը փուլ կու գայ եւ ժողովուրդին մէկ մասը կը մնայ անոր տակ, իսկ միւսները կ'ոչնչանան կրակի բոցերուն մէջ»[1]: Գերմանացի բուժքույր Պ. Շեֆերը պատմում է, որ Մարաշի ճանապարհներին ամենուրեք ընկած էին հայերի դիակներ[2]:

ԱՄՆի հյուպատոս Ջեքսոնի մի տեղեկագրում բերվում են դաժան փաստեր Մարաշի հայերի վերաբերյալ: «Մարաշի հայկական դպրոցներում,- գրում է նա,- տեսա 100 կին ու երեխա՝ գնդակահար, ջախջախված սրունքներով, թևերով և այլևայլ խոշտանգումներով, որոնց թվում նաև 1-2 տարեկան երեխաներ: Օգոստոսի 13-ին Մարաշում 34 հայ գնդակահարվեց, որոնց թվում երկու 12 տարեկան տղաներ: Օգոստոսի 15-ին գնդակահարվեց 24 և կախաղան հանվեց 14 հոգի... Դեռ մահվան ցնցումներով՝ մարմինները հանձնվեցին բարբարոս ամբոխի քմահաճույքին, որոնք զոհերի ձեռքերից ու ոտքերից քաշում էին, և ի հրճվանք հավաքված մահմեդականների, ոստիկաններն ու աշխարհապահները դեռ կես ժամ էլ անընդհատ ատրճանակ էին պարպում զարհուրելի կերպով այլափոխված դիակների վրա...

Քաղաքից Ագարակ գյուղ տանող ճանապարհին տեսա աղբակույտի վրա նետված մարդու գլուխ, որին թուրք երեխաները որպես թիրախ էին օգտագործում: Մարաշում իմ գտնված ժամանակ ամեն օր թուրք քաղաքացիները հայեր էին սպանում, որոնց դիակներն օրերով ընկած մնում էին առուների մեջ կամ այլ տեղ»[3]:

«Ալպիստանի մոտ Բյովերեն գյուղում ամբողջ հայ բնակչությունը՝ 82 հոգի, սպանվեց, բացառությամբ 12 տարեկան մի տղայի, որը ջուրը նետվելով ազատվեց... Մարաշում տեսա 200 հոգանոց մի կարավան, որում կային նաև կույրեր: Մոտ 80 տարեկան մայրը ձեռքից բռնած տանում էր իր ի ծնե կաղ աղջկան: Այդպես հետիոտը ճամբայ ելան: Մի ժամ քայլելուց հետո մի տղամարդ ընկած մնաց Էրքենոս կամրջի մոտ և կողոպտվելուց հետո սպանվեց: Զորս օր անց նրա դիակը տեսանք ընկած նույն տեղում՝ փոսի մեջ:

... Այնթապում տեսա տեղի կառավարիչի հրամանը, որով մահմեդականներին արգելվում էր աքսորյալ հայերից որևէ առարկա գնել: Նույն կառավարիչն

---

[1] ***Գալուստեան Հ.,*** *Մարաշ, Նիւ Եորք, 1934, էջ 316:*

[2] ***Summer E.,*** *Die Warhelt uber die Leiden des Armenischen Volkes in der Turkei wahrend des Weltkrieges. Frankfurt, s. 5-7.*

[3] ***Տաշեան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 138-139:*

աքսորյալների վրա հարձակվելու պատրաստություններ էր տեսնում: Երկու կարավաններ մինչև չապիկները կողոպտվեցին»:

Մարաշից 12 ժամ հեռավորության վրա Այրան Բունարում ութ ավազակներ կողոպտեցին 2800 տարագրյալների: Ավազակները սպայի կամ զինվորի համազգեստով էին: ... Այրան Բունարում ոստիկանները կարավանում եղած տղամարդկանց բաժանեցին կանանցից: Կանանց լրիվ մերկացրին և կողոպտեցին, չորս կնոջ և երկու աղջկա գիշերը բռնությամբ տարան ու բռնաբարեցին... Էնկիսեք-Դաղի կիրճում թուրքերն ու քրդերը կարավանը լրիվ կողոպտեցին: Այս հարձակման ժամանակ 200 հոգի սպանվեց և 70-ը ծանր վիրավորվեց, որոնց հարկադրված տեղում թողեցին... Կարապյոյուքի ճամփին ընկած էին երկու տղամարդ՝ մեկը երկու, մյուսը յոթ խոցված վերքերով, մի քիչ այն կողմ կար բռնաբարված երկու կին, ապա չորս կին, որոնցից մեկը 13 տարեկան աղջիկ էր, գրկած իր երկու օրական տղային ցնցոտիների մեջ: Ճանապարհին ընկած էր 60-ամյա մի տղամարդ, որի դեմքին դաշույնի խորը վերք կար: Նա ասաց, որ Կյուրինից մեկնել էր 13 գրաստով: Սակայն բոլոր գրաստներն ու ապրանքները հափշտակել են... Ճանապարհի երկու կողմում թափված մեռյալներ էին երևում: Կարավանի 2500 հոգուց միայն 30-40 հոգի էր մնացել: Կանանցից առանձնացրին 15-ից բարձր տարիք ունեցող արու մարդկանց և ամենայն հավանականությամբ սպանեցին: Այս հայերը դիտմամբ խոտորնակ և վտանգավոր ճամփաներով տարվեցին... Առանց գրաստի, առանց անկողնի, առանց սննդի՝ ստիպված էին չորս օրվա ճամփան անցնել մեկ ամսում:

Այնար Բազարի հարձակումը Ալպիստանի գայմագամի համաձայնությամբ էր եղել: Նա հայերից 200 ոսկի էր վերցրել խոստանալով հոգ տանել, որ անվտանգ Այնթապ հասնեն: Կյուրինի գայմագամը 1020 ոսկի էր վերցրել ու նույն խոստումը տվել: «Ես տեսա մի մարդու, որը Կեսրիանի ակումբի սենյակում գայմագամին վճարեց այդ գումարը: Այնթապի մոտ այս կարավանից շատ կանայք գիշերը բռնաբարվեցին այնտեղի քաղաքացիների կողմից: Այրան-Բազարի հարձակման ժամանակ տղամարդիկ ծառերից կապվեցին ու այրվեցին... Այդ նույն բնակավայրի մերձակայքում երկու եղբայրներ վեճի բռնվեցին ավարի պատճառով, և նրանցից մեկն ասաց. «Այս չորս կտորի համար 40 կին եմ սպանել»:

Հաճի անունով մի քուրդ գերմանացուն պատմել է. «Նիսիբինի մոտ ես և բոլոր ջորեպանները փակվեցինք մի խանում... Ֆանսաղքի շատ երիտասարդ կանայք գիշերը բռնաբարվեցին կարավանն ուղեկցող ոստիկանների ու քաղաքացիական անձանց կողմից»:

«Մարաշի և Այնթապի արանքում մի գյուղի մահմեդական ժողովուրդը ցանկանում էր մոտ 100 ընտանիքից կազմված կարավանին հաց ու ջուր բաժանել, սակայն կարավանին ուղեկցող զինվորները չթողեցին... Մարաշի վրայով 20 հազար տարագրյալներին թույլ չտվեցին Այնթապ մտնել պարեն գտնելու, թեև կարավանի ուղին Այնթապով էր անցնում»:

Պաուլա Շեֆերը գրում է, թե Մարաշից ճանապարհ են ելել երեկոյան, սակայն ձիերը «մութին այնքան անհանգիստ էին չորս կողմը թափված բազմաթիվ դիակների պատճառով, որ ստիպված էինք արտը չրջանցել, քանի որ մենք

էլ էինք սարսափում այնքան կմախքների ու դիակների զարհուրելի կուտակումներից: Զորս կողմը մարդ չկա, միայն դիակներ են... Ճանապարհի փոշու մեջ գտանք մերկ, փոքրիկ, չորս շաբաթական մանկիկներ, սակայն կենդանի: Թփերի տակ ընկած էին և քաղցից ու ծարավից ճչում էին: Առավոտյան տեսանք տղամարդկանց ու կանանց խոշտանգված դիակներ, որոնք բոլորն էլ մորթված էին, կտրված թևեր ու սրունքներ... Դիակների և մարդկանց մի մասն այրված-ածխացած էր: Հաճախ 3-4 տղաներ նստում էին արտերում մինչև որ թուրքերը կամ քրդերը գային նրանց տանելու:... Մարաշից մինչև Բաղչե ամբողջ ճամբան տառապանքների ու մահվան ճամփա էր: Սարսափելի բան էր: Ճամփին ընկած էին այրեր, որոնք կրծքից ու փորից սվինահարված էին ու արյունաքամ էին լինում: Հղի կնոջ արգանդը բարակ ցից էին խրել, որի ծայրը դուրս էր ցցվել աջ երիկամի մոտ»[1]:

Ականատեսներից մեկը մայիսի (23) 10-ին Մարաշից գրում է. «Նրանց տեսա ճանապարհին... ամբողջ թափոր ժանդարմների ուղեկցությամբ, որոնք հայերին առաջ էին քշում գավազանի հարվածներով: Հազիվ թե հագուստ կը կրեն, տկարացած, ավելի ինքզինքնին կքաշկռտեն ասոնք, քան թե կքալեն: Ծեր կիներ կկքին և երբ գափթիեն գավազանը բարձրացուցած կմոտենա, ոտքի կելլեն: Ուրիշ կիներ առաջ կքշվին էգ էշերու խումբի մը պես: Տեսայ երիտասարդ կին մը, որ կքեցավ, գափթիեն 2-3 հարուած տվավ անոր և ան տաժանակրորեն ոտքի ելավ: Առջևեն կերթար իր ամուսինը (2-3 տարեկան մանուկը գրկին): Քիչ մը անդին ծեր կին մը սահեցավ ու ցեխի մեջ ինկավ: Ժանդարմը 2-3 անգամ զարկավ իր բիրովը: Կինը չէր շարժեր: Այն ատեն, 2-3 ոտքի հարուածներ տվավ, միշտ անշարժ կմնար կինը: Թուրքը այն ատեն ավելի զորավոր ոտքի հարուած մը տվավ և կինը գլորվեցավ փոսի մեջ: Կարծես թե ան արդեն մեռած էր: Այս մարդիկը, որոնք հոս քաղաք հասած են, երկու օրե ի վեր բան մը չեն կերած: Թյուրքերը թույլ չտվին իրենց հետները որևէ բան մը տանելու, բացի մեկ վերմակե, ջորիե ու այծե: Բայց այստեղ գրեթե ամբողջ ունեցածները ոչինչ գնով ծախեցին... որպեսզի հաց գնեն... իրենց ունեցածի մեծ մասը ճանապարհին արդեն կողոպտված էր... Տարագրյալներուն ստիպեր էին իրենց ողջ ունեցվածքը թողել Զեյթունի մեջ, որպեսզի Բոսնիայի իսլամ գաղթականները, որոնք կուզէին անանց տեղերը հաստատվի, կարողանային զանոնք օգտագործել իրենց պետքերու համար: Ներկայիմս Զեյթունի մեջ հնարավոր է, որ 20-25 հազար թուրք կա: Քաղաքի անունը փոխվեցավ և Սուլեյմանլը դրվեցավ: Քաղաքը և զայն շրջապատող գյուղերն ամբողջովին դատարկվեցան: Շուրջ 25 հազար տարագրյալներեն 15-16 հազարը Հալեպի ճանապարհով տարվեցան, բայց պետք է ավելի հեռու երթան՝ Արաբական անապատ: Արդյոք կուզեն անոնց այնտեղ քաղցե մեռցնե՞լ: Անոնք, որ այնտեղեն անցան, Կոնիայի վիլայեթ կերթան: Այնտեղ ալ անապատներ կան...»[2]:

Մարաշի ռազմական դատարանի վճռով հոկտեմբերի 11-ին կախաղան հանվեց 18 մարդ: Ջնայած բռնագաղթը դադարեցնելու վերաբերյալ Բ. Դոան

---

[1] ***Schafer P.,*** *Die Wahrheit ete, p. 32-33.*

[2] ***Լեփսիուս Յո.****, Հայկական ջարդերը..., էջ 11-16:*

հայտարարության, Մարաշում բարձր և կրթված հայերի տարագրությունը շարունակվում էր[1]:

Այդ միջոցառումները հանգեցրեցին նրան, որ քիչ անց վալին իր վերադասին «գոհունակությամբ հայտնեց», որ հաջողվել է վիլայեթում ու Մարաշի սանջակում «լրիվ փոխել» բնակչության ազգային կազմը, որ վիլայեթը «մաքրված է քրիստոնյա տարրերից», որ եթե երկու տարի առաջ վաճառականների և արհեստավորների ավելի քան 80 տոկոսը քրիստոնյա էր, ապա «այժմ միայն 5 տոկոսն» է քրիստոնյա[2]:

Թուրքական բանակում ծառայող հայ բժիշկ Ա. Ճեպեճյանը 1916 թ. կեսերին աշխատանքի է նշանակվում Մարաշում: Նա իր օրագրում գրում է. «Ամեն կողմ թուրք է: Արաբ ու հայ գաղթականներ կու գան ու կ'անցնին... Օրերս էյնթիլի ապաստանած 12.000 հայ գաղթականներ եւ բանուորներ երկրորդ հրամանով (իրատէ-ի սիյեսիյէ) կոչեցան (թապիր): Անցան Մարաշի քովէն, անգութ անհամար տեսարաններ ու նկարագրութիւններ...»[3]:

Կամ՝ «Մարաշ մնացած բոլոր բողոքականները ազդարարագիր ստացան: Մեծամասնութիւնը գաղթի նշանակուեցաւ...

Հիւսիսէն այստեղ հասնող հայ գաղթականներու հանդիպեցայ. այստեղ հասած են չատ խղճալի վիճակի մէջ...

Լեռները դասալիք զինուորներով լիքն են ... գիրար կը կողոպտեն, կը սպաննեն...»[4]:

Մարաշում սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ մի նոր աքսոր: Մինչև բռնագաղթը քաղաքում բնակված 25-30 հազար հայից մնացել էր 5000-ը: Եվս 120 ընտանիք տեղահանվեց: Տղամարդիկ առանձնացվեցին: Տարագիրները սովամահ էին լինում: Սովամահ էին լինում նաև չտեղահանվածները: Անհապաղ օգնության կարիք ունեին Մարաշից 4500, Այնթապից՝ 3800 տեղաբնակ և 1200 գաղթական այլ վայրերից ու 3800 հոգի սանջակի գյուղերից:

Սոֆիայի «Երևան» թերթը 1986 թ. մարտի 29-ի, ապրիլի 5-ի և 12-ի համարներում տպագրեց թուրքական ներքին ծառայությունների գաղանությունների մասին, որոնք գործադրվել են Գազիանթեփում: Մարաշի անվտանգության վարչությունում գործում էր «հարցաքննության չրջիկ խմբակ», որի աշխատանքի գործիքներն էին՝ «Ֆալախկայից սկսած մինչև էլեկտրական հոսանքը», «պաղեստինյան» և «մսագործի» կախաղանները, «գործողության սենյակները»: Խոշտանգումների ամենածանր եղանակը «պաղեստինյան կախաղանն» էր, որին 20 բոպեից ավելի դիմանալն անհնար էր. դրան ենթարկվածին ուշքի էին բերում էլեկտրական հոսանքով:

«Կին, թե տղամարդ,- խոստովանել է դահիճներից մեկը,- լրիվ մերկ, աչքերը փակած, ձեռները մեջքին կապում ու կախում էին: Կալանավորի մարմնի ամենազգայուն մասերին՝ սեռական օրգաններին միացնում էին էլեկտրական

---

[1] R 14088, Ab. 30049.

[2] Wien HHSTA PA XI 275, Konstantinopel, 27 Februar 1917, № 47.

[3] «Բժիշկ Ա. Ճեպեճեանի օրագիրը. 1914-1918», Պէյրութ, 1986, էջ 65:

[4] Նույն տեղում, էջ 66:

հոսանք...» և այդպես, մինչև որ զոհն ասեր այն. ինչ նրանից պահանջում էին դահիճները: Կանանց սեռական օրգանների մեջ մեծ ճնշմամբ ջուր էին սրսկում: Զոհին հարկադրում էին չատ աղի պանիր ուտել, ապա ծորակը բացում էին, բայց թույլ չէին տալիս ջուր խմել:

Կար նաև տանջանքի մի այլ ձև, որը կոչվում էր «Կրիայի վանդակ». զոհին հարկադրում էին օրեր չարունակ մնալ չորեքթաթ վիճակում: Նման բազմաթիվ այլ եղանակներ, որոնցով հայերին հարկադրում էին «հաստատել թե մասնակիցն են հայկական ապստամբության»:

Բաղդադի երկաթգծում աշխատող մի գերմանուհի 1917 թ. մարտի 18-ին գրում է. «Այստեղ չատ հայեր կան Մարաշից... Վերջերս նորից մեծ տեղահանություն է իրականացվել: Ես երկու օր առաջ տեսա այդ մեծ ողբերգությունը»[1]:

ԱՅՆԹԱՊ. – Նախ խուզարկվեց 30 հայի տուն: Արգելված որևէ բան չհայտնաբերվեց, բայց 28 երևելի հայեր բանտարկվեցին:

Ինչպես Ադանայի նահանգի մյուս քաղաքների, այնպես էլ Այնթապի հայության տեղահանությունների մասին նշվում են տարբեր ամիսներ՝ 1915 թ. մայիս-հուլիս ամիսներ: Պատճառն այն է, որ այդ քաղաքներից տեղահանությունը տևական բնույթ կրեց: Միացյալ Նահանգների հյուպատոս Ջեկսոնը բերում է հետևյալ փաստերը. «Այնթապի ու Մարաշի արանքում հանդիպեցի հայերի մի կարավանի՝ մոտ 40 կին ու երեխա, և 5-6 տղամարդ: Նրանց առջևից 200 մ հեռավորության վրա գնում էին տասը թուրք զորակոչիկներ: Կարավանում կար մի օրիորդ..., որը նոր էր ապաքինվել ժանտատենդ ծանր հիվանդությունից... Զինակոչիկները պահանջում էին, որ աղջիկը գիշերը տրվի իրենց: Միայն չնորհիվ նրան, որ նաև մահմեդական ջորեպանները կանանց պաշտպան կանգնեցին, հնարավոր եղավ կասեցնել զինվորների ոտնձգությունը»[2]: Տեղահանությունն սկսվեց մայիսին: Մի գերմանացի վկայում է. «Այնթապի առաջին կարավանը որը կազմված էր ունևոր անձանցից, մինչև չապիկը կողոպտված էր ... հավանաբար կողոպտել էին կառավարական պաշտոնատարները»[3]:

Ջելալ բեյը աշխատանքից հանվեց ու Կոնիա տեղափոխվեց: Փոխարենը վալի նշանակվեց Վանի նախկին վալի Բեքիր Սամի բեյը, որը և գործադրեց տարագրության հրամանը:

Ամերիկացի բժիշկ Շեֆբրտը վկայում է. «Այնթապում տարագրության հրամանը տրվեց հուլիսի 21-ին 60 ընտանիքների համար: Մի քանի օր անց ստացվեց երկրորդ հրամանը 70 ընտանիքի համար: Ապա 1500 և ամենավերջում 1000 հոգի ևս տարագրվեցին, այնպես որ բոլոր հայերը քաղաքից հանվեցին... Տարագրվածներին արգելված էր իրենց հետ վերցնելու անգամ ամենաանհրաժեշտ իրերը: Թույլատրված էր տանելու միայն մի գրաստ:

Մարաշի մերձակայքում ընդդիմության տկար փորձեր եղան: Ֆնտրճաղ

---

[1] R 14090, Ab. 13142.

[2] **Տաշեան Հ.,** նշվ. աշխ., էջ 129-130:

[3] «Aus den Aufzeichnungen eines in der Turkei verstorbenen Deutchen»; Տե՛ս «Material» s. 17-25.

գյուղը տարագրությունը կազմակերպելու ուղարկված ոստիկանին սպանելու համար, մոխրակույտի վերածվեց:

Կիլիկիայում տարագրությունը տեղի ունեցավ համեմատաբար բարենպաստ պայմաններում: Ճիշտ է, հրոսակները բոլոր աքսորվողներին կողոպտեցին, սակայն, ավազակությունն ու սպանություններն այնքան մեծ համեմատություններ չստացան, որքան Բարձր Հայքի գավառներում:

Կիլիկիայի տարագրվածների մեծ մասը գտնվում էր Դեր Զորում, որտեղ արդեն 15 հազար հայ էր բերվել: Երաշտից այրված այդ անապատները, որոնք ձգվում էին Դեր Զորից մինչև Ջերապլուս և Ռաս ուլ Այն և մինչև Մոսուլ, լցված էին հայ տարագիրներով: Նրանցից մի քանի բեկորներ ցրված էին Թուրքական ու արաբական գյուղերում:

Այնթապի և Քիլիսի տարագիրները Դամասկոսի ճանապարհով տարվեցին նաև Հավրան»[1]:

Որ կիլիկահայության տարագրությունը համեմատաբար մեղմ պայմաններում էր ընթանում, նշում է նաև Հր. Աճառյանը: Նա գրում է, թե «կիլիկեցոց գաղթը այնպիսի դաժան պայմանների տակ չեղաւ, ինչպէս մնացեալ հայութեան»: Դրան նպաստող պայմաններից մեկը համարվում էր անապատին Կիլիկիայի մոտ լինելը և «մինչեւ այնտեղ հասնելու համար շատ երկար չպիտի թափառէին մնացեալ հայութեան պէս»: Այդ մոտիկության շնորհիվ տարագիր հայերը «չատ երկար չպիտի չփուէին թուրքերի եւ աւազակ քրդերի հետ, այլ շուտով պիտի մտնէին արաբների շրջանը, որոնք ուրիշների չափ անգթութիւն չցուցաբերեցին»: Աճառյանը երկրորդ պատճառը համարում է այն, որ Կիլիկիան մտնում էր Ջեմալ փաշայի իրավասությունների շրջանակի մեջ: Նա Ջեմալին անվանում է «հեռատես», որը հասկանում էր՝ «ուշ թէ չուտ պատերազմը պիտի վերջանայ յօգուտ Անգլիայի եւ Ֆրանսիայի, եւ թէ վերջապէս հայերը Կիլիկիային տէր պիտի դառնան: Այս համոզմամբ նա դարձել էր հայասեր եւ հայոց դէմ բացառիկ խստութիւն չէր գործադրում»[2]:

Հավանաբար ասվածի մեջ ուշադրության արժանի են օբյեկտիվ – տարածքային բնույթի պատճառները, ինչ վերաբերում է սուբյեկտիվ գործոններին, մասնավորապես Ջեմալ փաշայի «հայասիրությանը», ապա այդ կարծիքի տարածման գլխավոր աղբյուրը Սահակ կաթողիկոսն էր և իրականության հետ ընդհանուր շատ բան չուներ:

Թե Այնթապում ինչպիսի «զգուշավորությամբ» էին ոչնչացնում հայերին, վկայում է տեղի կառավարիչ Ահմեդի 1918 թ. հունվարի 18-ի հեռագիրը, թե ուրիչ նահանգներից Ռում Կալե բերված 500 գաղթականներին, որոնք մեծ մասամբ կանայք ու երեխաներ էին, «հաղորդուած ծանօթ եղանակով, պահապան քիւրտերու կողմէ ղրկուած են՝ մէկ մըն ալ չվերադառնալու պայմանով»[3]:

Լսենք նաև Ռեոսլերին. «Օգոստոսի 7-ին Անտիոքից տարագրված հայերը

---

[1] **Թէոդիկ,** Ամէնուն տարեցոյցը, 1916-1920, Կ. Պոլիս, 1921, էջ 23:
[2] **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., էջ 376-377:
[3] Konst./ Ankara, 170, Ab. 53a.

անցնելու են Համան: Քաղաքի մերձակայքի հայկական վեց գյուղերի հայ բնակչությանը չղթայակապ քաղաք ուղարկեցի»[1]: Նույն ժամանակ երիտթուրքերի տեղական կոմիտեն Այնթապում կեղծ լուրեր տարածեց, թե զինված հայ ամբոխը չարժվում է քաղաքի վրա և օգոստոսի 20-ին կոտորած առաջացրեց:

«The New York Times»-ը 1919 թ. ապրիլի 19-ին գրեց. «Այնթապ քաղաքից 30.000 հայ աքսորվեց անապատ՝ մահանալու: Այժմ նրանցից կենդանի են 4 կամ 5 հազար հայ: Մոտ 650 հազար հայ մահացել է անապատում:

Երբ անգլիական ու ֆրանսիական զորքերն առաջ էին չարժվում Փոքր Ասիայի խորքերը՝ Թուրքերը դեռևս հետապնդում էին հայերին: Փաստն այն է, որ ստորագրված զինադադարը որևէ դեր չի խաղում: Այս կամ այն ճանապարհով, միայնակ կամ խմբերով, հայերը սպանվում էին: Ես մի դեպք գիտեմ, երբ 100 մարդ մորթվեց և մեկ ուրիշը, երբ 40 հոգի գնդակահարվեց»:

ՀԱՃԸՆ. – Լեռնային Կիլիկիայում ազատասեր, հպարտ կեցվածք դրսևորեց նաև Հաճընի հայությունը: Պատերազմի նախօրյակին Հաճըն քաղաքն ուներ 30-35 հազար բնակիչ, բոլորն էլ հայեր[2]: Մի օրինաչափություն՝ ջարդարարներին հակահարված տվեցին հիմնականում այն քաղաքներն ու գյուղերը, որոնք միատարր կամ հոծ հայկական բնակչություն ունեին (Վան, Ուրֆա, Սասուն): Հաճընը նույնպես հնարավորություն ու վճռականություն ուներ ձախողելու բռնագաղթը, մանավանդ, որ բնակչությունը զինված էր: Բայց այստեղ ինքնապաշտպանությունը ձախողվեց և քաղաքի բնակչությունը զոհ դարձավ նաև զինագործ Ա. Ջիկերջյանի դավաճանության: Նա իշխանություններին հանձնեց զենք ունեցողների ցուցակը, ինչը հայերին հարկադրեց հանձնելու զենքերը, հավատալով, որ այդ անելով «իրենց հանգիստ կը թողեն..., բայց բոլորն ալ տարագրուեցան Տէր Զօր»[3]:

Բնակչության զինված լինելու մասին ասվածը շատ հարաբերական է և մահմեդական բնակչության զինվածության համեմատությամբ՝ չնչին: Քաղաքի հայությունն ուներ ընդամենը 200-ից մի փոքր ավելի մաուզեր տեսակի հրացան, որոշ թվով էլ ատրճանակ և որսորդական հրացան: Ինչպես մյուս վայրերում, Հաճընում նույնպես կային աչխույժ ազգային կյանք, տարբեր քաղաքական հոսանքներ, սակայն թույլ էր հրապուրվածությունը կուսակցություններով ու դրանց գաղափարախոսություններով:

1914 թ. նոյեմբերից սկսած քաղաքում ուժեղացան ահաբեկչությունները: Մթնոլորտն առանձնապես սրվեց ջիհադի ֆեթավայի հրապարակումից հետո: Գերմանիայի հյուպատոս Բյուգեն նկատել է, որ դեկտեմբերին քաղաքում արդեն առկա էր բնաջնջման տագնապը: Դրա համար էլ երբ իշխանությունները պահանջեցին, որ հայ դասալիք զինվորները ներկայանան, բոլորը հեզությամբ ներկայացան ու գնդակահարվեցին:

Փետրվարի 18-ին, հայ զինվորներին զինաթափելու հետ միասին սկսեցին խուզարկությունները:

---

[1] Konst./ Ankara 170, Ab. 53a.

[2] **Veou P.** du La Passion de le Cilicie. Paris 1954, p. 148.

[3] **Ասպետ Ա.,** Դրուագներ Հաճնոյ հերոսամարտէն եւ հերոսին ոգիականը, Պէյրութ, 1961, էջ 53:

Հայերին հայտնի դարձավ Բ. Շաքիրի ծածկագրի մասին. «Թուրքիայում բնակվող բոլոր հայերին, առանց անգամ մեկ հոգու բացառելու, բնաջնջելու որոշումը կայացված է...»:

1915-ի սկզբներին Ավնին սկսեց ձերբակալել հայ երևելիներին: Սալջյան ազգանունով մի հայի, որն իբր պարեն էր վաճառել անգլիացիներին, մեղադրեցին լրտեսության մեջ և պատրվակ դարձրեցին ընդհանուր հաշվեհարդարի համար: Մի քանի անմեղ հայեր կախաղան հանվեցին: Մարտի 13-ին Բյուգեն հեռագրեց իր դեսպանին, թե Դյորթ-Յոլի հայության վրա չինծու գործ են ստեղծել և տղամարդկանց ձերբակալել են[1]:

Իթթիհադի պարագլուխներից Էոմեր Նաջին, որն այդ օրերին Ադանայում էր, հրամայում է սկսել տեղահանությունը: Նա իր հետ գաղտնի հրահանգ էր բերել: Հայերը դեռ չէին հասցրել զենքերը հանձնել, երբ մայիսի սկզբին քաղաք մտավ 2000 հոգանոց մի զորամաս Ղալիբի հրամանատարությամբ:

Բնականաբար, բնակչությունը զենքերի մի մասը թաքցրեց ինքնապաշտպանության նպատակով: Սակայն ի վերջո հայերին «համոզեցին» դրանք նույնպես հանձնել: Այդ ընթացքում քաղաքի 200 հարուստ և երևելի հայեր բանտ նետվեցին: «Ես մաքուր խղճով կարող եմ հավաստիացնել,- գրում է գերմանացի միսիոներուհի Մ. Դիդսցունը,- որ նրանցից չատերը երբեք ներքաշված չեն եղել քաղաքական խնդիրներում և պետության հավատարիմ հպատակներ էին հանդիսանում»: Նրանց գումարեցին մտավորականներին ու երեք օրում տարագրեցին՝ խլելով հայերի ողջ ունեցվածքը: Տեղահանությունը չարունակվեց մինչև դեկտեմբեր: Անգամ ծննդաբերող կանանց զիջում չարվեց:

Մեծահարուստ և բազմանդամ ընտանիքներին ինչ-որ փոխադրամիջոց և ձավար թույլատրում էին տանել: Այդ ընտանիքների ամբողջ ունեցվածքն անցավ թուրքերին: Հայերը մի ակնթարթում աղքատների վերածվեցին: Մանավանդ, որ վարձված սայլվորները, երկար ճանապարհ չանցած, հայերի գույքը սայլերից թափում էին ու հետ դառնում:

Հայերը հարկադրված էին թափված գույքից վերցնել միայն ամենաանհրաժեշտը՝ չալակով տանելու համար, իսկ եթե գրկի երեխա կար, այդ հնարավորությունն ավելի էր փոքրանում: Դրա հետևանքով կարավաններում սովն սկսվեց մինչև Օսմանիե հասնելը:

Եղան նաև դեպքեր, երբ իշխանությունները պարզապես արգելեցին տեղահանվածներին իրենց հետ սննդամթերք կամ անկողին տանել[2]:

«Կ. Պոլիս իմ ուղևորության ժամանակ նորից հանդիպեցի քաղցից մեռնող, կիսամերկ, հիվանդ անհամար թվով մարդկանց, որոնց վիճակն անհնար է նկարագրել»:

Որ կարավանները կողոպտվում էին, խոստովանում էին նաև իշխանությունները: Թուրքական մի բարձրաստիճան սպա Մ. Դիդսցունին ասել է. «Մադա՛մ, մեր կառավարությունը լոկ դրսևորում է արդարություն և գթասրտություն: Գերմանիան ուզում էր որ մենք բնաջնջեինք հայերին: Բայց մենք

---

[1] (**Lepsius J.**), նշվ. աշխ., էջ 23:

[2] Նույն տեղում, էջ 18-19:

այնքան գթասիրտ ենք, որ նրանց միայն տարագրեցինք...»: Կեղծիք է: Հայերին նախ իշխանություններն ու մահմեդական բնակչությունը կողոպտում էին տեղում, տարագրվելուց մի քանի օր կամ ժամ առաջ: Ճանապարհին կողոպտում էին ժանդարմները, չեթեները և մահմեդական խուժանը, իսկ անապատում, նրանց լրիվ մերկացնելու համար անհամբեր սպասում էին քոչվոր արաբները, որոնք հայերի անգամ մետաղյա ատամներն էին հանում, սպանում կամ սովամահության մատնում:

Հաճընի ոստիկանական կոմիսարը հարկադրված էր խոստովանել. «Երեք տարի է ես այստեղ եմ և որևէ անգամ բողոքելու պատճառ չեմ ունեցել: Ես անկեղծորեն ցավում եմ Հաճընին: Սա անարդար է»:

1915 թ. սեպտեմբերի 3-ին երեկոյան ժամը 9-ին Հաճընի չուկայում հրդեհ բռնկվեց: Երկար ժամանակ բան չէր արվում կրակը հանգցնելու համար, իսկ ապա հրշեջ սրսկիչներով նավթ մղեցին դեպի հրդեհը: 3000 տնից կանգուն մնաց միայն 500-ը: Տեղահանվածների ունեցվածքը, որ լցված էր ամենամեծ եկեղեցին, նույնպես կրակի ճարակ դարձավ: Բողոքականների եկեղեցին հրդեհեցին ժանդարմները: Տասն օր անց տարագրվեցին վերջին 200 հայերը՝ արհեստավորներ, զինվորականների ընտանիքներ՝ մերկ, առանց որևէ միջոցի[1]:

Հաճընի ողբերգությունը հետևյալ կերպ է ներկայացնում Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանը. «Հաճընը հայաբնակ էր, 28 հազար բնակիչով: 1915 թ. ամռանն իրեն հնչակյան ներկայացնող ոմն Արամ ոստիկանությանը հայտնում է հայերի զենքերի թաքստարանները: Քաղաքը զրկվեց պաշտպանվելու հնարավորությունից, որի հետևանքով Հաճընի 28 հազար և 22 գյուղերի հայ բնակչությունից մնացին 350 ծերեր և երեխաներ:

Տեղահանության առաջին օրերին՝ 1915 թ. ապրիլին, բարձունքի վրա գտնվող վանքում դիրքեր գրավեցին 2000 զինվոր ու հարյուրավոր ժանդարմներ՝ Ադանայի ժանդարմերիայի հրամանատար արյունարբու Ավնիի ղեկավարությամբ: Բարձունքին թնդանոթներ տեղադրելով՝ քաղաքը թիրախի վերածեցին. հայերն անկարող էին դիմադրել:

Այդ նույն Ավնին մի տարի անց տեղահանելով ջարդեց Ամանոսի լեռներում երկաթուղի կառուցող 10.000 հայի Բաղչե-Մարաչ ճանապարհի վրա:

ԱԴԱՆԱ. – «Պատերազմի սկզբում,- իր հուշերում գրում է Թալեաթը,- Ադանայում նույնպես սկսվեցին ապստամբական շարժումներ: Հայերը լրտեսություն էին անում հօգուտ Անտանտի, իսկ հարկ եղած պահին նաև միանում նրանց զորքերին»: Նրանցից շատերը ձերբակալվեցին, բռնագրավվեցին զենքեր, դրոշակներ և այլն[2]:

Կենտրոնը դրանով էր բացատրում իր շահագրգիռ դիրքորոշումը ոչնչացնելու նաև Ադանայի ու ողջ Կիլիկիայի հայությանը: Ադանան ամբողջ 1915-1916 թթ. Բարձր Դռան և անձամբ Թալեաթի ուշադրության կենտրոնում էր: Հավանաբար այստեղ դեր խաղացել են նաև աշխարհաքաղաքական գործոնները: Համենայն դեպս՝ վիլայեթի հայության դիրքորոշումն ու քաղաքական

---

[1] Konst./Ankara 171, Ab. 2725.

[2] Թալեաթի հուշագրությունները:

վարքագիծը, բացի զեյթունցիներից, հիմք ծառայել չէին կարող նրա հանդեպ առանձնահատուկ խիստ վերաբերմունքի համար, մինչդեռ Կ. Պոլիսը իշխանության տեղական մարմիններին դեպի հայերի հաշվեհարդար էր մղում: Վերջիններս սկզբում չհասկացան Կ. Պոլսի քաղաքականության իմաստը, ապա հասկացան ու զգուշացան և, ի վերջո, նրանց «խելքի բերեցին»: Ռեոսլերը վկայում է, որ Իթթիհադի Ադանայի պատասխանատու քարտուղար Շ. Սաֆան սպառնում էր ընդհանուր ջարդով, եթե հայերը խույս տան տարագրությունից:

Մարտի վերջին Ադանայում նույնպես չչուկներ տարածվեցին, թե ջարդեր են սպասվում:

Բյուգեն անդրադառնալով երիտթուրքական հերյուրանքներին, գրում է. «Հայերի աքսորի վրա պնդելը, ելնելով ռազմական ու քաղաքական նկատառումներից, կատարված ուսումնասիրություններով հերքվում է: Համենայն դեպս, Ադանայում, որտեղ ռազմական որևէ նկատառում գոյություն չունի, հայերին կասկածելը լրտեսության մեջ՝ դատարկ խոսակցություն է»[1]:

Այդպես էր մտածում ոչ միայն Բյուգեն:

Դեռ այն ժամանակ, երբ տարագրություններն ու ջարդերը նոր էին ծայր առնում, տեղում գտնվող օտարերկրացիները, այդ թվում նաև գերմանացիները, ամենայն որոշակիությամբ մերժում էին թուրքական հերյուրանքները, թե հայերը հակակառավարական տրամադրություններ և, առավել ևս, գործունեություն էին դրսևորում:

Բյուգեն նաև վկայում է. որ Ադանայի վիլայեթի հայերը, բացառությամբ Հաճընի և Դյորթ-Յոլի գավառների, զենք չունեին և փոքրամասնություն էին կազմում: «Ռազմական տեսակետից ... նրանք ոչ մի չանս չունեն խռովություն բարձրացնելու, քանի որ միակ գործոնը որ կարող է առաջ բերել խռովություն, դա միաժամանակյա օգնությունն է արտաքին հզոր ուժերից»: Իսկ հայերը նման օգնության հույս չունեին: «Դրա համար էլ այս կամ այն թերթում երևացող լուրերը երկրի այս մասում հայերի հնարավոր հուզումների մասին հանդիսանում է մասամբ հայերի դեմ ոտնձգությունների վերաբերյալ հաղորդագրությունների սխալ ընկալում, մասամբ էլ՝ ուղղակի հնարովի հաղորդագրություններ, որպեսզի դրանք պատրվակ դարձնեն հայերի դեմ բռնությունների համար: Իրականությունն այն է, որ հայերն ապրում են մահմեդական ազգաբնակչության իրականացրած դաժանությունների և մշտական վախի պայմաններում»: Հետևաբար անհնար է հավատալ, թե նրանք գաղտնի կազմակերպություններ ունեին: Երբ հույները հայերին զենք առաջարկեցին, նրանք հրաժարվեցին ընդունել:

Ադանահայության նման կեցվածքը հասկանալի է: Նրանք դառը փորձ ունեին և չէին հավատում տերությունների խոստումներին:

Բեռնում գերմանական միսիայի ղեկավար Հայնզիդելը 1915 թ. հոկտեմբերի 19-ին Բեռլինին տեղյակ պահեց Թալեաթին Սալիհ բեյ Գյուրջիի գրած նամակի մասին, որում նշվում էր, թե Թուրքիայում հայերի դեմ բռնությունները

---

[1] *Konst./Ankara 96, Ab. 5932-1012.*

նպատակ են հետապնդում բնաջնջելու նրանց, ինչը բխում է կայսրության վիճակից: Առանց հայերից ազատվելու՝ Թուրքիան առողջանալ չի կարող: Բայց սխալ է, որ Կ. Պոլիսը Հայկական հարցը աշխատում է լուծել միայն ջարդերի միջոցով[1]:

Ռեոսլերը Ադանայի և Հալեպի նահանգներում ջարդերի գլխավոր պատճառներից մեկը համարում է այն, որ այդ նահանգները հանդիսանում էին տեղահանության նախնական կայաններ, որտեղ տարագիրների նշանակալից մասը կանգ էր առնում մինչև 1915 թ. աշունը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները, ապա քշվում անապատ: Նա դառնությամբ է գրում, թե «ինչպիսի անմարդկային ձևով էին իրականացվում հայերի հանդեպ թուրքական կառավարության ծրագրած միջոցառումները»[2]:

1909 թ. նահանգի հարևանությամբ կանգնած քաղաքակիրթ երկրների նավերը դիտողի դերում մնացին, երբ Ադանայի փողոցները կարմրում էին հայերի արյունով:

Ադանայում բարենորոգումների նկատմամբ ոչ մի կամ գրեթե ոչ մի վստահություն չկար, քանի որ չէին հավատում, որ երբևիցե Թուրքիայում քրիստոնյաներն ու մահմեդականները հավասար իրավունքներ կունենային:

Գնալով Միջերկրականի այս ափի նավահանգիստներում ավելի հաճախ էին երևում գերմանական նավեր, որի շնորհիվ աշխուժանում էին նաև հայերի ու գերմանացիների չփումները: Գերմանացիների այցելությունները Կիլիկիայի կաթողիկոսին սովորական էին դարձել: Դրա հետ միասին, հայերը շարունակում էին մերժել Գերմանիայի քաղաքականությունը Թուրքիայում[3]:

Նույն Բյուգեն 1915 թ. հուլիսի 24-ին հաղորդեց. «Անկասկած է, որ ներկայումս իրականացվող դրակոնյան միջոցառումները ոչ միայն հայերի, այլ նաև Օսմանյան կայսրության քրիստոնյա մյուս տարրերի հանդեպ ընդհանուր առմամբ ունենալու են այնպիսի ազդեցություն կամ, ավելի ճիշտ, դրանք հասցնելու են այնպիսի խառնաշփոթի, որ Թուրքիայի ողջ ազգաբնակչությունը այլևս չվստահի կառավարությանը... որի ձեռնարկած բռնի միջոցները կործանելու են գավառները... Այստեղ նույնպես չեն գործում հայկական գաղտնի կամ հեղափոխական կազմակերպություններ... Հայերի մոտ առանձին դեպքերում զենք գտել են, ինչը ներկայացվում է որպես նրանց մերկացնող փաստարկ: Եթե ստուգումներ անցկացվեն, մահմեդականների մոտ կհայտնաբերվեն անհամեմատ ավելի մեծ քանակությամբ զենքեր, որոնք, իհարկե, իշխանությունները ոչ մի դեպքում չէին ցանկանա բռնագրավել, որպեսզի նրանց չզրկեն կոտորածի համար անհրաժեշտ աշխատամիջոցից: Ընդհանրապես Ադանայի հայության մասին կարևոր է ասել, որ նրանք, չնայած իրենց հանդեպ հետևողական դաժան վերաբերմունքին, որին ենթարկվում են նաև ներկայումս, բավական հաշտ տրամադրություն են դրսևորում: Նրանցից ավելին պահանջել անարդար կլիներ:

---

[1] Konst./Ankara 96, Ab. 5932-1012.

[2] Նույն տեղում:

[3] Konst./Ankara 165, Ab. 53a.

Գերմանիայի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող առանձնահատուկ հարաբերությունների պայմաններում,- շարունակում է հյուպատոսը,- հասարակությանը հայտնի է այն տեսակետը, թե թուրքական միջոցառումները իրականացվում են մեր համաձայնությամբ և դրա համար էլ թուրքերի իրականացրած և հասարակությանը առանձնակի հետաքրքրող միջոցառումներն անմիջապես ընկալվում են որպես գերմանացիների հավանությանն արժանացած, դեռ ավելին, նրանց կողմից շրջանառության մեջ դրված հրահանգ[1]:

Ապրիլի 7-ին Ռեոսլերը հեռագրեց, թե երկիրն ավերվում է՝ ակնարկելով տարագրությունը[2]: Մայիսի 12-ին, 23-ին, 31-ին հեռագրեր, իսկ 16-ին շրջաբերական հրահանգներ ստացվեցին Կ. Պոլսից, չնայած տարագրության մասին օրենքը հրապարակվեց մայիսի 27-ին և դրանից առաջ ամիսներ շարունակ տարագրություններն արդեն տեղի էին ունենում: Մայիսի 26-ին Ռեոսլերը հեռագրեց, թե Ադանայի վիլայեթից տարագրվել է 10 հազար հայ[3]: Մայիսի 18-ին նա գրեց, թե Ադանայի բանտերը լեփ-լեցուն էին հայերով: Նույն օրը Էնվերը գերմանացիներից խնդրեց հայերի հարցում իր ձեռքերին ազատություն տալ: Այդ օրն էլ հրաման եղավ ադանացի հայերին ցրելու Հալեպի գյուղերում[4]:

Հունիսի 5-ին Կարինում և այլուր լուր տարածվեց, թե «Ադանան ապստամբել է»: Հունիսի 10-ին գերմանական դեսպանատունը հեռագիր է ստանում, որ այդ լուրը սադրանք է:

Հենվելով Կ. Պոլսի ցուցումների վրա՝ Ադանայի վալին ապրիլի 17-ի ժանդարմական գնդի հրամանատարին գրեց. «Կոմիտեներին պատկանողներին և ուրիշ վնասակար անձանց, որոնք պետք է ձերբակալվեն, նրանց մոտ հայտնաբերված ռումբ կամ արգելված զենքերի հետ լուսանկարե՛ք և լուսանկարները մեծ չափերով հանել տվե՛ք: Դրանք չտապ ուղարկելու և ձերբակալված ու տարագրված անձերի անուններն էլ հայտնելու մասին ՆԳ նախարարությունը հեռագիր է ուղարկել»[5]:

Բյուգեն 1915 թ. սեպտեմբերի 6-ին գրեց. «Հայերի աքսորը օրեցօր ավելի ու ավելի ստանում է ջարդի բնույթ: Վերջերս Ուլու Կիշլայի տակ ժանդարմները յոթ հայ սպանեցին: Օգոստոսի 20-ին Քաեսանից հյուսիս չորումցի 120 տղամարդու սպանեցին իրենց ընտանիքների աչքի առաջ և 62 աղջկա էլ տարան իրենց հետ: Ժանդարմները կողոպտեցին հայկական գյուղերը[6]:

Ոչ միայն սեփական բնակավայրերում, այլև տարագրության ճանապարհներին հայերին, ավազակներից բացի, կողոպտում էին նաև իշխանությունները: Գերմանացի ինժեներ Պ. Քերնը գրում է, թե Էրեյլի քաղաք մտնելու համար հայերից հինգ դուրուշ, իսկ կամրջով անցնելու համար երկու դուրուշ էին գանձում: Հացը տրվում էր միայն դրամով, իսկ ջուր ընդհանրապես չէին տալիս: Օսմանիեում մի հացի համար վերցնում էին 5-6 դուրուշ, գյուղացիները գրեթե

---

[1] Konst./Ankara 96, Ab. 5932-1012.

[2] **Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., էջ 50:

[3] Նույն տեղում, էջ 76:

[4] Նույն տեղում, էջ 81:

[5] Նույն տեղում, էջ 132:

[6] Konst./Ankara 170, Ab. 53.

ամեն գիշեր կողոպտում էին այստեղ կանգ առած 20 հազար հայերին[1]:

Ադանայի որբանոցի տնօրեն Օսման բեյը քրիստոնյա դաստիարակչուհիներից պահանջեց մահմեդականություն ընդունել, կամ թողնել աշխատանքը: Հարկադրանքի տակ՝ 35 հայ աղջիկներ որբանոցից հեռացան[2]:

Մերսինի երկաթուղու պետ Մայերը վկայել է, թե երկաթուղային մի թուրք բանվոր Ուլու Կիշլայի մերձակայքում սպանում է հայերի ու ասում, որ այդ անում է գայմագամի հանձնարարությամբ: Օսմանիեում կողոպտում են հայ հարուստների կարավանը: Այդ լսելով՝ Ադանայի վալին սեպտեմբերի 22-ին դեպքի վայրն է շտապում կողոպուտից բաժին ստանալու համար:

Բյուգեն դեսպանին գրեց, որ օգոստոսի 29-ին մի խումբ ժանդարմներ, որոնք ուղեկցում էին Թալասից տարագրված հայերի խմբին, անմարդաբնակ վայրում հարձակվում են նրանց վրա և բռնություններ գործադրելով խլում փողերը:

Իսկ երբ հրաման ստացվեց կարավաններն Ադանայից ուղարկել, տեղի պաշտոնեությունը իրեն նվիրեց ամենագազրելի դրամաշորթության:

«Ուլու Կիշլայում ժանդարմները համատեղ էին հանդես գալիս իրենց պետերի հետ, որպես կազմակերպված ավազակախումբ: Բոլոր կարավանները պարտավոր էին մուծում կատարել... Իզմիտի կարավանը վճարել չկարողանալու համար յոթ հոգու զոհ տվեց:

Գնդապետ Սուլեյմանը և Օսմանիեի մութեսարիֆ Ֆեթհի բեյը դյորթյոլցի հայերին դուրս հանելու գործը վերածեց նրանց զանգվածային կողոպուտի:

Մ. Դիդսցունը 1915 թ. սեպտեմբերի 15-ին Հաճընից գրում է, որ Կարինից եկած կարավանները նույնպես բաժանվում էին խմբերի ու ոչնչացվում: Ժանդարմները զոհերին հասցնում էին սպանության վայրը, իսկ հայերի դահիճ քրդերը հայտարարում էին, թե գործում են կառավարության հրամանով: Քարավանին ուղեկցում էր Ադրյամանի գայմագամը: Նախ խլեցին աքսորյալների անասունները, սննդամթերքը, երեխաների հագուստները, ապա նաև իրենց՝ երեխաներին:

4-րդ բանակի շտաբի պետ Ֆոն Կրեսը հայտարարեց. «Երբ թուրքերը տրամադրվում են ճանապարհին սպանելու տղամարդկանց, ապա պատրվակ են օգտագործում, թե պետք է պաշտպանվեն խռովությունից, երբ բռնաբարում ու առևանգում են կանանց ու երեխաներին, օգտագործում են ուրիշ պատրվակ, թե չեն կարողանում վերահսկել քրդերին ու ժանդարմներին, երբ հարկադրում են գաղթականներին քաղցի մատնվել, ապա օգտագործում են պատրվակ, թե տեղափոխության ընթացքում սննդի կազմակերպումն այնքան բարդ է, որ չեն կարողանում գլուխ բերել, բայց որ նրանք Հալեպ քաղաքում թույլ են տալիս, որ երեխաներն իրենց գոյությունը քարշ տան սովալլուկ, ցրտի և կեղտի մեջ, ապա դրան ներում չկա:

Որբանոցում որբերը ձմռանը գրեթե առանց ծածկոցների էին քնում: Բայց, երբ տեղի հայերը հանգանակության միջոցով ծածկոցներ գնեցին, որբանոցի

---

[1] *R 14088, Ab. 30012.*

[2] *Նույն տեղում:*

տնօրենությունն արգելեց դրանք երեխաներին տալ»[1]:

Օգոստոսի 11-ին Աղանայից տարագրեցին նաև հայ կաթոլիկներին ու բողոքականներին[2]:

Աղանայի նահանգի Այրան քաղաքում բռնագաղթից երկու ամիս առաջ տեղական պաշտոնեության ուժերով չարագույժ մարդահամար անցկացվեց: Տեղահանության նախօրյակին Աղանայից եկավ ժանդարմական մի ջոկատ ու ամրացավ քաղաքի վրա իշխող բարձունքին: Երկաթուղաշինությամբ զբաղվելու ընդունակ հայերը պետք է մեկնեին և նրանց հավաքեցին փչալարերով շրջափակված ճամբարում: Նրանք ժանդարմների հսկողության ներքո բռնեցին գաղթի ճամփան: Թուրքերը քշեցին ոչ միայն տղամարդկանց. այլև անչափահաս տղաներին ու աղջիկներին: Օրը մի կտոր չոր հաց էին տալիս ու հետիոտն տանում Մարաշի ուղղությամբ:

Հենց մտան անտառ՝ տեսան բազմաթիվ դիակներ: Ամենուրեք գարշահոտություն էր: Ով կարավանից հետ էր մնում, դաշունահար ընկնում էր: Աղջիկները հագել էին բանվորական հագուստներ, երեսներին ցեխ էին քսել, որպեսզի փրկվեն առևանգումից:

Հաջորդ օրվա երեկոյան դրամ հավաքեցին ու «փեշքեշ» տվեցին ժանդարմների հրամանատարին: Հասան Ֆնտրճաղ, որտեղ կուտակված էին մեծաթիվ զորք ու բաչիբոզուկ: Նրանք, կանգնած ճանապարհի երկու կողմերին, նայում էին անցնող հայերին՝ ընտրություն էին կատարում: Նստելու հրաման տվեցին: Շրջանաձև նստեցնելուց հետո դուրս հանեցին տղամարդկանց, ապա հավաքված ամբոխը հարձակվեց կարավանի վրա ու կողոպտեց: Շարունակեցին առաջ գնալ:

Երրորդ օրը կարավանի դեմ դուրս եկան նախորդ կարավանը տարած ու վերադարձող ժանդարմները, որոնք կրակ բացեցին տարագիրների վրա: Նրանց միացան կարավանն ուղեկցողները: Այդ արվեց, որպեսզի կողոպուտի համար խառնաշփոթ առաջանար: Կողոպուտի ընթացքում գնդակահար եղան մեծ թվով հայեր: Զհասած Աղսու գետին՝ վիրավորներին առանձնացրեցին և բոլորին սպանեցին, գիշերը կանանց բռնաբարեցին:

«50.000 հայի պետք է վագոններով Ռաջոյից և Կաթմայից տեղափոխեին Ռաս-ուլ-Այն: Օրը տեղափոխում էին 1000 հոգի: Վագոնները լցնում էին նաև ծանր հիվանդներին, իսկ դիակներն իրար վրա դարսում էին կայարաններում»[3]:

Գերմանիայի հյուպատոսը Կիլիկիայի ջարդերի պատկերը ամբողջացնում է. «Տեղի ունեցավ կռիվ ժանդարմների ու դասալիքների միջև: Ժանդարմներից մի քանիսը սպանվեցին: 20 հայեր, այդ թվում նաև դասալիքներ, դիրքեր բռնեցին մի վանքում: Մարտի սկզբներին թուրքական մեծ ուժեր հարձակման անցան և պաշարեցին Զեյթունը, քաղաքը հանձնվեց, կարճատև մարտից հետո դասալիքները փախան: Որպես պատիժ՝ ամբողջ քաղաքը տարագրվեց մասամբ Կոնիայի ճահճուտ մասերը, մասամբ Միջագետքի անապատ՝ Եփրատի

---

[1] *R 14089, Ab. 36213.*

[2] ***Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., էջ 138:*

[3] *R 14089, Ab. 36213.*

մերձակայքում: Դրան հետևեց Կիլիկիայի հայ բնակչությունը (ավելի քան 200 հազար հոգի): Հալեպի վալի Ջելալ բեյը այս միջոցառմանը դիմադրեց, հայտարարելով, թե հարյուր հազարավոր անմեղներ հարկադրված են վճարել մի քանի մարդկանց մեղքերի համար: Նրան աշխատանքի տեղափոխեցին Կոնիա: Բռնագաղթի հրամանն, ինչպես ամենուրեք, այնպես էլ այստեղ տալիս էր Կ. Պոլսի կենտրոնական կառավարությունը: Կիլիկիայից տեղահանությունը հանձնարարվեց Սիրիայի պարետ Ջեմալ փաշային: Հայերին 10 օր ժամանակ տրվեց, որպեսզի վաճառեն իրենց այն ունեցվածքը, որը հետները տանել չէին կարող: Ջնայած կախաղանների, սպանությունների և անկարգությունների այլևայլ արտահայտությունների, տեղահանությունն ամբողջությամբ անցավ հանդարտ: Հայերին երկար այս ու այն կողմ տարան, հաճախ առանց բավարար սննդի: Շատերը մեռան: Ապա նրանց բնակեցրին Մաուրանում՝ Եփրատի ափին, որտեղ մի քանի ամիս անց մասամբ կարողացան խրճիթներ կառուցել և արհեստագործական աշխատանք գտնել: Սակայն մեծ կարիքի մեջ գտնվողների և անօգնականների, սովամահության դատապարտվածների թիվը, Գերմանիայի հյուպատոսների տվյալներով, շատ մեծ էր[1]:

Վերապրող հայերին ոչնչացնելու մասին մի քանի հրահանգներ եղան 1917 թ.: Օրինակ, նոյեմբերի 6-ին այդպիսի մի հրահանգ հրապարակվեց «Սանայի մեքտեբի» անունով, իսկ դեկտեմբերի 27-ին՝ մի ուրիշը՝ Դալ-ուլ-Մուալլիմինի հայ բանվորների վերաբերյալ: Հայ տարագիրներին հավաքեցին ու լցրեցին ոստիկանատները, խանները, մզկիթներն ու բակերը: Արաբական մի շարք բնակավայրերում մեծ թվով հայեր էին խոնվել՝ անգլիական գոտի անցնելու հույսով: Յոթնեղբայրյանի խումբն այդ շրջաններից հայեր էր փախցնում՝ նրանց փրկելու համար: Նույն նպատակով ներկայացուցիչներ էր ուղարկել նաև Բարեգործականը:

Մանավանդ մեծ թվով գաղթականներ էին կուտակվել Դամասկոսի մոտակա Ջեբել Դրուզում: Թուրքական իշխանությունները ջանացին ձեռք ձգել այդ հայերին: Տեղի Սուլթան Ատրաշին նույնիսկ մեծ կաշառք առաջարկեցին՝ հայերին իրենց տալու: Սակայն Ատրաշը, որ դրուզ էր, մերժեց:

Այդպես ավարտվեց 1917 թվականը:

Արդյունքում՝ Ադանայի նահանգապետի ինքնագոհ հեռագիրը. «Գոհունակությամբ կարող եմ հայտնել, որ կառավարության մտադրության համաձայն, ինչպես այստեղ, այնպես էլ Մարաշի սանջակում հաջողվել է լրիվ փոխել (ազգաբնակչության ազգային կազմի) տոկոսային հարաբերությունը: Իմ վիլայեթը մաքրված է քրիստոնյաներից: Եթե երկու տարի առաջ վաճառականների ու արհեստավորների 80 տոկոսից ավելին քրիստոնյաներ էին, այժմ 95 տոկոսը կազմում են մահմեդականները և միայն 5 տոկոսը՝ քրիստոնյաները»[2]:

Ադանայի վիլայեթի հայության ջարդերի կազմակերպիչներն էին վալի Ջևդեթը, հարյուրապետ Յաչարը, Իթթիհադի պատասխանատու քարտուղար Ջեմալը: Ոճիրների գլխավոր գործիքը բանակն էր, որը գտնվում էր «հայասեր»

---

[1] R 14089, Ab. 39028.

[2] Wien HHSTA PA XI 275, Konstantinopel, 27 Februar 1917, № 47.

Ջեմալ փաշայի հրամանատարության տակ:

Կիլիկիահայության բռնագաղթն ու ջարդը հերքում են թուրքական այն պնդումը, թե տեղահանություն կատարվել է միայն ռազմաճակատամերձ տարածքներից: Զեյթունը ռազմաճակատից Թուրքիայի ամենահեռու կետերից մեկն էր: Բյուգեն սեպտեմբերի 13-ին տեղեկագրեց, թե Ադանայից տարագրվում են անգամ այրի կանայք, որբերը, զինվորականների ընտանիքները, անգամ հիվանդներն ու կույրերը:

Նահանգների թուրք պաշտոնատարներից միայն վալի Ջելալ բեյն էր դեմ տարագրությանը: «Մեր չափ կը ցաւէր աննախադէպ թշուառութեան համար,- գրում է Սահակ կաթողիկոսը,- բայց օգնել չէր կրնար: Ի վերջոյ իր զգացմունքի զոհ դարձաւ...»: Նրան աշխատանքից ազատեցին: «...Մեկնեցաւ գրեթէ արտասուելով եւ եկեղեցւոյ գաւիթին մէջ գաղթականներ ու թափուած բազմութիւններ տեսնելով, յայտարարեց. «Երանի գետինը պատռուէր ու զիս կուլ տար, քան տեսնէի այս պարզուած թշուառութիւնը»[1]:

Ադանայով անցնող տարագիրների թիվը գնալով աճում էր: Ռեոսլերը հայտնեց, որ Այնթապի մերձակայքով անցած բռնագաղթվածների թիվը սեպտեմբերին 50.000-ի հասավ:

Գետը Ջարաբլուս հասցրեց մի դիակ՝ կտրված սեռական օրգաններով:

Հուլիսի 14-ին Հալեպ հասած կարավանն իր հետ բերել էր 12 դիակ: Հալեպով անապատ տարվող մի քանի կանայք իրենց փոքրիկ երեխաներին չորի մեջ փաթաթած թողեցին քաղաքում, որպեսզի չտանեն դեպի հաստատ մահ կամ թշվառություն: Շատ կանայք ճանապարհին ծննդաբերել էին ուղեկցող պահակախմբերի դաժան վերաբերմունքի պայմաններում: Նորածիններին և մյուս փոքր երեխաներին թողել էին ճանապարհներին: Դեր Զորով անցնող կարավաններում բռնկվել էր համաճարակ՝ ծաղիկ հիվանդություն, իսկ Բաղդադով անցնողների շրջանում դիզենտերիա: Հալեպում փախստականների շրջանում տարածվել էր ջերմախտը:

Բռնագաղթվածների հանդեպ անմարդկային վերաբերմունք ցուցաբերելու հրամանի հեղինակը Ֆակիր փաշան էր: Նույնիսկ թռուցիկներ էին տարածվում մահմեդականներին հայերի դեմ գրգռելու համար[2]:

Երբ Կիլիկիայի գյուղերի բնակիչները տեղահանվեցին, նրանցից շատերն իրենց հետ դեռ ունեին ավանակներ և տեղափոխվելու, ունեցվածքը փոխադրելու համար ուրիշ անասուններ: Սակայն ուղեկցող զինվորները թույլատրեցին, որ ավանակներով գնան միայն քաթերջիները (էշ փախցնողները), որովհետև հատուկ հրամանով արգելված էր տեղահանվածներին գնալու ձի, էշ և կամ այլ կենդանի հեծած: Հաճընից դուրս գալիս, քաթերջիները տարան այն կենդանիները, որոնց վրա, նրանց կարծիքով, պետք է որ դրամ ու թանկարժեք իրեր լինեին: Մյուս անասունները թուրքերն ու արաբները խլեցին կամ ծիծաղելի գնով գնեցին: Մի կին 90 գլուխ ոչխարը վաճառեց 100 ղուրուշով (նախկինի 60-70 թուրքական լիրայի փոխարեն), այսինքն՝ 90 գլխի դիմաց ստացավ

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 481:

[2] R 14086, Ab. 23232.

մի գլխի գումարը: Հեկբունարից սկսվեց լեռնային ճանապարհը: Գնում էին հետիոտն, առանց սննդամթերքի և ունեցվածքի:

Ուղեկցող զինվորներն ասում էին, որ հրամանն այդպիսին է:

Ամերիկյան միսիային ու դեռևս չտեղահանված այնթապցիներին հաջողվեց գիշերը բերել հաց ու փող իրենց քաղաքի մոտով անցնող մոտ 20.000 հայերի համար: Նիսաբի ամերիկացիները նույնպես կարողացան նման օգնություն հասցնել հայերին:

Բռնագաղթվածների 4/5-ը կանայք ու երեխաներ էին, նրանցից 3/5-ը ոտաբոբիկ էր, առանց որևէ հագուստի: Բոլորը հյուծված էին և չէին կարողանում թաղել մեռելները: Շատ կանայք օրեր շարունակ չալակած տանում էին իրենց մեռած երեխաներին: Մի կին գիշերը երկվորյակներ ծնեց: Առավոտյան նրան երկու երեխան չալակած ճամփա հանեցին, և, շատ չանցած, նա վար ընկավ: Կինը հարկադրված եղավ երեխաներին թողնել թփի տակ: Նման փաստերը շատ են, Մարաշի Թաշխանեում՝ գտան երեք նորածինների՝ դրված թրիքի մեջ:

Այդ ճանապարհով անցած կարավանների կանայք ծնել էին շուրջ 300 երեխա:

Ճանապարհներին թափված էին երեխաների մեծ թվով չթաղված դիակներ: Շատ մայրեր երեխաներին ճանապարհին էին թողնում, որովհետև անկարող էին կերակրել: Ավելի մեծ երեխաներին խլում էին թուրքերը: Մի ընտանիք իր 18-ամյա աղջկան վաճառեց վեց լիրայով:

«Արդեն 28 օր Եփրատում դիակներ են երևում: Դրանք կապված են միմյանց 2-ական, 5-ական կամ 8-ական հոգով: Ողջ են մնում բռնագաղթված-ների կեսից էլ պակասը: Երկաթուղային կայարանում երեք օրում մեռավ 25 կին: Մի բողոքական հոգևորական թուրքին ասաց. «Այս տեղահանվածների անգամ կեսը կենդանի չի մնա»: Թուրքը պատասխանեց՝ «Մենք դրան էլ ձգտում ենք»:

Ադանայի թուրքերի խոստովանություններից ևս մի քանիսը. «Պոլսէն խիստ հրաման կայ չօգնել հայ կարաւաններուն... Ասոնք մեռնելու կը տարուին. որչափ շատ մեռնին, այնքան չուտ կ'ազատին»: Նրանք հայերին ասում էին, թե «մեռնելու կերթաք» և որ ունեցվածքներդ տանում եք, ի՞նչ պիտի անեք[1]:

Ադանայի զինվորական հիվանդանոցում թուրք վիրավոր զինվորը հայ բուժքույրին խոստովանում է. «Աստուծոյ պատիժն է. որ ես այնքան հայ աղ-ջիկներ սպանեցի եւ հիմա ալ հայ աղջկան օգնութեան կարոտ եմ...

Քո՛ւյրս, ես քո օգնութեանդ արժանի չեմ, ձգէ՛, որ չանսատակ ըլլամ: Եթէ գիտնայիր, թէ ինչ խժդժութիւններ գործած եմ հայ կիներու հանդէպ, ինձմէ պիտի փախչէիր»[2]:

Հայ կաթոլիկների պատրիարք Թերզյանը բուլղարական դեսպանատանը հանձնեց Ադանայի վալու հրամանը, համաձայն որի՝ բոլոր հայերը պարտավոր էին հուլիսի 15-ին հեռանալ Ադանայից, Մերեչեհիրից[3]:

---

[1] **Պալաքեան Գ.,** նշվ. աշխ., էջ 122:

[2] Նույն տեղում, էջ 200-201:

[3] Геноцидът над арменците... фонд № 321, оп. 1, д. 2462, с. 26.

Նույն դեսպանությունը 1915 թ. օգոստոսի 31-ին գրեց իր կառավարությանը, որ Ադանայի վալին հրաման է արձակել, թե Ս. Աստվածածնի տոնի օրը՝ օգոստոսի 15-ին հայ բնակչության մեծամասնությունը պարտավոր էր քաղաքից մեկնել Հալեպ, սպառնալիքով՝ ով փորձի խույս տալ տարագրությունից՝ մահապատժի կենթարկվի: Հայերին հեռացնում են ձեռնունայն: Երկաթուղով ուղարկվողներին թույլատրում են տանել մինչ «200 կգ բեռ», իսկ ով հետիոտն էր բռնագաղթվում, «բոլորովին մերկ հոտերի նման քշվում էին անտառներով ու լեռներով»: Հույներն ու հրեաները, օգտվելով հայերի դժբախտությունից, նրանց թանկարժեք ունեցվածքը գնում էին պարզապես ծիծաղելի գնով... Մի դաշնամուրը վաճառվել է 5 ղուրուշով: Իսկ Կահիրեում Ռուսաստանի դեսպանը գրեց, որ հայերի հանդեպ դաժանությունները ձեռք են բերել աննախադեպ ծավալներ, «Կողոպուտը, բռնությունը, կոտորածը և ոչ քիչ դեպքերում հայկական ամբողջ գյուղերի լրիվ բնաջնջումը մշտապես կրկնվում են: Անխղճաբար բաժանում են ընտանիքներին, կանանց՝ ամուսիններից, երեխաներին՝ ծնողներից և բոլորին աքսորում են տարբեր ուղղություններով»[1]:

Լեփսիուսը գրում է, թե չնայած Կիլիկիայում որևէ գյուղ ու քաղաք չխնայվեց, բայց Ադանայից տարագրվեց միայն 190 ընտանիք և «Ջեմալ փաշային է վերագրվում, որ նրանց մեծ մասը վերադարձվեցին իրենց տները»: Բայց քիչ անց Ադանայի 18.000 հայությանը ևս հարկադրեցին բռնելու գաղթի ճամփան[2]:

Շատ տեղերում, չարունակում է նա, բոլոր չափահաս տղամարդկանց զորակոչեցին, ապա «պարաններով ու չղթաներով իրար կապեցին: Կանայք էլ որոնք իրենց փոքրիկներին գրկած էին տանում կամ ծննդաբերության օրերին էին, անասունին քշելու նման խարազանի հարվածներով էին առաջ տարվում: Ես ականատես եղա, որ երեք կանայք ճանապարհին ծննդաբերեցին և արյունահոսությունից մեռան... Մի քանի կանայք այնքան էին ուժասպառվել ու հուսահատվել, որ իրենց փոքրիկ երեխաներին ճամփաների վրա թողեցին... Մի վայրում ժանդարմների սպան, ցույց տալով կանանց բազմությունը, իր մարդկանց ասաց, թե նրանց թույլատրում է որևէ կնոջ հետ իրենց ուզածն անելու:

Որոշ տեղերում կառավարությունը սնունդ տվեց տարագրյալներին, ուրիշ տեղերում թույլատրեց, որ տեղի բնակչությունը նույն բանն անի: Իսկ շատ տեղերում նրանց սնունդ չտրվեց և ոչ էլ ուրիշներին թույլատրվեց այդ անելու: Խեղճերը շատ տառապեցին քաղցից, ծարավից, հիվանդությունից և իրապես քաղցից մեռնողներ եղան»[3]:

Տարագրյալներին փոքր խմբերի բաժանեցին, 3-4-ական ընտանիք ուրիշ ցեղի և ուրիշ կրոնի պատկանող բնակչության մեջ ձգվեցին... Թեև ասվում է ընտանիք, սակայն դրանք կազմող անհատների 4/5-ը կանայք ու երեխաներ էին, իսկ եղած տղամարդիկ էլ ծերեր կամ հաշմանդամներ էին:

Եթե միջոց չգտնվի նրանց շուտափույթ օգնություն հասցնելու առաջիկա

---

[1] *АВПР, Политархив, д. 3804, л. 34.*

[2] ***Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., էջ 16-17:*

[3] *Նույն տեղում, էջ 18-19:*

երկու ամիսների ընթացքում... 2/3-ը կամ 3/4-ը քաղցից և հիվանդություններից կմեռնեն:

Կիլիկիայից տարագրված հայերի թիվը 100 հազարից անցնում էր: 1917 թ. դարձավ ցեղասպանությունից այս կամ այն պատճառով փրկվածների բնաջնջման տարի: Դրա արտահայտություններից մեկը ՆԳ նախարարության 1917 թ. հոկտ. 23-ի հրամանն է Հալեպի զինվորական հրամանատարությանը. «Վիլայեթի կայարաններում չոգեկառքերի պաշտոնյա և ծառայող հայերի ցուցակը կազմելու և յուրաքանչյուրի ինքնությունը հարցաքննությունով ճշտելու, նաև այն, թե նրանք ոստիկանությունում ինչ համարում ունեն, ովքեր կան նրանց ընտանիքների անդամներից ու ազգականներից, որոնց մասին ձեռք բերված տեղեկություններն արձանագրելու նրանց անվան դիմաց և ցուցակները չտապ մեզ ուղարկելու 1917 թ. հոկտեմբերի 23-ի շրջաբերականով հայտնված էր, բայց մինչև օրս պատասխանը չի ստացվել: Ուստի չտապ ուղարկե՛ք»[1]:

Կիլիկիան հայերից դատարկվեց և հետագայում այնտեղից անցնող տարագրության կարավանները չարագույժ պատկերների ականատես եղան: Սիս քաղաքից հայերի կարավաններին դուրս էին քշում ամենազազրելի միջոցներով, որովհետև այնտեղ հատուկենտ հայեր էին մնացել, որոնք թաքուն ինչ-որ օգնություն էին հասցնում քարավաններին: Քաղաքի 800 տուն հայից մնաց 50-60-ը: Մայրավանքը թուրք գաղթականների վարժարանի վերածվեց: 20 տարվա պատմություն ունեցող կաթողիկոսական գահը փչուր-փչուր արեցին: Օսմանիեում որևէ հայ չմնաց: Հայերի բոլոր տները տրվեցին թուրք գաղթականներին: Այդ քաղաքից ոչ հեռու է գտնվում սարսափազդու Կանլը Գեչիտ (Արյան անցք) ձորը, որ Օսմանիե-Հասանբեյլի ճանապարհին է, Ամանոս լեռան ստորոտում, որտեղ հազարավոր հայեր էին զոհ գնացել:

Ահա Կիլիկիայի ընդհանուր վիճակը, երբ Սահակ կաթողիկոսի խնդրանքին՝ «Հանուն Աստծոյ, մեռածներին հանգիստ, իսկ ապրողներին հաց տալ», Ջեմալ փաշան պատասխանեց. «Եթե բարեկամ հայերը, ֆրանսիացիներն ու անգլիացիները իմանան, թե ինչ է կատարվում հայկական մյուս շրջաններում և, եթե նրանք դա համեմատեն Կիլիկիայի վիճակի հետ, ինձ չնորհակալություն են հայտնելու»[2]:

1915 թ. օգոստոսի 3-ին կազմված մի տեղեկագրում կան հետևյալ տվյալները: Նախ նշվում է, թե Կիլիկիայից տարագիրների մեծ մասը Մարաշի և Ուրֆայի ճանապարհով տարան Վերանշեհիրի ուղղությամբ, 500-600 հոգու էլ Ադանայի ճանապարհով ուղարկեցին Կոնիա:

Հուլիսի 30-ի վիճակով՝ բռնագաղթը ներկայացնում էր հետևյալ պատկերը.

Ադանայի վալին նույն օրերին հեռագրեց ՆԳ նախարարությանը, թե կենտրոնական կազայից տարագրվել է 14216, Կարա Իսալու կազայից՝ 33, Ջիհանի կազայից՝ 318, Մերսինի կազայից՝ 756, Տարսուսից՝ 840, ընդամենը՝

---

[1] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 183:

[2] **Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., էջ 25:

16163 հայ: Նույն ժամանակ Ջեբել-Բերեքեթի սանջակից տարագրվել էր 12.275 հոգի, որից 7168-ը՝ Դյորթ-Յոլի և 3092-ը՝ Բախչեի կազաներից, Իչիլի սանջակից՝ 313 հոգի, Կոզանի սանջակից՝ 17382 հայ, որից Հաճընից՝ 10523 հոգի:

Վալին նաև նշում է, որ վիլայեթում գաղթը նոր է սկսվել, դրա համար էլ տվյալները փոքր են[1]:

Նա միաժամանակ գաղթականության գրասենյակին հայտ ներկայացրեց, որ Ադանայի վիլայեթ ուղարկեն 600 ընտանիք մուհաջիր[2]:

Կիլիկիահայությունն ապրեց իր պատմության ամենաահավոր մղձավանջը: Նրա բնակչության մեծ մասը կոտորվեց: Երկրամասին հասցված նյութական վնասը 300 միլիոն դոլար կազմեց:

---

[1] ***Փափազյան Ա.,*** *նշվ. աշխ., էջ168:*

[2] ***Ղազարեան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 206:*

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՏՐԱՊԻԶՈՆ

Տրապիզոնի նահանգի երկարությունը 474 կմ էր, իսկ լայնությունը՝ 74 կմ: Այսինքն այդ վիլայեթը զբաղեցնում էր Սև ծովի գրեթե ամբողջ հարավային ափը և ռազմավարական առանձնակի նշանակություն ուներ նեղուցների և Կ. Պոլսի նկատմամբ Ռուսաստանի ծրագրերում: Այդ էր պատճառը, որ Թուրքիան Տրապիզոնում նշանակալից ռազմական ուժեր էր պահում, մասնավորապես՝ ռազմական նավատորմիղ:

Կաղրային քաղաքականության մեջ նույնպես Կ. Պոլիսը սևեռուն ուշադրությամբ էր վերաբերում այս վիլայեթին, դրա ղեկավար կազմը համալրում կենտրոնական կառավարությանը հավատարիմ ու կարող ուժերով: Տրապիզոնի վալին Ջեմալ Ազմին էր՝ երիտթուրքական կուսակցության առաջատար գործիչներից մեկը: Նա, Դիարբեքիրի, Բաղեշի, Վանի և Սեբաստիայի վալիներ՝ Ռեշիդը, Աբդուլ Հալիկը, Ջևդեթն ու Մուամմերը հանդիսանում էին Հայոց ցեղասպանության կազմակերպիչների նահանգային մակարդակի առաջատար ուժերը, որոնք գործնականում օգտվում էին անսահմանափակ իրավունքներից: Ազմին վալի լինելուց բացի զբաղեցնում էր ռազմական դատարանի նախագահի, վիլայեթի զորքերի հրամանատարի, օժանդակ զինվորական ստորաբաժանումների հրամանատարի և նավահանգստային ծառայությունների ղեկավարի պաշտոնները:

Նա պատկանում էր առավել հայատյաց թուրք գործիչների թվին: 1919 թ. ռազմական դատարանը նրան ևս երիտթուրք պարագլուխների հետ հեռակա մահապատժի դատապարտեց: Դատարանի վճիռը 1922 թ. Բեռլինում ի կատար ածեցին Արշավիր Շիրակյանն ու Արամ Երկանյանը: Ազմիին ամեն կերպ աջակցում էին գերմանացի դիվանագետ Շուլենբերգն ու զինվորական Շտանկերը:

Տրապիզոնի վիլայեթի սանջակներն էին՝ Տրապիզոնը, Ջանիկը (Սամսոնը), Գյումյուշխանեն և Ռիզեն: 1882-ին նահանգում բնակվում էր 120.000 հայ: 1895 թ. ջարդերը կիսով չափ պակասեցրին հայերի թիվը: Մաղաքիա արք. Օրմանյանի տվյալներով՝ 1911 թ. վիլայեթում բնակվում էր 63500 հայ: Աշխարհամարտի սկզբին այդ թիվը հասավ 85.000-ի: Այս տվյալները շատ մոտավոր են: Կան հեղինակներ, որոնք նշում են, թե 1915 թ. Տրապիզոնի սանջակում կար 60.000, իսկ Սամսոնի սանջակում՝ 50.000 հայ: Հայերը հիմնականում բնակվում էին ծովափնյա շրջաններում՝ Տրապիզոն, Օրդու, Կիրասուն, Տրիպոլի, Ունիե, Ռիզե:

Օրդուի կազայում կար 23 հայաբնակ գյուղ:

Պատերազմի նախօրյակին նահանգում գործում էին 74 հայկական դպրոց՝ 5003 աշակերտով և 153 ուսուցչով, 78 եկեղեցի և 3 վանք:

Այդ տարիներին Տրապիզոնի առաջնորդը Եղիշե եպս. Դուրյանն էր:

1913–1914 թթ. վիլայեթում մեծ թվով չեթեական խմբեր կային, որոնք միավորվեցին «Թեչքիլաթի մախսուսայի» մեջ: Այդ կազմակերպությունը ձևավորվեց Բալկանյան պատերազմի վերջերին և հետապնդում էր պատերազմական և դիվերսիոն նպատակներ: Սակայն աշխարհամարտի հենց սկզբին Տրապիզոն ուղարկվեց երիտթուրքերի կենտկոմի անդամ Ռիզան՝ ձևավորելու նոր բնույթի թեչքիլաթ, կազմակերպություն, որի գլխավոր խնդիրը հայկական ջարդերն էին: Ռիզան ռազմական դատարանում ցուցմունք տվեց, որ բացի ռազմաճակատային թեչքիլաթից, կար նաև նույն անունը կրող կազմակերպություն, որը զբաղվում էր հայերի տեղահանության գործով[1]: Դատավճռում կարդում ենք. «Միություն և առաջադիմություն կուսակցության գլխավոր ղեկավարները կազմակերպեցին «Թեչքիլաթը»: Նրանք ընդունեցին և խոստովանեցին, որ իրենք անձամբ են ստանձնել «Թեչքիլաթի մախսուսայի» ղեկավարությունն ու հրամանատարությունը: Վավերագրական ապացույց կա, որ այդ հրոսակները ղեկավարվում էին Բ. Շաքիր բեյի կողմից, որ նա գործել է որպես Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավար և պատասխանատու ներկայացուցիչ: Ակնհայտ է, որ բոլոր ոճիրները նախապատրաստված ու գործադրված են այդ նույն կուսակցության կենտկոմի ղեկավարությամբ»[2]:

Անգամ 1914-ի երկրորդ կեսին «Թեչքիլաթի» գլխավոր կենտրոնը շարունակում էր մնալ Տրապիզոնի նահանգը: Այստեղ էին գործում այդ կազմակերպության առաջատար պարագլուխներից շատերը, այդ թվում Էնվերի մերձավոր Յ. Ջեմիլը, որն իր հրամանատարության տակ 2000 չեթե ուներ: Չեթեական խմբեր ունեին նաև Ռիզան և գերմանացի մի գնդապետ, որոնք բոլորը գործում էին համագործակցված: Ջեմալ Ազմին ինքն էր ձևավորում չեթեական ջարդարար ուժեր: Տրապիզոնում ԱՄՆ-ի հյուպատոս Օ. Հայզերի վկայությամբ՝ նա ոմն Ասլան բեյին տրամադրեց 500 հոգանոց հեծյալ ընտիր ջոկատ:

Կովկասյան ռազմաճակատի իրադարձությունները սուր արձագանք էին ունենում վիլայեթում, մասնավորապես մահմեդական բնակչության շրջանում: Դրա վկայություններից մեկն էլ այն է, որ Տրապիզոնի չեթեները Խոփայի վրայով անցան արևելք և 1914 թ. նոյեմբերին իրականացրին Արտանուչի հայության կոտորածը: Սակայն Արդահանում նրանք ջախջախվեցին:

Երբ Վ. Մինախորյանը ՀՅԴ Կարինի համագումարից վերադառնալիս կանգ է առնում Տրապիզոնում, ականատես է լինում թուրքերի կողմից հայերի հանդեպ բացարձակապես ուրիշ վերաբերմունքի: Նա գրում է. «Մէկ ամիս առաջ մէր տեսած կենսուրախ Տրապիզոնը այժմ սմքել ու կծկուել էր, հայերի հանդէպ վերաբերմունքը կոչտ էր ու ոստիկանական»[3]: Սամսոնում նույնպես «հայ-թրքական յարաբերութիւնները զգալապէս պաղել էին. նախ՝ ընդհատուել էին առեւտրական փոխյարաբերութիւնները, որովհետեւ յանձնակատար ձեռնարկութիւնների ստուարագոյնը հայերի ձեռքին էր, որոնք այժմ դատապարտուած էին անգործութեան»[4]:

---

[1] *«Takvim-i Vekai», 1919 թ., № 3561.*

[2] *Նույն տեղում, 1919 թ., № 3771:*

[3] ***Մինախորեան Վ.**, 1915 թուականը. Արհաւիրքի օրեր, Վենետիկ, 1949, էջ 90–91:*

[4] *Նույն տեղում, էջ 110:*

Երիտթուրքերի ղեկավարների դատավարության ժամանակ կարդացին Ստամբուլի պարետ Ջավիդի ծածկագիրը, այն է՝ «Տրապիզոնի իթթիհադական կազմակերպության ղեկավար Ա. Էյուբին և նրա գործընկերներին «Թեչքիլաթի» ծախսերի համար 50 օսմանյան լիրա է ուղարկվել»: Դատարանի նախագահը հարց է տալիս Ջավիդին, եթե «Թեչքիլաթը» զինվորական կազմակերպություն էր, ինչո՞ւ դրամն ուղարկվել էր բանակի հետ որևէ առնչություն չունեցող մեկին: Այդ իրողությունն ուշադրության արժանացավ նաև այն պատճառով, որ նման հեռագրերը եզակի չէին:

Դատարանում նշվեց, որ Բ. Շաքիրը «Թեչքիլաթի» հրոսակների գլուխն անցած Արդվինի շրջանի հայությանը կոտորելուց հետո Թալեաթին հայտնեց, թե «գործն ավարտել է»: Շուտով ստացվեց Իթթիհադի կենտրոնի պատասխանը. «Քանի որ այդտեղ այլևս անելիք չունեք, Արդվինից չտապ չարժվեք դեպի Տրապիզոն՝ առավել կարևոր պաշտոն ստանձնելու: Այստեղից եկող Յ. Ջեմիլ բեյը բերում է անհրաժեշտ հրահանգ և առաջադրանք»: Դատարանում Մ. Շյուքրին ասաց, որ խոսքը «հայրենիքին ծառայելու համար մի կարևոր հանձնարարության մասին էր»:

Ռիզան ցուցմունք տվեց. «Որևէ գյուղի տեղահանության նպատակով ուղարկվում էր երկու ժանդարմ, իսկ նրանց օգնելու համար նշանակվում էին տվյալ գյուղին կամ շրջանին ծանոթ ձեռնահաս և փորձառու մի քանի մարդիկ: Հավաքագրում էին մարդիկ, ստեղծում հրոսակախմբեր և դրանց անվանում «Թեչքիլաթի մախսուսա»... Այդ խմբերը, որտեղ ստեղծվել են, կառավարել են տվյալ շրջանի քաղաքացիական ղեկավարները»[1]:

Դատավճռում կարդում ենք. «...Տրապիզոնում, Յոզղաթում, Բողազլյանում և այլուր տեղի ունեցած կոտորածները կազմակերպել ու գործադրել են Միությունն և առաջադիմություն կուսակցության պարագլուխները»[2]:

Ռազմաճակատում տեղի ունեցած իրադարձությունները հարկադրում էին եռանդուն գործողությունների դիմել նաև թիկունքում: Ազմին չտապում էր, ձգտում օր առաջ լուծել հայերի հարցը: Այդ անելու համար նա գնաց զզվելի սադրանքի՝ դեռ մինչև պատերազմի մեջ Թուրքիայի մտնելը հայերին հաշվեհարդարի ենթարկել: 1914 թ. հոկտեմբերի 8-ին Ազմին գրեց Թալեաթին. «Ռուսները զինել են 800 հայերից կազմված մի խումբ, որն ուղարկվել է Արդվինի ուղղությամբ»: Ծրագրված է խմբի անդամների թիվը հասցնել 7000-ի: Նա գործելու է կայսրության ներսում և խնդիր ունի «խարխլելու պետության անվտանգությունը»: Կ. Պոլիսը բուռն արձագանքեց այս կեղծարարությանը:

Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Բերգֆելդը 1914 թ. նոյեմբերի 6-ին գրում է, թե ռուս-թուրքական պատերազմն սկսվելուց մի քանի օր անց ռուսները ռմբակոծեցին Տրապիզոնի՝ ռազմական նշանակություն ունեցող մի քանի շինություններ, ինչն իշխանություններն անմիջապես գործածեցին թուրք բնակչությանը զինելու, համոզելու, որ ռմբակոծության իսկական դրդապատճառները հայերն ու հույներն էին: 1914-ի վերջերին և 1915-ի սկզբներին

[1] «Takvim-i Vekai», 1919 թ., № 3554.

[2] Նույն տեղում, № 3604:

զորակոչված մեծ թվով հայեր զինաթափվեցին և ռուս ռազմագերիների հետ կոտորվեցին:

Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը 1914 թ. նոյեմբերի 8-ին տեղեկագրում է. «...Թուրքերը լի են լավատեսությամբ, իսկ հայերն ու հույներն ընկճված և անհանգստացած են մահմեդականներին զենք բաժանելու պատճառով»[1]:

Հանրի Բարբին գրում է, որ Սարիղամիշի ճակատամարտից հետո Տրապիզոնի բոլոր քրիստոնյա զինվորականները զինաթափվեցին և ուղարկվեցին կառուցելու Տրապիզոն-Գյումուշխանե ճանապարհն ու այստեղ էլ մեռան քաղցից ու ցրտից[2]:

Ռուսական բանակի կապիտան, ազգությամբ հույն Դ. Բալուլիսը գրում է. «Պատերազմի սկզբին բոլոր քրիստոնյաները զորակոչվեցին, բայց գործող բանակ չուղարկվեցին, այլ աշխատեցին ճանապարհների և ընդհանրապես, հաղորդակցության ուղիների վերանորոգման վրա: Տրապիզոն-Ժեզելիկ ճանապարհին կարելի էր տեսնել սայլերին լծված քրիստոնյաների, որոնք դրանք քաշում էին մինչև Բայբուրդ..»[3]:

1915 թ. ապրիլի 19-ին քաղաքում կատարվեցին զանգվածային խուզարկություններ ու մտավորականության ձերբակալություններ: Նույն բանը տեղի ունեցավ ամբողջ վիլայեթում և տևեց երեք օր:

Մայիս ամսին 250 հայ բանտ նետվեց: Հունիսի 24-ին ձերբակալվեցին հայ քաղաքական կուսակցությունների տեղական կազմակերպության անդամները: Նրանց բոլորին աքսորեցին[4]:

1915-ի մարտ-ապրիլ ամիսներին ձերբակալվեց Տրապիզոնի և Սամսոնի հայ մտավորականությունը: Վալին հայ երևելիներին առաջարկեց իր «ծառայությունը»՝ Սև ծովով անցնել Ռուսաստան՝ փրկվելու համար: Հայ գործիչները չհավատացին Ազմիի հոգացողությանը, բացի 42 հոգուց, որոնց թևերը կապեցին և հունիսի 11-ին փոխադրեցին Տրապիզոնից յոթ վերստ հեռու գտնվող Պլատանիա և նետեցին ծովը: Նրանցից փրկվեց միայն մեկը: Նա վերադարձավ քաղաք, գնաց գերմանական հյուպատոսություն և պատմեց կատարվածի մասին, սակայն հյուպատոսությունից դուրս գալու պահին ձերբակալեցին ու հիվանդանոցում թունավորելով մեռցրեցին:

Օ. Հայզերը 1915 թ. հուլիսի 28-ի իր տեղեկագրում պատմում է, որ հայերի այդ խմբի հետ նավ նստեցրեցին 41 զինված թուրքերի: Երբ նավը դուրս եկավ բաց ծով, թուրքերը կրակ բացեցին հայերի վրա: Վերջինների մոտ զենք կար և նրանք պատասխանեցին, բայց փրկվել չկարողացան:

Այս եղանակով ծովում խեղդվեց տրապիզոնցի 10.000 հայ[5]: Որևէ մեկին բացառություն չէր արվում: Երեխաներին պարանով կապում ու ծովն էին նետում[6]:

---

[1] «Բնօրրան», Երևան, 1995 թ., № 1, էջ 10:
[2] **Барби А.,** В стране ужаса. Мученица Армения. Т., 1919, с. 18-21.
[3] АВПР, Политархив, оп. 104, л. 40-41.
[4] Statsarchiv Dresden, B 1, № 1952, s. 13-14.
[5] АВПР, ф. Отдел печати и осведомления. 1915-1916, д. 628, л. 19-20.
[6] **Lepsius J.**, Deutschland und Armenien 1914-1918, Potsdam, 1919, s. 377.

Ռուսական բանակը սրընթաց առաջանում էր, դրան համընթաց Տրապիզոնում աճում էին խուճապային տրամադրությունները: Բանը հասավ նրան, որ հունիսի 16-ին սկսվեց վիլայեթի հիմնարկների տարհանումը:

Դրանից երեք օր առաջ՝ հունիսի 13-ին, ստացվեց տեղահանության հրամանը, որի շարադրանքը հաջորդ օրը փակցվեց քաղաքի տների պատերին: Դա նաև տպագրվեց «Տրապիզոնդա մեչվերեթ» պաշտոնաթերթում:

Այդ հրամանը հետևյալն էր.

«Օսմանյան տարրերի մաս կազմող մեր հայ հայրենակիցները շատ տարիներ ի վեր դրսի թելադրանքների հետևանք հանդիսացող հոռի և կարգը խանգարող մի շարք գաղափարներ տարածելով, իրենց հանգստի և շահերի հետ միասին օսմանյան երկրի և մյուս հայրենակիցների հանգիստն ու անդորրն էլ խանգարել են, մանավանդ հայ համայնքը նաև համարձակվել է միանալու մեր թշնամիներին: Թե՛ երկրի անվտանգությունը, խաղաղությունը և անդորրությունը և թե՛ հայ համայնքի գոյության տևականությունը և անվտանգությունը պահպանելու համար մեր պետությունը հարկադրված է արտակարգ միջոցներ ձեռնարկել և, զոհողություն կատարելով, մինչև պատերազմի ավարտը հայերին բնակեցնել ու տեղավորել ներքին նահանգներում նախապատրաստված վայրերը: Բոլոր օսմանցիները պարտավոր են խստորեն հնազանդվել այս օրենքին:

1. Բացառությամբ հիվանդներից, բոլոր հայերն այս տեղեկացումից հինգ օր անց ժանդարմների հսկողությամբ, ըստ թաղերի և գյուղերի, հերթականությամբ և ամբողջությամբ պարտավոր են հեռանալ (իրենց բնակավայրերից):

2. Թեև մեկնելիս հայերն ազատ են իրենց հետ տանելու շարժական ունեցվածք, սակայն արգելված է վաճառել անշարժ սեփականությունը և հողերը ու մնացած կահ-կարասին ու գույքը կամ դրանք ուրիշներին պահ տալ: Որովհետև այս հեռանալը (տեղահանությունը) ժամանակավոր է... և շարժական ունեցվածքը, որ հետները տանել չեն կարող, պետք է դրվեն անվտանգ և ամուր շենքերում ու պահվեն կառավարության հսկողության ներքո: Հայերի վերադառնալուց հետո դրանք վերադարձվելու են նրանց: Այս հանձնարարականին հակառակվողները, հայերի շարժական ու անշարժ ունեցվածքը գնողներն ու վաճառողները կամ պահպանության վերցնողները հանձնվելու են ռազմական դատարանին: Միայն թույլատրվում է բանակին անհրաժեշտ գույքերը վաճառել իշխանություններին:

3. Ճանապարհին հայերի հանգիստն ապահովելու, նրանց վրա հարձակումներ թույլ չտալու և նրանց անվտանգ ժամանակավոր բնակավայրեր հասցնելու միջոցները նախապատրաստված են:

4. Հայ համայնքի մեկ կամ մի քանի անդամների սեփականության, կյանքի կամ պատվի վրա հարձակում գործողների դեմ ուղեկցող զորախմբերը զենք են գործադրելու և նրանց ձերբակալելով հանձնելու են ռազմական դատարանին՝ մահվան դատապարտելու: Հայերի խաբեության հետևանքով են այս ցավալի միջոցները ձեռնարկված, որոնք մյուս տարրերի հետ որևէ առնչություն չունեն: Ուրիշ ազգության պատկանողները չեն կարող որևէ ձևով կամ եղանակով միջամտել այս խնդրին:

5. Հայերը պարտավոր են հպատակվել կառավարության որոշումներին: Եթե նրանցից որևէ մեկը համարձակվի զինվորի կամ ժանդարմի վրա զենք գործածել, դրանք փոխադարձվելու են զենքի գործադրմամբ և նրանք մեռած վիճակում են բռնվելու: Նաև կառավարության որոշումներին հակառակվողները, մեկնել չցանկացողները, կամ որևէ տեղ թաքնվողները և նրանց իրենց տներում պահողները, կերակրողները և նրանց թաքնվելն ապահովող անձինք հանձնվելու են ռազմական ատեան՝ մահապատժի դատապարտվելու:

6. Հայերը չեն կարող ունենալ սուր զենքեր և հրազեն՝ տներում կամ դրսում թաքցրած: Բոլոր տեսակի զենքերը՝ ատրճանակ, ռումբ կամ սուր, բոլորը պետք է հանձնվեն կառավարությանը: Այդ և այլ տեսակի զենքերը, որոնցից չատերի մասին կառավարությանը տեղյակ է պահված, ունենալն ուրանալու դեպքում, տերերը պատասխանատու են և խստորեն պատժվելու են:

7. Գյուղերում, թաղամասերում և ճանապարհներին կողոպուտ, հափշտակություն անողների, հայերի վրա հարձակում կամ բռնարարքներ կատարողների դեմ պահապան զինվորներն ու ժանդարմները զենք են գործածելու և թույլատրված ու հանձնարարված է նմաններին սպանել:

8. Օսմանյան բանկին պարտք ունեցողները այդ պարտքի փոխարեն կարող են ապրանք հանձնել որպես երաշխիք, միայն թե, եթե կառավարությունը հարկ համարի, այդ գույքերը կարող է ստանալ զինվորական կարիքների համար՝ գինը վճարելու պայմանով: Պարտքի ստույգությունը պետք է հաստատվի կառավարության կողմից: Դրա համար էլ գլխավոր փաստաթուղթը համարվում է առևտրականների տոմարները:

9. Մանր ու խոշոր անասունները, որոնք հնարավոր չէ հետները տանել, գնվելու են բանակի համար:

10. Հայերի ճանապարհին ընկած նահիեների, կազաների, լիվաների և վիլայեթների պաշտոնատարները տեղում օգնություն պետք է ցույց տան[1]:

Այն հանգամանքը որ հրահանգը (հավանաբար նա ոչ թե տեղում էր կազմված, այլ երիտթուրքական կենտրոնի որոշման չարադրանքն էր) տպագրված էր վիլայեթի պաշտոնաթերթում, որի թե՛ տնօրենը՝ Նաջին և թե՛ խմբագիրը՝ Հ. Քեմալը երիտթուրքական անհայտ գործիչներ չէին ու նաև այն, որ նույն բանը կատարվում էր նաև մյուս վիլայեթներում (օրինակ, Կեսարիայում տպագրվեց «Կայսերի» (խմբագիր՝ Սաբրի), Սեբաստիայում՝ «Գրզրլ ըլմագ» (խմբագիր՝ Նիհթ) պաշտոնաթերթերում, ասում է, որ խոսքը ոչ թե օրենքի վերաբերյալ տեղեկատվության էր վերաբերում, այլ դա գործողության մեջ դնելու մասին:

Ակնհայտ է, որ այդ օրենքը ոչնչացման փաստաթուղթ էր: Տրապիզոնն առաջին վիլայեթն էր, որտեղ սկսվեցին ռուս-թուրքական պատերազմի մարտական գործողությունները: Դրա համար էլ այստեղ օրենքի գործադրումը կատարվեց անմիջապես: Արդեն «տեղահանության հրամանն ստանալու օրվա երեկոյան,- վկայում է թուրք սպան,- 40 հայ ծովը նետվեց և 500 հայ զինվոր սպանվեց: Դիակները Դեյիրմեն գետը նետեցին»:

---

[1] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 76-78:

Որ Տրապիզոնում տեղահանվելուն պատրաստվելու համար հայերին հինգ օր ժամանակ էր տրվել, կան մի քանի վկայություններ:

Բայց ահա թե ինչ է գրում Շոյբներ-Ռիխտերը. «Տրապիզոնի վիլայեթում գրեթե բոլոր տղամարդիկ սպանված են: Երզնկայում իմ եղած ժամանակ Տրապիզոնի հայերի չարաչարություններում տղամարդ չտեսա: Անգամ տարագրման ձևն էր շատ դաժան: Այսպես, օրինակ, Տրապիզոնում հայերին միայն մի քանի ժամ էր տրվել և նրանց արգելել էին իրենց ունեցվածքից որևէ բան վաճառել: Կառավարությունը հայերին փոխադրամիջոց չի տվել և նրանք ստիպված էին հետիոտն գնալ: Նման դաժանությամբ հայերին վերաբերվել են նաև Սրվազում»:

Գերմանացի դիվանագետին թուրքական դաժանություններն անհանգստացնում էին, սակայն, միայն անձնական, մարդկային պլանով, որի և պաշտոնական դիրքորոշման միջև անջրպետ կար: Նա գրում է դեսպանին. «Համաձայն Ձերդ գերազանցության կարգադրությունների՝ մենք իրավունք չունենք դիմադրել անմեղ հայերի տարագրմանը, նաև իրավունք չունենք նրանց պաշտպանել»: Այսքանը: Առանց վերաբերմունքի:

Տրապիզոնում տեղահանության սկզբի իրադարձությունների մասին տարակարծիք վկայություններ կան: Հավանաբար ճշմարիտն այն է, որ հայտարարություններով հայերին, իրոք, հինգ օր ժամանակ տրվել էր, մինչդեռ իրականում այդ ժամկետը խախտվել էր ի վնաս նրանց: Հայտարարության երևալու հետ միաժամանակ հեծյալ ոստիկանները չրջափակեցին թաղերը, քաղաքում արգելվեցին երթևեկությունն ու հաղորդակցությունը: Հունիսի 15-ին քաղաքում կային 14.000 զինվոր և ավելի քան 1000 ոստիկան ու ժանդարմ:

Տրապիզոնում բռնագաղթն, իրոք, սկսվելով հունիսի 17-ին, տևեց մինչև հուլիսի 6-ը: Հայերը պետք է անմիջապես մեկնեին՝ իրենց ունեցվածքը վստահելով «պետական հսկողությանը: Դա կազմակերպված կողոպուտ էր պետության և թուրք խուժանի կողմից»:

Հայերին խումբ-խումբ քաղաքից հանեցին: Կարավանները կազմված էին 400-500 հոգուց: Դրանց բախտը տնօրինում էին Թեքքելի Նեչադիի մարդասպանները, որոնք տարագիրների մեծ մասին սպանեցին Երզնկայի ճանապարհին: Հյուպատոսը մերժում է թուրքական կեղծարարությունը, թե բռնագաղթը ծնեց «հայերի դավաճանությունը»: «Զհաստատուեցաւ երբեք, թէ մէկը գտնուած ըլլայ, որ կառավարութեան դէմ ուղղուած չարժումի մը մասնակից ըլլայ: Եթէ մէկ հայ էր, ատիկա բաւական էր, որպէսզի իբր ոճրագործ վարուին» ամբողջ ազգի հետ ու տարագրեն[1]:

Ինչպես շատ այլ տեղերում, այնպես էլ Տրապիզոնում, տեղահանության սկզբնական չրջանում հայերի հանդեպ վերաբերմունքը համեմատաբար մեղմ էր. նրանց թույլ տվեցին կառքեր և փոխադրության ուրիշ միջոցներ վարձել, հղի կանանց չգաղթեցրեցին, հիվանդներին հիվանդանոց ուղարկեցին, հայ կաթոլիկներին չէին տարագրում: Բայց դա կարճ տևեց: Քիչ անց՝ բոլորին բռնագաղթեցրին:

---

[1] ***Լեփսիուս Յո.***, *նշվ. աշխ., էջ 7:*

Այդ իրադարձությունների մասին Բերգֆելդի 1915 թ. հուլիսի 9-ի զեկուցագրում կարդում ենք, թե հունիսի 24-ին հայկական կոմիտեի ղեկավարները ձերբակալվեցին և Սամսոնի վրայով քշվեցին երկրի խորքերը: «Նույն օրը տեղեկացա, որ բազմաթիվ հայերի տարագրությունը նախապես ծրագրվել էր և նկատելի էր, որ ձգտում կար անկարգություններն օգտագործել այստեղի հայերի դեմ: Ես վալիին այդ մասին ասացի և նրանից ստացա միանգամայն որոշակի բացատրություն, որ հայերի հավանական արտաքսումը, անգամ զինված դիմադրության դեպքում, կարող է տեղի ունենալ միայն քաղաքացիական և ռազմական իշխանությունների և ոչ թե ինչ-որ անհայտ մարդկանց կողմից: Հունիսի 26-ին հայերին կարգադրեցին տարագրվել երկրի խորքերը»:

Որևէ իրի վաճառքը արգելված էր: Խանութները պետք է կնքվեին, բոլոր իրերը բնակարաններից տարվեին որոշակի տեղեր, դրվեին կառավարության տնօրինության տակ, իսկ դրամը հանձնվելու էր դրամատուն:

Նահանգից տարագրվեց մոտ 30.000 մարդ: Նման զանգվածային տեղափոխություն ճանապարհներով, որտեղ չկային բավականաչափ սնունդ և իջևանատուն, և շատ հայեր առաջին 300 կմ անցան բծավոր տիֆով հիվանդ: «Այս պայմաններում հայերի, հատկապես կանանց և երեխաների, չրջանում պետք է որ ահավոր զոհեր լինեին, ինչը արտասահմանում և, մասնավորապես, Գերմանիայում արդարացի քննադատության է ենթարկվելու... Այդ պատճառով ես Կոստանդնուպոլսի կայսերական դեսպանությանը իրերի դրության մասին հաղորդել եմ և միաժամանակ ջանացել եմ հասնել նրան, որ տեղական վալին մեղմացնի իր հրամանը: Նա ինձ բարեկամաբար ու համբերությամբ լսեց և ընդառաջեց որքան կարող էր»: Տարագրությունից, նախ, ազատվելու էին մինչև 10 տարեկան երեխաները, այրի կանայք, հիվանդները և հղի կանայք, ինչպես նաև կաթոլիկ հայերը: Հիվանդներին և հղի կանանց թույլ էր տրվելու իրենց խնամողի հետ մնալ, չտարագրվել:

Վալին նաև խոստացել էր տարագրվածներին թույլ տալ վաճառելու թանկարժեք իրերը: «Դժբախտաբար, տարագրության երրորդ օրն այդ արտոնությունները վերացվեցին:

Կան նշաններ, որ շատ տեղերում հայերի կոտորածները կանխամտածված են»: Երզնկայի և Դիարբեքիրի միջև լեռնային ճանապարհի վրա հայերը կոտորվել էին քրդերի կողմից:

«Պետք է ասել, որ շատ թուրքեր կանանց ու երեխաների տարագրման հետ համաձայն չեն...

Կայսերական հյուպատոսության և իմ տան առջև, ուր տեղափոխվել եմ ռուսական նավատորմի կողմից քաղաքը գնդակոծելուց հետո, տեղի էին ունենում սրտաճմլիկ տեսարաններ: Բազմաթիվ կանայք աղերսում էին փրկություն իրենց կամ գոնե իրենց երեխաների համար...»[1]*:*

Ակունին վկայում է, որ տեղահանման պաշտոնական հրամանն եկավ Կոստանդնուպոլսից: Դա կենտրոնական իշխանության և «Միություն և առաջա-

---

[1] ***Լեփսիուս Յո.***, *նշվ. աշխ., փաստ. № 35:*

դիմություն կոմիտեի գործն էր»: Տեղական իշխանությունները, որոշ մուսուլմաններ փորձեցին դիմադրել դրան, մեղմացնել դա, բացառություններ անել կամ չկատարել հրամանը: Սակայն կենտրոնական իշխանության հրամանը հաստատվում էր ամենայն վճռականությամբ և բոլորն ստիպված էին անխոս կերպով ենթարկվել:

Ամերիկյան հյուպատոսարանը միջամտեց և փորձեց փրկել գոնե կանանց ու երեխաներին: Հաջողվեց ձեռք բերել ազատման մի քանի հրամաններ, սակայն դրանց վրա ուշադրություն չէին դարձնում՝ Միության և առաջադիմության կոմիտեի տեղական մասնաճյուղի և Կոստանդնուպոլսից եկած նորանոր հրահանգների պատճառով[1]:

«Դա անմեղների իսկական բնաջնջում և սպանդ էր,- գրում է «The New York Times»-ը 1915 թ. սեպտեմբերի 16-ին,- մի չլսված բան մարդկության, քրիստոնեության և ազգության ամենասրբազան իրավունքների լկտի ոտնահարման սև օրինակ: Կաթոլիկ հայերը, որոնց անցյալում միշտ էլ հարգել են և կոտորածներից հեռու պահել, այս անգամ դաժանորեն տուժեցին, դարձյալ կենտրոնական կառավարության հրամանով: Տրապիզոնում մոտ 14 հազար հայ կար՝ գրիգորյան, կաթոլիկ և բողոքական, նրանք երբեք անկարգությունների առիթ չեն եղել, կամ էլ ոստիկանության լուրջ միջամտության պատճառ չեն դարձել: Երբ հեռանում էի Տրապիզոնից, այնտեղ հազիվ 100 հայ մնացած լիներ»:

Օ. Հայդերը բռնագաղթի հայտարարության հրապարակման առթիվ նաև գրում է. «Անհնար է փոխանցել վախի ու հուսահատության այն զգացումը, որ համակել է մարդկանց՝ հայտարարության հրապարակումից հետո: Ես տեսել եմ ուժեղ, հպարտ, հարուստ մարդկանց, որոնք հեկեկում էին երեխաների նման, երբ պատմում էին ինձ, որ իրենց աղջիկներին ու տղաներին հանձնել են թուրք կամ պարսիկ հարևաններին: Ես գիտեմ, որ մի հայ կին խելագարվել էր, ևս երկու նման դեպք արձանագրվել էր նույն թաղամասում: Շատերը թույն էին պատրաստում՝ հրամանը չփոխելու դեպքում գործածելու համար»:

Փոխադրական մատչելի որևէ միջոց չկար, ձիերը, սայլերն ու մեքենաներն օգտագործվում էին ռազմական նպատակով և հարկադրում էին մարդկանց 60 օր քայլել մինչև հասնեին նշանակման վայրը:

«The New York Times»-ի վերը նշված համարում զետեղված է նաև մի հոդված այն մասին, թե ինչպես հայերն ու հույները բռնություններ էին գործադրել թուրք իմամի ընտանիքի նկատմամբ: Հյուպատոսի կարծիքով՝ նման հոդվածի տպագրելն առնվազն անպատեհ էր, մանավանդ որ նկարագրվածի հավաստիությունը շատ կասկածելի էր, որովհետև հոդվածի նշած վայրում (Էրզանես) հայեր ու հույներ չէին բնակվում:

Նույն կապակցությամբ Բերկֆելդը հունիսի 11-ին տեղեկագրեց, թե տարագրության հրամանը և դրա հիման վրա թուրքական իշխանության ձեռնարկած միջոցները հայերի զանգվածային բնաջնջում են նշանակում: Նա

---

[1] **Ակունի Ս.**, նշվ. աշխ., էջ 178:

խնդրում է վալուն գոնե երեխաներին ու հղի կանանց չտարագրել: Ազմին խոստացավ, բայց հունիսի 19-ին՝ տարագրության առաջին օրը, ասաց, թե կենտրոնից ամենախիստ հրամաններ են ստացված՝ առանց որևէ բացառության, բոլորին տարագրել: «Times»-ը 1915 թ. հոկտեմբերի 10-ին տպագրեց Տրապիզոնում Իտալիայի հյուպատոսի պատմածները, թե «համաձայն Կ. Պոլսից ստացված հրամանների՝ Տրապիզոնի բոլոր հայերը պետք է սպանվեին: Մուսուլմաններից չատերը փորձել էին փրկել իրենց քրիստոնյա հարևաններին ... բայց իշխանություններն անողոք էին»:

Մեջբերումները հաստատում են մի իրողություն՝ Կ. Պոլիսը տվել էր ոչ միայն բոլոր հայերին, առանց բացառության, բռնագաղթելու, այլև նրանց ոչնչացնելու հրաման: Հարկ է նշել նաև, որ հունիսի 13-ի հրամանը տեղահանության առնչությամբ Կ. Պոլսից ստացված միակ փաստաթուղթը չէր: Հուլիսի 29-ին ստացվեց ՆԳ նախարարության հրահանգը հայ երեխաներին Թուրք ընտանիքների վրա բաժանելու վերաբերյալ: Օգոստոսի 11-ի, 13-ի, 26-ի և սեպտեմբերի 9-ի հրահանգներով հանձնարարվում էր հայերի «լքյալ գույքերից» բաժին հանել 3-րդ, 4-րդ և 6-րդ բանակներին:

Հուլիսի 31-ի և սեպտեմբերի 15-ի հրահանգներով՝ հայերի դեղատների դեղորայքը հանձնվեց Կարմիր մահիկին և Թուրքական հիվանդանոցներին: Սեպտեմբերի 8-ի հրահանգը պահանջում էր հայկական դպրոցների շենքերը տրամադրել մուհաջիրներին և մահմեդական դպրոցներին: Մի այլ հրահանգով՝ եկեղեցիները վերածվեցին պահեստների, բնականաբար «դրանք ազատելով» իրենց սպասքից ու գրականությունից:

«Այստեղի հայերը պետք է Մոսուլ տարվեն,- գրում է Ավստրո–Հունգարիայի հյուպատոսը: Ի դեմս այդ օրհասական և տեղի հայերի մեղքերի հետ անհամապատասխան միջոցառումների, պարտքս եմ համարում մատնանշելու տեղահանվածների մեծագույն մասի, այդ թվում՝ բազմաթիվ կանանց ու երեխաների մահվան ակնհայտ նպատակ հետապնդող գործելակերպի քաղաքական ծանր ու նաև մեզ դիպչող տնտեսական հետևանքները: Գուցե, այնուամենայնիվ, հնարավո՞ր է հասնել մեղմացման և սահմանափակել խիստ միջոցները, դրանք տարածելով միայն տղամարդկանց վրա, գուցե՞ հնարավոր լինի հայերին տեղափոխել վիլայեթի խորքերը: Հեռավոր Մոսուլ բռնագաղթեցնելը, օթևանի և սննդամթերքի բացակայության պայմաններում, նմանվում է մահապատժի»[1]:

«Հայ կաթոլիկ փոխարեցը լաց լինելով ինձ կրկին խնդրեց միջամտել հայերի համար: Համաձայն այսօրվա հրամանագրի՝ բոլոր հայերը, հիվանդներից բացի, պարտավոր են հինգ օրվա ընթացքում հեռանալ վիլայեթից: Նրանք տեղափոխվում են երկրի խորքերը՝ իշխանությունների որոշած վայրերը: Սրտաճմլիկ տեսարան է»[2]:

«Պետք է պատմության էջերը ետ չրջենք, որպեսզի կարողանանք հանդի-

---

[1] Wien HHSTA PA XL 209, Konst., 27 Juni 1915.

[2] Նույն տեղում:

պել մի ամբողջ ժողովրդի ոչնչացման նման մի այլ դեպքի»[1]:

Կանանց ու երեխաներին նավերով ծով էին հանում ու խորտակում[2]: Հայերին ասում էին «Շատ բան հետներդ մի՛, վերցրեք», «փոքր առնետներն (երեխաներն) էլ են վտանգավոր»[3]:

Որոշ աղբյուրների տվյալներով՝ իրադեներ եղել են հայերի ո՛չ միայն բռնագաղթի, այլ նաև ոչնչացման մասին: Պարզապես տեքստային ձևակերպումներն այնպիսին են, որ դժվարացնում են նման հրամանների գոյությունն ապացուցելը:

Հնչակյան գործիչ Գարեգին Կոզիկյանը, որ Թուրքերի խոշտանգումներից զերծ մնալու համար հետագայում կնոջ հետ խեղդվեց ծովում, վկայել է. «Ոչ մէկ հայ զերծ մնաց յանկարծական աքսորէն, որուն ընթացքին այրեր իսկոյն զատուելով բռնամահը ճաչակեցին, իսկ կանայք ու մանկտիք խումբ-խումբ կորսուեցան դէպի ներքին գաւառներ, երևակայութենէ դուրս անգթութեանց նշաւակ: Յիշենք միայն եւ անցնինք, թէ Տրապիզոնէն 36 երիտասարդ, մեծ մասամբ ռուսահպատակ, մակոյկներով տարուելով ծովամոյն եղան տարագրութեան նախօրէին»[4]:

Հայերին ծով թափելու իրողությունը հաստատել է նաև ինքը՝ Ջեմալ Ազմին: Մի առիթով նա ասել է. «Տրապիզոնի հայերուն երկսեռ առողջ ու սիրուն մանուկները զատեցի, մէկ քանին, 10-13 տարեկան, նուէր տուի տղուս, իսկ միւսներն ալ կողովներու եւ սնտուկներու մէջ տեղաւորել տալով ծովը թափել տուի»: «Պու սենէ Խամսի չողալսին (Այս տարի Խամսի ձուկը թող չատանա)»,- ավելացրել է ճիվաղը[5]: Ռազմական դատարանի դատավճռում նշվում է, որ Ազմին հայերի զանգվածային ջարդերի կազմակերպիչն էր, որոնք իրականացվել են գիշերները նրանց ծովում խեղդելու միջոցով:

Տրապիզոնի վիլայեթում հայասպանության հարցը քննելու ժամանակ վիլայեթի առողջապահության տեսուչը գրավոր զեկուցագիր ներկայացրեց, որ առողջապահության տեսչության պետ Ալի Սաիբը «պատճառ հանդիսացավ անհամար թվով հայ երեխաների մահվան, որոնց մորֆին էին ներարկել»: Այս եզրակացությունը հիմնված էր Տրապիզոնի հիվանդանոցի մի քանի աշխատակիցների վկայությունների վրա[6]:

Նույն խնդիրների մասին Գերմանիայի հյուպատոսը գրում է. «Հուլիսի 1-ին քաղաքի բոլոր փողոցները բռնել էին ժանդարմները: Մի նրբանցքում հավաքեցին 100 հայ ու քաղաքից հանեցին, որտեղ կուտակեցին 2000-ից ավելի մարդու: Հաջորդ չորս օրերին հավաքեցին ևս 8000 հոգի: Նյութական հնարավորություն ունեցող հայերին վալին թույլ տվեց վարձել սայլեր, որոնք անասելի թանկ արժեին: Քաղաքից դուրս գալուց հետո վարձողներին հարկադրեցին հրաժարվելու սայլերից: Հայերն իրենց հետ մեծ քանակությամբ սննդամթերք

---

[1] Wien HHSTA PA, XXXIII 368, Trapezunt, 20 Juli 1915:

[2] Նույն տեղում, 31 Juli 1915:

[3] Նույն տեղում, September 1915:

[4] **Թէոդիկ,** Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Ե., 1985, էջ 92:

[5] «Թեհլիրեան արդարահատոյցը», Պէյրութ, 1981, էջ 52:

[6] "Геноцид - преступление против человечества". М., 1997, с. 32-33.

վերցնել չկարողացան, որովհետև հունիսի 25-ին վալին արգելեց հայերին որևէ բան վաճառել ու նրանցից գնել: Իրականում, հայերի հետ առևտուրն արգելվել էր 6-8 ամիս առաջ և նրանք իրենց սննդի պաշարներն սպառել էին ու ճանապարհ ելան չնչին քանակի սննդամթերքներով: Ով էլ ինչ որ բան վերցրել էր, խլեցին: Ով ճանապարհին այլևայլ պատճառով ընկնում էր, սվինահար էր լինում: Գետը ծով էր տանում մեծ քանակությամբ դիակներ: Բոնագաղթից 15 օր անց հյուպատոսը քաղաք տանող ճանապարհին տեսել էր մեծ թվով մերկ դիակներ:

Ժանդարմերիայի սպաները բռնաբարեցին կանանց ու աղջիկներին: Երեխաների գլուխները խփում էին ժայռերին ու ջախջախում: Բոլոր կանանց, առանց բացառության, սպանում էին»[1]:

«Приазовский край» թերթը տպագրեց 11 տարեկան Ա. Թոխմաղյանի և 10 տարեկան Պ. Թութունջյանի պատմածները, թե ինչպես թուրքերն առանձնացրեցին ռուսահայերին ու տարան ծովում խեղդեցին: Արաբ զինվորական Ա. Բասյը, որ 1915-ի հուլիսին մասնակցել է Տրապիզոնի ռազմական դատարանի նիստերին, պատմում է, որ «հրաման ստացվեց Տրապիզոնի վիլայեթի բոլոր հայերին տարագրել երկրի խորքերը... Ես հասկանում էի, որ աքսորելը նշանակում է բնաջնջել... Մի իրադե հրապարակվեց, համաձայն որի՝ բոլոր դասալիքները պետք է գնդակահարվեին տեղնուտեղը, առանց դատի ու դատավճռի: Իրադեի գաղտնի չարադրանքում «դասալիքի» փոխարեն գրված էր «հայեր»[2]:

Օ. Հայդենը տեղեկագրել է. «Շաբաթ օրը, հունիսի 26-ին հրապարակվեց տարագրության մասին օրենքը: Հինգշաբթի, հուլիսի 1-ին բոլոր փողոցները փակվեցին սվինակիր ժանդարմներով, որոնք սկսեցին հայերին դուրս քշել իրենց տներից: Տղամարդկանց, կանանց և երեխաներին փոքր խմբերով հավաքեցին հյուպատոսության մոտի փոքրիկ փողոցում: Երբ հավաքվեց մոտ հարյուր հոգի, ժանդարմները սվիններով նրանց առաջ քշեցին կիզիչ արևի տակ՝ Էրզրումի փոչոտ ճանապարհով:

Նրանց կանգնեցրին քաղաքից դուրս, և, հավաքելով 2000 հոգանոց կարավան, քշեցին առաջ: Երեք նման կարավաններ, ընդհանուր թվով կազմված 6000 մարդուց, տարագրեցին առաջին երեք օրում: Ավելի ուշ Տրապիզոնից և նրա մերձակայքերից արտաքսվեց ևս մոտ 4000 մարդ: Կանանց ու երեխաների ողբն ու լացը սիրտ էին մղկտացնում: Այստեղ էին վանականներ, առևտրականներ, բանկիրներ, իրավաբաններ, արհեստավորներ: Նահանգապետն ասաց ինձ, որ իրենք պետք է տեղահանվածներին ապահովեին վարձով փոխադրական միջոցներով, սակայն հունիսի 26-ից հետո հայերին արգելվեց որևէ բան վաճառել կամ գնել: Հարուստ սեփականատերերը գնում էին հետիոտն, հետներն ունենալով միայն այն, ինչ կարողացել էին հապշտապ վերցնել և չալակով տանել: Երբ հյուծվածները հետ էին մնում կարավանից, նրանց սվիններով ծակում ու նետում էին գետը: Դիակները ջրի հոսանքը տանում էր ծով կամ ոչ խորը տեղերում դրանք կպչում էին քարերին ու կուտակվում, որտեղ քայքայ-

---

[1] *"Германские источники о геноциде армян". Ер., 1991, с. 240.*

[2] **Mandelstam A.,** *Le sort de l, Empire Ottoman, Lausanne-Paris, 1917, p. 278.*

վում էին, չրջապատում գարշահոտություն տարածելով: Ես խոսել եմ ականատեսների հետ, որոնք նկարագրված դեպքերից տասնհինգ օր անց գետի մակերեսին բազմաթիվ դիակներ էին տեսել»[1]:

1915 թ. օգոստոսի 23-ին Շտանգեն հաղորդեց Բեռլին. «...Տրապիզոնի տեղահանվածներից տղամարդկանց առանձնացրել ու տարել են լեռներն ու զինվորների օգնությամբ մորթել են, իսկ կանայք ողբալի վիճակում քշվել են Երզնկա: Թե ի՞նչ է եղել նրանց հետ, դեռևս հայտնի չէ: Տրապիզոնում հայերին նավով տարել են ծովի խորքը և թափել ջուրը: Տրապիզոնի եպիսկոպոսը հրավիրվել էր Էրզրումի ռազմական դատարան և ճանապարհին իր ուղեկիցների հետ միասին սրախողխող էր արվել»[2]:

Հռոմի «El Messagero» պարբերականում օգոստոսի 25-ին տպագրվեց հարցազրույց Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Կորինիի հետ: Նա ասում էր, որ սկսած հունիսի 11-ից, հայերին հանեցին իրենց տներից: «Եթե բոլորը տեսնեին, ինչ տեսա ես սեփական աչքերով, ապա քրիստոնեական ամբողջ հավաքականությունն ինքն իրեն կհարցներ, թե արդյո՞ք մարդակերներն ու վայրի գազանները չեն միավորվել կատարելու այն, ինչ Տրապիզոնում տեղի ունեցավ, երբ աստիճանաբար ու հետևողականորեն զենքով, քաղցի միջոցով, հրով ու սրով սպանում էին մի ամբողջ ժողովուրդ: Այդ այնքան սարսափելի է, որ իրողություն լինելով հանդերձ, մնում է ոչ ճշմարտանման, աներևակայելի անգամ ամենաայլասերված երևակայության համար»[3]:

«Times»-ը 1915 թ. սեպտեմբերի 13-ին գրեց, որ «Հայկական ծովեզերքը դատարկվում է, հայ բնակչությունն ուղարկվում է Միջագետքի խորքերը: Բանակի համար պիտանի մարդկանց մեծ մասին սպանել են, իսկ մնացած բնակչությունն անտեր է մնացել: Շատերը մահանում են համաճարակներից»: ԱՄՆի հյուպատոսի հուլիսի 28-ի տեղեկագրում նշվում է. «Վեց հարիւր երեւելիներ լեցուցին փոխադրանաւերու վրայ՝ Սամսոն ղրկելու համար: Քանի մը ժամ ետք նաւերը վերադարձան պարապ: Ծովուն բացերը ժանտարմաներով լեցուն նաւեր անոնց կը սպաննէին: Բոլորը սպաննուեցան եւ ծովը թափուեցան»[4]:

Հայերին ծովը թափելու մասին վկայություն կա նաև Կոլուշևի հուլիսի 25-ի տեղեկագրում. «26 հայերի նստեցրել են մի նավակ և ծովում խեղդամահ արել: Նրանցից միայն մեկն է փրկվել և փախել իտալական դեսպանատուն: Սակայն նրան հանձնել են թուրքերին, որոնք այդ հային կենդանի թաղեցին»[5]:

Այդ ջարդի մասին «Times»-ը 1915 թ. հոկտեմբերի 7-ին գրեց. «Ենթարկվելով ստացված հրամաններին՝ ժանդարմները տներից դուրս էին վռնդում բոլոր քրիստոնյաներին, նրանց մեկտեղում էին և փողոցներով քշում դեպի ծով: Ապա նստեցրել էին առագաստանավեր և ափից հեռանալով նրանց նետել էին

---

[1] *НАН РА, Из истории геноцида армян, с. 18-19.*

[2] ***Lepsius J.**, Deutschland und..., s. 143-144.*

[3] *«Новое время», 11 мая 1916 г.*

[4] ***Բինոն Ռ.**, Հայերու բնաջնջումը. գերմանական մեթոդ, թուրքական գործելակերպ, Կ. Պոլիս, 1919, էջ 45-46:*

[5] *"Геноцидът над арменците... фонд № 321, оп. 1, д. 2462, с. 40.*

ջուրը: Ամբողջ հայ ժողովուրդը՝ 8-10 հազար հոգի, այդպես մեկ օրում վերացվեց»:

Տրապիզոն քաղաքի և մերձակա բնակավայրերի տարագրությունը չձգձգվեց: Տեղի ունեցան մի քանի ինքնասպանություններ և մի հրդեհ: Այլ միջադեպեր չեղան:

Բռնագաղթից ազատվել խնդրողների մեջ առաջինները հոգևորականներն էին, տեղի առաջնորդի տեղակալն վալուն անգամ խնդրեց Թույլ տալ դառնալու մահմեդական: Վալին պատասխանեց, թե կրոնափոխ լինելը նրա անձնական գործն է և բռնագաղթն էլ ուղղված է ոչ թե քրիստոնյաների, այլ հայերի դեմ[1]:

Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանի սեպտեմբերի 4-ի զեկուցագրում տեղ է գտել Հյուպատոսի մտքի շարունակությունը.

Դեսպանը գրում է. «Քանի որ ես ինձ վերապահում եմ հետագա հաչվետվության իրավունքը, ապա պետք է նկատեմ, որ կայսերական Հյուպատոսության՝ Տրապիզոնի վերաբերյալ հեռագրից հետո էլ, օգոստոսի վերջին օրերից մինչև հիմա խնայված հայերի մի մեծ խումբ (դրանց թվում նաև Օտոմանյան բանկի ծառայողներ, պետական մենաչնորհից օգտվողներ և կանայք) գիշերով դուրս են քչվել և քաղաքի մոտերքում սպանվել:

Նույն ձևով տեղացի կաթոլիկ պատրիարքը հայտնել է, որ ճանապարհորդների պատմածով՝ Անկարայի հայերին (գլխավորապես կաթոլիկներին), նրանց թվում նաև կաթոլիկ եպիսկոպոսին, իր հոգևորականության հետ օգոստոսի 30-ին Անկարայից հանել են և որոշ հեռավորության վրա բոլորին ոչնչացրել»:

Այդպես, զինվորների ու ժանդարմների ուղեկցությամբ, հայերին կարավան առ կարավան քաղաքից դուրս հանեցին: Քիչ անց, դարանակալ չեթեները հարձակվեցին, կողոպտեցին, սպանեցին, երեխաներին փախցրին: Բռնագաղթն ավարտելուց անմիջապես հետո Ազմին քաղաքից մեկնեց և մինչև օգոստոսի 16-ը չվերադարձավ:

Ըստ Բերգֆելդի՝ նահանգի ճանապարհներին, կիրճերում ու լեռնանցքներում ոչնչացվեց 60.000 հայ, ինչը կոչված էր վերջ դնելու Հայոց հարցին: Իշխանությունները Հյուպատոսին արգելեցին այցելել քաղաքի մերձակա գյուղերը, պահակներ կարգեցին նրա դռան մոտ: Սակայն վերջինս չլսեց և ձիով շրջեց նահանգի գյուղերը: Բռնագաղթի օրենքն ստանալուց հետո նա վալուն գրեց. «Կառավարությունը խլել է բոլոր փոխադրամիջոցները, խեղճ ժողովուրդն ինչպե՞ս է հետիոտն անցնելու ավելի քան 200 կմ տարածություն»: Վալին պատասխանեց. «Կառավարությունը բոլոր հնարավորությունները կստեղծի»: Հյուպատոսը տեղեկագրեց, թե Տրապիզոնի հայերի տեղահանության օրենքի հրապարակման օրը (հունիսի 13-ին) գերմանացի զինվորական Շլիմեն Էրզրումից Բաբերդի վրայով հասել էր Տրապիզոն և պատմել, թե ճանապարհին տեսել էր սպառազեն չեթեական խմբեր, որոնք պետք է հարձակվեին հայերի կարավանների վրա: Նա զրուցել էր 40 հոգանոց չեթեական խմբի

[1] Statsarchiv Dresden, B 1, № 1952, s. 13-18.

պետերի հետ: Այդ անձինք Թուրք սպաներ էին և խոսում էին ֆրանսերեն: Նա տեսել էր տարագիր ու կողոպտված, քաղցի մատնված և խոտով սնվող կանանց:

Այդ օրերին Տրապիզոնում Իտալիայի հյուպատոս Կորինին մեկնում է Կ. Պոլիս և ապա Հռոմ: Տեղ հասնելուց հետո տեղեկագրում է. «Երկրագնդի ամենավայրագ գազանները խուժել են Տրապիզոն ... հոչոտելու համար հայ ազգը: Տրապիզոնի ջարդերի կազմակերպիչներն էին վալի Ջ. Ազմին, վիլայեթի երիտթուրքերի կազմակերպության պատասխանատու քարտուղար Նայիլը, նրա տեղակալ Ռիզան, բժիշկներ Ալի Սաիբն ու Սաադէդդինը, զինվորական և ժանդարմական զորքերի հրամանատարները»:

Նույն հյուպատոսը գրեց, որ չնայած ջարդերը դադարեցնելու իր միջամտություններին, «հաւաքական սպանութիւնները կը շարունակուին՝ առանց հաշուի առնելու կաթոլիկ, բողոքական, թէ լուսաւորչական ըլլալը... Քաղաքի 14.000 հայերէն իր մեկնած պահուն հարիւր հոգի իսկ չկային. կամ Սեւ ծովը թափած էին կա՛մ Տեյիրմենտերէի գետը նետուած»[1]:

ԱՄՆ-ի հյուպատոսը նշում է, որ հայերի տներում եղածը հավաքեցին առանց որևէ փաստաթուղթ կազմելու: Արժեքավոր իրերը տարան խանութներ, մնացածը կողոպտեց խուժանը, որը նաև «գայլերի ոհմակի նման բռնագաղթվող հայերի կարավաններն էր հետապնդում կողոպտելու համար»: Հայոց տների կողոպուտը չաբաթներ տևեց:

«Քաղաքից դուրս հավաքակայանում բռնագաղթվածներից խլեցին փոխադրամիջոցները: Մահմեդական ողջ բնակչությունը հայերին վերաբերում էր ինչպես հանցագործների և չտապում ժամ առաջ տիրանալու նրանց ունեցվածքին: Հենց սկզբից հայերին արգելվեց որևէ բան վաճառել:

Ճանապարհին հետ մնացողներին սվինահար էին անում ու գետը նետում, ջրերը նրանց տանում էին դեպի ծով: Գետը նետվածներից շատերի դիակները կախված էին ժայռերից, որտեղ մնացին 10-12 օր ու քայքայվեցին: Կային շատ մերկ դիակներ, սարսափելի գարշահոտություն էր: Ես ու Գերմանիայի հյուպատոսը հուլիսի 17-ին տեսանք, թե Թուրքերն ինչպես էին հորում դիակները:

Հուլիսի 19-ին քաղաքի հայերի բոլոր տները, ավելի քան 1000 տուն, լրիվ դատարկված էին: Ով հայ էր, դա բավական էր, որ նրան վերաբերեին որպես հանցագործի ու տեղահանեին:

...Թեթև նավերը մեկը մյուսի հետևից լցվում էին հայերով և ուղարկվում Սամսոն, որտեղ սպանում էին ու ծովը նետում»[2]:

«Տրապիզոնում,- պատմում է Հանրի Բարբին,- որևէ հայ դժբախտ ճակատագրից խույս տալ չկարողացավ. անգամ հույների ու Թուրքերի տներում ապաստանածները ոչնչացվեցին: 150 աղջիկների հաջողվեց թաքնվել, բայց նրանց էլ գտան, բոլորին բռնաբարեցին ու խեղդեցին»:

Գազանություններն այնքան ահավոր էին, որ անգամ շատ Թուրքերի վրդովեցրեցին: Նրանցից ոմանք փորձ արեցին փրկության ձեռք մեկնել

---

[1] ***Ակունի Ս.***, *նշվ. աշխ., էջ 178:*
[2] *R 14099, Ab. 12601.*

հայերին: Իսկ Էշադիր օղլին նույնիսկ զենքով ելավ ջարդարարների դեմ, բայց սպանվեց մի քանի հայերի հետ:

Հայերի ունեցվածքն աճուրդի հանեցին, նախ վաճառեցին միայն երիտթուրք կուսակցության անդամներին, ապա՝ բոլորին:

Քաղաքում փրկվեց հայ երկու ընտանիք և 14 որբևայրի կին, իսկ գյուղերում՝ մի քանի հարյուր երեխա[1]:

Իտալիա փախած տրապիզոնցի երեք աղջիկներ պատմել են, որ քաղաքում «վիճակը սարսափելի է: Մուսուլմանները կատաղել են քրիստոնյաների դեմ, կողոպտում են, հրդեհում նրանց տները... Քրիստոնյա զոհերի թիվը հազարների է հասնում»[2]:

Տարագրությունն ընթացավ հետևյալ կերպ: Հուլիսի 3-ին քաղաքից հանվեց 6000 մարդ և ոչնչացվեց Գյումուշխանեի ճանապարհին՝ Ջևիզլիկ գյուղի մոտ, Ջանիկի լեռներում կամ խեղդվեց Դեյիրմեն գետում: 8000 հայի նավերով բաց ծով տարան ու ջուրը նետեցին:

Լեփսիուսի տվյալներով՝ Տրապիզոնից տեղահանված ու կոտորված հայերի թիվն անցնում էր 32700-ից:

Իտալիայի գլխավոր հյուպատոսը վկայում է. «Դա մարդկային իրավունքներից զրկված քրիստոնյա ժողովրդի մի իսկական սպանդ էր: Այս անգամ չխնայեցին նաև հայ կաթոլիկներին... Հունիսի 24-ից՝ տարագրության վերաբերյալ տխրահռչակ հրամանագրի ընդունման առաջին օրից մինչև հուլիսի 14-ը (Տրապիզոնից իմ մեկնելու օրը) չէի կարողանում ո՛չ քնել և ո՛չ ուտել. լինելով անմեղ, անպաշտպան մարդկանց զանգվածային ոչնչացման ականատեսը, խախտվել էր իմ նյարդային ողջ համակարգը:

Քաղաքը պաշարված էր 15000-անոց զորքով, ոստիկանական հազարավոր գործակալներով և կամավորական խմբերով: Ամենուրեք լսվում էին անմեղ զոհերի ճիչն ու աղաղակը, փողոցներում ընկած էին հարյուրավոր դիակներ, երիտասարդ կանանց մի մասին բռնի ուժով ստիպում էին հավատափոխ լինել, երեխաներին խլում էին ծնողներից և հանձնում մահմեդական ընտանիքներին, հարյուրավոր մերկանդամ երեխաների էլ դնում էին նավը և խեղդում Սև ծովում»[3]:

Տեղահանվածների կարավանները քաղաքից հենց հեռանում էին, հանձնվում էին մարդասպան-ավազակ Թեքքելի Նեչադիին, որի ավազակախումբը ճանապարհին գեղեցիկ աղջիկներին առևանգում և բաժանում էր երիտթուրք ակտիվիստներին, արժեքավոր իրերը հափշտակում և հանձնում Իթթիհադի ներկայացուցիչներին: Անընդհատ հարձակումների հետևանքով կարավանների միայն 30 տոկոսն էր կենդանի մնում ու Երզնկա հասնում, որտեղ նրանց կացիններով ու բահերով սպանեցին ու գետը նետեցին:

Թեքքելի Նեչադին Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Հերսկովիչին ասաց.

---

[1] **Барби А.**, նշվ. աշխ., էջ 18-24:

[2] «Diaro de la Plata», 12-ը սեպտեմբերի 1915 թ.:

[3] ՀՍՍՀ ԳԱ, Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն. «Հայ ժողովրդի պատմության հարցեր», Ե., 1992, էջ 56-57:

«Աստուծոյ պատժէն վախնալու պէտք չունիմ. սա ձեռքովս 650 հայ սպաննած եմ եւ ահա՛, կը տեսնես, ողջ առողջ դէմդ կանգնած եմ»[1]:

Բռնագաղթից հետ մնացած 50-60 հղի կանանց ծովը նետեցին: Մեծ թվով հայեր կոտորվեցին հենց քաղաքի փողոցներում, նրանց դիակներն մնացել էին ընկած, դրանց չուրջը վխտում էին փոքրիկ երեխաները: Հույն մետրոպոլիտ Խրիստոֆը կարողացավ թույլտվություն ստանալ և 600 երեխաների հավաքել: Երբ մեծահասակների եղեռնը ավարտեցին, իշխանությունները երեխաներին որբանոցներում տեղավորելու պատրվակով նրանց վերցրին, 150-ին թունավորելով մեռցրեցին, իսկ մյուսներին ծովահեն Պ. Ռահիմը կողովների մեջ փակելով՝ ծովը լցրեց: Հրաչքով փրկվեց միայն ութ երեխա:

Այլանդակ էին մեռցնելու միջոցները: Հայերին հարկադրում էին հսկա փոսեր փորել ու ապա նրանց լցնում էին այդ փոսերը և կենդանի թաղում: Կանանց ու աղջիկներին տանջահար անելուց հետո մինչև կրծքները թաղում էին հողի մեջ, որ այդպես մեռնեն:

Երզնկայի ճանապարհին 2000 կանանց ու երեխաներին լցրեցին բարձր պարիսպներ ունեցող գերեզմանատուն, որը լիքն էր չթաղված ու գարշահոտություն տարածող դիակներով և վեց օր փակեցին այդտեղ առանց հաց ու ջրի: Ապա բոլորին տարան Քեմախի կիրճ ու սպանեցին:

Ս. Ակունին գրում է, որ հոկտեմբերի 15-ին Ռեջեբ լեռան վրա սամսոնցի մի աղջկա, որն անձնատուր չէր եղել ժանդարմներին, 25-30 հոգով բռնաբարեցին, ապա երկու ծառերի գագաթներն իրար կապեցին, աղջկան գլխի վար կախեցին ու երբ բաց թողեցին, ծառերը հետ գնացին ու աղջիկը երկու մասի բաժանվեց[2]:

Մի հուսալքված կին իր հինգ տարեկան երեխային գետը նետեց: Եվ, ո՜վ զարմանք, թուրքերն այդ կնոջը դատեցին հինգ տարվա ազատազրկման: Թուրքական այս խորամանկ քայլը թե՛ քարոզչական նպատակ ուներ և թե՛ «աշխատող ուժի» ապահովման խնդիր էր լուծում[3]: Նույն այդ թուրքերը հայերից «մաքրեցին» 1000 տուն[4]:

«Քաղաքի դարպասների մոտ, Ջևեզլիկ գյուղի մերձակայքում, խաղաղցվեցին աներևակայելի սարսափների դրվագներ,- պատմել է ականատեսը:- Տղամարդկանց անջատում էին իրենց կանանցից ու երեխաներից, որոնց սարսափահար բացականչությունները բռնում էին ողջ չրջապատը: Ապա թրի կամ դանակի հարվածներով և կամ հրացանով, դաժանության ամենակատարյալ միջոցների գործածությամբ տղամարդկանց կոտորում էին: Հողը և բույսերը հագենում էին արյունով: Երեխաները, սարսափից լայնացած աչքերով, անդադար աղմկում էին ու լաց լինում, կանայք ... գթություն էին հայցում և գիտակցությունը կորցրած ընկնում: Թարմ արյան հոտը զգացվում էր մի քանի հարյուր մետրի վրա: Տղամարդկանց հետ հաչիվը մաքրելուց հետո դահիճները

---

[1] «Յուչամատեան Մեծ Եղեռնի», էջ 473:

[2] **Ակունի Ս.**, նշվ. աշխ., էջ 509:

[3] Նույն տեղում, էջ 182:

[4] **Фирбюхер Г.**, Армения, 1915. Уничтожение Турцией культурного народа, Ер., 1991, с. 50-51.

չարժվում են դեպի սարսափից դողացող կանայք, երիտասարդ աղջիկներն ու երեխաները: Կիսախելագար դարձած մայրերը, իրենց փոքրերին կրծքներին սեղմած, հետևում էին Թուրքերի մոտենալուն, որոնցից ոմանք ոտից մինչև գլուխ չաղախված էին արյան մեջ... Նրանց աչքերը փայլում էին... Նրանք ծիծաղում էին... Նրանք ծաղրում էին... Ահա՛ բարբարոսները փախցրեցին մի քանի երեխաների, տարան մերձակա ափամերձ բարձունքն ու նետեցին ծովը»: Կատաղած հրեշներն աշխատում էին փոքրիկներին խլել մայրերի գրկից, որոնք արդեն չոր աչքերով իրենց կրծքին սեղմելով երեխաներին, սեփական ձեռքերով խեղդում էին նրանց, որպեսզի փրկեն Թուրքական խոշտանգումներից: Սրտակսկիծ աղմուկը, սարսափահար բացականչությունները երկինք էին համբառնում:

Դահիճները բռնում էին երեխաների ոտներից, նրանց գլուխները ջախջախում էին խփելով ժայռերին կամ մի հարվածով ջարդում նրանց ողնաշարը: Ահա՛ արյունից հարբած երկու քուրդ՝ մեկը բռնել է երեխայի ձեռներից, իսկ մյուսը՝ ոտներից ու ձգում են... այնպես, որ երեխայի վերջավորությունները պոկվում են... Դահիճները երկու, երեք, չորս երեխայի մարմինները ճեղքում են ու շպրտում այս ու այն կողմ: Երբ բոլոր երեխաներն արդեն սպանված էին, այդ հորդան չուռ եկավ դեպի կանայք, որոնց մեծ մասը գետին տապալվեց կտրված կոկորդով կամ փորին հասցված սրի հարվածից:

Ականատեսներից մեկը խելագարվեց: Նույն իրողություններն է հաստատում արաբ սպա Ա. Բասյը: Նա պատմում է. «Նախ աքսորականների խմբից ետ պահեցին երեխաներին: Մեծերի համար կառավարությունը դպրոց կազմակերպեց, իսկ փոքրիկների համար Տրապիզոնի ամերիկացի հյուպատոսը որբանոց բացեց: Երբ աքսորյալ հայերի առաջին կարավանը հասավ Գյումուշխանե, բոլոր առողջ տղամարդկանց առանձնացրեցին մյուսներից, աշխատանքի ուղարկելու պատճառաբանությամբ: Կանանց և երեխաներին զինված պահակախմբի ուղեկցությամբ ավելի հեռու տարան: Թուրքական իշխանություններն ասել էին, որ նրանց տարագրության վայրը Մոսուլն է լինելու և որ նրանց ոչ մի վնաս չի պատճառվի: Տղամարդկանց ... 15-20 հոգիանոց խմբերով հեռացնում էին, շարում նախապես պատրաստված փոսերի եզրին, գնդակահարում ու նետում փոսերի մեջ:

Այս ձևով ամեն օր հարյուրավոր մարդ էր մեռցվում: Ճանապարհին կանանց և երեխաների վրա հարձակվում էին չեթեները՝ Թուրքական կառավարության կազմակերպած զինված ավազակախմբերը: Նրանք ամենաանասնական ձևերով բռնաբարելուց ու կողոպտելուց հետո սառնասրտորեն մորթոտում էին: Այս հարձակումները ամենօրյա իրողություններ էին, մինչև որ ոչնչացրեցին բոլոր կանանց ու երեխաներին: Աքսորականներին ուղեկցող զինված պահակախմբերը խստագույնս հրաման էին ստացել չմիջամտել չեթեների չարագործություններին: Երեխաները, որոնց մասին, իբրև թե, հոգ էր տանում կառավարությունը, նույնպես աքսորվեցին և ճանապարհին մորթոտվեցին: Սկզբնական շրջանում ԱՄՆ-ի հյուպատոսին վստահված երեխաներին նույնպես աքսորեցին, պատճառաբանելով, թե ուղարկում են Սրվաղ, որտեղ նրանց համար որբանոց է բացված: Երեխաներին տեղափոխեցին ծովով, փոքր

և անապահով մակույկներով: Ափից որոշ տարածության վրա նրանց դաշունահարելով սպանեցին, ապա դրեցին պարկերի մեջ ու ծովը նետեցին: Մի քանի օր անց փոքրիկ մարմիններից մի քանիսին ծովը ափ նետեց Տրապիզոնի կողմերում»[1]:

Կոտորածներից մազապուրծ տրապիզոնցի մի կին պատմում է. «Նախապես տղամարդկանց բաժանեցին կանանցից ու երեխաներից, ապա սրի ու դանակի հարվածներով, սվինահարելով, անգթության հազար նրբություններով նրանց սպանեցին: Դաշտը լցված էր սոսկումի աղաղակներով: Հողն ու խոտը թաթախված էին արյան մեջ ... տարածված էր արյան տաք հոտը...»:

«Ճեմալ Ազմին,- գրում է Ս. Թեհլիրյանը,- երկու օրուայ մէջ ոչնչացուց Տրապիզոնի 14.000 հայեր... Նախապէս ջարդել տուաւ զինուորագրուած երիտասարդները, հաւաքեց քաղաքի 600 ականաւորները ու բարձելով նաւերը՝ ծովամոյն ըրաւ, ապա դուրս հանեց քաղաքէն կանանց, երախաները եւ ճեւիղլիկ գիւղին մօտ բոլորը ոչնչացուց այնպիսի անգթութեամբ, որ կը գերազանցէր մարդկային ամէն երեւակայութիւն»[2]:

Օսմանյան խորհրդարանի անդամ Մեհմեդ Էմինը խորհրդարանի 1918 թ. դեկտեմբերի 11-ի նիստում ասաց. «Ես անձամբ ստուգել եմ, որ Օրդու (Տրապիզոնից արևելք ընկած նավահանգստային քաղաք) կազայի գայմագամը հայերին նավակները լցնելով, Սամսոն ուղարկելու անվան տակ ծովը թափել տվեց: Լսել եմ, որ վալի Ջեմալ Ազմին նույն գործողությունն է կատարել: Վալու դեմ որևէ բան անել չկարողացա, չնայած երեք տարի դրանով զբաղվեցի: Ասացին՝ պատերազմական գոտի է...»[3]:

Նաև նշենք, որ Մ. Էմինը պատերազմի ժամանակ, երբ հայկական ջարդերն ընթանում էին, իթթիհադականների հրավիրած մի գաղտնի ժողովում «դէմ արտայայտուած է հայերու նկատմամբ եղած հալածանքներուն», որի հետևանքով Իթթիհադում «իր վարկը գցել էր»[4]:

«Քրիստոնյաների բոլոր ապրանքները բռնագրավվեցին,- գրում է ռուսական բանակի կապիտան Դ. Բալուլիսը:- Թուրքական կառավարությունը հայերից պահանջեց հինգ օրվա ընթացքում հեռանալ Թուրքիայից»: Եվ իսկապես, վեցերորդ օրը բոլոր հայերը բռնությամբ հավաքվեցին քաղաքից դուրս և այնտեղից երկրի խորքերն ուղարկվեցին ժանդարմների հսկողությամբ: Ասում են, որ տղամարդիկ Գյումուշխանեից այն կողմ չհասան, քանի որ տեղի ավազակախումբը նրանց ոչնչացրեց: Կանայք ու երեխաներն ուղարկվեցին Երզնկա և այնտեղ Եփրատը նետվեցին»: Դ. Բալուլիսը Կարինի մերձակայքում տեսել է 500-600 սայլեր՝ լցված տարագրյալներով: Դա Կարինի վերջին քարավանն էր: «Ամենագեղեցիկ աղջիկները տվեցին երիտասարդ մահմեդականներին»[5]:

---

[1] **Mandelstam A.,** նշվ. աշխ., p. 280.

[2] **Թեհլիրեան Ս.,** Վերյիշումներ, Թալէաթի ահարեկումը, Գահիրէ, 1956, էջ 247:

[3] Meclis-i Mebusanin zabit ceridesi, 5-րդ նստաշրջան, հ. 1, (24-րդ նիստ, 11-ը դեկտեմբերի 1908 թ.), էջ 300.

[4] **Kemal Y.,** Siyasi ve Edebi Portreler. Istanbul, 1976, s. 34-35.

[5] АВПР, Политархив, оп. 104, л. 40-41.

Ունևորներն իրենց երեխաներին տեղավորեցին ամերիկյան միսիայի դպրոցում: Սակայն չփրկվեցին: Դպրոց եկան բաշիբոզուկները և ժանդարմի հրամանով բոլոր երեխաներին տարան, որոնցից 2-5 տարեկաններին տեղափոխեցին երկրի խորքերը, իսկ մեծ աղջիկներին բաժանեցին պաշտոնատարների տների վրա:

Ռուսների կողմից Կարինի գրավումը Տրապիզոնում խուճապ առաջացրեց: Թուրքերը ահաբեկված գաղանի վերածվեցին: Քաղաքի շրջապատը ծածկվեց հայերի դիակներով[1]:

«Times»-ը 1916 թ. հոկտեմբերի 7-ին գրեց. «Գրավելով Տրապիզոնը, ռուսական բանակը քաղաքում գտավ միայն 50 հայ որբ, 15 կին ու մոտ 1000 տղամարդ, որոնք թաքնվել էին հարևան գյուղերում»:

Ժակ դը Մորգանը գրում է, որ պատերազմից առաջ Տրապիզոնում և նրա շրջակայքի 45 գյուղերում 18343 հայ կար: Երբ ռուսական զորքերը մտան վիլայեթ, գյուղերում կար 367, իսկ քաղաքում՝ 92 հայ[2]:

ԱՄՆ-ի հյուպատոսն ասել է, թե երբեք իր մտքով չէր անցնի, որ թուրքերն այդպիսի գազանությունների ընդունակ են:

Հայ երեխաներին ծովն են լցրել չան լակոտների պես, չափահաս հայերին դուրս են հանել քաղաքից և խումբ-խումբ գնդակահարել, աղջիկներին վաճառել են հարեմների համար, իսկ հարուստ հայերի ունեցվածքը աճուրդի են հանել Տրապիզոնի տաճարում:

Հույները հաստատեցին, որ թուրքերն իրենց ահաբեկում էին, սպառնալով գնդակահարել, եթե հայտնաբերվի, որ թեկուզ մի հայ երեխայի ապաստան են տվել: Թուրք կանայք ձեռքերը կոտրտելով ասում էին, թե Ալլահն օսմանցիներից երես է շուռ տվել հայերի հանդեպ դաժան վերաբերմունքի համար:

Ռուսների կողմից քաղաքը գրավելուց հետո աստիճանաբար հավաքվեց մոտ 500 հայ, որոնք, սակայն 1918 թ. քաղաքից հեռացան, երբ դա նորից անցավ թուրքերին:

Կուքհոֆը գրում է. «Բացառություն չի արվում ոչ մեկին, բացի հոգևորականներից: Բոլոր հայերին՝ տղամարդ, կին, ծեր, երեխա մինչև Սանդիացը, Հին Հայք բողոքական, թե կաթոլիկ, չնայած վերջինները երբևիցե չեն մասնակցել ազգային ժողովրդական շարժմանը... պետք է մեկնեին: Ոչ մի քրիստոնյա հայ այստեղ չպետք է մնար, անգամ նրանք, ովքեր օտար հպատակներ էին: Բոլորը պետք է արտաքսվեին: Սամսոնի տարագրյալների համար որոշված վայրը ... Ուրֆան էր»[3]: Նույն հյուպատոսը հունիսի 24-ին գրում է, որ այդ քաղաքում նույնպես պատերին փակցրել են տեղահանման հրամանը: Դրա պարունակած պայմանները տեղահանությունը վերածելու են հայ բնակչության բնաջնջման, քանի որ տարագրվածներից որևէ մեկն ի վիճակի չի լինելու հասնել նշանակված վայրը: Ցանկանում են վայրագություններով բնաջնջել հայ քրիստոնյաներին»[4]:

---

[1] *"Армянский вестник", 1916 г., № 14.*

[2] ***Morgan J.,*** *de Contre les Barbares de l'Orient. Paris, 1918, p. 180.*

[3] ***Լեփսիուս Ցո.****, նշվ. աշխ., փաստ. № 349, էջ 105:*

[4] ***Ղազարեան Հ.****, նշվ. աշխ., էջ 85:*

Հիսուն հայեր իսլամությունն ընդունեցին և գաղթողների աչքի առաջ թլպատության հանդես կազմակերպվեց: Զախալլայի իջևանատանը հայերին խմբերի բաժանեցին, տղամարդկանց առանձնացրին և սպանեցին: Ապա սպանեցին ծերերին ու դեռահաս տղաներին: Տեղն ու տեղը սպանվեցին 33 կանայք, որոնք հրաժարվեցին իսլամությունն ընդունել: Հետո քրդերը տարան 13 տարեկաններին: Շատ կանայք իրենց երեխաներին գետը նետեցին:

Արմենուհի Թորիկյանը հիշում է, որ թուրքերը խլում էին ամենագեղեցիկ աղջիկներին և օրգիաներ կազմակերպում: Զոհերից չատերն ինքնասպանություն էին գործում: Օրդուում և Կիրասոնում եղան դեպքեր, երբ ամուսինն սպանում էր կնոջը, որդին՝ հորը, եղբայրը՝ քրոջը, հայրը՝ դավակներին՝ անպատվությունից խույս տալու համար:

Սամսոնի դեպքերի մի ուրիշ ականատես պատմում է. «Գրզ Գյոզի մոտ տեսա մի խոր ավազան լցված հինգ տարեկանից փոքր երեխաներով, որոնցից ոմանք դեռ կենդանի էին: Նույն տեղը տեսա 100-ի չափ ծեր կանանց դիակներ՝ վերմակների մեջ այրված»:

Կուքհոֆի 1915 թ. հուլիսի 4-ի հաղորդագրության մեջ կարդում ենք. «Ձեռնարկված հակամիջոցառումները (հավանաբար իրականացվում են Անատոլիայի բոլոր վիլայեթներում) այնքան դաժան են ու այնքան անհարիր մարդկայնությանը, որ անհնար է դրանց անտարբեր վերաբերել: Խոսքը մի ամբողջ ժողովրդի ջարդի կամ բռնի իսլամացման է վերաբերում: Այդ ժողովրդի ներկայացուցիչները անմիջական մասնակցություն չեն ունեցել հեղափոխական շարժմանը, այսինքն անմեղ զոհեր դարձան... Կառավարությունն ուղարկել է մոլեռանդ, ստուգված մահմեդական տղամարդկանց ու կանանց՝ հայերին քարոզելու իսլամացում, միաժամանակ սպառնալիքներ տեղալ նրանց հասցեին, որոնք գերադասում են հավատարիմ մնալ իրենց հավատին... Այդ դժբախտների մեծամասնությունը դիմադրեց և ամեն օր խմբերով քշվում էր երկրի խորքերը...

Հասկանալի է, թե որևէ հայ քրիստոնյա տեղ չի հասնի: Երկրի խորքերից հասած լուրերն արդեն վկայում են ամբողջ քաղաքների բռնագաղթված բնակչության անհետացման մասին»[1]:

Սամսոնի հայասպանների ղեկավարներն էին մութեսարիֆ Նեջիմը, ոստիկանապետներ Նուրին և Սաբրին, Իթթիհադի ներկայացուցիչ Սրդրը: Կիրասոնի հայերին հաչվեհարդարի ենթարկողների կազմակերպիչներն էին Մ. Էշրեֆը, նրա եղբայր Հասանը, ոստիկանապետ Քեմալը, հաղարապետ Ֆայիզը: Այդ վայրագությունների կազմակերպմանը ղեկավար մասնակցություն ունեցավ մութեսարիֆության երիտթուրքական կազմակերպության ղեկավար բժիշկ Սրդկինը:

Երբ Տրապիզոն քաղաքում տեղահանությունն սկսվեց, վտանգ կար, որ գյուղաբնակ հայերը կարող են ըմբոստանալ: Ազմին հայ երևելիներին գյուղերն ուղարկեց հայերին հանգստացնելու, թե տեղահանությունը ժամանակավոր է

---

[1] **Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., էջ 105:

և պահանջելու, որ բոլորը ենթարկվեն հրամանին, այլապես «քանի մը անխելքներու պատճառով ժողովուրդը կոտորել կու տամ»:

Վիլայեթի հայկական գյուղերում բռնագաղթն սկսվեց հուլիսի 17-ին: Նահանգի արևելյան շրջանի հայ գյուղացիներին՝ չուրջ 4000 հոգի, հավաքեցին ծովափին՝ Դրոնա Զարչի: Նախապես ձերբակալված տղամարդկանց բանտերից հանեցին, միացրեցին գյուղացիների կարավանին և Կալաֆկա լեռան փեշերով տարան լեռները: Որոշ տարածություն անցնելուց հետո տղամարդկանց (որոնք քայլում էին ձեռները կապված առանձնացրեցին, կարավանից հանեցին ու սպանեցին: Սրղանըլի դաշտում կարավանը շրջապատվեց ժանդարմների ու չեթեների կողմից: Փորձեցին ծաղրուծանակի ենթարկել Զալուք Պողոս անունով մի ծերունու, բայց նա կուրծքը բացեց, թե կրակե՛ք): Սպանեցին: Ապա ջարդեցին բոլոր տղամարդկանց: Կարավանում մնացին 700 կին և երեխա: Դուչ Կեոփրիում Շարիզադե Իսմայիլի չեթեները կարավանից հանեցին գեղեցիկ աղջիկներին և կանանց: Երզնկա հասավ 500 հոգի, որոնք էլ կացիններով, բիրերով ու քարերով ջարդվեցին Քեմախի կամուրջի վրա:

Սրղանըլիի ջարդից փախած 300 հայեր ոչնչացվեցին Սենջան Միսիխորի անտառում:

Թոզ գյուղի հարուստ և ազդեցիկ հայերից մեկը՝ Պ. Միրիմյանը տեղում սպանվեց իր երկու որդիների հետ միասին: Յոթանասունհինգ տղամարդու և կնոջ տարան հարթավայր, կանանց նախ բռնաբարեցին հրամանատարները, ապա չարքայինները: Մի երեխայի խփեցին ժայռին ու գանգը փչրեցին:

Սամսոնի հայ քաղաքական գործիչների ու կուսակցական ակտիվիստների մի մասին ծեծով սպանեցին, իսկ մյուսներին Մարզվանի նրանց գործընկերների հետ ուղարկեցին Սեբաստիա, որտեղ կախաղան հանվեցին կամ պարզապես գնդակահարվեցին:

Տեղահանությունից հետո Թուրքերը ձեռնամուխ եղան ոչնչացնելու նաև «հայերի հետքը»: Քանդեցին եկեղեցիները, հայկական դպրոցները, գերեզմանատներն ու ակումբները:

Միշտ և ամենուրեք չէ, որ հայերն անմռունչ տանում էին թուրքական վայրագությունները:

Գարեգին և Պողոս Սարգսյան եղբայրները ծրագրում են սպանել Ազմիին և ոմբակոծել թուրքական ամրությունները: Սակայն այդ երկու ձեռնարկն էլ ձախողվում են: Երկու եղբայրները, որոնք թուրքական բանակի սպաներ էին, ձերբակալում ու խոշտանգումներով մեռցվում են: Իսկ նրանց հայրը՝ Հարությունն Սարգսյանը, որը ոմբակոծության ազդանշանի դեպքում պետք է հրդեհեր սեփական տունը, այդ անելու լուր այդպես էլ չստացավ: Նա, հուսահատած, հրդեհեց տունը և ինքն էլ այրվեց բոցերի մեջ:

Եղան անհատական ինքնապաշտպանության անվեհեր օրինակներ: Մեկը, միայնակ տանը փակված, կրակի տակ պահեց ջարդարարներին այնքան ժամանակ, մինչև ինքը գնդակի զոհ դարձավ: Այդպես վարվեցին նաև Ս. Սեյրանյանը և Ե. Տերտերյանը: Նրանք ունեցած վերջին փամփուշտներով նախ սպանեցին իրենց ընտանիքի անդամներին, ապա ինքնասպան եղան:

Երբ ջարդարարները շրջապատեցին Թութունջյանների տունը, տան ավա-

գը բոլոր մուտքերին պատնեշներ չինեց և պաշտպանեց իր օջախը ու, երբ համոզվեց, որ դիմադրելն այլևս անհնար էր, Թուրքերի երեսին չպրտեց. «Միևնույնն է, չեմ հանձնվի» ու ինքնասպան եղավ:

Մի Թուրք սպա Պերճուհի Բախչիյանին ամուսնության առաջարկություն է անում: Աղջիկը պայման է առաջարկում. «Նախ, պատռիր իսլամանալու Թուղթը, երկրորդ, կարավանը պետք է առանց նոր չարչարանքների ու կողոպուտի հասնի Մալաթիա»: Սպան համաձայնվում է: Բայց Մալաթիայի ճանապարհին՝ Հեքիմ Խանեում, բռնությունները վերսկսվեցին: Շատերը Եփրատը նետվեցին... 13 տարեկան աղջիկներին քրդերն ու ժանդարմները տարան:

Հայ հայդուկային խմբեր էին գործում Խնեյի, Թրմեի և Զարչամպայի լեռներում: Նրանց բռնելու համար 1915-ի սեպտեմբերին ավելի քան 1000 ժանդարմներ շրջապատեցին Գոնկայի անտառը: Հայ փախստականների գլխի համար վալին 100 ոսկի խոստացավ:

600 հայ պատերազմի տարիներին, անգամ դրա ավարտից հետո, հայդուկային կռիվներ էր մղում: Զիլ Օհաննեսի, Միքայել Զեյթունցյանի, Հակոբ Քեհիյանի խմբերը կռիվներ մղեցին մինչև 1923 Թ. և ամբողջ խմբով՝ 70 հոգի, նավակներով անցան ռուսական սահմանը:

Մի ուրիշ խումբ հայերի, որոնք բանտարկված էին Թեքքեն կայարանում, զինաթափեցին պահակներին: Նրանց մի մասին հաջողվեց լեռ բարձրանալ:

Սամսոնի Հազ Թեփե հայկական գյուղի բնակիչները առերես իսլամություն ընդունեցին և չբռնագաղթվեցին: Սակայն իշխանությունները իսլամանալը բավարար չհամարեցին հայերի կյանքը խնայելու համար և որոշեցին նրանց նույնպես տեղահանել: Բայց «հարևան գյուղերի վրացիներն ու չերքեզները թույլ չտվեցին», պաշտպանեցին հայերին: Սակայն մինչև վերջ պաշտպանել չկարողացան, որովհետև այն, ինչ չհաջողվեց իթթիհադականներին, իրականացրին քեմալականները:

1915 Թ. հուլիսի 31-ին ՆԳ նախարարությունը տեղեկանքներ պահանջեց տարագրված հայերի Թվի և գրավված գույքի մասին:

Տարագրությունից 3-5 օր առաջ քաղաքներում ու գյուղերում ոստիկանության միջոցով հաշվվում ու արձանագրվում էր հայ ընտանիքների անդամների Թիվը՝ ըստ տարիքի և սեռի: Այս հաշվառմամբ արձանագրված Թվերը փաստորեն կոտորվածների Թվերն էին, քանի որ շատ քիչ մարդիկ փրկվեցին: Այսինքն, դեռ մինչև տեղահանությունը իշխանությունները կազմել էին հայերի ցուցակները, նրանց ուղեկցող զինվորների Թիվը: Այդ ցուցակներով՝ կայսրությունում տեղահանվել էր 2.6 մլն հայ, դրանից՝ Տրապիզոն նահանգում՝ 90 հազար հայ: Վիլայեթի հայերին հասցված նյութական վնասը կազմեց 150 մլն դոլար:

Թուրքական իշխանությունները մեխանիկորեն նվազեցնում էին հայերի Թիվը, հիմք ընդունելով 1903 Թ. մարդահամարի տվյալները: Ըստ իշխանությունների տվյալների՝ Տրապիզոնի սանջակից բռնագաղթվել էր 31885 հայ, Ռիզեի սանջակից՝ 68, Գյումուշխանեի սանջակից՝ 2547, Ջանիկի սանջակից՝ (Սամսոնի կազայից՝ 4992, Բաֆրայի կազայից՝ 1634, Զարչամպայի կազայից՝ 10648, Թերմեի կազայից՝ 2567, Յունիայի կազայից՝ 5379, Ֆատսայի կազայից՝ 1154): Վիլայեթում ընդամենը՝ 26374 հայ:

Անգամ թուրքական թվերն են սահմռկեցուցիչ, և իշխանությունները հետագայում վիճակագրական ցուցակները թաքցրեցին, չնայած դրանք հեռու են իրական պատկերը ներկայացնելուց: Օրինակ, միայն Սամսոն քաղաքում 1915-ին բնակվում էր 8000 հայ, քաղաքում կար 800 աշակերտ: Տրապիզոնի բռնագաղթի առթիվ Բարձր Դուռը հայտարարեց, թե այդ վիլայեթի հայերին Եվրոպա է ուղարկել առևտրական նկատառումներով: Իսկ Սամսոնի մասին ասվեց, որ բոլոր հայերը տեղահանվել, իսկ ուծացածների և մահմեդականների հետ ամուսնացածների բնակավայրերը փոխվել էին:

«Հայերն ու յոյները վերջնականապէս հեռացան ոչ միայն Տրապիզոնէն, այլեւ Սամսոնէն ու ծովեզերեայ միւս քաղաքներէն: Արդիւնքը աղէտաբեր եղաւ այդ քաղաքներուն տնտեսական կեանքին համար, որովհետեւ ամբողջ առեւտուրը, մասնաւորապէս արտահանումները ի գլուխ կը հանուէին յոյներուն եւ հայերուն կողմէ»[1]:

Նաև նշենք, որ ռազմական դատարանը 1919 թ. մայիսի 22-ին Ազմիի հետ միասին մահապատժի դատապարտեց նաև Տրապիզոնի վիլայեթի երիտթուրքական կազմակերպության պատասխանատու քարտուղար Նայիլին: Մեղադրանքը հետևյալն էր. «Տրապիզոնի նախկին կուսակալ Ջեմալ Ազմի բեյը հաղորդել է գաղտնի հրամանագրեր և հրահանգել ու գործել է իր տված հրամաններին համապատասխան... Նայիլ բեյը գործակցել է կուսակալին և աջակցել է նրան համաձայն իր ստացած հրամանների... Այդ երկուսը կատարելով Կ. Պոլսից ստացված գաղտնի հրամանները՝ հայերին ջարդելու և բնաջնջելու համար կազմակերպել էին հրոսակներ այնպիսի չարագործներից ու ոճրագործներից, որոնք բաղում անգամներ կատարել էին նման ոճիրներ: Նրանք ժանդարմների հետ ուղարկվեցին ուղեկցելու հայերի կարավանները, դրանք պաշտպանելու պատրվակով... նախ, հաղիվ կարավանները քաղաքից դուրս էին գալիս, անպաշտպան տղամարդկանց առանձնացնում էին կանանցից և տանում աչքից հեռու վայրեր, որտեղ նրանց կողոպտում էին, ապա կոտորում ամեն տեսակի տանջանքների ենթարկելուց հետո: Ապա կանանց էին տանում այլ վայրեր, որտեղ կողոպտում էին գոհարեղենները և ունեցած դրամը, նրանց մերկացնում էին և քայլեցնում ամիսներ շարունակ, այնպես որ ճանապարհի չարչարանքների հետևանքով շատերն ընկնում էին առանց պաշտպանության և մեռնում էին քաղցած ու ծարավ...»[2]:

Ռազմական դատարանը տարբեր ժամկետների բանտարկության դատապարտեց հարկային տեսուչ Մ. Ալիին, ոստիկանության պետ Նուրիին, գաղտնի գործակալության տեսուչ Մուստաֆային, ոստիկանական քննիչ Թալեաթին, հյուրանոցի տնօրեն Նիյազիին, բժշկական տեսուչ Ալի Սաիբին:

---

[1] **Նանսեն Ֆ.,** Հայաստան եւ Մերձաւոր Արեւելք, Վերիտոն, 1956, էջ 53:

[2] «Takvim-i Vekai», 1919 թ., № 3617.

* * *

«Армянский вестник»-ը 1916 թ. թիվ 15-ում տպագրեց Ա. Արղութինսկու հոդվածը, որտեղ կարդում ենք, թե երբ ռուսական զորքերը մտան քաղաք, այնտեղ միայն հույներն էին մնացել: «Թուրքերը փախել էին, իսկ հայերը թուրքերի կողմից մորթվել ու ծովն էին նետվել: Ազատվել էր միայն 100-120 մարդ, որոնք պարտիզանական կռիվներ էին մղել և մի քանի հարյուր երեխա: Հայերին մորթել և խեղդել էին նաև մերձակա գյուղերում, հույների պատմածով, ինչպես նաև ԱՄՆի հյուպատոսի, բողոքական միսիոների, տեղական հյուրանոցի չվեյցարական հպատակ տնօրենի, երկու վերապրած հայերի, կաթոլիկ միսիոներների, մի քանի ռուսահպատակների վկայություններով և ոչ մեծաթիվ չեթեների հարցափորձերով, հայերի կոտորածների ընդհանուր պատկերը հետևյալն է՝

Առաջին օրը բանտարկվեցին մի քանի հարյուր երիտասարդներ և ազդեցիկ հայեր, դավաճանության և ռուսների հաջողությանը նպաստելու պատրվակով: Սրանցից հարյուրական մարդու նստեցրին բեռնանավեր, տարան Էրոս և Պլատո հրվանդանները... Բոլոր տարվածները խեղդվեցին ծովում:

Ապա կանանց ու տղամարդկանց իրարից բաժանեցին: Կանանցից ջոկեցին երիտասարդներին ու գեղեցիկներին, տեղավորեցին մի տան մեջ և ներկայացրին սպաներին՝ հարճեր ընտրելու համար: Որոշ ժամանակ անց նրանց սպանեցին և դիակները ծով նետեցին: Մնացած տղամարդկանց ու կանանց պահակախմբերի ուղեկցությամբ առանձին խմբերով ուղարկեցին Ջիվիղլիկ, որը Տրապիզոնից 25 կմ հեռավորության վրա է: Այնտեղ կանայք ժանդարմների կողմից ենթարկվեցին բռնությունների և ապա թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ սպանվեցին, իսկ երեխաներն ուղղակի սվինահար արվեցին: Մի զինվորական նույնիսկ կազմակերպեց զվարճություն՝ երեխաներին կանգնեցնում էին և որոշակի հեռավորությունից կրակում՝ ծակելով դժբախտ փոքրիկների ճակատները: Կենդանի մնացածներին տանում էին Էրզրումի ուղղությամբ: Ընդ որում, թուրք գյուղացիների խոսքերով ... ամբողջ երթուղին ծածկված էր մեծահասակների և երեխաների դիակներով...

Հարցման ենթարկված շատ հույների կարծիքն այն է, որ հայերի կոտորածը տեղի է ունեցել համաձայն որոշակի ծրագրի և որ այդ գործում նախաձեռնությունն ու ղեկավարությունն անպայման պատկանում էին թուրքական կառավարությանը, որը խստորեն հետապնդում էր, որպեսզի հայերին որևէ օգնություն ցույց չտրվեր: Տեղական իշխանության ներկայացուցիչներից մեկի խոսքերով, որն ասվել է մի ազդեցիկ հույնի, ծով է նետվել 800 հայ երեխա...

Ավելի ավագ երեխաները և մի քանի վերապրած հայ աղջիկներ ու կանայք մեծագույն երախտագիտությամբ ու անսահման շնորհակալությամբ էին խոսում առանձին անձանց մասին, որոնք մեծ աշխատանք և եռանդ էին ներդրել կոտորվող հայերին փրկելու համար: Դրանք են Ամերիկայի հյուպատոսը, ամերիկացի միսիոներ Կրաֆֆորդը, «Suisse» հյուրանոցի տնօրենը, Շևքեթ Շադիրզադեն, որի որդուն ժանդարմներն սպանեցին, երբ նա բացեիբաց հանդես եկավ հայերի պաշտպանության օգտին:

Գերմանիայի հյուպատոսի մոտ վաղուց ծառայում էր մի հայ խոհարարու-

հի: Չնայած գերմանացին լիակատար հնարավորություն ուներ նրան հյուպատոսարանում թաքցնելու, գերադասեց հանձնել իշխանություններին և նա սպանվեց»:

Գերմանացի գործիչ Վ. Շվենդլերը հայերի մասին գրեց. «Նրանք նաև մեր թշնամիներն են և պատճառ չունենք նրանց համար խաղաքարտի վրա դնելու Թուրքիայի հետ մարտական զինակցությունը...»[1]:

Թուրքական վայրագություններն արդարացնում էր նաև Բերգֆելդը, որը հուլիսի 9-ին գրեց կանցլերին, թե «քրիստոնյաներն անչնորհակալ են թուրքերի անկանխակալ վերաբերմունքի համար» և «համակրում են հատկապես Ռուսաստանին»[2]:

Գերմանացի դիվանագետը Ռուսաստանի հանդեպ հայերի վերաբերմունքի հարցում չէր սխալվում: Տրապիզոնում ծնված Լևոն-Զավեն Սյուրմելյանն իր «Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ» ինքնակենսագրական վեպում ջերմությամբ է նկարագրում հայերի հանդեպ «ռուս քեռու» վերաբերմունքը: Այդ քեռին փրկեց նաև փոքրիկ Լևոնի կյանքը, «երբ նա թաքնվել էր հունական մի գյուղում»: «Երիտասարդ թուրքերը անպաշտպան մի ցեղի մահվան դատապարտեցին, որովհետև գիտեին, թե նա սիրահարված է Քեռի Ռուսաստանին: Եվ մենք չենք թաքցնում մեր սերը»[3]:

Պավլավիչինին գրեց Վիեննա, որ Տրապիզոնի հայերին տանելու են Մոսուլ: «Ի դեմս այդ՝ հայերի համար օրհասական և նրանց մեղքի հետ անհամեմատելի միջոցառումների, պարտքս եմ համարում մատնանշել տեղահանվածների մեծագույն մասի, այդ թվում, բազում կանանց ու երեխաների մահվան ակնհայտ նպատակ հետապնդող գործելակերպի ծանր քաղաքական և տնտեսական հետևանքները... Արտաքսումը Մոսուլ, մեծ հեռավորության և օթևանի ու սննդի բացակայության հետևանքով, նմանվում է մահվան դատապարտության (գործընկերներս կիսում են այս կարծիքը)»[4]:

Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը Կվյատկովսկուն գրեց, թե «Շատ բան հետներդ մի՛ վերցրեք» թուրքական նախազգուշացումը տարագրվողներին և «փոքր առնետներն էլ են վտանգավոր» և նման արտահայտությունները «վատ բաներ» են ենթադրում: Եվ ապա, «Ի վիճակի չեմ նկարագրելու հայ բնակչության հուսահատ վիճակը: Սիրտդ ճմլվում է, երբ տեսնում ես հայերով բնակեցված թաղամասերը: Տղամարդիկ, կանայք և երեխաները ողբում են, փողոցում թափված են կահավորանքի կտորներ և կենցաղային այլ իրեր՝ չրջապատված թուրքերով ու թրքուհիներով՝ ձրի յուրացնելու մտադրությամբ:

Կառավարության վարքագծից վրդովված է ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական բնակչության մեծ մասը...»[5]:

---

[1] «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987 թ., № 7, էջ 86:

[2] Նույն տեղում, էջ 83:

[3] **Սյուրմելյան Լ.,** Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ, Ե., 1980, էջ 10-11:

[4] Wien HHSTA PA XI 209, Konstantinopel, 27-ը հունիսի 1915 թ.:

[5] Wien HHSTA PA XII 209, Jenikoj, 24-ը օգոստոսի 1915 թ.:

Օսմանյան խորհրդարանի 1918 թ. դեկտեմբերի 11-ի նիստում նշվեց, որ հայերի «ապրանքները բռնագրավուեցան, երբ անոնք հաւաքաբար մահավճիռ ստացան եւ աքսորուելով, յոյներու նման, անարիւն՝ սպիտակ ջարդի ենթարկուեցան այն ծանօթ մեթոտներով, որ անոնք տեղահան եղած էին»:

ՆԳ նախարար Արիֆը հայտարարեց. «Էնվեր փաշան երեք միլիոն հայրենիքի զաւակներ զորաշարժի ենթարկելով հանդերձ չի կրցաւ յաղթել թշնամիին, բայց 5-10 չեթէներով 1.5 միլիոննոց ժողովուրդ մը մեռցուցած ըլլալնուն համար կրնայ իր պահուըտած տեղէն պարծենալ»:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՄՈՒՍԱ ԼԵՌ

Հալեպի վիլայեթի Անտիոքի գավառի Սուեդիայի (Սելևկիա) գավառակում Մուսա (Մովսեսի) լեռան փեշերին կար հայկական վեց գյուղ՝ Բիթիաս, Խըդրբեկ, Հաջի Հաբիբլի, Յողունօլուք, Վագրֆ, Քեբուսիե, որտեղ բնակվում էր 5-6 հազար հայ, շրջապատված մահմեդական գյուղերով: Քեսաբը նույնպես հայաբնակ էր, գտնվում էր դեպի հարավ 18 կմ հեռավորության վրա, բայց Մուսա լեռան գյուղերից կտրված էր, նրանց միջև բացակայում էր կանոնավոր հաղորդակցությունը:

Սուեդիայի հայությունը միշտ էլ ապրել է լիաթոք ազգային կյանքով, աչքի ընկել իր ըմբոստ ոգիով: Հանրահայտ է նրա 1895-ի հերոսամարտը: 1909 թ. մուսալեռցիները Հաջի Հաբիբլիի մերձակայքում փախուստի մատնեցին թուրքական զորքին ու հրոսակներին: Դրա հետ միասին, մուսալեռցիներն իշխանություններին պատրվակներ չընձեռելու նպատակով բարեխղճությամբ էին կատարում իրենց քաղաքացիական պարտականությունները:

1914 թ. հուլիսին սկսվեց զորակոչը: Մուսալեռցի զորակոչիկներից շատերը դասալքեցին, որովհետև թուրքերին չէին վստահում: Նրանց փնտրելու պատրվակով սկսվեցին խուզարկություններ և բռնություններ: Միաժամանակ հաշվառում էին հայերի ունեցած ձիերը, լծկանները, հացահատիկը, կնիքներ դնում ավանակների ու ջորիների վրա: Հայերից պահանջեցին լավ խնամել արդեն պետությանը պատկանող այդ կենդանիներին: Գյուղացուն մահապատիժ էր սպառնում դասալիք կամ զենք թաքցնելու համար:

Դասալիքները լուրեր էին բերում այլևայլ շրջաններում հայերի տեղահանությունների մասին, սակայն մուսալեռցիները թերահավատ էին այդ լուրերի հանդեպ: Քիչ անց ստացվեց նաև Զեյթունի տեղահանության լուրը: Դա մուսալեռցիներին հասցրեց Զեյթունի ավետարանական համայնքի հովիվ, յողունօլուքցի Տիգրան Անդրեասյանը, որը կարողացել էր խույս տալ տարագրությունից: Նա հուլիսին հասավ հայրենի գյուղ: Հուլիսի 26-ին ստացվեց Քեսաբի հայության տեղահանության հրամանը: Դա սպառնալից ահազանգ էր սուեդահայերի համար:

Հուլիսի 29-ին մուսալեռցիների ավագանին ժողովի է հավաքվում Յողունօլուքի քահանա Աբրահամ Տեր-Գալուստյանի տանը: Վտանգն ակնհայտ էր և «ի՞նչ անել» հարցը պատասխան էր պահանջում: Լարված քննարկում եղավ: Ոմանք դեմ էին լեռ բարձրանալուն, գտնելով, որ դիմակայելու համար ո՛չ զենք ունեն, ո՛չ պարեն և ո՛չ էլ համապատասխան թվով կռվող ուժ: Մեծամասնությունը գտնում էր, որ մահ է թե՛ տեղահանությունը և թե՛ դիմադրությունը, բայց գերադասելին դիմադրելն է: Որոշվեց. «Այստեղ ենք ծնվել, այստեղ էլ

կմեռնենք և գաղթական չենք դառնա»:

Քեբուսիեի քահանան հակառակ կարծիքի էր և նա կարողացավ այդ գյուղի բնակիչներին, բացի 17 ընտանիքից, ինչպես նաև Բիթիասի որոշ ընտանիքների, համոզել տարագրվելու: Նրանց տարան Դեր Զոր ու բոլորին ոչնչացրեցին:

Մուսալեռցիներն ունեին ընդամենը 140 մարտական, մի քանի հարյուր կայծքարային հրացան, 11 «մաուզեր» ատրճանակ, յուրաքանչյուրի համար 100-120 փամփուշտ, որոշ քանակությամբ վառոդ, մի քանի որսորդական հրացան: Զինվորական ծառայության մեջ եղել էր 6-7 հոգի, այսինքն, գրեթե չկային նաև ռազմական գործին գիտակ անձինք, զենք օգտագործել կարողացողների թիվը չէր անցնում 600-ից:

Հուլիսի 30-ին ստացվեց կազայի հայերին տեղահանելու վերաբերյալ Անտիոքի գայմագամ Մաարուֆի հրամանը հետևյալ բովանդակությամբ.

«1. Նկատելով, որ սոյն յայտարարութեան թուականէն եօթը օր վերջ Անտիոքի գազայի բոլոր հայերը պիտի լքեն Անտիոքն ու անոր պատկանող գիւղերը, հարկ է, որ սոյն հրամանագրին ենթակայ ամեն անհատ յիշեալ ժամանակամիջոցին մէջ կարգադրէ իր անձնական գործերը եւ պատրաստէ իր փոխադրութեան միջոցները:

2. Կառավարութեան կողմէ որոշուած վայրերը հայերու տեղափոխութեան միջոցին անոնց խաղաղութիւնը, հանգստութիւնը եւ ամեն տեսակի կեղեքումի դէմ անոնց պաշտպանութիւնը պիտի ապահովուի ժանտարմաներու միջոցով:

3. Աղքատութիւնը ստուգուած ընտանիքներուն կառավարութեան կողմե պիտի տրուին փոխադրութեան միջոցներ եւ սնունդ:

4. Հոս մնալիք ստացուածքներն ու գոյքերը մէկիկ-մէկիկ իրենց տեսակներովը, պիտի ցուցակագրուին կառավարութեան կողմէ եւ ապահով տեղեր պիտի դրուին ու պաշտպանուին եւ յետոյ անոնց վաճառումէն գոյացած գումարները պետական սունտուկին մեջ պիտի դրուին եւ ապա տէրերուն պիտի ղրկուին:

5. Գաղթականներուն բոլոր իրաւունքները պիտի պաշտպանուին, քանի որ իրենց ղրկուելիք տեղերը հանգստաւէտ կերպով պիտի բնակեցուին:

6. Իմ նախագահութեանս տակ յանձնախումբ մը կազմեցի որպէսզի առաքումի գործը բարւոք կատարուի եւ կառավարուի, անձնական իրաւունքները պաշտպանուին, եւ ստացուածքներն ու չարժուն գոյքերը տեղերակներու մէջ արձանագրուին;

7. Պէտք է, որ տեղահանութեան ենթակայ անհատներ կատարեալ վստահութիւն ունենան կառավարութեան գործողութեանց վրայ, եւ ուրիշ օսմանեան հպատակներ ալ պէտք է յարգեն այս իրաւունքները ..., քանի որ գործադրուելիք տեղահանութիւնը հասարակ գաղթումի գործողութիւն մը պիտի ըլլայ:

8. Կը յայտարարեմ, թէ ըլլա՛յ ժողովուրդէն և ըլլա՛յ կառավարութեան պաշտօնեաներէն, ով որ զանցառու գտնուի, անմիջապէս պիտի ձերբակալուի եւ զինուորական ատեանի պիտի ղրկուի: Անտիոքի գազայի գայմագամ Մաարուֆ, 16 յունիսի 1915»[1]:

---

[1] *«Յուշամատեան Մուսայ լերան», Պէյրութ, 1970:*

Հետագայում Տ. Անդրեասյանը գրեց. «Հազիվ թե կարողանաք պատկերացնել այն զգացմունքն ու վրդովմունքը, որոնք առաջացրեց տեղահանության հրամանը... Թվում էր, թե անհույս էր թուրքական կառավարությանը հակառակվելը: Սակայն մեր ընտանիքներին հեռավոր անապատ ուղարկելը, որտեղ բնակվում էին արաբական մոլեռանդ ցեղերը, այնքան սարսափելի էր թվում, որ կանայք և տղամարդիկ հակված էին հակառակվելու հրամանին և գերադասեցին կրելու կառավարության ցասումը: Մենք գիտեինք, որ անհնար էր պաշտպանել մեր լեռան չուրջ ընկած գյուղերը: Կառավարության հրամանն արձակվել էր հուլիսի 30-ին: ...Յոթ օրվա ժամկետը գրեթե անցել էր...»[1]:

Հաջորդ օրը հայերն սկսեցին լեռ բարձրանալ: Մի քանի օրում Յողունօլուք, Խըտրբեկ և Վագրֆ գյուղերը դատարկվեցին: Օգոստոսի 4-ին լեռ բարձրացան Հաջի Հաբիբլիի ողջ բնակչությունը և Բիթիասի բնակչության մի մասը:

Լեռ բարձրացավ ընդամենը 4231 հոգի: Մնացած 2080-ը Բիթիասի քահանա Նուխուտյանի գլխավորությամբ բռնեց տարագրության, այսինքն մահվան ճանապարհը:

Շրջանառության մեջ են նաև հետևյալ թվերը: Մուսա լեռան վեց գյուղերը ունեին 4231 բնակիչ (1171 կին, 1237 տղամարդ, 1383 անչափահաս): Բիթիաս գյուղի 1050 բնակչից տարագրության ուղին բռնեց 450-ը, Հաջի Հաբիբլիի 1284 բնակչից՝ 384-ը, Յողունօլուքի 1233 բնակչից՝ 57–ը, Խըդրբեկի 1149 բնակչից՝ 65-ը, Վագրֆի 470 բնակչից՝ 84-ը, Քեբուսիեի 1040 բնակչից չհեռացավ միայն 85 հոգի:

Բնականաբար, թուրքերը նկատեցին մուսալեռցիների սար բարձրանալը, բայց քմծիծաղի տվեցին: Նրանք մարդիկ ուղարկեցին համոզելու նրանց հետ կանգնելու այդ անմիտ ձեռնարկից: Թուրքական իշխանությունները մի կողմից հայերի հետ բանակցություններ էին վարում, մյուս կողմից՝ 200 զինվորի հարձակման տանում նրանց վրա:

Սուեդահայերն իրենց հետ լեռ տարան սննդի բոլոր պաշարները, անասունները, այն ամենն, ինչ հնարավոր էր տանել: Նրանք կանգ առան Թաթար Ալակ լեռնահովտում: Ստեղծվեց ռազմական խորհուրդ՝ Ե. Յաղուբյան, Պ. Տմլաքյան, Պ. Տուտաղյան, Մ. Տեր-Գալուստյան, Մ. Ճանաղյան և Հ. Իսկենդերյան: Հերոսամարտի ոգին Տիգրան Անդրեասյանն էր, մարտական գործողությունների ղեկավարները՝ Եսայի Յաղուբյանն ու Մովսես Տեր-Գալուստյանը: Մի քանի օրում լեռնահովիտը կահավորվեց ոչ միայն որպես կացարան, այլ նաև՝ ռազմական ճամբար: Կառուցվեցին ճանապարհներ, դիրքեր, խրամատներ: Անտառի առկայությունը հնարավորություն տվեց չինելու տներ, զորանոցներ:

Ձևավորվեց չորս տեղամաս՝ Կրզրլջա, Կուզճրդուզ, Դամլաջրք, Կափլան-Դուզաղ: Ձևավորվեցին մարտական ջոկատներ, կազմակերպվեց 40 հոգանոց երիտասարդական հարվածային ջոկատ: Մերերից ու դեռահասներից ստեղծվեցին օժանդակ տասնյակներ: Տ. Անդրեասյանը վկայում է, որ նախապատրաստական աշխատանքները տևեցին ութ օր: Մի քանի օր թուրքերը տեղյակ

[1] **Andreassian D.,** *Suedije – ein Episode der Armenierverfolgungen 1915, s. 55 ff.*

չէին, որ Մուսա դաղի հայկական գյուղերը լրիվ դատարկվել էին:

Օգոստոսի 7-ին տեղի ունեցավ Թուրքերի առաջին հարձակումը, որը ղեկավարում էր Սուեդիայի մյուդիր Խալիդը: Հարձակմանը մասնակցում էր 200 ասկյար: Կռիվը տևեց վեց ժամ և ավարտվեց Թուրքերի նահանջով: Նրանք տվեցին տասը սպանված և 20 վիրավոր: Խալիդը հայերից պահանջեց զենքերը վար դնել ու հանձնվել: Մուսալեռցիներն անպատասխան թողեցին այդ պահանջը:

Օգոստոսի 10-ին սկսվեց նոր հարձակում, որին մասնակցում էին 5000 զինվոր ու սպա, որոնք լեռնային խոշոր թնդանոթների ուղեկցությամբ, յոթ փաչաների և գերմանացի մի սպայի հրամանատարությամբ գնում էին մուսալեռցիների վրա: Հայերը սկզբում ընկրկեցին թշնամու գերակշիռ ուժերի առաջ, ինչը նաև դարձավ ծուղակ Թուրքերի համար:

Մուսալեռցիները հետ քաշվելով՝ հանկարծակի զանգվածային կրակի տակ առան լեռն ի վեր խուժող թշնամուն: Թուրքերը խուճապի մատնվեցին ու փախան: Նրանք նոր հարձակման անցան: Այդպես՝ 12 ժամ շարունակ: Մարտում ծանր վիրավորվում է Հակոբ Կարագյոզյանը, որին ժողովուրդն Առյուծ էր կոչում: Նա դիմելով յուրայիններին, ասում է. «Կ'աղաչեմ, ինձմով մի՛ զբաղիք: Ես արդէն ինչ-որ պիտի ըլլամ, եղած եմ, դուք գացէ՛ք ու թշնամին դիմադրեցէ՛ք: Մանաւանդ մի՛ տարակուսիք վերջնական հաղթանակի վրայ: Մե՛րը պիտի ըլլայ ան»[1]: Այդ օրը հերոսական մահով զոհվեց նաև Հակոբ Գալուստյանը: «Los Angeles Examiner»-ը 1926 թ. օգոստոսի 1-ին գրում է, որ այդ օրվա կռվում Թուրքերը ունեցան 100 սպանված և 300 վիրավոր:

Օգտվելով մի քանի օրվա դադարից, հայերը կրճատեցին ճակատային գծի երկարությունը:

«Վերջին ճակատամարտին մէջ,- հիշում է Տ. Անդրեասյանը,- մեր ունեցած փորձառութենէն սորվեցանք, թէ չատ դժուար ու անապահով էր մեր ոյժերը երեք-չորս տարբեր կեդրոններու վրայ կառավարել: Պէտք էր միայն մէկ կեդրոն ունենալ, ուրկէ կարելի ըլլար անմիջապէս պէտք եղած չափով ոյժ ղրկել թշնամին դէմ, յարձակումի մը պահուն...

Զինուորական կազմակերպութիւնները առաջուան պէս մնացին՝ բոլոր կռուողները նորէն բաժնուեցան տասնապետութեանց: Կռուելու ատակ եւ զէնք ունեցող միացեալ ոյժերը կը բաղկանային 43 տասնեակներէ, նոյն թուով տասնապետներով»: Սրանց մէջ չէր մտնում չեթեական կազմակերպությունը: Մուսալեռցիների պաշտպանական տարածքը 70-80 քառ. կմ էր, ինչը փոքրաթիվ ուժերով պաշտպանելը շատ դժվար էր: Կարևոր կետերը պահելու հաղիվ 2-3 զինյալ էր հասնում: Այդ անպատեհությունը վերացնելու էին կոչված 33-ական հոգուց կազմված չեթեական երեք խմբերը, որոնք անմիջապես օգնության էին հասնում հարձակման ենթարկված կետերին: Չեթեական խմբապետներն էին Ե. Յաղուբյանը, Պ. Տրմլագյանը և Պ. Տուտագյանը[2]:

---

[1] *«Յուշամատեան Մուսայ լերան», Պէյրութ, էջ 334:*

[2] *«Հերոսամարտեր», Լոս Անջելես, 1985, էջ 91-92:*

1915 թ. օգոստոսի 27-ին Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Դանդինին գրեց. «Անտիոքի մոտ Սվեդիայից, Ուրֆայից ու նաև Ջեյրանի շրջակայքից հաղորդում են հայերի և իշխանությունների զինված ուժերի միջև արյունալի ընդհարումների մասին: Զենքը հանձնելու Թուրքական կառավարության պահանջին հայերը պատասխանեցին կրակոցներով, այդ պահանջը հանգեցրեց մինչև հիմա չարունակվող մարտերին»[1]:

Հայերը չորս կետերի փոխարեն կենտրոնացան Դամլաջըքում՝ Միջերկրական ծովի դիմացը, որն ավելի մեծ հնարավորություն ուներ ծովից օգնություն ստանալու կամ օտար նավերով փրկվելու համար:

Կազմավորվեց վարչական մարմին՝ Տիգրան Անդրեասյանի ղեկավարությամբ: Նա պետք է հետևեր կարգուկանոնին, զբաղվեր պարենավորմամբ, ապահովեր թիկունքի հստակ աշխատանքը:

Ստեղծվեցին աշխատանքային վաշտեր, որոնք փորում էին խրամատներ, ծառեր կտրատելու միջոցով ապահովում էին դիրքերի տեսադաշտը, ճանապարհներին խոշոր քարեր էին գցում, թշնամու առաջխաղացումը խոչընդոտում: Ստեղծվեց «հեռախոս տղաների» կապի թռուցիկ խումբ, ինչպես նաև 25 հոգանոց մի ջոկատ, որը Թաթար Ալանկ վայրում էր մնալու որպես պահեստային ուժ՝ կարիք զգացող խմբերին օգնության հասնելու համար:

Տեղանքին քաջատեղյակ լինելը հայերին հնարավորություն տվեց աննկատելի մոտենալ թշնամու բանակատեղիին, և օգտվելով գիշերվա մթությունից, հանկարծակի հարձակում գործել: Քնած թուրքերը կաթվածահար վեր թռան ու փախուստի դիմեցին:

Սակայն դա դեռ հաղթանակ չէր: Թուրքերը մի քանի օր անց նոր հարձակման անցան: Օգոստոսի 15-ին թուրքական 5000 հոգանոց զորքը և 4000 բաշիբոզուկը Ֆախրի փաշայի հրամանատարությամբ նորից հարձակման անցան: Խորամանկ փաշան իր ուժերի մի մասը ուղարկեց դեպի Թաթար Ալանկ, իսկ մյուս մասը դարանակալեց անտառում: Թշնամու երկու թնդանոթներն անընդհատ ռմբակոծում էին հայերի դիրքերը: Բայց թուրքերն այդպես էլ որևէ հաջողության չհասան:

Մարտերին իրենց եռանդուն մասնակցությունն ունեցան նաև կանայք, ծերերն ու երեխաները: «Նրանցից ոմանք զինված էին սովորական հրացաններով, կանայք ու պատանիները՝ փայտերով, քարերով ու իրենց եղունգներով»: Այնուամենայնիվ, թշնամին հաջողեցավ օգտվել գիշերվա մթությունից ու տիրանալ հարթավայրին: Հայերն այդ օրը տվեցին տասնմեկ սպանված և մի քանի վիրավոր:

Օգոստոսի 16-ին կռիվը վերսկսվեց և ավելի կատաղի բնույթ ստացավ: Մուսալեռցիները թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ նահանջեցին, եղան նաև խուճապի առանձին տրամադրություններ: Սկսեց ռմբակոծվել նաև Դամլաջըքը, այսինքն՝ պաշտպանության կենտրոնը:

Կանանց ու երեխաների թափորը Աբրահամ քահանա Տեր-Գալուստյանի

---

[1] Wien HHSTA PA XXXVIII 366, Aleppo, 27-ը օգոստոսի 1915 թ.:

գլխավորությամբ չարժվում է դեպի ծովափ: Սակայն օրվա երկրորդ կեսին հուսահատական տրամադրությունները հաղթահարվում են և մուսալեռցիները նորից հաղթանակած են դուրս գալիս: Նրանք թշնամուն վերջին կիսաօղակի մեջ, կրակի տակ առան ու բոլոր կողմերից աղմուկ-աղաղակով գրոհի անցան: Թուրքերը, չփոթված, մի պահ կանգ առան, որին հաջորդեց հայերի նշանառու կրակը: Գործի դրվեցին նաև 1895 թվից մնացած մի քանի ժանգոտ ռումբեր, որոնք ավելի ուժեղացրին թուրքերի սարսափը: Նրանք կարծեցին, թե հայերն օգնական ուժերով համալրվել են և խուճապահար փախան: «Ինչ արագությամբ որ առաջացել էին, կրկնակի արագությամբ հետ են քաշվում»՝ կռվի դաշտում թողնելով սպանվածներ ու ռազմամթերք, զենքեր, սննդամթերք, դեղորայք: Երկու օրում թուրքերը կորցրին 600-700, իսկ հայերը՝ 20 սպանված ու չուրջ երեք տասնյակ վիրավոր:

Թուրք հրամանատարը հարկադրված էր խոստովանել. «Եթէ ես իմ 5000-ի փոխարեն ունենայի 500 այսպիսի (հայերի նման) քաջեր, կը տեսնէիք, թէ ինչ հրաշքներ կը գործէի»[1]:

Օգոստոսի 19-ին, երբ մուսալեռցիները տոնում էին Աստվածածնի տոնը, տեղի ունեցավ նոր հարձակում, որին մասնակցում էին 9000 կանոնավոր զորք ու մեծ թվով հրոսակախմբեր: Հարձակումն սկսվեց վեց ուղղություններով և անընդմեջ ընթացավ երկու օր: Թուրքերը մի քանի կետերում ճեղքեցին հայերի պաշտպանությունը: Սակայն 50 հայեր հաջողեցան աննկատ անցնել թուրքերի թիկունքն ու նրանց կրակի տակ առնել: Թշնամին խուճապի մատնվեց և մարտադաշտում թողնելով 500 դիակ՝ փախուստի դիմեց:

Ալեքսանդրետ օգնության խնդրանքով ուղարկված պատվիրակը օգոստոսի 12-ի գիշերը վերադառնում է ձեռնունայն: Թուրքերը որոշում են հայերին տևական շրջափակման մեջ պահել ու սովամահ անել: Շրջափակմանը մասնակցում էր 15 հազար հոգի:

Իսկ հայերի սնունդն ու ռազմամթերքը սպառվելու վրա էին:

Ինքնապաշտպանության ղեկավարները հնարներ էին փնտրում օտար, մասնավորապես Անտանտի երկրների նավերի հետ կապ հաստատելու համար: Սեպտեմբերի 2-ին երևաց առաջին նավը, բայց առանց ափին խմբված մարդկանց վրա ուշադրություն դարձնելու՝ հեռացավ: Լավ լողորդներ Մ. Գրիգորյանը, Կ. Խաղցնյանը, Ա. Կոջանյանը և Տ. Մանկլիկյանը թիթեղյա ամաններում դրված աղերսագրերով լողում են Ալեքսանդրետի ուղղությամբ, իսկ ծովափնյա բլուրի վրա ամրացվում են երկու դրոշակներ՝ մեկի վրա կարմիր խաչ էր նկարված, իսկ մյուսի վրա անգլերեն գրված էր. «Քրիստոնյաները աղետի մեջ են»: Պաստառների կողքերին խարույկներ վառեցին՝ ուշադրություն հրավիրելու համար:

Դրանց մոտ մշտական պահակություն էր սահմանված, որպեսզի նավ նշմարելիս ծածանեին դրոշները: Լողորդների միջոցով նոր նամակներ են ուղարկվում Կիպրոս՝ Ամերիկյան հյուպատոսին, նաև Հալեպի հայոց առաջնորդին՝ Պողոս Նուբար փաշային հանձնելու համար:

---

[1] «Յուշամատեան Մուսայ լերան», էջ 359:

Աղերսագրում կարդում ենք. «Տէ՛ր, մենք հոս ապաստանած ենք Թուրքական բարբարոսներէն, խժդժութիւններէն, կոտորածէն եւ մահէն, մանաւանդ մեր կիներուն պատիւին բռնաբարումէն զերծ մնալու համար: Տէ՛ր, վստահ ենք, որ դուք տեղեակ էք Թուրքին ներկայ բնաջնջման քաղաքականութեան, զոր ան կը գործադրէ մեր խեղճ ցեղին վրայ... Ինչպէս որ ամերիկացի տոքթոր մը ըսած է, Թուրք կառավարութիւնը որոշած է բնաջնջել Թրքահայերը եւ մեծ կորովով կը գործադրէ իր ծրագիրները... Մենք որոշեցինք մեռնիլ կռուով, քան մեր իսկ աչքերով տեսնել մեր կիներուն պատուին անարգուիլը եւ յետոյ, իբրեւ վախկոտներ, անչուշտ չարչարանքներով մահուան դիմել»: Այնուհետեւ նշվում է, որ թեև իրենք հաղթանակող են դուրս եկել տեղի ունեցած ճակատամարտերից, սակայն այլևս հնարավորություն չունեն դիմակայելու, քանի որ ո՛չ կարգին զենք ունեն և ո՛չ զինամթերք, «մանաւանդ, որ սովը չատ մօտեցած է մեզի»[1]: Խնդրում էին կա՛մ բոլորին ազատել և կա՛մ, եթե դա հնարավոր չի համարվի, փոխադրել կիները, ծերերն ու մանուկները և օգնել զենքերով և ռազմամթերքով, ինչպես նաև սննդամթերքով, որ դաշնակիցների հետ կողք-կողքի կռվեն Թուրքական ուժերի դեմ[2]: Սակայն աղերսագրերը մնում են անպատասխան:

Այդ ընթացքում Թուրքական հրամանատարությունը մի քանի անգամ մուսալեռցիներին առաջարկեց զենքերը վար դնել ու հանձնվել: Սեպտեմբերի 5-ին երևաց ֆրանսիական «Գիշեն» հածանավը: Հայերի աղմուկի վրա՝ նա ծով իջեցնում է մի մակույկ, որը մոտենալով ափին, վերցնում է ֆրանսերեն խոսող մեկին, ավագանուց մի քանի հոգու և վերադառնում է նավ: Ծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեն և նավապետ Բրիսոն, ստանալով հայերի դիմումը, հիանում են: Բրիսոն իր անձնական պատասխանատվությամբ խարիսխ է գցում և հրամայում է ռմբակոծել Քեբուսիե գյուղի եկեղեցին, որը Թուրքերը ռազմական պահեստի էին վերածել: Վերջինները դա ընկալեցին, որ իրենց դեմ Անտանտը նոր ճակատ է ուղում բացել և որոշեցին արագացնել հայերի ոչնչացումը, քանի դեռ եվրոպացիները նոր ուժեր չէին բերել: Սեպտեմբերի 7-ին տեղի ունեցավ նոր հարձակում, սակայն որևէ հաջողություն չունեցավ: Այդ օրը հայերը կռվում էին բարձր տրամադրությամբ, նրանք երգելով ու իրար հետ կատակելով էին մարտնչում կատաղած Թշնամու դեմ: Ափին մոտեցավ ֆրանսիական նավը: Մի քանի հայեր ծովը նետվեցին: Սակայն նրանց Թույլ չտվեցին նավ բարձրանալ:

Ֆրանսիացիք նախ պարզեցին իրական վիճակը, ապա նոր միայն համաձայնվեցին բանակցել: Տեղ հասան անգլիական մի ռազմանավ ու մի քանի մարտանավեր: «Ժաննա դ'Արկ» հածանավ են բարձրանում վարչական մարմնի անդամները: Թուրքերն այս ամենը տեսնում են և որոշում են խորամանկել: Սեպտեմբերի 9-ին Թուրքական զորքերի հրամանատար Ռիֆաթը երեք նամակ ուղարկեց մուսալեռցիներին և նորից պահանջեց հանձնվել:

---

[1] **Անդրէասեան Տ.,** Զէյթունի անձնատուութիւնը եւ Սուէտիոյ ինքնապաշտպանութիւնը, Գահիրէ, 1915, էջ 44:

[2] Նույն տեղում, էջ 49:

Պատասխանի համար տրվում էր երկու ժամ: Հայերը առաջարկեցին 24 ժամ՝ ժամանակ չահելու համար: Սակայն Թուրքերը պատասխանի չսպասեցին ու նոր հարձակման անցան: Հայերը պատասխան կրակ չբացեցին, իբր լքել էին դիրքերը: Թուրքերը մոտեցան կիրճի հայկական դիրքերին, ընկան ուժեղ կրակի տակ և խուճապահար նահանջեցին: Հայերը նրանց հետապնդեցին: Օտար նավով փրկվելու մաքառումներում առանձնապես աչքի ընկավ 75-ամյա Մովսես Գրիգորյանը որ 30 ժամ մարտնչեց Միջերկրականի ալիքների հետ ու կարողացավ մուսալեռցիների խնդրանքը հասցնել օտար նավի հրամանատարին:

Հաջորդ օրը ափին մոտեցան ֆրանսիական «Գիշեն» և «Դեզե» հածանավերի հրամանատարները և հայերին ասացին. «Երեկ դուք կատարեցիք ձեր պարտականությունը, այսօր հերթը մերն է»[1]: Ու սկսեցին ռմբակոծել Թուրքերի դիրքերն ու զորանոցը: Օգտվելով դրանից՝ հայերը հարձակման են անցնում ու Թուրքերին փախուստի մատնում: Ֆրանսիական 3-րդ նավախմբի հրամանատարությունը նպատակահարմար չի համարում այդ հատվածում ռազմական գործողություններ ծավալել և որոշում է հայերին տեղափոխել: Կիպրոսի անգլիական հրամանատարությունը հրաժարվեց հայերին օթևան տալ, իսկ Եգիպտոսի բարձր կոմիսարն էլ պատասխանեց, թե Լոնդոն է դիմել և պատասխանի է սպասում: Ծովակալ Դարտիժ դյու Ֆուրնեն առանց Փարիզի համաձայնությանը սպասելու ժողովրդին բարձրացնում է նավեր: Եվ «Գիշեն», «Դեզե», «Ֆուդր», «Լ՚Ադմիրալ Շարնե» և «Դ՚Էստրե» մարտանավերը լցվեցին մուսալեռցիներով: Դա սեպտեմբերի 14-ն էր: «Երբ կիներէն, ծերունիներէն եւ տղաներէն վերջինը նաւ դրուած էր, հայկական 20 զօրախմբերը միաժամանակ ձգելով իրենց լեռնային դիրքերը, զանազան կողմերէն ծովափ եկան... խմբակ առ խմբակ, հուժկու եւ խրոխտ պատերազմիկներ՝ կուրծքերնին փամփշտակալներով զարդարուած»[2]:

Նավ բարձրացավ 4058 մարդ, որից 1568-ը՝ երեխա, որոնցից՝ չորս տարեկանից ցածր՝ 427, 4-14 տարեկան աղջիկներ՝ 508, տղաներ՝ 628 հոգի[3]: Ուղղություն վերցրին դեպի Պորտ Սայիդ: Այստեղ նրանք մի քանի տարի ապրեցին վրանների տակ: Մուսալեռցիներից 600 հոգի կամավոր մտավ Արևելյան լեգեոն և 1918-ի սեպտեմբերի 19-ին խիզախաբար կռվեց Պաղեստինի Արարա բարձունքի վրա տեղի ունեցած ճակատամարտում:

Մուսալեռցիների դասերը: «Աշխարհը ժամանակին չանսաց» մի բուռ հայերի խելահեղության արմատները, որ Հայոց ցեղասպանության գերմարդկային վայրագ պոռթկում էր, որ մուսալեռցիների օրինակը տակավին մնում է որպես կանխազգուշացում և զգոնության ահազանգ, որ Մեծ եղեռնը «նախերգանքն էր մի շարք ազգերի և ազգությունների բնաջնջման»: Այդ գիտակցությանը հասու եղավ միայն Ֆրանց Վերֆելը, որն իր ժամանակակիցներից տարիներ առաջ կանխագուշակեց, թե «ինչ աղետներ են սպասվում» աշխարհին

---

[1] *«Յուշամատեան Մուսայ լերան», էջ 382:*

[2] *Նույն տեղում, էջ 392:*

[3] ***Ազատեան Լ.,** Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անջելես, 1995, էջ 21:*

20-րդ դարում, և մարդկությանը կոչ արեց «ի սեր բարության՝ զինված մենամարտի մեջ մտնել չարության դեմ»[1]:

Ցեղասպանի դեմ մարտնչելը պարտք է՝ անկախ ունեցած կարողություններից: Դա կլինի ոչ թե արկածախնդրություն, այլ միակ ճիշտ կողմնորոշումը: Արկածախնդրությունը հազարավորներին Իթթիհադի մարդասպանների գթությանը թողնելն էր, բռնագաղթի ճամփան բռնելը: Երբ ժողովրդին մահվան են քշում, միակ բարոյականը բոլոր ուժերով մարտնչելն ու զենքը ձեռքին կամ անգամ առանց զենքի մարտերում զոհվելն է:

Միանգամայն իրավացի է ռուս բանաստեղծ Միխայիլ Դուդինը, երբ գրում է. «Ֆրանց Վերֆելն իր գրքում անդրադարձել է ոչ այնքան զոհերին, որքան հերոսներին, ոչ թե դաժանությանը կրավորաբար հանձնվելուն, այլ՝ դիմադրությանը, դահիճների ոճրագործությանն ակտիվորեն դիմադրելուն»[2]:

Այս առումով Արևմտյան Հայաստանի 1914-1918 թթ. ինքնապաշտպանական կռիվները համամարդկային հնչեղություն ունեն, դրանք կողմնորոշումներ են՝ ատամն ընդ ատաման, որն այլընտրանք չունի: Պատահական չէ, որ 1942 թ. Հարավսլավիայի պարտիզանները Սլովենիայի Ռոգ լեռան վրա գտնված պահին կոչ արեցին. «Հայրենիքի համար կռվենք այնպես, ինչպես կռվում էին հայերը Մուսա լեռան վրա»: Եվ նրանք հաղթեցին, Ռոգ լեռն ստացավ իր երկրորդ անունը՝ Սլովենիայի Մուսա լեռ:

Լեհ գրող Քրիստինա Ժիվալսկան իր «Օսվենցիմի դժոխքը» գրքում պատմելով այդ դժոխքում իր տարած տանջանքների մասին, գրում է, որ Գաբրիել Բագրատյանն իր համար դարձել էր պայքարի միակ ճիշտ ձևի խորհրդանիշ, «երբ ինքը կանգնած է եղել կործանման դեմ հանդիման»:

«Ցավոք,- գրում է նա,– Հիտլերյան մահվան ճամբարները հնարավորություն չէին տալիս հավաքվելու Մուսա լեռան նման բարձունքի վրա՝ այնտեղից թշնամուն հարվածելու համար: Դաժանության աստիճանը նույնն էր մնացել, կատարելագործվել էր միայն մարդասպանության տեխնիկան... Օսվենցիմ կոչվող այդ անիծյալ հողակտորի վրա փակված, ես քանի-քանի՜ անգամ եմ երազել Մուսա լեռ...»[3]: Դժբախտաբար այդպես է. դաժանությունների աստիճանները նույնն են, տարբեր են միայն դրանց արտահայտության ձևերն ու եղանակները: Տարբեր են նաև ոչ միայն դրանց ընդդիմանալու ձևերն ու եղանակները, այլև դիմադրելու բուն կամքը, ապրելու իրավունքը կռվելով նվաճելու վճռականությունը:

Լեփսիուսը նշելով, որ «Ջերել Մուսա լեռան ստորոտում ընկած Սուեդիայի գյուղերի բնակիչներին ... հաջողվեց խուսափել ջարդերից», նկատում է, որ «չպարզաբանված լրտեսական խարդախություններն առիթ տվեցին հարձակվելու Դեորթ-Յոլի վրա: Տղամարդկանց տեղափոխեցին Հալեպ և խցկեցին փողոցների չինարարության մեջ»: Մուսա լեռան ու Դյորթ-Յոլի հայության հաչ-

---

[1] **Սահակյան Ռ.,** *Ցեղասպանության պատմությունից, Ե., 1990, էջ 190:*
[2] **Վերֆել Ֆ.,** *Մուսա լեռան քառասուն օրը, Ե., 1987, էջ 9:*
[3] **Սահակյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 192:*

վենկատությունն ու խիզախությունը փրկեցին 8000 մարդու կյանքը:

Միանգամայն հակառակը կատարվեց Քեսաբի հայության հետ: Նրանց դժբախտության պատճառը եղավ լսելը տեղի քահանային և գերմանացի միսիոներ Հերթրին, որը չնայած այնտեղ որբանոց էր հիմնել, բայց հիմնական գործը լրտեսությունն էր: Նա հայերին հորդորում էր հնազանդվել թուրքական իշխանություններին: Հայ որբերին Հալեպ փոխադրելու անվան տակ, նա բոլորին այրել տվեց[1]:

Օբյեկտիվորեն, այդ լրտեսին օգնում էին բողոքական դաշնակցականները, որոնք ինքնապաշտպանությանը դեմ էին: Նրանցից բժիշկ Ավետիս Ինճեճիքյան պատասխանելով համատեղ պաշտպանվելու մուսալեռցիների առաջարկին, ասաց. «Օղին քիչ մը աւելի խմեր են անոնք...»[2]:

«Երբ ստացվել է աքսորի հրամանը,- գրեց «Times»-ը 1915 թ. հոկտեմբերի 7-ին,- 4300 հոգի բարձրացել են սարերը, որտեղ յոթ շաբաթ դիմադրել են, ընդ որում՝ թուրքական գրոհներից մեկը 26 ժամ է տևել: Զարմանալի է, որ նրանցից միայն 600-ն էր առողջ տղամարդ և նրանց սոսկ քառորդ մասն է հրացան ունեցել: Մնացածների ձեռքին որսորդական հրացան էր...»:

Մուսա լեռան 53-օրյա հերոսամարտին անդրադարձավ ոչ միայն «Times»-ը, այլ բազմաթիվ ուրիշ թերթեր ու տեղեկատվության միջոցներ. «...Հուլիսին թուրքերը հետապնդեցին 5000 հայի, որոնցից 3000-ը ծերեր, կանայք ու երեխաներ էին: Ապաստանելով Ջեբել Մուսայի սարերում, հայերն աննկարագրելի քաջությամբ պաշտպանվեցին թուրքերի հարձակումներից»[3]:

Մուսա լեռան հերոսամարտի, ինչպես նաև Ուրֆայի ու Զեյթունի ինքնապաշտպանական կռիվներն ունեցան և այսօր էլ ունեն իրենց բնույթը նենգափոխողներ: Կեղծարարների առաջին շարքերում, իհարկե, երիտթուրք պարագլուխներն էին: «1915-ի կէսերուն Զէյթունի եւ Ուրֆայի մէջ ծագած խռովութիւնը,- գրում է Ջեմալ փաշան,- հայոց կատարեալ զինեալ յեղափոխութիւնէն ուրիշ բան չէր: Մուսա լերան կողմերն ալ ծագած ապստամբութիւնն այս յեղափոխութեան շարքէն էր»: Այս գործիչը պնդում է, որ սկսած Ալեքսանդրետի ծոցի շրջանից մինչև Դեորթ-Յոլ, Մուսա լեռ, Հալեպ, Այնթապ, Ուրֆա և Զեյթուն ներքաշված էր հայկական ապստամբությունների բոցերի մեջ, նպատակ ունենալով Սիրիան բաժանել Անատոլիայից[4]:

Եոյակ զինակցությանը Թուրքիայի միանալը,- պատմում է Հ. Բարբին,- Անտիոքի ծովածոցի հայերի համար նշանակեց ամեն կարգի նոր ապօրինի տուրքեր, որին հետևեցին բոլոր վեց գյուղերում փակցված պաշտոնական ծանուցումները, որով ազդարարվում էր 8 օրից Միջագետք տարագրվելու մասին: Դա նշանակում էր քայքայում կամ մահ: Առանց հաղթանակի որևէ հույսի, հայերը որոշեցին դիմադրել: Իսկ հարթավայրում այդ անելն անհնար էր և

---

[1] ***Թեմիրեան Ա.,*** *Քեսապ. 1906-1946, Պէյրութ, 1956, էջ 80:*

[2] *Նույն տեղում, էջ 79:*

[3] *«El Siglo», 23-ը սեպտեմբերի 1915 թ.:*

[4] ***Մելանզատէ Ռ.,*** *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհադի հայաջինջ ծրագիրները, Ե., 1990, էջ 133:*

նրանք ընտանիքներով, սննդամթերքով և անասուններով բարձրացան լեռ՝ Ջեբել Մուսա: 5000 տղամարդ, կին, երեխա, որոնք ունեին 120 հրացան և չուրջ 350 կայծքարե հրացան և ատրճանակ:

Լեռան վրա սկսվեց պաշտպանական ամրությունների ստեղծումը: Այդ աշխատանքը տևեց 8 օր... Սկսվեց հարձակումը՝ հեշտ հաղթանակի համոզմունքով: Սակայն թուրքերի հարձակումը հետ չպրտվեց: Իշխանությունները զենքի կոչեցին մերձակա գյուղերի մահմեդականներին: Հայերի դեմ կանգնեցին 3000 զինվոր և 4000 կամավոր: Նրանք հայերին շրջափակեցին: Հայերը պաշտպանվում էին խելահեղ, բայց թուրքերը դանդաղ առաջ էին շարժվում: Նրանց բաժանում էր մի ձոր: Հայերը գնացին խելագար քայլի՝ գիշերը շրջապատել թուրքերի դիրքերը և նրանց խուճապի մատնելը՝ կրակի տակ առնելով բոլոր կողմերից: Տեղանքի քաջատեղյակությունը հնարավորություն տվեց հաջողությամբ լուծելու խնդիրը: Մթության մեջ նրանք սողացին դեպի թուրքերի դիրքերն ու հարձակման անցան: Թուրքերը խուճապահար փախան, ռազմի դաշտում թողնելով 200 սպանված և մեծ թվով զենք ու զինամթերք: Իշխանությունները հավաքեցին 15000 մարդուց կազմված մի հորդա և ցամաքից շրջապատեցին Մուսա լեռը՝ նպատակ ունենալով սովի մատնել հայերին: Մուսալեռցիների մոտ մնացել էր 12 օրվա պաշար: Նրանք սկսեցին փրկության միջոցներ փնտրել: Երեք լավ լողորդներ ծովում հերթապահում էին՝ նավերից օգնություն հայցելու համար:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՆԱՏՈԼԻԱ

Ըստ պատրիարքարանի տվյալների՝ 1912 թ. Արևմտյան Հայաստանից ու Կիլիկիայից դուրս բնակվում էր 675.000 հայ, որից 145.000-ը՝ Կենտրոնական Անատոլիայի վիլայեթներում:

Այդ 675.000 հայությունը կազմում էր արևմտահայերի մոտ 1/4-ը և նրանց ոչնչացումը Մեծ եղեռնի կարևոր բաղադրիչն է:

Անդրադառնանք Անատոլիայի հայության ողբերգությանը: Ուշադրության արժանի վկայություն ունի երիտթուրքերի Բալուի պատասխանատու քարտուղար Միդհատը: Նա հայտնել է, թե Անկարայի վիլայեթից աքսորվել է 61.000 հայ և այդ տեղահանությունը չատ կարևոր էր «տեղի մահմեդականների թիվը կայունացնելու» համար[1]:

Վիլայեթն ուներ չորս սանջակ՝ Անկարա, Քըրշեհիր, Յոզղաթ և Կեսարիա: Հայերը մեծ թիվ էին կազմում Անկարա քաղաքում, Սիվրիհիսարի կազայում և Սթանոզում:

Ակ Դաղ Մատենում, Սունկուրլուում և Զորումում հայերի թիվը 10 հազար էր:

Անկարայի նահանգում չնայած հայերի տեսակարար կշիռը չատ մեծ չէր, բայց այստեղ նույնպես նրանց ոչնչացրեցին տեղի թուրք ժողովրդի օգնությամբ:

Անկարայի և Քըրշեհիրի սանջակներում բնակվում էր 25 հազար հայ, որոնք ունեին 20 եկեղեցի, 7 դպրոց, 1290 աշակերտ, 29 ուսուցիչ: Այսպիսով, Անկարայի նահանգում կար 110.000 հայ, 93 եկեղեցի, 69 հայկական դպրոց, 7779 աշակերտ, 197 ուսուցիչ: ՆԳ նախարարությանը վալու ուղարկած տեղեկագրում տեղահանված հայերի թիվը նշված է 94941, որի մեջ չէր մտնում բանակում եղած և բանտարկված հայ տղամարդկանց թիվը, քանի որ ոստիկանությունը տարագրվողներին արձանագրում էր տեղահանությունից մի քանի օր առաջ:

Համաձայն Բարձր Դռան տվյալների՝ Անկարայի վիլայեթից տարագրվել են Անկարայի կազա՝ 3176, Նալլու խան՝ 1015, Մըխաջիկ՝ 90, Սիվրիհիսար՝ 4101, Բալիա՝ 11: Անկարայի սանջակ՝ 8393: Յոզղաթի սանջակ՝ 31247, որից կազաներում՝ Յոզղաթի՝ 13259, Ակ Դաղի՝ 3208. Բողազլյանի՝ 4680:

Քըրշեհիրի սանջակ՝ 3500, որից կազաներում՝ Կեսկինի՝ 1838, Մեջիդիեի՝ 52, Քըրշեհիրի՝ 1510: Կեսարիայի սանջակ՝ 3166, որից կազաներում՝ Զորումի՝ 1202, Օսմանլիկի՝ 66, Սունկուրլուի՝ 1856, Իսկելեի՝ 42:

---

[1] *Տե՛ս Ռազմական դատարանի № 8 արձանագրության № 2 փաստաթուղթը:*

Թուրք պատմաբան Է. Ուրասը գրում է, թե 1914 թ. Անկարայամ բնակվում էր 44507 լուսավորչական, 7069 կաթոլիկ, 2381 բողոքական, ընդամենը՝ 53957, իսկ ամբողջ նահանգում՝ 106149 հայ[1]:

Անկարա քաղաքում բնակվում էր 22.000 թուրք, որոնք մինչև 20-րդ դարը «սիրով էին վարվում մյուս ժողովուրդների հետ», ինչպես նաև 2000 թրքախոս հույն հարուստներ, 9500 հայ կաթոլիկներ և 700 առաքելական եկեղեցուն պատկանողներ: Կաթոլիկ հայերը մոլեռանդ էին, հարուստ, ունեին մի քանի դպրոցներ, եկեղեցիներ, առանձին մեծ թաղ: Դրա փոխարեն լուսավորչական հայերը աղքատ էին, «տգետ ու անմիաբան», բայց ունեին վեց եկեղեցի ու մեկ վանք: Քաղաքի հայերի մեծ մասը թրքախոս էր:

Այստեղ նույնպես հայերի բռնագաղթը դաժան բնույթ կրեց, տարագրվածների ճնշող մեծամասնությունը ոչնչացվեց վիլայեթի սահմաններում:

Նախապես որոշվում էին կարավանների երթուղին, դրանց վրա հարձակում գործելու կետերը, ամայի ձորերն ու կիրճերը ընտրվում էին իբրև սպանդանոց: Յոզղաթի սանջակում 40 հազար հայ կոտորվեց Յոզղաթ-Բողազլյան ճանապարհից արևմուտք՝ Կարաբյրտի ձորում, Քելլեր, Աբբասի ջրաղաց, Սըրչալը Թեքքե, Ջավլախ, Յոզան Հիսար, Յարաշ-Դերե, Կուրթ-Դերե, Արփա-Դերե վայրերում:

Անկարայի նահանգում ևս թուրքերը «ապստամբություն» հայտնաբերեցին: Հայտարարեցին, թե «Ռումտիկին, Յուրենջ, Մենթեղե և Իդելի հայ գյուղերում զենք ու ռումբ է հայտնաբերվել»:

Ա. Թոյնբին «Կապույտ գրքի» 23-րդ էջում 1916 թ. թուրքերի հրատարակած հանրահայտ գրքույկի մասին գրեց. «Երիտթուրքերի կառավարությունը հրատարակեց չքմեղանքի մի գիրք, որը կոչված էր ավելի մեծ ատելություն սերմանելու հայերի հանդեպ: Հայերի անջատողական շարժման մասին գրվածներն որքան ծիծաղելի, այնքան էլ ոճրային են»:

Անգլիական 97 թվանշանը կրող վավերագրում Բեյնամի շրջանի սպանությունների մասին գրված է. «Կապկպված վիճակում բերված բանտարկյալները հարձակման ենթարկվեցին Թուրք գյուղացիների վայրենի հորդայի կողմից: Հրամանով՝ բոլորը կոտորվեցին մահակներով, մուրճերով, կացիններով, մանգաղներով, բահերով և սղոցներով, մի խոսքով՝ գործիքներով, որոնք դանդաղեցնում էին մահը՝ դա ավելի տանջալից դարձնելու համար: Թուրք չնագայլերը կտրել էին շատերի գլուխը, ականջները, քիթը, ձեռքերը: Այդ խմբի մեջ կային բանաստեղծներ, պրոֆեսորներ, հրապարակախոսներ, քաղաքական գործիչներ... Դիակների մի մասը մնաց ձորում և գազանները հոչոտեցին դրանք»[2]:

Անկարայի վիլայեթի հայերին հասցրած նյութական վնասը կազմեց 200 միլիոն դոլար: Որ Անկարայի վիլայեթի պաշտոնեությունը հայերի տարագրության ու բնաջնջման մասին գիտեր դրանց սկսվելուց շատ օրեր առաջ, վկայում են նաև Զանգըրիի մութեսարիֆ Աթըֆի հետևյալ խոսքերն ասված Քելեկյանին. «Հայերու հանդէպ կառավարութեան քաղաքականութիւնը աղէկ

---

[1] **Uras E.,** *Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi. Ankara, 1950, s. 143-144.*

[2] **Ղազարեան Հ.,** *նշվ. աշխ., էջ 152:*

չեմ տեսներ: Դարձեալ բաներ մը պիտի պատահին... Նոր փոթորիկներու նշաններ կը տեսնեմ»[1]:

Անատոլիան դարձավ կախաղանների հրապարակ, միայն Կեսարիայում 62 հայ գործչի կախաղան հանեցին, Սեբաստիայում՝ 20-ից ավելի և այլն՝ հիմնականում դատական ֆարսերի ու չեղած մեղքերի վերագրման միջոցով:

Այաչը Անկարայից 21 մղոն արևմուտք է, ընկած Այաչ Բեյ կոչված ձորում: Ապրիլի 27-ին այս ավան բերեցին 150 հայ մտավորականների և փակեցին մի չենքում՝ Սարը Կըչլա վայրում: Այաչից Անկարա ճանապարհին Սթանող հայաբնակ գյուղն է, որի բնակիչները դաժան ճակատագրի արժանացան: Գյուղի տղամարդկանց կապված ձեռքերով տարան Անկարայի բանտ և սպանեցին, ապա սպանեցին նաև կանանց ու երեխաներին: Այդ կոտորածը ղեկավարեց Կարա-Կայալար գյուղի մոլլա Կարա Մեհմեդը, իսկ իրականացրեցին տեղի Թուրք գյուղացիները:

Զանգըրըն (Զանկըրը) Կաստամոնուի նահանգում է, երկու գետակների միացման խառնարանում (Գորգան Սու և Աջը Սու): Քաղաքը կառուցված է բյուզանդիական բերդի ավերակների տեղում: Զանգըրըի մերձակայքում կան աղի հանքեր, կլիման առողջության համար վնասաբեր է, ջերմախտը տարածված հիվանդություն էր:

Այաչում բանտարկվածներից 6-ը՝ Ակնունի, Խաժակ, Զարդարյան, Մինասյան, Ճանկուլյան և Տաղավարյան՝ Դիարբեքիր տանելու պատրվակով մայիսի 25-ին Ուրֆայից այն կողմ Սևերեկի ուղղությամբ գտնվող Կարանորունում խողխողվեցին չերքեզ Ահմեդի և Խալիլի չեթեական ջոկատի կողմից: Ուրֆայից 6 կմ հեռու Կարա Քյոփրու գյուղի մոտ որոշ ժամանակ անց հուլիսի 6-ին հոշոտվեցին Գր. Զոհրապը, Վարդգեսը և Ուրֆայի թեմի առաջնորդը:

Այաչում մնացած 56 հոգուն հուլիսի 12-ին Անկարայի բանտ տեղափոխեցին: Նրանցից 38-ի ձեռքերը կապած տարան 27 մղոն հարավ՝ Բեյնամ գյուղի կողքին գտնվող Կույրուղջի Դաղի ձորը և հուլիսի 22-ին սպանեցին: Սպանությանը ներկա էին Աթըֆը, նահանգի ոստիկանապետն ու ժանդարմերիայի հրամանատարը: Սպանեցին խոշտանգելով, անդամահատելով, աչքերը փորելով: Երկրորդ խմբին՝ 18 հոգի, նույնպես կապկպված տարան 12 մղոն հյուսիս Քափաքլը-Դերե վայրն ու մեռցրեցին:

Զանգըրիի բանտարկյալներից 44-ը խոշտանգվեցին, բայց կենդանի մնացին: Հինգ հոգին, այդ թվում Դ. Վարուժանն ու Ռ. Սևակը օգոստոսի 12-ին սպանվեցին Կալեջիկ ավանի մերձակայքի Տյունեյի ձորում: Մնացածները, ձեռները կապած 26 հոգանոց խմբերով, տարան և սպանեցին Բեյնամի Ալադայի ստորոտում, Գյոլբաշի և Գայաչ վայրերում՝ Անկարայից 10 մղոն հեռավորության վրա: Տ. Քելեկյանին տարան Սեբաստիայի ուղղությամբ և սպանեցին Ենիխանի մոտերքում: 18 հոգու Զանգըրիի հայերի հետ տարագրեցին դեպի Դեր Զոր: Նրանց մեծ մասը ճանապարհին մահացավ կամ սպանվեց աքսորավայրում: Այս խմբում էր նաև Գ. Պալաքյանը, ում հիշողությունների գիրքը՝

---

[1] **Պալաքեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 164:*

«Հայ գողգոթան», Մեծ եղեռնի մասին եղած լավագույն գործերից մեկն է:

Ստանալով հայերին տեղահանելու վերաբերյալ հրամանը, Անկարայի վալի Մազհարը հրավիրում է թուրք երևելիներին ու հարցնում, թե արդյոք Անկարայի հայերը վստահություն չե՞ն ներշնչում: Պատասխանը բացասական եղավ: Մազհարը նրանց ստորագրությամբ մի նամակ է ուղարկում Թալեաթին: Ստանալով այդ հանրագիրը, դահիճը կատաղում է և սկսում վարկաբեկիչ լուրեր տարածել, թե Մազհարը պետական գործերը ենթարկել է իր առևտրական շահերին: Նա տեղահանության վերաբերյալ մի նոր հրամանով Անկարա է ուղարկում Իթթիհադի պատասխանատու գործիչներից մեկին՝ Աթրֆին: Մազհարը վերջինիս պատասխանում է. «Ո՛չ, Աթրֆ բե՛յ, ես կառավարիչ եմ և ոչ թե չարագործ մարդասպան»[1]:

Պատմում է Մազհարը. «ՆԳ նախարարությունից ստացած հրամանները չհասկանալ ձևացրեցի... ուրիշ նահանգներում տեղահանության գործողություններն ավարտվել էին, մինչդեռ ես դեռ չէի սկսել գործադրել:

Աթրֆը վրա հասավ, հաղորդեց հայերի տեղահանության, կոտորածի ու բնաջնջման վերաբերյալ ՆԳ նախարարության բանավոր հրամանը»:

Ականատեսներից մեկը վկայում է, թե երբ Մազհարը Թալեաթի հրամանը կարդաց, բղավեց «Մ, ներեցե՛ք, ես ինչպե՞ս կարող եմ անմեղ մարդկանց կոտորելու հրաման արձակել. էշրաֆը չի ընդունի, ներեցե՛ք»: Սալոնիկցի Աթրֆը գրպանից մի թուղթ է դուրս քաշում ու բղավում. «Այդ դեպքում՝ կուսակալը ե՛ս եմ, որտե՞ղ է Գուլայ գյուղի հոջա Գարա-Մեհմեդը...»:

Էնկյուրիի 1200 և Սթանոզ գյուղի 350 հայերը միասին ոչնչացվեցին[2]:

Ռազմական դատարանում Ռատին ցուցմունք տվեց, որը առանձնակի տեղ գրավեց մեղադրական եզրակացության մեջ: Նա ասաց. «Մի օր Մազհար բեյը ասաց Աթրֆին. «Չեմ կարող անել ինչ ինձ ասացիր, ես աթոռս կթողնեմ, դու ե՛կ տեղս նստիր և անձամբ արա՛ այն, ինչ ինձ ասացիր»[3]:

Ստեղծված մթնոլորտից զզված Մազհարը թողեց իր պաշտոնը: Նրա փոխարեն, իրոք, նշանակվեց Աթրֆը: Նա ծառայել էր անվտանգության մարմիններում, եղել «Թեշքիլաթի» ղեկավար կազմում: Նրան անվանում էին Թալեաթի «ընդհատակյա անձնական քարտուղար»: Նա էր դահիճը նաև Կաստամոնուի հայության:

Ոչ միայն Մազհարի պաշտոնանկության, այլև նահանգի հայության կոտորածների իրականացման գործում մեծ դեր խաղաց նաև երիտթուրքական կուսակցության Անկարայի պատասխանատու քարտուղար Նեջատին: 1915 թ. հուլիսի 20-ին նա գնաց Յոզղաթ ու կոտորածի հրամանն անձամբ հանձնեց տեղի մութեսարիֆ Ջեմալին և զինվորական հրամանատար Սալիմին: Վերջիններս համաձայնեցին տեղահանել հայերին, բայց ոչ կոտորել: Այդ պատճառով նա աշխատանքից հանել տվեց թե՛ մեկին և թե՛ մյուսին: Պաշտոնատարներից

---

[1] **Գրիկեր,** Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 390-391:

[2] **Թեհլիրեան Ս.,** նշվ. աշխ., էջ 316-317:

[3] **Գրիկեր,** նշվ. աշխ., էջ 387:

Էդիպը 1919 թ. փետրվարի 10-ին ցուցմունք տվեց. «...Մենք լսեցինք հայերի աքսորի ու տեղահանության հրամանի մասին, և այդ հրամանի գործադրման համար Յոզղաթ էր եկել Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Նեջատի բեյը... Ջեմալ բեյն ինձ ասաց, թե Նեջատին իրեն հայտնել է, թե որոշում է ընդունված բնաջնջելու Յոզղաթի հայերին; Նա պատասխանել էր. «Կառավարությունը հանձնարարել էր հայերին աքսորել նախապես որոշված վայրերը և ինքը նրան հիշեցրել է, թե չի ցանկացել կառավարության հրամանին հակառակ գործել: Բայց բացարձակապես դեմ է հայերի բնաջնջմանը»: Դրան Նեջատին պատասխանել է. «Թեև (կառավարության) հրամանն արտաքուստ նշանակում է հայերին արտաքսել, սակայն Միություն և առաջադիմություն կոմիտեի ու ՆԳ նախարարության նպատակը հայերին բնաջնջելն է՝ հայրենիքին ծառայություն մատուցելու նպատակով»[1]:

Անկարայի նահանգում հայերի բռնագաղթի ու բնաջնջման նույն սխեման էր գործում, ինչ ամբողջ կայսրությունում: Այստեղ ևս աշխատում էր քրեական հանցագործներին բանտերից արձակելու հանձնաժողով, որի մեջ մտնում էին վարչական միավորների առողջապահական տնօրենը, զինվորական մասի պատասխանատուն, ժանդարմերիայի հրամանատարը, վերաքննիչ ատյանի դատավորը: Վիլայեթի հանձնաժողովը 1915 թ. մարտի 3-ին Անկարայի կենտրոնական բանտից ազատ արձակեց 249 ոճրագործի:

Կ. Պոլսում Բուլղարիայի դեսպանատանը պահված մի փաստաթղթում նշվում է. «Երեք օրից ի վեր հայ բնակչությունը դուրս է քշվել Անկարայից կիզիչ արևի տակ, դատապարտված քաղցի ու ծարավի և ուղարկվել հայտնի չէ թե ուր: Կարգադրված է առաջին իսկ օրը ճանապարհին կոտորել աքսորականներին»[2]: Բուլղար գործիչ Ի. Համամջիևը Բուլղարիայի արտաքին գործերի նախարարին գրում է. «Անկարայից վտարված 750 հայ ընտանիքներ ճանապարհին կոտորվել և սպանվել են բաշիբոզուկ չեթեների կողմից»[3]:

Երբ երիտթուրքական կառավարությունը տապալվեց, հասարակության պահանջով սուլթանը 1918 թ. դեկտեմբերին հրովարտակ հրապարակեց պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու և հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուներին դատելու համար ռազմական ատյան կազմակերպելու մասին: Ատյանի համար փաստաթղթեր հավաքելու ու դրանց վավերականությունը ստուգելու նպատակով ստեղծվեց հետաքննիչ հանձնաժողով՝ Մազհարի գլխավորությամբ:

Մազհարն ամենայն բարեխղճությամբ կատարեց իր վրա դրված պարտականությունը: Նա կարողացավ հայերի ցեղասպանության վերաբերյալ մեծ քանակությամբ վավերագրեր ու վկայություններ հավաքել, որոնց հեղինակները հիմնականում թուրք քաղաքական և ռազմական գործիչներն ու պաշտոնատարներն էին: Բոլոր փաստաթղթերը փորձաքննության ենթարկվեցին և

---

[1] «Յուսաբեր», 1965, Բացառիկ, էջ 21:

[2] Геноцидът над арменците ... ф. 321, оп. 1, д. 2462, с. 26.

[3] Նույն տեղում:

դրանց վավերականությունը հաստատելուց հետո հանձնվեցին ատյանին:

Մազհարի հավաքած վավերագրերն ու վկայությունները վճռական դեր խաղացին, որ դատարանը երիտթուրքերի կուսակցությանն ու կառավարությանը հայերի բնաջնջման կազմակերպիչներ ճանաչեց:

Ի հակադրություն Մազհարի, Աթրֆը զազրելի հայատյաց էր և իր հետ Պոլսից բերեց իր նման մարդատյաց Բեհաէդդինին և ոստիկանության տնօրեն նշանակեց: Տեղ հասնելուց անմիջապես հետո նա հրաման արձակեց, որ ողջ ազգաբնակչությունը պետք է զենքերը հանձնի: Մահմեդականների հանձնած զենքերը թաքուն հետ տվեցին: Աթրֆը հրավիրում է գաղտնի ժողով, որին մասնակցում էին Իթթիհադի տեղական կոմիտեի անդամները և պատասխանատու պաշտոնատարները: Որոշվեց կոտորել վիլայեթի բոլոր հայերին, չխնայելով անգամ ծերերին ու մանուկներին:

Ռատինի նշված ցուցմունքում բերվում է հետևյալ փաստը: «Երբ Շնորհոքյան ազգանունով մի հայի համար Աթրֆին խնդրեցի, նա պատասխանեց. «Վերադասից հրաման ունեմ: Նա (Շնորհոքյանը) ևս պետք է մեկնի: Հայերը չպետք է ապրեն»: Հաջորդ օրը Շնորհոքյան էֆենդին աքսորվեց և սպանվեց բազմաթիվ ուրիշ հայերի հետ: (Դրանից) մեկ օր առաջ նա (Աթրֆը) տեսակցեց ոստիկանության տնօրեն Բեհաէդդին բեյի հետ, որը շրջապատված էր չար, վատահամբավ և կասկածելի անձանցով և նրանց հրահանգներ էր տալիս հաջորդ օրը կոտորվելիք խմբի վերաբերյալ»[1]:

Վատիկանի նվիրակ Հ. Հոֆերը տեղեկագրում է, որ Անկարայում «10 տարեկանից բարձր արական սեռի հայ ամբողջ բնակչությունը բնաջնջվել՝ կոտորվել է... Անկարայի ճանապարհին մի լքված եկեղեցում փակված էին 150-200 տեղահանված հայեր, այդ թվում՝ մի կաթոլիկ քահանա և երկու քույրեր: Ստիպված լինելով իրենց բնական պետքերը նույն տեղում հոգալու, նրանք ապականված սրահում պառկել էին իրար վրա, գետնին, հողի վրա»: Այնտեղ էին նաև խոլերայից մահացած կանանց երկու դիակ, պահակներն արգելում էին նրանց թաղել[2]: Նախ ձերբակալեցին Անկարայի երևելիներին:

Հուլիսի 29-ին սկսվեց զանգվածային ձերբակալությունը:

Առաջին կարավանը կազմված էր հայ երևելիներից,- պատմում է ականատես Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանը,- և այդ տեղահանությունը հանձնարարվեց օսմանյան խորհրդարանի անդամ Թաբիբի որդուն՝ Շեմսէդդինին: Արգելվեց փոխադրական միջոց օգտագործել և հարկադրեցին գնալու հետիոտն: Տարագիրների թևերին ինչ-որ նշան դրեցին, նրանց իրար կապեցին: Կարավանի հետևից կառքերով տանում էին սպանության գործիքները՝ կացին, սակր, թի, մեծ դանակներ: Կարավանին ուղեկցում էին նաև կիր տեղափոխող կառքեր:

Կարավանի շարժվելը հնարավորին չափ թաքուն պահելու համար քաղաքի Թաշխանեի մերձակայքում զինվորական նվագախումբն էր աղմկում: Երբ

---

[1] **Գրիկեր,** նշվ. աշխ., էջ 388-389:

[2] Kres von Kressenstein F. Frhr. Mit den Turken zum Suezkanal. Berlin, 1938, s. 135.

հասնում են Բկնում գյուղի մոտակայքի Կյուրուկչը օղլի անտառը, կարավանի դեմ են դուրս գալիս չեթեները: Սպանդն սկսելուց առաջ տեղահանվածներից փաստաբան Ստեփանը խնդրում է թույլ տալ օգտվելու վերջին խոսքի իրավունքից ու ասում է. «Այլևս գաղտնիք չէ, որ մեզ այստեղ բերել եք սպանելու: Հարցնում եմ՝ գիտե՞ք, թե մեզ ինչու եք սպանում: Իմացած եղեք, մեզ սպանելու հրամանը տվել են բարձրաստիճան պաշտոնատարները և Իթթիհադի կոմիտեն, որոնք անձնական շահի համար արատավորում են ձեր պատմությունը... Մեզ սպանելու հրաման տվողները և սպանողները անմեղ արյան համար արժանավոր պատիժ են կրելու»[1]:

Չեթեները չորս կողմից կացիններով ու դանակներով հարձակվեցին կարավանի վրա, «ոմանց թևերը, ոմանց ոտքերը, ոմանց վզերը» կտրեցին, նահատակների գլուխները քարերով ջնջխեցին: Ապա մեռածներին և հոգեվարքի մեջ գտնվողներին նետեցին նախապես պատրաստված հորերը և ծածկեցին կրով: Շատերին ողջ-ողջ թաղեցին:

Երկրորդ կարավանը բաղկացած էր 320 հոգուց: Սրանց ոչնչացրեցին քաղաքից վեց ժամ հեռավորության վրա գտնվող Քայաչա այգում: Սպանվածների դիակները 15 օր անթաղ մնացին, չինարարության վրա աշխատող հայ զինվորներին հրամայեցին նրանց թաղել: «Հայ նահատակներուն զգեստները, կօշիկներն ու զանազան առարկաներն... չեթէները հագուելով քաղաք կու գան, եւ ամենուրեք յուրաքանչյուրը կը պարծի թէ քանի՞ հայ սպանած է...»[2]:

Անկարան հարյուր տարուց ի վեր հայ կաթոլիկության կենտրոն էր, նահանգում բնակվում էր 15.000 հոմեադավան հայ, որոնք «հեռու մնացած ըլլալով ազգայնական ամեն ոգիէ եւ շարժումէ, միշտ ազատ մնացած էին»[3]: Շուրջ 2000 հայ կաթոլիկ ընտանիքներ էին բնակվում վիլայեթում:

Անկարայի ու շրջակայքի ավելի քան 1000 տուն հայերի հաշիվը մաքրելուց հետո և մինչև նահանգի հայերի հաշվեհարդարը սկսելը, Աթրֆը ցանկանում էր կոտորել նաև կաթոլիկ հայերին՝ նրանց հարստություններին տիրանալու դիտավորությամբ: Բեհաէդդինը գնում է Պոլիս՝ այս հարցը համաձայնեցնելու համար: Չնայած Թալեաթը Ավստրո-Հունգարիայի դեսպանի համառ պահանջով խոստացել էր Անկարայի կաթոլիկներին «ձեռք չտալ», սակայն Բեհաէդդինի հետ համաձայնվեց և թույլատրեց ընաջնջելու նաև կաթոլիկներին: Բեհաէդդինը Թալեաթի թույլտվությունը ձեռքին՝ օգոստոսի 13-ին հասավ Անկարա: Հաջորդ օրը կաթոլիկ համայնքի ղեկավարները ձերբակալվեցին: Գիշերը նրանց ձեռքերը կապած տարան Կարակետիկ գյուղը, հարկադրելով, որ սպանության գործիքների կառքը իրենք քաշեն: Գյուղում նրանց անմիջապես շրջապատում է թուրք խուժանը: Սակայն այդ պահին հրաման է հասնում՝ կաթոլիկներին չսպանել: Կարավանի հրամանատարը ճառեց. «Ոչ ոք կրնայ մեզմէ պահանջել զձեզ, զի համրանքով չտուին, որ համրանքով ուզեն...

---

[1] **Պալաքեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 118:*

[2] *Նույն տեղում, էջ 119:*

[3] *Նույն տեղում:*

Սակայն դուք հայերուն պէս չպիտի սպանուիք: Աներկիւղ եղէ՛ք ձեր կեանքի համար եւ ազգին ու պետութեանը աղօթք ըրէ՛ք...»[1]: Կաթոլիկ հայերին չսպանեցին, բայց ուղարկեցին Դեր Զոր: Մի չաբաթ անց կաթոլիկների երկրորդ կարավանը (200 մարդ) նույնպես ուղարկվեց Դեր Զոր: Օգոստոսի 14-ին կաթոլիկների ընտանիքների անդամներին հրամայեցին գնալ երկաթուղային կայարան: Անկարայի երիտթուրքական կոմիտեի անդամները մայրերից պահանջում են աղջիկներին, կամ մահմեդականություն ընդունել: Սակայն հազարավորներից միայն 14-15-ը դրական պատասխան տվեց, մյուսները մահը գերադասեցին:

Կայարանում հավաքված հայերի 9/10-ը կանայք ու երեխաներ էին. նրանց հարկադրեցին երկու չաբաթ մնալ մթերանոցներում, որից հետո մի մասին ուղարկեցին Կոնիա, մի մասին՝ Էսքիշեհիր, իսկ մյուսներին՝ Էրէյլի: Նրանք լրիվ կողոպտված, թշվառ վիճակում էին:

Այդ ընթացքում չքահանդեսներ էին տեղի ունենում նվիրված չսպանված հայերի մահմեդականացմանը՝ թլպատմանը:

Գայալ գյուղի հոջա Մեհմեդը պարծանքով հայտարարում էր, թէ Ստանոզ գյուղի 350 հայի ոչնչացրել է:

Հայերին սպանելուց հետո սկսում են տիրանալ նրանց ունեցվածքին: Մտնում էին հայերի տներն ու խանութները և հարստությունները առաջին հերթին կրում պաշտոնատարների ու իթթիհադականների տները, որից հետո միայն ձեռնամուխ էին լինում լքյալ գույքերի օրենքի կատարմանը: Համընդհանուր այս կողոպուտից ձեռնպահ մնացին միայն մի քանի ծեր թուրքեր, ասելով՝ «Լացողի ապրանքը գնողին երջանկություն չի բերի»:

Անկարայից ջարդերը տարածվեցին ամբողջ վիլայեթում: Բոլոր բնակավայրերի նախ հայ տղամարդկանց, ապա կանանց ու երեխաներին իրարու կապած, հետիոտն, կացիններով զինված թուրք խուժանի ուղեկցությամբ հանեցին բնակավայրերից և ոչխարների նման մորթեցին:

Սունկուրլուի կանանց ու երեխաներին, պատմել է 13 տարեկան մի աղջնակ, օգոստոսի 20-ին ավելի քան 70 կառքով քաղաքից հանեցին և տարան մի ձոր: Նրանց հետևում էին զինված թուրքերը: Ոստիկաններն ու այս խուժանը հարձակվում են կանանց ու երեխաների վրա և աննկարագրելի նախճիրներ գործում՝ կացիններով կոտորում էին, կարծես անտառում փայտ էին կտրում: Ապա լրիվ կողոպտեցին կոտորվածներին, նույնիսկ ներքին շորերը տարան: Նրանց մեկնելուց հետո վրա տվեցին բորենիները, գայլերը և ուրիշ գիշատիչներ:

Անկարայի վիլայեթում կատարված նախճիրների լուրերը Եվրոպա հասան և զայրույթ առաջացրեցին: Բեռլինը փորձեց միջամտել՝ մեղադրանքն իր վրայից դեն նետելու համար: Թալեաթին դա վտանգավոր թվաց և նա անձամբ գնաց Անկարա և իր աչքով տեսավ, որ ձորերում ու լեռների փեշերին թափված էր 42 հազար հայի դիակ: Նա կարգադրեց բոլոր դիակները հավաքել և հորել

---

[1] **Պալաքեան Գ.**, նշվ. աշխ., էջ 120:

ընդհանուր գերեզմաններում, այսինքն թաքցնել մարդասպանդի հետքերը:

Հենց այդ էլ պետք էր Վանգենհայմին: Թալեաթից հետո Անկարա գնաց դեսպանատան քննիչը և վերադառնալով զեկուցեց, թե ոճրագործությունների մասին լուրերը կեղծիք են:

«Գնացին Յոզղաթի և Զորումի շրջանները Անկարայի և Յոզղաթի միջև, Յոզղաթ գյուղավանի Շեխլեր գյուղի միջև լեռան կողին տեսան հայերի դիակներ գարշահոտ ու նեխված, նետված գետերի մեջ, արդեն փտած ու կտոր-կտոր եղած»:

Որ Անկարայի նահանգը հայերի ամենավայրագ բնաջնջումների հրապարակ էր, վկայում են նաև Զորումի ոստիկանապետի հետևյալ խոսքերը հայ մտավորականների մի կարավանի մասին. «Սրանց պաշտոնաթուղթը լավ ոճով է գրված, թող չվախենան, թե սպանվելու են. միայն թե թող միշտ արթուն մնան... և թող գոհացնեն ուղեկցող չավուշներին և ճանապարհը ցրված չանցնեն... Եթե Յոզղաթ-Բողազլյան և ապա Կեսարիա երկարող ամենավտանգավոր ճանապարհը անցնեն, այլևս կարող են չվախենալ»:

Անկարայի հայերի կոտորածը կազմակերպեցին Ամրֆ բեյը, ոստիկանության տնօրեն Բեհաէդդինը, Միություն և առաջադիմություն կուսակցության պատասխանատու քարտուղար Նեջատին, Հաջի Բայրամ Վելի չեյխը և Շեմսէդդինը[1]:

«Նրանք, ովքեր ջարդված հայերի թևերը կապեցին հաստ պարաններով՝ Անկարայի երեսփոխան Թայիբի փեսա, խորհրդի անդամ Շեմսէդդին էֆենդիի հետ կատարել էին բանտում ու հավաքել էին հայերի մատանիներն ու ունեցած դրամները մի ժանդարմի ու ոստիկանի ներկայությամբ... Ապա թշվառներից կողոպտեցին ֆեսերը, ոտնամանները և զգեստների մի մասը և գրեթե մերկ վիճակում առավոտ վաղ նրանց բանտից հանեցին և 300 հոգու թևերը իրար կապած ուղարկեցին դեպի սպանդ...»[2]:

Մի թուրք Գ. Պալաքյանին ասել է. «...Զերթաք Էնկիւրի, այնտեղ արիւն կը վազէ... Իմ զաւակս ոստիկան զինուորներու տասնապետն է: Եթէ Էնկիւրիում տղուս տեսածները ու ինծի պատմածները ձեզի ըսեմ, կը խելագարիք պարզապէս»[3]:

Անկարայի նահանգում 1915 թ. օգոստոսին շրջագայած մի օտարերկրացի գրում է, որ սկզբում լուրեր էին ստացվում, թե Սեբաստիայում ձերբակալված հայերը չէին սպանվում:

Հուլիսին սկսվեցին փնտրտուքները հայկական դավադրություն հայտնաբերելու համար, բայց որևէ փաստաթուղթ չգտան: Սկսեցին հայերին ցուցակագրել և օգոստոսի երկրորդ չաբաթում սկսվեց ամբողջական աքսորը: Իշխանությունները հայտարարեցին, թե տեղահանությունը խորհրդարանի որոշմամբ է տեղի ունենում, որ կանանց ու երեխաներին անվտանգ հանձնելու էին

---

[1] Դ. Ե. № Մ 251-Մ 253:

[2] Նույն տեղում:

[3] **Պալաքեան Գ.**, նշվ. աշխ., էջ 196:

իրենց ամուսիններին: Տարագրեցին երեք ճանապարհներով՝ Յոզղաթ-Կեսարիա, Սունգուրլու, իսկ ոմանց էլ տարան հյուսիս: Լուրեր ստացվեցին, որ մի քանի մղոն հեռու բոլորին սպանել են, միայն մի խմբի էր հաջողվել փախչել ու փրկվել: Սպանդից փրկված, բաղում տեղերից վիրավոր և բանականությունը գրեթե կորցրած մեկը չայխանաներում պատմում էր, թե հայերին ինչպես էին սպանել: Մի ալբանացի հպարտանում էր, որ 50 հայի է սպանել: Օգոստոսի առաջին կեսին բոլոր տղամարդիկ արդեն աքսորված էին: Մյուս բնակչությանը միամտացնելու համար նույնիսկ տպավորություն ստեղծեցին, թե նրանց նյութական օգնություն էին ցույց տալիս: Հարցումներին, թե ի՞նչ վիճակում էին իրենց տղամարդիկ, պատասխանում էին՝ կենդանի են և պատերազմի ավարտին վերադառնալու էին տուն[1]:

Ասիական Թուրքիայում ճանապարհորդած մի անգլուհի գրում է, որ հայերին սպանում էին իրենց հարազատների աչքի առաջ, նրանց ողբի ձայնը տարածվում էր ամենուրեք: Աքսորը Անկարայում գիշերներն էր կատարվում: Յոզղաթի ճանապարհին թափված էին դիակներ, իսկ Անկարա քաղաքում մսագործներին և դահիճներին սպանդի գործիքներ տվեցին ու հրամայեցին սպանել հայերին: Յոզղաթի ուղղությամբ տարված կաթոլիկ հայերին սպանելուց առաջ տասը րոպե ժամանակ տվեցին աղոթելու: Ու երբ զինվորները տեսնում են, որ բոլորը ծնկի իջան, այլևս նրանց չեն սպանում և թողնում հեռանում են: Անկարայից տղամարդկանց աքսորելուց հետո կաթոլիկ հայուհիներին մահմեդականացրին[2]:

Մի ականատես հուշագրել է, որ Անկարայում հուլիսի վերջին բոլոր տղամարդիկ ձերբակալվեցին: Նրանց հարկադրեցին հանձնելու իրենց ունեցվածքի 2/3-ը, այդ թվում՝ ամբողջ քաշող ուժը: Ձերբակալվածների թվում էր քաղաքի ողջ մտավորականությունը: 800 հոգանոց կարավանն ուղարկվեց, դրան հետևեց 700 հոգանոց կարավանը: Հրամայված էր նրանց չսպանել, բայց նաև ուտելիք ու ջուր չտալ, և մեռցնել հյուծելով: 500 հոգու տարան Կոնիայի ուղղությամբ:

Աշխատանքային վաշտերում եղողներն այնպիսի տաժանակիր վիճակում էին, որ նրանցից շատերը նույնպես հարկադրված եղան ընդունելու իսլամը: Իսլամացավ 1500 մարդ[3]:

Ամերիկացի դիվանագետ Ջ. Դեուդեսը գրում է Մորգենթաուին. «Անկարայում, որի բնակիչների 4/5-ը հայեր էին, սպանդի վայրեր նրանց տեղափոխող թուրք կառապանները, ռուսահպատակ հայերին պատմել էին, որ քաղաքից դուրս գալուց հետո բոլոր հայերին սպանում էին փայտերով կամ գնդակահար էին անում: Նույնիսկ ամենաուժեղ ներվեր ունեցողներն առանց սարսափի չէին կարողանում դիտել այդ ահավոր տեսարանը: Թուրք երկու կառապաններ, չկարողանալով դիմանալ այդ սարսափելի տեսարաններին, մեռան:

---

[1] Bryce J., նշվ. աշխ., էջ 382-384:
[2] Նույն տեղում, էջ 385-387:
[3] Նույն տեղում, էջ 388:

Անկարայից ոչ հեռու, մինչև սպանելը կտրեցին 500 հոգու քիթն ու ականջները և հանեցին աչքերը[1]:

Հ. Մորգենթաուն նկատել է, որ ժանդարմները «մասնաւոր փափաք մը կը ցուցնէին ոչնչացնելու զարգացածները եւ ազդեցիկները»: Այդ միտքը հաստատելու համար նա բերում է Անկարայի օրինակը, որտեղ «17-70 տարեկան բոլոր հայ այրերը կը ձերբակալուին, չորսական խումբերով իրարու կը կապուին եւ դէպի Կեսարիա ճամբայ կը հանուին»:

Երբ հասնում են որևէ մեկուսի ձորի, «Թիւրք գիւղացիներու խուժան մը անոնց վրայ կը թափի բիրերով, մուրճերով, կացիններով, գերանդիներով, բահերով եւ սղոցներով», որոնք բոլորը «տագնապացուցիչ մահեր կը պատճառէին... Այս կերպով Թիւրքերը բնաջնջեցին Էնկիւրիի ամբողջ արու ժողովուրդը...», որոնց մարմինները թողնվեցին ձորում ու կեր դարձան վայրի գազաններին[2]:

«Այս ջարդարարութիւնը լմնցնելէ ետքը, գիւղացիները եւ ոստիկան-զինուորները կը հաւաքուին տեղին գինետանը, որտեղ բաղդատութեան կը դնեն ըրածնին եւ կը յոխորտան իրենց իւրաքանչիւրին սպանած «կեաւուր»-ներու քանակին վրայ»[3]:

Սուլթանի ծննդյան օրը Անկարայում քրիստոնյա 100 տղաների թլպատեցին: Այստեղ 10 տարեկանից բարձր հայ արու ողջ բնակչությունը փաստորեն ջարդված էր:

Ռատին դատարանում ցուցմունք տվեց Զորումում հայերի ջարդի մասին:

«...Սեբաստիայի նախկին երեսփոխան... Եոզղաթի Շեխլեր գիւղի մէջ լերան կողքին տեսաւ հայերու դիակներ, գարշահոտ ու նեխած, նետուած գետերու մէջ եւ կտոր-կտոր եղած... (մի տանը տեսան մի հայ կնոջ), գլխուն վէրքը դանակի մը հարուածէն խորացած էր: Կինն ըսաւ. «Այրերէն ետք կիներն ալ ճամբայ հանուեցան: Գիւղաւանին մօտ աւազակի կերպարանքով 15-20 այրեր կտրեցին անոնց ճամբան եւ ջարդեցին զանոնք»: Ինքը միայն վերապրած էր, եւ երբ ինքզինք գտաւ, տեսաւ, որ դիակներու մէջտեղ էր... Գիշեր ատեն, կամացուկ մը, քաղաք եկեր է...»[4]:

Իթթիլաֆ կուսակցության կառավարության կազմած ամբաստանագրից.

«Իթթիհատի Պուրսայի պատասխանատու քարտուղար Միթհատ պէյ, երբ Պալուի պատասխանատու քարտուղարն էր, հեռագրած է, թէ Էնկիւրիէն 61 հազար հայեր տարագրուած են, եւ թէ յիշեալ կուսակալութեան խլամ ժողովուրդը կը պաշտէ Իթթիհատը եւ իրմէ բխած կառավարութիւնը իր կատարած գործին (հայերի բնաջնջման) համար, թէ այս պաշտամունքը յաւիտենական պիտի ըլլայ, եւ հետեւաբար, ապահովելու համար Պալուի ապագայ երջանկութիւնը, օգտակար կը գտնէ տեղահան ընել նաև Պալուի հայերը: Ասիկա կը

---

[1] **Vierbuecher H.,** *Armenien 1915. Un People Civilisé Massacré par les Turcs, Montelimar, 1987,* էջ 68-69:

[2] **Մորգենթաու Հ.,** նշվ. աշխ., էջ 259:

[3] Նույն տեղում:

[4] Դ. Ե. № Մ 251-Մ 253:

հաստատուի կառավարիչ Միւֆիտ պէյի կողմէ 11 սեպտեմբեր 1915 թուակիր ներքին գործոց նախարարութեան ուղղուած ծածկագիր հեռագրով: Եւ Պալու պատերազմական գօտի մը չէր, (հայերի) տարագրութիւնը ո՛չ զինուորական կարգադրութեան մը, ո՛չ ալ կարգապահական միջոցի մը անունով կրնար արդարանալ»[1]:

Անկարայի հայությունը բնաջնջվեց, անցավ տարագրության մահասփյուռ ճամփաներով, հալվեց, նվազեց, բայց նաև մնաց աննկուն, պահպանեց իր բզկտված գոյությունը վիլայեթում, հիմնականում՝ քաղաքներում:

Անկարայում աշխատող գերմանացի բուժծառայողներից մեկը 1917 թ. հունիսին գրեց Բեռլին, որ 1916 թ. դեկտեմբերին Անկարա վերադարձավ հայ կաթոլիկների առաջնորդը և հայկական շրջաններում որոշ աշխուժություն սկսվեց, սակայն ներկայումս վիճակը արմատապես փոխվեց (դեպի վատը): Ժանդարմները բռնությամբ հայերին դուրս են քշում եկեղեցական միջոցառումներից, իսկ ներկայումս կրոնական ծեսերն ընդհանրապես արգելված են: Նշաններ կան, որ հայերի աքսոր է նախապատրաստվում: Գուցե դա միայն ահաբեկելու համար է, որպեսզի հայերը իսլամ ընդունեն: Ներկայումս արդեն հայերը հալածվում են կրոնական հիմքի վրա, այլ ոչ թե ռազմական նկատառումներով, որովհետև տեղի հայերը հիմնականում կանայք ու երեխաներ են և Անկարան էլ ռազմաճակատից շատ հեռու է:

Հետևաբար, եթե մենք հնարավորություն չունենք հայերին պաշտպանելու համար, նրանց ոչնչացումը բացառված չէ[2]:

Տեղի հայերի շրջանում լուրջ անհանգստություն է տիրում, փորձերը բռնի մահմեդականացվածներին վերադարձնելու իրենց նախկին կրոնին՝ Բարձր Դռան կատաղի դիմադրությանը հանդիպեցին[3]:

Սունկուրլեցի մի թուրք երիտասարդ սիրահարվում է տարագրվող հայ աղջկա և նրան առաջարկում է մահմեդականություն ընդունել ու ամուսնանալ իր հետ: Աղջիկը պատասխանում է. «Ինքդ դարձիր հայ, որ հետդ ամուսնանամ»: Աղջկան անմիջապես մորթեցին[4]:

***ԿԵՍԱՐԻԱ.** – Անատոլիայի կենտրոնական մասում է, ուներ 15.000 հայ բնակչություն (սանջակի հայ բնակչության թիվը հասնում էր 44.000-ի) և Մեծ Եղեռնի տարիներին առանձնահատուկ իրավիճակի մեջ էր: Հայկական «ապստամբության» մասին երիտթուրքական «ապացույցներից» մեկն էլ Կեսարիայում Ա. Տոնիկյան ազգանունով մի դավաճանի մատնությամբ հայտնաբերված զենքերն էին և Էվերեկի վանքի թաղում փետրվարին պատահականորեն ռումբ պայթելը: Չնայած եկեղեցում կատարված խուզարկությունը բան չհայտնաբերեց, բայց փետրվար ամսին ամերիկահայ Գ. Համբարձումյանի՝ Էվերեկում ռումբ պայթեցնելը բավական էր մեծ աղմուկ բարձրացնելու և զանգվածային ձերբակալություններ կատարելու համար:*

---

[1] **Անտոնեան Ա.**, *Մեծ ոճիրը, Ե., 1990, էջ 239-240:*

[2] *R 14096, Zu Ab. 20283:*

[3] *R 14097, Ab. 23000:*

[4] **Պալաքեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 171-172:*

Կեսարիայում կատարվածը վառ օրինակ է, թե թուրքերն ինչպես էին եղեռնի նախապատրաստությանը զուգահեռ հզորացնում հակահայկական քարոզչությունը: Ամերիկացի միսիոներ Հ. Ռիգսը գրում է, որ իշխանությունները մահմեդականների մեջ համառորեն այն միտքն են արմատավորում, թե հայերը զինվում ու պատրաստվում են ապստամբության: Այդ ապացուցելու գլխավոր փաստարկը բռնագրավված զենքերն էին, և հասարակության մեջ զայրույթ առաջացնելու նպատակին հասնում էին, չնայած զենքերի տեսակն ու քանակը շատ չէին և ոչ կարևոր, դրանք չէին կարող անհանգստացնել անգամ տեղական շերիֆին, զենքերից շատերն էլ ակնհայտորեն իշխանություններն էին ավելացրել: Այս ու նաև ուրիշ պատճառներով թուրք հասարակ ժողովրդի մեջ թշնամանք առաջացավ հայերի հանդեպ, ինչը և հանդիսացավ սարսափելի դաժանությունների նախապատրաստության ոգին[1]:

Երիտթուրքերը Կեսարիայում զենքերի հայտնաբերումը մտցրեցին ամբողջ արևմտահայության հասցեին մեղադրանքների ցուցակի մեջ՝ դարձնելով դրա գլխավոր կետերից մեկը: Այդ ցուցակը «հաստատում էր»՝ աշխարհամարտի հենց սկզբից հայերը կողմնորոշվեցին հօգուտ Անտանտի, նրանք Օսմանյան կայսրության տարածքի մի մասի վրա Հայաստան ստեղծելու գործարքի մեջ էին մտել Ռուսաստանի հետ, ռուսական բանակի կազմում հայ կամավորական գնդեր կազմակերպեցին և կռվեցին թուրքերի դեմ, թուրքական բանակում ծառայող հայ զինվորներն անցան թշնամու կողմը, գյավուրները մեծ քանակությամբ զենք ու զինամթերք էին կուտակել հարմար պահին ապստամբելու: Հնչակյան կուսակցության Կոնստանցայի համագումարը որոշում ընդունեց պայքարելու անկախ Հայաստանի համար և ահաբեկչության ենթարկելու երիտթուրք պարագլուխներին, օսմանյան խորհրդարանի անդամ Կ. Փաստրմաջյանն անցավ ռուսների կողմը և ղեկավար մասնակցություն ուներ կամավորական շարժմանը[2]:

Սակայն Կեսարիան ոչ միայն հայոց ջարդերի պատրվակներից մի քանիսի վայրն էր, այլ թուրքական ապստամբությունները հերքելու կարևոր կենտրոններից մեկը: Ադանայի ոստիկանապետ Կարապետ Ծաղիկյանը զինադադարից հետո (1919 թ.) գաղտնի գզրոցներում գտնում է մի կապոց, որի մեջ կային հայերի բռնագաղթին առնչվող բազմաթիվ ծածկագրեր: Դրանցից մի քանիսը ամենայն որոշակիությամբ ներկայացնում էին երիտթուրքերի հակահայկական քարոզչության սադրիչ դիտավորությունները՝ կատարվածի պատասխանատվությունը հայերի վրա բարդելու համար: Մեծ թվով, ավելի ճիշտ, հարյուրավոր նման ծածկագրեր գտնվեցին, որոնք անառարկելիորեն հաստատում են Նայիմ բեյի հավաքած ծածկագրերի վավերականությունը, մասնավորապես հայերի ունեցվածքին տիրանալուն առնչվող այլևայլ խնդիրներում: Դրանց թվում էին հետևյալ ծածկագրերը. «Վանի և Սրվազի չրջանները հրոսակներ տեսնուած են, մեր զօրքերն անոնց դեմ կռիւ կը մղեն եւ կը ճզմեն զանոնք: Ձեր ուշադրու-

---

[1] «Բնօրրան», 1995 թ., № 1, էջ 11:

[2] Տես Թալեաթի հուշագրությունները:

թիւնը եւ չրջահայեցողութիւնը կը հրաւիրեմ եւ կը յանձնարարեմ՝ հայոց հոգեկան վիճակին մէջ թափանցելով անոնց դավաճանական նախաձեռնութիւններէն ատենին տեղեակ մնալու համար դիմել ամեն տեսակի միջոցներու»[1]:

Այս հեռագրի հիման վրա վալին 1915 թ. ապրիլի 13-ին գրում է վիլայեթի ոստիկանության հրամանատարին. «Զորրորդ զօրաբանակի հրամանատարէն հասած 12 ապրիլ 1915 թ. գրութեան մէկ պատճէնը վերը արտագրուած է. այս մասին խիստ գաղտնաբար եւ չրջահայեցութեամբ պէտք է շարժիլ. կարեւորութեամբ կը յանձնարարուի նման դավաճանական ձեռնարկ մը իմացուելու պարագային, անմիջապէս վճռական եւ ստիպողական միջոցներու դիմել եւ մեզի տեղեկութիւններ հաղորդել»[2]:

Մինչև այս և նման հրաման-հեռագրերը, դեռ 1915 թ. սկզբներին գյուղապետներին փակ տուփեր էին ուղարկվել, որոնք բացվելու էին հետագայում համաձայն ստացվելիք հատուկ ցուցումի:

Որ հայերին աղետ էր սպասվում, քաղաքում կռահում էին դեռ մինչև այս հեռագրերն ու Էվերեկում ռումբի պայթելը: 1915 թ. մարտի սկզբներին Հնչակյան կուսակցության Կեսարիայի կազմակերպության վարչության նիստում Կ. Զիյթեմյանն ասաց. «Ամբողջ հայ ժողովուրդն իր լինել կամ չլինելու օրերը կ'ապրի. Թշնամին հայ անունը պիտի ջնջէ աշխարհին վրայէն՝ վերջ տալու համար Հայաստանի մը գաղափարին»[3]: Ժողովում նույնիսկ առաջարկություն եղավ ապստամբել և որևէ ձերբակալություն թույլ չտալ, զենքի կոչել նաև գյուղացիությանը, քաղաքի մահմեդական թաղերում բնակվող հայերին տեղափոխել հայկական թաղերը, կտրել հեռախոսի և հեռագրի գծերը, կապ հաստատել հայկական մյուս չրջանների հետ և համատեղ գործողությունների պլան մշակել:

Ժողովի որոշման մասին տեղյակ պահվեց Կ. Պոլսի Հնչակյան կենտրոնին: Ստացվում է պատասխան. «Համակերպուիլ ի գին ամեն զոհողութեանց եւ պատճառ չդառնալ հայութեան բնաջնջումին»[4]:

Կեսարիայում հայերի առանձնակի անհանգստությունը հասկանալ կարելի է: Նրանք կղզիացած էին, ոչ մեծաթիվ, չրջապատված թուրքական հոծ զանգվածներով: Այստեղ հայերին զորակոչեցին 1914 թ. հուլիսի 21-ից և զորակոչվածներին զինաթափեցին հոկտեմբերի 19-ից: Հենց Թուրքիան պատերազմի մեջ մտավ, հակահայկական քարոզչությունը սանձարձակ բովանդակություն ձեռք բերեց, հայը բացեիրաց հռչակվեց թշնամի: Դրան հաջորդեցին մասնակի ջարդերը, բանակ զորակոչվածներից որևէ մեկը տուն չվերադարձավ: Նրանք «ամելե թաբուրի» վաչտերում ջարդվեցին:

Էվերեկի դեպքից հետո կառավարիչ նշանակվեց Ս. Զեքին, որը մի քանի ամիս անց գլխավորեց և իրականացրեց Դեր Զորի ջարդերը: Նրան անսահմանափակ իրավունքներ տրվեցին՝ Էվերեկի հայերին հաչվեհարդարի ենթարկե-

---

[1] «Յուչամատեան Մեծ Եղեռնի», էջ 341-342:
[2] Նույն տեղում, էջ 342:
[3] Նույն տեղում, էջ 344:
[4] Նույն տեղում, էջ 348:

լու համար: Ոչ միայն այստեղ, այլև Կեսարիայում խժդժություններ սկսվեցին իրր զենքեր գտնելու համար:

Ապրիլի սկզբներին ձերբակալեցին հայ քաղաքական գործիչներին, կուսակցությունների անդամներին, հարուստներին, առևտրականներին, մտավորականությանը, հոգևորականներին: Ապրիլի 10-ին գիշերապահ թուրքերը ռումբ նետեցին մի հայի տան վրա, ապա ձերբակալեցին այդ տանը բնակող ընտանիքի բոլոր անդամներին: Ծանրաբեռնված էր աշխատում ռազմական դատարանը:

Հունիսի 2-15-ը Քյոմուրբազարի հրապարակում կախաղան հանվեցին քիչ թե շատ հեղինակություն վայելող 54 հայեր: Կախաղանները գործեցին մինչև 1915 թ. ավարտը: Կախաղան հանվածների թվում էր նաև Համբարձում Պոյաճյանը՝ Մեծ Մուրադը:

Մութեսարիֆը հայտարարեց. «Ով ընդունի իսլամական կրոնը՝ կներվի, ով չի ընդունի՝ կուղարկվի...»:

Երիտթուրքերը ակնհայտ սադրանքների ու բանսարկությունների էին դիմում: Զանգըրիի երիտթուրքական պատասխանատու քարտուղար Յունուսը կչտամբում է ոստիկանապետին: «Եթէ հայերու տուներու մէջ զէնք չգտաք, գոնէ չէի՞ք կրնար հետերնիդ մէկ քանի զէնք առնելով, մէկ-երկու հայերու տունը գաղտնապէս ձգել, եւ ապա «ահ, գտանք» ըսելով՝ ըստ այնմ ոստիկանական պաշտօնական տեղեկագիր կազմէիք... Որքան անճարակ էք եղեր եւ անգիտակից օրուան պետական քաղաքականութեան»[1]:

Մուրադը Կոզանից ընտրված երեսփոխան էր օսմանյան խորհրդարանում: Երբ ձերբակալվում ու աքսորվում էր Կ. Պոլսի հայ մտավորականությունը, նրան են ներկայանում չորս ոստիկաններ, որոնք «Թալէաթի բարեւները հաղորդելէ յետոյ, կ'ըսեն, որ Նորին Վսեմութիւնը շատ կարեւոր հարցի մը համար իր խորհուրդին կը կարօտի, հետեւաբար կը փափաքի զինքը տեսնել այս գիշերն իսկ»[2]: Մուրադը հավատում է: Նրան ուղիղ բանտ են տանում, ապա մահապատժի դատապարտում ու ահավոր խոշտանգումների ենթարկում: Նրան, ինչպես նաև հնչակյան մյուս գործիչներին կոտտանքների էին ենթարկում «զենքի պահեստների տեղեր իմանալու համար»: Հնչակյանների տների խուզարկությունների ժամանակ բռնագրավված թղթերում կար նաև Մուրադի անունը: Արյունարբու Զեքին անմիջապես հեռագրում է Կ. Պոլիս, թե հնչակյանները Մուրադի ղեկավարությամբ զինվել են և մտադիր են ապստամբել, հրացաններով ու ռումբերով թիկունքից հարվածել թուրքական բանակին և հարկադրել նրան նահանջել: Միաժամանակ, հայերը դիտավորություն ունեն թուրք բնակչությանը ջարդել: Պոլսում հեռագիրն ստանալուն հետևում է Մուրադի բնակարանի խուզարկությունը: Նրան անմիջապես ուղարկում են Կեսարիա՝ կանգնելու ռազմական դատարանի առաջ: Ճանապարհին Մուրադին այնքան են խոշտանգում, որ նա տեղ է հասնում կիսամեռ:

---

[1] **Պալաքեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 212:*

[2] **Սիրվարդ**, *Մեծ Մուրադ (Հ. Պոյաճյան), Ե., 1991, էջ 52:*

«Հայկական ապստամբության» մասին քարոզչությունով իսլամ մոլեռանդներին հանեցին հայերի դեմ: Նրանք Մուրադին դիմավորեցին սանձարձակ սպառնալիքով: Ռազմական ատյանում արյունարբու Զեքին Մուրադի երեսին չպրտեց. «Քեզ ու ողջ հայությանը սատկացնելու ենք քոսոտ շան նման, եթե զենքերի թաքստոցների տեղերը չհայտնեք»: Մուրադը հանգիստ պատասխանեց. «Եթէ ատոր համար է, որ զիս իմ սիրելի ընկերներէս անջատեցիք եւ հոս բերիք, կը ցաւիմ, որ յուսախաբ պիտի ըլլաք: Ինչ կը վերաբերի իմ ստորագրութեամբ չրջաբերականներուն, ապա, եթէ երկրի կառավարութեան հանդէպ անվստահութեան նշոյլ իսկ գտնուի անոնց մէջ, ինծի հետ վարվեցէք, ինչպէս ցանկանաք, այլ ոչ թէ անմեղ հայութեանը կրակի ու սուրի մատնէք»: Եվ որ ինքը ցուցմունք կտա միայն Թալէաթի ներկայությամբ: Նրան խոչտանգումներով անդամալույծ են անում:

1930 թ. հրապարակվեցին բանտում Մուրադին բուժող Մանվել Մկրյանի հուշագրությունները: Այնտեղ կարդում ենք, որ Մուրադի աղիները դուրս էին թափվել հետույքից, «գաւազանի հարուածներէն ոչ միայն միս ու կաշի մնացած չէին ոտքերուն վրայ, այլեւ ամբողջ ջիղերը եւ ոսկորները իրար խառնուած էին... ձախ աչքի ուղղութեամբ ճակատին մէջտեղէն պատռած էր, որովհետեւ իթթիհատական մութեսարիֆը կօշիկով գլխին զարկած էր... ոտքի մեկ մատը գանգրեն եղած էր»[1]: Նույն օրերին Կեսարիայում կախաղան հանվեցին ևս 12 հնչակյաններ, ինչը ծանր անդրադարձավ Մուրադի վրա:

Մութեսարիֆը Մուրադին առաջարկում է արտահայտել իր վերջին ցանկությունը: «...Ողջ հայութեանը Թուրքիոյ մէջ ապրող ժողովուրդներու բարօրութեան բաղձանքէն զատ ուրիշ բաղձանք չունեցաւ: Արդարութեան եւ ազատութեան համար կռուողները կախաղաններէն չեն վախնար»[2]:

«Կեսարիայում,- գրում է Հ. Բարբին,- աքսորին նախորդեց 80 հայ երևելիների կախաղան հանելը: Նրանց թվում էր թուրքական խորհրդարանի անդամ Հ. Պոյաճյանը»[3]:

Մտավորականության և քաղաքական գործիչներին հաշվեհարդարի ենթարկելուց հետո քաղաքում հայտարարություններ փակցվեցին, թե.

1. Կեսարիայի նահանգի բոլոր հայերը տեղափոխվում են Հալեպ, բացառությամբ կաթոլիկների: 2. Մեկնողների խանութներն իշխանությունները փակելու և կնքելու են: 3. Արգելվում է կահ-կարասիների առևտուրը, դրանք գնողներն ու վաճառողները հանձնվելու են ռազմական դատարանին: 4. Մեկնող հայերն իրենց դրամական միջոցները հանձնում են դրամատուն կամ ուղարկում ուրիշ վայրերում բնակվող իրենց ազգականներին: 5. Բոլոր տեղահանվողներն ունեցած դրամի քանակի, խանութի կամ տան շարժական, ինչպես նաև անշարժ ունեցվածքի վերաբերյալ տվյալներ են ներկայացնում կառավարչատուն: 6. Տան օրից կարավանները մեկնելու են Նիկտեի ճանապարհով: 7. Որոշված

---

[1] **Սիրվարդ,** նշվ. աշխ., էջ 54-55:
[2] Նույն տեղում, էջ 56:
[3] **Բարբի Հ.**, նշվ. աշխ., էջ 52:

վարձով կտրամադրվեն սայլեր և կառապաններ: Ով նշված ժամին չներկայանա, մեկնելու է հետիոտն[1]:

Մահվան դատապարտվածները հիմնականում սպանվեցին Կեսարիայի Կեմերեկի, Շար Ղշլաղի և Ազիզիեի միջև եղած ձորում: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Կեսարիայի սանջակում բնակվում էր 70.000 հայ, որից 19.000-ը՝ քաղաքում, իսկ մյուսները՝ Այսրարգոսյան, Անդրարգոսյան և Կիզիստրորիայի 34 գյուղերում:

Հայերի տեղահանությունը չեթեական երկու գնդերի էր հանձնարարվել: Հունիսի 8-ից մինչև սեպտեմբերի 22-ը 17 կարավաններով 65.000 հոգի տարագրվեց: Կեսարացիների կարավանները մեծ չէին՝ միջին հաշվով մինչև 50 մարդ: Մինչ այդ ոչնչացվել էին 1095 երևելիներ: Կեսարիայից աքսորվեցին նաև կաթոլիկները:

Երբ իշխանություններին դիմեցին, որպեսզի կրծքի երեխաներին թողնեն գթասիրտ իսլամ ընտանիքներում՝ ճանապարհին քաղցից չմեռնելու համար, պատասխանը եղավ. «Զենք ուզում, որ հայի հոտն իսկ մնա այստեղ...»[2]:

Կաթոլիկ միսիոներ Հ. Ռիցը գրում է, որ Կեսարիայից «երկու մղոն շառավիղով տարածքում առնվազն 80 դիակ տեսա», չնայած «իմ անցնելուց առաջ ճանապարհների մեծ մասը նախօրոք մաքրել էին: Այդ դիակները «հապճեպ թաղված տպավորություն էին թողնում՝ հնարավոր է, որ հարազատներն էին ջանացել դրանք մի կերպ ծածկել, բայց հողի այնքան բարակ շերտով էին փակել, որ «անթիվ-անհամար շներն ու անգղները» դիակները հանում էին, «քարշ տալիս, դեպ խրախճանքներ սարքում»: Տեղի ունեցած արհավիրքների ամենաակնառու հետքերի քողարկումը դարձել էր համապետական մտահոգության խնդիր: Այդ հետքերը թաքցնելու համար օգտագործում էին ոչ միայն մահմեդական ազգաբնակչությանը, այլև բանակի ուժերը:

Գյուղացիները պատմել էին, որ «իրենց ստիպել էին հավաքել դիակները, իրար վրա կիտել ու այրել»: Այդպես էր միայն մայրուղիների վրա, իսկ մյուս ճանապարհներին ու տեղանքներում դիակները մնում էին թափված[3]:

Չեթեները տղամարդկանց սպանեցին Ազիզիեի մերձակայքում և Կեմերեկի ու Շարղշլաղի միջև ընկած տարածքում: Հալեպ հասավ ոչ ավելի, քան 8000 հոգի, հիմնականում կանայք ու երեխաներ: Դիարբեքիրի ուղղությամբ տարվածների զգալի մասը ոչնչացվեց: Ուրֆայի շրջանում եղեռնից փրկված 128 կեսարացիներ մտան ֆրանսիական բանակի շարքերը և կռվեցին թուրքերի դեմ:

Ինչ վերաբերում է հայերի թողած ունեցվածքին, ապա մեկնելուց հետո նրանց տները կողոպտեցին, իսկ դրամական միջոցները երբեք չվերադարձվեցին: Բռնագաղթվածների հողերը տրվեցին մահմեդականներին:

Քաղաքում մնացին հայ զինվորականների մի քանի ընտանիքներ, սակայն դրանց տասը տարեկանից բարձր տղաներին նույնպես տարան և ոչնչացրեցին:

---

[1] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 357:*

[2] *Նույն տեղում, էջ 1071:*

[3] ***Դեխս Լ.**, նշվ. աշխ., էջ 55-57:*

Քիչ անց այդ ընտանիքներին ցրեցին մահմեդական գյուղերը և թրքացրեցին:

Բռնագաղթը վայրագ եղանակներով իրականացվեց նաև Կեսարիայի գյուղերում: Ինճեռու գյուղի քահանային խոշտանգումներով հոգեկան հիվանդ դարձրեցին, իսկ երեցկինը զոհ դարձավ խուժանների անասնական կրքերին, նրա ստինքները կտրեցին ու մեռցրին: Այդ գյուղում ևս տասը հոգի սպանվեց, իսկ մյուսները մայիսի 22-ին տեղահանվեցին: Զոմախլու գյուղի բոլոր տղամարդիկ սպանվեցին, 1646 հոգի տարագրվեց, որոնցից ողջ մնաց 325-ը: Հուլիսի 3-ին չրջապատվում է Դերեվանք գյուղը, տղամարդկանց գյուղից հանում են ու սպանում, իսկ մյուսներին տեղահանում ու ոչնչացնում են ճանապարհին:

Էվերեկի և Ֆենեսեի հայությունը տեղահանվում է օգոստոսի 6-ին: Ի դեպ, Թոմարզայի կազայի գյուղերի բնակչության 3/5-ը, իսկ քաղաքի բնակչության 4/5-ը հայ էր: Այստեղ առաջին ջարդը տեղի ունեցավ դեռ փետրվարի 9-ին, երբ 400 հոգի ոչնչացվեց: Գյուղն ամբողջությամբ տեղահանվեց օգոստոսի 25-ին: Այդ գյուղի 10.000 բնակչից վերապրեց 300-400 հոգի: Թալաս գյուղում, երբ դեռ տեղահանված չէր, մեծ թվով իսլամացած կանայք կային, չնայած դրան, այդ կանայք իրենց երեխաների հետ դիմավորում էին տարագրվող հայերի կարավանները, նրանց սննդամթերք հասցնում: Մասնավորապես եռանդուն էին գործում տեղի ամերիկյան քոլեջի աղջիկները:

Այդ գյուղից Սարգիս Խանլեյանը, որին 14 տարեկան հասակում, 1915 թ. մայիսին բռնագաղթել էին անապատ, իր հուշերում գրում է, որ գաղթից մի օր առաջ մունետիկները կանչում էին. «Հայե՛ր, պատրաստվե՛ք գաղթի»: Շփոթված ժողովուրդն ինչ կարող էր հետը տանել, չալակն առած չարժվեց նշանակված վայրը: Այստեղ նույնպես հավաստիացնում էին, որ տարագրությունը ժամանակավոր էր: «Ժանտարմաները... ծեծի տակ կը քչէին»: Նախ հավաքեցին տղամարդկանց, այդ թվում՝ դեռահասներին: Հաջորդ օրը տեղահանեցին մյուսներին, մոտ հազար հոգի:

«Քալել-քալել, ծեծի ու ամեն տեսակի վայրենի միջոցներով, ձիավոր ժանդարմների ցանկութեան համաձայն»: 3-4 օր հարկադրում են քայլել քաղցած, չատ ծերեր գաղթի հենց առաջին օրերին ծեծի տակ ընկան ճանապարհին ու մեռան: Կարավանը մի ամայի վայրում կանգնեցնում են: Նա չրջափակվում է զինված խուժանով: Ժանդարմներն առաջարկեցին հանձնել ոսկեղենը, սպառնալով, թե ով չտա, սոսկալի խոշտանգումների է ենթարկվելու: Միաժամանակ ասացին, թե «բոլորդ ալ պիտի սպանուիք այստեղ եւ ոչ ոք ողջ պիտի մնայ...»: Սկսվեց ջարդը, խողխողում էին հիմնականում սառը զենքով: Մինչ այդ ժանդարմները հեռացել էին՝ իրենց հետ տանելով կողոպտված արժեքներն ու զեղեցիկ աղջիկներին, տարագրյալներին հանձնելով խուժանի վայրագություններին:

Փրկվեցին միայն երկու պատանիներ: Թուրքական մի գյուղում մի թուրք հայ պատանյակին բանտարկում է, իսկ ապա դարձնում իր ծառան, ստրուկը, առանց նույնիսկ ուտելու բան տալու: Տղան կարողանում է փախչել և ապրել եղեռնը վերապրած հայ որբի գողգոթան[1]:

---

[1] «Ալիք», 23 ապրիլի 1989 թ.:

Կեսարիայի Թավլուսուն գյուղում, որտեղ 30 տուն հայ էր բնակվում, տեղի ունեցավ իր բնույթով հազվադեպ դեպք՝ Թուրքերը Թույլ չտվեցին, որ հայերին տեղահանեն:

Մելքոն-Ասատուրը մանրամասն տվյալներ է արձանագրել կեսարահայության ողբերգության վերաբերյալ: Երևելիներին քաղաքից դուրս գաղանաբար ոչնչացրեցին. «Սոյն խումբը չեթէից տապարով նահատակուած է Կեմերէկէն դուրս էհմալ օղլու Համբարի ջաղացքէն կէս ժամ դէպի արեւելք, Ղըզըլչար ձորին մէջ: Ոտքէց գլուխ մերկացուելէ վերջ՝ նահատակաց մարմինը նետուեցաւ Նիրօղլու կոչուած քարայրը»[1]:

Կեսարիայի հայության ջարդերի գլխավոր իրականացնողը Խուլուսին էր, որը հազարավոր անմեղ հայ երեխաներ ջարդելուց հետո առաջ քաշվեց ու Բողազլյանի ոստիկանության հրամանատար նշանակվեց: Երբ պատերազմի ավարտին նրան դատի տվեցին, դատարանը Խուլուսու կատարած հանցագործությունները ճանաչելով հանդերձ, նրան ընդամենը երկու ամսվա բանտարկության դատապարտեց[2]:

Նաև նշենք, որ Կեսարիայի սանջակում մինչև եղեռնը գործում էին չորս վանք, 30 եկեղեցի, 42 դպրոց 4935 աշակերտով և 125 ուսուցիչով: Ավելացնենք նաև այն, որ Էսադ Ուրասը գրում է, որ 1903 թ. վիճակագրության տվյալներով՝ Կեսարիայում հայ բնակչության թիվն էր 52192, 1907 թ. վիճակագրությունով՝ 68.000: Հայ բնակչությունից առաքելական եկեղեցուն պատկանում էր 48659 հոգի, կաթոլիկներ էին 1515, բողոքական էին 2018 հայեր[3]: Կեսարիա քաղաքում մնացել էր 260 տուն իսլամացած հայ ընտանիք: Տեղի մութեսարիֆը զեկուցեց Կ. Պոլսին՝ Կեսարիայից տեղահանվել է 47617 քրիստոնյա: Սանջակի հայության զգալի մասը կոտորվեց Կեմերեկ ավանի մոտ՝ Մուդարա-Սան գյուղի և Խնզրը Դաղի և Խնզրը-Սույու ձորերում:

Մի քանի վկայություններ. «Ծեր սայլապանը բռնագաղթվող հայ կնոջը.

– Այ կին, չէ՞ որ ձեզ մեռցնելու կը տանին, ինչ դրամ որ ունիս՝ ինծի տո՛ւր, որովհետեւ այդ դրամն այլ ձերը չէ, ձեզմէ պիտի առնեն»[4]:

Դելի Օսման՝ Թուրք գյուղացի.

«Առաջին կարավանը մեր գիւղին մօտերը կոտորեցինք, Ֆրըն Տերեսին: Պապա-Եաղմուր գիւղէն Ահմէտ Զավուշը ժանտարմաներուն պետ կարգուած էր, ան մեզ յստակ կերպով ըսաւ.

– Մենք որեւէ գնդակ պիտի չարձակենք հայերու վրայ: Դուք գործի անցէ՛ք ձեր կացիններով և զարկէ՛ք միայն անոնց գանկերուն: Հայերը կու լային, բողոքի ձայն չկար, միայն անոնցմէ մէկը ըսաւ.

– Սրիկանե՛ր, խաբեբանե՛ր, մի՞թէ քաջութիւն է կապուած մարդիկ սպանելը:

Երբ մեր Հասանը սուրը բարձրացուց գլխուն զարնելու, ճարպիկ հայը

---

[1] «Կիլիկեան տարեցոյց», Կ. Պոլիս, 1922, էջ 184:

[2] Դ.Ե. № Մ 289:

[3] Uras E., նշվ. աշխ., էջ 144:

[4] **Եափուճեան Հ.,** Յիշատակարան Բումտիկինի, Պէյրութ, 1967, էջ 167:

Հասանին երեսին թքեց ու ոտքովը ուժեղ հարուած մը տուաւ անոր փորին: Բայց տեղնուտեղը զինքը կտոր-կտոր ըրին:

Մեր գործողութիւնը հազիւ տասնհինգ վայրկեան տևեց: Կապերը կտրելով սկսանք լաթերը հանել բաւական դժուարութեամբ: Նախքան մեր ցրուիլը, ոստիկանապետը յայտարարեց, որ յաջորդ օր դարձեալ ներկայ ըլլայինք Ռումտիկին, որպեսզի կոտորեինք երկրորդ կարավանը: Ահա այդ ձորը. ով որ կուգե, թող բարձրանայ և տեսնե երկրորդ կարավանի քեաֆիրները»[1]:

Մի խումբ Թուրքեր հայի ագարակից դուրս գալով ասացին.

«Այս այգիին տերը շաբաթ մը առաջ կախուած էր տանձի ծառէն, կախուած էր գլխի վրայ, քարկոծուած ու սպաննուած»[2]:

Մեհմեդի պատմածը.

«Այրերու վերջին կարավանը փոքր էր: Քանի մը պատանիներ, քանի մը այր մարդիկ ու քահանան: Երբ հասանք Հարլրի ձորը, փոսի մը եզերքը, ոստիկանապետը զիս լավ ճանչնալուն ըսաւ.

– Է՛յ, դասապ Մեհմետ, գործի՛ անցիր և չնորհքդ ցո՛յց տուր:

– Կատուն, երբ մուկ մը բռնե, նախքան բզկտելը,– պատասխանեցի ես,– անոր հետ կը զուարճանայ:

Իմ այս սրամտութիւնս ուրախութիւն պատճառեց ոստիկանապետին ու ըսաւ.

–Տէ ընտրէ՛ զուարճանալիքդ ու չնորքդ ցոյց տո՛ւր:

Ես խումբէն դուրս հանեցի քեչիչը եւ Շիտիտենց Երանոսը եւ երդում ըրի, որ զիրենք պիտի չսպաննեմ, եթե ըսածս կատարեն: Որպեսզի համոզուին, մենք միւսները սպաննեցինք եւ փոսը լեցուցինք, ապա Երանոսին դառնալով ըսի.

– Դու աչուղ մարդ ես, եթէ լաւ բան մը երգես, վայլահ-պիլլահ փրկուած ես:

Երանոսը մերժեց ու խնդրեց, որ որքան կարելի է զինք չուտով անդի աշխարհը ճամբեմ: Ստիպեցի ու ան երգեց...

Քեաֆիրին ձայնը իսկապես գեղեցիկ էր ու յուզիչ, սակայն Տարլրցի Ղասրմը գերանդին քաշեց ու Երանոսին վիզը կտրեց:

Այս ժամանակամիջոցին քահանան, երկինք նայելով, մեզ համար անհասկանալի բան մը կը մոլտար:

– Ինչո՞ւ,– հարցուցի,– երկինք կընայիս:

Քահանան անվախ կերպով պատասխանեց.

– Աստուծո կաղոթեմ, որ քեզ չանթահարէ:

Ես ծիծաղելով քեչիչին չալակը ելա ու ըսի.

– Եթե զիս մինչև գիւղ տանիս, կը փրկուիս:

Սակայն Ղասրմը կրկին մեջ մտաւ: Լուցկի մը մոտեցուց քեչիչին մորուքին: Քեչիչը իր դեմքը փրկելու համար զիս չալակէն վայր նետեց ու երեսին վրայ գետին պառկեցաւ:

---

[1] **Եափուճեան Հ.,** *Յիշատակարան Ռումտիկինի, էջ 171:*

[2] *Նույն տեղում, էջ 172:*

– Ա՛յ քեչիչ, վե՛ր ե՛լ,– պոռացի, բայց քեչիչին սիրտը արդեն պայթած էր, մնաց տեղը: Շատերը չհաւատացին, կարծեցին, թէ սուտ մեռել կը ձեւանայ, սակայն Ահմետ չաւուչը ըսաւ.

Վերջացուցէ՛ք, բաւակա՛ն է: Կացինի քանի մը հարուած տուէ՛ք եւ փոսը նետեցէ՛ք...

– Ես կատարեր եմ,– (արդարացաւ Մեհմետը),– մեր փեղամպերին պատուիրանը որ կ՚ըսէ. «Քեաֆիր սպաննողը կ՚երթայ գրաւելու դրախտին ամենապատուաւոր տեղերէն մէկը»[1]:

ՅՈԶՂԱԹ

Յոզղաթի ցեղասպանության պատմությունը համեմատաբար լավ է ուսումնասիրված և դա չնորհիվ Գրիկերի (Գրիգոր Կերկերյանի ծածկանունն է): Նա ցեղասպանության պատմության ուսումնասիրությամբ զբաղվեց 40 տարի: Դեռ Հռոմի համալսարանն ավարտելիս նրա ավարտաճառը նվիրված էր Մեծ եղեռնին: Գրիկերը ծրագրել էր ստեղծելու Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված 12 հատորանոց աշխատություն՝ յուրաքանչյուրը նվիրված հայկական կամ թուրքական մի նահանգի ու գավառի:

Սակայն հասցրեց հրապարակ հանել միայն մի հատորը՝ «Եոզղաթի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը»: Գիրքը երկլեզու է՝ վավերագրերի թուրքերեն բնագրերը մի սյունակում են, իսկ դրանց հայերեն թարգմանությունները՝ մյուսում: Օգտագործված վավերագրերը հիմնականում պաշտոնական գրագրություններ են, հեռագրեր, թուրքական ռազմական դատարանի նյութեր:

Այս աշխատության մեծագույն ծառայությունն այն է, որ նա միայն թուրքական սկզբնաղբյուրներով կարողանում է Յոզղաթի սանջակի օրինակով հաստատել Հայոց ցեղասպանության իրողությունը:

Եթե հաջողվեր հրատարակել ծրագրված 12 հատորը, Գրիկերի գիրքը իսկապես կդառնար Հայոց ցեղասպանության հանրագիտարան: Այնուամենայնիվ, Մեծ եղեռնի պատմությամբ զբաղվողն այսօր էլ յոլա գնալ չի կարող առանց Յոզղաթի ջարդերին նվիրված գրիկերյան հատորյակի: Դա ո՛չ միայն ուսումնասիրություն է, ցեղասպանության իրողությունը հաստատող մենագրության, այլև վավերագրերի, այն էլ առաջնակարգ նշանակության վկայությունների, ժողովածու:

Յոզղաթի սանջակում կար 350 գյուղ, որից 56-ը՝ հայաբնակ 9.800 ընտանիքով և 55.000 բնակչով[2]: Բայց այս սանջակի հայկական բնակավայրերի ու բնակիչների թվի վերաբերյալ ևս տարբեր տվյալներ կան: Եթե հրապարակված աշխատություններում բնակավայրերի թիվը տատանվում է 44-56-ի, ապա հայ

---

[1] **Եաֆուճեան Հ.,** նշվ. աշխ., էջ 176-178:

[2] **Գրիկեր,** նշվ. աշխ., էջ 101:

բնակչությանը՝ 33.000-79.800-ի միջև: Օրինակ, Յոզղաթի հայրենակցական միությունը նշում է 76.055, Հ. Ղազարյանը՝ 74.584, իսկ թուրքական վիճակագրությունը՝ 31247 թվերը:

Սանջակում 1901 թ. գործում էր 40 եկեղեցի և 65 հայկական դպրոց՝ 1750 աշակերտով, 13 ուսուցչով: Յոզղաթն այն սանջակների թվին էր պատկանում, որի մութեսարիֆը՝ Ջեմալը հրաժարվեց կատարելուց հայերի ոչնչացման հրամանը: Նա այդ պաշտոնում նշանակվեց 1915 թ. մայիսի 5-ին և աշխատանքից ազատվեց նույն թվի օգոստոսի 6-ին: Նրան փոխարինեց Բողազլյանի կազայի 21-ամյա գայմագամ Քեմալը:

Նույն պատճառով աշխատանքից ազատվեց սանջակի զորահրամանատար Սալիմը: Ինչպես արդեն նշվել է, թե՛ Ջեմալը և թե՛ Սալիմը կողմ էին հայերի ցեղասպանության, բայց ոչ՝ բնաջնջմանը:

Սանջակը զինվորական գծով ենթարկվում էր Կեսարիայի 15-րդ զորաբաժնի հրամանատարին: Եվ քանի որ առաջին չրջանում, մինչև օգոստոսի 6-ը, բանակը առաջատար դեր էր խաղում բռնագաղթի կազմակերպման գործում, հետևաբար բանակային կառույցների միջոցով էին ստացվում տեղահանության ու ոչնչացման հրահանգների մեծ մասը:

Սանջակում հայերի պաշտոնազրկումն սկսվեց 1914 թ. հունվարին՝ համաձայն ՆԳ, արդարադատության և կրոնների նախարարությունների հրամանների: Մինչև 1915 թ. առաջին ամիսները հայ պաշտոնյաների գրեթե 90 տոկոսը փոխարինվել էր մահմեդականներով: Այդ առթիվ 1914 թ. ապրիլի 16-ին պատրիարքը բողոք ներկայացրեց Բարձր Դռանը, բայց հայերի պաշտոնազրկման գործընթացը ո՛չ միայն չկանգնեց, այլ՝ ավելի արագացավ: Արդեն 1914 թ. նոյեմբերին հայկական նահանգներում հայ պաշտոնյա գրեթե չէր մնացել:

Յոզղաթում հայերի պաշտոնազրկումը տեղի ունեցավ 1915 թ. գարնանից: Պատասխանելով Կ. Պոլսից ստացված հրահանգներին և Աթըֆի հուլիսի 19-ի հեռագրին, Ջեմալը հայտնում է. «Ձերդ գերազանցութեան հրամաններուն համաձայն ձեռք առնուեցան անհրաժեշտ միջոցներ տնտեսական ճիւղերու հայ պաշտօնեաներու հանդէպ», բարեհաճեցեք «նոյնիմաստ հրամաններ տալ նաեւ անձնիւր նուիրապետական մեծաւորներու միջոցով, նախադատ ատեանի, լեգէոնի, ծխախոտի տեսչութեան, երկրագործական դրամատան մէջ պաշտօնավարող հայերուն նկատմամբ...» և ինչպե՞ս վարվել քաղաքապետարանի վարչական խորհուրդների ու հանձնաժողովների անդամների հետ[1]:

Յոզղաթի մութեսարիֆի՝ Կ. Պոլիս ուղարկած տեղեկանքով սանջակից տարագրվել էր 31247 հայ. Յոզղաթի կազայից՝ 13359, Աղդաղի կազայից՝ 3208 և Բողազլյանի կազայից՝ 14680 հայ:

Յոզղաթում զորահավաքն սկսվեց մինչև Առաջին աշխարհամարտը: 1914 թ. հուլիսին արդեն բանակ էին զորակոչվել զինվորական տարիք ունեցող բոլոր հայերը: 1915 թ. ապրիլի 22-ին ստացվեց ռազմական նախարարի հրամանը զորակոչելու զենք կրելու ընդունակ բոլորին: Հատկանշական է, որ այդ

[1] Դ.Ե. № Հ 614:

հրամանը գործադրվեց հիմնականում հայաբնակ շրջաններում:

Նույն ապրիլ ամսին սանջակի բնակավայրերում հնչեց մունետիկների սպառնալից ազդը՝ հանձնել ունեցած բոլոր զենքերը: Յոզղաթի առաջնորդ Ներսես եպս. Դանիելյանը, կատարելով պատրիարքի պահանջը և տեղի Ազգային ժողովի որոշումը, ժողովրդին հայտարարեց. «Յանձնեցէ՛ք ձեր ունեցած զէնքերը՝ օրէնքը յարգած ըլլալու համար»[1]:

Այս եպիսկոպոսը, որը նույնպես զոհ գնաց եղեռնին, հեղինակ է «Կարևոր մի ցող այրած արտերու համար» գրքի, որում ներկայացված է գավառների հայության ծանր վիճակը: Սանջակի հայության ճնշող մեծամասնությունը զենքերը հանձնեց:

Զենքերի հավաքման գործում առանձնակի եռանդ էր դրսևորում Քեմալը: Նա բանտերից արձակեց 300 քրեական հանցագործի, նրանցից կազմակերպեց չեթեական խմբեր ու «արշավի» ուղարկեց հայերի վրա: Այս խմբերը շրջափակում էին հայկական գյուղերը ու դրանք միմյանցից մեկուսացնում: Չեթեական հրոսակախումբը կազմակերպեց նաև ոստիկանապետ Թևֆիկը: Դա կազմված էր չերքեզներից:

Ռազմական դատարանում Ջեմալը ցուցմունք տվեց, թե դեռ Թոքաթում աշխատելիս «կարգ մը բանտարկեալներ հանեցինք եւ մարզելով Կարին ղրկեցինք, անոնք պատերազմի գիծերուն վրայ գտնուեցան»: Նա նաև ասաց, որ ինքը դրա հետ համաձայն չէր, բայց հարկադրանքի տակ էր:

Յոզղաթում քրեական հանցագործներին բանտերից ազատելու հանձնաժողովի անդամներն էին Թևֆիկը, ընդհանուր դատախազը, Սալիմը, Ռեմզին: Հանձնաժողովը մայիսի 15-ին բանտից արձակեց 65 ոճրագործի և նրանց զինելով՝ Զորում ուղարկեց: Ընդ որում՝ Յոզղաթում մի քանի անգամ ոճրագործները բանտից ազատվեցին համաձայն ՆԳ նախարարությունից ստացված ցուցակների[2]: Յոզղաթի բանտից արձակված 65 հոգուց 15-ը մարդասպան էր, 12-ը՝ գող ու ավազակ:

Կար ստեղծված չեթեական խմբերի երկու անուն՝ «Թեշքիլաթը մախսուսա» և «Թեշքիլաթը ճետիտա» (նոր կազմակերպություն): Երկրորդը ստեղծվեց 1914 թ. հուլիսին՝ կենտրոնում ընդունված որոշման հիման վրա, իսկ «Թեշքիլաթը մախսուսան» գործում էր 1913 թ. հունվարից: «Թեշքիլաթը ճետիտան» ստեղծվեց հայերին կոտորելու համար: Քիչ անց դա նույնպես կոչվեց «Թեշքիլաթը մախսուսա», որովհետև նույնն էին այդ կազմակերպությունների անդամների հավաքագրման սկզբունքն ու գործելակերպը: Բացի դա, պատերազմական նպատակադրումներով «Թեշքիլաթը ճետիտան» հաջողություն չունեցավ և նրա ջոկատների մեծ մասին նույնպես լծեցին հայասպան գործունեության և, վերջապես, «Թեշքիլաթը մախսուսա» անունը հնարավորություն էր տալիս քողարկելու կազմակերպության նպատակն ու խնդիրները՝ իբր նա շարունակում է օգնել բանակին: Յոզղաթի նախկին դատավոր Մ. Ռեմզին

---

[1] **Գաբիկեան Ն. և Գալուստեան Կ.,** Ազ տաղի գոյամարտը, Մարսել, 1932, էջ 42:
[2] Դ. Ե. № Մ 497, Մ 534:

1919 թ. փետրվարի 10-ին կազմած տեղեկագրում նկարագրում է «Թեչքիլաթի» ձևավորման կարգը. «Բժշկական քննութիւն կատարելէ ետք տեղի ունեցան ձեւակերպութիւնները ոճրագործներու ազատ արձակումին, իբր թէ ասոնք զինուոր պիտի արձանագրուէին: Հետագային իմացանք, որ այս ոճրագործները ղրկուեցան Զորումի հրոսակներուն թիւը աւելցնելու համար»[1]:

Ապրիլի 30-ին Քեմալը նամակով Զաթի գյուղապետից մահվան սպառնալիքով պահանջեց երկու օրվա ընթացքում գյուղում եղած զենքերը հավաքել ու հանձնել: Գյուղի համայնքը պառակտվեց: Երիտասարդները հրաժարվեցին զենքերը հանձնել, քանի որ դա հայերի բնաջնջմանը հավասարազոր էին համարում:

Ոստիկանապետ Կասըմը 100 ոստիկանով մտավ Զաթ՝ զենքերը հավաքելու: Հայերը հրաժարվեցին, ասելով՝ «Մենք զենք չունենք»: Տղամարդիկ ձերբակալվեցին և բռնությունների ենթարկվեցին: Մի հույն ոստիկանապետին տվեց զենք ունեցողների և կուսակցականների ցուցակը: 80 չաթեցու չղթայակապ տարան Բողազլյան: Միաժամանակ գյուղ չեթեներ ուղարկվեցին: Ոստիկանի համազգեստով «ոճրագործները կը մտնէին հայերու տունները, կիներն ու աղջիկները կը մերկացնէին եւ կարմրած երկաթով կ'այրէին անոնց մարմնի ամենէն փափուկ մասերը՝ զանոնք ստիպելու համար, որ յայտնեն այրերու պահուած թաքստոցները եւ զենքերու տեղերը»[2]:

Յոզղաթում նույնպես ծրագրված էր նախ ոչնչացնել գյուղերի և ապա միայն քաղաքների հայ բնակչությանը: Այստեղ նույնպես իշխանությունները գործում էին շատ զգույշ և թաքուն, աշխատում տպավորություն ստեղծել, թե «ոչ մէկ չարիք պիտի հասնի անոնց, որոնք հաւատարիմ են»[3]:

1915 թ. հուլիսի 18-ին Յոզղաթում ստացվեց Աբրֆի ծածկագիրը. «Ձեր սանջակին մէջ բնակուող հայերէն կոմիտէներու պատկանողներու կամ այդպէս կարծուածներու, մասնաւորապէս, ուսուցիչներու, դեղագործներու, բժիշկներու, կրօնականներու, վաճառականներու, փաստաբաններու, ըմբոստական գաղափարներ տարածողներու ներկայութիւնը ներկայի ապահովութեան եւ երկրին ապագայ փրկութեան վնասակար ու վտանգաւոր ըլլալով, կը խնդրեմ, որ ձերբակալել տաք այդպիսի անհատները եւ զանոնք ղրկէք հսկողութեան տակ (Տեր) Զօրի կողմերը...»[4]:

Այս հրամանի հիման վրա բանտերը լցվեցին երևելի հայերով, անգամ հատուկ հանձնաժողով ստեղծվեց տարագրվող հայերի դրամական միջոցներն ու թանկարժեք իրերը հավաքելու համար:

Կ. Պոլիսը տեղական իշխանություններից պահանջում էր «դավադրություն ու կուսակցություններ հայտնաբերել»: Տեղերից պատասխանում էին. «Եոզղաթի հայերը Դաշնակցութեան եւ Հնչակեան կուսակցութիւններու հետ կապ չունին», սակայն նման պատասխանները հաշվի չէին առնվում և պնդում էին, թե «հայ երեւակայական կոմիտէ մը գոյութիւն ունի...»:

---

[1] Դ. Ե. № Մ 497, № Մ 535:

[2] «Եոզղատ» (ձեռագիր), Նուբարյան մատենադարան (Փարիզ), էջ 133:

[3] Դ. Ե. № Մ 574-Մ 577, հավելված № 1; Տես Սալիմի վկայությունը:

[4] Դ.Ե. № Հ 612:

Տեղական իշխանությունները հրաման ստացան խուզարկություններ կատարել, բայց «գտան միայն այն զէնքերը, որոնք խուզարկուները իրենց ձեռքերով տեղաւորեցին, եւ վերջապէս, հրաման ստացան հայերը տեղահանելու»[1]:

Չնայած զենքեր չհայտնաբերվեցին, բայց Յոզղաթի ոստիկանապետ Թևֆիկը «սպաննել տուաւ բազմաթիւ հայեր առանց պատճառի, պատրուակէլով թէ անոնք կոմիտէներու կը պատկանէին»: Ապա «ըմբոստություն» հայտնաբերեց զորակոչված հայերի շրջանում և նրանց ցաքուցրիվ արեց:

Այդ մասին նախկին մութեսարիֆ Ջեմալը 1919 թ. մարտի 5-ին ռազմական դատարանում ցուցմունք տվեց, որ Թևֆիկն «ինձմէ կը խնդրէր, որ գիւղերու հայերը, որոնք թնդանօթներով զինուած էին... այլուր տարագրուէին եւ անոնց տեղ բերուէին թուրքեր... Քննութիւն կատարեցի, բայց քննութիւնս արդիոնք չյանգեցաւ, ըմբոստութեան հետք իսկ չգտայ»[2]:

Դատարանը հերքեց հայերի ապստամբության վարկածը և գտավ, որ դա չէր կարող հիմք հանդիսանալ տեղահանության և ջարդերի համար, որովհետև, եթե անգամ «հայ ժողովրդի մի մասն իսկ մասնակցած լիներ, մնացած մասը ցուցաբերել է իր հավատարմությունը» և պետք է պաշտպանվեր իշխանությունների կողմից[3]:

Այնուամենայնիվ, Յոզղաթի հայության կոտորածները հետաձգվեցին: Ինչո՞ւ: Գրիկերը դա բացատրում է Մազհարի, Ջեմալի և Սալիմի ընդդիմությամբ: Սակայն յոզղաթցիների առաջին կարավանի ոչնչացվելը Մազհարին ու նրա համախոհներին զգուշացրեց, որ տեղահանության նպատակը բնաջնջումն էր և նրանք սկսեցին ամենատարբեր պատրվակներով տեղահանությունը ձգձգել:

Ջեմալը 1918 թ. դեկտեմբերի 12-ին ռազմական դատարանին տված իր ցուցմունքում ներկայացնում է Յոզղաթում իրադարձությունների զարգացման ընթացքը: Հայերի տեղահանության հրամանն ստացան զինվորական իշխանությունները: «Ձերբակալուած հայ անհատները չվստահեցան քաղաքացիական իշխանութեանը»: Ջեմալն ասել է, որ հայերի տեղահանության մասին ինքը տեղեկություն չի ունեցել, քանի որ «անոնք տարագրուեցան գիւղերէն, որովհետեւ չթողուցին, որ ոստիկան զինուորներն այդ գործին խառնուին: Այն ատեն Անգարայի Միութիւն եւ յառաջդիմութիւն կուսակցութեան պատասխանատու քարտուղար Նեճաթի պէյ Եոզղաթ եկաւ... եւ ինծի ցոյց տուաւ կուսակալ Աթըֆ պէյի կողմէ ստորագրուած նամակ մը՝ զայն բռնելով իր ափերուն մէջ»: Նամակը հանձնարարում էր Նեջաթիի հետ խորհրդակցել և ձեռնամուխ լինել տեղահանությանը:

Յոզղաթի ցեղասպանության դատավարության ժամանակ երկաթուղային պատասխանատու պաշտոնատար Խ. Պանտելիտիսը ցուցմունք տվեց, որ Նեջատին «Յոզղաթ եկավ կառավարիչ Ջեմալ բեյին առաջարկելու՝ բնաջնջել հայերին, սակայն այս վերջինը մերժեց կատարել նրա ցանկությունը: Այդ պատճառով, Ջեմալ բեյը պաշտոնանկ եղավ և նրա տեղը նշանակվեց մսագործ Քեմալ բեյը...»:

---

[1] Դ. Ե. № Մ 574-Մ 577:

[2] «La Renaissance», 6 մարտի 1919 թ.:

[3] «Takvim-i Vekai», 7 օգոստոսի 1919 թ., № 3617:

Քաղաքացիական իշխանություններից ստացված տեղահանության հրամանը վերաբերում էր միայն «կասկածելի անձանց», մինչդեռ զինվորական իշխանությունների հրամանը՝ բոլոր հայերին: Իսկ տեղահանությունն իրականացնողները ոչ թե քաղաքացիական, այլ զինվորական իշխանություններն էին: Այդ հանգամանքը Ջեմալին օգնում է խույս տալ տեղահանության գործերին միջամտելուց, որից հետո Աթրֆը նրան պաշտոնանկ է անում[1]:

«Թէեւ ես աչքովս չտեսայ կոտորածը,- չարունակում է Ջեմալը,- սակայն իմացայ, թէ Եոզղաթ քաղաքէն եւ շրջակայ գիւղերէն տեղահանուած հայ կարաւանները կոտորուեցան եւ բնաջնջուեցան ոստիկաններու, հրոսակներու եւ ժողովուրդին կողմէն... Բոլոր ժողովուրդը գիտէ, որ Քեմալ պէյ, ոստիկանութեան հրամանատար Թեւֆիկ պէյ եւ... Նեճաթի պէյ համաձայն գործելով կազմակերպեցին հայերու բնաջնջումը»[2]:

Յոզղաթի առաջին կարավանում, որը դուրս եկավ հուլիսի 26-ին, կար 472 հոգի, այդ թվում՝ տեղի առաջնորդ Դանիելյանը, քահանաներ, երևելիներ[3]: Գնդապետ Սալիմի վկայությամբ՝ այդ կարավանը օգոստոսի 6-ին ոչնչացվեց Մուամմերի հրամանով՝ Քեմալից ստացված հեռագրի հիման վրա: Կարավանին ուղեկցող ոստիկանները հայերին չորսական հոգով միմյանց կապված հանձնեցին չեթեներին, որոնք նրանց սպանեցին և ապա կողոպտեցին: Դա տեղի ունեցավ Սեբաստիայից չորս ժամ հեռավորության վրա գտնվող Կարտաշլարի ձորում: Այդ կարավանը ոչնչացնելու հանձնարարականով Սեբաստիա ծածկագիր էր ուղարկել նաև Նեջատին. «Առաջին կարաւանը Եոզղաթէն մեկնած է. անոնց հանգիստը ապահովելու համար մասնաւոր սպասարկութեամբ կարգադրութիւն եղած է»[4]:

Յոզղաթի վերապրածներից է. Վարվառյանը դատարանին պատմեց. «...Պողազլեանէն եւ շրջակայ գիւղերէն 200-300 անհատներ հաւաքուեցան եւ միացան հրոսապետներուն: Քեմալ պէյ զանոնք զինեց... ինքն ալ, զինուած, Եոզղաթի փողոցները կը շրջէր պոռալով հրոսակներուն. «Մեր մայրերը մեզ ծնած են այս օրուան համար»: Այսպիսի կարգախօսներով ան քաջալերեց ամբոխը միանալու հրոսակներուն: Ասոնք ամենքն ալ ձիերու վրայ էին: Զինեալներու օգնութեամբ տուներէն եւ խանութներէն 12 տարեկանէն վեր հայ այրերը հաւաքելով բանտարկեցին... չենքերու նկուղներուն մէջ»: Ոստիկանները խանութի տերերից բանալիները վերցրեցին և դրանք կողպեցին: Հայ այրերին տեղահանեցին մի քանի կարավաններով: Հերթը հասավ կանանց ու երեխաներին: Զինված հրոսակները տներից դուրս էին հանում նրանց: Կարավանն ուղեկցում էր նաև Քեմալը: Նրանց միացավ զինված ամբոխը՝ հիմնականում հեծյալ: Քելլերի մերձակայքում Քեմալը հրամայեց. «Հաւաքեցէ՛ք գեղեցիկ կիներն ու աղջիկները, որ անոնց պարել տանք»: Աղջիկներին հարկադրեցին 2.5 ժամ պարել: Ապա պահանջեցին խլամանալ: Հրամայեցին ծունկի գալ: «Մեզ մերկացուցին, առին մեր դրամները եւ զգեստները ..., մեր վրայ յարձակեցան

---

[1] Դ. Ե. № Մ 492-Մ 494:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, № Հ 618:

[4] Դ.Ե. № Հ 519:

կացիններով, բրիչներով, իրենց տրուած հրամաններու համաձայն: Անոնք մեռցուցին իմ աչքերուս առջեւ...»[1]:

Հայ զինվոր Ա. Թաչչյանի ցուցմունքը. «Տեսայ 540 հայ տարագիրներու կարաւան մը, որ քաղաքէն դուրս կ'ելլէր 30 եւ աւելի սայլերով... Այն հայերը, որոնք սայլերուն հետ կը քալէին երկտակու իրարու հետ կապած էին... 600 իսլամ փախստականներ 20 օր առաջ իբր զինայր (ոստիկան) արձանագրուած էին»: Քաղաքի թաղերը բաժանվեցին այս ոստիկանների վրա: Հաջորդ օրը ճանապարհ հանեցին 400 հոգանոց կարաւան, որոնց ուղեկցում էր դաղստանցի Իսմայիլը 40 ոստիկանի հետ:

Սունգուրլուից 30-35 սայլերով մեծ թվով հայ վաճառականներ բերեցին: Սրանց միացրին 7000 յոզղաթցու: Վեց-յոթ ժամ անց 800-900 սայլերով Յոզղաթից դուրս բերին մի նոր կարաւան: Երրորդ կարաւանում 300 սայլ կար: Զաթալճա կամրջի վրա վերջին կարաւանի կանանց, աղջիկներին և երեխաներին առանձնացրին և հինգական կամ տասական հոգով բաժանեցին մահմեդական գյուղերի վրա: Տղամարդկանց ինչ-որ տեղանքում սպանեցին:

Սունգուրլու ավանից բերվեց երրորդ կարաւանը, նրանց միացրին 36 յոզղաթցու: Գնաց նաև չորրորդ կարաւանը, որոնք բոլորն էլ ջարդվեցին հրոսակների ուժերով: Դրանից հետո «ամեն գիշեր Եոզղաթի հայերը տասնական խումբերով քաղաքէն դուրս կը հանէին եւ կը ջարդէին:

Այս բոլոր ջարդերը կազմակերպողն էր Քեմալ պէյ...»:

«Եոզղաթի նամակատան տնօրէն Մեհմէտը եւ Զ. Շիւքրին... ամեն մէկը սպաննած էր 200 հայ»: Սունգուրլուի կարաւաններից մեկին 24 ժամ առանց ջրի թողեցին, ապա Քեմալի հրամանով Քաչչերի կիրճում կոտորեցին: Ջարդեցին նաև 20 բողոքականների:

Կարապլրյբք գյուղի 250 ընտանիք ջարդվեց գյուղից կես ժամ հեռավորության վրա: «Կոտորածի ատեն օգնական ոստիկանապետ Նուումանն ուզեց ամուսնանալ ջարդուելիք աղջիկներէն մէկուն հետ: Այս վերջինը մերժեց, նախընտրեց մեռնիլ...»: Քեոննե գյուղի հայ բոլոր կանանց ու երեխաներին բռնի իսլամացրին, իսկ տղամարդկանց ջարդեցին Զիֆթլիկի ձորում: Սալամինցի Յուսուֆի վկայությամբ՝ Յոզղաթից չորս ժամ հեռավորության վրա գտնվող մի վայրում սպանվեցին 12 տարեկանից բարձր բոլոր արու հայերը[2]:

Դատարանում Քեմալը մի չատ հետաքրքիր հայտարարություն արեց, որը հերքում է բոլոր այն պնդումները, թե Նայըմ բեյի ծածկագրերի հավաքածուն կեղծիք է, թե այդպիսիք գոյություն չունեին: Նա ասաց. «Տարագրութեան հրամանները այնքան բազմաթիւ են, որ անկարելի է զանոնք միտքը պահել»[3]:

– Քեմալը, երբ պաշտոնի է անցնում Յոզղաթում,- դատարանում վկայեց Ա. Թաչչյանը,- անգամ «մանուկներ եւ աղջիկներ, որոնք իսլամացած էին, հաւաքել եւ ջարդել տուաւ...

Քեմալ պէյ ջարդուածներէն եւ անոնց ընտանիքներէն հաւաքեց ամեն տեսակի իրեղէններ, զգեստներ, դրամ, եւ զանոնք մերկացուց...

---

[1] Դ. Ե., № Մ 486-Մ 488:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, № Մ 489-Մ 494:

Կոտորածի ատեն իսլամները հայերէն զանազանելու համար հրահանգ տուած էր, որ ճերմակ փաթթոցներ կրեն իրենց գլուխներուն վրայ... Ուրիշները սուլոց արձակեցին եւ երեք անգամ պայթեցուցին իրենց զէնքերը, այսպէս նշան տալով, ու կացիններով սկսան կոտորածը: Զոհերու վրայէն հաւաքուեցան անոնց զգեստները», որոնք հանձնվեցին լքյալ գույքերի հանձնաժողովին: «Եոզղաթի փողոցներուն մէջ մունետիկներ աւետեցին արիւնոտ եւ ոչ-արիւնոտ առարկաներու եւ չապիկներու առուծախ»[1]:

Յոզղաթի երեսփոխան Շաքիրը դատարանում ցուցմունք տվեց. «Քեմալ դահիճ մըն է: Իր հասնելէն անմիջապէս ետք ան ստիպեց տեղահանել բոլոր հայերը, մանուկներ, պատանիներ, կիներ եւ ծերեր ... եւ զանոնք բոլորը ջարդել տուաւ Եոզղաթի մոտերը՝ իր կազմակերպած գործակալներու միջոցով»: Հարբեցող էր, գինարբուքների սիրահար. «Ես Պողազլեանի հայերը կոտորեցի,- հպարտանում էր նա,- եւ փոխմութեսարիֆ եղայ. հոս ալ Եոզղաթի հայերը կը ջարդեմ եւ մութեսարիֆ, թերես ալ կուսակալ կ՚ըլլամ»[2]:

Յոզղաթի տեղահանության և կոտորածի դատաքննության արդյունքներով տրված դատավճռում ասված է, որ Քեմալն ու Թևֆիկը հայերի ունեցվածքը և դրամը «կողոպտելուց հետո, նրանց կարավանները ճամբա են դրել կյանքի անվտանգության բոլոր միջոցներից զուրկ ... Ո՛չ միայն ուշադրություն չեն դարձրել նրանց կյանքի անվտանգությունն ապահովելու խնդրին, այլ, ընդհակառակը, ամուր կապելով բոլոր տղամարդկանց ձեռքերը, զրկել են նրանց ինքնապաշտպանության բոլոր հնարավորություններից: Եվ այսպես՝ կանխամտածված կերպով առիթ են տվել, որ այդ ողբերգությունը գործադրվի ... Պատասխանատու պաշտոններում ինչ-որ պատահական մարդկանց ղեկավար նշանակելով, շարունակել են թաքուն կատարել իրենց բարբարոս արարքները ... (Այն խոսակցությունը), թե իբր մի շարք թեթևամիտ կուսակցությունների հրահանգով և Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող իրենց հայրենակիցների դրդումով, հատկապես Թշնամու կողմից գրավված վայրերում, հայերն անցել են Թշնամու կողմն ու միացել ապստամբական շարժումներին, չեն կարող կատարված վայրագությունները արդարացնելու համար հիմք ծառայել: Ապստամբական շարժման հետ որևէ առնչություն չունեցող Յոզղաթի հայ բնակչության նկատմամբ գործածած վրեժխնդրությունն ու անձնական ոխակալությունն անհամատեղելի են վերոհիշյալ մտքի հետ ... Հայերին կոտորելու համար նա (Քեմալը) ոտքի է հանել ո՛չ միայն իր տրամադրության տակ գտնվող սանջակի թուրքերին, այլ անգամ կոչ է արել բոլոր մահմեդականներին՝ ոտքի կանգնել հայ ժողովրդին խպառ ոչնչացնելու համար ... Բոլորովին կասկած չկա, որ նրա տված հրահանգի հիման վրա էլ կարավանները ենթարկվել են կոտորածի ...

Քեմալ բեյը ինքն է կազմակերպել կոտորածն ու ունեցվածքի կողոպուտը, քանի որ ինքն է նշանակել մի շարք անպաշտոն մարդկանց, որպեսզի ուղեկցեն կարավանները և միևնույն ժամանակ ստիպել է կարավանի պաշտոնական

---

[1] *Դ. Ե. № Մ 486-Մ 488:*

[2] *Նույն տեղում, № Մ 494:*

առաջնորդ Շյուքրի չավուշին, որ հնազանդվի ու կատարի նրանց հրամանները»[1]:

Ատյանին ներկայացվել էր անձամբ Քեմալի հրամանով սպանված 1500 հայի ցուցակը: Կար նաև վկայություն, որ նրա հրամանով մեռցվել էր ևս 3660 հայ: Այդ մասին 15-րդ զորաբաժնի հրամանատար Շեհաբէդդինը 1915 թ. հուլիսի 23-ին (այսինքն, երբ Յոզգաթում դեռ նոր էին սկսվել ջարդերը) գրում է Խ. Ռեջային. «...Մինչև հիմա Պողազլեանի գայմագամին հոգատարութեամբ Պողազլեանի եւ շրջականերու մէջ 3660 հայեր կոտորուած են»[2]:

Դատարանին Յոզգաթի երեսփոխան Շաքիրը 1918 թ. դեկտեմբերի 10-ին ցուցմունք տվեց. «Եոզգաթ գալէ առաջ Քեմալ պէյ արագ ընթացք տուած էր Պողազլեան գաւառակի տեղահանութեան գործին եւ տարագրութեան ընթացքին բազմաթիւ հայեր ջարդած էր եւ ջարդել տուած էր...»[3];

Քեմալը մահվան դատապարտվեց: Նրան կախեցին 1919 թ. ապրիլի 10-ին: Կախաղանից նրա մարմինը ոչ թե գերեզման տարվեց, այլ՝ Բայազիդի մզկիթի լվացարանը: Քեմալի թաղմանը մասնակցեց ավելի քան 10.000 հոգի: Նրա աճյունը մինչև գերեզմանատուն ուսերի վրա տարան:

Քեմալի մասին էրթյուրքը պատմել է. «Թյուրք ազգի այս հերոս զավակը թշնամի գրավումին զոհը լինելով կախաղան հանվեց»:

Քեմալի մահապատժի առնչությամբ թուրք պատմաբան Ս. Թանսուն գրում է, որ «Թեշքիլաթի» հազարապետ էրթիւրքը կազմակերպեց Քեմալի համազգային թաղումը:

Յոզգաթի լքյալ գույքերի հանձնաժողովը հրապարակեց ցուցակ հայերի այն ունեցվածքի, որոնց տիրացել էին կուսակցական և պետական պաշտոնատարներն անվճար՝ դրանց տերերին սպանելու միջոցով: Այս ցուցակն ընթերցվեց ռազմական դատարանում: Դա ներառում էր 470 կտոր առարկաներ 15120 դուրուշ գնահատված արժեքով (ներկա կուրսով՝ 5574 դոլար), չնայած դրանց իրական գինը 35,000 դոլար էր: Դատարանում Քեմալը ցուցմունք տվեց. «Թեւֆիկ եւ Ֆէյեազ պէյերը ակումբի անունով գնահատեր են ապրանքներու գինը» և նրանք «անկէ մեծ քանակութեամբ ապրանքներ» վերցրել էին «առանց հինգ փարա վճարելու»[4]:

Նեջաթին 1915 թ. սեպտեմբերի 10-ին ծածկագրեց Յոզգաթի իր ստորադասին, որ կուսակցության ընդհանուր կենտրոնը հանձնարարել է. «...Այսօր գրաւուելու վրայ եղող Լքեալ գոյքերու պատկանող ակումբի չէնքին հետ վերջերս առնուած կարասիները յանձնել լքեալ գոյքերու (յանձնախումբին), վարձել լքեալ գոյքերուն չպատկանող ուրիշ չէնք մը, զայն վերածել ակումբի...»[5]:

ՆԳ նախարարության քննիչ Նեղիմի «քննութենէն կը հասկցուի, որ Քեմալ պէյ ո՛չ միայն զանց ըրած է արգիլել Լքեալ գոյքերու կողոպուտը, այլ նաեւ ինք անձամբ մասնակցած է այդ գոյքերու մէկ մասի կողոպուտին, օգտագործած է

---

[1] «Takvim-i Vekai», 7 օգոստոսի 1919 թ., № 3617:

[2] Դ. Ե. № Մ 255:

[3] Նույն տեղում, № Մ 494:

[4] **Գրիկեր,** նշվ. աշխ., էջ 274:

[5] Դ. Ե. № Մ 539:

անոնց միւս մասը տեղացի քանի մը հոգիներու հետ համաձայնաբար կատարուած գործառնութեանց վճարումները գոցելու համար»[1]:

Ռազմական դատարանում բացահայտվեց հայերի բնաջնջման մեխանիզմը, դա ծրագրողներն ու իրականացնողները: Տրապիզոնի նահանգում, Յոզղաթի ու Բոզազլյանի գավառներում գործադրված կոտորածները կազմակերպած էր Միություն և առաջադիմություն կուսակցությունը: Դատարանի առջև կանգնած մեղադրյալները հայտարարեցին, թե «իրենք ոճիրները կատարելուց հետո տեղեկացան» կատարվածի նպատակը, սակայն իմանալուց հետո էլ «միջոցներ չձեռնարկեցին ջարդերը դադարեցնելու և ոճրագործներին դատապարտելու համար»[2]:

«Ոճրագործների հանցախումբը սերտ հարաբերությունների մեջ էր «Թեշքիլաթը մախսուսայի» հետ: Կոտորածները կազմակերպեցին Միություն և առաջադիմության կուսակցության կենտկոմի անդամներն ու ներկայացուցիչները, որոնք ոճիրների հանձնախումբ ստեղծեցին»[3]:

Դատարանում բերվեցին բազմաթիվ փաստեր, թե յուրաքանչյուր առանձին դեպքում ինչպես է իրականացվել ջարդը:

Սեբաստիայի ոստիկանապետը ցուցմունք տվեց, թե Բոզազլյանի ժանդարմաների հրամանատար Խուլուսին «իր 105 հրոսակների հետ մինչև Կամկալա տարագրված հայ կանանց հետևից գնացել և այնտեղ նրանց կողոպտել է: Հրոսակախումբը վերադարձել է» երեք կառքով, լցված ոսկիներով, գոհարեղենով, գորգերով և կարպետներով, որոնց մի մասը տարան կառավարչատուն[4]:

«Եոզղաթի մեջ տեղահանութիւն եւ կոտորած բառերը հոմանիշ էին եւ առհասարակ կոտորած բառը կը գործածէին»[5]: «... Թեհճիր կամ սեվքիյաթ բառերը կը գործածուէին առանց զանազանութեան, ինչպէս նաեւ քաթլ, թագթիլ կամ քաթլըամ թրքերէն բառերը»[6]:

Դատարանին ներկայացված էին հետևյալ ծածկագրերը, որոնք հաստատում էին այդ իրողությունը: 1914 թ. դեկտեմբերի 17-ին Խուլուսին հեռագրեց Կեսարիայի Յազըչինի պահակային ծառայության հրամանատարին. «Ձեր իրաւասութեան սահմանին մէջ հայրենիքին դաւաճանող կարգ մը հայեր տեղահանուած են, այսինքն՝ կոտորածի իմաստով»[7]:

Դատարանում հարցաքննությունը ևս նույն միտքը հաստատեց[8]: Բնաջնջման իմաստով էր գործածվում նաև ***«աքսորավայր ուղարկել»*** *բառակապակցությունը: Օրինակ, Շեհաբէդդինը 1915 թ. հուլիսի 8-ին հայտնեց. «...Այս գիշեր 134 հայեր իրենց աքսորավայրերը ղրկուեցան»[9]: Կամ Բո-*

---

[1] *Դ. Ե. № Մ 319:*

[2] *«Takvim-i Vekai», 7 օգոստոսի 1919 թ. (№ 3604):*

[3] *Նույն տեղում, 1919 թ. (№ 3772):*

[4] *Դ. Ե. № Մ 317:*

[5] *«Ժամանակ», 20 փետրվարի, 1919 թ.:*

[6] ***Գրիկեր,*** *նշվ. աշխ., էջ 263:*

[7] *Դ. Ե. № Մ 506:*

[8] *Նույն տեղում, № Մ 298, Մ 324:*

[9] *Նույն տեղում, № Հ 592:*

ղազյանի զինվորական հրամանատարի 1915 թ. հուլիսի 22-ի ծածկագիրը. «...Այս գիշեր գիւղերէն եւ գիւղաւաններէն ձեռք անցուած կասկածելի հայերէն 14 հոգի իրենց աքսորավայրը ղրկուեցան»[1]: Իսկ երբ Խ. Ռեջան հարցնում է, թե նրանց ո՞ւր ուղարկեցին, ստացվում է պատասխան. «...Վերոյիշեալ հայերը կասկածելի ըլլալու համար զինայր տասնապետ Հիւսէին Ավնիի հոգածութեամբ ջարդուեցան»[2]:

Յողղաթում, ինչպես ամենուրեք Թուրքիայում, հայերի տեղահանություններն ու ջարդերը կատարվում էին ըստ ՆԳ նախարարությունից ստացված հրամանների: Քեմալի ստացած հրամաններից մեկն ասում էր. «Հարկ է 24 ժամէն տարագրել գաւառիդ մէջ ապրող հայերը: Ասոնց բնակավայրը պիտի ըլլալ Սուրիան»[3]:

Ս. Թանսուն աշխատելով արդարացնել Քեմալին, բազմաթիվ փաստեր է բերում ապացուցելու, որ հայերի բռնագաղթի և ոչնչացման որոշումն ընդունել էին երիտթուրքական կենտրոնն ու Բարձր Դուռը, և տեղական իշխանությունները պարտադրված էին կատարել այդ որոշումը: Դրա համար էլ նա, ինչպես նաև շատ ուրիշ թուրքեր Քեմալին համարում են ոչ թե հանցագործ, այլ՝ հերոս, անմեղ զոհ: «Թյուրք ազգի այս հերոս զավակը թշնամի գրավումի զոհ լինելով կախաղան հանվեց: Նրա հիշատակը պետք է հավիտյանս ապրի թյուրք ազգի սրտում»[4]: Կամ «Հրամանը ստացվում էր բարձրագույն հեղինակությունից, նույն ինքը՝ Միություն և առաջադիմություն կուսակցության ընդհանուր կենտրոնից: Որևէ մեկը չէր կարող ընդդիմանալ այդպիսի հրամանին»[5]: Եվ ապա «Ինչպե՞ս կարող էր մի փոքր քաղաքի գայմագամը հակառակվել ծածկագրի հրամանին: Ինչպե՞ս կարող էր անտեսել նման հրամանը»: Հեղինակը Քեմալի միակ հանցագործությունը համարում է այն, որ «գործադրեց իրեն տրված հրամանը»[6]: Նույն համոզմունքին էր նաև ինքը՝ Քեմալը, որը դիմելով ամբոխին ասաց. «Սիրելի՛ հայրենակիցներ, ես մի թուրք պաշտոնատար եմ: Ես կատարեցի ստացածս հրամանը: Իմ պարտականությունը կատարեցի բարեխղճորեն: Երդվում եմ, որ ես անմեղ եմ»[7]:

Այդ հոգեբանությունը, բնականաբար, արագ տարածում գտավ: Ջարդարարներն իսկույն կառչեցին դրանից՝ չքմեղանալու համար: Դեռ ավելին, նրանց հաջողեցին այդ միտքն ընդունել տալ նաև լայն զանգվածներին և ջարդարարներին դատապարտողների չուրջ ահաբեկիչ մթնոլորտ ձևավորել: Նրանք «Պոլսի մութ թաղերում ստեղծեցին թաքստոցներ և պաշտպանություն էին ստանում նույն «Թեշքիլաթը մախսուսայի» ահաբեկիչներից, որոնք երդվել էին սպանել բոլոր նրանց, ով հանդգներ ձերբակալել հայերի կոտորածներն իրա-

---

[1] Դ. Ե. № Մ 511:

[2] Նույն տեղում, № Մ 511:

[3] **Գրիկեր,** նշվ. աշխ., էջ 335:

[4] **Tansu S.,** Iki Devrin Perde Arkasi, Istanbul, 1964, s. 301.

[5] Նույն տեղում, էջ 297:

[6] Նույն տեղում, էջ 298:

[7] Նույն տեղում, էջ 300:

կանացրած անմեղներին»[1]: Նրանք գործում էին այդ կազմակերպության ղեկավարներից Հ. Էրթուրքի հրամանատարության տակ: Մահմեդական ահաբեկիչները ո՛չ միայն պաշտպանում էին ջարդարարներին, այլև իրենց վտանգելով, հաշվեհարդարի էին ենթարկում նրանց մեղադրողներին: Թանսուն այդպիսիներին անվանում է «խիզախ ծնված մարդիկ»: Ինքը՝ Քեմալը համոզված էր. «Իմ ոգով տոգորված Թուրք և իսլամ եղբայրներս պետք է կոթող կանգնեցնեն գերեզմանիս վրա և գրեն հետևյալ տապանագիրը՝ Ազգին ու հայրենիքի համար նահատակված Բողազլյանի գայմագամ Քեմալի հաղթական ոգուն»[2]:

Այս խնդրի շուրջ լուրջ վիճաբանություններ եղան նաև դատավարության ընթացքում: Դատարանի նախագահ Մ. Հայրեթը դեմ էր մահապատժին, ինչը ո՛չ միայն նրա համոզմունքն էր, այլ նաև հետևանք դրսից կատարված հզոր ճնշման՝ վիժեցնելու ցեղասպանների նկատմամբ արդարադատության գործադրումը: Այս մտայնությունը տիրապետող է նաև մեր օրերի Թուրքական որոշակի շրջաններում: Սադի Գոչասը իր «Հայերը պատմության մեջ և Թուրք-հայկական հարաբերությունները» գրքում գրում է. «Այս անմեղ պաշտոնատարներից մեկը Քեմալ բեյն էր՝ Բողազլյանի գայմագամը: Նրա վերջին կտակը վկայում է, որ նա չիտակ մարդ էր և բարի օրինակ ծառայեց բոլորին»[3]:

«Tercuman»-ը 1977 թ. մարտի 31-ին գրեց. «Զինադադարից հետո երկու անմեղ գայմագամներ՝ Նուսրեթ և Քեմալ բեյերը Պոլսում կախաղան հանվեցին»:

Նման մոտեցման համար հիմք էր նաև մահմեդական ավանդական հոգեբանությունը՝ «Հազար Թուրքից մեկը չի գտնի, որ քրիստոնյաներին ջարդելու համար որևէ Թուրք արժանի է կախվելու»:

Սալիմը դատարանում ցուցմունք տվեց, որ երբ Սարի Համզայում 13 հայ սպանվեց և հինգը վիրավորվեց ու ոճրագործները ձերբակալվեցին, Թևֆիկը նրանց ազատ արձակեց, միաժամանակ Զափանլրի մոտ սպանել տվեց բանտում գտնվող հայերին՝ հայտարարելով, Թե նրանք փախել են: Նա ուղեկցեց առաջին կարավանին (472 հոգի) և հայերին հարկադրեց ընդհանուր փոս փորել նույն՝ հայերին այդ փոսում Թաղելու համար:

Սալիմը Քեմալի մասին ասել է, Թե այդ Թուրքն իր «արբանյակների հետ գործեց ամեն տեսակի խժդժություններ և գարշելի արարքներ, ամենուրեք հպարտանալով, Թե իրենց ոճիրները ավելի հերոսական ու փառավոր էին, քան արքայության ընակիչ սուլթան Սելիմ Յավուզի աշխարհակալությունը»:

80 հոգանոց կարավանը հարձակման ենթարկվեց, միայն 12 հոգի փրկվեց: Հացահատիկի մթերակայան փոխադրող հայ գյուղացիները հարձակման ենթարկվեցին, 15 հոգի սպանվեց: Ջարդի կազմակերպիչներն էին Կրզրլ Կոջայի քաղաքապետ Օսման Քյաղրմը և ոստիկանապետ Բեհջեթը: Քեմալը ժանդարմների հրամանատարի օգնական Նուումանին հրամայեց ջարդել Սորգուն գյուղի՝ իսկ Ռիզային՝ Սարայի շրջանի հայերին: Թևֆիկն ու իր համախոհները

---

[1] Tansu S., նշվ. աշխ., էջ 220-221:
[2] Նույն տեղում, էջ 301:
[3] Նույն տեղում, էջ 302:

գարչելի սպանություններ գործեցին Զակմակ, Թերզիլի, Կարա Յակուբ և մի չարք այլ գյուղերում: «Զինայրերը սարսափած չատ աւելի իրենց գործած ոճիրներէն, քան այն պատիժներէն, որոնց իրենք ենթակայ են, պահանջեցին, որ հրամաններն իրենց տրուէին գրաւոր: Իրենց պատասխան տրուեցաւ, թէ հայերու վիճակին բաժնեկից պիտի ըլլային, եթէ երբեք պնդէին իրենց տեսակէտին վրայ...»: Երբ Շեհաբէդդինին ասացին, թե հայերը որևէ հանցանք չեն գործել, որ արժանի լինեն պատժի, նա հրամայեց «հայրենիքի այդ դաւաճանները, իսլամի թշնամիները, կոմիտէներու կասկածելի անդամները բնաջնջել»:

Քեմալը ամեն «իրիկուն Աւագ հաշուակալ Վեհիպ էֆենտիի տունը կը հրաւիրէր քաղաքապետարանի տնօրէն Ահմէտ, նախկին առաջին քարտուղար Մուսթաֆա Պէյշ Սաիտ Պէյ եւ ուրիշ գործակիցներ, որոնք քանի մը գաւաթ կոնծելէ ետք կ'որոշէին երկրորդ օրուան իրենց գործունէութիւնը: Այսպէս ան կոմիտէի «Ազգային ձգտումները» կ'իրագործէր»:

Հայերի հանդեպ գործադրվածները հրեշավոր էին[1]:

Դատավարության ժամանակ Քեմալին տրվեցին մի չարք հարցեր, որոնք չատ ավելի մեղադրանքի նշանակություն ունեին: «Դուն (երիտթուրքական) ակումբը անձամբ հաստատեցիր վաճառական Աթանասեանի տան մէջ, որ տեղահանութեան պատրուակով սպաննուեցաւ ... Դուն առանց փարա մը վճարելու գրաւեցիր անոր տունն ու կարասիները ... Քու յայտարարութեանդ համաձայն՝ Պողազլեանէն եւ շրջակայ գիւղերէն 1500 եւ աւելի հայեր կոտորուած են»[2]:

Մի քանի մեջբերումներ Շեհաբէդդինին տրված հարց-հաստատումներից: «Զօրաբանակին տեղեկագրած ես, 12 օգոստոս 1915 թուակիր հեռագրովդ (ասում ես), որ Եոզղաթէն տեղահանուած հայերն իրենց ընտանիքներուն հետ ամբողջովին կոտորուած եւ բնաջնջուած են Եոզղաթի եւ Պողազլեանի ճամբուն վրայ»... «130 հայեր, որոնք Եոզղաթէն Պողազլեան աքսորուած էին, կոտորուած են ճեվիզլի խանի եւ Գազալէ խանի միջեւ Պողազլեանի զինայրերու գունդին կողմէ... 923 կարգաթիւ ծածկագիր հեռագրիդ համաձայն, կը հասկցուի, որ այս անձերը, որոնց ընկերացեր ես հաւանաբար փախստականներու խումբով մը ... անոնցմէ հինգ հոգի սպաննուած են ընկերացողներու կողմէ: Կ'իմացնես, որ 40 փախստական հայեր կոտորուած են փարախի մը մէջ Քելլերի մօտ, ուր թեթև բախում մը տեղի ունեցած է հայերու եւ գունդին միջեւ եւ թէ 25 հոգիներ միայն մեռած են ... Գայա Ալթը անունով վայրին մէջ տուն մը ապաստանած 10 հայեր ձերբակալելու համար նոյն տունը այրուած է ... Ֆէյեազ Պէյ եւ գլխավոր հաշուակալ Վէհիպ էֆէնտի կազմակերպած են կողոպուտը հայ գիւղերու...

Պողազլեանէն եւ շրջակայ գիւղերէն 3660 հայեր կոտորուած են»[3]:

Դատարանում Շեհաբէդդինը նաև ցուցմունք տվեց, որ մահմեդական բնակչությունը տեսնելով Զաթ և Թերզիլի գյուղերի հայության հանդեպ

---

[1] Դ. Ե. № Մ 574-577:

[2] Դ. Ե. № Մ 239-240:

[3] Նույն տեղում, № Մ 271-Մ 272:

ժանդարմների գործադրած վայրագությունները, «հայ կիներու եւ մանուկներու ճիչերն ու աղաղակները», աղաչեց նրանց խնայել և թույլ չտալ, որ «հրոսակները կոտորեն զանոնք», բայց Թևֆիկն արհամարհեց նրանց խնդրանքը[1]:

Թևֆիկը Յոզղաթում սպանելով 8500 հայ և տիրանալով նրանց ունեցվածքին, իր գազանությունները տեղափոխում է գյուղեր: Նրա ավազակները Կումկույու գյուղում սպանեցին 600 հայ, հրդեհեցին 150 տուն: Նրանք, ինչպես ճտերի հետ են վարվում, մասնատում էին երեխաների մարմինը, սպանում հայերին, որտեղ որ նրանց հայտնաբերում էին: Նա ինքն էր բռնաբարում կանանց ու աղջիկների, անձամբ զբաղվում կողոպուտով:

Յոզղաթում պաշտոնավարելու ժամանակ Թևֆիկը 35 հազար դասալիքներից ամեն մեկից հինգական ոսկի գանձեց՝ նրանց չպատժելու և նորից բանակ չուղարկելու համար:

Իր կոտորած և կոտորել տված հայերից և իր պաշտպանած զինվորական դասալիքներից հազարավոր ոսկիներ էր դիզել, հավաքել էր գոհարեղեններ, թանկագին առարկաներ, գորգեր և կարպետներ:

Թևֆիկ բեյը գյուղացիներից կազմված ժողովրդին աճուրդով վաճառել տվեց յոզղաթցի մեծահարուստ հայերից Աբգարյանին պատկանող 5000 ոսկի արժող ագարակն ու ջրաղացը..

Թևֆիկ բեյը մի հրեշ է, արյան ծարավ դիվահար[2]:

Բնութագրական մի երևույթ. Թևֆիկը լինելով հանդերձ ոստիկանության հրամանատար, ներկայանում էր որպես Իթթիհադի ներկայացուցիչ: «Երբ կառավարությունը հայերը աքսորելու հրաման արձակեց, այս մարդն իր շուրջը հաւաքեց ոճրագործներու եւ ասպատակներու վոհմակ մը, սկսաւ իր հրոսակային գործունէութիւնը»: Մուֆթի Ռիֆաթը դատարանում հայտարարեց. «Եոզղաթի 35.000 հայերը կոտորուեցան...

Սկիզբը Թեւֆիք Պէյ Եոզղաթի հայերուն 15–75 տարեկան այր մարդիկը ... երեք ժամ հեռու Թաշ Փունար գիւղը աքսորեց, զանոնք կացիններով սպաննել տուաւ եւ անոնց բոլոր գոհարեղէններն ու ինչքերը իր տունը փոխադրել տուաւ: Կոտորածը տեղի ունեցաւ վայրենի աղաղակներով:

Ապա ... պատրուակելով Կեսարիա աքսորել, հաւաքեց 1800 կիներ, աղջիկներ եւ անմեղ մանուկներ, անոնցմէ գեղեցիկները քիւրտերուն եւ չերքէզներուն համար զատեց, անոնց բոլոր գոհարեղէնները կողոպտեց, եւ զանոնք առաջնորդելով ... Քելլեր գիւղի չրջակայքը կացինահար անել տուաւ, անոնց դիակները նետել տուաւ Գարասու գետին մէջ» և իր ձեռքի տակ գտնված աղջիկները բաժանեց իր հրոսակներին:

Այս կամ այն վայրում թաքնված հայ կանանց ու երեխաներին էլ հայտնաբերեց ու «ասոնք ալ կտոր-կտոր ընել տուաւ ոչխար մորթելու պէս: Ագտաղ-Մատենի եւ Պողազլեանի ենթակայ բազմաթիվ հայ գիւղերու բնակիչները իրենց տուներով հուրի ճարակ ըրաւ...»:

---

[1] Դ. Ե. № Մ 506:

[2] Նույն տեղում, № Մ 469:

Զաթի գյուղացիները առանց դիմադրության հանձնվեցին և աղաչեցին. «Մեզի սպաննէ՛, սակայն խնայէ՛, ներէ՛ այս կիներուն և մանուկներուն»: «Այս խօսքի վրայ գաղանաբարոյ (Թևֆիկը) զանոնք հրացանի բռնել տուաւ»: Այդ չրջանների «բազմաթիւ հայ գիւղերու տուներն ու բնակիչները այրելէ ետք», նա գնաց մյուս գյուղերը: Հափշտակած թանկարժեք իրերն ու զարդերը «կառքերու վրայ բեռցուցած եւ փոխադրել տուած էր մաս առ մաս Պոլիս եւ Էսկիշեհիր...»[1]:

Ռումտիկին գյուղում դեպքերը զարգացան հետևյալ կերպ: Նախ ձերբակալեցին ու անհայտ կորցրեցին գյուղի 40 մտավորականներին ու հեղինակություն վայելող անձանց:

Գյուղի խանում մեծ թվով մարդիկ էին փակված: Նրանց ծեծի ու խոշտանգումների էին ենթարկում, զենք էին պահանջում: «Գաւազանի հարուածներուն ձայնը, մարդոց ճիչն ու աղաղակը» լսվում էին անգամ դպրոցում: Խոշտանգումների տարածված եղանակներն էին «եղունգները քաշելը, անութին տակ խաչած հաւկիթ դնելը, ծեծի տակ զգայազուրկ դարձնելը»: Ապա բոլորին քշում են դեպի Կեսարիա[2]:

1915 թ հուլիսի 12-ին գյուղ են լցվում մեծ թվով ոստիկաններ, չեթեներ մերձակա թուրքական գյուղերից հրոսակներ: Մունետիկը հայտնում է, որ 18-65 տարեկան այրերը պատրաստ լինեն զինվորագրվելու և հավաքվեն հայկական եկեղեցում: Հավաքվեցին և նրանց մաս առ մաս գյուղից տարան թևերը կապած և սպանեցին թուրքական Թորաման գյուղի մոտերքի Ֆըրընդերե ձորում:

Երկու օր հետո մի ուրիշ կարավան, նույնպես կապկպված, տարան և սպանեցին գյուղի հարավային կողմի այգիներում: «Անձրեւի հեղեղատներ են գոյացած խորխորատներու մէջ, զոհերը ծունկի բերելով նախ ամբողջութեամբ կը կողոպտեն, կը մերկացնեն եւ ապա ունեցած բոլոր տեսակի մահաբեր գործիքներով կը կտրեն գլուխները ... Երկու օրէն դիակներուն հոտը աշխարհ կը բռնէ ... Թուրքեր կը պահանջեն դիակները հողով ծածկել»[3]:

Հաջորդը կանայք ու երեխաներն էին: Ոստիկաններն ու խուժանը տնից տուն էին անցնում և բնակիչներին բռնությամբ դուրս հանում: Հենց կարավանը գյուղից դուրս էր գալիս՝ սկսում էին առևանգել աղջիկներին: Դեռահասներին նույնպես տանում էին՝ ծառա դարձնելու:

Մնացածներին տարան Օրոցիկ լեռան Օթման ձորը, բոլորին լրիվ կողոպտեցին ու ջարդեցին: Պատահմամբ փրկված մի պատանի պատմել է, թե ինչպես կատարվեց այդ սպանդը:

Մեկ չաբաթ անց հավաքեցին նաև թաքնվածներին, որոնց հեռու չտարան, այլ՝ սպանեցին գյուղի կողքի հեղեղատում: «Բոլոր չները կատղած էին: Դիակները քաշելով-քաշքշելով գիւղ կը բերէին եւ փողոցներուն մէջ ազատ-համարձակ կը լափէին»:

---

[1] Դ. Ե. № Մ 469:

[2] **Եափուճեան Հ.,** նշվ. աշխ., էջ 152:

[3] Նույն տեղում, էջ 153:

Ավարտական փուլ հանդիսացավ հափշտակված կանանց, աղջիկների և երեխաների կրոնափոխությունը: Դա շատ պարզ ծես էր: Հայը ասում էր՝ «Ճշմարիտ կրոնը ընդունեցի և հինը լքեցի»: Կրոնափոխվածին նոր՝ թուրքական անուն էին տալիս:

Ռումտիկինը մեծ գյուղ էր: Ուներ 750 տուն հայ և 250-300 տուն թուրք բնակիչներ: Մինչև պատերազմի սկսվելը հայերն ու թուրքերը հաշտ էին ապրում, ապա հարաբերությունները բարդացան, իսկ բռնագաղթին նախորդող ամիսներին դարձան բացարձակ թշնամական: Եղան մի քանի խոշոր բախումներ: Նախահարձակը մշտապես թուրքերն էին: Ոչ քիչ դեպքերում հայերը հաջող հակահարված էին տալիս: Հարաբերություններն այնքան սրվեցին, որ տեղի թուրքերն ամենաեռանդուն մասնակցություն ունեցան համագյուղացի հայերի կողոպուտին և սպանությանը:

1915 թ. հուլիսի 2-ին պաշարվում է Թերզիլի հայկական գյուղը: Յոզղաթից գյուղ է գալիս Ղասըմ բեյը՝ իմամի ու 70 ոստիկանների հետ: Գյուղի մինչև 90 տարեկան տղամարդկանց հավաքում են եկեղեցում և դպրոցում՝ իբր պետական լուր հաղորդելու համար, բայց բոլորին բանտարկում են, իսկ գիշերը նրանցից չորսական հոգու հանում են, իրար կապում և ոստիկանների հսկողությամբ գյուղից դուրս տանում: Մի կին ընկնում է իր աքսորվող տղայի գիրկը, բայց տեղն ու տեղը սրախողխող են արվում թե՛ ինքը և թե՛ տղան: Գյուղից դուրս տարվողներին սպանում էին կացիններով, սրերով, գերանդիներով զինված խուժանը, որի ուղեկցությամբ հայերին տարան ձորի մեջ գտնվող Արբասի ջրաղացի մոտ: Լսվեց ազդանշան՝ ատրճանակի կրակոց և հրաման. «Ջարդէ՛ք այս գյավուրներին, խալիֆի հրամանն է»: Խուժանը հարձակվում է կապկպված հայերի վրա ու խոշտանգելով բոլորին՝ սպանում: Ապա նրանց արյունոտ հագուստները ցցերին խփած վերադառնում են գյուղ՝ գոչելով. «Տեսե՛ք ձեր տղամարդկանց հիշատակները, ընտրե՛ք ճշմարիտ կրոնը. ձեզ մեր մեջ կբաժանենք... Փրկվէ՛ք մահից»: Խուժանը հարձակվում է տների վրա, սպանում ու կողոպտում: Բռնաբարեցին նույնիսկ 10 տարեկանից փոքր աղջիկներին և ապա նրանց մարմինները բզիկ-բզիկ արեցին: Ունելիները չիկացնելով՝ դրանք կանանց ստինքներն էին խոթում՝ պահված դրամների տեղը իմանալու համար: Շեն գյուղը կործանվեց:

Գում Գույու հայաբնակ գյուղի 150 տներ հրդեհվեցին բնակիչների հետ միասին: Հրդեհը երեք օր տևեց: Փրկվածները բռնի խլամացվեցին և թուրքական գյուղերն ուղարկվեցին:

Բողազլյանի բնակիչները հուլիսի 5-ին վերը նշված ջրաղացի մոտ մեծ թվով դիակներ տեսնելով, սարսափած, լուրը հասցնում են գյուղաքաղաք, որի ավագանուց մի քանի հոգի գնում է Քեմալի մոտ՝ իմանալու եղելությունը: Նրանք անմիջապես ձերբակալվում են:

Բողազլյանը չրջապատվում է: Տղամարդկանց բոլորին փակում են բանտում ու զինվորական մթերանոցում, իսկ գիշերը նրանց իրար կապած հանում են ու խուժանի հետ միասին տանում Գուրդ Դերեսի խոր ձորը և հոշոտում: Դահիճները, վերադառնալուց հետո, լրիվ ոչնչացնում են մի տան մեջ հավաքված բոլոր կանանց և նույնիսկ կրծքի երեխաներին:

Հուլիսի 9-ին ոստիկանները, չերքեզները և 20 հազար խուժան պաշարում են 600 տուն ունեցող հայկական Պուրնու Գչլան գյուղը: Ոստիկանապետը մի խմբով գյուղ է մտնում և պահանջում իսլամ ընդունել: Մահմեդական դառնալու համար նա բավարար է համարում գյուղացիների անցնելը չենքի կատարին փակցված դրոշի տակով: Հայերը գիտեին, որ դա խաղ է, բայց ճար չունեին և անցան դրոշի տակով: Տասնհինգից բարձր տարիքի բոլոր տղամարդկանց ձերբակալեցին: Խուժանը գյուղ ներխուժեց: 120 հոգի սպանվեց եկեղեցում, մյուսներին 4-5 հոգու իրար կապած տարան ջրաղացները, և փամփուշտը խնայելու համար, բոլորին սպանեցին կացնով: Ամբողջ օրը նրանց քշում էին, պատմել է ականատեսը, և երբ երեկոյան հասան մի ձորի, կենդանի մնացած տղամարդկանց, կանանց և երեխաների աչքի առաջ սպանեցին և ձորը նետեցին, իսկ վերջիններին տարան թուրքացնելու[1]:

Օգոստոսի 1-ին պաշարվում է Յոզղաթ քաղաքի չուկան ու բոլոր հայերը ձերբակալվում են: Փակվում են քաղաքի կամուրջները, ձերբակալվում է մտավորականությունը, որոնց 18 ժամ անց կապկպած հանում են քաղաքից և բոլորին (ավելի քան հազար հոգի) սպանում: Քաղաքում մնացածներին հրամայում են երեք օրից ճամփա ելնել՝ «Հալեպ հասած իրենց տղամարդկանց մոտ գնալու» համար: 18.000 կին, ծեր ու երեխա ճամփա են ելնում:

Հայկական Քելլեր գյուղի մոտերքը նրանց կանգնեցնում և հիմնավորապես կողոպտում են: Ապա տղամարդկանց առանձնացնում են, ձեռքերը կապում և մոտակա ձորում սպանում: Մեկն այդ տեսնելով՝ աղմուկ է բարձրացնում: Սկսվում է մի ահավոր տեսարան՝ ոստիկանությունն ու խուժանը հարձակվում են անզեն ամբոխի վրա և աջ ու ձախ կոտորում, ծծկեր երեխաներին ոտներից քաշելով մարմինը երկու մասի բաժանում, ոտներով գանգերը ջարդում[2]:

«Տեղի կ'ունենան հրապարակային լկումներ, գլխատումներ, մարմնի զանազան մասերը կացինով կտրել, յօշոտել: Ծծկեր երեխաներու ու մանուկներու երկու ոտքերէն քաշել եւ երկու մասի բաժնել, ոտքերով անոնց դիակները ճզմել»: Իսկ Քեմալը, ջարդվողների ձայները չլսելու համար, մի կողմ քաշված, զուռնա էր նվագել տալիս:

Քեմալը գոչեց. «Ում մոտ դրամ կամ զարդեղեն կա՝ թող հանձնի, ով հանձնի՝ ներման կարժանանա և տուն կվերադառնա: Սա պատվո խոսք է, երդվում եմ նիկյահիս և սուրբ Ղուրանին վրա»[3]:

Դրամն ու զարդեղենը հավաքելուց հետո սկսվեց խուզարկությունը, որը չորս օր տևեց: Ամեն ինչ խլեցին:

Դժոխային տեսարանին չդիմանալով՝ չերքեզ աշիրեթապետ Հաջի Արսլանն ասում է.

– Բե՛յ էֆենդի, Ղուրանի ո՞ր մասում է գրված, որ կարելի է անմեղ մանուկներին այսպես սպանել: Դու գթություն չունե՞ս:

---

[1] «Եոզղատ», էջ 25:

[2] «La Renaissance», 12 փետրվարի 1919 թ.:

[3] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 327:

Քեմալը պատասխանում է.

– Եթե գիտես, թե գթության երակը ո՛րն է, ցո՛ւց տուր, որ նայեմ ու անմիջապես կտրեմ՝ դեն նետեմ[1]:

Ջարդերից հետո հայերի տները չաբաթներ շարունակ կողոպտվում էին: Թուրք կանայք իրենց անչափահաս երեխաներին նույնպես ջարդի վայրն էին տարել, որպեսզի վարժվեին արյան հոտին:

Քեմալն այս ամենով չի հագենում: Նա 1916 թ. փետրվարին կազմակերպում է այս կամ այն պատճառով փրկված, մասնավորապես մահմեդականների տներում գտնվող կամ թաքնված հայերի ջարդ, մահապատժով սպառնում այն թուրքերին, որոնք այդ հայերին չէին հանձնի: Այս երկրորդ ջարդին զոհ գնացին անգամ թուրքերից հղիացած հայ կանայք: Շատ հայուհիներ թունավորում, սպանում էին իրենց զավակներին:

Բնաջնջման, թուրքական գազանության դեմ բարձրացան Զաթ, Էյլենջե և Գում Գույու հայաբնակ գյուղերը: Զաթն Անատոլիայի Ջեյրանն էր: Գյուղի չուրջ 1000 երկսեռ զինված երիտասարդներ սար բարձրացան:

1915 թ. ամռան մի օր Զաթ ժամանեց մի հիանպետ և պահանջեց դուրս գալ տարագրության: Հայերը հրաժարվեցին նրա հրամանը կատարել: Զավուչի կարգադրությամբ՝ զինվորները կրակ բացեցին հայերի վրա: Զաթեցիները չընկրկեցին, նրանք սպանեցին թե՛ չավուչին և թե՛ նրա զինվորներին: Վերցնելով նրանց զենքերը, տղամարդիկ բարձրացան Զաթի լեռը, որտեղ ստեղծեցին ռազմական ճամբար և հինգ տարի կռվեցին թուրքերի դեմ: Նրանց ջարդելու համար թուրքերը մեկը մյուսի հետևից հարձակումներ էին գործում, բայց հայերից հակահարված ստանալով ու զոհեր տալով՝ փախչում էին: Իսկ չաթեցիների ռազմական ջոկատը, համալրումներ ստանալով, գնալով մեծանում էր, զինվում սպանված և վիրավորված թուրքերի զենքերով: Ջոկատն այնպիսի սարսափ էր տարածել, որ Բողազյանի գայմագամը բանակցությունների մեջ մտավ հայերի հետ՝ խոստացավ ջոկատին սննդամթերքով ապահովել, պայմանով, որ չհարձակվի կազայի վրա: Թուրքական 5000 հոգանոց մի զորամաս չրջապատեց Զաթ լեռը, բայց նորից անհաջող, մեծ կորուստներ տվեց ու հեռացավ[2]:

Զենքի են դիմում նաև մյուս երկու գյուղերը: Գամ Գույուն ինքնապաշտպանության կանգնեց և այդ գործում ստացավ հարևան հայկական բնակավայրերի օգնությունը: Գյուղը մի քանի անգամ հետ մղեց մեծաքանակ թշնամու հարձակումները: Գումգույուցի քաջերը Հաջի բեկ Փափազյանի գլխավորությամբ, իմանալով, որ էյլենջեցիները թշնամուն մի քանի հակահարվածներ տալուց հետո այլևս անզոր էին դիմադրելու, կազմակերպում են այդ գյուղի բնակչության տեղափոխությունը Գում Գույու, ինչն ավելի է հզորացնում վերջինիս պաշտպանունակությունը: Կենտրոնացվում է գյուղում եղած սննդամթերքը, մտցվում հասարակական սննդի համակարգ: Հավաքում էին թշնամու

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 328:

[2] «Կիլիկեան տարեցոյց», էջ 277, 281:

արձակած գնդակների պարկուճները, ձուլում, փամփուշտ պատրաստում: Նրանք ձեռք գցեցին կապար ձուլելու սարք և մի թնդանոթ, որով ռումբի փոխարեն քար էին կրակում: Կռվում էին փամփուշտը խնայելով: Գյուղը դիմադրեց երեք ամիս: Նրա շրջափակման օղակը գնալով սեղմվում էր: Թուրքերը կտրեցին նաև խմելու ջուրը: Չկար ո՛չ հաց և ո՛չ էլ ջուր: Թշնամին հաջողում է գյուղի մի քանի տներ հրդեհել: Հայերը որոշում են մեռնել, բայց չհանձնվել: 250 կին նախ պարանախեղդ արեցին իրենց փոքրիկներին, ապա կախվեցին: Պաշարվածներից ոմանք կարողանում են կրակի օղակից դուրս գալ, մի քանիսը մտնում են քարայրը: Թուրքերը ծուխ են մղում քարայրը և գերի են վերցնում ութ հոգու, որոնցից մեկը՝ կին:

Գում Գույուն հիմնովին կործանվեց, բնակչությունը՝ կոտորվեց:

Լեռ բարձրացած չաթեցիները շրջապատվում են թշնամու մեծ ուժերով: Թուրքերը պահանջում են հանձնել զենքերը: Հայերը պատասխանում են. «Մենք զենք չունենք»: Թուրքերը գերի են վերցնում 80 հերոսների, նրանց տանում Յոզղաթ, բայց ձերբակալվածները կարողանում են փախչել:

Զաթում մնացած 1000 հայերի՝ կին, երեխա, ծեր, քչում են Աղյորենի ձորն ու կոտորում: Լուրը հասնում է 1000 հոգանոց հայդուկային խմբի ղեկավար Ադամ Զավուշին: Հայդուկները սլանում են ջարդի վայրը, սակայն տեղ են հասնում ուշացած:

«Եղել է նաև դիմադրություն,- պատմում է Գ. Պալաքյանը,- Զաթ լեռան անտառներում ամրացած հայերը չուրջ մեկ տարի կռվեցին ջարդարարների դեմ: Դրանք Զաթի մերձակա գյուղերի հայերն էին, որոնք տեսնելով շրջակա գյուղերի տեղահանությունը, սար են բարձրանում տարագրությունից խույս տալու համար: Ու երբ ոստիկանները գյուղ են գալիս տեղահանելու, այնտեղ բացի մի քանի շներից ու աքաղաղներից՝ բան չեն գտնում: Լեռ բարձրացած հայերի դեմ ուղարկվում է 100 կանոնավոր և 1000 անկանոն զորք՝ լեռնային թնդանոթներով: Սակայն հայերը Սամվել (Ինճյան) չավուշի հրամանատարությամբ ամրանում են անտառներում ու հերոսական պայքար մղում: Նրանք քարայրում կուտակում են սննդամթերք, իսկ երբ դա սպառվում է, ասպատակում են թուրքական գյուղերը և սննդամթերք հայթայթում: Նրանք նույնիսկ թնդանոթ ունեին, որը լցնելով վառոդախառը քարերով՝ անհնար էին դարձնում թշնամու մոտիկանալը: Այդ հայերը դիմադրեցին 1915 թ. օգոստոսից մինչև ... պատերազմի ավարտը՝ Մուդրոսի զինադադարը և զենքերով գնացին հանձնվեցին Հալեպում Անտանտի զորքերի հրամանատար Ալեմբիին, որը զենքերը թողեց քաջերին»[1]:

Թուրքերի հետ այս խմբի բախումը տեղի ունեցավ նաև Սերեխլուի ձորում և ավարտվեց հայերի հաղթանակով: Նրանք քիչ անց հարձակվում են ոստիկանատան վրա, սպանում մեծ թվով թուրքերի և ավար ձեռք ձգում:

Գլխավոր բախումը տեղի է ունենում Ագ Դաղում: Երկու ամիս շարունակ հայերը, լինելով շրջափակման օղակի մեջ, թշնամու գրոհները հետ էին մղում:

---

[1] **Պալաքեան Գ.**, նշվ. աշխ., էջ 234-235:

Նրանք 1200 հոգի էին, այդ թվում նաև կանայք ու երեխաներ: Հայդուկների տեղը չմատնելու համար մայրը խեղդում էր լացող երեխային, վար նետում ժայռերից: Թշնամուն հանձնվել չէր կարելի: Սակայն սկսվեցին սոսկալի ցրտեր, իսկ թուրքերը ամեն տեսակի խոստումներ էին տալիս: Ոմանք հանձնվեցին ու սպանվեցին, իսկ 500 հոգի՝ մնացին: Նրանց միացան նաև Գում Գույուի հերոսամարտի 8 քաջերը:

Թշնամու ճանկը բոլորով չընկնելու համար բաժանվում են վեց խմբի և հարձակումներ գործում լեռներում և բնակավայրերում: Սկսեց ձյուն տեղալ, ինչը ծանրացրեց պարենավորման գործը: Պարտիզանները հողի մեջ խոռոչներ բացեցին՝ ձմեռն անցկացնելու համար: Գյուղերից պարեն էին կողոպտում՝ տալով նաև զոհեր: Այդ գործողություններից մեկի ժամանակ գերի վերցրեցին ջարդարար Օսման փաշային ու նրան դատեցին: Դատավարության ժամանակ Օսմանն ասաց. «Այո, շատ անմեղների արյուն թափեցի, Աստված ինձ պատժեց: Ես արժանի եմ... Միայն աղաչում եմ ինձ ոչ թե սպանել, այլ երկու թևերս կտրեք, որ ամբողջ կյանքումս տանջվեմ»: Սպանեցին:

Ջարդարարներին ոչնչացնելը հայդուկների առաջնահերթ խնդիրն էր, և նրանք դա հաջողությամբ էին լուծում: Նրանց երազանքն էր անցնել Ռուսաստան և մտնել ռուսական բանակի շարքերը: Այդ անելու համար խումբը շարժվեց Տրապիզոնի ուղղությամբ, սակայն Ղարաբիր գյուղում բախվեց թշնամու մեծ ուժերի հետ: Հայերը պաշտպանվելով քաշվեցին դեպի լեռ, ինչը հնարավորություն տվեց ուժերը մեկտեղել ու թշնամուն փախուստի մատնել:

Ի վերջո Հաջի բեկը կարողանում է մի ոչ մեծ խմբի անցկացնել Կովկաս և վերադառնալ մյուսներին էլ տանելու համար:

400 հայ հինգ տարի շարունակ մաքառեց թուրքերի դեմ: Նրանց ազդեցությունն ու հեղինակությունը գնալով աճում էին: Եղավ ժամանակ, երբ թուրքական և հունական 50 գյուղեր հարկ էին վճարում ոչ թե պետությանը, այլ՝ հայդուկներին: Այդ շրջանի գյուղացիները շատ ավելի հայդուկներին էին դիմում, քան պետական դատարաններին:

Արթին աղայի և Հաջի բեկի խմբերը մինչև 1920 թիվը մնացին Պոնտոսի լեռներում: Երկու խմբապետներն էլ քեմալական դահիճների զոհեր դարձան:

Իր հուշերում Թալեաթը գրում է. «Մոտ 60 հայեր հարձակվեցին Բոզաղլյանի Զաքմակ գյուղի վրա: Բազմաթիվ հայ հրոսակներ թաքնվել էին Անկարայի շրջակայքի Յենքայի անտառներում և մոտավորապես 300 հայ ասպատակներ ապստամբական գործողություններ էին ծավալել մինչև Զոլաք Ալի գյուղը: Գում Գույու գյուղից ուրիշ 300 ավազակներ այրել էին շրջակայքի մահմեդական գյուղերը և 1915 թ. սեպտեմբերի 15-ին հարձակվել մեր զինվորների, ոստիկանական զորամասերի վրա:

Զաթրլքյերիր գյուղում 100-ի չափ հայեր բարիկադներ և պատնեշներ էին սարքել և օրերով կռվել մեր ջոկատների դեմ և ի վերջո փախել էին»[1]:

Թալեաթի այս նկարագրությունից ընթերցողը կտպավորվի, թե ապստամ-

---

[1] Թալեաթի հուշագրությունները, էջ 75-76:

բողներն խաղաղության ու անվտանգության մեջ ապրող մարդիկ էին, այլ ոչ թե յաթաղանից խույս տված, հաստատ մահվան սպառնալիքի տակ գտնվողներ, որոնք անմոռուչ մորթվելու փոխարեն որոշել էին զենքով հաստատել իրենց ապրելու իրավունքը և մեռնել զենքը ձեռքներին:

Յոզղաթի հայ բնակչության 70 տոկոսը զոհ գնաց եղեռնին, նրանց ճնշող մեծամասնությունը՝ առանց դիմադրության: Ահա թե ինչ են պատմել վերապրած յոզղաթցիներից մի քանիսը սանջակի հայության հետ կատարվածի մասին:

Վ. Մկրտչյան-Բերբերյան (Բողազլյանից). «Սկսեցին հավաքել տղամարդկանց ու բանտարկել: Լացն ու կոծը, վայնասունը իրար խառնվեցին: Լացող կանանց մտրակներով ծեծում էին... Փախչելու, պաշտպանվելու առավել ևս՝ ինքնապաշտպանության որևէ հնարավորություն չկար: Մեկ ամիս առաջ հավաքել էին բոլոր զենքերը, նույնիսկ խոհանոցի մեծ դանակները... Դիմադրություն ցույց տվողներին սպանում էին տեղնուտեղը... Երեկոյան բանտարկվածներին զույգերով կապոտելով՝ քաղաքից դուրս հանեցին: Բայց աքսորի փոխարեն տարան Ղարաղոչ Դերեսի կոչված ձորը և մորթեցին դանակով, կացինով, քարով... Կարգադրված էր փամփուշտը խնայել...

Հատուկենտ թաքնվողներ եղան: Թուրքերը ... հայտարարեցին, որ մնացողներին ներում է չնորհված: Հավատացին... Նրանց նույնիսկ ցուցակագրեցին, աշխատանք տվեցին, իսկ երեք ամիս անց, 1916 թ. մարտին, մտան տները, ծեծելով, բռնություն գործադրելով դուրս հանեցին և տարան մորթեցին...

Հերթը հասավ կանանց: Ոչ մի զիջում... Մորթեցին, ով ձեռքներն ընկավ... Հայ կանայք խաչխաչից, դաշտի թունավոր խոտերից, պղնձարջասպից թույն էին պատրաստել: Ու երբ թուրքերը գալիս էին նրանց տանելու՝ խմում էին:

Տարբեր տեղերից հավաքված կանայք գոմում մի քանի փոս էին փորել, գերաններից թոկեր կապելով կախաղաններ սարքել և հերթով կախվել էին: Մահացածներին թաղել էին փոսերում: Ամենավերջինն ինքն իրեն էր կախել և դեռ մահացած չէր: Երբ թուրքերը մտան գոմը՝ այդ կնոջ ոտքից թոկ կապած քարշ տվեցին փողոցով»[1]:

Ի դեպ, Վ. Մկրտչյանի պատմածը հաստատվում է նաև թուրք ժանդարմական հարյուրապետ Շյուքրիի պատմածով:

«Բողազլյանի գայմագամը միտումնավոր կեղծ աղդարարություն էր արել, որպեսզի եթե դեռևս թաքնված հայեր կային՝ դուրս գան իրենց թաքստոցներից և նրանց հեշտությամբ բռնելով ոչնչացնեին»[2]:

Ճանճապանյան (Յոզղաթ քաղաքից). «1914 թվականին լուր եկավ, թե թուրքերը փակել են բոլոր դպրոցները: Ստիպված էինք որևէ մեկի չհայտնել այդ լուրը, որովհետև ով Քեմալից լուր էր հասցնում հայերին՝ կախաղան էին հանում: Մի օր էլ եկան, տները խուզարկեցին. զենք ու այլ բաներ էին փնտրում: Ում տանը գտնում էին՝ նրան դատում էին, ում տանը չէին գտնում՝

---

[1] «Բնօրրան», 1995 թ., № 1, էջ 51-52:

[2] **Պալաքեան Գ.**, նշվ. աշխ., էջ 237:

խիստ պատժում էին և բանտարկում: Երեք օր բանտում պահելուց հետո բոլոր հայտնի մարդկանց՝ բժիշկներ, դեղագործներ, փաստաբաններ, կրոնավորներ, ձեռքերը մեջքներին կապած, տարան մինչև Դեր Զոր:

Ապա մեզ դուրս հանեցին, խուզարկեցին, ոսկիները վերցրին, մեր անունները գրեցին և ասացին, որ տեղ հասնելուն պես պետք է վերադարձնեն: Երկրորդ օրը լսեցինք, որ այսինչի հարսին են տարել, այնինչի եղբորն են տարել: Ով դիմադրում էր՝ սպանում էին:

... Ջուրը կեղտոտ էր, բայց ի՞նչ արած, ծարավ էինք, արյունոտ ջուր էինք խմում: Երրորդ օրն ասացին, թե՝ իջե՛ք սայլից, ձեզ պետք է թուրք դարձնենք: Որը ոտքին կոչիկ ուներ, որը՝ չուներ, բոլորին բարձրացրին մի բարձր լեռան վրա: Քեմալը նախապես հրամայել էր բացել բանտի դռները, ինչքան գող, ավազակ ու ոճրագործ կար՝ դուրս հանել, որպեսզի սպանեն անհավատներին: Նրանք արդեն լեռան վրա էին: Ես լալիս էի: Եղբայրս ճանաչում էր զինվորներից մեկին: Մոտեցավ նրան ու ասաց. «Սրան տիրոջս կհանձնես, նա կպահի»: Ետ նայեցի, տեսա, որ մարդկանց սրերից արյուն էր հոսում...»:

Զիթեճյան Օ. *«1915 թվականին, երբ ջարդը սկսեցին, ես վեց տարեկան էի: Ծնվել եմ Յոզղաթի Ուրումդի գյուղում: Մեր գյուղում ջարդն սկսվել է 1915 թվականի հունիսի 26-ին: Ջարդի օրը ես համարյա մեռած էի: Ինձ պահ էին տվել մի թրքուհու մոտ, իսկ ծնողներիս տարել էին եկեղեցի, իբր փրկելու, ասելով, թե՝ «ձեզ կպահենք մինչ առավոտ, առավոտյան ազատ կարձակենք»: Խաբել էին, որպեսզի կողոպտեին մեզ: Տատս իմ գլխավերևում կանգնած լալիս էր:*

Երեք թուրք ոստիկան եկան: Մեկն ասաց. «Սպանենք սրան»: Մյուսն ասաց. «Սա մեռած է, մեռածից ի՞նչ վրեժ լուծենք, ողջի՛ց վրեժ լուծենք: Դո՛ւրս եկեք»:

Մայրս, տատս, Սարգիս անունով երեք տարեկան եղբայրս, Աչոտ անունով վեց ամսական եղբայրս՝ մորս գրկին, դուրս եկան: Ոստիկանն ասաց. «Թույլ տվեք՝ դաշունահարեմ սրանց»: Մյուսը չթույլատրեց: Նրանց տարան: Տատս ողբում էր: Ոստիկանն ասաց. «Մի՛ ոռնա, պառա՛վ, հիմա դու էլ պիտի սատկես»:

Պատմում է Գ. Պալաքյանը. *«Երբ Յոզղաթ եկանք, որն ամենից ավելի արյունալի տեղն էր, մի ձորի մեջ տեսանք մի քանի հարյուր գլուխ՝ երկար մազերով, ուրեմն կանանց ու աղջիկների գլուխներ էին»[1]: Մեզ ուղեկցող հարյուրապետ Շյուքրին ասաց. «Լսել եմ, որ հայ տղամարդիկ էին սպանվում և ոչ թե կանայք ու աղջիկներ... Եթե միայն տղամարդկանց սպանեինք և ոչ կանանց ու աղջիկներին, 50 տարի անց մի քանի միլիոն հայ կլիներ, ուրեմն պետք է նաև սպանենք կանանց ու աղջիկներին, որպեսզի ընդմիշտ դադարեն ներքին և արտաքին խռովությունները»[2]:*

Հարյուրապետը չարունակեց. «Ամենքին սպանեցինք, բայց ոչ քաղաքներում: Այդ արգելված էր, որովհետև 1895-96 թվերին Աբդուլ Համիդը հրամայել էր սպանել բոլոր քաղաքացիներին: Հետո այդ մասին իմացան եվրոպական

---

[1] ***Պալաքեան Գ.***, *նշվ. աշխ., էջ 113:*

[2] *Նույն տեղում:*

ազգերը, ամբողջ քաղաքակիրթ աշխարհը և չէին ուզում թույլ տալ: Որևէ մարդ չպետք է ողջ մնա, որպեսզի որևէ մեկը դատարանում հանդես չգա»:

«Նախ 14 հազար տղամարդու հանել էին Յոզղաթ քաղաքից ու շրջակայքից և հորերի մեջ սպանել: Սպանվածների ընտանիքներին ասել էին, թե տղամարդիկ հասել են Հալեպ, լավ են զգում և խնդրել են կառավարությունից՝ հրաման տալ ընտանիքներին իրենց մոտ գալու: Այնտեղ ընտանիքները պատրաստի բնակարաններ կունենային: Կառավարությունը թույլ է տալիս իրենց հետ վերցնել շարժական գույքը: Ընտանիքները ամեն ինչ ծրարած՝ ոսկի, արծաթ, ապրանք, զարդ, գույք և շարժական ամեն բան...»: Այդ պատմում էր նույն հարյուրապետը, որն ուղեկցել էր կարավանը և ասում էր, թե ինքն անձամբ, իբրև ոստիկանության հրամանատար, մոտավորապես 40 հազար հայ է սպանել Յոզղաթի և Բողազլյանի միջև: Հալեպ գաղթող կանայք ու երեխաները մոտ 6400 հոգի էին[1]:

Հարյուրապետը կանանց ու երեխաների բռնագաղթի մասին ասել է. «Եթե կանանց ու երեխաներին քաղաքում սպանեինք, պիտի չիմանայինք, թե ո՞ւր են մնացել հարստությունները... Դրա համար էլ թույլ տվեցինք բոլոր զարդեղեններն իրենց հետ վերցնել: Զորս ժամ առաջանալուց հետո հասանք մի ձորի, որտեղ երեք ջրաղաց կար: Մեզ հետ էին մոտավորապես 25-30 թուրք կանայք: Սրանք սկսեցին հայ կանանց ու աղջիկների զգեստները խուզարկել և զարդեղեններն ու դրամները վերցնել, որովհետև 6400 կին ու աղջիկ էին, և չորս ժամ պահանջվեց խուզարկության համար»:

Յոզղաթի ժանդարմերիայի հարյուրապետ Շյուքրին շարունակում է. «Թիւրք գիւղացիներու կողմէ ջարդուած հայերու ոսկորներն են ասոնք, որ 1915-ի օգոստոս եւ սեպտեմբեր ամիսներուն մէջ Պոլսէն եկած բարձր հրամանին վրայ կոտորուեցան, (ձեռքով ցույց տալով) սա դէմի խոր ձորին մէջ: Եւ թէպէտ ներքին գործոց նախարարին հրամանով այս կոտորածներուն հետքը կորսցնելու համար մեծ փոսեր փորելով ի մի հաւաքուեցան եւ թաղուեցան անցեալ տարի հոկտեմբերին, սակայն ձմռան հեղեղները այդ փոսերը բանալով ոսկորներն ու մասամբ ալ կազմալուծուած դիակները դուրս բերած են...

Բացի տարագրութեան սկիզբը 1915-ի յուլիսին՝ չորումցիներու առաջին կարաւանէն, դեռ այս ճամբէն ողջ անցնող չեղաւ...

Արդէն այժմ՝ գաղտնիք մը չէ, մօտ 86 հազար հայեր ջարդուեցան, մենք ալ զարմացանք, որովհետեւ կառավարութիւնը ինքն ալ չէր գիտեր, որ Էնկիւրիի կուսակալութեան մէջ այսքան հոծ հայեր կը բնակին: Թէպէտ այս թիւին մէջ քանի մը հազար ալ շրջակայ կուսակալութիւններէն գալով մեր ճամբաներէն անցնող հայեր կան, որոնք մասնաւորաբար մեր՝ ճամբաներէն անցուեցան, որպէսզի անոնք ալ մաքրենք...

Թէ՛ Պոլսոյ Իթթիհատի կեդրոնական կոմիտէէն եւ թէ՛ ներքին գործոց նախարարութենէն հրամաններ եկան հայերը աքսորելու, կամ, աւելի ճիշդ, բացատրութեամբ քաղաքներէն դուրս հանելով կոտորելու: Այս հրամանը ամենախիստ կերպով գործադրեց Պողազլեանի գայմագամ Քեմալը, որ կոտորածի

---

[1] **Պալաքեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 114:*

հրամանը չգործադրող Եոզղաթի մութեսարիֆին պաշտօնանկ ըլլալէն վերջ, այն ատենի էնկիւրիի փոխկուսակալ Աթրֆի հրամանով փոխկառավարիչ նշանակուեցաւ Եոզղաթի: Որովհետեւ ինքն ալ վանեցի էր, լսած էր, թէ իր ընտանեկան բոլոր պարագաները հայերը կոտորած էին անխնայ Վանայ ապստամբութեան ժամանակ, այս պատճառով ինքն ալ փոխ վրէժի դիմեց, անխնայ կոտորելով այրերուն հետ նաեւ կիներն ու երեխաները, մինչեւ ծծկեր մանուկներ, ըսելով, թէ Մարգարէին գլխուն վրայ երդում ըրած եմ՝ Եոզղաթի սանճագին մէջ ոչ մի հայ չպիտի կենդանի մնայ...

Երբ որ Եոզղաթ քաղաքին բոլոր այրերը՝ աւելի քան 8-9000 հոգի, իրենց առաջնորդով եւ քահանաներով ու աղաներով այս վայրերուն մօտակայ ձորերուն մէջ ջարդեցինք, այս անգամ կարգը եկաւ կիներուն... Էրիկ մարդոց կոտորուելէն երկու ամիս վերջ, քաղաքին մէջ կառավարիչ Քեմալ, ըստ տեղական սովորութեան, մունետիկ կանչել տուաւ, թէ.

- Ձեր այրերը ողջամբ Հալէպ ժամանած ըլլալով եւ տեղւոյն կուսակալին խնդրագիր տուած ըլլալով, որ իրենց ընտանիքները եւս Հալէպ բերուին ..., մութեսարիֆը երեք օր պայմանաժամ կու տայ, որպէսզի ամէն ոք երկար ճամբորդութեան մը համար պէտք ունեցած անհրաժեշտ պատրաստութիւնը տեսնելով մեկնելու նշանին սպասէ: Ով որ ինչ ուզէ կրնայ հետն առնել եւ վարձքը ով որ կրնայ վճարել, ձիու կամ եզան կառք ու սայլ կրնայ ունենալ, այս մասին կառավարութիւնը ամէն միջոց ձեռք առած է արդէն:

Կառավարութեան այս հրամանին դէմ անսաստողները ու պահուողներն ամենախիստ պատժի պիտի ենթարկուին...

Անցեալ դէպք է, որքան կը յիշեմ, 4000 է աւելին կառքերու եւ սայլերու մէջ կրցան տեղաւորուիլ: Իսկ վարձք տալու անկարող մնացեալ կիներն իրենց զաւակներով կարաւանին հետեւեցան ոտքով...

Կարաւանները առաջնորդելու պաշտօնը միշտ ինծի յանձնուած ըլլալով, կիներու այս կարաւանին ղեկավարութիւնը եւս ինծի յանձնուեցաւ իբր այս վայրերուն ծանօթ ոստիկան զինուորներու հրամանատար մը... Երբ 6400 եւ աւելի կիներու, աղջիկներու եւ երեխաներու այս մեծ կարաւանը հետս առած եւ շրջականերէ բերուած ութսունէ աւելի ոստիկան զինուորներով հասանք քաղաքէն 4-5 ժամ հեռու գտնուող այս դիմացի ձորին մէջ գտնուող երեք ջրաղացները ..., հրաման տուի ոստիկան զինուորներու ենթասպաներուն, որպէսզի իջեւանին այս տեղը: Միաժամանակ հրամայեցի 830 եւ աւելի կառապաններուն եւ սայլապաններուն, որպէսզի հոս ձգելով ընտանիքները՝ իրենք դառնան իրենց գիւղերը:

Ապա օրեր առաջ պատրաստուած կառավարական ծրագրին համաձայն, քաղաքէն 25-30 թուրք դայակուհիներ բերել տալով՝ սկսանք մանրակրկիտ խիստ քննութիւն: Իւրաքանչիւր կին, աղջիկ ու տղայ մի առ մի խուզարկուեցան մինչեւ իրենց ներքնազգեստները, եւ հաւաքեցինք ասոնց բոլոր ոսկեղէնը, արծաթեղէն, աղամանդեղէն զարդերն ու արժէքաւոր իրեղէնները, ինչպէս նաեւ իրենց զգեստներուն երիզներուն մէջ ճարտարօրէն կարած բոլոր հնչիւն մետաղէ ոսկիները: Ասոնք ամէնքն ալ խաբուելով, թէ ստուգիւ Հալէպ, իրենց այրերուն քով կ'երթան, հետներնին առած էին իրենց բոլոր արժէքաւոր եւ դիւ-

բատար ունեցածը, ինչպէս նաեւ իրենց թանկագին գորգերն ու կարպետները: Արդէն կառավարութիւնն եւս այս նպատակով, «Հալէպ ձեր էրիկներուն պիտի երթաք» սուտը չինեց, որ ունեցածնին հետերնին առնեն:

Այնպէս որ կարճ ժամանակ վերջ զատ-զատ դէզեր կազմուեցան հարիւրաւոր եւ հազարաւոր կանացի ոսկի շղթաներով, ոսկի ժամացոյցներով, աղամանդեայ եւ այլ ադնիւ ու թանկագին քարերով ընդելուզուած քառամանեակներով, ապարանջաններով, օղերով, մատանիներով: Հազարաւոր հնչուն ոսկիներ գտանք կանանց զգեստներու մէջ կարուած: Այս պատճառով եւս խուզարկութիւնը սկսաւ այնքան երկարիլ ու դժուարանալ, որ հարկ եղաւ նոր խուզարկու կիներ բերել տալ քաղաքէն եւ կրկնակի խուզարկութիւններով միշտ նոր զարդեղէններ եւ հնչուն ոսկիներ գտան պահուած կամ կարուած ամենաթաքուն տեղերու եւ զգեստի ու ճերմակեղէններու ծալքերուն մէջ...

Եթէ ամէնքը ինծի մնար, ինչ աղէկ, բայց կաչիէ պայուսակները լեցնելով եւ բերանները եւս կնքելով քաղաք ղրկեցի մութեսարիֆին, բայց այս առթիւ չատ գողութիւններ եղան: Կրնամ ըսել՝ կառավարութեան ձեռքը հազիւ ասոնց կէսը հասաւ...

Ճիշդն ըսելով, հազիւ 10.000 ոսկի հնչուն դրամ կամ զարդեղէն հայոց աւարներէն ձեռքս անցաւ: Բայց... ես միայն ժանտարմայի գոմանտան չեմ, այլ նաեւ Եոզղաթի աղաներէն եմ ... Հայերուն այս վերջին տեղահանութեան եւ ջարդերուն առթիւ մեծ հարստութիւն դիզեցի...

Այսպէս, չորս օր, չորս գիշեր մանրազնին խուզարկութիւնը շարունակելով, ամէնքը իրենց բոլոր ունեցածէն մերկացնելէ եւ միայն իրենց վրայ հագած զգեստը ձգելէ վերջ, ամէննին մէկէն հետիոտն ետ դարձուցինք Եոզղաթ քաղաքին ետեւը գտնուող ընդարձակ սարաւանդը, ըսելով, որ կառավարութենէն ներուած ըլլալով՝ նոր հրաման եկած է զիրենք կրկին քաղաք դարձնելու համար, որով ուրախութեամբ եւ առանց դժկամութեան հետեւեցան մեր հրամանին...

Երբ չորս օր եւ չորս գիշեր խուզարկութեամբ զբաղուած էինք, Եոզղաթի տեղական կառավարութիւնը ոստիկան զինուորներ ղրկելով շրջակայ բոլոր թիւրք գիւղերը, յանուն սրբազան ճիհատի, հրաւիրած էր իսլամ ժողովուրդը, մասնակցելու կրօնական այս սուրբ պարտականութեան...

Ուստի, երբ որոշեալ տեղը հասանք, մեզմէ առաջ որոշեալ օրը կանխելով բոլոր շրջակայքէն փութացած էին գալ հաւաքուիլ այս տեղը:

Որովհետեւ կառավարութեան հրամանը այս էր, որ անխնայ ջարդուին ամէնքն ալ եւ ազատուող չըլլայ, ուստի փախչելու ամէն փորձ արգիլելու, եւ ծանօթներուն կարեկցելով հոգի ազատելու հետամուտ եղողներուն ալ գաղտնի փորձերը վիժեցնելու համար, հետս բերած 80 ոստիկաններով պաշարել տուի այս սարաւանդը, եւ ամէն հաւանական փախուստի կամ թագստոցի տեղերը պահակներ կեցուցի:

Ապա ոստիկան զինուորներու միջոցով յայտարարել տուի ներկայ իսլամ ժողովրդեան, թէ իրենց կնութեան առնելու պայմանով ով որ գեղեցիկ կոյս աղջիկներէն կամ հարսերէն զատել կ՚ուզէ, կրնայ անմիջապէս ընտրել. սպանդի միջոցին ընտրութիւն ընելը արգիլեալ է:

Ասոր վրայ՝ հազիւ 220-250 աղջիկներ ու հարսեր զատուեցան ներկայ ժողովուրդէն եւ ոստիկան զինուորներու կողմէն...

Պատերազմի շրջան է հիմա, գնդակը սուղ է. այս իսլամ ժողովուրդը այս սպանդին վազած ատեն իր գիւղերէն ձեռքը ինչ որ ինկած էր՝ կացին, սակր, մանգաղ, մահակ, բրիչ, բահ, ասոցմով հանդիպածին զարկաւ գետին փռեց, վերջապես ինչ որ ուզեց՝ ըրաւ...

...Ես նուիրական եւ սրբազան պարտականութիւնս կատարեցի Աստուծոյ, Մարգարէիս եւ Խալիֆայիս առջեւ... Շէյխ-ուլ-իսլամը հայերը իբր մեր պետութեան դաւաճանող բնաջինջ ընելու «Ֆեթուան» ասոր գործադրութիւնը հրամայած էր... Իսկ ես ալ իբր զինուորական պաշտօնեայ՝ թագաւորիս հրամանը գործադրեցի... Ամէն անգամ ըրածիս նման, այս պատմած կոտորածէն վերջ ալ, «փոսթս» գետին փռելով նամազս ըրի եւ փառք տուի Ալլահին ու Մարգարէին, որ արժանի ըրաւ զիս իմ ծերութեան այս օրերուն սուրբ ճիհատին անձամբ մասնակցութեան...

Գերմանիա մեզ հասկցուց, թէ ցորչափ Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ հպատակ ուրիշ ցեղերը մեզի բաղդատմամբ 20 տոկոս համեմատութեան չհասցնենք, ազատելիք չունինք մեր գլխուն եկած չարունակական փորձանքներէն: Բայց չկարծէք, թէ Իթթիհատը միայն հայերը կոտորելով պիտի բաւականանայ. քիչ օրէն միւս ցեղերուն, մանաւանդ արաբներուն հաշիւն ալ պիտի մաքրենք: Արդէն Սեբաստիոյ հայերը տեղւոյն չերքէզներուն ձեռքով ջարդել տալէ վերջ, կառավարութիւնը այս ջարդարար չերքէզները պաշարելով, ամէնքնին ալ կոտորել տուաւ, ըսելով թէ առանց իր գիտութեան անմեղ հայեր ջարդած են: Մինչդեռ չերքէզները կառավարութեան յանձնարարութեամբ ջարդած էին հայերը»[1]:

Թուրք ժանդարմների պատմածը.

«10.000-է աւելի շրջանակներէն հաւաքուած թուրք խուժան մը «ալլահ, ալլահ» պոռչտանքներով կը յարձակի եոզղաթցի 6400-է աւելի անտէր եւ անպաշտպան կիներուն, աղջիկներուն վրայ: Գոռում-գոչումը, աղեկտուր ճիչերը եւ կացիններով, ուրագներով, սակրներով եւ այլ այս կարգի զէնքերով խուժանը այնքան կատաղօրէն կ'իյնայ իր անմեղ զոհերուն վրայ, որ խժալուր այս աղմուկը մինչեւ 1,5 ժամ հեռու շրջակայ գիւղերը կը լսուին...

Երբ սպանդը կը լրանայ, կը սկսին բոլորովին մերկացնել հազարաւոր սպաննուած եւ յօշոտուած այս զոհերը՝ զգեստները հետերնին տանելու նպատակով: Այս դիակապուտին կը մասնակցին հետզհետէ ոճրին վայրը շրջակայ գիւղերէն փութացող թիւրք կիներ, եւ շատեր իրենց ծծկեր կամ մէկ քանի տարու երեխաները գրկերը կու գան...»[2]:

«Բողազլյանից ոչ հեռու գտնվող Քելլեր թուրքական գյուղի վերին աղբյուրի ձորում,- գրում է Գ. Պալաքյանը,- թափված էին անհամար ուռած ու հոշոտված դիակներ. շատերը գլխատված էին, շատերի ներքին օրգանները դուրս թափված: Բոլորը մերկ էին: Հարյուրապետը բացատրեց. «Այս դիակները

---

[1] **Պալաքեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 269-285:*

[2] *Նույն տեղում, էջ 283:*

սպանել տվել է Բողազլյանի գայմագամ Քեմալը, որը երեկ գիշեր գալով այս գյուղը և ամելե Թաբուրի զինվոր բոլոր տղամարդկանց ու կանանց սպանել է տվել ու մեկնել»[1]:

4-5 օր չարունակ կողոպտում էին, որից հետո վրա են տալիս գիշատիչները: Պատահական չէ, որ Անատոլիայի հյուսիսից մինչև Կեսարիա ճանապարհին հանդիպած մահմեդականը եվրոպական հագուստ էր կրում:

Նույնիսկ Շյուքրին բացահայտ թշնամությամբ էր արտահայտվում Իթթիհադի պարագլուխների հասցեին. «Դրանք գնչուից սերված կամ հրեականությանը պատկանող բախտախնդիրներ են... Մեր արածի տակից ինչպե՞ս ենք դուրս գալու»[2]:

Յոզղաթ-Բողազլյան ճանապարհին երևաց ևս մի կարավան՝ հաստ պարանով միմյանց կապված 54 հոգի՝ ծերեր կամ 13-16 տարեկան պատանիներ ցնցոտիների մեջ: Նրանք Յոզղաթի 3000 տուն հայության վերջին մնացորդներն էին, որոնք 1915 թ. աշնանից ի վեր թաքնվել էին, և ամիսներ անց կարծելով, թե վտանգն անցել է, դուրս էին եկել ու բռնվել: Նրանց ևս միացրին ընդհանուր կարավանին:

Մեկնելու երրորդ օրը մի ձորում կարավանը շրջապատվեց մերձակա գյուղերի 700-800 թուրքերի կողմից: Սակայն ոստիկանությունը խուժանին ցրեց:

Շյուքրին գտնում էր, որ հայկական ջարդերը երիտթուրքերը շատ ավելի խելացի էին կազմակերպել, քան Աբդուլ Համիդ 2-րդը, որովհետև «եթե հայերը ջարդել ուզեինք սուլթան Համիդի օրով եղածի պես, մենք էլ շատ զոհեր էինք ունենալու: Ինչպես 1909 թ. հայերը Ադանայում արեցին, փողոցներում ստեղծված բարիկադների հետևում ու քարաշեն տներում ամրանալով հեշտությամբ չէին հանձնվելու, այլ՝ զենքով էին դիմադրելու: Շապին Կարահիսարում և Ուրֆայում հայերն ամիսներով զբաղեցրին կառավարությունը... Միթե ավելի գործնական չէ այն, ինչ այժմ կատարվում է: Ասելով, թե ձեզ աքսորելու ենք, նախ զինաթափ արեցինք և ճանապարհ հանելով՝ առանց փոքր-ինչ դիմադրության մաքրեցինք... Եթե քաղաքում Յոզղաթի կանանց հաշիվը մաքրեինք, իրենց ոսկեղենը, արծաթեղենը և զոհարեղենը, բոլոր զարդերը կոյուղիններն էին նետելու կամ փչացնելու էին, որպեսզի մեր ձեռքը չընկնեին»:

Առանձնակի նշանակություն ունեն Յոզղաթի հայ բնակչության տեղահանության ու ջարդերի դատավարության նյութերը (1919 թ., փետրվար-մարտ): Դատական նիստերում Քեմալի և Թևֆիկի դատապաշտպանները հայտարարեցին. «Հայերու աքսորի հրամանը տրուած է նախարարներու խորհուրդի որոշումով, որ Կայսերական իրատէով վաւերացուած է: Իսկ պաշտօնէութիւնը Կեդրոնի այդ հրամանն է, որ գործադրած է»[3]: Դատարանում հնչեց Քեմալի հոխորտանքը. «Մենք հայերը բնաջնջելու բացարձակ հրաման ունէինք ... Ես որեւէ ուրիշ հրաման չեմ ընդունիր: Ես հայոց յաղթողն եմ»[4]:

---

[1] **Պալաքեան Գ.**, նշվ. աշխ., էջ 235:
[2] Նույն տեղում, էջ 219:
[3] «Ժամանակ», 6 փետրվարի 1919 թ.:
[4] Նույն տեղում, 12 փետրվարի 1919 թ.:

Քեմալը դատարանում հայտարարեց. «Կեդրոնի կառավարութիւնն է մեզ հրաման տուողը այս տեղահանութեան մասին»[1]:

Ջարդարարները հաստատեցին՝ կառավարությունը ոչ միայն հրահանգել էր տեղահանել, այլև կողոպտել հայերին: Դատարանի նախագահի հարցին. «Ձեզի առ ի գործադրութիւն յանձնուած՝ լքեալ գոյքերու կանոնագրին տրամադրութեանց հակառակ ինչո՞ւ հաւաքել տուիք տեղահան եղած հայերու վրայէն ամէն իրեղէն եւ դրամ», Յոզղաթի հաշվապահ Վեհիբը պատասխանեց. «Կառավարութեան հրամանով էր, որ հաւաքել տուի»[2]: Նույն հարցին նույն պատասխանը տվեց նաև նախկին մութեսարիֆ Ջեմալը:

Դա մի անգամ ևս հաստատում է այն ճշմարտությունը, որ հայերի տեղահանության և ջարդերի առնչությամբ թուրքական օրենքները շատ ավելի քարոզչական խնդիր ունեին, քան՝ սահմանող ու կարգավորող: Իշխանության մարմինները ղեկավարվում էին ոչ թե այդ օրենքներով, այլ՝ վերևի գրավոր կամ բանավոր հրահանգներով:

Քեմալը պահանջում է Սալիմից անվերապահ հավանություն տալ «հայերի մահավճռին», որ ստացվել էր կենտրոնից, հակառակ դեպքում նա կախաղան կհանվեր[3]: Այսինքն, հայերին ոչնչացնելուց հրաժարվողը վտանգում էր իր կյանքը: Մինչև բռնագաղթը մունետիկները հայերին ազդարարում էին, թե ով ընդունի իսլամությունը՝ չի տեղահանվի[4]: Հրամայված էր՝ իսլամություն ընդունածներին ցրել թուրքական գյուղերում, սակայն այդպիսիները չպետք է կազմեին տեղի մահմեդական բնակչության 5 տոկոսից ավելին:

Յոզղաթի գրեթե բոլոր հայերը գերադասեցին Դեր Զորը: Նրանք տեղահանվեցին և, ինչպես արդեն ասվել է, ջարդվեցին նախապես նշված Քելլեր, Թանիչման և Թաչբինար ջարդավայրերում: Այն հայերին, որոնք հավատացին իշխանություններին և իսլամացան, շատ չանցած հավաքեցին և ուղարկեցին Կեսարիայի ուղղությամբ ու ջարդել տվեցին[5]:

Բողազլյանի մուֆթու պահանջին, թե ինքը հայերին մահմեդականացրել է Ղուրանի օրենքներով և նրանց ջարդելն արգելվում է, Քեմալը պատասխանեց, թե ինքը այդ հայերին ջարդում է ոչ թե կրոնական, այլ՝ քաղաքական օրենքով[6]: Այդ կապակցությամբ ռազմական դատարանի նախագահը 1919 թ. փետրվարի 8-ին գրեց Յոզղաթի կառավարությանը. «Փաչայ գիւղի Եագուպ Հոճան Գարա-Պէյրգ գիւղի 250 հայ ընտանիքներու, իսլամացուցած էր և երբ Եոզղաթի փոխ մութեսարիֆ Քեմալ Պէյ փափաք յայտնած էր զանոնք ալ բնաջնջելու, Հոճան առարկած էր, թէ իսլամական օրէնքով թոյլատրելի չէ զանոնք կոտորել (Քեմալը) պատասխանած էր. «Դուք զանոնք իսլամացուցիք Շերիաթի օրէնքով, ես ալ անոնց գլուխները կը կտրեմ քաղաքական օրէնքով»:

---

[1] *«Ժամանակ», 20 մարտի 1919 թ.:*

[2] *«Ճակատամարտ» 23 մարտի 1919 թ.:*

[3] *Նույն տեղում:*

[4] *«Ժամանակ», 9 փետրվարի 1919 թ.:*

[5] *«Ճակատամարտ» 19 փետրվարի 1919 թ.:*

[6] *Նույն տեղում:*

Արդարեւ, բոլոր այրերը ջարդել տուած է, ինչպես նաև արգասաբեր Քեոհնէ ավանի Էնաս գիւղի ուրացող հայերը Թանիչի Զիֆթլիկի ձորին մէջ, (նետել) գետը: Նմանապէս ջարդել տուած է Ինճիրլի գիւղին բողոքական եօթանասուն ընտանիքներու անդամները»[1]:

Լինում էր նաև այսպես: Լքյալ գույքերի հանձնաժողովը Թաքստոցում հայտնաբերում է տեղի մեծահարուստներից Գ. Գեղոյանին ու նրա որդիներին: Նրանց կրոնափոխ արեցին, բայց նաև սպանեցին, որովհետև հարուստ էին[2]: Այլ խոսքով ասած, ոչ քիչ դեպքերում տեղահանության և ջարդի որոշումը նաև գործածվում էր անձնական, չահադիտական նպատակներով:

Յոզղաթի գյուղերից հավաքեցին տասնմեկից փոքր տարիք ունեցող երեխաներին և ուղարկեցին Թալասի Թուրքական որբանոց և Թուրքացրին: Շատերը քաղցից ու հիվանդություններից մահացան[3]:

Քեոհնե գյուղի հայ կանայք մերժեցին կրոնափոխության առաջարկը և ինքնակամ բռնեցին աքսորի ուղին: Նրանց միացան Բեոհրենկ գյուղի կանայք:

Յոզղաթի կոտորածների մասին հետաքրքիր տվյալներ ու դեպքերի նկարագրություններ է պարունակում Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանի հուշագրությունը: Դրանք արժեքավոր և վավերագրական նշանակություն ունեցող պատմություններ են, որովհետև հեղինակը ո՛չ միայն ժամանակակիցն ու ականատեսն էր Մեծ եղեռնի, այլև նրա զոհերից, բռնագաթի ենթարկվածներից մեկը:

Գ. Պալաքյանը պատմում է. Յոզղաթի կայազորի հրամանատար Սալիմը 1918 թ. դեկտեմբերի 9-ին Մազհարի հանձնաժողովին հետևյալ ցուցմունքն էր տվել. «Ռազմական նախարարության 1915 թ. ապրիլի 22-ի հավելյալ մի այլ հրամանով թույլատրվում էր զորակոչել 19 և 20 տարեկաններից բացի բոլոր նրանց, ովքեր ի վիճակի էին զենք կրել: Այս տրամադրությունը պիտի կիրառվեր մեծմասամբ այն վայրերում, որտեղ հայերը մեծ թիվ էին կազմում:

... 1915 թ. մայիսի 5-ի գաղտնի հրամանով (հանձնարարվում էր հայերի մեջ) ... համոզում ստեղծել, թե նրանք, ովքեր հլու հպատակ մնան, որևէ չարիքի չեն ենթարկվի ...

...1915 թ. հուլիսի 18-ի ծածկագիր հեռագրով քաղաքացիական վարչության պաշտոնյաներն իրավունք չունեին միջամտելու հասարակական կարգին ու կարգապահությանը և միայն զինվորական իշխանությունն էր դրա համար պատասխանատու ...

Յոզղաթ, Զորում գավառներում եղած կասկածելի և վտանգավոր հայերը տեղահանվելու էին ... Կեսարիայի ճանապարհով դեպի իրենց աքսորավայրը ...

1915 թ. հուլիսի 20-ի հրամանով պետք է ստեղծվեր լքյալ գույքերի հանձնաժողով, որը պետք է վաճառեր ընտանիքներով տեղահանված հայերի գույքերն ու կալվածքները...

(Սկզբում գործում էինք համաձայն այս հրամանների), մինչև, երբ, ավա՜ղ,

---

[1] Դ. Ե. № Մ 291:

[2] «Եոզղատ», էջ 24:

[3] Նույն տեղում, էջ 19:

մի չարք անձինք, մանավանդ նրանք, որոնք պարծենում էին Միություն և առաջադիմություն կուսակցությանն իրենց պատկանելով, և որոնք վայրկյան անգամ չհապաղեցին իրենց ընչաքաղցությանը գոհացում տալու համար կատարել ապօրինություններ ... Կեղծ ու հնարովի, պաշտոնական և անպաշտոնական տեղեկագրեր ուղարկեցին կառավարությանը՝ հայթայթելով բավարար պատճառներ հայերի հանդեպ կիրառելու վերոհիշյալ որոշման տրամադրությունները ... Նույն անձինք զորաբանակի և դիվիզիայի հրամանատարներին Նեջաթի բեյի միջնորդությամբ հայտնեցին, թե ինչ-որ երևակայական հայկական կոմիտե գոյություն ունի: Իշխանությունը տրամադրված էր սա իբրև իրականություն ընդունելու: Զաթ, Զաքմաք, Թերզիլի, Կարա Յակուբ և դեռ ուրիշ հայ գյուղեր, որոնց անունները չեմ հիշում, գնդապետ Թևֆիկն ու իր օգնականները (այսինքն՝ չավուշներ, տասնապետներ և չերքեզների անկանոն խմբեր) փորձեցին հայերի մոտ զենքեր փնտրել: Սակայն գտան այն զենքերը, որոնք զենք փնտրող պաշտոնյաներն էին դրել այնտեղ: Վերջապես տրվեց հայերի տեղահանության հրամանը: ...Ժանդարմական վաշտի հրամանատար Թևֆիկի՝ հայկական գյուղերի վրա արշավների ընթացքում բազմաթիվ հայեր սպանվեցին առանց որևէ պատճառի՝ պատրվակով, թե պատկանում են կոմիտեներին: Սակայն նա դրանով չգոհացավ: ... Այս արյունարբուն ... անցավ բոլոր սահմանները Սարը Համզայի դեպքերի ժամանակ, երբ 13 հայ սպանվեց և հինգը՝ վիրավորվեց ...

Առաջին կարավանն առաքելու ընթացքում տեղահանված 472 հայեր սպանվեցին Սեբաստիայի կուսակալ Մուամմեր բեյի հրամանով ... Նա անգամ որոշեց ուղեկցել կարավանը և հանդգնեց նրանց (հայերի) միջոցով հասարակական փոս փորել Ինջե Զայիրում՝ տարագրվածներին կոտորելու և թաղելու համար ... Բողազլյանի նախկին գայմագամ, ժամանակավոր մութեսարիֆ Քեմալ բեյը... և իր արբանյակները ամեն տեսակի խժդժություններ և գարշելի արարքներ գործեցին...

Այն կարավանը, որը բաղկացած էր 80 տարագիրներից և ուղարկվեց դեպի Կեսարիա ժանդարմների հսկողության տակ, հարձակման ենթարկվեց Ջալակ Դեյիրմենի մերձակայքում: 12 հոգի կարողացավ ազատվել: Հայտնի չէ, թե ի՞նչ եղան մնացած 68 հոգին:

Բերեք հայկական գյուղից հայերը ցորեն էին տեղափոխում զինվորական տուրք վճարելու համար: Վերադարձին հարձակման ենթարկվեցին Դեդիկ և Ռադվանլը գյուղերի մերձակայքում: 15 հոգու դիակները գտնվեցին Հալկալի Զայիրի մոտերքը...

Գայմագամ Քեմալ բեյը, երբ Յոզղաթ հասավ ... ժանդարմների հրամանատարի օգնական Նուումանը հանձնարարություն ստացավ կոտորելու Սորկուն գյուղի հայերին: Քաղաքապետարանի տնօրեն Ահմեդ Էֆենդիի եղբայր Ռիզա չավուշը հանձնարարություն ստացավ ջարդելու Սարայի չրջանի հայերին: Ջարդավայր նշանակված Քելլերի կոտորածները վստահվեցին Յոզղաթի որբերի տնօրեն Մեհմեդին, Բաքրջի Հաջի Մահմուդին, Թևֆիկզադե Աբդուլլահ Շևքիին, ժանդարմերիայի գնդապետ Շյուքրիին, Դաղստանլի Իսմայիլին, Ակթաշ ավանի քաղաքապետ Ֆերիդին և Բողազլյանի դատավոր և

ժամանակավոր գայմագամ Ալի Ռիզային: Թաչբունարի մերձակա ջարդավայրի տնօրինությունը նորից վստահվեց Շյուքրիին, Իսմայիլին, Ահմեդ Զավուշին, Զափանզադե Իսա բեյի որդի Դերվիշ բեյին: Բոլորն էլ իրենց պարտականությունը կատարեցին կատարյալ բարեխղճությամբ՝ հնազանդվելով իրենց վերադասներից ստացված հրամաններին... Ժանդարմները շատ ավելի սարսափած իրենց կատարած ոճիրներից, քան պատիժներից, որոնց իրենք ենթակա էին, պահանջեցին, որ իրենց հրամանները գրավոր տրվեն: Պատասխանեցին, թե նրանք կկիսեն հայերին բաժին ընկած վիճակը, եթե երբևիցե պնդեին իրենց տեսակետը և նրանք հարկադրված եղան կատարել այն, ինչ հրամայված էր:

Հետևաբար հայերն անմեղ են և իրենց վերագրված ոճիրները չեն կատարել... Ես այս կարծիքը հայտնեցի դիվիզիայի հրամանատարին, որը դա ո՛չ միայն նկատի չառավ, այլև ինձ հրամայեց բնաջնջել հայրենիքի այդ դավաճաններին, իսլամի թշնամիներին, կոմիտեների կասկածելի անդամներին ...

Հաջորդ ուրբաթ օրը, համաձայն կազմված մատյանների, հայերը հավաքվեցին և բանտ դրվեցին: Կիրակի առավոտյան, հուլիսի 26-ին, 472 հոգի առաջին կարավանով ուղարկվեցին Սեբաստիայի ուղղությամբ՝ դեպի իրենց աքսորավայր (Դեր) Զորի գավառ:

Նույն օրը էլմասյան հայ ընտանիքի ձիու կառքը նստելով Նեջաթի բեյը Զորում գնաց, այդտեղ էլ հայերի տարագրության համար անհրաժեշտ հրահանգներ տալու և տնօրինությունն ու վարչությունը վստահելու Միություն և առաջադիմություն ակումբի նախագահին և անդամներին:

...1915 թ. հուլիսի 28-ին և օգոստոսի 4-ին երկու ուրիշ կարավան էլ ուղարկվեց, մեկը՝ 257 հոգուց, մյուսը՝ 99 հոգուց կազմված ... Թեև Ջեմալ բեյը գործեց համաձայն ստացած հրամանների, սակայն Նեջաթի բեյի մատնությամբ պաշտոնազրկվեց և Բողազլյանի գայմագամ Քեմալ բեյը դարձավ Յոզղաթի ժամանակավոր մութեսերիֆ: Այսպիսով, Միություն և առաջադիմություն կուսակցության անդամները, ինչպես նաև չարաշահությունով հարստանալ երազողները, հասան իրենց նպատակին և ցավալի ու մարդկային պատմության մեջ աննախադեպ ոճիրներ գործեցին: Այնպիսի գարշելի արարքներ կատարեցին, որ հավատաքննության խժդժությունները ստվերի տակ մնացին և արատավորեցին իսլամի պատիվն ու Օսմանյան կայսրության պատմությունը:

Յոզղաթի ժանդարմների հրամանատարը ... Նեջաթի բեյի գալուց հետո... պնդեց, որ տեղի հայերը կոմիտեների անդամներ էին: Նա անձամբ ղեկավարեց կարավանները ...

... Նախաքննիչ ատյանի նախագահ Համզե էֆենդին և ուրիշ չատերը ... հատուկ առաքելությամբ Քելլեր ուղարկվեցին: Թաչ Բունար և այլ տեղերում էլ նշանակված էին կոտորածների վայրեր և որտեղ դրամներ ու արժեքավոր իրեր հավաքելուց հետո, ջարդի հրաման էր տրվում և նրանք անձամբ էին ղեկավարում ջարդերը՝ իրենց հավատարիմ ծառայությունը կուսակցությանը մատուցելու համար...

Գալով գայմագամ Քեմալ բեյին, Յոզղաթի ժամանակավոր մութեսարիֆ կոչվելուց հետո, սկսեց իր պարտականության կատարումը՝ հետևելով բնա-

ջնջման քաղաքականությանը: Ամեն իրիկուն ավագ հաշվապահ Վեհիբ էֆենդու տուն էր հրավիրում քաղաքապետարանի տնօրեն Ահմեդին, նախկին առաջին քարտուղար Մուստաֆա բեյին, Սաիդ բեյին և ուրիշ գործակիցների, որոնք մի քանի գավաթ կոնծելուց հետո որոշում էին հաջորդ օրվա իրենց անելիքները: Այսպես էր նա իրագործում կոմիտեի «ազգային ձգտումները»:

Ես աշխատանքից հեռացա: Դրանից հետո էլ բազմաթիվ զզվելի արարքներ տեղի ունեցան, օրինակ, տեղահանված կանանց մարմինների ամենաներքին մասերի խուզարկությունը՝ ոսկի փնտրելու պատրվակով: Կապիլե հանրմը՝ հաշվապահ Վեհիբ բեյի կինը, գործեց որպես մասնագետ խուզարկու: Նա իր խուզարկությունները կատարեց քաղաքից դուրս և քննեց տարագրված կանանց մարմիններն այն աստիճան, որ խուզարկեց կանանց անդամների ներսի մասերը՝ այնտեղ ոսկի փնտրելու պատրվակով... Քաղաքացիք, թե գյուղացիք նաջախներով, դանակներով, փոքր կացիններով, բիրերով, ոմանք հեծյալ՝ սվիններով ու զենքերով, խկը չների նման, սպանդանոցի արյան հոտ առած, սկսեցին վազել և հետևել կարավաններին՝ կոտորածներին մասնակցելու համար: Ես վկայում եմ, որ այս բարբարոս և արյունալի արարքները կատարվեցին Միություն և առաջադիմություն կուսակցության անդամների և պաշտոնատարների կողմից»[1]:

Ռազմական դատարանի արձանագրությունից այս երկար մեջբերումը խնդիր ունի վկայելու, որ հայոց ջարդերի անմիջական մասնակիցների պատմածներն ու դատարանում տված ցուցմունքները բացարձակապես իրար նման էին, այսինքն՝ ճշմարտություն էին, այլ ոչ թե դրանց հեղինակների երևակայության պտուղը:

ԿԱՍՏԱՄՈՆՈՒ

Կաստամոնու նահանգի իթթիհադականների պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմիի ջանքերով կուսակալ Ռեշադը պաշտոնազրկվեց «հայերի պաշտպան գյավուր վալի» մեղադրանքով: Եվ դա այն պատճառով, որ նա հրաժարվեց կոտորել հայերին, հայտարարելով. «Ձեռներս արյունով չեմ ներկի»:

Երբ մյուս նահանգներում սկսվեց հայերի տարագրությունը, Կաստամոնուի մահմեդականները դիմեցին վալուն հետևյալ խոսքերով. «Մենք նման բան մեր նահանգում չենք ուզում: Մենք վախենում ենք Աստուծո բարկությունից: Կառավարությունը չի կարող անօրինականություններով և բռնություններով կանգուն մնալ: Մեր նահանգում նմանօրինակ դեպք չպետք է տեղի ունենա»[2]:

Սակայն Հ. Ֆեհմին իրականացրեց նահանգի հայության տարագրությունը, հարստացավ նրանց ունեցվածքին տիրանալու միջոցով: Ռազմական դատարանը 1920 թ. հունվարի 8-ին նրան դատապարտեց 10 տարվա բանտարկու-

---

[1] Դ. Ե. № Մ 574-577:

[2] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 278-279:

թյան: Մեղադրական եզրակացությունում ասվում էր, որ նա անընդհատ լինում էր «լքյալ գոյքերով լեցուն խանութները և առարկաները լեցնում էր պարկերն ու կողովները և տանում իրեն: Նա համարձակ էր գործում, քանի որ կուսակալից ազդեցիկ էր»[1]:

Համարձակ մարդ էր նաև Կաստամոնուի վալի Ռեշադը: Նա չէր խուսափում Կ. Պոլսին հակադրվելուց, եթե գտնում էր, որ վերջինս ճիշտ չէր կամ անարդար էր: Գրիգորիս ծ. վրդ. Պալաքյանը Սողոմոն Թեհլիրյանի դատավարության ժամանակ ցուցմունք տվեց Կ. Պոլսում. «1915 թ. ապրիլ 24-ին 280 ուրիշ հայ մտաւորականներու հետ ոստիկանութեան կողմէ բռնուեցայ եւ աքսորուեցայ. (Էնկիւրիում) մեր կարաւանէն մօտ 80 հոգի Այաշ աքսորուեցաւ: Միւսները՝ մօտ 190 հոգի ... Զանղրը աքսորուեցան... 190 հոգիէն միայն 16-ը մնացին՝ խնայուեցան..., (որոնք) Տէր-էլ-Զօրի անապատը պիտի տարուէին եւ ասիկայ՝ Կ. Պոլսոյ ներքին գործոց նախարարին հեռագրական հրամանովը:

Բայց Քաստամոնուի վալին՝ Ռեշատ փաշան մերժեց ՆԳ նախարարին հեռագրին հպատակիլ: Իսկոյն վար առնուեցաւ...

Ռեշատ փաշային տեղ Քաստամոնու ղրկուեցաւ Էնկիւրիի վալին, որ... Էնկիւրիի վիլայէթին մէջ 82.000 հայ՝ կիներ, տղաք եւ այրեր սպաննած էր: Այս նոր վալին մեզի մինչեւ Տէր Զօր տարաւ ... Կիներն ալ մեր հետ պիտի ղրկուէին... Յետոյ իմացանք, որ բոլորը սպաննուած են...»[2]:

Անկարայի նահանգից տարագրված կարավանների հետ էր Կաստամոնուի 400 հոգանոց կարավանը, կազմված միայն տղամարդկանցից, որովհետև կանանց ու երեխաներին չտարագրեցին, այլ՝ քաղաքից հանելով ցրեցին Թուրքական գյուղերում: Իսկ այդ 400 հոգանոց կարավանը նույնպես Ալիս գետի կամրջի մոտ չրջապատվեց Իթթիհադի չեթեների կողմից՝ կուսակցության տեղական կազմակերպության քարտուղարի ղեկավարությամբ, որը միաժամանակ քաղաքապետն էր, և լրիվ ոչնչացվեց:

Գ. Պալաքյանի նկարագրած գողգոթան անցավ նաև Կաստամոնուով: Նա Զանղրրի աքսորականներից էր և ականատես եղավ նաև այդ վիլայեթի հայության կործանմանն ու վկայեց, որ թեև Կաստամոնուի հայ բնակչությունը չատ խաղաղ էր և խոսում էր Թուրքերեն, բայց «քաղաքականության պատճառով ուզում էին Փոքր Ասիան դատարկել նրանցից: Նախ տարան 48 հայերի (տղամարդ) ... Հետո իմացանք, որ նրանց սպանել են: Մեզ տարան Զորում-Յոզղաթ-Բողազլյան-Կեսարիա-Թոմարզա-Հաճըն-Սիս—Կարս բազար-Օսմանիե—Հասան բեյլի-Իսլահիե գծով: Սա արյունալի գծերից մեկն էր: Յոզղաթի և Բողազլյանի արանքում 43000 հայի ջարդեցին ... Մեզ հետ չատ վատ էին վարվում: Անոթի էինք, և երբ ջուր, գետ էինք տեսնում և ուզում էինք հագեցնել մեր ծարավը, չէին թողնում: Երկու օր առանց հացի ապրեցինք: Չէին

---

[1] **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Ուոտերտաուն, 1995, էջ 96:

[2] «Թեհլիրեանի արդարահատոյցը», Պէյրութ, 1981, էջ 185-186:

թողնում, որ մեր դրամով հաց գնեինք...»[1]:

Ռուս-թուրքական ռազմադաշտից մի թուրք հազարապետ եկավ Զանգեզուր... Սա մեծ հպարտությամբ մեզ ասաց. «Ինչ որ մեր նախկին սուլթանները չարեցին, մե՛նք արեցինք՝ մի պատմական ազգ երկու ամսվա ընթացքում սպանեցինք»[2]:

«Փոքր Ասիայի հայության 3/4-ը ոչնչացված էր,- պատմում է Գ. Պալաքյանը,- երբ հրաման ստացվեց բնաջնջելու նաև Կաստամոնուի հայությանը, որը հազիվ 1800 տուն կամ 10.000 հոգի էր: Կուսակալ Ռեշադը այդ հրամանն ստացել էր դեռ հուլիսի սկզբին, բայց չէր կիրառում: Նա հրավիրում է քաղաքի մեծամեծ թուրքերին ու հարցնում, թե նրանք հայերից դժգոհություն ունե՞ն: Պատասխանը լինում է բացասական: Դեռ ավելին, նրանք Անկարայի երևելիների նման հանրագիր են ուղարկում Կ. Պոլիս. «Դարեր ի վեր բարի դրացիությամբ և առևտրական շահերով կապված լինելով հայերի հետ, ո՛չ միայն նրանցից չենք դժգոհում, այլև նյութական մեծ կորուստներ ենք կրելու, եթե, Աստված մի՛ արասցե, հայերը տեղահան լինեն»[3]:

Նման հայտարարությունով հանդես է գալիս նաև վալին: Նա խիստ քննադատության է ենթարկում Իթթիհադի կուսակցական նեղմիտ քաղաքականությունը: Թալեաթն անմիջապես պահանջում է Ռեշադի հրաժարականը: Հուլիսի վերջին Ռեշադը հրաժարական տվեց ու մեկնեց Պոլիս: Նրան փոխարինած Կաղրն Զանգեզրի կառավարիչին հրամայեց խստորեն խուզարկել հայերի տները և հավաքել զենքերը: Սեպտեմբերի սկզբին Զանգեզրի հայկական թաղերը շրջապատվեցին: Խուզարկությունը որևէ զենք չհայտնաբերեց: Հաջորդ օրը տեղի երիտթուրքական պատասխանատու քարտուղար Յունուսի պահանջով՝ մի ամիս անց նոր խուզարկություն կատարվեց Զանգեզրում, բայց նորից անարդյունք: Նա այնուամենայնիվ պնդեց հայերի տարագրության վրա: Վարդավառ էր և ժողովուրդը գտնվում էր եկեղեցում, երբ կարդացվեց հրամանը. «Երեք օր ժամանակ է տրվում Զանգեզրի հայ ժողովրդին՝ նախապատրաստվելու Դեր Զոր մեկնելու համար: Յուրաքանչյուրն իրավունք ունի կնոջն ու երեխաներին նույնպես տանելու կամ թողնելու քաղաքում: Փախչողներն ու թաքնվողները մահապատժի կենթարկվեն»[4]:

Զանգեզրում աքսորված մնում էր վեց մտավորական, որոնք մեկնում են Անկարա՝ Զմյուռնիա անցնելու նպատակով: Այստեղ Աթրֆը հաջողությամբ ավարտել էր 85.000 հայերի բնաջնջումը և այլևս անելիք չուներ: Ուստի Թալեաթը նրան նշանակեց նաև Կաստամոնուի վալի: Նա Քելեկյանին ձերբակալում է և ուղարկում Դիարբեքիր՝ իբր ռազմական դատարանում դատվելու, սակայն նրան նույնպես սպանում են ու հայտարարում, թե Սեբաստիայի մոտ Կրզըլըրմաքի կամուրջն անցնելիս հանկարծակի «խելագարվել է ու գետը նետվելով անհետացել է»:

Տիրան Քելեկյանը թուրքական շրջաններում հանրահայտ գործիչ էր,

---

[1] «Թեհլիրեան արդարահատոյցը», էջ 111-113:

[2] Նույն տեղում, էջ 120:

[3] **Պալաքեան Գ.,** նշվ. աշխ., էջ 153:

[4] Նույն տեղում, էջ 152-153:

«Սաբահ» թերթի խմբագիրը, օսմանյան համալսարանի առաջատար պրոֆեսորներից մեկը: Նա նույնպես Զանգեզուրը աքսորված հայ մտավորականներից էր: Լսելով, որ իրեն տանելու են Դիարբեքիր, անհանգստանում է, և ոչ առանց հիմքի, թե տանում են սպանելու, նա դիմում է Օսմանիեի փոխկառավարիչ Ասաֆի (որն իր ուսանողներից էր եղել) օգնությանը, որպեսզի ինքն ինչ-որ կերպ կարողանար վերադառնալ Կ. Պոլիս: Ասաֆը պատասխանում է. «Սիրելի՛ ուսուցիչ, ինչ-որ կ՚ուզէք ընել, ըրէ՛ք չուտով, յետոյ ուշ կ՚ըլլայ...

Հեռագիր մը պիտի ցուցնեմ ձեզի, «Իսկույն հեռագրեցէ՛ք մեզի անձնապէս, թէ հայերէն դեռ որքա՞ն կենդանի են, որքա՞նը մեռած: ՆԳ նախարար Թալէաթ»: Սա նշանակում է, ասաց Ասաֆը. «Ինչո՞ւ կը սպասէք, ջարդեցէ՛ք»[1]:

Ապա ավելացրեց, թե Ադանայի 1909 թ. ջարդերից հետո իրեն մեղադրեցին հայերին խոշտանգելու համար և «ես մեծ դժվարությամբ ազատվեցի: Չեմ ուզում նորից մասնակից լինել հայոց ջարդերին»[2]:

Այլամերժության թուրքական քարոզչությունը կարճ ժամանակում այնպիսի հաջողություն արձանագրեց, որ մի քանի ամիս առաջ հայերի տեղահանության դեմ բողոքողներն անգամ սկսեցին հավանություն տալ ջարդերի քաղաքականությանը: Թուրքական գրեթե բոլոր լրագրերը և մտավորականները բացեիբաց ողջունում էին այդ քաղաքականությունը, ամենազազրելի լուտանքներ թափում խողխողված ժողովրդի հասցեին:

Զանգեզրի հայերին սկզբում առաջարկեցին իսլամությունն ընդունել: 9/10-ը մահը գերադասեց: 1916-ի փետրվարի 13-ին նրանց ճանապարհ հանեցին դեպի Դեր Զոր՝ արհամարանքով չպրտելով. «Պետության և ազգի թշնամիների վախճանն ա՛յս է լինելու»: 45-50 հոգուց կազմված կարավանում ոմանք ձիով, մյուսները ավանակով, շատերը հետիոտն էին գնում: Կոնիայում նրանց գնացք նստեցրեցին ու տարան Զորում: Մի թրքուհի այդ հայերին տեսնելով բացականչեց. «Անիծյա՛լ լինեն ... Անմեղ ժողովրդին սպանելու են տանում: Եկող թշնամին վաղը նույն բանը մեզ հետ է անելու...»[3]:

Կաստոմոնուի հայ տարագիրները գիշերում են ղզլբաշ քրդերի մի գյուղում և սրտացավ վերաբերմունքի արժանանում, իսկ երբ հասան Յոզղաթ, նրանց լցրեցին կիսավեր իջևանատան մի փոքր սենյակ ու դռները փակեցին: Հարյուրապետը զինվորներին կարգադրեց. «Հանկարծ չիմանամ թե թույլ եք տվել, որ որևէ մեկը այս չներին հաց կամ ջուր է բերել, թող քաղցած ու ծարավ մնան, որ իմանան, թե ապստամբելն ի՞նչ է»[4]:

Ավլարում բնակվող 5000 հայեր սպանվեցին, գրում է Հանրի Բարբին, իսկ հայ կաթոլիկներին աքսորեցին Կոնիա և ապա միայն բռնագաղթեցրին կանանց ու երեխաներին: «Նրանց լցրեցին բեռնատար վագոններն ու մի ամբողջ շաբաթ պահեցին կայարանում՝ որևէ ուտելիք չտալով: Եվ երբ գնացքը վերջապես շարժվեց, նրանց մեծ մասն արդեն մեռած էր»[5]:

---

[1] «Թեհլիրեան արդարահատոյցը», էջ 192-193:

[2] **Պալաքեան Գ.**, նշվ. աշխ., էջ 116:

[3] Նույն տեղում, էջ 185:

[4] Նույն տեղում, էջ 192:

[5] **Բարբի Հ.**, նշվ. աշխ., էջ 52:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐ

Լեփսիուսի «Գերմանիան և Հայաստանը» գրքում զետեղված են Ֆոն Տիցկայի սեպտեմբերի 17-30-ի զեկուցագրերը: Դրանցից մեկում կարդում ենք. «Իզմիտի, Բուրսայի և Կաստամոնուի ծայրագույն արևմտյան շրջաններից 250 հազար հայերի բռնությամբ տեղահանել և տարել են Հալեպ՝ Դեր Զոր, Համա, Մոսուլ և նույնիսկ մինչև Հավրան ուղարկվելու համար: Զեթեների խմբեր էին գնում նրանց հետևից»[1]:

Ըստ Օրմանյանի, Իզմիտի սանջակում և Բուրսայի նահանգում բնակվում էր 165 հազար հայ, իսկ թուրքական պաշտոնական վիճակագրությունն այդ նահանգներում հայերի թիվը նշում է 120.853 հոգի:

Պատրիարքարանի տվյալներով՝ 1903 թ. Իզմիտի շրջանում բնակվում էր 90483, իսկ Բուրսայում՝ 104160 հայ: 1915 թ. Բուրսայում կար 14800 հայ:

Իզմիտն անկախ սանջակ էր և բռնագաղթի վերաբերյալ հրամաններն ուղղակիորեն ստանում էր Թալեաթից կամ Պետական անվտանգության տնօրեն Ազիզ բեյից:

Բուրսայի վիլայեթն ուներ հինգ սանջակ՝ Բուրսայի, Էրթօղրուլուի, Քեոթահիայի, Աֆիոն Կարահիսարի և Բալըկեսիրի:

Իզմիտում և Բուրսայում կար 42 հայաբնակ գյուղ, 88 լուսավորչական, 12 կաթոլիկ և բողոքական եկեղեցիներ: 1901 թ. դրանք ունեին 63 դպրոց, 12578 աշակերտ, 297 ուսուցիչ: Պարտիզակում, Բուրսայի և Բալուի շրջաններում կային 40 եկեղեցի և 61 մատուռ: Բութանիայի թեմի մեջ մտնում էին Պարտիզակը, Իզմիտն ու Ադաբազարը: Այստեղ էր Արմաշի կրթական համալիրը:

Բուրսայի վալին 1915 թ. մայիսի 12-ին հեռագրեց Կ. Պոլիս. «Տարագրված հայերի թվի մասին մանրամասներ չունենք»[2]:

«Մեր քաղաքներում արձանագրված են հայեր՝ Բուրսայի կազայում՝ 6415, Գեմլեյիգում՝ 1307, Բազար Քեոյում՝ 22600, Կարաջա Բեյում՝ 974. Մութանիայում՝ 99, Ակրանոսում՝ 6, Կիրմաստիում՝ 995: Ընդամենը սանջակում՝ 32396:

Էրթօղրուլուի սանջակում՝ Էրթօղրուլուի կազա՝ 7727, Սեոլեոզի՝ 7676, Իյնե Գյոլի՝ 7244, Ենի Շեհիրի՝ 1710: Ընդամենը՝ 24357: Քեոթահիայի սանջակի կազաներ՝ նույնանունի՝ 2759, Էսկի Շեհիրի՝ 3878, Ուչակի՝ 1092: Ընդամենը սանջակում՝ 7729, վիլայեթում՝ 66482 հայ:

Իզմիտի սանջակի կազաներում՝ Իզմիտի՝ 23430, Ադաբազարի՝ 16034,

---

[1] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 155:
[2] Նույն տեղում, էջ 159:

Գեյվեի՝ 8274, Յալովայի՝ 3253, Կարամյուրսելի՝ 2753, Կանդրայի՝ 626: Ընդամենը՝ 54370:

Այս թվերի մեջ չեն մտնում զորակոչված չուրջ 10 հազար հայերը, ինչպես նաև մինչև տարագրությունը բանտարկվածները՝ 6000 հոգի»: Մութեսարիֆ Թահսինը նաև հայտնեց, որ բոլոր հայերն աքսորվում են: Տարագրվածների ցուցակներում նշված էին բնակավայրը, աքսորի թվականը, ծննդյան թիվը, սեռը: Շուտով Դեր Զորից ստացվեց հեռագիր՝ «500 անձինք եկել են խառն՝ Ադաբազարից, Իզմիտից և Բուրսայից»[1]:

Նիկոմեդիայի (Իզմիտ) Պարտիզակ քաղաքը հայ մշակույթի հայտնի կենտրոններից էր: Նրա մտավորականության մեծ մասը նույնպես զոհ գնաց ցեղասպանությանը:

Այս երկրամասում չեթեական կազմակերպություններ ստեղծվեցին տարագրությունից յոթ ամիս առաջ: Ահա՛ այդ մասին մի քանի ծածկագրեր:

1914 թ. նոյեմբերի 13. Մ. Շյուքրիին. «Հարգելի՛ եղբայր.

Իզմիտի, Բուրսայի, Բանդրմայի, Բալըկեսիրի և հարմարագույն մյուս վայրերում, (Իթթիհադի) պատասխանատու քարտուղարների միջոցով մեկ շաբաթվա ընթացքում թաքուն կանչեցե՛ք պահանջված հատկանիշներ ունեցող անձանց և գիտցե՛ք, որ նրանց հավաքագրելը հնարավոր է:

«Թաչքիլաթը մախսուսայի» կենտրոնի անդամներ՝ Ազիզ, Աթրֆ, Նազըմ, Խալիլ»[2]:

Նոյեմբերի 15-ին. «Իզմիտի մութեսարիֆության երեք պետերի (չեթեբաշիների) ընտանիքներին 15-ական ոսկի տվե՛ք: Դրամը հանձնված է փոստ: Այս հեռագիրն ուղարկող պաշտոնյային ցույց տվե՛ք ավազակության համար պատրաստ 100 հոգուն, զինվորի ծածկանունով ճանապարհ հանե՛ք և մեզ տեղեկացրե՛ք: Բանտարկյալներին բանտից հանելու համար նախարարությունը հրաման կուղարկի:

Խալիլ»:

Իզմիտը «Թեչքիլաթի» կազմակերպման առաջին կենտրոններից էր: Ռազմական դատարանում ընթերցված 67-րդ հեռագիրը Խալիլը հասցեագրել էր Իզմիտի մութեսարիֆին և հաստատում էր այն իրողությունը, որ մութեսարիֆն անձամբ էր նշանակել չեթեական հրոսակախմբերի պետերին և բանտերից հանել տվել ոճրագործ մարդասպաններին:

Որ Իթթիհադն ու ՆԳ նախարարությունը չեթեական խմբեր էին կազմակերպում, նշված է նաև Իթթիհադի քննիչ Մուսայի 1914 թ. նոյեմբերի 20-ի հեռագրում՝ ուղարկված Մ. Շյուքրիին[3]:

Բուրսայում Իթթիհադի ներկայացուցիչը 1914-ի դեկտեմբերին գրում է կուսակցության ընդհանուր կենտրոնին, թե ոճրագործներին ու ավազակներին գրանցելու են «Թեչքիլաթի» մեջ: Ռազմական դատարանը նույնպես արձա-

---

[1] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 160:

[2] Նույն տեղում, էջ 161:

[3] Նույն տեղում:

նագրեց, որ «այդ չեթեները հայ տարագիրներին բնաջնջելու համար գործածվեցին»[1]:

Ֆոն Տիցկան գրում է, որ այդ ավազակները լայն գոտիներ էին կրում և հետևում էին տարագիրների կարավաններին ու ամեն տեսակի ոճրագործություններ կատարում[2]:

Այս չրջանների տարագրյալների խլյակները հասան Դեր Զոր, Միաղին, Աբու Քեմալ: Մի քանի հազար հոգի փախան Ամանոսի լեռները և մի կտոր հացի համար ծանր աշխատանքի անցան գերմանացիների մոտ Այրան-Բաղչեում: Սակայն Բարձր Դուռը նրանց այստեղ էլ հանգիստ չթողեց և Հալեպից պահանջեց տարագրել: Այդ բովանդակությամբ հեռագրեր ստացվեցին 1917 թ. նոյեմբերի 6-ին, դեկտեմբերի 27-ին, 1918 թ. մարտի 13-ին, 19-ին և ապրիլի 1-ին: Նրանց բռնագաղթեցրեցին և Այրանից Մարաչ տանող ճանապարհի երկայնքի անտառներում սպանեցին:

Ջարդարարների պարագլուխներն էին Կարամյուրսելի գայմագամ Նեջդին, ժանդարմերիայի հրամանատար Մ. Ջեմալը, մյուֆթի Ահմեդը, Պարտիզակի կառավարիչ Ա. Շուտուրին, չեթեապետ Մեհմեդչեն, նաև Իզմիտի մութեսարիֆ Մազհարը, կենտրոնական բանտի տնօրեն Իբրահիմը, որն իր ավազակներով տարագրեց Իզմիտի, Պարտիզակի, Օվաջըկի, Ադաբազարի և դրանց մերձակայքի հայությանը: Ժանդարմերիայի հրամանատար Ֆայիգը Բուրսայի իթթիհադականների ղեկավար Ա. Միդհադը, երեսփոխան Ալի Ռիզան, վալի Օսմանը, ոստիկանության պետ Իսմայիլ Հակկը և մի քանի ուրիշ պաշտոնատարներ նույնպես տարագրության իրականացման գործում ղեկավար դեր խաղացին:

1915-ի օգոստոսի 4-ին Զենգիլերի 1200 ընտանիքների տղամարդկանց գյուղից հանեցին ու սպանեցին, իսկ Բուրսայից 300 տղամարդու տեղահանման անվան տակ 30 մղոն տարան և Ադրանոսում խոչտանգելով սպանեցին: Բուրսայի նահանգում գտնվեց միայն մի Թուրք՝ բանաստեղծ Ֆայիզ Ալին, որը լինելով Քեոթահիայի կառավարիչ, մինչև իր հրաժարական տալը՝ մոտ 10 ամիս, կարողացավ գոնե մասամբ պաշտպանել տեղի հայերին:

Կոտորածներից փրկվեց՝ Բանդրմա-Բալըկեսիր՝ 5000, Բիլեջիք՝ 2000, Գեյվե՝ 1000, Ադաբազար, Իզմիտ, Պարտիզակ՝ 7500 հայ, ընդամենը՝ 15.000 հոգի, այսինքն հայերի 10 տոկոսը: Նրանց հասցված նյութական վնասը կազմեց 250 մլն դոլար:

«Իզմիթի նահանգէն (սանջակից) 180.000 հոգի տարագրուեցան դէպի Քարամանը՝ մահուան գիրկը նետուելու համար: Պուրտուրի, Սպարթայի մէջ, հոկտեմբերին, հայերը բնաջնջուեցան: Սպաննելէ յետոյ այրերը՝ Թուրքերը բռնաբարեցին կիները եւ յետոյ նետեցին զանոնք տղոց հետ խորխորատներու մէջ»[3]:

Թրակիայի հայերին ուղարկեցին Անատոլիա, բայց ճանապարհին նրանց անհետացրին:

---

[1] «Takvim-i Vekai», № 3540.

[2] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 162:

[3] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 1071:

Ռ. Պինոնը գրում է, որ Սպարտայում հայերին ոչնչացրեցին 1915 թ. հոկտեմբերին:

Երբ Իզմիտից տարագրված հայերը չկարողացան պահանջված գումարը վճարել, սայլապանները հարձակվեցին նրանց վրա: Դեպքի վայրը հասած թուրք սպան հրամայեց յոթ հայի հրացանազարկ անել: Ժանդարմները հրաժարվեցին այդ հրամանը կատարել: Սպան հինգ հայի ուղարկեց լեռները, որտեղից նրանք այդպես էլ չվերադարձան[1]:

Պատմում է ականատեսը. «Գարնան ծառերը ինչպես կը հատեն հատոցով, արիւնծարաւ ամբոխը կացիններով, սակրերով, բահերով ու բրիչներով յարձակուելով թշուառ կիներու եւ երեխաներու 40-է աւելի սա խումբին վրայ՝ կը սկսին չարչարանօք կոտորել եւ կտրտել ասոնց մարմիններուն դուրս մնացած բոլոր մասերը՝ քիթ, ականջ, ոտք, ձեռք, մատներ, ուսեր... Մանուկները մայրերուն աչքին առջեւ քարերու կը զարնեն «Ալլահ, Ալլահ» պոռալով»[2]:

Գերմանացիները Թուրքիայի հյուսիսային շրջանում, Պոլսից ոչ հեռու՝ Ադի Բունար, Պելկրատ օրման, Կուրդ Քեմերի բենդ, Քեմերի Բուրգազ, Վոլֆի գլխավորությամբ աշխատանքային ճամբար էին կազմակերպել, որին ռազմական նախարարությունը տրամադրել էր 150.000 հայ և արաբ զինվոր՝ ճանապարհներ և կամուրջներ կառուցելու ու զանազան գույքեր պատրաստելու համար:

Դա առաջին համակենտրոնացման ճամբարն էր, ֆաշիստականի նախատիպը, որտեղ կյանքի ծանր պայմանների պատճառով մի քանի ամսվա ընթացքում 100-120 հազար հոգի մեռավ ու ոչնչացավ:

Պատմում է թուրքական բանակի բժիշկը. «Միայն, երեք շրջանի մէջ մեր տեսած անթաղ դիակներու թիւը 220է անց էր: Գիւղապետները կը վստահեցնէին մեզ, թէ տակաւին շատ աւելի դիակներ կային մացառներուն մէջ ... Բժիշկներս այն եզրակացութեան եկանք, որ այդ զինուորները անօթութեան, մերկութեան ու յոգնութեան պատճառով այն աստիճան մաշած եւ յուսահատած ըլլալու էին, որ իրենց խաչելութեան վերջ տալու համար կամովին մացառներուն խորը եւ ժայռերու խոռոչներուն մէջ կծկուած եւ օրհնեալ մահուան գալուստը սպասած էին...»:

Երբ այդ մասին Վոլֆին ասացին, նա պատասխանեց. «Ես ժամանակ չունիմ մարդկային դիակներով զբաղվելու ...: Ինձ 150 հազար զինվոր է տրված հանձնարարված գործը արագ կատարելու համար՝ մինչև անգամ ի գին այդ 150 հազար կյանքին...»:

Վոլֆը կարգադրում է քաղցած զինվորներին՝ մի վիթխարի ժայռ գլորել կառուցվող կամրջի հիմքում դնելու համար: Զինվորների առաջին խումբը չի կարողանում անել. Վոլֆը «մէջքէն ատրճանակը հանելով, գնդակահարած էր զանոնք եւ հրամայած էր ուրիշներուն, որպէսզի իրենց ընկերներուն դիակները մէկ կողմ դնելով փորձէին ժայռը գլորել: Անոնք ալ նախորդներու բախտին արժանացան...»[3]:

---

[1] *R 14088, Ab. 30049:*

[2] ***Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., էջ 127:*

[3] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 641-642:*

Այս 150.000-ից երեք ամսում մեռավ 16.000-ը, մնացածների հիմնական մասը մեռավ գարնանը:

Մեծ թվով հայեր էին օգտագործվում Դարդանելի նաև ուրիշ շրջանում՝ պաշտպանական կառույցների շինարարության վրա[1]:

«Սկիզբէն ի վեր,- գրում է ականատեսը,- այս բանուորական վաշտերէն ղրկուած զինուորները, թէեւ տկար, թէեւ մաշուած, որովհետեւ ո՛չ պատշաճ սնունդ, ո՛չ առողջապահական տարրական պայմաններ ունէին, արեւածագէն մինչեւ արեւամուտ չարաչար կ՚աշխատէին, առանց որեւէ դադարի»: Ամեն օր նրանցից մի քանիսը մեռնում էր:

Հայերին ու արաբներին այս ծանր պայմաններում հյուծելով ու մեռցնելով՝ թուրքերը հարստանում էին, գերմանացի սպաները նոր շնորհների էին արժանանում: «Բնական մահվան» էին դատապարտվում հայն ու արաբը: Նման ճամբարների տարածքները ծածկված էին դիակներով:

«Դիակներէն ոմանք տակաւին ժայռի կտորներ կոնակնին կապուած՝ չորցած մնացած, ուրիշներ գիշատիչ գազաններու եւ թռչուններու կողմէ բզկտուած, ոմանց փորը պատռուած եւ փորոտիքը դուրս թափուած, ուրիշներուն թեւերն ու սրունքները մարմինէն անջատուած եւ ծամծմուած, շատերուն դէմքը կրծուած, աչքերը փորուած, առանց քթի եւ շրթունքի»[2]:

Նույն բանը վկայում են նաև օտար աղբյուրները: Կ. Պոլսի հունական դեսպանությունը 1915 թ. հունիսի 6-ին հայտնեց. «...Ավելի քան 60.000 անզեն զինվորներ աշխատում են մի քանի ամրություններ կառուցելու վրա... Նրանց 90 տոկոսը հույներ են, մնացածը՝ հայեր, մի քանի հրեաներ և թուրքեր:

Վերջիններս օգտագործվում են թեթե աշխատանքներում, այն էլ՝ որպես վերակացուներ: Նրանց արգելում են ծանր աշխատանքներ կատարել, դրանք վերապահված են քրիստոնյաներին...

Մնունդն անտանելի է և անկանոն: Ով չի ուզում սովից մեռնել՝ սնունդ է գնում, իսկ ովքեր միջոցներ չունեն, հավանաբար մեռնում են հյուծվածությունից»[3]:

Հյուծվածության օգնությամբ հայերին մեռցնելը կարևոր տեղ էր գրավում «հայերի հարցն իր ձևով լուծելու», «տերություններին կատարված փաստի առաջ կանգնեցնելու» Թալեաթի ծրագրում:

ՆԻԿՈՄԵԴԻԱՅԻ հայկական գյուղերում բնակվում էր 70.000 հայ: Այստեղ հայերը ոչ միայն մեծ թիվ էին կազմում, այլև համախումբ էին: Զբաղվում էին երկրագործությամբ, շերամապահությամբ և ծխախոտի մշակմամբ: Հայերը զինված էին, գրեթե բոլոր տղամարդիկ կրում էին ատրճանակ կամ դաշույն, նրանց անվանում էին **եֆե**, որ նշանակում էր քաջ: Նիկոմեդիայի հայերին խեղճացնելու համար այստեղ բնակեցրեցին չերքեզներ և լազեր: Նրանց իրավունք տրվեց «ազատորեն կողոպտելու և սպանելու հայերին», բայց հայերը միահամուռ հակահարված տվեցին: Նրանք ձախողեցին նաև ուծացման թուրքական

---

[1] **Որբերյան Զ.**, Յուշամատեան, էջ 636:

[2] Նույն տեղում, էջ 639:

[3] «Բնօրրան», 1995 թ., № 1, էջ 11:

քաղաքականությունը, քանզի բոլորը հայերեն էին խոսում: Սակայն 1915-ին նրանք բոլորը տարագրվեցին: Աքսորի ճանապարհին նրանցից ոչնչացվեց 55.000-ը: Նահանգում եղան նաև ընդվզումներ, հայդուկային կռիվներ, բայց առանց լուրջ հաջողության: 45 հայկական գյուղեր լրիվ դատարկվեցին:

Ադաբազարը նույնպես թուրքերը օգտագործում էին ապացուցելու, թե հայերն ապստամբություն էին նախապատրաստում: Թալեաթը գրում է. «Ադաբազարում երևան հանվեցին հազարավոր ռումբեր, մաուզերներ և հրացաններ, ոստիկանական համազգեստներ, ռումբ պատրաստելու մեքենաներ ու գործիքներ... Կոմիտեի ձերբակալված պետերը հայտարարեցին, որ երբ ռուսները հասնեին Սաքարիայի գետաբերանին, օսմանյան բանակի դիմադրությունը կոտրելու նպատակով այդ կուտակված զենքերը գործածվելու էին երկրի ներսում խռովություններ առաջացնելու համար»:

Մեծ եղեռնի նախօրյակին՝ Ադաբազարի 30.000 բնակչի կեսից ավելին հայեր էին, որոնք կենտրոնացած էին ս. Հրեշտակապետի, ս. Կարապետի, ս. Լուսավորչի և ս. Ստեփանի թաղերում: Նրանք ունեին իրենց դպրոցները, մշակութային հաստատություններն ու կազմակերպությունները, մամուլը:

Ա. Ճեպեճյանը գրում է, որ Ադաբազարում կար 3000 տուն հայ՝ 16-18000 հոգի[1]:

Ադաբազարի ամբողջ հայ բնակչությունը տեղահանվեց: Նրանցից միայն 4000-ը պատերազմից հետո վերադարձավ:

Ահա թե Ադաբազարի մասին ինչ է պատմում Ենովք Արմենը, որն այդ տարիներին այնտեղ ուսուցիչ էր աշխատել:

1915 թ. փետրվարին Ադաբազարում ձերբակալեցին վտանգավոր ու կասկածելի մարդկանց և աքսորեցին Սուլթանիե: Մահմեդականների վրեժխնդրությունը գրգռելու նպատակով տարածում էին «Փոլիս մեջմուասի» թերթը՝ թուրքին սպանող հայի լուսանկարներով ու հայերի գազանությունների մասին պատմություններով:

«Մթնոլորտը էլեկտրականացած է, երկու ցեղերու ոխերիմ իրար ատելությունը լարուածութեան բարձրակէտ սաստկութեան հասցնելով: Մէ կողմը՝ պետական դաւի շարժումէն խրախուսուելով արիւնածարաւ դահիճի կատաղութիւնով փրփրած խուժանը, միւս կողմը՝ զոհի ողորմուկ դիրքէ վրեժխնդրական համր գայրագնումէ մոլեգնած, ակռայ կճրտացնող նոխազը»[2]:

Դա այն պահն էր, երբ տվյալ բնակավայրում դեռևս որևէ իրադարձություն տեղի չէր ունենում, նույնիսկ դրանց նշանները չէին երևում. «Կան միայն պտտուող զրոյցներ կախաղաններու, վայրենաբարոյ սպանութիւններու, ելուզակային (չեթե) շահատակութիւններու մասին»:

Բալըկեսիրցի մի հայ սպա փախչում է՝ ասելով. «Ցեղիս արիւնին ծարաւ այդ հրէշներուն չեմ կրնար ծառայել»: Դատում են և վճռում՝ մահապատիժ կախելու միջոցով: Նույն վճիռն է կայացվում նաև նրա քահանա հոր վերաբերյալ՝ որպես դասալիքի թաքցնողի:

---

[1] (**Ճեպեճեան Ա.**), նշվ. աշխ., էջ 22:

[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 602:

Հոր և որդու այս կախաղանն առաջինն էր: Ապա պատերազմական նպատակներով բռնագրավեցին Կենտրոնական, Հայուհյաց, Աղջիկների բարձրագույն վարժարանների շենքերը: Պարտիզակից գալիս է այնտեղի հայերին տարագրած, Պոլսի բանտերի նախկին՝ տնօրեն Կ. Իբրահիմը, որը նույն օրվա երեկոյան քաղաքի հրապարակում հինգ ոստիկանով զորատես ու մարտական վարժություններ է անցկացնում: Քաղաքը պաշարվեց, ոչ մի շարժում: Ձերբակալվում են 200–300 հայեր ու փակվում Ս. Կարապետի եկեղեցում:

Ձերբակալվածները քաղաքի մտավորական ու երևելի անձինք էին: Հաջորդ օրը եկեղեցի է գալիս Իբրահիմը և ներկայանում որպես ՆԳ նախարար Թալեաթի ներկայացուցիչ, որին պարտավոր են ենթարկվել տեղական իշխանությունները:

Նա ճառ ասաց. «Ես չեթէներու պետ եմ եւ երկար ատեն կը գործեմ Մակեդոնիայի շրջաններուն մէջ... Ես ինքս ալ քոմիթէճի եմ... Ձկայ բան մը, որ ինծի անծանօթ ըլլայ: Կը ճանչնամ ձեր քոմիթէճիներուն ալ, Դրօշակ, Հնչակ և միւսները: Անոնց պետերէն շատերը վաղեմի ընկերներս եղած են: Իրենց հետ գործակցած եմ, երբ մեր շահերը հաշտ էին: Բայց հիմա անոնք կառավարութեան դաւաճանած ըլլալուն՝ մենք անոնց դէմ ելած ենք:

Այս քաղաքը եկած եմ եղեր հնչակեաններու հետ զէնք բաժնելու եւ գիտեմ, թէ որո՞նք զէնք գնած են... Հիմա եկած եմ այդ ռումբերը եւ զէնքերը մէջտեղ հանելու... 55 հատ ռումբ եւ 250 մաուզեր կ՚ուզեմ: Անոնք եթէ մէջտեղ հանէք, պատիւիս վրայ խոստում կու տամ՝ բնաւ վնաս մը չի հասնիր ձեզի: Բայց եթէ պահէք, վերադարձնել չուզէք, խաբերայական միջոցներու դիմէք, գիտցած եղէք, որ ամէն տեսակի չարիքներ կը թափեմ ձեր գլխուն:

... Ներքին գործոց նախարարութեան կողմէ լիազօրութիւն ունիմ ուզածս ընելու: Անչուշտ լսած ըլլալու էք Պարտիզակի մէջ ըրածներս: 300 հոգի, մարդ, կին լեցուցի եկեղեցին, ծեծեցի, չարչարեցի. գետինը պառկեցուցի, սատկելու աստիճանի ոսկորներնին կոտրտեցի, մինչեւ որ զէնքերնին մէջտեղ հանեցին... Նայեցէ՛ք, որ դուք ալ պարտիզակցիներու վիճակին չենթարկուիք...

Գիտցած եղէ՛ք, որ ձեզ մինչեւ Մոսուլի անապատները, մինչեւ (Դեր) Զոր կ՚աքսորեմ. Ձեզ ամէնքդ մէկ՝ կնիկովնիդ, զաւակովնիդ Սաքարիայի մէջ կը թափեմ»[1]:

Նա իսկապես՝ մեծ լիազորություն ուներ: Նրան ամենուրեք հասարակությանը ներկայացնում էին «ՆԳ նախարարին... կողմէ կու գայ եւ լիազօրութեան հրահանգներ ունի: Մինչեւ անգամ գայմագամին կրնայ հրամայել»[2]:

ՊԱՐՏԻԶԱԿՈՒՄ զորակոչիկների առաջին խումբը խանդավառ, «Լուսին չկա, մութ գիշեր է» հեղափոխական երգը շրթներին բանակ մեկնեց: Շուտով գյուղաքաղաքն ու գյուղերը տղամարդկանցից դատարկվեցին:

1915 թ. ապրիլին այստեղից քսան մտավորական աքսորվեց Միջագետք՝ առանց մեղադրանք հարուցելու ու դատի: Մայիսին սկսեցին զենքերը հավաքել: Հայերը որոշ քանակությամբ զենք հանձնեցին, բայց դա չբավարարեց:

«Վարդավառի շաբաթ օրը 40 եւ աւելի պաշիպոզուկ թուրքեր (չեթէներ),

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 605:

[2] Նույն տեղում:

առանց համազգեստի զինուորներ, ձեռքերնուն ունենալով միայն ճերմակ գոտի մը, Պարտիզակը պաշարեցին: Յետոյ կառավարչատուն հրաւիրեցին 50 եւ աւելի անձեր՝ վարդապետ, քահանայ, տեղւոյն իտարէի եւ պելետիէի հայ անդամներ, թաղական խորհուրդը, հոգաբարձութիւնը, մուխթարները եւ կարգ մը երիտասարդներ»[1]: Իբրահիմը պահանջում է հանձնել բոլոր զենքերը: Հավաքվածներին չղթայակապում ու լցնում են վարժարանին շենքը: Թաց ճոկանների խուրձ և դույլերով ջուր են բերում: Քաղաքից դուրս գտնուող պարտիզակցիներն այդ ընթացքում սպանվում էին:

Զենք հանձնելուց հրաժարվողներին պառկեցնում էին և ճիպոտներով հարվածում: Գանակոծվեցին նաև նրանք, ում կասկածում էին կուսակցական պատկանելության մեջ:

Խուզարկեցին եկեղեցին և քանդուքարափ արեցին: Մեկ շաբաթում գյուղից 70 զենք հավաքվեց: Դա բավական էր, որպեսզի Թալեաթը գրեր. «Իզմիտն ու դրա շրջապատը, մանավանդ Պարտիզակ գյուղը, ընտրվել էին իբրև ապստամբական շարժման կենտրոն: Հայ հրոսակները Յալովայի կողմերը շատ թուրքեր սպանեցին»[2]:

Մի քանի օր անց քաղաքում հրապարակվեց հետևյալ հրամանը. «Հայ ժողովուրդն անվստահելի է. երկիրը պատերազմի մէջ է, թշնամին Պոլսոյ դռները կը ռմբակոծէ: Ուստի զինուորական նախազգուշութիւններու հիման վրայ, պէտք տեսնուած է հեռացնել հայերը ծովեզերքներէն հեռու, երկրին ներսերը՝ Պիլեճիկ, Էսկիշեհիր, Գոնիա»: Դա մայիս ամիսն էր:

Պարտիզակ գյուղը վերածվեց չուկայի: Ամենուրեք կողոպուտ էր, որի հեղինակը թուրքերը, լազերը, գյուրջիները (մահմեդական վրացիները), չերքեզները և թաթարներն էին: Գյուղի ողջ հայ բնակչությանը (2000 հոգի) հրամայվեց երեք օրից ճամբա ընկնել, նաև հրամայվեց չարժական ունեցվածքը հավաքել եկեղեցիում, բողոքականների ժողովարանում կամ ամերիկյան վարժարանում՝ հավաստիացումով, թե վերադառնալիս դրանք հետ կստանան: Ոմանք իրենց կահ-կարասիները հանձնեցին ծանոթ կամ հարևան մահմեդականներին:

Ժողովուրդն իջնում է Սեյմեն նավահանգիստը, որտեղ կողոպուտը շարունակվում է՝ նավի տոմսեր վաճառելու պատրվակով: Իզմիտից հրաման է ստացվում, թե զինվորականների ընտանիքները պետք է տեղում մնան: Միայն մի քանի ընտանիքի թույլատրվեց վերադառնալ Պարտիզակ, մյուսներին ցրեցին մահմեդական գյուղերում: Իսկ ծերերին, հաշմանդամներին ու հիվանդներին հավաքեցին շերամատանը: 200 ընտանիք թաքնվեց Իզմիտում:

Մնացածներին քշեցին անհայտ ուղղություններով՝ Կոնիա, Էրեյլի, Իսլահիե, Քաթմա, Մեսքենե, Ռաս-ուլ-Այն, Դեր Զոր, Մոսուլ, Քիրկուկ:

Նույն բախտին ավելի շուտ արժանացել էին Նիկոմեդիայի մյուս գյուղերի հայերը: Սակայն ամենածանր հալածանքների ենթարկվեցին Պարտիզակի

---

[1] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 309:*

[2] ***Թալեաթի** հուշագրությունները, էջ 71:*

հայերը: Վերջինիս կառավարիչ Ալի Շուուրը ճիվաղ էր: Նա բռնությամբ կնության վերցրեց մի հայ աղջնակի:

Նիկոմեդիան անվանում էին «Փոքրիկ Հայաստան», որտեղ Պարտիզակն առանձնակի դեր ուներ: Պարտիզակցիները զինված մասնակցություն էին ունեցել մարտի 31-ի հակահեղափոխական հեղաշրջումը ճնշելուն, պարտիզակցի երիտասարդությունը մշտապես հաղթել էր մահմեդական բաշիբոզուկների ու չեթեների դեմ կռիվներում:

Նիկոմեդիայից տարագրված չուրջ 70 հազար հայությունից փրկվեց և վերադարձավ 15 հազարը, իսկ Պարտիզակի 12 հազարից՝ միայն 2000-ը, որոնց էլ հաշվեհարդարի ենթարկեցին քեմալականները:

Պարտիզակում տեղահանության դեմ բարձրացան 250 հայ զինված երիտասարդներ՝ Զալըմ Կարապետի գլխավորությամբ: Եռանդուն էր գործում Օվահ Գրգի Տոնիկի խումբը, որն ուներ 60 մարտիկ և պատերազմի ամբողջ ընթացքում գործեց լեռներում ու ցրվեց քեմալականների գերակշիռ ուժերի հարվածներից: 1920 թ. օգոստոսի 1-ին Իզմիտի ծոցում, անգլիացիների աչքի առաջ անհավասար մարտում այդ ջոկատի հիմնական կազմը զոհվեց:

***ԻԶՄԻՏ.** – 1915 թ. օգոստոսի 15-ին Իզմիտ է հասնում Կ. Պոլսի հայ մտավորական-աքսորյալների առաջին խումբը, հիմնականում Սամաթիայի հնչակյանները: Նրանց մեջ էր Արտաշես Հարությունյանը, որին Պոլսի բանտում դաժանաբար խոշտանգել էին: Երբ նրա հայրը բանտարկված որդուն տեսնելու է գնում, նրան նույնպես բռնում են ու աքսորում:*

Իզմիտի երկաթուղային կայարանից ձերբակալվածներին բանտ հասցրեցին ծեծելով: Քանի որ Հարությունյանն ի վիճակի չէր քայլել, նրան ընկերները շալակած էին տանում: Այստեղ էլ Իբրահիմը նրան ու հորը գազանաբար խոշտանգեց, իսկ սեպտեմբերի 1-ին երկուսին էլ խժդժություններով սպանեցին Իզմիտի ու Դերբենդի արանքում:

Իզմիտում ևս կախաղաններ կազմակերպվեցին:

Պատմում է Կոլաշևը. «Իզմիտի 37 ընտանիքներ, այդ թվում նաև հարուստ ընտանիքներ, բարձրագույն կրթությամբ հարյուրավոր մարդիկ...», բարձրագույն ուսումնարանն ավարտած օրիորդներ, որոնք սովոր էին հաճույքների ու հանգիստ կյանքի, բնակարաններից դուրս են չպրտված և հոտերի նման քշվում են փոքրասիական անապատները: Նրանց խնդրանքին, որ իրենց թույլ տան մեկնելու Գերմանիա, Ավստրիա կամ Ամերիկա, երիտթուրք «քաղաքակիրթները» պատասխանել են սվիններով ու անպատկառ հավաստիացումներով, թե «անապատներում ավելի լավ կլինի»[1]:

Իզմիտում թուրքերը հրդեհեցին 1500 տուն ունեցող հայկական թաղը և հայտարարեցին, թե այդ գործը հայերն են արել: Իսկ հայերն անտրտունջ տանում էին սադրանքներն ու բռնությունները, առանց անգամ ընդդիմանալու փորձի: Բուլղարիայի դեսպանը գրում է. «Թուրքիայի հայ բնակչության այս վարմունքը ընդհանուր զարմանք է առաջացնում»: Նման կեցվածքը «բա-

---

[1] *"Геноцидът над арменците", ф. 321, оп 1, д. 2462, с. 32-35.*

ցատրելի է միայն, մի կողմից, նրա բնավորության խաթարումով, որը տեղի է ունեցել Թուրքական դարավոր լծի հետևանքով և, մյուս կողմից, իր առաջնորդների փայփայած հույսին հավատալով, թե այնուամենայնիվ, այդ բնակչության մի մասին խնայելու են»[1]:

Դեռ նոր էին սկսվել տեղահանությունները, երբ Նիկոմեդիայի թեմի առաջնորդ Ստեփանոս եպս. Հովակիմյանը չտապեց Պոլիս՝ ծանոթ չրջանների օգնությամբ կանխելու թեմի ժողովրդի տեղահանությունը: Նա դիմեց իր վաղեմի ծանոթին՝ Ավստրիայի դեսպանին. «Եթե իմ հոտից վնաս հասնի կառավարությանը, նախ ինձ կախեցե՛ք, ապա ամբողջ ժողովրդին»: Պատասխանը լինում է. «Մենք Թուրքիայի ներքին գործերին չենք խառնվում, բայց ձեր անձը կարող է մնալ անվտանգ, պատրաստ ենք ձեզ օթևան տալ Եվրոպայի որևէ վայրում»: Հովակիմյանն այդ առաջարկը մերժում է և իր հոտի հետ աքսորվում: Կոնիայի իշխանությունները Հովակիմյանին առաջարկում են մեկնել Երուսաղեմ, քանի որ Ավստրիայի դեսպանը բողոքել էր նրա աքսորի դեմ: Բայց Հովակիմյանն իր տարագիր հոտի հետ գնաց Քաթմա, ապրեց բաց դաշտում, վրանների ավանում, ապա նրանց կարավանն անցավ Մեսքենե: Այստեղ նա ստանում է Ջեմալ փաշայի սպառնալից հեռագիրը, որ եթե Երուսաղեմ կամովի չմեկնի, ձերբակալված են ուղարկելու: Եվ ուղարկեցին: Նրան անվանում էին «Մեսքենեի առաջնորդ», որովհետև առաջնորդն էր հազարավոր վրանների տակ կծկված տասնյակ հազար բռնագաղթվածների:

Պարտիզակից ոչնչացվեց 2000, Օվաջըկից՝ 600, Աբսլանբեկից՝ 600, Դոնգոլից՝ 65, Սաբանջայից՝ 1000 ընտանիք[2]:

***ԲՈՒՐՍԱ.** – Բուրսայի Ջենկիլեր է գնում Թուրք սպա 100 զինվորի հետ: Նա հավաքում է գյուղի երևելի անձանց ու հայտնում, որ հայ բնակչությունը տեղահանվելու է: Գյուղացիներին ահաբեկելու համար ներկաներից չորս հոգու տանում են կամրջի մոտ ու սպանում: Այդ տեսնելով՝ 80 երիտասարդներ բարձրանում են լեռ և մի ամբողջ տարի կռիվ մղում Թուրք ջարդարարների դեմ: Նույնիսկ այդ ակնհայտ հուսահատական խելահեղ քայլը, որ անգամ ինքնապաշտպանություն էլ չէր, ավելի շատ հոգեբանական ընդվզում էր, քան փրկության համար կռիվ, Թուրքերը նորից անվանեցին ապստամբություն, հեռահար, կայսրության գոյությանը սպառնացող ինչ-որ ահարկու ծրագրի բաղադրիչ:*

Բուրսայի մասին Թալեաթը գրում է. «Հայերն այնտեղ ապստամբեցին և հարձակվեցին մուսուլմանների վրա: Բանակը հարկադրված էր իր ուժերի մի մասը պահել այդ վայրերում: Խուզարկությունները հայտնաբերել են հազարավոր զենքեր, ռազմամթերք, հազարավոր ռումբեր և այլ զենքեր, կոմիտեի (Դաշնակցության) փաստաթղթեր... Այդ շարժման մասնակիցների թվում էին նաև ուսուցիչներ և կրոնավորներ»[3]:

Իսկ ահա թե Կոլուչևը 1915 թ. օգոստոսի 16-ին ինչ է գրում Բուլղարիայի

---

[1] *"Геноцидът над арменците", ф. 321, оп. 1, д. 2462, с. 32-35.*

[2] ***Lepsius J.**, նշվ. աշխ., էջ 4:*

[3] ***Թալեաթի** հուշագրությունները, էջ 72:*

վարչապետին. «Բուրսայի տասնյակ հազարավոր հայերից միայն մի ծերուկ լուսանկարչի ժամանակավորապես թողեցին Բուրսա՝ Թալեաթ բեյի առաջ իմ անձնական միջամտությամբ: Նա զարմանք արտահայտեց, որ Բուրսայի հայերին աքսորելու միջոցառումն արդեն իրականացվել է...»[1]:

Տարագրվելու համար Բուրսայի հայերին 24 ժամ էր տրվել: Կանանց ուղարկում էին Արաբիա, տղամարդկանց՝ Միջագետք, երիտասարդներին՝ Սիրիա:

Ֆայեզ էլ-Ղոսեյնը գրում է. «Մի թուրք ուսուցիչ ինձ պատմեց, թե Բուրսայում գաղթին նախապատրաստվելու համար տրվեց երեք օր: Հայերը վաճառքի հանեցին իրենց ունեցվածքը, սայլեր վարձեցին և ճանապարհ ելան: Երբ ահագին հեռացել էին, համաձայն ստացած հրահանգի, կառապանները լծից արձակեցին ձիերն ու դժբախտ աքսորյալներին լքեցին ամայության մեջ: Գիշերն այդ նույն կառապանները վերադարձան ու կողոպտեցին հայերին: Վերջիններից շատերը մեռան սովից ու տանջանքներից: Մյուսներին կոտորեցին ճանապարհին, հայերի միայն փոքր մասը հասավ Դեր Զոր»[2]:

Բուրսայի կառավարիչ Թահսինը մայիսին զեկուցեց ՆԳ նախարարությանը. «Սանջակում բնակվող հայերի թիվը 66482 է և տարագրվելու ենթակա բոլոր հայերն արդեն աքսորված են»[3]:

Բուրսայում Ավստրիայի հյուպատոս Ս. Նադալենցկիի զեկուցագրի հիման վրա Կ. Պոլսում Ավստրիայի դեսպան Մալգրաֆ Պալավիչինին 1915 թ. օգոստոսի 3-ին իր երկրի արտաքին գործերի նախարարին գրում է. «Այստեղ ամփոփում եմ Բուրսայում մեր հյուպատոսական գործակատարի տեղեկագիրը, որում նկարագրված են այն ձևն ու եղանակը, որոնցով աքսորում էին հայերին: Հարուստ հայերին՝ նախքան նրանց տեղահանությունը, հարկադրում էին իրենց ունեցվածքը վաճառելու Միություն և առաջադիմություն կուսակցության անդամներին կամ այլ թուրքերի ... Փոքր Ասիայի խորքերում գտնվող ամերիկացի միսիոներները տեղեկացնում են, որ հայերի հսկայական զանգվածների կարավանները բնաջնջվում են սպանության, քաղցի և կամ հիվանդությունների միջոցով: Գերմանացի սպաները ևս, որոնք վերջերս գտնվել են Փոքր Ասիայում, պատմում են այն աղեչարժ տեսարանների մասին, որոնք տեղի են ունեցել այդ վայրերում»[4]:

Նույն տեղեկագրում հյուպատոսը գրում է. «Հայերին նախապես կարգադրել էին, որ ներկայանալով դեֆտերհանե (գրանցման գրասենյակ), հայտարարեն, թե ուզում են վաճառել իրենց տները կամ հողատարածքները, թե իրենց առաջարկված գումարը համապատասխանում է վաճառվող ունեցվածքի արժեքին»[5]:

Քաղաքի բանկերին կարգադրված էր հայերից ոսկեղեն և դրամ չընդունել,

---

[1] *"Геноцидът над арменците", ф. 321, оп. 1, д. 2462, с. 32-35.*

[2] ***Ghusayn F.,*** *Temoignage d'un Arabe Musulman sur I'innocence et les massacres des Arméniens, le Caire, 1917, p. 39.*

[3] ***Ղազարեան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 159-160:*

[4] ***Գրիկեր,*** *նշվ. աշխ., էջ 287:*

[5] *Wien HHSTA PA XII 209, Jenikoj, 31 August 1915.*

որպեսզի ճանապարհին հրոսակներն առատ կողոպուտ ունենային[1]:

Բուլղարական դեսպանատունը գրեց Սոֆիա. «Բուրսայի հայերին ... պարտադրել են ներկայանալ դատավորին» այն մահմեդականների հետ, որոնք գնելու են հայի անշարժ ունեցվածքը: Հայը հավաստում է, որ իր ունեցվածքը վաճառում է և ասում է գինը: Գումարը տրվում է հային և ձևակերպվում է գործարքը: Դատավորը հեռանում է, իսկ Թուրքերը մահվան սպառնալիքով հային հարկադրում են գումարը հետ տալ[2]:

Մի ավստրիացի՝ Թրանոն, հայտնել է, որ Բուրսայի քրդերը նախապես գնացել են տարագրության երթուղիներ՝ կարավանները կողոպտելու համար[3]:

Ռազմական դատարանում ընթերցվեցին Իթթիհադի կենտրոնից 1914 թ. հուլիս ամսից սկսած տեղերն ուղարկված ծածկագրերը: Դրանցից մեկն ուղարկվել էր Բուրսա և հանձնարարում էր «մէկ շաբթուան ընթացքին 200 անհատներ գտնել ... 20 հոգիներ արձանագրուեցան պահանջուած յատկութիւններով, սակայն ասոնք զինուորական ծառայութեան համար ոչ մէկ յատկութիւն ունէին... Թէեւ կառավարութիւնը հրամայեց հաւաքել եւ ղրկել նաեւ ոճրագործներ եւ աւազակութիւն ընելու վարժուած անհատներ՝ ամէն պարագայի տակ նոյնիսկ մեր մեջ այդպիսի ցածր բարոյականի տէր անհատներ պակսած ըլլալով՝ շատ քիչեր կան ... Շատ դժուար պիտի ըլլայ գտնել այդպիսի անհատներ եւ փախստականներ, որոնք վարժուած են թալանելու եւ կողոպտելու...

Կան անձնուրաց անհատներ, կառավարութեան տեսակէտին համաձայն՝ դատապարտուածներ եւ աւազակներ, որոնք ընտելացած են կողոպուտի եւ գողութեան, այսպիսիները զէնքի տակ չեն կրնար առնուիլ. կարելի պիտի ըլլայ զանոնք հաւաքել եւ իրարու մօտ բերել 500–1000 անհատներ Պուրսայի նահանգէն»[4]: Հարկ չկա ասելու, որ խոսքը նաև թուրքական չեթեախմբերի՝ «Թեչքիլաթի» մարտական ջոկատների ստեղծման մասին էր:

Բուրսայում երիտթուրքական կոմիտեի պատասխանատու քարտուղար Միդհատ բեյը հեռագիր է ուղարկում Գանգրից Բոլու, հայտնելու, որ բռնագաղթման ենթակա մարդկանց թիվն Անկարայի վիլայեթում հասել է 61 հազարի և որ այդ բռնագաղթը օգտակար է Բոլուի ապագա բարեհաջողության համար: Այս հեռագրից նույնպես հետևում է՝ Բոլուից, որը չէր մտնում ռազմական գործողությունների գոտու մեջ, բռնագաղթը հանդիսանում էր ոչ թե ռազմական կամ ոստիկանական միջոցառում, այլ լոկ Կոմիտեի ցանկությունների կատարում:

Նույն Միդհատը խոստովանել է. «Հայերի լքյալ գույքերը գտնվում էին պետական կալվածատիրական հիմնարկության պաշտոնատարների իրավասության տակ ... Տարագրված հայերի տների ավերածություններն ակնհայտ էին»[5]:

---

[1] Wien HHSTA PA XII 209, Brusa, 27 August 1915.

[2] "Геноцидът над арменците", ф. 321, оп. 1, д. 2462, с. 5-8.

[3] Wien HHSTA PA XII 209, Brusa, 27 August 1915.

[4] «Takvim-i Vekai», 25 մայիսի 1919 (№ 3557):

[5] Նույն տեղում, № 3506:

Արևմտյան Թուրքիայի չորս քաղաքներից հայերի ամբողջական տեղահանություններ չեղան: Դրանց մեջ էին Կ. Պոլիսն ու Զմյուռնիան: Պատերազմի նախօրյակին օսմանյան մայրաքաղաքում բնակվում էր չուրջ 200.000 հայ: 1895 թ. կոտորածից առաջ քաղաքում կար 250.000 հայ, որից 60.000-ը գավառի գաղթականներն էին, որոնց ջարդից հետո քաղաքից դուրս քչեցին: Պոլսից հեռացավ ևս 10.000 հայ: Նրանք բնակվում էին քաղաքի 45 թաղերում, ունեին 42 եկեղեցի, 53 դպրոց: Ամենահայաշատ թաղերից էին Գում Գափուն, Սամաթիան, Սկյուտարը, Բերան, Ղալաթիան, Օրթաքեոյը, Ենիքեոյը, Մեծ կղզին և այլն: Կաթոլիկ հայերն ունեին 13 եկեղեցի: Ապրիլյան ձերբակալություններից հետո մինչև պատերազմի ավարտն այդ քաղաքից ևս 34.000 մարդ աքսորվեց: 40000 պոլսահայերի ոչնչացրեցին Իզմիտի և մերձակա չրջանների քրդերը:

Օսմանյան մայրաքաղաքում երիտթուրքերի իշխանությունը թույլ էր: Այնտեղ թույլ էր նաև մահմեդական մոլեռանդությունը և ի զորու չէր մահմեդական լայն զանգվածներին մղել ոչնչացնելու հայերին: Դեռ ավելին, Կ. Պոլիսը հավանություն չէր տալիս պատերազմի մեջ Թուրքիայի մտնելուն: 1915 թ. մարտի 8-ին մայրաքաղաքում լուրջ ընդվզումներ տեղի ունեցան: 20.000 հոգի հավաքվեց սուլթանի պալատի մոտ՝ բողոքելու Բարձր Դռան գերմանամետ քաղաքականության դեմ: Միայն բանակի միջամտությամբ հնարավոր եղավ ցուցարարներին ցրել: Սակայն լարումը գնալով սաստկանում էր:

Մինչև բռնագաղթը Զմյուռնիա քաղաքում բնակվում էր մոտ 10.000 հայ: Նրանց ձեռքում էր տարազագործության արհեստը, թզի, աֆիոնի, ծխախոտի առևտուրը, ունեին երեք եկեղեցի, երկու դպրոց, երկու որբանոց: Քաղաքում գործում էին նաև հայկական մանկապարտեզ, ընթերցարան, տպարաններ, հիվանդանոց, Արևելյան ակումբը:

Զմյուռնիայում հայերին բռնագաղթելու առաջին փորձը կատարվեց 1915 թ., դեկտեմբերի 3-ին. քաղաքից քչվեցին մեծ թվով հայ ընտանիքներ: 1915 թ. աշնանը Թալեաթը հրամայեց քաղաքից հեռացնել բոլոր հայերին:

Զմյուռնիայի բռնագաղթի կապակցությամբ Կ. Պոլսում Գերմանիայի հավատարմատար Ռադովիտցը 1916 թ. նոյեմբերի 29-ին հեռագրեց Բեռլին. «Այս օրերին սկսվել է հայերի զանգվածային աքսորը Զմյուռնիայից ... Պատրվակ է ծառայել կաթոլիկների գերեզմանատանը հայտնաբերված հին ռումբերը, որոնք իբր հայերն են թաքցրել: Վալին հայ եպիսկոպոսից պահանջում է անվանել կասկածելի մարդկանց անունները և հանձնել թաքցրած զենքերը: Եպիսկոպոսը պատասխանում է. որ նման մարդիկ իրեն հայտնի չեն և թաքցրած զենք չկա»:

Սկզբում զմյուռնահայերի տարագրության կողմնակից էր նաև ֆոն Սանդերսը: Նա նաև մասնակցեց դեպի Բաղդադի երկաթուղի հայերի տեղափոխման աշխատանքների կազմակերպմանը, իսկ ապա նաև Դեր Զոր նրանց արտաքսմանը, որպեսզի երկաթուղու չրջանում մարդկային կուտակումներ չլինեին: «Այդ գերմանացի գեներալը,- գրում է Լ. Սկիպոը,- Լիման ֆոն Սանդերսը, սկսեց հայերի տեղահանությունը, նրանց հեռացնելով երկաթուղու հարևանությունից, որպեսզի խոչընդոտի սաբոտաժին»: Դա հավանական էր, որովհետև, ինչպես նշում է Է. Լենջիելը, հայկական «կոտորածը Բեռլին-Բաղ-

դաղ երկաթուղու կառուցման իրավունքի նախապատրաստման մասն էր»[1]:

Կ. ՊՈԼԻՍ. – Ինչ որ 1915 թ. կատարվեց Կ. Պոլսում, հանդիսացավ հայության ամբողջական բնաջնջման սկիզբ ու միաժամանակ, դա արտաքին աշխարհից «թաքցնելու» փորձ: Դա նաև դամոկլյան սուր էր պոլսահայությանը քաղաքական դիակ դարձնելու, նրան հաշմելու համար: Այդ քաղաքում «հայերի բախտը կախված է մազից ... Որևէ օր չի անցնում, որ Ղալաթիայի կամրջի վրա կամ Ստամբուլի մեծ հրապարակում» հայ մահապատժի չենթարկվի[2]: 1915–1918 թթ. Կ. Պոլսից արտաքսվեց 34.000 հայ, որոնց մեծ մասը ոչնչացվեց: Իթթիհադը նաև նախապատրաստում էր քաղաքի ամբողջ հայության բռնագաղթը, որը «չէ գործադրուած չնորհիւ օտար ճնշումներու»[3]:

Պոլսահայերին ամբողջությամբ չտեղահանելը հետապնդում էր նաև անվտանգության խնդիրներ:

Կ. Պոլսում Բուլղարիայի ներկայացուցիչ Ն. Կոլուչևը 1915 թ. հունիսի 27-ին տեղեկագրեց. «...Եթե թուրքական կառավարությունը փորձի մայրաքաղաքից տեղահանել և հեռացնել Անատոլիայի խորքերը այն հայերին, որոնք ծնվել են գավառում, բայց այժմ բնակվում են այստեղ, դա գուցե առիթ դառնա, որպեսզի մայրաքաղաքի հայ բնակչությունը դիմի ինչ-որ հուսահատական գործողությունների»[4]: Դիվանագետի այս հաղորդագրությունը բացատրում է նրա մայիսի 24-ի նամակում արտահայտված այն միտքը, թե «Կ. Պոլսում բնակվող հայերի անսովոր հաշվառում է կատարվում, որպեսզի պարզեն գավառներում ծնվածներին, որոնք ... խմբերով կամ ընտանիքներով տեղահանվելու են դեպի երկրի խորքերը»[5]:

Երեք ամիս անց նույն Ն. Կոլուչևը գրեց, որ Կ. Պոլսում «հավաքում ու ոչնչացնում են գավառներից եկած» հայերին: Իբր գավառներում ընտանիք ունեցողներին ուղարկում են նրանց մոտ, մինչդեռ «այդ ընտանիքները վաղուց տարագրվել կամ ոչնչացվել են»: Թուրք դահիճը որևէ տեղ հային չի խնայում: Եթե վճռական քայլեր չձեռնարկվեն, հայ «ժողովուրդն անհետանալու է ամբողջ մարդկության աչքի առաջ, որի անտարբերությունը պատմությունն արձանագրելու է զարմանքով ու վրդովմունքով»[6]:

Հուլիսի 15-ին նա գրեց, թե Կ. Պոլսի շրջակայքում «հայերի ջարդերն ու հալածանքները շարունակվում են, որոնք հայ ժողովրդին վերջնականապես բնաջնջելու ահավոր կերպարանք են ստանում: Ամենուրեք հայկական բնակավայրերը լրիվ մարդաթափվում են: Կանայք ուղարկվում են թուրքական կենտրոնները և հանձնվում հարեմներին, երեխաները բաժանվում են թուրք ընտանիքներին՝ թուրքացնելու համար, տղամարդիկ աքսորվում են Միջագետք, Արաբիա և ուրիշ ծայրամասեր: Առավել կրթվածները հանձնվում են

---

[1] **Аванесов С.**, Положение национальных меньшиств в Турции, Ер., 1963, с. 98-99.
[2] "Армянский вестник", 1916 г. № 12-13.
[3] **Ղազարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 153:
[4] "Геноцидът над арменците", ф. 321, оп. 1, д. 2462, с. 61, 76.
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

ռազմական դատարանին»[1]: Սամսոնում, Ինեպոլում, Ունիեում հայերի մեծ մասին թուրքացրել են: Թերմեում մի թուրք մտել է եկեղեցի, որը վերածվել էր մզկիթի և նամազ արել: Քահանան իր ընտանիքի հետ փակվել է տանն ու այրվել, որպեսզի թուրքերի ձեռքով չմորթվի[2]:

Գերմանացի լրագրող Հ. Շտուրմերը «Պատերազմական երկու տարի Կոստանդնուպոլսում» գրքում պատմում է, որ 1915 թ. ամռանը նրա կինը միայնակ գնում է չուկա և չուտով վերադառնում առանց գնումների, գունատված ու դողալով: Թուրքական ոստիկանատան մոտով անցնելիս նա լսել էր սարսափելի հառաչանքներ, աղեկտուր լաց, «կարծես թե անասուն էին մորթում»: Նա ոստիկանատան դռանը հավաքված մարդկանց հարցրել է, թե դրանք ի՞նչ ձայներ են: «Հայ են տանջում»,- եղել է պատասխանը[3]:

Կ. Պոլսում հայերի դեմ միջոցառումները սերտորեն կապակցված էին երիտթուրքերի իշխանության դեմ գործողությունների հետ, համենայն դեպս, դրանք դիտվում էին որպես Իթթիհադի՝ կառավարող կուսակցություն մնալուն միտված վարչական-ոստիկանական ձեռնարկումներ:

Երբ վտանգված էր Դարդանելը, դրա հետ միասին նաև Կ. Պոլիսը, լորդ Քիչները ծրագրեց իրականացնելու երիտթուրքերին իշխանազրկելու պետական հեղաշրջում, ինչը օրինաչափ ձեռնարկ էր, որովհետև Դարդանելի անկումը նշանակելու էր նաև երիտթուրքական կառավարության, անգամ նաև Իթթիհադի՝ որպես կուսակցության անհետացում:

Քաղաքում երևացին պաստառներ, որոնք դատապարտում էին Թալեաթին ու նրա կառավարությանը «իբրեւ պատասխանատու այն բոլոր աղէտներուն, որոնք Թիւրքիայի գլխուն եկած էին»: Բեղրին երիտասարդներին հավաքում ու արտաքսում էր մայրաքաղաքից: «Իր նպատակն էր Պոլիսը փրկել բոլոր անոնցմէ, որոնք կրնային ժէօն Թիւրքերու դէմ յեղափոխութիւն մը յարուցանել»: Բեղրին այդ «յեղափոխութիւնէն աւելի կը վախնար, քան անգլիական նաւատորմիղէն»[4]:

Թուրքական կառավարությունը պատրաստվում էր ո՛չ միայն Կ. Պոլսից հեռանալ, ոչ միայն մայրաքաղաքը փոխել, այլև քաղաքը վերածել «մոխիրների դեզի»: Քաղաքում հավաքվում էր մեծ քանակությամբ նավթ, դրանք բաշխվում էին ոստիկանական կետերին, որպեսզի ազդանշանին հետևեր հրդեհը, ինչը դժվար չէր, քանի որ Կ. Պոլսը հիմնականում փայտաշեն էր:

Թուրքերն սկսեցին Կ. Պոլսից հեռանալ, բանկերը Փոքր Ասիա էին տեղափոխում իրենց հիմնադրամները, Բարձր Դռան փաստաթղթերը փոխադրվեցին Էսքիշեհիր, պատրաստվում էին քաղաքից հեռանալ նաև դեսպանությունները, թաքցվեցին թանգարանային ցուցանմուշները, երկու գնացքակազմ պատրաստ կանգնած էր սուլթանին ու գերատեսչություններին քաղաքից հանելու:

Օսմանյան կառավարությունում միակ մարդը, որը Դարդանելն անառիկ

---

[1] "Геноцидът над арменците", ф. 321, оп. 1, д. 2462, с. 61, 76.

[2] Նույն տեղում:

[3] Stuermer H., նշվ. աշխ., էջ 50:

[4] Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 164-165:

էր համարում և Կ. Պոլսի խուճապը՝ անտեղի, Էնվերն էր: Նա հայտարարեց, «Ես պատմութեան մէջ պիտի անցնիմ իբր այն մարդը, որ ապացուցած է Անգլիային եւ իր նաւատորմին պարտելիութիւնը: Պիտի ցուցնեմ, որ Անգլիայի նաւատորմը անյաղթելի չէ»[1]: Սակայն Սարիղամիշի խայտառակ պարտությունը հույժ բացասաբար էր անդրադարձել «Թուրքական Նապոլեոնի» հեղինակության վրայ. նրա խոսքն ու կարծիքը արժեզրկվել էին:

Իսկ կայսրությունում խմորումները գնալով սաստկանում էին: Սիրիայում Ջեմալը գրեթե անկախ էր: Նա կազմել էր իր կառավարությունը, Զմյուռնիայի վալի Ռահիմը արհամարհում էր Կ. Պոլսի կառավարությանն ու չէր կատարում նրա որոշումները, Ադրիանապոլսի վալի Հաջի Ադիլը մտադրություն ուներ նույնպես անկախանալ: Արաբիան գրեթե անկախ էր: «Հպատակ ցեղերուն մէջ,- գրում է Մորգենթաուն,- ապստամբութեան ոգին արագօրէն կը տարածուէր: Յոյները եւ հայերը սիրով պիտի ողջունէին Դաշնակիցներու բազուկը զօրացնելու առիթ մը: Տիրող ելեւմտական եւ ճարտարարուեստական պայմանները կը թուէին յեղափոխութիւնը անխուսափելի դարձնել... Նոյնիսկ թիւրքերը կ'աղոթէին, որ անգլիացիներն ու ֆրանսիացիները գրաւէին իրենց քաղաքը, որովհետեւ ատիկայ պիտի փրկէր զիրենք իշխող խմբակէն, պիտի ազատագրէր ատելի գերմաններէն, խաղաղութիւն պիտի բերէր եւ վերջ պիտի դնէր իրենց տառապանքներուն»[2]: Հ. Մորգենթաուն, գուցե ինչ-որ չափով գույները խտացնում է, չեչտադրությունները փոխում, օրինակ, թուրքերը գերադասություն տալիս էին Անգլիային ու Ֆրանսիային ոչ թե թուրքական իշխանությունների հանդեպ, այլ Ռուսաստանի, սակայն նա իրավիճակի համայնապատկերը գծագրում է իրականությանը մոտ երանգներով: Համենայն դեպս՝ ճշմարիտ է, որ Թալեաթը հաջողեց ձեռք ձգել երկու լավագույն մակնիշի արագընթաց ավտոմեքենա, որպեսզի հարկ եղած պահին թողներ քաղաքն ու անհետանար:

Բայց ընդհանուր տագնապը, նախապատրաստություններն ավելորդ դարձան, որովհետև, կոպիտ ասած, Անգլիան չուզեց գրավել Դարդանելը, նա չկամեցավ դա նվեր մատուցեր Ռուսաստանին, քանի որ Անտանտի տերությունները Նեղուցները համարում էին Ռուսաստանի չափաբաժինը:

Բայց մարտերը նեղուցների շրջանում դեռ շարունակվում էին, Անտանտը մարտի մեջ մտցրեց նաև հետևակը և սկսեց ուժեղ ռմբակոծությունների ենթարկել թուրքական ո՛չ միայն դիրքերը, այլև բնակավայրերը: Դրան Էնվերը պատասխանեց մի հրեշավոր միջոցառումով՝ Կ. Պոլսում բնակվող 3000 անգլիացիներին ու ֆրանսիացիներին բռնագաղթեցնել ռազմաճակատային գծի շրջան՝ «իբրև նշանակետ Դաշնակից նավատորմիղին»: Դա մեծ աղմուկ առաջացրեց և Էնվերը հետ կանգնեց զանգվածային տեղահանման քայլից: Մորգենթաուն նկատում է, որ թուրքերը մտածում էին, որ պատերազմի ավարտից հետո «զիրենք պիտի դատէին ոչ թէ իրենց հպատակներու հանդէպ

---

[1] **Մորգենթաու Հ.**, նշվ. աշխ., էջ 172:
[2] Նույն տեղում, էջ 190:

վարուելու եղանակին համար, այլ՝ Թշնամի Տէրութիւններու հպատակներուն հանդէպ վարմունքի իրենց կերպին համար: Այս մտածումին արդիւնքն էր, որ ֆրանսացի մը, անգլիացի մը, իտալացի մը Թիւրքիայի մէջ աւելի մեծ ապահովութիւն կը վայելէր, քան հայ մը, յոյն մը, կամ հրեայ մը»[1]:

Հաջողությունը Դարդանելում Թուրքերի բարբարոս կրքերի և անպարտելիության զգացողության բռնկում առաջացրեց: Արհամարհանքն ու սպառնալից կեցվածքը վերածվեցին ուրիշ ժողովուրդների հանդեպ Թուրքերի ու նրանց կառավարության բնավորության:

Մինչ այդ վարանոտ ու վախվորած օսմանցին, որ եվրոպական դիվանագիտության լաբիրինթոսում իր համար չավիղ էր հարթում օգտվելով «եվրոպական պետությունների պառակտվածությունից», դարձավ գոռոզ, խրոխտ, «գրեթե հանդուգն, հպարտ ու հաստատակամ», նա որդեգրեց «բացարձակապես անարգական դիրք» քրիստոնյաների հանդեպ: «Քսաներորդ դարու կոչտ ու անխնամ Թիւրքը կ'աներեւութանար եւ իրեն տեղը կ'երեւար 14-րդ եւ 15-րդ դարերու Թիւրքը»՝ ամբարտավան, հաղթական, բարբարոս, մյուս բոլոր ժողովուրդներին արհամարհող:

«Կատարելապէս անմիտ գոռոզութիւն մը,- նկատում է Մորգենթաուն,- տիրական յատկորոշիչ մեծ նշանն է այս մարդկային տարօրինակ ցեղին... Թիւրքը կրնայ ստրկօրէն քաղաքավարի ըլլալ... (բաց ան) մտովին կը սարսափի իր քրիստոնեայ բարեկամէն, իբր գորշ բան մը», Թուրքը չի կարողանում հասկանալ, որ գերու և պարտված ժողովրդի միջև տարբերություն կա: «Երբ Թիւրքերը երկիրը մը կը տիրէին, հոն կը գտնէին որոշ Թիւով ուղտեր, եզեր, շուներ, խոզեր եւ մարդկային արարածներ»: Թուրքի համար ձին կամ ուղտը շատ ավելի արժեք ուներ, քան մարդը: Քրիստոնյաները պետք է երախտապարտ լինեն Թուրքին, որ իրեն ռայա՝ նախիր է անվանում, որովհետև նախիրը պետքական է, իսկ նրանք՝ ոչ: Դեռ ավելին, հպատակ գյավուրները ո՛չ միայն պետքական չեն, այլ՝ վնասակար ու վտանգավոր են: Նրանց պատճառով էր կայսրությունը տարածքներ կորցնում: Այդ հպատակները օսմանյան տարածքների վրա իրենց անկախ պետություններն ստեղծեցին: Մնացել էին չորս ժողովուրդներ՝ արաբները, քրդերը, հայերը և հույները: Ամենավտանգավորը հայերն էին, որովհետև նրանց Թիկունքին կանգնած էր Ռուսաստանը: ԵրիտԹուրքերը մեղադրում էին իրենց նախորդներին, որ գյավուրներին չէին բնաջնջել, որովհետև, եԹե բնաջնջած լինեին բուլղարներին, հայերին, ռումինացիներին, սերբերին և այլն, նրանց հայրենիքները կդառնային օսմանյան հայրենիքի անկապտելի մասեր, Թուրքերի հայրենիք:

Ընդհանուր առմամբ, դժվար է որոշակիորեն ասել Թե ինչքա՞ն մարդ տարագրվեց Կ. Պոլսից: Հավանաբար պատճառը՝ ա) քաղաքի մեծությունն էր և բ) մայրաքաղաքում ջարդարարները զգույշ էին գործում: Մենք որոշակիորեն չգիտենք, Թե 1915 Թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում քանի՞ մարդ ձերբակալվեց: Հաշվում են 235, 250, 284 և այլ Թվեր: Շաբաթվա ընթացքում ձերբակալված-

---

[1] ***Մորգենթաու Հ.***, *նշվ. աշխ., էջ 211:*

ների թիվը նույնպես հստակ չէ՝ 600, 800, 1500 հոգու և այլն: 1915 թ. մայիսի 5-ին կազմված մի փաստաթղթում նշվում է, որ Կ. Պոլսում ձերբակալվել էր 1800 հոգի: Ձերբակալվածները մեղադրվում էին «անտանտամետության և լրտեսության համար»[1]:

ԶՄՅՈՒՌՆԻԱ. – Հայերի խմբովի ձերբակալությունը՝ 30 հոգի տղամարդ, կին, երեխա սկսվեց 1914 թ. նոյեմբերի 9-ին: Նրանց լցրեցին վագոններն ու քաղաքից հանեցին:

Հայերի տեղահանության գործը ղեկավարում էր քաղաքի ոստիկանապետը, որին լայն իրավասություններ էին տվել: Ֆոն Սանդերսը վալուն զգուշացրեց, որ տեղահանությունը լուրջ հարված կհասցնի Քառյակ զինակցության ռազմական շահերին և ինքն այլևս դա չի հանդուրժի: Նա սպառնաց, որ եթե ոստիկանությունը փորձեր «հայերը տեղահանել իր հրամանատարութեան (5-րդ բանակի) շրջանէն, ինքը ստիպուած պիտի ըլլար զինուորական ոյժ գործադրելու անոր դէմ եւ արգիլելու գործողութիւնը»[2]: Վալին պատասխանեց, թե Իթթիհադի տեղական կոմիտեն դժգոհ է իրենից, որ հայերին խնայում է: Դրա հետևանքով իր դիրքերը խարխլվել են նաև Կ. Պոլսում, քանի որ տեղահանության հրամանը Կ. Պոլսից է ստացվել:

Եվ իսկապես, «Թեսֆիրի էֆքիար» թերթը հոկտեմբերի 6-ին պահանջեց հայերի արտաքսում բոլոր այն քաղաքներից, որտեղ դեռևս տեղահանություն տեղի չէր ունեցել: Նույն իրողությունը հաստատեց Թուրքիայում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Աբրահամ Էլքսը 1916 թ. նոյեմբերի 17-ին. «Զմիւռնիայի մէջ սկսաւ առաջին տեղահանութիւնը, որովհետեւ որպէս թէ յեղափոխական դաւադրութիւն մը երեւան է հանուած կառավարութեան կողմէ»[3]:

Սանդերսը գրեց. «Քանի որ նման զանգվածային բռնագաղթի հետևանքները խուժում են նաև ռազմական ոլորտներ (զինապարտներ, երկաթուղու օգտագործում, սանիտարական միջոցառումներ, քաղաքի բնակչության հուզումներ...), ապա ես վալուն տեղյակ պահեցի, որ առաջիկայում առանց իմ թույլտվության նման զանգվածային ձերբակալություններ և բռնագաղթեր չպետք է լինեն: Նրան ասացի, որ նման գործողությունների կրկնության դեպքում հրամայելու եմ զենքի ուժով դրանց վերջ դնել:

Վալին զիջեց և խոստացավ, որ բռնագաղթեր այլևս չեն լինի:

Սակայն, քանի որ նա պնդում է, թե իրեն դրան մղել է Կ. Պոլիսը (Թալեաթ բեյը), ես համոզված չեմ, թե հայերին տեղահանելու այլ ուղի չի ընտրվի»:

Զմյուռնիայում բնակվում է 6-7 հազար հույն: Նրանց թվում են քաղաքի ամենամեծահարուստները:

Գերմանացի դիվանագետները Գերմանիայի շահերի առումով Զմյուռնիայի տեղահանությունը գնահատում էին բացասական նաև այն պատճառով, որ դա

---

[1] **Beylerian A.**, Les Grandes Puissances, I'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises. 1914-1918, Paris, 1983, d. № 23.

[2] **Լեւոն Վարդան**, Ժամանակագրութիւն հայկական տասնհինգի. 1915-1923, Պէյրութ, 1970, էջ 129:

[3] Նույն տեղում, էջ 138:

հասարակական չրջանակներում համարվելու էր Բեռլինի ձեռքի գործը, որպեսզի չարքից հանի գերմանացիների հետ մրցող հայ առևտրականներին[1]:

Ռադովիտցը նչում է, որ հայ առևտրականները գերմանացիներից մեծ քանակությամբ ապրանքներ են վերցրել, որոնց գնի մի մասը վճարված չէր, իսկ լքյալ գույքերի վերաբերյալ օրենքի պայմաններում գերմանական չվճարված ապրանքներին տիրանալու էին թուրքական կառավարությունը կամ թուրք խուժանը:

Քաղաքի հայկական գերեզմանատանը 1916 թ. վերջին հայտնաբերված զենքերն ու պայթուցիկ նյութերը Արդուլ Համիդի ժամանակներից մնացածներ էին, իսկ այդ առիթով տեղահանված հայերի մեծ մասը հարուստներն էին, այսինքն ինչպես Կ. Պոլսից գրեցին 1916 թ. նոյեմբերի 25-ին, այդ աքսորը չատ ավելի ահաբեկելու նպատակ ուներ[2]: Դրանով պետք է բացատրել, որ ֆոն Սանդերսը համառություն դրսևորեց հայերի հալածանքները դադարեցնելու և տեղահանվածներին Զմյուռնիա վերադարձնելու առումով: Այդ քաղաքում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Ռադիմսկին գրեց. «Նչված դեպքը հստակորեն ապացուցում է, թե ինչպիսի հալածանքների և վտանգների է չարունակ ենթարկվում հայ բնակչությունը Թուրքիայում»[3]:

Եվրոպական թերթերի թղթակիցներից մեկը գրում է. «Զմյուռնիայի վալի Ռահմի բեյը և Ադրիանապոլսի վալի Հաջի Ադիլ բեյը, հայտարարել են, թե չեն ուզում հայերին աքսորել: Երբ կանչվեցին ներքին գործերի նախարարի մոտ, երկուսն էլ պնդեցին իրենց որոչման վրա ... Ռահմին ավելի կրթված է, քան Թալեաթը ... Նա մեծ թվով կողմնակիցներ ուներ Կոմիտեում»[4]:

Այնուամենայնիվ, այդ քաղաքի հայերը չտեղահանվեցին ֆոն Սանդերսի համառության չնորհիվ:

Երկրորդական նչանակություն չունեցավ նաև տեղի ոչ-թուրք բնակչության մերժողական վերաբերմունքը բնաջնջման թուրքական քաղաքականության հանդեպ: Խոսքն առաջին հերթին հույներին է վերաբերում: Զմյուռնիայի մերձակայքում գտնվող Ֆո Զա քաղաքում, որտեղ բնակվում էին 8000 հույն և 400 թուրք, դեռ 1914 թ. իրականացվեցին հույների ջարդեր, ինչը լայն արձագանք ունեցավ Եվրոպայում: Ֆրանսիացի ականատես Մանսյեն գրում է. «Կազմակերպված ավազակախմբերը գիչերը չարունակում էին կողոպտել քաղաքը: Լուսաբացին լսվեցին հրացանաձգարկի ձայներ: Երբ դուրս եկանք՝ սարսափելի տեսարանի ականատես եղանք: Քաղաք խուժած ասպատակները զինված էին «Գրաս» մակնիչի հրացաններով: Մի տուն բոցերի մեջ էր: Քրիստոնյաների ամբոխները վազում էին դեպի նավահանգիստ՝ նավակներ ճարելու, ջարդից փրկվելու: Մահամերձ մարդկանց կանչերը խլացնում էին հրացանային կրակի ձայները»: Թուրքերն ամբողջ օրը կողոպտեցին ու սպանեցին: Սպանվածների և վիրավորների հիմնական մասը ծերեր էին:

Մահմեդական ամբոխին քաղաքից դուրս քչելու համար զորք բերվեց, բայց

---

[1] R 14094, Ab. 31127.

[2] Wien HHSTA PA XII 463, Konstantinopel.

[3] Նույն տեղում:

[4] Lepsius J., նչվ. աչխ., էջ 156:

զինվորները չարունակեցին ավազակների կիսատ թողածը: Այսինքն՝ կողոպուտն ու սպանությունները տեղի էին ունեցել ո՛չ թե ամբոխի նախաձեռնությամբ, այլ կազմակերպված էին ինչ-որ ուժերի կողմից[1]:

1910 թ. մարդահամարով՝ Զմյուռնիայի վիլայեթի 289.000 բնակչից հայ էր 54.000-ը: 1913 թ. մարդահամարով՝ հայերի թիվը 4000-ով պակասել էր:

Զմյուռնիայի հայության ոչնչացման երիտթուրքական ծրագիրը կյանքի կոչեցին քեմալականները, որոնք 1922-ին հայերին ու հույներին դաժանորեն ջարդեցին և վտարեցին քաղաքից ու մերձակա բնակավայրերից:

ԿՈՆԻԱ. – Թուրքիայի այն քաղաքներից էր, որը ո՛չ միայն աքսորի էր ուղարկում, այլ նաև աքսորյալներ ընդունում: Ճահճոտ, առողջության համար վնասակար այդ նահանգը սկզբում նախատեսված էր դառնալու հայերի հավաքատեղի, բայց հետո ծրագիրը փոխվեց: Տեղահանված և այստեղ բերված հայերն ուղարկվեցին հարավի անապատներ, որից հետո սկսվեց տեղաբնակ հայերի տեղահանությունը մահմեդական մոլեռանդության օրրաններից մեկից՝ սելջուկ-թուրքական առաջին մայրաքաղաքից:

Բուլղարիայի դեսպան Ի. Համամջիևը հեռագրեց, թե Կոնիայի վալին «Կ. Պոլսից հրաման է ստացել Անատոլիայի կողմերն աքսորել առանց բացառության բոլոր հայերին, իսկ նրանց տներում տեղավորել Ռումելիայից եկած մուհաջիրներին: Սակայն նկատի ունենալով հայ բնակչության անբասիր վերաբերմունքը իշխանության հանդեպ, նահանգապետը մերժել է գործադրել այդ հրամանը...»[2]:

Ռազմական դատարանում Կոնիայի նախկին վալի Ջելալը հայտարարեց, որ ինքը «թեև աշխատել է պաշտպանել Կոնիայի հայությանը, սակայն դոկտ. Նազրմի ուղարկած երեսփոխան Ալի Ռիզա էֆենդին բարեկամաբար խորհուրդ տվեց չհամառել այն խնդիրներում, որոնց մասին Իթթիհադի ընդհանուր կենտրոնն արդեն որոշում կայացրել է երկար քննարկումներից հետո: Այդ պատճառով ինքը հարկադրված է եղել հրաժարվել զբաղեցրած պաշտոնից և գնալ Կ. Պոլիս՝ հանդիպելու Թալեաթի ու Նազրմի հետ՝ նրանց հասկացնելու կատարվածի վտանգավոր հետևանքները: Սակայն նրանք պատասխանել են, թե համոզված են, որ այն ինչ կատարվում է, անհրաժեշտ և օգտակար է: Նազրմն այնքան առաջ գնաց, որ պնդեց, թե այդ ձեռնարկումն արմատապես լուծել է Արևելյան հարցը[3]:

Երիտթուրք պարագլուխ Ազմին Կոնիայի հայերի դժգոհության առթիվ ասաց. «Հայերի հանդեպ կառավարության քաղաքականությունը փոխվել չի կարող: Կոնիայի հայերը թող գոհ լինեն, որ իրենց տարան մերձակա շրջաններ: Մոտ օրերս լսելու են, որ մյուս նահանգների հայերը կոտորված ու ջարդված են: Սա կառավարական որոշում է: Ես էլ գիտեմ, որ Կոնիայի հայությունն անմեղ է, բայց կառավարության որոշումը փոխելն անհնար է»[4]:

---

[1] " Объектив" (София) 1988 г., № 2.

[2] "Геноцидът над арменците", ф. 321, оп. 1, д. 2462, с. 26.

[3] **Անտոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 284-285:

[4] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 500:

Իթթիհադի պատասխանատու քարտուղարների դատավարության մեղադրական եզրակացության մեջ գրված է. «Տեղահանության ընթացքում մի չարք մարդկանց դրամը, գույքը և ունեցվածքը հափշտակելու և կոտորածին օժանդակելու հանցանշաններով մեղադրվում են Կոնիայի նախկին վալի Ռ. Սամիհ բեյը, ոստիկանության նախկին պետ Սաադէդդին բեյը, գյուղատնտեսության տեսուչ Թոտորաքի բեյը, Ակչեհիրի Ջիհանբեյլի նահիեի կառավարիչ Ֆեհմի էֆենդին, Ակչեհիրի քաղաքագլուխ Մ. Քյամիլը և Սպարտայի բանտում կալանքի տակ գտնվող ոստիկանապետի նախկին տեղակալ Հ. Բասրի էֆենդին»[1]:

Գերմանացի մասնագետները բողոքեցին. «Այս անագորոյն վարմունքը տիեզերական պատմութեան մէջ անջնջելի արատ կը մնայ ո՛չ միայն Թիւրքերու համար, այլեւ մեզի՝ գերմանացիներուս համար...»[2]:

Կոնիայից բռնագաղթված հայության վիճակի մասին պատկերացում են տալիս Կարմիր խաչի բժիշկ Վ. Պոստի կատարած լուսանկարները, որոնցում պատկերված են «ոտքով հարյուրավոր մղոն կտրած» կամ էլ «ճանապարհի մեծ մասը լեփ-լեցուն ապրանքատար վագոններով» անցած, «մեծ մասով հիվանդացած կամ մահացած», «ծանր փորձություններից ուժասպառ եղած, հյուծված» հայ տարագիրները[3]:

Կոնիայի ոստիկանապետ Սաադէդդինը չպրտեց տեղահանված հայերի հասցեին. «Երիտասարդ Թուրքերի կենտկոմի որոշումով օսմանյան կառավարությանը հրամաններ արձակեց, և երեսփոխանական ժողովը վավերացրեց այդ որոշումը, որ վերապրող հայերը պետք է անապատ ուղարկվեն այնտեղ վրանների տակ ապրելու համար»[4]:

Իսկ վալին ասաց. «Հայ եք չէ՞, այս կամ այն ձևով դատապարտված եք այս պատերազմի ընթացքում մեռնելու: Սա՛ է կառավարության վճռական որոշումը...»[5]: Գերմանացի բժիշկ Վ. Պոստը 1915 թ. հոկտեմբերի 17-ին Կոնիայի հայության հետ կատարվածի մասին գրում է, որ հայերի «նկատմամբ կիրառվում է դաժան ու մշակված մի եղանակ՝ պարբերաբար ոչնչացնելու միջոցով նրանց թիվը նվազեցնել: Հայերի բնաջնջումը լոկ ժամանակի հարց է»[6]:

Կոնիայում,- գրում է Նիպագեն,- դեռևս բնակվում են մի քանի հազար աքսորվածներ Կ. Պոլսից՝ բժիշկներ, գրողներ, առևտրականներ: Նրանք աշխատում են իբրև հանքափորներ և հող փորողներ Բաղդադի երկաթուղու Այրան-Ինթիլլի հատվածում, 1500 առողջ հայ տղամարդիկ, կանայք ու երեխաներ, որոնց մեջ կան նաև վաթսունամյա տատիկներ և 6-7 տարեկան չատ երեխաներ: Ներկայումս ավագ ինժեներ Մոկքը նրանց դեռևս սնունդով ապահովում է, սակայն նրանց անունները Թուրքական իշխանություններն արդեն գրանցել են: Հենց որ աշխատանքն ավարտեն - այդ կլինի 2-3 ամիս հետո - հավանա-

---

[1] «Takvim-i Vekai», 1919 թ., № 3580.

[2] **Տաշեան Յ.**, նշվ. աշխ., էջ 509:

[3] **Դևիս Լ.**, նշվ. աշխ., էջ 50:

[4] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 509:

[5] «La Renaissance», 23 դեկտեմբերի 1918 թ.:

[6] **Մորգենթաու Հ.**, նշվ. աշխ., էջ 395:

բար այդ հայերին «ապրելու նոր տեղ» կհատկացնեն, այսինքն՝ տղամարդկանց կտանեն կսպանեն, գեղեցիկ կանայք և աղջիկները հարեմ կընկնեն, իսկ մյուս-ներին անապատում առաջ ու հետ կքշեն, մինչև բոլորը զոհվեն[1]:

Կոնիայում բնակվող գերմանացիները Կ. Պոլսում Գերմանիայի դեսպանին գրել էին, թե «ջարդը հավանաբար հանգեցնելու է հայերի լրիվ ոչնչացման»: Իսկ ոստիկանապետ Սաադէդդինը հրապարակավ ասաց ճշմարտությունը, «Երիտասարդ Թուրքերի կենտկոմի որոշմամբ օսմանյան կառավարությունը հրաման արձակեց, և խորհրդարանը վավերացրեց այդ հրամանը, որ հայերը պետք է ուղարկվեն անապատ՝ այնտեղ վրանների տակ ապրելու»:

ԱԴՐԻԱՆԱՊՈԼԻՍ. – Պալավիչինին 1915 թ. նոյեմբերի 2-ին գրում է. «Մինչև հիմա թվում էր, թե այն հայերին, որոնք ապրում են բուն հայկական շրջաններից դուրս, տեղահանում չի սպառնում: Սակայն արդեն մի շաբաթ է, ինչ լուրեր են հասնում նաև Ադրիանապոլսից, որ այնտեղի հայերը նույնպես վտարվում են»[2]:

«Անկարելի է նկարագրել արտաքսումների տեսարանները,- գրում է Ադրիանապոլսում Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Ա. Նադամլենցկին 1915 թ. նոյեմբերին,- հիվանդներին, ծերերին ու երեխաներին դուրս էին քաշում անկողնուց և բռնությամբ տանում: Անօգնական, անմեղ մարդկանց հարցում որևէ հանգամանք հաշվի չէր առնվում, խիղճ չկար, իշխում էին միայն բիրտ ուժն ու բարբարոսական անարդարությունը»[3]: Հյուպատոսը նաև նշում է, որ չարագործությունների համար տեղական իշխանություններն իրենց մեղավոր չեն համարում, քանի որ գործում են Կ. Պոլսի հրամանով: Ադրիանապոլսից նոյեմբերի 2-ին ստացված զեկուցագրում կան նաև հետևյալ տողերը. «Ամեն օր նոր մանրամասներ են ստացվում, թե ինչպիսի՛ բարբարոսական և գազանային ձևով է կատարվել հայ ընտանիքների արտաքսումը, և ի՞նչ աստիճանի է հասել Թուրքական մարմինների ցինիզմը: Միայն ամենադաժան ու ամենաազդեցիկ երևակայությունն է ի վիճակի պատկերացնելու այդ իրադարձությունների սարսափները»:

Նույն հյուպատոսը գրում է. «Ոտնահարվում են քաղաքակրթության բոլոր սկզբունքները և մարդկային զգացմունքներն իր նմանների նկատմամբ: Այն, ինչ այստեղ տեղի է ունենում, անշուշտ, լոկ իրականացումն է ահավոր ծրագրի՝ ոչնչացնել քրիստոնյա տարրը Թուրքիայում ... Այն եղանակը, որով տեղի է ունենում հայերի վտարումը, հակասում է մարդասիրական բոլոր սկզբունքներին: Գործելակերպը, որ ... տեսել ենք այստեղ, վկայում է, որ գործ ունենք ո՛չ միայն ամբողջ ցեղի ջարդի, այլ ավելի չուտ, նրա բնաջնջման հետ... Կատարվում են բաներ, որոնք հասկանալ ի վիճակի են միայն լրիվ աղճատված բանականությունը և բարբարոս ու գազանային հոգին»[4]:

Նադամլենցկին ահազանգում է, որ գնալով վիճակն ավելի սարսափելի է

---

[1] R 14092, Ab. 20411.

[2] Wien HHSTA PA XII 463, Konstantinopel, 2 November 1915.

[3] Նույն տեղում, 24 մարտի 1917 թ.:

[4] Նույն տեղում, Adrianopel, 6 November 1915:

դառնում: «Կ. Պոլսից ստացվող հրամանները, ավելի դրակոնյան են թվում: Որևէ բացառություն չի արվում... Աքսորից, այսինքն անխուսափելի մահից կարող է փրկել միայն իսլամ ընդունելը: Իրենց կյանքը փրկելու համար 40 ընտանիք արդեն մահմեդական դառնալու խնդրագիր են ներկայացրել...»[1]:

«Այրիներին և աղջիկներին ասացին, որ նրանց կամուսնացնեն թուրքերի հետ, իսկ երիտասարդ տղամարդկանց ստիպեցին ամուսնանալ թրքուհիների հետ: Այսպիսով, հայ համայնքն այստեղ բնաջնջվեց»[2]:

Առանձնակի դաժանությամբ էին վարվում թուրքական բանակում ծառայող հայերի կանանց ու աղջիկների հետ: Նրանց բաժանում էին թուրքական գյուղերի վրա[3]:

Այս խնդրով Պալավիչինին դիմում է Թալեաթին, որը խոստանում է դադարեցնել հայերի իսլամացումն ու Ադրիանապոլիս վերադարձնել Ռոդոսթո աքսորված հայ ընտանիքներին: Տեղի գայմագամը կանչում է մահմեդականացված հայերին և հաղորդում, որ «նրանք Պոլսից եկած հրամանով նորից հայեր են և կարող են կրել իրենց նախկին անուններն ու պահել իրենց նախկին կրոնը: Տեղահանվելու վախից՝ 40 ընտանիքներ ՆԳ նախարարին հավաքական հեռագիր ուղարկեցին և մահմեդական մնալու թույլտվություն խնդրեցին»[4]: Սակայն այդ ընտանիքներն այդպես էլ Ադրիանապոլիս չվերադարձան, ինչից դեսպանը եզրակացրեց. «...Թալեաթ բեյը ճշմարտությունը չէր ասել, թե Ադրիանապոլսից տեղահանված ընտանիքները Ռոդոսթո են տարվել: Իրականում նրանց Փոքր Ասիա են քշել»[5]:

Ադրիանապոլիս քաղաքից 700 հոգի, երեք կարավանով, 1915 թ. հոկտեմբերի 15-21-ին և 1916 թ. փետրվարի 16-ին տարան Կոնիա, Էսքիշեհիր, Հալեպ, Դամասկոս, Դեր Զոր: 19-45 տարեկան տղամարդկանց վաղուց զորակոչել էին: Աքսորված էր մտավորականությունը և, ամենայն հավանականությամբ, ջարդված:

«Այստեղի պայմանները ծաղր են ամեն մի մշակույթի, ամեն մի պետական իմաստության նկատմամբ: Հազարավոր մարդիկ հանձնված են անպատասխանատու մարդկանց, ավազակախմբի քմահաճույքին»[6]:

Միություն և առաջադիմություն կուսակցության չրջանային պատասխանատու քարտուղարների դատավարության ժամանակ, 1919 թ. հունիսի 21-ին կուսակցության Էդիրնեի պատասխանատու քարտուղար Արդուլ Ղանի բեյը ցուցմունք տվեց, «Մի օր վաղ առավոտյան ինձ մոտ եկան մի քանի ծանոթ հայեր և սկսեցին պատմել տեղի ունեցած դեպքերի մասին. «Մերոնց մի մասին տարան, մյուսներին ևս տանելու են», ասելով, ինձանից օգնություն խնդրեցին ... Միասին գնացինք վիլայեթ: Վալիին ասացի, որ նրանք որևէ առնչություն

---

[1] Wien HHSTA PA XII 463, Konstantinopel, 3 Marz 1916.

[2] Նույն տեղում, 8 Marz 1916:

[3] Նույն տեղում, 209, Konstantinopel, 13 օգոստոսի 1916 թ.:

[4] Նույն տեղում, 17 Marz 1916:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, 8 Marz 1916:

չունեն «կոմիտեի» հետ, որ անմեղ մարդիկ են և խնդրեցի նրանց տեղահանության չենթարկել: Վալին պատասխանեց. «Այս մարդկանց մասին ես էլ եմ մտահոգված, բայց հրամանը խիստ է և վերաբերում է բոլորին» ... Տեղահանությունը տեղի էր ունենում օրենքի հիման վրա: Դա գործադրում էր տվյալ վիլայեթի վալին՝ ոստիկանության ու ժանդարմերիայի միջոցով: Իրականում, այդ հայերը անբասիր պատվի տեր մարդիկ էին: Նրանք բուլղարների նվաճման ընթացքում բավականին (թուրք) սպաների ընտանիքներ փրկեցին:

Տեղահանության վերաբերյալ կենտրոնական կոմիտեից միայն մեկ անգամ եմ գրություն ստացել: Ըստ իմ իմացածի, այդպիսի գրություն ստացան բոլոր պատասխանատու քարտուղարները: Դա գրված էր «ընդհանուրին» վերտառությամբ:

... Կողոպուտից տեղեկություն չունեմ, բայց տեղահանվածների ամբողջ ունեցվածքը վաճառվեց»:

Մի խումբ հայեր մամուլում կարդալով Աբդուլ Ղանիի ցուցմունքը, դատարանին գրեցին, որ դա իրականությանը «չի համապատասխանում... Նա մասնակցել է Էդիրնեի հայերի տեղահանությանը: Օրինակ, տեղահանվածների մի մասի գույքը հափշտակելուց հետո, մյուսներինը վաճառել են իրենց մերձավորներին, այն էլ՝ արժեքի 2-3 տոկոսով»[1]:

Դատարանում Էսկիշեհիրի պատասխանատու քարտուղար դոկտ. Բեսիմ Զուհդին ասաց. «Տեղի կառավարությունը տեղահանության վերաբերյալ հրաման էր ստացել, և դրա հիման վրա տեղահանություն կատարվեց»[2]:

Դատարանի նախագահը հարցրեց. «Էսկիշեհիրում տեղահանություն տեղի ունեցե՞լ է»:

Բեսիմ Զուհդի. «Այո՛»:

Նախագահ. «Շատերի խանութներն են փակվել, շատերի կահ-կարասին է վաճառվել, շատերի տներն են բռնագրավվել»:

Զուհդի բեյ. «Դա տեղի է ունեցել ամեն տեղ: Այնտեղ մի հանձնախումբ կար, երևի ստացած հրամանի համաձայն, դրսից եկող գաղթականներին տեղահանված հայերի տներում էր տեղավորում»[3]:

Օտարերկրյա թերթերը շատ հաճախ էին անդրադառնում Ադրիանապոլսի և, մանավանդ, Զմյուռնիայում կատարվող իրադարձություններին, ինչը բացատրվում է դրանցում Հունաստանի առանձնահատուկ շահագրգռվածությամբ: «The Uruguay Weekly News»-ը, հենվելով հունական աղբյուրների վրա, 1915 թ. մարտի 22-ին, գրեց. «Մի հեռագիր տեղեկացնում է քրիստոնյաների ջարդերի մասին Զմյուռնիայից հյուսիս գտնվող Այվալիկի մերձակայքում»: Բնաջնջվել է 60 ընտանիք»: Մարտի 26-ին նույն թերթը գրեց, որ բաշիբոզուկներն սկսել են կողոպտել նաև հույների եկեղեցիները: Լոնդոնի «The Times»-ը 1915 թ. դեկտեմբերի 25-ին գրում է, որ Ադրիանապոլսի ամբողջ հայ

---

[1] *«Takvim-i Vekai», 1919 թ., № 3506.*

[2] *Նույն տեղում, 23 հունիսի 1919 թ., № 3589:*

[3] *«Takvim-i Vekai», 28 հունիսի 1919 թ., № 3596:*

բնակչությունը թուրք բարբարոսների զոհն է դարձել: Նրանք ուղարկվեցին Փոքր Ասիա, որտեղ ընտանիքներով շատ էժան վաճառվեցին:

«Հավաս» գործակալությունը հուլիսի 22-ին հաղորդեց, որ Զմյուռնիայի ծովածոցի թուրքական իշխանությունները կարգադրել են, որ քրիստոնյա կանայք ու երեխաները քաղաքից դուրս գան և երկրի խորքերը մեկնեն: Հայերը մերժել են, որի պատճառով ընդհարում է տեղի ունեցել: Կան զոհեր:

Բեոյլուք Դերեի տեղահանության դատավարության դատավճռում կարդում ենք. «Մեղադրյալներ՝ Բեոյլուք Դերեի նախկին ոստիկանապետ Աբդուլ Քերիմ բեյը, սալոնիկցի Ռեֆիկ բեյը, Ռ. Ջելալ և Հ. Մահմուդ էֆենդիները նշված շրջանի ոչ-մահմեդական բնակչության տեղահանության համար կառավարության կողմից նշանակված որոշակի պայմանաժամը թաքցնելով, իրենց անձնական շահը և նենգ մտադրությունները իրականացնելու միտումով տեղահանվողներին շատ կարճ ժամանակ են տրամադրել: Դրա հետևանքով՝ տեղահանվողները ստիպված են եղել իրենց ունեցվածքը, կահ-կարասին թողնել ու հեռանալ: Այնուհետև նրանց լքյալ գույքը կողոպտել են...»[1]:

«The Times»-ը 1915 թ. դեկտեմբերի 21-ին գրեց, որ Բուխարեստի իր թղթակիցը հաղորդել է. «Ես տեղեկատվություն եմ ստացել Ադրիանապոլսում հայ ազգաբնակչության լրիվ ոչնչացման մասին: Հոկտեմբերի 10-ին թուրքական ոստիկանությունը բանտարկել է Ադրիանապոլսի 45 հայ բնակիչների: Բոլորին ուղարկել են Կ. Պոլիս և նույնիսկ Փոքր Ասիա:

Դրանից քիչ անց Ադրիանապոլսի բոլոր հայերը՝ մոտ 1600 հոգի, ձերբակալվել են, տղամարդիկ անմիջապես աքսորվել են Փոքր Ասիա, իսկ կանայք ու երեխաները երկու օր պահվել են բանտում ու կոպիտ հարձակումների ենթարկվել բանտապահների կողմից: Նրանց մի մասին երկու նավերով փոխադրելիս են եղել Փոքր Ասիա, սակայն Ռոդոսթոյի մերձակայքում նավերը սուզվել են և դրանցում եղածների մեծ մասը խեղդվել է: Աքսորված ընտանիքների մի մասը վաճառվել է ծիծաղելիության աստիճանի ցածր գներով՝ գլխավորապես հրեաներին»:

Բուլղարական կառավարությունը Կարաաղաջի պատգամավորության հանձնած զեկուցագրում ներկայացված է այն 29 շրջանների ցուցակը, որոնց հայ բնակչությունը, թվով 835 հազար մարդ, սպանվել կամ աքսորվել, կամ էլ բռնի իսլամացվել է: Մի քահանայի ողջ-ողջ այրել են, հինգին՝ կախել կամ սպանել այլ եղանակներով:

Դեռ 1913 թ. հուլիսին, Բալկանյան 2-րդ պատերազմի ժամանակ, թուրքական զորքերը Սամի բեյի հրամանատարությամբ բուլղարական բանակի թողած Ռոդոսթո, Մալգարա և Միրիոֆիտո քաղաքներում իրականացրել էին հայերի ջարդեր:

Ռոդոսթոյի 7000 հայությունից 2850-ն անհետացավ աքսորի ճանապարհներին: Աքսորն սկսվեց 1915 թ. սեպտեմբերի 8-ին: Դա իրականացրին կառավարիչը, ոստիկանության կոմիսարը և Իթթիհադի ներկայացուցիչը: Առաջին

---

[1] «Takvim-i Vekai», 2 մայիսի 1919 թ., № 3618:

կարավանը տարան Դամասկոս, իսկ մյուսները՝ Մեսքենե-Ռաքքա-Դեր Զոր:

Ռոդոսթոյի երեք եկեղեցիները կողոպտվեցին, վանքը ավերվեց, իսկ դպրոցը վերածվեց զինվորական հիվանդանոցի:

1915 թ. հոկտեմբերի 15-ին բռնագաղթվեցին Ռոդոսթոյի մերձակայքի Զորլու երկաթուղային կայարանի 300 հայ ընտանիքները: Տարագրությունը ղեկավարում էր գայմագամը: Բոլորը տարվեցին Դեր Զոր և 1916 թ. օգոստոսին ոչնչացվեցին: Նույն շրջանի Մալգարա քաղաքի 500 տուն հայերը, չնչին բացառությամբ, տարագրվեցին Կիլիկիա, Բաբ, Դեր Զոր:

Ռ. Սևակի ծննդավայր Սիլիվրիի 160 հայ ընտանիքները նույնպես տարագրվեցին: Դարդանելից 220 հայ ընտանիք, երբ Անտանտն սկսեց ռմբակոծել, հեռացան Էդիրնե և Կ. Պոլիս:

Հայ կաթոլիկների պատրիարքը 1915 թ. օգոստոսի 19-ին գրեց, որ Նիկոմեդիայի կաթոլիկները բռնագաղթվել են բոլորի հետ միասին: Չնայած բազում խոստումներին, օգոստոսի 16-ին նաև Բակտգեջիկից աքսորվեցին հայ կաթոլիկներն ու բողոքականները: Բռնագաղթվածների, մանավանդ աղքատ խավի մարդկանց, վիճակը ողբերգական էր: Շատ մայրեր իրենց երեխաներին գետն էին նետում, մյուսները՝ վաճառում, որպեսզի հացի փող ունենային և մյուս երեխաներին փրկեին մահից: Մինչև վեց տարեկան երեխաները վաճառվում էին հինգ ղուրուշով (մեկ մարկից քիչ), իսկ 15-20 տարեկան աղջիկները՝ 20 ղուրուշով:

Բռնագաղթվածների գլխավոր հավաքատեղիներն էին՝ Էսքիշեհիրը, Քեոթահիան, Աֆիոն Կարահիսարը և Կոնիան; Այդ վայրերում հայերին հավաքում էին շրջափակված դաշտերում, բաց երկնքի տակ: Էսքիշեհիրում կուտակված էր 10-12 հազար կին, երեխա, ծեր՝ ենթակա մարդկանց ու բնության դաժան քմահաճույքներին: Կարկուտից հետո հաջորդ օրը հարյուրավոր դիակներ, հատկապես երեխաների, ընկած էին դաշտում: Տարագիրներին օրը երեք անգամ մտրակով ծեծում էին, որպեսզի արագ քայլեին[1]:

* * *

«Հորիզոնի» Կարինի թղթակիցը գրում է. «Մի քանի օր առաջ այստեղ եկան հայկական ծագում ունեցող թուրք երկու սպա, որոնք գերի էին վերցվել Ճապաղջրում...

Մայիսի 20-ին նրանց Կ. Պոլսից ուղարկել են Դիարբեքիրի ուղղությամբ: Միայն հիսուն մեկ օր անց են հասել ռազմաճակատ: Նրանց ճանապարհն անցնում էր Կոնիա-Բոզանդի-Ռաս-ուլ-Այն-Դիարբեքիր գծով: Ամբողջ ընթացքում նրանք տեսել են հայ փախստականների անվերջ չարաններ՝ քաղցած, գրեթե մերկ, ծայր աստիճանի հյուծված:

... Կ. Պոլսում հայերի հետապնդումներն ու ձերբակալությունները չարու-

---

[1] *Konst. / Ankara 170, Ab. 53a.*

նակվում են: Դասալիքներ փնտրելու պատրվակով, ամեն օր նրանց տները խուզարկում էին:

Ձերբակալված են ո՛չ միայն հայկական թույլատրված կազմակերպությունների վարչությունները, այլև դրանց բոլոր անդամները: Ձերբակալված են նաև հայ կանանց ու աղջիկների միության անդամները: Վերջին ժամանակները թուրքերը բանտարկեցին նաև թուրքահայ մտավորականության վերջին ներկայացուցիչներին ... Թուրքերը «զինակոչեցին» բոլոր հայ պատանիներին, նույնիսկ 16–17 տարեկաններին:

Համեմատաբար տանելի է Բուրսայից, Բանդրմայից, Ադաբազարից և այլ վայրերից մինչև Կոնիա ընկած վայրերի հայերի վիճակը: Հարուստները կարողացել են չտարագրվել: Աղքատների մի մասը կոտորված է, իսկ մյուս մասն ուղարկված է Դեր Զորի մոտակայքի անապատ»[1]:

Թուրքական վայրագություններն անդորրությունից հանեցին անգամ Ֆոն Վանգենհայմին: Նա 1915 թ. օգոստոսի 12-ին գրում է կանցլերին.

«Իրենց բնակավայրերից տարագրված հայ բնակչության սիստեմատիկ ջարդը վերջին շաբաթներին այնպիսի չափեր է ընդունել, որ մենք արդեն նոր, ավելի խոր պատկերացում ենք կազմել այդ վայրենի բռնադատությունների մասին, որոնց կառավարությունը ո՛չ միայն հանդուրժում, այլև բացահայտորեն աջակցում է: Այնպես որ, անգամ ուրիշ ռասաների և դավանանքների պատկանող քրիստոնյաները չեն խնայվել: Ավելին: Այս օրերին պետական մարմիններն սկսել են հայ բնակչությանը տարբեր վայրերից տեղափոխել Իզմիրի շրջակայքը, այսինքն մայրաքաղաքի անմիջապես մոտերքը՝ պատճառաբանելով, թե իբր, նրանք ցանկանում են Սաքարիայի գետաբերանի մոտ նպաստել ռուսական զորքի վայրէջքին: Տեղացի հայերի շրջանում այս պատիժը մեծ հուզումներ է առաջացրել, և նրանք այժմ ցանկանում են իմանալ, թե արդյոք այսօր սկսվող Բայրամի տոնից հետո էլ տեղացի հայերը կհալածվե՞ն (կտեղահանվե՞ն): Այստեղ բնակություն հաստատած հայերի մեծ թվի պարագայում (ամենաքիչը՝ 80.000 հոգի), նման մտադրության իրականացումը հայերի տեսակետներին դեմ է, որոնք իրենց արտահայտությունն են գտել զինվորների, հոգևորականների և վերին խավին պատկանող այլ մարդկանց շրջանում: Ձերդ գերազանցության հայեցողությանն եմ թողնում, թե արդյոք ավելի նպատակահարմար չէ՞ որևէ հարմար առիթով դրա մասին գրել նաև գերմանական մամուլում, որ մենք հայերի դեմ թուրքական կառավարության ձեռնարկած բռնադատությունից հեռու ենք կանգնած և այդ պատճառով էլ պատասխանատու չենք տեղի ունեցած անկարգությունների համար...

Թվում է, որ օսմանյան նոր դեսպանին պետք է զգուշացնել նրա կառավարության՝ հայերի նկատմամբ կիրառած քաղաքականության հնարավոր հետևանքների մասին և այս հարցի կապակցությամբ նրա ուշադրությունը հրավիրել մեր տեսակետի վրա»[2]:

---

[1] *"Армянский вестник", 1916 г., № 35.*

[2] *Lepsius J., նշվ. աշխ., փաստ. № 501:*

Թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկ Ալթընայը պատմում է իր տեսածները Էսքիշեհիրում բռնագաղթի ընթացքի մասին: «Սոված ու տկլոր զինվորներով լի գնացքները չարան-չարան մեկնում են ոճրագործության վայրերը: Վերստին հազարավոր ընտանիքներ քաղցած էին մնալու, հազարավոր անմեղներ, ոտաբոբիկ, ցնցոտիների մեջ իրենց սնունդն ապահովելու էին խոտաճարակությամբ ... Կայարանի շրջակայքում գտնվող գեղեցիկ հայկական տներն ամբողջովին դատարկ էին ... (հայերը) ենթարկվել էին կառավարությանը, ազատել էին տները, քաշվել Էսքիշեհիրի թաղամասերը...

Կայարանի մոտակայքում գտնվող, բնակության համար հարմար բոլոր տները հատկացվել էին Իթթիհադի ամենակարևոր բարձր աստիճանավորներին»: Դրանք տրվել էին Թագաժառանգին, Թալեաթին, Ջանփոլադին, Իսմայիլ Հակկրին[1]:

Քաղաքի և, ընդհանրապես, հայերի հանդեպ մահմեդականների շրջանում ատելությունն ավելի բորբոքելու նպատակով լայն քարոզչություն էր ծավալված: Դասախոսներից մեկը, որն օսմանյան խորհրդարանի անդամ էր, «քրիստոնյա տարրը նմանեցրել էր օձերի ու կարիճների»[2]:

Իսկ քաղաք եկող գնացքներից իջնում և իջնում էին «վնասված ու հիվանդ, թշերը փոս ընկած, չսափրված, թոշնած դեմքով...» երեխաներ: Գնացքները բերում էին միայն երեխաների, կանանց ու ծերերի: Հայերի խմբերից մեկում «թմբլիկ ձեռքերով մոր մեջքին փաթաթված, հունիսյան արևի ճառագայթների տակ, սոված ու քրտնած, վզները ծուռ քնած երեխաները կարծես սրտաճաք էին լինում»: Տատի կողքին նստած աղջնակին սնունդ առաջարկեցի, բայց այս «գաղթից, այս դաժանությունից ու այս անարդարությունից հոգին մորմոքած, անմեղ սիրտը կոտրած, սրտի խորքում ժողովրդիս դեմ լցված ատելությամբ, տվածս մրգերին զայրույթով նայելով ... բարակ-բարակ մատներով բերանն էր տանում» իր մոտ եղած չոր հացը: Գիշերը մի նոր գնացքակազմ եկավ, «Կանայք՝ կրծքերին լացող երեխաներ, հայրերը՝ բեռները մեջքներին, քրտնաթոր, փորձում էին բարձրացնել իրերը, հիվանդներին, աղջիկներին ու երեխաներին տեղափոխող մայրերը՝ խեղճ, հարուստ, սոված հազարավոր դժբախտ ընտանիքներ փորձում էին դուրս գալ բեռնատար վագոններից... Հնարավոր չէր դիտել այս տեսարանը...

Գնացքները հետևում էին մեկը մյուսին: Յուրաքանչյուր գնացքից հազարավոր ընտանիքներ էին իջնում: Այնքան շատ, որ եկողներին հնարավոր չէր ուղարկել Էսքիշեհիրից ... Մի քանի օրում Էսքիշեհիրի կայարանի շրջակայքը լցվեց ավելի քան 20-30 հազար ընտանիքներով»: Գալիս էին նաև ոտքով, ոստիկանների ուղեկցությամբ, «ոտքերն արյան մեջ ընտանիքներ»: Եկողները գնալու տեղ չունեին, սկսեցին վրանանման բաներ պատրաստել: Այդ ամբողջ զանգվածը գիշերում էր գետնին: Առաջացել էր 20 հազարանոց մի ճամբար: Տեղի բնակչությունը նրանց չէր վիրավորում: Հայերի համար «ամենաոխերիմ թշնամին Կենտրոնի ներկայացուցիչն էր»: Ամիսներ անց՝ հայերի մի մասին

---

[1] ***Ահմեդ Ռեֆիկ***, *Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Ե., 1997, էջ 13-14:*

[2] *Նույն տեղում, էջ 34:*

ուղարկեցին Քեոթահիա, բայց նրանց թույլ չտվեցին քաղաք մտնել և հարկադրեցին մնալ կայարանի շրջակայքում: «Հազարավոր ընտանիքներ սովի էին մատնված՝ փող, ուտելու և խմելու բան չկար»: Սկսեցին իրերը վաճառել: Էսքիշեհիրի փողոցներում ու կառամատույցներում ... գրեթե ձրի վաճառում էին ամեն ինչ: Իսկ երբ այլևս վաճառելու բան չկար, սկսեցին մուրալ:

Մի օր էլ սկսեցին տեղահանել Էսքիշեհիրի ամբողջ հայությանը, որը գնում էր խառնվելու «դաժան ու մահացու հեղեղին:

Անատոլիայի լայնատարած հարթավայրերում ... ոտաբոբիկ, խեղճ, արևից երեսները վառված երեխաներից բացի որևէ կենդանի չունչ չէր երևում...

Ստամբուլում անհամբեր էին: Ամիսներ շարունակ փողոցում ապրող ու գոյություն քարշ տալու համար ողորմացող հայերի կյանքն անգամ շատ էին համարում»:

Կայարանի «բնակիչներին» գաղթեցնում էին Կոնիա և Բոզանթի էին քշում: Հայերը հասկանում էին, որ Բոզանթիում «իրենց սպասող սարսափահարույց մի ուժ կար՝ մահը»[1]:

Մեզիրե քաղաքում թուրքերը մի տան մեջ հավաքել էին հայ երեխաներին, ապա բերեցին նրանց մայրերին: Մայրերը հրճվանքի մեջ էին, երբ հրդեհի չիթերը կլանեցին տունը[2]:

«The New York Times» թերթը գրեց, որ 1924 թ. դեկտեմբերի 22-ին Մարսելի նավահանգիստ ժամանեց անգլիական «Զան» նավը՝ բեռնված 400 տոննա մարդկային ոսկորներով՝ գործարաններին հանձնելու համար: Պարզվեց, որ դրանք հայ զոհերի ոսկորներ էին և նավ էին բարձվել Մարմարայի ծովեզերքում, Մուդանիայի մոտ[3]:

---

[1] **Ահմեդ Ռեֆիկ**, *նշվ. աշխ., էջ 35-42:*

[2] **Bryce J.**, *նշվ. աշխ., էջ 121:*

[3] **Կիրակոսյան Ջ.**, *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գ. 2, Ե., 1983, էջ 81:*

ՈՒՐՖԱ (ՈՒՌՀԱ)

Ուրֆան, պատմական Եդեսիան, ուներ ազատագրական պայքարի փառաւոր ավանդություններ: Ուրֆան հայաբնակ այն քաղաքներից էր, որոնք մարտնչեցին, սեփական և թշնամու հեղած արյունով հաստատեցին ապրելու իրենց իրավունքը:

1895 թ., երբ արյունածարավ խուժանը հարձակվեց Հայոց թաղի վրա, հզոր հակահարված ստացավ ու փախավ: Այդպես եղել է բազմիցս: Ուրֆան ապրել է նաև ծանր ողբերգություններ, բայց դա ոչ թե պայքարելու, մարտնչելու կամքի թուլության, այլ միմիայն դյուրահավատության պատճառով: Նույն պատճառով 1895-ին քաղաքի հայերը կորցրեցին 10.000 մարդ:

Սակայն «չատ կարճ ժամանակուայ ընթացքին ուրֆահայութիւնը կրցաւ սպիացնել համիտեան ջարդերու ժամանակ ստացած իր ֆիզիկական ու հոգեկան խոր վէրքերը եւ վերացնել իր տնտեսական հսկայ վնասները»[1]:

Ուրֆան ուներ 100.000 բնակիչ, որից հայեր՝ 35.000-ը: Հայաբնակ գյուղերի թիվը հասնում էր 100-ի:

Ուրֆան ինքնուրույն վարչական միավոր էր, գտնվում էր կիսալեռնային շրջանում և Վերին Միջագետքի առևտրի ու հաղորդակցության գլխավոր հանգույցն էր:

Ուրֆա քաղաքի հայոց թաղը Թլվտուր բլրի վրա էր, քաղաքի վերին մասում: Դեռ 1886-ին Տասմասեկիի աղբյուրների սառնորակ ջուրը հասցվել էր հայկական թաղ: Այստեղի տներում կառուցված էին խորը ջրհորներ, որոնք 1915 թ. ինքնապաշտպանության ժամանակ լուրջ ծառայություն մատուցեցին:

Քաղաքի Ս. Աստվածածնի եկեղեցին վիթխարի կառույց էր, որտեղ 1895-ին թուրքերը ոչնչացրեցին 2500-3000 հայ: Եկեղեցիներ ունեին նաև հայ կաթոլիկներն ու բողոքականները: Ս. Աստվածածնի եկեղեցուն կից գործող դպրոցում սովորում էր 1140 աշակերտ, որոնց չուրջ 40 տոկոսը՝ իգական սեռի: Կաթոլիկներն ունեին վեց դպրոց՝ 630 աշակերտով:

1914 թ. ապրիլին Ուրֆա այցելեց Լեփսիուսը: Նա ուրֆահայությանն իր տագնապը հաղորդեց, թե եվրոպական պատերազմն անխուսափելի է և Իթթիհադը պատերազմական իրավիճակը կգործածի հայերին հաշվեհարդարի ենթարկելու համար: Լեփսիուսն ասաց մարգարեական խոսքեր՝ հայի գլխավոր խնդիրն է «Ամեն միջոց գործադրել ողջ մնալու համար»:

---

[1] **Գահուեճեան Ե.**, *Յուշեր Ուրֆայի 1915 թ. հերոսամարտի ու յետագայ իրադարձութիւններու մասին, Ե., 1995, էջ 15:*

Նա չէր սխալվել: Պատերազմը նոր էր սկսվել, երբ Թուրքերը հրդեհեցին 30 հայկական և ասորական գյուղեր: Սակայն դա չէ, որ ուրֆացիների մեջ համազգային վտանգի տագնապ առաջացրեց, այլ այն, որ 1915 Թ. գարնան վերջերին երևացին հայ գաղթականական առաջին կարավանները, և Ուրֆան աստիճանաբար սկսեց վերածվել անապատ քչվող հայերի միջանկյալ կայանի:

Ուրֆա էին հասնում հիմնականում ծերեր, կանայք ու երեխաներ, կողոպտված, տանջահար, իրենց «հարազատների դաժան մահը տեսած դժբախտ խլյակներ»:

Տարագիրների գալն ու նրանց զարհուրելի վիճակը ցնցեցին տեղի հայությանը, և, չնայած իշխանությունների արգելքներին, նրանք չտապեցին օգնության հասնել թշվառներին: Այդ օրերին Սուրուճում գտնվող Կ. Գաբրիկյանը գրեց. «Սուրուճ եկած ատենիս ջորեպան Թիւրքեր կը պատմէին, թէ գաղթականներ Ուրֆա կը պատսպարուին եկեղեցիին շրջափակը եւ տուներու մէջ: Առաջնորդը (Արտաւազդ վրդ.) հարկ եղած ձեռնտուութիւնը կ'ընէ: Իրաւ ալ, որքան միջոցները ներեր են, առիթ ունեցեր են, գաղթականներուն հոգածութիւն, խնամատարութիւն ըրեր են: Պատսպարան, ուտելիք, ծածկոց, զգեստեղէն տուեր, հայթայթեր են»[1]:

Առաջին մեծ կարավանը, որ անցավ Ուրֆայով, զեյթունցիների կարավանն էր:

Մի ավստրիացու գրառումներում, որոնք Հալեպի գերմանական հյուպատոսությանը հանձնվել էին, 1915 թվականի օգոստոսի 11-ին Ուրֆայի տարածքում տարագրված հայերի վիճակի մասին կարդում ենք. «Տեղահանվածները միայն կանայք էին, ծերեր և երեխաներ: Առողջ, ուժեղ տղամարդիկ բացակայում էին: Այն խմբերը, որոնք արդեն մեկ շաբաթից ավելի ճանապարհին էին, ողբալի տպավորություն էին թողնում: Զրկանքներից գերհոգնած ու հիվանդացած, շատերը հազիվ էին քայլում՝ իրենց հետ քարշ տալով երեխաներին (կային շատ ծծկեր երեխաներ և հղի կանայք): Երեխաների, ծերերի և ընդհանրապես թույլ անձնավորությունների մեծ մասի ոտքերը ծածկված էին վերքերով, խիստ ուռած էին և ցնցոտիներով փաթաթած: Արտագաղթողների մեծ մասը ունեցվածքը վաճառել էր մինչև Ուրֆա հասնելը, որպեսզի կարողանար վարձով ավանակներ ձեռք բերել՝ մի օրվա դիմաց վճարելով 3 մեջիդ (սովորական գնից երեք անգամ թանկ է): Բաղմության մեծ մասը որոշ ճամփորդական իրեր և տնային սպասք էր հասցրել Ուրֆա, որոնք այստեղ կողոպտեցին նրանցից: Զարշիում զինվորներն անձամբ էին վաճառում աքսորականների իրերը: Շատերին տեղավորեցին որբանոցում, որտեղ իրենք պետք է հոգային իրենց սննդի մասին: Ոստիկանները հերթապահում էին որբանոցի շուրջը: Նկատեցի, թե ինչպես մի ագահ վաճառական գնված հագուստներով թռավ ցանկապատի վրայով և պահակի բուռը կոխեց կաշառաղրամը:

«Թեյանվերի» գնով կամ ծանոթությամբ կարավաններից կարող էին վերցնել կանանց, աղջիկների, երեխաների: Հետագայում իշխանություններն

---

[1] **Գաբրիկեան Կ.** (Գուժկան Սեբաստիոյ), Եղեռնապատում Փոքուն Հայոց նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պէյրութ, 1924, էջ 378:

արգելեցին այդ առևտուրը: Զնայած դրան, հափշտակումները շարունակվում էին: Անձամբ տեսա, թե ինչպես Թուրքերը փողոցից հափշտակեցին 16 և 30 տարեկան երկու հայ կանանց:

Երթերի ժամանակ շատերն էին ոչնչանում: Ուրֆայում, իմ աչքի առաջ մի կին տապալվեց գետին: Քանի որ ոստիկանը ետ մնալու իրավունք չուներ, շրջապատի կանգնածներից մի քանիսին կարգադրեց գնալ ոստիկանատուն և զեկուցել, որ տանեն հիվանդին: Հաջորդ օրն այդ նույն կնոջը (30 տարեկան) գտա մի այլ փողոցում, որբանոցի առջև, արևի վառ լույսի տակ մահացած ընկած: Նրա դեմքը արդեն կապտել էր: Կողքին՝ իրենց պահակակետերում, կանգնած էին զինվորները հրապարակը լցված էր ոստիկաններով ու քաղաքացիներով: Ժամեր շարունակ կինն ընկած էր այնտեղ...

Ուրֆայից դուրս (Թել Աբիադի ուղղությամբ), անմիջապես Ուրֆայի այգիների առջև փողոցի եզրին ընկած էր 20-24 տարեկան տղամարդու դիակ: Որևէ մեկը չէր թաղել, և գիշատիչ թռչունները հոշոտում էին նրան:

Ուրֆա-Արաբ Բունար ճանապարհին, հավանաբար մթության պատճառով, ես դիակ չտեսա, սակայն կառապանս, որը մշտապես երթևեկում է այս ճանապարհով, ցույց տվեց ինձ այրված տեղեր փողոցի երկայնքով մեկ: Դիակները տեղն ու տեղը այրել էին»:

Կարավանները՝ ցավից ճչալով, դժվարությամբ առաջ էին շարժվում: Տարագիր դժբախտներից շատերը մարդ տեսնելուն պես ծնկի էին իջնում, օգնություն և փրկություն աղերսում կամ առաջարկում վերցնել իրենց երեխաներին: Երթերի ժամանակ, 56 աստիճան շոգի և ջրի պակասության պայմաններում, շատերը հյուծվածությունից գետին էին տապալվում:

Երբ աշխարհամարտն սկսվեց՝ բանակ զորակոչվեցին նաև եղեսացիք, անգամ նրանք, որոնք զինվորական տուրքը վճարել էին: Քաղաքից զորակոչվեց չուրջ 1500 հոգի: Նրանց տարան Ուրֆայից երկու ժամ հեռավորության վրա գտնվող Կաթմա և Կարա Քեոփրյու ամայի վայրերը՝ իբր ճանապարհ կառուցելու: «Օր մը անոնց կը շրջապատեն բազմաթիւ թիւրք զինուորներ եւ չեթէական խումբեր եւ բոլորին թեւերը կապելէ յետոյ, հրացանազարկ կ՚ընեն անոնց: Այդ վիճակին մէջ երիտասարդները դիմադրած եւ նոյնիսկ երկու զինուոր սպաննած էին...»[1]:

Երկար ժամանակ չպահանջվեց, որպեսզի ակնհայտ դառնար, որ համընդհանուր տարագրության վտանգը սպառնում է նաև եղեսահայությանը: Սակայն իշխանությունները, նկատի ունենալով 1895 թ. փորձը, ամեն կերպ քողարկում էին քաղաքի ամբողջ հայության հանդեպ գործադրվելիք ծրագիրը: Որոշվեց գործել դանդաղ ու աստիճանաբար: Մայիսի վերջերին ձերբակալեցին 40 հայ երևելիների և բանտում խոչտանգեցին, իսկ քիչ անց նրանց քաղաքից հանեցին ու տարան անհայտ ուղղությամբ:

Ապա ձերբակալեցին առևտրական դասին պատկանող 100 հայի, որոնց հետ նույն կերպ վարվեցին: Քիչ անց աքսորեցին ևս 100 հոգու: Այդ ձերբակա-

---

[1] **Գահուեճեան Ե.**, նշվ. աշխ., էջ 22-23:

լությունների հեղինակը նոր մութեսարիֆ նշանակված իթթիհադական Ալի Հայդարն էր՝ ջարդարարներ Ահմեդի և Խալիլի հետ միասին: Հայ մտավոր, առևտրական, փողատեր դասին պատկանողները ոչնչացվեցին Շեյթան Դերեսի վայրում:

Ռեոսլերը 1915 թ. օգոստոսի 26-ին գրում է, որ 200 հայեր և «սիրիացիներ» (սիրիական ուղղափառ եկեղեցուն պատկանողներ) ոչնչացվել են Ուրֆայում:

Քաղաքում ամեն ոք հասկանում էր, որ տեղի հայությունը դատապարտված էր նույն ճակատագրին: Մկրտիչ Յոթեղբայրյանն առաջարկեց զենքի դիմել, բայց հայ երևելիները չհամաձայնվեցին:

Մայիսի 27-ին առաջնորդարանում գումարված հայ երևելիների ժողովը քննարկեց գլխավոր հարցը՝ բռնագաղթին դիմադրե՞լ, թե՞ հպատակվել: Եվ որքան էլ տարօրինակ է, ժողովը նույնպես հակված էր հօգուտ հպատակվելուն: Սակայն այդ պահին տեղ է հասնում Մկրտիչ Յոթեղբայրյանը և փոխում ժողովի տրամադրվածությունը:

«Բոլորդ ալ անխուսափելիօրէն պիտի երթաք մորթուելու,- ասաց նա վեր պարզելով փամփշտակալից հանած փամփուշտը: Հաւատամք եւ խոստովանիմք միայն ասոր: Դեռ ինչքա՞ն արյուն, քանի՞ միլիոն մահ է պէտք հասկնալու, որ եղեռնագործ պետութեան օրէնքներուն չհպատակուիլը չարագործութիւն չէ»:

Ուրֆան ո՛չ Մուսա լեռ էր և ո՛չ էլ Զեյթուն: Նա ընկած էր կայսրության խորքերում, կտրված դրսի աշխարհից, հեռու ծովից ու ծովափից:

1915 թ. հունիսի 28-ին Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեքսոնը գրեց Մորգենթաուին. «Պատիվ ունեմ մեջբերել ամսի 14-ով թվագրված և հենց նոր ստացված վերապատվելի Ֆ. Հ. Լեսլիի հաղորդագրությունը Ուրֆայից. «Վիճակը վատ է և օրեցօր վատանում է: Կարծում եմ Մեյնարդսը Ձեզ պատմել է Դիարբեքիրի ահավոր դեպքերի մասին: Ճիշտ նույնպիսի սարսափելի վիճակ է ստեղծվել նաև այստեղ»: Օրը ցերեկով ոստիկանները խուզարկում են հայերի տները՝ զենք գտնելու պատրվակով, և զենք չգտնելով, ձերբակալում ու բանտարկում են հարգարժան մարդկանց: Մի մասին աքսորում են, մյուսներին խոշտանգում չիկացած երկաթներով՝ իբր զենքի թաքստոցներն իմանալու համար: Զորս շաբաթ առաջ 50 մարդու իրենց ընտանիքներով աքսորեցին Ռաքքա անապատային քաղաքը՝ այստեղից հարավ երեք օրվա ճանապարհ»:

Ոստիկանությունը վերահսկում էր ողջ իրադրությունը և մութեսարիֆը նրանց էր ենթարկվում: Քաղաքի բանտում պահվում էին մոտ հարյուր «լավագույն քաղաքացիներ»: Ոստիկանապետը կանչեց հայ եպիսկոպոսին և ասաց, որ մինչև հայերը, այդ թվում և հեղափոխականները չհանձնեն բոլոր զենքերը, ամբողջ բնակչությունը զեյթունցիների պես կաքսորվի. «Մենք գիտենք, թե վերջիններիս հետ ինչպես վարվեցին, քանի որ նրանց ճանապարհը դեպի անապատ անցնում էր Ուրֆայով: Աքսորյալները հիմնականում կանայք, ծերեր ու երեխաներ էին. նրանց գանահարում ու ծեծում էին կենդանիների պես, կանանց ու աղջիկների վրա բռնանում էին ոչ միայն նրանց պահապանները, այլև բոլոր այն գյուղերի վայրենիները, որոնց միջով անցնում էին աքսորյալները, քանի որ առաջինները թույլ էին տալիս, որ երկրորդները գիշերով

մտնեն նրանց ճամբարը: Գյուղերում աղջիկներին նույնիսկ բաժանում էին: Այս թշվառ արարածները կգերադասեին սպանվել իրենց տներում, քան այս ձևով քարշ տրվեին երկրով մեկ»: Մոտ երկու հազար աքսորյալ անցավ Ուրֆայով և բոլորն էլ՝ ավելի շատ մեռած, քան կենդանի: Հարյուրներով սովամահ էին լինում, մեռնում ծարավից, բռնություններից կամ առևանգվում արաբների կողմից ու տարվում անապատ:

Սա էր ուրֆահայերին սպասող ճակատագիրը: Տեսնելով զեյթունցի աքսորյալների վիճակը, նրանք որոշեցին չհնազանդվել աքսորի հրամանին և մեռնել տանը: «Մենք վախենում ենք, որ բանտարկությունը, ծեծն ու խոշտանգումները հայերին այնպիսի հուսահատության հասցնեն, որ նրանք սկսեն դիմադրել և դա անպայման համընդհանուր ջարդի տեղիք կտա: Մինչև օրս եպիսկոպոսին ու բողոքական հոգևորականներին հաջողվում էր զսպել երիտասարդներին և կանխել պայթյունը, բայց քանի որ կառավարությունը շարունակում է ձերբակալել ժողովրդի առաջնորդներին, չուտով պարզապես չի մնա մեկը, որ զսպի մյուսներին»: Պաշտոնյաները պնդում էին՝ քանի դեռ հայերը զենքը չեն հանձնել, կկոտորվեն: Բայց մարդիկ հիշում են, թե ինչպես 1895-ին ստիպեցին բոլորին հանձնել զենքերը, որից հետո մուսուլմանները հարձակվեցին նրանց վրա և երկու օրում վեց հազար քրիստոնյա կոտորեցին: «Հիմա էլ, եթե կառավարությունը մուսուլմաններից նույնպես հավաքի զենքը, քրիստոնյաները հոժարակամ կհանձնեն իրենց ունեցածները, սակայն մուսուլմանների առջև որևէ մեկն այդպիսի պահանջ չի դնում: Ուրֆան հեղափոխական կենտրոն չէ և այդպիսին երբեք չի եղել: Այստեղի ժողովուրդը միշտ հավատարիմ է եղել իշխանության նկատմամբ և երբեք չի դիմադրել, եթե նույնիսկ ոչխարի պես մորթվել է: Թե ինչո՞ւ են տեղական իշխանությունները հետապնդում այսպիսի ազգաբնակչությանը, տարօրինակ է: Այստեղ հեղափոխական կազմակերպություն չկա. կան հեղափոխական հայացքների տեր 30-40 մարդ, սակայն նրանք հեղափոխական քարոզչություն չեն տանում»:

Գերմանիայի գործակալ Քյունցլերը 1915 թ. հունիսի 20-ին գրեց Ուրֆայից. «Քաղաքում մի օրում բանտ նետվեցին 50 հայեր, հիմնականում խաղաղ և երկրին նվիրված տարրեր ... Ես նահանգապետին (մութեսարիֆին) արտահայտեցի իմ տագնապը, որ Հայկական հարցն ավարտվելու է նրանով, որ Գերմանիայի դաշնակիցների վրա խայտառակ պիտակ է ընկնելու՝ եթե հայերի հանդեպ կիրառվող քաղաքականությունը շարունակվի ... Երեկ չէ առաջին օրը նահանգապետը կանչել է տալիս հայոց առաջնորդին և ասում, թե հայերը պետք է հանձնեն բոլոր զենքերը, հակառակ դեպքում ամբողջ բնակչությունը կտեղահանվի: Առաջնորդն ասում է, թե այդ զենքերը պահվում են օգտագործելու ոչ թե կառավարության դեմ, այլ մշտապես սպառնացող կոտորածի վտանգի դեմ՝ լավ զինված մահմեդական բնակչության կողմից:

Հայերը սարսափած են: 1895 թ. նրանց նույնպես հարկադրեցին զենքերը հանձնել՝ պաշտոնապես խոստանալով, որ նրանք կպաշտպանվեն: Եվ ինչպե՞ս պաշտպանեցին: Մորթվեց 7000 մարդ...

Դիարբեքիրի վիլայեթից ահավոր լուրեր են ստացվում ... Շատ տեղերում խոշտանգել են և ապա միայն գնդակահարել: Առանձնակի սիրված եղանակ է եղունգների դուրս քաշելը»:

Ուրֆայի մերձակայքի Կարմուջ գյուղի լեռներում գործում էր Սևերեկի և Դիարբեքիրի հայերից կազմված լավ զինված խումբ: Կյանքից ձեռք քաշած այդ մարդիկ վճռել էին մարտնչել Թուրքերի դեմ, որովհետև նրանք նորից խոշտանգել ու սպանել էին հայերին:

Ուրֆայում Թորոս անունով մի բանվոր անցնում էր փողոցով: Նրա առջևից գնում էր ժանդարմը, որը գետնին մի փամփուշտ նետեց: Թորոսը դա վերցրեց, իսկ ժանդարմն անմիջապես նրան ձերբակալեց: Ոստիկանատանը Թորոսի գրպանից հանեց այդ փամփուշտը: Դա բավական էր, որպեսզի Թորոսն անհայտանար բանտում:

Լուր ստանալով, որ ռազմաճակատում Թուրքերը հաջողություն ունեն, Թուրքական մի նվագախումբ նվագելով շրջում էր շուկայում: Մի հայ պատանյակ միամտաբար հարցնում է, թե իսկապե՞ս Թուրքերը հաղթել են: Նրան խոշտանգում ու բանտ են նետում[1]:

Ուրֆայում, վկայում է Ռեոսլերը, խուժանը օգոստոսի 19-ին հայերի և սիրիացիների իսկական սպանդ կազմակերպեց: 200 մարդ սպանվեց: Միայն հաջորդ օրը հաջողվեց կարգը վերականգնել: Քյունցլերի վկայությամբ՝ հարյուրավոր հայ ճանապարհաշինարարներ սպանվեցին Խարանի դաշտում: Թել Աբիադի կայարանապետն իր վերադասին գրեց, թե ժանդարմները պատմել են, որ իրենք վերադասի (Խարանի գայմագամի) հրամանով գնդակահարել են ճանապարհաշինարար բանվորներին:

Այսինքն՝ բացի զենքից, փրկության ուրիշ միջոց չկար, և ուրֆացիները որոշեցին մեռնել կռվով, մեռնել հայրենի օջախում:

Ստեղծվում է երեք հոգանոց գաղտնի մարմին՝ Մկրտիչ Յոթնեղբայրյան, Կիրակոս Դերձակյան և Կարապետ Քարտաչյան, որը գլխավորում էր ինքնապաշտպանության նախապատրաստական աշխատանքները: Ձևավորվեցին մարտական խմբեր, որոնք շաբաթը մեկ քաղաքից դուրս զինավարժություններ էին անցկացնում: Պարտադրվեց, որ զենք կրելու ընդունակ յուրաքանչյուր տղամարդ զենք ձեռք բերի: Ստեղծվեցին նաև թռուցիկ խմբեր թաղում և մերձակայքում հերթապահելու համար: Մշակվեց և խմբերի ղեկավարներին տրվեց ինքնապաշտպանության պլանը:

Միջոցառումների ամբողջականությունն ու դրանց իրականացման հետևողականությունը և արագությունը պայմանավորված էին նաև համայնքի քաղաքական համախմբմամբ: «Ուրֆայի մէջ Դաշնակցական և Հնչակեան կազմակերպութիւնները եղած են համերաշխ՝ մասնաւորաբար ժողովուրդի զինաւորման գործին մէջ»[2]:

Ուրֆայում հայերի հալածանքների սաստկացումն սկսվեց ապրիլի 17-ի խուզարկություններով: «Յանկարծ,- պատմում է ականատեսը,- 16 խումբ ոստիկաններ տարբեր ճանապարհներով կը մտնեն Հայոց թաղը, կարծես թէ նախապէս չափուած, ձեւուած եւ կնքուած ծրագրով խուզարկութիւններու կը

---

[1] *R 14086, Ab. 22125.*

[2] ***Սահակեան Ա.*** *(Լութեր), Դիւցազնական Ուրֆան եւ իւր հայորդիները, Պէյրութ, 1955, էջ 723:*

ձեռնարկեն: Նախ կը պաշարեն մայր եկեղեցին եւ հարուստներու տունները, ոստիկաններու տարբեր խումբեր հեծեալ եւ հետիոտն անդադար կը շրջագային փողոցները ... Կեսօրէն անմիջապես յետոյ 30-ի չափ հեծեալ ոստիկաններ կը փութան խուզարկելու քաղաքէն մեկուկէս ժամ հեռու գտնուող զուտ հայաբնակ Կարմուճ գիւղը»[1]:

Նախ երիտասարդությանը զորակոչեցին և ուղարկեցին ամելե թաբուրի Այնթապ ու Ուրֆայի մոտ գտնվող Կարա-Քեոփրյուի և Կաթմա վայրերը: Արդեն այդ ժամանակ որոշակի էր դառնում, որ թուրքական կառավարությունը «հայերը բնաջնջելու ծրագիրները պատրաստած ու գործադրութեան դրած է»[2]: Մի ձորում սպանվեց Կարմուջ գյուղի երիտասարդությունը: Այնուհետև 700 հայ կոտորվեց Ուրֆայի Պրտիկ Մեյդան թաղում:

Հր. Աճառյանը Եդեսիայում ծավալված իրադարձությունների նախասկիզբը ներկայացնում է հետևյալ կերպ. «1915 յունիս 4. մի խումբ եդեսացիք միացան կարմունջցոց եւ Ս. Յովհ. լեռան քարայրները քաշուեցան. նպատակ ունենալով զիչերով միանալ 1500 հայ զինուորաց, որ կ'աշխատէին ի Գարաքէոփրի եւ յարձակել Ուրֆայի վրայ»: Սակայն հաջողություն չունեցան, որովհետև «թուրք չմարկիք պաշարեցին նրանց»: Փոքրիկ բախումից հետո հայերը հետ քաշվեցին: Իշխանությունները «Կարմուջի երիտասարդաց մեծ մասը բռնեց եւ ինը ժամ հեռու քշելով՝ հրացանազարկ արեց: Պահանջեցին քաղաքի զէնքերը, հները տուին, լաւերը պահեցին: Ամեն տեղ խուզարկում, ձերբակալում եւ բոլորին կոտորում էին: Մի խուզարկութեան միջոցին հայք տեսնելով, որ պահեստը պիտի բռնուի, կրակ բացեցին. երկու ոստիկան սպանուեց: Տաճիկք գնացին օգնական բերելու. սրանք հինգն էին, ուստի զէնքի պաշարը փախցրին, ուրիշ տեղ գնացին»[3]:

Ուրֆայում գերմանացի միսիոներ Բ. Էքարտը իր «Ապրածս օրերը Ուրֆայում» գրքում գրում է. «Կառավարությունը մինչև 40 տարեկան հայերին ուղարկում էր զինապարտության՝ ճանապարհ կառուցելու բազարից դեպի արևելք և հարավ ... 400 հայերի ուղարկել էին Ուրֆա–Թել-Աբիադ ճանապարհի վրա աշխատելու և մոտ 100-ին էլ՝ դեպի արևելք: Նրանց ջարդեցին»: Մի հայ հաջողում է փրկվել և հասնել Մծբին ու Էքարտին պատմել. «Մի օր կեսօրից հետո մի սպա եկավ ոստիկանների հետ: Նա հրամայեց, որ 50 հայեր շարք կազմեն: Շարք կանգնեցինք ուս-ուսի: Ոստիկանները պարաններով մեզ իրար կապեցին»: Երկու ժամ անց կարավանը հասնում է ճանապարհի ծայրի հովիտը: Սպան ճառ արտասանեց, և նրա «Մա՛հ դավաճաններին» հրահանգից հետո ժանդարմները կրակ բացեցին:

Հրացանաձգությունը տևեց հավանաբար կես ժամ, ապա քրդերը նետվեցին սպանվածների վրա ու բոլորին մերկացրեցին... Կողոպտված փողերն իրար մեջ բաժանելուց հետո փաթաթեցին մեր շորերով... Գիշերը սողալով թողեցի այդ սարսափելի վայրը»:

---

[1] «Կիլիկեան տարեցոյց», Կ. Պոլիս, 1922, էջ 220:
[2] Նույն տեղում, էջ 221:
[3] **Աճառյան Հր.**, նշվ. աշխ., էջ 347-348:

Քաղաքի հարավում աշխատող հայերի ճակատագրի մասին էքարտին պատմել է թուրք ոստիկանը, «Երբ ցանկացել էին 400 հայ զինվորներին չղթայակապ անել, խռովություն էր բարձրացել: Մի քանի հայեր հարձակվել էին ոստիկանների վրա, խլել զենքերը: Թուրքերը բոլոր կողմերից կրակ էին բացել հայերի վրա, բայց մի քանի հոգի հաջողել էր փախչել»: Հայերի այդ ջարդին մասնակցել էին նաև քրդերն ու արաբները: Դիակները նետել էին ջրհորը: «Երբ ջրհորը դիակներով լցվել էր, զինվորները մեծ քարեր էին գլորել ջրհորի վրա...»[1]:

Բ. Էքարտը փաստեր է բերում, որոնք մեկ անգամ ևս հաստատում են, որ ջարդերը հրահանգավորված էին Կ. Պոլսից: Նրա եղբայրը ականատես լինելով տարագրվող հայերի հանդեպ դաժան վերաբերմունքին, կչտամբում է ոստիկանին: Վերջինս ուսերը թոթովում ու ասում է. «Ես ի՞նչ գիտեմ, թե ինչ է կատարվում հայերի հետ»:

Հունիսին քաղաքում հայտնվեցին բանտերից ազատ արձակված ծպտված ոճրագործներ՝ «կամավորներ»: Նրանք եկել էին Կ. Պոլսից և ոստիկանների աչքի առաջ սկսեցին կողոպտել փողոցներում երևացող հայերին: Քաղաքում լուրեր էին տարածվում, թե հայկական թաղերում դասալիքներ էին թաքնվում և «զգուշորեն լռում էին, որ շատ թուրք դասալիքներ գտնվում էին թուրքական թաղերի որջերում»:

Ուրֆա ժամանեցին երկու բեյեր՝ Իթթիհադի պատվիրակներ՝ Էնվերի հորեղբայր, երիտթուրք պարագլուխներից Խալիլն ու տխրահռչակ ավազակ Ահմեդը: Տեղի կառավարչի և այդ «երկու բեյերի միջև լուրջ վիճաբանություն էր տեղի ունեցել»: Առաջինը «չի հանդուրժել, որ երիտթուրքերը խառնվեին քաղաքի գործերին», իսկ եկածները բացատրել էին, թե իրենք ղեկավարվում էին «Կ. Պոլսից ստացված հրահանգներով»: 50 հայի արտաքսումը տեղի ունեցավ նրանց գալուց անմիջապես հետո: Մի քանի օր անց նրանք հաշվեհարդարի ենթարկեցին Գր. Զոհրապին ու Վարդգեսին: Խալիլը հայ ավագանու ներկայացուցիչ Նշանին ուղղակի ասաց. «Դուք, հայերդ գտնվում եք իմ իշխանության տակ, կարող եմ ձեր հետ վարվել ինչպես ցանկանամ» և նրանից մեծ գումար է պահանջում, խոստանալով, որ «հավաքված գումարի չափից է կախված լինելու» հայերի հանդեպ վերաբերմունքը: Ապա Խալիլը լուր տարածեց՝ եթե հայերը մահմեդականներին որոշակի գումար տային, «վերջ կտրվեր սպառնալից վիճակին»[2]:

Շուտով Ուրֆայում ևս ձերբակալությունները դարձան զանգվածային: Հուլիսի 10-ին ոստիկանապետ Օսմանը պահանջեց 48 ժամվա ընթացքում հանձնել բոլոր զենքերը:

Դանիացի միսիոներ Քարեն Եփփեն գրում է. «Օր մըն ալ տարագիրներու կարաւանները սկսան Ուրֆա հասնիլ: Թիւրքերը «մուհաճիր» կը կոչէին զանոնց: Զէյթունցիներ էին: Մեր հարցումին, թէ ինչո՞ւ լքած էք ձեր լեռները, անոնք պատասխանեցին. «Առանց պատճառի մեզ քշեցին մեր տուներէն»:

---

[1] **Էքարտ Բ.**, Ապրածս օրերը Ուրֆայում, Ե., 1990, էջ 19-25:

[2] Նույն տեղում, էջ 24:

Ուրֆայում ևս սկսեցին ամենավայրենի եղանակներով մեծագումար տուրքեր հավաքել, «միշտ յանուն օսմանեան բանակին կը հաւաքեն ձիեր, կառքեր, ապա՝ խանութներու մէջ գտնուող ապրանքները կը կողոպտէին, մինչեւ իսկ կը խուզարկեն տունները»: «Այս բոլոր դառնութիւնները լռելեայն կ՚ըմպեն ուրֆացիները, կը գուշակէին, որ օրերը վարդագոյն չէին, բայց ոչ ոքի մտքէն կ՚անցնէր ընդհանուր բնաջնջման հրէշային ծրագիր մը»:

Հատկանշական է, որ հայ համայնքի ավագանու հաշտարար քարոզներին հակադրվեց ոչ միայն Մ. Յոթնեղբայրյանը, այլ մեծ թվով երիտասարդներ, որոնք կանգ չառնելով վտանգի ու դժվարության առաջ, ռազմամթերք էին ներկրում ու թաքցնում: Հունիսի 8-ին ձերբակալեցին 16 կուսակցական ղեկավարների ու աքսորեցին Ռաքքա: Մ. Յոթնեղբայրյանը ճանապարհին, ծպտված բեդևիի հագուստի մեջ, ձերբակալվածներին առաջարկում է փրկվելու պլան, բայց մերժվում է: Նրանց ոչնչացրեցին Ջրայան գյուղում:

Վիճակն իսկապես բարդ էր և ծայրաստիճան բարդանում էր նաև նրանով. որ քաղաքի բնակչության միայն մեկ երրորդն էր հայ. մնացածը մահմեդական էր: Քաղաքն ու նրա գյուղերը շրջափակված էին թուրքերով, քրդերով, չերքեզներով, չեչեններով, առնաուտներով և մահմեդական այլ ցեղերով՝ դաստիարակված Ղուրանի հակաքրիստոնեական մոլեռանդության ոգով. «Եթե գերիներից ձեզ դուր գա կին կամ աղջիկ և եթե ցանկանաք նրան հարճ վերցնել, եթե ձեզ հարկավոր է գյավուրներից պատանի ստրուկ ունենալ, Ալլահն այդ չի արգելում, միայն եթե նրանք ընդունեն իսլամություն: Իսկ եթե մնան իրենց հավատին, այդ մոլորվածներին սպանե՛ք: Ալլահն արգելում է միանալ գյավուրների հետ: Ծերերին մի՛ խնայեք, քանի որ նրանց մեջ անհավատարմությունն նույնքան ամուր է, որքան հին ոսկորը... Բոլոր գյավուրներն Ալլահի առաջ մաքուր չեն: Խփե՛ք, այրե՛ք, վերցրե՛ք մեռածների հարստությունները...»:

«Սուրը գրքի» պատգամները հոգեհարազատ էին մահմեդական ընչաքաղցի նվիրական զգացմունքներին: Եվ նա առիթը բաց չէր թողնում դրա դոգմաներն օգտագործելու՝ անձնական շահ ստանալու համար: Ուրֆացի մահմեդականները հայ կանանց ասում էին, որ եթե եդեսահայերը տեղահանվեն, նրանք անհանգստանալու պատճառ չունեն, որովհետև «դուք և ձեր զավակները կմնաք մեր մոտ. դուք մերն եք»: Նրանք մտնում էին հայերի տները և սպառնալով դրամ ու կին էին պահանջում: Մասնավորապես տուժում էին այն ընտանիքները, որոնց տղամարդիկ բանտարկված կամ սպանված էին:

Դրությունը փոքր-ինչ մեղմանում էր նրանով, որ Եդեսիայում հայ կանայք կազմակերպված էին, միավորված էին կանանց միություններում, պահում էին որբանոցներ, արհեստանոցներ, ունեին Կարմիր խաչի կազմակերպություն:

Նրանք միահամուռ որոշում կայացրեցին՝ եթե անխուսափելի դառնա թուրքերի ճանկերն ընկնելը, թույն ընդունել: Իսկ քաղաքում ձերբակալություններն ու փոքր խմբերով աքսորումները շարունակվում էին: Կանայք որոշեցին, որ այլևս չուկայում պետք է աշխատեն իրենք, իսկ տղամարդիկ Հայկական թաղից դուրս չպետք է ելնեն՝ ձերբակալությունից խուսափելու համար:

Որպեսզի հայկական թաղերը խուզարկելու պատրվակ չստեղծվեր՝

Մկրտիչն իր 30 հոգանոց խմբով դուրս է գալիս քաղաքից և ապաստանում Կարմուջ հայկական գյուղի մոտակայքի Վանեսի լեռներում: Սակայն հուլիսի 6-ին խումբը պաշարվում է: Հաջողվում է ճեղքել շրջափակման օղակն ու վերադառնալ քաղաք;

Զինաթափման դեմ հանդես եկողներին դեկավարում էր Թնդանոթաձիգ սպա Միհրան Հերարդյանը, որը հիշեցնելով 1895 թ. կոտորածը, ասում է, թե զենքերը հանձնելը մահ է: Հավաքում են միայն մի քանի հին զենքեր ու հանձնում:

Հուլիսի 25-ի երեկոյան, ձերբակալված հայերին քաղաքից հանում են և Շեյթան Դերեսի վայրում ոչնչացնում, ինչը գրեթե հուսահատության է մատնում քաղաքի հայությանը: Հաջորդ օրը ձերբակալվում է թեմի առաջնորդ Արտավազդ ծ. վրդ. Գալենտերյանը:

Օգոստոսի 4-ին, երբ չեթեներն ու թուրք զինվորներն անակնկալ պաշարում են Կաթմա և Կարաքյոփրյու գյուղերում գտնված անզեն հայ զինվորներին ու բոլորին սպանում, մի քանի հոգի ինչ-որ կերպ փրկվում է և կատարվածի լուրը հասցնում քաղաք: Նույն ժամանակ թուրքերը շրջապատում են հայկական թաղը՝ բռնելու համար Յոթնեղբայրյանին ու նրա խումբը, որոնք Հարություն Ռաստգելենյանի տանը թաքնված էին: Հնարամիտ Մկրտիչը հաջողում է պաշարումից դուրս գալ ու թաքնվել Հ. Սիմեյանի տանը:

Այս և նման մի քանի դեպքեր համոզեցին, որ սխալ էին նրանք, որոնք գտնում էին, թե զենքի պետք էր դիմել միայն տեղահանության հրամանն ստանալուց հետո: Հայերը ինքնապաշտպանության ձեռնամուխ եղան անմիջապես: Ստեղծվեց ռազմական խորհուրդ կազմված վեց հոգուց՝ Մ. Յոթնեղբայրյան, Գ. Ալահայտոյան, Հ. Ռաստգելենյան, Վ. Մեսրոբյան, Հ. Սիմեյան և Մ. Սուջյան: Կան վկայություններ, որ խորհրդի կազմում էին նաև Խ. Քյուփելյանը, Լ. Էլբերլյանը, Հ. Իմիրզյանը և Ա. Ադդարյանը: Նրանց դեկավարությամբ՝ Հայոց թաղը բաժանվեց վեց հատվածի՝ յուրաքանչյուրում 32 դիրք: Կռվողների թիվը տատանվում էր 800-1200-ի միջև:

Հասարակական կարգի պահպանման գործը հանձնարարվեց տարիքավորներին: Ստեղծվեց զինագործական արհեստանոց՝ հրացանները վերանորոգելու և փամփուշտ լցնելու համար: Կանայք մաքրում էին զենքերը, դասավորում թաքստոցներում:

«Հացագործ Աստուրի տունը վերածուած էր զինագործարանի: Այստեղ կը պատրաստէին» նաև ձեռնառումբեր: «Քաղաքին մէջ որքան աղտոտ թիթեղներ կային, հոն հաւաքած էին»: Դրանք տաքացնում էին, միացման տեղերի կապարը հալեցնում և օգտագործում ձեռնառումբ պատրաստելու համար: Հայոց թաղի չորս կողմը խրամատներ փորվեցին:

Գործում էին նաև պարենավորման մարմին և հիվանդանոց: Թաղին տունները պատերին բացված անցքերով կապված էին միմյանց հետ: Դա կարևոր էր, որովհետև մարտի ժամանակ վտանգավոր էր անցնել ոչ միայն փողոցներով, այլև բակ դուրս գալ՝ թուրքերը մինարեներին դիպուկահարներ էին տեղադրել, որոնք ոչնչացնում էին դրսում երևացողներին:

«Հայոց ծրագիրը յայտնի էր: Անոնք միահամուռ որոշուած էին մնալ իրենց

տուներուն մէջ, կռուիլ մինչեւ վերջին փամփուշտը, որքան կարելի է սուղ գինով ծախել իրենց կեանքը: Ազատուելու յոյս գրեթէ չունէին, այդ ո՛չ թէ մահուան ու կեանքի կռիւ պիտի ըլլար, այլ կռիւ՝ արժանանալու պատուաւոր մահուան»[1]:

Էքարտի վկայութեամբ՝ արդեն օգոստոսի 20-ից քաղաքում առաջացան «արյունոտված և կողոպտված դիակների կույտեր: Թուրքերը հարձակվեցին չուկայում գտնվող հայերի վրա և ոչնչացրեցին մոտ 200 հոգի»: Մի նեղ նրբանցքում Էքարտի և նրա եղբոր դիմաց «դուրս էին եկել կարմիր թուրքեր՝ զինված արյունոտված մահակներով և եղաններով»: Փորձել են երկուսին էլ սպանել, կարծելով, թե գյավուր հայեր էին, բայց նրանք կարողացել էին համոզել, որ հայ չէին ու փրկվել էին:

«Սամսաթի դարբասի մերձակա փողոցում տեսա երեք դիակ: Սպանվածների խանութները կողոպտված էին ... Տեսա, թե ինչպես մի սպա կրակելու պատրաստ մաուզերով թեքվեց նեղ նրբանցքը, և երկու հրացանավոր ոստիկաններ հետևեցին նրան ... Մենք սարսափով լսում էինք կրակոցների ձայներ ... Հրացանաձգությունը տևեց մինչև մայրամուտ»: Տղամարդիկ «փախել էին չուկայից, բայց չէին կարողացել հասնել իրենց տները: Կանայք ու երեխաները փախստական, թափառական էին դարձել»: Հաջորդ օրը Էքարտը Մզբինի մոտակայքում տեսել էր երեխաների դիակներ: Նաև տեսել էին, որ հայերի շատ տներ կողոպտվում էին:

Իշխանությունները պահանջեցին, որ ոչ-տեղացի հայերն անհապաղ թողնեն քաղաքը, իսկ եղեսահայերին արգելվեց քաղաքից հեռանալ: Հանվեցին և Սիրիա տեղափոխվեցին քաղաքում գտնվող պատերազմական գերիները: Հայերի տների խուզարկություններն էական արդյունք չունեցան, և դա առաջին հերթին շնորհիվ մանկամարդ աղջիկների, կանանց ու երեխաների ջանքերի, որոնք ամենաբազմազան հնարքներով թույլ չէին տալիս, որ խուզարկու ոստիկանները գենք հայտնաբերեին: Մ. Յոթնեղբայրյանը Ուրֆա բերված Գ. Զոհրապին ու Վարդգեսին առաջարկում է փախուստի ծրագիր, բայց վերջինները հրաժարվում են փախչել:

Բախումը անխուսափելի էր, պատրվակները՝ ավելի քան չատ: Մի հայի տուն խուզարկելու ժամանակ (տանը միայն տանտիրուհին ու դուստրն էին) ոստիկանապետը փորձում է բռնությամբ կենակցել դստեր հետ, սակայն հարևան սենյակում թաքնված որդին ատրճանակի կրակով սպանում է նրան: Ոստիկանները խուճապահար փախչում են գոչելով, թե հայերն ապստամբել են: Տեղական իշխանություններն անմիջապես հեռագրում են Հալեպ. «Շտապ օգնության հասե՛ք: Ուրֆան վտանգված է: Հայերն ապստամբել են»:

Ջարդի սկսվելը Էքարտը ներկայացնում է հետևյալ կերպ: Օգոստոսի 19-ի կեսօրին ոստիկանները փորձում են բռնել մի հայ դասալիքի: Մի կին ցույց է տալիս դասալիքի թաքստոցը: Այդ պահին կինը հրացանագարկ է լինում: Ծանր վիրավորվում են Բաքրի և Նուրի չավուշները: Դրանից հետո էր, որ «երկու բեյերը» հրամայեցին ջարդել հայերին:

Հալեպում Ավստրո-Հանգարիայի հյուպատոս Դանդինին արդեն օգոստոսի

---

[1] **Գահուէճեան Ե.**, նշվ. աշխ., էջ 26:

27-ին հեռագրեց. «Անտիոքի մոտ՝ Սվեդիայից, ինչպես նաև Ուրֆայից ու Զեյթունի մերձակայքից հայտնում են հայերի և իշխանությունների միջև տեղի ունեցող արյունահեղ ընդհարումների մասին: Անձնատուր լինելու թուրքական պահանջին հայերը պատասխանել են կրակոցներով: Մարտերը շարունակվում են»[1]:

Սեպտեմբերի 28-ին ոստիկանները փորձեցին բռնել հայ երկու դասալիք զինվորների: Նրանց միացավ թուրք խուժանը, որը փորձեց կրկնել 1895 թիվը: Հայերը փակեցին խանութները և զբաղեցրեցին իրենց դիրքերը: Մութեսարիֆը նամակով պատվո երդում է տալիս, թե հայերին որևէ վատ բան չի պատահի, եթե բացեն խանութները: Ստանում է պատասխան. «Ուրֆայի հայութիւնը հաւատք չունի թիւրք կառավարութեան տուած խոստումներուն վրայ: Նկատի ունենալով, որ տմարդի կերպով ջարդուած են հայ ղեկավարներն ու Կութամայի հայ զինուորները, ողջ մնացողները չեն ուզեր ոչխարի համակերպութեամբ մորթուիլ: Անոնք ուխտած են մեռնիլ մինչև վերջին փամփուշտն ու վերջին մարդը»[2]:

Հայկական թաղերը ոչ միայն բարձրադիր էին, այլև՝ քարաշեն, ամուր տներ ունեին:

Թուրքական ոստիկանությունը պաշարում է Տարակչյանների տունը, ինչը հանդիսացավ այն վերջին կաթիլը, որ լցրեց հայերի համբերության բաժակը:

Բայց եկեղեցու զանգերը հնչեցին այն բանից հետո, երբ իշխանությունները փորձեցին կատարել նոր ձերբակալություններ և խուզարկություններ: Հայերն անմիջապես զբաղեցնում են մարտական դիրքեր, թաղը ծածկվում է դիրքերով:

Մութեսարիֆը պահանջում է հեռանալ դիրքերից: Հայերը հրաժարվում են, պատճառաբանելով թե թուրքական խոստումները թակարդ են[3]: Դա սեպտեմբերի 29-ն էր՝ Ուրֆայի հերոսամարտի առաջին օրը:

Անգլիացի ականատեսը գրում է. «...Հայկական եկեղեցու մեծ զանգն սկսեց հնչել: Երբեք չեմ մոռանա այդ հնչյունի ներգործությունը մեզ վրա: Դա խսկական տագնապազանգ էր: Մինչ այդ Ուրֆայում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում մենք եկեղեցու զանգի ձայնը չէինք լսել: Հայերը չէին համարձակվում զանգը ղողանջեցնել նույնիսկ կիրակի օրը, երկյուղով, որ կգրգռեին թուրքերի մոլեռանդությունը իրենց դեմ: Այնպես որ, զանգի անընդհատ ղողանջը նրա տևական հարկադիր լռությունից հետո, կարծես բառերի պարզությամբ մեզ ասում էր, որ հայերը կռվելու են մինչև վերջ...»[4]:

Հայկական թաղերում գտնված ոստիկանները զինաթափ են արվում կամ սպանվում:

Այդ օրերին Ուրֆայամ ոչնչացվեց 600 հայ, որոնցից հարյուրը քաղաքաբնակներ էին, 100 հոգի ուղարկվեցին աշխատանքային վաշտեր, զգալի թվով

---

[1] Wien HHSTA PA XXXVIII 366, Aleppo, 27 August 1915.

[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 800:

[1] **Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 834:

[2] «Բնօրրան», 1995 թ., № 1, էջ 15:

ուրֆացիներ ոչնչացվեցին Դիարբեքիրի ճանապարհին:

Մութեսարիֆ Այի Հայդարը բանագնացներ է ուղարկում կռիվը դադարեցնելու առաջարկով: Հայերը մերժում են:

Հայկական թաղում ամենուրեք պատնեշներ էին չինվում բացի հայկական և թուրքական միացյալ փողոցից, որպեսզի խուժանը այնտեղից թափանցեր Հայոց թաղի փողոցները:

Բ. Էքարտը գրում է, որ գորգի գործարանի մերձակայքում հնչեց հայի խրոխտ ձայն. «Մահմեդականնե՛ր, դուք մեզ հուսահատեցրեցիք: Կառավարությունը մեզ լավ խոստումներ է տալիս: Բայց դա կեղծիք է: Նա ուզում է ոչնչացնել հայերին: Մեր զինվորներն անպատիվ են արված, նրանց եղբայրներին ու հայրերին, կանանց ու երեխաներին խայտառակել են, դատապարտել սովամահության: Կգա նաև Ուրֆայի հայության հերթը... Բայց մենք չենք թողնի, որ մեզ ոչխարի պես մորթեք մեր տներում: Մենք ուզում ենք թանկ ծախել մեր կյանքը՝ զենքը ձեռքներիս»[1]: Խոսքի ավարտին հնչեց հրացանաձգարկ: Թուրքերը միմյանց ձայն տվեցին: «Բոլորդ ձեր զենքերով դուրս եկեք, հայերը չպետք է հարձակվեն մեր տների վրա»: Բայց հայերը մտադրություն չունեին հարձակվելու թուրքերի վրա: Նրանք բավարարվեցին նրանով, որ պահապան կարգեցին իրենց տների մուտքերին և թաղի փողոցներում: Թուրքերը նույնպես դիրքեր գրավեցին հայկական թաղի մերձակայքում: Սկսվեց աչխույժ հրացանաձգություն, որ տևեց մինչև ուշ գիշեր: Նույն օրը, թուրքերը գործարանի, կողքի տանը սպանեցին մի հայ հաշմանդամի, ապա վիթխարի խարույկ վառեցին և այրեցին հայ դեղագործին: Թուրքերից մեկը փորձեց փախցնել մի հայ աղջկա, բայց հրացանաձգարկ եղավ: Մի քանի օր անց, թուրքերի պահանջով, հայերին գործարանից հանեցին և բոլորին հրացանաձգարկ արեցին:

Ֆախրի փաչան թուրքերի անհաջողության պատճառը պարզելու համար սկսում է քննություններ անցկացնել: Նա հայերին առաջարկում է հեռանալ քաղաքից՝ երաշխավորելով նրանց անվտանգությունը: Հայերը համաձայնվեցին պայմանով, որ ազատ արձակվեին իրենց 200 ձերբակալված ընկերները: Ֆախրին համաձայնվեց, բայց հայերին ազատ արձակելն անհնար էր, որովհետև նրանք արդեն ոչնչացված էին:

Մինչև Հալեպից սպասվող ուժերի տեղ հասնելը Ֆախրին հաջողեց տասնյակ հազարի հասնող ռազմական ուժ ձևավորել տեղի թուրքերից, քրդերից և չերքեզներից[2]:

Սեպտեմբերի 30-ին 12.000 թուրք զինվոր ու խուժան լցվում են Հայոց թաղը: Նրանց առաջնորդում էին «Սալավաթ» գոռացող խոջաները: Խուժանն իր հետ վերցրել էր պարաններ ու պարկեր՝ կողոպուտի համար: Երբ թուրքերն արդեն խուժել էին թաղը, հայերը զանգվածային կրակի տակ առան նրանց: Թշնամին չատ արագ խուճապի մատնվեց ու փախուստի դիմեց՝ թողնելով 450 դիակ: Հայերից զոհվեցին վեց տղամարդ և երկու կին:

Մետերնիխը կանցլերին 1915 թ. նոյեմբերի 29-ին գրած նամակում կեղծում

---

[1] *"Зеркало", 1993 г., № 74, տե՛ս նաև* ***Սահակեան Ա.****, նշվ. աշխ., էջ 818:*

[2] ***Սահակյան Ռ. Օ.****, Ուրֆայի 1915 թ. հերոսամարտի պատմությունից, ՊԲՀ, 1988, № 3, էջ 108-110:*

է ուժերի փոխհարաբերության իրական պատկերը: Նա հայ կռվողների թիվը նշում է 2000 տղամարդ, որոնք «բավարար զինված էին հրացաններով, ապահովված էին մեծ թվով փոքրաչափ զենքերով և ունեին բավարար քանակությամբ ռազմամթերք: Նրանք գնդացիր չունեին, դրանց փոխարեն ունեին մեծ թվով ձեռքի ինքնաչեն ռումբեր»: Սրանից Գերմանիայի դեսպանը եզրակացնում է, որ դրանք պատրաստելու համար անհրաժեշտ դինամիտը երկաթուղի կառուցող հայ բանվորները բերել են տևական ժամանակում: Այսինքն՝ եղեսահայերը երկարատև նախապատրաստական աշխատանք էին տարել «ապստամբելու» համար:

Մետերնիխը անհրաժեշտ է համարում հայերի ուժի թիվը ավելացնել 2-2,5 անգամ, իսկ թուրքական ուժերի թիվը կրճատել մի քանի տասնյակ անգամ: Ըստ նրա՝ սկզբում, այսինքն՝ սեպտեմբերի վերջերին, թուրքերի կողմից մարտական գործողություններին մասնակցում էր 70-80 ժանդարմ, ապա օգնության եկավ մի գումարտակ, հոկտեմբերի 5-ին՝ ևս մի գումարտակ, իսկ հաջորդ օրը՝ նորից մի գումարտակ և երկու թնդանոթ: Հայերի զոհերի թիվը նշում է 300-400, իսկ թուրքերինը՝ 50 հոգի[1]:

Մետերնիխի կարծիքով՝ Ուրֆայի հայկական հուզումների պատճառները պետք է փնտրել Վանի իրադարձությունների մեջ: Բախումները Ուրֆայում չատ ավելի սուր բնույթ ստացան Վանից այնտեղ գնացած «քարոզիչների» ջանքերով:

Իշխանությունները հայերից պահանջեցին լրացուցիչ զինակոչիկներ տալ, գրում է ժամանակակիցը: Սեպտեմբերի 13-ին «կը պաշարեն տուն մը, կը պահանջեն անձնատուր ըլլա, կը մերժեն, կը կռուին, մահմետականները մի քանի զոհ տալով կը փախչին: Գիշերը հայք կը պատրաստուին եւ առաւօտը կը սկսեն կռուիլ: Թուրք խուժանը ամէն կողմէ կը յարձակի, բայց ամէն կողմ դիմադրութեան հանդիպելով, չատ զոհ տալով կը փախչի: Օրիորդք, տղամարդու չոր հագած, կը կռուին, կը քաջալերեն: Սքանչելի ռումբ կը չինեն, ճաչ կ'եփեն, բժշկական սպասարկում կ'ապահովեն»:

Համաձայն «Կիլիկեան տարեցոյցի», մեկ հայը կռվում էր 50 թուրքի դեմ[2]:

Այսպիսով, ըստ Մետերնիխի, Ուրֆայում հուզումների սկսվելու ահազանգ հանդիսացան երկու իրադարձություններ: Առաջինը տեղի ունեցավ օգոստոսի վերջերին: Ոստիկանական հերթափոխը, որը զենք էր փնտրում Հայկական թաղի տներից մեկում, կիսով չափ ոչնչացվեց, իսկ մյուսները փախան: Շուկայում և դրան կից թուրքական թաղամասերում այդ լուրը հենց տարածվեց, զայրացած մահմեդական բնակչությունն սկսեց վրեժխնդիր լինել հայերից, սպանեցին մոտ 100 հոգի:

Սեպտեմբերի վերջին տեղի ունեցավ երկրորդ իրադարձությունը՝ նորից հրացանաձգություն հայկական թաղամասում, որի պատճառն անհայտ էր: Հրացանաձգությունն ինքնին առանձնակի նշանակություն չուներ, որովհետև որևէ մեկը չէր տուժել, բայց դրա հետևանքն այն եղավ, որ հաջորդ օրը հայ-

---

[1] *Statsarchiv Drezden, Akten № 1952, Armenien, BI. 27-34.*

[2] *«Կիլիկեան տարեցոյց», 1922, էջ 218-227:*

կական թաղամաս ուղարկվեց ուժեղացված ոստիկանական ջոկատ: Հայերն արագորեն հավաքվեցին և կարճ ժամանակում քաղաքի ամբողջ հայկական մասը բարիկադավորվեց և մարտական պաշտպանական համալիրի վերածվեց[1]:

Գերմանական դեսպանը գիտակցաբար, թե ստացած սխալ տեղեկատվության հետևանքով՝ կեղծում է: Սեպտեմբերի 29-ի հաղթանակը ո՛չ թե ռազմական ուժի գերակշռության, այլ հայերի անսանձ պոռթկումի, իրենց ճնշող, խեղդող թուրքական ահավոր ճնշումից անպայման ազատվելու անհերթ կամքի արդյունք էր: Կռվի նետվեց ամբողջ հայ բնակչությունը՝ անկախ սեռից ու տարիքից, առողջական վիճակից ու զբաղմունքից: Նրանցից շատերը զենքի որևէ տեսակ չունեին:

Փոքր դեր չխաղաց Մ. Յոթնեղբայրյանի փայլուն մարտավարությունը: Նա հայկական կռվող ուժերը խմբավորում է երեք հոգու հրամանատարության տակ՝ Կենտրոնի դիրքերի հրամանատարությունը հանձնում է Ռաստկելենյանին, Թիմրին թաղի դիրքերը՝ Գ. Ալահայտոյանին, իսկ Շաքոյանի դիրքերը վերցնում է իր հրամանատարության տակ: Դա հնարավորություն տվեց ամեն պահի թշնամու վրա հարձակվել միաժամանակ երկու ուղղություններից և թշնամուն առնել ծուղակի մեջ: Իսկ երբ վերջինները փախուստի էին դիմում՝ ընկնում էին Մկրտչի հրամանատարության տակ գործող դիրքերի կրակի տակ:

Դա Յոթնեղբայրյանի մտահղացումն էր,- վկայում է ժամանակակիցը,- թույլ տալ խուժանին լցվելու Հայոց թաղի փողոցներն ու ջարդել:

Թուրքերը սկսեցին ընդհանուր հարձակում, բայց գլխավոր ուժերը կենտրոնացված էին կենտրոնական մայրուղու վրա: Նրանք լցվեցին մայրուղին ու շրջապատման մեջ ընկան: «Շատ չանցած՝ փողոցը լեցուեցաւ թուրքերու բազմաթիւ դիակներով: Այդ գրոհի ընթացքին թիւրքերը տուին 450 զոհ եւ բազմաթիւ վիրաւորներ»[2]:

Վկայում է Մ. Յոթնեղբայրյանի տիկին Եղիսաբեթը. «Առանց չափազանցութեան կրնամ ըսել, որ Ուրֆայի կիներուն կատարած դերը ճակատագրական եղաւ: Մանաւանդ առաջին օրերուն ժողովուրդը չուարած վիճակ ունէր ... Սակայն աղջիկները յաջողեցան այնպիսի խանդավառութիւն մը առաջացնել, որ ժողովուրդը դարձաւ մեծ սիրտ ու մեծ հոգի: Իսկ երբ զէնքերը սկսան շատնալ՝ չնորհիւ թիւրքերեն գրաւուածներուն ու մեզմէ շատերը զէնք ունեցան եւ սկսան կռուիլ իրենց եղբայրներու կողքին, այլեւս խանդավառութիւնը հասաւ իր գագաթնակէտին»[3]:

Իսկապես, Ուրֆայի հայ կանայք առանձնակի մեծ դեր խաղացին ինքնապաշտպանական կռիվներում և դա նաև այն պատճառով, որ տղամարդկանց մեծ մասը զորակոչված էր, շատերը ոչնչացված կամ բանտերում էին:

Կանանցից հերոսությամբ առանձնապես աչքի ընկան Մ. Զիլինգիրյանը, Ա. Երիզյանը, Խ. Քեթեճյանը:

---

[1] *Statsarchiv Drezden, Akten № 1952, Armenien, BI. 27-34.*

[2] ***Գահուէճեան Ե.**, նշվ. աշխ., էջ 28:*

[3] ***Սահակեան Ա.**, նշվ. աշխ., էջ 915-916:*

Ջեմալ փաշան հասկացավ, որ միայն Ուրֆայում եղած ուժերով հայերին հաղթելն անհնար է և Հալեպից Ուրֆա ուղարկեց Ֆախրի փաշային՝ 600 զինվորով ու սպայով և երեք թնդանոթով: Օգնություն է ուղարկվում նաև Սուլեյմանն իր 600 հրոսակներով (Սուրուճից):

Կ. Գաբիկյանը Սուրուճում ականատես էր եղել այդ զորքերի Ուրֆա մեկնելուն և գրում է. «Ուրֆա գոյամարտը յառաջ կը վարէ դիւցազնօրէն, առիւծաբար: Խուժանային ոյժը անզօր կը մնայ զայն խորտակել-ընկճելու: Հալէպէն զինուորական ոյժ կ'ուղուի: Արաբ-Բունարէն Սուրուճ կը վերադառնայի, երբ Հալէպէն Սուրուճ եկաւ հասաւ գունդ մը զինուոր, թնդանօթ, ուղտերով ռազմամթերք: Սուրուճի ժանտարմա-գոմանտանին ալ ժանտարմաներու գունդովը միացաւ ասոնց»[1]:

Հոկտեմբերի 1-ի գիշերը Թուրք խուժանը զորքի առաջնորդությամբ նորից է շարժվում Հայոց թաղի վրա: Հարվածի գլխավոր ուղղությունը կաթոլիկ եկեղեցին էր: Մ. Յոթնեղբայրյանը մի ջոկատով չտապում է դեպի եկեղեցի, բայց Թուրքերն արդեն հասցրել էին դա գրավել և բակը լցվել: Նա մի խմբի հրամայում է ձեռնառումբերով բարձրանալ հարևան տան կտուրը, իսկ ինքը ջոկատի մյուս ուժերով դիրք է գրավում եկեղեցուն հարող մյուս տների կտուրներին: Բոլոր կողմերից կրակ են բացում մթության մեջ խարխափող թշնամու վրա, որը չուրջ 100 կռվող է կորցնում:

Հայերը Այահայտոյանի հրամանատարությամբ Թուրքերին ջախջախում են նաև Թեմիրինի ուղղությամբ:

Հոկտեմբերի 3-ին, հրետանային ռմբակոծումից հետո, թշնամին նոր հարձակման անցավ, որին մասնակցում էին նաև շրջակա գյուղերից եկած մեծ թվով գյուղացիներ: Հայերի մարտական գործողությունները ղեկավարում էր Հ. Ռաստկելենյանը: Հայերը ձևացնում են, թե նահանջում են ու Թուրքերին գցում են ծուղակը: «Թուրքերու ցնծութեան աղաղակները,- գրում է Լութերը,- փոխուած էին սարսափի ճիչերու: Այս խելահեղ փախուստէն քաջալերուած, դիրքերեն դուրս կու գային հայ մարտիկները ու ամբոխը կը հալածէին մինչեւ Այնզլխայի լճակը...

Ռաստկելենյանի ծրագիրը լիութեամբ յաջողած էր: Հայ տղոց կը մնար վերագրաւել իրենց դիրքերը եւ տօնել այդ գիշերուան յաղթանակը»[2]:

Մ. Յոթնեղբայրյանը ճակատամարտի վայրը հասավ, երբ կռիվն արդեն ավարտվել էր: Նա չնորհավորեց կռվի մասնակիցներին և համբուրեց «նաեւ ճակատները տասնեակ մը աղջիկներու, որոնք այր մարդու հագուստով եւ զինուած հետապնդած էին թշնամին դիրքերէն դուրս»: Այդ օրվա մարտերին հերոսություն դրսևորեցին նաև երեխաներն ու պատանիները: Լութերը թվում է դրանց՝ Նազարեթ Բաքքայյան, Գարեգին Բերեջիկյան, Հակոբ Էսմերյան, Հայկ Հացագործյան, որոնք զարմացրեցին «իրենց խիզախութեամբ»[3]:

Այդ օրերին Ուրֆայում գտնված ֆրանսիացի Մ. Ռըբուրը հոկտեմբերի 3-ի

---

[1] **Գաբիկեան Կ.**, նշվ. աշխ., էջ 378-379:

[2] **Սահակեան Ա.** (Լութեր), Ուրֆայի հերոսամարտը, Պէյրութ, 1933, էջ 91:

[3] Նույն տեղում, էջ 93:

մարտերի մասին իր հուշերում գրում է. «Հոկտեմբերի 4-ին մեռելային լռութիւն մը կը տիրէր բոլոր քաղաքին վրայ: 3-ին նոր կռիւ մը տեղի ունեցած էր, սակայն զինուորներն ու ամբոխը չէին յաջողած գրաւելու թաղերը: Իւրաքանչիւր փողոց պատնէշուած էր, հայերը գիտնալով, որ պիտի մեռնէին, որոշեր էին սուղ ծախել իրենց կեանքերը եւ առաւելագոյն վնասը պատճառել թիւրքերուն: Կիներն անգամ հրացանաձգութեան կը մասնակցէին ... Դեռատի աղջիկներ մահը ծաղրելով դիրքերէն կը պոռային զինուորներուն,- Տեսէ՛ք, մենք կ'երգենք, մենք կը զուարճանանք, դուք ալ եկէ՛ք մեզի հետ երգեցէ՛ք եւ պարեցէ՛ք»[1]:

Մինչև հոկտեմբերի 5-ը թուրքերի զոհերի թիվը հասավ 2000-ի[2]:

Ջեմալ փաշայի ուղարկած զորքերը չուտով տեղ հասան: Երբ գերմանական արտադրության թնդանոթները մոտենում են քաղաքին, մի խումբ երիտասարդներ Սարգիս Յոթնեղբայրյանի հրամանատարությամբ, ծպտված քրդի տարազի մեջ, գիշերով իջնում ու թաքնվում են թուրքական գերեզմանատանը, ապա աննկատ խառնվում են մահմեդական ամբոխին և Հայկական կամրջի մոտ սպասում թնդանոթների գալուն: Երբ դրանք մոտենում են, հայերը կրակ են բացում, ամբոխը խուճապահար փախչում է: Դրանից օգտվելով՝ Սարգիսը հանում է թնդանոթներից մեկի փակաղակը: Հայերը ձգտում են ձախողել թուրքերի մտադրության իրականացումը թնդանոթները տեղադրել Թլփկտուրի լանջին, գնդակահար անում հրետանավորներին: Սակայն, ի վերջո, թուրքերը թնդանոթները տեղադրում են ու ռմբակոծության տակ առնում Հայկական թաղը:

Հոկտեմբերի 5-ին Եդեսիա հասան 6000 զորք ու թնդանոթներ և անցան Ֆախրի փաշայի հրամանատարության տակ: Թե՛ այդ փաշան և թե՛ նրա շտաբի պետ գերմանացի Վ. Ռայխենբերգը մասնակցել էին Զեյթունի ու Մարաշի բռնագաղթին և կոտորածին: Հոկտեմբերի 7-ին Ֆախրին հայերից պահանջում է անձնատուր լինել: Հայերը կրկին մերժում են:

Ռազմական խորհրդի պատասխանում ասված էր. «Զենք ուզեր ծիծաղելի ըլլալ ձեր աչքին... Հանգիստ ձգեցէ՛ք մեզ մեր պատնէշներուն վրայ մինչեւ պատերազմին վախճանը: Ուրֆայի հայութիւնը պիտի կռուի մինչեւ վերջին մարդը: Ոչ դուք պիտի խնայէք մեզի եւ ոչ ալ մենք՝ ձեր զինուորներուն»[3]:

Հայկական թաղի ռմբակոծությունը մասնակի ընդհատումներով շարունակվում է մինչև ինքնապաշտպանական մարտերի վերջը: Խուժանը մի քանի անգամ փորձեց զորքի օգնությամբ գրավել Հայոց թաղը: Նրանք տիրացան կաթոլիկ հայերի եկեղեցուն, բայց դա պահել կարողացան միայն մինչև լուսաբաց:

Ֆախրին լրացուցիչ զորքեր է խնդրում Հալեպից: Հաջորդ օրը Ուրֆա է հասնում Սուրուճի Սուլեյմանը՝ 600 կովողներով: Գալիս են նաև աշիրեթներ՝ 12.000 բաշիբոզուկով: Թաղի ռմբակոծությանը ուղեկցում էր այդ բազմահազար զորքի և խուժանի հարձակումը: Մեծ թվով թուրքեր են սպանվում դարանակալած հայերի դաշույններից:

---

[1] **Սահակեան Ա.** (Լութեր), Ուրֆայի հերոսամարտը, Պէյրութ, 1933, էջ 93-94:

[2] **Գահուէճեան Ե.**, նշվ. աշխ., էջ 31:

[3] **Սահակեան Ա.**, Դիւցազնական Ուրֆան..., էջ 834:

Հոկտեմբերի 8-ին Ֆախրի փաշան հայկական թաղերի վրա հարձակումը սկսում է արևելյան կողմից: Ամբողջ օրը կատաղի կռիվ մղվեց և, չնայած կատաղի ռմբակոծություններին, թուրքերը չհաջողեցան գրավել հայկական որևէ դիրք: Դրա փոխարեն, հայերի երեք փոքրիկ խմբեր, ծպտված թուրքական զինվորական հագուստով, անցնում են Թշնամու թիկունքը և նրան խուճապի մատնում:

Նույն պահին Մկրտիչը մի խմբով ծպտված մտնում է թուրքական բանակի դասավորության մեջ և հարձակվում խուճապի մատնված թուրքերի վրա և 200 հոգու ոչնչացնում:

Հոկտեմբերի 9-ի մարտերն ավելի դաժան բնույթ ունեցան: Թուրքերը կարողացան գրավել Թլփպտուրը և ամբողջացնել Հայոց թաղի պաշարումը: Թլփպտուրի վրայից չարունակում էին ուժեղ ռմբակոծության ենթարկել հայերի դիրքերը: Միաժամանակ հարձակման անցավ հետևակը: Ֆախրիին օգնում էր նրա գերմանացի մյուս տեղակալը՝ գնդապետ Վոլթոգիլդը: Հայերն աներեր էին: Մարտին մասնակցում էին նաև հայ կանայք, այդ թվում՝ Զեթենճյանի, Զիլինկիրյանի և Կիմչյանի ղեկավարած ջոկատները: Նրանց 30 հոգանոց խումբը այնպիսի կատաղությամբ հարձակվեց Թշնամու վրա, որ հրոսակախմբի վիրավորված հրամանատար Յուսուֆն ասաց, թե տաբատ հագած ու զինված հայ կանայք կռվում են «առասպելական հերոսների նման, որ երբ միտքս կ'իյնան, ոսկորներս իսկ կը սարսռան»[1]: Անձնվեր էին կռվում հայ պատանիները՝ Ն. Բաղալյանը, Հ. Թենեքեջյանը ևն:

Վիրավորվում է Մ. Յոթնեղբայրյանը: Նա հրամանատարությունը հանձնում է Ռաստկելենյանին: Պատմում է Եղիսաբեթ Յոթնեղբայրյանը. «Մկրտիչը երբ աչքերը բացաւ ու տեսաւ զիս, բարկութեամբ ըսաւ, թէ ինչո՞ւ դիրքէն հեռանալով իր մօտ եկած եմ...»: Լսելով Մկրտչի վիրավորվելու մասին, հայ մարտիկները կռիվը չարունակեցին ավելի մեծ կատաղությամբ: Մովսես Սուճյանը ութ տեղից վիրավորված էր, բայց չարունակում էր հրաչքներ գործել. «...Գիշերը յիսունէ աւելի մեռած թիւրքերու զէնքերն ու փամփուշտները հաւաքեցինք ու տարինք մեր կեդրոնը»[2]:

Հոկտեմբերի 10-13-ի կռիվներն արդեն ընթանում էին Հայկական թաղի ավերակներում: Կռվում էին բոլորը՝ տղամարդ, կին, երեխա: Թուրքերը հետևողականորեն սեղմում էին օղակը: Նրանք նոր թնդանոթներ բերեցին:

Կռիվը չուրջօրյա էր: Պարենն ու ռազմամթերքը սպառվում էին: Հայերը հարկադրված էին հավաքվել Մայր եկեղեցում ու կռվել «մինչև վերջին փամփուշտն ու մարդը»: Թշնամին ռմբակոծում էր թաղ առ թաղ, տուն առ տուն: Սպանված տղամարդկանց փոխարինում են կանայք ու երեխաներ:

Զոհվում են նաև Հ. Ռաստկելենյանը, Խ. Քոպելյանը, Խ. Մեզրապյանը, Մ. Սուճյանը, Ա. Թաչչյանը և ինքնապաշտպանության մյուս ղեկավարները:

«Tercuman» թուրքական թերթը 1986 թ. մարտի 10-ին գրում է. «Ուրֆայի

---

[1] **Աւետեան Մ.**, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 330:

[2] **Սահակեան Ա.**, Դիւցազնական Ուրֆան..., էջ 921: Տե՛ս Ե. Յոթնեղբայրյանի հուշերը:

... օսմանյան չրջանի հայկական եկեղեցու տեղում կառուցված դպրոցի բակում կատարված աշխատանքի ընթացքում քարայրում հայտնաբերվել են 100-ից ավելի փտած կմախքներ»:

Ֆախրի փաշայի հանձնարարությամբ, տեղի գորգի գործարանի տնօրեն էքարտը Մ. Յոթնեղբայրյանին առաջարկում է դադարեցնել դիմադրությունը՝ խոստանալով փրկել նրա կյանքը: Հետևում է պատասխան. «Եթէ ձեր մէջ քաղաքակիրթ եւ քրիստոնեայ մարդու զգացում կայ, փրկեցէ՛ք անապատներուն մէջ կոտորուող անմեղ հայ ժողովուրդը»[1]: Էքարտը սպառնալիք է կարդում ու հեռանում: Հաջորդ օրն իսկապես կատաղի հարձակում է սկսվում գերմանացի գնդապետ ֆոն Էքսվեյլի հրամանատարությամբ:

Եղիսաբեթ Նաջարյան-Յոթնեղբայրյանն ուսուցչուհի էր աշխատում Կարմուջ գյուղում: Ուրֆայի գոյամարտի ժամանակ նա էր կազմակերպում թաղի կանանց ու աղջիկների գործունեությունը: Նրանք մշտապես դիրքերում էին, վախկոտներին «դաստիարակողներից» էին: Նրանք երգում էին, ոգևորում մարտիկներին:

Թուրքական դատարանը նրան դատապարտեց 101 տարվա բանտարկության:

Երբ Թուրք խուժանը լցվեց Հայոց թաղ, Խանըմ Քեթենջյանը, ասքյարի հագուստ հագավ և իր մի քանի ընկերուհիների հետ սկսեց Թուրք զինվորներ սպանել: Նա մինչև քաղաքի անկումը դիրքերը չլքեց և հերոսաբար կռվեց:

Հանձնարարվեց վերացնել հայկական դիրքերի հարևանությամբ գտնվող Թուրքական պահականոցը: Պատմում է պահականոցի կոմիսար Յուսուֆը. «Հրացանաձգութիւնից յետոյ պահականոց խուժեցին բազմաթիւ մարդիկ... Մեզ փրկութիւն չկար... Մեզնից երկու հոգի եւս սպաննուեցին, իսկ ես թեթեւ վիրաւորուեցի ոտքից ու մի կերպ փախայ, թաքնուեցի: Թաքստոցից տեսայ, թէ ինչպէս ոստիկան Ալիին ողջ-ողջ բռնեցին, ձեռքերը կապեցին, վզին պարան անցկացրեցին եւ կախեցին... Բայց տարօրինակ էր: Բոլորին հրամայող ձայնը ո՛չ թէ տղամարդու էր, այլ՝ կնոջ: Մեզ հետ հաշիւները մաքրելուց յետոյ, պահականոցի առաջ չարքի կանգնեցին սեւ ուրուականները եւ նորից լսուեց մանկամարդ կնոջ խրոխտ ձայնը: Նա արտասանեց 30-ից աւելի կնոջ անուն: Նրա արտասանած ամէն մի անունից յետոյ, ես լսում էի «ներկա՛յ» պատասխանը, որ նորից կանացի էր»[2]:

Երբ հայկական դիրքերն արդեն լռել էին. Խանըմը մտավ ամերիկյան կուսանոց, որտեղ մեծ թվով ուրֆացիներ էին հավաքվել: Ներս են խուժում Թուրք ասքյարներն ու սկսում խուզարկությունը: Մոտեցան Խանըմին, նա գոտկատեղից հանեց ատրճանակն ու կրակեց սպայի վրա: Ինքն էլ ընկավ ասքյարների գնդակից:

Թուրքերի դիրքերից ութ սպիտակ դրոշակ պարզվեց և Ֆախրին երկու հոգու ուղեց բանակցությունների համար: Գնացին Մարիամ Զիլինկիրյանն ու

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 804:

[2] **Կուրտիկյան Ստ.**, Ուրֆայի հերոսուհին: Տե՛ս «Ասպարէզ», 8 փետրվարի 1966 թ.:

Ազնիվ Միրզոյանը: Փաչան հիացած էր մանկամարդ աղջիկների խիզախության վրա:

Նրանք հանդուգն կեցվածքով փաչայի երեսին չպրտեցին. «...Կռիւը մենք չենք սկսած: Մեր երիտասարդներն ու առաջնորդը տարիք սպաննեցիք, ձայն չբրինք: Ինչ որ պահանջեցիք, տուինք, այլեւս ի՞նչ կ'ուզէք մեզմէ... Դադրեցուցէ՛ք յարձակումները ու մենք դարձեալ հաւատարիմ հպատակներ ենք կառավարութեան»[1]: Ամբողջ կռվի ընթացքում Մարիամը դիրքերում կռվեց, վիրավորներին խնամեց, հուսահատվածներին ոգի ներշնչեց: Նրան նույնպես դատապարտեցին 101 տարվա բանտարկության, բայց զինադադարից հետո ազատվեց:

Հայերը որոշում են ևս մի քանի օր դիմադրել, ապա ճեղքել օղակն ու հեռանալ: Մինչև հոկտեմբերի 18-ը նրանք մեծ կորուստներով հետ են մղում թուրքերի գրոհները:

Այդ օրը հայկական թաղամասում գտնվող ամերիկացի միսիոներների շենքի վրա իրենք՝ ամերիկացիները սպիտակ դրոշ բարձրացրեցին: Թուրքերն անմիջապես խուժեցին միսիոներների շենքերը և ընկան Մ. Յոթնեղբայրյանի սարքած ծուղակը: Դրանցում թաքնված հայ մարտիկները գրոհեցին թուրքերի վրա և մեծ կորուստներ պատճառեցին:

Եղեսացիների դիրքերը գնալով իրարից մեկուսանում էին, բայց կռիվն մղվում էր ամենուրեք: Գրեթե բոլոր դիրքերը թուրքեր լցվեցին:

Մասնակի կռիվներ շարունակվեցին: Հերոսական մահով իր կյանքին վերջ տվեց Մ. Յոթնեղբայրյանը:

Դեռ անցյալ դարում եղեսացիները իրենց թաղամասում ստորգետնյա շինություններ՝ դիրքեր, պահեստարաններ, ջրամբարներ էին ստեղծել, որոնք միմյանց հետ կապված էին նույնպես ստորգետնյա անցումներով:

Մետերնիխը Ուրֆայի հայկական թաղի մասին կանցլերին գրում է, որ դա կազմում է «քաղաքի մոտ կեսը՝ պաշտպանության համար արտակարգ հարմար, տեղավորված բլրակի վրա, որը բազմաթիվ անձավներ ունի: Դեպի դրանք հայերը փորել էին հիանալի անցումներ իրենց տներից և անձավներում պահում էին զենք և ռազմամթերք (ավելի ուշ, նրանց ապստամբությունը ճնշելուց հետո, ստորգետնյա շինությունները թաղի վերջին պաշտպանների համար ծառայեցին որպես հիանալի ապաստարան): Թաղի տները կառուցված են միայն քարից, հաճախ՝ շատ ամուր»[2]:

Թուրքերն այդ կառույցների մասին տեղյակ չէին: Եվ ահա, երբ հայկական թաղն ավերակների կույտի էր վերածվել ու ծածկվել էր հայերի ու մահմեդականների դիակներով, և երբ թուրքերը հաղթական գոչյուններով մտան թաղի ավերակները և սկսեցին կոտորել նրա ողջ մնացած բնակիչներին, ստորգետնյա դիրքերից նրանց վրա կրակում էին մահամերձ եղեսացիները:

Միսիոներ Լեսլին Ուրֆայում ամերիկյան հաստատությունների տնօրենն էր. նրան ընդունում էին որպես փոխհյուպատոս: Ականատես լինելով թուր-

---

[1] **Սահակեան Ա.**, Դիւցազնական Ուրֆան..., էջ 879:

[2] Statsarchiv Drezden, Akten № 1952, Armenien, BI. 27-34.

քական խժդժություններին, որոնց հովանավորում էին իշխանությունները, և տեսնելով հայերի աշխատասիրությունն ու զարգացածությունը (նա սիրում էր կրկնել, թե հայերն Ասիայի խորքն ընկած եվրոպացիներ են), սիրեց, կապվեց հայերի հետ:

Հոկտեմբերի 18-ին Մ. Յոթնեղբայրյանը նրան առաջարկեց թույլատրել, որ իրենք դիրքեր զրավեն ամերիկյան հաստատությունների շենքում: Լեսլին համաձայնվեց, սպիտակ դրոշ բարձրացրեց շենքի վրա և իր հայ աշխատակիցների հետ հեռացավ:

Ֆախրիի աչքից չվրիպեց Լեսլիի հայամետ գործունեությունը: Նրան բանտարկեցին ու հանձնեցին ռազմական դատարանին: Անգլիական հյուպատոսության թարգման Քուպերը պատմել է, թե ինչպես էին տանջում Լեսլիին և հարկադրում, որ թուրքերի կամակատար դառնա: Սակայն նա դատարանում աներեր պաշտպանում էր հայերին, մերկացնում իշխանությունների բարբարոս քաղաքականությունը նրանց հանդեպ: Նա ասում էր, որ հայերը՝ արհեստավոր, թե առևտրական, բանվոր, թե մտավորական, որևէ մեղք չունեն կատարված ի համար, ողբերգությունը ծնեցին թուրքերն իրենց թալանչիությամբ ու կազմակերպած կոտորածներով: Նա արդարացի էր համարում հայերի վարքագիծը՝ զենքով պաշտպանելու սեփական կյանքը:

Լեսլին թուրքական խոշտանգումները երկար տանել չի կարողանում և ինքնասպան է լինում:

Ք. Եփփեն գրում է. «Հայկական թաղի ինքնապաշտպանութիւնը չէր կրնար աւելի երկար դիմադրել թշնամիի գերազանց ոյժին դիմաց: Դիրքերը իրար ետեւէ կը ռմբակոծուէին, խմբապետները կը սպաննուէին եւ կը վիրաւորուէին: Արձակուած ռումբերէն կը ճեղքուի մայր եկեղեցիին պատը, որտեղ շատերը ապաստան են գտած: Ռումբերը կը վիրաւորեն նաեւ հայերու վերջին խմբապետը, որ արիւնլուայ գետին իյնալէ վերջ, իր վերջին ոյժերը կը հաւաքէ ու կ'աղաղակէ իր ընկերներուն, որ տոկան, դարձեալ տոկան»[1]:

Հոկտեմբերի 20-23-ը հայերը կռվում էին ու միաժամանակ ոչնչացնում իրենց ունեցվածքը՝ տները, կահ-կարասին, գույքը: Շատերը գերադասեցին ինքնասպան լինել: Թշնամու գլխավոր ուժերը հոկտեմբերի 23-ին Հայկական թաղ մտան: Նրանց դեմ գնդակ էին արձակում միայն թաքստոցներում կենդանի մնացածները՝ հիմնականում ծերեր, կանայք, երեխաներ:

Թուրքերը ավերակներում հայտնաբերեցին 2000 հոգու, որոնցից միայն մոտ 200-ն էին չափահաս: Նրանցից 60-ին կախաղան հանեցին, իսկ 140-ին ուղարկեցին Հալեպ՝ դատվելու: Շատ հայեր թուրքերի աչքի առաջ ինքնասպան եղան:

Հաղարապետ Օսմանի մոտ են տանում հինգ հայերի, որոնցից երկուսը տղամարդու հագուստի մեջ ծպտված աղջիկներ էին: Նրանցից մեկը գրպանից հանում է թաքցրած ատրճանակը և սպանում է Օսմանին:

120 հայ կախաղան է հանվում: Նրանց մեջ էր նաև Սարգիս Յոթնեղբայր-

---

[1] ***Սահակեան Ա.***, *Դիւցազնական Ուրֆան..., էջ 857-858:*

յանը: Մութեսարիֆը նրան հարցնում է. «Ի՞նչ ես անելու, եթե քո կյանքը խնայենք...»: «Առաջին գործս պիտի ըլլայ քեզ սատկացնելը»,- պատասխանում է Սարգիսը:

1915 թ. Եղեսիա աքսորված պարսիկ Խուրշիդ խանը պատմում է. «Օր մը մեր վրայ հսկիչ զինուորներէն մէկը տեղն ու տեղը ինկաւ: Յաճախ կը պատահէին այս տեսակ խուճապներ: Աւերակներու մէջ ողջ մնացող վիրավոր հայերն էին... Այս անտեսանելիին հետ կռիւը տեւեց մինչեւ մութ ատեն: Գիշերը փորձեցին խիստ յարձակողական մը: Այս յիմարութիւնն ալ իրենց արժեց... տասէ աւելի դիակներ, այդ գիշեր յիսնապետ մը եւ չաւուշ մը աւելցուցին իրենց 14 դիակներուն վրայ: Այս վերջին երկուքը համարձակուած էին մութին մէջ սիկարէթ վառել... Սարսափը ընդհանուր էր: Զինուորները ըմբոստանալ սկսած էին... Ֆախրին ստիպուեցաւ տեղւոյն վրայ ուսումնասիրելու խնդիրը... 24 թնդանօթէ ռումբեր արձակել տուաւ: Յառաջանալու հրաման տրուեցաւ զինուորներուն: Ժամերով փնտռելէ վերջ գտան մէկ հատիկ դիակ, խոշոր քարերու տակէն հանեցին զայն. մէկ թեւը ռումբ մը տարած ըլլալու էր, իսկ միւս ձեռքին մէջ հրացան մը կար պինդ բռնած: Սուիններուն վրայ առած փաշային ներկայացուցին: Եւ ինչ տեսնել, Աստուա՜ծ իմ, աղջիկ մըն էր ան: Փաշան, շրթները խածած, դողդողալով կոնակը դարձուց ու հեռացաւ»[1]:

Իզուր չէր Ֆախրի փաշան ասում. «Ի՞նչ էր լինելու մեր վիճակը, եթե մեր դեմ ծառանային մի քանի Ուրֆաներ»: Այդ հերոս քաղաքի հայությունը մարտնչեց մեկ ամիս:

Հոկտեմբերի 20-ին մայր եկեղեցու տանիքին հայտնվեց մի խոշոր պաստառ. «Մենք մինչեւ վերջ պիտի կռուինք եւ մարդու պէս պիտի մեռնինք»: Դա կարդալուց հետո ամերիկացիներից մեկն արտասուքն աչքերին ասաց. «Ախ, ի՞նչ կլիներ, եթե բոլոր հայերն այդպես պատասխանեին թուրքերին»[2]:

Վերը նշված Խուրշիդ խանի վկայությամբ՝ միայն երեք օրում թուրքերը կորցրեցին չորս սպա և 268 զինվոր:

Ֆրիդյոֆ Նանսենը գրում է. «Ուրֆայում հայերը զոհվեցին հուսահատ պայքարից հետո»: Հերբերտ Ադամս Գիբբոնսի կարծիքով՝ «Ուրֆայում հայերը դիմադրեցին թուրքական դիվիզիային 40 օր...»[3]:

«Երբ թափառում ես քաղաքի հայկական թաղերում,- գրում է Էքարտը,- և տեսնում ես ավերակներ, թալանված, ավերված տներ, ինքնաբերաբար մտածում ես, որ 2000 հայեր զոհ դարձան թուրքերի անհագ աչքածակությանը...

Քաղաքում և նրա սահմաններից դուրս մեծ թալանից հետո ամիսներ շարունակ ընթանում էր «որսածների» առևտուր:

Հասկանալի է, որ ամենաթանկարժեք «ռազմավարը» վերցրեցին իշխանությունները: Ամեն օր տեղի էին ունենում աճուրդներ՝ վաճառք զարմանալի ցածր գներով, ընդ որում՝ վաճառում էին միայն թուրքերը: Ժամանակի ընթացքում հայ բնակչության ունեցվածքն անցավ թուրքերին, դրանով վերջինները հասան գլխավոր նպատակին»: Երկար ժամանակ ո՛չ միայն քաղաքի խուժանը,

---

[1] *«Արմենիա», 28 սեպտեմբերի 1985 թ.:*

[2] ***Սահակեան Ա.**, Դիւցազնական Ուրֆան..., էջ 888:*

[3] *«Բնօրրան», նշվ. համար, էջ 15:*

այլև զինվորները «պեղում էին» հայկական թաղը՝ ինչ-որ բան գտնելու համար:

«Ուրֆայում,- պատմում է Բարլետը,- տեսա հայերի դիակներով ծածկված մի դաշտ, որտեղ մոտ 1000 դիակ կար»[1]:

Նշան Պեշիկթաշլյանը գրեց. Ուրֆայում հայերն աչխարհին ասացին. «Միայն գառներու հօտ չենք մենք հայերս, այլ՝ մարտիկներու մատեան գունդ»: Ուրֆան «Արծիւ մը, կտուցին մէջ դափնետերեւ, կը ցցէ գլուխը՝ Հայոց պատմութեան մէկ էջին գագաթը, որուն ներքեւ կը վերածուի ինքնապաչտպանութիւնը իմաստասիրութեան»[2]: Ավ. Ահարոնյանը գտնում է, որ Ուրֆայի հերոսամարտը «մեն-մենակ բաւական է մի պատմութիւն զարդարելու դարերի համար»[3]:

Ուրֆայի հայության 1915 թ. կոտորածը 1895 թ.-ից հետո չորրորդն էր: 1915-ին հայերի 4000 տնից կանգուն մնաց միայն 40-ը:

Գերմանիայի հյուպատոսի տվյալներով՝ հոկտեմբերի 9-ին ստացվեց Ուրֆայի հայության տեղահանության հրամանը: Հայության խլյակներին տարագրեցին Դեր Զոր ու Հալեպ, որոնց մի մասը՝ 6000 հոգի, 1918–1920 թթ. վերադարձավ և մնաց մինչև քեմալականների հաղթանակը:

Ե. Գահվեջյանը եղեսահայության այդ ողիսականի մասնակիցն է եղել: Նա գրում է, որ 4000-5000 հոգի, միայն երեխաներ, ծերեր ու կանայք, լցրեցին Միլլիեթ խան կոչվող վայրը: Նրանց խումբ-խումբ ուղարկում էին Դեր Զոր: «Միլլիեթ խանը,- պատմում է վերապրածներից Հ. Արծիվյանը,- թշուառութեան եւ հիւանդութիւններու բոյն մըն էր, ամէն օր տասը, քսան մեռել դուրս հանելով կը նետէին փոսերու մէջ: Խանին դռները զինուոր կեցած էր, սակայն թիւրքեր չրջապատէն գիշերները կու գային առեւանգումներ կատարելու ... Շաբաթ մը վերջ ոստիկանները եկան եւ սկսան հաւաքել տասը տարեկանէն վար տղաները: Մայրս ինծի աղջիկի հագուստ հագցնելով կը պահէր չարունակ»: Սկսվեց տարագրությունը՝ քաղցած, ծարավ, մահվան սպառնալիքի տակ: «Ինկողն այլեւս ոտքի չէր կրնար կենալ: Շրջակայքի թիւրքերը, քիւրտերն ու արաբները գիշատիչ հրէշներու պէս կը յարձակէին կարաւանին վրայ, կը յափշտակէին հաւանած աղջիկներուն, կանանց, մանուկներուն: Եւ այս ամէնը՝ ոստիկաններու աչքի առաջ»: Տարան նաև փոքր քրոջս, իսկ փոքր եղբորս չալակով տանելու ուժ այլևս չկար ու նրան թողեցին մի աղբյուրի մոտ: «Ճամբուն եզերքին յաճախ կը տեսնէինք տարբեր դիրքով ինկած դիակներ...»[4]:

Հազարավոր աքսորյալների հավաքել էին Մարդինի մերձակա դաշտում և խումբ-խումբ տանում սպանում էին:

Ուրֆայում իշխանությունները ժանդարմների ու զինվորների մի ջոկատ էին ուղարկել հայկական թաղերը՝ զենքեր խլելու և բռնագաղթելու համար, գրում է Ֆայեզ էլ-Ղուսեյնը, բայց երբ հայերը Ուրֆայով անցնող կանանց ու երեխաների քարավաններից իմացան իրենց եղբայրների ճակատագրի մասին,

---

[1] «The Literary Digest», 7 June 1919.

[2] «Հերոսամարտեր. Արդարահատոյց», Լոս Անջելես, 1985, էջ 107-108:

[3] Նույն տեղում, էջ 111:

[4] **Գահուէճեան Ե.**, նշվ. աշխ., էջ 37-38:

հրաժարվեցին զենքերը հանձնել, զինված դիմադրություն ցույց տվեցին և սպանեցին մի ժանդարմի ու երեք զինվորի: Քաղաք զորքեր բերվեցին, Սիրիայի դահճի՝ Ջեմալ փաշայի հրամանով, խռովարարներին պատժելու համար ժամանեց Ֆախրի փաշան: Նա հրետանային ռմբակոծությունով հայկական թաղերը փլատակների վերածեց, տղամարդկանց, կանանց ու երեխաներին կոտորեց, բացի անձնատուր եղողներից, որոնք Դեր Զոր աքսորվեցին:

Դանդինին 1915 թ. հոկտեմբերի 25-ին հեռագրեց, որ Ուրֆայում կառավարական զորքերը ճնշել են հայերի ապստամբությունը և գերի վերցրել մոտ 30.000 հոգի, այդ թվում՝ նաև կանանց ու երեխաների[1]: Փրկվեցին միայն 15.000 եղեսահայեր:

Բերենք մի քանի ականատեսների վկայություններ, որոնք անձամբ իրենց վրա կրել են թուրքական վայրագությունների դաժանությունները:

Խ. Թոփյան. *– Քաղաքի հայերին առանձին չենքեր լցրեցին: Գիշերը 1000 տղամարդու տարան սպանեցին, մնացածները երեք ամիս քայլեցին: Դեր Զոր չթողեցին մտնել: Մնացինք դաշտում: Հաջորդ օրը ծերերին, հիվանդներին տարան ու խեղդեցին Եփրատում: Մնացածներին տարան Սնարվա անունով ավերակ գյուղը: Որոշ ժամանակ անց հայտարարեցին, թե ներում է շնորհված: Հետիոտն հասանք Սուվար: Այստեղ տղամարդկանց անջատեցին և տարան սպանեցին: Մեզ չարեցին և մինչև արգանդը խուզարկելուց հետո տարան չեչենաբնակ մի վայր՝ Շեդդադե: 15 օր մնացինք քաղցած, սնվում էինք ձիերի թրիքների մեջ եղածով, տեղաբնակներին արգելված էր մեզ սնունդ տալ: Ապա մեզ հավաքեցին ու չեչեններին բաց թողեցին: Ջարդում էին ինչով և ինչպես կարող էին: Հազիվ 10 հոգի մնացած լինեինք՝ ջարդը դադարեցրին: Դիակները այրեցին: Մեզ տարան բեղվինները և ամուսնացրեցին[2]:*

Հ. Շահինյան. *– Սեպտեմբերի 5-ին թուրքերը մորթեցին երեք և վեց տարեկան երեխաներիս ու մսերը կերցրին շներին: Սեպտեմբերի 12-ին մի կնոջ պղծեցին և նրա երեխաների ներկայությամբ մորթեցին:*

Ա. Վարդանյան. *– Մեր կարավանի մնացորդները Դեր Զորից քշեցին Սուվար: Սկսվեց տիֆը: Գազաններն ամենուրեք դիակներ էին հոշոտում: Սուվարից շարժեցին դեպի Մոսուլ: Ես կարավանից փախա (11 տարեկան էի) վերադարձա Դեր Զոր և մի արաբ ընտանիք ինձ վերցրեց: Սակայն հայերին Դեր Զորից քշեցին, թե այնտեղ լավ էին ապրում: Տղամարդկանց առանձնացրին և ջարդեցին Մերկեղե լեռան վրա, որը սպանդանոց էր դարձել: Ես էլ սրանց մեջ էի: Սպանվելու նախորդ օրը հաջողվեց փախչել, թաքնվել դիակի տակ: Ապա թափառական հասա Դեր Զոր[3]:*

Զ. Որբերյանը *պատմում է, որ ասորիները հայ աղջիկներին վաճառեցին թուրք սպաներին: Վերջինները գնած աղջիկներին նախ բռնաբարեցին, ապա հարկադրեցին, որ պարեն միանգամայն մերկ: Եվ երբ նրանք հրաժարվեցին իսլամությունն, ընդունել, վրաները նավթ լցրեցին ու բոլորին այրեցին[4]:*

---

[1] *Wien HHSTA PA XIII 463, Aleppo, 27 October 1915.*

[2] *«Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 537-539:*

[3] *Նույն տեղում, էջ 540-543:*

[4] *Նույն տեղում, էջ 535:*

Եդեսիայի իրադարձություններին անդրադարձել է նաև Թալեաթը՝ խեղաթյուրելու համար հերոսամարտի պատմությունը: Նա գրում է. «Ինչպես պետության այլևայլ մասերում, այնպես էլ Ուրֆայում ապստամբական շարժումներ սկսվեցին պատերազմի մեջ մեր մտնելու հետ միաժամանակ»: Պլանը նույնն էր. «Երբ ռուսները հարձակվեին, նրանք պետք է խոչընդոտեին թուրքական բանակի նահանջը, իսկ վերջինների առաջխաղացման պարագային, ապստամբություն բարձրացնեին»: Կոմիտեականները զանազան լուրեր տարածելով հայերին մղում էին գործողությունների, հայթայթում ռազմամթերք և սննդամթերք, կառուցում դիրքեր:

Կարմուջում ծագած ապստամբությունը (1915 թ. օգոստոսի 6-19) տարածվեց նաև Ուրֆայում: Մինչև կառավարության օժանդակ ուժերի տեղ հասնելը «հայերը հարձակվել են իսլամ ժողովրդի վրա և չատերին սպանել»[1]:

«Եթե Ուրֆայի ապստամբությունը լավ քննության ենթարկվի, կպարզվի, որ հայերի նախընտրած այս քաղաքը չատ կարևոր կենտրոն էր: Այս գործում մեծ օժանդակություն են ցույց տվել անգլիացիները, ֆրանսիացիները և ռուսները»: Նկուղները և այլևայլ տեղեր զենք ու զինամթերք էին լցված: 9-10 չարաթվա սննդամթերք էր կուտակվել: Հայերը համաձայնական պետությունների հյուպատոսներից լայն օգնություն են ստացել: Ամերիկացի միսիոներները, օրինակ, Լեսլին, տրամադրել էր դրոշակ և հագուստ, «իրենց հաղթանակին վստահ հայերը որևէ վարանում չեն ունեցել օսմանյան ուժերի դեմ բարձրանալու գործում»[2]:

Թալեաթն ինքն է, որ կա: Տուր թեկուզ ամենաչեզոք փաստը և դա կներկայացնի որպես ամենաահարկու երևույթ: Շարադրանքից պարզ երևաց, որ հայերը ո՛չ նախահարձակ են եղել և ո՛չ էլ ապստամբել, այլ, ականատես լինելով իրենց հայրենակիցների հանդեպ զանգվածային հաշվեհարդարին, որոշեցին մեռնել կռվելով, մեռնել արժանապատիվ, մեռնել ոչ թե հանուն Անտանտի շահերի, այլ մեռնել առանց բռնագաղթի արհավիրքների: Թալեաթը ճիշտ է միայն մի բանում, որ Ուրֆայում հայերի հերոսամարտը հօգուտ Անտանտի էր, բայց այդպիսին ոչ թե ծրագրվել էր, այլ այդպիսին էր օբյեկտիվորեն, իր նշանակությամբ: Ահա՛ մի քանի վկայություններ ևս:

Ուրֆայի դեպքերի առնչությամբ Հոֆմանը հոկտեմբերի 6-ին գրեց, «Ուրֆայի հայությանն աքսոր է սպառնում, բայց հայերը որոշեցին տարագրությամբ մեռնելն արհամարհել և նախընտրել անմիջական վախճանը... Ասում են՝ Ֆախրի փաշան անձամբ Ուրֆայում է, հայ թաղը պաշարված և հրամայել է հրետանիով կործանել»[3]: Այս ինքնապաշտպանությունն սկսվել է սեպտեմբերի 29-ին. հայերը փակվել էին իրենց թաղում: «Հայերի կռվողների թիվը հասնում էր 2000 հոգու: Նրանք մերժեցին անձնատուր լինելու առաջարկը: Կռիվն սկսվեց հոկտեմբերի 6-ին: Հայերը համառ դիմադրեցին, սակայն ի վերջո պարտվեցին ու կոտորվեցին: Կոտորածը 10 օր տևեց»[4]:

---

[1] **Թալեաթի հուշագրությունները**, էջ 73:
[2] Նույն տեղում, էջ 74:
[3] **Lepsius J.**, նշվ. աշխ., փաստ. № 180:
[4] **Bryce J.**, նշվ. աշխ., փաստ. № 31:

«Մայիսի վերջերին, կրոնական պատերազմը հոչակելուց հետո, մահմեդական ավագանին որոշել էր բոլոր քրիստոնյաներին, հատկապես հայերին, կոտորել»: «Բոլոր ազդեցիկ ու կրթված հայերը որևէ կեղծ պատրվակով կանչվում էին կառավարական շենք և դրանից հետո այդ բոլոր հայերն անհետանում էին»: Մոլլաների մոլեռանդությունը սաստիկ բորբոքվել էր: Նրանք ասում էին. «Թող կոտորվեն այդ անհավատները, քրիստոնյաները»: Ներկայումս որևէ մեկը չի կարողանում շրջափակումից դուրս ելնել օգնություն խնդրելու համար: Այսպես սկսվեց մի սաստիկ կոտորած: 10.000 հայերի ոչ պակաս քան 1/3-ը քաղաքից բացակայում էր՝ զենքի տակ էր առնված (որպես զինվոր), սակայն այս անգամ տեղում մնացածներն իրենց պաշտպանեցին: Ուրֆայից հունիսի 15-ին ստացված նամակը հայտնում է. «10.000 հայ, կանայք ու երեխաներ աքսորվում են տարբեր տեղեր: Կանանց ու աղջիկներին քարշ են տալիս հարեմներ, մնացածներին վստահաբար որևէ տեղ ոչնչացնելու են, քանի որ ուտելիք չունեն»: Հոկտեմբերի 4-ի թվակիր նամակում գրված է. «Թուրքերն այժմ ծանր թնդանոթներով առաջանում են հայկական թաղերի վրա: Որոշված է այս թշվառ, բազմաչարչար ազգի ճակատագիրը՝ պատերազմից հետո լուծելու համար հայկական որևէ հարց չի լինելու. Թուրքերը դա լուծեցին ամենահիմնավոր ու ամենաանագորույն ձևով»[1]:

«Sonnenaufgang»-ի 1919-ի թիվ 62-ում տպագրված է մի դերվիշի նկարը, որն Ուրֆայում գերել էր 100 հայ երեխա և նրանց անձամբ մորթել՝ մահմեդական դառնալուց հրաժարվելու համար:

Ուրֆայից ստացված մի նամակ հաղորդում էր. «Հայաստանից կանայք ու որբերը Ուրֆա են հասել: Բոլոր փողոցները լցված են: Սովն ու մահը մոլեգնում են: Օրական մեծ թվով երիտասարդ կանայք ու աղջիկներ են հափշտակվում: Երեխաներն էժան՝ 1,25 ֆրանկով վաճառվում են: Ես անձամբ ականատես էի, երբ ամասիացի 8-9 տարեկան մի տղա իր գեղեցկության համար վաճառվեց 2,5 ֆրանկով...»:

Նախ Ուրֆայի թեմի առաջնորդը 40 ավագների հետ տարվեց անծանոթ ուղղությամբ: Մի շաբաթ անց 50 հոգի էլ տարան... Խալիլ բեյն իր չեչեններով եկել էին Ուրֆան էլ քանդելու, սակայն միայն կողոպտեցին ու հեռացան:

Նոյեմբերին Ուրֆայից եկած կարավանում ինձ ծանոթ մի կին խնդրեց փրկել իր երեխային, գրում է եվրոպացի դիվանագետը: Վերակացուն նրան հետ մղեց բղավելով. «Որևէ մեկը չի փրկվելու, դու քայլելու ես այնքան, քանի դեռ չես ուշաթափ ընկել: Եվ, որտեղ պառկած մնաս, քեզ խժռելու են շները»: Այս կարավանը օրեր անց ուղարկվեց Ռաքքա, սակայն քիչ անց հետ բերվեց իբր Մոսուլ ուղարկելու համար:

Նոյեմբերին և դեկտեմբերի սկզբներին Ուրֆայի կողմերից Թել Աբիադ եկավ 10.000 հոգի:

«Հայերի հանդեպ ձեռնարկված բոլոր միջոցառումները, այն, ինչ ես տեսել եմ և կարող էի դիտարկել, հանգում է այն բանին, որ ինձ ասաց էմիգրանտների

---

[1] *«Mitteilungen», № 12, October 1919, p. 140-145.*

գծով տնօրեն Շյուքրի բեյը. «Վերջնական արդյունքը պետք է լինի հայ ռասայի ոչնչացումը: Սա մշտական պայքար է հայերի և մահմեդականների միջև, որը ներկայումս մոտենում է իր վերջնական ավարտին: Ավելի տկարը պետք է անհետանա»[1]:

Դրեզդենի արխիվում պահված մի փաստաթղթում Ուրֆայի իրադարձությունները անվանվում են Վանի կռիվների արձագանք և հետևանք դրսից եկած հայ գործիչների քարոզչության: Սակայն Թուրքամետ այդ փաստաթղթի հեղինակն իսկույն իրեն մատնում է, երբ գրում է, թե «հայկական վտանգը» կանխելու նպատակով հայերի գլխավորները ձերբակալվեցին և «աքսորի ճանապարհին սպանվեցին: Այդ սարսափահար տրամադրությունները չարունակվեցին բռնագաղթի ճանապարհին սովի և հիվանդությունների պատճառով Վանի և Դիարբեքիրի հայերի զոհվելու հետևանքով: Չնայած այդ ամենին, հայերը որևէ քայլի չդիմեցին, չհավատալով, որ Ուրֆայի հայ բնակչության տեղահանությունը կարող է մեծ ծավալներ ստանալ»[2]:

Ուրֆայում հարկադրաբար մնացած բոլոր հայերը, այդ թվում՝ բժիշկներ, դեղատների աշխատողներ, 1916 թ. հունվարին հարկադրաբար իսլամացվեցին:

Որ Ուրֆայի հայության ողբերգությունը նույն, համաօսմանյան ձեռագիրն ուներ, որ հարավային վիլայեթներում հայերի ջարդերի ծրագրման և իրականացման ղեկավար կենտրոնը Դիարբեքիրն էր և դրա ղեկի մոտ նստած էր տեղի վալի Ռեշիդը, վկայում է Լեսլիի 1915 թ. օգոստոսի 6-ի հեռագիրը Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջեքսոնին:

Այս քաղաքի իրադրությունը խիստ վտանգավոր է, գրում է նա, և օրեցօր վատթարանում է: Մուսուլմանների և քրիստոնյաների միջև կրքերն անչափ բորբոքված են և ամեն րոպե կարող են պայթյունի վերածվել: Ստամբուլից (իսկ ավելի ուշ՝ նաև Դիարբեքիրից) եկած 14 «կամավորներ» ահաբեկել են կառավարչին, ոստիկանապետին, զինվորական ատյանի հանձնախմբին և տեղական իշխանությունների պաշտոնյաներին այնպես, որ վերջիններս չեն համարձակվում պաշտպանել քրիստոնյաներին կամ հակառակվել եկածների կամքին, որոնք, փաստորեն, ամեն ինչ վերցրել են իրենց հսկողության տակ: Նրանք գիշերով բռնում են ամենահայտնի քրիստոնյա քաղաքացիներին, որոշ ժամանակ բանտում պահելուց հետո ուղարկում մահվան ծուղակ՝ Դիարբեքիր:

«Վեց շաբաթների ընթացքում մենք ականատես եղանք ամենանողկալի դաժանությունների՝ կիրառված քրիստոնյաների նկատմամբ, որոնց աքսորի ճամփան անցնում է մեր քաղաքի միջով: Նրանք բոլորը միևնույն բանն են պատմում. տղամարդկանց սպանել են աքսորի առաջին օրն ևեթ, որից հետո կանանցից ու աղջիկներից կողոպտել են դրամը, հագուստը, ծեծել, առևանգել, բռնաբարել: Նրանց պահապանները ստիպում էին վճարել նույնիսկ ճանապարհի աղբյուրներից ջուր խմելու համար, և ոչ միայն իրենք էին բռնանում, այլև թույլ էին տալիս, որ ճանապարհի գյուղերի ստահակները նույն կերպ վարվեին... Մենք տեսնում էինք այս ամենը սեփական աչքերով՝ օրը ցերեկով,

[1] R 14090, Ab. 2888.

[2] Sachsishes Hauptstaatsarchiv Drezden, Akten № 35268, BI. 28-29.

փողոցներում»: Թշվառ, հյուծված կանայք ու երեխաները հազարներով մեռնում էին ճամփեզրերին: Առնվազն 500 աղջիկների առևանգեցին այս քաղաքի մուսուլմանները, ավելի շատերին բռնաբարեցին և կրկին փողոց նետեցին: Այս ամենը տեղի էր ունենում բացահայտորեն, օտարերկրացիների աչքի առաջ:

«Իրավիճակն այստեղ էլ է ահավոր: Ուրֆայի քրիստոնյաները տեսնելով և քաջ իմանալով, թե ինչ է կատարվել աքսորյալների հետ, որոշել են դիմադրել, եթե իրենց էլ աքսոր պարտադրեն: Նույնիսկ առանձին անհատների դիմադրությունը վստահաբար կնշանակի եղեռն և բոլոր քրիստոնյաները, նույնիսկ օտարերկրացիները կվտանգվեն: Օտարների ուղիղ կեսն ապրում է տեղացիների տներում և եթե վերն ասվածը տեղի ունենա, նրանք անպաշտպան կմնան: Մուսուլմանները նույնիսկ ակնարկել են որոշ օտարերկրացիների կանանց ու աղջիկներին վերցնելու մասին: Ես չեմ կարող պաշտպանել նրանց, քանի որ պաշտոնապես ճանաչված չեմ: Թախանձագին խնդրում եմ Ձեզ անմիջապես այստեղ ուղարկել փոխհյուպատոս Էդելմանին՝ նրանց պաշտպանելու համար և Գերմանիայի հյուպատոսի հետ միասին հնարավոր ամեն բան անեն այս չրջանի զինվորական հրամանատարին համոզելու պաշտպանել քրիստոնյա բնակչությանը և կանխել աքսորը»:

Յակոբ Քյունցլերը 1916 թ. մարտի 8-ին գրում է, որ Ուրֆայում տիֆը հնձեց մարդկանց, քաղաքում քիչ հայ կա, բոլորն էլ բանտում են: Որոշ կանայք վերադարձել են անապատից, մյուսներին հափշտակել են, կան նաև մեծ թվով դրսից եկածներ: Հանձնաժողովը շարունակում է աշխատանքը հայերի փողերը և ունեցվածքը փնտրելու ուղղությամբ: Մի թուրք ցուցմունք տվեց, որ դրանք գերմանացիների տներն են տարել: Նրանք հարկադրված եղան կողոպտած ապրանքը վերադարձնել: Քյունցլերին նույնպես մեղադրում էին, որ հայերի փողերից 2000-4000 ֆունտ է վերցրել: Նա դա ժխտեց, բայց ասաց, որ «վերցրել է մի քանի գորգ, սնդուկ, պղնձյա ամանեղեն և տեքստիլ արտադրանքի մի ամբողջ տյուկ»: Թուրքերը բոլոր միջոցների դիմում էին խլելու հայերի դրամներն ու ունեցվածքը[1]:

Հյուպատոս Ջ. Ջեկսոնը վկայում է, որ հայերին աքսորելուց հետո իշխանությունները փորձեցին ամենատարբեր աշխատանքներում նրանց փոխարեն օգտագործել մահմեդականներին (կաշեգործ, ջուլհակ, հացթուխ, դեղագործ, մետաղագործ և այլն), բայց բան դուրս չեկավ և հարկադրված եղան աքսորից վերադարձնել 2500 հայի: Լեսլի Դեյվիսի վկայությամբ՝ նույն վիճակն ստեղծվեց նաև Խարբերդում, այնտեղ նույնպես որոշ թվով հայեր հետ բերվեցին տարագրության վայրերից:

Յ. Պոմիակովսկին նկատում է. «Հայաստանում սովից մահացան հարյուր հազարավոր թուրք զինվորներ: Հայկական կարավանները զրկված էին լվացվելու հնարավորությունից ու հիգիենայից և դարձան տարբեր հիվանդությունների հարուցիչ... Տիֆի համաճարակ բռնկվեց, որին զոհ գնաց մեկ միլիոն մուսուլման: Սա աքսորում մահացած հայերի վրեժն էր իրենց դահիճներից»:

---

[1] *Konst. / Ankara, 100, Ab. 3617.*

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐ

Այս վիլայեթներով էին անցնում, դրանցում իրենց մահկանացուն կնքում տեղահանված այն հայերը, որոնք կենդանի էին մնացել գաղթի առաջին շրջանում և կարողացել էին դուրս գալ Փոքր Ասիայի այլևայլ շրջանների իրենց բնակավայրերից:

Հայերին արաբական տարածքներ ուղարկելն ուներ մի քանի դիտավորություններ, որոնցից, իհարկե, գլխավորը Արևմտյան Հայաստանի հայաթափումն էր: Նշանակություն ուներ նաև այն, որ ինչպես գրում է Ռ. Աթայը, «չերքեզների, քրդերի և մյուսների նման հայերի արտաքսումը Սիրիայի խորքերը նոսրացնելու էր արաբներով խիտ բնակեցված վայրերը: Նույնիսկ հանձնաժողով կազմվեց, որպեսզի հայերին թե՛ տուն, թե՛ հող տրամադրվեր՝ մահմեդական դառնալու պայմանով»[1]: Հավանաբար Աթայն իրավացի էր: Հայերի բռնագաղթը Հայկական հարցը լուծելուն զուգընթաց կարող էր օգտագործվել նաև արաբների տարածքները Թուրքական դարձնելու գործընթացում:

Հայդար փաշայի կայարանից մինչև Հալեպ ձգվող Բաղդադի երկաթուղին երկու հատվածում ընդհատվում էր՝ Տավրոսում և Ամանոսի լեռներում:

Կանլը-Գեչիտի կիրճով էին հայերին տանում անապատ: Այդ կիրճը զարհուրելի դեր խաղաց տեղահանված հայերի համար: Դրանով անցան Էդիրնեի, Ռոդոսթոյի, Բիլեջիկի, Բուրսայի, ինչպես նաև Կոնիայի և երկաթուղու հարևանությամբ բնակվող ու Դեր Զոր տարվող հարյուր հազարավոր հայեր: Այստեղով անցան նաև 200 հազար կիլիկիահայեր, ընդհանուր թվով 450 հազար հայ՝ դեպի Սիրիա, Միջագետք, Ռաս-ուլ-Այն, Դեր Զոր կամ Նիսիբին: Դրան զումարած հայկական ներքին գավառներից՝ Կարին, Բաղեշ, Վանա ծովափնյա շրջաններ, Երզնկա, Սեբաստիա, Խարբերդ, Դիարբեքիր, Մալարիա և այլն, բռնագաղթված հայերին:

1915 թ. աշնանը, երբ 80,000 հայ վրանային ճամբարում էր բնակվում Կանլը Գեչիտի ձորի կողքի դաշտում, վրա տվեցին տենդն ու համաճարակները: Օրական 600-700 հոգի մեռնում էր: Սկսվում են օրեր տևող անձրևները, որոնց հաջորդեցին ցրտերը: Ցեխի, ջրի մեջ, ցրտահար մեռնում էին հազարներով: Դիակների բլուրները ծածկել էին դաշտը: Շատ վրանների բոլոր բնակիչները մեռան: Նույնիսկ բահ ու բրիչ չկար մեռնողներին թաղելու: Կիսամեռ մարդկանց փայտի ու մտրակի հարվածներով ուղարկեցին Իսլահիե: Մեծ թվով տարագիրներ ոտի կանգնել չկարողացան ու ընկած մնացին մահվան ճիրաններում: Մայրերն իրենց կիսամեռ երեխաներին նետում էին դիակների

[1] *Atay R.*, *նշվ. աշխ.*, *էջ 79:*

թմբերի վրա: Այդպես կարավաններն իրար հետևից անհետանում էին Ամանոսի լեռներում՝ Հասան Բեյլի և Քելլեր հասնելու համար: Կարավաններին գիշերները շրջապատում էին շները, գայլերն ու աղվեսները:

Կանլը-Գեչիտ հասած կարավաններից ոչ բոլորին էին թույլ տալիս ճանապարհը շարունակել, որովհետև հայերի խճողված կուտակումներից պաշտոնատարները չահ ունեին: Գրեթե ամեն գիշեր ճամբարները հարձակման ու կողոպուտի էին ենթարկվում, աղջիկներ էին առևանգվում:

Հասան Բեյլին Ամանոսի բարձունքներին թառած հայկական ավան էր՝ առաջներում 800 տուն հայ էր ունեցել, իսկ 1916-ի սկզբներին մնացել էր 40 տուն: Այստեղ ևս աշխատում էին հայ զինվորներ: Նրանք զինվորական համազգեստ չունեին և տնից բերած հագուստների մեջ էին, որոնք մաշվել, բզկտվել էին: Աշխատում էին օրական 10-12 ժամ՝ ցրտին, ձյունին, անձրևին և օրը ստանում էին միայն 250 գրամ հաց: Ո՛չ բժիշկ կար, ո՛չ դեղորայք: Ապրում էին վրաններում, որոնք մաշված էին, ծակծկված:

Տեղահանվածներին թույլ չէին տալիս քաղաքում գիշերել, և ինչպես տեղական պաշտոնատարներից մեկն էր ասել, «անպայման հարկադրելու եմ ձեզ գիշերելու դրսում: Դե գնացե՛ք Դեր Զորի անապատներ և այնտեղ հիմնե՛ք Հայկական անկախ պետություն»[1]:

Իսլահիեն թուրքաբնակ գյուղաքաղաք էր Ամանոսի արևելյան մասում: 1916 թ. սկզբին Իսլահիեն ուներ 1500 տուն բնակչություն, որից հայեր՝ 250 տուն: Տեղի հայերին տեղահանեցին 1916 թ. գարնանը: Մնացին 50-60 կապալառուներ, որոնք Բաղդադի երկաթուղու համար վառելափայտ էին հայթայթում Ամանոսի անտառներում:

Այնտեղից գնացքները Հալեպ էին գնում: Բաղդադի երկաթուղին 1916 թ. հասնում էր (առանց ընդհատումների) մինչև Տավրոսի Բոզանթի կիրճը, որտեղ նա ընդհատվում էր և շարունակվում Ինջիրլիկ-Ադանա-Օսմանիե հատվածում ու հասնում Դաշտային Կիլիկիայի Մամուրե կայարանը: Այստեղ գիծը նորից ընդհատվում էր, որովհետև Ամանոսի լեռներում անցումները դեռևս պատրաստ չէին: Նոր հատվածն սկսվում էր Իսլահիեից և Հալեպ հասնում:

Գերմանական այս երկաթուղուց բացի կար նաև ֆրանսիականը՝ Մերսին-Տարսոն, որը Ինջիրլիկ կայարանը միացնելով Բաղդադի երկաթուղու գերմանական գծին՝ հասնում էր Ադանա:

Երկաթուղու շրջանում բնակվող հայերի մի մասը գնացքով տեղափոխվում էր մինչև Բոզանթի, որտեղից Գյուլեկ-Բողազի կիրճով հետիոտն անցնում էր Ինջիրլիկ, Ադանայի վրայով գնացքով հասնում էր Օսմանիե, ապա նորից հետիոտն անցնում էր Ամանոսի լեռնաշղթան մինչև Իսլահիե, որը տեղահանված հայերի ճամբարավայրն էր: Այստեղից Հալեպ էին ուղարկում հետիոտն, բացի մեծ կաշառք տվողներից, որոնք գնացքով էին գնում:

Հալեպը հյուսիսից եկած հայերին անապատ ուղարկելու հավաքատեղին էր: Կարավաններն անապատ էին մտնում չիմանալով, թե ո՞ւր են գնում: Կամ նորից կաշառք էին վճարում Հոմս, Համա,Դամասկոս, Նիսիբին, Ռաս-ուլ-Այն

---

[1] **Պալաքյան Գ.,** նշվ. աշխ., էջ 353:

կամ անապատների կենտրոն՝ Դեր Զոր հասնելու համար:

Այսպիսով՝ Պոլսից մինչև Հալեպ, Բաղդադի երկաթուղու վրա երեք կետեր՝ Բոզանթի, Կանլը-Գեչիտ և Իսլահիե, հանդիսացան հարյուր հազարավոր տարագրյալ հայերի հավաքատեղի և անապատ մտնելու անցքերը: Եվ քանի որ իշխանություններն այս կետերում հայերին կուտակում էին՝ սպանդանոց ուղարկելու համար, դրան գումարած տարագրության անփույթ կազմակերպումը, մահմեդական բնակչության թշնամական վերաբերմունքն ու գիշատիչ ակնկալիքները, նշված կետերում տեղահանվածների կուտակումները միտումնաբար խթանվում էին: Մարդկանց մեծ զանգվածները, բնականաբար, խստորեն դժվարացնում էին մատակարարման կազմակերպումը, և կառավարությունը, որն այդ անելու մտադրություն իսկ չուներ, ձախողումն արդարացնում էր նույն այդ խոչոր կուտակումներով: Հետևանքը՝ քաղց, ծարավ, զանազան համաճարակներ, ի վերջո զանգվածային մահացություններ: Ամեն օր Իսլահիե էին հասնում հազարավոր տարագրյալներ, իսկ այնտեղից հեռանում հարյուրավորներ, պատճառաբանությամբ՝ թե փոխադրության միջոցներ և համապատասխան թվով ուղեկցող ժանդարմներ չկային:

Ամեն օր մեռնում էին հարյուրներով՝ առաջին հերթին, մեռնում էին երեխաները: Իսլահիեի դիմացի դաշտը նման էր ռազմադաշտի՝ արյունահեղ ճակատամարտերից հետո՝ ծածկված մեծ ու փոքր բլուրներով՝ հավաքական գերեզմանաթմբերով: Ամեն մի թմբի տակ 50-100 դիակ կար: Թաղել էին թուրք բանվորները «մթնոլորտը չաղտոտելու համար»: Իթթիհադականները հավատարիմ էին ավազակային կողմնորոշմանը՝ «Երբ եվրոպական պետությունները համաձայնության գալով մի օր փորձեն վերջնականորեն կործանել Օսմանյան պետությունը, այն ժամանակ մենք կայսրության փլատակների տակ պետք է թաղենք օսմանահպատակ բոլոր քրիստոնյա փոքր ժողովուրդներին»[1]:

Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռեոսլերը վկայում է, թե գրեթե ամեն օր Զեյթունի, Հաճընի, Այբիստանի և ուրիշ քաղաքների հայերի կարավաններ էին անցնում, որոնք բոլորը ողբերգական վիճակում էին: Նա դեռ հունիսի 29-ին գրում էր. «Հայկական բոլոր համայնքներին արմատախիլ անելով ամայի չրջաններ են տարագրում: Բացարձակ ողբերգություն է... Ճանապարհին հիվանդներն ու մեռնողները վար են ընկնում ու նրանց թողնում են բախտի քմահաճույքին»[2]:

Ծաղր բարոյականության և դիվային անտարբերություն, միաժամանակ անսանձ դաժանություն, ստոր խաբեություն: «Ինչպես Մեծ վեզիրը,- գրում է Թուրքիայում Բուլղարիայի ներկայացուցիչ Կոլուչևը,- այնպես էլ Թալեաթ բեյն ինձ հայտարարեցին, որ տվել են ամենակտրուկ հրամաններ այդ ժողովրդի (հայերի) հալածանքն ու տեղահանումը կասեցնելու մասին: Մեծ վեզիրն ինձ հայտնեց, թե այդ ոճրի մեջ մեղադրվող բազմաթիվ պաշտոնատարներ ձերբակալվելու և հանձնվելու են դատարան, որ տեղահանված հայերը պիտի վերադառնան իրենց տեղերը... Իսկ Թալեաթն ասաց. Թուրքիայում այլևս Հայկական

---

[1] **Պալաքյան Գ.,** նշվ. աշխ., էջ 371:

[2] **Լեփսիուս Յո.,** նշվ. աշխ., փաստ. № 382:

հարց գոյության չունի, քանի որ հայերի նկատմամբ բոլոր միջոցառումներն ավարտված են: Այս բոլոր հավաստիացումներով հանդերձ, երկրի խորքերից շարունակվում են ստացվել սարսափելի լուրեր»[1]:

Ադրիանապոլսում Բուլղարիայի հյուպատոս Գ. Սերաֆիմովը 1916 թ. փետրվարի 24-ին տեղեկացրեց. «... Գիշերը ժամը 11-12-ին հայ ընտանիքներն անկողնուց հանվել են և աքսորվել... Նրանց տները իշխանությունները կնքել են ... Թեմի առաջնորդի փոխանորդ Արսենին սաստիկ ծեծել և արտաքսել են մյուսների հետ... Հայոց առաջնորդարանի առաջ կանգնած էին մի քանի մեքենաներ: Ոստիկանները չենքից իրեր էին դուրս բերում: Նրանցից մեկը զարմանքով նայում էր... առաջնորդի ոսկե գավազանին... Քաղաքում մնացել է 100 ընտանիք, որոնց փրկվելու համար առաջարկում են Թրքանալ... Գրասենյակիս կողքով անցնում են հայերի տնային իրերով լի մեքենաները... Թուրքիան վերադառնում է 14 և 16-րդ դարերը»[2]:

Ռեոսլերը դեռ հուլիսի 27-ի իր զեկույցում մերկացնում է Թուրք պարագլուխների՝ սահմաններ չճանաչող կեղծիքները, սուտն ու մարդատյացությունը: Նա գրում է. «Թուրքական կառավարությունն ունի նաև հազարավոր անմեղ հայ հպատակներ, որոնց հեռացնում էին պատերազմական շրջաններից (իբր նրանց անվտանգության համար): Մինչդեռ նրանցից հազարավորներին քշել են անապատ, բացառություն չէր արվել անգամ հիվանդներին ու հղի կանանց, ռազմաճակատում գտնվող զինվորների ընտանիքներին: Կառավարությունը նրանց անբավարար և անկանոն է սնունդ ու ջուր մատակարարում, բան չի արել նրանց շրջանում վարակիչ հիվանդությունների դեմն առնելու համար, կանանց գցել է այնպիսի կարիքի և հուսահատության գիրկը,- որ նրանք իրենց փոքր երեխաներին նետել են գետը: Կառավարությունն ընդառաջել է ուղեկցող զինվորների քմահաճույքին, որոնք վերցրել են աղջիկներին ու վաճառել, կառավարությունը նրանց նետել է բեղվիների ճանկը, որոնք այդ աղջիկներին կողոպտել ու առևանգել են: Կառավարությունը հայ տղամարդկանց անօրեն ձևով ջարդել է, նրանց դիակները դարձրել է շների և գիշատիչ թռչունների կեր, կառավարությունն սպանել է տվել աքսորված պատգամավորներին, խորհրդարանականներին, նա քրեական հանցագործներին բանտերից հանել է, զինվորական համազգեստ հագցրել և ուղարկել այն վայրերը, որտեղով պետք է անցնեին տարագրվածները:

Թուրքիայի կառավարությունը հավաքագրել է կամավորներ և նրանց հրահրել հայերի դեմ: Բայց ահա՛ թե ինչ է նա պնդում իր պաշտոնական հայտարարության մեջ. «Օսմանյան կառավարությունը Թուրքիայում ապրող քրիստոնյաներին առաջարկում է իր բարեգործական ազնիվ օժանդակությունը»:

Իսկապես ես աչքերիս չհավատացի, երբ կարդացի այդ հայտարարությունը: Արտահայտություններ չեմ գտնում բնութագրելու այդ դժոխային ստախոսությունը»:

---

[1] *Геноцидът над арменците..., фонд № 321, оп. 1, д. 2381, л. 32-35.*

[2] *Նույն տեղում, д. 2450, л. 17-18:*

Անհնար է երիտթուրքական կառավարության վարքագծի ավելի ճշմարիտ ու ընդգրկուն գնահատական տալ: Նա նույն խնդիրներին անդրադառնում է 1915 թ. սեպտեմբերի 18-ին. «Այս օրերին համարյա սովյալ հայ կանանց ու երեխաների երկար չարասյուները արևելքից ոտքով հասնում են այստեղ և պետք է շարունակեն տարագրվել, եթե մինչև այդ չմահանան:

Բարձր Դռան հրամանը, թե իրենց բնակատեղերում գտնվողները չպետք է տեղափոխվեն՝ թվում է հնարովի և կասկածելի:

Զինվորների ընտանիքները ևս, հակառակ հրամանի, բացառություն չեն կազմում: Նաև ծանր հիվանդները անսիրտ ձևով տարագրվում են: Տարագիրները նորից ուղարկվում են դեպի Դեր Զոր և Մոսուլ:

Հակառակ Դռան հավաստիացման, ամեն ինչ խոսում է հայ ժողովրդի ոչնչացման մասին[1]:

Բայց այդպես էին վարվում ոչ բոլորը: Չկարողանալով հերքել հայերի բնաջնջման իրողությունը՝ գերմանացի մի շարք դիվանագետներ աշխատում էին դրա մեղքը բարդել տեղական իշխանությունների վրա, պատասխանատվությունից ազատել Բարձր Դռանը: Դիվանագիտական այդ «գայթակղությունից» զերծ չէր նաև Ռեոսլերը:

Լեփսիուսի «Տեղեկագրի» նախաբանում կան հետևյալ տողերը. «Քանի դեռ Ջելալը Հալեպում էր, հյուպատոս Հ. Ռեոսլերը ուրախանում էր այդ արդարամիտ ու մարդասեր վալիի գործունեությամբ, որն իր վիլայեթում ո՛չ տեղահանություն կատարեց և ո՛չ էլ կոտորած»: Նա գովեստի խոսքեր է ասում նաև Ջեմալ փաշայի հասցեին, որի «Հրամանատարության տարածքում էին գտնվում Կիլիկիան և Հալեպը: Փաշան «հավանություն չէր տալիս կառավարության հայկական քաղաքականությանը: Համենայն դեպս ... հասավ այն բանին, որ այդ տարածքներում կոտորածներ տեղի չունեցան»:

Կունցլերին ուղղված զեկուցագրերից մեկում (25-ը սեպտեմբերի 1915 թ.) կարդում ենք, որ «Բարձր Դռան հեռագրով արված կարգադրությունները տարագրված հայերի վիճակը բարելավելու վերաբերյալ, տեղական մարմինների քմահաճույքի հետևանքով նպատակին չեն հասել: Ռեոսլերը Հալեպից հայտնում էր, թե անօրինությունները շարունակվում էին, տարագրվածները սննդամթերքով չէին ապահովվում, քանի որ «պետական մարմիններն ի վիճակի չեն նման բազմության սննդի գործը կազմակերպել»:

Հոկտեմբերի 20-ին Գերմանիայի հյուպատոսը հեռագրեց. «Թալեաթ բեյը, որի ուշադրությունը ստիպված էի հրավիրել այս վիճակի վրա, պատրաստակամություն հայտնեց օգնել, սակայն հաղիվ թե հնարավոր լինի հավատալ, որ կենտրոնական կառավարության հրամանները որևէ էական փոփոխություն կառաջացնեն տարագրված հայերի վիճակի մեջ»[2]:

Դեսպանի մտավախությունը հիմքից զուրկ չէր, որովհետև լավ գիտեր Թալեաթին ու նրա խոսքի արժեքը:

Ռեոսլերն ահազանգում էր, թե հայերին կանգնեցրել են երկընտրանքի

---

[1] Konst. /Ankara 170, Ab 53a.

[2] Մետերնիխի 1915 թ. սեպտեմբերի 25-ի զեկուցագիրը Բեթման Հոլվեգին:

առաջ՝ ով ուզում է կենդանի մնալ, պետք է մահմեդականությունն ընդունի: Իսլամացման գործընթացն արագացնելու համար, հաճախ հայ ընտանիքներին առանձին-առանձին բնակեցնում էին մահմեդական գյուղերում:

Կարավանների մեծ մասն անցնում էր Ուրֆայով, փոքր մասը՝ Հալեպով: Ուրֆայով անցնողներին հիմնականում տանում էին Մոսուլ, իսկ Հալեպով անցնողներին՝ Դեր Զոր:

Իշխանությունների հավաստիացումները, թե հայերին այդ վայրերը տանում են բնակության, կեղծիք էր: «Ումից վրիպել է դանակը, դատապարտված է սովամահության...»[1]:

Հյուսիսային Սիրիայում, առավելապես Հալեպում, հայ տարագիրներին ինչ-որ մատակարարում կազմակերպվեց միայն տեղահանության սկզբնական շրջանում: Զափահասներին տալիս էին 20 ֆենիկ, իսկ երեխաներին՝ 16 ֆենիկ[2]: Ուստի պատահական չէ, որ գաղթականությունն անմիջապես հայտնվեց քաղցի ճիրաններում:

Հալեպի Բաբ-էլ-Ֆարաջի հրապարակից մինչև Սալիբե եկեղեցին՝ փողոցներում թափված էին հարյուրավոր դիակներ և մահամերձ հայեր:

Հարկ է նշել, որ նման վիճակ առաջացել էր ո՛չ միայն Թուրքերի ցեղասպան դիտավորությունների, այլև տեղահանության կազմակերպման աշխատանքների քաոսային վիճակով:

Ստեղծված ցեղասպան իրավիճակն ի սկզբանե հայտնի էր Բեռլինին: Իշխան ֆոն Հոհենլոհե-Լանդենբուրգը 1915 թ. սեպտեմբերի 25-ին հետևյալ զեկուցագիրն ուղարկեց Բեռլին (փաստ. թիվ 586). «Վերջերս մենք պարոն Ռեոսլերից ստացանք ... հետևյալ հեռագիրը. «Վերջին մի քանի օրերի ընթացքում գրեթե ամբողջությամբ քաղցած հայ կանանց ու երեխաների երկար շարասյուները Արևելքից եկան այստեղ ու անմիջապես այստեղից տեղափոխվեցին, որպեսզի այս վայրերում չմահանային: Չնայած Բարձր Դռան հավաստիացումներին, այս ամենը հավասարազոր է հայ ժողովրդի բնաջնջման»:

Մի ականատես Հալեպից հետևյալ զեկուցագիրն ուղարկեց Կ. Պոլիս (փաստ. թիվ 95). «Այս ամսվա 10-ին և 12-ին աքսորվածների մոտ 200 հոգանոց խումբ՝ կանայք և երեխաներ, Ռաս-ուլ-Այնի վրայով այստեղ հասավ լրիվ հյուծված: Դա թշվառության մի այնպիսի պատկեր էր, որ միայն Վերեշչագինը կարող է նկարել: Ոստիկանները թշվառ, հյուծված էակներին, որոնցից շատերը մահվան շեմին էին, Հալեպի փողոցներով մտրակելով քշում էին դեպի կայարան: Որևէ հայի թույլ չէին տալիս մի կաթիլ ջուր խմել կամ մի կտոր հաց ուտել: Նրանց հաց կամ ջուր տալու փորձ անող բնակիչներին արգելում էին այդ անել և հեռացնում էին»:

«Համաձայն անընդհատ ստացվող նոր լուրերի,- գրում է Ռեոսլերը,- Արխիախլփում (Կարին) հայերն արդեն գրեթե լրիվ ոչնչացված են: Կառավարությունը կայսրության հայերին կա՛մ ոչնչացնել է ուզում և կա՛մ իր անելիքը

---

[1] R 14092, Ab. 20411: 10.000 թիվը ճիշտ չէ. Դեր Զոր հասած հայերի թիվը սեպտեմբերին հասել էր 60.000-ի:

[2] Lepsius J., նշվ. աշխ., փաստ. № 12:

չգիտե: Լիակատար կազմալուծված իրավիճակ է, այնպես որ պաշտոնյաները, որոնց հանձնարարված է օրենքի գործադրությունը, չգիտեն, թե կառավարությունն ի՞նչ է ուզում: Կիլիկիայի հայերը, որոնք Հալեպում են, կառավարությունից մի քիչ պարեն են ստանում, թեև անկանոն: Արխիալփում եղողները, որոնցից այստեղ կա 6000 հոգի և օրական էլ մոտ 300 հոգի գալիս է, որևէ բան չեն ստանում: Հալեպի հայ հասարակության հավաքած միջոցները չուտով կսպառվեն: Առաջ ամեն տարագրյալ օրական չորս փոքր հաց էր ստանում, իսկ այժմ՝ միայն երկու և ուրիշ ոչ մի այլ սնունդ: Իսկ Հալեպից դուրս եղող հազարավոր և բյուրավոր գաղթականների մասին որևէ մեկը հոգ չի տանում»: Դրա հետ միասին, թուրքական կառավարությունը համառորեն հակազդում էր, թույլ չէր տալիս, որ օտար երկրները հայերին սննդով և այլնով օգնեին[1]:

1915 թ. օգոստոսի 8-ին Հալեպից ստացվեց մի շատ ողբերգական, բայց նաև ուշագրավ հաղորդագրություն, որի տակ տեղի ամերիկացի հյուպատոս Ջ. Ջեքսոնի ստորագրությունն է. «...Թուրքական կառավարությունն ամենակատաղի միջոցներ է ձեռնարկում կայսրության այս շրջանի հայ բնակչության նկատմամբ: Ուղղակի հարձակման ու կոտորածի գաղափարը, որ հարգի էր նախկինում, այժմ որոշ չափով փոխվել է»: Մեծ խմբերով տեղահանում են տղամարդկանց, որոնք ճանապարհին անհետանում են: Դրանից հետո նույն ճակատագրին արժանանում են կանայք ու երեխաները: Երկրի ներքին շրջաններից եկողները պատմում են, որ այնտեղ զանգվածաբար սպանում են տղամարդկանց, որ ճամփեզրերին ու Եփրատի ջրերում թափված են դիակներ, որ կանայք ու երեխաները հանձնվում են քրդերին, որ ժանդարմներն ու քրդերը անպատմելի վայրագություններ են գործում:

«Սկզբում այս պատմություններին առանձնապես չէինք հավատում, բայց այժմ, երբ մեծ թվով գաղթականներ են գալիս Հալեպ, դրանց ճշմարտացիությունը կասկած չի հարուցում: Օգոստոսի 2-ին մոտ 800 տարեց կանայք և 10 տարեկանից փոքր երեխաներ 45 օրվա ճանապարհից հետո թշվառագույն վիճակում Դիարբեքիրից հասան այստեղ: Նրանք պատմեցին, որ բոլոր երիտասարդ կանանց ու աղջիկներին տարել են քրդերը, որ նրանց կողոպտել են մինչև վերջին գրոշը, որ տեսել են սով, ծարավ ու ամեն տեսակ զրկանքներ:

Ինձ ասացին, որ 4500 հոգու Սղերդից ուղարկել են Ռաս-ուլ-Այն, ավելի քան 2000 հոգու՝ Սեզրեից Դիարբեքիր և որ Բիթլիս, Մարդին, Մոսուլ, Սևերեկ, Մալաթիա ու այլ քաղաքներ հայաթափ են եղել. տղամարդիկ, երիտասարդներ ու շատ կանայք սպանվել են կամ ցրիվ են տրվել երկրով մեկ: Եթե սա ճիշտ է, և անկասկած ճիշտ է, այդ վերջիններն էլ բնականաբար կմեռնեն հոգնությունից, սովից ու հիվանդություններից: Դեր-էլ-Զորի կառավարիչը, որն այժմ Հալեպում է, ասում է, որ քաղաքում 15 հազար հայ գաղթականներ կան: Երեխաներին հիմնականում վաճառում են՝ սովամահությունից փրկելու նպատակով, քանի որ կառավարությունը որևէ օգնություն ցույց չի տալիս»: Ջեքսոնի կազմած հետևյալ աղյուսակում (տե՛ս էջ 593) ցույց է տրված մինչև հունիսի 30-ը Հալեպ ժամանածների թիվը, վայրը, որտեղից նրանք տեղահանվել էին և այն մարդկանց թիվը, որոնք չարունակելու էին ճանապարհը:

---

[1] **Lepsius J.**, նշվ. աշխ., փաստ. № 140:

Որտեղից	Ընտանիք	Անձ	Ետ ուղարկված
Զորք-Մարզպան	400	2109	734
Օջախլի	37	115	137
Էոզերլի	116	593	173
Հասանբեյլի	187	1118	514
Հարնի	84	528	34
Կարսբազար	51	340	–
Շար (Հաճրն)	150	1112	357
Հաճրն	592	3988	1025
Ռումլու	51	388	296
Սիս	231	1317	–
Բաղեչ	126	804	–
Դեոնգելե	13	68	–
Տրդատլի	12	104	–
Զեյթուն	5	8	–
Թարպուզ	22	97	–
Ալբիստան	10	44	–
Ընդամենը	2087	12733	3270

2100 գաղթականներ էլ ժամանել էին այս աղյուսակը պատրաստելու ընթացքում:

Աղբյուրներից մեկի տվյալներով՝ մինչև հուլիսի 30-ը Հալեպով անցել էր 15.255 տարագիր:

«Այնթապից, Մարդինից, Քիլիսից, Անտիոքից, Ալեքսանդրետից, Քեսաբից և Հալեպի գավառի ավելի փոքր քաղաքներից տեղահանված հայերի թիվը հասնում է 60 հազարի: Բնական կլինի ենթադրել, որ նրանց էլ բաժին կընկնի ավելի վաղ տեղահանվածների ճակատագիրը, որի մասին մտածելն անգամ սարսափելի է»,- գրում է Ջեքսոնը:

Գերմանիայի հյուպատոսի 1915 թ. օգոստոսի 5-ի տեղեկագրում նույնպես նշվում է, որ Այնթապի, Անտիոքի, Իսկենդերունի, Քեսաբի և Հալեպի կուսակալության մյուս ավելի փոքր քաղաքների բոլոր հայերը, թվով չուրջ 50.000 հոգի, արդեն տարագրված էին: «Կացությունն օրեցօր ավելի տագնապալից է դառնում»,- հայտնում է նա[1]:

«Այս ամիսներուն,- գրում է Է. Լաուասը,- ընդամէնը մօտաւորապէս 1,6 միլիոն հայեր իրենց տուներէն դուրս բերելով տեղւոյն վրայ մորթուեցան եւ կամ զրկուեցան Սուրիական անապատ հետիոտն կամ չոգեկառքով: Սեպտեմբեր 1915-ի վերջաւորութէան հոն հասած էր արդէն 500.000 հոգի: Իվ Թերնոնը կը նկարագրէ անոնց վիճակը. «Տարագրեալները կը գտնուէին աննկարագրելի դրութեան մը մէջ, անոնք կա՛մ մերկ էին և կա՛մ ցնցոտիներով: Անոնց մե-

[1] Լեփսիուս Յո., նշվ. աշխ., էջ 25-26:

ծամասնութիւնը «փարանոյիտ» վիճակի մը մէջ կը գտնուէր: Անոնց թերսնունդ ըլլալու ահռելի նշաններէն մէկը հետեւեալն էր. երբ անոնց գլուխները կը լուացուէին, յաճախ սանտրի հարուածով մը անոնք կը կորսցնէին իրենց մազերուն մեծ մասը»:

Հաջորդ ամիսներին տարագրեալները դեպի չոգ ու այրող անապատ աքսորվեցին: «Սեպտեմբեր 1916-ին անոնցմէ միայն 70.000 հոգի մնացած էր, իսկ միւսները մեռած էին անապատին մէջ»:

«Բոլոր տղամարդիկ աքսորվեցին երկրի խորքերը,- գրեց «Times»-ը,- որտեղ նրանք զոհվեցին դանակից կամ սովից, իսկ գերմանացի սպաները այդ դժբախտների կանանց ու ընտանիքներին ուղարկում էին նրանց վիճակի մասին հանգստացնող նամակներ: Կանայք ու աղջիկները լրիվ հանձնված էին թուրքերի օգտագործմանը, նրանց վիճակը մահից սարսափելի էր»[1]:

"Русское слово"-ն ներկայացնում է բռնագաղթված և կոտորված հայերի ցնցող տեսարաններ:

Հալեպցի մի փախստական, որը ականատես էր եղել հայ ժողովրդին բաժին ընկած սարսափներին, այդ թերթի թղթակցին պատմել է. «Հալեպ մտան հազարավոր հայ կանայք, երեխաներ և ծերեր՝ ցնցոտիների մեջ, քաղցած, բոբիկ և լցվեցին Հալեպի փողոցները: Դրանք Դյորթ-Յոլի և Հաճընի փախստականներն էին..: Շուտով նման դժբախտների կարավաններ եկան ամբողջ Հայաստանից: Հալեպ առաջինը հասած փախստականները ամենաերջանիկ էակներն էին, համեմատած կմախքների այն կարավանների հետ, որոնք գալիս էին Խարբերդից, Դիարբեքիրից, Էրզրումից, Այնթապից, Մարաշից, Իզմիտից, Ադանայից, Մերսինից, Իսկենդերունից, Զեյթունից և այլ վայրերից: Խարբերդից, Դիարբեքիրից և Էրզրումից եկող թալանվածների, տանջահարների, հուսադրվածների մեջ 15 տարեկանից բարձր որևէ տղամարդ չկար: Տարածությունը, որ սովորաբար անցնում էին 10 օրում, աքսորյալները հաղթահարում էին երեք ամսում և ճանապարհին նրանց կեսը զոհվում էր...

Իզմիտից, Ադանայից և Մերսինից բռնագաղթվածները ճանապարհին զոհ դարձան համաճարակի և լքեցին իրենց երեխաներին:

Այս դժբախտները մի քանի օր ապրեցին ահավոր կեղտի մեջ, արևի կիզիչ ճառագայթների տակ, գիշերում էին իջևանատների ձիանոցներում: Նրանց շրջանում մահացությունն ահավոր չափերի հասավ: Շատ ավելի ահավոր էին կանանց նկատմամբ զանգվածային բռնությունները, կարավաններին ուղեկցող զափթիեների կողմից, ինչը այդ դժբախտ կանանց հարազատների կյանքը խնայելու համար տարօրինակ փրկագին էր: Օրինակ, հայ հարուստ և պատվավոր ընտանիքներից մեկի մի աղջիկ կատարում էր իր հոր նախկին ծառայի հարճի պարտականություն: Մի այլ, նույնպես հայտնի ընտանիքից, մայր ու նրա դուստրերը մտան զափթիեներից մեկի հարեմը:

Հալեպ եկած փախստականների վիճակն այնքան ահավոր էր, որ մի խոջա, դժբախտների վիճակից հուզված, անիծելով իր կառավարությանը, դիմեց չուկայի ամբոխին.

---

[1] "Армянский вестник", 1916, № 2.

– Մահմեդականնե՛ր, արդյո՞ք իսլամն է հրամայում այս ամենն անել: Արդյո՞ք այդ անել մեզ հրամայում է Ղուրանը:

Իհարկե, խոջան ձերբակալվեց և անհետացվեց:

«Արթնացավ նույնիսկ Թուրքերի դաշնակցի՝ Գերմանիայի հյուպատոսի խիղճը, որը փախստականներին օգնեց դրամով և նրանց օգտին միջամտեց Թուրքական իշխանությունների առջև: Սակայն չուտով Կ. Պոլսից հեռագիր ստացավ՝ չմիջամտել վալու գործերին»:

Հայերին աքսորելով հարազատ վայրերից, Թուրքական կառավարությունը հայտարարեց, Թե նրանց սնունդի համար օրական վճարելու է 10-ական կոպեկ, սակայն այդ վճարումը կատարվեց միայն մի քանի օր: Վճարումը դադարեցնելու հետ միասին Թուրքերը տղամարդկանց քշեցին աշխատելու Բաղդադի երկաթուղու շինարարության վրա և չնչին վարձատրությամբ կատարելու այլ աշխատանքներ:

Զկարողանալով գլուխ հանել սովահար հայերի ամբոխից, Հալեպի վալին հայտարարեց, Թե նրանց Թույլատրում է մեկնելու արտասահման: Բայց քանի որ Հալեպից արտասահման մեկնելը փաստորեն անհնար էր, ապա այդ հայտարարությունը լոկ ծաղր էր: Փախստականներին սկսեցին ուղարկել Հոմսի և Դեր Զորի հարթավայրեր[1]:

Թե ի՞նչ էր նշանակում բռնագաղթն ու ինչպիսի՞ն էր բռնագաղթվածների վիճակը, վկայում էին նաև իրենք, Թուրքերը և անգամ երիտԹուրք պարագլուխները:

«Նրանց ձիերն ու Թանկարժեք իրերը գողացել են... ասելով, Թե ճանապարհին պարեն են ստանալու, Թողել են առանց հաց ու ջրի,– կարդում ենք Ջեմալ փաշայի հուշերում:– Նրանց ուղեկցող պաշտոնյաները խիստ ու վատ վերաբերմունք են ցուցաբերել, այդ Թվում՝ հայհոյանքներ ու կողոպուտ ... Ստիպում էին բավարարվել օրը 25-30 գրամ հացով և 25 փարա Թոչակով ... Կապանում կանանց հավաքել են, երբ նրանք լվացք էին անում և հարկադրել են ճամփա ելնել բոկոտն, չկարողանալով տանել անգամ լվացած սպիտակեղենը: ԲազմաԹիվ ընտանիքների տղամարդիկ ուղարկված էին այլ ուղղությամբ, բաժան իրենց կանանցից ու երեխաներից ... Փոխադրական միջոցների բացակայության հետևանքով չատ կանայք ստիպված էին սեփական երեխաներին լքել իրրև անօգուտ բեռ, նրանց Թողնել ճանապարհի եզրին կամ արտում, ոմանք էլ փորձել են նրանց վաճառել... Այսպիսի վարմունքը վնասում է մեր ազգային հեղինակությանը և արատ է օսմանցիության անվան վրա»[2]:

Մի ուրիշ Թուրք՝ Նայիմը գրում է Ռաս-ուլ-Այնում հայ գաղԹականների վիճակի մասին. «Գիւղին դէմը, գետին եզերքը Թափուած հարիւրաւոր կիներէ եւ մանուկներէ բաղկացեալ Թշուառներու կարաւան մը տեսայ: Անոնք ամէն օր, առաւօտեան, գիւղ գալով կը մուրային»[3]:

Հալեպի որբանոցներում 1500 երեխա կար: 4000 հայ կանայք ներգրավ-

---

[1] *"Армянский вестник", 1916, № 2.*

[2] **Lepsius J.**, *նշվ. աշխ., փաստ. № 72:*

[3] **Անատոնեան Ա.**, *նշվ. աշխ., էջ 31-33:*

վեցին բանակի կարիքների համար թել մանելու գործում: Նույն ժամանակ, այսինքն սեպտեմբերին, Ուրֆայում կար 700, Բիրեջիկում և Ջերաբլուսում՝ 2000, Մոսուլում՝ 4000 փախստական, Հալեպում՝ 17220, Մեսքենեի ու Դեր-Զորի արանքում 15.000, Դամասկոսում՝ 10 հազար (չատերը մահմեդականացած), Հաուրանում ու դրանից հարավ՝ 30 հազար, Համամում և Մեմբիջում՝ 15.000 (դարձան մահմեդական):

Ընդամենը՝ 106420 հոգի: Այդ թվի մեջ չեն մտնում Հալեպը, Մարաշը և Այնթապը շրջանցածները և ուրիշներ, որոնց մասին տվյալները բացակայում են: Նշվածներին հարկ է գումարել նաև Ադանայում եղածները, որոնց թիվն անհայտ է:

Ականատեսը պատմում է Հալեպից հյուսիս ընկած Նիզիպի խանում գտնվող հայերի վիճակի մասին: Խանի բակը մեծ չէր, և դա զուրկ էր սենյակներից: Աջ կողմում և դիմացը խառնված էին գզգզված, սարսափահար, ցնցոտիներով ծածկված կանայք, որոնց ձախ կողմում դիակներ դիզված էին: Շատերը արդեն նեխում էին և «անչնչելի էին դարձնում օդը ոչ թե միայն պատերից ներս, այլև դուրս»:

Երբեմն այստեղ գալիս էին հայ աղջիկ գնելու: Այդ նպատակով խան մտած մի ֆրանսիացի նկարագրում է տեսածը:

Ներսում դիակների վրա ընկած լալիս ու ողբում էին կանայք: Ձայները մարդ էին խլացնում: Նրանցից մի քանիսը դիակների վրայից հանում էին շորերը, որ ծածկեն ցնցոտիներից մերկացած իրենց մարմինները: Խելագարվածներն անմիտ չարժումներով դեգերում էին:

Որբ մնացած երեխաները հավաքված էին իրար մոտ: Նրանցով որևէ մեկը չէր զբաղվում: Այս սարսափելի դժոխքում բոլորին տիրել էր աննկարագրելի զառանցական վիճակը: Նրանց թվում էր, որ իրենք իրենք չեն, ինչ-որ անբացատրելի երազի մեջ են, չչմած և ասես գիտակցությունը կորցրել էին ու մոռացել իրենք իրենց:

Սա թուրքական գազանանոց էր, որովհետև հարյուրավոր անմեղ կանայք ու երեխաներ շրջապատված էին թուրք գազաններով: Անտեր, անտիրական երեխաները ահավոր նիհար էին: Այդ կենդանի կմախքները սարսափեցնում էին մեծերին իրենց սուր հայացքով: Անմեղ փոքրիկներն անպայման չուտով մեռնելու էին:

Պատի ճեղքերին գամված կանայք իրենց հոգեվարքը երկարացնելու համար քրդերին վաճառում էին սեփական երեխաներին, անգամ 12-13 տարեկան աղջիկներին, և այդ՝ մի կտոր հացի դիմաց:

Դժոխային խառնաչփոթությունը, գարշահոտությունը, լացը, հեկեկանքը, սիրտ ճմլող աղաղակները, խելագար ճիչերը, քստմնելի քրքիջները ցրել էին այս դժոխքը և արձագանքը հասնում էր հեռու-հեռուներ...

Երբ կանայք տեսան ֆրանսիացուն ու իմացան, որ եկել է կին գնելու, իրար հրմշտելով շրջապատեցին նրան: Շատերը թշվառությունից ծամածռված դեմքերով փորձում էին ժպտալ, գովում էին իրենց գեղեցկությունը, արժանիքները ու ասում. «Ես գեղեցիկ եմ, ի՞նձ առ, ես այսինչի աղջիկն եմ»: Մյուսն ասում էր. «Ես ավելի՛ գեղեցիկ եմ, գիտեմ լավ գորգ գործել, մանել: Կծառայեմ գիշեր-

ցերեկ, տա՛ր ինձ»: Իսկ Թուրք անսիրտ ժանդարմը ձեռնափայտով խփում էր նրանց:

Ֆրանսիացին նկատում է երկու կնոջ, որոնք իրար չատ նման էին: Երկուսն էլ բարձրահասակ, սև մազերով, սև աչքերով, վայելուչ վարվելու ձևերով... Նրանց հագուստները փոքր-ինչ կեղտոտված էին և պատառոտված, բայց երևում էր, որ գեղեցիկ, թանկարժեք հագուստներ են եղել:

Երբ այդ կանայք իմացան, որ հյուրն ուզում է իրենց տեսնել, ցածրաձայն հարցրեցին. «Իրո՞ք մեզ կտանեք»:

– Այո՛,– ասաց հյուրը և դառնալով ժանդարմին՝ ավելացրեց,– ես գնում եմ այս երկու կանանց, ու մեկնեց դրամը:

Հյուրի դուրս գալու պահին գնված երկու հայ կանայք հարցրեցին ֆրանսերեն. «Դուք անգլերեն կամ ֆրանսերեն գիտե՞ք»:

Երբ Հայաստանի մյուս շրջաններն արդեն դատարկված էին հայերից, նրանց մնացյալները հավաքվեցին Հալեպի վիլայեթում: Հատկապես Ադանա-Մարաշ-Հալեպ գիծը դարձավ տարագիրների հիմնական մասի ուղին: Ահա թե ինչո՛ւ տարվա վերջից սկսած հիմնական լուրերն այս շրջանից էին:

Ջեքսոնը 1915 թ. օգոստոսի 19-ին գրեց, որ Այնթապ քաղաքը չատ արագ հայաթափվեց: Հայերից չատերն անցան Հալեպ և ավելի հարավ: Այդ այնթապցի հայերը հարուստ էին և ուղեկցող ոստիկանները նրանց կողոպտելը ոչ միայն չէին արգելում, այլև մասնակցում էին դրան: Սկսած օգոստոսի 1-ից՝ 20.000 հայի տարան Դամասկոս-Համա ուղղությամբ: Նրանցից քչերին էին թույլ տալիս քաղաք մտնել: Օտար ճանապարհորդները վկայել են, որ ճանապարհները լիքն էին դիակներով: Ուրֆայի և Արաբ Բունարի արանքում 25 կմ երկարությամբ թափված էին 500 անթաղ դիակներ: Իրազեկ աղբյուրների տվյալներով՝ մինչև օգոստոսի 15-ը (հայերի) ընդհանուր կորուստը անցնում էր 500 հազարից: Վանի, Կարինի, Բաղեշի, Դիարբեքիրի, Մամուրեթ ուլ-Ազիզի, Անկարայի և Սեբաստիայի վիլայեթներում հայերը գործնականում արդեն բնաջնջված էին: Մնում էին Ադանան ու Հալեպը, որտեղ ևս բնաջնջումն սկսվել էր[1]:

Ռեսլերը նույն օրերին հեռագրեց. «Ոչնչացվածների ընդհանուր թիվը մի քանի հարյուր հազարի է հասնում: Նրանց մեծամասնությունն սպանվել է ոչ թե քրդերի, այլ՝ ոստիկանների կողմից: Նշաններ կան, որ ճանապարհին տարագրվածները սպանվելու էին նաև Հալեպի ու Մարաշի սանջակներում[2]:

Հալեպի շրջանում հյուպատոս Ռեսլերը տեսել էր շուրջ 45 հազար տարագիրների, որոնցից 25 հազարը գտնվում էր «ծայրահեղ կարիքի մեջ, չատերը սովամահության եզրին»:

Նա գրում է, որ Եփրատը դուրս էր եկել ափերից, որովհետև գետը լցված էր երկուական հոգով միմյանց կապված դիակներով: «Փաստերի կրկնությունն ապացուցում է,– նկատում է հյուպատոսը,– որ խոսքը պատահական սպանությունների մասին չէ, այլ՝ իշխանությունների՝ նախապես մշակված ծրագրով զանգվածային բնաջնջման: Ասում են, և դա չատ մոտ է ճշմարտությանը, որ

---

[1] **Bryce J.**, նշվ. աշխ., էջ 549.

[2] **Բրայս Ջ.**, նշվ աշխ., փաստ. № 134:

թուրք զինվորները դիակները գետն էին նետում Ադրյամանում...»:

Գերմանիայի հյուպատոս Հոլչտեյնը հայերի հետ կատարվածը ներկայացնում է հետևյալ կերպ. հայերի բռնագաղթն իրականացվեց այնպիսի դաժան միջոցներով, որ հավաքակայաններ (Հալեպ, Մոսուլ, Թել Աբիադ, Ռաս-ուլ-Այն) հասնում էին տարագրյալների միայն փչրանքները: Ճանապարհին, որը տևում էր չաբաթներ ու ամիսներ, կողոպուտ, պղծում, գողություն, կանանց, աղջիկների և տղաների վաճառք, որով զբաղվում էին ուղեկցող պահակախմբերն ու մերձակա բնակավայրերի մահմեդականները, հալեցրեցին կարավանները:

Թել Աբիադի և Գյուլթեփեի արանքում, երկաթգծից ոչ հեռու վեց տարբեր տեղերում տեսել եմ մերկ կանանց ու երեխաների 18 դիակ, Գյուլթեփեի և Խարաբ Նասի արանքում հեռագրասյունի կողքին տեսել են մեռնող երեխայի ու կանանց լրիվ մերկ վեց դիակ, երկու մեռած երեխա: Թել Աբիադում կարավանի մեկնելուց հետո մնացին 17 դիակ ու հոգեվարքի մեջ գտնվողներ:

Ամենուրեք քայքայվող մարմնի գարշահոտություն էր:

«Ինքս տեսա քաղաք (Հալեպ) մտնող մի կարավան: Դատարկ սայլերից յուրաքանչյուրի վրա, առանց որևէ գույքի ու սննդամթերքի, առանց ծղոտի ու ծածկոցի, նստած էին 8-10 տանջահար կանայք ու երեխաներ: Մեկը մեռած էր, մյուսը՝ հոգեվարքի մեջ: 10-11 տարեկանից բարձր արական սեռի հայեր չկային: Մինչև այժմ բռնագաղթվածների մերձավոր վերջնակետը Թել Աբիադ, Ռաս-ուլ-Այն և (Այնթապի ու Մարաշի համար) Ակչե Կոյունլի երկաթուղային կայարանն էր, դրանց հաջորդում էր Հալեպը, որտեղ, ըստ իշխանությունների տվյալների, հոկտեմբերի վերջին կուտակվել էր 20.000 հոգի: Նրանք հիմնականում տեղավորված էին քաղաքի արվարձաններում գտնվող դաշտային ճամբարներում: Կենտրոնական, Հյուսիսային և Արևմտյան Անատոլիայից եկած կարավաններն իրար խառնվում էին հավաքական ճամբարներում՝ Մամուրում (Ադանայի վիլայեթ՝ Բաղդադի երկաթուղու վրա) և ապա Կաթմա ճամբարում՝ Հալեպից 48 կմ հյուսիս-արևմուտք, կրկին երկաթուղու հարևանությամբ, որտեղ, ըստ պաշտոնական տվյալների, հոկտեմբերի վերջին կուտակվել էր 40.000 հոգի:

Ճամբարներում ոմանք ունեին իրենց վրանը, մյուսները՝ նույնիսկ պաշտպանված չէին արևից: Կենցաղային ոչ մի հարմարություն: Այդ 40 հազարի համար կար միայն մի աղբյուր: Ջուր վերցնելու կամ խմելու համար հարկ էր լինում հաղթահարել տեղի բնակչության ոտնձգությունները:

Հյուպատոսարանի ուսումնասիրություններով՝ հոկտեմբեր ամսին օրական մահացությունները 120-ից հասան 200 հոգու: Ամսվա կեսին մոլեգնեց բծավոր տիֆը:

Կաթմայի ճամբարի տարագիրները մինչև սեպտեմբերի վերջը փոխադրվում էին երկաթուղիով, իսկ դրանից հետո՝ ոտքով և տեղավորում էին ծայրամասերում, ուր ուղարկվեցին նաև Հալեպում տեղավորված գաղթականները[1]:

Պատկերը նույնն էր, ինչ մինչև Հալեպ հասնելը, գաղթի հենց սկզբից:

[1] R 14090, Ab. 288919.

«...Կանանց ու երեխաների լացն ու ողբը մարդու սիրտ էր թրատում,- գրում է ԱՄՆ-ի հյուպատոսը:- Այստեղ էին գտնվում նաև հոգևորականներ, առևտրականներ, բանկիրներ, իրավաբաններ, արհեստավորներ: Գեներալ-նահանգապետն ինձ ասաց, որ նրանք բռնագաղթվողներին պետք է փոխադրամիջոցով ապահովեին վերջիններիս գույքի վաճառքից ստացված միջոցների դիմաց, բայց հունիսի 26-ից հայերին արգելվեց որևէ բան գնել կամ վաճառել: Գնում էին ոտքով... Շատերն ուժասպառ եղան և չարաչարությունից ետ էին մնում: Նրանց սվինահար էին անում և գետը չպրտում: Հոսանքը դիակները տանում էր դեպի ծով կամ դրանք ծանծաղուտ տեղերում դեմ էին առնում քարերին: Դիակները նեխում էին և շրջապատը լցնում անտանելի հոտով: Ես խոսել եմ ականատեսների հետ, որոնք նկարագրված դեպքերից 15 օր անց գետի մակերեսի վրա տեսել էին բազմաթիվ դիակներ»:

Կարմիր խաչի գծով Թուրքիայում գտնվող երկու բուժաշխատողներ պատմում են. «Մենք ճանապարհին հանդիպեցինք բռնագաղթվողների մի մեծ կարավանի: Երկար ժամանակ կանգնած սպասում էինք, որ նրանք անցնեին: Մենք երբեք չենք մոռանա այդ տեսարանը: Շատ քիչ թվով տղամարդիկ, կանանց ու երեխաների մի ամբողջ ամբոխ... Նրանք՝ թե՛ մեծերը և թե՛ փոքրերը, քայլում էին խոր լռության մեջ, որպեսզի չուտով բոլորը միասին կապված ժայռերից չպրտվեին Եփրատի ալիքների մեջ»:

Արդեն նշվեց, որ բռնագաղթի ճանապարհին ոչնչացվեց հայերի մեծամասնությունը, իսկ թե կենդանի մնացած հատուկենտ մարդիկ ի՞նչ վիճակում հասան Սիրիա, պատմում է գերմանացի բժիշկը. «Մենք մտանք «հոսպիտալի» բակը, որում զզվելի անմաքրություն էր: Բակի ծայրին սյուների տակ թափված էին հիվանդները, մեռնողները, դեսուդեն ընկած էին դիակներ: Ճանճերի բազմությունը ծածկել էր հիվանդներին և դիակներին: Ամեն կողմից թվում էին հառաչանք, ողբ, դժգոհություն: Դիակների կողքերին խարխափում էին երեխաները... Բակում տեսանք սովից կիսամեռ տասնյակ երեխա, նրանց մեջ կային մեռնողներ և գուցե արդեն մեռածներ: Ոչ ոք նրանց վրա ուշադրություն չէր դարձնում»[1]:

Ֆրանսիական գործակալներից մեկը տեղեկագրում է. «Հայերը հրաման էին ստացել մեկնելու, առանց նախապես զգուշացվելու, ժամանակ չի տրվել հավաքվելու և իրենց հետ նույնիսկ ամենաանհրաժեշտ բաները վերցնելու: Թուրքերը բռնագրավեցին ամբողջ ունեցվածքը և նույնիսկ այն մի քանի իրերը, որ տարագիրները ցանկացել էին իրենց հետ տանել»[2]:

Գաղթի ճանապարհներին կազմակերպված էին կանանց վաճառքի շուկաներ: Հայուհու գինը 8-23 ֆրանկ էր: Փաստաթղթի հեղինակը այդպիսի մի շուկա տեսել էր Դամասկոսում և լսել նման շուկայի գոյության մասին Հալեպում, որոնցում վաճառվում էին հազարավոր կանայք ու աղջիկներ: Այսպես կոչված մահմեդական աշխարհի մտավորականները՝ խոջաները, ուլեմաները, կադիրները, մուֆթիները կարողացան արագորեն մեծացնել իրենց ստրուկնե-

---

[1] АН Арм. ССР, Бюллетень, Ер., 1984, № 4.

[2] Նույն տեղում:

րի թիվը չնչին գումարներով, պատճառաբանելով, որ իրենք են այդ հայուհիներին կրոնափոխել[1]:

Տղամարդկանցից ու տղաներից կազմավորում էին բանվորական գումարտակներ և տաժանակիր աշխատանքի ուղարկում անապատ, որտեղ ոչ ջուր կար և ոչ էլ սննդամթերք: Հսկիչներին հրամայված էր սահմանված կարգի ամենաչնչին խախտման դեպքում իսկ կրակել: Եվ սովորաբար լինում էր այնպես, որ մի քանի օր անց հսկիչները վերադառնում էին առանց հայերի և հայտարարում էին, թե նրանք փախուստի փորձեր են կատարել ու դրա համար ոչնչացվել են[2]:

Ավստրո-Հունգարիայի դիվանագետներից մեկը գրում է Վիեննա՝ թե Սիրիայում հայերին բնակեցրին քաղաքներում՝ տնտեսական կյանքը զարգացնելու համար:

Դրա չնորհիվ «այնտեղ առաջացան նոր, նախկինում տեղի բնակչությանն անծանոթ արտադրության ճյուղեր, մասամբ էլ բարելավվեցին եղածները»[3]: Տեղեկանքը գրված է 1916 թ. նոյեմբերին, ուրեմն՝ բռնագաղթին զուգահեռ արաբական իշխանությունները ինչ-որ թվով հայերի տեղափոխել էին քաղաքներ:

"Literary Didgest"-ը 1917 թ. սեպտեմբերի 1-ին գրում է. "The New York Evening Post" թերթը տպել էր անգլիացի մի սպայի նամակ, որտեղ ասվում էր հետևյալը. «Հալեպում կա չորս գործարան, որտեղ սարսափելի պայմաններում աշխատում է 2000 տարագիր կին: Նրանցից մեկն ինձ ասաց. «Աքսորի ճանապարհին, դաղարի ժամանակ ես տեսա, թե ինչպես ժանդարմներից մեկը կենդանի թաղեց մի հիվանդ կնոջ: Մեր պահակներին հրամայված էր անմիջապես սպանել նրան, ով հետ կմնար քարավանից: Դիակները նետում էին մի ընդհանուր փոսի մեջ և ծածկում: Սարսափելի էր այդ տեսնելը, բայց մեր աչքերը սովորել էին այդպիսի տեսարաններին»:

«Զինուորական հրամանատարությունը հաստատած էր բազմաթիվ գործատեղիներ,- գրում է Մ. Նեդիմը,- այս աշխատանոցներու մեջ կը ծառայեին... չքավոր մնացած կիներ ու աղջիկներ: Օրական 12 ժամ աշխատանքի փոխարեն անոնց կը տրուեր մեյմեկ զինուորական հաց. անոթութեան և Տեր Զոր ղրկուելու երկիւղեն բոլոր կիներն ու աղջիկները ստիպուած էին արձանագրուիլ աշխատանոցները:

Հակառակ ասոր ալ՝ այս դժբախտները կրկին հանգստութեան երեսը չէին տեսներ: Զինուորական եւ ոստիկան սպաներ, յիսնապետներ, նոյնիսկ հասարակ զինուորներ անընդմիջաբար կ'այցելեին գործատեղիները եւ կ'որոնէին գեղեցիկ կիներ, աղջիկներ և կը ջանային ձեռք ձգել զանոնք»[4]:

Բաղդադի երկաթուղու շրջանում հայերի տնտեսական գործունեությունը, երիտթուրքական կոմիտեն ու գերմանացիները տեսնում էին առավելապես երկաթուղու շինարարական աշխատանքներում: Այդ է պատճառը, որ Թալեաթի

---

[1] *АН Арм. ССР, Бюллетень, Ер., 1984, № 4.*

[2] **Beylerian A.,** *նշվ. աշխ., էջ 298.*

[3] *Wien HHSTA PAXII 463, Damaskus, 28 November 1916.*

[4] ***Նեդիմ Մ.,*** *նշվ. աշխ., էջ 99:*

հեռագրերում բազմիցս նշվում է հետևյալ և նման հանձնարարականներ. «Մինչև երկաթգծի շինարարության ավարտը՝ Ինթիլլիում և Այրանում թողնված հայերին չտարագրել»:

Սակայն այս վիճակը չհարատևեց, որովհետև հայերին ամբողջությամբ ոչնչացնելու արյունածարավ քաղաքականությունն իրեն ենթարկեց մյուս բոլոր ծրագրերն ու նկատառումները:

«Որոշված է երկաթգծերի և կամ որևէ այլ կառույցներում աշխատող բոլոր հայերը աքսորավայրեր քշե՛լ»:

1917 թ. Հալեպում և Հեջազլում կար 60.000 տեղահանված: Մեկ տարի անց նրանց թիվը կրճատվեց երկու անգամ[1]:

Հալեպի գերմանական հյուպատոսության աշխատակից Վիլհելմլիտտենը մանրամասը նկարագրելով հայերի ոչնչացումը, նշում է. «Սակայն բոլորը չեն մեռնի: Ոչ մեծ թվով հայեր՝ երկաթյա ներվեր և խելահեղ խորամանկություն ունեցողները կենդանի են մնում: Նրանք նայում են մահվան աչքերին, կոփում են ներվերը և, եթե ուրիշ որևէ բան տեղի չունենա, անհաչտ ատելություն են կուտակում Թուրքիայի և Գերմանիայի հանդեպ: Իրենց երակների այդ կենսական ուժը նրանք, հավանաբար, կփոխանցեն իրենց ժառանգներին»:

Աշխարհատարածքում Գերմանիայի դիրքերն ամրապնդելու համար Վիլհելմլիտտենն առաջարկում է Հայաստանում գերմանական դպրոցներ բացել ու հայերին գերմաներեն սովորեցնել: Նա գտնում է, որ այդ գործը պետք է անմիջապես սկսել, քանի դեռ չեն վերադարձել «ֆրանսիական պաղրեները և ռուսական պոպերը»:

Վիլհելմլիտտենը գործնական առումով լուրջ սխալ է համարում մեծաթիվ բանվորական ուժի ոչնչացումը: Ըստ նրա, հայերն ուրախությամբ կավարտեին Բաղդադի երկաթուղու շինարարությունը: Նրանք անգամ աշխատավարձ չէին պահանջի, այլ միայն հաց՝ սովամահ չլինելու համար[2]:

Ռայխստագի անդամ Մ. Էրցբերգերը 1916 թ. մարտի 3-ին Ռոզենբերգին առաջարկություններ է ներկայացնում հայ կաթոլիկների հարցի վերաբերյալ: Նա առաջարկում է հայ կաթոլիկներին աքսորից վերադարձնել, բայց ոչ թե իրենց բնակավայրերը, այլ Բաղդադի երկաթուղուն հարող տարածքները, բացառությամբ պատերազմական գոտիների, այսինքն ոչ թե Սիրիա ու Արաբիա, այլ՝ Փոքր Ասիա: Առաջարկվում էր հայերին տեղավորել փակ տարածքներում՝ ստեղծել հայկական ռեզերվացիա[3]:

Բռնագաղթված հայերի հարցում արևելահայ չրջանների ջանքերով այլ մոտեցում դրսևորեց Պետրոգրադը: 1916 թ. հունվարի 17-ին Սազոնովը հեռագրեց Իզվոլսկուն և Բենկենդորֆին: Նախարարն անհրաժեշտ է համարում, որ դաշնակիցները նախաձեռնեն Հալեպ-Մոսուլ աքսորված հայերին նյութական օգնություն ցույց տալու գործը: Խոսքն այն մասին է, որ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան միանվագ նպաստ տրամադրեն մեկ միլիոն ֆրանկի

---

[1] **Lepsius J.,** Bericht..., s. 332.

[2] R 14090, Ab. 459816.

[3] Նույն տեղում, Ab. 5914:

չափով: Այդ գումարը պետք է դրվեր Կ. Պոլսի Հայոց պատրիարքի կամ Սսի կաթողիկոսի տրամադրության տակ: «Իսկ նվիրատվության աղբյուրը պետք է գաղտնի մնար՝ Թուրքերի նոր բռնություններից հայերին զերծ պահելու համար»[1]:

Ֆրանսիայի կառավարությունը համաձայնվեց, պայմանով, որ նպաստը բաժաներ Կ. Պոլսում ամերիկյան դեսպանատունը, իսկ անգլիական կառավարությունը հրաժարվեց:

Այո՛, եվրոպական մայրաքաղաքներում հայոց սպանդը մնում էր դիվանագիտական քննարկումների ու քարոզչական ներկայացումների նյութ: Գլխավոր խնդիրները երկուսն էին, նախ՝ չքմեղանալ և, երկրորդ՝ հնարավորություն գտնել դրանից շահ քաղելու համար:

Բռնագաղթված հայերի ճակատագրի հարցը քննարկվում էր թե՛ Բեռլինում և թե՛ Պետրոգրադում, Փարիզում ու Լոնդոնում, մինչդեռ Կ. Պոլիսը ոչ թե քննարկում, այլ գործում էր:

1916 թ. մարտին Ա. Նուրին հեռագրեց ՆԳ նախարարությանը. «Ստացուած տեղեկագիրներէ կը հասկցուի, որ մինչեւ հիմա Պապի եւ Մեսքենէի չուրջը՝ 35.000, Հալէպի առաքման վայրը (Գաթմա)՝ 10.000, Տիբիսի, Աբու Հարթմարի եւ Համայի շրջանակին մէջ՝ 20.000, Ռաս-ուլ-Այնի մէջ՝ 35.000, ընդամենը՝ 95.000 հայեր այլեայլ պատճառներէ մեռած են»[2]:

Եթե հավատանք այս և գաղթականական ծառայության՝ շրջանառության մեջ դրած մյուս թվերին, ապա ստացվում է, որ 1916 թ. մայիս-հունիս ամիսներին Սիրիայում և Միջագետքում ոչնչացվել է չուրջ 400.000 հայ:

Աղանայից Մամուրե ընկած տարածքի շատ գյուղեր լրիվ դատարկ էին: Մամուրեում հայերի վիթխարի ճամբարներ կային: Եթե որևէ մեկը նստեր Էնթիլլի տներից մեկում, պատուհանից կտեսներ փողոցով օր ու գիշեր անցնող տղամարդկանց, կանանց ու երեխաների կարավաններ: Բոլորը հետիոտն էին, փոխադրական միջոցներ գրեթե չկային: Բռնագաղթվածները մուրում էին միայն սննդամթերք, դրամ չէին վերցնում: Հայերի ամբողջ ունեցվածքը նրանց մեջքին էր: Կանայք գրկած տանում էին փոքր երեխաներին, ավելի մեծ երեխաները ո՛չ միայն ոտով էին գնում, այլև չալակած ինչ-որ բաներ էին տանում:

Արժեք ունեցող ամեն ինչ, մասնավորապես անասունները, նրանցից գնել կամ խլել էին ժանդարմները, սպաներն ու մահմեդական բնակչությունը: Մի բարձրաստիճան սպա խոստովանեց, թե հարստանալու համար ավելի հարմար պահ լինել չի կարող և ով դա չօգտագործի՝ հիմար է:

Հալեպը լեփ-լեցուն էր գաղթականներով: Նրանց վիճակը ողբալի էր. հիմնականում ապրում էին բաց երկնքի տակ: Սկսվեցին համաճարակները՝ դիզենտերիա, տիֆ, բծավոր տիֆ: Վարակն ընդգրկեց նաև քաղաքի բնակիչներին: Հիվանդ հայերին որևէ օգնության ցույց չէր տրվում: «Մեռածներին ու կենդանիներին թողնում էին հատակին՝ սեփական կղկղանքի մեջ»: Եթե առաջ դիակներ տեղափոխող մեկ սայլ կար, ապա չուտով դրանց թիվը 10-ի հասավ:

---

[1] АВПР, Политархив, д. 3493, л. 14, 15, 28.

[2] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 169:

Սեպտեմբերին քաղաքում մեռավ 3900 հայ, ամեն օր մեռնում էր մինչև 200 հոգի: Մեռածներին տեղափոխում էին ինչ-որ տեղ և օրեր չարունակ թողնում էին առանց թաղելու:

Համաճարակի առաջն առնելու համար իշխանությունները որոշեցին հայերին անհապաղ հանել Հալեպից, նոր եկողներին թույլ չտալ քաղաքում կանգ առնել, անգամ ջուր խմել: Հյուծված մարդիկ, մասնավորապես ծերերն ու երեխաները, ընկնում էին ու մեռնում: Ռաս-ուլ-Այն տանող երկաթուղու կողքին մի օրում թաղեցին 200 հոգու: Կանանց մի խումբ լրիվ մերկ էր, փոքրիկ երեխաներին լքել էին անապատում[1]:

Հաճըն, Շիրի, Ալաբիստան, Քոքջանի, Թաքփոլյակ, Զեյթուն և Ալաբաշ քաղաքների ու ավանների, ինչպես նաև Կափեն, Սիվիջ Ֆոնուզ և նաև Ֆընտրճագ, Լափաշլի, Դերտել և այլ բնակավայրերի բնակիչներին հանեցին իրենց բնակավայրերից և խմբերով ուղարկեցին անապատ, չնայած նրանց խոստացել էին ռազմական նկատառումներով պարզ վերաբնակեցում: «Մոսուլի մերձակայքում Բաղդադի երկաթուղու վրա գտնվող Թել-Էրմեն գյուղում հայ բնակիչները՝ թվով 5000 հոգի կոտորվեցին, բացառությամբ մի քանի կանանցից և երեխաներից, և նետվեցին ջրհորները կամ այրվեցին խարույկների վրա»[2]:

Գերմանացիներից մեկն անապատում հանդիպում է իր հայ ծանոթին, որը թափառում էր Եփրատի ափերին և փնտրում իր կնոջն ու երեխաներին: «Նմանների որքան ասես հնարավոր է հանդիպել Հալեպի շրջանում, քանի որ համոզված էին, թե իրենց մերձավորների և ազգակիցների մասին այնտեղ կարելի էր տեղեկություններ ստանալ: Մի ամբողջ ամիս Եփրատի հոսանքով լողում էին հայերի դիակները, շատ հաճախ երկու-երեքական և մինչև վեց հոգի իրարու կապված: Դիակներից շատերն այլանդակված էին: Թուրքական կառավարության ներկայացուցիչներն արգելում են դրանք թաղել...»[3]:

Ափ նետված դիակները բաժին են դառնում շներին և վայրի գազաններին:

Բաղդադի երկաթուղու ծառայողներից մեկը պատմել է, որ «Բիրեջիկի բոլոր բանտերը օրվա ընթացքում լցվում էին հայերով, իսկ գիշերը դատարկվում էին՝ ձերբակալածներին նետում էին Եփրատ»: «Գերմանական սպան Դիարբեքիրի և Ուրարի արանքում տեսել է շատ դիակներ, առանց թաղելու»[4]:

Մի կին տեսնելով, որ հարազատ երեխան մեռնում է քաղցից, նետվեց Եփրատը:

Համամում կար 1000 վրան: Դրանում բնակվողները զանգվածաբար սովամահ էին լինում: Մարդիկ կռվում էին մորթված անասունների հոսող արյան համար, հավաքում էին աղբի մեջ եղած ոսկորները, սատկած անասունների ու մեռած մարդկանց միս ուտում:

Սարգայում նույնպես ամեն օր մեծ թվով մարդիկ էին մեռնում քաղցից: Գերեզմանափորները մշտապես ծանրաբեռնված էին: Շուկայում, փողոցներում

---

[1] Konst. /Ankara 97, Ab. 9442.

[2] "Армянский вестник", 1916, № 35.

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

տիրապետողը ողբի ձայներն էին: Երեխաները Թրիքի կայտերում քջուջ էին անում[1]:

Ռեսլերն 1916 թ. հուլիսին գրում է, որ Բաղդադի երկաթուղու շինարարության վրա աշխատող հայերը Ադանայից ուղարկվեցին Մարաշ, Այնթապ, Բիրեջիկ և Ուրֆա: 1916 թ. հունիսի 16-ին ժանդարմները, հաշվի չառնելով տարիքը, սեռն ու առողջական վիճակը, բռնագաղթվածներին գավազանի հարվածների տակ տարան մինչև Բուլանըխ (Բախչե), որն արդեն լիքն էր Քելլերից, Յարբաշից, Այրանից և այլ վայրերից եկած բանվորներով: Հետո խզակոթի հարվածներով նրանց քշեցին 200 կիլոմետր մինչև Զակլիսորլու, Բիրեջիկ, Ուրֆա և Կարասու: Մարաշում նրանցից 70 հոգի գնդակահարվեց: Կեղտոտ ջուրը գաղթականներին վաճառում էին աներևակայելի թանկ գներով, թույլ չէին տալիս որևէ մեկից օգնություն ստանալ: Այդ քաղցած ու ծարավ զանգվածին ծեծելով հասցրեցին Քարաքյուչուկի[2]:

Մետերնիխը 1916 թ. հուլիսին գրեց, որ արևելյան նահանգներում հայերի հետապնդումները վերջին փուլում են: «Ներկայումս Թուրքական կառավարությունը պատրաստվում է տարալուծել և ցաք ու ցրիվ անել հայերի վերջին խմբերը»:

Խոսքը վերաբերում էր Հյուսիսային Սիրիայի (Մարաշ, Հալեպ, Ռաս-ուլ-Այն), ինչպես նաև Փոքր Ասիայի մի քանի խոշոր քաղաքների հայերին, որոնք այդ վայրերի բնակիչներ են կամ դրանցում հայտնվել էին տեղահանման հետևանքով: Նրանց մի մասին քշում էին Միջագետք, իսկ մյուս մասին՝ իսլամացնում:

Ռաս-ուլ-Այնի համակենտրոնացման ճամբարում եղած 2000 ձերբակալվածները Դեր Զոր փոխադրվելիս հարձակման ենթարկվեցին և ոչնչացվեցին:

1916 թ. առաջին կեսը ո՛չ միայն տարագրվածների զանգվածային բնաջնջման, այլև կայսրության այլևայլ բնակավայրերում ինչ-ինչ հանգամանքներում ու պատճառներով տարագրության չենթարկված կամ դրանից խույս տված հայության վերջին խլյակների հայտնաբերման ու տարագրման շրջանն էր: Մարաշում չխնայեցին անգամ ՆԳ նախարարության հատուկ թողտվությունն ունեցողներին: Դիարբեքիրի վալի Ռեշիդ բեյը Անկարայում փնտրում էր վերջին հային՝ աքսորելու համար: Նույն բանն էր կատարվում Էսքիշեհիրում:

Այս փուլում, սակայն առաջին տեղը դուրս եկավ բռնի կրոնափոխությունը:

Գերմանիայի հյուպատոս Լոյտվեդը Դամասկոսից հայտնում էր. «Բոլոր հայերին այս կամ այն չափով հարկադրում են մահմեդականանալ, Դերաայում 149 ընտանիք իսլամացել է, միայն մեկը հավատարիմ մնաց քրիստոնեությանը»:

Հայերի բռնի մահմեդականացումը արտաքուստ նման չէր կրոնական մոլեռանդության վրա հիմնված գործողության: Երիտթուրք պարագլուխներին խորթ էր կրոնական զգացմունքը: Բայց նաև իրողություն է, որ իսկական օս-

---

[1] R 14093, Ab. 2196916.

[2] Konst. /Ankara 101, Ab. 11 6266.

մանցի հայրենասեր երևալու համար, ամենից առաջ պահանջվում էր իսլամին հավատարիմ լինելու հավաստիք: Նման մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ նույնացվում էին հավատն ու ազգությունը: Համենայն դեպս, Թուրքերի շրջանում դա համոզմունք էր, որին հակասող կամ հակադրվող պաշտոնական և ոչ-պաշտոնական պնդումները կոչված էին թաքցնելու իրերի իսկական վիճակը:

Սակայն նաև ակնհայտ է, որ հայերի բնաջնջման քաղաքականությունը հենվում էր ո՛չ թե կրոնական մոլեռանդության վրա, այլ խնդիր ուներ հայերին ոչնչացնելուց բացի ձուլելու կայսրության մահմեդական բնակչության մեջ[1]:

Ցեղասպանության և մահմեդական կրոնի առնչությունները վատ են ուսումնասիրված: Արտաքուստ անհասկանալի, հակասական թվացող շատ երևույթներ, մանավանդ օսմանյան կառավարության հակահայկական քաղաքականության մի քանի դրսևորումներ (որոշ տեղերում մահմեդականացածին չէին բռնագաղթում, ուրիշ տեղերում՝ դա հաշվի չէր առնվում, տեղեր եղան, որտեղ կաթոլիկներն ու բողոքականները չտեղահանվեցին և այլն), հիմքում կոչված էին ծառայելու նույն խնդրին՝ կայսրության հայաթափմանը: Կրոնական գործոնը որպես վարագույր էր գործածվում ցեղասպանությունից նաև տնտեսական, քաղաքական ու քարոզչական շահ ստանալու համար: Կրոնափոխությունը կանանց ու աղջիկներին շատ հաճախ փրկում էր ոչնչանալուց, որովհետև Թուրքական հարեմը մեծ թվով կանանց, իսկ Թուրք ցեղը՝ բարեփոխման կարիք ունեին: Հայ երեխաների կյանքը կրոնափոխությունը փրկում էր, որովհետև Թուրքիան աշխատող ձեռքի, այն էլ ձրի աշխատող ձեռքի, մեծ պահանջ ուներ: Պատերազմում Թուրքերը կորցրին հիմնականում արական սեռի մոտ 2.000.000 մարդ:

Թուրքերը մեծ թվով մասնագետների հույժ կարիք ունեին, հետևաբար հայ մասնագետներից շատերին հարկադրեցին մահմեդականանալ (ինչը միաժամանակ նշանակում էր Թուրքանալ) և նրանց օգտագործեցին: Ահա՛ բազում օրինակներից մեկը:

Կեսարիայի մութեսարիֆը 1916 թ. հունվարի 31-ին հայտարարեց. «Ով ընդունի իսլամական կրոնը՝ կներվի, ով չի ընդունի՝ կուղարկենք Սրվազ (այսինքն դեպի մահ): 1916 թ. փետրվարին Հալեպում հայկական բանվորական գումարտակը ստիպված հավատափոխվեց: Քաղաքի ոստիկանները հայերին համոզում էին. «Աքսորից ազատվելու միակ փրկությունը կրոնափոխվելն է»: 1916 թ. հունիսին, վերաբնակված հայերին՝ 15 հազարը Հաուրանում, 3-4 հազարը Կերեքում, պարտադրեցին ընդունել իսլամական կրոնը: Սրվազում մնացած բոլոր ճանապարհաշինարարական և սակրավորական գնդերի հայերին, արհեստավորական դպրոցների բոլոր հույներին արգելափակեցին հայկական եկեղեցում: Հույները և մահմեդականություն ընդունած հայերն ազատվում էին փայտով կրկնահարվածներից, մյուսներին «համոզում էին» փոխել իրենց կրոնը: «Մի՛ հրաժարվեք, թե չէ կաքսորենք»,- սպառնում էին Թուրք պաշտոնատարները:

Նրանք ո՛չ միայն համոզում, սպառնում էին, այլև բռնությամբ կրոնափո-

---

[1] Lepsius J., նշվ. աշխ., փաստ. № 287:

խում: Շապին-Կարահիսար քաղաքում մնացած բոլոր հայերը կրոնափոխվեցին: Սրվագում Վարդավառի օրը՝ հուլիսի 24-ին, զինվորական ծառայության մեջ գտնվող հայ բժիշկները ահ ու սարսափի ճնշման տակ ստիպված իսլամացան: Բժշկական ծառայության մի սպա, որը հրաժարվեց իսլամանալ, բանտ նետվեց: Համայում աքսորյալները զանգվածային բռնությունների ենթարկվեցին իսլամը չընդունելու համար:

1916 թ. հուլիսի 23-ին գերմանացի դիվանագետ Վերտը Սեբաստիայից հեռագրեց, թե «այսօր բոլոր աստիճանի հայ բժիշկները սպառնալիքների հարկադրմամբ ընդունեցին իսլամությունը»:

Անկարայի կաթոլիկ հայերը 1917 թ. հունիսին զազրելի ճնշումների ենթարկվեցին իսլամական կրոնից հրաժարվելու համար:

Կրոնափոխությունը կատարվում էր բյուրոկրատական ձևականությունները խստագույնս պահպանելու եղանակով՝ դիմում տալ, համաձայնություն ստանալ, անվանափոխություն, թլպատում: Եվ այսպես շարունակ: «Սև ծովից մինչև Սիրիա քրիստոնեական անունները ջնջվեցին, եկեղեցիները փակվեցին, դպրոցները դատարկվեցին, հոգևորականները աքսորվեցին կամ կոտորվեցին: Միջերկրականի ծովափնյա քաղաքներն անտեսվեցին, իսկ ամբողջ Անատոլիան իսլամացվեց: Քրիստոնեական անունները ցուցակներից ջնջվեցին՝ փոխարինվելով մահմեդական անուններով»:

Արտաքուստ տարօրինակ, բայց էությամբ տրամաբանական էր կրոնափոխության թուրքական քաղաքականության հանդեպ պաշտոնական Բեռլինի դիրքորոշումը: 1915 թ. նոյեմբերի 12-ին Բեթման Հոլվեգը պատասխանելով ավետարանական եկեղեցու հիսուն ներկայացուցիչների հոկտեմբերի 15-ի և Գերմանիայի կաթոլիկների կենտրոնական միսիոներական հանձնաժողովի հոկտեմբերի 29-ի դիմումներին, գրում է. «Կայսերական կառավարությունն ինչպես մինչև այժմ, այնպես էլ հետագայում, մշտապես իր առաջնահերթ պարտականություններից մեկն է համարում, որպեսզի քրիստոնյա ժողովրդին իր հավատքի պատճառով չհետապնդեն: Գերմանիայի քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ ես, ղեկավարվելով այդ սկզբունքով, ամեն հնարավորը կանեմ, որպեսզի հաշվի առնեմ Ձեր արտահայտած մտքերն ու ցանկությունները»:

Երբ 1916 թ. հունվարին կրոնափոխությունների վերաբերյալ բազմաթիվ լուրեր ստացվեցին, Մետերնիխը արտաքին գործերի նախարար Խալիլ բեյին նոր հուշագիր ուղարկեց: Նախարարը նորից կտրականապես ժխտեց, «որ հայերի բռնի կրոնափոխությունները կատարվում են նշված ծավալով: Ստորին պաշտոնատար անձանց կողմից չարաշահումների դեպքերի համար մեղավորները խստորեն պատժվել են»: Հունվարի 27-ին դեսպանը զեկուցում է կանցլերին. «Նախարարների հավաստիացումները հակասում են այն բոլոր հաղորդումներին, որոնք կայսերական դեսպանությունն անընդհատ ստանում է տարբեր տեղերից և միմյանցից անկախ աղբյուրներից»:

«Ինչպես Խալիլ բեյը, այնպես էլ Թալեաթ բեյը նորից վստահեցնում են,- տեղյակ է պահում Մետերնիխը,- որ նրանք հեռու են հայ քրիստոնյա ազգաբնակչության դեմ կատարած բռնություններից, որ իբրև թե ստորադաս իշխանավորներից նման անկարգություններ կատարողները խիստ պատժվել են»:

Մարտին և ապրիլի սկզբին դարձյալ հաղորդագրություններ ստացվեցին, որ հատկապես Այնթապում, Կեսարիայում, Հալեպում և Ադրիանապոլսում չտարագրված քրիստոնյա հայերի իսլամացումը կատարվում էր Թուրք պաշտոնատարների կողմից: «Ես այդ մասին տեղյակ պահեցի բարձրագույն իշխանությանը,– գրում է դեսպանը,– և համառորեն խնդրեցի դադարեցնել դրանք: Խալիլ բեյը դարձյալ ինձ հավաստիացրեց, որ Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարությանը որևէ բան հայտնի չէ այդ բռնությունների մասին: Իր գործընկերոջ՝ Թալեաթ բեյի, հետ խորհրդակցելուց հետո նա հայտարարեց, որ խիստ կարգադրություն է արվել տեղական պաշտոնատարներին՝ դադարեցնելու հայերի բռնի իսլամացումը»: Հուլիսի 8-ին դեսպանը ստիպված էր մի անգամ ևս հաստատել, որ չնայած «պաշտոնական խոստումներին և թվացյալ կարգադրություններին, շարունակվում է հայերի իսլամացումը: Դրա դեմ մեր առարկություններն անօգուտ են»: 1916 թ. հուլիսի 16-ի զեկույցում Մետերնիխը եզրահանգում է. «Չնայած պաշտոնական ժխտումներին, հայերի հետապնդման այս վերջին փուլում իսլամացումը մեծ դեր խաղաց»: Քանի որ բանավոր առարկությունները որևէ ազդեցություն չէին ունենում, դեսպանությունը Բարձր Դռանն է հանձնում 1917 թ. հունվարի 4-ի հուշագիրը, որպես բողոք՝ բռնի կրոնափոխության դեմ:

Արաբ մահմեդականները, համենայն դեպս նրանց մեծամասնությունը, համաձայն չէին թուրքերի գործողությունների հետ: Բեյրութի շրջանում, վկայում է Ռեսլերը, թեև նույնպես լայն տարածում գտավ իսլամական դավանանքի «ընդունումը», բայց հայերի վիճակը համեմատաբար բարվոք էր: «Բարվոք» բառը պետք է հասկանալ պայմանականորեն: Տարագիրների վիճակն ամենուրեք, այդ թվում նաև Լիբանանում ողբալի էր: Պարսիկ նշանավոր գրող Ալի Ջամալզադեն գրում է, որ այդ շրջանում «թուրքերը հսկայական սպանդանոց էին ստեղծել հայերի համար»:

Մեծ մասամբ այդ սպանդանոցների հեղինակները իրոք թուրքերն էին և արաբների ճնշող մեծամասնությունը դեմ էր նրանց: Մի եգիպտացի գրում է. «Երբ դավաղ Մահմուդի հետ թողեցինք սպանությունների վայրը, նա ամբողջապես ապշած էր և ինձ ասաց, թե «Ամենազազրելի արաբ մահմեդականն իսկ նման ստորություն չի կատարի: Նման բան ի վիճակի են կատարել միայն քրդերն ու թուրքերը...»: Պահեստի բանվոր Աբդել Ղանին ասաց. «կանանց ու երեխաներին, այդպես վերաբերող մարդիկ, անաստված են»: Արաբ բանվորները պատրաստակամություն էին հանդես բերում հայերին օգնելու գործում, նրանցից ոմանք հայ բռնագաղթվածների հետ կիսում էին իրենց սննդի բաժինը»[1]:

Եվրոպացի դիվանագետները համակարծիք էին, որ «չնայած հայերին բնաջնջելով կառավարությունը միայն ներքաղաքական նպատակներ էր հետապնդում, կոտորածները, համենայն դեպս, կրում էին քրիստոնյաներին հետապնդելու չատ գծեր[2]:

Իհարկե, չի կարելի նաև մերժել մահմեդական կրոնի մեծ դերը կայսրու-

---

[1] R 14090, Ab. 2889.

[2] Նույն տեղում:

թյան ոչ-քրիստոնյա զանգվածների, առաջին հերթին թուրքերի, այլամերժ մոլեռանդությունը բորբոքելու գործում:

Թուրքին, քրդին, չերքեզին կոչ էին անում ոչնչացնել հայերին ու հույներին: Անվիճելի է, որ այդ կոչն ավելի մեծ արձագանք էր ունենում, եթե դա որպես Ղուրանի, Ալլահի պահանջ էր ներկայացվում:

Հալեպում տարածվեց սրբազան պատերազմին նվիրված մի գրքույկ, որի 10-րդ էջում գրված է՝ հարազատ մահմեդական, հետևաբար նաև փրկության արժանի մահմեդական չի համարվում նա, ով առնվազն չորս քրիստոնյա չմեռցնի[1]:

Բացի դա, կրոնական գործոնը հայերի հանդեպ քաղաքականությանը ներարկում էր անհագ դաժանություն, որը շատ արագ համազգային, համամահմեդական բնույթ էր ձեռք բերում և դրսևորում էր արտակարգ ընդունակություններ մարդկանց խոշտանգելու ու ոչնչացնելու եղանակների հնարման գործում: Այդ եղանակների ընդգրկումները շատ մեծ էին՝ սկսած սպանության ամենաբազմազան ձևերից մինչև մեռցնելու բազմաթիվ միջոցները:

Կրոնափոխության խնդիրներին ծառայում էին նաև տարագրված հայերի հանդեպ բռնությունները, տնտեսական ճնշումները, հալածանքները:

Նիպագեն Հալեպի բռնագաղթվածների հիվանդանոց այցելելուց հետո գրեց. «Ոտաբոբիկ, սովահար փախստականները քրջերի մեջ էին, քնում էին ուղղակի գետնին, կամ լավագույն դեպքում, իրենց ունեցվածքի ողորմելի մնացորդների վրա...»[2]:

Վատ եղանակներից չպաշտպանված՝ ամառը անապատի կիզիչ արևից, ձմռանը քամուց, անձրևից ու ցրտից, ճանապարհի անասելի զրկանքներից հյուծված, վայրագ վերաբերմունքից, ամենադաժան խոշտանգումներից տանջահար տարագիրները մշտապես մահվան սարսափի տակ էին...

Եփրատի ափերին ցրված հայ ազգից մնացել էին միայն ծերեր, կանայք և երեխաներ[3]: Չնայած դրան՝ հայերը ձգտում էին ինչ-որ տեղ կանգ առնել, խաղաղ կյանքի անցնել: Նրանք Լիբանանի Անտիլիբանանյան լեռան ստորոտում հիմնեցին Այնճար գյուղը, ստեղծեցին ձկնաբուծական կայան: Մուսալեռցիները 4000 բնակիչ ունեցող գյուղ հիմնադրեցին Դամասկոսի շրջանում: Նրանք տնկեցին այդ մասերի խնձորի հանրահայտ այգիները:

Օ՛, ո՛չ: Թուրքերը հայի ոչ թե ապրելը, այլ՝ մեռնելն էին ուզում: Իսկ քանի որ աշխատանքն ապրեցնող է, ուստի կորչի՛ աշխատանքը: Եվ հայը, որտեղ էլ նա լիներ, առաջին հերթին, զրկվում էր աշխատելու հնարավորությունից:

Մի ընտանիք կարավանի կազմում,- պատմում է Մ. Նեղիմը,- «մինչև Հողէպ եկած էր քալելով, ձեռքէն խլեր, առեր էին ունեցած դրամն ու գոհարեղէնները, մայրն այնքան զգուեր է, որ Ուրֆա մտեր է Թիֆուոսուի բռնուողներուն յատկացեալ մէկ տունը, որպէսզի ինքն ու զաւակները վարակուին, մեռնին, ազատին»: Բայց, բարեբախտաբար, չեն վարակվել:

---

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 487

[2] АН Арм. ССР, Бюллетень, 1984, № 4 .

[3] Նույն տեղում:

«... Փաթթոցաւոր կրօնաւոր մը առեւանգեր եւ բռնաբարեր էր հայու մը երկու դուստրերը: Այդ պարագան այնքան յուսահատական տպաւորութիւն է գործեր իրենց մօր վրայ, որ խեղճ կինն իր անմեղ մանկիկով նետուեր է Եփրատ եւ խեղդուեր»[1]:

Շուրջ 20 աղջիկներ, պաշտպանելու համար իրենց «սրբութիւնը, անպատիւ ապրելէն գերադաս են համարեր պատիւով մեռնիլը եւ այս իսկ նպատակով նետուեր են Եփրատ ու մեռեր...»:

«Առեւտրական գործով գացեր էի Պեհեսնի,- պատմել է Թուրք պաշտոնատար Ասրմը,- վերադարձիս նաւակով եկայ: Մինչեւ Էպու Հիհրեյրէ գալս չկրցայ գաւաթ մը ջուր խմել, Եփրատը լեցուն էր մարդու դիակով, ութնական, տասնական չուաններով կապեր եւ նետեր են: Մեռելներուն մէջ կան կիներ եւ տղաքներ, ամէնուն ըսի, որ ձուկ չուտեն քանի մը տարի: Չեմ կրնար նկարագրել ոստիկաններու գործած անզգամութիւնները. դրամ պահանջելով չարաչար կը ծեծէին կոր կիները եւ թիւն ու համարը չկար ծեծի ներքեւ մեռնողներուն: Անգամ մը կը տեսնեն կնոջ մը երկու ոսկի կլլելը, ասոր վրայ, երբ դրամ չեն գտներ, կը սկսին ճեղքել կիներու փորը եւ կատարեալ անտարբերութեամբ կը քննեն անոնց ստամոքսներն ու աղիքները»[2]:

Մի գիշեր տուն էի վերադառնամ: Հալեպի «բանուկ պողոտաներից,- չարունակում է Մ. Նեղիմը,- Պապ-էլ-Ֆարաճի վրայ հանդիպեցայ 19 մեռելներու, ասոնց ամէնուն մահացուցեր էին անօթութիւնը, ճամբու տուայտանքը եւ ոստիկանի ճոկանը: Ամեն առաւօտ քաղաքին մէջ կարգով քաղաքապետութեան կառքերը կը ցրուէին եւ մեռել կը հաւաքէին... Բացուած փոսերուն մէջ կը նետէին զանոնք, եղածին պէս, վրայէ վրայ: Գտնուեցան կենդանի ըլլալով հանդերձ, հոգիներէն զզուած յուսալքուածներ, որ ինքզինքնին նետեցին այս փոսերուն մէջ եւ ողջ-ողջ թաղուեցան»[3]:

«Տէր Զօր ղրկուելու համար,- վկայում է Մ. Նեղիմը,- Հալէպ բերուած տարագրեալները, Գաղլրք ըսուած քաղաքիս եզերքը տեղ մը կը բանտարկուէին: Գաղլրքը յար եւ նման էր այն տեղերուն, ուր մսավաճառները ժամանակաւոր կերպով կը բանտարկեն իրենց ոչխարները՝ սպանդանոց առաջնորդելե առաջ: Գաղլրք մտնող թշուառը յոյսը կտրելու էր կեանքէն:

Բազմաթիւ հայ կիներ եւ աղջիկներ կային Հալէպի գիւղերուն մէջ, մանաւանդ Ազազ, Գաթմա գիւղերը, որոնք Քիլիսին կը պատկանին, նշանաւոր են հանդիսացած իրենց մէջ գործուած ոճիրներով, կ'իմանայի թէ չատ կիներ կը գտնուէին Մեսքենէ, Էպու Հարեյրէ, Համամ և Սեպքայի կողմերը վրանաբնակ արաբներու քով, ասոնք մաս մը հաւաքուեցան զինադադարէն վերջը: Մեծագոյն մասը մնաց հոն»[4]:

Ալի Ջամալզադեն պատերազմի տարիներին Կ. Պոլսից մեկնում է Հալեպ և ապա վերադառնում Կ. Պոլիս: Նրա նոթագրությունները 1971 թ. տպագրվեցին Թեհրանի «Հուր» ամսագրում:

---

[1] **Նեղիմ Մ.**, նշվ աշխ., էջ 97:
[2] Նույն տեղում, էջ 98:
[3] Նույն տեղում, էջ 99:
[4] Նույն տեղում, էջ 13:

Գիշերեցի մի գյուղում, պատմում է Ջամալզադեն, առավոտյան վեր թռա աղմուկից, պարզվեց, որ «Թուրք ոստիկանները մի խումբ հայերի բերել են տանջամահ անելու... Հենց այդտեղից, սկսած այդ պահից ես ականատես եղա մի չարք դաժանաբարո տանջանքների ու խոշտանգումների, որոնք հայերի նկատմամբ գործադրում էին Թուրք զինվորները և որի հետևանքը եղավ միլիոնավոր հայերի ջարդը...

Առաջին իսկ իջևանում հանդիպեցինք հայերի բազմաթիվ խմբերի, որոնց սպառազեն հեծյալ Թուրք ոստիկանները քշում էին ջարդելու: Դա մի սոսկալի տեսարան էր և ցնցող տպավորություն թողեց, սակայն հետզհետե սովորեցինք դրան և նույնիսկ աչխատում էինք չնայել... Հարյուրավոր հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք արդեն անզոր էին քայլելու, մտրակի և զենքի ուժով անխնա քշում էին առաջ: Տղամարդկանց մեջ երիտասարդներ չկային: Նրանց զինվորագրելու կեղծ նպատակով հավաքել ու կոտորել էին:

Հայ աղջիկները, Թուրքի կամ արաբի ձեռքը չընկնելու վախից, խուզել էին մազերը: Նրանք զանազան թելերից ու լաթի կտորներից և նույնիսկ թղթից խղճուկ ոտնամաններ էին սարքել իրենց համար, որոնք երեխայի օրորոց էին հիչեցնում:

Խմբից հետ մնացողը, ինչ էլ լիներ դրա պատճառը՝ հոգնածություն, ուժասպառություն կամ բնական պահանջի անհրաժեչտություն, միևնույնն էր, տեղն ու տեղը սպանվում էր: Հարազատների լացն ու կոծը անօգուտ էին:

Հետո լսեցինք, որ այդ կողմերի երիտասարդ բնակիչներից ոմանք, իրենց կրքերին հագուրդ տալու համար, պղծել էին նույնիսկ մեռած կամ հոգեվարքի մեջ գտնվող հայ կանանց ու աղջիկների պատիվը:

Եփրատի արևմտյան ափով ձգված ճանապարհից, որը մերթ մոտենում էր գետին, մերթ հեռանում, ամեն օր տեսնում էինք բազմաթիվ հայերի դիակներ, որոնց տանում էր ջրի հոսանքը:

... Մի անգամ ոչխար գնեցինք ու այն մորթելուց հետո փորոտիքը թափեցինք քիչ հեռու, որտեղ Թուրք ոստիկանները մի խումբ հայեր էին բերել:

Երբ մենք զբաղված էինք ուտելիքի պատրաստությամբ, հանկարծ նկատեցինք, թե ինչպես մի խումբ հայեր վրա պրծած և ագահաբար ուտում էին մեր դեն նետած ոչխարի փորոտիքը: Դա մի տեսարան էր, որ ես երբեք չեմ կարող մոռանալ:

Մի ուրիչ օր էլ պատահաբար գիչերեցինք մի վայրում, որտեղ հայերի մի մեծ կարավան Թուրքերի հսկողությամբ հանգստանում էր: Գունատ ու ոսկրացած դեմքով մի հայ կին մոտեցավ և տալով ալմաստե ակներով երկու մատանի, ֆրանսերեն ասաց. «Ի սեր Աստուծո, ա՛ռ այս ալմաստները և փոխարենը սովից մահամերձ երեխաներիս համար մի քիչ ուտելիք տուր...»:

Մի ծերունի էլ մոտեցավ չվեղ սպաներին ... և ֆրանսերեն ասաց. «Տե՛ր Աստված, ե՞րբ պիտի վերջանա այս արյունահեղ պատերազմը»: Սպաներից մեկը պատասխանեց. «Սա ոչ թե պատերազմ է, այլ բնաջնջում և ամբողջական ոչնչացում...»: Դասախոս-մաթեմատիկոս էր: Զգիտեր ո՞ւր են տարել իր որդիներին: Միայն համոզված էր, որ նրանք այլևս կենդանի չեն: Իսկ նրա երկու աղջիկները, գլուխները ածիլված, հողն էին փորփրում, որպեսզի բույսի արմատներ գտնեին: Նրանք կիսամեռ վիճակում էին...

Հալեպում իջևանեցինք հայի պատկանող «Պարոն» հյուրանոցում, որի տիրոջը ձերբակալեցին ու տարան Բեյրութի կողմերը...

Եվ այսպես, ես զարհուրելի օրեր անցկացրեցի: Օրեր, որոնք մղձավանջի պես ծանրացել են հոգուս վրա»[1]:

Հարկ է նկատի ունենալ նաև այն, որ հայերի ջարդերի կազմակերպման «պատասխանատու» օղակներում աշխատելու համար ընտրված էին բնավորությամբ առավել դաժան անձինք: Դրանցից մեկը Հալեպի գաղթականական տնօրինության փոխտնօրենի անմիջական օգնական Էյուբն էր, որին Նայիմ բեյը ներկայացնում է որպես «արյունառուչտ» մարդասպան: Էյուբը հսկայական հարստություն էր կուտակել՝ չարաշահելով իր պաշտոնական դիրքը՝ դա համարելով անձնապես հարստանալու համար հոյակապ հնարավորություն[2]:

Նույն այդ Էյուբի և փոխտնօրեն Ա. Նուրիի մասին Մ. Նեդիմը գրում է, որ երկուսն էլ «զարհուրանք կը սփռէին մէջտեղը: Որ հայ, որ հանդիպեր ասոնց, իր մահը գտած կը համարէր»[3]:

Ալեքսանդրետում Գերմանիայի փոխհյուպատոսին Էյուբը հայտնել էր, որ տեղահանությունների նպատակն էր «ջնջել հայի անունը»: Նա մերժեց գաղթականներին օգնություն տրամադրելու հյուպատոսի առաջարկը: Ռեոսլերը զեկուցել է Ստամբուլ, որ Էյուբը հատուկ նպատակով է ուղարկվել Հալեպ՝ իրականացնելու «կառավարության հակահայկական քաղաքականությունը և հանձնաժողովի կազմից հանելու կուսակալ Ջելալին, որն ավելի մեղմ քաղաքականության կողմնակից էր»[4]: Ալեքսանդրետի փոխհյուպատոսը գրում է, թե «մի բարձրաստիճան զինվորական» իրեն հայտնել է, որ մինչև 1915 թվականի հոկտեմբերի կեսերը միայն Հալեպից մոտ 300 հազար հայ է տեղահանվել և ուղարկվել դեպի հարավ և հարավ-արևելք: Փոխհյուպատոսը հավասարության նշան է դնում «տեղահանության» և «բնաջնջման» միջև[5]:

«Կադրերի ընտրության» գործում նկատի էր առնվում նաև ընչաքաղցությունը՝ հարկավոր էին, մարդիկ, որոնք հանուն ինչ-որ իրի կամ ինչ-որ քանակությամբ դրամի՝ չհապաղեին ոչնչացնել: Ղեկավարների այս հոգեբանությունն ու գործելակերպն անմիջապես դարձան «ընդհանուրի սեփականություն»: Որպես կանոն, ընչաքաղց մարդիկ դաժան են լինում:

Այս միտքը հաստատող մի օրինակ:

Էվերեկում Զեքին զենք հավաքելու պատրվակով երևելի բոլոր հայերին ձերբակալեց ու տանջեց: «Ոտքերը ֆալախկայի տակ ջարդուփշուր ընելէ ետք, որպէս թէ յեղափոխական գաղտնիքներ կորզելով, բոլորը կը ղրկուէին Կեսարիայի բանտ»[6]: Բայց որովհետև բանտում տեղ չկար, բանտարկյալների մի մասին տարան և ձորում սպանեցին: Իսկ բանտում համաճարակ էր; Բանտարկվածների ճնշող մեծամասնությունը քաղաքականությունից հեռու մար-

---

[1] «Վերածնված Հայաստան», 1990 թ., № 4:

[2] «International Journal of Middle East Studies», vol. 18, 1986, № 3.

[3] **Նեդիմ Մ.,** նշվ. աշխ., էջ 99:

[4] "International Journal"..., նույն տեղում:

[5] Նույն տեղում:

[6] **Եափուճեան Հ.,** նշվ. աշխ., էջ 187:

դիկ էին: Օրինակ՝ Կ. Զամչյանը, մեծահարուստ մարդ էր և երբեք քաղաքակա-նությունով չէր հետաքրքրվեր: Նրա հարստությանը տիրանալու համար ոստի-կանները թաքուն նրա տունը գենք են նետում, ապա տանտիրոջ ձեռքերը կա-պած պտույտ են տալիս փողոցներում ու գոչում՝ «Հայաստանի թագավորը ձերբակալված է»: Նա 20 ուրիշ հայի հետ կախաղան հանվեց:

Քերիմ Ռեֆին՝ Դեր Զորի Ռաս-ուլ-Այն անկախ գավառի գայմագամը, որն այդ պաշտոնում փոխարինել էր մեղմաբարո և մարդասեր Յուսուֆ Զիային, մի թուրք սպայի ասել է, որ իրեն ենթակա տարածքում հայ գաղթականների չա-րասյուների ոչնչացումը ի կատար է ածվել «համաձայն հրամանի»[1]: Օսմանյան բանակի երկու արաբ աստիճանավորներ ցուցմունք են տվել, որ տեսել են սպանված կանանց բազմաթիվ խանձված, մերկ դիակներ՝ լցված Ռաս-ուլ-Այնի ճանապարհների եզրերին: Մարու անունով մի արաբ ենթասպա նույնպես ականատես է եղել այդ տարածքներում զանգվածային ջարդերի տեսարան-ների[2]:

Լեփսիուսի «Տեղեկագրում» տեղ է գտել նաև հետևյալ նամակը՝ գրված Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը. «Մենք չենք ուզում կանգ առնել այն արյունահեղ սարսափների վրա, որոնցով սովորաբար սկսվում են հայերի տեղահանումները: Մենք չենք պատմի այն մասին, թե ինչպես հազա-րավոր տղամարդկանց առանձնացնելով, երբեմն նույնիսկ իրենց հարազատ-ների աչքերի առջև մորթում են, ոչ այն աղջիկների, կանանց և երեխաների մա-սին, որոնց բաժին ընկավ իրենց ուղեկցող պահակների և նրանց հանցակից-ների հասցրած անարգանքն ու խեղումը և որոնց մերկ դիակներն ընկած են ճանապարհների վրա, որտեղով անցնելու էին աքսորականների նորանոր խմբեր: Մենք չենք պատմի նաև այն աննկարագրելի դաժանությունների, ծա-րավի, քաղցի մասին, որոնք ոչնչացնում են կենդանի մնացածներին՝ մեծ մա-սամբ մինչև վերջը կողոպտված կանանց և որբերին, որոնք կմախք դարձած են հասնում այստեղ, որպեսզի հետո, վեցից կենդանի մնացած մեկը, նորից տե-ղահանվի և տառապանքների նույն ուղիով, առանց գոյության հնարավորու-թյան, քչվի անապատները, որ խպառ վերանա հայ ցեղը...

Դրա փոխարեն թույլ ենք տալիս մեզ լույս աշխարհ հանել այս ժողովրդի բնաջնջման զանգվածային թշվառությունից մի փոքր հատված, մի հատված, որը գտնվում է անմիջապես մեր դպրոցի կողքին և բաժանված է նրանից միայն մի նեղ նրբանցքով:

Դա մի հին, մեծ իջևանատուն է, որը թուրքական իշխանությունները տրամադրել են հայ տարագիրներին, հիմնականում հիվանդներին: Պետք է ենթադրել, որ դա հիվանդանոցի նման մի բան է: Ներս մտնենք նեղ մուտքով: Մի քանի նկուղներ լեփ-լեցուն են թշվառ, ուժասպառ կերպարանքներով, որոնք ցնցոտիների մեջ փաթաթված, մեկնվել են մերկ գետնին, լավագույն դեպքում՝ իրենց չարժական գույքի մի քանի խղճուկ մնացորդների վրա: Կանայք և երեխաներ, երբեմն՝ ծերունիներ: Տղամարդ չկա:

---

[1] «International Journal...», Տե՛ս Dadrian V. «The Naim-Antonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians. The Anatomy of a Genocide», pp. 311-360.

[2] Նույն տեղում:

Անցնելով կեղտով ծածկված բակի միջով՝ մտնում ենք նկուղը: Մի դյուժին երեխա, կիսաքաղց, անզգա, նրանցից մի քանիսը մահամերձ, գուցե արդեն մահացած: Որևէ մեկը նրանց մասին հոգ չի տանում:

Մութ որմնախորշից տղայի մի կիսանեխած դիակ են դուրս բերում, որի վրա ուշադրություն էին դարձրել միայն նեխածության հոտի պատճառով: Սրանք այն որբերն են, որոնց մայրերը վերջին օրերին մահացել են այս նկուղներում: Որևէ բժիշկ չի երևում, որևէ դեղ թեթևացում չի բերում: Նրանք ևս դատապարտված են սարսափելի մահվան, նրանք սովամահ են լինելու: Կառավարությունը «հիվանդանոցին» մատակարարում է ոսպ, բլղուր կամ զինվորական սև հաց: Հաճախ չաբաթներ, ամիսներ չարունակ, չոգին, առանց ջրի դեպի հարավ քչված այս արարածների խաթարված ստամոքսները այդպիսի սննդի չեն դիմանում, որն առանց այդ էլ չէր բավարարում: Հետևում են դիզենտերիան, հյուծվածությունը, տիֆը:

Երևում են դագաղներով բեռնակիրներ: Վերջին օրերին մահացածների մի մասը դրվում է դագաղների մեջ, տարվում ամենամոտ եկեղեցու բակը և դատարկվում ընդհանուր գերեզմանոցում:

Դագաղներով տրանսպորտը (դրանք աղբ կրելու սայլերն են) չի բավականացնում: Զէ՞ որ այստեղ հասած կենդանի մնացածներից օրական մահանում է 100-150 հոգի: Դիակները դուրս են բերվում բեռնասայլակներով, իրար վրա լցված, մի բրեզենտով ծածկված: Ոտքեր, այստեղ-այնտեղ կախված գլուխները ճոճվում են փողոցով անցնող սայլակի ճռնչոցին համաչափ:

Մենք՝ գերմանացի ուսուցիչներս, այս տեսարանների թատերաբեմի անմիջապես կողքին ստիպված ենք մեր աշակերտներին գերմանական մշակույթ սովորեցնել: Դպրոց գալիս նրանք, հավանաբար, հանդիպել են դիակներով լի սայլակի կամ նկուղի բաց պատուհանից լսել թշվառ զոհերի տնքոցները, կամ էլ տեսել են խղճուկ կերպարանքները, որոնք նեղ փողոցով ներքև են սողացել օդ շնչելու համար, հաց են մուրացել իրենցից, և այժմ սաստիկ հյուծվածության պատճառով ի վիճակի չլինելով վերադառնալ կացարան-նկուղ, մահամերձ, ճանճերով ծածկված ընկած են փողոցում»[1]:

1915 թ. հուլիսի 9-ին Վանգենհայմը գրեց Բեռլին. «Թել Արմենում և մերձակա գյուղերում մեկ չաբաթ առաջ քրդերը ջարդեր են իրականացրել: Մեծ եկեղեցիներն ավերված են: Ինքը՝ Միկուչն է տեսել 200 դիակ: Ոստիկանությունն ու ժանդարմները այդ դաժանությունների առաջն առնելու համար բան չեն արել և, ինչպես երևում է, մասնակցել են ջարդերին:

Նիսիբինի և Թել Արմենի միջև լրացուցիչ ջոկատները (բանտերից ազատված հանցագործները) իրենց սպաների հետ փայլող աչքերով պատմել են, թե ինչպես են ամբողջովին կողոպտել ջարդի ենթարկված և քարուքանդ արված մի հայկական գյուղ:

Ջերաբլուսում իրար կապված բազմաթիվ դիակներ Եփրատը քշել-տարել է»[2]:

---

[1] Lepsius J., Bericht..., s. 165.

[2] Նույն տեղում, փաստ. № 437:

Տասն օր անց, հուլիսի 27-ին նա գրեց կանցլեր Բետման Հոլվեգին. «Ձերդ գերազանցություն, ես կուզենայի հայտնել, թե թուրքական կառավարությունն ինչպիսի՜ անմարդկային ձևով է իրականացնում բռնությունները հայերի դեմ»[1]:

Հալեպով անցած կարավաններից որոշ կանայք իրենց երեխաներին ծածկոցների մեջ փաթաթել և այնտեղ են թողել, որպեսզի չտանեն դեպի հավանական կամ հաստատ թշվառություն:

Բազմաթիվ կանայք ճանապարհին ծննդաբերել են, սաստիկ տառապել իրենց ուղեկցող թուրքերի և մյուսների դաժան վերաբերմունքից: Նրանք հարկադրված լքել են նորածիններին՝ նրանց թողել ճանապարհին:

Հայերի մի ուրիշ խումբ, որ Եփրատի արևելյան մասով անցնում էր Բաղդադի երկաթգծի երկայնքով, հիվանդացել է փորհարինքով... Հալեպում գտնվող տեղահանվածների շրջանում բռնկվել է տիֆի համաճարակ: Դեր Զորով անցած հայերի մի խումբ, հիվանդացել է ծաղկով; Կիզիչ արևի տակ հիվանդները սաստիկ տառապել են, նրանց համար որևէ օգնություն չի կազմակերպվել[2]:

Նույն օրը, նա կանցլերին ուղարկում է ավելի մանրամասն տեղեկանք, որում ասվում է, որ «վալի Ջելալ բեյի աշխատանքից ազատվելուց հետո Հալեպի վիլայեթի ծովափի երկայնքով աքսորն ընդլայնվել է: Ալեքսանդրետը, Հարերը, Բեյլանը, Զոքլուկը, Քեսաբը և ուրիշ բնակավայրեր հայերից մաքրելը օրակարգի հարց էր դարձել:

Համաձայն Սսի կաթողիկոսի տվյալների՝ Դիարբեքիրից դեպի հարավ ուղարկված 800 տղամարդուց որևէ մեկը տեղ չի հասել: Ենթադրվում է, որ նրանք բոլորը ոչնչացվել էին:

Եփրատում եղած դիակները, որ լուսանկարվել էին Ռումկալեում, Բիրեջկում և Ջերաբլուսում, 25 օր չարունակ քչվում էին գետի հոսանքով: Բոլորը նույն տեսքն ունեին՝ երկուական դիակ թիկունքով իրար կապված: Ջարդի այս ձևը մատնանշում է, որ խոսքը ո՛չ թե պատահական կոտորածի, այլ՝ կառավարական մարմինների կանխատեսած սպանության մասին է:

Հավանաբար, դիակները զինվորները գետն էին նետել Ադրյամանում... Գետում դիակների հոսքը մի քանի օր դադարեց, բայց չուտով նորից սկսվեց և այն էլ՝ ավելի մեծ չափերով. մեծ մասամբ կանանց և երեխաների դիակներ էին»:

Թել Աբիադի հայերն իրենց 8-12 տարեկան դուստրերին վաճառել էին նախ երկու մեջիդիեով (մեկ մեջիդիեն հավասար էր մոտ 36,5 մարկի), ապա մեկ մեջիդիեով կամ էլ ձրի էին տվել: Հավանաբար ցանկացել էին նրանց փրկել անապատի կլիմայից և բեդվիններից:

Նույն գյուղում թուրքերը տարագրվածների հետ սակարկել են երեխաների գնի չուրջը: Թել Աբիադով անցնողների առաջին խումբը, որն եկել էր Զեյթունից, պետք է Ռաքքա գնար: Տարագիրները ցնորվել էին: Նրանք լուռ

---

[1] Lepshis J., փաստ. № 81:

[2] Նույն տեղում:

տանում էին ամեն ինչ: Թել Աբիադից հարավ, որտեղ ջուր գրեթե չկար, երեխաները մահանում էին զանգվածաբար: Նույն պատճառով մի կարավան ամբողջությամբ նահատակվեց:

Գնալով չատանում էին այն դեպքերը, երբ իշխանությունները հայերի ջարդերն իրականացնում էին չերքեզների ու քրդերի միջոցով, նրանց դարձնում կոտորածի գլխավոր գործիքներ:

ԳՖՀ հեռուստատեսությունը հարցազրույց ունեցավ փարիզաբնակ Արամ Կյուրեղյանի հետ: Նա եղեռնի վերապրածներից էր (1915 թվին եղել է 11 տարեկան):

Ա. Կյուրեղյանը պատմել է, որ իրենց ընտանիքը նույնպես բռնագաղթվեց: Գնում էին ոտքով: Զեթեները կարավանը «կանգնեցրին, պատրվակով, որ ուզում էին մի քիչ հաց տալ մեզ: Տղամարդկանց հեռացրին: Հորս տարան Հասան-Զելերի կոչվող վայրը: Այլևս չտեսանք նրան, հետո իմացանք, որ ուրիշների հետ նրան էլ էին սպանել: Երբ հասանք անապատ, մի զարհուրելի տեսարան բացվեց: Հազարավոր սպանվածներ՝ մայրեր, որոնք մահացել էին իրենց երեխաներին կուրծք տալիս, երեխաներ, որոնք գաղափար չունեին, որ իրենց մայրերը մեռել էին, մայրեր, որոնք խելագարվել էին իրենց երեխաների մահը տեսնելով: Աղջիկներից չատերին բռնաբարել էին, ուրիշներին տարել էին հարեմներ: Հետագայում իմացանք, որ բռնագաղթի ճանապարհները կանխամտածված էին ընտրվում, այն հաշվով, որ երբ հասնեինք ջրհորներին, մեզ թույլ չտային ջուր խմել: Հասանք մի գետի, և հարյուրավոր մարդիկ, որոնք ծարավից մեռնում էին, սուզվում էին ջրի մեջ, որտեղ նվաղում և խեղդվում էին: Մեր հարազատների կեսը անապատում կորավ...

Մենք պետք է դրամ վճարեինք Եփրատ գետն անցնելու համար: Երբ կես ճանապարհին էինք, պահակներն սկսեցին գողանալ մեր հագուստները և ավելի չատ դրամ պահանջեցին: Զնայած մայրս ինչ որ ունեինք տվեց, պահակներից մեկը դարձյալ սկսեց ծեծել նրան, վիրավորել և յոթն ամսական քրոջս այնպես խփեց, որ նա մահացավ...

Մի գիշեր լուսադեմին արթնացանք ահավոր ճիչերից: Արաբները և քրդերն էին հարձակվել, նրանք չրջապատել ու առևանգում և սպանում էին հայերին: Մեր ընտանիքի մի քանի անդամների ևս խլեցին, սակայն նրանք կարողացան մի կերպ վերադառնալ: Դա այն ժամանակ էր, երբ գտանք մեր յոթն ամսական քրոջ դիակը:

Մի օր երկու քուրդ եկավ: Նրանք բռնեցին եղբորս, որպեսզի ոչխարի պես մորթեն: Եղբայրս ո՛չ գոռաց, ո՛չ էլ բողոքեց: Նրանք սպանեցին Արմենակ եղբորս: Մերկ և գրեթե սովամահ հանդիպեցինք մի քուրդ մչակի, որը ջուր էր տալիս իր անասուններին և ոռոգում էր դաշտը: Հուսահատ մայրս մի քիչ ջուր խնդրեց: Քուրդը պատասխանեց. «Եթե տղայիդ ինձ տաս (նա նկատի ուներ ինձ)՝ ջուր կտամ»: Մայրս համաձայնվեց:

* * *

Բացի Հալեպից, Հյուսիսային Սիրիայում բնակվող հայերի բռնագաղթն սկսվեց 1915-ի մայիսին, երբ վալու պաշտոնում Ջելալին փոխարինեց Բեքիր Սամին: Դատարկվեցին... Այնթապը, Անտիոքը, Իսկենդերունը և Քեսաբը:

«Ճեմալ փաշան կը հրահանգէ,- գրում է արաբ գործիչ Յուսեֆ ալ-Հաքիմը,- տեղահանել զանոնք եւ քշել դեպի Համա: Գիշեր ատեն զինուորները զանոնք իրենց տուներէն բռնի ոյժով հանելէ ետք, քաղաքէն դուրս կը քշեն, բայց հաղիւ հեռացած քաղաքէն՝ թիւրք զինուորներու կողմէ կը սպաննուին հրացանագարկ, պատճառաբանելով, թէ անոնք կը փորձէին փախչիլ: Սակայն այդ բոլորն ալ անհիմն սուտ էին»[1]:

Նայիմը պատմում է, որ Հալեպում ժանդարմերիան սկզբում գաղթականության գործերին չէր խառնվում, սակայն շուտով սկսեց այդ գործում սերտորեն համագործակցել ոստիկանության հետ: Սկսվեցին հայերի հանդեպ բռնի գործողություններ՝ քաղաքից նրանց հանելու համար: «Գաթմայի մէջ, Քիլիսի շրջանները եւ Հալէպի շուրջը խոնուած գաղթականները մաս առ մաս Ագթերին եւ անկէ Պապ կը ղրկուէին... Անօթութենէն, ցուրտէն, հիւանդութենէն ամէն օր հարիւրաւոր անձերու մեռնելուն լուրը կը հասնէր մեզի»: Էյուբը Ազազից վերադառնալով պատմում էր, թե ինչպես էին հայերի վրաններն այրում: Ամենուրեք մոլեգնում էր տիֆը[2]:

Հալեպից հայության հեռացնելը բռնագաղթի երկրորդ և ջարդերի գլխավոր փուլն էր: Ռեոսլերը ծաղրելով, Հալեպից հայերի այդ հեռացնելն անվանում է «տեղափոխում բնակության վայրեր»:

Բռնագաղթի առաջին փուլում աքսորավայր համարվում էին սիրիական շրջանները՝ Համա, Հոմս, Բաբ, Դամասկոս. իսկ հոկտեմբերից հետո՝ Ռաքքա և Դեր-էլ-Զորը, ինչպես նաև Արևմտյան Հաուրանը, ապա Ռաս-ուլ-Այնից մինչև Մոսուլը:

Ռեոսլերը բերում է մի թուրք բարձրաստիճան պաշտոնատարի ասածը, թե մինչև 1915 թ. հոկտեմբերի կեսը պետք է Հալեպից «մշտական բնակավայր» 300.000 հոգի ուղարկվեր:

Սկզբում տարագիրներին տեղափոխում էին հիմնականում երկաթուղով, իսկ ապա՝ հետիոտն: Հոկտեմբերի վերջից տեղափոխությունը նորից սկսեցին կատարել գնացքով՝ տեղական բնակչությանը համաճարակ հիվանդություններից զերծ պահելու համար: Հիմնականում տանում էին Ռաս-ուլ-Այն. որից հետո կարավանները ճանապարհը շարունակում էին հետիոտն և ամենատարբեր ուղղություններով, ինչը, ճանապարհների անբարեկարգության, ջրի ու սննդի գրեթե բացակայության, մահմեդական տարրերի ամենօրյա հարձակումների պատճառով չեչտակիորեն ավելացրեց մահացությունները: Դրանք ավելի ահագնացան «մշտական բնակության վայրերում», որտեղ նրանք լքված էին, առանց որևէ պաշտպանության, օգնության ու աջակցության:

---

[1] *«Զարթոնք», 31 մարտի 1987 թ.:*

[2] ***Անտոնեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 52-53:*

Իրավիճակին քաջատեղյակ մարդկանց հաշվարկներով՝ մինչև հոկտեմբերի վերջը մոտ 600.000 հոգի մահացավ[1]:

Իսկ ով որ դեռ կենդանի էր. գերադասում էր մեռնել: Մահմեդականների ընտանիքներում ապաստանածներն ավելի չուտ հոգեկան հիվանդներ էին: Նրանցից շատերն ականատես էին եղել, թե ինչպե՞ս էին Թուրքերն սպանել կամ մեռցրել իրենց ծնողներին, եղբայրներին և հարազատ մարդկանց:

Ալեքսանդրետում ԱՄՆ-ի հյուպատոս Բրյուվստերը գրում է, որ Հալեպի մերձակայքի Կաթմա վայրում 250.000 մարդու դիակներ սեղջի էին վերածվել: Նրանց մեծամասնությունն սպանվել էր: Հազարավոր դիակներ նետվել էին Եփրատ: Կաթմայից ոչ հեռու փորված էր խոր փոս, որտեղ նետում կամ «թաղում» էին հայերի դիակները[2]:

Պատմում է Միջագետքից փախած բժիշկ Թորոյանը. «Միջագետք տարագրված իմ դժբախտ հայրենակիցները բաղկացած են մեծ մասամբ կիներից ու աղջիկներից: Դժբախտները հազիվ են ցնցոտիներով ծածկում իրենց մերկությունը, եղանակի խստությունների դեմ պաշտպանուելու համար որևէ բան չունեն... Ավազուտների մեջ, ամեն տեղ, բարձրանում են հողաթմբեր, որոնց շուրջը դառնում են գաղգաղած շներ: Դիակներից շատերը մնում են անթաղ: Հազարներ են փոս ընկած այտերով, մարած կամ շատ փայլուն աչքերով, խոսելու վարժությունից զրկուած, տառապանքից ապուշացած դեմքերով այդ կմախքացած դժբախտները»[3]:

Մի ուրիշ ականատես նկարագրում է Հալեպից մեկնած մի կարավան, որում մնացել էր ընդամենը 30-40 հոգի՝ բզկտված, մերկ, մարդկային կերպարանքը կորցրած և նվաղած ձայնով ջուր աղերսող կանայք, «Հալեպից մինչև Մեսքենե՝ վեց օրվա կեսը լրիվ քաղցած քարշ եկողներ: Սովից ավելի զարհուրելին ծարավն էր... Ժանդարմների հարվածների տակ անդադրում քայլք, հրակեզ արևի տակ, փոշու թանձր հորձանքների միջով»:

«Աշխարհ» թերթը 1985 թ. հունիսի 15-ին տպագրեց քաղվածքներ Ա. Անտոնյանի «Այն սեւ օրերուն» հուշագրությունից:

«... Կիներու կարաւան մըն էր եկածը, բայց ինչ զարհուրելի կարաւան... 30էն մինչեւ 50 տարեկաններու խումբ մըն էր..., աւելի ճիշդը՝ տարիք չունէին՝ մարդկային էակները բնորոշող ամէն մասնայատկութիւն կորսնցուցած էին. «Ուրկէ՞ կու գաք» հարցուցին ամէնէն առաջ հասնողներուն: «Ջրուր...» եղաւ պատասխանը... Քանի՞ օր կլլար, որ բերանին պատառ մը չէին դրեր... Եւ նոյն միակ հարցումը կը խօսէր ամէնուն ալ բերնէն. «Հա՛ց... Հա՛ց...»... Անոնք այլեւս կարեւորութիւն չէին տար գիշերապահներու հարուածներուն: Անօթութիւնը ճոկաններէն չէր վախնար»:

Նույնիսկ բնակավայրերում գաղթվածներին չունչ քաշելու ժամանակ չէին տալիս, գրում է ժամանակակիցը: Այդ ծայրաստիճանի նոսրացած խմբերին,

---

[1] R 14093, Ab. 268918.

[2] **Beylerian A.,** նշվ. աշխ., p. 356.

[3] **Թեհլիրեան Ս.,** նշվ աշխ., էջ 83:

ոտաբոբիկ, հյուծվածությունից և հիվանդություններից ուժասպառ եղած ու խոչտանգված մարդկանց այրող արևի տակ քչում էին հարյուրավոր մղոն քարքարոտ կիրճերով և անանցանելի սարերով դեպի կիսահասարակածային ճահիճները, դեպի մահվան գիրկը: Այստեղ նրանք իրենց վերջն էին գտնում՝ քրդերի և ոստիկանների կողմից սպանված ու թալանված, գնդակահարված, կախաղան բարձրացված, թունավորված, խեղդամահ արված, սրախողխողված, ծարավից ու ցրտից կործանված, համաճարակներից հնձված, ջրերում խեղդված:

Երեխաները մեռնում էին արցունքն աչքերին, տղամարդիկ նետվում էին ժայռերից, մայրերը իրենց նորածիններին գցում էին ջրհորները, հղի կանայք երգով նետվում էին Եփրատի ջրերի մեջ: Նրանք մեռնում էին երկրային բոլոր մահերով, բոլոր ժամանակների մահերով:

Հալեպ հասնելուց հետո վերապրողները քչվում են կա՛մ հարավ՝ Սիրիայի անապատը, կա՛մ հարավ-արևելք Միջագետքի անապատը: Սիրիայի համակենտրոնացման ճամբարները չինված էին Հոմսի մեջ, նաև Դամասկոսի մոտ: Այստեղ տեղավորվեցին չուրջ հարյուր քսան հազար ապաստանողներ, որոնց մեծ մասը պատերազմի ավարտին՝ 1919 թ. հայրենադարձվեց Կիլիկիա: Իսկ Եփրատի երկայնքին գտնվող հայերը, ընդհակառակը, պետք է քչվեին Դեր Զոր: Շուրջ երկու հարյուր հազար մարդ պիտի հասներ այնտեղ: 1916 թ. մարտից-օգոստոս Պոլսից հրամաններ ստացվեցին բնաջնջելու Եփրատի ու երկաթուղու երկայնքին տեղադրված ճամբարների վերջին վերապրողներին[1]:

Այնուամենայնիվ, չհաջողվեց Հալեպի նահանգը լրիվ «մաքրազարդել» հայերից: Ռեոսլերը 1917 թ. գարնանը նահանգում հայտնաբերեց 45.000 տարագիր, որոնցից «25.000-ը ծայրահեղ կարիքի մեջ էր, չատերը՝ սովամահության եզրին»:

Մի կողմից՝ հայերին բիրտ ուժ գործադրելով քչում էին հարավ, անապատների խորքերը, իսկ մյուս կողմից՝ բծախնդրությամբ հետևում, որ նրանք կայսրության սահմաններից դուրս չգան, Հալեպի փոխվալի Ղալիբը 1915 թ. օգոստոսի 21-ին, վկայակոչելով 4-րդ բանակի հրամանատարի օգոստոսի 12-ի հեռագիրը, Այնթապի քաղաքապետին հրամայում է. «Որևէ հայի, անկախ տարիքից ու սեռից, թույլ չտալ երկրից դուրս գալ»[2]:

1916 թ. հունիսին Վանգենհայմը տեղեկագրեց՝ որոշակի է, որ մոտ ժամանակներս «Հալեպից բոլոր դրսեցի հայերն աքսորվելու են, Հալեպում մնալու նախկինում տրված արտոնագրերը երեկվանից չեղյալ են համարվել», ինչը Ջեմալը բացատրում էր նրանով, որ այդ հայերը Հալեպում նույնպես «Թուրքական կառավարության դեմ գաղտնի կոմիտե են ստեղծել»: Սկսած հունիսի 19-ից՝ անխնա աքսորեցին «ոչ միայն քաղաքականապես կասկածելիներին», այլև անգամ հալեպաբնակներին[3]:

Ժողովրդին քչում էին Հալեպից ու դրա մոտակայքից, հավաքատեղին

---

[1] *Տե՛ս Վեգներ Արմինը և Վեգներ Էռնեստը, Հայոց ցեղասպանության մասին, Ե., 1996:*

[2] ***Լեփսիուս Յո.,*** *նշվ. աշխ., փաստ. № 333:*

[3] ***Լեփսիուս Յո.,*** *նշվ. աշխ., փաստ. № 281. Վանգենհայմի 1916 թ. հունիսի 27-ի տեղեկագիրը:*

Կարլրքի բարձունքն էր: «Արդէն Հալէպէն քայլ մը առաջ գտցողներուն համար ապրելու յոյսը այլեւս գոյություն չունէր: Գաղլրքէն սկսեալ մինչեւ Տէր Զօր երկարող բովանդակ գիծը թշուառութեան բոյն մը դարձած էր: Գաղթականներու առաքման համար նշանակուած պաշտօնեաներէն վստահելիներուն պատուիրած էր, որ մահ պատճառող ամէն տեսակ խժդժութեանց գործադրութենէն ետ չկենան»[1]:

Բարձր Դուռը հրահանգ հրահանգի հետեւից էր ուղարկում, պահանջում չհապաղել: «Ծանօթ անձնաւորութեանց (հայերի) կողմէ ամէն տեսակ անձնական խնդիրներու մասին յարուցուելիք տրտունջներուն եւ դատերուն նկատառումը ո՛չ միայն անոնց (դէպի անապատ) առաքման յապաղման պատճառ պիտի ըլլայ, այլ նաեւ դուռ պիտի բանայ կարգ մը գործողութեանց, որոնք հաւանաբար յառաջիկային կրնան քաղաքական անպատեհութեանց ծնունդ տալ: Այդ պատճառով պէտք չէ նկատի առնել այս դիմումները, եւ այս իմաստով հրահանգ տալու է շահագրգռուող պաշտօնեաներու»[2]:

«Կը լսենք, որ Ինթիլլիի, Այրանի շրջականներեն սկսեալ մինչեւ Հալէպ երկարող գիծերու ճամբաներուն երկայնքը, մեծագոյն մասը կին եւ աղջիկներ՝ 40-50 հազար հայեր կը գտնուին: Ամենախստօրէն կը պատժուին այն անձերը, որոնք զինուորական առաքման համար մեծ կարեւորութիւն ունեցող այդ դիրքերուն վրայ թշուառութեան համախմբման մը կազմուելուն պատճառ կ՚ըլլան: Հետեւաբար, անմիջապես, առանց Հալեպ հանդիպեցնելու, հետիոտն իրենց տարագրութեան վայրերը ղրկեցէ՛ք այդ հայերը» (Թալէաթ)[3]:

Տվյալ դեպքում Թալեաթը ղեկավարվում էր ո՛չ միայն տարագիր հայերին «իրենց տարագրութեան վայրերը ղրկելու» մտահոգությամբ, այլև «չտկելու թոյլ տուած սխալը», որն այդպես էլ անվանել է Ռեոսլերը իր տեղեկագրերից մեկում:

Գերմանացիները թուրքերին չտապեցնում էին հայերին հեռացնել Հալեպի շրջանից, քանի որ անգլիացիները Պաղեստինի ռազմաճակատում առաջ էին շարժվում, իսկ ռազմավարական գոտիներում վստահություն չվայելող հայերի լինելը վտանգավոր էր համարվում: «Այլեւս Եփրատի աջ եզերքէն չպիտի ղրկուին գաղթականները,- գրում է Անտոնյանը,- այլ ձախ ափունքէն եւ ասիկա արդէն մահուան դատապարտութեան պէս բան մըն էր մեկնելիք կարաւաններուն համար, որովհետեւ այդ ափունքէն մինչեւ Ռաքքա մարդիկ պիտի բռնադատուէին անցնիլ բոլորովին անջրդի անապատներէ, որոնց մէջ անպայման պիտի մեռնէին տաքէն, ծարաւէն, անօթութենէն: Էլ ճիզերի շրջանակը, ինչպէս կը կոչուի Եփրատի ձախ եզերքը, գերեզմանի ճամբան է»[4]:

Ըստ որում, բոլոր ծածկագրերը հանձնարարում էին «կարաւաններուն ընկերացնելով ղրկեցէ՛ք», այսինքն՝ ուղարկել «Թեչքիլաթի մախսուսայի» ուղեկցությամբ:

---

[1] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 52-53:
[2] Նույն տեղում, էջ 54:
[3] Նույն տեղում, էջ 59:
[4] Նույն տեղում, էջ 91:

Թալեաթը Հալեպի կուսակալին հրամայեց (հեռագիր № 723) «Նախապէս Հալէպի չրջականները բնակեցուած հայերը անյապաղ ղրկեցէ՛ք իրենց տարագրութեան վայրերը..»:

«Այս հեռագրին վրայ,- գրում է Նայիմ բեյը,- Հալէպի չրջականները ձիաւոր ժանդարմաներ հանուեցան, որոնք հազար տեսակ կեղեքումներով սկսան գիւղերէն դուրս հանել ժողովուրդը եւ քչեցին դէպի Մեսքենէ. ինչ որ անոնց մեծ մասին փչացումը եղաւ»[1]:

Հալէպ-Ռաս-ուլ-Այն-Մեսքենէ ճանապարհով, գրում է Նայիմը. ուղարկուեց 200 հազար հայ: Նրանցից միայն 5000-6000 հոգին ողջ մնաց: Երեխաներին Եփրատը նետեցին: Կանայք ճանապարհների վրա ժանդարմների և մահմեդական ամբոխի խժդժություններով և վայրագություններով սպանվեցին[2]:

Ինժեներ Շպիկերը տեսել էր, որ Թուրքերն իրար էին կապել հայ տղամարդկանց, ապա որսորդական հրացաններից կրակ էին բացել ու հոհոալով հեռացել:

Մի քանի տղամարդու ձեռները մեջքին կապեցին ու հրամայեցին ցած իջնել գրեթե ուղղահայաց լանջով: Իսկ ներքևում կանգնած թուրք կանայք դանակների հարվածներով դիմավորեցին նրանց ու մեռցրեցին:

Մոսուլում Գերմանիայի հյուպատոսը պատմել է, որ Մոսուլի ու Հալեպի արանքում տեսել է երեխաների մեծ թվով կտրված ձեռքեր: Ուրֆայի հոսպիտալում պառկած էր երկու ձեռքերը կտրած աղջնակ: Նույն հյուպատոսը Հալեպի մերձակայքի արաբական գյուղի մոտ տեսել է ոչ-խոր հորեր՝ հայերի թարմ դիակներով: Գյուղացիներն ասել են, որ այդ հայերին սպանել էին կառավարության հրամանով: Նրանցից մեկը հայտարարեց, որ ինքը ութ հայի է սպանել:

Ուրֆայի մերձակայքում թուրք զինվորները քրիստոնյա կանանց հարկադրեցին լրիվ մերկանալ և այդպես մերկ դեգերել 40 աստիճան ջերմության տակ: Մի թուրք մոր ձեռքից խլեց երեխային ու խփեց պատին: Հյուպատոսներից շատերը հավանական էին համարում, որ բռնությունների հետևանքով 1915 թ. վերջին ամիսներին զոհվել է մեկ միլիոն մարդ, որի կեսը՝ կանայք ու երեխաներ: Նրանք սպանվել էին կամ սովամահ եղել[3]:

Եգիպտոսում Ռուսաստանի դեսպանորդ Սմիռնովը հունիսի 25-ին Սազոնովին գրեց. «Սիրիայում և հարակից նահանգներում հայերի հանդեպ դաժանությունները աննախադեպ ծավալների են հասնում: Կողոպուտը, բռնությունը, կոտորածը և ոչ քիչ դեպքերում հայկական գյուղերի բնակչության լիակատար ջարդը կրկնվում են մշտապես: Անխղճաբար բաժանվում են ընտանիքներ, կնոջը մեկուսացնում են ամուսնուց, երեխաներին՝ ծնողներից և նրանց բոլորին աքսորում են տարբեր կողմեր: Առանձնապես դաժան է հետապնդվում հայ հոգևորականությունը, որին տանջում են, խոշտանգում, դուրս քաշում եղունգները»:

Գերմանացիների ազդեցությունն ակնհայտ էր և խնդիր ուներ թուրքերին

---

[1] ***Անտոնեան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 101:*

[2] *Նույն տեղում, էջ 114:*

[3] *R 14092, Ab. 20411.*

գրգռել հայերի դեմ: Հալեպում գերմանացի առևտրական «Կոխի կինը, վերջերս մեկնեց Ուրֆա և Դիարբեքիր, որտեղ նա կապեր ունի քուրդ ցեղերի հետ: Նրա ուղևորության նպատակն էր քրդերին գրգռել Ռուսաստանի և հայերի դեմ: Նա եզակի չէ, գերմանացի շատ ագիտատորներ Սիրիայում և Հայաստանում եռանդուն գործում են դաշնակիցների դեմ»[1]:

Բոնագաղթի գաղափարն առաջ քաշողներից մեկը գերմանացի ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցը գրում է, որ Հալեպ գնալու ճանապարհին Տավրոսի հարավային ստորոտներին փախստական հայեր կային: «Մի ամբողջ ժողովրդի սարսափելի ողբերգություն: Հազարավոր ու հազարավոր անպաշտպան մարդիկ գնում էին հանդիպելու անհայտ ապագայի հետ, գնում էին առանց սննդամթերքի և մատակարարման: Շատերը մեռնում էին ճանապարհին և նրանց դիակները երկար ժամանակ մնում էին ընկած»[2]:

Թուրքերն առանձնակի դաժան էին Արևմտյան Հայաստանում բնակվող հայերի նկատմամբ: Ա. Անտոնյանն ականատես էր ու գրում է. «Հալածանքը մանաւանդ անոնց (հայաստանաբնակների) դէմ էր եւ բազմիցս լուր չրջեցաւ, թէ անոնցմէ զատ մնացեալ բոլոր հայերը պիտի վերադառնան իրենց տեղերը»[3]: 1915 թ. նոյեմբերի 23-ի № 691 ծածկագրով Թալեաթը հանձնարարում էր. «Գաղտնի միջոցներով փչացուցէ՛ք Արեւելեան նահանգներու այն հայերը, որոնք այդ կողմերը ձեռք պիտի անցուին»[4]:

«Այս հեռագրին վրայ Հալէպի ոստիկանութեան տնօրինութիւնը անմիջապէս հետապնդումներ կատարեց եւ ակնարկուած հայերը ձերբակալուելով յանձնուեցան գաղթականներու առաքման ընդհանուր պաշտօնատանը: Անոնք ապահովաբար սպաննուած են ճամբաները...»[5]:

Մի այլ հեռագրով (№ 820, 4 հունիսի 1916 թ.) Թալեաթը հանձնարարում է. «Հիւսիսէն գալիք հայերը այսուհետ առանց քաղաք կամ աւան մը հանդիպեցնելու չիտկէ չիտակ իրենց տարագրութեան վայրերը ղրկուելնին ընդհանուր կերպով կը յանձնարարեմ»[6]:

«Կառավարութիւնը, որ իմացեր էր այս անցքերը, կը հրամայէր, որ անոնք (կանայք) այդ վիճակին մէջ քչուին անապատ, եւ քաղաք կամ աւան չհանդիպցուին, որպէսզի մարդ չտեսնէ»:

Արևմտյան Հայաստանից տարագրված հայերի ոչնչացման մասին Նայիմ բեյը գրում է. «Հրամանը Հալէպէն տրուեցաւ Ռում Գալէի գայմագամին: Ասիկա քիւրտեր հավաքելով հրոսակախումբ մը կազմեց եւ դէպի Սամուսաթ ղրկելով՝ Պեհեսնիի ու Ատրեամանի ճամբով եկող հայ կարաւանները կոտորեց, փճացուց: Դիակները Եփրատ նետուեցան: Պաշտօնական մերձաւոր տեղեկութիւններուն նայելով, միմիայն Սամուսաթի կողմերը այս քիւրտ հրոսակախումբը 14 հազար հայ սպաննեց»[7]:

---

[1] АВПР, Политархив, д. 3804, л. 24.

[2] «Deutsche Allgemeine Zeitung», 28 ապրիլի 1927 թ.:

[3] **Անտոնեան Ա.,** նշվ աշխ., էջ 160:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում, էջ 160-161:

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում, էջ 164:

Այսպիսով բռնագաղթի առաջին ամիսներին Հալեպ քաղաքն ու շրջակայքը համարվում էին տարագիրների առաջին կայանը, որտեղ նրանք փոքր-ինչ կանգ էին առնում և ապա ուղարկվում անապատի ամենատարբեր մասեր: Թալեաթը խստորեն արգելեց բռնագաղթվածների մուտքը Հալեպ, իսկ քիչ անց անթույլատրելի համարվեց հայերի կանգ առնելը որևէ միջանկյալ բնակավայրում և պահանջեց նրանց «ուղիղ քշել մշտական բնակատեղեր»:

Բռնագաղթի ընթացքում հայերի միջև խտրություն չէր դրվում կամ գրեթե չէր դրվում. եթե հայ էր՝ ուրեմն ենթակա էր նույն դաժան վերաբերմունքին: Բայց երբ Արևմտյան Հայաստանն արդեն դատարկված էր իր բնիկներից, նրանց ճնշող մեծամասնությունը ոչնչացված էր և սկսվել էր այս կամ այն պատճառներով վերապրածների մարդորսը, խնդիր առաջադրվեց՝ ոչնչացնել Արևմտյան Հայաստանի բնակիչ հայերին: Այդ նշանակում էր, որ Բարձր Դուռը Հայկական հարցը Թուրքավարի լուծելուց հետո եթե բացառում էր հայի գոյությունը Հայաստանում, ապա չէր մերժում նրա գոյությունը կայսրության մյուս մասերում:

Այդ, իհարկե, չի նշանակում, թե այլևս իրականացվում էր հայերի ընտրովի ոչնչացում: Կենտրոնի նոր կողմնորոշումը այդպես էլ չհասցրեց թուրքական պաշտոնեության և մահմեդական խուժանի վարքագիծ դառնալ: Հայերին շարունակում էին ոչնչացնել ամենուրեք՝ առանց դատ ու դատաստանի, գտնելով, որ հայ լինելն ինքնին խոշոր հանցագործություն է:

Հոլշտեյնը տեղեկագրում է, որ Մոսուլից Հալեպ իր ճանապարհորդության ժամանակ Մարդինից, Դիարբեքիրից եկած ժանդարմական օրապահները տեղական մահմեդական բնակչությանը գրգռում էին «հայերի վերջը տալու»:

Նույն փոխհյուպատոսը Մոսուլի և Ռաս-ուլ-Այնի արանքում տեսել է լրիվ ավերված հին հայկական գյուղեր, դրանց թվում նաև Թել Արմենը, որը 2000 բնակիչ ուներ: Գյուղում, բոլոր հայերը, բացի թաքնված 15-20 հոգուց, սպանվել էին: Նրանց դիակները կտրված գլուխներով ու մարմնի այլ մասերով, Հոլշտեյնը տեսել էր եկեղեցում: Մյուս չորս գյուղերի բնակչության մեծ մասը նույնպես ոչնչացվել էր: Թել Արմենի ու Ռաս-ուլ-Այնի միջև Հոլշտեյնը տեսել է հինգ ամբարներ լցված դիակներով: Նիսիբինից հարավ ընկած ամբողջ տարածքում բոլոր մահմեդականները թուրը ձեռքները դեսուդեն էին վազում հայերին մորթելու համար:

Կարավանների մեծ մասում տղամարդիկ և բարձր տարիքի տղաներ չկային: Թուրքերը դա բացատրում էին նրանով, որ վերջինները զենքերը ձեռներին թաքնվել էին լեռներում: «Դա,- նկատում է գերմանացի դիվանագետը,- հակասում է ընտանիքի հանդեպ հայերի մեծ սիրուն: Այնտեղ, որտեղ տղամարդիկ զանգվածաբար փախել են սարերը, ինչպես, օրինակ, Սուդեթում, իրենց հետ տարել են կանանց ու երեխաներին: Ինձ հայտնի են դեպքեր, երբ հայ զինվորները դասալիք են եղել ոչ թե լեռ բարձրանալու, այլ իրենց ընտանիքների հետ լինելու, միասին արտաքսվելու, չնայած շատ լավ գիտեին, թե բռնագաղթն ինչ է նշանակում[1]:

---

[1] R 14090, Ab. 288918.

Լոնդոնում Ֆրանսիայի զինվորական կցորդ Փանուզը 1916 թ. դեկտեմբերի 1-ին գլխավոր հրամանատար գեներալ Ժոֆֆին է ուղարկում Սիրիայի Ալիտա բնակավայրի բնակչի զեկուցագիրը, որտեղ ասվում էր, որ հայերի զանգվածային կոտորածների մասին առաջին լուրերը 1915 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին բերեցին Պաղեստինում բնակվող գերմանացի ֆերմերները: Սիրիայի և Պաղեստինի թերթերում այդ մասին բան չէր գրվում: Այս գերմանացիներն իրենց ընտանիքներին ուղարկեցին հայրենիք, հայտարարելով, որ թուրքերը մի օր նրանց նկատմամբ էլ կարող են կիրառել նույն միջոցները, ինչ հայերի նկատմամբ կիրառեցին: Պաղեստինից անցնող երկաթուղու երկայնքով ընկած էին հայերի հարյուրավոր դիակներ:

Զեկուցագրի հեղինակի քույրը երկաթուղով երթևեկելիս կայարաններում տեսել է սոված, հուսալքված, սալահատակներին ու երկաթուղու գծի վրա պառկած մեկնելու սպասող հազարավոր հայեր: Մոտեցող գնացքի տակ մնաց 50 մարդ և մեքենավարը բացականչեց. «Տեսա՞ք: Ես գնացքի տակ մեռցրեցի 50 հայ խոզի»: Գնացքների վագոններում կուտակումները նույնպես մեծ թվով հայերի կործանման պատճառ դարձան: Տիֆը հնձում էր նրանց և դիակներն օրերով չէին հավաքվում»[1]:

"El Siglo"-ն 1915 թ. օգոստոսի 4-ին գրում է, որ Պաղեստինից վերադարձած մի միսիոներ պատմել է. թե այնտեղ վիճակը հուսահատական էր: Սովն ու ժանտախտը մարդկանց հնձում էին: Թուրքերը հափշտակում էին բերքը, հալածում ու չարչարում քրիստոնյաներին:

Դամասկոսի կողմերում 1917 թ. գարնանը կենդանի մնացած 30.000 հայ ողբալի վիճակում էին, իսկ Մոսուլի շրջանում մնացել էին 3000 հայ տարագիր՝ «մեծ մասամբ կանայք ու երեխաներ»: Շատ կանայք ու աղջիկներ ցեղերի մոտ գտնվում էին «կիսաստրուկի վիճակում»[2]:

Գերմանացի քույր Պաուլա Շեֆերը 1915-ի նոյեմբերի 15-ին գրում է. «Հենց նոր վերադարձա Բաղդադից... Դաշտերում ու ճանապարհներին թափված էին հազարավոր տարագիրներ՝ հանձնված ավազակ թափթփուկների կամայականություններին:

Երեկ գիշերվա ժամը 12-ի մոտերքին հարձակման ենթարկվեց վրանային փոքրիկ ճամբարը: Հայերը 50-60 հոգի էին: Ես գտա ծանր վիրավոր տղամարդկանց ու կանանց. մարդկային մարմինները կտրտված էին և հատկապես գազանաբար ծակված էին դանակի հարվածներով, գանգերը ջախջախված էին: Մի այլ ճամբարում մենք հայտնաբերեցինք 30-40 հազար հայեր, որոնք սովամահ էին լինում: «Շրջապատում ընկած էին չթաղված դիակներ և միայն փողով կարելի էր ժանդարմներից թույլտվություն ստանալ թաղելու համար: ... Ամենուրեք տիֆի բռնկում է, յուրաքանչյուր 3-րդ վրանում հիվանդ կա: Գրեթե բոլորը տեղափոխվում են ոտքով, տղամարդիկ, կանայք և երեխաները չալակած տանում են իրենց ողորմելի փալասները: Ես հաճախ էի տեսնում, թե նրանք ինչպես էին վայր ընկնում, բայց զինվորները կրկին ու կրկին սվիններով ու

---

[1] **Beylerian A.**, նշվ. աշխ., էջ 298.

[2] **Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., փաստ. № 333:

խզակոթերով նրանց բարձրացնում և քչում էին առաջ: Շատ երեխաներ կորցրել էին իրենց ծնողներին և լրիվ մենակ էին մնացել՝ զուրկ որևէ աջակցությունից, կանանց ու երեխաների անթաղ դիակները ընկած էին փոսերում:

Գերմանացի քույրերից մեկ ուրիշի՝ Բեատրիչե Ռոների 1915 թ. նոյեմբերի 26-ի զեկուցագրում կարդում ենք. «Անձրևներից և վրա հասած ցրտերից տանջանքներն աճեցին հարյուր անգամ: Կարավաններն ամեն անգամ իրենցից հետո թողնում են մեռածների, փոքրիկ երեխաների և հիվանդների, որոնք մահվան են դատապարտված: Համաճարակը տարածված է ամենուրեք»:

Պ. Շեֆերի 1915 թ. դեկտեմբերի 1-ի հաղորդագրությունում նկարագրված է. «Երեք օր ու գիշեր անձրև էր գալիս, նույնիսկ մեր տներում արդեն զգացվում էին ուժեղ խոնավություն ու ցուրտ... Մամուրում պառկած մնաց մոտ 200 ընտանիք, նրանք ճանապարհը շարունակել չէին կարող, կարիքն ու հիվանդությունն այդ անհնար էր դարձրել: Նույնիսկ զինվորները անձրևին ցանկություն չունեին տարագիրներին բարձրացնելու, նրանք այդպես էլ պառկած մնացին անձրևից գոյացած լճում: Որպես անկողին ծառայող փալասները թրջվել էին մինչև վերջին թելը: Շատ կանանց ոտքերը ցրտահարված էին, սևացած վերջավորությունները հասել էին կտրելու վիճակի: Լացն ու կոծը սարսափելի էին: Մեռնողի վերջին չնչառություն, վրանների առաջ դիակներ:

Իսլահիեում ճամբարն իմ տեսածներից ամենաողբալին էր: Ուղիղ մուտքին ընկած էին չթաղված դիակներ, ես հաշվեցի 35, մյուս տեղերում՝ 22, իսկ նրանց կողքին՝ վրաններ, որոնցում եղած մարդիկ վարակված էին ծանր համաճարակով... Մի օրվա ընթացքում թաղման խումբը հողին հանձնեց 580 մեռածի... Դրանք ահավոր տեսարաններ էին»[1]:

Բ. Ռոների 1915 թ. դեկտեմբերի 29-ի զեկուցագիրը պատմում է, որ Հալեպում գտնվող մի որբանոցում «երեխաների 50 տոկոսը մեռավ, իսկ նրանք, որոնք դեռ կենդանի են, աղետալի վիճակում են: Ամբողջ տունը վարակված է, կիսաքանդ, կեղտոտ:

Այժմ նոր բռնագաղթվողների համար կենտրոն է հանդիսանում Բաբը: Այնտեղ հայերը հազարներով մեռնում են սովից ու համաճարակից: Ամբողջ օրը գերեզման են փորում»:

Մի գերմանացի քարոզիչ 1915 թ. դեկտեմբերին Հալեպից գրում է, որ ձմռան ցրտին հազարավոր կանայք, երեխաներ և հիվանդներ սոված ու մերկ գտնվում էին անապատում ու ճանապարհներին: Սեպտեմբերին և հոկտեմբերին Համա, Հալեպից ոչ հեռու, եկան 20 հազար բռնագաղթվածներ: Միայն այդ երկու ամսվա ընթացքում 3000 հոգի մեռավ սովից, 2000 հոգի էլ՝ վարակիչ հիվանդություններից: Ճանապարհներին մեռավ ավելի քան 500 երեխա, որոնք այնտեղ աղբի մեջ սննդի մնացորդներ էին փնտրում:

Երկու ամիս հետո այլևս ոչ մի պֆենիգ չտրվեց և մահվան դեպքերի թիվն աներևակայելիորեն աճեց: Ամենուրեք սով է: «Սկսած Կոնիայից՝ մինչև Մոսուլ և Հալեպ, ինչպես նաև մինչև Մաան (Մեոյալ ծովի մոտ) ճանապարհները, գյուղերը, տափաստանները լցված են չթաղված դիակներով: Անգղներն ու չնագայլերը հոգնել են մեռածներին ուտելուց: Սկզբում մարդիկ ինչ-որ բան իրենց

[1] Archiv Berlin-Mission. Archiv des Dr. Lepsius Orient Mission. 1916. s. 127.

մոտ ունեին, բայց ճանապարհին կողոպտեցին, շատերից խլեցին նույնիսկ ներքնաշորերը: Շատերը դրանք իրենք վաճառեցին սնունդ ձեռք բերելու համար: Այժմ նրանց մոտ բան չի մնացել: Բռնագաղթվածներից մեկն ինձ ասաց, «ճանապարհին մենք գյուղացիներից օգնություն խնդրեցինք, բայց նրանք մերժեցին՝ ասելով, որ հաց կտան, եթե նրանց վաճառենք մեր երեխաներին»: Շատերն այդպես էլ վարվեցին, երեխաներին վաճառեցին երկու մեջիդիեով: Սոված ու հիվանդ երեխաների թիվը հսկայական էր ... Մի տղամարդ ասաց. «Իմ ընտանիքը բաղկացած էր 11 անձից, միայն ես եմ կենդանի մնացել», իսկ փոքրիկ աղջիկը, թե՝ «Մենք 10 հոգի էինք, մնացի մենակ ես»[1]:

Հալեպի գերմանական դպրոցի ուսուցիչների վերը նշված դիմումում կան հետևյալ տողերը. «Բռնագաղթի նպատակը հայ ժողովրդի գլխովին ոչնչացումն է: Այս դիտավորությունը հստակ երևում է այնպիսի փաստից, որ կառավարությունը հետևողականորեն դիմադրում է երկրում գտնվող բոլոր այն միսիոներներին, գթության քույրերին և մյուս եվրոպացիներին, որոնք ձգտում են օգնել հայերին:

Հենց միայն Դամասկոսով անցել են 50 հազար բռնագաղթվածներ, գրում է Դամասկոսում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը: Նրանք այնքան շատ են, որ պետք է բնակեցվեն Հորդանանից ու Մեռյալ ծովից արևելք: Բայց հազիվ թե ողջ մնան, քանի որ «սովն ու համաճարակն արդեն մոլեգնում են նրանց շրջանում»: Երեխաներին «մասամբ բռնությամբ, մասամբ էլ հոժարակամ վերցնում են հարազատներից և հանձնում թուրք ընտանիքներին»[2]:

Գերմանացիները «ճանապարհի որոշ հատվածներում կանանց ու երեխաների անթիվ մերկ դիակներ են տեսել: 2000 հայերի մի տեղ են հավաքել ու սպանել, ինչպես սպանում են գազաններին: Իսկ երբ գերմանացիներից մեկը երեսը շրջել է այդ տեսարանից, թուրքերը նրան ասել են. «Ի՞նչ ես ուզում, չէ՞ որ կայզերիդ ցանկությունն է»[3]:

Նման վկայությունները բազմաթիվ են, բայց մենք մեջբերումներ կատարում ենք գերմանացիներից ու ավստրիացիներից՝ մատնանշելու, որ Թուրքիայի դաշնակից երկրների պաշտոնատարներն ու քաղաքացիները ո՛չ թե ժխտում, այլ՝ հաստատում են հայերի ծրագրավորված բնաջնջումը:

«Ֆրանսիական տարեգրության» (1927 թ.) 196-րդ էջում նշվում է, որ Ջեմալի իշխանության տակ գտնվող տարածքներում ջարդեր տեղի չունեցան: «Ջեմալ փաշան թելադրեց հայերի կեղծ թրքացում, որը պետք է լիներ առերես, որովհետև ո՛չ կրոնափոխություն էր լինելու, ո՛չ մզկիթ գնալու կամ փաթթոց կապելու պարտավորություն, ո՛չ էլ թլպատում, խոսքը պարզ անվանափոխության մասին էր՝ առանց որևէ արարողության և ձևակերպման... Երվանդը դառնում էր Նուրի»: Չնայած հայերը պաշտոնապես համարվելու էին թրքացած, «ազատ էին հաճախելու եկեղեցի»: Ա. Անտոնյանը նշված «Տարեգրությունում» Համա քաղաքում կուտակված մի քանի հազար հայերի թուրքացման մասին պատմում է, թե տեղի կառավարիչ Ֆիրուզան հրամայեց, որ

---

[1] R 14090, Ab. 424016.

[2] Wien HHSTA PAXII 463 Damaskus, 7 November 1916.

[3] Նույն տեղում:

բոլոր հայերը 12 ժամվա ընթացքում թրքանան: Հայերը պարզապես իրենց անունները փոխեցին և դարձան «քրիստոնյա թուրքեր»: Հաջորդ օրը, երբ ստացվեց Համայում եղած բոլոր հայերին Հաուրան քշելու Թալեաթի հրամանը՝ Ֆիրուզան պատասխանեց. «Համայի ամբողջ շրջանում հայի անուն կրող անգամ կաթնակեր մանուկ չի մնացել»:

Դամասկոսում Գերմանիայի հյուպատոս Լոյտվեդը գրում է. «Երեք շաբաթ առաջ մտադրություն ունեի Դամասկոսի գերմանական առաքելության Հանովերի վարչության հովանու տակ քաղաքի և մերձակայքի հայերի համար կազմակերպել հիվանդանոց, խոհանոց և բաղնիք: Սակայն, երբ այդ մասին տեղյակ պահեցին Ջեմալ փաշային, նա մտերմորեն ասաց, թե ինքը կուզենար հայերի վիճակը հնարավորին չափ թեթևացնել, բայց խիստ հրաման ունի Կ. Պոլսից՝ թույլ չտալ հայերի համար նպաստամատույց ձեռնարկ գերմանացիների և ամերիկացիների մասնակցությամբ, քանի որ դրանով կարող է խրախուսվել հայերի ընդդիմությունը թուրքական կառավարությանը, եթե նրանց հույս ներշնչվի, թե որևէ օտար կառավարությունից կարող են օգնություն ակնկալել»[1]:

Լոյտվեդը նկատում է, թե օգնությունը հայերին հնարավոր է միայն այն վայրերում, որտեղ հյուպատոսություններն ի զորու են վերահսկելու թուրք պաշտոնատարներին[2]:

Մերժվեց նաև ԱՄՆ-ի հյուպատոսի դիմումը Ասորիքում գտնվող հայերին օգնելու վերաբերյալ[3]: Բոլոր նպաստամատույցները իշխանություններից թաքուն էին գործում, որովհետև հայերին օգնելու բոլոր ձեռնարկները խստորեն արգելվում էին[4]: Թուրքական նպաստամատույց հանձնաժողովի նախագահ Քյազրմի կարծիքով՝ հայերին օգնելու վրա դրված արգելքի պատճառն այն է, որ «... կառավարությունը ... նպատակ ունի բնաջնջելու տարագրյալներին», թերևս Հալեպում հավաքված հայերին Դեր Զոր և Մոսուլ քշելու նպատակն էլ այդ է՝ նրանց հանձնել բեդվիններին հոշոտվելու[5]: Դամասկոսի գերմանական հյուպատոսության տվյալներով տարածքում դեռևս 30.000 հայ կենդանի էր «ողբալի վիճակում»: Հյուպատոս Վուստրովի հաշվումներով՝ Մոսուլի շրջանում կար մոտ 8000 հայ, «մեծ մասամբ կանայք ու երեխաներ»[6]:

Նիպագեն ներկայացնում է գերմանացի ինժեներների պատմածները, որոնք վկայում են Բաղդադի շրջակայքում կատարված սադիստական գործողությունների մասին: «Նրանցից մեկը՝ հալեպցի պարոն Մ. Գրիեֆը պատմում է, որ Թել-Աբիադում և Ռաս-ուլ-Այնում տեսել է բռնաբարված մերկ կանանց դիակներ, կիտված երկաթգծի վրա: Նրանցից շատերի հետանցքը փայտ էր խրած»[7]:

«Բողոքական քահանայի մատների եղունգները դուրս էին քաշել: Բաղ-

---

[1] **Լեփսիուս Յո.,** նշվ աշխ., փաստ. № 261:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, փաստ. № 294:
[4] Նույն տեղում, փաստ. № 263:
[5] Նույն տեղում, փաստ. № 275:
[6] Նույն տեղում, փաստ. № 329, 333:
[7] "Le Crime de Silence...". p. 127.

մաթիվ քրիստոնյա ընտանիքներում տեսա երիտասարդ հայուհիների,- պատմում է մի գերմանացի,- որոնք ինչ-որ հրաչքով փրկվել էին մահից: Նրանք կամ ուժասպառ ընկած են եղել և մեռած կարծելով թողել են ճանապարհին, կա՛մ հնարավոր է, որ եվրոպացիները մի քանի մարկով հնարավորություն են ունեցել այդ թշվառ արարածներին գնելու նրանց վերջինը բռնաբարած թուրք զինվորներից: Բոլոր երիտասարդ աղջիկները հոգեկան խանգարվածության նշաններ էին ցույց տալիս: Մոտ 14 տարեկան մի աղջիկ օթևան էր գտել ոմն պարոն Կրաուզի Բաղդադ-Հալեպ երկաթգծի դեպոյի պետի տանը: Գիշերը թուրք զինվորները նրան այնքան էին բռնաբարել, որ բացարձակապես կորցրել էր գիտակցությունը[1]: Կահիրեում Ֆրանսիայի դեսպանը Ա. Բրիանին գրում է, որ ականատեսներից մեկն իրեն պատմել է, թե ինչպես 1916 թ. ապրիլի 15-ին Դամասկոսի մի հրապարակում վաճառում էին հայ աղջիկների և երիտասարդ կանանց: Նա մեջբերում է կատարում էնվեր փաշայից. «Կայսրությունը պետք է մաքրվի հայերից և լիբանանցիներից: Առաջիններին մենք կոչնչացնենք սպանելով, իսկ երկրորդներին՝ սովով»[2]:

Բացի Ջեմալից և Էնվերից՝ Դամասկոսի հայության հաշվեհարդարին առնչվում է նաև երիտթուրք մի ուրիշ պարագլուխ՝ Խալիլ փաշան, որի գնդապետներից մեկը Հոլշտեյնին 1915 թ. նոյեմբերի 5-ին ասել է. «Ինքը (Խալիլը) Մոսուլում էլ հայերին կոտորելու դիտավորություն ունի... Վաղը կամ մյուս օրը այստեղ սպասվում են Խալիլի գնդերը, որոնք հայերին ջարդել են հյուսիսային շրջաններում»[3]:

Երկու օր անց Հոլշտեյնը գրեց. «Երեկ այստեղ հասավ Խալիլ բեյն իր սպայակույտով: Հիվանդության պատճառով նա մի քանի օր մնալու է անկողնում», նրա վերը նշված գնդապետը հայտարարեց, թե «գերմանացիներն ուրանում են թուրքերի հետ իրենց բարեկամությունը, որովհետև մտադիր են հայերի հանդեպ գլխապարտություն գործադրել»[4]:

Հավանաբար Դամասկոսում գերմանացի դիվանագետների և թուրք գործիչների միջև հայերի հանդեպ մոտեցումների տարբերությունները խորացել էին: Նոյրատն իր կառավարության անունից պահանջում էր՝ «հայերի դեմ որևէ բան չձեռնարկել»[5]: Դրան հետևում է Ջեմալ փաշայի սպառնալիքը, թե մտադիր է Նիպագեին և Հրետերին «հայկական դեպքերի մասին իրենց հրապարակումների համար հանձնել ռազմական դատարանին» և իսկապես ոստիկանությունն սկսեց փնտրել նրանց[6]:

«Թուրք իշխանությունները,- գրում է Մետերնիխը,- արգելել են անգամ հայ պատրիարքին օգնելու կարիքավոր տարագրյալներին... Նման փաստերն առաջացնում են այն կարծիքը, թե Բարձր Դուռը մերժում է կարոտյալներին որևէ օգնություն, ում կողմից էլ որ դա առաջարկվի»[7]:

---

[1] «Le crime de silence...», p. 128:

[2] **Beylenian A.**, նշվ. աշխ., էջ 223:

[3] **Լեփսիուս Յո.**, նշվ. աշխ., փաստ. № 191:

[4] Նույն տեղում, փաստ. № 190:

[5] Նույն տեղում. փաստ. № 191:

[6] Նույն տեղում, փաստ. № 305:

[7] Նույն տեղում, փաստ. № 256:

Դեսպանը հեռագրեց Բեռլին, թե կառավարական մարմինները երկրի ներսում գտնվում են Միություն և առաջադիմություն կուսակցության կոմիտեի պատասխանատու ղեկավարների և ուրիշ տարրերի ազդեցության տակ. որոնք հոգ չեն տանում հայերի ու տեղական քրիստոնյաների դեմ ուղղված անկարգությունների վերաբերյալ կենտրոնական կառավարության հրամանների կատարման մասին:

Ահա՛ Մետերնիխի ուրիշ հեռագիր՝ հասցեագրված Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը.

Դամասկոսի կայսերական հյուպատոսը նոյեմբերի 17-ին հեռագրում է. «Ջեմալ փաշայի հրամանով այստեղ երկու նախկին կապիտանների, որոնք որպես հրոսակախմբի առաջնորդներ Հայաստան էին գնացել, կախել են հայերին կողոպտելու և դաժան վերաբերմունքի համար:

Ջեմալ փաշայի քաղաքական ճկուն միջոցառումը մամուլի միջոցով տարածվել է: Թե որքանո՞վ է հարմար հօգուտ թուրքերի այս տեղեկատվությունը մեր մամուլում հրապարակել, թողնում եմ ձեր որոշմանը: Այստեղի մամուլում մենք չենք կարող դա հրատարակել»:

Հետաքրքիրն այն է, որ ինքը՝ Ջեմալն էլ վերապահումով էր վերաբերվում այդ ավազակների, մասնավորապես կայսրության թիվ 1 կամ իթթիհադական չեթեապետ Ահմեդի պատժելուն: Նա ծածկագիր ուղարկեց Թալեաթին. «Այստեղ են եկել չերքեզ Ահմեդը և նրա ընկեր Խալիլը: Խալիլի մոտ հայտնաբերվել է ավելի քան 1500 լիրա, երբ չերքեզ Ահմեդի մոտ չկար ոչ մի ղուրուշ: Դրանից եզրակացնում եմ, որ նա մասնակցություն չի ունեցել կողոպուտին: Ես լրիվ համոզված եմ, որ նա (հայերի) կոտորածին մասնակցել է Դիարբեքիրի վալի Ռեշիդի հրամանով:

Դուք ի՞նչ եք կարծում, անհրաժեշտություն կա՞ Ահմեդին վերացնելու: Կամ կարելի՞ է բավարարվել միայն Խալիլին մահապատժի ենթարկելով»[1]:

Ջեմալը ստում էր կամ աչխատում էր դուր գալ Թալեաթին, որովհետև Ահմեդը Թալեաթի «անձնական չեթեն էր», գործում էր նրա հանձնարարություններով ու գտնվում նրա հզոր հովանավորության տակ:

Բացի դա, Ջեմալը չէր ցանկանում մի քանի ճակատով գործել: Գնալով սրվում էին թուրք-արաբական հարաբերությունները, և նա գտնում էր, որ կայսրության անվտանգության չահերը թելադրում են առաջին հարվածն իջեցնել արաբների գլխին:

Մինչև 1916 թ. մարտը Սիրիայում և Լիբանանում քաղցից մահացավ բնակչության 40 տոկոսը[2]: Երիտթուրքական մեծապետականությունը մերժում էր արաբների ազգային ինքնությունը. «Բոլոր օսմանները թուրքեր չեն»: 1915 թ. փետրվար-հունիս ամիսներին Բեյրութում, Դամասկոսում և Հայֆայում տեղի ունեցան բախումներ թուրքական զորքի, ժանդարմերիայի և արաբ բնակչության միջև:

---

[1] ***Zuya S.,*** *Yeni Tarihinden Onemli Devlet Adamlari. Talaat, Enver ve Cemal, Istanbul, 1944, s. 53.*

[2] *Лазарев М., Крушение турецкого господства на Арабском Востоке. 1914-1918 гг., М., 1960, с. 72-73.*

Մեքքայի չերիֆի գլխավորությամբ արաբները ոտքի ելան Թուրքական տիրապետության դեմ[1]: Ապստամբությունը ճնշվեց ու աներևակայելի հաչվեհարդար սկսվեց: «Այն արաբներին,- սպառնացին Թուրքերը,- որոնք ուզում են մեզնից հեռանալ ... մտադիր ենք վերացնել նախքան նրանք կկարողանան իրենց մտադրությունը գործողության վերածել»[2]:

Սակայն արաբների դեմ ծավալված պատժիչ գործողությունները հայերի հանդեպ Թուրքական քաղաքականության մեջ որևէ փոփոխություն չառաջացրեցին:

Հայերի բնաջնջումը Սիրիայում ու Միջագետքում շարունակվեց ավելի մեծ ծավալներով, և դա ոչ միայն նրանց համար տաժանակիր պայմաններ ստեղծելու, այլև ուղղակի ոչնչացման միջոցով: Մի Թուրք սպա հիշում է, որ քրեական տարրերն «արձակվել էին բանտերից և մեկչաբաթյա նախապատրաստությունից հետո ուղարկվեցին արևելք, որպես «Հատուկ կազմակերպության» ջոկատներ, որոնք ամենադաժան հանցագործություններ էին կատարում հայերի դեմ: 1914-1915 ԹԹ. կոտորածները և դրանցում ավազակապետներ չերքեզ Ահմեդի և լեյտենանտ Խալիլի դերը...» ավելի քան հաստատված է: «Իթթիհադի նպատակն էր ոչնչացնել հայերին և դրանով վերջնականապես վերացնել արևելյան վիլայեթների հարցը»[3]:

Ջեմալը մասնակի նչանակության խաղերի միջոցով կարողացել էր ներկայանալ որպես «ինքնուրույն քաղաքականություն վարող» մասնավորապես «հայերին բարեկամ» գործիչ: Դա բխում էր ո՛չ միայն նրա բնավորությունից, անսանձ փառամոլությունից, այլև իր հանդեպ երիտԹուրքական եռապետության մյուս երկու անդամների վերաբերմունքից, այդ եռապետությունում նրա «երկրորդական դերից»:

Հայերի հանդեպ քաղաքականության համակարգում Ջեմալը ձգտում էր միայն մասնակի չտկումներ մտցնել, առաջին պլան մղել արաբների բնաջնջումը, քաջ գիտենալով, որ հայերից դատարկված Հայաստանն ու անապատներում դեգերող հայերն այլևս վտանգավոր չէին:

Արաբներին հաչվեհարդարի ենթարկելու Ջեմալի կողմնորոչումը բացատրվում է նաև նրա պաչտոնական վիճակով և քաղաքական ծրագրի չահերով: Ջեմալը ո՛չ միայն Թուրքական 4-րդ բանակի հրամանատարն էր, այլև Սիրիայի և Լիբանանի տիրակալը, փոխարքան: Նա այդ երկրներն ու բանակն ուզում էր պատվանդան դարձնել իր վերելքի, Օսմանյան կայսրության վերածնման և դրա Թագին տիրանալու համար:

Այնուամենայնիվ, Ջեմալի մասին հայկական չրջաններում եթե ոչ համակրական, ապա առանձնահատուկ մոտեցումը չարունակեց գոյատևել: Ֆրանսիական արխիվներում պահվող փաստաթղթերից մեկում կարդում ենք, թե Ջեմալը պնդում էր, որ եղեռնը դադարեցվի և հայերն օգտագործվեն որպես բանվորական ուժ: Նա հաջողեց 100.000 հայի կյանք փրկել: Այդ կապակ-

---

[1] «The Outlook», 20 December 1916.

[2] «The Round Table» (London), June, 1917. p. 27.

[3] Turkei 183. 40, A468, 20-ը դեկտեմբերի 1915 Թ., նաև Turkei 158, 24, A1373, 3-ը հունվարի 1916 Թ. Բաստենդորֆի 1915 Թ. հունվարի 3-ի զեկուցումը, FO 608/244.

ցությամբ հայերը երեք ժամ չարունակ Ջեմալի տան առաջով անցան «հարգանքի լռությամբ»: Նշանակություն չուներ, որ այդ փրկությունն այլ բան չէր, եթե ոչ հայերին քշել Սիրիայի և Պաղեստինի ամենահեռավոր ծայրամասերի ճամբարները, որտեղ նրանք ապրում էին բաց երկնքի տակ, զբաղվում հարկադիր աշխատանքով՝ ստանալով չորս սու վճար: Նրանց հաճախ զրկում էին անգամ ջրից, ցուցադրաբար տակառների ջուրը դատարկում էին գետնին, պապակած մարդկանց աչքի առաջ: Մի քանի չաբաթում այդ ճամբարների հայերի կեսը մահացավ քաղցից ու ծարավից: Նաև Ջեմալն էր հայ ընտանիքների անդամներին միմյանցից բաժանում: Նա պարծենում էր, որ իրեն հաջողվեց հայերին հավաքել անապատային, ամոլ չրջաններում: Ջեմալը թույլ չէր տալիս, որ որևէ օտարերկրացի այցելեր գաղթականական այդ ճամբարները[1]:

Անգամ Հր. Աճառյանը Ջեմալի մասին գրում է, որ նա «ավելի հեռատես էր» և «զգում էր, որ ուշ թէ չուտ պատերազմը պիտի վերջանայ յօգուտ Անգլիայի եւ Ֆրանսիայի, եւ թէ վերջապէս հայերը Կիլիկիայի տէրը պիտի դառնան: Այս համոզմամբ նա դարձել էր հայասէր...»: Նա նաև միտք էր հղացել «հայ-սիրիական մի նոր պետութիւն կազմելու եւ իրեն թագաւոր յայտարարելու»[2]:

Նման մտքերի ու պատկերացումների կարելի է հանդիպել ոչ փոքր թվով հայ և օտար հեղինակների մոտ, որոնք ոչ միայն թյուր տեղեկատվություն, այլև ցանկացած իրողության փոխարեն ներկայացնելու ձգտումն էին: Ջեմալը կազմակերպեց Ալեյի ռազմական տրիբունալը՝ պետական դավաճանության մեջ մեղադրելով արաբ գործիչների մի մեծ խմբի, որոնք ընդդիմացել էին օսմանյան գերիշխանությանը և օրենքից դուրս էին հայտարարվել[3]: 1916 թվականի մայիսի 6-ին նրանցից 35-ը կախաղան հանվեց Դամասկոսում և Բեյրութում. 54-ը դատապարտվեց ցմահ բանտարկության, չատերն աքսորվեցին: Նրա օգնականի վկայությամբ՝ Ջեմալ փաչան մտածում էր հայ գաղթականների կարավանների մի մասը վերաբնակեցնել Հաուրանի չրջանի գյուղերում և չեներում (Հորդանան գետից արևելք): Անդրադառնալով նրանց մահմեդականացնելու Ջեմալի մտադրությանը, Ֆուադը գրում է. «Հնարավոր էր, որ կրոնափոխվածները քրդերի և չերքեզների նման կարողանային ապահովել Թուրքիայի անվտանգությունն արաբներից»: Այդ նպատակով Ջեմալը կազմեց հատուկ հանձնաժողով («Հեյրթը մախսուսա»), որի հավաքներից մեկը տեղի ունեցավ Ֆուադի գրասենյակում[4]:

Ջեմալը երկու թեկնածու էր հրավիրել ղեկավարելու այդ կազմակերպությունը: Նրանցից մեկը Հուսեյն Քյազրմն էր (Քազրի)՝ թուրքական «Թանին» լրագրի հիմնադիրը և Սալոնիկի ու Դամասկոսի նախկին կուսակալը: Նա «հուսալի» մարդ էր: Ստամբուլի իր դեսպանին ուղարկած զեկույցում Դամասկոսում Գերմանիայի հյուպատոսը վերապատմում է իր գաղտնի զրույցը Քյազրմի հետ. «Նախորդ օրը Ջեմալ փաչայի կազմակերպած ճաչկերույթում ես հան-

---

[1] *АН Арм. ССР, Геноцид армян во французских архивах, с. 17.*

[2] ***Աճառյան Հր.,*** *նշվ. աշխ., էջ 376-377:*

[3] *"International Journal...", նշված համարը:*

[4] *Նույն տեղում:*

դիպեցի Քյազըմին: Երբ նա ինձ տեսավ, ասաց, որ չտապ խոսակցություն ունի: Նա անչափ հուզված հայտնեց, որ պատրաստվում է հրաժարական տալ, քանի որ ի վիճակի չէ այլևս կատարել իր պաշտոնական պարտականությունները և որ զինվորականները ամեն ինչ անում են իր հրահանգներին հակառակ, թե ինքը լրիվ հիասթափված է, չի հավատում, որ կառավարությունն իսկապես մտադիր է օգնել գաղթականներին: Նա նույնիսկ վախենում է, որ Բարձր Դռան նպատակը բնաջնջումն է: Ոչնչացնելու այս դաժան քաղաքականությունը, հայտարարեց նա, մեր խայտառակությունն է և պատերազմից հետո չատ կվնասի Թուրքիային: Նա ինձ խնդրեց խիստ գաղտնի պահել մեր միջև տեղի ունեցած խոսակցությունը»:

Ջեմալը հանձնարարել էր Թուրք կին գրող Խալիդե Էդիբին նախաձեռնել ստեղծելու դպրոցական նոր համակարգ, որը կոչված լիներ վերացնելու ֆրանսիական ազդեցությունը Դամասկոսում, Բեյրութում և, ընդհանրապես, Լիբանանում ու դա փոխարինել թուրքականով: Էդիբը հանդիպել էր Քյազըմին և նրա մասին արտահայտվում էր որպես «իսկական մարդասերի», որը հրաժարական է տվել, քանի որ գաղթականների ճակատագրի հարցում «տարաձայնություններ է ունեցել կենտրոնական իշխանությունների հետ»: Երուսաղեմում Գերմանիայի հյուպատոս Բրոդը որոշ ժամանակ անց գրել է, որ Քյազըմի պաշտոնափոխությունից հետո Ջեմալն սկսել է «դաժան միջոցներ» գործադրել: Արդյունքն այն եղավ, որ միայն Բեյրութում և Հերաթում 3500 հայ գաղթականներ բռնի մահմեդականացվեցին[1]:

Ջեմալի հրավիրած մյուս թեկնածուն Հասանն էր (Ամկա): Նա չերքեզ սպա էր, զինվորական մատակարարման խմբի անդամ: 1916 թվականի օգոստոսին եկել էր Հաուրան՝ ղեկավարելու հայ գաղթականների վերատեղավորումը: Դամասկոսում իթթիհադականների պատասխանատու քարտուղար Նեշադը խոչընդոտում էր այդ գործը: Այստեղ, ի տարբերություն Սիրիայի և Միջագետքի հյուսիսային շրջաններում կատարվող կոտորածների, բոլորին բռնի դավանափոխ էին անում: Ստամբուլում բրիտանական գերագույն լիազորի արտոնագրած մի փաստաթղթում Հասանը վկայություն է տվել, որ հայ որբերին նույն կերպ բռնի դավանափոխ էր անում Դամասկոսի կուսակալ Թահսինը, որն այնտեղ էր տեղափոխվել Էրզրումից[2]:

Հայտնի հրապարակախոս Սուլեյման Նազիֆը՝ Մոսուլի (1915 թ.), հետագայում՝ Բաղդադի վալին, Ստամբուլ ճանապարհվելիս անցել էր Ռաս-ուլ-Այնով: Սարսափած իր տեսածից, նա Թուրք պաշտոնատարներին գրեց. «Հայ ժողովրդի բնաջնջումը կդառնա Թուրքիայի պատմության ամենասև էջը»[3]: Բաղդադի երկաթուղու գերմանացի ծառայող Վ. Սփայքերը մեջբերում է բռնագաղթի Թուրք լիազորի խոսքերը. «Այս անգամ մենք հայերի հետ հաշիվները կմաքրենք, ինչը վաղուց էինք ուզում անել»[4]:

Կատարված դաժանություններն ընդունել է նաև ներքին գործերի նախա-

---

[1] "International Journal...", նշված համարը:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

բարի տեղակալ Ալի Մունիֆը: Նա Լեռնալիբանանի մութասերիֆ էր, երբ կոտորածները համատարած բնույթ ստացան Ջեմալի վերահսկողության տակ գտնվող նահանգներում:

Դրանից հետո Ա. Մյունիֆին առաջ քաշեցին և հասարակական գործերի նախարար նշանակեցին: Նա անգլիացիների կողմից Մալթա կղզում մեկուսացված բարձրաստիճան իթթիհադականներից միակն էր, որը բրիտանական հրամանատարությանը հղած իր նամակներում ընդունում էր «հայերի բնաջնջման օսմանյան քաղաքականության իրողությունը», միաժամանակ նշելով, որ դրա համար ինքը պատասխանատու չէ: Իր «Հուշերում» Ջեմալ փաշան գրում է, որ ինքը կենտրոնական կառավարությանն առաջարկել էր տեղահանվածներին տեղավորել Անկարայի, Կոնիայի և Կաստամոնուի նահանգներում, բայց Կ.Պոլիսը պատասխանել էր, որ չմիջամտի և այդ գործը թողնի քաղաքացիական պաշտոնյաներին[1]: Նա գրեթե նույն բանն ասել էր նաև Գր. Թաթուլյանի հետ ունեցած զրույցի ժամանակ. «...Ես նախապէս ծրագրուած հայկական ջարդերուն դէմ էի, սակայն Ի՞նչ կրնայի ընել. իմ դիմացս կային Թալէաթը, Էնվերը եւ ամբողջ իթթիհատական ջոլիրը:

Երբ Թուրքիոյ բոլոր նահանգներուն հայութիւնը տեղահան ըլլալէ առաջ, այրերը հաւաքելով ամելէ Թաբուրի ըսելով, կը տանէին կը ջարդէին ձորերու մէջ եւ վերջն ալ անոնց ընտանիքները տարագրելով, առեւանգելով, քաշքշելով կը տանէին կը ջարդէին, ես այդ օրերուն կուսակալ էի: Իմ կուսակալութեանս շրջանին Ատանայի մէջ բան մը պատահեցաւ: Նոյնիսկ Հաճնոյ մէջ ձերբակալուող հնչակ-դաշնակ յեղափոխականները, որոնք Վճռաբեկ Ատեանին կողմէ մահուան դատապարտուած էին, ես անոնց մահավճիռը ցկեանս բանտարկութեան փոխեցի:

Եթէ գիտնայի որ այս սրիկաները հայ ազգին դէմ այսքան չարիք պիտի գործեն... կ'անցնէի հայոց կողմը իմ բանակովս եւ ռազմանիւթով միանալով եւ կազմակերպելով Հաճընն, Զէյթուն եւ Կիլիկիոյ այլ շրջանները, կրնայի Կիլիկիայի մէջ անկախութիւն հռչակել: Սակայն ես ալ հայերուն նման շատ ուշ հասկցայ սարքուած դաւադրութիւնը: Էնվեր փաշան Դամասկոսի մէջ ինծի հետ տեսակցելէ ետք, մեկնեցաւ Սթամպուլ, ան հեռագիր հեռագրի ետեւէ ինծի կը հրահանգէր, «Ջարդեցէ՛ք հայերը, բնաջինջ ըրէ՛ք, ոչ ոքի խնայեցէ՛ք»: Ես այդ օրերուն մէկ միջոցի դիմեցի ազատելու համար հայերը իսկական բնաջնջումէ: Մարդիկ ղրկեցի զանազան գիւղեր ու քաղաքներ պատուիրելով, որ հայերն իրենց անունը փոխեն եւ երբեմն ալ երեսանց կրօնափոխ ըլլան, որպէսզի ողջ մնան»[2]:

Դամասկոսում Էնվերի հետ Ջեմալի զրույցի նշված հատվածը հետևյալն է. «Ճեմալ դառնալով Էնվերին՝ կ'ըսէ.

– Այս ճամբան չինողները բոլորն ալ հայեր են:

Էնվերի դեմքը կը մթագնի ու դառնութեամբ կը պատասխանէ.

– Ճեմա՛լ, ես գիտեմ դուն հայ ժողովուրդին վրայ կը գթաս, կը ցաւիս անոր ենթարկուած վիճակին եւ այդ իսկ պատճառով կ'ուզես սիրտս շարժել,

---

[1] *Տե՛ս "International Journal..." նշված համարը:*

[2] ***Սահակեան Հ.,*** *Հայ դատ, Պէյրութ, 1974, էջ 42-44:*

գիս կակուղցնել: Բայց լաւ գիտցիր, որ կը սխալիս, որովհետեւ այս ազգին գավակներէն եթէ մէկ հատ իսկ ողջ մնայ, ան կրնայ մեր գլխուն փորձանք բանալ: Պէտք չէ խղճահարուիլ, պէտք է ջարդել անոնց մինչեւ վերջին մարդը»[1]:

Եղաւ ժամանակ, երբ ոչ միայն Ջեմալն, այլև Թալեաթը, Էնվերը, երիտթուրք մյուս պարագլուխները չքմեղանալու վարձեր կատարեցին: Սակայն դրանք միայն խոսքեր էին և ընդհանուր բան չունեին նրանց քաղաքական վարքագծի հետ:

Էնվերը և Թալեաթը գերմանացի երեսփոխան Մ. Երցբերգերի հարցերին (1916 թ. փետրվարի 10-ին) պատասխանեցին.

Էնվեր. «Հայերի դեմ այլևս միջոցներ չեն ձեռնարկվի, իսկ քշված հայերը կբնակեցվեն փակ բնակավայրերում»:

Թալեաթ. «Հայկական եկեղեցիները կբացվեն: Քրիստոնյաների արտաքսումները կամ բռնությունները Սիրիայում բացառվում են: Հոգևոր ճեմարանները և ուսումնական հաստատությունները կարող են նորից բացվել, միայն թե դրանից չպետք է տուժեն Թուրքիայի պետական շահերը»[2]:

Այդ նույն օրերին, 1916 թ. փետրվարի 26-ին Ա. Նուրին ծածկագրեց. «Տեղեկութեան համար կը հաղորդեմ, թէ արհեստաւորի հանգամանքով Սուրիա մեկնողները բացառութիւն ըլլալով, մինչեւ հիմա (անապատները) դրկուած հայերուն հազիւ մէկ քառորդը տարագրութեան վայրերը հասած է: Մնացածները բնական պատճառներու բերմունքով, ճամբաները մեռած են: Կարգ մը պատճառներու հետեւանքով մինչեւ հիմա Հալէպէն չհանուողներն ալ չուտով դրկելու համար հարկ եղած միջոցները ձեռք առնուած են[3]:

Նորից ձայն տանք Ալի Ֆուադին. «Ջեմալ փաշայի հետ հրահանգավորման նպատակով գտնվում էինք Ջերել Դրուզի լեռներում: Մի անգամ երեկոյան գնացինք ամայացած գյուղը... փաշային ծափահարություններով ընդունող բնակչության մեջ տեսանք մերկ, հյուծված, կմախք հիշեցնող մարդկանց: Նրանք լռում էին ու ծափահարում: Խոսելու համար ուժ չունեին: Ովքե՞ր են այս մարդիկ, հետաքրքվեցի ես և իմացա՝ տեղահանվածներ էին...

Բերքահավաք էր: Շրջապատում ցորենի չեղջերի լեռներ էին... Խնդրեցի Ջեմալին այդ խեղճերին տրամադրել մի քանի տոննա ցորեն: «Ֆուա՛դ բեյ,- ասաց Ջեմալ փաշան,- այդպես էլ ոչինչ չհասկացար»[4]:

Ջեմալի բանակի ստորաբաժանումներից մեկի հրամանատար Պեյսը հրաման արձակեց. «Նախ կը ձերբակալէք Նուսէյպինի մեր մթերանոցին պատասխանատու կեավուրները... Զանոնք նեղը կը դնէք ու կը ստիպէք, որ խորհուրդ տան իրենց ազգակիցներուն Հեռանալ Համդա աղայի հողերէն եւ ապահովութեան համար ապաստանիլ զինուորական մթերանոցները... Մինչ այդ կը հասնին մեր ներկայացուցիչները, շարժման կը մղեն ջարդարար խումբերը, միւս կողմէ, կրակի կու տան քարիւղով օծուած մթերանոցները...

---

[1] **Սահակեան Հ.,** նշվ. աշխ., էջ 40:

[2] Wien, Dioseson Archiw; Maria Emfangnis. Verein, 10 Februar 1916.

[3] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 169:

[4] Ali Fuad Erden, նշվ. աշխ., էջ 120-123:

Այսպես գործելով կը փակեն հաշիւը Նուսէյպինի 12.000 հայերուն...»[1]:

«Բաբ, Մեսքենե և Դեր Զոր,- գրում է «Literary Didgest»-ը 1917 թ. սեպտեմբերի 1-ին,- այս երեք վայրերը երբեք չեն մոռանա հայերը: Դուք գիտե՞ք, թե ինչ է կատարվել այդ վայրերում մի քանի ամիս առաջ: Գավառապետ Աթրֆի հրամանով մոտ հարյուր հազար հայ կոտորվեց»:

Պատմել է ականատեսը. «Բոզանթիում ես տեսա վեց բաց ապրանքատար վագոն հայ երեխաներով լեցուն, որը մեկնում էր «անհայտ ուղղությամբ»: Ի՞նչ կլինի այդ երեխաների ճակատագիրը: Արդյո՞ք հույս կա, որ մեր դժբախտ աղջիկ երեխաները կենդանի մնան:

Մի օր հանդիպեցի հազարավոր անմեղ կանանց, աղջիկների և երեխաների բացօդյա կացարանի, որտեղ նրանք տառապում էին աննկարագրելի տանջանքներից: Ես առաջ անցա, որովհետև այլևս տանել չէի կարող նրանց անմարդկային տանջանքները: Բարձրանալով մի փոքրիկ բլուրի վրա, տեսա 5-6 տարեկան մի երեխայի: Ես թուրքական համազգեստով էի: Երեխան մոտեցավ ինձ ու թուրքերեն բացականչեց. «Ի սեր Աստուծո, ինձ մի կտոր հաց տվեք: Հինգ օր բան չեմ կերել, բացի սրանից»: Նա ցույց տվեց սեխի կեղևը, որը գտել էր ճանապարհին: Ես նրան պատասխանեցի հայերեն: Խեղճ տղան նետվեց գիրկս՝ ասելով. «Դուք հա՞յ եք»: Նա իմ գրկում մնաց մի քանի րոպե, այլևս որևէ մեկ բառ չասելով: Բայց ես զգում էի տաք արցունքները, որ թափվում էին իմ այտերի ու վզի վրայով:

Եփրատի ջրերը, անապատի ավազները դարձել էին հայ ազգի գերեզմանները: Ես այլևս չեմ կարողանում ողբալ: Արցունքներս քարացել են աչքերիս»:

"The New York Times"-ը 1919 թ. մարտի 18-ին հաղորդեց, որ Թևֆիկ փաշան Հռոմում տեղի ունեցած հարցազրույցի ժամանակ ասել է. «Ես խնդրել եմ միջազգային հանձնաժողով կազմել հաստատելու հայկական կոտորածների մասին եղած փաստերը: Այդ դեպքում Եվրոպան կիմանա ճշմարտությունը: Մենք ո՛չ միայն չենք հերքում այդ ցավալի պատահարը, այլ նաև խորապես ցավում ենք դրա համար: Մուսուլման հանցագործները կպատժվեն: Միաժամանակ ես ուզում եմ, որ հայկական ավազակախմբերի պարագլուխները, որոնք մեղավոր են հազարավոր մուսուլմանների բնաջնջման համար, նույնպես դատվեն ու պատժվեն: Արդարադատությունը չպետք է տարբերություն դնի քրիստոնյաների ու մուսուլմանների միջև: Նա պետք է ընդհանուր լինի բոլորի համար»:

Նույն թերթը 1919 թ. ապրիլի 19-ին գրեց. «Երբ անգլիական ու ֆրանսիական զորքերն առաջ էին չարժվում Փոքր Ասիայում, թուրքերը դեռևս հետապնդում էին հայերին: Փաստն այն է, որ ստորագրված զինադադարը որևէ դեր չի խաղում: Այս կամ այն ճանապարհով, միայնակ կամ խմբերով, հայերն սպանվում էին: Ես մի դեպք գիտեմ, երբ հարյուր հոգի մորթվեց և մեկ ուրիշը, երբ 40 հոգի գնդակահարվեց»: Այդ թերթի 1919 թ. հունիսի 7-ի համարից.

---

[1] ***Շաւարշեան Ա.,*** *Մեծ եղեռնը Հայոց, Պուէնոս Այրէս, 1987. էջ 475:*

«Գնդապետ Հաուխերը՝ Բեյրութի զինվորական կառավարիչը, ասաց, որ վերջին տվյալներով՝ հայերի միայն 30 տոկոսն է ողջ»:

Հայ սպա Հ. Գարասեֆիլյանին Բոզանթիի մերձակայքում ցույց են տալիս մի լեռնալանջ ու կիրճ, որտեղ սպանված թափված էր 10.000 մարդ՝ հիմնականում կին և երեխա: Դիակներն այլանդակել էին թե՛ ջարդարարների հարվածները և թե՛ անգղներն ու բորենիները: Եվ թուրք պաշտոնատարներն անբմբռնելի դաժանությամբ «գանգերու եւ ոսկորտիքի բուրգեր կազմած, կը ցուցադրէին որպէս իրենց հաւատարմութեան ապացոյց սուլթանական բարբարոս կառավարութեան»[1]:

«Իսլահիեում թշվառ վիճակում գտնվող տարագրվածների սոսկալի կուտակում կար, իսկ Հալեպի կայարանում հարկադրված էինք 15 օր մնալ նույն պատճառով»:

Խոսքն այն մասին է, որ «Հայասեր Ջեմալի կայսրությունում» հայերը բնաջնջվում էին անգամ Մուդրոսի զինադադարից հետո: Ինչ վերաբերում է մինչև զինադադարն ընկած ժամանակաշրջանին, մասնավորապես 1916 թվին, ապա դա հանդիսացել է հայերի գլխավոր սպանդանոցը:

Բաղդադի երկաթուղու չինարարները հաճախ էին բանում այնպիսի տարածքներում, որոնք «մի քանի շաբաթ առաջ եղել էին սարսափելի եղեռնի հրապարակներ»: 1916 թ. փետրվարին Օսմանիեի մոտակայքում Ֆիրբյուխերին ցույց են տվել մի դաշտ, որտեղ մորթել էին մոտ 1000 տղամարդու, կնոջ ու երեխայի: «Իսլահիեից ոչ հեռու ես տեսա կանանց ու երեխաների ամբոխներ, որոնք պարսերի նման փակեցին մեր գնացքը: Դրանք կմախքներ էին՝ քրջերով ծածկված անասնական վայրենություն, խելագարություն էր փայլատակում նրանց հայացքներում:

Հարավում ընդհուպ մինչև Երուսաղեմ և արևելքում՝ մինչև Մոսուլ հեղվում էր տանջահար հայ ժողովրդի արյունը... Դամասկոսում առավոտները նրբանցքներում հավաքում էին քաղցից մեռած երեխաների դիակներ, երբեմն՝ 80 դիակ: Մեսքենեի մոտ կար մի խոշոր համակենտրոնացման ճամբար, որտեղ հայերը դատապարտված էին սովամահության: Թուրքական տվյալներով՝ այնտեղ հորված էր 55.000 հոգի: Դեր-էլ-Զորի անապատ ուղարկված 60.000 հայերից գրեթե ոչ ոք կենդանի չմնաց: Բաբում 1029 հայ քաղցից մեռավ 2,5 օրում[2]:

"Deutsche Allgemeine Zeitung"-ի 1927 թ. ապրիլի 28-ի համարում տպագրվեց Գոլցի 1915 թ. նոյեմբերի 22-ի նամակը ուղարկված Հալեպից. «... Հաջորդ առավոտ անցա գլխավոր թունելն ու դուրս եկա Հյուսիսային Սիրիական հարթավայր: Այստեղ մեր հայացքին հառեց ողորմելի տեսարան՝ փախստական հայերը հաստատվել էին Տավրոսի հարավային ստորոտում, անսահման թշվառության մեջ... Մի ամբողջ ժողովրդի սարսափելի ողբերգություն: Հազարավոր ու հազարավոր անպաշտպան մարդիկ գնում էին հանդիպելու անհայտ ապագային, առանց սննդամթերքի, առանց մատակարարման: Շատերը մեռ-

[1] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 624:

[2] **Фирбюхер Г.**, նշվ. աշխ., էջ 61:

նում էին ճանապարհին և նրանց դիակներն ընկած էին մեռնելու տեղերում»:

Գերմանացի մարշալը, «Թուրքական բանակի հայրը», ինքը նույնպես զոհ դարձավ իր «հավատարիմ» աշակերտների դաժանության: Նա հանկարծամահ եղավ 1917-ին Կուտ-էլ-Ամարայում: Նոգալեսի վկայությամբ՝ նրան կործանեց Խալիլ փաշան, մարշալին տեղավորելով վարակված վրանում՝ պահելով քաղցած[1]:

Պալավիչինին 1916 թ. մարտի 10-ին հեռագրեց Վիեննա, որ 700.000 հայ քշվել է Դեր Զոր՝ անապատ, Ջեզիրեի գայմագամն ինքն է ղեկավարում հրոսակախմբերին ու հարձակումներ գործում հայերի քարավանների վրա[2]:

Նոյըմ բեյի հիշողությունների մեջ կարդում ենք, որ 1916 թ. երեք վիթխարի ջարդեր էին տեղի ունեցել: Առաջինը՝ Ռաս-ուլ-Այնում՝ 70 հազար հոգի, երկրորդը՝ Ինթիլլիում՝ 50 հազար և Դեր Զորում, որտեղ Զեքի փաշան ոչնչացրեց 200 հազար հայ: «Եթէ այդ երեք տեղերուն, մասնաւորաբար Ռաս-ուլ-Այնի եւ Տէր Զօրի մէջ, մասնակի սպանութեանց, թշուառութեան, հիւանդութեան եւ անօթութեան զոհերն ալ հաշուենք, անապատներուն մէջ մեռած կամ սպաննուած հայերուն թիւը մէկ միլիոնը կ՚անցնի: Միմիայն թիֆուսէն զոհուեցան 150 հազար հոգի Իսլահիէի մէջ, 60 հազար՝ Կասթմայի եւ Ազազի մէջ, մօտաւորապէս 80 հազար՝ Պապի մէջ, աւելի քան 100 հազար հոգի՝ Մեսքենէի մէջ (Անտոնյանը նշում է, որ այս թվերը իրեն հայտնել են մեռել թաղողները)... առանց հաշուելու Հալէպի, Եփրատի երկայնքը գտնուող միւս կայքերուն եւ Ռաս-ուլ-Այնի ու Տէր Զօրի մէջ մեռածները: Իմ Մեսքենէ գտնուած ատենս,- շարունակում է Ա. Անտոնյանը,- օրական մահերու միջին թիւը 300-500 էր: Պապի մէջ ՝ միակ օր մը 1111 ինկեր էին: Եւ այս դիակները անթաղ կը մնային, կը հոտէին, կ՚որդնոտէին»[3]:

* * *

Դեր-էլ-Զորը Եփրատի աջ ափին է՝ Ռաքքա-Բաղդադ ուղու վրա, Հալեպից 150 մղոն հարավ-արևելք և Բաղդադից 330 մղոն հյուսիս-արևմուտք: Համանուն սանջակի կենտրոնն էր, որի մեջ մտնում էին Սաբուկան, որ վերածվեց մի վիթխարի բացօդյա համակենտրոնացման ճամբարի և Ռես (Ռաս)-ուլ-Այնը, որը նույնքան վիթխարի սպանդանոց դարձավ: Արյունռուչտ հաշվեհարդարի օջախների վերածվեցին նաև Մեսքենեն, Ամմանը, Ռաքքան, Զիարեթը:

Երբ պատերազմն սկսվեց՝ Դեր Զորի մութեսարիֆը Ալի Սուադն էր, որը ղեմ էր հայերի բնաջնջմանը, մասնավորապես Ռաս-ուլ-Այնում մարդկանց հյուծելու միջոցով մեռցնելուն: Գաղթականական տնօրինության ղեկավար Ա. Նուրին Սուադի այդ «թուլությունը» չուտ նկատեց և բողոքեց վալի Արդուլ-խալիկին: Վերջինս Սուադին կարգադրեց կատարել «կառավարության սուրբ

---

[1] **Фирбюхер Г.**, նշվ. աշխ., էջ 62-63:

[2] Wien, HHSTA PA XII 463, Damaskus, 10 մարտի 1916 թ.:

[3] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 31:

ձեռնարկումը»: Սուադը հրաժարվեց: Հարցը լուծվեց նրան աշխատանքից ազատելով: Դեր Զորի մութեսարիֆ նշանակվեց Էվերեկի գայմագամ, տեղի հայության դահիճ Սաիդ Զեքին[1]: «Զափազանց չար էր բնաւորութեամբ,- գրում է Ա. Անտոնյանը,- եւ արդէն Կեսարիոյ հայերը ջարդ ու փչուր ըրած էր զարհուրելի պայմաններու մէջ»[2]: Նրան աշխատանքի տեղավորելը Դեր Զոր պատահական չէր: Որոշված էր այդ սանջակը վերածել հայության գլխավոր սպանդանոցի ու գերեզմանատան: Դեռ մինչև նրա նշանակումը Նայիմը հայերին ասել էր. «Տէր Զօր ղրկուելիք գաղթական հայերը, առանց բացառութեան, պիտի կոտորուին հոն չհասած, ճամբու ընթացքին»[3]: Զեքիի Դեր Զոր գալուց մեկ չաբաթ անց սկսվեց ջարդը, ոչնչացվեց 150.000 հոգի:

Մի եվրոպացի, որ անձամբ եղել էր Դեր Զորում, այդ մասին գրում է. «Մի քանի ամիս առաջ [Դեր] Զորում, քաղաքից դուրս գտնվող ճամբարներում, տեղավորվել էին 30 հազար հայեր, հանձնված մութեսարիֆ Ալի Սուադ բեյի պահպանությանը... տարագիրները չնորհակալ էին նրանից, քանի որ փորձեց թեթևացնել իրենց թշվառությունը: Նրա չնորհիվ էր, որ գաղթականներից ոմանք փողոցային առևտրի միջոցով կարող էին որոշ վաստակ ունենալ: Դա ապացուցում է, որ եթե անգամ մի պահ հավատանք, թե ինչ-որ պատճառ պահանջել էր հայերի զանգվածային արտաքսում՝ Հայկական հարցի լուծման հետ առնչվող դժվարությունները կանխելու նպատակով, այնուհանդերձ թուրքական իշխանությունները, ելնելով սեփական պետության շահերից ստելու կարիք չէին ունենա, եթե հայերին այնպիսի տեղեր փոխադրեր, որտեղ նրանք կարողանային աշխատանք գտնել և զբաղվել արհեստով կամ առևտրով: Նրանք կարող էին ուղարկել մշակովի հողեր ունեցող վայրեր, որտեղ հիմա, երբ երկրագործությունը անտերության է մատնված, հայերը գործ կգտնեին: Բայց ոչ: Սա կանխամտածված ծրագիր է. ոչնչացնել հայ ցեղը և այսպիսով մեկ հարվածով վերացնել Հայկական հարցը: Գործողության ուրիշ եղանակով այս նպատակին հասնել չէին կարող:

Նպաստավոր պայմանները, որոնցից օգտվում էին Դեր-էլ-Զորի հայերը, մատնություն անելու առիթ հանդիսացան Կ. Պոլիսի կենտրոնական գերատեսչությունում: «Մեղավոր» Ալի Սուադ բեյին ուղարկեցին Բաղդադ և նրան փոխարինեցին Զեքի բեյով, որը հայտնի էր իր դաժանությամբ և բարբարոսությամբ: Ինձ սարսափելի բաներ են պատմել, որոնք տեղի էին ունեցել նրա օրոք, բանտարկությունները, հրեշավոր խոշտանգումները, կախաղանները սովորական երևույթներ էին... Ջահել աղջիկներին բռնաբարում և թողնում էին տեղի արաբ քոչվորներին: Երեխաներին չպրտում էին գետը: Ալի Սուադ բեյը, այս հազվագյուտ թուրք պաշտոնյան 2000 որբ երեխա տեղավորել էր մի մեծ տան մեջ և նրանց կերակրում էր քաղաքային վարչության հաշվին: Զեքի բեյը

---

[1] Նրա հայրը եղել է Վանի վալի: Արյունռուչտ հայատյաց էր: ՀՅԴ տեղի մարմնի զգուշացումներին չանսաց և որոշում ընդունվեց նրան ահաբեկչության ենթարկել: Երբ լուրը հասավ Ալուն, նա փախուստի դիմեց՝ փորձեց Սև ծովով անցնել Կ. Պոլիս, բայց նավահանգիստներից մեկում սպանվեց հայ վրիժառուի կողմից:

[2] «Յուշամատեան Մեծ Եղեռնի», էջ 225:

[3] Նույն տեղում. էջ 226:

այդ երեխաներին փողոց չպրտեց, որոնցից շատերը շների պես մահացան քաղցից և սարսափելի զրկանքներից»[1]:

Դեր Զոր աքսորվածների թվում էր նաև Գր. Պալաքյանը, որի «Հայ գողգոթան» հուշագրությունում ներկայացված է տարագիրների վիճակը նաև այդ սանջակում:

Նա գրում է. «Հազարավոր հայերի Հալեպից քշեցին Դեր Զորի ուղղությամբ, որոնց 5 տոկոսը կարողացավ ողջ տեղ հասնել, զոհ դարձավ անապատի էննէզե ավազակախմբերին, ովքեր հեծյալ էին, զինված նիզակներով: Նրանք հարձակվեցին անպաշտպան մարդկանց վրա, սպանեցին, կողոպտեցին, առևանգեցին»: Հայերիս արգելված էր հետ գնալ և նրանք շարունակեցին մահվան երթը մշտապես ենթակա քոչվոր ավազակների հարձակումներին: Երկու հայ զինվորներ անցել էին այդ ճանապարհով, տեսել բեդվինների «քաջագործությունների» հետքերը «հազարավոր դիակներ լրիվ մերկ, աչքերը փորված, օրգանները կտրված, ուռած, փորոտիքը դուրս թափված, ցերեկն անգղներն էին այստեղ խրախճանք սարքում, գիշերները՝ վայրի կենդանիները»[2]: Ամբողջ անապատով ցրված էին կանայք ու երեխաներ, ցրված խմբերով կամ միայնակ, կիսամերկ, հյուծված, հավաքված սատկած ու հոտած կենդանիները կամ ուղտերի չուրջը և ուտում էին դրանց դիակները: «Տեսել են կանանց, ովքեր եփել են իրենց երեխաներին ու միսը կերել և ապա խելագարվել, տեսել են նեխած դիակներից թունավորված ու մեռած հարյուրավոր հայեր»:

Այս հրեշավոր արարքների խթանողը նույնպես թուրքական իշխանություններն էին, որոնք փոխանակ ապահովելու կարավանների անվտանգությունը, «կապի մեջ էին անապատի ավազակաբարո ցեղերի հետ և նրանց տեղեկություններ էին հայտնում, թե կարավանները երբ, որտեղ էին լինելու: Ոչ քիչ դեպքերում ուղեկցող ոստիկանները միանում էին ավազակներին ու հարձակվում կարավանների վրա»[3]:

Իսկ տեղ հասածները 1916 թ. սկզբներին ու ամռանը զոհ գնացին Ռասուլ-Այնի և Դեր Զորի ահավոր ջարդերին՝ «առաջինում սպանվեց 50.000, իսկ երկրորդում՝ 160.000 հայ»:

Զեքին 30 հազար հայի քշեց Խաբուր գետի կողմերը, որտեղ նրանք սովամահ եղան կամ կոտորվեցին չեչենների կողմից:

Դեր Զորի վարչությունը ներքաշված էր նաև հայ քաղաքական և մշակութային գործիչներին ահաբեկչության ենթարկելու ծրագրերի իրականացման գործերում:

Երբ Բարձր Դուռը փակեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն ու որոշեց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանին աքսորել Բաղդադ (1916 թ. հուլիսի 28), սուլթան Ռեշադի անձնական բժիշկ Վահան Թորգոմյանը և կաթոլիկ եկեղեցու պատվիրակը դիմեցին Մետերնիխին, Պալավիչինիին և ամերիկյան դեսպանատանը պատրիարքին փրկելու խնդրանքով, որովհետև իշխանության հանձնա-

---

[1] АН Арм. ССР, Бюллетень, 1984, № 4.

[2] **Պալաքյան Գր.**, նշվ. աշխ., էջ 378:

[3] Նույն տեղում, էջ 378-379:

կատար անձանց ուղեկցությամբ նրան Բաղդադ ուղարկելը համազոր էր սպանության: Պատրիարքը օգոստոսի 10-ին Վ. Թորգոմյանին գրում է. «Կ'իմանամ, թէ կաթողիկոսը ընդունած է իրեն տրուած պաշտօնը եւ փոխանորդ ալ նշանակած է... Ինչպէս կը տեսնուի, կառավարութիւնը դիս Պաղտատ աքսորել որոշած է՝ վերջին հարուած մըն ալ տալու համար հայ ազգին: Այնպիսի ժամանակ մը, երբ Հալէպէն Պաղտատ եղած ընդարձակ անապատին մէջէն հայ մը մահը աչք առնելով միայն կրնայ անցնիլ: Գիտեմ, թէ ինծի պէս եկեղեցական մը ամէն պարագայի մէջ ողջ չի կրնար մնալ, եթէ նոյնիսկ կառավարութեան այս կարգադրութիւնը դաւադրութիւն մը չէ եւ կասկած չկայ թէ այդպէս է»[1]:

Պատրիարքին, բացի ոստիկաններից, ուղեկցելու մեկնեց հայախոս, կարգաթող կաթոլիկ վարդապետ Հիդայեթը:

Զավեն պատրիարքը Դեր Զոր հասավ սեպտեմբերի 10-ին: Մինչ այդ Զեքին ոստիկանապետ Մուստաֆայի և նրա տեղակալ Բեդրիի հետ պատրիարքի սպանության պլան մշակել էր: Ըստ այդ պլանի՝ Բաղդադ ուղևորության ժամանակ պատրիարքին ուղեկցելու էր նաև Բեդրին: Ճանապարհի ինչ-որ հատվածում հրոսակները հարձակում էին գործելու Զ. Տեր-Եղիայանին տանող կառքի վրա և այդ խառնաչփոթի ժամանակ Բեդրին պատրիարքին պաշտպանելու դիմակի տակ սպանելու էր նրան:

Բայց երբ հասան Անա գյուղաքաղաքը և Բեդրին տեղի գայմագամ Սայիդին տեղյակ պահեց ահաբեկչական ծրագրի մասին, վերջինս հրաժարվեց գործակցել նրա հետ, ինչը և փրկեց պատրիարքին:

Զավեն պատրիարքի հանդեպ Բ. Դռան չարաղետ վերաբերմունքի և Կիլիկիայի կաթողիկոսի հանդեպ բարյացակամության պատճառն այն էր, որ Բարձր Դուռը հաջողել էր Ջեմալ փաշայի օգնությամբ, որի հետ Սահակ Խապայանը մտերիմ հարաբերությունների մեջ էր, համաձայնության գալ՝ ամբողջությամբ խզել հարաբերությունները Էջմիածնի հետ, վերացնել Հայ ազգային սահմանադրությունը և ղեկավարվել Թուրքիայի արդարադատության նախարարության պատրաստած կանոնադրությունով, վերացնել Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց պատրիարքությունները, ինչպես նաև Կիլիկիայի և Աղթամարի կաթողիկոսությունները:

Այդ բոլորի փոխարեն ստեղծվեց Օսմանյան պետության հայերի կաթողիկոս-պատրիարք պաշտոնը, որը մարմնավորվելու էր Սահակ Խապայանի անձով: Նրա նստատեղին լինելու էր Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքը և տեղապահ էր ունենալու Կ. Պոլսում: Պատահական և թուրքահաճո հոգևորականներից կազմվեց հոգևոր խորհուրդ:

Պատրիարքին ահաբեկելու փորձը ձախողվեց, իսկ նրա հոտի բնաջնջումն առաջ էր տարվում ահագնացող թափով և ճիվաղ եղանակներով:

Զեքին նշանակվել էր Դեր Զորի կառավարիչ՝ հստակ հանձնարարությունով՝ բնաջնջել հայերին:

Թուրքական «Թասվիրի էֆքար» լրագրի նախկին խմբագիրը մի քանի տարի անց Զեքիին հարցրել էր, թե արդյոք ճի՞շտ է, որ նա տասը հազար հայի

---

[1] *«Վեմ», 1937. № 2. էջ 50-51:*

է սպանել: Ռազմական դատարանի մեղադրական եզրակացությունում արձանագրված է Սալիհ Զեքիի պատասխանը. «Դուք անպատվում եք ինձ: Ես արժանապատվությունից ցածր եմ համարում տասը հազար թիվը: Դե, ավելացրե՛ք»[1]:

Ջ. Ջեքսոնը Վաշինգտոնին տեղեկացրեց. «Ես մեծ հեղինակություն էի վայելում մինչև Զեքիի ժամանումը, երբ ամենազարհուրելի կոտորածն սկսվեց... Փոքրաթիվ կենդանի մնացածները ծվարեցին բարեկամաբար տրամադրված արաբների մոտ: Կոտորածներն ի կատար էին ածվում մութեսարիֆի հրամանով, որն անձամբ էր ղեկավարում կողոպուտը»: Ջարդարարները «Թուրք, չերքեզ և քուրդ քրեական տարրերն էին, որոնք ազատ էին արձակվել բանտերից և ուղարկվել էին սպանելու»:

Ա. Բերնոն՝ «American Vacuum Oil Company»-ի գերմանազգի աշխատակիցը, 1916 թ. օգոստոսի 24-ից սեպտեմբերի 4-ը շրջել է Դեր Զորում, եղել է Հալեպի և Դեր Զորի միջև գտնվող համակենտրոնացման ճամբարում: Նա նկարագրել է Սալիհ Զեքիի «աչք ծակող անմարդկայնությունն ու բարբարոսությունը». նա մեծ թվով երեխաներ էր խեղդել գետում, «չխնայելով ոչ ծծկերներին և ոչ էլ տկարներին»[2]: Ալեքսանդրետի փոխհյուպատոս Հոֆմանը, որը ժամանակավորապես տնօրինում էր Հալեպում գերմանական հյուպատոսարանի գործերը, իր երկրի դեսպանին տեղեկացրել է, որ Սալիհ Զեքիի ժամանումից հետո իշխանություններն այլևս իրենց նեղություն չէին տալիս գաղթականների խմբերը անապատով քշելու Մոսուլ, այլ՝ «Եփրատ և Խաբուր գետերի միացման տեղում նրանցից արագորեն ազատվում էին»:

1918 թվականի նոյեմբերի 18-ին օսմանյան խորհրդարանում մտքերի փոխանակության ժամանակ հայազգի խորհրդարանականը ելույթ ունեցավ: Հայտարարելով, որ թուրք ժողովուրդը մեղավոր չէ այդ «մեծ հանցագործության» մեջ, ինչի համար նա արժանացավ «բրավո» բացականչությունների, Սալիհ Զեքիի գործունեությունը գնահատեց որպես «օսմանյան պատմության ամենասրտամորմոք էջը՝ լի հայերի հանդեպ աներևակայելի դաժանություններով»[3]: Ս. Զեքին պարծեցել էր երկու գործընկերների մոտ, թե «ինքը կոտորել է անխտիր բոլոր հայերին՝ ծծկեր երեխայից մինչև 70-80 տարեկանները», որից հետո ներկա գտնվող մի քաղաքացիական պաշտոնատար թքել էր նրա դեմքին[4]: Երբ 1916 թվականի նոյեմբերին Ս. Զեքիին կանչեցին Ստամբուլ, նա հետը մեծ թվով թիթեղյա տուփեր տարավ՝ լի տասնյակ հազարավոր ոսկե դրամով՝ կողոպտված հայ զոհերից»[5]:

Մազհարի հանձնաժողովը Ս. Զեքիի գործը հանձնեց ռազմական դատարան, բայց նրան նույնպես կարողացավ խույս տալ պատժից:

Ռեոսլերը գտնում էր. «Որևէ կասկած չկա, որ Եփրատին հարող տարածքներ աքսորվել են հարյուր հազարավոր հայեր», բայց նրանց թիվը փոքր

---

[1] *ՄԵ 3540, էջ 7, քաղվածք 6m սերիայից, փաստաթղթեր № 4, 14 և սերիա 11, փաստ. № 1:*
[2] *"International Journal..." , նշվ. համարը:*
[3] *Նույն տեղում:*
[4] *Նույն տեղում:*
[5] *Նույն տեղում:*

էր թվում, որովհետև հայերի հետ կատարվածը կողմնակի աչքից թաքցնելու համար նրանց ճամբարները ստեղծվում էին Եփրատի արևելյան ափի երկայնքով, իսկ կարավանային ճանապարհներն անցնում էին արևմտյան ափով, այդ վայրերն ուղարկված հայերի ճիշտ թիվն այդպես էլ մնաց անհայտության մեջ: Ըստ Դեր Զորից հյուսիս ընկած բոլոր ճամբարներն այցելած Բեբնաուի տվյալների՝ արդեն օգոստոսի վերջին Մեսքենեի և Դեր Զորի արանքում կար միայն 15.000 հայ:

Դեր Զորում և դրանից հարավ հայերի թիվը գնալով պակասում էր: Հոկտեմբերի 5-ին Ռաքքայամ տեղի ունեցած սպանդին զոհ գնաց 30.000 հայ: Եվ դա միայն մի օրում և միայն մի վայրում:

Ռեոսլերը ներկայացնում է մի քանի կիլիկիահայերի պատմածները, որոնք նա «միանգամայն հավաստի է համարում»:

Հ. Սարգիսյան (Այնթապից). «Զեքի բեյի հրամանով հուլիս-օգոստոսին Սաբխի, Դեր Զորի, Միադինի, Անայի և այլ վայրերի հայերին՝ թվով 150 հազար, տեղափոխեցին Մերադ գյուղ, որտեղից նրանց 2000-4000 հոգանոց կարավաններով հարավ ուղարկեցին»: Իրենց կարավանը 1700 հոգուց էր, որը բազմօրյա երթից հետո կանգ առավ Խաբար գետի ափին Շեղդադե գյուղի մերձակայքում: Հաջորդ օրը չերքեզները չրջապատեցին կարավանը և լրիվ կողոպտեցին, ապա բոլորին մերկացրեցին և այդպես քշեցին մինչև Ղարադաղ, որտեղ նրանք նորից հարձակվեցին և այս անգամ արդեն ջարդեցին կացիններով, սրերով ու դաչույններով: Այդ ընթացքում Զեքի բեյը կառքից դիտում էր կատարվածն ու «կեցցե՜» էր գոչում: Կենդանի մնաց միայն 31 մարդ: Ի դեպ, այս փաստը հաստատում են նաև օտար ականատեսները:

Մ. Քիրմենիկյան (Մարաչի Ալաբաչ գյուղից). «Զեքի բեյը հուլիսին հայտարարեց, թե ով անցնի զինվորական ծառայության, նրա ընտանիքին կթույլատրվի մնալու Դեր Զորում»: 2400 երիտասարդներ ներկայացան, մյուսներին տեղահանեցին: Զորակոչված հայ երիտասարդներին ուղարկեցին ճանապարհաշինության վրա աշխատելու, սակայն մեկնելու օրը տեղահանեցին նաև նրանց ընտանիքներին: Տարան Մերադ գյուղը, որտեղ կայսրության բոլոր ծայրերից հազարավոր հայերի էին հավաքել: Կարավանները Խաբուր գետի երկայնքով հասան Սուվար: Այստեղ առանձնացվեց 400 ընտանիք, որոնք համաձայնվել էին մի տարի ապրել առանց պետության օգնության: Այդ 400 ընտանիքից 2000 լիրա փրկագին պահանջեցին, սակայն հավաքվեց 840 լիրա ու տրվեց մյուդիրին. որը երեք օր անց փողը վերադարձրեց ու պահանջեց 10.000 լիրա: Հայերն ամեն ինչ վաճառելով 2000 լիրա հավաքեցին: Մյուդիրը դրամը վերցրեց, բայց նաև ձերբակալեց ազդեցիկ դեմքերին: Մնացած հայերին, առանց նախապես զգուշացնելու, ճանապարհ հանեցին: Չերքեզներն ու արաբները անմիջապես չրջապատեցին կարավանը և սկսվեց կողոպուտը: Խլեցին ամեն ինչ, ապա տղամարդկանց տարան բարձունքի մյուս կողմը և սպանեցին, իսկ կանանց ու երեխաներին թողեցին բախտի քմահաճույքին:

Սսի կաթողիկոսը հաջողեց ստանալ Ջեմալ փաչայի համաձայնությունը Դեր Զոր ուղարկելու մի հոգևորականի՝ պարզելու այնտեղ տարագրված հայերի իրական վիճակը: Այդ հոգևորականի տվյալներով՝ Դեր Զոր էին տար-

վել Զեյթունի, Յարպուսի, Ալաբասկի և Այբիստանի հայերը, թվով 15398 հոգի: 10.000-ին տեղավորել էին քաղաքում, իսկ մյուսներին՝ մերձակայքում, բաց երկնքի տակ: 300 հոգի մեռել էր ճանապարհի դժվարություններից, 98-ին խեղդել էին Եփրատում: Մնունդը չատ անբավարար էր: Սովամահ չլինելու համար տարագիրները ավելի քան 30 երեխա վաճառել էին: Նույն վայրերից մինչև Հուլիսի 30-ը Հալեպ էին հասել 14.000 հայեր, որոնցից 4000-ին հարավ էին քշել:

Հրաման ստացվեց դատարկելու Այնթապը, Քիլիսը և Ադանայի վիլայեթի ծովափնյա շրջանները, այսինքն՝ տարագրելու ևս 50.000 հոգի, իսկ քանի որ վերը նշված վայրերը նախապատրաստված չէին մեծաթիվ տարագրյալներ ընդունելու, կառավարությունը հրամայեց այլևս աքսորել ո՛չ թե Միջագետք, այլ՝ Սիրիա, այսինքն Դամասկոս[1]:

Ստանալով վերը նշված հոգևորականի ուսումնասիրության արդյունքները՝ «Սահակ կաթողիկոսը խնդրում է Ջեմալ փաշայից հանձնաժողով ուղարկել Դեր Զոր՝ հայերի հանդեպ գործադրված անօրինականություններն ուսումնասիրելու: Փաշան համաձայնվում է: Նրա ստեղծած հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքների մասին տեղեկագիրը ուղարկվում է ՆԳ նախարարություն:

«1915-ի դեկտեմբերին մենք գնացինք Դեր Զոր,- նշվում է այդ տեղեկագրում,- նպատակ ունենալով ուսումնասիրել փախստականների վիճակը և հետաքննել այն անօրինականություններն ու չարաչահումները, որոնք տեղ էին գտել հայերի տեղահանման ժամանակ...

Մեր խնդրի իրականացմանը ձեռնամուխ եղանք՝ բացատրություններ պահանջելով մութեսարիֆից՝ Դեր Զորի սանջակում հաշվառված հայերի մասին, որոնք այլ վիլայեթներից ու սանջակներից այստեղ էին բերվել: Նրանք ինչպե՞ս էին տեղաբաշխվել ու բնակեցվել, ինչպիսի՞ հանցագործություններ էին կատարել հայերի դեմ ճանապարհին կամ նրանց հատկացված բնակավայրում: Ըստ մութեսարիֆի ներկայացրած տեղեկանքի՝ Դեր Զորի սանջակում տարբեր վիլայեթներից ու սանջակներից ուղարկված 29.673 հայեր բաշխված էին հետևյալ կերպ. Սանջակի կենտրոնում՝ 15000 հայ, կազաներում՝ Անայի՝ 3000, Աբու Քեմալի՝ 2411, Աշխարհայի՝ 4000, նահիյեներում՝ Սուարի՝ 331, Մուհնչի՝ 567, Կեսրեի՝ 323, Մերադի՝ 479, Քեֆֆեբի՝ 62, Սեբկայի՝ 2500 հայ»:

«Մեզ նաև իրազեկ պահեցին, որ տասն օրվա մթերք պահեստավորված է, կեսը՝ փողով, մյուս կեսը՝ մթերքով տրամադրելու հայկական այն կարավաններին, որոնք շարունակելու են իրենց ճանապարհը, անցնելով Բայիդիի և Սուարի նահիեների շրջակայքով և գտնվում էին սանջակի տարածքում...

Մոսուլի վիլայեթի Սինճար կազա մեկնելու ընթացքում կարավաններին ուղեկցում էին բավարար թվով պահակային զորամասեր»[2]:

Թուրքական պաշտոնական հանձնաժողովից ուրիշ բովանդակությամբ տեղեկագիր սպասելը միամտություն կլիներ, որովհետև դա ուղարկված էր ո՛չ թե իրական պատկերը պարզելու, այլ թուրքական քարոզչությանը սնունդ մատակարարելու համար: Սակայն տեղեկագիրը նաև հաստատում է, որ

---

[1] *R 1410.5. Ab. 149683.*

[2] ***Կիրակոսյան Ջ.,*** *նշվ. աշխ., էջ 220-221:*

բռնագաղթված հայերի հիմնական մասը Դեր Զոր է տեղափոխվել 1916 թ. սկզբին, որովհետև եթե ընդունենք, որ մինչև 1915 թ. վերջը Դեր Զոր էր տարվել 30.000 հայ, ապա 1916 թ. կեսերին այդ սանջակում ոչնչացված հայերի թիվը հասավ 300.000-ի:

Մի արաբ պատմել է, որ Դեր Զորի մերձակայքում ինքը տեսել է, թե խուժանն ինչպես էր «քաչքչում, պատառոտում հայ կանանց չորերը, նրանց թողնելով միանգամայն մերկ: Կանայք մահը գերադասել էին խայտառակությունից և նետվել գետը:

Դեր Զորում կատարվածների մասին հարուստ նյութեր կան նաև եվրոպացի, մասնավորապես գերմանացի դիվանագետների, զինվորականների և միսիոներների տեղեկագրերում ու նամակներում:

Հալեպի գերմանական հյուպատոսության աշխատակից Վիլհելմլիտտենը Բաղդադից Հալեպ կատարած ճանապարհորդության ընթացքում իր տեսածները մանրամասն չարադրել է 1916 թ. փետրվարի 6-ին Ռեսլերին հասցեագրված նամակում: Նա հավաստիացնում է, թե սղագրական ճշտությամբ է վերարտադրել իրականությունը: Բաղդադից Հալեպ անցել է Աբու Մեսիր, Ֆալուջա, Ռամադի, Հիտ, Բաղդադ, Հադիսե, Ֆահիմե, Անա, Աբու Քեմալ, Սելահիե, Միադին, Դեր Զոր, Թիբնի, Սաբկա, Համամ. Աբու Հուրեյրա, Մեսքենե, Դեր Հեֆիր կայարաններով, որոնք միմյանցից մոտավորապես 60 կմ հեռավորության վրա են և մի կայարանից մյուսն անցնում էր 6-8 ժամում: Կայարաններից մի քանիսը գտնվում էին անմարդաբնակ անապատում: Ճանապարհն անցնում էր Եփրատի երկայնքով, բայց ոչ բոլոր կայարաններն էին մոտ նրա ափերին: Ով ոտով մի կայանից գնում էր մյուսը, պետք է անպայման հետը ջուր վերցներ:

Գերմանացին ճամփորդությունն սկսեց 1916 թ. հունվարի 17-ին, նույն ամսվա 23-ին հասավ Հադիսե, որտեղ տեսավ հայերի կարավան կազմված 50 հոգուց՝ հիմնականում տղամարդիկ: Անայի ճանապարհին՝ տեսավ 30 հայ՝ ժանդարմների ուղեկցությամբ, բուն Անայում հանդիպեց ևս 40 հայի: Հունվարի 25-ին տեսավ 50 տղամարդուց կազմված մի կարավան, որոնց տանում էին Դեր Զոր: Սառնամանիք էր: Հաջորդ օրը եկավ 50 տղամարդուց կազմված ևս մի կարավան: Աբու Քեմալում Վիլհելմլիտտենին սպասարկել էր զեյթունցի 16-ամյա հայ պատանի: Իջևանատունը, անասնագոմերը և այլևայլ տեղեր լեփ-լեցուն էին հայերով: Իջևանատանը փակվածների մեջ կանանց ու աղջիկների թիվը փոքր էր: Տեղում ծառայող գերմանացի չորս սպաներ հավաստիացրել են իրենց հայրենակցին, թե իրենք շատ կռիվներում են եղել, սակայն այն ինչ տեսել են Հալեպ-Դեր Զոր ճանապարհին ամենասարսափելին էր: Ամենուրեք թափված էին դիակներ, դրանց քայքայվելուց ամենուրեք գարշահոտություն էր: Ամսի 30-ին նա հասել էր Դեր Զոր, որտեղ մոտ 2000 հայ կար: Իջևանատանը կուտակված էին մեծ թվով հայեր, այդ թվում՝ շատ կանայք ու երեխաներ: Նրանք թափված էին նաև փողոցներում: Դեր Զորում ծառայող գերմանացի սպաները պատմել են, որ Հալեպ-Դեր Զոր ճանապարհին շատերը մեռել էին բծավոր տիֆից: Նրանք երեք ժամում հաշվել էին ընկած ճանապարհին 64 դիակ, այդ թվում՝ մի կնոջ՝ իր երեքամյա երեխայի հետ:

Հայերից չատերը բերվել էին Կ. Պոլսից: Նրանք աննչան գներով վաճառում էին ոսկյա ժամացույց, զարդեր և այլ իրեր: Դրանց դիմաց ստացած փողերը նրանց կյանքը մի քանի օր երկարացնելու էր: Դեր Զորից Սաբկա ճանապարհին դիակներ էին ու դիակներ, դրանց քայքայման աստիճանն ու հագուստի վիճակը, սպիտակեղենի կտորտանքը, տնային առարկաները հնարավորություն էին տալիս պատկերացում կազմելու, թե ինչեր էին այստեղ տեղի ունեցել: Հայերի մի մասը անապատում ուժաթափ լինելուց մեռել էր: Մեռել էին նաև սառնամանիքից, ավազակները չատ դիակների լրիվ մերկացրել էին, ուրիշների հագուստները բզկտել էին չներն ու անգղները:

Սաբկայում մի կարավան արագ անցավ ժանդարմների հարվածների տակ: «Ես տեսա քաղցած, ծարավ, հիվանդ, մեռնող, հենց նոր մեռած, թարմ դիակների կողքին ողբացող թշվառների, որոնք գնում էին օրորվելով ու ապա ընկնում ու մնում: Տեղացիները մի բաժակ ջուրը վաճառում էին չորս մարկով»:

Այնուհետև Վիլհելմլիտտենը թվարկում է իր տեսածները: Նա Դեր Զորից դուրս եկավ ժամը 13.00-ին... ճանապարհի կողքին պառկած էր մերկ կին: 13.30-ին՝ մերկ ծերուկ, կողքին՝ մերկ պատանի, որի մարմինը հոչոտված էր: 14.00-ին՝ հինգ թարմ դիակ: 14.05-ին՝ սպանված ու խոշտանգված տղամարդ: 14.07-ին՝ տղամարդու քայքայված դիակ: 14.08-ին՝ տղամարդու դիակ՝ ցավից տանջահար դեմքով: 14.10-ին կիսամերկ տղամարդու դիակ: 14.15-ին՝ հագուստների բազում կտորտանքներ: 14.25-ին՝ կնոջ հոչոտված դիակ: 15.10-ին՝ ճամբարի հետքեր, ուտելիք պատրաստելու օջախ, հագուստի բազում կտորներ, ոսկորներ, տղամարդու վեց դիակ: 15.22-ին՝ թարմ դիակ: 15.25-ին՝ տղամարդու հոչոտված դիակ: 15.45-ին՝ մոտ 10 տարեկան աղջնակի արյունլվա դիակ: 15.50-ին՝ սպիտակեղենի բազում կույտեր: 15.55-ին՝ տղամարդու դիակ: 16.04-ին՝ մեռած կին, կողքին՝ մեռած երեք տարեկան երեխա: 16.10-ին՝ 17 թարմ գերեզման: 17.02-ին՝ չները կրծում են դիակները:

01.02.1916 թ. ժամը 8.33-ին՝ երեխայի մերկ դիակ, կողքին՝ ճամբարի հետքեր՝ կանացի և երեխայի կոշիկներ, անդրավարտիքներ և այլն, ցրված ամբողջ ճանապարհին: 9.04-ին՝ քայքայված դիակ: 11.30-ին՝ արյունաշաղախ կմախք, նույնը 11.03-ին և 11.33-ին: 12.05-ին՝ ճամբարի հետքեր: 14.07-ին՝ կմախք: Ուժեղ քամի էր, որը կառքի աջ կողմի վարագույրը փակեց և Վիլհելմլիտտենը չկարողացավ դիակներ տեսնել:

16.30-ին հասավ Սաբկա: Այն լիքն էր հայերով, որոնք հավանաբար վաղուց էին այստեղ ու իրենց համար փոքրիկ տներ էին կառուցել: Գյուղի չուրջբոլորը վրաններ ու հյուղակներ էին՝ 150 վրան: Հյուղակները փայտի կտորներից էին: Թանկություն էր, մթերքների գներն աճել էին բազմաթիվ անգամներ:

02.02.1916 թ. ժամը 9.45-ին՝ մարդկային գանգ: 13.55-ին՝ հայերի կարավան 20 սայլերի հետ, որոնք տանում էին տնային իրեր, ինչպես նաև կանանց ու երեխաների, չատերը պարկերը չալակած էին գնում: Դրանցից մեկի մեջ հանգչող կին էր: Ժանդարմը ճիպոտով քշում էր կարավանը, 14.05-ին՝ գետին տապալվեց չալակավոր պատանի: 14.07-ին՝ թշվառ պառավ երեխայի հետ: 14.08-ին՝ ծանր բեռի տակ քայլող տղա՝ ուժասպառ ծերուկի հետ: 14.30-ին ծարավից մեռնող տղամարդ, 14.31-ին՝ ձիասայլ առանց սայլապանի, վրան՝

մեռնող կին: 14.32-ին և 14.33-ին՝ ամենաթշվառ վիճակում լքված հայեր: 14.34-ին՝ նոր մեռած ամուսնու վրա սգացող կին: 14.57-ին՝ ոտը կտրված ծերուկ, լրիվ մերկ: 15.33-ին՝ բաց գերեզման: 15.36-ին՝ 500 վրան ունեցող ճամբար, 200 թարմ դիակ, մեռած կին՝ մեռած երեխան կրծքին: 15.37-ին՝ հինգ թարմ գերեզման, մեռած տղամարդ: Համամում 5000 հայ կար, որոնք տեղավորված էին վրաններում: Դրանց արանքում ընկած էր տղամարդու դիակ: Տեղի ժանդարմները բողոքել են, թե ամեն օր նոր հայեր են գալիս, բայց ուտելու բան չկար, դրա համար էլ աշխատում էին սովյալներին, որքան հնարավոր էր հեռու ուղարկել, որպեսզի դիակները մերձակայքում չթափվեին: Հայերն այլևս անուժ էին անգամ մեռածներին թաղելու, մանավանդ, որ գետինը սառած էր: Նրանց մեծամասնությունը տառապում էր բծավոր տիֆով: Ժանդարմներից մեկը, որը 25 օր գտնվել էր Համամում, ասել էր. «Եթե տեղում երկար մնամ, կխելագարվեմ ականատես լինելով այդ անսահման դժբախտությանը», թե բողոքելն անհնար էր, որովհետև կառավարության հրամանով էր ամեն ինչ կատարվում:

03.02.1916 թ. ժամը 8.20-ին՝ սառնամանիք, երեք տղամարդ նստած տեղը սառել, մեռել էին: 8.50-ին՝ քայքայված դիակ: 9.11-ին՝ կմախք գուլպաներով, 9.40-ին՝ թարմ դիակ, նույնը՝ 10.10-ին, 10.20-ին, 10.26-ին, 10.30-ին, 10.57-ին, 11.48-ին, 12.05-ին, 12.25-ին՝ տասը թարմ գերեզման: 12.35-ին՝ տղա, որի գլխից մնացել էր միայն գանգը: 12.45-ին՝ վեց սայլեր հայ ընտանիքներով ու բեռներով, ինչպես նաև մեծաթիվ հետիոտներ, 600 վրան ունեցող ճամբար 6000 մարդով: Երեխաներ, կանայք, հանգուցյալներ, հիվանդներ՝ բոլորն էլ իրար հետ, աղտեղություն: Մի քանի տղամարդ շրջում էին ճամբարում, ոտով հարվածում գետնին պառկածներին, ստուգելու ո՞ղջ էին, թե՞ մեռած:

13.00-ին՝ Աբու Հուրեյրայրիում Եփրատի ափ էին իջնում երկու հայ աղջիկներ դույլերով: Սառը ջրում անսովոր աշխատանքից նրանց ձեռքերը սառել, դարձել էին մուգ-կարմիր: Ճամբարում հացը լրիվ սպառվել էր: 14.27-ին՝ սպիտակ կտորի մեջ փաթաթված դիակ: 14.30-ին՝ հոչոտված երեք դիակ: 14.35-ին՝ մեռնող տղամարդու վրա լացող երկու աղջիկներ: 14.36-ին՝ մեռած աղջնակ: 14.47-ին՝ փոքր աղջկա դիակ հոչոտված գաղանների կողմից, դիակի վրա պտտվող անգղներ: 14.52-ին՝ ոտները կրծված դիակ: 14.53-ին՝ մեռնող տղա, որի կողքին չունն ուտում էր ինչ-որ դիակ: 14.55-ին՝ երեք դիակ: 14.58-ին՝ մարդկային երկու գանգեր և հոչոտված կմախքներ, 14.59-ին՝ տղամարդու դիակ: 15.00-ին՝ կատաղած չուն, հագուստի կտորների կույտեր: 15.01-ին՝ ծերունու դիակ, կրծված ոտքերով ու ողնաշարով: 15.02-ին՝ մարդու ողնուղեղ և գանգ: 15.03-ին՝ կնոջ դիակ. 15.09-ին՝ դիակ, որի գլուխն էր միայն անվնաս: 15.13-ին՝ չունը հոչոտում է դիակը: 15.15-ին՝ կմախք, առանց ոտքերի: 15.24-ին՝ երկու դիակ, անթև աղջկա դիակ: 15.25-ին՝ երկու, իսկ 15.30-ին՝ մերկ դիակներ: 15.34-ին՝ գանգ և հագուստներ: 15.37-ին՝ դիակ կողքին չուն: Նույնը 15.43-ին: 15.45-ին՝ վրանային ճամբար՝ 600 վրան, 6000 մարդ: 15.53-ին՝ դիակ, նույնը 15.59-ին և 16.03-ին: 16.04-ին՝ կմախք ու մի կերպ քայլող երեխա: 16.08-ին՝ դիակ: Նույնը 16.12-ին, 16.13-ին, 16.23-ին, 16.24-ին, 16.37-ին, 16.50-ին. 16.55-ին: Մեսքենեի դիմացը խոշոր ճամբար՝ 2000 վրան և 10.000 մարդ, ամենուրեք կեղտ, կղկղանք:

Փաստերը չարադրելուց հետո արվում է հետևյալ ընդհանրացումը. «Ես սեփական աչքերով տեսա մոտ 100 դիակ, նույնքան թարմ գերեզմաններ Դեր Զոր-Մեսքենե ճանապարհահատվածում: Այդ թվերի մեջ չեն մտնում բնակավայրերում խմբով թաղվածները: Տեսա 20 հազար հայ: Իհարկե, բռնագաղթվածների թիվը շատ ավելի մեծ էր, քան ես տեսա: Ես չեմ տեսել Եփրատի ձախ ափում եղած հայերին: Եփրատի ջրերը, անապատի ավազները դարձել էին հայ ազգի գերեզմաններ»: Ընտանիքների քայքայելը, դրանց պաշտպանելու ընդունակ տարրի՝ տղամարդկանց, նախապես ոչնչացնելը, անպաշտպան կանանց, երեխաներին ու ծերերին սադիստական միջոցներով հետևողականորեն ոչնչացնելը, կտտանքի, արհեստականորեն ստեղծած տաժանակիր պայմանների, սովի, ծարավի, համաճարակների, հյուծվածության միջոցով հարյուր հազարների մեռցնելը, մեծ ու փոքր ապաստանոցներում հոչոտելն ու մորթելը Հայոց ցեղասպանության բովանդակությունն է ու, միաժամանակ, թուրք այլամերժների հետապնդած նպատակների իրականացման միջոցները: Անգամ բանտն էր շատ համարվում հայի համար: Նրա կործանման «ամենաարտադրողական» միջոցը համարվեց անապատը: «Նույնիսկ ոճրագործության համար դատապարտված հայերին բանտերում մի՛ պահեք, անմիջապես առաջ (Դեր Զոր) ուղարկե՛ք»,- հրամայում էր Թալեաթը[1]: Նրա մի այլ ծածկագիր հանձնարարում էր Ինթիլլիում և Այրանում երկաթուղու շինարարության վրա աշխատող հայերին ժամանակավորապես, մինչև շինարարության ավարտը, անապատ չքշել, բայց անթույլատրելի էր համարում նրանց կանանց ու երեխաներին տեղում թողնել և պահանջում էր «անմիջապես ուղարկել» անապատ[2]:

Եվ ապա. «Պապի մէջ ոչ մէկ հայու մնալը պիտի արտօնէք: Գաղթականներու առաքման առթիւ ձեր կողմէ ցոյց տրուելիք խստութիւնն ու արագութիւնը միայն կրնան ապահովել այն նպատակը, զոր կը հետապնդենք: Միայն թէ պէտք է ուշադրութիւն ընէք, որ ճամբաները դիակներ չմնան ... Փոխադրութեան միջոցներ հայթայթելով մի՛ զբաղիք: Գաղթականները հետիոտն ալ կրնան երթալ:

Այս օրերս մեզի ղրկուած չաբաթական մահերու ցուցակը գոհացուցիչ չէ: Ատկէ կը հասկցուի, որ այդ մարդիկ (հայերը) հոդ շատ հանգիստ կ'ապրին: Գաղթականներու առաքումը պէտք չէ, որ ճամբորդութեան մը նմանի: Բողոքի, ողբի կարեւորութիւն մի՛ տաք» (Ա. Նուրի)[3]:

Մեսքենեից հյուսիս Պապի ուղղությամբ և նաև Դեր Զորից Ռաս-ուլ-Այնի ուղղությամբ գտնվող հայկական խոշոր ճամբարները հարկադրված են սպասել իրենց տեղափոխությանը: Թուրքիայում ամենուրեք, որտեղ անապատը գտնվում էր բնակավայրերի հարևանությամբ, նույն տեսարաններն էին՝ հարյուր հազարավոր ողբերգություններով:

«Թուրքերը հայերին անվանում են ո՛չ թե գերիներ, այլ՝ «տեղահան-

---

[1] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 81:

[2] Նույն տեղում, էջ 60:

[3] Նույն տեղում, էջ 91-92:

վածներ (մուհաջիրներ): Եվ մահերից ամենասարսափելին պաշտոնական հաղորդագրություններում կոչվում էր «տեղահանություն»:

– Ի՞նչ է կատարվելու նրանց հետ,– հարցնում էին թուրքերին:

– Նրանք կմեռնեն,– լինում էր պատասխանը[1]:

Պապում գաղթականների առաքումը գլխավորում էր գաղթականական տնօրինության ծառայող Մուհարրեմը՝ Բաղդադի նախկին ոստիկանապետը, որն արյունարբու ընչաքաղց էր: Որպեսզի ընչաքաղցության պատճառով ներողամտություն չդրսևորեր հայերի հանդեպ, նրան 150 ոսկի աշխատավարձ էին նշանակել: Նայիմը նկատում է, որ «այդ մարդը հազարավոր հայեր կոտորեց»:

Գերմանական մի գործակալ հայտնում է, որ Ջերաբլուսի ու Դեր Զորի արանքում Եփրատի ափին կուտակվել էր 150–200 հազար հայ, գրեթե ամբողջությամբ կանայք ու երեխաներ: «Անհնար է բառերով ներկայացնել այդ խեղճ մարդկանց տանջանքները, որոնց մեծ մասը հիվանդ է սննդի անբավարարության և չարչարանքների պատճառով... Մեսքենեում 4000 հայ տեղավորվել էր վրաններում, որոնցից յուրաքանչյուրում կային հիվանդներ ու հոգեվարքի մեջ գտնվողներ, չատերն անօգնական պառկած են կիզիչ արևի ճառագայթների տակ: Շատերը կենդանի նետվում էին ընդհանուր գերեզմանափոսերը՝ խնդրելով իրենց նույնպես թաղել՝ հետագա տանջանքներից ազատվելու համար»:

Իսկ ձմռանը Պապի գաղթականներին 24 ժամ ժամանակ տրվեց ճամփա ելնելու, վկայում է Նայիմը. «Եղանակը՝ ձմեռ, ոտքերնէն մինչեւ գլուխնին՝ մերկ, այս վիճակին մէջ... Ճամբաներուն եզերքը կ'իյնային կը մեռնէին: Պապէն մինչեւ Մեսքենէ ճամբուն երկայնքը, արտերը հայու դիակներով լեցուեցան»: Այդ մասին լսելով, «կառավարութիւնը իրար անցաւ» և հրամայեց չտապ թաղել, որ օտարերկրացիները չտեսնեն:

Ականատեսը պատմում է, որ երկու ու կես օրվա ընթացքում որ ինքը անցկացրեց Պապում, 1029 հայ մեռավ սովից[2]:

«Մեռելներուն քանակութիւնն ամէն 15 օրը անգամ մը ծածկագրով կը տեղեկագրուէր Պոլիս»[3]:

Սակայն ոչնչացման ընթացքը Ա. Նուրիին դանդաղ էր թվում և նա մեկնեց Պապ՝ այդ գործն անձամբ ղեկավարելու: «Ամենազարհուրելի տեղահանութիւն մը կատարեցին հոն, վրանները այրելով, գաղթականներու վրայ զէնք պարպելով: Միակ օրուան մը մէջ էյուպ պէյը 17,5 հազար գաղթական քշեց առանց կառքի, առանց ջորիի, հետիոտն, անձրեւուն տակ: Հարիւրաւորներ, որոնք հիւանդ էին, չէին կրնար քալել, ինկան ու մեռան եւ իրենց դիակները մնացին ցեխի մէջ»: Բնիկները խոշտանգում էին մեռնողների մարմինն ու մեռածների դիակները:

---

[1] Տե՛ս "Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии", сост. В. Микаелян. Ер., 1998, с. 306-318.

[2] **Նանսեն Ֆ.**, նշվ. աշխ., էջ 259–260:

[3] **Անտոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 106–107:

Մումբուջի թաղապետության տնօրեն Հյուսեին Ֆեհմին մի 10 տարեկան երեխայի գազանաբար ծեծեց ու կենդանի թաղեց[1]:

«Կառավարությունը- գրում է Նայիմը,- կը պահանջէր, որ հայուն կեանքն ու պատիւը փճացուին: Այլեւս անոնց համար ապրելու իրաւունք, գոյութեան իրաւունք չէր մնացած»:

Պապից եկող աքսորյալների գնացքակազմը ողբալի վիճակում էր: Մահացությունը չատ բարձր էր և գնալով աճում էր: Մարդիկ ագահությամբ ուտում էին վայրի բույսեր, արմատապտուղներ, կուլ էին տալիս անգամ ընտանի շների ու կենդանիների մսեր: Եվ այդ ամենը՝ նրանց ուղեկցողների դաժան վերաբերմունքի պայմաններում, ժանդարմները չէին քաշվում այդ դժբախտներից չորթելու վերջին ունեցվածքը: Ռաքքայում տարագրյալներով բեռնված 50 նավակներից Դեր Զոր հասավ միայն 20-ը: Դեր Զորում մի քանի օրում հավաքվեց 40 հազար հայ, որոնք հարավ ուղարկվելու էին:

Բ. Ռոները 1916 թ. հունիսի կեսերին Հալեպից գրում է. որ սկսած ապրիլի 29-ից Մարաշում ամբողջ թափով տեղահանում են քաղաքում մնացած 9000 հայերին: Ռաս-ուլ-Այնի համակենտրոնացման ճամբարում ապրիլի վերջերին կար 2000 ձերբակալված, իսկ այժմ գրեթե դատարկ է: Ոմանք դեռևս կենդանի են: Հալեպ հասած հայերի բախտը դեռևս անորոշ է: Վալին հայտարարում է, թե տեղի որբանոցներից չատ երեխաների ուղարկել է Կոնիայի, Էսքիշեհիրի և Կ. Պոլսի որբանոցները[2]:

Հալեպում դեռ 1915 թ. գործում էին մի քանի որբանոցներ, որոնց մասին հոգ էին տանում կրոնական տարբեր կազմակերպություններ: Այդ քաղաքում 1916 թ. հունիսի 1-ին կար 4000-5000 տեղահանված հայ, որոնք թշվառ կյանք էին վարում և մշտապես փախուստի մեջ էին: Նրանց անվերջ տեղից տեղ էին քշում, մասամբ տեղավորում քաղաքից դուրս գտնվող բռնագաղթի ճամբարներում: Հազարավորներ աքսորվեցին և քաղցից մեռնում էին ճանապարհներին: Բ. Ռոների գլխավորած հաստատությունը 1400 որբ էր պահում: Համամում կար 200 երեխա: Տեղում եղած 20 հազար բռնագաղթվածների ճնշող մեծամասնությունը մեծ կարիքի մեջ էր: Համամում 1000 և մերձակա գյուղերում 6000 հայեր մի կտոր հաց չունեին: Այստեղ ևս չատերը մեռնում էին քաղցից: Դեր Զորում և ավելի հարավ՝ Մեջինում, կարիքն ահավոր էր: Հազարավորներ Դեր Զորից ուղարկվում էին Մոսուլ, իսկ այնտեղից՝ Անա: Ճանապարհները լեցուն էին դիակներով: Քարոզիչ Վարդան Երեմեյը Համամից գրում է. «Ճանապարհին մնացած բռնագաղթվածների բոլոր խմբերը հարավ են քշվում: Դա նման է մարդկային անընդմեջ հոսքի: Պատահում է, որ այդ սովյալները խորովում են դիակները, ձիու փթիրի մեջ գարու հատիկներ որոնում: Ռաքքայում մոտ 5000 բռնագաղթված կար: Բոլոր արաբների տներում կարելի էր հայ կանանց և աղջիկների գտնել: Ծեր գայմագամը յոթ աղջկա էր տիրացել: Աբու Հերեյրայում 2500 վրան կար, սակայն բոլորը պարտադրված էին անընդհատ քայլել, առաջ գնալ, հաճախ՝ առանց մի կտոր հացի»[3]:

---

[1] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 107-108:

[2] Archiv Berlin-Mission, Archiv des Dr. Lepsius Orient Mission, 1916. № 127.

[3] R 14092 Ab 17939.

Ռեսպերի ունեցած տվյալներով՝ Ռաքքայում «6600 հայեր դատապարտված էին սովամահության»: Դա հաստատեց նաև Քյունցլերը՝ ճամբարներ այցելելուց հետո[1]:

Ռաքքան փոքրիկ քաղաք է Եփրատի ափին, Դեր-էլ-Զորից հյուսիս: Հայ գաղթականները Ռաքքա քշվեցին նույնպես Եփրատի ձախ ափի անջուր անապատով: Նպատակը, ինչպես խոստովանել էր Մեսքենեի մյուդիր Հուսեինը, որպեսզի հայերը «մեծ մասամբ փճանային և Դեր Զորի մեջ նրանց ամբողջությունը ջարդելու ծրագիրը հեշտանար»:

Իսկ թե գաղթականությունն ի՞նչ արագությամբ էր կուտակվում Մեսքենեում. վկայում են Ա. Անտոնյանի անտիպ տետրակներից մեկի հետևյալ տողերը. «Մինչեւ Հիւսէին էֆէնտիի պաշտօնի անցած ատենը հազիւ 20.000 գաղթական կար այնտեղ, մէկ օրէն միւսը 100.000-էն անցաւ գաղթականներուն թիւը»:

Սակայն Մեսքենեն գաղթականներով որքան արագ լցվում, նույնքան արագ էլ դատարկվում էր՝ գաղթականներին անմիջապես քշում էին ավելի հարավ կամ պարզապես ոչնչացնում էին:

Օգոստոսի 20-ի շրջանում Պապի խուժանը կեղծ լուրերի պատրվակով հարձակվեց 30 հայ ընտանիքների վրանների վրա և 12 հոգու վերքեր հասցրեց:

Նույն ամսվա 13-ին տեղի կառավարիչը հայտարարել էր, թե հայերից ով ցանկանում է արտասահման գնալ, կարող է մեկնել, պայմանով, որ այլևս չպետք է վերադառնա: Եվ յուրաքանչյուրը պետք է ունենա Ջեմալ փաշայի թույլտվությունը: Հայերը հասկացան, որ դա ծուղակ էր՝ ով թույլտվություն խնդրեր՝ վտանգվելու էր: Որոշ ժամանակ անց նոր հրաման եղավ՝ որևէ մեկը 4-րդ բանակի տեղակայման գոտուց հեռանալ չի կարող առանց Էնվեր փաշայի թույլտվության:

Սկզբում Հալեպից բռնագաղթեցնում էին Համա, ապա հայերին տանում էին Ռաքքա՝ Դամասկոս ուղարկելու համար, որից մինչև Մեռյալ ծովից հարավ-արևելք ընկած Կարակի տարածքները համարվում էին վերջնական գաղթավայրեր:

Մի բողոքական հայ մեկ առ մեկ գրանցում էր Էրզրումի, Սեբաստիայի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթներից Հալեպ հասած հայերին: 35-45.000 բռնագաղթվածներից տեղ էին հասել 13.000-ը, որոնց մեջ չկար 11 տարեկանից բարձր արական սեռի որևէ մեկը: Ոչ ոք չկարողացավ հերքել նրա տվյալները:

Ռաս-ուլ-Այնի երկաթուղում աշխատող եվրոպացի երկու ինժեներներ Բաղդադի երկաթուղու ղեկավարությանը տեղյակ պահեցին, որ գնացքը Ռաս-ուլ-Այն հասցրեց 300-400 մերկ կին: Այստեղ ևս հայերը թալանվում էին չեչենների ու ժանդարմների կողմից: Մի կնոջ բռնաբարեցին ութ հոգի, կինը նետվեց երկաթուղու ռելսի վրա՝ իր կյանքին վերջ տալու համար:

Լեհ ինժեներներից մեկը նկարագրում է Մոսուլից Ռաս-ուլ-Այն ընկած տարածքները՝ լքված գյուղեր, դիակների հոտ, ավազի վրա արյան հետքեր:

Համաձայն երկաթուղային վարչության տեղեկանքի՝ 1915 թ. օգոստոսին ամեն օր տեղ էր հասնում մի գնացք, չաբաթը երկու գնացք հյուսիս-արևելքից,

[1] R 14096 Ab 16719.

որոնք Մարաշի ու Այնթապի հայերին հասցնում էին Ակչե Կոյունլի կայարան, երկու գնացք հյուսիս-արևմուտքից՝ Ալեքսանդրետի, Բեյլանի և մերձակա բնակավայրերի հայերին հասցնում էին Կաթմա կայարան: Այս չորս գնացքներն անցնում էին Հալեպով և երկար կանգ էին առնում տեղի կայարանում, սակայն ուղևորներին խստագույնս արգելված էր քաղաք մտնել: Հալեպից չաբաթը մեկնում էր երեք գնացք՝ արևելքից եկած աքսորյալներին տեղափոխելու համար:

Նայիմը գրում է. «Աղէտներու, թշվառութեան, հիւանդութեան հետեւանքով օրական 7-800 հայ կը մեռնէր: Ասոնց դիակները ճամբաները, ցեխի մէջ կը լցուէին եւ գիշատիչ թռչուններ ծակ-ծակ ըրած էին զանոնք: Գերման և ավստրիացի ականատես սպաներ այդ տեսարանները լուսանկարելով կը ղրկէին իրենց երկիրները»[1]:

Ռաս-ուլ-Այնում չերքեզներն իրենց իսկ սպանած հայ կանանց մազերից 25 մետր երկարությամբ պարան հյուսեցին և նվիրեցին դիարբեքիրցի խորհրդարանական Ֆեյզիին, որն այն դարձրել էր սենյակի զարդ, որպես փառապսակ իր ոճրագործությունների:

Արաբ երկու սպաներ 1916 թ. փետրվարին այցելեցին Ռաս-ուլ-Այնի համակենտրոնացման ճամբարը: Նրանք այնտեղ 1200 հայ գտան: Շուտով նրանցից ոմանց այնտեղից հեռացրեցին սպանելու համար և փոխարենը ուրիշ հայեր բերեցին: Զեթեները «պաշտօնական հրաման» էին ստացել հայերին երկու տարբեր վայրեր տանելու, գաղտնի հրամանն էլ պահանջում էր տղամարդկանց վերացնել: Նույն ճակատագրին պետք է արժանանային նաև երեխաներն ու տարեց կանայք, իսկ երիտասարդ կանայք բաժանվելու էին Ուրֆայի հարթավայրի մահմեդական տղամարդկանց: Ոստիկաններից մեկը խոստովանեց, որ տարագիրներին ուղեկցելու ընթացքում տարբեր ճանապարհներին սպանել է 100 հայ[2]:

Ովքեր ավելի քիչ են հետիոտն քայլել,- գրում է Ռեոսլերը 1915 թ. սեպտեմբերի 27-ին,- դեռևս ունեին իրեր ու դրամ: Սակայն նրանց այդ վիճակը ևս երկար չտևեց, մանավանդ, երբ հրաման ստացվեց հայերին ուղարկել Դեր Զոր և Մոսուլ: Փրկվեցին քչերը, այն էլ տեղական հողատերերի օգնությամբ: Շատ կանայք անհետացան հարեմներում, իսկ երեխաները մեծացան մահմեդական: «Կ. Պոլիսը լուրջ սխալ է թույլ տալիս Եգիպտոսի դեմ պատերազմելու միակ տանելի ճանապարհը լցնելով տասնյակ հազարավոր մարդկանցով՝ տարագրվածներով»[3]:

Պ. Շեֆերի 1915 թ. նոյեմբերի 16-ի տեղեկագրում կարդում ենք, որ նախորդ օրը 50-60 հոգի հարձակվել են Օսմանիեի վրանային ճամբարի վրա և դանակներով խոշտանգել շատ տարագրյալների, վրանի չուրջն անթաղ դիակներ էին: Տիֆով հիվանդ էր յուրաքանչյուր երրորդ վրանը: Տարագիրները տեղից տեղ փոխադրվում էին հիմնականում հետիոտն զինվորների ու

---

[1] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 154:
[2] "Le crime..." , p. 98-99.
[3] R14088 Ab. 30049.

ոստիկանների հրացանների խզակոթերի հարվածների տակ: Շատ երեխաներ կորցրել էին ծնողներին ու միանգամայն անպաշտպան մնացել:

Բ. Ռոները պատմում է Մամուրի վրանային քաղաք 1915 թ. նոյեմբերի 26-ին կատարած այցելության մասին: Բարակ կտորից կարված հազարավոր վրաններ, տարբեր սեռի ու տարիքի անհամար թվով մարդիկ: Սովալլուկ երեխաների ու կանանց մի խումբ կրնկակոխ հետևում է մեզ՝ թախանձագին կանչելով. «Խանո՛ւմ հա՜ց», «Խանո՛ւմ, արդեն երկու օր է բան չենք կերել»: Նոր էինք հաց բերել, երբ հանկարծակի հրաման հնչեց՝ շարժվե՛լ, մեկնում ենք: Ով չէր հասցնում արագ հավաքել վրանը՝ սվինով պատառոտում էին: Ականջ էր խլացնում ծերերի, հիվանդների ու աղքատների ողբը. «Մենք այլևս չենք կարող, թողե՛ք այստեղ մեռնենք»: Կարավանը շարժվեց հետևում թողնելով 57 դիակ, մի ամբողջ վրան ծանր հիվանդներ: Եղավ մի օր, երբ այս ճամբարում 580 դիակ թաղեցին[1]:

Գերմանացի պաշտոնատար Բաստենդորֆը 1915 թ. դեկտեմբերի 18-ին գրեց Ռեոսլերին, թե հունիսի 12-ին աշխատավարձ ստանալու ժամանակ ժանդարմներն ու չերքեզները հայերին կողոպտեցին ու խոշտանգեցին: Չնայած նրանք հանդես եկան գայմագամի անունից, բայց վերջինս հրաժարվեց և պահանջեց հայերին ազատ արձակել: Հետագայում պարզվեց, որ գայմագամը ստել էր և բաժին էր ստացել հայերից կողոպուտից:

Ռաս-ուլ-Այն հասավ կարավան ռուս-պարսկական և ռուս-թուրքական սահմանամերձ շրջաններից: Կանայք ու երեխաներ էին, քրդերի կողմից կողոպտված, առանց ապրուստի որևէ միջոցի: Նրանց հավաքեցին լճափին՝ բաց երկնքի տակ: Ամեն օր նոր կարավաններ էին գալիս և չուտով տարագրյալների թիվը 10.000-ի հասավ: Սկսեցին նրանց մաս-մաս Դեր Զոր ուղարկել: Գեղեցիկ կանանց ու աղջիկներին չեչեններն ու արաբները տարան; Հենց Ռաս-ուլ-Այնում ժանդարմները կանանց աչխույժ առևտուր սկսեցին: Հայերի վրա վերահսկիչ կարգված ոմն Նուրի Շահան բացեիբաց հպարտանում էր, որ երանություն է ապրում, երբ 12 տարեկանից փոքրերին զրկում է կուսությունից:

Թել Աբիադում զինվորները ծեծեցին ու կողոպտեցին բոլոր հայերին: Մի իջևանատան մեջ լցրել էին 3000 կին և երեխա, որոնք եկել էին Ամասիայից, 3-4 ամիս գտնվել էին ճանապարհին, քաղցած էին, հիվանդացել էին դիզենտերիայով ու տիֆով: Գայմագամը նրանց սնունդ չտվեց: Մոտ 1000 մարդ մեռավ մի ամսվա ընթացքում:

Տիֆի տարածման առաջն առնելու համար հայերին տեղափոխեցին Ամն-էլ-Արուս, որը 5 կմ հեռավորության վրա էր: Սակայն չուրջ 100 հոգի այնքան հյուծված էին, որ քայլել չկարողացան: Նրանք բոլորը մեռան «նոր բնակավայրում»:

«Ես տակաւին... Ռաս-ուլ-Այնի Ռեժիի քարտուղար էի,- գրում է Նայիմը,- գյիւղին դէմը, գետին եզերքը թափուած հարիւրաւոր կիներէ ու մանուկներէ բաղկացեալ թշուառներու կարաւան մը տեսայ: Ասոնք ամէն օր, առաւօտուն, գիւղ գալով կը մուրային...

---

[1] *Archiv Berlin-Mission.*

... Երբ ձմեռը վրա հասաւ, այլեւս չարունակ գիշերուան խոր լռութեան մէջ կը լսուէին ցուրտէն եւ անօթութենէ հոգի տուողներու հեծեծանքները...

Եղերական բան մըն էր անոնց մահը, բայց անհատապէս աւելի հոգեյոյզ տեսարան մը կը դառնար, երբ չուներ կը յօշոտեին անոնց դիակները:

5-6 նահանգներու մօտաւորապէս մեկ միլիոն բնակչութիւնը տեղահան կ'ըլլար: Մինչեւ որ իրենց աքսորավայր գային՝ իւրաքանչիւր կարաւանէ հազիւ 100-150 կիներ ու տղայք կը մնային, ինչ որ կ'ապացուցանէր թէ անոնք կոտորուելով կը բերուէին»[1]:

Նայիմին տեղափոխում են Հալեպ՝ աշխատելու գաղթականության կոմիտեում:

Նա հիշում է. «Մինչդեռ Ռաս-ուլ-Այն կը գտնուէի, աչքովս տեսնելով հանդերձ, չէի հասկցած այն ոճիրներուն նպատակը: Անոնց բնոյթն ու հոգին ետքէն կրցայ ըմբռնել: Հասած գաղտնի ծածկագիրները, քանի կ'արձանագրէի, դող կու գար վրաս: Մեծ ազգ մը իր կիներով եւ ձագուկներով մահուան դատապարտուած էր»[2]:

Պոլիսը տվյալներ էր պահանջում նաև որոշակի անձանց ոչնչացման մասին: Ա. Նուրին նման մի պահանջի 1915 թ. դեկտեմբերի 13-ին (№ 51) պատասխանում է, որ Պոլսին հետաքրքրող անձինք. «Ռաս-ուլ-Այն կը գտնուին, այս տեղէն ղրկուած պաշտօնեայի մը ձեռքով, նախարարական հրամանին համաձայն, անոնց մասին հարկ եղած գործողութիւնը կատարուած ըլլալը եւ եղելութիւնը կուսակալութեան կողմէ նախարարութեան տեղեկագրուած ըլլալը կը ծանուցանենք»[3]:

Մի զեկուցագրում կարելի է կարդալ հետևյալ նկարագրությունը. «Ջերաբլուսի և Դեր-էլ-Զորի միջև կային երևի 150.000-200.000 հայեր, գրեթե միայն կանայք ու երեխաներ: Բառերն անուժ են նկարագրելու համար այս թշվառների տառապանքները: Նրանք թուլացել էին հիմնականում ղրկանքներից ու վատ վերաբերմունքից: Մեսքենեի շրջանում մեր վստահելի անձը հանդիպել է մոտավորապես 4000 հայերի, որոնցից ոմանց տեղավորել էին վրանների տակ: Յուրաքանչյուր վրանում կային հիվանդներ և մահամերձներ: Շատերը պառկած էին բարկ արևի տակ և նրանց ոչինչ չէր պատսպարում...

Կառավարության նշանակած սնունդն առավել քան անբավարար քանակությամբ էր: Մարդիկ ագահորեն մորեխներ, եփած կամ հում խոտի արմատներ, նույնիսկ թափառական շներ ու սատկած անասուններ էին ուտում»[4]:

1916 թ. ապրիլի 6-ին Ռեսլերը տեղեկացնում էր, որ չերքեզները (իրականում՝ չեչենները) կոտորել են Ռաս-ուլ-Այնի համակենտրոնացման ճամբարում գտնվող 1400 հայերի մեծ մասին, որոնք անզեն են եղել[5]:

1916 թ. ապրիլի 22-ին մի գերմանացու՝ տեղում անցկացրած քննությունը հնարավորություն տվեց հաստատելու հետևյալ փաստերը. «Ամեն օր կամ

---

[1] ***Անտոնեան Ա.***, *նշվ. աշխ., էջ 152:*

[2] *Նույն տեղում, էջ 153:*

[3] *Նույն տեղում, էջ 174:*

[4] *"Le crime...", p. 132.*

[5] ***Լեփսիուս Յո.***, *նշվ. աշխ., փաստ. № 157. 345:*

գրեթե ամեն օր, մի ամիս չարունակ, 300-500-ական աքսորականների հեռացրել են ճամբարից և ոչնչացրել Ռաս-ուլ-Այնից մի քանի տասնյակ կիլոմետրի վրա: Դիակները նետվել են Կիեպրի՝ Փոքր Ասիայի քարտեզի վրա Ջիրջիր էլ Համուր անունը կրող գետը, որի ջրերը տարվա այդ եղանակին բարձրանում են: Մի սպա Ռաս-ուլ-Այնի գայմագամից բացատրություն է պահանջել այդ սարսափելի արարքների համար: Վերջինս անկեղծորեն պատասխանել է. «Ես ենթարկվում եմ հրամաններին»:

1916 թ. ապրիլի ջարդերից փրկված 2000 հայեր ոչնչացվեցին Դեր-էլ-Զորի ճանապարհի վրա[1]:

Որպես կանոն աքսորյալներն այնքան ժամանակ իրավունք ունեին մնալու համակենտրոնացման ճամբարներում, որքան դեռևս դրամ ունեին: Հենց որ դրամական միջոցներն սպառվում էին, նրանց ավելի հեռու էին քշում, դեպի ամայի վայրեր, որտեղ նրանք դատապարտված էին սովամահ լինելու: 1916 թ. մայիսի 4-ին, Մոսուլի գերմանական հյուպատոսությունը տեղեկացնում է, որ «թուրքական հատուկ հանձնաժողովները», առանց խղճի խայթի, առանց աքսորականներին ամենաչնչին հանգստի հնարավորություն տալու նրանց անդադար մի վայրից մյուսն էին քշում[2]:

1916 թ. ամռան վերջին Եփրատի երկայնքով տեղավորված ճամբարները մեծ մասամբ «դատարկված» էին: Բոլոր տարագիրները սպանված կամ մեռցված էին[3]:

Ջարդերը հիմնականում տեղի ունեցան Դեր Զորի և Ռաս-ուլ-Այնի միջև ընկած տարածքներում: Հայերին հաչվեհարդարի ենթարկող գլխավոր ուժը չեչեններն էին:

Դեր Զորի համակենտրոնացման ճամբարների մասին Գերմանիայի հյուպատոսը գրում է. «Անհնար է նկարագրել այն սարսափելի տպավորությունը, որ ինձ վրա թողեցին հայկական այդ ճամբարներ իմ այցելությունները: Դրանք տեղավորված էին Եփրատ գետի երկայնքով, հատկապես գետի աջ ափին, Մեսքենեի ու Դեր Զորի միջև: Հազիվ թե նրանց կարելի լինի ճամբար անվանել, որովհետև այդ դժբախտների մեծ մասը, բռնությամբ պոկված իրենց օջախներից, ուժով քչված հայրենի երկրից, բաժանված իրենց ընտանիքներից, զրկված իրենց ողջ ունեցվածքից, տեղավորված էր փարախի մեջ բաց երկնքի տակ, անասունների նման, առանց որևէ ծածկի, գրեթե առանց հագուստի: Նրանց կերակրում էին ոչ միչտ և չնչին ուտելիք էին տալիս[4]:

"The Missionary Review of the World"-ի 1916 թ. հոկտեմբերի համարում կարդում ենք. «Մեսքենեում 3.500 աքսորված հայերի և ավելի քան 100 որբերի հանդիպեցի: Զկար մի վրան, որտեղ մահամերձներ և հիվանդներ չլինեին: Ով չէր կարողանում մուրալով մի կտոր հաց ձեռք բերել, ուտում էր ինչ խոտ որ պատահեր: Հարյուրավոր հիվանդներ մնացել են առանց ծածկի, այրող արևի տակ: Տեսա մի քանի հուսահատվածների, որոնք նետվեցին իրենց գերեզման-

---

[1] **Լեփսիուս Ցո.**, նչվ. աշխ., փաստ. № 287:

[2] Նույն տեղում, փաստ. № 263:

[3] Նույն տեղում, փաստ. № 290:

[4] АН Арм. ССР, Бюллетень, 1984, № 4.

խրամատի մեջ և խնդրեցին թաղել իրենց»:

«Դեր Զորում և նրա շրջակայքում չուրջ 30.000 հայ կար: Դրությունը հատկապես սարսափելի էր Դեր Զորի կազայում»:

Հալեպից արևելք, Եփրատի ափին Մեսքենեի ճամբարում,- գրում է Ֆ. Նանսենը,- իրենց՝ թուրքերի, ասելով, հողի մեջ խրված էր սովից մեռած 55 հազար հայ:

Սիրիայի և Միջագետքի սահմանի վրա գտնվող Մեսքենեն հանդիսանում էր անատոլիական վիլայեթներից աքսորված հայերի փոխադրումների համակենտրոնացման կետը: Այստեղից հայերին բաժանում էին Եփրատի երկայնքով մեկ: Նրանք գալիս էին տասնյակ հազարներով և մեծ մասը իր մահը գտնում էր այդ տարածքներում: «Մեսքենեի մեծ դաշտավայրը խիստ տխուր և ճնշող տպավորություն է թողնում»:

Տեղեկությունները,- պատմում է տեղում ուսումնասիրություններ կատարած մի եվրոպացի,- որ ես ստացա տեղում, իրավունք են տալիս ասելու, որ այստեղ թաղված է մոտավորապես 60.000 հայ, որոնք զոհ են գնացել սովին, զրկանքին, դիզենտերիային և տիֆին: Ինչքան մարդու աչքը կտրում է՝ կարող է տեսնել հողաթմբեր, յուրաքանչյուրի տակ՝ մոտավորապես 200-300 դիակ՝ կանայք, ծերունիներ, երեխաներ, բոլորն իրար խառնված, տարբեր տեղերից և ընտանիքներից:

«Մի վրանի տակ, որը ծածկում էր ընդամենը 30 քառ. մետր տարածք, տեսա մոտավորապես 400 սովալլուկ որբ երեխաների: Այս դժբախտ երեխաները օրական ստանում են 150 գրամ հաց: Հաճախ պատահում է, որ նրանց 2-3 օր թողնում են առանց սննդի: Բնական է, որ մահերը սարսափելի շատ էին: Ութ օրվա ընթացքում, ինչպես անձամբ կարողացա պարզել, փորհարեքը 70 երեխա տարավ»:

Աբու Հարարը մի փոքր տեղանք է, ընկած Մեսքենեի հյուսիսային մասում՝ Եփրատի ափին: Դա անապատի ամենավատառողջ տեղն էր: «Գետից երկու հարյուր մետր հեռու ընկած մի բլուրի վրա տեսա 240 հայ՝ երկու ժանդարմի հսկողության տակ, որոնց անկարեկից հայացքի առաջ քաղցի զարհուրելի տանջանքներից մեռնում էին: «Այն տեսարանները, որոնց ես ականատես եղա, վեր են դաժանության մասին ամեն տեսակի պատկերացումից: Այնտեղ, որտեղ կանգ առավ իմ կառքը, տեսա կանանց, որոնք մեր մոտենալուն պես, իրենց գցեցին ձիերի թրիքի վրա և սկսեցին քթթել ու հանել այնտեղ գտնվող չմարսված գարու հատիկները, որպեսզի ուտեն: Ես հաց տվեցի նրանց: Սովյալ շների նման նրանք հարձակվեցին հացի վրա և ատամներով, դողդողալով ու ընկնավոր ցնցումներով սարսափելի ագահությամբ պատառոտեցին հացը: Եվ երբ ինչ-որ մեկը այդ 240 դժբախտներին, ավելի ճիշտ՝ յոթ օր բան չկերած 240 սովյալ գայլերին, հայտնեց իմ ժամանման մասին, ողջ ոհմակը բլրի վրայից ներքև սուրալով հարձակվեց ինձ վրա: Դեպի ինձ էին երկարում կմախքացած ձեռքերը, խոպոտ աղաղակով ու հեծկլտանքներով ինձնից մի կտոր հաց աղերսում: Նրանք միայն կանայք և երեխաներ էին: Հազիվ 20 ծերունի կար: Վերադարձին ես նրանց հաց բերեցի, և մեկ ժամից ավելի եղա կարեկցող, սակայն նաև անզոր ականատեսը հանուն մի կտոր

հացի մղվող իսկական ճակատամարտի...»[1]:

Միայն 1915 թվին 60 հազար հայ քշվեց Դեր Զոր և գրեթե բոլորը ոչնչացան: 1916 թ. ապրիլի 15-ին Մոսուլ ուղարկվեց 19 հազար հայ... Մայիսի 22-ին այնտեղ հասավ միայն 2500 մարդ: Ճանապարհին կանանց և աղջիկների մի մասը վաճառվեց բեդվիններին, մյուսները մեռան սովից ու ծարավից: 1916 թ. հուլիսին Դեր Զորում կար 20 հազար գաղթական: Ութ շաբաթ անց գերմանացի մի սպա այնտեղ միայն մի քանի հարյուր արհեստավոր հայտնաբերեց ... Մարդկանց մեծ մասը մեռնում էր սովից:

Թուրքերն աշխատում են բռնագաղթի ժամանակ հայերի վրա հարձակումների ամբողջ պատասխանատվությունը գցել քրդերի վրա: Նրանք ասում են, որ այդ հարձակումները կատարվել են միայն այն վիլայեթներում, որոնք հիմնականում քրդաբնակ էին, իսկ հարավում՝ Սիրիայում, նման հարձակումներ չեղան, որովհետև այդ տարածքում քուրդ ազգաբնակչություն գրեթե չկար:

Ականատեսները միանգամայն հակառակ կարծիքին են:

«Մինչ Ռաս-ուլ-Այնի և Ինթիլլիի ջարդերն ավարտելու վրա էին, դրանցից հարավ սկսվեցին ահավոր կոտորածներ, որոնց միջոցով Զեքի բեյը պետք է բնաջնջեր Դեր Զորում հավաքված 200 հազար հայ գաղթականներին...

Այս կողմերը մնացած հայությունը այլևս ժողովուրդ չէր, ավելի շուտ՝ մարդկային փչրանքներ էին, որոնք համառում էին չմեռնել, նրանց մեջ կենդանի որևէ բան չէր մնացել: Իսկական արհավիրք ծավալվեց, երբ սկսեցին դատարկել Հալեպն ու շրջապատը և այնտեղ եղած հայ ժողովուրդին իջեցնել Մեսքենե: Կարավաններին վերջ չկար... Ցուրտ եղանակին, ծեծելով, մեծ մասամբ հետիոտն, քիչ դեպքերում ուղտերով կամ էշերով քշվում էին Մեսքենե: Այստեղ էլ մնալ չէր կարելի: Դեպի Դեր Զոր: Ռաս-ուլ-Այնի ջարդերի լուրը հասել էր նաև Մեսքենե: Ամիսներ շարունակ տևող կոտորածները չէին կարող գաղտնի մնալ նույնիսկ անապատում...

Ոստիկանությանը հրամայված էր ճանապարհին քաղցածներին ու ծարավներին թողնելու միջոցով, «որքան հնարավոր է փոքրացնել գաղթականների թիվը»:

Պատմում է Դեր Զորի ջարդարարներից Մահմուդը. Ռաս-ուլ-Այնի գայմագամը 2000 գյավուրներ ինձ հանձնեց: Դրանք կողոպտված մարդիկ էին: Որևէ շահի հույս չունեինք, բացի նրանց վրայի հագուստներից, քիչ թե շատ զարդեղեններից ու ոսկի ատամներից... Տղամարդկանց կանանցից առանձնացրինք: Նրանք թվով 500 էին: Կանանց էլ մերկացրեցինք, ոսկե ատամները քաշեցինք բերաններից: Պետք է ասեմ, որ կատարյալ ատամնաբույժներ ենք դարձել: Մինչ մենք կողոպուտը ձիերի վրա էինք բառնում, կանանց ու մանուկների աղաղակները օդն էին թնդացնում: Ամեն տեսակ գործիքներ ունեինք՝ կացին, սուր և այլն, և այլն: Մանուկները օդը նետելով ճիշտ գետին ընկած պահին ցցված սրի վրա բերողը, բռունցքի մի հարվածով մանկան գանգը փչրողը, մանկան վիզը կծելով նրա գլուխը կտրողները պարգևատրության էին

---

[1] *АН Арм. ССР, Бюллетень, 1984, № 4.*

արժանանում: Կանայք մանուկներից ավելի ուժեղ էին: Զնայած նրանք արևից, սովից ու ծարավից դալկացած էին, բայց մեր քաջերի ախորժակը մեծ էր: Ամեն ինչ զինվորական ձևով գործադրեցինք...

Ըմբոստացողների ստինքները կտրում էինք և չպրտում նրանց բերաններին և աչքերին: Այսպիսով, ըմբոստացողը անպատվությունից չէր խուսափում, նույնիսկ եթե մեռներ:

Հղի կանայք էլ կային, որոնց համար դայակ էր պետք: Իմ քաջերը այս արհեստին էլ էին տիրապետում՝ սրի մի հարվածը բավական էր, առանց որևէ ուրիշ գործողության, մանկանը մոր փորից դուրս հանելու համար: Ամեն ինչ վերջանալուց հետո ողջ մնացածներին զանազան չարչարանքներով սպանեցինք:

Հայ տղամարդկանց հեռացրեցինք, տարանք մի բաց դաշտ ու այնտեղ շարք կանգնեցրինք գիշերվա լուսնի լույսով նշան բռնելու համար: Երեք ժամ տևած մեր այս նշանառությունից ձանձրացած՝ անցանք սրի, և երբ համոզվեցինք, որ բոլորը մեռած էին, մեր մոտ եղած երեք թիթեղ վառելիքը լցրեցինք նրանց դիակների վրա ու այրեցինք: Համբավավոր մի ընթրիք արեցինք, երգեցինք, պարեցինք այդ մարդկային լուսավառության բոցերի մոտ: Լուսաբացին մեկնեցինք, երբ տակավին բոցերը աղոտ լույսեր էին արձակում ու մի ճարպային հեղուկ արտի երեսով հոսում էր չորացնելով ամեն բույս»[1]:

Պատմում են Դեր Զորի գեհենից փրկված Մ. Տեմիրճյանն ու Փ. Պոյամյանը «500-600 հոգի, բոլորս այր մարդիկ, Խապուր գետի եզերքը իջեւանած էինք, ուր պաշարած են մեզ չէչէն ոստիկան զինուորները: Ութ օր այդտեղ, գետին եզերքը՝ անօթի, թշուառ, այլազան տանջանքներու ենթարկուելով ապրեցանք: Ամէն առտու չէչէնները մեր վրաններէն ներս մտնելով խումբ մը կը զատէին եւ կը տանէին գետին միւս կողմը: Զէինք գիտեր, թէ ո՞ւր կը տանէին զանոնք: Գացողը չէր վերադառնար այլեւս: Մեզ նոյնպէս տարին գետի միւս ափը: Բոլորիս մերկացուցին, որպէսզի սպաննեն ու նետեն մեծ հորը: Հագուստներու դէզը բլուր մըն էր կազմած... Մահուան փոսը 3-4 քմ. երկարութեամբ քարայրանման տարածութիւն մըն էր, որ լեցուած էր մարդկային դիակներով եւ վիրաւոր ու խելագարուած խլեակներով: Դիակներու գարշահոտութիւնը ամբողջ քարայրը անշնչելի դարձուցած էր: Կենդանի գերեզման մը... Երբ սպանդը կը վերջանար, խարոյկ մը կը վառէին, որպէսզի կենդանի մնացողները շնչահեղձ ըլլային...»[2]:

Գերմանացի զինվորական բժիշկ Մակնուս Հիրշֆելդը 1915 թ. գնում է Բաղդադ և իր «Համաշխարհային պատերազմի սեռային պատմություն» գրքի 259-264 էջերում պատմում է իր տեսած զարհուրելի արարքների մասին, որ թուրք զինվորականները գործադրում էին հայ տարագրյալների նկատմամբ Ռաս-ուլ-Այնի և Մոսուլի շրջանում: Նա գրում է. «Անապատում վրաններ էին: Հայ կանանց ու աղջիկների մի կարավան կար մեր հարևանությամբ: Գիշերը

---

[1] **Գաբիկեան Կ.,** *նշվ. աշխ., էջ 548-550:*

[2] **Նորաշխարհեան Լ.,** *նշվ. աշխ., էջ 78-79:*

դժոխային աղմուկ բարձրացավ: Այդ գիշեր գերմանացի զինվորներն ու սպաները քնել չկարողացան հափշտակված կանանց ու աղջիկների սիրտ բզկտող ճիչերի ու ողբի պատճառով: Մեր զինվորները չցանկացան միջամտել «Թուրքերի ներքին գործերին»: Երբ լույսը բացվեց, պարզվեց մի սարսափելի տեսարան: Վայրենի բռնակալների կողմից չարչարված ու բռնաբարված այդ աղջիկների կոկորդները կտրված էին...»:

Ապա շարունակում է. «Սարսափելի դեպքերի ականատես եղա 1915 թ. վերջերին Թել Աբիադի և Ռաս-ուլ-Այնի արանքում, որտեղ մերկ, բռնաբարված կանանց դիակների բազմություն էր հավաքված, իրար վրա դիզված և հետևները փայտեր մտցրած»[1]:

Ընթերցողը նկատած կլինի, որ խոշտանգման ու վայրագությունների նկարագրություններն այնքան են իրար նման, որ կարծես խոսքը ո՛չ թե տարբեր դեպքերի, այլ միևնույն դեպքի մասին է: Այդ ևս հաստատում է կատարվածների իրական լինելը: Մանավանդ, որ վկայությունների հեղինակները հիմնականում Թուրքերն ու Թուրքամետ պետությունների ներկայացուցիչներն էին:

Նիպագեն և գերմանացի սպաները Դեր Զորի գաղթականական կացարաններն անվանեցին համակենտրոնացման ճամբարներ. «Անհնար է նկարագրել այն ահավոր տպավորությունը, որ իմ վրա գործեց այցելությունը Եփրատի երկայնքով, մասնավորապես գետի աջ ափին Մեսքենեից Դեր Զոր տեղավորված հայկական ճամբարները...

Եփրատի ափերին ցիրուցան արված հայ ազգից մնացել էին միայն ծերերը, կանայք ու երեխաները: Այն տղամարդիկ, որոնց դեռ չէին հասցրել սպանել, աշխատում էին չինարարական գումարտակներում: Աղջիկները, ավելի հաճախ աղջնակները, որս էին դարձել մահմեդականներին: Նրանց գավթել էին Թուրքերն ու քրդերը, վաճառել էին հարևաններին, վերածել ստրուկի:

Հեծյալ ժանդարմները պտտվում էին ճամբարների շուրջը, որպեսզի բռնեն ու պատժեն փախչողներին: Ես անապատի տարբեր մասերում հանդիպեցի վեց փախածների, որոնք քաղցից մահամերձ վիճակում էին, շրջապատված սոված շներով, որոնք սպասում էին նրանց մահվանը՝ մարմինը հոչոտելու համար մեռածի... Ինձ թվում էր, որ ես դժոխքում էի»[2]:

Շատ ավելի խոսուն են Ա. Վեգների ներկայացրած նյութերը: Նա լուսանկարել էր հայերի դժոխային վիճակի տեսարանները: Ավելի քան 200 լուսանկար, որոնց մի մասը Թուրքերը խլում են, բայց հիմնական մասը հաջողվում է փրկել ու ցուցադրել Գերմանիայում, իսկ ապա նաև եվրոպական մի քանի երկրներում:

«Բոկոտն, հյուծված, տենդից ու այլ հիվանդություններից ուժասպառ մարդկանց ծանր աստիճանի նոսրացած խմբերին,- պատմում է Ա. Վեգները,- արևի կիզիչ ճառագայթների տակ, ժայռոտ կիրճերով ու անանցանելի լեռներով քշում էին հարյուրավոր մղոններ, դեպի կիսաարևադարձային ճահիճները՝

---

[1] **Hirschfeld M., Andreas G.,** *Sittengeschichte des I Weltkriege, Leipzig, 1929. s. 261-263.*

[2] **Carzou J.-M.,** *Première. 1915. Le Genocide des Arméniens, Paris, 1980. p. 103-105.*

մահվան գիրկը: Այստեղ նրանք գտնում էին իրենց վախճանը, սպանվելով ու կողոպտվելով քրդերի ու ժանդարմների ձեռքով, գնդակահարվելով, դաշունահարվելով, նահատակվելով ծարավից ու ցրտից, մեռնելով համաճարակներից, սառչելով, ջրահեղձ արվելով և կեր դառնալով չնագայլերին: Երեխաները մեռնում էին արցունքներն աչքերին: Տղամարդիկ նետվում էին ժայռերից: Մայրերն իրենց փոքրիկներին նետում էին ջրհորներ, հղի կանայք երգելով նետվում էին Եփրատի ջրերը: Ես տեսել եմ խելագարվածների, որոնք ուտում էին իրենց մարմնի խորիսը, կանանց, որոնք եփում էին իրենց նորածինների մարմինները, աղջիկների, որոնք կտրատում էին իրենց մայրերի տաք մարմինները, որպեսզի նրանց աղիներում գտնեն այն ոսկին, որ նրանք կուլ էին տվել ավազակ ժանդարմների սարսափից:

Ավերակ կարավան-վրաններում տարաբախտները անօգնական ու անկարեկից պառկում էին կիսանեխած դիակների կողքին, սպասելով իրենց անխուսափելի մահվանը»[1]:

Գտնվելով Ռաս-ուլ-Այնում, Արմին Վեգները Գերմանիայում ընակվող իր հարազատներին նոյեմբերի 1915թ. 26-ին գրում է. «Բոլոր լեռնահովիտները, բոլոր գետակները լցված են թշվառության ճամբարներով: Տավրոսի և Ամանոսի կիրճերով ձգվում է մի տեղահանված ժողովրդի, հարյուր հազարավոր տարաբախտների ահագին հեղեղը, որ հորձանք է տալիս լեռների ստորոտով, որպեսզի նվազելով ու նվազելով՝ անվերջանալի թափորներով գահավիժի դեպի հարթավայր և ցրվելով կորչի անապատում... Դա այն ճանապարհն է, որից այլևս տունդարձ չկա»[2]:

Հոկտեմբերի 19-ի նամակում պատմում է. «Որովհետև Ջեմալ փաշան արգելել է ճամբարներում լուսանկարել, մի ճամբարում լուսանկարածս սոսկումի ու մեղադրանքի պատկերները ևս թաքցրել եմ վարտիքիս մեջ»: Մեսքենեում հայ գաղթականների «հայացքները ճնշում էին: «Դու ինքդ գերմանացի ես,- ասում էին նրանք,- և թուրքերին դաշնակից... Ուրեմն ճիշտ է, որ դուք էլ այդ էիք ուզում»: Ես խոնարհում եմ աչքերս: Ի՞նչ կարող եմ պատասխանել նրանց առարկելու համար»:

Հազարավոր մարդիկ, մեծ մասամբ կանայք ու երեխաներ, քարշ էին գալիս ամայի դաշտերում ու ձորերում, մեռնում ոչ միայն սովից, տանջանքներից ու հիվանդություններից, այլև թուրք ոստիկանների ու գինվորների դաժանություններից: «Ես հաճախ եմ տեսել,- գրում է Պ. Շեֆերը,- թե ինչպես նրանք ընկնում էին գետնին, բայց նորից ու նորից ոտքի էին կանգնեցնում խզակոթերով ու սվիններով և քչում հեռու»: «Ով չի կարողանում արագ ոտքի կանգնել,- շարունակում է Բ. Ռոները,- սվինահար են անում... Կարավանները միշտ էլ իրենց հետևից թողնում են մեռածների, երեխաների ու հիվանդների, որոնք դատապարտված են կործանման... Նրանք մեռնում են հազարներով»[3]:

---

[1] «Արմին Վեգները և...», էջ 25-26

[2] «Այլիք», 10 մայիսի 1981 թ.:

[3] «Լրաբեր» (ԳԱ), 1987 թ.. № 7, էջ 88, 90:

Հիվանդությունների համաճարակը հնձում էր տարագրյալներին: Հալեպի վալի Մ. Աբդուլ Հակկի ու տեղի գաղթականական գրասենյակի տնօրեն Ա. Նուրիի ջանքերով ոչնչացվեց 300.000 հայ:

Միջագետքը դարձավ հայերի գերեզմանոց. «Անապատներու հրակէզ աւազի անծայրածիր տարածութեան մէջ 400.000 հայ տարագիրներ բնաջնջուեցան սպանդով կամ սովամահութեամբ»[1]:

Մ. Նեղիմը շարունակում է. «... Ներուեցաք ըսելով Եփրատի հանդիպակաց ափն անցկացնել 40-50 հազար դժբախտներ եւ հոն զանոնք սպառսպուր կոտորել, փոսը լեցնել 10 հազարէն աւելի տղաքը, քարիւղ թափել անոնց վրայ եւ այրել...

Տէր Զօրի մէջ ամէն երկրէ հաւաքուած էին շուրջ 160 հազար անհատներ... Տարակոյս չկայ, որ այնտեղ հաւաքուած 160 հազար հայերը ասոր տասնապատիկն էին, երբ վտարուեցան իրենց օջախէն. անսուաղութիւնը, թշուառութիւնը, ճամբու տառապանքները հալեցուցեր, այս քանակին իջեցուցեր էին զանոնք»[2]:

Եթե հավատանք Նեղիմին, Դեր Զորում,- ինչն ասելով նա նկատի ունի ամբողջ Սիրիան և Միջագետքը,- հավաքել էին 1.600.000 հայ, ինչը հավանական չէ: Խոսք կարող է լինել 1-1,2 միլիոն հոգու մասին:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում չեզոք ականատեսի պատմածը, որ տեղ է գտել Յո. Լեփսիուսի «Տեղեկանքներում». «Ես թույլտվություն էի ստացել այցելելու հայերի ճամբարները, որոնք ընկած են Եփրատի երկայնքով՝ Մեսքենեից մինչև Դեր Զոր և հաշվետվություն ներկայացնել այնտեղ արտաքսվածների վիճակի, նրանց կենսապայմանների մասին, եթե հնարավոր էր՝ իմանալ նաև արտաքսվածների մոտավոր թիվը..

Անհնար է տալ այն զարհուրելի տպավորությունների նկարագիրը, որոնք ես վերապրեցի Եփրատի աջ ափի երկայնքով ցրված ճամբարներով անցնելիս: «Ճամբարների» մասին խոսելն ուղղակի անհնար է: Այս դժբախտների մեծ մասին դեռ երթուղու սկզբին կողոպտել էին, ճանապարհին էլ թալանել այն քիչը, ինչ կարողացել էին թաքցնել բաց երկնքի տակ անասունների նման իրար վրա լցված, բոլորովին անպաշտպան չոգի ու ցրտի դեմ, համարյա առանց շորերի, ավելի քան անկանոն և անբավարար սնունդով, հանձնված եղանակի քմահաճույքին ամռանը՝ անապատի կիզիչ արևայրուքին, գարնանը և աշնանը՝ քամուն ու անձրևին, ձմռանը՝ ցրտին, ահավոր զրկանքների ենթարկվելուց հյուծված, անվերջ քայլելուց ուժասպառ եղած, ենթակա ամենավատ վերաբերմունքի, սոսկալի կոտանքների և մշտապես սպառնացող մահվան սարսափին: Ովքեր դեռ պահպանել են իրենց ուժերի մնացորդները, գետափի երկայնքով ծմակներ էին փորել, որտեղ և թաքնվում էին:

Ում հաջողվել էր պահել մի քանի կտոր շոր և մի քիչ փող, և ի վիճակի էր մի քիչ այլուր գնել, համարվում էր երջանիկ և հարուստ մարդ: Երջանիկ էին

---

[1] **Պալաքեան Գր.**, նշվ. աշխ., էջ 62:

[2] **Նետիմ Մ.**, նշվ. աշխ., էջ 112-113:

նաև նրանք, որոնք կարող էին գյուղացիներից մի քանի ձմերուկ կամ մի հիվանդ ու նիհար այծ ձեռք բերել, որոնց դիմաց քոչվորները դրանց քաշի չափ ոսկի էին շորթում»:

Ամենուրեք միայն դալուկ դեմքեր էին, հյուծված կերպարանքներ, թափառող կմախքներ, որոնց քայքայել էին հիվանդությունները և որոնք բոլորը քաղցի զոհեր դարձան:

Բոլորովին հոգ չէր տարվել տարագիրներին կերակրելու մասին: «Ընդհանրապես, բացահայտ երևում էր, որ կառավարությունը նրանց սովամահ անելու նպատակ է հետապնդել: Անգամ կազմակերպված զանգվածային կոտորածները, չատ ավելի մարդկային կլինեին, քանզի կարեկցանքի արժանի այս ժողովուրդը կգատվեր դանդաղ սովամահ լինելու սարսափից և մշակված խոշտանգումներից առաջացած այն սոսկալի ցավերից, ինչպիսին հղանալ չէին կարող անգամ վայրագ մոնղոլները»:

Երիտասարդ աղջիկները, հաճախ դեռ երեխաներ, դարձել էին մահմեդականների ավարը: Տեղափոխման երկար երթերի ժամանակ նրանց քաշքշում էին, հարմար պահին՝ բռնաբարում, վաճառում՝ եթե նրանց չէին սպանել այն ժանդարմները, որոնք ուղեկցում էին մռայլ կարավանները: Շատերին քարշ էին տալիս հարեմներ՝ ստրկության:

Ինչպես Դանթեի դժոխքի դարպասին էր գրված, այնպես էլ համակենտրոնացման ճամբարների մուտքերին կարելի էր գրել. «Ովքեր մտնում են այստեղ, թող որևէ հույս չունենան փրկվելու»:

Հեծյալ ժանդարմները չուրջկալներ էին կազմակերպում, որպեսզի բոլոր նրանց, որոնք կփորձեին փախչել, բռնեին և գավազանազարկ անեին: Բոլոր ուղիները տանում էին անապատ, որտեղ նրանց նորից մահ էր սպասում:

«Ճամփեզրին ամենուրեք կարելի է տեսնել հայերի բեկորներ... Հարյուրավոր հողաթմբերի տակ վայրագ բարբարոսության այս զոհերը հանգչում էին անանուն»:

Մի կողմից, նրանց արգելում են ուտելիք ճարելու համար հեռանալ համակենտրոնացման ճամբարներից, մյուս կողմից՝ զրկում էին իրենց ընդունակություններն օգտագործելու հնարավորությունից:

Մահվան սպառնալիքի ներքո նրանց անվերջ քշում էին մի տեղից մյուսը, որպեսզի «տանջանքների մեջ բազմազանություն մտցնեն»: Նրանց ամեն անգամ ստիպում են նոր երթեր կատարել, առանց հացի, առանց ջրի, իրենց հալածողների գավազանների ներքո մատնված նոր տառապանքների, նոր դաժանությունների, «ինչպիսիք չէին կիրառում անգամ Սուդանի ստրկավաճառները իրենց զոհերի հանդեպ»:

Ում մոտ դեռևս փող էր մնացել, անընդհատ կողոպտվում էին կարավանն ուղեկցողների կողմից, որոնք ահաբեկում էին է՛լ ավելի հեռուն քշել նրանց: «Եվ երբ արդեն այդ փոքր միջոցներն էլ վերջանում էին, սպառնալիքներն իրագործվում են: Ինձ թվում էր, որ ես իրոք քայլում եմ դժոխքի միջով: Այն փոքր թվով տեղահանությունները, որոնք ուզում եմ վերարտադրել, պատահական են և չտապ ի մի բերված: Դրանք կարող են միայն թյուր պատկերացում տալ այն սարսափելի և դաժան իրականության մասին, որ տեսել եմ սեփական

աչքերով: Ամենուրեք տիրում է բարբարոսության սարսափելի իշխանությունը, որի նպատակը հայ ազգի հետևողական բնաջնջումն էր:

Մեսքենեից մինչև Դեր-էլ-Զոր, ամենուրեք Եփրատի ափերը, նույն հրեշավորության վկաներն էին»:

Համամը փոքր գյուղ էր, որտեղ չրջափակման մեջ էր 1600 հայ: Այստեղ ևս ամեն օր սովի ու սարսափի նույն ներկայացումն էր: Տղամարդիկ բռնի կերպով քշվել էին բանվորական զորամասեր՝ հողային աշխատանքներ կատարելու: Որպես աշխատավարձ նրանք օրական ստանում են մի կտոր ուտելու համար ոչ պիտանի և անմարսելի հաց: Մահացությունը հսկայական էր, առանձնապես երեխաների չրջանում:

«Եփրատի ափին Ռաքքայի դիմաց ես գտա վրանների տակ խցկված հազարավոր հայեր, որոնց հսկում էին զինվորները: Նրանք նույնպես քաղցի էին մատնված և սպասում էին ուրիշ տեղեր փոխադրվելուն, որտեղ լրացնելու էին մահացած նախորդների չարքերը»:

Կանանց և երեխաների խմբերը քարչ էին գալիս գետի երկայնքով, խոտ և արմտիք էին փնտրում, որպեսզի հագեցնեին քաղցը: Ուրիշներն ուժասպառ տապալվում էին իրենց անտարբեր հսկիչների աչքերի առաջ:

Դեր Զորում Զեքին սկզբում փորձեց հայերին ոչնչացնել արաբների միջոցով, բայց վերջինները հրաժարվեցին. «Մեր խիղճը չենք կրնար բեռնավորել անմեղներու արիւնով»[1]:

Ֆրանսիական դիվանագիտական մի փաստաթուղթ նույնպես վկայում է, որ «թուրքերը որոշակի հույսեր ունեին, որ արաբները կսպանեն կենդանի մնացածներին: Բայց նրանք սխալվեցին, քանզի արաբները դրսևորեցին մեծ համակրանք հայերի հանդեպ»[2]: Ականատեսներից Հ. Թորոսյանը գրում է. «Եթե չըլլար արաբ ազնիւ ժողովուրդին մարդասիրութիւնը՝ Սուրիոյ եւ Միջագետքի հայութեան մեծ մասը գոյութիւն չէր ունենար»[3]: Արաբ հասարակական գործիչ Յուսուֆ էլ-Հաքիմը գրում է. «1915-ին որեւէ ճամբորդ, Պէյրութէն դէպի Դամասկոս երկարող ճամբուն վրայ եւ Պեքաայի դաշտերուն մէջ կը հանդիպէր եւ ականատես կ'ըլլար տասնեակ հազարաւոր հայ մանուկներու, կիներու եւ ծերերու, որոնք երկինքը վերմակ ու հողը անկողին ըրած՝ ամէն կողմ տարածուած էին այնպիսի խղճալի վիճակով մը, որ դիտողին սիրտը կտոր-կտոր կ'ընէր... Պետութիւնը հսկայ ջարդեր կազմակերպեց ... Անոնք (հայերը) գտան արաբ ժողովուրդին եղբայրական ու մարդկային վերաբերմունքն ու օգնութիւնը»[4]:

Օսմանյան խորհրդարանի անդամ Մ. Էմինը 1918 թ. նոյեմբերին հանդես գալով խորհրդարանում, հայտարարեց. «Զևդեթ բեյը Դեր Զորի մերձակայքում ավերել տվեց բռնագաղթված հայերի վրանային ավանը և 70 հազար հայ գազանաբար ոչնչացրեց: Դեր Զորի և Ռաս-ուլ-Այնի միջև ընկած տարածքներում

---

[1] «Տէր Զօր: Աղէտէն վերապրողներ», Փարիզ, 1922, էջ 28:

[2] Beylerian A., նշվ. աշխ., էջ 388:

[3] «1915. Աղէտ եւ վերածնունդ», Փարիզ, 1915, էջ 16:

[4] «Զարթօնք», 31 մարտի 1987 թ.:

գայլերի և անգղների հոչոտումներից առաջացած հայերի ոսկորներից բլուրներ էին գոյացել:

Հայերից չատերի տները քանդել են, ավերել, մեծ ու փոքր, ծեր ու երեխա բոլորը մեռած են»[1]:

Մեր օրերում նույնպես օգտագործվում է «Հայկական ապստամբության» վերաբերյալ թալեաթյան քարոզչության հին լաթը օսմանյան վարչակարգի ցեղասպան բնույթը քողարկելու համար: Ա. Անտոնյանը նշում է, որ այդ լաթը ըստ ամենայնի գործածվում էր ցեղասպանության ամբողջ ընթացքում:

«Էրզրումի վերագրաւումէն ետքը.- գրում է նա,- Թուրք հրամանատարները, մասնաւոր թելադրութեան համեմատ, տեղեկագիր տեղեկագրի վրայ կը հասցնէին Պոլիս, թէ նահանջող հայերը հսկայ ջարդի մը մէջ փճացուցած են այդ կողմերու բոլոր իսլամ բնակչութեանը: Թուրք մամուլը ամենաոխերիմ պայքար մը սկսած էր հայոց դէմ: ...Լլկուած իսլամ աղջիկներու, փորերնին պատռուած յղի կիներու, սուիններու ծայրը չամփրուած նորածիններու, ծիծերնին կտրտուած գեղջկուհիներով սրունքներէն երկու կտոր եղած մանուկներու, խոշոր խարույկներու մէջ տապկուած ծերերու եւ պառաւներու, ցցահան եղած եւ կամ կտոր-կտոր մանրուած դիակներու, քանդուած օճախներու առասպելները սիւնակ սիւնակ իրարու կը յաջորդէին Թուրք մամուլին մէջ եւ վերջը չէր գար»[2]:

Մինչդեռ «Հայկական նահանջին առթիւ կատարուած մանր-մունր անցքերու եւ Թուրք թերթերուն կողմէ նկարագրուած զարհուրելի դէպքերու միջեւ կար անսահման անդունդ մը, զոր լոկ Թուրքերու ստախօսութեան հանճարը կրնար լեցնել...»[3]:

Թուրքական մամուլի ստահոդ հրապարակումները նպատակ ունեին «Նոր գրգռութիւն մը առաջ բերելու համար հայոց դէմ, անոնցմէ մնացող վերջին բեկորներէն ալ, այս անգամ թերեւս Պոլսոյ եւ Իզմիրի հայութիւնն ալ կոտորել տալու մտածողութեամբ»[4]:

Թուրքերի նոր բորբոքման պատճառներից մեկը Պաղեստինում նրանց անհաջողություններն էին, որոնք վտանգի տակ էին դնում Արաբիայի և Սիրիայի մնալը կայսրության կազմում, իսկ անգլիական բանակի շարքերում կռվում էին նաև հայեր:

Դամասկոսի կուսակալ Թահսինը Կիլիկիայի կաթողիկոսին ասաց. «Կառավարութիւնը փաստեր ունի, թէ հայեր կը գտնուին անգլիացւոց եւ Շերիֆին բանակին մէջ, եւ այս հայերը ասկէ փախչողներ են. զգուշացո՛ւր ժողովուրդդ, որովհետեւ կրնայ շատ ծանր ըլլալ հետեւանքը»[5]:

Հայերի դեմ գրգռում էին մասնավորապես բանակը: Հայերի ոճիրների մասին թերթերում տպված նյութերը «ամէն իրիկուն իբր օրակարգ կը կարդացուէին Թուրք զինուորներուն...»[6]:

---

[1] «Ժամանակ», 27 նոյեմբերի 1918 թ.:

[2] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 224:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում, էջ 225:

[6] Նույն տեղում, էջ 226:

«...Զէյթունները արդէն իսկ եկեր բանակեր էին Հալէպէն չորս ժամ անդին... Ամէն բան ցոյց կու տար, որ Հալէպի հայ ժողովուրդը յանկարծ տեղահան ընելով պիտի յանձնէին չէյթուններուն... Հալէպի ոստիկանութեան տնօրէնը Սաատէտտին պէյ ... ըսեր էր, որ այս անգամ «ընդհանուր պիտի ըլլայս»... Մինչեւ Դամասկոս նոյն դրութիւնն էր, եւ ամէն իսլամ, ամէն զինուոր, ամէն ժանտարմա ... կը պատրաստուէր այդ գերագոյն կոտորածին»[1]:

Իսկ Թալեաթի հավաստիացումը, «որ այլեւս որեւէ տեղ տեղահանություններ չեն լինի», սոսկ բառախաղ էր: Իհարկե, աքսորումներ չէին լինելու, քանի որ այլեւս մարդ չէր մնացել տեղահանելու, բայց կային աքսորյալներ, հարավում շարունակվում էին զանգվածային կոտորածները, մոլեգնում էր սովամահությունը, օգնության անվան տակ տեղի էին ունենում նաև մասնակի ջարդեր: Այսինքն, թուրքերը շարունակում էին գործել այն ուղղությամբ, որպեսզի ձեռնարկած սև գործը հասցվեր իր տրամաբանական ավարտին:

Ամփոփենք, թե ինչ կատարվեց հարավային նահանգներում:

Նախնական հաղորդումներից հետևում էր, որ Միջագետքը շարունակում էր դիտվել որպես նոր տեղահանությունների «նպատակակետ», չնայած 1915 թ. աշնանից սկսել էին հայ ազգաբնակչության աքսորումները նաև Միջագետքի քաղաքներից: Սեպտեմբերի 2-ին Ջեզիրեի քրիստոնյաներին, կաթոլիկներին և սիրիացի հակոբիկյաններին կոտորեցին: Հոկտեմբերի 16-ին Ուրֆայի հայ ազգաբնակչության մի մասին կոտորեցին (շուրջ 20 հազար հոգի), իսկ մնացածին աքսորեցին: Հոկտեմբերի 18-ին Հալեպից հաղորդեցին. «Ըստ վիլայեթի քաղաքական գործերի գծով տնօրենի տվյալների՝ Ռաջոյի և Կաթմայի մոտակայքում 40 հազար աքսորյալներ էին կենտրոնացրել: Հետագայում եկան բազմաթիվ կարավաններ»:

Տարագրումը դեպի ավելի հարավ (արևմտյան Հաուրան, Ռաքքա, Դեր Զոր) շարունակվեց և ներառավ մոտ 600.000 հայի: Նոր վայրերում բնակեցման համար պակասում էր ամեն ինչ՝ վառելիք, սննդամթերք, ճամբարի համար վրաններ և այլ ամենաանհրաժեշտ բաներ:

Աքսորյալ գյուղացիները գյուղատնտեսական որևէ գործիք չունեին: Ընդհանուր կարծիքը մեկն էր՝ բոլոր տարագիրները ծրագրավորված մահվան էին դատապարտված: Ինչպես Հյուսիսային Միջագետքից, այնպես էլ հարավի մնացած քաղաքներից և գյուղերից ու Հյուսիսային Սիրիայից հայերը տեղահանվեցին ու կոտորվեցին: 1916 թ. հունվարի սկզբին 5-6 հազար հայերի Այնթապից քշեցին դեպի անապատները: Փետրվարի կեսերին Քիլիսի բոլոր երեխաներին աքսորեցին:

Ապրիլի 6-ին Ռաս-ուլ-Այնի ճամբարների 14.000 տարագիրներից 12.000-ին մորթեցին:

Եվ այսպես մինչև անգլիական բանակի մուտքը Սիրիա և Միջագետք, որի շնորհիվ փրկվեցին այդ տարածքները քշված հայերի խլյակներն ու տեղաբնակ հայերի զգալի մասը:

Վերևում ասվեց, որ հայերի ջարդերին ամենաեռանդուն մասնակցություն

---

[1] **Անտոնեան Ա.,** նշվ. աշխ., էջ 224:

ունեցել է նաև Թուրքական բանակը: Հանրահայտ իրողություն է, որ նոր ժամանակների բանակները (բացառությամբ ֆաշիստականից), որպես կանոն, խուսափում էին խաղաղ բնակչությանը խժդժությունների ենթարկելուց: Արդ, ինչո՞վ է բացատրվում հայերի հանդեպ Թուրքական բանակի ավազակաբարո վերաբերմունքը: "День" թերթի 1915 թ. սեպտեմբերի 6-ի համարում կարդում ենք, թե Թուրքական մի դիվիզիա Միջագետքից չարժվում էր դեպի Հյուսիս: Այդ դիվիզիան, երբ դուրս էր գալիս Սիրիայից, ուներ 7-8 հազար սվին, բայց կարճ ժամանակ անց մնաց 3000 սվին: Պատճառը ոչ թե մարտական գործողություններն էին, այլ սովը: Զորքերը «կերակրվում էին գրեթե բացառապես ավազակության միջոցով... Ասկյարները օրը ուտում էին մեկ անգամ՝ միս, եթե մերձակայքում անասուն կար, կամ հացի հում բոքոններ, որոնք զինվորներն իրենք պետք է եփեին: Երբեմն խմում էին այնպիսի ջուր, որից անգամ անասուններն էին հրաժարվում»: Դրանով է բացատրվում տիֆ, դիզենտերիա, տենդ հիվանդությունների տարածված լինելը և դրանցով հիվանդներին ու ծանր վիրավորներին... հաճախ ճանապարհին թողնելը:

Թուրքական բանակի զինվորներին ներշնչել էին, որ այդ ամենի պատճառ հանդիսացող պատերազմի համար մեղավորը հայերն էին, որ նրանց կեցվածքի հետևանքով Թուրքիան ներքաշվեց պատերազմի մեջ: Դրան գումարվեց «սրբազան պատերազմ» հայտարարելը, որ միավորեց մահմեդականներին քրիստոնյաների դեմ: «Այստեղից անպաշտպան հայերի հանդեպ գազանությունների ու բռնությունների այն աներևակայելի պատկերը», որին ականատես եղավ աշխարհը: Դա չէր կարող չդաժանացնել նաև հայերին, որոնք «երբեմն ցանկանում էին թշնամուց վրեժ լուծել անգամ իրենց կործանման գնով»: Այս միտքը հաստատելու համար Ն. Օգանովսկին բերում է հետևյալ օրինակը: Բանտի խցում մի քանի տասնյակ մահմեդականի հետ բանտարկված էր նաև մի հայ: Այդ հայը թաքուն նավթ է ճարում և հրդեհում խուցը: Այդ մահմեդականներին ոչնչացնելու համար նա չի խնայում սեփական կյանքը:

Ո՛չ միայն հայի ու քրդի, այլև հայի ու Թուրքի թշնամությունը կենսաբանական չէր, այլ՝ իրական կյանքի հանգամանքների հետևանք: Հետևաբար հարկ է կողմնորոշվել ո՛չ թե դեպի ճակատագրական անխուսափելիությունը, այլ թշնամություն ծնող հանգամանքների վերացման անհրաժեշտությունը:

"Армянский вестник"-ի 1916 թ. № 1-ում ներկայացված է սպանված, տեղահանված, մահմեդականացված հայերի վերաբերյալ հետևյալ տվյալներն ըստ քաղաքների ու սանջակների. Արմաշ՝ 500, Նիկոմեդիա՝ 65.000, Բուրսա՝ 25.000, Բանդրմա՝ 15000, Կեսարիա՝ 40000, Սամսուն՝ 20.000, Տրապիզոն՝ 32700, Հալեպ՝ 15800, Սիս, Հաճըն՝ 30300, Զեյթուն-Ֆրոնուզ՝ 28.000, Սեբաստիա՝ 81.000, Եզովկիա՝ 23.000, Ամասիա՝ 25.000, Շապին-Կարահիսար՝ 25.3000, Էրզրում՝ 72.000, Երզնկա՝ 25.000, Բայբուրդ՝ 17.000, Դերջան՝ 15.000, Քեմախ՝ 10.000, Խարբերդ՝ 45.000, Քղի՝ 27.000, Սղերդ՝ 25.000, Դիարբեքիր՝ 55100, Բասեն՝ 10500, Ակն՝ 10200, Առարջեր՝ 19500, Զմչկածագ՝ 9000, Թղրիկ՝ 11300, Բիթլիս-Մուշ՝ 51500 հոգի: Ընդամենը՝ 835600 հոգի, որից Արևմտյան Հայաստանում՝ 548100, իսկ Անատոլիայում և Սիրիայում՝ 272300: Իհարկե, այս թվերը Թուրքական վայրագությունների ամբողջական ու լրիվ պատկերը չեն:

Այստեղ բացակայում են, օրինակ, Կ. Պոլիսը (մոտ 40.000), Միջագետքը, Կաստամոնուն, Կոնիան և այլն: Բիթլիս-Մուշի կորուստը նշված է 51500, մինչդեռ դա հասնում էր 120.000 հոգու: Լրիվ բացակայում են Վանն ու Վասպուրականը (30-40.000): Կարելի է շարունակել բացթողումների ցուցակը: Բայց գլխավորն այդ չէ, որովհետև ներկայացված տվյալները վերաբերում են մինչև 1916 թիվն ընկած ժամանակաշրջանին: Դրանցում բացակայում են Հյուսիսային Սիրիայում և Միջագետքում 1916 թվի առաջին կեսին տեղի ունեցած ջարդերը (600.000), որի հետ միասին Մեծ եղեռնի զոհերի թիվը հասնում է 1,5 միլիոնի: Դրա մեջ չի մտնում Կիլիկիայում և Զմյուռնիայում 1919-1922 թթ. և Կովկասում 1918-1920 թթ. տեղի ունեցած ջարդերի թիվը (500.000):

Իվ Թերնոնը գրում է, որ 1917 թ. հունվարի 1-ին օսմանյան կառավարությունը վերջակետ դրեց Հայկական հարցին, այսպիսով դեմ դուրս գալով Բեռլինի դաշնագրին և դրա 61-րդ հոդվածին, որն այլևս արժեք չուներ, քանի որ հայ ժողովուրդը դադարել էր գոյություն ունենալուց Օսմանյան կայսրության սահմաններում:

Եվ իրոք. 1916 թ. վերջում Հալեպում մնացել էր ընդամենը 45 հազար աքսորական, որի 2/3-ը ծայրահեղ հուսահատ վիճակում էր: Եփրատի ճամբարները «մաքրված էին»: Ըստ ԱՄՆ-ի հյուպատոսի տվյալների, Մոսուլում կենդանի էր մնացել 8000 հայ: Գերմանիայի հյուպատոսը նշում է, որ Դամասկոսի շրջանում կենդանի էր մնացել 30 հազար հայ և այլն: Հայերին օգնող բարեգործական ընկերությունները, որոնց հովանավորում էին ԱՄՆ-ի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հյուպատոսները, փրկվածների թիվը նշում են՝ Մարաշում՝ 20.000, Կոնիայում՝ 2000, Սրվազում՝ 25.000 հոգի: Այս մասերում էին հավաքվել ծովափնյա շրջանների բնակիչները, որոնցից մի քանի հարյուրը Անատոլիայի խորքերի քաղաքներից էին: Եթե այս թվերին ավելացնենք Սիրիայի համակենտրոնացման ճամբարներից փրկվածներին, Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի 150 հազար հայերին, Կովկասում ապաստանած 300.000 հայերին, փրկվածների թիվը հասնում է 700.000-ի: Առևանգված կամ թուրքական ընտանիքներում ու քրդերի մոտ տեղավորված կանանց ու երեխաների թիվը դժվար է ճշգրիտ նշել. դա մոտավորապես կազմում է 200.000 հոգի: «Ուրեմն,- գրում է Թերնոնը,- ճշտությամբ կարելի է հաշվարկել, որ երկու միլիոն 100.000 հայ բնակչությունից 600.000-ը (700.000-ը) փրկվել է, 700.000-ը ոչնչացվել արևելյան վիլայեթներում, 600.000-ն անհայտ կորել աքսորի ժամանակ, 200.000-ը փոխել ինքնությունը (ուծացել է): Սրանք, իհարկե, մոտավոր թվեր են: Ո՛չ պետական վիճակագրական տվյալներ կան, ո՛չ աքսորների մատյաններ, ո՛չ էլ զոհերի ցուցակ»: Սակայն եղեռնի արհավիրքը հակիրճ արտահայտված է երկու հավաստի թվերում: 1917 թվին հայերի 2/3-ը ոչնչացած էր, իսկ 1/3-ը աքսորի, թշվառության և աղետների մեջ էր[1]:

Ս. Թեհլիրյանն արևմտահայության գողգոթան ու ընաջնջումը ներկայացնում է հետևյալ կերպ. «Կարաւանները ամէն կողմէ կը քալէին դէպի հարաւ, մտրակի եւ հրացանի կոթերու հարուածին տակ: Տրապիզոնի եւ Բարձր

[1] «Le crime...», p. 187-188.

Հայքի շրջաններէն եկողները հետեւեցան Վերին Եփրատի հոսանքին, մինչեւ Մալաթիա, ապա Հալէպ: Նոյն կենդրոնացման կէտին յանգեցաւ արեւմուտքէն Սեբաստիոյ եւ արեւելքէն Խարբերդի ու մասամբ Տիարպէքիրի նահանգներու կոտորակուած ամբողջ հայութիւնը: Ասոնց հետեւեցաւ Արեւմտեան Անատոլիայի եւ Կիլիկիոյ հայութիւնը: Բայց արդէն մինչեւ հոն՝ տեղահանութեան ահաւոր պայմանները, անօթութիւնը, սպառումը, հիւանդութիւններն ու յափշտակութիւնները ջարդուկոտոր ըրած էին կիներու եւ երեխաներու կարաւանները: Եփրատի զոյգ ճիւղերը ամիսներ ամբողջ ափ նետեցին անոնց խեղդամահ դիակները: Այսուհանդերձ, ինչպէս կ'ըսէ նաեւ Ա. Թոյնպի, անոնք աւելի բախտաւոր եղան, քան վերապրողները՝ պառաւ, ընտանիքի մայր, յղի կին, որոնք քշուեցան դէպի իրենց սպասող չարչարանքի գողգոթան:

Պետութիւնը եւ թուրք բնակչութիւնը իրենց առաւելագոյնը ըրին, որպէսզի տարագրեալներու կարելի եղածին չափ փոքր թիւ մը հասնի այդ վայրերը»:

Դեր-Զորն էր սպանդի վերջին արարվածը. «Հարյուր հազարավոր գաղթականներ հասան եւ դիզուեցան անապատի ... ահաւոր պայմաններուն մէջ. անապատի կիզիչ ամառէն ետք, անոնց բացօդեայ կայքերուն վրայ իջան ձմեռն ու հիւանդութիւնները: Օրական շուրջ 1000 անձ կը մեռնէր սովէն ու հիւանդութենէն...

1916 թ. գարունը եւ ամառը բերին վերջին ահաւոր հարուածը Հիւսիսային Սուրիոյ մէջ հաւաքուած աւելի քան 0,5 միլիոն հայ գաղթականութեան գլխուն: Ապրիլին տեղի ունեցան Ռաս-ուլ-Այնի ջարդերը, ոչ ոք ազատեցաւ գիւղաքաղաքին շուրջ կայք հաստատած 70 հազար գաղթականներէն: Յունիսին, սկսաւ կեդրոնացումը Տէր-էլ-Զօրի շուրջը, Հալէպէն, Մեսքենէէն եւ Ռաքքայէն քշուած աւելի քան 200 հազար հոգինոց հսկայ, թշուառ բազմութիւն մը խմբուեցաւ քաղաքին դիմաց եւ խումբ-խումբ ճամբայ հանուեցաւ դէպի Մոսուլ, անապատին խորը, բայց Մոսուլ հասնող չեղաւ: Եւ քանի որ դիւրին չէր 200 հազար հոգի ջարդելը, Տէր-էլ-Զօրի նոր գայմագամը դիմեց դանազան ձեւերու. սով առաջացուց, եւ դիակները կերուեցան ողջերուն կողմէ, շատեր թոյն գտան եւ անձնասպան եղան: Մեծ թիւով երախաներ բանակային ձիերու սմբակներով կոխկոտուեցան, ուրիշներ այրուեցան, բազմութիւններ ալ կենդանի թաղուեցան աւազներուն տակ»[1]:

---

[1] *«Թեհլիրեան արդարահատոյցը», էջ 21-24:*

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Կազմի ձևավորումը՝ **Կ. Հ. Ավագյանի**
Հրատ. խմբագիր՝ **Մ. Գ. Ցավրյան**
Տեխ. խմբագիր՝ **Վ. Զ. Բդոյան**
Սրբագրիչ՝ **Վ. Վ. Դերձյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Ա. Խ. Աղուզումցյանի**

Ստորագրված է տպագրության 01.03.2011 թ.:
Չափը՝ 70x100 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Հրատ. 50.0 մամուլ, տպագր. 42.0 մամուլ = 54.6 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 113:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52

669